ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ



ԲԱՔՈՒ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

947.925

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԵՎՈՐԳ ՍՐԱՊԻՈՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԲԱՔՈՒ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

1 0 7 1 9 1

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
71

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
71

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱՐԿԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2011

РА МИНИСТЕРСТВО СПЮРКА НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ИСТОРИИ

ГЕВОРГ СРАПИОНОВИЧ СТЕПАНЯН

ИСТОРИЯ АРМЯН ГОРОДА БАКУ

(ИСТОРИКО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

ЕРЕВАН-2011

MINISTRY OF DIASPORA OF THE RA

NATIONAL ACADEMY OF SCIENCE RA
INSTITUTE OF HISTORY

GEVORG SRAPION STEPANYAN

THE HISTORY OF ARMENIANS OF BAKU CITY

(HISTORICAL - DEMOGRAPHIC RESEARCH)

YEREVAN-2011

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ) + 60.7
Ս 887

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՈՎ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ՝ պ. գ. դ. Կոստանդյան Է. Ա.

ԳՐԱԽՈՄՆԵՐ՝
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մելքոնյան Ա. Ա.
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Խառատյան Ա. Ա.

Ստեփանյան Գևորգ Սրապիոնի

Ս887 Բաքու քաղաքի հայության պատմությունը: Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն/Գևորգ Ստեփանյան: ՀՀ տիկնոջ նախաձեռ., Պատմ. ինստ.: Պատ. խմբ.՝ Է. Ա. Կոստանդյան.– Եր.: Պատմ. ինստ. հրատ, 2011. – 650 էջ («Մեսրոպ արք. Աշճեան» մատենաշար, 71):

Աշխատությունը ներկայացնում է Բաքու քաղաքի հայ բնակչության պատմաժողովրդագրական համահավաք պատկերը՝ վաղ ժամանակներից մինչև 1990 թ. հունվարը նեղառյալ: Մատենագրական և վիմագիր աղբյուրների համալիր ուսումնասիրությամբ հիմնավորվել է Ապշերոնյան թերակղզում և Բաքվում հայերի տեղաբնակ և մշակութակերտ լինելը:

Սկզբնաղբյուրների քննությամբ ցույց է տրված, որ Բաքու քաղաքը Արևելյան Այսրկովկասում XX դարի երկրորդ տասնամյակի վերջում «Ադրբեջան» անվամբ արհեստածին պետության մայրաքաղաք է դարձել նվաճող թյուրք-օղուզների հետնորդների՝ 1930-ական թվականների վերջերից «ադրբեջանցի» հորջորջված կովկասյան թաթարների կողմից տեղաբնիկ ժողովուրդների (հայեր, թաթեր, լեզգիներ և այլն) ցեղասպան քաղաքականության, ուծացման, քաղաքակրթական արժեքների կողոպտման ու ոչնչացման միջոցով:

Մենագրությունը կարող է օգտակար լինել պատմաժողովրդագրության, հայագիտության և կովկասագիտության հարցերով զբաղվողների, պատմաբանների, ինչպես նաև ընթերցող լայն հասարակայնության համար:

Գրքի շապիկին պատկերված է Բաքու քաղաքի հայկական տաճարը՝ Սբ. Աստվածածին եկեղեցին:

ISBN 978-99941-73-58-7

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ) + 60.7

© Պատմության ինստիտուտ
© Գ. Ստեփանյան

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԲԱՔՎՈՒՄ 1918 Թ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ
ՀԱՅԵՐԻ, ՄԱՆԱՎՈՐԱՊԵՍ՝ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՄԱՆԱԿԻՑՆԵՐ,
ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՑ ՄԱՉԱՊՈՒՐԾ ՊԱՊԻՍ ԵՎ ՏԱՏԻՍ՝
ԳԵՎՈՐԳ ԵՎ ՎԱՐՍԵՆԻԿ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆՆԵՐԻ ԽՆԿԵԼԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



Գևորգ Ստեփանյանի «Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» աշխատությունն ունի գիտական և քաղաքական կարևոր նշանակություն: Այն ամփոփում է սկզբնաղբյուրների և արխիվային անձնկությունների վրա հիմնված հսկայածավալ պատմագիտական նյութ: Աշխատության կարևոր արժանիքներից է՝ հայկական լեռնաշխարհից սրևելք, Կուրի ձախափնյակում և մերձկասպյան երկրամասում, ներառյալ Ապշերոնյան թերակղզին, հայերի՝ վաղ ժամանակներից մշակութակերտ գործունեությամբ քաղաքակրթական ազդեցությունների տարածման ուսումնասիրությունը:

Աշխատությունում ցույց է տրվում, որ Ապշերոնյան թերակղզում և մասնավորապես Բաքվում, հայկական քաղաքակրթական ներդրմանը հակառակ, անդրալթայան տափաստաններից ներխուժած թյուրք-օղուզների հետնորդները (խորհրդային շրջանում՝ 1930-ական թվականների վերջերից հորջորջված «ադրբեջանցի»), շարունակելով թյուրք-թաթար-մուսավաթականների ոճրագործությունները, «ինքնահաստատվում» են տեղաբնիկ ժողովուրդների ուծացմամբ և հատկապես հայերի նկատմամբ ցեղասպան քաղաքականությամբ ու մշակութային արժեքների ոչնչացմամբ:

Գ. Ստեփանյանին հաջողվել է արխիվային վավերագրերի, տեղագրական աշխատությունների, վիճակագրական նյութերի և ժամանակի պարբերական մամուլի հրապարակումների հենքի վրա ներկայացնել Բաքու քաղաքի հայ բնակչության պատմաժողովրդագրական ամբողջական պատկերը, ինչը կարևոր ներդրում է Հայոց քաղաքակրթական արժեհամակարգի համակողմանի ուսումնասիրության գործում:

Էդուարդ Լ. Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
Հին դարերի պատմության բաժնի վարիչ,
պատմ. գիտ. դոկտոր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վաքու քաղաքի հայության պատմությունը բնորոշվում է իր ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային զարգացումների ծավալուն ընդգրկումով: Այդ պատմությունն սկսվում է վաղ ժամանակներից, ավարտվում 1990 թվականին, երբ Այսրկովկասի արևելյան հատվածում սոսկ XX դարի երկրորդ տասնամյակի վերջում ստեղծված «Ադրբեջան» արհեստածին պետական կազմավորումը հայրենի օջախներից փուլ առ փուլ վերջնականապես դուրս մղեց Բաքվի զարգացման ու առաջընթացի մեջ վճռորոշ դեր խաղացած հայությանը՝ բռնազավթելով ժամանակի ընթացքում նրա ստեղծած ահռելի հարստությունը:

Արևելյան Այսրկովկասի՝ Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքում հայերը բնակվել են վաղնջական ժամանակներից: XIX դարի կեսերին ստվարաթիվ հայ բնակչություն կար նախալեռնային և բարձր լեռնային շրջանների ավելի քան 100 բնակավայրերում՝ սկսած Շամախիից մինչև երկրամասի հյուսիս-արևմուտքում դտնվող Զաքաթալա[1] քաղաքը[2]: Այդ բնա-

---

[1] Զաքաթալան պատմական Կամբեճան գավառն է, որը նախկինում Մեծ Հայքի Ռուգավորության կազմում էր: Գտնվում էր Կուր գետի և Կապ-կոհ լեռնագոտու միջև, Կամբեճ (Իորի) և Աղվան (Ալազան) գետերի ստորին հովտում: Ըստ Ստրաբոնի՝ «Հայաստանի... գավառներից Խորչենան ու Կամբիսենան (Կամբեճան - Գ. Ս.) ամենահյուսիսայիններն են և բոլորից շատ են ծածկված ձյունով: Նրանք սահմանակից են Կովկասյան լեռնաշղթային, Իբերիային և Կոլխիդային» (**Страбон**, География, пер., статья и коментарии **Г. А. Стратановского**, Москва, 1964, кн. XI, гл. XIV, § 4, стр. 497, տե՛ս նաև Հիւբշման Հ., Հին Հայոց տեղույ անունները, թարգմանեց՝ Պիլէզիկեան Հ. Բ., Վիեննա, 1907, էջ 18-19, տե՛ս նաև Ստրաբոն, բաղեց և թարգմանեց Աճառյան Հ.: Օտար աղբյուրներ հայերի մասին. հումական աղբյուրներ, № 1, Երևան, 1940, էջ 35-57: Կամբեճանին հետագայում տրվել են Ճար, այնուհետև՝ Զաքաթալա անվանումները: Ավանդության համաձայն՝ վերջին անունն առաջացել է Զաքար և Թալա եղբայրների անունների միացումից: Ս. Էփրիկյանը գրում է. «...ժամանակաւ Զաքար և Թալայ անուն երկու եղբարց մին՝ Զաքար, հիւսիս արեւելեան կողմը Ճար գիւղի մէջ կը բնակի եղեր, իսկ Թալայ՝ հարաւակողմը Թալայ գիւղի մէջ, և թէ այս երկու անուանց միացմամբ յորջորջուեր է երկու գիւղից մէջ գտնուած քաղաքն՝ Զաքաթալայ, և հետզհետէ գործածուելով՝ ր տառն ոչնչացեր է» (Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, գիրք Ա, Վենետիկ, 1903-1905, էջ 767):

կավայրերից չատերը գոյատևել են մինչև XX դարի վերջերը և նշանակալի հետք թողել երկրամասի պատմության մեջ:

Որպես Արևելյան Այսրկովկասի հնարնակ և մշակութա-կերտ ժողովուրդ՝ հայերը մասնակցել են այդ տարածաշրջանի սո-ցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, կրթամշակու-թային կյանքին և ստեղծել հարուստ պատմություն: Նշանակալի էր հայերի դերը գյուղատնտեսության, առևտրի, արհեստագոր-ծության և արդյունաբերության (մասնավորապես՝ նավթարդյու-նաբերության սկզբնավորման) քնադավառում: Օգտվելով տնտե-սական և քաղաքական նպաստավոր պայմաններից՝ Շամախիի, Բաքվի հայ առևտրականներն արդյունավետ գործունեություն են ծավալել ոչ միայն Այսրկովկասի սահմաններում, այլև եվրո-պական և արևելյան երկրների հետ կատարվող առևտրում: Հայե-րը առաջադիմել էին նաև հոգևոր-մշակութային կյանքում: Հայ-կական դրեթե բոլոր գյուղերում, Նուխի, Շամախի, Ղուբա և Բա-քու քաղաքներում կառուցվել են եկեղեցիներ, հիմնադրվել և ար-գասավոր կյանք են ունեցել եկեղեցական-ծխական բազմաթիվ դպրոցներ:

Արևելյան Այսրկովկասում, հայ բնակչության ճնշին զուգըն-թաց, աստիճանաբար հայաշատ խոշոր կենտրոններ էին դարձել Շա-մախի, Ղուբա, Նուխի և, հատկապես, Բաքու քաղաքները: Սակայն XIX դարի 70-ական թվականներից սկսած՝ երկրամասի հայության ամենախոշոր կենտրոնը առևտրաարդյունաբերական Բաքու քա-ղաքն էր: Իրենց ստեղծագործ աշխատանքով և գիտամշակութային բարձր մակարդակով Բաքվի հայերն ուրույն տեղ էին զբաղեցնում քաղաքի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյան-քում: Հայ առևտրականների ու արդյունաբերողների (Հովհաննես Միրզոյան, Ալեքսանդր Մանթաշյանց, Փիլոյան եղբայրներ, Պողոս, Հակոբ, Աբրահամ և Արշակ Ղուկասյան եղբայրներ, Գևորգ Լիանոս-յան, Առաքել Մատուրյանց և շատ ուրիշներ) հիմնած հայանուն ըն-կերությունները («Արամազդ», «Սյունիք», «Որոտան», «Մասիս»,

---

[2] Տե՛ս **Карапетян С.**, Памятники средневековой архитектуры в гаварах Шаки и Капалак собственно Албани, «Кавказ и Византия», вып. 6, Ереван, 1988, стр. 224. Մանրամասն քննությունը տե՛ս **Ստեփանյան Գ.**, Բաքվի նահանգի հայությունը XIX դարում (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2010:

«Աստղիկ», «Արարատ» և այլն) մեծ դեր են խաղացել Ապշերոնյան թերակղզու նավթի արդյունահանման և վաճառքի կազմակերպման, Բաքվում ֆինանսավարկային և բանկային համակարգերի կազմավորման գործում: Սոցիալ-դասային կառուցվածքի առումով Բաքվի հայ բնակչությունը բաղկացած էր ազնվական, վաճառական, պատվավոր քաղաքացիների և դյուղացիական դասերից: Պատվավոր քաղաքացիներն ընդդրկված էին վարչական կառավարման մեջ և բարձրաստիճան պաշտոններ էին զբաղեցնում պետական գրասենյակներում:

XX դարի սկզբներին՝ Բաքվի հայ բնակչությունն ապրում էր հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային և հոգևոր վերելքի ժամանակաշրջան: Սակայն այդ զարգացումը խաթարվեց, երբ Բաքվում բռնկվեցին հայ-թաթարական ընդհարումները: 1905 թ., ցարական կառավարության կողմից հրահրված հայ-թաթարական ընդհարումների ժամանակ կովկասյան թաթարները, առաջնորդվելով համաթուրքականության գաղափարներով, ամենադաժան ձևերով կոտորեցին հարյուրավոր հայերի, ավերեցին հայապատկան տասնյակ տներ և առևտրաարդյունաբերական ձեռնարկություններ: Բաքվի հայությունը հատկապես ծանր հարված ստացավ 1918 թվականին, երբ թուրքական զորքերը արշավեցին Բաքու: Այդ արշավանքի հետևանքով զանգվածային կոտորածի ու տեղահանության ենթարկվեց նահանգի և Բաքու քաղաքի հայության զգալի մասը: Դատարկված տասնյակ գյուղերը բնակեցվեցին կովկասյան թաթարներով: Ավերվեցին ու ոչնչացվեցին դարերի ընթացքում ստեղծված հայկական հուշարձանները՝ խաչքարերը, վանքերն ու եկեղեցիները:

Բաքու քաղաքի հայ բնակչության պատմաժողովրդագրության ուսումնասիրությունն ունի գիտաքաղաքական կարևոր նշանակություն: Խորհրդային շրջանում «ինտերնացիոնալ» Բաքվի մասին կեղծ մտակաղապարների պատճառով այդ քաղաքի ու համանուն գավառի հայության պատմությունն անուշադրության է մատնվել: Կոմունիստական կուսակցության մենատիրության տարիներին լռության ու մոռացության անթափանց քողով է պատվել XX դ. սկզբներին Բաքու քաղաքի հայ բնակչության հետ տեղի ունեցած ժողովրդագրական աղետը, անտեսվել է տնտեսական, հասարակական ու կրթամշակութային կյանքում հայության առանձնահատուկ դերը, ինչպես նաև հայկական կապիտալի մեծ ներդրումը՝ մինչև XIX դարի կեսերը խիստ հետամնաց այդ բնակավայրի սոցիալ-տնտեսա-

կան ու կրթամշակութային կյանքի վերելքն ապահովելու գործում: Նույն շրջանում ադրբեջանական պատմագրությունը լծվել է Արևելյան Այսրկովկասի, այդ թվում նաև Բաքու քաղաքի հայության պատմության միտումնավոր ննջգափոխմանը, որն էլ ավելի մեծ հետևողականությամբ սկսեց իրականացվել Ադրբեջանի անկախացումից հետո: Ինչպես իրավամբ գրում է Ա. Մելքոնյանը. «Անկախության հռչակումից հետո՝ ալիևյան իշխանության անմիջական ուղղորդմամբ, ադրբեջանական պատմագրությունը հայտնվեց ամեն մի գիտական վերահսկողությունից դուրս և իր անսահման երևակայությամբ գերազանցեց անգամ թուրքական պատմագրությանը»[3]:

Ադրբեջանական պաշտոնական պատմագրությունը (Ա. Ալեքպերով, Զ. Բունյաթով, Գ. Գեյբուլաև, Ց. Մամեդովա, Ռ. Գեյուշև, Ռ. Մելիքով, Ա. Սումբատզադե և ուրիշներ)[4], առաջնորդվելով ժամանակակից ադրբեջանցիների պատմությունը հնացնելու մտահաեռումով, «ադրբեջանցիներ», «ադրբեջանական ցեղեր» կամ «ադրբեջանական ռասա» փնտրելու նպատակով չարունակաբար փորձել է յուրացնել Արևելյան Այսրկովկասի էթնոմշակութային և քաղաքական պատմությունը:

Ադրբեջանին «պատմական անցյալով» օժտելու հորինվածքի Բաքվի «պատմագիտական» ասպատակություններից առավել աչքի է ընկնում Ս. Վելիևի ամպագոռգոռ՝ «Հին, հին Ադրբեջան» վերտառությամբ աշխատությունը, որտեղ պատմաչինարարությամբ փորձ է արվում «հիմնավորել» Արևելյան Այսրկովկասում սոսկ XX դարի երկրորդ տասնամյակի վերջերին «Ադրբեջան» անվամբ արհեստածին պետության «հին» լինելու առասպելը[5]: Ավելին՝ ներկա Ադրբեջանում պետական մակարդակով տարվող հակահայկական քարոզ-

---

[3] Մելքոնյան Ա., Պատմության կեղծարարության թուրք-ադրբեջանական պատմագրության մեթոդաբանական հիմքը: Պատմություն և մշակույթ. ընդդեմ կեղծիքի և ոտնձգության: Հանրապետական գիտաժողովի հիմնադրույթներ (4-6 մայիսի), Երևան, 2011, էջ 13:

[4] **Алекперов А.**, Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960; **Буниятов З.**, Азербайджан в VII-IX вв., Баку, 1965; **Гейбуллаев Г.**, Топономика Азербайджана, Баку, 1986; **Мамедова Ф.**, Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н.э.-VIII в.н.э.), Баку, 1986; **Ցույցի՝** Кавказская Албания и албанцы, Баку, 2005. **Геюшев Р.**, Христианство в Кавказской Албании, Баку, 1984; **Меликов Р.**, Этническая карта Азербайджана в период ахеменидского владычества (VI-IV вв. до н.э.), Баку, 2003; **Сумбатзаде А.**, Азербайджанцы-этногенез и формирование народа, Баку, 1990.

[5] **Велиев С.**, Древний, древний Азербайджан, Баку, 1983.

չության պայմաններում նոր թափ ստացած պատմաչինարարության ու Ադրբեջանին «պատմական անցյալով» օժտելու միտումով համացանցի ադրբեջանական կայքէջերը ոչ միայն ողողվել են հակահայկական և հակագիտական դրույթներով, այլև «Հեյդար Ալիևի հիմնադրամի» օժանդակությամբ հրատարակվող հրապարակումներում ադրբեջանական կեղծարարներն առաջնորդվում են հայկական հուշարձանները՝ «աղվանական», իսկ քրիստոնյա աղվաններին իրենց նախնիները համարելու և նման այլ կեղծիքներով[6]: Այս տեսակետը, փաստորեն «թաղվեց» հենց Ադրբեջանի իշխանությունների կողմից, երբ պետական մակարդակով 2005 թ. դեկտեմբերին բարբարոսաբար ոչնչացվեցին և դեռևս երեսից չնչվեցին «աղվանական» համարվող հին Ջուղայի միջնադարյան հայկական գերեզմանոցի վերջին խաչքարերը[7]:

Աղբյուրների հավորդած տեղեկությունների քննությունը ցույց է տալիս. վիճարկման ենթակա չէ այն փաստը, որ 1930-ական թվականների վերջերից «ադրբեջանցի» հորջորջված կովկասյան թաթարները՝ հիմնոր միջինասիական թյուրքալեզու օղուզական քոչվոր ցեղերի հետնորդներն էին[8], որոնք աղվանների հետ էթնիկական որևէ կապ չեն ունեցել[9]:

---

[6] Alakbarli A., Les Monuments d'Azerbaidjan d'Ouest, Bakou, 2007.

[7] Տե՛ս Julfa, The Annihilation of the Armenian Cemetery by Nakhiejevan's Azerbaijani Authorities, Beirut, Lebanon, 2006. Տարբեր ժամանակներում Ադրբեջանում և հարակից հայկական տարածքներում պատմամարտարապետական հուշարձանների ավերման հանգամանալից քննությունը տե՛ս **Mkrtchyan S.**, Vandalism. Second Revised Edition. A Collection of Evidential and Documentary Materials adout the Dtstruction and Misappropriation of the Heritage of Armenian-Christian Culture in Azerbaijan, Yerevan, 2005; **Galichian R.**, The Invention of History. Azerbaijan, Armenia, and the Showcasing of Imagination, London-Yerevan, 2009.

[8] Արևելյան Այսրկովկաս օղուզական ցեղերի ներթափանցման և դրա հետևանքների մասին հանգամանալի տե՛ս **Баскаков Н.**, Тюркские языки, Москва, 1960, стр. 139; **Бартольд В.**, Краткий обзор истории Азербайджана. Сочинение, т. II, ч. I, Москва, 1963, стр. 75-783; նույնի՝ Работы по истории и филологии тюркских и монгольских народов. Обзор истории тюркских народов. Сочинение, т. V, Москва, 1968, стр. 425-437; **Новосельцев А., Пашуто В., Черепнин Л.**, Пути развития феодализма (Закавказье, Средняя Азия, Русь, Прибалтика), Москва, 1972, стр. 56-57.

[9] Տե՛ս **Акопян Ал., Мурадян П., Юзбашян К.**, К изучению истории Кавказской Албании (По поводу книги Ф. Мамедовой «Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э.-VIII в. н. э.)», ՊԲՀ, Երևան, 1987, № 3, էջ 189, տե՛ս նաև **Ստեփանյան Գ.**, Արևելյան Այսրկովկասում «ադրբեջանցի» էթնանվան գործառման հարցի շուրջ, ՄԱ, պր. V, Երևան, 2008, էջ 137-144:

Բաքու քաղաքի տարբեր ժամանակաշրջանների պատմությանը նվիրված աշխատություններում ադրբեջանցի պատմաբանները (Ս. Աշուրբեյլի[10], Ֆ. Թաղիև[11] և այլք) աղբյուրների աղավաղման ու կեղծման հակագիտական մոտեցումով հետևողականորեն քողարկում են Ապշերոնյան թերակղզում ու Բաքվում հայերի հնաբնակությունը և մշակութաշինարար գործունեությունը վկայող հայ և օտար աղբյուրների տեղեկությունները: Ս. Աշուրբեյլին, հարաղատ մնալով փաստերը միակողմանի և կամայական մեկնաբանելու ադրբեջանական պաշտոնական պատմագրության դործելաոճին, Ապշերոնյան թերակղզում ու Բաքվում հայերի հնաբնակությունը ժխտելու միտումով վկայաբերելով Պետրոս I-ի՝ Աղվանից կամ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանին ու հայ ժողովրդին ուղղված 1724 թ. նոյեմբերի 10-ի հրովարտակը, որով թույլատրվում էր հայերին բնակվելու Բաքվում, Գիլանում և Մազանդարանում, առաջ է քաշել մի անհեթեթ տեսակետ, իբրև Բաքվում հայերի բնակեցումը գլխավորապես վերագրվում է այդ ժամանակներին[12]: Մինչդեռ Պետրոս I-ի հրամանագիրը անդրադառնում է հայերի կացությանը միայն և ոչ թե նրանց բնակության ժամանակաշրջանին: Բաքվում հայերի հնաբնակության և Ապշերոնյան թերակղզու էթնիկական պատկերում հայկական շերտի չարունակական գոյության փաստը քողարկելու միտումով Ֆ. Թաղիևը առաջ է քաշել չինծու այն տեսակետը, ըստ որի՝ «Մինչև Բաքվի՝ Ռուսաստանի կազմում անցնելը, հայերի բնակեցումն այդ քաղաքում կրել է ժամանակավոր բնույթ: Նրանք բնակություն են հաստատել հատկապես 1826 թ. հետո»[13]: Պատմության կեղծարարության առումով Ֆ. Թաղիևը մեկ քայլ առաջ է անցել իր դաղափարական նախնուց՝ Ս. Աշուրբեյլիից: Դրան զուգահեռ ադրբեջանցի պատմաբանները պատմաշինարարության ասպարեզում չանում են «հիմնավորել ադրբեջանցիների հնաբնակության» առասպելը Բաքվում: Հակապատմական այս հայեցակարգը ցայտուն է դրսևորվել հատկապես Ֆ. Թաղիևի աշխատության մեջ: «Էթնիկ կազմի առումով,- գրում է նա,- Բաքվում առաջատար դիրքում էին

---

[10] **Ашурбейли С.**, Очерк истории средневекового Баку (VIII-начало XIX вв.), Баку, 1964; Նույնի՝ История города Баку. Период средневековья, Баку, 1992, Նույնի՝ Государство Ширваншахов (VI-XVI вв.), Баку, 1983; **Тагиев Ф.**, История города Баку в первой половине XIX веке (1806-1859), Баку, 1999.

[11] **Тагиев Ф.**, История города Баку в первой половине XIX веке (1806-1859), Баку, 1999.

[12] **Ашурбейли С.**, Очерк истории средневекового Баку, стр. 258.

[13] **Тагиев Ф.**, նշվ. աշխ., стр. 28.

ադրբեջանցիները: 1809 թ. նրանք կազմում էին ամբողջ բնակչության 95%-ը: Նույնիսկ, 1860 թ., երբ բարձրացավ Բաքվի նշանակությունը, այլ վայրերից այդտեղ ձգվող հոսքի պայմաններում ադրբեջանցիները կազմում էին 94,4%»[14]: Ադրբեջանցի կեղծարարապատմաբանների հայտարարած տվյալները հեռու են իրականությունից: Նրանք խեղաթյուրում են պատմական փաստերը՝ ծուռ հայելու մեջ ներկայացնելով իրական պատկերները: Իրականությունն այն է, որ վաղ ժամանակներից սկսած, հատկապես XIX դարում, երբ Շիրվանում, Ապշերոնյան թերակղզում և Բաքվում կար ստվար հայ բնակչություն, պատմությանը հայտնի չէր և չէր էլ կարող հայտնի լինել ընդամենը XX դարի 30-ական թվականների վերջերին ի հայտ եկած «ադրբեջանցի» անվամբ ժողովրդի գոյությունը:

Կեղծարարության ճիշտ նույն եղանակն է կիրառել նաև ադրբեջանցի մեկ այլ հեղինակ Մ. Նեյմատովան՝ երկրամասի պատմահնագիտական հուշարձաններին և վիմագրերին նվիրված աշխատության մեջ (խմբագիրը իր կեղծարարություններով հայտնի Զ. Բունիաթովն է)[15]: Հարուստ մնալով փաստերն աղավաղելու և ննդափոխելու ադրբեջանական պաշտոնական պատմագրության յուրօրինակ սկզբունքին, Մ. Նեյմատովան չրջանցել և լռության է մատնել Արևելյան Այսրկովկասում՝ Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի և Բաքու ընկած տարածքում հայերեն բազմարնույթ արձանագրություններ ունեցող միջնադարյան հարյուրավոր խաչքարերի ու տապանաքարերի գոյության փաստը: Վերջին ժամանակաշրջանում ադրբեջանցի պատմաբանները մեծ տեղ են հատկացնում հատկապես Բաքու քաղաքի և համանուն նահանգի՝ XIX-XX դդ. էթնոժողովրդագրության հիմնահարցերին: Հետապնդելով պատմական իրականության հետ կապ չունեցող քաղաքական նպատակներ՝ ադրբեջանցի ժողովրդագիրներն իրենց հրապարակումներում առաջնորդվում են թվերի հաշվառումներով և խիստ աղավաղված ցուցանիշներով: Ավելին՝ նրանք չեն խորշում անգամ միտումնավոր կերպով պաշտոնական վիճակագրական տեղեկագրերում քաղաքի էթնոժողովրդագրական պատկերին վերաբերող նյութերը կեղծելուց[16]:

---

[14] Նույն տեղում:

[15] **Нейматова М.**, Мемориальные памятники Азербайджана XII-XIX вв., Баку, 1981.

[16] Տե՛ս **Исмаил-Заде Д.**, Население городов Закавказского края в XIX - начале XX в. (историко-демографический анализ), Москва, 1991; **Алиханова**

Բաքու քաղաքի սոցիալ-տնտեսական կացության, կառուցապատման, մասնավորապես Բաքվի առևտրատրանսպորտնավթարդյունաբերության տարբեր ոլորտների զարգացման գործում հայերի ունեցած ծանրակշիռ դերակատարության մասին

միանշանակ կերպով լռության է մատնվել կամ էլ ծայրահեղ դեպքում խիստ նվազեցվել ադրբեջանցի այլ հեղինակների (Ջ. Ալիևի, Դ. Աբդուլաևի, Ա. Սալամզադեի, Ս. Բալաևի, Հ. Ջիդդիի, Շ. Յամթուլաևի, Ա. Սալամզադեի և այլոց)[17] *գործերում: Եվ դա այն դեպքում, երբ Բաքվի հայությունն է կազմակերպել նավթարդյունաբերությունը, իսկ ներկայիս Բաքուն զարդարում են հայ ճարտարապետների կառուցած բազմաթիվ շենքեր:*

Բաքու քաղաքի հայության պատմության տարբեր դրվագների դիտական ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտելու ժամանակակից ադրբեջանական պատմագրության կողմից հայ ժողովրդի հասցեին հետևողականորեն տարածվող հերյուրանքները: Ուստի ներկա ուսումնասիրության հիմնական նպատակն է՝ արխիվային փաստաթղթերի, վիճակագրական սկզբնաղբյուրների, մամուլի և թեմայի առնչությամբ լույս տեսած գիտական գրականության հենքով ներկայացնել Արևելյան Այսրկովկասի հայաշատ բնակավայրերից մեկի՝ Բաքու քաղաքի հայ բնակչության պատմաժողովրդագրական համահավաք պատկերը: Մատենագրական, վիմագիր և վիճակագրական բնույթի սկզբնաղբյուրների համալիր քննությամբ ցույց ենք տվել, որ Բաքվում վաղ ժամանակներից բնակված հայությունը պատկանում է Ապշերոնյան թերակղզու հնաբնակ և մշակութակիրթ ժողովուրդների թվին: Նրա առանձնահատուկ դերը Բաքու քաղաքի սոցիալ-տնտեսական ու կրթամշակութային կյանքի վերելքն ապահովելու գործում:

Մեր օրերում ադրբեջանական պաշտոնական պատմագրությունը պատմության կեղծարարությամբ ու ննջգափոխմամբ

Т., Национальные и этнические меньшинства Азербайджана в XX веке, Археология (IV) и этнология (III) Кавказа (международная научная конференция). Сборник кратких содержаний докладов, Тбилиси, 2002, стр. 197-199.

[17] **Алиев Ф.**, Города Северного Азербайджана во второй половине XVIII в., Баку 1960; **Абдуллаев Г.**, Азербайджан в XVII веке и взаимоотношения его с Россией Баку 1965; **Саламзаде А.**, Промышленность Азербайджана, Баку, 1864; **Балаев С.**, Нефть страны вечного огня. Краткий очерк из истории нефтедобывающей и нефтеперерабатывающей промышленности Азербайджана, Баку, 1969; **Фатуллаев Ш.**, Градостроительство и архитектура Азербайджана XIX-нач. XX века, Ленинград, 1986; **Саламзаде А.**, Архитектура Азербайджана XVI-XIX вв., Баку, 1964.

հանրապետության կերպով լծվել է ինչպես թուրք-մուսավաթականների կողմից 1918-1920 թթ. իրականացված հայերի ցեղասպանության, այնպես էլ 1988-1992 թթ. Սումգայիթում, Բաքվում, Գանձակում, Գետաշենում, Մարտակերտում, Շամախիի, Իմայիլլի, Ազսուի, Վարդաշենի և Կուտկաշենի շրջաններում հայ բնակչության նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների կազմակերպած ցեղասպանության և բռնապետիի ժխտման ու կոծկման գործին՝ հակապետական աշխատություններով ձգտելով «ապացուցել», թե իբր պլանք տեղի չեն ունեցել[18]:

Հարկ է նշել, որ Բաքու քաղաքի հայերի պատմության տարբեր հարցերի ուսումնասիրության բնագավառում որոշակի ներդրում էր Խ. Դաղայանի աշխատությունը (լրացված և բարեփոխված տարբերակը լույս տեսավ նաև ռուսերեն)[19]: Հեղինակն աշխատությունում քննարկում է Բաքվի նավթարդյունաբերության և առևտրի մեջ հայերի ունեցած դերակատարության, ինչպես նաև հայերի՝ 1918 թ. կոտորածի վերաբերյալ հարցերը: Թեև աշխատությունում կան նաև Բաքու քաղաքի հայ բնակչության չարժընթացի վերաբերյալ վիճակագրական տվյալներ, սակայն դրանք չեն արտահայտում ժողովրդագրական գործընթացների ամփոփ պատկերը:

Հիմնահարցի համապարփակ ուսումնասիրության նպատակով հայերից բացի ներկայացվել է նաև այլ ժողովուրդների (իրանական ժողովուրդներ, հրեաներ, կովկասյան թաթարներ, վրացիներ, ռուսներ, գերմանացիներ, լեհեր և այլք) չարժընթացը Բաքվում, որքանով այն առնչվում է հետազոտվող թեմային:

Աշխատությունը շարադրված է հայ և օտար մատենագիրների երկերի, արխիվային տարաբնույթ նյութերի, վիճակագրական տեղեկագրերի, մամուլի, ճանապարհորդների երկերի և թեմայի վերաբերյալ լույս տեսած համապատասխան գրականության քննական հետազոտության և վերլուծության հիման վրա:

---

[18] **Мустафа-Заде Р.**, Две республики: Азербайджано-российские отношения в 1918-1922 гг., Москва, 2006; **Мамедов И., Мусаев Т.**, Армяно-азербайджанский конфликт: История, право, народничество, Тула, 2006.

[19] Դաղայան Խ., Հայերը և Բաքուն (1850-ական թթ.-1920 թ.), Երևան, 2006: Армяне и Баку (1850-ые гг. - 1920 г.), Ереван, 2007.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲԱՔՈՒ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐ (ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

XIX դարի երկրորդ կեսին Ռուսական կայսրության կողմից Այսրկովկասի հարավ-արևելքում կազմավորված Բաքվի նահանգը հիմնականում զբաղեցնում էր պատմական Բուն Աղվանք (հունահռոմեական պրյուրններում «Ալբանիա») երկրի արևելյան շրջանները և որոշ հարակից տարածքներ[20]: X դարից սկսած՝ Կուրի ստորին հոսանքից մինչև Կասպից ծով ընկած տարածքը սկզբնաղբյուրներում առավելապես հայտնի է Շիրվան[21] կամ «Շարուանայ, Շիրուանայ» երկիր անուններով[22]: Մխիթար Գամբյանն այդ մասին գրում է. «Աղուանից աշխարհ..., որ է ընդ մէջ Կուր գետոյ և Կասպից ծովու՝ մինչև ի Դարբանդ. և սա կոչի Աղուանք Շիրուանայ, կամ Շիրուան...»[23]: Մխիթարյան միաբան Մանուել Քաջունու պարզաբան-

---

[20] Բուն Աղվանքի աշխարհագրական սահմանների և առընթեր կարևորագույն հարցերի մանրամասն քննությունը տե՛ս **Каграманян К.**, Источники «История страны Агванк»: автореф. дисс. на соиск. уч. степ. канд. ист. наук, Ереван, 1973; **Акопян Ал.**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987; Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից VIII դարը ներառյալ), Երևան, 2006, նույնի՝ История страны Алуанк (с древнейших времен по VIII век), Ереван, 2009:

[21] Շիրվան երկրանվան ստուգաբանման մանրամասն քննությունը տե՛ս Հակոբյան Ա., «Շիրվան» երկրանվան ծագման հարցի շուրջ, ՍԱ, պր. IV, Երևան, 2007, էջ 61-65:

[22] IX դ. վերջերին, երբ արաբական խալիֆայության թուլացման պայմաններում Բուն Աղվանքի մի շարք մարզեր դարձան ինքնուրույն, Շիրվանի մարզի ամիրան X դ. գրավեց հարևան մարզերը և իշխանության սահմանները հասցրեց Դերբենդից հարավ ընկած ծովափնյա շրջաններ՝ ընդհուպ մինչև Ապշերոնյան թերակղզի, ներառելով Խրսանի, Լայզանի և մյուս մարզերը (տե՛ս **Зейдлицъ Н.**, Исторический обзор Бакинской губернии, Кавказский календарь на 1871 г., Тифлис, 1870 (այսուհետ՝ КК), стр. 13, տե՛ս նաև Փափազյան Հ., Անանուն Տաջիկ աշխարհագիրը Հայաստանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (X դ.), «Տեղեկագիր» ՀՍՍՀ Գ.Ա (հաս. գիտ.), Երևան, 1953, № 5, էջ 80, 86, տե՛ս նաև **Минорский В.**, История Ширвана и Дербенда X-XI вв., Москва, 1963, стр. 85, 106-119.

[23] Միքայել Չամչեանց, Հայոց պատմութիւն (սկզբից մինչև 1784 թվականը), հ. Գ., Երևան, 1984, էջ 131:

մամբ՝ «Շիրուան, որ հին աւանն Ադուանից մայրաքաղաքն էր. և հիմա աւերակ է. որոյ հին բերդը միայն մնացած է: Այս քաղաքին անունովն է որ հիմա Շիրուան կ'ըսուի բոլոր Ադուանից աշխարհը»[24]: Այս առումով հետաքրքրական դիտարկում է արել նաև գյուղագետ Ներսես Արևլյանը՝ նշելով, որ «Բաքուի նահանգը ի հնումն կազմում էր Շիրվան-շահինների պետութեան կետրօնական մասը: Շիրվան-շահինների պետութիւնը կամ Շիրվան առհասարակ ընդունուած է համարել մեր պատմութեան Ադուանը (յունաց-Ալբաննան)»[25]: Շիրվանի կենտրոնն էր տարանցիկ առևտրական ճանապարհների վրա գտնվող հինավուրց Շամախի քաղաքը[26], որը փոխարինում էր (Շաքի քաղաքի հետ միասին) Բուն Աղվանից թագավորության հնագույն մայրաքաղաք Կապալակին:

Պատմական հիշատակութիւնները վկայում են, որ Կուր գետով Մեծ Հայքին սահմանակից Բուն Աղվանքի տարածքում վաղ ժամանակներից սկսած բնակվել է ոչ միայն աղվանական[27], այլև որոշակի հայկական էթնիկ տարր՝ գործուն մասնակցութիւն ունենալով երկրամասի քաղաքական և մշակութային զարգացումներին[28]: Հր. Աճառյանի բնորոշմամբ՝ «Ադուանից երկրին մէջ կը գտնուէին հայկական ծագում ունեցող ցեղեր...: Ասոնք այնպէս ուժեղ էին և այնպէս հաստատուն կերպով տեղաւորուած երկրին մէջ, որ ոչ թէ միայն իրենց ինքնուրոյնութիւնը կորցրած չէին,

---

[24] Աշխարհագրութիւն հին եւ նոր Հայաստանեայց դպրատանց տղայոց համար, աշխատասիրեց՝ Հ. Մանուէլ Վ. Քաջունի, Վենետիկ, 1857, էջ 201:

[25] Աբէլեան Ն., Արքունական հայ գիւղացին Անդրկովկասում (II). Բաքուի նահանգ, «Արձագանք», Թիֆլիս, 1887, օգոստոսի 16, № 30, էջ 443:

[26] Տե՛ս **Минорский В.**, նշվ. աշխ., стр. 106.

[27] Ըստ Ստրաբոնի՝ Բուն Աղվանքում ապրել են 26 տարալեզու ցեղեր (տե՛ս **Страбон**, նշվ. աշխ.,, кн. XI, гл. IV, § 6, стр. 476). Բուն Աղվանքի թագավորության գոյության ընթացքում (մ. թ. ա. I - մ. թ. V դդ.) նրա կազմի մեջ մտած ցեղերի էթնոհամախմբման գործընթացի բուլության հետևանքով Կուրի ստորին հոսանքի ձախափնյակում այդպես էլ չձևավորվեց «աղվան» էթնոս՝ միասնական լեզվով, մշակույթով, ինքնագիտակցությամբ և, հետևաբար, ինքնանվանմամբ: Հարցի մանրամասն քննությունը տե՛ս **Акопян Ал.**, Албания-Алуанк, стр. 148, 273, նույնի՝ «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Զ դարերի Աղուանքում, ՀԱ, ՃԺԷ տարի, Վիեննա-Երևան, 2003, էջ 142, տե՛ս նաև **Акопян Ал., Мурадян П., Юзбашян К.**, նշվ. աշխ., էջ 189, տե՛ս նաև **Սվազյան Հ.**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 84:

[28] Տե՛ս Գալստյան Հ., Հակոբյան Ալ., Էթնալեզվական գործընթացները Բուն Աղվանքում (Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ, Երևան, 2003, էջ 91-92):

այլ և ընդհակառակը, պահպան յաջող հանգամանքներու պատճառաւ ... ազգի մը կեանքի վրայ...»[29]:

Հարկ է նշել, որ հայերը վաղ ժամանակներից մերձկասպյան շրջաններին հաղորդակից են եղել Երասխի (Արաքս) ստորին հոսանքից հարավ-արևելք ընկած Մեծ Հայքի Փայտակարան աշխարհով՝ «որ առ նովքն կասբից....»[30], *և հարակից տարածքներով*[31]: *Դրներ շարունակ այնտեղ են պտղել Արտաշեսյանների ու Արշակունիների ձմեռանոցները, նաև տեղակայված էին հայկական պինվորական կայազորները*[32]: *Կասպիական նավահանգիստների միջոցով Մեծ Հայքը կապվում էր առևտրի ասիական կենտրոններին, դրանով իսկ մասնակցելով և ներգրավ ունենալով համաշխարհային տնտեսա-*

---

[29] Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 44:

[30] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց, Վենետիկ, 1881, էջ 29: Մեծ Հայքի տասնմեկերորդ նահանգ Փայտակարանը ունեցել է 12 գավառ: Նահանգի Վարդանակերտ գավառը (Վարդանակերտ կենտրոնով) ընդգրկում էր Մուղանի դաշտի մեծ մասը, Հրաբոտպերոժ գավառի կենտրոնն էր արքունի բաղաք Փայտակարանը, որը նախքան Կասպից ծովի մակարդակի անկումը եղել է ծովափնյա (գտնվել է ներկայիս Սալիան քաղաքից դեպի արևմուտք), Ռոտիքաղան, Քաղանոոտը, Աքշի-Ռագավանը, Սպանդարանպերոժն ու Որմիզդպերոժը ընդգրկել են այժմյան Թալիշի տարածքը (տե՛ս Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց, Վենետիկ, 1881, էջ 33, Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 350, տե՛ս նաև Հարությունյան Բ., Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը, ԼՀԳ, Երևան, 1981, № 12, էջ 61-76, նույնի՝ Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թթ., ՌԵՀ, Երևան, 1976, 77-95, նույնի՝ Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների (քարտեզ), Երևան, 2001): Փայտակարանը Հայաստանի առաջին բաժանումից (387 թ.) հետո, տարբեր ժամանակներում մտել է այլևայլ պետությունների կազմի մեջ: 428-ին միացվել է Ատրպատականի մարզպանությանը: IX դ. վերջին մտել է Սաջյանների, X դ. 40-ականներից՝ Սալարյանների, X դ. վերջից՝ Ռավվադյանների պետության մեջ: XI դ. կեսին գրավել են սելջուկ թյուրքերը, XIII դ. առաջին կեսին՝ մոնղոլները: 1501 թ. մտել է Սեֆյանների Ղզլբաշական պետության կազմի մեջ: Փայտակարանի արևելյան երկրամասերը 1722-1735-ին միացվել են Ռուսաստանին, ապա կրկին անցել Իրանին: 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով վավերացվել է Փայտակարանի արևելյան մասի միացումը Ռուսաստանին, իսկ արևմտյան հատվածը մնացել է Իրանի կազմում: 1826 թ. վերացվել է Թալիշի խանությունը, որի տարածքը XIX դարի երկրորդ կեսին մտել է Բաքվի նահանգի մեջ: 1920 թ. ապրիլից Փայտակարանի արևելյան շրջանները Խորհրդային Ադրբեջանի, այնուհետև՝ Ադրբեջանի Հանրապետության կազմում են (տե՛ս Հարությունյան Բ., Փայտակարան, ՀՍՀ, հ. 12, Երևան, 1986, էջ 301-302):

[31] Տե՛ս **Страбон**, кн. XI, гл. VII, § 1, стр. 481, տե՛ս նաև Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Աճառյան Հ., էջ 35, տե՛ս նաև Հիւբշման Հ., նշվ. աշխ., էջ 103:

[32] Տե՛ս Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), Երևան, 1968, էջ 251:

կան. մշակութային ու քաղաքակրթական գործընթացներում[33]. «Հայ այս ձովի (Կասպից - Գ. Ս.) եղերքներուն վրայ բնակող այլ և այլ ազգի ժողովուրդներուն կը վաճառէին ամեն տեսակ թանկագին ապրանքներ: Տեղ տեղ ունէին նաև վաճառականութեան մեծ կայարաններ»[34]:

Հայկական լեռնաշխարհից արևելք, Կուրի ձախափնյակում, հայ էթնիկ տարրի վաղեմություններ փաստող բազմաթիվ ապացույցներ կան պատմագրական աղբյուրներում: Եսայի Հասան-Ջալալյանցը հավաստում է. «Եւ երկիրն էր (Շիրվանը - Գ. Ս.) բարեխառն և չէն և մարդաշատ, թէ հայ ազգաբ, որ ի Ղարաբաղու երկրէն ժողովուրդք յոլովք անցեալ էին յերկիրն այն աւելի քան զտեղականսն. (ընդգծումը մերն է - Գ. Ս.) և եթէ այլ ազգաբ՝ որ բնիկ ի յերկրէն են...»[35]: Իսկ Սիմեոն Ա Երևանցի պատմագիր կաթողիկոսն հիշատակարանում գրում է. «Իսկ բազմութիւնք հայալեզու և հայակրօն ժողովրդոցն, որք այժմ զոն ի յերկիրն Աղուանից, հայք են ի բնէ (ընդգծումը մերն է - Գ. Ս.)»[36]: Ուշագրավ է նաև Սարգիս արքեպ. Ջալալյանցի հայկական դյուղերի մասին եղած հետևյալ վկայակոչումը. «Այսօրիկ գիւղօրայք հին են, և բնակիչքն (հայերը - Գ. Ս.) բնիկ չամախանցիք...»[37]: 1909 թ. հուլիսին Շամախիից «Մշակին» հղած թղթակցութեանում դյուղագիր Սմբատ Գարագաշյանը հայերի հնաբնակութեան վերաբերյալ գրում է. «Հայ գիւղերը Շամախւոյ շրջակայքում գոյութիւն ունին շատ հնուց, տասնեակ դարեր առաջ»[38]: Հարցի վրա լույս է սփռում նաև Ներսես Աբելյանի ուսումնասիրութեանում բերված տեղեկութեյունը, որում ասված է. «Հայերը համարվում են Շիրվանի հին բնակիչների մի մասը: Նրանց այստեղ հայտնվելու ժամանակը վերաբերում է եթե ոչ X-XI դարե-

---

[33] Տես Դանիելյան Է. Լ., Հայոց քաղաքակրթական ներդրումը հին և միջնադարյան տնտեսական ու մշակութային քաղաքակրթական գործընթացներում, «Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսության մեջ»: «Այաս» ծովային ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր (2010-մայիսի 14-16), Երևան, 2010, էջ 27:

[34] Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, մասն երկրորդ, Կովկաս, ի. Բ, Փարիզ, 1922, էջ 278:

[35] Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Յերուսաղէմ, 1868, էջ 26:

[36] Դիւան Հայոց պատմութեան, Գ գիրք, մասն Բ, Սիմէոն կաթուղիկոսի յիշատակարանը, հրատարակեց Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1894, էջ 417-418:

[37] Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, էջ 394:

[38] Գարագաշ Ս., Ի՞նչն է պատճառը (ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 639, թ. 37), հմմ. Փարոս [Սմբատ Գարագաշյան], Շամախի, «Մշակ», Թիֆլիս, 1909, հուլիսի 15, № 151:

բին, ապա ամենայն հավանականությամբ շատ ավելի վաղ ժամանակների»[39]: *Այս իմաստով ուշագրավ դիտարկում է արել նաև Լեոն՝ նշելով, որ «Հայերը Շիրվանում բնակությունն են հաստատել շատ հին ժամանակներից: Բացի դրանից, չի պետք է մոռանալ, որ Շիրվանը հին Ադուանից երկրի մի մասն է, իսկ Ադուանից երկիրը, երկար դարերի ընթացքում եղել է հայերի կուլտուրական եւ քաղաքական խիստ ազդեցության տակ»*[40]: *Այն հանգամանքը, որ երկրամասում, ավելի ուշ Բաքվի նահանգը կազմող շրջաններում վաղ ժամանակներում ստվար հայ բնակչություն է ապրել, վկայում է «Ընթերցող» ծածկանունով հանդես եկող եղիշե ավ. քհն. Գեղամյանցն իր «Կորած աշխարհից» հոդվածում: «Գուցէ շատերին յայտնի լինի,- գրում է նա,- որ Բագուայ նահանգում մի ժամանակ հայութեան մեծ բնակչութիւն է եղել, որի թշուառ հետքերն են միայն ապրում այսօր»*[41]:

Շիրվանում հայերի հնաբնակ լինելը փաստում են նաև ոչ հայկական աղբյուրները: Այդ իմաստով հատկապես ակնառու է ցարական կառավարության պաշտոնյա, կովկասագետ Յու. Գագեմեյստերի տված տեղեկությունը. «Նախկին Կասպիական մարզի ամբողջ բնակչությունից իրենց նախաբնակությունը կարող են ապացուցել միայն հայերն ու ուտիները»[42]: *Տեղին է հիշատակել նաև կովկասագետ Ն. Զեյդլիցի հետևյալ ուշագրավ տեսակետը. «Շամախի քաղաքի շրջակայքում սփռված հայկական բնակավայրերը ամենայն հավանականությամբ կազմում են միջին դարերում առավել մեծ քանակությամբ եղած բնակավայրերի մնացորդները»*[43]:

Արևելյան Այսրկովկասում հայերի հնաբնակության և մշակութակերտ գործունեության չարունակականության անվիճելի վկայություններ են հայ ճարտարապետության հորինվածքներով

---

[39] Экономический быт государственных крестьян Геокчайскаго и Шемахинскаго уездов Бакинской губернии, исследование **Н. А. Абелова**, «Материалы для изучения экономическаго быта государственных крестьян Закавказскаго края» (այսուհետ՝ МИЭБГКЗК), т. VI, ч. II, Тифлис, 1887, стр. 12.

[40] **Լ** [Լեո], Շամախի, «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 7, № 28:

[41] **Ընթերցող** [Եղիշե ավ. քհն. Գեղամյանց], Կորած աշխարհից, «Արձագանք», Թիֆլիս, 1893, դեկտեմբերի 12, № 132:

[42] **Гагемейстер Ю.**, Хозяйственный очерк Закавказскаго края: народонаселение (Сборник газеты Кавказа), Тифлис, 1847, стр. 58.

[43] Списки населенных мест Российской империи по Кавказскому краю. LXV-Бакинская губерния. Список населенных мест по сведениям 1859 по 1864 г. Сост. глав. ред. ком. **Н. Зейдлицем**, Тифлис, 1870 (այսուհետ՝ СНМ-1859-1864), стр. 93. Հմմ. **Зейдлиць Н.**, Этнографический очерк Бакинской губернии, стр. 59.

կառուցված միջնադարյան բազմաթիվ եկեղեցիները, վանքերը և մատուռները, հնավայրերի հայերեն բազմաբնույթ արձանագրություններ ունեցող հարյուրավոր խաչքարերն ու տապանաքարերը, որոնցով հարուստ են Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի փռված հայկական բոլոր դյուղերի գերեզմանատները[44]: Դեռևս Սարգիս արքեպ. Ջալալյանցի, Դանիել արքեպ. Շահնազարյանցի և Մակար եպս. Բարխուտարյանցի և Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի չրջագայությունների ժամանակ երկրամասի բազմաթիվ դյուղերում պահպանվել էին դրանց վաղեմի բնակիչների՝ հայերի թողած նյութական մշակույթի հետքերը՝ հին գերեզմանոցներ, եկեղեցիներ, վանքերի ու բերդերի ավերակներ[45]: Պատմական բացառիկ արժեք են նաև երկրամասի տասնյակ գրչօջախներում (Բաքու, Շամախի, Սաղիան, Մեյսարի, Մատրասա և այլն) XIV-XIX դդ. ընթացքում ընդօրինակված հայերեն ձեռագիր բազմաթիվ մատյանները (ավետարաններ, սաղմոսարաններ, քարոզգրքեր, ճաշոցներ, եկեղեցական ծիսական դրքերի ժողովածուներ՝ մաշտոցներ, ժամագրքեր, խորհրդատետրեր և այլն), որոնց մի մասն այժմ պահպանվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի գրատանը[46]:

Պատմական աղբյուրները հաղորդում են, որ Արևելյան Այրարատի, մասնավորապես մերձկասպյան հյուսիսարևելյան շրջաններում ռազմական կարևոր նշանակություն ունեցող «Ճորայ պահակի» կամ «Դուռն Հոնացի» պաշտպանությունում վաղ ժամանակներից ուրույն դերակատարություն են ունեցել հայ նախարարական տները: XIII դ. հեղինակ Ստեփաննոս Օրբելյանի հաղորդմամբ՝ Սյունյաց նախարարական տունը Տրդատ I արքայի (66-88 թթ.) ժամանակ-

---

[44] Տե՛ս Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Երևան, 1997, էջ 4-5:

[45] Տե՛ս Ջալալեանց Մ., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, Դանիէլ արքեպ. Շահնազարեանց, Այցելութիւն եկեղեցեաց գիւղօրէից վիճակին Հայոց Շամախւոյ, «Արարատ», 1870, ԺԱ, էջ 229-231, ԺԲ, էջ 257-263, 1871, Բ, էջ 257-263, Գ, 318-323, Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893: Սմբատեանց Մ., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախւոյ թեմի, Տփխիս, 1896:

[46] Տե՛ս Եգանյան Օ., Մեսրոպ արքեպ. Սմբատյանի «Նկարագիր Շամախւոյ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը, «Էջմիածին», 1970, Ա, էջ 45-48, տե՛ս նաև Ստեփանյան Գ., Շամախու հայոց թեմի գրչության այլ վայրերում գրչագրված եկեղեցապատկան և վանքապատկան մատյանները (XIV-XIX դդ.), «Էջմիածին», 2005, ԺԲ, էջ 67-73:

ներից մասնակցում էր Ճորա պահակի պաշտպանությանը: Պատմիչն ասում է, որ Հայոց Վաղարշակ թագավորը (=Տրդատ I) կարգից Սիսական տոհմը՝ իբրև առաջին նահապետություն և «երկրորդ թագաւորութեան իւրոյ և ընդդէմ կալ հանապազ պատերազմաւ դրանն Հոնաց»[47]:

Կուրի ձախափնյակի մշակութային զարգացումներում հայկական ազդեցությունն առավելապես դրսևորվել է քրիստոնեության և դպրության տարածման ու հաստատման գործում[48]: Ագաթանգեղոսի հայերեն բնագրի հաղորդմամբ՝ Գրիգոր Լուսավորիչը և Հայոց թագավոր Տրդատ III Մեծը (298-330 թթ.) քրիստոնեության քարոզչությունը տարածեցին «...մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչև ի գրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից...»[49]: Ագաթանգեղոսի երկի վաղագույն տարբերակում, որը կրում է «Գրիգորի վարք» անունը[50], ասվում է, որ Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայում քահանայապետ ձեռնադրվելուց և Հայաստան վերադառնալուց հետո Բուն Աղվանք է ուղարկել եպիսկոպոս Թովմային՝ Փոքր Հայքի Սատաղ քաղաքից[51]: Գրիգոր Լուսավորչի հաստատած Աղվանից եպիսկոպոսապետեր ձեռնադրելու կարգը շարունակվեց նաև հետագայում:

Պատմականորեն հավաստի է, որ IV դ. 30-ական թվականների սկզբներին երկրամասում քրիստոնեություն է քարոզել Բուն Աղվանքի և Վիրքի համար եպիսկոպոս կարգված՝ Հայոց կաթողիկոս Վրթանես Ա Պարթևի ավագ որդի Գրիգորիսը[52], որը

---

[47] Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատմութիւն Տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Սկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 9:

[48] Տե՛ս **Минорский В.**, նշվ. աշխ., стр. 28, 35-36: Հմմ. **Аббас-Кули-Ага Бакиханов**, Гюлистан-Ирам, Баку, 1926, стр. 31.

[49] Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփխիս, 1909, էջ 439:

[50] «Գրիգորի վարք»-ը մեզ է հասել միայն հունարեն և ասորերեն ու նրանցից կատարված արաբերեն և ասորատառ արաբերեն (քարշունի) թարգմանություններով: Հունարեն բնագիրը հայտնաբերել ու հրատարակել է բելգիացի հայագետ Ժերար Գարիտը:

[51] Տե՛ս Ագաթանգեղոսի պատմության հունարեն նորահայտ խմբագրությունը (Վարք): Թարգմանություն հունարեն բնագրից՝ Հ. Բարթիկյանի, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, «Էջմիածին», 1966, Թ-Ժ, էջ 85, տե՛ս նաև Բարթիկյան Հ., Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, Երևան, 2002, էջ 178:

[52] Տե՛ս Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանեանի, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասեանի, Երեւան, 1987, էջ 20; Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Ա, Կ. Պոլիս, 1912, § 99, էջ 138-139, տե՛ս նաև **Мурадян П.**,

նահատակվել է Դերբենդից հարավ՝ Կասպից ծովի ափին գտնվող Վատնյա գաչատում, մոգքթայց հնխանոս թագավոր Սանեսանի հրամանով[53]*: Բուն Ագվանքում ձևավորված եկեղեցին, ընդունելով Հայաստանյայց Առաքելական եկեղեցու գերակայությունը (Հայաստանյայց եկեղեցին «Հավատարիների մեջ առաջինն» կարգավիճակ ուներ Ագվանից և նախքան քաղկեդոնականության VII դ. սկզբնեբին Հարևը նաև Վրաց եկեղեցու նկատմամբ), վարչականորեն և դավանարանական առումով նրա մասն էր կազմում*[54]*:*

Կուրի ձախափնյակում գրի, լուսավորության ու քրիստոնեության հետագա տարածումը սերտորեն կապված է Մեսրոպ Մաշտոցի կրթալուսավորական գործունեության հետ, որը, V դարի սկզբին Հայաստանում նորաստեղծ գրի ամրապնդումը և լուսավորական գործը հաջողությամբ ավարտին հասցնելուց հետո, նույն առաքելությամբ անցել է նաև Բուն Ագվանք և Եսայուն թագավորի, երեմիա եպիսկոպոսի ու Բենիամին երեցի օգնությամբ տարածել իր ստեղծած ագվանական նշանագրերը[55]*:*

Кавказский культурный мир и культ Григория Просветителя, «Кавказ и Византия», вып. 3, Ереван, 1982, стр. 5-20, տե՛ս նաև **Սվազյան Հ.**, Աղվանից կաթողիկոս Սանուկ Գրիգորիս, «Էջմիածին», 2003, Զ, էջ 39-46, տե՛ս նաև **Акопян Ал.**, Албания-Алуанк, стр. 124-145, նույնի՝ «Վաչագանի վեպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Զ դարերի Աղուանքում, ՀԱ, ճԺԷ տարի, Վիեննա-Երևան, 2003, էջ 45-142:

[53] Գրիգորիսի նահատակությունը Բ. Հարությունյանի ճշգրտումներից հետո ստույգապես թվագրվում է Տրդատ Մեծ արքայի վախճանից (330 թ.) անմիջապես հետո այսինքն՝ 330-331 թթ. (տե՛ս **Հարությունյան Բ.**, Մոգքթաց Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան, ԼՀԳ, Երևան, 1981, № 6, էջ 76-77):

[54] Տե՛ս **Акопян Ал.**, Албания-Алуанк, стр. 137, տե՛ս նաև **Հակոբյան Ար.**, Արևելյան Այսրկովկասում հայկական և իրանական էթնոմշակութային ներդրումների շուրջ (մի խմբի ձևավորման օրինակով), «ՄԱ», պր. Ա, Երևան, 2002, էջ 33:

[55] Տե՛ս **Կորյուն**, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր **Մ. Աբեղյանի**, Երևան, 1941, էջ 70, **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, բնագիրը և ներածութիւնը՝ **Մ. Աբեղեանի** եւ **Ս. Յարութիւնեանի**, լրացումները՝ **Ա. Սարգսեանի**, Երևան, 1991, էջ 329, **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, բնագիրը և ներածությունը՝ **Վարագ Առաքելյանի**, Երևան, 1983, էջ 117 (այսուհետ՝ **Կաղանկատուացի**): Տե՛ս նաև **Ակինեան Ն.**, Ս. Մաշտոց վարդապետ. կեանքն եւ գործունէութիւնը, հանդերձ կենսագրութեամբ Ս. Սահակայ, Վիեննա, 1949, էջ 295-319, **Абрамян А.**, Дешифровка надписей Кавказских агван, Ереван, 1964, էջ 73, **Յակոբեան Ա.**, Մաշտոցի երկրորդ հիւսիսային ուղեւորութեան ժամանակը եւ խնդիրները (Հայոց գրեր 1600: Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2006, էջ 123-191); The Caucasian Albanian Palimpsests of Mt. Sinai, vol. II, edited by Jost Gippert, Wolfgang Schulze, **Zaza Aleksidze** and **Jean Pierre Mane**, Brepols, 2008.

Վաղ միջնադարում ևս՝ մինչև Հայոց թագավորության անկումը (428 թ.), Ադիաբենից թագավորությունը որոշ ընդհատումներով գտնվում էր հայկական թագավորության քաղաքական և մշակութային ազդեցության ներքո, որի խոսուն վկայությանն ենք հանդիպում Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում. «Սիիդքն առաջնոյ պատմութիւնն եղաք գսուբր Լուսաւորիչն Հայոց... գսուբրն Գրիգորիոս... Իսկ երկրորդ հատուածիս դիցուք զլուս զլուսաւորիչս կոչմանցն Ադուանից, որպէս գագաչնոց և գհատատակեցաց մերոց, մանաւանդ զի և առաջնորդք նոցա հայալեզուք, հայերէնախօսք յոլովք էին. թագաւորքն՝ հնադանդք՝ թագաւորացն Հայոց, ընդ ձեռամբ նոցա լեալք, և եպիսկոպոսքն՝ ձեռնադրեալք ի սրբոյն Գրիգորէ և յաթոռակալաց նորա, և ազգն ուղղափառութեամբ ընդ մեզ կացեալ ի կրօնս, վասն այնորիկ արժան է ի միասին լինել յիշատակ երկուց ազգացս»[56]:

Մեծ Հայքի հյուսիսարևելյան Արցախ և Ուտիք նահանգներից հայոց ազդեցությունը Բուն Ադիանքի տարածքների վրա ուժեղացավ հատկապես Վաչագան Բարեպաշտ թագավորի երկարատև ու արդյունավետ իշխանության (485-VI դարի առաջին կես) շրջանում, որն արքայաբար իշխեց «Արցախայ ամուր աշխարհին» և «ի Կամբէճս և յԱղուանս»[57]: *Վաչագան Բարեպաշտը պատմության մեջ թողել է ազգանվեր ու նկեղեցասեր գործչի բարի համբավ: Նրա հայրենասիրական և աստվածահաճո գործունեությունը գովեստով է ներկայացվում հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Ադուանից աշխարհի» երկում. «Սա եղև դուռն լուսոյ աստուածագիտութեան և բազմազան բարեաց օրինակ երջանիկս այս»*[58]:

Ըստ Եղիշե պատմիչի՝ V դարում, երբ Հայաստանի մեծ մասը ենթակա էր Սասանյան Իրանին և ուներ մարզպանության կարգավիճակ, պարսից արքունիքը հայ նախարարական տներին ևս ներգրավել էր «Ճորայ պահակի» պաշտպանության գործում[59]: *Այս իրողությունը փաստել է նաև Ղազար Փարպեցին, որի հաղորդմամբ՝*

---

[56] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 192:

[57] Կաղանկատուացի, էջ 47, 50, տե՛ս նաև Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Երևան, 1981, 141-142, տե՛ս նաև Դանիէլեան Է. Լ., Գանձասարի պատմութիւն, Երեւան, 2005, էջ 43:

[58] Կաղանկատուացի, էջ 83:

[59] Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ 43:

Վասակ Սյունին Վրաստանի մարզպան նշանակված ժամանակ (439-443 թթ.) պաշտպանում էր նաև Կովկասյան նշանավոր լեռնանցքը: Ինչպես հետևում է Վասակ Սյունու խոսքից՝ «...ես մինչ Վրաց մարզպանն էի և դուռն Աղուանից յիմում ձեռին էր...»[60]: «Ձորայ պահակի» պաշտպանության նպատակով հայ, մասնավորապես սյունեցի զինվորականության և խաղաղ բնակչության հաստատումը ուժեղացավ V դարի վերջերին և VI դարի սկզբներին՝ Կասպից ծովի արևմտյան ափի երկայնքով Իրանի քաղաքական դիրքերի ամրապնդման ընթացքում[61]: Ավելին՝ IX դ. արաբ հեղինակ Բալաղուրին հաղորդում է, որ Խոսրով I Անուշիրվանը (531-579 թթ.) իր կառուցած պաշտպանական ամրություններում՝ Շաբիրանում, Մասկատում և Բաբ ալ-Արմարում (Դերբենդ), Իրանից բերված բնակիչների[62] հետ մեկտեղ բնակեցրեց Սյունիքից տեղափոխած «քաջարի ու կորովի մարդկանց», որոնց նա կոչում էր Սիյասիջիններ (սիսականցիներ)[63]:

---

[60] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904, էջ 83:

[61] Մանրամասն քննությունը տե՛ս **Еремян С.**, Сюния и оборона сасанидами кавказских проходов, Տեղեկագիր ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալի, Երևան, 1941, № 7 (12), էջ 33-40, Քարխոտարյան Ս., Դերբենդի հայ-աղվանական թագավորությունը, ՊԲՀ, Երևան, 1969, № 3, էջ 125-147, նույնի՝ Страницы из истории Арцаха и армяно-албаеских отношений, Ереван, 2011, стр. 97-137, Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987, էջ 469-470, Հակոբյան Ար., Արևելյան Այսրկովկասում..., էջ 31-39:

[62] Սասանյանները Աղվանքը Իրանին ենթակա երկիր դարձնելուց հետո քաղաքական իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով դեռևս Կավատ կամ Կուբաղ I-ի (488-531 թթ.) կառավարման տարիներին այդտեղ վերաբնակեցրին Գիլանից, Ջաշանից, Սպահանից և Խորասանից տեղափոխած իրանցի հազարավոր բնակիչների (տե՛ս **Зейдлицъ Н.**, Этнографический очерк Бакинской губернии, стр. 54, տե՛ս նաև Հակոբյան Ար., Արևելյան Այսրկովկասում..., էջ 27-29):

[63] Տե՛ս **Баладзори**, Книга завоевания стран, вып. III, текст и перевод с арабского проф. **П. К. Жузе**, Баку, 1927, стр. 5, 7, տե՛ս նաև **Караулов Н.**, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Адербейджане: **Ибн-ал-Факих**, (Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այսուհետ՝ СМОМПК), вып. XXXI, Тифлис, 1902, стр. 23, տե՛ս նաև Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 17, տե՛ս նաև Արաբական աղբյուրներ, Գ: Արաբ մատենագիրներ Թ-Ժ դդ., ներածությունը և բնագրից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 266, տե՛ս նաև Հատուածք Պատմութեան Հայաստանի, քաղեալք յարաբացի պատմագրաց ի ծեռն տոքթ. Մորքմանայ արեւելագետի, թարգմանեալ ի հայ Կարապետ Ս. Իւթիւճեան, տետր Ա, Կ.Պոլիս, 1874, էջ 5:

Պատմական աղբյուրները վկայում են, որ Արևելյան Այսրկովկասի մերձկասպյան շրջաններում հայարնակ բնակավայրեր են եղել նաև Կասպից ծովի արևմտյան ափին հրվանդանաձև, շուրջ 60 կմ երկարությամբ ծովի մեջ խորացած Ապշերոնյան[64] թերակղզում[65]: Թերակղզում գտնվող նավթի գլխավոր աղբյուրներն իրենց անշեջ կրակներով հայտնի էին վաղ ժամանակներից: Աշխարհի գանազան կողմերից այդտեղ էին գալիս բազմաթիվ ուխտավորներ՝ երկրպագելու սրբազան կրակը[66]: Ըստ նշանավոր բնագետ Նազարեթ Տաղավարյանի (Ջաուրճյան)՝ թերակղզու նավթի գործածությունը հայերին հայտնի էր այն ժամանակվանից սկսած, երբ Հայոց Տիգրան II Թագավորի (մ. թ. ա. 95 - մ. թ. ա. 55) նվաճումների հետևանքով Ադվանքը գտնվում էր Հայաստանի գերիշխանության տակ: Վկայակոչով Հռոմեացի պատմիչ Դիոն Կասիոս Կոկկեյանոսի (II դարի երկրորդ կես - III դարի սկիզբ) այն տեղեկությունը, թե ինչպես Հռոմեացի զորավար Լուկիոս Լուկուլլոսի կողմից մ. թ. ա. 69 թ. Տիգրանակերտի պաշարման ժամանակ հայերը «նետաձգությամբ և (պաշարողական) մեքենաների վրա թափած նավթով մեծապես վնասեցին նրան (Լուկիոս Լուկուլլոսին - Գ. Ս.)»[67], Ն. Տաղավարյանը գրում է. «Դիոն Կասիոս յանուանէ չի յիշատակեր թէ Մեծն Տիգրան ուսկից կը հանէր նաւթը: Բայց ծանօթ իրողութիւն է թէ Վրաստան և Ադուանք իր գերիշխանութեան ներքև էին և հետևաբար հոս ակնարկութիւն մ՚ունինք նաւթահանքերու նշանաւոր աղբիւրին, - Բագուի մասին»[68]: Այսպիսով՝ ամփոփում է Ն. Տաղավարյանը. «...նթէ ստոյգ է մեր ենթադրութիւնը... հարկ է հետևեցնել, որ նա պատերազմական մեծ նշանակութիւն մ՚ունեցած է անցեալին մէջ ու թերևս հին Հայոց տնտեսական կեանքին մէջ ալ ունեցած է իր կարևոր բաժինը»[69]:

---

[64] Ապշերոն անվան ստուգաբանության վերաբերյալ Ղ. Ալիշանը տալիս է հետևյալ բացատրությունը՝ «...այժմ կոչի երկիրս այս Ափշեռոն, որ ստուգաբանի ըստ պարսիկ բարբառոյ Ապի-շէրրան, այսինքն է Ջուր շառաչող» (Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 93):

[65] Տե՛ս **Зейдлиць Н.**, Этнографический очерк Бакинской губернии, стр. 59.

[66] Տե՛ս Хождение за три моря Афанасия Никитина, изд. подг. **Лурье Я.** и **Семенов Л.**, Л-д, 1986, стр. 45.

[67] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 9: Հին հունական աղբյուրներ, Ա, Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 125:

[68] S. [Տաղավարյան Նազարեթ], Բագուի նաւթահանքերը հնութեան մէջ, «Բազմավէպ», Վենետիկ, 1908, № 11, էջ 496:

[69] Նույն տեղում, էջ 497:

Ապշերոնյան թերակղզում հայերը բնակություն են հաստատել առնվազն վաղ միջնադարից և ունեցել են իրենց պաշտամունքային օջախները: «Նոր-դարի» թղթակից «Ադուան» ծածկանունով Սահակ Մուրադյանը XIX դարի վերջին լինելով Բուզովնա գյուղում, տեղի ծերունիների պատմածների հիման վրա գրառել է հետևյալ ուշագրավ ավանդությունը. «Ամբողջ Ապշերոնեան թերակղզու վրայ, Բաքուից մինչև Ապշերոն գիւղաքաղաքը, մի ժամանակ ապրելիս են եղել թուով մօտ 60,000 հայեր, որոնք յետոյ Կասպից ծովի արևելեան կողմից (Միջին Ասիայից) անդադար իրենց վրայ գրոհ տուող գազանարարոյ ժողովուրդներից ստիպուած, ցրուել են դանադան կողմերը, իսկ նրանց տեղը բռնել են այժմեայ թուրքերը»[70]:

Բաքու քաղաքից 30 կմ հեռավորության վրա՝ թերակղզու հյուսիսային եզրին գտնվող[71] նրբեմնի հայկական, սակայն հետագայում մահմեդական դարձած Բուզովնա գյուղում բնակվող հայերի և նրանց սրբատեղիների, Սբ. Հովհաննեսի և Անդրեասի դամբարանի հայաստատ արժանապրությունների մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում 1842 թ. օգոստոսին այդտեղ այցելած արևելագետ, Կազանի և Պետերբուրգի համալսարանների պրոֆեսոր Իլյա Բերյոզինը: Հեղինակի տվյալներով՝ դամբարանի կողքին եղել է քառանկյուն, կլոր թաղակապ ծածկով ոչ մեծ մատուռ, որը տեղի հայերի ներկայացմամբ սուրբ ճգնավորների համար ծառայել է որպես վանական խուց: Մատուռի մուտքին նշմարվել են հայերեն տառերով արձանագրության մնացորդներ[72]: Համաձայն մատուռի կողքի եզրաքարատի արձանագրության՝ շինությունը 1480-1481 թթ. կառուցել է հայ ոմն Աթանվարը[73]: Ըստ Ի. Բերյոզինի գրում է, որ Բուզովնայի հայերն այստեղ են կատարել իրենց պաշտամունքային ծեսերը[74], և իր այցելության ժամանակ հանդիպել է ուխտագնացության եկած երեք հայ ընտանիքի[75]:

Ի. Բերյոզինի նկարագրությունը բազմաթիվ առումներով համապատասխանում է ավելի ուշ շրջանում հնավայրում եղած այլ հեղինակների թողած տեղեկություններին: Հետաքրքիր փաստեր է

---

[70] Աղուան, [Սահակ Մուրադյան], Ովքե՞ր են մատրասեցիք, «Նոր-դար», Թիֆլիս, 1903, հունվարի 17, № 10:

[71] Տե՛ս Географическо-статистический словарь Российской империи, сост. П. Семеновь, т. I, СПб., 1863 (այսուհետ՝ ГССРИ), стр. 330.

[72] Տե՛ս Березин И., Путешествие по Дагестану и Закавказью, Издание 2-е пополненное, Казань, 1850, ч. III, гл. V (Отъ Баку до Сальяна), стр. 64.

[73] Տե՛ս նույն տեղում, стр. 65.

[74] Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև ГССРИ, т. I, стр. 330, տե՛ս նաև КК на 1856 г., Тифлис, 1855, стр. 511-512.

[75] Березин И., նշվ. աշխ. ч. III, V (Отъ Баку до Сальяна), стр. 64.

հազորդում XX դ. սկզբին «Արարատ» ամսագրում հրատարակված «Ս. Եղիայի վանքը Բուզովնում» հոդվածը: Հոդվածագիր Եր. Տեր-Հովհաննիսյանցը, լինելով Բուզովնայում, արժեքավոր տեղեկություններ է հաղորդում հայերին վերաբերող վիմագրական նյութի պատահիկների մասին: Ըստ նրա՝ «Բուզովնան, որ մի ժամանակ հայի դիւղ է եղել, ներկայումս ծառայում է Բագուեցւոց համար իբրև ամարանոց...»[76]: Բուզովնայում նշանավոր ուխտատեղիներից էր Սբ. Եղիա Մարգարեի մատուռը, որի հետ էին կապված նաև Անդրեաս և Անանիա քարոզիչների անունները[77]: Մատուռն ունեցել է գեղահարմար դիրք: Եր. Տեր-Հովհաննիսյանցի նկարագրությամբ՝ «Հրաշալի դիրք ու գեղեցկութիւն ունի Ս. Եղիայի մատուռը. չորս կողմից շրջապատուած է սպիտակ քարէ սալայատակով և փայտէ վանդակներով. իսկ սոցա եռևր թիկնապահների նման կանգնած են սաղարթախիտ հովհար ծառեր, որոնց հովանու տակ քիչ չեն հանգիստ վայելել արևից պապակուած բազուեցիները»[78]: Մատուռն ունեցել է ձեռագիր հիշատակարան, ուր նշված են եղել այդ սրբատեղիի տարեգրության մանրամասները և գյուղի կալվածքների քանակը[79]: Բուզովնա գյուղի շրջակայքում եղել են նաև Սբ. Մինասի (չինված էր մի ապառաժ քարի վրա, ուր փորագրված էին մի քանի խաչեր), Սբ. Սիմոնի և Սբ. Հովհաննես Ճգնավորների նահատակման վայրերում չինված մատուռները: Ճգնավորների տապանաքարերի վրա արձանագրված էր «ՇԿԸ» (1119)[80] թվականը[81]: Սբ. Եղիա Մարգարեի մատուռից արևելք՝ դարձյալ մի ժայռի վրա գտնվել է հաջորդ սրբատեղին, սակայն առանց որևէ արձանագրության[82]: Եր. Տեր-Հովհաննիսյանցի այցելության ժամանակ Սբ. Եղիայի մատուռի մոտ գտնվող քարի վրա դեռևս պահպանվում էր Ներսես ավագ քահանայի կողմից 1421 թ. կառուցված ջրհորի վերաբերյալ արձանագրությունը. «Ես Ներսէս աւագ քահանայ չինեցի ջրհորս այս յիշատակին ծնողաց իմոց հայր...քահանայ... Տէր Ներսէս և կնոջ նորա Խա-

---

[76] Տէր-Յովհաննիսեանց Եր., Ս. Եղիայի վանքը Բուզովնում, «Արարատ», 1902, Ե-Զ, էջ 482:

[77] Տե՛ս նույն տեղում, էջ 483, տե՛ս նաև CHM-1859-1864 (Списокъ населенныхъ мест Бакинской губернии), стр. 93:

[78] Տե՛ս Տէր-Յովհաննիսեանց Եր., նշվ. աշխ., էջ 485:

[79] Տե՛ս նույն տեղում:

[80] Եր. Տեր-Յովհաննիսյանցի մոտ հայոց ՇԿԸ տառերի թվային համարժեքը պյուրիմացաբար նշված է 1118 թ.:

[81] Տե՛ս Տէր-Յովհաննիսեանց Եր., նշվ. աշխ., էջ 486:

[82] Տե՛ս նույն տեղում:

թուն... ի ամի թուականին Հայոց ՊՀ. (820) (Փրկ. 1421 թ.)»[83]: *Բուզովնա գյուղում պահպանվել են նաև տապանաքարերի և խաչքարերի բնկորներ՝ Ջ. (700), Պ. (800) և Ջ. (900) թվականների արձանագրություններով, եկեղեցական շինությունների ավերակներ: Բուզովնա գյուղում գտնվել են նաև հայերեն գրով հին դրամներ: 1902 թ. գտնված ոսկեդրամի մի երեսին եղել են հայերեն արձանագրություններ, իսկ մյուս երեսին՝ խաչ*[84]: *Բերված տեղեկությունները վկայում են Բուզովնայի հնուց ի վեր հայաշատ լինելու մասին: Եր. Տեր-Հովհաննիսյանցը գրում է. «...եթէ ի նկատի ունենանք տեղական հին յիշատակարանները և արձանագրութիւնները, պէտք է ենթադրել, որ Բուզովնան եղել է մի հին հայաշատ կենտրոն, որն ունեցել է իւր սեփական սրբատեղիները, իւր քահանաները և իւր առանձին դերեզմանատունը»*[85]:

Ապշերոնյան թերակղզին և շրջակա բնակավայրերի՝ նշված ժամանակաշրջանում հայերով բնակեցված լինելու հանգամանքը հավաստում են նաև հնագիտական այլ տվյալներ: Այսպես՝ նույն Բուզովնա գյուղում հայտնաբերված դամբարանի մուտքին եղել է արաբատառ շինարարական արձանագրություն, որի բովանդակությունից հետևում է, որ այն պատկանում է ոմն Հայ Տարսայիճի Բահրամի որդուն՝ Շամավոնին. «Այդ հանգստարանը Տարսայիճ (Հայի) Բահրամի որդի Շամավոնինն է: Մուհարամի ամսի յոթհարյուրվեց թվին (=1303 թ.)»[86]: *Բուզովնան, զուտ որպես հայկական գյուղ, գոյատևել է մինչև 1500-ական թվականների սկիզբը*[87]:

Փաստերը վկայում են, որ Բուզովնան ունեցել է թաթախոս հայ բնակչություն[88], *և գյուղի բնակիչները 1501, 1509 թթ. ղզլբաշ-*

---

[83] Նույն տեղում, էջ 484:

[84] Տե՛ս նույն տեղում, էջ 486:

[85] Նույն տեղում, էջ 482:

[86] Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք, հատորը կազմեց Չոբանեան Պ., Երեւան, 1999 (Չոբանեան Պ., Մակար եպս. Բարխուտարեանցի կեանքն ու գործը, էջ 13): Ուշագրավ այդ տեղեկությունը Պ. Չոբանյանը մեջբերել է աղրբեջանցի պատմաբան Սիմա Քերիմզադեի («Надписи памятников архитектуры Азербайджана 11-15 вв.: (автореф. канд. дисс.), Баку, 1970) թեկնածուական ատենախոսության սեղմագրից:

[87] Տե՛ս Տեր-Յովհաննիսեանց Եր., նշվ. աշխ., էջ 484-485:

[88] Թաթախոս հայերի պատմության հարցերով զբաղվող Ար. Հակոբյանը պատմագիտական, ազգագրական, մատենագրական, արխիվային սկզբնաղբյուրների, Հայաստանում և Հյուսիսային Կովկասում կատարած դաշտային հետազոտությունների և լեզվագիտական փաստերի համադրմամբ եզրակացնում է, որ թաթախոս հայերը դեռևս վաղ միջնադարում Արևելյան Այսրկովկասում հաստատված հայ ուզմական վերաբնակիչների հետնորդներն են, որոնք կրելով լեզվամշակութային փոփոխություններ, դարձել են իրանալեզու (թաթախոս), սակայն պահ-

նների Բաքու կատարած արշավանքի ժամանակ գաղթել են գանգան կողմեր: Համանական է, որ նրանց մի մասը հաստատվել է ավելի վաղ իրենց համագյուղացիների կողմից հիմնված Շամախիի գավառի հայկական Մատրասա գյուղում, ինչպես նաև հետացել Ղուբայի լեռնային շրջաններում գտնվող հայկական գյուղեր[89]:

XIV դարի առաջին կեսին Բաքվին վերաբերող հանապարհորդական նկարագրություններում մեջ առանձնակի տեղ է գրավում պարսիկ աշխարհագրագետ Համդալլա Ղազվինի «Նուզհաթ ալ-գուլուբ» երկը: Այստեղ տեղեկություններ կան քաղաքի բնակլիմայական պայմանների և տնտեսական վիճակի մասին[90]:

Բաքվի շրջակայքում գոյության ունեցած հայկական գյուղական համայնքների մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում XV դ. սկզբի տեղացի արաբ աշխարհագրագետ և հանապարհորդ Աբդ ար-Ռաշիդ ալ Բաքուվին[91]՝ *ավանդաբար նրանց բնակիչներին կոչելով քրիստոնյաններ: «Բաքուն... մերձկասպյան,- գրում էր Բաքուվին,- կան շատ գյուղեր և յուրաքանչյուրն ունի ամրացված միջնաբերդ ամրապինդ պատերով: Այդ գյուղերի բոլոր բնակիչները քրիստոնյաններ են (իմա՛ հայեր - Գ. Ս.)...»*[92]: *Ի. Բերյոզինը նշում է,*

պանել են հայկական ինքնագիտակցությունը, դավանանքը և մշակութային նկարագիրը: Թաթախոս հայերը XIX դարի վերջին հիմնականում ապրել են Շամախիի գավառի Մատրասա, մասամբ նաև Հնդար և Ղուբայի գավառի Քիլվար ու Խաչմաս գյուղերում: Թաթախոս հայերի ծագումնաբանության, ձևավորման, անցած պատմական ուղու, մշակութային նկարագրի ու ինքնության խնդիրներին առնչվող հարցերի մանրամասն քննությունը տե՛ս Հակոբյան Ար., Թաթախոս հայեր (պատմաազգագրական ուսումնասիրություն), պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2002, նույնի՝ Татоязычные армяне в Восточном Закавказье, Археология (IV) и этнология (III) Кавказа (международная научная конференция). Сборник кратких содержаний докладов, Тбилиси, 2002, стр. 193-196, նույնի՝ О культурном облике татоязычных армян, Археология, этнология и фольклористика Кавказа (материалы международной конференции), Ереван, 17-18 ноября, 2003, стр. 268-269; **Акопян Ар., Далалян Т.,** О некоторых особенностях идентичности эдессийских армян (Заметки по итогам полевых работ в селе Эдессия Ставропольского края РФ), Археология, этнология, фольклористика Кавказа (Международная научная конференция. Сборник кратких содержаний докладов, Тбилиси, 2004, стр. 160-161; **Акопян Ар.**, Татоязычные армяне 15 веков от «армянства» к «армянству», стр.190-210.

[89] Տե՛ս Հակոբյան Ար., Թաթախոս հայեր, էջ 63:

[90] Տե՛ս حمدالله مستوفى قزوينى، نزهة القلوب، طهران ۱۳۳۶، ص ۱۰۶

[91] Տե՛ս Энциклопедический словарь, под ред. проф. **И. Андреевскаго,** т. II[A], издатели **Ф. Брокгауз, И. Ефрон,** СПб., 1891, стр. 774.

[92] **Абд ар-Рашид ал-Бакуви,** Китаб талхис ал-асар ва аджа'иб ал-малик ал-Каххар («Сокращение [книги о] «Памятниках» и чудеса царя могучего»), издание текста, перевод, предсловие, примечания и приложения **З. М. Буниятова,**

որ Բաքվի շրջակայքում նախկինում շատ գյուղեր բնակեցված են եղել հայերով, սակայն իրանական տիրապետության հայահալած քաղաքականության հետևանքով հայերը լքել են իրենց բնակավայրերը և կենտրոնացել Բաքվում, իսկ գատարկված բնակավայրերը զբաղել են մահմեդականները[93]*: Բաքվում բնակված բանաստեր Սարգիս Մոցիկյանը վկայում է, որ Բաքվի շրջակայքում եղել է Նոր Շեն անվամբ հայկական գյուղ, որտեղ 1892 թ. կատարված պեղումների արդյունքում հայտնաբերվել է հնէմանուսական շրջանի կուռք-արձանիկ. «Ակէ մօտ 30 տարի առաջ, Պաքու քաղաքին մօտերը գտնուող Նոր Շէն հայ գիւղին մէջ կատարուած պեղման մը միջոցին, երևան նկատ այդ առուեստներէ (կրակի և ծովի – Գ. Ս.) մէկուն արձանը»*[94]*:*

Ապշերոնյան թերակղզում հայաբնակ գյուղեր էին նաև Բալախանը, Սաբունչին, Մաշթագան, Շադանը, Սուրախանին[95] *և Մարգաբյանը*[96]*: XIX դ. վերջին «Մշակին» հղած հոդվածում Ալ. Բալանթարյանը գրում էր, որ այդ գյուղերը վաղ ժամանակներից բնակեցված են եղել հայերով: Հոդվածագիրը հաղորդում է տեղեկություններ նաև Բալախանի և Բուզովնա գյուղերի անհետացած եկեղեցիների և այդ տարածքում հանդիպող հայկական գանազան գերեզմանաքարերի մասին: Ըստ նրա՝ հայ կնոջ մի գերեզմանաքարի թվագրու-*

Москва, 1971, стр. 89-90. Հարկ է նշել, որ աշխատության հրատարակիչ Ջ. Բունիաթովը, որին հատուկ է պատմական փաստերի կեղծումն ու աղավաղումը, կասկածի տակ դնելով այդ հաղորդման հավաստիությունը, հանիրավի կերպով միջամտել է պատմիչի շարադրանքին և բնօրինակի այդ հատվածում դրել հարցական նշան (տե՛ս նույն տեղում, стр. 90).

[93] Տե՛ս **Березин И.**, նշվ. աշխ., ч. III, гл. V (Отъ Баку до Сальяна), стр. 41.

[94] Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 279:

[95] Սուրախանին գտնվում էր Բաքվից 15 կմ հեռավորության վրա: Այդտեղ էր կրակապաշտության տաճարը: Այն հիմնադրվել է XVII դ., մահմեդական կրոնը չընդունած այն պարսիկների կողմից, որոնք խույս տալով հալածանքներից, Պարսկաստանից հեռացել էին Հնդկաստան, ապա՝ այդտեղից տեղափոխվել Ապշերոնյան թերակղզի: Սուրախանիում կրակապաշտության տաճարում ծիսակատարություններ են կատարել նաև հնդիկները, որոնց տեղի բնակիչներն անվանում էին մոլրաներ (տե՛ս **Броневский С.**, Новейшие географические и исторические известия о Кавказе, ч. II, Москва, 1823, гл. III, Ширван (Ханство Бакинское), стр. 407-415; Отечествоведение. Россия по рассказам путешественников и ученым исследованиям, сост. **Семенов Д.**, т. III, СПб., 1871, стр. 73-75; Քալանթարեանց Ալ., Նամակ Բագուից, «Մշակ», Թիֆլիս, 1873, մայիսի 10, № 17, Բունիաթյան Ն., Կրակապաշտների տաճարը Սուրախանիում, Երևան, 1926; Закавказский край, Заметки о семейной и общественной жизни об отношенияхъ между Черными и Каспийскимъ морями. Путевые впечатления и воспоминания барона **Августа фонь-Гакстгаузена**, ч. II, СПб., 1857, стр. 155-161).

[96] Տե՛ս Կարապետյան Ս., Հայերն Ապշերոնյան թերակղզում, «Առավոտ», Երևան, 1997, օգոստոսի 9, № 79:

մից պարզվում է, որ կինը մահացել է մոտ 400 տարի առաջ: «Պետք է նկատել, գրում է Ալ. Քալանթարյանը,- որ այդ գիւղերը առաջուց (180-200 տարի սրանից առաջ) բնակեցուած են եղել հայերով: Դրա ապացոյց կարող են համարուել եկեղեցիները թէ ամբողջ (Բուզովնայում) թէ անհետացած (Բալախանում) և գանազան դերեզմանաքարերը որոնցից մէկը մի հայ կնկայ է, որ մոտ 400 տարի սրանից յառաջ մնացած է եղել»[97]:

Արևելագետ, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Բ. Միլլերը թաթերի, այդ թվում նաև հայ-թաթերի պատմությունն ուսումնասիրելու նպատակով 1928 թ. շրջագայելով Ապշերոնյան թերակղզու թաթաբնակ Բուզովնա, Բալախան, Մաշթագա, Սուրախան, Զիրա, Խոուսան, Ղալա, Թուրքյան, Սարունչի և շրջակա այլ բնակավայրերում, ամենուր արձանագրել է անցյալում գոյություն ունեցած մեծաքանակ հայկական եկեղեցիների և դերեզմանատների հետքերի, ինչպես նաև հնաբնակներից լսել է ավանդություններ այդ բնակավայրերի նախկինում հայկական լինելու մասին[98]: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Բ. Միլլերի տեղի հնաբնակների պատումների հիման վրա արված այն վկայակոչումը, որ «Թուրքյան և Ղալա գյուղերի միջև նախկինում գոյություն է ունեցել Քայսիդուն (Qaisidun) հին քաղաքը, որը հավանաբար եղել է հայկական»[99]: Ըստ Բ. Միլլերի՝ Բալախանի և Սուրախանի գյուղերի թաթերի խոսվածքները շատ նման են Մատրասա գյուղի թաթախոս հայերի խոսվածքին[100]: Բ. Միլլերը վկայում է նաև, որ Խիզան գյուղում լսել է ավանդություն այն մասին, որ նախքան մահմեդականությունն ընդունելը, տեղի բնակչությունն այդտեղ եղել է «հայկական դավանանքի»[101]:

Ապշերոնյան թերակղզու հայ մշակույթի քրիստոնեական շերտի մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում «Մեղու Հայաստանի» լրագրի թղթակից, չամախեցի Ալեքսանդր Նալբարյանցը, ըստ որի՝ Բաքվից 4 վերստ հարավ արևմուտք գտնվող «Բիբի-Հէյբաթ» անունով ուխտատեղիում նախկինում եղել է «քառասուն հայ կուսանաց» վանքը. «...քառասուն հայ կուսանաց վանք է եղել յիշեալ ուխտատեղին, այժմ՝ թուրքերն են տիրում թէ ուխտատեղիին

---

[97] Քալանթարեանց Աղ., Նամակ Բուզովնայից, «Մշակ», Թիֆլիս, 1874, սեպտեմբերի 19, № 37:

[98] Տե՛ս **Миллер Б.**, Таты, их расселение и говоры (материалы и вопросы), ИООИА, № 8, вып. VII, Баку, 1929, стр. 13.

[99] Տե՛ս նույն տեղում, стр. 13.

[100] Տե՛ս նույն տեղում, стр. 6, 13.

[101] Տե՛ս նույն տեղում, стр. 13.

թէ նրա նաւթով լի հողերին»[102]*: Հայոց կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցու հանձնարարությամբ եկեղեցական հաստատիները հաւաքելու նպատակով 1850 թ. օգոստոսին Շամախու հայոց թեմ, այդ թվում նաև թերակղզու նավթահանքային շրջան այցելած Սարգիս արքեպ. Զալալյանցը վկայում է, որ դեռևս երևում էին ավերակ եկեղեցու հետքերը. «Ի ընդարձակ վայր ի հիւսիսակողմն Բագուայ նահանգի հեռի ի նմանէ երկու մղոնաւ... Մերձ այսոցիկ դրոց երևին աւերակք տանց, ընդ որս և եկեղեցւոյ, և որպէս պատմեն ծերունի Հայք և Պարսիկք. թէ բնակարան վերակացու վարդապետի, ուր նստեալ ժողովէր գնկամուտս վերոյիշատակեալ դրոյն»*[103]*:*

Դերբենդի հայկական գերեզմանոցի վիմական արձանագրությունները վկայում են, որ Դերբենդում հաստատված հայերի մեջ եղել են նաև Բալախանիից տեղափոխված հայեր: Օրինակ. «Այս է տապան Բալախանեցի ողորմած հոգի Համբարձում վարդապետին. թիվն ՌՒՃԱ (1752), ապրիլ ԻԵ (25)»[104]*:*

Ապշերոնյան թերակղզում հայերի հնաբնակության մասին հետաքրքիր պարզաբանում է մտցնում 1863, 1873 և 1886 թթ. «Բնակավայրերի և ընտանեկան ցուցակներում» Սաբունչի թաթարնակ գյուղի հայկական անվանումը՝ Հայկական աղբյուր («Армении-булаги»)[105]*: Սաբունչի գյուղի երբեմնի հայկական լինելը ավանդաբար հիշատակվում էր նաև XX դարի 20-ական թվականների վերջերին: Այսպես՝ Բ. Միլլերը գրում է, որ բալախանցիները Սաբունչին անվանում էին Հայկական գյուղ («Эрмен-ди»)*[106]*: Ըստ Բ. Միլլերի՝ հնարավոր է, որ Մատրասայում հաստատվել են նաև Սաբունչիից*[107]*:*

Մարդաքյան գյուղի վերաբերյալ արխիվային վավերագրում ասված է. «Մարդաքեանդը հայոց գիւղ է եղել: Մի քանի հին տների

---

[102] Ալէք.[սանդր] Հ. Նաջարեանց, Բագուի նաւթագործարանատիրոջ ծայրահեղ անհոգութիւնը, «Սեղու Հայաստանի», Թիֆլիս, 1883, փետրվարի 23, № 18:

[103] Զալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 409-410:

[104] Դիվան հայ վիմագրության, պր. VIII, Ռուսաստանի Դաշնություն, աշխատասիրությամբ՝ Գրիգորյան Գր., Երևան, 1999, էջ 190:

[105] Տե՛ս СНМ-1859-1864 (Бакинский уездъ), стр. 4, տե՛ս նաև Список населенных мест по сведениям 1873 г.: Бакинская губерния: Сост. глав. ред. ком. **Н. Зейдлицем**, Тифлис, 1879, 6. с. (այսուհետ՝ СНМ-1873), տե՛ս նաև Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Бакинской губернии, Тифлис, 1893, 6. с. (այսուհետ՝ ССДНЗКИПС-1886).

[106] Տե՛ս **Миллер Б.**, նշվ. աշխ., стр. 13.

[107] Տե՛ս նույն տեղում:

պատուանդանի մեկ արշինաչափ խաչաձեւ անկիւնաքարերն, այս եւ այն փոսերից գտնուող խաչաձեւ քարերը հաստատում են այդ ենթադրութիւնը: Այդ խաչաձեւ քարերից մի քանի հատ ունի Հարուստ քարպայ Ասլան ումն...»[108]:

Արեւելեան Այրարատում, հայերի հնադարեան յիշողութեան, հայ բնակչութեան՝ ընդհուպ մինչեւ Ախլերեանյան թերակղզում հաստատումը շարունակվել է XI դարի երկրորդ կեսից սելջուկ-թուրքերի եւ XIII դարում մոնղոլ-թաթարների ագեսարեր արշաւանքների հետեւանքով Հայաստանից տեղի ունեցած արտագաղթերի հաշվին: Սելջուկ-թուրքերի նախճիրների ժամանակ Անիի հայ բնակչութեան մի մասը գանգուած կասպեան ուղիներով հետացել և հաստատվել է Մերձվոլգեան շրջաններում՝ Աստրախան, Սարայ, Կազան, իսկ մոնղոլ-թաթարների կողմից Անիի գրաւումից հետո նոյն ճանապարհով անցիններն մի այլ հատուած հաստատվել է Վոլգեան Բուլղարիայում[109]: *Անիից դեպի հիւսիս գնացող պաղեստինեան՝ կասպից ծովի արեւմտեան ափագծի երկայնութեամբ սփռուելու մասին ուշագրաւ տեղեկութիւններ կան XVII դ. տպագրուած Մարտիրոս Ղրիմեցու «Պատմութիւն Ղրիմայ երկրի» չափածո պատմութեան մէջ: Ըստ դրա՝ անցիններն մի մասը Ջուղա, Վան և այլ վայրեր գաղթելուց յետոյ, «անցանեն ընդ ծովամբն Կասպիական»*[110]: *Պատմական ապրյուրները լրացնելու է գալիս ազգային գործիչ Հովակ Ստեփանյանի հետեւեալ տեղեկութիւնը. «Արմաւիր, Ղզլար, Մոզդոկ, Վլադիկաւկազ, Գրոզնի, Պետրոպաւլովսկ, Կիսլովոդսկ, Դերբենտ, Պետրովսկ, Ղուբա, ապա Բագու, Շամախի, Նուխի եւ այլ տեղերում ապրում են տասնեակ հազարաւոր հայեր, որոնք դարերի ընթացքում արտագաղթի են ենթարկուել քաղաքական եւ տնտեսական պատճառներով Անիի շրջանից»*[111]: *Անիի պատմութեանը նուիրուած աշխատութեան մեջ Թ. Հակոբեանն այս առիթով գրում է. «...Անիի (և Շիրակի) բնակչութիւնը սփռվել էր մի հսկայական տարածութեան շրջաններում ու քաղաքներում, որի սահմանը հարաւում հասնում էր Միջագետք ու Կիլիկիա, արեւելքում՝ Կասպից ծով ու Վոլգա, արեւմուտ-*

---

[108] Գարապետյան Ս., Հայերն Ախլերոնյան թերակղզում, «Առավոտ», 1997, օգոստոսի 9, № 79:

[109] Տե՛ս Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթականության պատմության հ. Ա, Երեւան, 1964, էջ 123-124:

[110] Մարտիրոսյան Ա., Մարտիրոս Ղրիմեցի (ուսումնասիրություն և բնագիր), Երեւան, 1958, էջ 145:

[111] Ստեփանեան Յ., Մօտիկ անցեալէն, «Հայրենիք», Պոսթըն, 1964, ԽՐ տարի, մայիս, № 5, էջ 45:

քում՝ Բալկաններ ու Հունգարիա, իսկ հյուսիսում՝ Լեհաստան»[112]: «Այս մեծ ազէտէն փրկուած Հայեր,- գրում է Ա. Ալպոյաճյանը,- ինչպէս Հայաստանի ուրիշ գաւառներու բնակիչներէն մօտ 40,000 անձ, մայր երկրէն կը փոխադրուին և կը հաստատուին Կովկասեան լեռներու հիւսիսային կողմը...»[113]:

Տիգնկուբյունների համաձայն՝ Անիի գաղթականները Մերձվոլգյան և Կասպից ծովի առափնյա շրջաններում երկար չեն մնում: Մոնղոլ նվաճողները, գրավելով այդ շրջանները ևս, հետապնդում են հայ գաղթականներին, որի հետևանքով անեցիներից շատերը ստիպված տեղափոխվում և հաստատվում են Ղրիմի հարավային շրջաններում[114]: Անեցիների՝ Կասպից ծովի առափնյա վայրերում հաստատվելու և այդտեղից Ղրիմ գաղթելու պատճառների վերաբերյալ հետաքրքրական տեղեկություններ կան 1871 թ. հոկտեմբերի 8-ին Ղուբայից «Մեղու Հայաստանի» ամսագրին Ներսես Սարումյանցի[115] հղած մի թղթակցության մեջ. «Աւանդութիւնը կպատմէ, թէ սոքա (խաչմասի, Քիլվարի և Ղարաջալիի հայերը - Գ. Ս.) Անի քաղաքէն գաղթած են այս տեղ եւ եղած են աւելի քան վեց հարիւր տուն, բայց յետոյ այս տեղից օդոյ եւ եղանակի վնասակարութեան պատճառաւ և մանաւանդ ուրեմն տեղական մահմետական իշխանի անագորոյն եւ բարբարոսական վարմունքէն փոխադրած են իւրեանց բնակութիւնը Խրիմու կողմերը»[116]:

Այսպիսով՝ թուրք-սելջուկների, ապա մոնղոլ-թաթարների՝ իրար հաջորդող արշավանքների ու տիրապետության հետևանքով Հայաստանից տեղահանված և դեպի հյուսիս գաղթի նոր հոսքերի (որոնց մեջ մեծ թիվ են կազմել անեցիները) արդյունքում, որոշակի թվով գաղթականներ հաստատվել են Շիրվանում և համալրել հնաբնակ հայերի թիվը՝ երկրամասում հետզհետե կազմելով ստվար

---

[112] Հակոբյան Թ., Անի մայրաքաղաք, Երևան, 1988, էջ 284:

[113] Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, Գահիրէ, 1955, էջ 350:

[114] Տե՛ս Աթինեան Յ., Համառօտ պատմութիւն հայ գաղթավայրերու, Անթիլիաս-Լիբանան, 1985, էջ 161-162:

[115] Ներսես Անդրեասի Սարումյանը ծնվել է Արցախի Խաչեն գավառի Սեխդիշեն գյուղում: Երկար ժամանակ եղել է Բաքվի պատվավոր նոտարը: Նյութապես աջակցել է Ղուբայի հայկական գյուղերի դպրոցներին, եղել գավառի դպրոցների հոգաբարձուների խորհրդի անդամ: Զոհվել է Բաքվի 1918 թ. սեպտեմբերյան ջարդերի ժամանակ (տե՛ս «Արարատ», 1870, ԺԲ, էջ 274, տե՛ս նաև Հովակիմյան Բ., Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005, էջ 717-718):

[116] Ներսես Սարումեանց, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1871, հոկտեմբերի 16, № 38, էջ 299, տե՛ս նաև Հակոբյան Ար., Թաթախոս հայերի լեզվական մշակույթի շուրջ (18-րդ. - 20-րդ դ. սկիզբ), «Էջմիածին», 2002, Թ, էջ 72:

բնակչությամբ հայաբնակ գոտի: Որոշ տեղեկությունների համաձայն՝ միջնադարում երկրամասի ողջ տարածքում հայաբնակ բնակավայրերի թիվը հասնում էր ավելի քան 200-ի[117]:

Այսպիսով՝ բերված փաստերն ու վկայությունները հավաստում են Արևելյան Այսրկովկասում՝ Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքում հայերի հնաբնակ, երկրամասի էթնիկական պատկերում հայկական շերտի շարունակական գոյության և մշակութակերտ լինելու մասին:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ էթնիկական բարդ խճանկար ունեցող Արևելյան Այսրկովկասում գերակիրն առկա էր էթնիկ լայն ներկայությամբ և քաղաքական իշխանությամբ օժտված իրանական շերտը: Վերջինս մեծ դեր ունեցավ Արևելյան Այսրկովկասի էթնոմշակութային և էթնոդավանական զարգացումներում, որն ընդհուպ մինչև XV-XVI դդ. արտահայտվեց իրանական մշակույթի, մասնավորապես պարսկերենի (միջին պարսկերենի կամ պահլավերենի, հետագայում նաև նոր պարսկերենի) տարածմամբ[118]: «Ըստ էության,- գրում է Ար. Հակոբյանը,- 5-6-րդ - 16-րդ դդ. Արևելյան Այսրկովկասում, չնայած տարաբնույթ քաղաքական, դավանական փոփոխություններին, գերակայում էր իրանական ազդեցությունը: Երկրամասը կառավարում էր և սոցիալական վերնախավը կազմում էր իրանական տարրը, գոյություն ուներ նաև էթնիկական իրանական հոծ զանգված»[119]:

Ապշերոնյան թերակղզում գտնվող բնակավայրերը շրջապատված էին գեղեցիկ այգիներով, որոնք կազմում էին «...կատարեալ օազիսներ Ափշերոնեան աւազուտ և ապառաժոտ թերակղզու վերայ և մեւնոյն կախարդական զօրութեամբ ձգում են իւրեանց ճանապարհորդներին... Բազուի գիւղերը գեղեցիկ են համեմատաբար բոլոր թերակղզուն և այն հակայական ջանք ու աշխատանքին, որ նրանց վերա գործ են դրուած...»[120]: 1830 թ. հունիսին թերակղզու գյուղերում շրջագայած ֆրանսիացի տնտեսագետ Մորենոը Ի. Պասկևիչին հղած զեկուցագրում ուշագրավ տեղեկություններ է հա-

---

[117] Տե՛ս Կարապետյան Ս., Շամախու գավառի գյուղերի պատմությունից, ԼՀԳ, Երևան, 1989, № 12, էջ 57:

[118] Տե՛ս **Минорский В.**, նշվ. աշխ., стр. 30-35, տե՛ս նաև Մարգարյան Հ., Հայաստան, Իրան, Կովկաս (տարածաշրջանային խնդիրներ), «Գիտության գլոբուս», Երևան, 2001, № 1, էջ 65-66, տե՛ս նաև Հակոբյան Ար., Արևելյան Այսրկովկասում..., էջ 26-31:

[119] Հակոբյան Ար., Արևելյան Այսրկովկասում..., էջ 30:

[120] Քալանթարեանց Ադ., Նամակ Բուզովնայից, «Մշակ», Թիֆլիս, 1874, սեպտեմբերի 19, № 37:

դարում այդ վայրերում գոյություն ունեցող ձիթհանու այգիների և տեղի հայ բնակչության կողմից ձիթապտղի գործածման մասին: Ըստ Մարինի՝ հայերը ձիթապտուղը գործածում էին այնպես, ինչպես եվրոպացիները Եվրոպայում[121]: Թերակղզում, առանձնակի տեղ էր գրավում խաղողագործությունը, որի զարգացմանը նպաստում էին բնակլիմայական բարենպաստ պայմանները[122]:

Հայ ժողովրդի պատմության մեջ Ապշերոնյան թերակղզու հայաբնակ վաղագույն բնակավայրերի շարքում հատկապես կարևոր տեղ է գրավել Բաքու[123] քաղաքը, որը գտնվում էր թերակղզու հարավում՝ աստիճանաբար ծովախորշն իջնող սարալանջի վրա[124]. «Կասպից ծովի արևմտյան ափերում գտնվում է Ափշերոնյան թերակղզին: Դրա արևմտա-հարավային մասում մի բաւականին խաղաղ և պատսպարուած ծոցի եզերքին ընկած է Բաքու քաղաքը»[125]: Ըստ պատմական ավանդության՝ Հայոց Արևելից կողմանց (Արցախ, Ուտիք) թագավոր Վաչագան Բարեպաշտը, երբ 500 թ. Մեծ Հայքի Փայտակարան նահանգի Բագավան գավառն իբրև օժիտ տվեց իր դստերը՝ Վարսենիկին, Բաքուն նրա ամեուանոցն էր, իսկ Շամախին՝

---

[121] Տե՛ս Акты, собранные Кавказскою археографическою комиссиею, под ред. **Берже Ад.**, т. VII, док. 144, Тифлис, 1878 (այսուհետ՝ АКАК), стр. 191-192.

[122] Տե՛ս Сельско-хозяйственные районы Азербайджана. По материалам сельско-хозяйственной переписи 1917 года, Баку, 1929, стр. 13, 19.

[123] Բագու-Բաքու բառն իր հիմքում ունի «Բագ» բառը, որը հնդեվրոպական լեզուներում նշանակում է «աստված» (տե՛ս Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 373): Ըստ Ն. Տաղավարյանի՝ «Հանճարեղ կերպով դիտուած է՝ թէ Բագուն պէտք է կրակապաշտներու կրօնական կեդրոն մը եղած ըլլայ... և թէ նոյն իսկ իր Բագու անունը յարաբերութիւն մը ունենայ պարթևական Բագ (Աստուած) բառին հետ» (S. [Տաղավարյան Նազարեթ], Բագուի նաւթահանքերը հնուրեան մէջ, «Բազմավէպ», Վենետիկ, 1908, դ 11, էջ 496:): Այլ տեսակետի հեղինակներ, քաղաքի անունն առաջացել է պարսկերեն բադ-կուբե բառից, որ նշանակում է «քամու հարված» (**Автономовъ-Спаский К.**, Баку, КК на 1852 г., Тифлис, 1851, отд. III, стр. 298): Հմմ. **Дорнъ Б.**, Каспий, СПб., 1875, стр. 66, 121; **Бартольд В.**, Работы по исторической географии. Баку, Баку, Сочинение, т. III, Москва, 1965, стр. 350. Ի դեպ, աղբբեջանցի պատմաբան Գ. Գեյբուլանը, աղավաղելով Բաքու տեղանվան հնդեվրոպական ստուգաբանությունը, նպատակադիր կեղծարարությամբ այն ներկայացնում է որպես թյուրքալեզու տեղանուն (տե՛ս **Гейбуллаев Г.**, Топономика Азербайджана, стр. 123).

[124] Կասպից ծովի բազմաթիվ բարձրացումների և իջեցումների հետևանքով ջրի տակ են անցել հին Բաքվի ամրությունների մի մասը: Օրինակ՝ 1929 թ. Բաքվի շրջանում ծովը ևսհանջել է ավելի քան 150 մ, իսկ 1985 թ.՝ բարձրացել 80 սմ (տե՛ս **Разумов Г.**, **Хасин М.**, Тонущие города, Москва, 1991, стр. 86, 91):

[125] Քալանթարեանց Աղ., Նամակ Բագուից, «Մշակ», Թիֆլիս, 1873, նոյեմբերի 29, № 47:

ամառանոցը[126]: Ս. Էփրիկյանն այդ մասին գրում է. «Այս կրակոտ երկիրը (Բագավան գավառ - Գ. Ս.). Հրիտոսի 500 թուին Ադուանից Վաչագան թագաւորը, որ կը նստէր Պարտաւ քաղաքը, ժամ առեր էր իր Վարանիկ գաւառը, որոյ ձմերոցը Բագուն էր, իսկ ամարանոցը Շամախին»[127]: Վաչագան Բարեպաշտի և արքայադստեր՝ Վարանիկի վերաբերյալ ավանդապատումն իր արձագանքն է գտել նաև ականավոր գրող և մանկավարժ Մեսրոպ Թաղիադյանի «Վէպ Վարանեան Սկայուհւոյ Ադուանից» կրոնաբարոյական գրվածքում[128]:

Բաքվի հայության հնարնակ լինելը փաստում է քաղաքի բերդի ներսի Սր. Աստվածածին եկեղեցին: Ավանդության համաձայն՝ «Հին մատուռը... չինուած է նոյն այն բագնեաց տեղումը, որ կանգնած էին մինը իրրեւ կրակի չաստուած և միւսը ծովի չաստուած, զոր կործանեց եղիչէ առաքեալը Ադուանից աշխարհը գալու միջոցին, և տեղը Հրիտոսի խաչի նշանը կանգնեց, ուր ապա Մեսրովբ Թարգմանիչը չինել տուեց մատուռ յանուն Տիրամօրն: Իսկ Վաչագան բարեպաշտ թագաւորն Ադուանից յամի Տեառն 500 չինեց եկեղեցի, ըստ այմ և Բագուայ հին և նշանաւոր եկեղեցին և ուխտատեղին է տուրը Աստուածածնայ եկեղեցին, որ բերդի մէջ է և փառուսան աշտարակի դիմացն է»[129]: Նկատենք, որ խոսքն այստեղ քաղաքի ամենահին եկեղեցու՝ Սր. Աստվածածնի մասին է[130]: Չնայած եկեղեցու՝ Հայոց Արևելից կողմանց թագավոր Վաչագան Բարեպաշտի կողմից հիմնադրված լինելու վերաբերյալ տեղեկությունները սահմանափակվում են միայն ավանդապրույցով, անտարակույս, նրանում կան իրական պատմական դեպքերի արձագանքներ: Մ. Կաղանկատվացին վկայում է, որ Վաչագան թագավորը, լինելով եկեղեցասեր գործիչ, Հայոց Արցախ և Ուտիք աշխարհներում «...ըստ թո-

---

[126] Տե՛ս Հանրամատչելի հանրագիտական բառարան, հ. Ա, կազմեց Առաքելեան, Հ., Թիֆլիս, 1915, էջ 199:

[127] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 362:

[128] Տե՛ս Վէպ Վարսենկան Սկայուհւոյ Ադուանից, ի հնութեանց հայրենեաց փոխեաց յարդի ոճ եւ գիր Մ. Դ. Թաղիադեանց Վ. Ա. սարկաւագ Սրբոյ Էջմիածնի, Կալկաթա, 1847:

[129] Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 373: Համմ. Ֆիզիքական, ազգագրական եւ քաղաքական աշխարհագրութիւն Հայաստանի, կազմեց Աւետիք Տէր-Յակոբեան, Թիֆլիս, 1914 (ՀԱԱ, ֆ. 335, ց. 1, գ. 24, թ. 98-99 (այսուհետ՝ Տէր-Յակոբեան Ա., նշվ. աշխ., թ.): Համմ. Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 292:

[130] Տե՛ս Ստեփանյան Գ., Համառոտ ակնարկ Բաքու քաղաքի հայկական եկեղեցիների պատմության, Հայոց պատմության հարցեր, № 8, Երևան, 2007, էջ 153:

ւոյ աւուրց տարւոյն...» կառուցել է եկեղեցիներ[131]: Քանի որ կապանկատվացու երկը պարունակում է նաև Կուրի ձախափնյակում Վաչագան Թագավորի ունեցած ազդեցության և ծավալած գործունեության վերաբերյալ հատակ տեղեկություններ՝ «...կարգէը տեղնաց տեղնաց եպիսկոպոսունս, և՛ երիցունս, և՛ հայիցողս. և ի կամբէճս և յԱղուանս զնոյն հրաման տաստից կարգեալ հաստատէը...»[132], ապա դրանից կարելի է եզրակացնել, որ Վաչագան Թագավորի՝ քրիստոնեության ամրապնդման նպատակով ծավալած եկեղեցաշեն գործունեությունը տարածվել է ընդհուպ մինչև Ապշերոնյան թերակղզի՝ արքունի ձմեռանոց[133]: Ս. Ծոցիկյանը հին Բաքվի և Վաչագան Թագավորի կողմից հիմնարկված հայկական եկեղեցու մասին գրում է. «Բերդի պարիսպներէն ներս կը գտնուին բաւական թուով հին շինութիւններ, Շիրվանցի Շահերու և Պարսիկ խաներու բնակարաններ, նեղ ու ծուռ փողոցներ, կրպակներ և տուներ՝ որոնց ճակատներն իրարու մօտեցած են: Գլխաւոր մուտքէն մը քայլ ներս շինուած է ռուսական առաջին եկեղեցին: Բերդի պարսպապատերու շրջանակին մէջ է Հայոց Ս. Աստուածածին եկեղեցին: Տասնևհինգ դարու հնութիւն մը»[134]: Հայկական եկեղեցու գոյությունն իսկ կարելի է դրել ապացույց համարել՝ վաղ միջնադարյան Բաքվում հայ համայնքի գոյության մասին: Բաքվում հայերի հնաբնակության և մշակութաշեն գործունեության չարունակականության անվիճելի վկայություններ են այսօր չպահպանված Սբ. Աստվածածին եկեղեցու հարակից տարածքի հայերեն արձանագրություններ և պատկերաքանդակներ ունեցող խաչքարերը[135]:

Բաքվի նավթի օգտագործման և քաղաքում նավահանգստի գոյության մասին վկայություններ են հանդիպում IX և X դդ.

---

[131] Կաղանկատուացի, էջ 338:

[132] Նույն տեղում, էջ 50:

[133] Տե՛ս Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 362, տե՛ս նաև Հանրամատչելի հանրագիտական բառարան, հ. Ա, էջ 199:

[134] Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 280-281:

[135] Այդրեջանում տարիներ ի վեր հայկական եկեղեցիների, գերեզմանոցների, խաչքարերի ու տապանաքարերի ոչնչացման քաղաքականության հետևանքով, Բաքվի Սբ. Աստվածածին եկեղեցու շրջակայքում ժամանակին գոյություն ունեցած մեծաքիվ խաչքարերից մնացել էին հայերեն արձանագրությունները ջնջված և կիսով չափ ջարդված ընդամենը չորս խաչքար: Դրանք տեղափոխվել և տեղադրվել էին Կույսի աշտարակին մերձակա, Բաքվի ամրոցի մեջ մտնող երբեմնի շուկայում: Խաչքարերի վերջին լուսանկարները (արված են 1986 թ. նոյեմբերին) մեզ է տրամադրել Ս. Փարաջանովի թանգարանի տնօրեն Զավեն Սարգսյանը, որին հայտնում ենք մեր երախտագիտությունը: Լուսանկարները տե՛ս հավելվածում:

արաբական ճանապարհորդների և աշխարհագրագետների (ալ-Իստախրի, ալ-Մասուդի, ալ-Մուքադասի) երկերում[136]:

Պատմական Բաքվի միջուկն է կազմել Մանուչեհր III Շիրվանշահի (1120-1160/4 թթ.) կառավարման օրոք տաշած քարերով կառուցված հին քաղաքի ամրոցը («Իչերի-շահարը»), որը XV-XVI դդ. համարվել է Այսրկովկասի անառիկ կառույցներից մեկը: Ավելի ուշ՝ 1192 թ., Շամախիում տեղի ունեցած ահեղ երկրաշարժի պատճառով Շիրվանշահ Ախսիտան I-ը (մոտ 1160-1196/7 թթ.) մայրաքաղաքը ժամանակավորապես տեղափոխել է Բաքու[137]:

Բաքվի՝ Շիրվանշահերի գահանիստը դառնալուց հետո Շիրվանշահ Շեյխ Իբրահիմը (1382-1417 թթ.) ամրոցի տարածքում հիմնադրում է նաև բերդ-պալատի համալիրն իր աշտարակ ամրոցով, որն ավարտուն տեսք է ստանում նրա հաջորդի՝ Հալիլուլլահ I Շիրվանշահի օրոք (1417-1465 թթ.)[138]: *Սարգիս արքեպ. Ջալալյանցը հետևյալ նկարագրությունն է տվել արքունական այդ կառույցին. «Ի հին քաղաքի անուանի է յոյժ պալատ բերդակալի նորին, Խալիլ Ուլլահի, հրաշակերտեալ Արաբացի ճարտարապետութեամբ, բաղկացեալ ի բազմաւոր սենեկաց և առանձին մզկիթաւ, յետ նորա բուրդն բարձրաբերձ ի բերդամիջի... չինուածիւն հին և յոյժ ամուր»*[139]: *Ամրոցի հարավային հատվածում կառուցված էր հին Բաքվի նշանավոր հուշարձաններից մեկը՝ «Կույսի աշտարակը» («Կըզ Կալասի»), կամ փարոս-աշտարակը, որը XII դարից օգտագործվում էր որպես պաշտպանական կառույց*[140]: *Սարգիս արքեպ. Ջալալյանցի վկայությամբ՝ «Ի կողմն հարաւոյ գոյ Քիւֆի գիր՝ բազմաց անծանօթ. աւանդութեամբ ասի չինեալ նախ քան զերկու հազար ամն: Թուի թէ՝ ի գլուխ սորա դնէին զճրագ կամ վառէին զհուր յաւուրս ալէկոծութեանց, որպէս զի վտանգեալ կամ մոլորեալ նաւք՝ այսու նշանաւ*

---

[136] Տե՛ս **Караулов Н.**, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Адербейджане: **Ал-Истахрий**, СМОМПК, вып. XXIX, Тифлис, 1901, стр. 25, տե՛ս նաև **Бартольд В.**, Работы по исторической географии. Баку, стр. 350-352.

[137] Տե՛ս **Джидди Г.**, Средневековой город Шемаха (IX-XVII вв.): историко-археологическое исследование, Баку, 1981, стр. 39-40.

[138] Տե՛ս **Аббас-Кули-Ага Бакиханов**, стр. 72.

[139] **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 406:

[140] Տե՛ս **Фитуни А.**, Бакинская девичья башня, ИАКОПСИП, вып. 3, Баку, 1927, стр. 149-154; **Александрович-Насыфен Дж.**, Девичья башня в Баку, ИАКОПСИП, вып. 3, Баку, 1927, стр. 155-163, տե՛ս նաև **Вейденбаум Е.**, Путеводитель по Кавказу, Тифлис, 1888, стр. 343.

փութացնել ապահովագին յայս նաւահանգիստ»[141]*: Հետևապես, միջնադարյան քաղաքների ծագման ու զարգացման օրինաչափությամբ Բաքու քաղաքը ևս առաջացել է բերդամանից: Սկզբնապես դիտավոր թաղամասը կոչվել է Բերդի թաղ: Բերդի առջև փռված պարսպապատ ավանը հետագայում վերաճել է գյուղաքաղաքի, ապա քաղաքի, իսկ բերդն աստիճանաբար վերածվել է ներքին բերդի կամ միջնաբերդի:*

Կուրի ձախափնյակի էթնոմշակութային պատկերում նախ իրանցիների, ապա արաբների նվաճումների ժամանակ (VII-VIII դդ.) ակտիվ մշակութային, քաղաքական և ժողովրդագրական փոփոխություններն ավելի մեծ ու ավերիչ բնույթ ստացան XI-XV դդ. վաչկատուն օղուզ-թուրքերի, մոնղոլ-թաթարների, Լանկ-Թեմուրի, սրանց հետքերով եկած Կարա-կոյունլու և Աղ-կոյունլու թուրքմեն քոչվոր ցեղերի, ինչպես նաև ղզլբաշների ասպատակությունների և սիրապետության շրջանում[142]*: Նստակյաց, զարգացած հողագործություն շատ տեղերում տնդի տվեց քոչվորների անասնապահական տնտեսությանը, որն անվերականգնելի հարված էր երկրամասի քաղաքակրթական արժեքներին: Պատմությունը բազում հիշատակություններ է թողել ղզլբաշների՝ Շիրվանում գործած չարագործությունների մասին: Շեյխ Իսմայիլի՝ Շիրվանում 1500 թ. գործած հրեշավոր ոճիրների մասին հիշատակարանում ասված է. «...և եկեալ յանկարծակի, մտեալ ի մէջ Շարուանայ տանս... և բազում քրիստոնեայք յանկան ի ձեռն անաւրինին և մաշեցան ի սուր սուսերի, և դիակունք ի յերկիր անկան և կերակուր եղան թռչնոց և գազանաց...»*[143]*: 1501 թ. շեյխ Իսմայիլը գրավեց նաև Բաքուն և Շամախին*[144]*:*

Մահմեդականացված Շաքի-Շիրվան գոտում մինչև XVIII սկզբները իր լեզուներն ու ազգային դիմագիծը պահպանեց բուն

---

[141] Նույն տեղում:

[142] Տե՛ս **Тер-Гевондян А.**, Армения и арабский халифат, Ереван, 1977, стр. 157-160, Բոռնազյան Ս., Հայաստանը և սելջուկները (XI-XII դդ.), Երևան, 1980, էջ 175, Ալթունեան Գ., Սոնղոլները եւ նրանց արշաւանքները ԺԳ դարում, Վաղարշապատ, 1913, էջ 19, Մանանդյան Հ., Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության (XI դարից մինչև XV դարի սկիզբը), հ. Գ, Երևան, 1952, էջ 352:

[143] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս երկրորդ (1451-1480 թթ.), կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1958, էջ LII:

[144] Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. Ա, կազմեց Հակոբյան Վ., Երևան, 1951, էջ 144:

ազգանական էթնիկական միավորների մի զգալի մասը (ցեղերն, քրիստոնեություն գավանող ազգերն)[145]*: Իր ազգային նկարագիրը կրոնն ու լեզուն, հիմնականում անխաթար պահպանել հայ բնակչությունը*[146]*: Շարթ-Շիրվան գոտում բնակվող հայերը նկատի ցեղերի կազմակերպած կոտորածներից և հալածանքներից փրկվելու նպատակով, բնակություն էին հաստատում նաև լեռնաանջրեում, ձորերով ու կիրճերով մեկուսացված վայրերում, ուր պաշտպանվելու տեսակետից տեղանքն ավելի ապահով էր*[147]*:*

XVI-XVII դդ. եվրոպացի վաճառական-ճանապարհորդների մոտած տեղեկությունների համաձայն՝ Բաքուն արդեն համարվում էր Կասպյան ծովային առևտրի գլխավոր հանգույցներից մեկը, իսկ մարդաշատ ու բեռնաշատ նավահանգստային քաղաքներ, գլխավորապես հայ վաճառականների ձեռքում էին: Այս առումով հետաքրքրական է XVI դարի վերջերին (1579, 1580-1581 թթ.) Բաքու այցելած եվրոպացի ճանապարհորդ Քրիստոֆեր Բուրոյի տեղեկությունը, որտեղ հիշատակվում է Հակոբ անունով ոմն հայ, որը Կասպից ծովի վրա շահագործում էր 35 տոննա տարողությամբ նավ[148]*: Քրիստոֆեր Բուրոն հետաքրքիր վկայություններ է հայտնում նաև Բաքվից հյուսիս գտնվող Նիզաբադ (Նիյազ-Աբադ) ծովեզրյա գյուղաքաղաքից 18 վերստ*[149] *դեպի արևմուտք տեղակայված «Հայ գյուղ» անվանվող բնակավայրի մասին, որի բնակիչները զբաղվում էին մետաքսի և տորոնի առևտրով*[150]*: Հայ վաճառականական մի շերտ դեռևս XVI դ. միջնորդի դեր էր կատարում Կասպյան առևտրական մայրուղու միջոցով կատարվող միջազգային առևտրում*[151]*:*

---

[145] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 88-89, տե՛ս նաև **Харатян Г.**, Этноконфессиональные процессы в зоне Шеки-Кабала (XVIII-XX вв.), «Научная мысль Кавказа», Ереван, 2003, № 3, стр. 82-84.

[146] Տե՛ս **Аббас-Кули-Ага Бакиханов**, стр. 13.

[147] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 89.

[148] Տե՛ս Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, հ. Ա, ԺԳ-ԺԶ դդ., Երևան, 1932, էջ 442, տե՛ս նաև Английские путешественники в Московском государстве в XVI веке. Пер. с англ. **Готье Ю. В.**, Ленинград, 1937, стр. 274.

[149] Վերստը երկարության ռուսական հին չափի միավոր է, որը հավասար է 500 սաժենի կամ 1 կմ-ից քիչ ավելի:

[150] Տե՛ս Հակոբյան Հովհ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 443, տե՛ս նաև Английские путешественники..., стр. 276.

[151] Տե՛ս **Миллер Б.**, նշվ. աշխ., стр. 16, տե՛ս նաև Հակոբյան Ա., Թաթախոս հայեր, էջ 64:

XVI-XVII դդ. Շիրվանը դարձել է մի՛րթ Սեֆյան Իրանի, մի՛րթ Օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո: Երկար տասնամյակ անած թուրք-իրանական պատերազմների հետևանքով մեծապես տուժեցին նաև երկրամասի հայերը: Այդ պատերազմներն ավարտվեցին 1639 թ. մայիսի 17-ին Կասր-է Շիրինի պայմանագրով, որով Այրարովկասն ու Ատրպատականը մնացին Սեֆյան Իրանին[152]:

XVII դ. 40-ական թվականների կեսերի Բաքվի մասին ուշագրավ տվյալներ է թողել 1647 թ. այդտեղ այցելած թուրք ճանապարհորդ Էվլիյա Չելեբին: Նա իր «Ուղեգրության» մեջ գրում է, որ Բաքուն, որպես խանություն, մտնում էր Շիրվանի էյալեթի մեջ և համարվում էր Շամախիի նավահանգիստը: Բաքվում օդը տաք և բարեխառն էր: Բերդում կային մոտ 70 հին և հողածածկ տներ: Քաղաքին մոտ էին 7 նավթահանքեր, որոնցից ամեն մեկն ուներ իր գույնը՝ դեղին, կարմիր, սև և այլն: Քաղաքն ուներ մոտ 1000 տուն, այգիներ, պարտեզներ, բաղնիք և չուկա[153]: *XVII դարի մեկ այլ թուրք պատմագիր-աշխարհագրագետ Քյաթիբ Չելեբին (Հաջի Խալիֆա, 1609-1656 թթ.) իր «Ջիհան Նյումա» գրքում Բաքվի մասին գրել է. «Բաքուն... Դերբենդի մոտ, Շամախիից հյուսիս-արևելք, ծովեզերքին, Շիրվանի նշանավոր քաղաքներից է: Եղանակն այստեղ տաք է: Շրջակայքը, մինչև 10 փարսախ տարածությամբ լինելով քարքարոտ վայր, բուսականությունից բոլորովին զուրկ է»*[154]:

Փաստերը վկայում են այն մասին, որ XVII դարի 40-ական թվականների սկզբներից, Շամախիի և Բաքվի հայ առևտրականները Մոսկվայի հետ ունեին առևտրական կապեր: 1641 թ. Դեսպանական առյանի հյուրատանը իջևանած հայ և հնդիկ վաճառականները հայտնում են, որ իրենք չամախեցի, բաքվեցի ու սպահանցի վաճառականներ են և ցանկանում են առևտուր անել Մոսկվայում[155]:

---

[152] Տե՛ս Նաջարյան Հ., Թուրք-իրանական հարաբերությունները XVI դ. ու XVII դ. առաջին կեսին և Հայաստանը, Երևան, 1961, էջ 263-264:

[153] Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 4, Թուրքական աղբյուրներ, Գ., Էվլիյա Չելեբի, բարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Սաֆրաստյան Ա., Երևան, 1967, էջ 94-95:

[154] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, բարգմանություն թուրքական բնագրերից, ներածական ակնարկներով, ծանոթագրություններով և հավելվածով կազմեց Սաֆրաստյան Ա., հ. Բ, Երևան, 1964, էջ 18:

[155] Տե՛ս Ոսկանյան Վ., Հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման սկզբնավորման պատմությունից (XV-XVIII դդ. սկիզբ): XVI-XVIII դարերի հայ

1683 թ. հունվարի 6-ը Բաքու այցելած պերմանացի բնագետ և բժիշկ Էնգելբերտ Կեմպֆերը քաղաքի բազմակողմանի նկարագրությունից բացի, ուշագրավ տեղեկություններ է թողել նաև «Կույսի աշտարակի» ու ամրոցի գլխավոր մուտքի՝ «Շամախյան»[156] դարպասների մոտ պահվող հայկական երկհարկանի քարավանատան մասին[157]: Ըստ Կեմպֆերի՝ «Հատարակական շինքերից ամենաներկայանալին սրբատաշ քարով կառուցված ութանկյուն այնագարդ քարավանատունն է, կամ հյուրանոցը (նկատեք ունի հայկական քարավանատուներ - Գ. Ս.), որը ներսում ունի չրջանաձև սրահ»[158]: Քարավանատունն իր ճարտարապետական հորինվածքով երկու առանձին մուտքերով, երկհարկ շինություն է, որի առաջին հարկը աչքի է րնկնում իր խաչաձև կամարներով, իսկ երկրորդ հարկը՝ գմբեթներով[159]: Քարավանատան հարևանությամբ գտնվել է հայկական եկեղեցին[160]: Հայկական քարավանատան գործելը Բաքվում վկայում է հայ բնակչության հնարավոր լինելու, ինչպես նաև նրբքին և արտաքին առևտրում հայ վաճառականների ունեցած տնտեսական կարևոր դերի մասին:

Հատկանշական է այն իրողությունը, որ Բաքուն կարևոր դերակատարություն ուներ XVIII դարի առաջին քառորդին ծավալված հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների ժամանակ: Այն յուրօրինակ կապող օղակ էր շարժման կենտրոնների՝ Հայոց Սղնախների հետ: Օրինակ՝ ազգային-ազատագրական շարժման գործիչ Իվան Կարապետը Պետրոս I-ի 1723 թ. հունիսի՝ արշախա-

---

ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը (հոդվածների ժողովածու), Երևան, 1989, էջ 24-25:

[156] Այդպես էր կոչվում, որովհետև այստեղով էր անցնում միջնադարյան Շիրվանի ամենաաշխույժ ճանապարհներից մեկը, որը տանում էր դեպի վաճառաշահ Շամախի քաղաք:

[157] Տե՛ս **Kempfer E.**, Amoenitatum Exoticarum Politico-Phisico-Medicarum Fasciculi, Lemgoviae, 1712, p. 264-286.

[158] Նույն տեղում, p. 267.

[159] Ա. Սալամզադեն իր աշխատությունում նկարագրելով երկհարկանի քարավանատան ճարտարապետական կառուցվածքը, չի նշում նրա հայկական լինելը (տե՛ս **Саламзаде А.**, Архитектура Азербайджана, стр. 69-70). Այդ փաստը շրջանցվում է նաև Ադրբեջանի Հանրապետության Երիտասարդության, սպորտի և տուրիզմի նախարարության պատվերով Բաքվում 2005 թ. անգլերեն և ռուսերեն լեզուներով լույս տեսած «Азербайджан. туристические регионы» (Azerbaijan. Tourism regions) գրքույկում, որտեղ հին քաղաք ամրոցի («Իչերի-շահար») շրջակա շինությունների թվում (Կույսի աշտարակ, հնդկական քարավանատուն և այլն), միտումնավոր կերպով նշված չէ հայկական քարավանատունը (տե՛ս նույն տեղում, стр. 105).

[160] Տե՛ս **Бретаницкий Л.**, Баку. Архитектурно-художественные памятники, М.-Л., 1970, стр. 86.

հայերին ուղղված հրովարտակը Արցախ հասցրեց Բաքվի վրայով. «...Բաքվէն վեր կացի ԻՀ (28) սահաթումն եկինք Մէսարոյ մանասէրն: ԺԸ (18) օրումն մանասէրումն կացինք գաղտուկ, որ մեզ մարթի չիտես... տեղէն գնացինք Սաղիան վանքրն: Բ (2) օր տեղն կացինք, զրայ վանքումրն մին ըզմինոյ խոտ մասլայաթ արարինք... Եւ ես չորկրրս փոխեցի, վարդապետին չաթիր գարցայ, ոտնով գնացի, որ մարթ յիմանայ ոչ...»[161]: Ավելի ուշ՝ 1726 թ. սղնախաններից հանձնարարականով Բաքու էր եկել արարկիրցի Զաքար Լազարյանը[162]: Մի այլ վավերագրից պարզվում է, որ Կամենեց-Պոդոլսկի վաճառական և դիվանորական գործիչ Գրիգոր Ստեփանյանը 1728 թ. 22 հոգուց բաղկացած իր խմբով Մոսկվայի-Ցարիցինի-Թերեքի վրայով գալիս է Բաքու, ներկայանում այդտեղ գտնվող մերձկասպյան ռուսական զորքերի հրամանատար գնդապետ-լեյտենանտ Ա. Ռումյանցևին և անհրաժեշտ հրահանգներ ստանալուց հետո անցնում սղնախներ ու միանում տեղի հայկական զինված ուժերին[163]:

XVIII դարի սկզբներին Ռուսաստանը կարողացավ օգտագործել Իրանի թուլացումը և վճռական քայլեր ձեռնարկեց Կասպից ծովի արևմտյան և հարավային ափերը տիրելու ուղղությամբ: Պետրոս I-ը առանձնահատուկ նշանակություն էր տալիս հատկապես Բաքվին[164]: 1723 թ. հուլիսի 26-ին ռուսական ծովային արշավախումբը գնդապետ-լեյտենանտ Մ. Մատյուշկինի հրամանատարությամբ առանց գրոհի, հրետանային կրակոցով իրանական կայազորից գրավեց Բաքուն, իսկ աշնանը նաև Սալիանը, Գիլանը և Մազանդարանը[165]: Արշավանքի մասնակից, ռուս առաջին հիդրոգրաֆ Ֆ. Սոյմոնովը գրել է, որ Բաքուն գրավելուց հետո ռուսական կայազորի զինվորները տեղավորվեցին երկու քարաշեն քարավանատներում՝ հայկականում և հնդկականում[166]: 1720-ական թվականներին մերձ-

---

[161] Армяно-русские отношения в I-ой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. II, под редакцией **А. Иоаннисяна**, Ереван, 1967, док. 205, стр. 62.

[162] Տե՛ս Մարտիրոսյան Վ., Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում (XVIII դարի 20-ական թվականներ), Երևան, 1971, էջ 164:

[163] Տե՛ս Ոսկանյան Վ., Մարտիրոսյան Գ., Նոր վավերագրեր 1720-ական թթ. հայ ազատագրական շարժման վերաբերյալ, ՊԲՀ, Երևան, 1962, № 4, էջ 212:

[164] Տե՛ս **Смирнов Ф.**, Краткая история Кавказа, С.-Петербург, 1901, стр .13.

[165] Տե՛ս Полное Собрание Законов Российской Империи сь 1649 года (այսուհետ՝ ПСЗРИ), т. VII, 1723-1727, СПб., 1830, № 4298, стр. 110-112.

[166] Տե՛ս **Соймонов Ф.**, Описание Каспийского моря и чиненныхъ на ономъ Российскихъ завоеваний, СПб., 1763, стр. 418, տե՛ս նաև **Бутков П.**, Материалы для новой истории Кавказа, сь 1722 по 1803 годь, ч. I, СПб., 1869, стр. 48.

կասպյան շրջանների բարեկազդրած. կասպյան արշավանքի մասնակից Հովհան Դաստաք-Դերբերը Բաքվի հնդիկ և այլ վաճառականների կողքին հիշատակում է նաև տեղացի հայ վաճառականներին[167]:

Թուրքիան, որ ուշի-ուշով հետևում էր Այսրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին, Ռուսաստանի առաջխաղացումը կասեցնելու համար դավթողական պատերազմներ սկսեց Արևելքում: Հաշվի առնելով Թուրքիայի դեմ պատերազմելու դժվարությունները, Ռուսաստանը 1724 թ. հուլիսի 12-ին Կ. Պոլսում կնքեց պայմանագիր, ըստ որի Թուրքիան ճանաչում էր նրա իրավունքներն Կասպից ծովի առափնյա ափերում (Դերբենդից Մազանդարան), իսկ Ռուսաստանը, փոխադարձաբար, Թուրքիայի իրավունքները Իրանի այսրկովկասյան տիրույթների նկատմամբ[168]:

Այդ շրջանում Այսրկովկասի քրիստոնյա ժողովուրդների քաղաքական կողմնորոշումը Ռուսաստանի կողմն էր: Ռուսաստանի օգնության հետ մեծ հույսեր էր կապում երկրամասի քրիստոնյա բնակչությունը, բայց ճակատագրական պահին վերջիններս թողնվեցին թուրք ու պարսիկ բռնակալների ողորմածությանը: Վերահաս վտանգը ժամանակին կանխազգացել էր Միայարիի վանքի վանահայր Մարտիրոս եպս. Մեսրոպյանը, որը դեռևս 1724 թ. փետրվարի 24-ին Դերբենդի պարետ Ա. Յունգերին հղած նամակում դգուշացրել էր թուրքերի դեպի մերձկասպյան շրջանները նախապատրաստվող հարձակման մասին: Նամակում ասվում էր, որ թուրքերը պատրաստվում են հաշվհարդար տեսնել Շամախիի և հարևան շրջանների հայ բնակչության հետ, և այդ նպատակով խնդրում էր չուտափույթ ռուսական զորք ուղարկել Շամախի և Նիզաբադ՝ խոստանալով տեղի հայ մարտիկների օժանդակությունը[169]: *Մարտիրոս եպս. Մեսրոպյանի՝ Ա. Յունգերին գրած մարտի 6-ի նամակում ասվում էր, որ թուրքերը նախապատրաստվում են կազմակերպել հայերի կոտորած. «Թուրքերի խօսք գիշեր յերեկ այս է. Այ կաւուր պատրլ փիրսուսզ Ուռուս*

---

[167] Տե՛ս **Гербер И.**, Описание стран и народов вдоль западного берега Каспийского моря. 1728 г., История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. (архивные материалы), под редакцией **М. О. Косвена** и **Х. М. Хашаева**, Москва, 1958 (այսուհետ՝ ИГЭД), стр. 98, 116.

[168] Տե՛ս Զուլալյան Մ., Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների (XIII-XVIII դդ.), գիրք Ա: Քաղաքական պատմություն, Երևան, 1990, էջ 195-197:

[169] Տե՛ս Армяно-русские отношения в I-ой трети XVIII века. т. II, ч. II, док. 214, стр. 72-73.

պատիս կ. ուրախացել էք, ձեզ յինց կատարենք, որ նոցա երես չի տեսնուք»[170]:

Հակահայկական առաջին գործողությունները սկսեցին Դաղստանի սունների լեզգիները: Լեռնականների արշավանքները դեպի Իրանին ննջեցրել տարածքներ ձեռնարկվում էին Թուրքիայի դրդմամբ, որն Այսրկովկասին տիրելու նպատակով ձգտում էր խուլացնել Իրանի և Ռուսաստանի ազդեցությունն այդտեղ[171]: *1724 թ. նրանք ասպատակեցին Շամախիի, Շաքիի և Ղուբայի գավառների անպաշտպան մնացած հայերի և ուդիների բնակավայրերը*[172]: *Լեոյի բնորոշմամբ՝ «Այս մի սարսափելի աղետ էր ամբողջ հայ ազգաբնակչության համար, որ ապրում էր Կովկասյան լեռնաշղթայի հարավային ստորոտներում՝ մինչև Կուր գետը և արևելյան ստորոտներում՝ մինչև Կասպից ծովը»*[173]:

Ռուսների կողմից Բաքուն գրավելուց հետո տեղի հարյուրապետ Մահմուդ Դարգահ-Կուլի բեկը դավադրորեն համագործակցելով լեզգիների առաջնորդ Դաուդ բեկի հետ, 1724 թ. նպատակադրվում է կոտորել քաղաքում մնացած ռուսական կայազորի ոչ մեծ թվով զինվորներին[174]: *Սակայն դավադրության բացահայտման արդյունքում Մահմուդ-Դարգահ-Կուլի բեկը և նրա կողմնակիցները հեռանում են Բաքվից. ոմանք դատապարտվում են մահվան*[175]: *Հովհան-Գուստավ Գերբերի վկայությամբ՝ դավադրությանը չմասնակցած բնակիչներից շատերը, ներառյալ աղքատ խավն ուղարկվեց Ռուսաստան: Քաղաքում մնացին հիմնականում հայերն ու հնդիկները, որոնք պետք է գլխովին վաճառականությամբ*[176]:

1724 թ. հունիսի 12-ին Կ. Պոլսում կնքված ռուս-թուրքական դավադիր պայմանագրից հետո հայկական զինված ուժերը չարունակելով հուսալ Ռուսաստանից սպասվող օգնությանը, հերոսական պայքար էին մղում թուրք զավթիչների դեմ: Տևական դիմադրութ-

---

[170] Նույն տեղում, док. 223, стр. 81.

[171] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. IV, Երևան, 1972, էջ 146, տե՛ս նաև Очерки истории Дагестана, отв. редактор **М. О. Косвен**, т. I, Махачкала, 1957, стр. 161.

[172] Տե՛ս **Эзов Г.**, նշվ. աշխ., док. 273, стр. 416.

[173] Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, գիրք Բ, Երևան, 1973, էջ 213:

[174] Տե՛ս **Гербер И.**, Описание стран и народов вдоль западного берега Каспийского моря. 1728 г., ИГЭД, стр. 98.

[175] Տե՛ս **Бутков П.**, նշվ. աշխ., ч. I, стр. 70-71.

[176] Տե՛ս **Гербер И.**, Описание стран и народов вдоль западного берега Каспийского моря. 1728 г., ИГЭД, стр. 98.

յան հանդիպից թշնամին Արցախում և Սյունիքում, որը լուրջ արգելապատնեշ էր թուրքերի համար՝ ծավալապաշտական ծրագրերը իրականացնելու գործում[177]: Օսմանյան Թուրքիան անթաքույց կերպով «իրենն» էր համարում Դերբենդն ու Բաքուն և այլ նպատակին հասնելու համար ձգտում էր վերացնել Հայաստանն ու հայ ժողովրդին. այդ են վկայում 1725 թ. մարտի 1-ին Վարանդայի ճակատամարտում զերի բռնված Սալահ փաշայի խոսքերը. «...Մեր թագաւորն հրաման է արարեալ, որ պիտի մեք այս երկիրներիս Հայն և դպրպաշն վհչացնեմք. չուն որ Ըռուս թագաւորի զօրքն ծովի այս կողմս են անցել, մեք նոցա վերա պիտի գնամք. Հայն այս մէջս չպիտի և այս երկրներս խարապ պիտի լինել, որ մեր ճանապարհն բացուի. նաև ասաց այս փաշաս, թէ Դուք չէիք այս միջումս, մեք հիմա Դարպանաւ և Պաքու վերա էինք գնացել, որ գաւիմի մերն է (ընդգծումը մերն է - Գ. Ա.)»[178]: Թուրք փաշայի վկայությունն ապացուցում է, որ դեռևս XVIII դարի 20-ական թվականներին Օսմանյան կայսրության՝ Կովկասում տարվող քաղաքականության մեջ որոշակիորեն ուրվագծվում էր համաթուրքականության դաղափարախոսությունը: Ըստ նույն թուրք փաշայի, Հայաստանը սեպի պես խրված էր դեպի Դերբենդ և Բաքու տանող ճանապարհին և թույլ չէր տալիս Թուրքիային՝ իրականացնելու իր ծրագիրը: Վերջինս միակ միջոցը համարում էր հայերի կոտորածներն ու տեղահանությունը[179]:

XVIII դարի 20-ական թվականներից առանձնապես հաճախակի են հիշատակվում բաքվաբնակ հայերը: Ինչպես երևում է մերձկասպյան շրջաններում գործող ռուսական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ-ֆելդմարշալ Վ. Դոլգորուկովի՝ Զինվորական կոլեգիային 1726 թ. հունիսի 23-ի հղած զեկուցագրից, Նիզաբադում տեղակայված կորպուսի՝ Բաքվի կայազորում նույն տարվա մայիսի 1-ի դրությամբ 124 զինվորներից 95-ը հայեր էին[180]:

Ռուսաստանը մերձկասպյան շրջաններում քաղաքական իր դիրքերն ամրապնդելու նպատակով ծրագրել էր գրաված տարածք-

---

[177] Տե՛ս Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Երևան, 2007, էջ 42:

[178] Армяно-русские отношения в I-ой трети XVIII века. т. II, ч. II, док. 315, стр. 249.

[179] Ավելի մանրամասն տե՛ս Ayvazyan A., The Armenian Central Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal, Yerevan, 1997.

[180] Տե՛ս Армянские войска в XVIII веке. Из истории Армяно-русского военного содружества (Исследование и документы), подготовил к изданию Хачатрян А., Ереван, 1968, док. 11, стр. 109.

նրում. ի հակակշիռ մահմեդականների, ամեյացնել ռուսական կողմնորոշում ունեցող հայ բնակչության թիվը[181]: *Պետրոս I-ը Աղվանից կամ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանին և հայ ժողովրդին ուղղված 1724 թ. նոյեմբերի 10-ի հրովարտակով արդյունավետ արտոնություններով թույլատրել էր հայերին բնակվելու Բաքվում, Դիլանում և Մազանդարանում. «...Գիլան և Մազանդարան և Բաքու, և այլ ինչ տեղ որ ձեզ ընդունելի լինի, ինչ վախտ որ ձեզանից ով ոք որ դեղչքն գրգռն, չէ թէ միայն ընդունեն, և ձեր կալվ և շինութեան ավադանի առնել է. ձեր խոզանած, պէշիկական տեղարէքն նշանց տան ձեզ. և մեննայն ջաթտան ողորմութեամբ պիրկ ըզձեզ պահեն, առանց վնաս...»*[182]:

Սակայն թուրք նվաճողների դեմ ազգային ազատագրական պայքար մղող Հայոց Սղնախները կտրականապես հրաժարվեցին գաղթել Կասպից ծովի առափնյա ափեր: Արցախի Եսայի Հասան-Ջալալյանց և Ներսես Ե հակաթոռ կաթողիկոսները, մելիքներն ու հարյուրապետները Պետրոս I-ին 1725 թ. հուլիսի 25-ին հղած գրությունում, միահամուռ դեմ արտահայտվելով վերաբնակության մասին կայսերական հրովարտակին, հիմնավորելով չգաղթելու պատճառները, փոխարինը զինական օգնություն հայցելով, գրում են. «...զի հրաման հզօրիդ առ ծառայքս այսպէս էր, որ մեք ելնումք տալով և տեղով և ամենայն ընչիւք գամք զձեր Պարսից նոր առած երկիրներն, որ է Պաքու, Կիլան, Դարպանտ և աստ բնակիլ: Կամք տեառնդ նզիցի և հրամանի քում մահու չափ նմք հնազանդ, բայց կամիմք որպիսութիւն և բանի կերպն որ աստ է յայտնել տեառնդ... յոյժ անկարելի է մեզ, որ բնաւ ձեռք չէ տալ այս քանի պատճառաւս. զի այս երկրներս, որ ծառայքս քո բնակեալ նմք, որ են Գանջայ, Ղարապաղն, Ջ (6) մհալ, այլ և Գեղարքունի, Քօլանի, Ղափան, Սիսիան և այլ երկրներ... և այս երկիրներս սարով և տեղով չատ ամուր են, և մեք այս խալդս ամէնքն իւր երկրումն սրգնաղ սղնաղ եմք արիլ ամուր տեղերն, և ամէնքս մէկ սղնախին վերա նստած պահում եմք...»: «Վասնորոյ,- շարունակում են նամակի հեղինակները,- խնդրեմք թախանձանօք, զի գմեզ ի ներքոյ խնամոց քոց մի արտաք-

---

[181] Эзов Г., Сношения Петра Великого с армянским народом (документы), СПб., 1898, док. 214, стр. 334, տե՛ս նաև Չորաքյան Պ., Հայ-ռուս-վրացական վոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին: Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ, Ա, Երևան, 2006, էջ 7:

[182] Эзов Г., նշվ. աշխ., док. 256, стр. 393-394, տե՛ս նաև ПСЗРИ, т. VII, № 4357, стр. 157-158.

ներ. այլ չար ոգորմութիան քոյի վերա մեր պահնայ և գմեզ ազատնայ ի չար ձչնամնացս...»[183]:

Ռուսական կառավարութիյնը նպատակադրվեց Բարձր դպրթնցնել ազնականների դիվոտրականութիյանը: «Տեսնելով, որ հայերը հրաժարվում են մեծ բազմութիյամբ գաղթել կասպիական երկրները,- գրում է Լեոն,- ուստից կառավարութիյունը Թարխան յուզարչու միջոցով փորձում էր մասնակի գաղթականութիյուններ հաջողեցնել, գրավելով գլխավորապես գինվորական մարդկանց»[184]: *Հայոց Ազնականների ազատագրական պայքարի վայրկյանի շրջանում որոշ հարյուրապետներ իրենց անձնակազմով անցափոխվում են Բաքու: 1828 թ. ազնականներից Բաքու է ժամանում Թարխան հարյուրապետն իր 50 մարդկանցով*[185]: *Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիա 1730 թ. օգոստոսի 29-ին հղած գեկուցագրում գեներալ-լեյտենանտ Ա. Ռումյանցևը հայտնում է, որ Բաքու են ժամանել Աբրահամ, Զեյազան, Ալավերդի, Բազիր, Սիմեոն հարյուրապետները՝ շուրջ 137 մարդկանցով*[186] *և միացել իր զորքերին*[187]: *Ի դեպ, փաստերը վկայում են, որ Բաքվում հաստատված հարյուրապետներից ոմանք կրկին վերադարձել են ազնականներ: Ինչպես, օրինակ, Աբրահամը 1731 թ. իր անձնակազմով վերադառնում է ազնականներ և շարունակում պարապանական պայքարը թուրք նվաճողների դեմ*[188]:

Ռաշտում Իրանի հետ 1732 թ. կնքած պայմանագրով ռուսական զորքերը պետք է հեռանային Իրանի միջնակասպյան շրջաններից[189], *իսկ 1735 թ. մարտի 10-ին Գանձակում կնքված ռուս-իրանական նոր պայմանագրով Բաքուն կրկին վերադարձվել է Իրանին*[190]: *Իրանական տիրապետության վերահաստատումից հետո ընկած ժամանակաշրջանում Բաքվի հայ բնակչությունը շարունակում էր իր կարևոր գերակատարություններ քաղաքի և կասպից ծովի ա-*

---

[183] Армяно-русские отношения в I-ой трети XVIII века. т. II, ч. II, док. 315, стр. 249-250.

[184] Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, գիրք Բ, էջ 174:

[185] Տե՛ս Армянские войска в XVIII веке. Из истории Армяно-русского военного содружества (Исследование и документы), док. 35, стр. 160.

[186] Տե՛ս **Մարտիրոսյան Վ.**, Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում, էջ 172:

[187] Տե՛ս Армянские войска в XVIII веке. Из истории Армяно-русского военного содружества (Исследование и документы), стр. 456.

[188] Տե՛ս **Մարտիրոսյան Վ.**, Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում, էջ 172:

[189] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. IV, էջ 180:

[190] Տե՛ս **Левиатов В.**, Очерки из истории Азербайджана в XVIII веке, Баку, 1948, стр. 103-104, տե՛ս նաև **Бартольд В.**, Работы по исторической географии. Баку, стр. 351.

ամինյա շրջանների միջև կատարվող առևտրային գործառույթներում: 1738 թ. Բաքու այցելած անգլիացի վաճառական-ճանապարհորդ Ջեյմս Շպիլմանի տեղեկությյան համաձայն՝ Աստրախանից Բաքու, Դերբենդ և Ռաշտ մարդատար ու բեռնատար նավափոխադրումները կենտրոնացած էին հայերի ձեռքին[191]:

Շիրվանի հայությյանը մեծ դրկանքներ պատճառեցին Իրանի նպիր շահի արշավանքները[192]: *Նրա մահից հետո (1747 թ.) Իրանում ծայր առած գահակալական կռիվների ընթացքում պետությյան ներսում խանները ձեռքակցին իրենց անկախությունը: XVIII դ. 40-ական թվականների սկզբներին, միասնական իշխանությյան բացակայության պատճառով, Այսրկովկասում մի շարք խանությունների կողքին ստեղծվեցին Բաքվի (1747 թ.), Շիրվանի (1748 թ.), Գանձակի, Ղարաբաղի, Շաքիի (Նուխի), Թալիշի (1749 թ.), Դերբենդի և Ղուբայի (1765 թ. հետո վերջինիս է միացվում նաև Դերբենդի խանությունը) կիսանկախ խանությունները*[193]:

Նորաստեղծ Բաքվի խանության կենտրոնն էր նավահանգստային Բաքու քաղաքը: 1744-1748 թթ. Իրան ուղարկված իշխան Մ. Մ. Դոլգորուկովի դեսպանության անդամ չոտլանդացի Ջոն Կուկը, նկարագրելով Բաքուն, գրում է. «Բաքուն փոքր քաղաք է, կառուցված կասպից ծովի ափին կիսաշրջանի ձևով՝ պատած բարձր անկանոն ձևի ամուր պարսպով, ամրացված բուրգերով, դրա համար էլ, երբ քաղաքը ռուսների ձեռքին էր, արտաքին պարիսպը (նրանք) վերակառուցեցին ավելի կանոնավոր ձևով, լավ ամրացված բուրգերով. պարսպից դուրս նրանք փորեցին խոր խրամատ: Սակայն պարսիկները, չհասկանալով այդ շինությունների նշանակությունը, աչքաթող արին դրանք, և մնաց միայն միանգամայն անպետք պարսպի ներսը»[194]: *Ջոն Կուկը տեղեկություններ է հաղորդում նաև հայերի կողմից նավթի օգտագործման մասին*[195]:

---

[191] Տե՛ս **James Spilman**, A Journey Through Russia Into Persia, London, 1742, p. 10-11.

[192] Տե՛ս Աբրահամ կաթողիկոս Կրետացի, Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ, 1870 (այսուհետ՝ Աբրահամ Կրետացի), էջ 65:

[193] Տե՛ս **Аббас-Кули-Ага Бакиханов**, стр. 73, տե՛ս նաև **Петрушевский И.**, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв., Л-д, 1949, стр. 86.

[194] **John Cook**, Voyages and Travels Throgh the Russia Empire, Tartary and Part of the Kingdom of Persia, vol. II, Edinburg, 1778, p. 379.

[195] Տե՛ս նույն տեղում, p. 378.

Բաքվի մեկ այլ նկարագրություն կատարել է 1769 թ. Աստրախանից ծովով այդտեղ այցելած գերմանացի գիտնական, Ռուսաստանի ակադեմիայի անդամ, Աստրախանի արշավախմբի 2-րդ ջոկատի պետ Սամուիլ Գոտլիբ Գմելինը: Կասպից ծովի արևելյան ափերն ուսումնասիրելու նպատակով Ս. Գմելինը 1773 թ. կատարեց իր երկրորդ ճանապարհորդությունը. Պարսկաստանից ետդարձի ճանապարհին նույն թվականի դեկտեմբերին այցելեց Բաքու: Ս. Գմելինը նկարագրում է Ապշերոնյան թերակղզին, մեծ ուշադրություն դարձնելով հատկապես Բաքվի նավթահանքերի վրա[196]: Բնութագրում է քաղաքի բնակչության կենցաղը և զբաղմունքները: Մեջ են բերվում իրավունքին, դատավարության կարգին վերաբերող տեղեկություններ, խանական իշխանությունների կողմից տեղական բնակչության, այդ թվում նաև հայերի նկատմամբ կիրառվող իրավապրկման քաղաքականության և հարստահարման փաստեր: Ըստ նրա՝ «Թեև Բաքվում դատավորները ընդհանուր առմամբ պետք է պահպանեին արդարադատություն, սակայն զարմանալի չէ, որ որևէ մեկը երբևէ չէր կարող հասնել դրան: Մասնավորապես հայերը այնպիսի դժվարներ պետք է աչքատեին, որպեսզի հնարավորություն ունենային ձեռք բերել իրենց իրավունքները Բաքվի իշխանություններից»[197]:

Պատմական հավաստի աղբյուրները վկայում են, որ XVIII դարի կեսերին ևս հայ առևտրականների մի ստվար հատված Բաքվում պահպանում էր դիրքերը Կասպից ծովի վրայով Իրանի, Ռուսաստանի ու Միջինասիական երկրների միջև կատարվող միջազգային առևտրի բնագավառում: Դեռևս 1758 թ. նոյեմբերի 19-ին Կասպից ծովում կանոնավոր նավագնացության թույլտվություն է ստանում վաճառական Սողոմոնյանը՝ բաննեցնելով երկու առևտրական նավ[198]: Խրախուսելով հայ վաճառականների գործունեությունը՝ Սենատը 1769 թ. նոյեմբերի 17-ին հրահանգում է Աստրախանի նահանգապետին՝ թույլատրել Աստրախանում բնակվող և առևտրով զբաղվող հայերին Կասպից ծովում կառուցել ծովային նավեր՝ բեռնափոխադրումներ կատարելու համար[199]: Ստանալով

---

[196] **Samuel Gottlieb Gmelin**, Travels Through Northern Persia: 1770-1774, Washington, 2007, p. 293.

[197] Տե՛ս նույն տեղում, p. 34.

[198] Տե՛ս Տէր-Աստուածատրեանց Հ., Վաճառականութիւնը Ռուսիայում: Պատմական տեսութիւն վավերաթղթերով (Է-ԺԸ դար), Պարիս, 1906, էջ 53:

[199] Տե՛ս Ոսքանյան Պ., Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, էջ 295:

նավեր ունենալու իրավունք՝ հայ վաճառականներն անմիջապես ձեռնամուխ եղան լայն գործունեության: Մեզ են հասել Կասպից ծովի վրա երթևեկող հայազգի մի շարք նավատերերի և նավերի անունները: Մկրտում Գալստյանին է պատկանել «Սուրբ Պետրոս» ճկնորսանավը, Աբաեմ Առաքելովին՝ «Սուրբ Միքայել» առագաստանավը, Մինաս Դիլանչյանն ունեցել է երեք թիանավ և այլն[200]:

Ծովափնյա Բաքու քաղաքում հայազգի վաճառականներին պատկանող նավերի և նրանց ապրանքները փոխադրելու մասին պահպանվել են բազմաթիվ վկայություններ: Ռուս մեծ դորադար Ա. Սուվորովի՝ Դ. Պոտյոմկինին 1789 թ. ապրիլի 11-ի հղած զեկուցագրում ասվում է. «Մարտի 25-ին այստեղ նավեր եկեւացին. առաջինը Բաքվից էր, հայազգի Կարապետ Հարությունով վաճառականին պատկանող, որ կոչվում է «Ս. Հովհան», մեատաքսով բարձված Գիլանում...»[201]: *Հայ վաճառականների՝ Կասպից ծովի վրա ունեցած առևտրական նավերը երթևեկում էին Աստրախանից մինչև Բաքու, Գիլան ու Մազանդարան: Նրանք ունեին իրենց սեփական նավատորմիղն ու նավահանգիստները*[202] *և իրենց առևտրով հարստացնում էին ոչ միայն Ռուսաստանի դանձարանը, այլև իրենք էին կուտակում հսկայական հարստություններ: Լեոն այդ հանգամանքը իրավամբ նպաստավոր է համարել նաև մայր հայրենիքի համար: «Շիրվանի հայության դերը,- գրում է նա,- շատ կարևոր էր և Հայաստանի համար, որովհետև Շիրվանը կապում էր մեր հայրենիքի հյուսիս-արևելյան նահանգները (Գանձակ, Արցախ և Սյունիք) Կասպից ծովի հետ, որն այն ժամանակ շատ առաջնակարգ դեր էր կատարում իրրև միջազգային առևտրական ճանապարհ, որի վրա քաղաքական շահերն էլ էին երևան գալիս այն առևտրական կարավանների հետ, որոնք ուղևորվում էին Արևմտյան Եվրոպայից և Ռուսիայից Աստրախանի վրայով դեպի Անդրկովկաս և Պարսկաստան»*[203]:

Վերադառնալով բուն նյութին՝ նշենք, որ XVIII դարի վերջին և XIX դարի սկզբներին Բաքվում և Սալիանում բնակվող հայ

---

[200] Տե՛ս նույն տեղում, էջ 296-297:
[201] Տե՛ս նույն տեղում, էջ 297-298:
[202] Սաճրամասն տե՛ս Ստեփանյան Գ., Կասպից ծովի հայկական նավատորմի պատմությունից: «Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում»: «Այաս» ծովային ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր (2010-մայիսի 14-16), էջ 39-44:
[203] Լեո, Հայոց պատմություն, հ. Գ., գիրք Ա, Երևան, 1969, էջ 169:

բնակչության թվաքանակի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում թուրք պատմագիր Ջևդեթ փաշան (Ահմեդ Ջևդեթ, մահացել է 1894 թ.) իր «Թարիխի Ջևդեթ» աշխատության Գ հատորում, որն ընդգրկում է 1774-1825 թթ. պատմությունը՝ առանց կոնկրետ տարեթվի հիշատակության: Ըստ պատմագրի՝ «Սալյան և Բաքու քաղաքներում ապրում են... 10 հազար տուն հայեր»[204]: Եթե յուրաքանչյուր բնտանիքում միջին հաշվով 4-5 շունչ հաշվվի, ստացվում է, որ Բաքուն և Սալիանն այդ ժամանակ ունեին ավելի քան 40000 հայ բնակիչ: Նկատենք, որ թուրք պատմագրի բերած վիճակագրական տեղեկություններն այդքան էլ որ այդ ժամանակաշրջանի համար մոտավոր լինեն, այնուհանդերձ, այդ վկայությունը անկրկնելիորեն հաստատում է Ապշերոնյան թերակղզում և Կասպից ծովի առափնյա շրջաններում հայերի բնակեցված լինելու մասին:

Բաքու քաղաքի 1780 թ. առևտրական կապերի և դինուժի վերաբերյալ հետևյալ տեղեկություններն է հայտնում Ա. Սուվորովը. «Բաքուն ոչ մեծ քաղաք է: Ունի քարե հնացած, թույլ և անկանոն ամրություն և անպետք 30 թնդանոթ: Ետևը 1000-ից ավել հեծելազոր չի կարող հավաքել: Այստեղից Սալիան, Էնզելի, Գիլան և Մազանդարան են տեղափոխում ալ և նավթ, իսկ ներսում՝ մետաքս, փայտ և այլն»[205]:

Նույն թվականի Բաքվի հայության մասին տեղեկություններ են պարունակում Հայոց կաթողիկոս Ղուկաս Ա Կարնեցու Բաքու՝ մի շարք անձանց առաքված նամակներն ու կոնդակները: Այսպես՝ 1780 թ. դեկտեմբերին առաքված կոնդակներից մեկում կաթողիկոսը գանձապետ Եղիազարին հորդորում էր պատասխան գրով տեղեկացնել տեղի հայ բնակչության որպիսության մասին. «Թուղթ ևս Բաքու առ սրբոյ Աթոռոյս գանձապետ պարոն Եղիազարն գրեալ սրբազան Վեհն...: Եւ հարկ է, թէ գոիբդ մի պակասեցուսցես, գրելով միշտ զորպիսութենանց քոց և այդ կողմանցդ, և զորպիսաբար կեցութենանց օրհնեալ ժողովրդոց այդ, երկրացդ (ընդգծումը մերն է - Գ. Ս.) յորպէս յառաջ գրեալ ես միշտ առ լուսահոգին...»[206]:

---

[204] Տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, բարգմանություն թուրքական բնագրերից, ներածական ակնարկներով, ծանոթագրություններով և հավելվածով կազմեց Ա. Սաֆրաստյան, Երևան, հ. Ա, 1961, էջ 248:

[205] **Нерсисян М.**, Из истории русско-армянских отношений, кн. первая, Ереван, 1956, стр. 262.

[206] Դիվան Հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հ. Ա (1780-1785), աշխատասիրությամբ Գրիգորյան Վ., Երևան, 1984, էջ 170:

Շիրվանի հայաբնակ վայրերի, այդ թվում նաև Բաքվի հայերի՝ համահայկական ձեռնարկումների մասնակցության մասին տեղեկանում ենք դարձյալ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի՝ Շամախիի հայոց թեմի չրջարերականներից: Այսպես՝ 1783 թ. Գորի քաղաքի Սբ. Ստեփաննոս եկեղեցու այրվելու պատճառով կրած վնասները վերականգնելու նպատակով Ղուկաս Կարնեցին նույն թվականի ապրիլի 1-ին Շամախիի թեմ հղած ժողովարարական կոնդակով, ի թիվս ռուսահայոց թեմերի, հայցում էր նաև չիրվանահայերի, այդ թվում նաև Բաքվի հայերի օգնությունը. «...ի յօրհնեալ երկիրսդ և ի քաղաքսդ՝ ի Դարբանդ, ի Ղախ (Կախ ավան - Գ. Ս.), ի Բաքու, ի Ղուպա և ի բոլոր երկիրդ Շրուանու՝ ի Նուխի, ի Շամախու և յայլ չրջակայս դոցին... վասն Գօրու սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն օգնութիւն առնելոյ...»[207]: Ղուկաս Կարնեցին 1791 թ. փետրվարին Շամախիի հայոց թեմին հղած մեկ այլ կոնդակում էջմիածնին նյութապես օգնելու նպատակով պատվիրում էր ստեղծել գանձանակներ և հավաքված դումարներն առաքել Մայր Աթոռ. «Կոնդակ ի վերայ Շամախու, Նուխու, Ղուպայու, Շիրուանու, Բաքուայ, Դարբանդու, Ղախու և չրջակայից մերայինն ժողովրդոցն վասն արդեանց գանձանակացն սրբոյ Աթոռոյս...»[208]: Կաթողիկոսի գրությունները պերճախոս վկայություններն են այն սերտ կապերի, որ ուներ Մայր Աթոռը Արևելյան Այսրկովկասի հայաբնակ վայրերի հետ, և հատակ պատկերացում են տալիս տարէթնիկ այդ տարածքում XVIII դարի վերջերին հայերի տեղաբաշխվածության վերաբերյալ:

Հատկանշական է, որ նավահանգստային Բաքու քաղաքում XVIII դարի 80-ական թվականների սկզբներին ևս նավափոխադրումները հիմնականում գտնվում էին հայազգի վաճառականների ձեռքում: Ուստի պատահական չէ, որ ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպ. Արղությանը, երբ 1783 թ. ռուսական իշխանություններին ներկայացրեց 18 հոդվածից բաղկացած հայ-ռուսական դաշնադրի նախագիծը, որում նախատեսվում էր վերականգնել հայոց թագավորությունը, առաջարկում էր առևտրի համար Հայաստանին որամադրել մի նավահանգիստ՝ Կասպից ծովի ափին: Ինչպես ասված է նախագծում. «Յաղագս վաճառականութեան սահմանեսցի օրէնք ի մէջ երկուց թագաւորացս և յատկացուսցի մաքս իւրաքանչիւր վաճառկի իրաց և տացի մեզ նաւահանգիստ ի կաս-

---

[207] Նույն տեղում, էջ 357:

[208] Դիվան Հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հ. Բ (1786-1792), աշխատասիրությամբ Գրիգորյան Վ., Երևան, 2003, էջ 591:

պիական ծովուն»[209]: Կովկասագետ Պ. Բուտկովի վկայակոչած տվյալների համաձայն՝ 1783 թ. Շիրվանում կար 2000 ծուխ հայ բնակիչ[210]:

Շիրվանը մեծապես տուժեց նաև Իրանի Ագա Մուհամմադ խանի 1795 թ. արշավանքի հետևանքով: Թիֆլիսն ավերելուց հետո, երբ նա ձմեռելու վերադարձավ Մուղանի դաշտ, դպրի ավերածությունների ենթարկեց նաև Շիրվանը:

XVIII դ. վերջերին Ռուսաստանը վերսին ձեռնամուխ եղավ նվաճելու Այսրկովկասը և իր դիրքերն ամրապնդելու մերձկասպյան շրջաններում: Կոմս Վ. Զուբովի հրամանատարությամբ 1796 թ. ապրիլի 30-ին սկսված ռազմական ակտիվ գործողությունների արդյունքում մայիսի 10-ին գրավվեցին Դերբենդը, այնուհետև՝ Ղուբան, Շամախին, Շաքին, Ջավադը, Լենքորանը և հունիսի 13-ին Բաքուն[211]:

Բաքու քաղաքի ժողովրդագրական պատկերի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են հաղորդում երկրամասում XVIII դարի 80-90-ական թվականներին ռուսական զինվորական ծառայության մեջ գտնվող սպաները: Կովկասում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-պորուչիկ Ս. Պոտյոմկինի հանձնակատար հայազգի գնդապետ Ա. Ախվերդովի տվյալներով՝ Բաքուն 1796 թ. ունեցել է 500 տուն՝ 1500 բնակչով[212]: 1796 թ. իրանական արշավանքի մեկ այլ մասնակից, ռուսական բանակի հայազգի մայոր Ա. Սերեբրովի տվյալների համաձայն՝ Բաքվում կար 620 բնտանիք[213]: Այդ առումով որոշ տեղեկություններ է հաղորդում 1796 թ. Շիրվանի պրովինցիայի և Ապշերոնի բնակավայրերի տեղագրության և քարտեզագրման աշխատանքներին մասնակցած Ի. Դրենյակինը, ըստ որի՝ Բաքուն ուներ մինչև 580 տուն պարսիկ և շուրջ 40 տուն հայ բնակչություն[214]:

---

[209] Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800), сборник документов, т. IV, под ред. **М. Нерсисяна**, Ереван, 1990, док. 175, стр. 276.

[210] Տե՛ս **Бутков П.**, Материалы для новой истории Кавказа, сь 1722 по 1803 годь, ч. II, СПб., 1869, стр. 142.

[211] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ Գ.Ա հրատ., հ. IV, էջ 240:

[212] Տե՛ս **Ахвердов А.**, Описание Дагестана. 1804 г., ИГЭД, стр. 222.

[213] Տե՛ս **Серебров А.**, Историко-этнографическое описание Дагестана. 1796 г., ИГЭД, стр. 178. Հմմ. **Алиев Ф.**, Города и городская торговля в Азербайджане во второй половине XVIII в., АН АзССР. Труды инст. истории, т. XIII, Баку, 1958, стр. 142.

[214] Տե՛ս **Дренякин И.**, Описание Ширвана. 1796 г., ИГЭД, стр. 168. Հմմ. Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարան (այսուհետ՝ Մատենադարան), Կաթողիկոսական ղեկավան, թղթ. 32, վավ. 219, թ. 4:

Բաքու քաղաքի հայկական համայնքի հնարնակության վերաբերյալ ուշագրավ տեղեկություն է հաղորդում քաղաքի ամենահին հատակագծերից մեկը, որը կազմվել և ստորագրվել է 1796 թ. իրանական արշավանքի մասնակից, ինժիներ, գնդապետ Քրիստիան Տրուզսոնի կողմից: Հատակագծում ամրոցի մի շարք շինությունների թվում (շահական և խանական տներ, քարավանատներ, մզկիթ և այլն) առաջինը նշված է ներդաժդի ատորոտին՝ ծովեզերքի «կույսի աշտարակի» հարևանությամբ գտնվող հայկական եկեղեցին[215], որն, անտարակույս, եղել է քաղաքի ամենահին՝ Սբ. Աստվածածին եկեղեցին:

Բաքվի պատմության ուսումնասիրության համար բավականին ուշագրավ նյութեր պարունակող կովկասագետ Սեմյոն Բրոնևսկու աշխատությունում նշվում է, որ XVIII դ. 90-ական թվականների կեսերին քաղաքն ուներ 500 տուն՝ շուրջ 3000 բնակչով, իսկ շրջակա 25 գյուղերը[216]՝ մոտ 1000 տուն[217]: Բրոնևսկու աշխատությունում տրված է նաև Բաքվի բազմակողմանի նկարագրությունը. հեղինակը խոսում է տնտեսության, կյանքի պայմանների, տեղեկություններ է հայտնում քաղաքի ազգային կազմի մասին և այլն: Բազաքի բնակիչների թվում պարսիկներից և հայերից բացի, Ս. Բրոնևսկին ըստ տեղանվանական պատկանելության հիշատակում է նաև Դաղստանից և Շիրվանից եկած բնակիչներին[218]: Ս. Բրոնևսկին գրում է, որ քաղաքի ներքին և արտաքին առևտուրը գլխավորապես գտնվում էր պարսիկ և հայ վաճառականների ձեռքին[219]:

Բաքվի հայերի մասին նշանակալի հետաքրքրություն ունեն հատկապես 1796 թ. իրանական արշավանքի մասնակից, Ա. Սերեբրովի մոտ ծառայության մեջ գտնվող, ծնունդով Վաղարշապատ գյուղից հասարակական-քաղաքական գործիչ Հարություն Արարատյանի տեղեկությունները: Իր հուշերում նա գրում է, որ նույն թվականին Սալիանից իր ընկերոջ հետ Բաքու հասնելուց հետո գիշերելու նպատակով քաղաքում փնտրել է տեղաբնակ ոմն նշանավոր հայի տու-

---

[215] Տե՛ս **Фатуллаев Ш.**, նշվ. աշխ., стр. 23, տե՛ս նաև **Саламзаде А.**, նշվ. աշխ., стр. 118.

[216] Բալախան, Մաշքաղա, Բուզովնա, Մարդաքյան գյուղերից բացի, Բաքվի շրջակայքում էին գտնվում նաև Ամիրջան, Բալաջար, Բիլքուլի, Բինաղադ, Փիրշագի, Զիրե, Նարդարան, Զիխ և այլն գյուղերը (տե՛ս **Автономовь-Спасский К.**, Описание Бакинского уезда Шемахинской губернии, КК на 1856 г., отд. III, стр. 502).

[217] Տե՛ս **Броневский С.**, նշվ. աշխ., ч. II, гл. III, Ширван (Ханство Бакинское), стр. 398, 401.

[218] Տե՛ս նույն տեղում, стр. 401.

[219] Տե՛ս նույն տեղում, ч. II, гл. IV (Общая замечания), стр. 452.

նր, և որ իրենց հաճույքով հյուրընկալել են վերջինիս այրին ու փեսան: Հ. Արարատյանը գրում է, որ այրին ուներ փորձահասակ մի որդի, որին օգնել է սովորել այրուդիներ, ինչի համար տանտիրուհին և նրա փեսան անկեղծ հյուրասիրությամբ հայտնվել են իրենց գոհունակությունը[220]*: Հ. Արարատյանի տեղեկություններից հետևում է, որ այդ հայ բնակիչն ապրել է բարեկեցիկ պայմաններում. ուներ ծառա*[221]*: Նա նաև տեղեկություններ է հայտնում քաղաքում ապրող մյուս հայերի մասին*[222]*: Նրանցից տարեց մեկի միջոցով, որը սերտ կապեր ուներ քաղաքի ուսա բարձրաստիճան մի մայորի հետ, Հ. Արարատյանը ծառայության է անցնում վերջինիս մոտ*[223]*: Այս ամենով հանդերձ առավել հետաքրքրական ու ուշագրավ է Հ. Արարատյանի՝ Բաքվում մեկից ավելի եկեղեցիների գոյության մասին տեղեկությունը. «Ամբողջ օրը ես չրջում էի փողոցներում, այցելում էի եկեղեցիներ...»*[224]*: Հ. Արարատյանի տեղեկություններից կարելի է կարծել, որ Սբ. Աստվածածին եկեղեցուց բացի, քաղաքում գոյություն է ունեցել մեկ այլ եկեղեցի ևս*[225]*: Հ. Արարատյանը տեղեկություններ է հաղորդում նաև քաղաքի տնտեսության, սովորույթների, կյանքի պայմանների, «Կույսի աշտարակի», ինչպես նաև Սուրախանիի նավթի մասին*[226]*: Այսպիսով՝ թանկարժեք այս վկայություններն ամբողջացնում են հայ և օտար ակնարկագրությունների այն ցանկը, որոնք փաստում են Բաքու քաղաքում հայերի հնաբնակ լինելը:*

Չնայած մերձկասպյան չրջաններում Ռուսաստանի ռազմական հաջողություններին, 1796 թ. նոյեմբերին Եկատերինա II-ի անակնկալ մահից հետո գահ բարձրացած Պավել I-ին կայսրը ռուսական զորքերին հետ քաշվելու հրաման տվեց, ինչով Այսրկովկասում

---

[220] Տե՛ս Жизнь Артемия Араратского. Йздание подготовил **Григорьян К.**, при участии **Орбели Р.**, Москва, 1981, ч. II, стр. 145.

[221] Տե՛ս նույն տեղում, стр. 152.

[222] Տե՛ս նույն տեղում, стр. 156.

[223] Տե՛ս նույն տեղում, стр. 154-155.

[224] Տե՛ս նույն տեղում, стр. 152.

[225] Բաքվի հնաբնակ հայերից Բենիամին Առուստամյանը վկայում է, որ Կույսի աշտարակին կից, դրանից ձախ, պետության կողմից ոչ լիարժեք «պահպանվում» էին վաղ շրջանի հայկական եկեղեցու ավերակները (տե՛ս **Арустамян Б.**, Город утраченый - город утративший (об истории бакинской армянской общины), «Армянский вестник», Москва, 1999, № 1-2, стр. 52): Ի դեպ, Սբ. Նիկոլայ Միրոլիկիսկայա Հրաշագործի անվամբ ռուսական առաջին եկեղեցին Բաքվում կառուցվել է ավելի ուշ շրջանում՝ 1815 թ., Կույսի աշտարակի մոտակայքում (տե՛ս htt://www.ourbaku.com):

[226] Տե՛ս Жизнь Артемия Араратского, стр. 148-152.

ժամանակավորապես պատերազմներին ռազմական գործողություններ[227]: Ռուսների հետաքրքիր վարանդավոր դրություն ստեղծեց երկրամասի հայ բնակչության համար: Ռուսական կողմնորոշում ունենալու պատճառով վախենալով խանների վրեժխնդրությունից՝ Բաքվի, Ղուբայի, Դերբենդի և Մուշկուրի խանությունների շրջակայքում գտնվող հայարնակ գյուղերի հարյուրավոր բնտանիքներ ռուսական կառավարության թույլտվությամբ 1796-1797 թթ. գաղթեցին Հյուսիսային Կովկաս. «Ինչպես Մուշկուրի, նոյնպես և Դերբենդի հայերն երկիւղ կրելով թուրքերի վրէժխնդրութիւնից՝ իրանց ռուսներին մատուցած անձնազոհ ծառայութեան համար, թողին տուն ու տեղերը, գնդացիկ այգիները, պտղաւէտ դաշտերն ու անչարժ կայքերն և գաղթեցին ռուսի հողը: Նրանք գնացին, բնակուեցին Ղզլարի մօտերքը»[228]: Ըստ Պ. Բուտկովի՝ այդ շրջաններից գաղթեց ավելի քան 500 հայ բնտանիք[229]: Վարդան Օձնեցին, անդրադառնալով այդ գաղթերին, գրում է. «Բազումք ի հայոց և սակաւք ի տաճկաց անցին ի Վրաստան, ի Սամխեթ, յԵրևան, ի Կարս և յաշխարհն Սարմատացւոց՝ ի Մոդդօք և ի Ղզլար»[230]:

XVIII դ. վերջերին երկրամասի հայկական գյուղերը զգալի չափով համալրվեցին Արցախից և մասամբ Սյունիքից կատարված արտագաղթերի հնարհիվ: Իրանի Աղա Մուհամմադ խանի՝ 1795 և 1797 թթ. արշավանքների ու ավարառությունների պատճառով լիովին քայքայվից Արցախի բնակչության տնտեսությունը: Կռիվների և արշավանքների պատճառած չարիքներին միանում են նաև 1797-1798 թթ. բռնկված սովն ու ժանտախտը: Հուսահատության եզրին հասած բնակչության մի մասը 1798-1799 թթ. բռնց գաղթի ճանապարհը՝ հանդրվանելով Շիրվանում, Վրաստանում և Ռուսաստանում[231]: Շիրվան տեղափոխված հայերի մի մասը հաստատվից Կասպից ծովի առափնյա շրջաններում՝ Բաքվում, Ղուբայում և Դերբենդում[232]: Այս փաստերն իրենց արձագանքն են գտել նաև XIX դ. պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովի (Հովսեփ Հովսեփյանց)

---

[227] Տե՛ս Չոբանյան Պ., Հայ-ռուս-պարսկական կապերի պատմությունից (XVIII դարի վերջ), ՊԲՀ, Երևան, 1991, № 2, էջ 62-63:

[228] Վաղարշապատեցի Յարութիւն Աբարատեանի կեանքը: Թարգմ. ռուսերէնից Պռոշեան Պ., Թիֆլիս, 1892, էջ 244:

[229] Տե՛ս Бутков П., նշվ. աշխ., ч. I, стр. 94.

[230] Վարդան Օձնեցի, Նոր քաղաքական և եկեղեցական պատմութիւն Հայաստան աշխարհի Մեծի և Փոքու (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 4331, թ. 91բ-92ա):

[231] Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, գիրք Բ, էջ 405, տե՛ս նաև Բաֆֆի, Խամսայի մելիքությունները, ԵԺ, հ. 10, Երևան, 1959,էջ 291-292:

[232] Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու, 1895, էջ Ը:

«Թարիխ-ի Սաֆի» («Նշմարտացի պատմության») պարսկերեն պատմագրական երկում, ուր հեղինակը գրում է. «Երեք տարի Ղարաբաղում երկնային ու երկրային ազետի [նշաւի] հետևանքով անկերրիութիւն ու սով էր. Ակնատեղի բնակչության մեծ մասը իր օրվա հացն ապահովելու համար ցրվել էր Շաքիի, Շիրվանի, Ղարադաղի և [Հարևան] մյուս երկրները»[233]: Գեներալ Պ. Ցիցիանովի 1805 թ. մայիսին Ախալքալաքի ի-ին հղած գեկուցագրում նշվում է Շիրվան տեղափոխված հայերի 8000 տուն[234]: Ըստ մեկ այլ աղբյուրի՝ Շիրվանի վիճակում հաստատվել են շուրջ 12000 տուն[235]:

Շիրվանում հաստատված արցախահայերն իրենց համար բնակության նոր վայրեր էին ընտրել նախկինում հայաբնակ և այժմ դատարկված կամ մասամբ բնակեցված գյուղերը[236], որտեղ, զրկվի առանց բացառության, պահպանվել էին բնիկ հայերից մնացած բազմաթիվ նկեղեցիներ, արձանագիր խաչքարերով ու տապանաքարերով գերեզմանոցներ: XVIII դարի վերջերին երկրամասում չրջագայած Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցին, նկատի ունենալով հայ բնակչության սուղար լինելու հանգամանքը, Շիրվանից մինչև Դերբենդ ու Կասպից ծով ընկած տարածքը համարել է Հայաստան. «...Դարբանդ քաղաք է ի Հայաստան ի եզերք Կասպի ծովու... և այս Շիրւանս է յայնատարած աշխարհ մի ի մայրաքաղաքացն Հայոց և ունի բազում գեղօրհաքս... Յելից վերկալով առ Շաքի. սայ ևս է ի ներքոյ լեառն Կովկասայ, որ գոյ ի մէջ Հայաստան աշխարհումն...»[237]:

Այսպիսով՝ վավերագիր աղբյուրների վկայությամբ Արևելյան Այսրկովկասում՝ Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքում հայերը բնակվել են վաղ ժամանակներից սկսած՝ իրենց որոշակի դերակատարությունն ունենալով երկրամասի սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքում:

---

[233] Միրզա Յուսուֆ Ներսեսով. Ճշմարտացի պատմություն, թարգմանությունը քնագրից, ներածությունը և ծանոթագրությունները Ք. Կոստիկյանի, Երևան, 2000, էջ 73:

[234] Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, Եժ, հ. Դ, գիրք Ա, Երևան, 1984, էջ 252:

[235] Տե՛ս Բէկնազարեանց Ա., Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 242:

[236] Տե՛ս Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 295:

[237] Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցի, Ճաղկաբաղ աշխարհացոյց: Տպագրության պատրաստեց՝ Քյուրտյան Հ., ԲՄ, Երևան, 1969, № 9, էջ 292-293:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՔՈՒ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐՈՒՄ

Ա. ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ

Իրանի տիրապետության ներքո գտնվող Արևելյան Այսրկովկասը XIX դարի սկզբին վարչականորեն բաժանված էր կիսանկախ և ավատատիրական՝ Բաքվի, Շաքիի, Շիրվանի, Ղուբայի և Թալիշի խանությունների միջև: Բաքվի խանության աստիճանական զարգացման արդյունքում, վարչական կենտրոն Բաքվում XIX դարի սկզբին՝ մոտավորապես 1802 թ., արդեն կար 600 տուն բնակչություն[238]:

XIX դարի սկզբներին ցարական կառավարությունը ձեռնամուխ եղավ Այսրկովկասը վերջնականապես Ռուսաստանին միացնելու քաղաքականության իրականացմանը: 1804-1813 թթ. ռուս-իրանական պատերազմի ընթացքում 1805 թ. մայիսի 21-ին Ռուսաստանին են անցնում Շաքիի, դեկտեմբերի 25-ին՝ Շիրվանի, իսկ 1806 թ. հոկտեմբերի 3-ին՝ Բաքվի ու Դերբենդի խանությունները[239]: Այդ շրջանում Բաքվում ապրող հայերի և նրանց ռուսական կողմնորոշում ունենալու մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում վրաց պատմիչ Բագրատ Բագրատիոն արքայազնը (1776-1841 թթ.) «Նոր պատում» (Ախալի մոթխրոբա) երկում: Ինչպես հայտնի է, 1806 թ. փետրվարի 8-ին Հուսեյն Ղուլի խանը Բաքվի բերդի բանալիները պետք է հանձներ գեն. Պ. Ցիցիանովին, սակայն անձնատվության օրը խանը դավադրաբար սպանել է տալիս նրան[240]: Պատմիչի հաղորդման համաձայն՝ սպասվող դավադրության մասին տեղացի մի հայ գաղտնի նամակով նախապես հայտնել էր Ցիցիանովին, որը, սակայն, չհավատալով դրան, անողոքաբար պատժել էր հային. «Այստեղ Բագվի խանը՝ Հուսեյն Ղուլին, դավաճանություն սարքեց, որպեսզի սպանի Ցիցիանովին: Լսելով այս՝ այնտեղ ապրող հայերից մեկը հա-

---

[238] Տե՛ս Աճառյան Հր., Հայ գաղթականության պատմություն, էջ 55:

[239] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. V, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975, էջ 121:

[240] Տե՛ս Описание достопамятных происшествий в Армении случившихся в последния тридцать лет, т. е. от Патриаршества Симеонова (1799 г.) до 1809 года. Сочинение князя **Егора Хубова**, СПб., 1811, стр. 128.

դարպեց սրա մասին Ցիցիանովին[241], որը, սակայն, իր հպարտ լինելու և անհնազանդության չնորհիվ հավատ չընծայեց այն հային, բանտարկել տվեց և անողոք պատժեց նրան»[242]: Այնուհետև Հուսեյն Ղուլի խանը մտադրվել էր պատժել նաև Բաքվի ամբողջ հայ բնակչությանը: Քաղաքի նշանավոր մահմեդականների հետ խորհրդակցելուց հետո խանը հրամայում է հայերին հավաքվել նկեղեցու մեջ: Ապահով կոտորածը կանխվում է մի պարսիկ հարուստ կողմից, որին հաջողվում է մեղմել խանի բարկությունը: Այս կապակցությամբ Բաֆֆին գրում է. «...մի պարսիկ հաջի, որը խոհեմ, բարեսիրտ մարդ էր, շտապում է խանի մոտ, և ցույց տալով նրա բարբարոսության վատ հետևանքները, կարողանում է մեղմել նրա բարկությունը և ազատում է հայերի կյանքը: Այնուհետև Բաքվի հայերը միշտ մեծ հարգանքով և երախտագիտությամբ են վերաբերվել դեպի այդ մարդու տունը»[243]:

Բաքու քաղաքի XIX դարի առաջին տասնամյակի վերջերի բնակչության թվի վերաբերյալ կարևոր տեղեկություններ է պարունակում նաև Աստրախանի մաքսատան տնօրեն Իվանովի՝ 1809 թ. հունիսի 25-ի՝ Վրաստանի և Կովկասյան գծի գլխավոր հրամանատար գեներալ-մայոր Ա. Տորմասովին ուղղված զեկուցագիրը, համաձայն որի՝ Բաքվի բնակչության թիվը՝ իր արվարձանով կազմում էր 992 ընտանիք՝ 5007 բնակչով: Ըստ այդմ՝ բուն քաղաքում պարսիկները կազմում էին 861 ընտանիք՝ 4341 բնակչով, հայերը՝ 34 ընտանիք՝ 163 բնակչով, հրեաները՝ 10 ընտանիք՝ 66 բնակչով: Քաղաքի արվարձանն ուներ պարսիկ 87 ընտանիք՝ 437 բնակչով: Բաքվի մերձակա 37 գյուղերն ունեին 2193 ընտանիք՝ 10000 արական սեռի բնակչով[244]: Իվանովի՝ Ա. Տորմասովին ուղարկված զեկուցագրում նշանակալի հետաքրքրություն ունի այն վկայությունը, ըստ որի՝ Բաքվում հնուց բնակվում էին պարսիկ և հայ պատավոր վաճառականներ[245]:

---

[241] Պ. Ցիցիանովի արձանը Բաքվի արվարձանից Շամախի տանող ճանապարհի վրա կանգնեցվել է 1846 թ.: Քանդակագործն էր Թովմաս Այվազյանցը (տե՛ս Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 363):

[242] Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ (ԺԸ-ԺԹ դդ.), բարգմանեց՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Երևան, 1955, էջ 233:

[243] Բաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 303-304:

[244] Տե՛ս АКАК, т. IV, Тифлис, 1870, док. 95, стр. 82 (բնագրում՝ «Жители считается въ самомъ г. Баку: Персиянъ 861 семья, 4,341 душа, Армянъ 34-163, Жидов 10-66, на форштате Персияъ 87-437, а вообще 992 семьи 5,007 душ; въ Бакинскихъ-же 37 деревняхъ состоитъ 2,193 дома, въ коихъ мужеска пола душъ полагаютъ более 10,000»).

[245] Տե՛ս նույն տեղում:

Ի դեպ, Իվանովի վկայաբերած ժողովրդագրական տվյալները միտումնավոր կերպով կեղծվել և ազգայնական դիրքերից են մեկնաբանվել ադրբեջանցի պատմաբան Ֆ. Թաղիևի՝ Բաքու քաղաքի պատմությանը նվիրված աշխատությունում[246]: Վերջինս, ձգտելով «գիտականորեն հիմնավորել» «ադրբեջանցի» ժողովրդի իրավունքն Արևելյան Այսրկովկասի՝ մասնավորապես Բաքու քաղաքի նկատմամբ XIX դարի սկզբներին, հանիրավի կեղծելով փաստերը, փորձել է աղբյուրներում պարսիկ անունով հիշատակվող, իրականում իրանական ծագում ունեցող բնակչությանը նույնացնել թյուրքական լեզվաընտանիքի օղուզական ճյուղին պատկանող «ադրբեջանցիների» հետ[247]: «Հետազոտվող ժամանակաշրջանում,- գրում է Ա. Թաղիևը,- էթնիկական պատկանելության հիմքում ընկած էր կրոնական հատկանիշը, երբ Բաքվի տեղաբնիկ բնակիչներ՝ ադրբեջանցիները ներկայացվում էին որպես մահմեդականներ՝ կապված իրենց դավանանքի հետ: Հաճախ նրանց վրա տարածում էին էթնիկական պատկանություն հատկանիշը, ինչպես օրինակ՝ սկզբնապես ադրբեջանցիներին կոչում էին «պարսիկներ», իսկ փոքր ինչ ավելի ուշ՝ «թաթարներ»»[248]: Ա. Թաղիևի հակապատմական և հակագիտական մտավարժանքները հերքվում են XIX դարի հեղինակ՝ Ա. Բակիխանովի տեղեկություններով, որոնք փաստում են իրանական ժողովուրդներից թաթերի՝ Բաքվի գավառում սակավաթիվ լինելու իրողությունը: «Բաքվի ամբողջ գավառում,- գրում է նա,- բացի թարաքյամա կամ թյուրքմենների 6 գյուղերից, խոսում են թաթերեն լեզվով, ինչը ցույց է տալիս նրանց պարսկական ծագումը»[249]: Ուստի միանգամայն անընդունելի պետք է համարել Ա. Թաղիևի՝ Բաքվում և գավառում «ադրբեջանցիների տեղաբնիկության» վերաբերյալ «հիմնավորումները» և «ադրբեջանցի» արհեստածին տերմինի հնացումը[250]:

---

[246] Տե՛ս **Тагиев Ф.**, История города Баку в первой половине XIX веке.

[247] Տե՛ս Народы Кавказа, т. II, под общей ред. **С. П. Толстова**, Москва, 1962, стр. 37.

[248] Տե՛ս **Тагиев Ф.**, նշվ. աշխ., стр. 26.

[249] **Аббас-Кули-Ага Бакиханов**, стр. 16 (բնագրում՝ «... весь уезд Бакинских, исключая шести деревень терекеме или тюркменов, говорят татским языком, что показывает их персидское происхождение»).

[250] Հարկ է նշել, որ Բաքվում 1991 թ. լույս տեսած Ա. Բակիխանովի աշխատության հրատարակության խմբագիր, պատմության կեղծարարությամբ հայտնի Զ. Բունիաթովը փաստերի աղավաղմամբ միտումնավոր դուրս է թողել հեղինակի նախորդ հրատարակության մեջ առկա Բաքվի գավառի իրանական ծագում ունեցող սակավ բնակչության թաթախոս լինելու վկայությունը (տե՛ս **Аббас-Кули-Ага**

Բաքվի պարետ գեներալ-լեյտենանտ Ի. Ռեպինի՝ վրացական գերագույն կառավարության պետական արշավախմբին 1810 թ. սեպտեմբերի 10-ին հղած «Բաքվի ամրոցի և մերձակա բնակիչների թվի, նրանց ապգային կազմի, դասային պատկանելության և նրանցից գանձվող հարկերի» մասին տեղեկագրում նշվում է, որ Բաքվում և նրա արվարձանում կար 931 տուն և 2235 արական սեռի բնակիչ: Քաղաքի բնակիչներն էին պարսիկները՝ 897 տուն՝ 2154 արական սեռի բնակչով, հայերը՝ 24 տուն՝ 55 արական սեռի բնակչով և հրեաները՝ 10 տուն՝ 26 արական սեռի բնակչով[251]: Դ. Իսմայիլ-Զադեն, առաջնորդվելով ժողովրդագրական տվյալները կեղծելու ադրբեջանական պատմագրության գործելաոճով, «ադրբեջանցիներին» «հնացնելու» միտումով նրանց խցկել է չիա դավանանքի հետևորդ պարսիկների թվաքանակի մեջ[252]: Ի դեպ, փաստերի խեղաթյուրման նույն սկզբունքով է ժամանակին առաջնորդվել նաև Ս. Աշուրբեյլին, որը Պ. Բուտկովի աշխատության մեջ 1720-ական թվականների վերաբերյալ հիշատակվող Բաքվի «պարսիկ»[253] բնակիչներին հանիրավի նույնացրել է «ադրբեջանցիների» հետ[254]:

Այսպիսով՝ ինչպես ակնհայտ է XVIII դարի վերջերի և XIX դարի սկզբների սկզբնաղբյուրների տվյալներից, հիշյալ ժամանակաշրջանում Բաքու քաղաքի բնակչությունը կազմում էին պարսիկները, հայերը և հրեաները: Վիճակագրական այդ տեղեկությունների լույսի ներքո անհեթեթ են դառնում Ս. Աշուրբեյլիի, Դ. Իսմայիլ-Զադեի, Ֆ. Թաղիևի և նրանց հետևող ադրբեջանցի այլ պատմաբանների՝ Բաքվում XIX դարում, ընդհուպ մինչև XX դարի 30-ական թվականների վերջերը «ադրբեջանցի» անվամբ ժողովրդի գոյության մասին հիմնադրույթ պնդումները:

Սկզբնաղբյուրները վկայում են, որ Բաքվի հայ համայնքը ակտիվ մասնակցություն է ունեցել քաղաքի դատաիրավական համակարգի կազմակերպման գործում: Այսպես՝ Բաքու քաղաքում և շրջանում ծագած վիճահարույց խնդիրները դատական կարգով լու-

---

Бакиханов, Гюлистан - и Ирам: редакция, коментарии, примечания и указатели **З. Буниятова**, Баку, 1991, стр. 15).

[251] Տե՛ս Документы по истории Баку, 1810-1917 (составители: **Л. Алиева, М. Назирова, Н. Полумордвинова, Ш. Рзаева, Р. Руднева, Ч. Салахлы**), Баку, 1978, стр. 11-12, տե՛ս նաև **Левиатов В.**, նշվ. աշխ., стр. 61: Հմմ. **Исмаил-Заде Д.**, նշվ. աշխ., стр. 18-19.

[252] Տե՛ս **Исмаил-Заде Д.**, նշվ. աշխ., стр. 18-19.

[253] **Бутков П.**, նշվ. աշխ., ч. I, стр. 67.

[254] Տե՛ս **Ашурбейли С.**, Очерк истории средневекового Баку, стр. 258.

ձևու նպատակով կասպյան նավատորմիղի հրամանատար, 1-ին ռանգի կապիտան մարկիզ Վ. Պաուլուչիի՝ Բաքվի պարետ, գեներալ-լեյտենանտ Ի. Ռեպինին 1812 թ. փետրվարին հղած գրավոր կարգադրությունում հանձնարարվում էր գործողության մեջ դնել «Բաքու քաղաքում և շրջանում քաղաքային դատարան» հիմնելու մասին որոշումը: 21 կետից բաղկացած այդ որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում ասվում էր. «Բաքվի ամրոցում հիմնվում է դատական վայր՝ քաղաքային դատարան կամ դիվան անունով: Դատարանի նախագահը Բաքվի ամրոցի պարետն է, իսկ ատենակալներն են աստիճանավոր մարդկանցից ընտրված երկու բեկ և երկու քաղաքացի, որոնց թվում մեկը կարող է լինել հայ: Բեկերն ու քաղաքացիները ընտրվում էին իրենց համայնքում, լալերով կամ ընդհանուր համաձայնությամբ»[255]:

Ռուս-իրանական պատերազմն ավարտվեց 1813 թ. Գյուլիստանի հոկտեմբերի 12-ի պայմանագրով, որով Իրանը մեկընդմիշտ ճանաչեց Բաքվի, Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի և Թալիշի խանությունների միացումը Ռուսաստանին[256]: Երկրամասում ռուսական տիրապետության հաստատումից հետո պահպանվեց խանական վարչաձևը[257]: Այնտեղ խանությունները սկսեցին պրովինցիաների վերածվել միայն 1819 թվականից հետո[258]:

Քաղաքի աստիճանական զարգացման և քաղաքային բնակչության աճին զուգընթաց կատարվում էր նաև հայ բնակչության թվի անընդհատ աճ: Վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպ. Աշտարակեցու՝ Այսրկովկասի հայաբնակ գավառների վերաբերյալ 1822 թ. հունվարին կազմած ցուցակագրության համաձայն՝ Բաքվում հայերն ունեին 49 ծուխ, 1 եկեղեցի և 5 հոգևորական[259]: Նույն ժամանակաշրջանի մեկ այլ արխիվային վավերագրի վկայությամբ՝ հայերը Բաքվում ունեին 49 տուն՝ 277 բնակչով (148 ար., 129

---

[255] Տե՛ս АКАК, т. V, Тифлис, 1873, док. 204, стр. 139.

[256] Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, ԵԺ, հ. Դ, էջ 382:

[257] Տե՛ս **Шопен И.**, Исторический памятник Армянской области в эпоху присоединения ее к Российской империи, СПб., 1852, стр. 451-452.

[258] Տե՛ս **Сегаль И.**, Елисаветпольская губерния (впечатления и воспоминания), КВ, Тифлис, 1900, № 1, стр. 81, տե՛ս նաև Материалы по истории народов СССР. Колониальная политика Российскаго царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. I (феодальные отношения и колониальный режим 1827-1843 гг.), Москва, 1936, стр. 8.

[259] Տե՛ս Գեղամեան Ե., Պատմական քաղուածքներ, «Հովիտ», Թիֆլիզ, 1910, օգոստոսի 16, № 16, էջ 249:

իդ.)[260]: Նույն ապբյուրը տեղեկություններ է հաղորդում նաև հայ բնակչության սոցիալ-դասային կազմի վերաբերյալ: Ըստ այդմ՝ «կնեազք, պնիւականք և ազատք» 2 տուն (6 ար., 7 իդ.), «թագաւորական հպատակք» 47 տուն (142 ար., 122 իդ.)[261]:

Այդ տարիներին քաղաքի հայ ընտանիքների մեծամասնությունը դեռևս ապրում էր Սբ. Աստվածածին եկեղեցու շրջակայքում[262] հին քաղաքի կենտրոնական մասում, նրա միջուկը կազմող բերդի շրջանում՝ բերդաթաղում, որը XIX դարի վերջերին դեռևս անբարեկարգ վիճակում էր. «...քաղաքի հին մասը, որ կոչվում է բերդ, ներկայացնում է ասիական մի անճաշակ ու տգեղ քաոս. տները թափուած են միմեանց վրայ, փողոցներն այնքան նեղ են, որ հազիւ թէ մի երկու մարդ կարողանան անցնել»[263]: Քաղաքի աստիճանական զարգացման հետևանքով հայերը սկսեցին բնակվել նաև բերդի և քաղաքի հարավային կողմում՝ արվարձանում[264], որի տարածքը (առանց փողոցների) կազմում էր 45,89 հեկտար[265]:

1820-1860-ական թվականների ընթացքում ռուսական իշխանությունները Բաքուն ծառայեցնում էին որպես աքսորավայր[266]. «Բագուն, այդ «հանրածանօթ» քաղաքը, 3 տասնեակ տարի սրանից առաջ պատասպարտուածների աքսորավայր էր կազմում և. Կասպեան ծովի արևմուտք կողմում, մի ավազուտ ափում քանի մի հարիւր բնակիչ ունէր»[267]: Տարբեր պատճառներով այդտեղ են աքսորվել նաև մի շարք հայեր, որոնց թվում՝ Արցախի մելիքները: Այսպես՝ 1826 թ. Կովկասի կառավարչապետ Ա. Երմոլովի հրամանով Ջրաբերդի Մելիք-Վանի (Հովհաննես) Աթաբեկյանը և Գյուլիստանի Մելիք-Հովսեփ Մելիք-Բեգլարյանը ռուսական կառավարության նկատմամբ «անհավատարմության» մեղադրանքով ձերբակալվում են և ութ ամիս շարունակ մնում կալանված Բաքվի բանտում[268]:

---

[260] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 866, թ. 1: Հմմ. Տէր-Յակոբեան Ա., նշվ. աշխ., թ. 99, տե՛ս նաև Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 363:

[261] ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 866, թ. 1:

[262] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 69:

[263] «Արօր»-ի պատկերազարդ օրացոյց 1894 թուականին Քրիստոսի, Բաքու, 1893, էջ 26:

[264] Տե՛ս Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 363:

[265] Տե՛ս **Фатуллаев Ш.,** նշվ. աշխ., стр. 36.

[266] Տե՛ս Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 363, տե՛ս նաև Տէր-Յակոբեան Ա., նշվ. աշխ., թ. 99:

[267] Ալէք.[սանդր] Նաջարեանց, Սեւ Քաղաք (Բագու), «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1883, սեպտեմբերի 25, № 94:

[268] Տե՛ս Մաղալյան Ա., Փաստաթղթեր Արցախի գործիչների և Աբբաս-Միրզայի 1826 թ. հանդիպման հետևանքների վերաբերյալ, ԲՀԱ, Երևան, 2006, № 1, էջ 3-19:

Ռուսական կառավարության՝ Այսրկովկասում անցկացրած վարչական բարեփոխումների արդյունքում 1824 թ. մայիսի 5-ի հրամանագրով նախկին խանությունների տարածքը բաժանվեց երկու տեղամասերի՝ այսպես կոչված մահմեդականի, որն ընդգրկում էր Շիրվանի, Շաքիի, Ղարաբաղի և Թալիշի խանությունները և Դաղստանի, որն ընդգրկում էր Բաքուն, Ղուբան և Դերբենդը[269]:

Այսրկովկասում Ռուսաստանն իր տիրապետությունը վերջնականապես հաստատեց 1826-1828 թթ. ռուս-իրանական պատերազմում հաղթանակ տանելուց հետո: Պատերազմին իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցին նաև չիրվանահայերը: Հատկանշական է, որ հայ կամավորական ջոկատներ ստեղծելու նպատակով Վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպ. Աշտարակեցու՝ 1826 թ. հուլիսի 29-ին հայ ժողովրդին հղած կոչը թիֆլիսի, Գանձակի, Արցախի, Նուխիի, Շամախիի և Դերբենդի հայերից բացի ուղղված էր նաև Բաքվի հայությանը[270]: Ի դեպ, անդրադառնալով արևելահայության ճակատագրի համար էական նշանակություն ունեցող ռուս-իրանական պատերազմում չիրվանահայերի մասնակցության խնդրին, հարկ է նշել, որ վերջիններս պարենամթերքի և անասնակերի տեղափոխման գործում ամեն կերպ օգնել են ռուսական զորքերին: Միայն Շիրվանի երեք մահալների հայաբնակ 21 գյուղերից 322 հայ սայլապաններ իրենց միջոցներով Բաքվից, Շամախիից Շուշի և Զարդոր (Կուր գետի ափին) տեղափոխեցին ավելի քան 2032 տոննա բեռ[271]: Իսկ երևանյան երրորդ արշավանքի նախօրյակին, Աստրախանի նավատորմի հայ վաճառականները, որոնք Բաքու էին տեղափոխել 1000 տոննա կշռաչափով գինք և զինամթերք, Բաքվից Շուշի փոխադրության ժամանակ օգտագործում էին տեղի հայերի սայլերը[272]:

XIX դարի 30-ական թվականների սկզբների՝ Շիրվանի, այդ թվում նաև Բաքվի բնակչության ազգային կազմի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Պլատոն Զուբովը, ըստ

---

[269] Տե՛ս Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 42, տե՛ս նաև **Тунян В.**, Административно-экономическая политика самодержавия России в Закавказье I пол. XIX в., Ереван, 2003, стр. 27.

[270] Տե՛ս Присоединение Восточной Армении к России (сборник документов), т. II (1814-1830), под редакцией, **Ц. Агаяана**, Ереван, 1978, док. 124, стр. 199-200.

[271] Տե՛ս Բեգլարյան Վ., Էջեր ռուս և անդրկովկասյան ժողովուրդների 1826 թ. փոխօգնության պատմությունից (Հայաստանի Ռուսաստանին միանալու 150-ամյակի առթիվ),ՊԲՀ, Երևան, 1976, № 4, 134:

[272] Տե՛ս նույն տեղում, էջ 135:

որի՝ Շիրվանն ուներ 271.600 բնակիչ: Զղալի մասը հայեր, պարսիկներ և թաթարներ էին[273], *որոնց հաջորդում էին հրեաները,*

---

[273] XI-XVII դդ. ընթացքում Արևելյան Այսրկովկաս ներխուժած թյուրքական ցեղերը մինչև XX դ. սկզբները կոչվել են տարբեր էթնանուններով՝ թաթարներ, փադտաներ, շահսևաններ, ջինլիներ, ջուանշիրներ, թյուրքեր, կովկասյան թյուրքեր և այլն (տե՛ս Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годах, составленное секретарем посольства **Адамом Олеарием**, Москва, 1870, стр. 507, 560; **Стрейс Я.**, Три путешествия, перевод **Э. Бородиной**, Москва, 1935, стр. 243, 245, 252, 271; **Зейдлицъ Н.**, Этнографический очерк Бакинской губернии, стр. 47-53; **Сысоев В.**, Тюркское население Азербайджана в XVII веке, Баку, 1926, стр. 3-16): XVIII-XIX դդ. մերձկասպյան շրջանները հետազոտած եվրոպացի ճանապարհորդ գիտնականներն ու ռուս կովկասագետները (Սամոիլ Գոտլիբ Գմելին, Սեմյոն Բրոնևսկի և այլք), իրենց աշխատություններում վերոնշյալ էթնոնիմների փոխարեն գործածում են *թաթար* անունը (տե՛ս **Samuel Gottlieb Gmelin**, նշվ. աշխ., p. 153, 299, տե՛ս նաև **Броневский С.**, նշվ. աշխ., ч. II, гл. III, Ширван (Ханство Шемахинское), стр. 434): XIX դարի երկրորդ կեսից ռուսական վիճակագրական տեղեկագրերում *թյուրքեր* և *կովկասյան թյուրքեր* տերմինների կողքին առավել գործածական է դառնում *թաթար* անունը (տե՛ս **Зейдлицъ Н.**, Этнографический очерк Бакинской губернии, стр. 47, տե՛ս նաև СНМ-1859-1864, стр. 85), որն աստիճանաբար դառնում է Այսրկովկաս ներթափանցած թյուրքալեզու ցեղերի համար մեկ ընդհանուր հավաքական անվանում: Արդեն XIX դարի վերջի պաշտոնական հրատարակություններում, ի թիվս Ռուսական կայսրության թյուրքական և այլ մահմեդական ժողովուրդների, *թաթար* է անվանվում նաև Կովկաս ներթափանցած թյուրքալեզու բնակչությունը (տե՛ս Энциклопедический словарь, под ред. проф. **И. Андреевскаго**, т. XIII[A], издатели **Ф. Брокгауз, И. Ефрон**, СПб., 1894, стр. 836, տե՛ս նաև Энциклопедический словарь, под ред. проф. **И. Андреевскаго**, т. XXVII[A], издатели **Ф. Брокгауз, И. Ефрон**, СПб., 1899, стр. 86): Միաժամանակ, Կազանի, Աստրախանի և Ղրիմի թաթարներին տարբերելու համար Այսրկովկասի թյուրքալեզու բնակչությունը հանրագիտարանային բառարաններում և պաշտոնական վիճակագրական տեղեկագրերում սկսեց անվանվել *այսրկովկասյան թաթարներ* (տե՛ս Энциклопедический словарь русского библиографического института гранат. т. 4, изд. 7-ое, Москва (Б. г.), стр. 459, տե՛ս նաև Статистическое бюро Бакинской городской управы. Пособия при разработке материала переписи г. Баку 22-го октября 1903 года, Баку, 1904, стр. 102): Բաքվի նահանգին վերաբերող 1897 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի տեղեկագրում «Թուրք-թաթարական» գլխագրով աղյուսակի սյունակում թյուրքալեզու բնակչությունը հիմնականում նշված է *թաթար* (տե՛ս Первая всеобщая перепись населения Российской империи, 1897, LXI-Бакинская губерния. под ред. **Н. А. Тройницкаго**, т. 61, СПб., 1905 (այսուհետ՝ ПВПНРИ-1897), таблица XIII, стр. 53). Թեպետ էթնոկրոնական պատկանելության դեպքում Կովկասի մահմեդականներն իրենց հավաստել են անվանել *թաթար*: Նրանց շրջանում առավել գործածական էին *թյուրք* կամ *մուսուլման* ինքնանվանումները (տե՛ս **Алекперов А.**, նշվ. աշխ., стр. 72): «Թաթար բառն իսկ,- գրում էր Ա. Գյուլխանդանյանը,- խորթ եւ անախորժ էր հնչում նրանց ականջին. նրանք գերադասում էին մուսուլման անունը: Շնորհիւ թաթար զանգուածի կրօնական հասկացողութեան, խոշոր ներհակութիւն, մինչեւ

հնդիկները, չահսևանները[271] և թուրքմենական ցեղերը[275]: Նույն աղբյուրի տվյալներով՝ Բաքվի շրջանում բնակվում էր 17600 մարդ, որից ավելի քան 4000-ը՝ Բաքվում[276]: Քաղաքի մեծամասնությունն

իսկ բշնամութիւն կար սիւնեաց եւ շիա դաւանեալներին պատկանողների միջեւ» (Գիւլխանդանեան Ա., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1941, ԺԹ տարի, հուլիս, № 9, էջ 95): 1926 թ. դեկտեմբերի 17-ի, համամիութենական մարդահամարի պաշտոնական նյութերում բյուրքալեզու բնակչությունը նշված է բյուրք անվամբ (տե՛ս Итоги всесоюзная переписи населения 1926 года по г. Баку и Промысло-Заводскому району, т. I, ч. II, Баку, 1929, стр. 50-51): ԱԽՍՀ-ում սեփական ինքնության փնտրտուքի մեջ գտնվող բյուրքալեզու տարբեր բարբառներով խոսող ցեղերին «Աղրբեջան» վարչաքաղաքական անունից՝ *աղրբեջանցիներ* կոչելը ժամանակակից էթնիկ իմաստով զանգվածային լայն կիրառում ստացավ 1936 թ., որի հիմքում ընկած էր Ի. Ստալինի դեռևս 1923 թ. ապրիլի 23-ին ՌԿԿ (բ) XII համագումարում «Ազգային մոմենտները կուսակցական և պետական շինարարությունում» կարդացած զեկուցման մեջ առաջ քաշած հետևյալ դրույթը. «Азербайджан. Основная национальность-азербайджанская...» (**Сталин И.**, Марксизм и национально-колониальный вопрос (сборник избранных статей и речей), Москва, 1934, стр. 119): Հանրահայտ այս իրողությունը չեն ժխտում նաև աղրբեջանցի պատմաբաններից ոմանք: Օրինակ՝ Ա. Ալեքպերովը Աղրբեջանի հնագիտության ու ազգագրության հարցերին նվիրված իր աշխատության մեջ «Աղրբեջանցիներ» վերտառությամբ գլխում պարզորոշ գրում է. «...այդ անվանումը (իմա՛ աղրբեջանցի - Գ. Ս.) բնակչության շրջանում լայն կիրառում գտավ միայն 1936 թ. սկսած» (**Алекперов А.**, նշվ. աշխ., стр. 71). Իրականում, 1937 թ. հունվարի 6-ի համամիութենական մարդահամարների պաշտոնական նյութերում բյուրքալեզու բնակչությունը դեռևս նշվում էր բյուրք անվամբ (տե՛ս Всесоюзная перепись населения 1937 г.: краткие итоги, Москва, 1991, стр. 94): Դրանով իսկ «Աղրբեջան» անունը չէր դարձել բյուրքալեզու տարբեր բարբառներով խոսող ցեղերի ընդհանրությունը բնորոշող հավաքական անուն: Աղրբեջանում 1930-ական թվականների անձնագրավորման ժամանակ, երբ համատարած կերպով «աղրբեջանականացվեց» բյուրքալեզու բնակչությունը, 1939 թ. հունվարի 17-ի մարդահամարում նոր միայն ի հայտ եկավ և պաշտոնապես ամրագրվեց *աղրբեջանցի* անվանումը (տե՛ս Всесоюзная перепись населения 1939 г.: основные итоги, Москва, 1992, стр. 71, 246: Հմմ. Большая Советская Энциклопедия, изд. 2, т. 1, Москва, 1949, стр. 440):

[274] Իրանական Աղրբեջանից Արևելյան Այսրկովկաս ներթափանցած բյուրքական ցեղերից մեծ թիվ են կազմել շիա դավանանքին հետևող շահսևանները, որոնք հիմնականում հաստատվել էին Ջավաթի և Լենքորանի գավառներում (տե՛ս **Зейдлиць Н.**, Этнографический очерк Бакинской губернии, стр. 49-50, տե՛ս նաև **Балаян Б.**, К вопросу об общности этногенеза Шахсеван и Кашкайцев, «Աժ», Երևան, 1960, № 1, էջ 354, տե՛ս նաև Վամբերի Հ. (**Vambery H.**), Իրանեաց թուրքեր կամ ազգրբէյջանեաներ, «Մուրճ», Թիֆլիս, 1905, № 11-12, էջ 113):

[275] Տե՛ս **Зубов П.**, Картина Кавказскаго края, принадлежащего Росии, и сопредельныхъ оному земель, въ историческомъ, статистическомъ, этнографическомъ, финансовомъ и торговомъ отношенияхъ, ч. IV, СПб., 1835 (Ширван), стр. 75-76.

[276] Տե՛ս նույն տեղում, стр. 75, 90.

կազմող բնակիչներն էին հայերը, թաթարները և պարսիկները[277]: Ջուբովի նկարագրությամբ՝ Բաքուն բաղկացած էր բերդաթաղից և արվարձանից: Փողոցները բերդաթաղում նեղլիկ էին, իսկ արվարձանում՝ բավական լայն[278]: Գեն. Ի. Պասկևիչի՝ 1830 թ. ապրիլի 24-ին ստորագրած «Անդրկովկասի մարզերի բնակչության ցուցակի» համաձայն՝ Բաքուն ուներ 1115 տուն[279]: Վրացա-իմերթական պետական պալատի կողմից 1832 թ. կազմված «Բաքու քաղաքի բնակչության ընտանեկան ցուցակագրության» տվյալների համաձայն Բաքուն ուներ 1291 ընտանիք, որից 1211 կովկասյան թաթարներ, 80 հայեր: Ըստ այդմ՝ կովկասյան թաթարների թիվը կազմում էր 3493 (նկատի է առնված միայն արական սեռի բնակչությունը), հայերինը՝ 333 (172 ար., 161 իգ.)[280]: Նույն աղբյուրի վկայությամբ՝ հայ բնակչությունը բնակվում էր ամրոցի ներսում, առանձին մասում[281]: Դա Հայկավանն էր. «քաղաքի այն մասը, որտեղ հնուց բնակություն էին հաստատում հայերը»[282]: Մեկ այլ պատմական աղբյուրի վկայությամբ, որ վերաբերում է XIX դարի 30-ական թվականների սկզբներին, քաղաքն ուներ 1358 տուն, որում հայ բնակիչների թիվը 184 էր[283]: Հակված ենք այն կարծիքին, որ այդ թվում ներառված է միայն արական սեռը, քանի որ նախորդ վիճակագրական տվյալներն արձանագրում են հայ բնակչության հաստատուն աճ:

Ռուսաստանի տիրապետության հաստատումից հետո ցարական կառավարությունն աստիճանաբար այնտեղ հաստատեց միապետական վարչակարգին հատուկ կառավարչաձև: Տարածաշրջանի բարեփոխումների ծրագրերը մշակում էր ցարական կառավարության կողմից՝ զինվորական նախարար կոմս Ա. Չերնիշևի նախագահությամբ 1833 թ. հուլիսի 11-ին ստեղծված «Անդրկովկասի բարե-

---

[277] Տե՛ս նույն տեղում (Топографическое описание Ширвана, ч. II, Округъ Бакинскмй), стр. 90 (ընագրում՝ «Жителей въ Баке полагается свыше 4000 человекъ, которые состоятъ преимущественно изъ Армянъ, Татаръ и Персиянъ»).

[278] Տե՛ս նույն տեղում, стр. 89.

[279] Документы и материалы по истории армянского народа. Социально-политическое и экономическое положение Восточной Армении после просоединения к России (1830-1870), под редакцией проф. **Н. Тавакаляна**, Ереван, 1993, стр. 62.

[280] Տե՛ս **Тузинкевич Ю.**, Первая перепись населения Баку, Доклады АН АзССР, т. II, Баку, 1946, № 6, стр. 251-252.

[281] Տե՛ս նույն տեղում, стр. 251.

[282] **Исмаил-Заде Д.**, նշվ. աշխ., стр. 91.

[283] Տե՛ս Обозрение российских владений на Кавказе (в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношени), СПб., ч. IV, 1836, таблица С, стр. 515.

կարգման հատուկ կոմիտեն»[284]: Գ. Այվազովսկու բերած տվյալներով՝ XIX դարի 30-ական թվականների սկզբներին Կովկասի գավառների թվում հիշատակվում է նաև Բաքուն. «Շիրվան. Պաքու. Հին Շամախի, Նոր Շամախի. Նուշի (Նուխի - Գ. Ա.), Շէքի, Մողան»[285]:

Բաքվում XIX դարի 30-ական թվականների վերջերին բնակվող հայ բնակչության վերաբերյալ մի հետաքրքիր վավերագիր է պահպանվել Հայաստանի ազգային արխիվում, որն ուշագրավ տեղեկություններ է հայտորդում քաղաքում և արվարձանում 1838 թ. մայիսի 16-ին հայ բնակչության շրջանում անցկացված ընտանեկան ցուցակագրության մասին՝ բնակիչներից յուրաքանչյուրի անուն-ազգանունով և ընտանիքի անդամների թվով: Հիշյալ աղբյուրը հստակ ցույց է տալիս Բաքվի հայ համայնքի ձևավորման ակունքները: Ըստ այդմ՝ հայերը բերդաթաղում և արվարձանում արդեն ունեին 69 տուն՝ 434 բնակչով (211 ար., 223 իգ.)[286]: Ցուցակագրությունն ուշագրության արժանի է հատկապես այն առումով, որ արտահայտում է ոչ միայն հայ բնակչության թիվն՝ ըստ անուն-ազգանունների, այլ նաև հարուստ նյութեր է պարունակում Բաքվի հայերի՝ տվյալ ժամանակահատվածի սոցիալ-դասային կազմի վերաբերյալ: Համայնքի սոցիալական կազմը պարզունակ էր. այն բաղկացած էր հիմնականում արտոնյալ, հարկատու և չքավոր դասերից (տե՛ս հավելված № 1)[287]: Արտոնյալ դասի ներկայացուցիչների շարքում նշված են նաև ծխատեր երեք քահանաներ: Միաժամանակ ցուցակագրություններում տեղ են գտել այնպիսի ազգանուններ (Ադամյան, Թումայան, Յազուբյան, Սերեբրյակյանց, Շահգեդանյան և այլն), որոնք հետագա տարիներին դարձան խոշոր առևտրաարդյունաբերողներ, հասարակական գործիչներ և այլն[288]:

1840 թ. ապրիլի 10-ին կառավարությունն ընդունեց «Անդրկովկասյան երկրամասի կառավարման համար հաստատակարգ» նախագիծը, որով Այսրկովկասում անցկացվեց վարչական բաժանում: Այդ օրենքով ստեղծվում էին վարչական երկու միավորներ՝ Վրացա-

---

[284] Иваненко В., Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества Великого Князя Михаила Николаевича (исторический очерк), Тифлис, 1901, стр. 289.

[285] Այվազովսքի Գ., Համառոտ պատմութիւն Ռուսաց, Վենետիկ, 1836, էջ 409:

[286] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 69-70:

[287] Տե՛ս նույն տեղում:

[288] Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև Ստեփանյան Գ., Փաստաթուղթ Բաքու քաղաքի XIX դ. 30-ական թվականների վերջերի հայ բնակչության մասին, ԲՀԱ, Երևան, 2008, № 2, էջ 8-12:

Իմերեթական նահանգ՝ Թիֆլիս, և «Մահմեդական պրովինցիայում» կասպիական մարզ՝ Շամախի կենտրոններով[289]: *Վարչական միավորները կազմելիս անտեսվեցին ավյալ վայրում ապրող ժողովուրդների պատմական հայրենիքի տարածքային սկզբունքները և բնակչության ազգային պատմաէթնիկական հատկանիշներն ու առանձնահատկությունները: Ընդ որում՝ վարչատարածքային այս նոր բաժանման հիմքում ընկած էին նախկին խանությունների տարածքային սահմանները: Կասպիական մարզը բաժանվեց 7 գավառների՝ Շիրվանի (կազմվեց Շիրվանի պրովինցիայից և Սալիան տեղամասից, կենտրոնն էր Շամախին), Շաքիի (կազմվեց Շաքիի պրովինցիայից, կենտրոնն էր Նուխին), Թալիշի (կազմվեց Թալիշի խանությունից, կենտրոնն էր Լենքորանը), Բաքվի (կազմվեց Բաքվի պրովինցիայից, կենտրոնն էր Բաքուն), ռազմական օկրուգի մեջ մտնող Ղուբայի (կազմվեց Ղուբայի պրովինցիայից և Սամուրի շրջանից, ենթարկվում էր Դերբենդի ռազմա-օկրուգային կառավարչին) և Դերբենդի (կազմվեց Դերբենդի, Թաբասարանի և Ղարա-դայմաղի պրովինցիաներից, կենտրոնն էր Դերբենդը)*[290]: *Ցարական կառավարությունը, առաջնորդվելով հայկական տարածքներն իրարից բաժանելու և մի մասը հարևան միավորներին կցելու քաղաքականությամբ, կասպիական մարզի սահմաններում կազմավորեց նաև Ղարաբաղի գավառը (կազմվեց Ղարաբաղի պրովինցիայից: Գավառի կենտրոնն էր Շուշին)*[291]:

Վարչատարածքային վերոնշյալ բաժանումների ժամանակ Շիրվանշահերի պետությունից բացի, Կասպիական մարզի սահմանների մեջ հայտնվեցին նաև Հայոց Փայտակարան նահանգի հյուսիսային տարածքները ղեկավարող Մուղանի[292] *կամ Սալիանի*

---

[289] Տե՛ս **Иваненко В.**, նշվ. աշխ., էջ 303, տե՛ս նաև **Тунян В.**, Административно-экономическая политика самодержавия России в Закавказье, стр. 66.

[290] Տե՛ս ПСЗРИ, т. XV, собрание II, отд-ие I, СПб., 1841, № 13368, стр. 237-238, տե՛ս նաև **Иваненко В.**, նշվ. աշխ., стр. 303, տե՛ս նաև **Евангулов Г.**, Местная реформа на Кавказе, СПб., 1914, стр. 13, տե՛ս նաև **Шахатунян А.**, Административный передел Закавказскаго края, Тифлис, 1918, стр. 86.

[291] Տե՛ս նույն տեղում:

[292] Հայոց կաթողիկոս Աբրահամ Գ Կրետացին, որ 1736 թ. մարտին անմիջական մասնակցություն է ունեցել պարսից Նադիր շահի՝ Մուղանի դաշտում թագավորությանը (ի նշան թագավորության՝ արքայական սուրը շահի մեջքին օրհնելով կապել է Հայոց կաթողիկոսը), իր գրառումներում հետևյալ կերպ է նկարագրում դաշտը. «Եւ այս Մուղան կոչեցեալ մեծ և անհուն դաշտս, է լայն և ընդարձակ դաշտ մի հիանալի, որ Լ (30) օր հազիւ թէ լաւ ձիաւոր մի կարէ շրջագայել զբոլորն» (Աբրահամ Կրետացի, էջ 41):

հարթության մեծ մասը (հետագայում՝ Ջավաթի գավառը) և Կասպից ծովի ափամերձ Լենքորանի դաշտավայրը (հետագայում՝ Լենքորանի գավառը): Փայտակարանում Ջավաթ և Լենքորան գավառների տեղագրությանը հետևյալ բացատրությունն է տվել Գ. Պատկանյանը. «Փայտակարանի մասն, որ է Սալեանի Մուղան դաշտի և Լանքարանի հողերը»[293]:

XIX դարի 40-ական թվականների սկզբներին Ապշերոնյան թերակղզու վրա ծվարած փոքրիկ և անհրապույր Բաքու քաղաքն աստիճանաբար դուրս էր գալիս պարիսպվածությունից և, դարգանալով ու բարգավաճելով, բերդաքաղաքից վերաճում էր աչքի ընկնող առևտրական ու տնտեսական կենտրոնի: Ի. Բերյոզինի տվյալներով՝ 1841 թ. բուն քաղաքն ուներ 1050, արվարձանը՝ 515 քարաշեն տուն[294]: 1842 թ. վիճակագրական տվյալների համաձայն՝ քաղաքն ուներ 6834 (3606 ար., 3228 իգ.) բնակչություն[295]: Բնակչության թիվը 1842 թ. հունիսի դրությամբ բուն քաղաքում 4803 էր (2442 ար., 2361 իգ.), իսկ արվարձանում՝ 1192 (638 ար., 554 իգ.)[296]: Ի. Բերյոզինի այցելության ժամանակ քաղաքն ուներ 200 տուն հայ բնակչություն[297]:

Պրուսացի գիտնական, դրող և ճանապարհորդ Ավգուստ ֆոն Հաքստհաուզենը XIX դարի 40-ական թվականների կեսերին լինելով Բաքվում, հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում բնակչության կյանքի պայմանների, Բաքվի նավահանգիստ եկած՝ Աստրախանի և Իրանի առևտրական նավերի մասին և այլն: Քաղաքի բնակիչներից Ա. ֆոն Հաքստհաուզենը հիշատակում է միայն թաթարներին և հայերին[298]: Ա. ֆոն Հաքստհաուզենը չի նշել պարսիկ բնակչությանը, որը XVIII դարի վերջերի և XIX դարի 30-ական թվականների, ինչպես նաև հետագա տարիների աղբյուրներում նշվում է Բաքվի հիմնական բնակչության կազմում[299]:

---

[293] Պատկանեան Գ., Հայոց ազգի պատմութիւնը, Սանկտ-Պետերբուրգ, 1863, էջ 4:
[294] Տե՛ս **Березин И.**, նշվ. աշխ., приложение V (Статистическая таблица города Баку за 1841 г.), .
[295] Տե՛ս **Исмаил-Заде Д.**, նշվ. աշխ., таблица I, стр. 58.
[296] Տե՛ս նույն տեղում, приложение VI (Народонаселения вь городе Баку и его уезде вь июнь месяце 1842 года).
[297] Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև ч. III, гл. V (Отъ Баку до Сальяна), стр. 39.
[298] Տե՛ս **Август фонь-Гакстгаузен**, ч. II, стр. 154-155.
[299] Տե՛ս **Броневский С.**, նշվ. աշխ., ч. II, гл. III, Ширван (Ханство Бакинское), стр. 401, տե՛ս նաև АКАК, т. IV, Тифлис, 1870, док. 95, стр. 82.

Ցարական կառավարությունը 1846 թ. դեկտեմբերի 14-ին Այսրկովկասը կրկին ենթարկեց վարչատարածքային բաժանման. համաձայն որի տեղծվեցին չորս նահանգներ՝ Թիֆլիսի, Քութայիսի, Շամախիի և Դերբենդի: Նահանգները բաժանվեցին գավառների, իսկ գավառները՝ տեղամասերի[300]*: Նահանգներից յուրաքանչյուրում գլխավոր դեկավարությունը հանձնարարված էր գինվորական նահանգապետին՝ նրան տրամադրելով նաև քաղաքացիական մասի կառավարումը: Շամախիի նահանգը կազմավորվեց Կասպիական մարզի հետևյալ գավառներից՝ Շիրվանի (վերանվանվեց Շամախիի), Բաքվի, Թալիշի (վերանվանվեց Լենքորանի), Շաքիի (վերանվանվեց Նուխիի): Ցարական կառավարությունը նորաստեղծ Շամախիի նահանգին կցեց նաև Ղարաբաղի գավառը, որը ստացավ Շուշի անվանումը: Նահանգային կենտրոնն էր հին Շամախին*[301]*:*

Բաքվի գավառը գտնվում էր համանուն նահանգի արևելյան մասում՝ Կասպից ծովի արևմտյան ափին՝ Ապշերոնյան թերակղզում: Հյուսիս-արևմուտքից սահմանակից էր Ղուբայի, հարավից փոքր Կուստով՝ Ջավաթի և արևմուտքից՝ Շամախիի գավառներին: Իր տարածությամբ Բաքվի գավառը (3.457,1 քառ. կմ)[302] *զիջում էր նահանգի մյուս գավառներին: Գավառի կազմի մեջ էին մտնում նաև Կասպից ծովի ափամերձ, երեք խմբերի միջև բաժանված կղզիները, որոնց ընդհանուր մակերեսը կազմում էր 34,8 քառ. կմ*[303]*: Ապշերոնյան թերակղզին շրջապատող ամենամեծ կղզիներն են՝ Սվիտոյը, Ժիլոյը, Նարգենը, Գյուրգյանը, Արտեմը, Վուլֆը և այլն: Բաքվի կամ Սվինուի կղզիների խմբում, որը տարածված էր Բաքվի նեղուցից հարավ՝ մինչև Կուրի գետաբերանը, ընդգրկված էին Դուվանին, Բուլլան, Սվինոյը, Հալածը և այլն, կղզյապաջի*

---

[300] Տե՛ս **Евангулов Г.**, նշվ. աշխ., стр. 10, տե՛ս նաև **Тунян В.**, Административно-экономическая политика самодержавия России в Закавказье, стр. 92.

[301] Տե՛ս ПСЗРИ, т. XXI, собрание II, отд-ие II, СПб., 1847, № 20701, стр. 647-648, տե՛ս նաև «Обзор», Тифлис, 1887, 19 июня, № 51, տե՛ս նաև **Иваненко В.**, նշվ. աշխ., էջ 377.

[302] Տե՛ս Экономический быт государственных крестьян Бакинского уезда Бакинской губернии, исследование **П. Н. Ягодынскаго**, МИЭБГКЗК, т. I, Тифлис, 1885, стр. 473-474, տե՛ս նաև СНМ-1859-1864, стр. 2. Նկատենք, որ այդ թիվը հաստատուն չի եղել: Քաղաքի սահմաններն աստիճանաբար ընդլայնվելու հետ մեկտեղ այն հաճախակի փոփոխվել է: Ինչպես օրինակ՝ մինչև 1843 թ. կազմել է 63,7, 1843-1878 թթ.՝ 110,1, 1878-1900 թթ.՝ 361,8, կմ^2 (տե՛ս **Фатуллаев Ш.**, նշվ. աշխ., стр. 28).

[303] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 2.

խմրում՝ համանուն նեղուցում՝ Սառան, Այրված սայր, Կուբի քարը և այլն[304]:

1850 թ. սկզբներին է կազմվել Բաքվի ամենահարգող նկարագրությունը: Այն պատկանում է 1847 թ. հուլիսին աշխատանքի ընդունվով Բաքվում բնակություն հաստատած ռուս դիտնական Կուդմա Սպասսկի-Ավտոնոմովի գրչին[305]: *«Բաքու» համառոտ ուսումնասիրությունում տրված է քաղաքի բազմակողմանի նկարագրությունը. հեղինակը տեղեկություններ է հայտնում քաղաքի բնակլիմայական պայմանների, կառավարման, բնակչության զբաղմունքի, դասային կազմի, եկեղեցիների և ուսումնարանների, առևտրական գործառույթների, քաղ ազգային ու դավանական պատկանելության բնակչության թվի մասին և այլն*[306]: *Հատկանշական է այն փաստը, որ Կ. Սպասսկի-Ավտոնոմովը հայերին նշում է որպես քաղաքի տեղաբնիկ բնակիչներ և տեղեկություններ հայտնում նրանց թվի և գործող հայկական եկեղեցու մասին*[307]: *Կ. Սպասսկի-Ավտոնոմովի տվյալներով՝ 7431 (3755 ար., 3676 իգ.) բնակիչ ունեցող Բաքվում հայ առաքելականների թիվը 405 (283 ար., 122 իգ.) էր*[308]: *Նույն աղբյուրի վկայությամբ՝ ամրոցում և արվարձանում կար 1992 տուն, 23 փողոց, 3 հրապարակ, 2 կամուրջ և 505 կրպակ*[309]:

Կ. Սպասսկի-Ավտոնոմովի հրատարակած փաստական նյութին լրացնելու է գալիս 1850 թ. օգոստոսին Բաքու այցելած Սարգիս արքեպ. Ջալալյանցի տեղեկությունները: Նրա վկայությամբ՝ քաղաքում հայերն ունեին ավելի քան 150 տուն և զբաղվում էին վաճառականությամբ. «Բնակիչք են պարսիկք, ընդ որս և Հայք աւելի քան զհարիւր յիսուն տունս, պարապին ՚ի վաճառականութիւնս»[310]: *Սարգիս արքեպ. Ջալալյանցը հետևյալ տպավորությունն է ստացել քաղաքից. «...՚ի ծովահայեաց քաղաքն Բագու, որ չինեալ կայ ՚ի գեղեցիկ նաւահանգստի յեզր Կասպիական ծովուն ՚ի զառ ՚ի վայր*

---

[304] Տե՛ս **Зубов П.**, նշվ. աշխ., стр. 91, տե՛ս նաև Весь Кавказ. Промышленность, торговля и сельское хозяйство Северного Кавказа и Закавказья. Составил и издал **М. С. Шапшович**, Баку, 1914 (Бакинская губерния), стр.5-6.

[305] Կ. Ֆ. Սպասսկի-Ավտոնոմովը եղել է Բաքվի մաքսային վարչության (հիմնվել է 1807 թ. հունվարի 25-ին) պետական խորհրդական:

[306] Տե՛ս **Автономов-Спасский К.**, Баку, КК на 1852 г., отд. III, стр. 296-309.

[307] Տե՛ս նույն տեղում, стр. 307.

[308] Տե՛ս նույն տեղում, стр. 305, 307: Հմմ. Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, աշխատասիրեաց Տ. Սրբոյեի Ա. Երիցեանց, Թիֆլիս, 1874, էջ 123:

[309] Տե՛ս **Автономов-Спасский К.**, Баку, КК на 1852 г., отд. III, стр. 305.

[310] Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 405:

տեղւոջ, չրջապատեալ կրկնակի ամուր պարսպօք՝ մեծամեծ աշտարակօք և խոր խրամատօք, բոլորն ի կուիածու քարանց...: Շինուածիւնք տանց ի նմին բերդի տգեղ են և խրճին, պողոտայքն անուղիղ և անճոռնի: Իսկ տուներ քաղաքին՝ որ արտաքոյ բերդին են հոյակապ և դեղեցիկ, պողոտայքն ուղղագիծ և կարգաւորեալ ձևով, բաց մեծի մասին երկյարկեայ»[311]: Սարգիս արքեպ. Ջալալյանցը նշում է, որ Բաքվի ամրոցի հարավային կողմում կար մահմեդական մի ուխտատեղի, որտեղ այցելում էին նաև հայերը: Ավանդության համաձայն այստեղ կար հայազգի մի նահատակի գերեզման. «...աւանդութեամբ հաստատեն գոլ գերեզման նահատակի մերոյ՝ յազգէ Հայոց»[312]:

Այսպիսով՝ XIX դարի 30-ական թվականներից սկզբնաղբյուրներում տարբեր տեղեկություններ են հաղորդվել Բաքվի բնակչության ազգային կազմի վերաբերյալ: Այսպես՝ Պ. Զուբովը առանձնացնում է հայերին, թաթարներին և պարսիկներին, Ա. ֆոն Հաքստհաուզենը՝ թաթարներին և հայերին, Կ. Սպասսկի-Ավտոնոմովը հայերից և շիա դավանանքին հետևող պարսիկներից ու թաթարներից բացի նաև ռուսներին[313], իսկ Սարգիս արքեպ. Ջալալյանցը՝ պարսիկներին և հայերին: Այդուհանդերձ, հատկանշական է այն իրողությունը, որ ազգային նման խայտաբղետությամբ հանդերձ, հայերը միանշանակ հիշատակվում են քաղաքի հիմնական բնակչության կազմում:

Որպես նավահանգստային քաղաք՝ Բաքուն չարունակում էր ապրանքափոխանակության և առևտրական լայն հարաբերությունների մեջ գտնվել Իրանի, Անդրկասպյան երկրի, Դաղստանի, Ռուսաստանի, Չինաստանի և այլ երկրների հետ[314]. «Միայն նաւթի արդիւնաբերութիւնը չէ, որ Բաքուին տալիս է առևտրական մեծ կենտրոնի նշանակութիւն: Գրաւելով չատ յարմար տեղ Կասպից ծովի ափում, Բաքուն միևնոյն ժամանակ մի կայարան է, որ հաւաքվում են Պարսկաստանից, և Անդրկասպեան երկրից դէպի Ռուսաստան և արտասահման ուղարկուող ապրանքները և նրանք որոնք արտասահմանից և Ռուսաստանից ներմուծվում են Պարսկաստան և

311 Նույն տեղում:
312 Նույն տեղում, էջ 406:
313 Տե՛ս **Автономов-Спасский К.**, Баку, КК на 1852 г., отд. III, стр. 307.
314 **Броневский С.**, նշվ. աշխ., ч. II, гл. III, Ширван (Ханство Бакинское), стр. 402-403, տե՛ս նաև **Маркова О.**, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, 1966, стр. 79, 83.

Անդրկասպիան երկիրը»[315]*: Միայն 1851-1860 թթ. ընթացքում Բաքվի նավահանգիստ տարեկան մուտք է գործել 207 նավ*[316]*:*

Բաքու քաղաքի բուռն բնդարձակումը համապատասխանեց այն ժամանակահատվածին, երբ բերդը կորցրեց իր պաշտպանական նշանակությունը և առևտրային գործունեություն կենտրոնից աստիճանաբար սկսեց տեղափոխվել արվարձան, որն իր հերթին արդեն բաժանված էր առանձին թաղամասերի: 1855 թ. քաղաքն ուներ 97 հայապատկան տուն[317]*: Տրապիզոնում Իտալիայի հյուպատոս Կ. Սոլանիոյ կողմից 1881 թ. գրված «Տեսութիւն ի վերայ գաւառաց Հայաստանի» ուսումնասիրության մեջ ասվում է, որ 1850-ական թվականների վերջերին Բաքվում արդեն կար 130 հայապատկան տուն*[318]*: 1856 թ. տվյալների համաձայն՝ քաղաքն ուներ 8374 (4296 ար., 4078 իգ.) բնակիչ: Ընդհանուր առմամբ, 1842 թ. համեմատ, քաղաքի բնակչության թիվն աճել էր 1540-ով*[319]*: Քաղաքն այդ տարիներին ուներ 46 փողոց, 2 կամուրջ և 1 այգի*[320]*:*

1858 թ. նոյեմբերի 21-22-ին Բաքու այցելած ֆրանսիացի հանրահայտ գրող Ալեքսանդր Դյուման (Հայր) տեղեկություններ է հայտնում Բաքվի բերդի, «Կույսի աշտարակի», «Սև» և «Սպիտակ» քաղաքամասերի մասին: Ըստ նրա՝ «Բաքվի բերդը համարվում է միջնադարի ամենաամուր բերդերից մեկը: Մեկը մյուսին հաջորդում են երեք բերդապատնեշներ... Մտնելով հյուսիսային դարպասով՝ հայտնվում ենք մի հրապարակում, որտեղ տների ճարտարապետությունը հաստատում է անգամ եվրոպացիների ներկայությունը: Բրիտանական եկեղեցին գտնվում է հրապարակի աջ մասում»[321]*: Ա. Դյուման հիշատակություն է թողել հայերի կենցաղի և առևտրական գործունեության մասին*[322]*:*

---

[315] «Արօր»-ի պատկերազարդ օրացոյց 1894 թ., էջ 36:
[316] Տե՛ս ГССРИ, т. I, стр. 192.
[317] Տե՛ս КК на 1856 г., стр. 492.
[318] Տե՛ս Կաեդանոյ Սոլանեցի, Տեսութիւն ի վերայ գաւառաց Հայաստանի, «Բազմավէպ», Վենետիկ, № Խ, 1882, էջ 292:
[319] Տե՛ս **Исмаил-Заде Д.**, նշվ. աշխ., таблица I, стр. 59.
[320] Տե՛ս КК на 1856 г., стр. 493.
[321] **Alexandre Dumas**, Voyage au Caucase, Paris, 2002, p. 152, տե՛ս նաև նույնի՝ Баку и окрестности его: Волчьи ворота и бакинские огни (из путешествия его по Кавказу), в кн.: Природа и люди на Кавказе и за Кавказом): по рассказам путешественников, поэтическим произведениям **А. Пушкина, М. Лермонтова, Я. Полонскаго** и ученым исследованиям, сост. **Надеждин П.**, СПб., 1869, стр. 278.
[322] Տե՛ս **Alexandre Dumas**, նշվ. աշխ., p. 160.

Շամախում 1859 թ. մայիսի 30-ին տեղի ունեցած ապտակի երկրաշարժի պատճառով, Կովկասի փոխարքա Ա. Բարյատինսկու առաջարկով, կենտրոնական նահանգական վարչություններ տեղափոխում է Բաքու: 1859 թ. դեկտեմբերի 6-ին Ալեքսանդր II-ի հրամանագրում այդ մասին ասված է հետևյալը. «1. Այժմյան Շամախիի վարչություններ և այդտեղ գտնվող այս նահանգի բոլոր նահանգային հիմնարկները Շամախիից տեղափոխել Բաքու քաղաք: 2. Բաքուն բարձրացնել նահանգային քաղաքի աստիճանի: 3. Շամախի նահանգը այսուհետև կոչել Բաքվի նահանգ»[323]: 1860 թ. Բաքվի նահանգի վարչատարածքային կազմում ձևավորվեց նաև Ղուբայի գավառ[324], իսկ երևանի Շիրվանի նահանգից կազմավորվեցին Գյոքչայի և Ջավաթի գավառները[325]:

Նահանգային կենտրոնը Բաքու տեղափոխելը մեծ նշանակություն ունեցավ քաղաքի հետագա բազմակողմանի զարգացման համար: Դառնալով նահանգային քաղաք՝ ընդերքի հնքիաթային հարստությունների շնորհիվ Բաքուն արագությամբ սկսեց ընդարձակվել ու բարգավաճել: Արագ տեմպերով զարգացում ապրեցին քաղաքաշինությունը և քաղաքային կյանքն ընդհանրապես: «Տները (Բաքվում -Գ. Ս.) շինվում են տեղական կակուղ քարից, որը այդ պատճառով ճարտարապետական դիզեգիլ ձևեր ընդունելու հնչտություն է տալիս»,- գրում էր «Արօրը»[326]:

Քաղաքի ամենաբանուկ վայրը և քաղաքին շուք հաղորդողը ծովածոցն էր, որը պայտաձև խրվում է քաղաքի մեջ: Այդտեղ էին գտնվում քաղաքային այգին, նահանգապետի տունը, մաքսատունը և ռուսական «Кавказ и Меркурий» նավային ընկերության նավամատույցը: «Թատրոն» հանդեսը նշում էր, որ «Բագու քաղաքն ունի մի այգի: Աւելի ճիշտն ասած Կասպից ծովի ափին երկար տարածութեան վրա աւազուտ անապատի մէջ երևում է օազիսի նման մի բան, ուր երբ մտնում էք, նկատում էք կանաչ ծառեր, և թփեր, և ծաղիկներ: Այդ կանաչած վայրերի տակի հողը ածուխ է, բերած է Լէնքորանից, իսկ ծառերը՝ զանազան տեղերից»[327]: 1860 թ. քաղաքն ուներ 2544 տուն՝ 13300 բնակչով, որից, ըստ դավանանքի, հայ առաքելականներ՝ 589, մահմեդականներ՝ 11076, ուղղափառներ՝ 1635[328]:

---

[323] **Зейдлицъ Н.**, Исторический обзоръ Бакинской губернии, стр. 45.
[324] Տե՛ս ГССРИ, т. I, стр. 186.
[325] Տե՛ս **Шахатунян А.**, նշվ. աշխ., стр. 98.
[326] «Արօր»-ի պատկերազարդ օրացոյց 1894 թ., էջ 26:
[327] «Թատրոն», Թիֆլիս, 1893, գիրք Ա, դեկտեմբեր, էջ 64-65:
[328] Տե՛ս ГССРИ, т. I, стр. 191, տե՛ս նաև «Արօր»-ի պատկերազարդ օրացոյց 1894 թ., էջ 23: Հմմ. Энциклопедический словарь, т. II[A], стр. 770.

Շամախիում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի պատճառով, երբ 1859 թ. վերջերին նահանգային կենտրոնական վարչությունը տեղափոխվում է Բաքու, շամախահայերից շատերը ևս փոխում են իրենց բնակավայրը՝ հաստատվելով Բաքվում[329]: Շամախիից դեպի Բաքու սկսված արտագաղթի հետևանքով 1861 թ. քաղաքում արդեն կար հայապատկան 689[330], իսկ 1862-ին՝ 700 տուն[331]: Ընդհանուր առմամբ, 1863 թ. քաղաքն ուներ 2264 տուն՝ 12191 բնակչով (6690 ար., 5501 իգ.)[332], 1865 թ.՝ 3166՝ 14715 բնակչով[333]: Ըստ 1859-1863 թթ. «Բնակավայրային և ընտանեկան» ցուցակների՝ Բաքվի գավառում բնակչության մեծամասնությունը կազմում էին իրանական ժողովուրդներից թաթերը՝ 65,78%, իսկ կովկասյան թաթարները՝ ընդամենը 10,5%[334]: Ի դեպ, նույն ցուցակագրության տվյալների համաձայն, Բաքվի գավառում կային չիա բնակչությամբ ընդամենը թաթարական 6 գյուղ[335], որոնք ըստ Ա. Բակիխանովի՝ գործածում էին թյուրքերեն լեզուն «ինչը ցույց է տալիս նրանց ծագումը թյուրքերից, մոնղոլներից և թաթարներից, որոնք եկել են թուրք-պարսկական պատերազմների (XVI-XVII դդ. - Գ. Ս.), սեֆյանների ու նրանցից հետո ընկած ժամանակաշրջանում»[336]:

---

[329] Տե՛ս Շամախու աղետը (ժողովածու), Բագու, 1902, էջ 12, տե՛ս նաև Ստեփանյան Գ., Շամախին և շամախահայերը (հնագույն ժամանակներից մինչև XX դարի վերջերը), «Վէմ», Երևան, 2009, հոկտեմբեր-դեկտեմբեր, № 3, էջ 74-95:

[330] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 138:

[331] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1897, ապրիլի 26, № 48:

[332] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 76-77, 100, տե՛ս նաև Статистический сборник, ч. IV. Коммунальное хозяйство, Баку, 1929, стр. 8.

[333] Տե՛ս Свод статистических сведений о Кавказе, т. I, поставлен и издан подь редакцией действительного члена отдела **Н. И. Воронова**, Тифлис, 1869 (այսուհետև՝ СССК), отд. II, стр. 62, 67.

[334] Տե՛ս СНМ-1859-1864 (Распределение народонаселения Бакинской губернии по народностямъ, съ показаниемъ ихъ въ пронцентахъ), стр. 79, տե՛ս նաև **Зейдлицъ Н.**, Этнографический очерк Бакинской губернии, стр. 53.

[335] Տե՛ս СНМ-1859-1864 (Списокъ населенныхъ местъ Бакинской губернии, стр. 3). Նույն աղբյուրի վկայությամբ 6 գյուղերից շահսևաններով էր բնակեցված միայն Սիմեղլի (Կուլամ-Սահմուդ) գյուղը (տե՛ս նույն տեղում, стр. 87).

[336] **Аббас-Кули-Ага Бакиханов**, стр. 16 (բնագրում՝ «...шесть деревень, Бакинских, Терекеме и весь уезд Шекинский, употребляют язык тюрки, что показывает их происхождение от тюрков, монголов и татар, которые пришли во время Турецко-персидских войн, во время сефевидов и после них»). Ի դեպ, 1991 թ. լույս տեսած Ա. Բակիխանովի աշխատության հրատարակության խմբագիր Զ. Բունիաթովը փաստերի կոծկման նպատակով դուրս է թողել աշխատանքում տեղ գտած նաև այն հատվածը, որտեղ հստակ ասվում է, որ Բաքվի շրջակայքի թյուրքախոս 6 գյուղերի բնակչությունը այդտեղ է հաստատվել թուրք-պարսկական պատերազմների, սեֆյանների և նրանցից հետո ընկած ժամանակաշրջանում»

1867 թ. դեկտեմբերի 9-ին անցկացված վարչատարածքային բաժանման արդյունքում, Հերթական անգամ վերաձևվեց Այսրկովկասի վարչական քարտեզը: Ձևավորվեցին Բաքվի, Ռութայիսի, Թիֆլիսի, Գանձակ-Ելիզավետպոլի և Երևանի նահանգները: Գանձակ-Ելիզավետպոլի նահանգը, որ պետք է կազմավորվեր Հարևան Բաքվի, Թիֆլիսի և Երևանի նահանգների տարածքների հաշվին, գործողության մեջ դրվեց 1868 թ. փետրվարի 19-ին: Վարչական այս նոր բաժանման արդյունքում Բաքվի նահանգի կազմից դուրս մնացին և նորաստեղծ Գանձակ-Ելիզավետպոլի նահանգին կցվեցին Շուշիի, Նուխիի (Շաքի) և Արեշի գավառները: Այսպիսով՝ վերջնականորեն ձևավորված Բաքվի նահանգն ուներ 34.286,3 քառ. կմ տարածություն և ընդգրկում էր Բաքվի, Գյոքչայի, Շամախիի, Ղուբայի, Ջավաթի և Լենքորանի գավառները[337]:

«Տոմար ընտանեկան» օրացույցի մի տեղեկության համաձայն՝ 1869 թ. Բաքվում արդեն ապրում էին 891 հայեր[338]: *Բաքու քաղաքի հայ բնակչության ավելացմանը նպաստեց Շամախիում 1872 թ. հունվարի 16-ին տեղի ունեցած ադետալի երկրաշարժը, որի հետևանքով փլվածների մի մասը թողեց ավերված քաղաքը և գաղթեց Բաքու. «Շամախին նորից սկսեց դատարկվել: Այդ ժամանակ Բագուն արդեն շատ առաջ էր գնացել իբրև նահանգական - ծովափնեայ քաղաք, և շամախեցիները, մեծ մասամբ հայեր, այնտեղ գաղթեցին»*[339]: *Այդ նույն ժամանակ Բաքվում հանդրվանեց նաև սովի հետևանքով Իրանից տեղահան եղած հայությունը. «1872 թ. մարտ ամիսն էր: Բագուայ փողոցները, երկու եկեղեցիների դռները և Մարդասիրական Ընկերության ազատ սենեակները յանկարծ լցուեցան մուրացկան աղքատներով. դրանց մի մասը Պարսկաստանի սաստիկ սովից, և միւս մասը Շամախու աւերիչ գետնաշարժից փախուստ տուող գաղթականներ էին»*[340]: *Բաքվում հանդրվանած չա-*

կաշրջանում (տե՛ս **Аббас-Кули-Ага Бакиханов**, Гюлистан - и Ирам: редакция, коментарии, примечания и указатели **З. Буниятова**, стр. 15).

[337] Տե՛ս Отчет по главному управлению наместника кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем его императорским высочеством великим князем **Михаилом Николаевичем**, 6 декабря 1862-6 декабря 1872 гг., Тифлис, 1873, стр. 49-50.

[338] Տե՛ս Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, էջ 124:

[339] Տե՛ս Շամախու աղետը, էջ 13:

[340] Տե՛ս Պատմութիւն Բագուայ Հայոց աղբատախնամ եկեղեցական հոգաբարձութեան (1872 թ. ապրիլի 1-ից մինչև 1893 թ. ապրիլի 1-ը), կազմեց Ա. Գալատեանց, Բագու, 1895, էջ 3:

մահմեդական պոդթականներըը կազմում էին մոտ 50 ընտանիք, իսկ իրանահայերը, որոնք հիմնականում Սալմաստ գավառից էին՝ ավելի քան 80 ընտանիք[341]:

Բաքվի առաջընթացի համար վճռական նշանակություն ունեցան Ապշերոնյան թերակղզում հայտնաբերված նավթի պաշարները, որոնց արդյունահանման և արտահանման շնորհիվ քաղաքն սկսեց դարգանալ որպես նավթարդյունաբերության խոշոր կենտրոն ոչ միայն Այսրկովկասի, այլև ամբողջ կայսրության մասշտաբով՝ իր վրա հրավիրելով նաև եվրոպական երկրների ուշադրությունը: Բաքվի բազմազանության դարգացումը խթանում էր նաև արդյունաբերական, բնակելի և հասարակական շենքերի լայնածավալ շինարարությանը, որի շնորհիվ քաղաքն ընդարձակվեց և բազմամարդ դարձավ:

Հայ բնակչության թիվը Բաքվում առանձնապես մեծ չափով աճեց XIX դարի 70-80-ական թվականներին և XX դարի սահմանադլխին՝ նավթային վերելքի արշալույսին՝ ի հաշիվ Հայաստանի տարբեր շրջաններից տեղափոխվածների: «Մի քանի տարեայ մէջ,- դրում է Ալ. Խալանթարը,- Բագուն ճանաչել չէր կարելի. սկսեցին դումարներ խաղալ, վաճառականութիւնը մեծացաւ և սկսեց աւելի և աւելի դրաւել հարուստ դրամատէրերին, և թէ աշխատող, արդիւնաբերող ձեռքեր»[342]: *Եթե հարյուրամյակներ շարունակ հայերի համար Բաքուն մի հարմար վաճառանոց և նավահանգիստ էր, ապա XIX դարի կեսերից հայերը Բաքվում նաև արդյունաբերողներ էին, դործարանատերեր, հանքատերեր և այլն: Համաշխարհային նավթարդյունաբերության հիմնադիրներից մեկը՝ Գ. Կյուլպենկյանը, ով 1890 թ. Կ. Պոլսից ուղևորվելով Բաքու, նպատակադրվել էր մոտիկից ծանոթանալ Ապշերոնյան թերակղզում ընթացող սև ոսկու արդյունահանման գործին, իր ճամփորդական նոթերում դրել է, որ 1870 թ. Բաքվի բնակչությունը կազմում էր 12000 մարդ*[343]: *Հակված ենք այն կարծիքին, որ այդ թիվը նվազ է ցույց տրված, քանի որ հոսքը դեպի Բաքու արդեն հասնում էր տասնյակ հազարների՝ պայմանա-*

---

[341] Տե՛ս նույն տեղում:

[342] Քալանթար Ա., Պանդխտութիւնը մեզանում, «Մուրճ», Թիֆլիս, 1890, № 11, էջ 1538:

[343] Տե՛ս Gulbenkian G., La Transcaucasie et la Peninsule d'Apcheron: Souvenirs de voyage, Paris, 1891, p. 200, տե՛ս նաև նույնի՝ Ապշերոնեան թերակղզին եւ ռուսաց նաւթը, «Մուրճ», 1891, № 7-8, էջ 903: Կյուլպենկյանը ճամփորդական իր նոթերը վետեղել է 1891 թ. հրատարակված «Ապշերոնյան թերակղզին և ռուսաց նավթը» հուշագրությունում, որն առաջին անգամ տպագրվել է Փարիզի «Revue des deux Modes» ամսագրի 1891 թ. մայիս ամսվա երկրորդ համարում: Այն հետագայում հաջորդաբար լույս է տեսել նաև «Մուրճ» ամսագրում՝ 1891 թ., № 7-8, էջ 897-905, № 9, էջ 1061-1072, № 10, էջ 1201-1211 և № 11, էջ 1364-1376:

վորված նավթարդյունարերության զարգացմամբ: Առավել հավաստի են Կովկասի վիճակագրական կոմիտեի տվյալները, ըստ որոնց՝ 1870 թ. քաղաքն ուներ 15604 (8950 ար., 6654 իգ.) բնակիչ[344]*:*

1873 թ. «Բնակավայրերի ցուցակների» համաձայն՝ Բաքուն ուներ 3516 տուն՝ 15105 (8627 ար., 6478 իգ.) բնակչությամբ, որից կովկասյան թաթարները կազմում էին 13526 (7781 ար., 5745 իգ.)՝ 89,5%, հայերը՝ 747 (396 ար., 351 իգ.)՝ 4,9%, ռուսները՝ 782 (410 ար., 372 իգ.)[345]*՝ 5,2%, հրեաները՝ 50 (40 ար., 10 իգ.)՝ 0,33%*[346]*: Նույն տվյալների համաձայն՝ թաթերի թիվը Բաքվի գավառում կազմում էր 34157 (18605 ար., 15552 իգ.) մարդ*[347]*: Թյուրքալեզու տարրի նման բարձր քանակը հիմնականում պայմանավորված էր մեխանիկական աճով՝ XIX դարի վերջերից Լենքորանի, Ջավաթի, Ղուբայի, Շամախու և հարակից գավառներից դեպի Բաքու նրանց զանգվածային հոսքով*[348]*:*

Բաքու քաղաքի 1874 թ. բազմակողմանի նկարագրությունը ըստ վարչական բաժանումների տրված է Բաքվից՝ «Մշակի» թղթակից Ա. Գալստյանի թղթակցություններում, որտեղ ասվում է, որ քաղաքը բաժանված էր չորս մասի. «Բերդ, Կարանդին, Դուբսի քաղաք (форштадть) և Պօլտ, որը ասվում է և Բայիլովի հրուանդան (Мысъ)»[349]*: Ըստ հոդվածագրի՝ «Բերդը հին քաղաք է... Նա շինուած է մի քանի բլուրների վրա, համարեա թէ բոլոր տները խառնուած են իրար հետ նեղ-նեղ փողոցներով... Այդտեղի տները ըստ մեծ*

---

[344] Տե՛ս Сборник сведений о Кавказе: Списки населенных мест Кавказскаго края, т. II (այսուհետ՝ ССОК, т. II), Тифлис, 1872, стр. 351.

[345] Նվաճելով Այսրկովկասը՝ ցարական արքունիքն իր առջև նպատակ էր դրել յուրացնել այն, որին հասնելու համար կյանքի կոչեց երկրամասը մեծաթիվ ռուս գաղթականներով՝ գերազանցապես աղանդավորներով բնակեցնելու ծրագիրը: Բաքվի նահանգում ռուս բնակչության առաջին խմբերի բնակեցումը սկսվեց 1833 թ. կեսերից և շարունակվեց ընդհուպ մինչև 1868 թվականը: Ռուս բնակչության թիվը Բաքվի նահանգում և մասնավորապես Բաքու քաղաքում ավելացավ հատկապես XIX դարավերջին: Մանրամասն քննությունը տե՛ս **Зейдлицъ Н.**, Этнографический очерк Бакинской губернии, стр. 46-47; Հայթյան Ա., Անդրկովկասում ռուսական բնակավայրերի հիմնադրման պատմությունից, ԲԵՀ, Երևան, 1980, № 1, էջ 66-29:

[346] Տե՛ս СНМ-1873, տե՛ս նաև Сборник сведений о Кавказе. Списки населенных мест Кавказскаго края. Бакинская губерния. Список населенных мест по сведениям 1873 г., т. V, ч. I, Тифлис, 1879 (б. с.).

[347] Տե՛ս СНМ-1873 (Распределение народонаселения Бакинской губернии).

[348] Տե՛ս Իշխանեան Բ., Վիճակագրական ուսումնասիրութիւն Անդրկովկասեան ժողովուրդների: Ժողովուրդների տերիտորիական բաժանումները եւ նրանց աճումը Անդրկովկասում, Ա մաս, Բագու, 1919, էջ 123:

[349] Գալստեանց Ա., Նամակ Բագուից, «Մշակ», Թիֆլիս, 1874, ոկտեմբերի 3, № 39:

մասին երկու կամ երեք յարկանոց են և բոլորովին պարսկական հին ձևերով են շինուած: Այդտեղ փողոցները շատ նեղ են, ծուռ և ցեխոտ... Կան նմանապէս այնպիսի փողոցներ, որ եթէ մէկ մարդ կանգնի այդ փողոցի մէջտեղում և երկու ձեռները տարածի՝ մէկը մի պատին և մէկն էլ միւս պատին կհասնեն: Բերդումը պատմական են և նշանաւոր Խանի տները, քաղաքի բերդը և աղբկայ աշտարակը:... Առանց հրամանի և առանց պ. [Ռոստոմ] Սիլիկովի[350] (արտիլերիայի սահիճանաւոր) ներկայութեան անկարելի է մտնել պարսպից ներս խանի տները տեսնելու, և ամեն մարդի թոյլ չեն տալ եթէ պատուելի և նշանաւոր անձ չէ: Կարանդին պտնվում է Բագուի արևելահիւսիսային կողմում: Այդտեղի փողոցները թէպէտ աւելի լայն են և կանոնաւոր, բայց շատ կեղտոտ են լինում և անմաքուր, մանաւանդ ամառ ժամանակ...: Դուբսի քաղաքի գլխաւոր շինութիւններից մէկը կարելի է համարել Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Հայկական նոր եկեղեցին, որ կառուցած է սրբատաշ քարից...: Բագուի չորրորդ մասը - Պօրտն է: Սա վերտից փոքր ինչ հեռու է քաղաքից: Պօրտում բնակվում են միայն ծովային գործերը (матросы) և իրենց մեծաւորները: Քաղաքացիներին արգելուած է այստեղ տուն շինելը: Այստեղ տները բոլորը արքունական են, բացի մի քանիսից որոնց կառուցել են ռուս մեծաւորները: Տները երկու կամ երեք յարկեայ են և բոլորը սրբատաշ քարով, իսկ փողոցները շատ լայն են ու մաքուր»[351]:

Բաքու գաղթողների մէջ մեծ թիվ էր կազմում հատկապես Հայ դյուղացիութիւնը: Դա հիմնականում կապված էր XIX դ.

---

[350] Սիլիկովները ազգությամբ ուդի են, ծագումով Նուխիի գավառի Վարդաշեն գյուղից: Հայ առաքելական եկեղեցու հետևորդ քրիստոնյա ուդիական հատվածն անվանվում է նաև «հայ ուդի», հաճախ նաև պարզապես «հայ» (տե՛ս Խառատյան (Առաքելյան) Հ., Ուդիների ողիսականը 18-20-րդ դդ. (Պատմությո՞ւն, էթնիկ գոյատևո՞ւմ, քաղաքականությո՞ւն): Հայոց Մեծ եղեռն. 90, հոդվածների ժողովածու, Երևան, 2005, էջ 127): Օրինակ՝ ազգությամբ ուդի Ղազար քհն. Հովսեփյանը ուդիներին նվիրված աշխատությունում օգտագործում է «ուտիացի հայ», «ուտիացի հայ կին» արտահայտությունները (տե՛ս Ղազար քհյ Յովսէփեան, Ակնարկներ Ուտիացի և մահմեդական հայերի մասին, Թիֆլիս, 1904, էջ 15, 17): Սիլիկյան գիմվորական գերդաստանի նահապետն է Հարություն բեկ-Սիլիկյանը, որը դեռևս XVIII դ. սկզբներին լեզգիների դեմ մղած ինքնապաշտպանական կռիվներում հայտնի էր իր քաջագործություններով (տե՛ս Պռոշեանց Պ., Յարութիւն-Բէգ Սիլիկեան, «Տարազ», Թիֆլիս, 1892, նոյեմբերի 22, № 45, էջ 595-596): Այդ տոհմից էին նաև Սարդարապատի 1918 թ. հերոսամարտում կանոնավոր զորամասերի և աշխարհազորայիների ընդհանուր հրամանատար գեներալ-մայոր (22.8.1917 թ.) Մովսես Բաբայի Սիլիկ-յանը և նրա եղբոր որդի, Նուխիի առանձին 4-րդ հրաձգային գումարտակի հրա-մա-նատար Ա. Սիլիկյանը (սպանվել է 1919 թ. Ջորում, թուրքերի կողմից, տե՛ս ՀԱԱ, ֆ. 245, ց. 1, գ. 2, թ. 26):

[351] Գալստեանց Ա., Նամակ Բագուից, «Մշակ», Թիֆլիս, 1874, ոկտեմբերի 3, № 39:

70-ական թվականներին դրամատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով գյուղում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետ: Ներքաշվելով կապիտալիզմի զարգացման գործընթացի մեջ՝ տնտեսապես քայքայված, հարկերի, պարտքերի ու պարհակների դանձումների բեռից խեղդված, սոցիալական ծանր պայմանների մեջ հայտնված գյուղացիության մի մասը ապրուստի միջոցներ հայթայթելու ակնկալությամբ բռնում է գաղթի ճանապարհը[352]: Բաքուն, Թիֆլիսը, Բաթումը և Կովկասի արդյունաբերական այլ օջախներ, որոնք բանվորական ուժի մեծ կարիք ունեին, դիպլ իրենց էին ձգում քայքայված գյուղացիական զանգվածներին: Արտագնացությունը դեպի նշված քաղաքներ պայմանավորված էր նաև Արևելյան Հայաստանի արդյունաբերության թույլ զարգացած լինելու հանգամանքով[353]:

Պանդխտության դիմող հայ գյուղացիությունը գնում էր գլխավորապես Բաքու, ուր արագ տեմպերով զարգանում էր նավթարդյունաբերությունը[354]: Այսպես՝ «Մշակի» թղթակիցներից «Կասպիացին» նավթի քաղաքի ձգողական ուժի մասին հետևյալն էր գրում. «Նավթի պատճառով Բաքուն դարձել է երկրորդ Կալիֆորնիա, ուր ամեն տեղերից և ազգերից մարդիկ հեղեղի պես են թափվում...: Եկվորների նշանավոր մասը հայեր են, առավելապես Ղարաբաղի, Շամախու և Տաթևի վիճակներից...»[355]: Գյուղացիության մի հատվածն էլ, սոցիալական դրդապատճառներից բացի, արտագնացության էր դիմում՝ իրավազրկությունից և գյուղական իշխանությունների անհամար կամայականություններից դրդված: Ժամանակի մամուլը լի է տանուտերերի բռնությունների ու կամայականությունների մասին բազմաթիվ հաղորդումներով: «Ոմանք գիւղական իշխանութիւնների անիրաւութիւնից և կամայականութիւնից զզւած գլուխ են վեր առել, հեռացել ու կորել իրանց տեղից, որովհետև իրաւունք և արդարութիւն պաշտպանելու չափ զօրութիւն չունեն»,- գրում էր «Մշակը»[356]:

---

[352] Տե՛ս Արասխանենց Ա., Պանդխտութեան խնդիրը (I), «Մուրճ», Թիֆլիս, 1899, դ 11, էջ 1673-1682:

[353] Տե՛ս Саркисян Г., Население Восточной Армении в XIX-начале XX в., Ереван, 2002, стр. 124.

[354] Տե՛ս Զուրաբյան Ս., Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր, Երևան, 1959, էջ 25:

[355] Կասպիացի [Վահան (Հովհաննես) վրդ. Տեր-Գրիգորյան], Նամակ Բագուից «Մշակ», Թիֆլիս, 1879, հունվարի 23, № 8:

[356] Նույն տեղում:

Արևելյան Հայաստանի գյուղերում արտադնացությունը պայմանավորված էր նաև բնակչության աճի հետևանքով առաջացած սակավահողությամբ: «Անդրկովկասում, չատ քիչ բացառություններով, տիրում է սակաւահողութիւն: Այդ սակաւահողութիւնը դրդում է գիւղացիների աւելորդ աշխատող ձեռքերին պանդխտելու դանագան կողմեր՝ գործ փնտրելու համար: Այսպէս օրինակ-Ղարաբաղի, Սիսիանի կամ Զանգեզուրի և Շամախու գիւղացիները թափւում են Բագու»[357],- գրում էր ազգային գործիչ Գ. Խաժակյանը: Բաքու էր մեկնում հիմնականում Շամախիի, Նուխիի, Գանձակի, Ագուլիսի, Արցախի, Զանգեզուրի, Ալեքսանդրապոլի, Երևանի, Ախալքալաքի, Ախալցխայի և այլ շրջանների հայ երիտասարդությունը[358]: Սոցիալական առումով նրանց կազմը բազմազան էր, թեև, ինչպես արդեն նշվեց, Բաքու մեկնողների մեջ հիմնականում գերակշռում էր հողազուրկ գյուղացիությունը. «Եւ գնում էին դէպի Բագու Արարատեան դաշտից եւ մանաւանդ լեռնոտ եւ սակավահող Ղարաբաղից եւ Զանգեզուրից»[359]:

Արտադնացությունն առաջ էր գալիս նաև վաշխառության հետևանքով, երբ գյուղացիության ճնշող մեծամասնությունը, չկարողանալով մարել վաշխառուական պարտքերը, հարկադրված էր դիմելու տարադնացության: «Գիւղացուն իւր գիւղից ժամանակաւորապէս դուրս վանող պատճառները,- գրում է «Մուրճի» խմբագիր Ավ. Արասխանյանցը,- նաև այն են, որ նա հանդիպում է որևէ տնտեսական դժբախտութեան, ինչպէս՝ հունձի փչանալը, վաշխառուին զոհւելը և այլն»[360]: «Մշակի» թղթակից «Կասպիացին», անդրադառնալով հայ գյուղացու դեպի Բաքու գաղթին, երկրորդական պատճառներից զատ, հիմնականում կանգ է առնում սոցիալ-տնտեսական խնդրի վրա՝ գրելով. «Սրանց ամենափոքր մասը միայն պատճառ ունի օտարութեան գալու: Ոմանք հորից մնացած և կամ իրենց վեր առած պարտք ունեն, որ ահեղ վիշապի պես բարդ տոկոսով աճում է օրըստօրէ. պետք է փող աշխատեն՝ վճարեն: Ոմանք գյուղումն ապրելու ո՛չ մի հնար չունեն - ո՛չ հող, ո՛չ կալված, ո՛չ

---

[357] Խաժակեանց Գ., Նաւթաշրջանի բանւորները (IV), «Մուրճ», Թիֆլիս, 1893, № 4, էջ 585-586:

[358] Նույն տեղում, էջ 586, տե՛ս նաև «Տարազ», Թիֆլիս, 1893, մարտի 31, № 12, էջ 178:

[359] Գիւլխանդանեանց Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1924, Բ տարի, հունվար, № 3, էջ 64:

[360] Արասխանեանց Ա., Պանդխտութեան խնդիրը (II), «Մուրճ», Թիֆլիս, 1890, № 6, էջ 788:

գրատներ և ո՛չ էլ անատուններ... Հարկերը պահանջում են անխնա, իսկ այնտեղ մշակութային գործեր չկան...»[361]: Ադբատացած գյուղացիների հետ մի շարք պնդկներում արտադնացության էին մեկնում նաև փոքրիշատե ապահովված գյուղացիները: Նրանք մեկնում էին դրամ վաստակելու և իրենց անասնությունների ավելի բարեկարգելու կամ առևտրական գործունեություն ծավալելու նպատակով. «Հարուստ գիւղացիները շարունակ պտղմում են, մեծ մասը Բագու և քիչ մասը Շամախի ու երկաթուղու կայարանները (Ուջար և Հաջի-Կաբուլ – Գ. Ս.) արհեստով ու վաճառականութեամբ պարապելու»[362]:

Գյուղի երիտասարդության մի հատվածն էլ Բաքու էր մեկնում ոչ թե վերոհիշյալ պատճառներից ելնելով, այլ ժամանակի պահանջից դրդված: «Անդրկովկասի քաղաքներում և գյուղերում,- գրում էր «Մշակի» թղթակից «Կասպիացին»,- Բագուի անունը մի կախարդական զօրութիւն է ստացել: Բագու բառը լսելով՝ պատրաստած սեղան կամ ոսկու կոյտ են հասկանում, որից իւրաքանչիւր ոք եկածին պես անարգելք կարող է ցանկացած բեռը կապել ու գնալ...»[363]:

Հայաստանից երիտասարդ ուժի արտահոսքն առավել նկատելի է եղել Զանգեզուրից և Արցախից[364]: «Ութսունական թուականներից,- գրում է «Տարազը»,- Շուշին և նրա հետ ամբողջ Ղարաբաղը, Զանգեզուրը սկսեցին զաղթել Բաքու: Բաքուն հարստանալով, սպանեց Ղարաբաղը՝ նրա բոլոր կենսունակ ոյժերը հանելով այնտեղից»[365]: Խիստ ուշագրավ է այն հանգամանքը, որ Արցախից և Նախիջևանից Բաքու մեկնողների մեջ աշխատանք որոնելու նպատակով եղել են ոչ քիչ թվով անչափահաս տղաներ, որոնք գերազանցապես ընդգրկվում էին տնային տարաբնույթ ծառայության մեջ: «Նոր-դարն» այդ կապակցությամբ գրում էր. «Վերջին ժամանակներս Ղարաբաղի և Հին-Նախիջևանի գաւառներից այնքան պան-

---

361 Կասպիացի [Վահան (Հովհաննես) վրդ. Տեր-Գրիգորյան], Նամակ Բագուից «Մշակ», Թիֆլիս, 1879, հունվարի 23, № 8:

362 ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 31:

363 Կասպիացի [Վահան (Հովհաննես) վրդ. Տեր-Գրիգորյան], Նամակ Բագուից «Մշակ», Թիֆլիս, 1879, հունվարի 23, № 8:

364 Տե՛ս Լալայեան Ե., Զանգեզուր: Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, «Ազգագրական հանդէս», Դ գիրք, № 2, Թիֆլիս, 1898, էջ 54, տե՛ս նաև Շիրին Ա., Սիսիան (Ուսումնասիրութեան մի փորձ), Բագու, 1912, էջ 20:

365 Շուշին իբրև առողջապահական կայարան, «Տարազ», 1902, սեպտեմբերի 22, № 35, էջ 365:

դուխաններ են եկած այդտեղ, որոնց թիւ և համար չկայ. եկել են առաւելապես իրենց պետական ուսումնարանը թողած 10-12 տարեկան փոքր տղաներ»[366]:

Դեպի Բաքու գանգվածային արտագնացութեան հոսքին նպաստել նաև հաղորդակցութեան միջոցների բարեկարգումը, մասնավորապես 1883 թ. շահագործման հանձնված Թիֆլիս-Բաքու երկաթգիծը: Ղազար քհն. Հովսեփյանցի վկայությամբ՝ «...Բագու-Թիֆլիսեան երկաթուղու գիծը բացուելուն պէս Ղարաբաղի, Շամախու, Թիֆլիզի, Գանձակի, Երևանի և ուրիշ տեղերի գիւղացիք վազեցին Բագու, չուռով հարստանալու և միլիոնների տէր դառնալու պատրանքով»[367]: *Զանգեզուրից «Նոր-դարին» հղած Ս. Բահաթրյանի՝ պանդխտությանը վերաբերող վիճակագրական բնույթի մի թղթակցության տվյալներով՝ միայն 1884 թ. 10 ամիսների ընթացքում Զանգեզուրի գավառի տարբեր գյուղերից Բաքու արտագնացության էր մեկնել 2443 մարդ*[368]: *Ըստ գյուղերի՝ պատկերը հետևյալն էր*[369].

Աղյուսակ № 1

Բնակավայր	Գաղթածների թիվը	Խնձորեսկ	392
Սիսիանի շրջան	60	Խոզնավար	37
Այիլու (այժմ՝ Սալվարդ)		Խոտ	131
Ալսլաթյան	142	Կալաղարասու (հնում՝ Բերդաձոր)[370]	29
Աղբենդ (այժմ՝ Աշոտավան)	43	Կյորու (հետագայում՝ Ձորաշեն)[371]	45

[366] Բագուից, «Նոր-դար», Թիֆլիս, 1890, դեկտեմբերի 11, № 196:
[367] Ղազար քհյ Յովսէփեան, նշվ. աշխ., էջ 26:
[368] Տե՛ս «Նոր-դար», Թիֆլիս, 1885, օգոստոսի 17, № 139:
[369] Գյուղերի հաջորդականությունը տրված է ըստ ներկայիս վարչական շրջանների՝ այբբենական կարգով: Փակագծում ավելացրել ենք նաև հին և նոր անվանումները:
[370] Կալաղարասուն (Ղարաղշլաղ) Մեծ Շեն գյուղն է, պատմական Բերդաձոր բնակավայրը (տե՛ս Սարգսյան Ս., Արցախ: Պատմաաշխարհագրական ճշգրտումներ, Երևան, 1996, էջ 69): Այն գտնվում է Արցախ աշխարհի Բերդաձոր գավառում՝ Քիրս լեռան արևմտյան փեշին: Բերդաձոր գյուղախումբը բաղկացած է եղել մի քանի մեծ ու փոքր գյուղերից: Հետագայում մտել է Սյունյաց աշխարհի Աղաեջր, իսկ ավելի ուշ՝ Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի մեջ (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, կազմողներ՝ Հակոբյան Թ., Մելիք-ԲախշյանՍտ., Բարսեղյան Հ., հ. 1, Երևան, 1986 (այսուհետ՝ ՀՀՇՏԲ), էջ 665, տե՛ս նաև հ. 2, Երևան, 1988, էջ 888):
[371] Ձորաշեն, Ազատաշեն և Այգեձոր գյուղերի միավորմամբ 1970-1974 թթ. կազմավորվել է Հարթաշեն գյուղը (տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 40, տե՛ս նաև ՀՀՇՏԲ, հ. 3, Երևան, 1977, էջ 386):

Անգեղակոթ	59	Կոռնիձոր	72
Բալաք	35	Հալիձոր	32
Բնունիս	17	Շինուհայր	92
Ռոճակոթ	88	Սվարանց	14
Դարպաս	29	Տարև	103
Թազագյուղ (այժմ՝ Թասիկ)	41	Տանձատափ	10
Լոր	29	Տեղ	26
Ղարաքիլիսա (հնում՝ Սյունիք, Սյունի, Սիսիան, այժմ՝ Սիսիան)[372]	86	Քարահունջ	52
Մազրա (հնում՝ Մուցր, հետագայում՝ Բարձրավան, այժմ՝ Մուցք)	48	Քարաշեն	38
Շաղատ	110	Կապանի շրջան	18
		Արծվանիկ	
Տոլորս	71	Նորաշենիկ	59
Ուզ (այժմ՝ Ույծ)	111	Սևաբար	28
Գորիսի շրջան		Մեղրու շրջան	
Այիղուլիշեն (հետագայում՝ Ազատաշեն)	15	Մեղրի	64
Գորիս	167	Ծվանիձոր	19
Երիցսւթումբ (այժմ՝ Բարձրավան)	31	Ընդամենը	2443

Հարկ է նշել, որ Ս. Բահաթրյանի բերած ցուցակը լիարժեք չէ, որից դուրս են մնացել մի շարք գյուղեր[373]*:*

Աղյուսակից հետևում է, որ Զանգեզուրի գավառից Բաքու արտագնա աշխատանքի մեկնածների շրջանում մեծ թիվ էին կազմում հատկապես Գորիս գյուղաքաղաքից, Խնձորեսկ, Ախլա-

---

[372] Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963, էջ 80, տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. III, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1976, էջ 125, տե՛ս նաև Հասրաթյան Մ., Պատմա-հնագիտական ուսումնասի-րություններ, Երևան, 1985, էջ 129:

[373] Օրինակ՝ ցուցակում նշված չէ Սիսիանի շրջանի Գետաթաղ գյուղը, որտեղից, XIX դարի 80-ական թվականներից սկսած, Բաքու արտագնա աշխատանքի էին մեկնել մեծ թվով երիտասարդներ: Գետաթաղի պատմության հեղինակ Ա. Հովսեփյանը այդ մասին գրում է. «Այդ ժամանակաշրջանում (նկատի ունի XIX դարի 70-80-ական թվականները - Գ. Ս.) Գետաթաղում չկար մի ընտանիք, որից գոնե մի տղամարդ չգնար Բաքու փող վաստակելու: Գնացողների որոշ մասը մնում էր Բաքվում մի քանի տարի և գյուղ էր գալիս ժամանակ առ ժամանակ: Աստիճանաբար սրանց մի մասը հիմնավորվում էր քաղաքում, տեղափոխում իր ընտանիքը, խզում կապը գյուղի հետ» (Հովսեփյան Ա., Գետաթաղ գյուղի և գետաթաղցիների պատմությունից (ձեռագրի իրավունքով), Բաքու, 1967, էջ 52: Ձեռագիրը պահվում է մեր անձնական արխիվում: Բաքվում հաստատված գետաթաղցիներից շատերն աշխատել են ոչ միայն նավթարդյունաբերական ձեռնարկություններում, այլև զբաղվել են ձեռնարկատիրական գործունեությամբ:

թյան, Խոտ, Ուլթ (Ուլ), ապա Տաթև[374] գյուղերից գաղթածները: Ուլ-ծից «Հորիզոնի» թղթակից Հակոբ Տեր-Պողոսյանը (Տերունի), անդրադառնալով Բաքու արտագնա աշխատանքի մեկնելու պատճառներին, գրում էր. «Միանգամայն գուրկ հողից, եղածի էլ մեծ մասը միանգամայն անպիտ ու անպտղատու, տասնեակ տարիներից ի վեր է, որ այդ հողը պատրել է իրեն ապաստանած գիւղացիներին տալ հացը տալուց և այդ ժամանակից ի վեր ամեն կողմից նեղւած Ուլ գիւղացին միակ միջոցին է դիմում սովամահութիւնից ազատելու համար. ուղարկում է դէպի Բագու իր բոլոր կարող և ընդունակ ոյժերը, տանը թողնելով կանանց, ծերերին և մանուկներին»[375]:

1880-ական թվականներին զգալիորեն աճում է նաև Երևանի նահանգից արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: Պետական գյուղացիների տնտեսական դրությունն ուսումնասիրողները 1884-1886 թթ. արձանագրում էին, որ Նոր Բայազետի գավառի 31 գյուղերից արտագնա աշխատանքի է մեկնել 6400 տղամարդուց 2230-ը, նույն գավառի 77 գյուղերի 23 791 տղամարդուց՝ 5065-ը: Շարուր-Դարալագյազի գավառում արտագնացության էր դիմում աշխատունակ տղամարդկանց 10%-ը, Նախիջևանի Գողթան գավառի Տանակերտ գյուղում՝ 4/5-ը և այլն[376]:

Արցախից Բաքու պանդխտության մեկնող երիտասարդությունը հիմնականում եղել է Վարանդա գավառից: Ե. Լալայանը վկայում է. «Պանդխտությունը, որ սովորիկ տարածված է գավառս (Վարանդայի - Գ. Ս.) բնակչության մեջ: Գլխավորապես պանդխտում են Բաքու, Ղազախ, Պետրովսկ և Անդրկասպյան երկրները: Վարանդացուն տակավին նոր ծանոթ այդ երկրները, մանավանդ Բաքուն՝ յուր նավթահորերով, գրավել և գերել է»[377]:

Ջանգիսուրի, Երևանի և Արցախի շրջանների հայ գյուղացիների հետ մեկտեղ Բաքու էին գաղթում նաև Գյոքչայի, Շամախիի և Ղուբայի գավառների հայկական գյուղերի բնակիչները: Ն. Արեշյանի հաշվարկներով՝ XIX դարի 80-ական թվականներին Գյոքչայի գավառից Բաքվում հիմնական բնակություն էր հաստատել 60 տուն՝

---

[374] Տաթև գյուղի և Բաքվում հաստատված տաթևացիների մասին հանգամանալի տե՛ս Григоров Н., Село Татев (СМОМПК, вып. XIII, Тифлис, 1892, стр. 59-125), տե՛ս նաև Օրբել Օրբելեանց, Նամակ Տաթևից, «Մշակ», Թիֆլիս, 1874, փետրվարի 28, № 8:

[375] «Հորիզոն», Թիֆլիս, 1914, փետրվարի 25, № 41:

[376] Տե՛ս Համբարյան Ա., Արևելյան Հայաստանի գյուղացիության արտագնացության մասին, ԼՀԳ, Երևան, 1985, № 8, էջ 25:

[377] Լալայան Ե., Երկեր, հ. 2, Արցախ, Երևան, 1988, էջ 136:

300 հոգի (175 ար., 125 իգ.), իսկ Շամախիի գավառից՝ 100 տուն՝ 430 հոգի (230 ար., 200 իգ.). Գյոքչայի գավառից ժամանակավոր բնակություն էին հաստատել 532 հոգի, Շամախիի գավառից՝ 180 հոգի[378]: Բերված թվերը, կապված ժողովրդի պարբերական տեղաշարժերի հետ, փոփոխություն են կրել: Այսպես՝ Գյոքչայի գավառի բաբվարնակ հայ գյուղացիների հայրենակցական միության նախագահ Մ. Մայիլյանը Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանին 1919 թ. օգոստոսի 19-ին հղած գրությամբ տեղեկացնում էր, որ տարբեր տարիների ընթացքում գավառից պանդխտել է ոչ ավելի, քան 1500 մարդ[379]:

Հետազոտությունները վկայում են, որ Գյոքչայի և Շամախիի գավառների հայ գյուղացիներից շատերը Բաքու էին մեկնում ոչ թե քաղաքային կյանք վարելու և այնտեղ հիմնավորվելու մտադրությամբ, այլ ժամանակավոր աշխատանք գտնելու նպատակով: Բաքու արտագնա աշխատանքի մեկնող երիտասարդները գնում էին սեպտեմբերից և վերադառնում գարնանը՝ հաջորդ տարվա գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցելու համար[380]: Այդ իսկ պատճառով նրանց մեծ մասը պահպանում էր կապը գյուղի հետ[381]: «Շամախու, Գեոզչայի, Շուշեայ, Շարոպանի (Իմերեթիա) և այլ գաւառների գիւղացիք,- գրում է Ալ. Քալանթարը,- թէպէտ գնում են և երկարատև պանդխտութեան, բայց սոքա մեծ մասամբ պատկանում են կարճատև պանդուխտների խմբին, իսկ հակառակը՝ Զանգեզուրի, Դարալագեազի, Նախիջևանի, Հաճէի (Իմերեթիա) և այլ գաւառների գիւղացիք,- սոքա գլխաւորապէս պատկանում են շատ տարիներով մնացողներին...»[382]:

Պանդխտության հետևանքով զգալիորեն կրճատվեց Արևելյան Հայաստանի գյուղաբնակ բնակչության թիվը: Ավ. Արաբյանցը «Պանդխտության խնդիրը» հոդվածաշարում կոնկրետ փաստարկումներով շարադրել է պանդխտության և գաղթականության, որպես սոցիալական երևույթների, տարբերությունը: Առաջինը դիտել է որպես սոցիալական ազատության հետևանք. այդպիսիք հե-

---

[378] Տե՛ս **Абелов Н.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 191.
[379] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 8, թ. 47:
[380] Տե՛ս **Мелик-Шахназаров Е.**, Селение Арцваник Зангезурскаго уезда Елисаветпольской губернии (СМОМПК, вып. XXV, Тифлис, 1898, отд. II, стр. 38).
[381] Տե՛ս նույն տեղում:
[382] Քալանթար Ա., Պանդխտութիւնը մեզանում, «Մուրճ», Թիֆլիս, 1890, № 10, էջ 1543:

ոանում են իրենց համայնքից, վերադարձի համոզմամբ: «Մի մեծ բաղդ կարող ենք համարել այն,- գրում է Ավ. Արապետյանցը,- որ մեր կովկասեան պանդուխտների համար կան մօտիկ կենտրոններ, ինչպէս էին Թիֆլիսը, Բաքուն, Բաթումը, Երևանը: Ջր լինէին մեր երկրի իրա մէջ վաճառաշահ և գործարանական այդպիսի կենտրոններ - պանդխտութիւնը մեզանում կը փոխարկւէր թէ հասարակական և թէ ազգային մեծ թշուառութեան, որովհետև այն ժամանակ նոքա ստիպած կը լինէին դիմել մեր երկրից հեռու կենտրոններ, որտեղից կասլ պահպանելը իրանց հայրենի գիւղերի և ընտանիքների հետ՝ մանաւանդ բանուոր և արհեստաւոր մարդկանց համար կը լինէր չափազանց դժուարացած, գուցէ և անհնարին դարձած»[383]: Հոդվածագիրն անդրադառնալով գյուղական պանդխտության խնդիրներին, նշում է այն ուղիները որոնցով պիտի պայքարել սոցիալական մեծ չարիք ներկայացնող այդ երևույթի դեմ[384]:

Հայաստանի տարբեր շրջաններից բացի, 1840-ական թվականներից սկսած, կարիքից դրդված գեպի Բաքու պանդխտության էին դիմում նաև Իրանի Ատրպատական նահանգի տարբեր գավառների հայ գյուղացիները, որոնցից չատ քչերն էին հետագայում վերադառնում տուն: «Մշակը», անդրադառնալով Ատրպատականի հայերի պանդխտության մեկնելու դրդապատճառներին, գրում էր. «Ապրելով իրաւազուրկ պայմաններում, կիսաճորտ դրութեան մէջ, անկարող լինելով զարգանալ տնտեսապէս և կուլտուրապէս, հայ գիւղացիները իւրաքանչիւր տարի մեծ քանակութեամբ գաղթում են Կովկաս գլխաւորապէս Բագու, աշխատելու համար գործարաններում: Գնացողներից չատ քչերն են վերադառնում, իսկ վերադարձողներն էլ կամ ծեր են, կամ անբուժելի հիւանդներ: Եւ չնորհիւ գոյութիւն ունեցող իրաւական և տնտեսական պայմանների, որոնց հետևանք է արտագաղթը, Ատրպատականի հայութիւնը չի աճում»[385]: Եթե Մուժամբարի հայերը պանդխտության էին դիմում Թիֆլիս և Գանձակ, ապա ղարադաղահայերը հիմնականում մեկնում էին Բաքու, ուր զբաղվում էին ներկարարությամբ և հացագործությամբ[386]: Ըստ Ե. Ֆրանգյանի՝ «Տարեկան մօտաւորապէս

---

[383] Արապետեանց Ա., Պանդխտութեան խնդիրը (II), «Մուրճ», Թիֆլիս, 1890, № 6, էջ 793-794:

[384] Տե՛ս նույն տեղում, էջ 783-795:

[385] «Մշակ», Թիֆլիս, 1916, օգոստոսի 20, № 184:

[386] Տե՛ս Տէմիրճեան Վ., Դիւան Ատրպատականի հայոց պատմութեան, հ. Ա, Պէյրութ, 1980, էջ 191-192, տե՛ս նաև Գոբոյեան Ն., Պարսկաստանի հայերը (պատ-

30,000 հոգի պանդխտում են գլխաւորապէս Բագու, Շուշի, Թիֆլիս, Բաթում... և այլն: Բացառութիւնների շարքում պիտի դնենք այն հայերին, որոնք մէկ կամ երկու անգամ դնացած չլինեն Ռուսաստան»[387]:

Ի թիվս արևելահայ և իրանահայ այլևայլ գավառներից եկած հայ պանդուխտների՝ Բաքվում մեծ թիվ են կազմել նաև Մուշից ու Վանից եկածները. «Մ՛վքեր են արդեօք այդ պանդուխտները, այդ առոյգ հսկայ երիտասարդները - սրանք Հայաստանցիք են՝ Սիւնիքից սկսած մինչև Մուշ, Վան, Ղարադաղ»[388]:

Հայկական գյուղերից արտագնա աշխատանքի մեկնողները Բաքվում գերազանցապես ընդգրկվում էին նավթարդյունաբերության ոլորտում, զբաղվում էին նաև կոշկակարությամբ, դերձակությամբ, դարբնությամբ, հյուսնությամբ և այլ արհեստներով[389]: *«Մշակի» Բաքվի թղթակիցը, անդրադառնալով Բաքու արտագնա աշխատանքի մեկնած գյուղացու դրությանը, գրում էր. «Ամենից շատ եկողները անարվեստ գյուղացիք են, որոնք թե քաղաքում և թե դուրսը բնակարի, դիշերապահի, մշակի պաշտոն են վարում չափավոր վարձով»*[390]: *Այսպիսով՝ Բաքվում հաստատված հայության երրորդ հատվածը, ազատ քաղաքացիներից և վաճառականներից հետո, զբաղեցնում էր գյուղացիությունը, որը կազմում էր քաղաքի ամենաբազմամարդ շերտը:*

Բաքու մեկնած պանդուխտ հայ մշակները բնակություն հաստատեցին ոչ միայն քաղաքի արվարձանային թաղերում, այլև մոտակա Սաբունչի, Մաշթագա, Բուզովնա, Շաղան, Մարդաքյան և Բիբի-Հեյբաթ գյուղերում[391], *որոնք 1870-ական թվականների սկզբներին արդեն բազմամարդ էին: Այդ գյուղերը մտնում էին քաղաքից հյուսիս-արևելք՝ մոտ 20 կմ հեռավորության վրա գտնվող Բալախանի անունով նավթագործական շրջանի մեջ*[392]: *«Նոր-դարի» Բաքվի թղթակից Մ.Ք. Ղալաբեկյանը «Բալախանի» վերտառու-*

մական, տեղագրական եւ վիճակագրական համառոտ տեղեկութիւններ Պարսկաստանի հայերի մասին՝ ամենահին ժամանակներէ մինչեւ 1898 թ.), Թեհրան, 1968, էջ 149:

[387] Ֆրանգեան Ե., Ատրպատական (պատկերազարդ ժողովածու), Թիֆլիս, 1905, էջ 197:

[388] Մի քանի օր Բագում, «Տարազ», Թիֆլիս, 1891, ապրիլի 7, № 13, էջ 195:

[389] Տե՛ս **Абелов Н.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 191.

[390] «Մշակ», Թիֆլիս, 1879, հունվարի 23, № 8:

[391] **Շիրվանզադե Ալ.**, Կյանքի բովից, Եժ, հ. 8, Երևան, 1961, էջ 77:

[392] Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1896, № 10-11, էջ 1306:

թյամբ հոդվածաշարում մռայլ գույներով է նկարագրում նավթային այդ շրջանը. «Մտնելով Բալախանի, անշուշտ քեզ թվացած կկարծէիր մի տարօրինակ գերեզմանատան մէջ, որտեղ միայն գերեզմանաքարերի փոխարէն քառակուսի վիշկաններն են պատնից դէպ վեր երկինք ցցուած»[393]: Առավել մարդաշատ էր հատկապես Մաշթագան, որտեղ տների թիվն անցնում էր 1000-ից[394]: Աստիճանաբար սկսեց ձևավորվել նաև գործարանային շրջանը, որի հետևանքով Բաքվի ամրողջ մթնոլորտը լցվեց նավթի հոտով ու ծխով: Մտահոգ բնակչության առողջության խնդրով՝ կառավարությունը, նահանգապետ վ. Ստարասելսկու առաջարկությամբ, 1873 թ. հատուկ տեղ էր հատկացրել գործարանային շրջանն համար, որն իր գործունեության առանձնահատկությունների պատճառով կոչվեց «Սև քաղաք»[395]: Ալ. Շիրվանզադեն իր հուշերում թողել է «Սև քաղաքի» ուշագրավ նկարագրությունը. «Սև Քաղաք անվանվում է այստեղ նավթային գործարանների խումբը, որ սփռված է մոտավորապես վեց քառակուսի վերստաչափ տարածության վրա, հեռվից մարդու աչքին ներկայացնում է մառախուղով պատած մի փոքրիկ քաղաք, որը սև մականունը կրում է այն պատճառով, որ այստեղ ամենայն բան սև է՝ սկսած անշունչ առարկաներից մինչև տնային կենդանիներն ու մարդը»[396]: Արդեն վեց ամիս անց «Սև քաղաքում» հիմնադրվել և գործում էր 80 գործարան[397]: «Սև քաղաքից» ոչ այնքան հեռու՝ 4 կմ հեռավորության վրա, գտնվում էր արտադրական և բնակելի շրջանը՝ «Սպիտակ քաղաքը»[398]:

---

[393] Ղալաբէգեան Մ., Բալախանի, «Նոր-դար», Թիֆլիս, 1890, հուլիսի 7, № 94: Հեղինակի «Բալախանի» հոդվածաշարը տե՛ս նաև հուլիսի 11, № 95, հուլիսի 12, № 96, հուլիսի 13, № 97, հուլիսի 18, № 100:

[394] Տե՛ս Քալանթարեանց Աղ., Նամակ Բուզովնայից, «Մշակ», Թիֆլիս, 1874, սեպտեմբերի 19, № 37:

[395] «Նոր-դար», Թիֆլիս, 1886, հոկտեմբերի 29, № 183, տե՛ս նաև **Фатуллаев Ш.**, Цит. раб., стр. 39.

[396] Շիրվանզադե Ալ., Կյանքի բովից, էջ 78:

[397] Տե՛ս Թոփչեան Ե., Նաւթային արդիւնաբերութիւնը Կովկասում («Լոյս պատկերազարդ օրացոյց հանդէս» 1904 թ., Տեղեկատու, վիճակագրական, առողջապահական, գրականական, պատմական, գիտական, գեղարուեստական եւ այլ յաւելուածներով, Թիֆլիս, 1903, էջ 200):

[398] Մի քանի օր Բագուում, «Տարազ», Թիֆլիս, 1891, ապրիլ 7, № 13, էջ 195, տե՛ս նաև Արասխանեանց Ա., Բաքւայ նավթաշրջանից (Սիստեմական տեղեկութիւններ), «Մուրճ», Թիֆլիս, 1896, № 10-11, էջ 902, տե՛ս նաև **Саванерская Т., Швидковский Д., Петров Ф.**, История градостроительного искусства, Москва, 1989, стр. 306.

«Ան» և «Սպիտակ» քաղաքամասերի միջև երկաթուղային կապ հաստատվեց 1880 թ., երբ կառուցվեց Բաքու-Սուրախանի-Սաբունչի երկաթուղագիծը (33 կմ): XIX դարի 70-80-ական թվականներին չարտնակվող ներգաղթի պայմաններում Բաքվի բնակչության թիվը հիմնականում ավելանում էր մեխանիկական աճի հաշվին: 1883 թ. դրությամբ քաղաքի բնակչության թիվը, կարուկ աճելով, հասնում էր 50000-ի[399]:

1886 թ. «Ընտանեկան ցուցակների» տվյալներով՝ 86611 (54823 ար., 31768 իգ.) բնակչության մեջ հայերի թիվը 24490 էր (17483 ար., 7007 իգ.)՝ կազմելով ամբողջի 28,3%-ը, ռուսներինը՝ 21390 (12370 ար., 9020 իգ.)՝ 24,7%, կովկասյան թաթարներինը՝ 37530 (22974 ար., 14556 իգ.)՝ 43,3%, լեհերինը՝ 1093 (786 ար., 307 իգ.)՝ 1,3%, գերմանացիներինն ու անգլիացիներինը՝ 1717 (979 ար., 738 իգ.)՝ 1,99%, հրեաներինը՝ 391 (231 ար., 160 իգ.)՝ 0,005%[400]: Թաթերի թիվը Բաքվի գավառում կազմում էր 44989 (24568 ար., 20421 իգ.) մարդ[401]: 1873 թ. և 1886 թ. տվյալների համադրումից պարզվում է, որ չուրջ 13 տարում Բաքվի բնակչության թիվն ավելացել էր 71506-ով: Այդ թվում՝ հայերի թիվն ավելացել էր 23743 մարդով:

Ի դեպ, հարկ է նշել, որ 1886 թ. «Կովկասյան օրացույցում», 1871-1874 թթ. վերաբերող վիճակագրական աղյուսակում՝ ռուս վիճակագիրների կողմից Բաքվի նահանգի թյուրքախոս բնակչությունը նշված է նաև «ադրբեջանական թաթարներ» (բնագրում՝ «адербейджанские татары») անվամբ[402], ինչը, մեղմ ասած, թյուր ըմբռնումների և քաղաքական չահարկումների տեղիք է տվել ադրբեջանցի պատմաբաններին: Ձգտելով «դիտականորեն հիմնավորել» և «արդարացնել» Արաքսից հյուսիս ընկած տարածքում «Ադրբեջան» անվամբ հանդես եկող «պետության» ներկայիս գո-

---

[399] Տե՛ս **Gulbenkian G.**, նշվ. աշխ., p. 200, տե՛ս նաև նույնի՝ Ապշերոնեաց թերակղզին եւ ռուսաց նաւթը, «Մուրճ», 1891, № 7-8, էջ 903:

[400] Տե՛ս ССДНЗКИПС-1886. Հմմ. Обзор Бакинской губернии за 1888 г., Баку, 1890, стр. 51.

[401] Տե՛ս նույն տեղում: 1888 թ. տվյալների համաձայն՝ Բաքվի գավառի Սարաինսկի տեղամասում թաթերի թիվը կազմում էր 17101 (9280 ար., 7821 իգ.) մարդ (տե՛ս Сборник сведений по Бакинской губернии, вып. I, Списокъ населенныхъ местъ количество земли и податное обложение поселянъ. Издание Бакинскаго губернскаго статистическаго комитета подъ редакцией **А. Н. Терентьева**, Баку, 1911, стр. 2).

[402] Տե՛ս КК на 1886 г., Тифлис, 1885, стр. 214.

յուրյան իրավունքը՝ այդ «պետականության» պատմության «հնացման» նպատակով «ադրբեջանական ժողովրդի էթնոգենեզի» հարցերին նվիրված «աշխատություններում»[103], խեղաթյուրելով և բռնապրուսիկ կերպով ներկայացնելով փաստերը, XIX դարի երկրորդ կեսի և XX դարասկզբի վիճակագրական նյութերում հանդիպող «ադրբեջանցի» տերմինին փորձ է արվում տալ «էթնիկ» իմաստավորում[104]: Մինչդեռ տարաժամանակյա փաստերի համադիր քննությունը ցույց է տալիս, որ խնդրո առարկա «ադրբեջանցի» տերմինը ռուս վիճակագիրները գործածել են աշխարհագրական տեղանվան նշանակությամբ և նկատի են ունեցել Իրանի Ատրպատականի-Ադրբեջան նահանգից Արևելյան Այսրկովկաս ներխուժած թյուրք-թաթարական ցեղերի այն ստվար հատվածը, որը տեղափոխված երկրի անունով անվանել են ատրպատականցիներ-ադրբեջանցիներ[105]:

---

[103] Տե՛ս К проблеме этногенеза азербайджанского народа (сборник статей), Баку, 1984; **Гейбуллаев Г.**, К этногенезу азербайджанцев, т. I, Баку, 1991.

[104] Այդ մասին տե՛ս Չորաքյան Պ., Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, էջ 33-37:

[105] Արևելյան Այսրկովկասում մինչև 1918 թ. բնավ գոյություն չի ունեցել *Ադրբեջան* անվամբ պետություն՝ առավել ևս *ադրբեջանցի* ինքնանվամբ «էթնոս», իսկ մինչև 1930-ական թվականների վերջերը *կովկասյան թաթարների* և *թյուրքերի* պարսկագետ աշխատանական գրականության մեջ չի գործածվել «ադրբեջանցի» տերմինը: Հետևաբար, XIX դ. կեսերի վիճակագրական նյութերում *թաթար* էթնանունը բնութագրող՝ *ադրբեջանական* տերմինը բացարձակապես կապ չունի ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունում բնակվող *ադրբեջանցիներին*: Ըստ հունգարացի արևելագետ Հերման (Արմինիուս) Վամբերիի՝ «...այսօրվա Անդրկովկասի թուրք բնակչության ստվար մասը անկասկած հարավից է եկել հյուսիս. այսինքն՝ նրանք ներկայացնում են Ազրբայջանից (Ատրպատականից – Գ. Ս.) ու Կասպից ծովի հարավային ափերից ելած այն թուրք հրոսակների բեկորները (ընդգծումը մերն է - Գ. Ս.), որոնց դեպի Կովկաս են նետել քաղաքական դեպքերը սելջուկների երևալուց սկսած մինչև Ռուսաստանի ամբողջական սիբիրպետությունը...» (**Vambery H.**, Das Türkenvolk (Ethnologischen und Ethnographischen Beziehungen), Leipzig, 1885, S. 571, նույնի՝ Իրանեան թուրքեր կամ ազըրբէյջաններ, «Մուրճ», Թիֆլիս, 1905, № 11-12, էջ 107): Այս հատվածը ամրապնդվում է նաև այլ աղբյուրի վկայությամբ: Կովկասագետ Լ. Զագրուսկու պարզաբանմամբ՝ «Ադրբեջանական թաթարները. ինչպես ցույց է տալիս նրանց իսկ անվանումը, եկել են իրանական Ադրբեջան նահանգից» (**Загруский Л.**, Этнологическая классификация Кавказских народов (б. м. и г.), стр. 10). «Кавказский календарь» տարեցույցում, իրանական Ադրբեջանից արևելակովկասյան շրջաններում բյուրքական ցեղերի գաղթի փաստի առնչությամբ ասվում է. «Բաքվում, և առհասարակ Բաքվի նահանգում, ամենից շատ բնակվում են ադրբեջանական թաթարներ (ընդգծումը մերն է - Գ. Ս.): Նրանք պատկանում են մոնղոլական ռասային և թյուրքական սերնդին: Աջակցություն ստանալով պարսից շահերի կողմից՝ նրանք նախորդ հարյուրամյակում Ադրբեջանից տեղափոխվեցին Այսրկովկասի հարավարևելյան

Արդյունաբերության բազմարնույթ ճյուղերի համընդհանուր զարգացմամբ, XIX դարի երկրորդ կեսից և հատկապես դարավերջին, Բաքուն արդեն առևտրաարդյունաբերական միջազգային խոշոր քաղաք էր, ուր կարելի էր հանդիպել ամեն ազգի ներկայացուցչի: Ալ. Շիրվանզադեն 1885 թ. «Արձագանք» շաբաթաթերթում տպագրած իր «Բաքու» ակնարկաշարում, պատմելով Բաքվի մեծ վերելքի մասին, գրել է. «Ոչ միայն Կովկասում, այլև Ռուսաստանի մէջ ներկայումս Բագու քաղաքը վայելում է մի բնդհանուր հռչակ, որը հազիւ թէ երբ և իցէ վիճակուած է նոյնի վայելկու Կովկասի մի ուրիշ քաղաքին: Այդ փոքրիկ ծովեզրեայ աննշան աւանը, որը մի քառասուն տարի առաջ հազիւ իւր մէջ պարունակել է մի քանի հարիւր տուն բնակիչ, այսօր ներկայացնում է Կովկասում մի կենտրոն, ուր ուղղուած է տնտեսական աշխարհի հայացքը: Որ րոպէ օրէ տնտեսական գործունեայով, համաշխարհային քարտէզի վերայ Բագուն արագութեամբ սկսում է վայելել առաջնակարգ քաղաքի տեղը: Յիրաւի, ով որ քառասունական թուականներին տեսել է այդ քաղաքը, որ այդ ժամանակ յայտնի է եղել նորանով միայն, որ ծառայել է իբրև աքսորատեղի Անդրկովկասի զանազան կողմերի յանցաւորների համար, այսօր չէ կարողանում չը զարմանալ, տեսնելով այդ ժամանակուայ գիւղաքաղաքի տեղ մի նշանաւոր նահանգական քաղաք յիսուն հազար բնակիչներով»[406]*: 1887 թ. տվյալների համաձայն՝ քաղաքի բնակչության թիվը կազմում էր 64000*[407]*:*

մաս և ծովամերձ շրջան՝ Բաքվից մինչև Դերբենդ» (КК на 1908 г., Тифлис, 1907, стр. 71). Հարկ է նշել, որ Բաքվի քաղաքա- յին վարչության վիճակագրական բյուրոյի՝ 1904 թ. հրատարակած տեղեկագրում «աղրբեջանական բաթարները» հստակ կերպով տարանջատված են կովկասյան բաթարներից. «Татары адербейджанские (иранского типа), персидские и кавказские» (Статистическое бюро Бакинской городской управы, стр. 102): Ս. Պետերբուրգում լույս տեսած «Հանրագիտարանային բառարանի» հեղինակներ Ֆ. Բրոքհաուզենն ու Ի. Եֆրոնը հետևյալ բնութագրումն են տվել իրանական Աղրբեջանից այսրկովկասյան տարածաշրջան ներթափանցած բաթարներին. «Կիսաքոչվոր կյանքով ապրող այսրկովկասյան բաթարները վրիժառու են ու տգետ, հակված են խաբեբայության, գողության ու կողոպուտի, հատկապես քոչի ժամանակ: Նկատելի չափով մեղմ են նստակյաց և հատկապես քաղաքաբնակ բաթարների բարքերը, որոնք կրում են պարսկական ուժեղ ազդեցությունը» (Энциклопедический словарь, т. XIII^{A}, стр. 838). Ավելի հանգամանորեն տե՛ս Ասատրյան Գ., Գևորգյան Ն., Աղրբեջան. յուրացման սկզբունքը և իրանական աշխարհը, Երևան, 1990, Էնաեթոլյան Ռեզա, Ազարբայջան եւ Առան (Կովկասեան Ալբանիա), Երեւան, 1994, Ստեփանյան Գ., Արևելյան Այսրկովկասում «աղրբեջանցի» էթնանվան գործառման հարցի շուրջ, էջ 137-144:

[406] Ա. Մ. [Ալեքսանդր Մովսիսյան], Բագու, «Արձագանք», Թիֆլիս, 1885, հուլիսի 28, (I) № 4, էջ 52:

[407] Տե՛ս Кавказ: справочная книга, сост. старожилом, Тифлис, 1887, стр. 27.

Բաքու քաղաքի՝ 1889 թ. էթնոժողովրդագրության վերաբերյալ ուշագրավ տվյալներ է պարունակում Թիֆլիսում հրատարակված «Բաքուն և նրա շրջակայքը» գրքույկը: Այսպես՝ ոստիկանական բաժանմունքի կողմից անցկացված հաշվառման համաձայն՝ քաղաքի բնակչության թիվը կազմում էր 92600, որից, ըստ դավանանքի, շիա մահմեդականները՝ 39508 (գլխավորապես թաթեր), հայերը՝ 25897, ռուսները՝ 22693, ռուս մոլոկանները և այլ աղանդավորներ (սրիգուն, դուխոբոր, հնածնա, նեռքինի և այլն)՝ 970, կաթոլիկները՝ 1211, լյութերականները՝ 1919, հրեաները՝ 402[408]: Աննշան թիվ էին կազմում վրացիները: Ընդ որում, գրքույկում նշված է, որ շիա մահմեդականների գերակշռող մեծամասնությունը իրանական ծագում ունեցող թաթեր են՝ կազմելով ամբողջ բնակչության 3/5-ը և խոսում են ոչ թե թյուրքերեն, այլ նոր պարսկերեն, իսկ 1/5-ը թաթարներն են: Այսինքն՝ 39508 շիա մահմեդականներից թաթեր էին 29631-ը, իսկ 9877-ն ունեին թյուրքական ծագում: Եթե նկատի ունենանք գրքույկում նշված այն փաստը, որ թաթարների մի մասն էլ «մինչև այժմ իրենց անվանում են մողալներ, այն է՝ մոնղոլներ», ապա 1889 թ. ներկայիս Ադրբեջանի մայրաքաղաքում բնակվում էր մոտ 7000 կովկասյան թաթար, որոնք կազմում էին (92600) բնակչության 7-8%-ը[409]: Այստեղից հետևում է, որ XIX դ. 80-ական թվականների վերջերին Բաքվում, թաթերից հետո, երկրորդ տեղը զբաղեցնում էին հայերը: Բաքվի շրջակայքում բնակչության թիվը 58578 էր, որից հայ՝ 2083[410]:

Բաքու քաղաքի ժողովրդագրական վիճակի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է պարունակում ոստիկանական ծառայության կողմից նույն քաղաքում և արդյունագործական-գործարանային շրջանում ըստ էթնոդավանական և սեռատարիքային պատկանելության 1890 թ. անցկացված վիճակագրությունը[411], որն ուներ հետևյալ պատկերը[412].

---

[408] Տե՛ս Баку и его окрестности, Тифлис, 1891, стр. 63.
[409] Տե՛ս նույն տեղում, стр. 64-65:
[410] Տե՛ս նույն տեղում, стр. 63.
[411] Էթնոդավանական խմբերի հաջորդականությունը տրված է ըստ նրանց թվի նվազման սկզբունքի:
[412] Տե՛ս Բագուից, «Նոր-դար», Թիֆլիս, 1890, դեկտեմբերի 14, № 199:

Աղյուսակ № 2

Ռուն քաղաք	Չափահաս		Անչափահաս		Բնակչ. ընդհ. թիվը
	ար.	իգ.	ար.	իգ.	
Մահմեդական	13150	13135	8523	9881	44689
Հայադավան (առաքելական)	10346	9035	4384	3842	27607
Հունադավան (օրթոդոքս)	8426	7122	4060	4069	23677
Մոլոկան	606	673	563	589	2431
Լյութերական	645	605	372	410	2032
Կաթոլիկ	602	445	275	278	1600
Հրեա	336	263	253	280	895
Պրիգուն[413]	35	48	35	44	245
Բապտիստ[414]	23	27	10	12	72
Ներքինի	23/25	-	-	-	48
Ընդամենը	34222	31377	18475	19424	103296

Աղյուսակում բերված թվերից կրևում է, որ բուն քաղաքի 103.296 բնակչությունից հայերի թիվը կազմում էր 27607:

Աղյուսակ № 3

«Սև» քաղաք	Չափահաս		Անչափահաս		Բնակչ. ընդհ. թիվը
	ար.	իգ.	ար.	իգ.	
Հունադավան (օրթոդոքս)	1392	833	415	283	2923
Հայադավան (առաքելական)	1035	98	41	37	1211
Մահմեդական	1027	7	18	5	1057
Լյութերական	137	134	53	69	393
Մոլոկան	57	38	18	14	127
Պրիգուն	20	18	15	19	72
Կաթոլիկ	33	10	5	5	53
Հրեա	28	12	4	6	50
Ընդամենը	3909	1150	569	438	5886

---

[413] XIX դ. 30-40-ական թվականների մոլոկանությունը տրոհվել է զանազան ճյուղերի, որոնցից է ցատկողների (պրիգուններ) աղանդը: Հիմնադիրն է Մաքսիմ Ռուդոմյոտկինը: Իրենց արարողությունների ժամանակ նրանք ցատկոտում են և երգում հոգևոր երգեր՝ համոզված լինելով՝ ով երկար դիմանա դրան, նա էլ կլինի ընտրյալը (տե՛ս **Дингельштедт И.**, Закавказские сектанты в их семейном и религиозном быту, СПб., 1885, стр. 158-183). Ի դեպ, ռուս աղանդավորների համայնքը Բաքվում կազմավորվել է 1859 թ. սկսած (տե՛ս **Волкова Н.**, Этнические процессы в Закавказье в XIX-XX вв., Этнические процессы в Закавказье в XIX-XX вв., «Кавказский этнографический сборник», № 4, Москва, 1969, стр. 7).

[414] Բապտիզմը (մկրտչականություն) բողոքականության տարատեսակ է: Առաջացել է XVII դարի սկզբին՝ Հոլանդիայում, այնուհետև տարածվել Անգլիայում, Ռուսաստանում և այլուր: Բապտիստները չեն ընդունում սրբապատկերները, սրբերին և խաչելությունը (տե՛ս Атеистический словарь, Москва, 1985, стр. 48).

Աղյուսակում ներկայացված թվերը վկայում են, որ արդյունագործական-դործարանային շրջաններում 5886 բնակիչներից հայերի թիվը կազմում էր 1211: Այսպիսով՝ «Սև» և «Սպիտակ» քաղաքների 109.182 բնակիչներից հայեր էին 28818-ը՝ կազմելով ամբողջ բնակչության 26,4%-ը: Երբ այս տվյալները համեմատում ենք 1886 թ. վիճակագրական տվյալների հետ, պարզվում է, որ, սկսած XIX դարի 80-ական թվականների կեսերից, քաղաքում հայ բնակչության թվի կանոնավոր աճ է նկատվել, թեև այն երբեմն փոփոխվել է: Նկատենք, որ վերոնշյալ ցուցակները կազմված են ըստ դավանանքի, թեև լյութերականների ու կաթոլիկների մեջ եղել են նաև որոշ թվով հայեր: 1890 թ. հայ բնակչության թվի վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում նաև Մակար եպս. Բարխուտարյանցը, ըստ որի՝ այդ ժամանակ քաղաքում գործող երկու եկեղեցիները (Սբ. Աստվածածին, Սբ. Գրիգոր Լուսավորիչ) միասին ունեցել են 2000 ծուխ՝ 7337 (3502 ար., 3835 իգ.) բնակչով: Դրանից բացի՝ եղել են նաև 3000 պանդուխտներ, որոնք աշխատել են նավթահորերում կամ էլ կատարել են տարաբնույթ աշխատանքներ[415]: 1890 թ. Բաքու քաղաքի հայ բնակչության թվի վերաբերյալ վիճակագրական համանման տվյալներ է հրապարակել նաև Շամախու հայոց թեմի 1887-1894 թթ. առաջնորդ Մեսրոպ արքեպ. Սմբատյանցը, ըստ որի՝ 1890 թ. քաղաքի հայ բնակչությունն ունեցել է 2210 տուն, իսկ շնչերի թիվը հասել է 8126-ի[416]: Հարկ է նկատել սակայն, որ թե՛ Մակար եպս. Բարխուտարյանցի, թե՛ Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի կողմից վերը բերված տվյալները խիստ թերի են: Ջլետք է անտեսել այն իրողությունը, որ XIX դարի 80-ական թվականների վերջերին, Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններից զգալի արտահոսքի հետևանքով, քաղաքի հայ բնակչությունը հաստատուն աճ է ունեցել: Միայն Երևանի, Սուրմալուի և Նախիջևանի գավառներից 1891 թ. արտագնացության էր ելիմել 4546 մարդ[417], իսկ Նոր Բայազետի գավառից՝ 1890 թ.՝ 195, 1891 թ.՝ 550 մարդ[418]: Կարելի է կարծել, որ վերոնշյալ հեղինակները նկատի են ունեցել միայն տեղաբնիկ բնակիչներին:

---

[415] Տե՛ս Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 153:
[416] Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 138:
[417] Տե՛ս Համբարյան Ա., նշվ. աշխ., էջ 25:
[418] Տե՛ս **Заваров С.**, Опыт исследования сельскохозяйственного хлебородного района Эриванской губернии и Карсской области, Тифлис, 1899, стр. 285.

Բաքու քաղաքի բուռն զարգացման հետևանքով նկատելիորեն աճեց նրա բնակչության թիվը, որը; ըստ 1891 թ. տվյալների, արդեն հասնում էր 107.215-ի (61640 ար., 45575 իգ.)[419]: Արտաքնապես փոխվել էր նաև Բաքուն: «Քաղաքը, մանաւանդ այս վերջին տասը տարում,- գրում է «Տարազը»,- այնքան է կերպարանափոխուել, որ կարելի է ասել նորից է կառուցուած: Երեք-չորս յարկանի քարաշէն տներ, գեղեցիկ փողոցներ, լայն մայթեր, սիրուն հրապարակներ, պարսկական քաղաքի դրոշմը ջնջել են տալիս»[420]:

Արևելյան Հայաստանի գյուղացիության՝ Բաքու և այլ քաղաքներ արտագնացությանը նոր թափ հաղորդեց 1892-1894 թթ. տվը: Միայն երեք գավառներից (Երևանի, Սուրմալուի և Նախիջևանի) 1892 թ. արտագնացության դիմեց 4655 մարդ[421]: Ըստ Ս. Զավարյանի հաշվարկների՝ 1892 թ. Նոր Բայազետի գավառից մեկնեց 1171 մարդ[422]: «Արձագանքում» վկայակոչված մի տվյալի համաձայն՝ 1892 թ. ապրիլի սկզբներին հայ բնակչության թիվը Բաքվում արդեն հասնում էր մոտ 30000-ի. «Բագու քաղաքի բնակիչներից գրեթէ 30,000 հոգի հայ են, որոնք ունին մի եկեղեցի և մի հին մատուռ»[423]:

Բաքվի բազմազգ բնակչության, այդ թվում նաև հայերի թվի նվազման պատճառ դարձավ 1892 թ. հունիսի 6-ից բռնկված համաճարակը[424]: Խոլերան, որ եկել էր Իրանից, արագորեն տարածվեց նաև Այսրկովկասի գրեթե բոլոր վայրերում[425]: Բաքվում սկսված խոլերան տարածվեց քաղաքի երրորդ մասում, որտեղ մեծ թվով բանվորներ էին ապրում[426]: Խոլերային զոհ գնաց հատկապես աղքատ խավը, որը չուներ նյութական անհրաժեշտ միջոցներ համաճարակից պաշտպանվելու համար: «Խոլերան...,- գրել է Լեոն,- կոտորում էր... կոտորվում էր բացառապէս աղքատ մարդկութիւնը: Մահերը դիակների վրայ մարմնացրել էին աշխարհի հին, ալևոր իմաս-

---

419 Տե՛ս Обзор Бакинской губернии за 1891 г., Баку, 1893, стр. 24-27.

420 Մի քանի օր Բագուում, «Տարազ», Թիֆլիս, 1891, մարտի 24, № 11, էջ 163:

421 Տե՛ս Համբարյան Ա., նշվ. աշխ., էջ 25:

422 Տե՛ս **Заваров С.**, նշվ. աշխ., стр. 285.

423 Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1892, ապրիլի 12, № 12:

424 Շամախիի նահանգում խոլերայի համաճարակ բռնկվել էր նաև 1846 թ. հոկտեմբերին, որը տևել էր մինչև հաջորդ տարվա ապրիլը: Համաճարակը ընդգրկել էր Շամախին, Բաքուն, Սալիանը և Թալիշը: Միայն Բաքվում վարակվել էին 1056 հոգի, որից 53-ը մահացել (տե՛ս «Կովկաս», Տիխիս, 1847, հուլիսի 12, № 28):

425 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 639, թ. 44, տե՛ս նաև Գաբրոյեանց Ն., նշվ. աշխ., էջ 101:

426 Տե՛ս Արասխանեանց Ա., Խոլերան եւ հասարակութիւնը, «Մուրճ», 1892, № 6, էջ 997:

տուֆիներ. «չունիս փող, մարի հող»: Աղքատութիւնը մենակ էր մնացել իր սրտի ու մտքի հետ: Եւ կոտրվում էր...»[427]: *Աղետի առաջին իսկ օրերից Բաքվի Հայոց Ազգային Դուման ակտիվ միջոցառումների ծրագիր է մշակում՝ չմոռանալով ներգրավել նաև բարեգործական ընկերութիւնները ու անհատ բարեգործներին: Խոլերայի համաճարակի ժամանակ քաղաքի հայ հոգևորականութիւնը նույնպես մասնակցեց աղետի հաղթահարմանը: Մոլեգնող համաճարակի դեմ կանխարգելող աշխատանքներ տանելու նպատակով Բաքվի նահանգապետի որոշմամբ նահանգի մասշտաբով ստեղծվում է Առողջապահութեան հատարակական կոմիտե՝ Եղիշե ավ. քհն. Գեղամյանցի նախագահութեամբ, որը բնակչութեան համար չափազանց ծանր այդ չրջանում ամենայն պատասխանատվութեամբ կատարեց իրեն վստահված գործը*[428]:

Համաճարակի հետևանքով ժողովուրդը սարսափահար թողնում էր Բաքուն և փախչում Վրաստան, Շուշի, Զանգեզուր՝ ուր պատահեր: Ինչպես հայտնի է ժամանակի մամուլը, Բաքուն մի քանի օրում դատարկվում է[429]: *Հայ բնակիչների կեսից ավելին հեռացավ քաղաքից և հաստատվեց նահանգի գավառներում, Արցախի և Զանգեզուրի տարբեր դյուղերում: «Տարազ» ամսագրի վկայութեամբ՝ «Բադւի բնակիչների կէսից աւելին արդէն թողել են իրանց քաղաքը և հեռացել: Մեծագոյն մասը նրանցից գնացել է Շուշի քաղաքը և Ղարաբաղու և Զանգեզուրի գիւղօրայքը»*[430]: *Ռուս բանվորութեյունը հեռացավ գլխավորապես Աստրախան և Ռուսաստանի եվրոպական մասը*[431]: *«Հռչակաւոր Բաքուն,- գրում էր «Մուրճը»,- որ այս վերջին երկու տասնեակ տարիներում աճել էր մինչ 120,000 բնակիչների, դատարկուեց արագ կերպով այնպէս, որ, ամիս չանցած, նորա մէջ մնացին, որպէս պնդում են, միայն երկու տասնեակ հոգի»*[432]: *Քաղաքից փախչող ժողովրդի միջոցով խոլերան տարածվեց նաև նահանգի գավառներում. «Եւ ամեն տեղ, ուր խոլերայի ստորակէտ-բացիլաններով վարակւած բաքւեցիք անարգել մուտք գործեցին, վարակւեց և հիւանդութեան նոր բոյն դառաւ»*[433]: *«Գեոքչայի հա-*

---

[427] Տե՛ս Լէօ, Ազատամարտիկ, Բաքու, 1893, էջ 5:
[428] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 10, թ. 2:
[429] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1892, հունիսի 11 № 68:
[430] «Տարազ», Թիֆլիս, 1892, հունիսի 21, № 23, էջ 334-335:
[431] Տե՛ս Աբասխանեանց Ա., Խոլերան եւ հասարակութիւնը, «Մուրճ», Թիֆլիս, 1892, № 6, էջ 997:
[432] Նույն տեղում:
[433] Նույն տեղում:

յարնակ գյուղերում, ուր փախել էին բապտեսիք, մեծամասնութիւնն այսօր վարակուած է խոլերայով»[434],- գրում է «Արձագանքը»: Բաքվում հիվանդացածներից 77,7 %-ը մահանում էր: Միջին թիվով` ամեն օր 45 հիվանդից մահանում էր 34-ը, նահանգում՝ 105-ից 71-ը[435]: Մահացողների թիվը հունիսի վերջերին հասավ օրական մինչև 280 հոգու[436]: Պաշտոնական տվյալների համաձայն՝ Բաքվում հունիսի 6-ից օգոստոսի 1-ն վարակվել էին 2501-ը, որոնցից մահացել էին 1934-ը, նահանգում հունիսի 17-ից օգոստոսի 1-ը արդեն հիվանդացել էր 4714 հոգի և մահացել 3210-ը[437]: Միայն օգոստոսի 6-20-ը ընկած ժամանակահատվածում Բաքվում մահացավ 996, Բալախանիում՝ 37 մարդ[438]: Հուլիսի 2-ի դրությամբ 100.000-ի հասնող բնակչությունից քաղաքում մնացել էր մոտավորապես 20000-ը[439]: Նահանգային բժիշկ Գոգիլովի հավաստմամբ՝ համաճարակի տարածմանը նպաստել են մահմեդականների մի շարք սովորույթներ. «...ի միջի այլոց այն սովորութիան չնորհիւ, որ խոլերայից մեռածի հագուստը բաժանում են աղքատներին և այն մոլլաներին, որոնք հանգուցեալի գլխին Ղուրան են կարդացել»[440]: Ընդհանուր առմամբ, հունիսի 6-ից նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում Բաքվի նահանգում հիվանդացել էր 20223 և մահացել 11639 հոգի, որից Բաքվում և գավառում հիվանդացել էր 7700-ը և մահացել 4130-ը: Միայն Բաքվում հիվանդացել էին 2476-ը և մահացել 1815-ը[441]:

Համաճարակն աստիճանաբար տեղի է տվել սեպտեմբերին[442]: Բաքվում բռնկված համաճարակին հաջորդեցին տարափոխիկ հիվանդութիւններ՝ ծաղիկ, դիֆթերիա, քութեչ, տրախոմա և այլն: Առանձնապես մարդկային մեծ զոհեր է տվել բնական ծաղիկը, որը չատ հաճախ համաճարակային բնույթ է կրել՝ անարգել տարածվելով և վարակելով հարյուրավոր մարդկանց: «Արձագանքի» վկայութիամբ՝ «Խոլերայից յետոյ հազիւ Բագուն փոքր-ինչ չունչ էր քա-

---

[434] «Արձագանք», Թիֆլիս, 1892, օգոստոսի 5, № 90:
[435] Տե՛ս նույն տեղում, օգոստոսի 16, № 95:
[436] Տե՛ս Արասխանեանց Ա., Խոլերան եւ հասարակութիւնը, «Մուրճ», 1892, № 6, էջ 997:
[437] Տե՛ս նույն տեղում:
[438] Տե՛ս «Тифлисский листок», Тифлис, 1892, 2 июля, №151.
[439] Տե՛ս նույն տեղում:
[440] «Արձագանք», Թիֆլիս, 1892, դեկտեմբերի 9, № 143:
[441] Տե՛ս նույն տեղում, դեկտեմբերի 20, № 148:
[442] Տե՛ս «Тифлисский листок», Тифлис, 1892, 1 сентября, № 200.

չկ. բնակվել իւր սովորական բնմացքի մէջ՝ բնակիչներն, բոլորը հաւաքուել էին», երբ պատմ բարձրացրին համաճարակային տարբեր հիվանդութիւններ[443]: Միայն 1893 թ. դեկտեմբերի դրութեամբ հիվանդացել էր 204 հոգի, որից մահացել էին 65-ը[444]:

Փաստերը վկայում են, որ, համաճարակներից բացի, Բաքվի հայ բնակչութիւնը մնծապես տուժել էր նաև բուն քաղաքում և հատկապես արդյունագործական-գործարանային շրջաններում մեկը մյուսին հետևող հրդեհներից[445]: «Կովկասի ոչ մի քաղաքում այնքան հրդեհներ տեղի չեն ունեցել, որքան Բագուում»[446],- ասված էր 1904 թ. «Լոյս պատկերազարդ օրագոյցում»: Այսպես՝ 1880 թ. փետրվարի վերջերին քաղաքի կենտրոնական մասում բռնկված հրդեհի պատճառով այրվել է Լալայանցներին պատկանող խանութների չարքը[447]: Ուշադրութեան է արժանի հատկապես 1895 թ. հունվարի 30-ին քաղաքի կենտրում բռնկված հրդեհը, որի հետևանքով «քաղաքի գարդ» համարվող Քալանթարյան եղբայրներին պատկանող եռահարկ «Պասաժն»[448] ամբողջովին հրո ճարակ է դարձել[449]: «Մշակը» տպավորիչ է ներկայացնում հրդեհը. «Պասաժը՝ քաղաքի զարդը, ամենալաւ մագազինների այդ գեղեցիկ չարքը՝ ամբողջովին կլանված էր կրակի բոցերի մէջ: Հրդեհը այնպէս արագ կերպով տարածվեց պասաժի մի ծայրից միւս ծայրը, որ համեմատաբար շատ քիչ բան կարողացան ազատել»[450]: Ամբողջովին այրվեցին Քալանթարյաններին պատկանող խանութները (վնասի չափը կազմում էր 185.000 ռ.): Հրդեհի բոցերը կլանեցին նաև պասաժի հարևանութեամբ գտնվող Մալխասյանների տունը[451]:

---

[443] Տե՛ս Տէր-Գրիգորեան Գ., Բագու, «Արձագանք», Թիֆլիս, 1892, հոկտեմբերի 2, № 114:

[444] Տե՛ս «Кавказ», Тифлис, 1894, 25 ноября, № 23.

[445] 1891 թ. տեղի է ունեցել 69 հրդեհ՝ պատճառելով 276.650 ռ. վնաս, 1894 թ. 47 հրդեհ՝ 164.345 վնասով, 1897 թ. 65 հրդեհ՝ 896,920 ռ. վնասով (տե՛ս Թոփչեան Ե., «Լոյս պատկերազարդ օրագոյց հանդէս» 1904 թ., էջ 408-409):

[446] Թոփչեան Ե., Լոյս պատկերազարդ օրագոյց հանդէս 1904 թ., էջ 408:

[447] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1880, հունվարի 31 (փետրվարի 12), № 13:

[448] Պասաժ (ֆրանսերեն passage՝ անցում): Պասաժը երկու կողմերից զետեղված խանութներ կամ վաճառասեղանաներ և միջով հաճախորդների անցնելու միջանցք ունեցող ծածկված երկար շինություն է: Ունի առանձին ելք ու մուտքով սրահ և վաճառաշարք (տե՛ս Մարգարյան Ա., Հայրապետյան Ա., Օտար բառերի բացատրական բառարան, Երևան, 2004, էջ 325-326):

[449] Տե՛ս Բագուեցի, Բագու, «Արձագանք», Թիֆլիս, 1895, փետրվարի 1, № 3, տե՛ս նաև փետրվարի 12, № 14:

[450] Տէրեան Ստ., Նամակ Բագուից, «Մշակ», Թիֆլիս, 1895, փետրվարի 2, № 13:

[451] Տե՛ս նույն տեղում:

Թեպետ XIX դարի վերջին լուն քաղաքում և արվարձաններում (Բախիով, Սաբունչի, Բալախանի, «Սև քաղաք») արդեն սակաբացել էր հայերի թիվը, սակայն քաղաքը դեռևս պահվում էր ընդամենը մեկ ծխատեր քահանայի հովվությանն ներքո, որի պատճառով մկրտությունների և այլ արարողությունների ժամանակ դժվարություններ էին առաջանում: Քաղաքի հայ բնակչությունը ծխական համայնքների միջև բաժանվից ինմի առաջնորդ Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի նախաձեռնությամբ: «Այգքան ժողովրդի հոգևոր սյաւը քաղաղը պէտք է լինի հոգևոր հովիւը, բայց Բաւում գժբախտաբար խնդճերը զրկուած են նոյն իսկ ամենաանհրաժեշտ հոգևոր մխիթարանքից: Վատուց հայտնի է, որ քաղաքի հայ ժողովուրդը ծխի չէ բաժանուած, ամբողջ Բաւում մի մեծ ծուխ է մի քանի քահանաներով, որոնց թիւը բաւական չէ ամբողջ ժողովուրդը հովուելու»[452],- գրում էր այդ օրերին «Արձագանք» շաբաթաթերթը: 1893 թ. ապրիլի 7-ին, ծխաբաժանության[453] կամ թաղաբաժանության վերաբերյալ կազմված կանոնադրության համաձայն, քաղաքի հայ բնակչությունը բաժանվեց ծխական վեց թաղերի, որոնցից յուրաքանչյուրին պարտավոր էր սպասարկել մեկական քահանա: Բացի դրանից՝ ծխատեր յուրաքանչյուր քահանա պարտավոր էր կազմել բնակչության շարժընթացի վերաբերյալ ամենշաբաթյա ցուցակագրություն և ներկայացնել ինմի առաջնորդին՝ ի հաստատումն[454]: Ըստ այդմ՝ առաջին թաղում (440 տուն) բնակչության հովվությունն ստանձնեց Ղևոնդ քհն. Տեր-Աստվածատրյանը, երկրորդում (346 տուն)՝ Մեսրոբ քհն. Տեր-Ոսկանյանցը, երրորդում (376 տուն)՝ Խորեն ավ. քհն. Միրզաբեկյանցը, չորրորդում (390 տուն)՝ Գրիգոր քհն. Գրիգորյանցը, հինգերորդում (417 տուն)՝ Եղիշե ավ. քհն. Գեղամյանցը և վեցերորդում (350 տուն)՝ տեր Աբգարը[455]: Վերը բերված թվերի ամփոփումից պարզվում է, որ քաղաքում, 1893 թ. ապրիլի դրությամբ, հայապատկան տների թիվը 2319 էր (1893 թ. հունվար-մարտ ամիսների դրությամբ այդ թիվը կազմում էր 2178 և նվազել էր 141-ով)[456]: Այդ ամենից զատ՝ կային նաև առանց ընտանիքի արտագնա աշխատանքի եկած 5000 հայեր, որոնց կոչում էին

---

[452] «Արձագանք», Թիֆլիս, 1893, հունվարի 3, № 2:
[453] Բաբվում առաջին ծխաբաժանությունը կատարվել էր 1888 թ. գարնանը (տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1892, մարտի 1, № 26):
[454] Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 391:
[455] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1894, փետրվարի 26, № 24:
[456] Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 372:

կրպակարնակներ[457]: Նշված ծխատրաժանութիւնը որոշ հնարավորութիւն է տալիս կատարելու տնդի հայ համայնքի բնակչութեան թվի վերարերեալ հետևեալ հաշվարկները: Եթե յուրաքանչիւր ծխում միջին հաշվով 4-5 չունչ հաշվվի, ստացվում է, որ Բաքուն այդ ժամանակ ուներ շուրջ 9276-11595 մշտաբնակ հայ բնակիչ: Եվ եթե այդ թվին էլ դումարենք 5000 կրպակարնակների, ապա քաղաքի հայ բնակչութիւնը պիտի լիներ 14276-16595 մարդ: Թվանճի նման ցածր մակարդակի պատճառը, անտարակուսս, պայմանավորված էր 1892 թ. հունիսին բռնկված խոլերայով, որի հետևանքով եղան մեծ թվով մահացութիւններ և բնակչութեան զանգվածային արտահոսք: Որպես օրինակ, եթե համադրենք 1890 (28818) և 1893 (14276-16595) թթ. տվյալները, ապա ստացվում է, որ հայերի թիվը նվազել էր 14542-12223-ով:

Բաքվի հայ, ինչպես նաև ամբողջ բնակչութեան աճը խթանվից մոնեդնող համաճարակի կանխարգելումից հետո ստեղծված սանիտարահիգիենիկ, սոցիալ-տնտեսական բնականոն պայմանների շնորհիվ: Ս. Էփրիկյանի բերած տվյալների համաձայն՝ 1893 թ. վերջերին քաղաքի 87704 (55609 ար., 32095 իգ.) բնակչութիւնից հայերի թիվն արդեն 25583 էր (18269 ար., 7314 իգ.)[458]: Հայ բնակչութեան բարձր աճի հիմնական պատճառը Արևելյան Հայաստանում դեռևս չարունակվող սովն էր, որի հետևանքով հետզհետե մեծանում էր դյուղերից Բաքու և այլ քաղաքներ արտագաղթողների թիվը: Միայն Երևանի, Սուրմալուի և Նախիջևանի գավառներից 1893 թ. տարբեր ամիսներին արտագնացութեան էր մեկնել 5236 մարդ[459]: Ըստ Ս. Զավարյանի հաշվարկների՝ այդ նույն տարում միայն Նոր Բայազետի գավառից մեկնել էր 5236 մարդ[460]: Աղբյուրները վկայում են, որ նշված ժամանակահատվածում, Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններից բացի, Բաքու արտագնա աշխատանքի և մշտական բնակութեան էին մեկնում նաև Ռուսաստանի հայաբնակ գրեթե բոլոր վայրերից. «...այսօր Ռուսաստանի հայաբնակ վայրերից ամենից էլ գաղթականներ կան Բագուում»[461]: Բերված

---

[457] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1894, փետրվարի 26, № 24, տե՛ս նաև Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 395:

[458] Տե՛ս Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 363, տե՛ս նաև Պոտուրեան Մ., Հայ հանրագիտակ, բիւ 2, Պուքրէշ, 1938, էջ 349:

[459] Տե՛ս Համբարյան Ա., նշվ. աշխ., էջ 25:

[460] Տե՛ս Заваров С., նշվ. աշխ., стр. 285.

[461] Բագուայ հայերի ներկան եւ ապագան, «Արձագանք», Թիֆլիս, 1893, ապրիլի 11, № 41:

Թվերն ու փաստերը ցույց են տալիս, որ Բաքվի հայ բնակչության թիվը, ընդհանուր առմամբ, չարունակում էր արագ տեմպերով աճել: Ասվածը հաստակ երևում է «Արձագանքի» 1893 թ. ապրիլին հայտնած հետևյալ տեղեկությունից. «Բագուցի բնակիչների մեծագոյն մասը թուրքեր են, դրանից յետոյ երկրորդ տեղը բռնում են տեղացի և դաղթական հայերը...»[462]: «Արձագանքում» տեղ գտած մի տվյալի համաձայն՝ 1893 թ. նոյեմբերի վերջերին հայ բնակչության թիվը Բաքվում արդեն հասնում էր 35000-ի. «Հայաշատ Բագուն, ուր հայերի թիվը հասնում է 35,000-ի»[463]:

XIX դարի վերջին քաղաքին Բաքուն արդեն համարվում էր բազմազգ քաղաք: Այստեղ հայերից, իրանցիներից, կովկասյան թաթարներից, ռուսներից, ինչպես նաև ավելի փոքր թվով վրացիներից ու հրեաներից բացի, ապրում էին նաև եվրոպական ժողովուրդներ (լեհ, շվեդ, գերմանացի և այլն)[464]: 1897 թ. հունվարի 28-ին (հին տոմարով) անցկացված համառուսաստանյան առաջին մարդահամարի[465] տվյալներով Բաքուն ուներ 111.904[466] (66893 արս., 45011 իգ.)[467] բնակչություն, որից հայ՝ 19099 (12574 արս., 6525 իգ.)[468], կազմելով ամբողջ բնակչության 17,1%-ը: Նույն մարդահամարի տվյալների համաձայն՝ քաղաքի թյուրքալեզու էթնիկ խմբերը[469]

---

[462] Նույն տեղում:

[463] Շամախու թեմական դպրոցի խնդիրը, «Արձագանք», Թիֆլիս, 1893, նոյեմբերի 24, № 137:

[464] Տե՛ս Баку и его окрестности, стр. 72.

[465] 1897 թ. հունվարի 28-ին անցկացված համառուսաստանյան առաջին մարդահամարի նյութերը հնարավորություն են ընձեռում նաև մանրամասն ներկայացնել հայ բնակչության բաշխվածությունն ըստ սեռի, տարիքի, դավանանքի ու մայրենի լեզվի և այլ հատկանիշների: Մարդահամարի թերություններից էր այն, որ բնակչության ազգային կազմի հաշվառումն անտեսվել էր, որը լրացուցիչ դժվարություններ ստեղծեց ուսումնասիրողների շրջանում: Այսօր էթնիկ կազմը որոշելու համար հենվում են մայրենի լեզվին ու դավանանքին վերաբերող տվյալների վրա:

[466] 1897 թ. ոչ պաշտոնական տվյալներով՝ Բաքուն ուներ 112.153 բնակիչ (տե՛ս Ե. Թ. [Եղիշե Թոփչյան], Յուցահանդես - XIV, «Մշակ», Թիֆլիս, 1901, հոկտեմբերի 3, № 218):

[467] Տե՛ս ПВПНРИ-1897, стр. 1, таблица XIII, стр. 53.

[468] Տե՛ս նույն տեղում, таблица XIII, стр. 53:

[469] 1897 թ. մարդահամարի ժամանակ ռուսական պետական վիճակագրությունը թուրք-թաթարներ անվան դիմաց սյունակում նշել է նաև թյուրքալեզու տարբեր խմբերի մեջ մտնող մահմեդական այլ զանգվածներ՝ թաթարներ, ղրղզներ, չուվաշներ, բաշկիրներ, թուրքմեններ, կումիկներ և թյուրքեր (տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 53), ինչի հետևանքով արհեստականորեն աճել է թուրք-թաթարների թիվը (տե՛ս Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և սեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, Երևան, 2002, էջ 159):

(պերակշռում էին թաթարները) կազմում էին 41173 (36,8%), ռուսները՝ 37399 (34,8%), պարսիկները՝ 3369 (3%), գերմանացիները՝ 2460 (2,2%), հրեաները՝ 1905 (1,7%), թաթերը՝ 1072 (0,1%)[470], վրացիները՝ 971 (0,9%), լեհերը՝ 835 (0,7%) մարդ[471]:

Հարկ է նշել, որ Բաքու քաղաքի հայ բնակչության վերաբերյալ 1897 թ. մարդահամարի նյութերի տվյալները էականորեն տարբերվում են նույն թվականի եկեղեցական հաշվառումներից: Այսպես՝ Շամախիի հայոց թեմի՝ 1896-1898 թթ. առաջնորդ Կարապետ եպս. Այվազյանցի «Արձագանքին» 1897 թ. հոկտեմբերի 27-ին հղած թղթակցությունում նշվում է, որ Բաքուն ուներ 45402 հայ բնակիչ, որից 33402-ը բնակվում էին բուն քաղաքում և «Սև քաղաքում», իսկ 12000-ը՝ Բալախան-Սաբունչիի ոստիկանական շրջանում[472]: «Միայն Բագու քաղաքի և Սև քաղաքամասի մէջ,- գրում է Կարապետ եպս. Այվազյանցը,- բնակվում են Հայ Լուսաւորչական ժողովուրդ՝ «33,402» ի բաց առեալ Բալախանայն, ուր կան՝ 12000 հայ Լուսաւորչականներ, թէև այս տեղի ժողովուրդը պատկանում են արհեստաւոր, գործաւոր և մշակ դասակարգին, որոնք միասին կազմում են Բագուի ժողովուրդ: Լուսաւորչական հայերի չնչութիւնը լինում է այն ժամանակ 45402»[473]: Ինչպես տեսնում ենք, Բաքվի հայ բնակչության թվի մասին պահպանված տվյալների մեջ զգալի տարբերություն գոյություն ունի: Ուստի դրանք ճշգրտման կարիք ունեն: Մարդահամարի և թեմի առաջնորդի վերը նշած տվյալների վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ վիճակագրական տվյալների հակասությունը կապված է 1897 թ. մարդահամարի ոչ ամբողջական ու թերի հաշվառումների հետ: Թերևս պաշտոնական մարդահամարի ժամանակ հաշվառվել են միայն բնիկ հայ բնակիչ-

---

[470] Թաթերը գերակշռում էին գավառում՝ 33431 (17861 ար., 15570 իգ.) մարդ (ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 53).

[471] Տե՛ս նույն տեղում, таблица XIII, стр. 52-53.

[472] 1897 թ. մայիսին Բաքու քաղաքի վարչական կառավարման համակարգը ենթարկվեց փոփոխության, որի հետևանքով արդյունագործական-գործարանային շրջաններում ստեղծվեց Բալախան-Սաբունչիի ոստիկանական շրջանը: Իր գործառույթներում ոստիկանական շրջանի վարչությունը սերտորեն համագործակցում էր «Բաքվի նավթարդյունաբերողների միության» խորհրդի հետ, որը նյութական մեծ միջոցներ էր հատկացնում տեղամասում սոցիալ-տնտեսական և կրթամշակութային կյանքի բարելավման համար (տե՛ս **Мильман А.**, Политический строй Азербайджана в XIX—начале XX веков (административный аппарат и суд, формы и методы колониального управления), Баку, 1966, стр. 234):

[473] Նամակներ խմբագրութեան (I), «Արձագանք», Թիֆլիս, 1897, հոկտեմբերի 31, № 126:

նները, կամ՝ վիճակագրական մարմինների կողմից արհեստականորեն նվազեցվել է քաղաքի հայերի թիվը:

Իբրև ասվածի վկայություն է ծառայում հետևյալ փաստը. Բաքվից Սարգիս Ծոցիկյանի՝ «Արձագանքին» 1897 թ. մայիսի 22-ին հղած թղթակցությունում նշվում է, որ հայերը քաղաքում ունեին մոտ 4000 տուն: «Բազուն,- գրում է Ս. Ծոցիկյանը,- որ ավելի 15 տարի առաջ 600-ի չափ հայ տուն կը պարունակէ, հիմա աւոնց թիւը հասած է մօտ 4,000-ի... մեծ մասամբ Կարապագի կողմերէն գաղթած, հաստատուած»[474]: Եթե ընդունենք, որ յուրաքանչյուր բնտանիք բաղկացած էր ոչ ավելի, քան 4-5 հոգուց, ապա ստացվում է, որ հայերի ընդհանուր քանակը տատանվում էր 16-20000-ի միջև, այսինքն՝ այդ թիվը գրեթե համապատասխանում է 1897 թ. մարդահամարում արձանագրված տվյալին: Հայկական բնտանիքների թիվը, համադրելով 1893 թ. ապրիլ ամսվա թվական տվյալին (2319), ստացվում է, որ չորս տարվա ընթացքում այն ավելացել էր 1681-ով:

Արդեն առիթ ենք ունեցել նշելու, որ 1893 թ. սկզբներից, խոլերայի կանխարգելմանը հաջորդած տարիներին, Բաքվի բնակչության բավարար աճի համար կային համեմատաբար նպաստավոր պայմաններ, որի արդյունքում արտադնա աշխատանքի և հիմնական բնակության մեկնողների թիվն արդեն մեծ չափեր էր ընդունել: 1897 թ. մարդահամարի տվյալներով՝ Բաքվի 111.904 առկա բնակչությունից մշտաբնակ էր 109.185-ը (64552 ար., 44633 իգ.)[475]: Ընդորում՝ առկա բնակչության թվում, ըստ ծննդավայրի, տեղացի էին 40307-ը, Բաքվի նահանգի գավառներից և այլ նահանգներից ու պետություններից եկածները 71597 էին[476]: Ինչպես տեսնում ենք, քաղաքում գերակշռում էին դրսեկ բնակիչները: Ուստի՝ 1897 թ. պաշտոնական մարդահամարի և թեմի առաջնորդի վկայակոչած տվյալների վերլուծությունը թույլ է տալիս արձանագրելու, որ հայ բնակչության թիվն առավել ամբողջական և արժանահավաստ է թեմի առաջնորդի վկայակոչած տվյալներում, որը ներառում է նաև ժամանակավոր բնակիչների թիվը: Այս համոզմանն է մեզ բերում նաև Շամախիի հայոց թեմի 1914-1915 թթ. առաջնորդ կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի՝ Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին 1915 թ. հունիսի 16-ին հղած զեկուցագրում տեղ գտած հետևյալ դիտարկումը: Թե-

---

[474] Ծոցիկեան Ս., Բագու, մայիսի 22 (թղթակցութիւն «Արձագանքի»), «Արձագանք», Թիֆլիս, 1897, մայիսի 28, № 59:

[475] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица I, стр. 3.

[476] Տե՛ս նույն տեղում, стр. 2.

մակալը, կամուրջկոսին ամենամյա տնդեկութիւններ հաղորդելով Բաքվի նահանգի պատառների հայութեան թվի մասին, գրում էր, որ չատ դեպքերում «ազգաբնակչութեան թիւը որոշելիս պէտք է հետևել ոչ թէ պաշտօնական թուերին, այլ մեր մասնաւոր տեղեկութիւններով կատարած հաշուին»[477]:

Մեր նորակացութեան օգտին է խոսում նաև հետևյալ փաստը. 1898 թ. սկզբներին Բաքվի ոստիկանական բաժանմունքի կողմից անցկացված հաշվառման համաձայն՝ քաղաքի (առանց արդյունաբերական-գործարանային շրջանների) 173.542 բնակիչներից հայերի թիվը 40074 էր[478]: Թվական տվյալների համադրումից ստացվում է, որ նախորդ՝ 1897 թ. հաշվառումից հետո շուրջ մեկ տարվա ընթացքում հայերի թիվը կտրուկ աճել է 20975-ով, ինչը հնարավոր չէր նույնիսկ բնական ու մեխանիկական բարձր աճի պայմաններում: Որ Բաքվում (առանց արդյունագործական-գործարանային շրջանների) հայ բնակչությունն իր թվաքանակով զբաղեցնում էր երկրորդ տեղը, փաստում է Ս. Պետերբուրգում 1902 թ. լույս տեսած «Մեծ Հանրագիտարանը»: Բաքու վերտառութեամբ հոդվածում արձանագրված է, որ 1897 թ. մարդահամարի տվյալներով չիա թաթարներից հետո երկրորդ տեղում էին հայ առաքելականները[479]:

Նկատենք, որ արդի ադրբեջանցի «ժողովրդագիրներն» աշխատութիւններում 1897 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի նյութերը ներկայացված են թերի հաշվառումներով և խիստ աղավաղված ցուցանիշերով: Օրինակ՝ Դ. Իսմայիլ-Զադեն, անտեսելով այն հանգամանքը, որ մահմեդական կրոնին պատկանող ղըրղըզները, բաշկիրները, չուվաշները, կումիկները, թյուրքերն ու թաթարները 1897 թ. մարդահամարի նյութերում նշված են «թուրք-թաթարներ» անունը կրող աղյուսակում, քաղաքական նպատակներով աղավաղել է պաշտոնական վիճակագրական նյութերը և «Անդրկովկասի քաղաքների բնակչությունը XIX դ. – XX դ. սկիզբ» աշխատության՝ «Անդրկովկասի քաղաքների էթնիկ կազմը մայրենի լեզվով 1897 թ.» աղյուսակում վերը նշված էթնիկ խմբերն ու նրանց թվաքը հանիրավի նշել մարդահամարի հարցաթերթիկներում և աղյուսակներում ընդհանրապես

---

[477] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1056, թ. 41:

[478] Տե՛ս Բաքւայ ազգաբնակութիւնը, «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 11-12, էջ 1504:

[479] Տե՛ս Большая Энциклопедия. Словарь общедоступныхъ сведений по всемъ отраслямъ знания, т. II. Издатели Библиографический институтъ (Мейеръ) въ Лейпциге и Вене, С. — Петербургъ, 1902, стр. 459.

բացակայող «ապրիլյանցի» արհեստածին անվան տակ[480]: Այս մտացածին հայեցակարգով է առաջնորդվել նաև ապրիլյանցի մեկ այլ հեղինակ՝ Տ. Ալիխանովան, որը «Ապրիլյանի ապստային և էթնիկ փոքրամասնությունները XX դ.» ուսումնասիրության մեջ, ապստամբի տնօրով տալով երկրամասի ժողովուրդների՝ 1897-1999 թթ. չարժը, վերը նշված էթնիկ խմբերը ներկայացրել է իբրև «ապրիլյանցիների»[481]:

XIX դարի 90-ականների կեսերին քաղաքում հայերի թիվը բազմանում է նաև ի հաշիվ Արևմտյան Հայաստանից՝ վանից նկած ընտանիքների: Աբդուլ Համիդի կազմակերպած կոտորածներից մազապուրծ ավելի քան 500 վանեցի գաղթականներ 1896 թ. աշնանը, ապա 1897 թ. հոկտեմբերին, Կովկասի զանազան քաղաքներից զատ, ապաստան գտան Բաքվում, ուր մնացին ընդհուպ մինչև 1898 թ. մայիսի վերջերը[482]: Տեղի Սբ. Աստվածածին եկեղեցու ավ. քհն. Արզար Տեր-Հարությունյանցի վկայությամբ՝ «1896 թուականի աշնան սկզբներին երամ երամով հայ գաղթական ընտանիքներ մերկ, քաղցած և կիսաասողջ թափուեցին Բագու և սկսեցին թափառել փողոցները «մի փշուր հաց, մի հին հալաւ խնդրելով»[483]:

Արևմտահայ գաղթականների օգնության գործը կազմակերպելու ուղղությամբ հսկայական աշխատանք ծավալեցին տեղի բարեգործական ընկերությունները՝ այդ նպատակով ստեղծելով գաղթականական գործը կազմակերպող մասնախմբեր[484]: Այդ գործին իրենց մեծագույն նպաստը բերեցին «Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունը» և «Եկեղեցական աղքատախնամ հոգաբարձությունը», որոնք գաղթականների ծանրագույն վիճակը մեղմելու, նրանց սննդով և հագուստով ապահովելու համար տրամադրեցին նյութական միջոցներ[485]: Օգնության գործը կայուն հիմքերի վրա դնելու նպատակով նշված բարեգործական ընկերությունների կոչ-

---

[480] Տե՛ս **Исмаил-Заде Д.**, նշվ. աշխ., таблица 10, стр. 222.

[481] Տե՛ս **Алиханова Т.**, Национальные и этнические меньшинства Азербайджана в XX веке, Археология (IV) и этнология (III) Кавказа (международная научная конференция). Сборник кратких содержаний докладов, Тбилиси, 2002, стр. 197-199.

[482] Տե՛ս Տէր-Յարութիւնեանց Ա., Հայ գաղթականները Բագու եւ նրանց վերադարձը, Բագու, 1903, էջ 19, 21:

[483] Նույն տեղում, էջ 14:

[484] Տե՛ս «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1878, մայիսի 27, № 20:

[485] Տե՛ս Տէր-Յարութիւնեանց Ա., նշվ. աշխ., էջ 15:

միս սանդվեցին հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկվեցին Բաքվի ազդեցիկ հայերից՝ Ե. Սարգսյանցը, Ա. Կաճկաճյանը, Հ. Ապամյանը և Ա. Կրասիլնիկյանցը, իսկ Մարդասիրական ընկերության հանձնաժողովում՝ Ա. Մադաթյանը, Ն. Պատվականյանը, Ս. Ապամյանը, Ե. Կրասիլնիկյանը, Ն. Արևյանը և Գ. Տեր-Մարգարյանը[486]: Գաղթականներին բժշկասանիտարական անհրաժեշտ օգնության ցուցաբերեցին բժիշկներ Ա. Աղամիրզյանը և Մ. Զալյանը[487]: «Ձր կար կովկասահայ կենտրոնում մի վայր, ուր տաճկահայերն ունկի խնամք վայելած լինէին, մի կտոր հայ աշխատած, քան Բագուն»,- գրում էր «Միտասար» ծածկանունով «Գործի» Բաքվի թղթակիր Միրզա Տեր-Սարգսյանը[488]: Հարկ է նշել՝ որքան էլ բարեգործական ընկերությունները փորձում էին ուժերը ներածին չափով օգնության ձեռք մեկնել գաղթականներին, այդուհանդերձ, այդ օգնությունը բավարար չէր վերջիններիս անասհման տառապանքներն ամբողջապես մեղմելու: «Նոր-դարն» այդ առիթով գրում էր. «Բագուում որ փողոցով անցնելու լինէք, կպատահէք միշտ մերկանդամ գաղթականների, որոնք երբեմն նոյն իսկ խմբերով ձեռք են պարզում ողորմութեան և ձանձրացնում անցորդներին: Եւ դրանք դիսաւորապես կանայք և երեխաներ են, որով տեսարանը ունկի ցաւալի է դառնում...»[489]: Գաղթականների մի խումբ 1897 թ. նոյեմբերի 4-ին Բաքվից տեղափոխվեց Աշգաբադ[490]: 1897 թ. նոյեմբերի 23-ի տվյալներով՝ հայ գաղթականների հիվանդանոցում բուժվում էր 351, իսկ տեղի հիվանդանոցում՝ 18 հոգի: Նրանք մեծ մասամբ կանայք և երեխաներ էին: Առողջ տղամարդկանց թիվը 75 էր[491]: Գաղթականների շարքերը հյուծվածությունից և տարափոխիկ հիվանդություններից օրեցօր նոսրանում էին, և 1897 թ. նոյեմբերի կեսերին նրանց թիվը հասավ 300-ի[492]: 1897 թ. դեկտեմբերի կեսերին «Եկեղեցական աղքատախնամ հոգաբարձության» աղքատանոցում գտնվող 241 հոգուց արևմտահայ գաղթականների թիվը 205 էր, չա-

---

[486] Տե՛ս նույն տեղում, էջ 15-16:
[487] Տե՛ս նույն տեղում, էջ 18:
[488] Տե՛ս Միտասար [Միրզա Տեր-Սարգսյան], Տաճկահայերի վերադարձը, «Գործ», Թիֆլիս, 1908, հոկտեմբերի 23, № 36:
[489] «Նոր-դար», Թիֆլիս, 1898, ապրիլի 4, № 58, տե՛ս նաև «Արձագանք», Թիֆլիս, 1897, սեպտեմբերի 7, № 103:
[490] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1897, նոյեմբերի 6, № 130:
[491] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1897, նոյեմբերի 23, № 136:
[492] Տե՛ս Հայ գաղթականներին խնամող յանձնաժողովը Բագվում, «Արձագանք», Թիֆլիս, 1897, նոյեմբերի 16, № 133:

մախեցիներին ու տեղացիներին՝ 36[493]: Բարեգործական նշված կազմակերպությունները վանեցի գաղթականներին նկնդեցական աղքատանոցում խնամեցին մինչև 1898 թ. մայիսի վերջերը, երբ սաացվեց ցարական կառավարության՝ գաղթականների հայրենիք վերադառնալու մասին հրամանը, և նրանց մեծ մասը մեկնեց Վան: Կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցու հորդորով գաղթականներին մինչև Բայազետ ուղեկցեց «Եկեղեցական աղքատախնամ հոգաբարձության» նախագահ Արդար ավ. քհն. Տեր-Հարությունյանցը[494]: Բաքվում մնացած գաղթականներն աստիճանաբար սկսեցին հիմնավորվել քաղաքում: Նրանցից շատերը հիմնականում դյուղացիներ էին և չէին սիրաղետում որևէ արհեստի, ուստի աշխատանքի տեղավորվեցին նավթահանքերում, տարբեր արհեստանոցներում՝ կառարիով դիշերային պահակի, դռնապանի և մշակի աշխատանքներ[495]:

Բաքու քաղաքի (առանց արդյունագործական-գործարանային շրջանների) 1898 թ. սկզբների էթնոդավանական պատկերի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են պարունակում քաղաքի ոստիկանական բաժանմունքի կազմած վիճակագրական նյութերը, համաձայն որոնց՝ 173.542 (98920 ար., 74622 իգ.) բնդհանուր բնակչությունից, ըստ դավանանքի, մահմեդականների թիվը հասնում էր 65421-ի (44380 ար., 21041 իգ.)՝ կազմելով 37,7%, ուղղափառներինը՝ 39116-ի (21355 ար., 17661 իգ.)՝ 22,5%, հայ առաքելականներինը՝ 40074-ի (22590 ար., 17484 իգ.)՝ 23,1%, կաթոլիկներինը՝ 2351-ի (1342 ար., 1009 իգ.)՝ 13,6%, լյութերականներինը՝ 7260-ի (3977 ար., 3283 իգ.)՝ 4,2%, ռուս աղանդավորներինը (ասկոլնիկ)՝ 6807-ի (3497 ար., 310 իգ.)՝ 4% և հուդայականներինը՝ 2113-ի (1289 ար., 834 իգ.)՝ 12,2%[496]: XIX դարավերջին քաղաքն ուներ ավելի քան 4000 տուն[497]:

Արտագնայությունը Բաքու նկատելիորեն աճեց նաև 1890-ական թվականների վերջերին, ինչի արդյունքում 1897-98 թթ.

---

[493] Տե՛ս Ս. Մ. Ծոցիկեան, Բագուն եւ հայ գաղթականները «Արձագանք», Թիֆլիս, 1897, դեկտեմբերի 19, № 147:

[494] Տե՛ս «Նոր-դար», Թիֆլիս, 1898, հունիսի 20, № 108, տե՛ս նաև Տէր-Յարութիւնեանց Ա., նշվ. աշխ., էջ 22:

[495] Տե՛ս Միտսար [Միրզա Տեր-Սարգսյան]. Տաճկահայերի վերադարձը, «Գործ», Թիֆլիս, 1908, հոկտեմբերի 23, № 36:

[496] Տե՛ս Բաքւայ ազգաբնակութիւնը, «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 11-12, էջ 1504:

[497] Տե՛ս Большая Энциклопедия. Словарь общедоступныхъ сведений по всемъ отраслямъ знания, т. II, стр. 460.

բաղաքի արվարձանում հիմնվում է մի նոր հայկական գյուղ[498], *որը աղբյուրներում հիշատակվում է նաև «Հայոց փիլլի» անվամբ*[499]: *Ս. Շոցիկյանի վկայությամբ. «Այս Նոր Հայկական գիւղը, Պաքուի մէկ արուարձանը, ասկէ գրեթէ 25 տարի առաջ հիմնուեցաւ, Հայոց ձեռամբ: Անոր բնակիչները բոլորը Հայեր են»*[500]:

1898 թ. նոյեմբերին Երևանի նահանգապետար գրում էր. «Արտադնայային գրաժումնքը տարեցտարի բնդունում է ավելի ու ավելի նշանակալի չափեր: 1898 թ. տարբեր քաղաքներ (Թիֆլիս, Բաքու, Բաթում և այլն) արտադնա աշխատանքի են մեկնել մինչև 20000 մարդ»[501]: *Դեպի Բաքու արտադնայությանը նպաստեցին նաև Գյոքչայի և Շամախիի գավառների 1899 թ. երաշտն ու անբերրիությունը*[502]: *Դարավերջին Բաքու արտադնա աշխատանքի սկսեցին գալ նաև Հյուսիսային Կովկասից և Դաղստանի մարզից, ինչին նպաստեց Հատկապես 1899 թ. օգոստոսի 22-ին Բաքու-Պետրովսկ (Մախաչկալա) երկաթուղագծի բացումը, որով Բաքուն կապվեց եվրոպական Ռուսաստանի երկաթուղային գծերին*[503]:

Ընդհանուր առմամբ, բերված թվերի վերլուծությունը ցույց է տալիս, որ XIX-XX դդ. սահմանագծում հայ բնակչության թիվը Բաքվում ավելի քան 45000 էր: Միաժամանակ, աղբյուրները փաստում են, որ չնայած էթնիկ գործընթացները զգալիորեն խաթարում էին քաղաքի ժողովրդագրական դիմապատկերը, այնուամենայնիվ հայերը շարունակում էին մնալ Բաքվի գերակշռող էթնիկ հանրությունների մեկը: Դրա հետ մեկտեղ, հայ և ռուս բնակչության թիվը գրեթե հավասար էր:

Այսպիսով Բաքու քաղաքի հայ բնակչության թվաճը 1809-1897 թթ. ժամանակահատվածում ուներ հետևյալ պատկերը[504]:

---

[498] Տե՛ս Շոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 291:

[499] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1905, սեպտեմբերի 11, № 183, տե՛ս նաև Բագուի ծխական հոգաբարձութեան նախագիծը, «Հովիտ», Թիֆլիզ, 1910, մայիսի 23, № 6, էջ 93:

[500] Շոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 291:

[501] Տե՛ս Обзор Эриванской губернии за 1908 г., Эриван, 1909, стр. 8.

[502] Տե՛ս **Заваров С.**, Кавказ в сельско-хозяйственном отношении в 1899 г., Тифлис, 1900, стр. 207.

[503] Տե՛ս Արասխանեանց Ա., Բաքւայ նավթաշրջանից, «Մուրճ», Թիֆլիս, 1896, № 10-11, էջ 938:

[504] Աղյուսակը կազմված է ըստ АКАК, т. IV, док. 95, стр. 82; Տէր-Յակոբեան Ա., նշվ. աշխ., թ. 39; ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 69-70; «Հովիտ», Թիֆլիզ, 1910, օգոստոսի 16, № 16, էջ 249; **Автономов-Спасский К.**, Баку, КК на 1852 г., отд. III, стр. 305; ГССРИ, т. I, стр. 191; СНМ-1873; ССДНЗКИПС-1886; «Նոր-դար», Թիֆլիս, 1890, դեկտեմբերի 14, № 199; ПВПНРИ-1897, табяица XII, стр. 50,

Տարեթիվ	1809	1822	1838	1851	1860	1873	1886	1890	1897
Բնակ. թիվը	163	277	434	405	589	747	24490	28818	45402
%	3,3	-	-	-	-	5	28,3	26,4	40,57

Աղյուսակի տվյալները փաստում են, որ բավարար աճի համար նպաստավոր պայմանների հետևանքով հայերի թիվը, բնդհանուր առմամբ, չարունակել էր արագորեն աճել: Եթե սկզբնական շրջանում Այսրկովկասի տարբեր վայրերից այդտեղ եկած հայ մշակութանվորների, արդյունաբերողների ու վաճառականների գործունեությունը և բնակությունը կրում էր ժամանակավոր բնույթ, ապա ժամանակի ընթացքում նրանցից շատերը դարձան տևական՝ կառուցելով տներ, ձեռք բերելով հողատարածություններ և այլն՝ անշուշտ իրենց կապերը չխզելով հայրենի քաղաքների և գյուղերի հետ[505]:

Անդրադառնանք նաև XIX դարի երկրորդ կեսի տարբեր տարիների ընթացքում Բաքվի գավառի (առանց քաղաքի) հայ բնակչության թվի հարցին: 1860 թ. գավառում բնակչության թիվը 36600 էր[506]: Նահանգային վարչության՝ 1869 թ. տվյալների համաձայն՝ Բաքվի գավառում բնակվող հայերի թիվը եղել է 891[507]: Ըստ «Բաքուն և նրա շրջակայքը» դրքույկի՝ 1889 թ. պատկերն այսպիսին է եղել. գավառի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 64128, որից չիա մահմեդականներ՝ 58578, հայեր՝ 2083, ռուսներ՝ 2551, կաթոլիկներ՝ 541, լյութերականներ՝ 366 և հրեաներ՝ 9 հոգի[508]: Ընդ որում, մահմեդական բնակիչների թվում գերակշռում էին իրանական ծագում ունեցող թաթերը՝ կազմելով բնակչության $^{3}/_{4}$-ը, իսկ $^{1}/_{4}$-ը թաթարներն էին: Այսինքն՝ 58578 չիա մահմեդականներից թաթեր էին 43933-ը, իսկ 14645-ը ունեին թյուրքական ծագում[509]: 1897 թ. հայերի թիվը գավառում 3484 էր (3125 ար., 359 իգ.)[510]:

Ինչ վերաբերում է XIX դարի երկրորդ կեսին Ապշերոնյան թերակղզու չուրջը՝ կղզիներում բնակվող հայերի թվին, նշենք, որ

таблица XIII, стр. 53, таблица XIV, стр. 60-61; «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 11-12, էջ 1504, տվյալների. հաշվարկը մերն է:

[505] Տե՛ս Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայ ազգաբնակչության շարժընթացը (XIX դ.), ԲՀՊՏՀ, Երևան, 2008, № 1, էջ 61-75:

[506] Տե՛ս ГССРИ, т. I, стр. 186.

[507] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 92.

[508] Տե՛ս Баку и его окрестности, стр. 63.

[509] Տե՛ս նույն տեղում, стр. 64-65.

[510] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 53.

ակրնագրություններում և վիճակագրական տեղեկագրերում այդպիսի տեղեկություններ չեն պահպանվել, ինչը հնարավորություն չի տալիս նշել ճշգրիտ կամ մոտավոր որևէ տվյալ: Բացի դրանից՝ մեծ թվով նավթագործներ են բնակվել Թերակոպու շուրջ՝ ափից 100 կմ հեռու գտնվող Պոլպատի կղզում և Նավթային քարերում[511], որտեղ նավթագործների մեջ եղել են ոչ քիչ թվով հայեր:

Այսպիսով՝ ժողովրդագրական տվյալների վերլուծությունը փաստում է, որ XIX դարավերջին Բաքու քաղաքի հայ բնակչությունը կազմում էր ընդհանուր բնակչության որոշակի մասը:

[511] Տե՛ս Աղաև Է., Բաքու, Երևան, 1984, էջ 8:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԿՐԹԱՍՊԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

XIX դարի սկզբին Այսրկովկասի միացումը Ռուսաստանին բարենպաստ պայմաններ ստեղծեց երկրամասի դանդաղ, բայց որոշակի առաջընթացի համար: Վերջ դրվելով արևելյան բռնակալությանը՝ դյուղերում և քաղաքներում ապահովվեցին կյանքի ու գույքի անհամեմատ կայուն երաշխիքներ: Իր հետագա առաջխաղացումն ապահովելու նպատակով Ռուսաստանը բարեհաճ վերաբերմունք էր ցուցաբերում երկրամասում բնակվող ժողովուրդների հանդեպ, քաջալերում վաճառականների գործունեությունը: Հատկապես մեծ նշանակություն էր տրվում հայ վաճառականների հետ տարվող քաղաքականությանը: «Հայ վաճառականությունը,- գրում էր Ա. Կարինյանը,- կարողացել էր առանձին օջախներ ստեղծել թե Ռուսիայի սահմաններում, և թե առանձնապես-Անդրկովկասում: Կովկասահայ առևտրական բուրժուազիան ևս իրազեկ էր արևելյան երկրների առանձնահատուկ պայմաններին և դրա համար էլ հարմարագույն միջնորդ ադդակ էր Ռուսիայի և Արևելքի առևտրա-տնտեսական հարաբերությունների զարգացման ընթացքում»[512]: Ռուսական կառավարությունը, հաշվի առնելով հայ վաճառականների՝ Ռուսաստանի հետ հնուց հաստատած առևտրական լայն կապերը, խրախուսում էր նրանց գործուն մասնակցությունը երկրամասի տնտեսական կյանքին[513]: Այդ առաջընթացը նպաստավոր պայմաններ ստեղծեց նաև Շաքի, Շամախի և Բաքու քաղաքներում գործող հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչների համար: Նրանցից շատերը Ապշերոնյան թերակղզում սկսեցին ձեռնարկել տնտեսական նոր գործառույթներ:

Ռուսական իշխանության հաստատման առաջին տարիներից Բաքվում տուրքերի գանձումը կատարվում էր կապալային սկզբուն-

---

[512] Կարինյան Ա., Ռուսահայ բուրժուազիան և Մշակական լիբերալիզմը (I), «Նոր ուղի», Երևան, 1930, № 10, էջ 138:

[513] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. V, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 267-268:

քով: Կապալառուները, որոնք տնտեսական կյանքում ունեին մեծ դերակատարություն, տուրքերի գանձումը հիմնականում կատարում էին հետևյալ աղբյուրներից՝ նավթից, սպանդանոցից, խանութներից, խանական այգիներից, օղու և գինիների վաճառքից ու երկու ձկնորսարաններից[514]: Դեռևս 1808 թ. հունիսի 30-ից քաղաքի վերոնշյալ տուրքերի գանձումը չորս տարի ժամկետով, տարեկան 112.500 ռ. կապալով տրվում է հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչ, Ծնունդով Նախիջևանի երնջակ գավառի Շահկերտ ավանից հայտնի վաճառական Բարա Թառումյանին[515], որը խուլա տալով Երևանի սարդարի բռնություններից և կամայականություններից, վերահաստատվել էր Շուշիում և առևտրաարդյունաբերական լայն գործունեություն էր ծավալել Բաքվում: Մեսրոպ Թաղիադյանցի վկայությամբ. «Բարա առևտ պամենայն զուղ՝ փախչի յաչխարհ Փայտակարան, և զրաւէ զներսս ծովուն Կասբից ի Ռուսաց զրանէն, որով սակաւ առա սակաւ հարստացեալ անդանօր՝ կոչէ և զեղբարս իւր, և հիմն դնէ այնորիկ հարստութեան, յոր վայելէին այսօր եղբարք իւր և ազգն»[516]: Նույն թվականին Բաքվի նավթի, աղաչների[517], ձկնորսության և նավագնացության կապալը չորս տարի ժամկետով ևս տրված էր Թառումյան մյուս եղբայրներին՝ Մարկոսին և Զոհրաբին: Այդ է վկայում Մ. Թաղիադյանցի մի այլ տեղեկություն ևս. «Վասն զի՝ սոքա (Թառումյան եղբայրները - Գ. Ս.) ընդ իւրեամբք ունելով զամենայն արտոնութիւնս զծովուն Կասպից, թէ զձկնորսական իրաւունս, և թէ զնաւագնացութեան տեղեհարկս, բազմագունից պէտս ունէին զործաւարաց յայն պաշտօն»[518]:

Թառումյան եղբայրներն այդպիսի ձեռնարկատիրությամբ կուտակել էին անթաղ հարստություն: Նրանք ազգային ու հասա-

---

[514] Տե՛ս Աճառյան Դ., Ռուսահայոց հասարակական-քաղաքական մտքի զարգացումը (1800-1870), հ. Ա, Բագու, 1916, էջ 228:

[515] Տե՛ս АКАК, т. IV, док. 865, стр. 575 (բնագրում՝ «По контракту, заключенному въ Баку 1808 года июня въ 30-й день, съ Карабахским изъ Армянскихъ старшинъ жителемъ Баба Тарумовымъ, отданы ему въ 4-х годочное содержание на откупъ следующия Бакинския оброчныя статьи, какъ-то: 1) черная нефть, 2) белая нефть, 3) Бабей-батская нефть, 4) соль, 5) красилини, 6) базар, 7) скотобойный рядъ, 8) ханские сады, 9) лавки, 10) весы, 11) продажа горячаго и виноградnаго вина и 12) Бакинския рыбныя ватаги въ 2 местахъ; за что все обязностъ онъ платит казнь въ каждый год 112,500 р.»).

[516] Ճանապարհորդութիւն Մեսրոբայ Դ. Թաղիադեանց. Վ. Ա. Սարկաւագի Սրբոյ Էջմիածնի ի Հայս, հ. Ա, Կալկաթա, 1847, էջ 291-292:

[517] Բաքվի շրջակայքում եղել են 27 աղալճեր (տե՛ս Энциклопедический словарь, т. II[A], стр. 736).

[518] Ճանապարհորդութիւն Մեսրոբայ Դ. Թաղիադեանց, էջ 292:

րակական գործերում բավականին առատաձեռն էին. «Առօրեական բաչխոյք ողորմութեանց տան այսմիկ առաւելոյք քան գուբլիս 500»[519]:

Աստիճանաբար հայ վաճառականների ձեռքում սկսեցին կենտրոնանալ ձկան, աղի, մետաքսի առևտրի կապալը և հատկապես նավթի չհագործումը: Ապշերոնյան թերակղզու և Հարավից շրջանների նավթարդյունաբերության կազմակերպման գործում իր որոշակի ներդրումն ունի նաև արցախցի Պետրոս Մանչեյանը, որը 1810 թ., կառավարության հետ համաձայնագրով, կապալով ստանձնել էր Ղուբայի նավթահորերի ու ծովային ձկնորսարանների շահագործումը: Այդ աշխատանքը նա շարունակել մինչև իր մահը՝ 1823 թ.[520]:

Հայ առևտրականները Բաքվում զբաղվում էին նաև շաքարի տրանզիտի առևտրով՝ Բաթումից և Փոթիից ազատորեն Բաքու ներմուծված շաքարը վոխադրելով Պարսկաստան[521]: Ի. Բերյոզինը 1842 թ. օգոստոսին Բաքու այցելության ժամանակ քաղաքի հայ վաճառականներից հիշատակում է Տ. Ի. Այվազյանին (Այվազով)[522]:

Բաքվում արդյունաբերական այլ ճյուղերի համեմատ, ցարական կառավարությունն աստիճանաբար իր ուշադրությունը սկսեց կենտրոնացնել նավթարդյունաբերության ոլորտի վրա, որից ստացվում էին եկամտի հիմնական աղբյուրները: Առևտրական կապերով կապված լինելով Ռուսաստանի և Եվրոպայի հետ՝ հայ առևտրարդյունաբերողները առաջիններից էին, որ կանխագուշակեցին Բաքվի նավթի նշանակությունն ու արժեքը և սկսեցին զբաղվել ու զարգացնել նրա արդյունաբերությունը: 1850-ական թթ. մինչև 1872 թ. ընկած ժամանակահատվածում Բաքվի նավթահանքերը, աղահանքերը և ձկնարդյունաբերությունը տարեկան 111.000 ռ. արծաթով կապալով վարձակալել էին թիֆլիսեցիներ Կուկուջանյանը, 14-րդ կարդի աստիճանավոր Արշակ Տեր-Ղուկասյանը (Ղուկասով)[523] և Բարա-

---

[519] Նույն տեղում:

[520] Տե՛ս Դիլոյան Վ., նշվ. աշխ., էջ 117:

[521] Տե՛ս Սարուխան Ա., Աղեքսանդր Սևանքաշեանց: Մեծ վաճառականն եւ բարեգործը (յիշողութիւններ իր մահուան 20 ամեակի առթիւ), Վիեննա, 1931, էջ 36:

[522] Տե՛ս **Березин И.**, նշվ. աշխ., ч. III, гл. V (Отъ Баку до Сальяна), стр. 14.

[523] Ա. Տեր-Ղուկասյանը 1839 թ. ավարտելով Հաղորդակցության ճանապարհների ինստիտուտը, 1842 թ. մայիսին տեղափոխվում է Կովկաս: Սակայն ռազմական գործի նկատմամբ ունեցած սերը ստիպում է նրան թողնել ճարտարագետի մասնագիտությունը և 1850 թ. անցնել զինվորական ծառայության: 1852 թ. մարտին գործուղվում է Ապշերոնյան գունդ և նշանակվում 3-րդ գումարտակի հրամանատար: Մասնակցել է կովկասյան լեռնականների դեմ մղվող մարտերին, ցուցաբերած խիզախության համար նշանակվել է Ապշերոնյան գնդի հրամանատար: 1865 թ. արժանացել է գեներալ-մայորի, 1876 թ.՝ գեներալ-լեյտենանտի կոչման:

նապտանը[524]*: Առևտրաարդյունաբերական գործունեության զարգացման արդյունքում նրանցից յուրաքանչյուրի հարկատվությունը տաբեցտարի արդեն մեծ չափերի էր հասնում: Օրինակ՝ Ա. Տեր-Ղուկասյանը 1854-1863 թթ. տարեկան վճարում էր 117.000 ռ.*[525]*:*

Ապշերոնյան թերակղզում սպիտակ նավթի (կերոսին) դաման առաջին գործարանը կառուցվեց 1859 թ., Բաքվի մոտակայքում՝ Սուրախանիում, կրակապաշտների հնադարյան տաճարի մերձությամբ[526]*: Նորակառույց գործարանի ձեռնարկատերը ռուսական առևտրական կապիտալի ներկայացուցիչ մոսկվացի մանուֆակտուրիստ Վ. Կոկորևն էր*[527]*: Այդ քայլին հետևեցին նաև հայերը: 1862 թ. Սուրախանիում կերոսինի գործարան հիմնեց Ա. Վերմիշյանը, 1863 թ.՝ Ջավադ Մելիքյանը, իսկ 1865 թ.՝ Թաթոսյանը*[528]*: Հայ առաջին նավթարդյունաբերողների շարքում հատկապես առանձնանում է տնտեսագիտական լայն մտահորիզոնի տեր վաճառական Թիֆլիսեցի Հովհ. Միրզոյանը*[529]*, որը 1868 թ. Սուրախանիում հիմնում է*

1877-1978 թթ. ռուս-թուրքական պատերազմի սկսվելու պատճառով նա հեռացել է Բաքվից (տե՛ս Պարսամյան Վ., Գեներալ-լեյտենանտ Ա. Տեր-Ղուկասով, Երևան, 1942): Բաքվում ապրած տարիներին Ա. Տեր-Ղուկասյանը զբաղվել է կրթամշակութային և բարեգործական ակտիվ գործունեությամբ: Եղել է «Բաքվի հայոց մարդասիրական ընկերության» հիմնադիր անդամներից: Ընկերության սկզբնավորման տարում նվիրաբերել է 2000 ռ. (տե՛ս Պատմական համառոտ տեսութիւն Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունեութեան, աշխատասիրեց՝ առենադպիր ընկերութեան. 1864-1869, Ա. Գալստեանց, Բագու, 1891, էջ 16):

[524] Տե՛ս **Автономовъ-Спасский К.**, Описание Бакинского уезда Шемахинской губернии, КК на 1856 г., отд. III, стр. 508.

[525] Տե՛ս **Гулишамбаров С.**, Очерки развития и современное состояние нефтяной промышленности Бакинского района (Списокъ сведений о Кавказе, т. VII. Изданый под ред. главнаго редактора Кавказскаго статистическаго комитета **Н. зейдлица**, Тифлис, 1880, стр. 333).

[526] Տե՛ս **Սմիռնով Գ.**, Սենդելեև, Երևան, 1986, էջ 169-170:

[527] Տե՛ս **Թոփչեան Ե.**, Նաւթային արդիւնաբերութիւնը Կովկասում («Լոյս պատկերազարդ օրացոյց հանդէս» 1904 թ., էջ 198: Սուրախանիի գործարանը սկզբնական շրջանում Կոկորևին միայն վնասներ էր բերում: Գործարանի աշխատանքը վերափոխելու և շահութաբեր դարձնելու նպատակով, Կոկորևի առաջարկությամբ նշանավոր քիմիկոս Դմիտրի Սենդելեևը 1863 թ. օգոստոսին առաջին անգամ այցելում է Բաքու (տե՛ս **Սմիռնով Գ.**, նշվ. աշխ., էջ 171):

[528] Տե՛ս ՀՍՀՍ, т. II, стр. 80, տե՛ս նաև **Թոփչեան Ե.**, Նաւթային արդիւնաբերութիւնը Կովկասում («Լոյս պատկերազարդ օրացոյց հանդէս» 1904 թ., էջ 198-199, տե՛ս նաև **Никишин А.**, 20 лет Азербайджанский горнорабочих, Баку, 1926, стр. 7.

[529] Հովհաննես Միրզոյանը սկզբնական շրջանում զբաղվել է հում մետաքսի առևտրով: 1853 թ. ունեցել է չրի կրպակ: Հետագայում Նուխի բաղարում

կերոսինի երկու գործարան[530]: Բաքվում տեր դառնալով նավթարեր ընտիր հորերի՝ Հովհ. Միրզոյանի չահուքթը աստիճանաբար սկսեց բազմապատկվել: 1871 թ. նա Բալախանիում հիմնեց առաջին արդյունաբերական հորատանցքը, իսկ 1872 թ.՝ երկրորդը[531], որով և հիմք է դրվում պարզացման սաղմնային վիճակում գտնվող նավթարդյունաբերությանը: «Ամենից առաջ Բաքվի հանքերը հարստահարողը,- գրում է Ալ. Շիրվանզադեն,- եղել է հայ, այն է՝ կովկասցի նշանավոր կապիտալիստ Միրզոևը: Սա միակ մոնոպոլիստն է եղել նավթային արդյունաբերության մեջ, սկսած այն ժամանակից, երբ Բալախանի-Սաբունչինյան նավթահողերը գտնվելով տերության ձեռքում, կապալով տրվելիս են եղել»[532]:

1868 թ. նավթարդյունաբերության բնագավառում որոշ քայլեր է ձեռնարկում նաև Բաքվում հաստատված չուշեցի Լազարյանների գերդաստանի ներկայացուցիչ, գեներալ-լեյտենանտ Հովհաննես Դավիթի Լազարյանը[533], որին Ռուսական կառավարությունը հատկացրել էր մի փոքրիկ նավթադաշտ: Սակայն հատկացված հողակտորը նավթաբեր չլինելու պատճառով գրեթե ոչինչ չէր տալիս:

հիմնել է մետաքսի գործարան, իսկ Թիֆլիսում՝ նաև մոմի գործարան, որոնց արդյունքում կուտակել էր մեծ կապիտալ (տե՛ս Գիւլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», Բոստոն, 1924, Պօսքրն, Ը տարի, մարտ, № 5, էջ 98): Հովհ. Միրզոյանի մահից հետո (1880 թ.) նրա այրին, որդիներ՝ Ալեքսանդրը, Սեյրոնը, Գրիգորը, և դուստր՝ իշխանուհի Մարիա Արղության-Երկայնաբազուկը 1886 թ. 2,1 մլն ռ. հիմնադիր կապիտալով բաժնետիրական ձեռնարկությունը վերածեցին ընկերակցության՝ ստեղծելով «Միրզոյան եղբայրներ և ընկ.» նավթարդյունաբերական և առևտրական ընկերությունը, որը մինչև 1918 թ. համարվեց Բաքվի առաջատար ֆիրմաներից մեկը (տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 39):

[530] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 196, ց. 1, գ. 23, թ. 27, տե՛ս նաև **Микаелян В., Мирзоян С.**, Участие армян в экономической жизни Восточного Закавказья (вторая половина XIX-первые десятилетия XX вв.), ԼՀԳ-, Երևան, 1990, № 2, էջ 76, տե՛ս նաև **Гулишамбаров С.**, Очерки развития и современное состояние нефтяной промышленности Бакинского района, стр. 345.

[531] Տե՛ս **Гулишамбаров С.**, Очерки развития и современное состояние нефтяной промышленности Бакинского района, стр. 345, տե՛ս նաև Henry J., Baku. An Eventful History, London, 1905, p. 51.

[532] Շիրվանզադե Ալ., Եժ, հ. 9, Նամակ Բաքվից, էջ 359:

[533] Լազարյանների գերդաստանը սերում էր Քաշաթաղի մելիքական տոհմից: Այս գերդաստանում են ծնվել գեներալ-լեյտենանտ Հովհաննեսը, գնդապետ, պատմաբան Հակոբը և Բաբաջանը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 42, ց. 1, գ. 2, թ. 1-11, տե՛ս նաև **Потто В.**, Генерал-адъютант Иван Давыдович Лазарев, Тифлис, 1900, տե՛ս նաև Ղազիյան Ա., Լազարյանների վիճվորական փառքը, ԲՀԱ, Երևան, 1991, № 3, էջ 218-225):

Գրականագետ Տիգրան Նազարյանն իր գեղեցիկ ոճով բաբվաբնակ չուշեցի մեծահարուստ բարեգործ Համբարձում Հախումյանի[534] և Լազարյանի երկխոսությունից վկայում է հետևյալը. «Յիշեցի մեծ դայուս պատմածը՝ որ գնեորայ Յովհ. Լազարևն էր արել նրան ռուս-տաճկ. պատերազմին՝ «Ա՛յ, Համբարձում աղա, ասում է հայրենասէր պարտապղի գնեորալ Լազրևը իր նման հայրենասէր հսկայ քեռուս (Համբ. Հախումեանին), Շամիլին բռնելուց եննան, ինձ էլ անպէտք համարեց ռուս թագաւորը: Մի պատառ նօթի հող էր տալ Բագուում, էն էլ օգուտ չէր բերում, նօթ չէր դուս գալիս: Սաղ օրը մալուխուլիի մէջ ծովին ղրրադաւը բօլթա տալաւ[535] ի օրըս մթնըցնում»[536]: Հովհ. Լազարյանը Բաքվում հիմնականում զբաղվել է բարեգործությամբ՝ պարբերաբար նվիրատվություններ կազմակերպելով «Բաքվի Հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձության»[537]: 1877 թ. սկսված ռուս-թուրքական պատերազմի սկսվելու պատճառով Հովհ. Լազարյանը հեռանում է Բաքվից:

Ռուսական կառավարությունը նավթարդյունաբերության զարգացման համար մշակելով տնտեսական նոր համակարգ՝ որոշեց վերացնել կապալատուվությունը և վաճառել նավթաղաջտերը որպես մասնավոր սեփականություն: Այդ առիթով 1868 թ. ստեղծված հանձնաժողովը մշակեց նախագիծ «Նավթարդյունաբերության և ֆոտոգենային արտադրության ակցիզի կանոնների» մասին[538]: Ըստ այդ կանոնների վերացվեց կապալը և սահմանվեց ակցիզ, այսինքն՝ 15 կոպեկ հարկ արտադրված յուրաքանչյուր փութ կերոսինից[539]: Այդ կանոնները հաստատվեցին 1872 թ. փետրվարին: Կառավարությունը նավթաղաջտերի սեփականաշնորհման գործընթացը սկսեց 1872 թ. դեկտեմբերին՝ աճուրդի դնելով 460 դեսյատին[540] նավթաբեր տարածք՝ 552.240 ռ. մեկնարկային գնով: 1873 թ. հունվարի 1-ից գործող «Նավթարդյունաբերության և ֆոտոգենային արտադրութ-

---

[534] Հ. Հախումյանը մահացել է Բաքվում՝ 1898 թ. մարտի՝ 65 տարեկան հասակում (տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1898, մարտի 8, № 10, 138):

[535] Բոլթա տալ-զբոսնել, մաև գալ (տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ե, Երևան, 2008, էջ 99):

[536] ԳԱԹ, Տ. Նազարյանի ֆոնդ, գ. 233, տ. 4, թ. 19:

[537] Պատմութիւն Բագուայ հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձութեան (1872 թ. ապրիլի 1-ից մինչև 1893 թ. ապրիլի 1-ը), էջ 4-5, 59:

[538] Տե՛ս Սմիռնով Գ., նշվ. աշխ., էջ 174:

[539] Նույն տեղում:

[540] Դեսյատինը հողաչափական միավոր է: Հավասար է 2400 քառ. սաժենի կամ 1,09 հեկտարի (տե՛ս Քոչոյան Ա., Հայերեն դպրոցական բացատրական բառարան, Երևան, 1966, էջ 75):

յան ակցիզի կանոնների» համաձայն սեփականատերեր դարձան 12 ռուս առևտրաարդյունաբերողներ, որոնք մուծեցին 1.485. 860 ռուբլի[541]: Այդ ցուցակը գլխավորում էին մանուֆակտուրիստներ Վ. Կոկորևն ու Պ. Գուբոնինը, որոնք հետագայում հիմնեցին «Բաքվի նավթային ընկերությունը» ֆիրման[542]: Աճուրդին իրենց մասնակցությունը ցուցաբերեցին նաև 11 հայ առևտրաարդյունաբերողներ (Հովհ. Միրզոյան, Տեր-Հակոբյան, Գ. Լիանոսյան, Բեժանյան, Օնիկյան, Վերմիշյան, Ծուրինյան, Լալայան, Ղարաբեկյան, Բ. և Պ. Սարգսյան եղբայրներ) և «Սոուչաստնիկ» (հիմնադիրներ՝ Բ. Դոլուխանյան, Մ. Կաճկաճյան, Ս. Կվիտկո) անվամբ մեկ հայկական ընկերություն, որոնք վճարեցին 1.459.182 ռ.[543]: Ջավեշտալի է, սակայն, փաստը, որ կովկասյան թաթարներից աճուրդին մասնակցել են ընդամենը երկու հոգի՝ Հաջի Զեյնալ-Աբդին Թաղիևը, որը աճուրդին կարողացել էր մասնակցել Սարգսյան եղբայրներին ընկերակցելուց հետո միայն և Ադա-բեկ Սելիմխանովը: Վերջինիս մեկ տեղամասի համար վճարած գումարը կազմել էր 3000 ռ.[544]:

Նավթարդյունաբերության սեփականաշնորհումից հետո Բաքվում վիթխարի չափերով սկսեց ավելանալ նավթի արդյունահանումը: Փորվեցին նոր նավթահորեր, որոնք օրական տասնյակ հազարավոր փութ նավթ էին տալիս: Նավթի առաջին հզոր շատրվանը 18 սաժեն խորությունից 45 ֆունտ բարձրությամբ ժայթքեց Բալախանիում 1873 թ. հունիսի 13-ին, Ա. Վերմիշյանին պատկանող «г. Вермишев и К°» ընկերության նավթահաշտում և տևեց երկու տարի[545]: Բաքվից «Մշակին» 1874 թ. օգոստոսին հղած թղթակցությունում Ա. Արծրունին գրում է. «Գլխաւոր տեղը հորերի կողմից Բալախանա գիւղն է, ուր գտնվում է և երևելի նաւթի շադրվանը, որ պատկանում է պ.[արոն] Վերմիշովի ընկերութեանը և որ մի տարի առաջ խփում էր 4-5 սաժէն բարձրութիւնով: Այժմ նա թէև այն քանակութիւն էլ չէ տալիս, բայց այնուամենայնիւ դա հասնում է մինչև 5000-6000 պուդ օրական, որ մանաւանդ մեծ շահեր է բե-

---

[541] Տե՛ս **Гулишамбаров С.**, Очерки развития и современное состояние нефтяной промышленности Бакинского района, стр. 343, տե՛ս նաև «Մուրճ», Թիֆլիս, 1891, № 11, էջ 1364-1376:

[542] Տե՛ս Баку и его окрестности, стр. 70.

[543] Տե՛ս **Гулишамбаров С.**, Очерки развития и современное состояние нефтяной промышленности Бакинского района, стр. 343-344.

[544] Տե՛ս նույն տեղում:

[545] Տե՛ս **Гулишамбаров С.**, Об изменении рельефа Каспия. Общая причина изменения рельефа суши, вып. I, Баку, 1878, стр. 16, տե՛ս նաև «Արօր»-ի պատկերազարդ օրացոյց 1894 թ., էջ 29:

րում է սեփականատերին...»[546]: Եթե 1863 թ. արդյունահանվել էր 340.000, ապա 1872 թ.՝ 1.535.981 փութ նավթ[547]: Կարճ ժամանակամիջոցում մեծ չափերի հասած նավթարտահանումը որոշակիորեն փոխեց տնտեսական հաշվեկշիռը: Միաժամանակ սկսնին կառուցվել կերոսինի մշակման նոր գործարաններ:

Բաքվի նավթարդյունաբերության բնագավառի խոշոր ձեռնարկատերերի շարքում աստիճանաբար մեծ տոկոս էին կազմում հատկապես հայ նավթարդյունաբերողները: Ռնիկ բաքվեցիներ Սամվել Բաղիրյանը և Հարություն Մադաթյանը ընկերանալով Բրունո դե Բուրի հետ 1878 թ. հիմնում են «Կասպից ընկերությունը»[548]:

Նույն ժամանակ Բաքվում, առևտրի և արդյունաբերության բնագավառում լայն գործունեություն էին ծավալել նաև Ադամյան եղբայրները՝ Արգությը[549], Ալեքսանդրը, Հովհաննեսը և Դավիթը, որոնք հիմնել էին «Եղբ. Ադամյան» առևտրական ընկերությունը: Շնորհազարդ այդ գերդաստանի նահապետն էր XIX դարի 30-ական թվականների սկզբներին Շամախիից Բաքվում մշտական բնակություն հաստատած վաճառական Սահակ Ադամյանը[550]:

Բաքվի նավթարդյունաբերության ոլորտի առաջնեկներից էր նաև չուխեցի Ավետիք Ղուկասյանը[551], որի օրինակին հետևեցին նրա

---

[546] Արծրունի Ա., Նամակ Բագուից, «Մշակ», Թիֆլիս, 1874, օգոստոսի 8, № 31:

[547] Տե՛ս Гулишамбаров С., Очерки развития и современное состояние нефтяной промышленности Бакинского района, стр. 335.

[548] Տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 42:

[549] Վաճառական Աբգար Ադամյանի ընտանիքում կրթվել ու դաստիարակվել են չորս նշանավոր դեմքեր: Ավագ որդին՝ Հովհաննեսը (1879-1932), ան-սպիտակ գունավոր հեռուստատեսության և լուսահեռագրության իր գյուտով նոր դարագլուխ է բացել գիտության և տեխնիկայի պատմության մեջ: Նրա՝ տասնյակ տարիներ առաջ կատարած գիտական հայտնագործություններն ունեցան համաշխարհային նշանակություն և դարձան ժամանակակից գունավոր հեռուստատեսության ու լուսա-հեռագրության հաստատուն հիմքը (տե՛ս Հակոբյան Հ., Հովհաննես Աբգարի Ադամյան, Երևան, 1968): Հեղինե և Եվգինե դուստրերը դարձան վիրտուոզ դաշնակահարներ, որոնք երկար տարիներ իրենց վրա էին գամել ամբողջ Եվրոպայի երաժշտական հասարակության ուշադրությունը: Նրանց կրտսեր եղբայրը՝ պրոֆ. Արշակ Ադամյանը, եղել է գեղագետ, երաժշտագետ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի տնօրենը: Նրա նախաձեռնությամբ Երևանում կազմակերպվում է սիմֆոնիկ նվագախումբ, որի առաջին համերգը կայացել է 1924 թ. դեկտեմբերի 10-ին և որով սկզբնավորվեց սիմֆոնիկ երաժշտության կատարումը Հայաստանում (տե՛ս Հակոբյան Հ., Ադամյան քույրեր, Երևան, 1973):

[550] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 69, տե՛ս նաև **Магда Нейман**, Армяне. Краткий очерк их истории и современного положения, СПб., 1899, стр. 151.

[551] Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1914, մայիս, № 5, էջ 90: Ա. Ղուկասյանը 1890-ական թվականների կեսերին Բաքվից տեղափոխվել և հաստատվել է Թիֆլիսում (տե՛ս նույն տեղում):

եղբոր՝ Հովսեփի որդիները՝ Պողոս, Հակոբ, Աբրահամ և Արշակ Վա-կասյանները: 1878 թ. Բաքվում նախ հաստատվից Պողոսը, որը «Կասպից ընկերությունից» 27000 ռ. գնից Ս. Բաղիրյանի, ապա Հ. Մադաթյանի բաժնեմասերը և ընկերացավ Բրունո դե Բուրի հետ: Ջեռնարկության գործունեությունն այնքան է զարգանում և հզորանում, որ 10 տարի անց՝ 1887 թ. 2.000.000 ռ. հիմնադիր կապիտալով վերածվում է բաժնետիրական ընկերության: Բրունո դե Բուրի՝ 1888 թ. մահից հետո Ղուկասյան եղբայրները և նրանց ազգական Հովհաննես Տեր-Մարկոսյանը դառնում են «Կասպից ընկերության» լիակատար սեփականատերերը[552]:

Նույն շրջանում նավթարդյունաբերության ոլորտում իրենց հաստատուն քայլերը կատարեցին Ծնունդով Զանգեզուրի գավառի Քարահունջ գյուղից Առաքել Ծատուրյանցը[553], *թիֆլիսաբնակ Փի-*

---

[552] Տե՛ս Սարուխան Ա.. նշվ. աշխ., էջ 42, տե՛ս նաև Դադայան Խ., Հայերը և Բաքուն, էջ 20:

[553] Բաքվի նշանավոր հարուստներից մեկի՝ նավթարդյունաբերող ու կալվածատեր Առաքել Ծատուրի Ծատուրյանցի (1830-1904) ծննդավայրի վերաբերյալ կա իրարամերժ երկու տեսակետ: Ալ. Շիրվանզադեն «Կյանքի բովից» հուշագրական երկում գրում է, որ Առ. Ծատուրյանցը եղել է շուշեցի (տե՛ս Շիրվանզադե Ալ., Կյանքի բովից, էջ 166): Առ. Ծատուրյանցը որպես շուշեցի է հիշատակված նաև «Մարդասիրական ընկերության» տեղեկագրում, որի պատվավոր և անփոփոխ անդամն է եղել 1864-1889 թթ. (տե՛ս Պատմական համառոտ տեսութիւն Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունեութեան, էջ 63): Հետևելով տարածված տեսակետին՝ Առ. Ծատուրյանցին շուշեցի է համարել նաև ուսումնասիրողներից Խ. Դադայանը (տե՛ս Դադայան Խ., Հայերը և Բաքուն, էջ 174): Հակառակ այդ տեսակետի՝ պահպանվել են տեղեկություններ այն մասին, որ Առ. Ծատուրյանցը ծնվել է Զանգեզուր գավառի Քարահունջ գյուղում: Այսպես, «Արարատ» ամսագրի թողած մի վկայության համաձայն, Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցին, երբ 1898 թ. օգոստոսի վերջերին Արցախից վերադառնալու ճանապարհին, սեպտեմբերի 3-ին հասել է Գորիս, եղել է Քարահունջ գյուղում և իջևանել Ծատուրյանների տանը, ապա այցելել Առ. Ծատուրյանցի ծնողների շիրմին. «Նորին Սրբութիւնն ուղևորուեց դէպի Քարահունջ գիւղը և իջևանեց Ծատուրեանների տանը. այցելեց եկեղեցին, խրատեց ժողովրդին և օրհնեց Պ. Առաքել Ծատուրեանի ծնողաց գերեզմանը...» (Վեհափառ Հայրապետի ուղեւորութիւնը, «Արարատ», 1898, Թ, էջ 397): Առ. Ծատուրյանցի ոչ շուշեցի լինելը փաստվում է նաև հետևյալ վավերագրով: Այսպես՝ ծնունդով Զանգեզուրի Բռնակոթ գյուղից Նիկողայոս Մելիք-Թանգյանը (Ատրպատականի Հայոց թեմի հետագա առաջնորդը) տեղի ծխական դպրոցին նյութապես օգնելու խնդրանքով Առ. Ծատուրյանցին 1888 թ. հղած նամակում գրում է. «...իբրեւ երգրացու (ընդգծումը մերն է - Գ. Ս.) միջնորդել Կրասիլնիկեանցի ժառանգներին մի գումար նուիրել աղբատ դպրոցին» (ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 20, թ. 112): Առ. Ծատուրյանցի բարահունջցի լինելը հաստատվում է նաև այն փաստով, որ նա թաղված է հայրենի Քարահունջ գյուղի գերեզմանոցում: Հայ մեծանուն վիպասան Րաֆֆու հետքերով գյուղ այցելած գրող, հրապարակախոս Բակուր Կարապետյանն Առ. Ծատուրյանցի տապանքարին կարդացել է. «Առաքել ապեր՝ Ծատուրեան՝ 1830-1904 թթ.» (Կա-

թոյան եղբայրները, Ղորդանյան եղբայրները և շատ ուրիշներ: 1877 թ. Բալախանիում նավթահորերի սեփականատերերից էին նաև Օրբելյան եղբայրները[554]*:*

Տնտեսական կյանքի աշխուժացման պայմաններում հայ առևտրաարդյունաբերողներից շատերը Բաքվում հիմնեցին գործարաններ, ֆաբրիկաներ և արդյունաբերական այլ ձեռնարկություններ: Նավթարդյունաբերությունը ոչ միայն հարստացրեց Բաքուն, այլև XIX դարի երկրորդ կեսից, առավելապես դարի վերջում, վճռական դեր խաղաց հայ գրամատիրության ձևավորման գործընթացում:

Բաքվի նավթարդյունաբերության զարգացման ասպարեզում իրենց առանձնահատուկ դերն են ունեցել հատկապես արցախահայերը[555]*, որոնք իրենց գործիմացության և անսպառ եռանդի շնորհիվ ձեռք են բերում մեծ հարստություն, նպաստում քաղաքի տնտեսական ու մշակութային կյանքի բարգավաճմանը: Արցախցիներ էին առևտրաարդյունաբերողներ և խոշոր նավթահանքերի տերեր, եղբայրներ Առաքելյանները, Ղուկասյանները, Կրասիլնիկյանները*[556]*, Գրիգոր*[557] *և Հովսեփ Թումայան եղբայրները, Գրիգոր Դիլդարյանը, Մուսայել Շահգեդանյանը*[558]*, Դավիթ Ավան-Յուզբաշյանը և շատ*

րապետյան Բ., Հարյուր տարվա երկխոսություն, Երևան, 1990, էջ 152): Բերված վկայությունում միակ անճշտությունն այն է, որ Առ. Ծատուրյանցը մահացել է ոչ թե 1904, այլ՝ 1903 թ. Երևանում (տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1903, հունիսի 8, № 20, էջ 195):

[554] Տե՛ս Կիւլպենկեան Գ., Ապշերոնեան թերակղզին եւ ռուսաց նաւթը, «Մուրճ», 1891, № 9, էջ 1067:

[555] Տե՛ս **Магда Нейман**, նշվ. աշխ., стр. 151.

[556] Կրասիլնիկյան եղբայրներից Մովսեսն իր ողջ հարստությունը կտակել էր որդուն՝ Ռուբենին, որն ուսանում էր Լիեժի (Բարիզ) պոլիտեխնիկ ինստիտուտում: 20-ամյա Ռուբենը ՀՅԴ անդամ էր և շնորհիվ իր համեստ բնավորության, մեծ սեր ու հարգանք էր վայելում ընկերական շրջապատում: Սակայն չպարզված հանգամանքներում 1908 թ. ապրիլի 21-ին դավադրաբար սպանվում է իր վարձած սենյակում, Ստալ ազգանունով մի երիտասարդ ֆրանսուհու ատրճանակից արձակված գնդակից (տե՛ս «Վտակ», Թիֆլիս, 1908, ապրիլի 26, № 87):

[557] Հայ առևտրաարդյունաբերության դասի խոշոր ներկայացուցիչ Գր. Թումայանը զոհվել է 1894 թ. հուլիսի սկզբներին, Սև ծովում տեղի ունեցած նավաբեկման ժամանակ (տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1894, հուլիսի 15, № 80):

[558] Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1924, Բ տարի, մարտ, № 5, էջ 98-100, տե՛ս նաև «Արձագանք», Թիֆլիս, 1890, ապրիլի 15, № 8: Մուսայել Սկրտչի Շահգեդանյանը ծնունդով Չարդախլու գյուղից էր: Սահացել է 80 տարեկան հասակում, 1890 թ. ապրիլի 8-ին: Նրա կտակի համաձայն՝ 3000 ռ. տրվում էր Բաքվի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն, 200 ռ.՝ Բաքվի հայոց եկեղեցական աղբատանոցին, 200 ռ.՝ Բաքվում

ուրիշներ[559]*: «Գաղտնիք չէ,- դրում է «Տարազը»,- որ Բագուի հայ հարուստները մի աննշան բացառութեամբ, բոլորը դարաբաղցիներ են: Սրանք, գաղթելով Բագու, իրանց բնածին ընդունակութեամբ եւ տոկունութեամբ մի երեսուն-քառասուն տարւայ ընթացքում չինել են այժմեան Բագու քաղաքը եւ ձեռք բերել ահագին հարստութիւն»*[560]*: Այս առումով առավել ուշագրավ է «Տարազ» ամսագրի 1902 թ. հոկտեմբեր 22-ի համարում տեղ գտած հետեւյալ տեղեկությունը. «Ռուսաստանում չը կայ մի քաղաք, որի բնակիչները այնքան հարուստ լինեն, որքան դարաբաղցիք: Բագուայ ամենախոշոր դրամատէրերի 7/10-ը դարաբաղցիներ են»*[561]*:

Նավթարդյունաբերության ոլորտում իր ծանրակշիռ ներդրումն ունի հատկապես արցախցի առևտրաարդյունաբերող, ծնունդով Շուշիի գավառի Ասկերանի շրջանի Քյաթուկ (Քոթուկ) գյուղից Միքայել Արամյանցը[562]*: 1884 թ., Թիֆլիսից գալով Բաքու, նա ընկերանում է Գերասիմ Թումայանի, Առ. Մատուրյանցի և Առաֆելյան հզբայրների հետ և հիմնում «Առ. Մատուրյան և մյուսներ» ընկերությունը, որը տարեկան արտահանում էր 4 մլն փութ նավթ և քսուքային տարբեր յուղեր*[563]*: Այդ տարիներին Բաքվից Բաթում նավթի փոխադրումը և վաճառքը կապված էր տեխնիկական որոշակի դժվարությունների հետ: Փոխադրումները ժամանակին կատարելու նպատակով Միք. Արամյանցը ձեռնարկում է նավթի տեղափոխումը մետաղյա ցիստեռններով: Անհրաժեշտ կանխիկ գումար ձեռք բերելու նպատակով նա գալիս է Թիֆլիս և դիմում իր վաղեմի ընկեր Ալեքսանդր Մանթաշյանցին, փոխարենը առաջարկելով նրան մտնել իրենց ընկերության մեջ և դառնալ բաժնետեր*[564]*:*

կազմվելիք հայ կանանց ընկերությանը (տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1890, ապրիլի 15, № 8):

[559] Ավելի հանգամանորեն տե՛ս Ստեփանյան Գ., Արցախահայության դերը Բաքվի առևտրաարդյունաբերության զարգացման գործում. XIX դ.-XX դարասկիզբ (համառոտ ակնարկ): Միջազգային գիտաժողովի նյութեր նվիրված ԱրՊՀ-ի 40-ամյակին, Ստեփանակերտ, 2010, էջ 272-276:

[560] «Տարազ», Թիֆլիս, 1892, հուլիսի 5, № 25, էջ 350:

[561] Շուշին իբրեւ առողջապահական կայարան, «Տարազ», Թիֆլիս, 1902, հոկտեմբերի 27, № 40, էջ 404:

[562] Տե՛ս Ոսկի-բարեկամ հայ ընտանեաց, աշխատասիրութիւն՝ Գրիգոր աւագ քահանայի Մանդակունւոյ, Թիֆլիս, 1912, էջ Ե-ԺԷ, տե՛ս նաև ՀՀԾՏԲ, հ. 5, Երևան, 2001, էջ 385:

[563] Տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 65:

[564] Միք. Արամյանցի դրամագլուխը շարունակաբար դրվում էր շրջանառության մեջ և կրկնապատկվում: Վրաստանի տարբեր վայրերում նա ուներ ամառանոցներ: Նրան էին պատկանում Ախթալայի կալվածքը, Կիսլովոդսկի հանքային ջրերի տաղավարը: Ախթալայում նա շինել է տվել շվեյցարական ոճով ամառանոց-դղյակ: Միք. Արամյանցը եղել է նշանավոր բարերար: Նա իր միջոցներով Թիֆ-

Բաքվի առևտրաարդյունաբերական ձեռնարկություններում իրենց որոշակի դերակատարություն ունեին նաև Գյոքչա և Շամախի գավառների հայերը: Գ. Քաջբերունին այդ գավառների տարբեր գյուղերից Բաքվում հաստատված հայ բնակչության առանձին բնագավառներում զբաղվածության վերաբերյալ Սպիան և Հնդար գյուղերի օրինակով գրել է. «Սպիանի ժողովուրդն ունի իւր մէջ և Բարու գինեվաճառներ, առևտրականներ, տնատէրեր, ամեն տեսակ արհեստաւորներ, վաճառականներ, նաւթարդիւնաբերողներ...», կամ՝ «Հընդարեցիներից Բագուում կան գինեվաճառներ, տնատէրեր, տպարանատէր, վաճառականներ, արհեստավորներ և այլն»[565]:

Բաքվում հայ առևտրաարդյունաբերական դասի խոշոր ներկայացուցիչն ու առաջամարտիկը Ալեքսանդր Մանթաշյանցն էր, որը, կարճ ժամանակամիջոցում իր շուրջը համախմբելով հայկական խոշոր և մի քանի մի չարք նավթարդյունաբերական ընկերություններ, 1889 թ. հիմնում է «Ա. Հ. Մանթաշյանց և ընկ. առևտրական տունը» («Торговый домъ А. Манташевъ и К°») և նոր սկիզբ դնում նավթարդյունաբերության զարգացմանը՝ հետզհետե դառնալով Բաքվի նավթարդյունաբերության առաջնորդներից մեկը[566]:

լիսի Հավլաբար թաղամասում կառուցել է քաղաքային հիվանդանոց՝ տրամադրելով 100.000ռ. (տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1903, № 4, էջ 229): Իր հովանավորության տակ է վերցրել Հաղպատի և Սանահինի վանքերի ու այնտեղ բնակվող վանականների խնամքը: Բարեգործական տարբեր ձեռնարկումներ է կատարել Շուշի քաղաքի համընդհանուր զարգացման համար: 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Սիր. Արամյանցը, զրկվելով իր ամբողջ ունեցվածքից և կարողություններից, մահացավ 1923 թ. ծայրահեղ չքավորության ու մենության մեջ:

[565] Քաջբերունի Գ., Բագմամիլիոն ժառանգուրիւն, ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 439, թ. 26, 53:

[566] Խոշոր ձավրարդյունաբերող, մեծահարուստ և բարեգործ Ալ. Մանթաշյանցը ծնվել է Թիֆլիսում, 1842 թ. մարտի 3-ին: Ալ. Մանթաշյանցը սովորել է Թիֆլիսի Գալուստ վրդ. Փափազյանի մասնավոր դպրոցում: Մանթաշյանցի պապը և հայրը Իրանում ճշանավոր և ազդեցիկ հայերից էին, մանուֆակտուրային հայտնի վաճառականներ: «Այդ շրջանում շատ ազդեցիկ էր Եօվանէ (Հովհաննես - Գ. Ս.) Մանթաշեանը, այժմեան Մանթաշեանների պապը և յայտնի բարեգործ հանգուցեալ Ալ. Մանթաշեանցի հայրը, որ մի գեղեցիկ տղամարդ էր՝ մորթէ գլխարկը դրած, մահուդէ կապան հագին մինչև օձիքը կոճկած» («Մշակ», Թիֆլիս, 1916, հոկտեմբերի 19, № 233): 1868 թ. Մանթաշյանցը հոր հետ եղել է Լայպցիգում, այնտեղից էլ անցել Լոնդոն և Մանչեստր: 1878 թ. Մանթաշյանցները Իրանից վերադառնում են Թիֆլիս: Շարունակելով ճանապարհորդությունները դեպի եվրոպական երկրներ՝ Մանթաշյանցը սովորում է ֆրանսերեն, գերմաներեն և անգլերեն: Հոր մահից հետո (1887 թ.) Մանթաշյանցը նրա թողած 20000ռ. դրամագլխով շարունակում է առևտրական գործունեությունը: Ուսումնասիրելով ձավրարդյունաբերության պայմանները և համոզվելով այդ գործի հեռանկարային լինելը՝ 50000ռ. դրամագլխով 1889 թ. միանում է «Ա. Ծաւուրյանց և մյուսներ» ընկերությանը (տե՛ս Ոսկի բարեկամ հայ ընտանեայց, էջ 4-5): Դառնալով ընկե-

XIX դարի 80-ական թթ. վերջերին Բաքվում իր առևտրաարդյունաբերական գործունեությունն է սկսում ծավալել նաև Խատիսյանների նշանավոր տոհմի ներկայացուցիչ, մասնագիտությամբ քիմիկոս, լոնդոնյան ինժեներ Կոնստանդին Խատիսյանը, որը Դավիթ Ավան-Յուզբաշյանի հետ հիմնադրում է «Կ. Խատիսյան-Դ. Ավան-Յուզբաշյան ընկերություն»[567]: Կ. Խատիսյանը հանդես է գալիս նավթի արտահանման ինժեներական մի շարք նորագույն մտահղացումներով, մասնավորապես առաջարկում է Բիբի-Հեյբաթի դիմաց գտնվող ծովի մի ընդարձակ մասը ցամաքեցնել և այդ չորացած մասից դուրս մղվող գազի մեծ պաշարները օգտագործել արդյունաբերության մեջ: Այդ ծրագիրն իրագործվեց հետագայում և ապահովեց մեծ շահույթներ[568]: Ի դեպ, Կ. Խատիսյանը վարում էր նաև «Ռուսական կայսերական տեխնիկական միության» Բաքվի բաժանմունքի

բության վարչության անդամ՝ Մանթաշյանցը ամբողջությամբ հրաժարվում է Թիֆլիսում ծավալած մանուֆակտուրային գործունեությունից: Աստիճանաբար հմտանալով նավթարդյունաբերության ոլորտում՝ Մանթաշյանցը հետզհետե ձեռք է բերում իր գործընկեր փայատերերի մասնաբաժինները: Ընկերությունից առաջինը հեռանում է Գ. Առաֆելյանը՝ ստանալով 45000ռ., նրան հաջորդում է Գ.Թ. Թումայանը՝ իր արժեթղթերը վաճառելով 70000ռ., ապա նրանց օրինակին հետևում է Առ. Ծատուրյանցը, որն իր արժեթղթերը վաճառում է 620.000ռ.: Մանթաշյանցի միակ գործընկերը մնում է Միք. Արամյանցը: Ընդ որում՝ Մանթաշյանցի բաժնեմասը կազմում էր 3/4%, իսկ Միք. Արամյանցինը՝ 1/4%: Ալ. Մանթաշյանցը, աստիճանաբար տեր դառնալով «Առ. Ծատուրյան և մյուսներ» ֆիրմայի ևավթաղաշտին, հիմնադրում է նոր ընկերություն՝ «Ա. Հ. Մանթաշյանց և ընկ. առևտրական տունը» (Торговый дом А. Манташев и К°): Այս անգամ Մանթաշյանցի բաժնեմասը կազմում էր $^4/_5$%, իսկ Արամյանցինը՝ $^1/_5$%: Կայացած գործարքի հիման վրա Միք. Արամյանցը չպետք է միջամտեր ընկերության գործունեությանը, այլ միայն պետք է ստանար իր հասանելիք շահաբաժինը: Ընդարձակելով իր գործունեությունը՝ Ալ. Մանթաշյանցը 22 մլն ռ. հիմադիր կապիտալով 1899 թ. հիմնում է «Ա. Հ. Մանթաշյանցի նավթարդյունաբերական և առևտրական ընկ.» (Нефтепромышленное и торговое общество «А. И. Манташев и К°») բաժնետիրական նոր ընկերությունը, որի կանոնադրությունը հաստատվում է նույն թվականի հունիսի 11-ին (տե՛ս Устав нефтепромышленного и торгового общества «А. И. Манташев и К°» Тифлис, СПб, 1899). Ընկերության առևտրական փինաձշանն էր հայկական «Գառն Աստծո» պատկերը: Մանթաշյանցը մահացավ 1911 թ. ապրիլի 19-ին՝ Պետերբուրգում: Մանթաշյանցն ուներ 8 զավակ՝ 4 աղջիկ և 4 որդի: Որդիներից միայն Լեոնը շարունակեց հոր առևտրաարդյունաբերական գործունեությունը: Ալ. Մանթաշյանցի կյանքի և գործունեության մասին մանրամասն տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., Բալագյան Լ., Ալեքսանդր Մանթաշյանց (ազգային բարերարը և գեղարվեստի մեկենասը), Երևան, 2003:

[567] Միրզոյան Ս., Հայ նշանավոր գերդաստաններ: Խատիսյաններ, «Պատմություն» (հոդվածների ժողովածու), Երևան, 2002, № 1, էջ 104:

[568] Տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 55-56:

նախագահի պաշտոնը[569]: Բաժանմունքի խորհրդի կազմում ընդգրկվել էին նաև Բաքվում ճանաչված ինժեներներ Միք. Ալիբեգյանը, Միխթար Տեր-Անդրեասյանը և Սետրակ Տեր-Դրիգորյանը[570]:

Նույն շրջանում «Սև քաղաքի» նավթային գործարաններից մեկի կառավարիչն էր Արևելյան նշանավոր դերդաստանի ներկայացուցիչ Ալեքսանդր Աբելյանը, որն առաջատար դիրք էր գրավում նավթարդյունաբերության բնագավառում: Նա առաջինն էր, որ հայացրեց նավթարդյունաբերության գործին վերաբերող բոլոր մեքենաների ու սարքավորումների անուննները. հայ ու օտար պաշտոնյաներից ու բանվորներից նա խստորեն պահանջում էր, որ ռուսերենի և գերմաներենի փոխարեն գործածեն մեքենաների ու դործիքների հայերեն անուննները[571]:

Բաքվում նավթի արդյունաբերության զարգացմանը զուդընթաց կենտրոնացան նաև մեծ թվով այլ մասնագետներ. շինարար-ճարտարապետներ, հանքաբաններ, քիմիկոսներ, էլեկտրաինժեներներ, մեքենաշինարարներ և այլն: Նրանց թվում աչքի ընկան Գյանջուցյանը, Միքայել Ալիբեգյանը, Արշակ Պարոնյանը, Ստեփան Թադևոսյանցը, Սեդրակ Տեր-Գաբրիելյանը, Աստվածատուր Վաչյանցը[572], Բրիստափոր (Խաչատուր) Վերմիշյանցը[573] և շատ ուրիշներ: Իր ձեռնարկումներով հատկապես առանձնանում էր ինժեներ Միք. Ալիբեգյանը, որը Բաքվում կատուցում է պողպատե պարաններ մի յուրահատուկ դործարան: Այդ պարանները հիմնականում օգտագործվում էին հորատման աշխատանքների ժամանակ, նավթահորերի մեջ: Այդ արտադրանքը մեծ պահանջարկ ուներ և անմիջականորեն առնչվում էր նավթի արդյունաբերության հետ՝ միակը լինելով ամբողջ Այսրկովկասում: Նախքան այդ գործարանի հիմնումը՝ այդ պարանները ներմուծվում էին Անգլիայից և շատ դեպքերում դրանց առաքման ուշացման պատճառով տուժում էր նավթի արտահանումը[574]:

---

[569] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909. Адресная и справочная книга. Издание М. **Шапшовича**, С.-Петербургъ, 1909, отд. III, стр. 84.

[570] Տե՛ս նույն տեղում:

[571] Տե՛ս Սեւեան Ռ., Բագուի շրջանի առաջին դաշնակցական գործիչները, «Հայրենիք», Պօսթըն, 1938, օգոստոս, № 10, էջ 155:

[572] Աս. Վաչյանցը ծնունդով Ջանգեզուրի գավառի Մեղրի ավանից էր: Նրա կինը էր նավթարդյունաբերող Պողոս Սարգսյանի դուստրը՝ Մարիամը, որը մահացել է երիտասարդ հասակում (տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1901, դեկտեմբերի 16, № 279):

[573] Հասարակական-քաղաքական գործիչ Քր. Վերմիշյանը 1904-1905 թթ. եղել է Թիֆլիսի քաղաքագլուխ (տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1917, փետրվարի 11, № 31, տե՛ս նաև Կարապետյան Ս., Թիֆլիսի քաղաքագլուխները, Երևան, 2003, էջ 106):

[574] Տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 53-54:

Տեղի հայ առևտրականներից դատ՝ XIX դարի վերջերից Բաքվում իր գործունեությունն էր ծավալել նաև Իրանում գործող «Եղբ. Թումանյանների առևտրական տունը»[575]: Հարություն Թումանյանի գերդաստանի երկու որդիները Ռուսաստանի հետ առևտրական գործարքները հեշտացնելու և տեղական իշխանությունների կամայականություններից իրենց ապահովագրելու նպատակով Իրանից փոխադրվել էին Բաքու և դարձել ռուսահպատակ[576]: 1899 թ. փետրվարի 16-18-ին Բաքվի արքունական պալատի դահլիճում մասնակցում է Բիբի-Հեյբաթի պետական հողերի աճուրդին և 2.000.000 ռ. դրամագլխով գնում նավթաբեր հողեր[577]: Քաղաքի խոշորագույն առևտրական տունը պատկանում էր վերջիններիս[578]: Որդիներից Զաքարիան աչքի էր ընկել իր բարեգործությամբ[579]: «Եղբ. Թումանյանների ընկ.»-ը Ընկերությունը կարևոր դեր էր խաղում նաև իրանական մետաքսի արտահանման գործում[580]:

Նավթարդյունաբերության զարգացման բնագավառում հատկապես աչքի է ընկնում հայ նշանավոր տնտեսագետ, XIX դարի վերջի և XX դարասկզբի ռուսական գիտական մտքի առաջադեմ ներկայացուցիչ, Դ. Մենդելեևի աշակերտ Ստեփան Ղուլիշամբարյանը (Դուլիշամբարով)[581], որը 1875 թ., Բաքվի նահանգապետի հրավերով

---

[575] Թումանյանները ծագումով Ղարադաղի Ողան գյուղից էին (տե՛ս Չեզոք [Արշակ Մուրադյան], Ղարադաղ (Փայտակարան), «Արձագանք», Թիֆլիս, 1896, սեպտեմբերի 11, № 105, տե՛ս նաև Կարապետ եպիսկոպոս, Նյութեր հայ մելիքութեան մասին: Դօփեանք եւ Մելիք Շահնազարեանք, պր., Բ, Ս. Էջմիածին, 1914, էջ 182): Ի դեպ, այս աշխատության մեկնաբան է եղել բազմաթիվ բարերար Աս. Վաչյանցը:

[576] Տե՛ս Ստեփանյան Ս., Հայ առևտրական բուրժուազիան Իրանի տնտեսական կյանքում (XIX դարի վերջ XX դարի սկիզբ), Երևան, 1992, էջ 100, տե՛ս նաև Մարտիրոսյան Հ., Իրանահայ գաղութի պատմություն, Երևան, 2007, էջ 159:

[577] Տե՛ս Մարդանեան Ֆ., Բիբի-Էյբաթի պետական նաւթային հողերի աճուրդի առթիւ, «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 1, էջ 120, տե՛ս նաև նույնի՝ Նաւթային բրոնիկ: Բիբի-Էյբաթի պետական հողերի աճուրդը (II), «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 2-3, էջ 312:

[578] Տե՛ս Պատմութիւն Բագուայ հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձութեան (1872 թ. ապրիլի 1-ից մինչև 1893 թ. ապրիլի 1-ը), էջ 64:

[579] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 196, ց. 1, գ. 23, թ. 27, տե՛ս նաև **Микаелян В., Мирзоян С.**, նշվ. աշխ., էջ 77:

[580] Տե՛ս Ստեփանյան Ս., նշվ. աշխ., էջ 87-88:

[581] Ստեփան Հովսեփի Ղուլիշամբարյանը ծնվել է 1849 թ. Թիֆլիսի նահանգի Գորի քաղաքում: Ավարտել է Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտը: Աշակերտել է աշխարհահռչակ քիմիկոս Դ. Մենդելեևին, որի հանձնարարությամբ եղել է Ամերիկայում՝ ուսումնասիրելով նավթային գործը: Վերադառնալով Ռուսաստան՝ այցելել է Բաքու և զբաղվել նավթի հանույթի հարցերով: Նրա ձեռներեց առաջարկությունները մեծ շահույթներ բերեցին մասնավորապես նավթի տեղա-

պայով Բաքու, պաշտոնավարում է նավթամշակման խոշոր գործարաններից մեկում՝ որպես տեխնոլոգ[582]: Ս. Ղուլիշամբարյանը 1879 թ. «Զիմակի» նավթային ընկերության պատվերով նախագծում և կառուցում է խոշոր նավթամշակման տիպային գործարան[583]:

Բաքվում 1879 թ. նավթարդյունաբերությամբ զբաղվում էին 70 հայ ձեռնարկատերեր: Նույն թվականին բացառապես հայերի ձեռքին էր կենտրոնացած 137 դես. նավթատաշա: Հայերն իրենց ընկերակիցների հետ միասին շահագործում էին 155, ռուսներն ու եվրոպացիները 79, իսկ մյուսները՝ 61 նավթահոր[584]: 1889 թ. Բաքվում գրանցված 69 նավթարդյունաբերական ընկերություններից 34-ը հայկական էին, որոնք արդյունահանել են 93.891.585 փութ[585] նավթ և լուրջ մրցակցության մեջ էին գտնվում շվեդացի «Նորել եղբ.»[586] և ֆրանսիական «Կասպից-Սևծովյան ընկերություն (Ռոտշիլդ)»[587] ֆիրմաների հետ[588]: Այսպես՝ 1890 թ. դրությամբ 226 մլն փութ նավթի հանույթի 46%-ը պատկանում էր հայերին, 47,3%-ը՝ ռուսներին և եվրոպացիներին, իսկ 6,7%-ը՝ կովկասյան տարբեր ժո-

---

վոխման և մշակման կատարելագործման բնագավառում (տե՛ս Հովսեփյան Ա., Ստեփան Գուլիշամբարով, Երևան, 1973:

[582] Տե՛ս նույն տեղում, էջ 15:

[583] Տե՛ս նույն տեղում, էջ 16:

[584] Տե՛ս **Гулишамбаров С.**, Очерки развития и современное состояние нефтяной промышленности Бакинского района (Списокъ сведений о Кавказе, т. VII. Изданый под ред. главнаго редактора Кавказскаго статистическаго комитета **Н. зейдлица**, Тифлис, 1880, стр. 356-369), տե՛ս նաև **Անանուն Դ.**, Ռուսահայոց հասարակական-քաղաքական մտքի վարգացումը, հ. Բ (1870-1900), Էջմիածին, 1922, էջ 59:

[585] 1 փութը հավասար է 16,2 կգ-ի:

[586] Նորել գերդաստանի ավագը եղել է ճարտարապետ Էմանուել Նորելը, որն ունեցել է չորս զավակ՝ Ռոբերտը (1829-1896), Լյուդվիգը (1831-1888), Ալֆրեդը (1833-1896) և Էմլի-Օսկարը (1843-1864): Որդիներից Լյուդվիգ Նորելը, գալով Բաքու, մանրամասն ուսումնասիրում է տեղի նավթային պաշարները և, արդյունաբերության համար մեծ ապագա կանխատեսելով, 1875 թ. եղբայրներով տեղափոխվում են Բաքու և հիմնում «Նորել եղբ. ընկ.» ֆիրման: 1878 թ, հիմնված (տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1891, № 11, էջ 1366):

[587] Բաքվի նավթարդյունաբերության մեջ եվրոպական կապիտալի մյուս ներկայացուցիչը ֆրանսիական «Ռոտշիլդ եղբայրներ» բանկային տունն էր: Ինչպես աշխարհի տարբեր վայրերում, այնպես էլ Բաքվում, միլիոնատեր Ալֆոնս Ռոտշիլդն իր հզոր կապիտալով ձեռք բերեց նավթի ընդարձակ տարածքներ: Ռոտշիլդն, ստեղծանաբար իր ձեռքը վերցնելով Բաքվի նավթի հողատարածությունների մի զգալի մասը, ինչպես նաև նավթահորերի բաժնետիրական արտոնագրերը, 1879 թ. հիմնեց «Կասպից-Սևծովյան (Ռոտշիլդի ֆիրմա)» ընկերությունը (տե՛ս Баку и его окрестности, стр. 28):

[588] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 448, թ. 2-7, տե՛ս նաև **Դադայան Խ.**, Հայերը և Բաքուն, էջ 21:

պովուրդների[589]*: Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, նավթարդյունաբերության մեջ դնալով անտեսապես ավելի էր հզորանում հատկապես հայ առևտրաարդյունաբերական խավը: Այդ ոլորտում հայերի ներգրավվածության տեսակարար կշիռը կազմում էր 19,06%, վրացիներինը՝ 9,78%, և կովկասյան թաթարներինը՝ 4,70%*[590]*:*

Պատկերն առավել ամբողջական դարձնելու համար, աղյուսակի տեսքով ներկայացնենք Բաքվի նավթարդյունաբերության բնագավառում XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայազգատիպ առաջատար ընկերությունների ոչ լրիվ ցանկը[591]*.*

Աղյուսակ № 5

№	Ընկերության անվանումը	35	«Ջանումյան և Թումանյան» ընկ.
1	«Մանթաշև Ա. և Կ° ընկ.»	36	«Մարգարյանց Գ.» ընկ.
2	«Մեյիք-Աղամիրզյան Ա.» ընկ.	37	«Նոր Մասիս» ընկ.
3	«Բունիաթյան, Սերգևևյան և Հակոբյան»	38	«Օթարյան և Ասլանյան» ընկ.
4	«Աբիյանց և Կ° ընկ.»	39	«Աղբյուր» ընկ.
5	«Ավագով Մ. Խ.»	40	«Արտագած» ընկ.
6	«Աղամով Ալ.» ընկ.	41	«Արամազդ» նավթ. ընկ.
7	«Աղամով Արտ.» ընկ.	42	«Արտաշատ» ընկ.
8	«Աղամով Դ.» ընկ.	43	«Արմենիա» ընկ.
9	«Աղամով Մ. և Նազարով Ե.» ընկ.	44	«Արփենիկ» ընկ.
10	«Անահիտ» ընկ.	45	«Արշալույս II» նավթ. ընկ.
11	«Բախտ» նավթ. ընկ.	46	«Սմբատ Բուդաղյան»
12	«Վանանդ» ընկ.	47	«Վարդանով» ընկ.
13	«Ա. Ի. Աղամյան և Դ. Յուզբաշյան» ընկ.	48	«Փիրոյան» ընկ.
14	«Վաստակ» ընկ.	49	«Ոսկի» նաթ և առևտ. ընկ,
15	«Խսախանով Ա. և Եսայան Գ.» ընկ.	50	«Լազարև եղբ.» ընկ.
16	«Լիանոսյան Գ.» ընկ.	51	«Տեր-Հակոբով Ն.» ընկ.
17	«Այուհիք» ընկ.	52	«Տեր-Հակոբով Հովհ.» ընկ.
18	«Մ. Տեր-Գասպարյան» ընկ.	53	«Նարաթյան» ընկ.
19	«Մանուելյան Մ. Ա.» ընկ.	54	«Գ. Խանդամիրյան»
20	«Փրիդոնյան և Ա. Միլով» ընկ.	55	«Ա. Ծատուրյան» ընկ.
21	«Մ. Ղուկասյան և Բ. Շահգեղանյան» ընկ.	56	«Ս. Ավետիսյանց» ընկ.

[589] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 196, ց. 1, գ. 23, թ. 27-28, տե՛ս նաև Микаелян В., Мирзоян С., նշվ. աշխ., էջ 77:

[590] Տե՛ս Իշխանեան Բ., Կովկասեան ժողովուրդների ազգաբնակչական կազմը, պրոֆեսիօնալ խմբաւորումը եւ հասարակական շերտաւորումը, Թիֆլիս, 1914, էջ 133, 141:

[591] Տե՛ս Մարդանեան Ֆ., Նաւթային քրոնիկ: Բիբի-Էյբաթի պետական նաւթային հողերի աճուրդը (II), «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 2-3, էջ 308-314, տե՛ս նաև Бакинский справочный календарь на 1898 г.: под редакцией А. Юзбашева, Баку, 1897 (Торгово-промышленный адресъ-календарь города Баку), стр. 29-33, տե՛ս նաև Ежегодник Баку и его районъ 1909, отд. III, стр. 117-137.

22	«Կասպյան ընկ.» ընկ.	57	«Ծովիանյան և Բիխովսկի» ընկ.
23	«Եղբ. Օթարյաններ» ընկ.	58	«Այվազյան Ա.» ընկ.
24	«Գ. Մ. Առաֆելյան» ընկ.	59	«Խ. Գ. Թումայան» ընկ.
25	«Ն. Աբելյան և Բ. Յուզբաշյան» ընկ.	60	«Յ. Թումանյան և ընկ.»
26	«Հ. Մելիքյան, Հ. Ադամյան» ընկ.	61	«Բաստամյան Լ.» ընկ.
27	«Ղորղանյան Ա. Բ.» ընկ.	62	«Ե. Եղիազարյան Այվազյան» ընկ.
28	«Մ. Տեր-Օհանյան և Մարգարյանց» ընկ.	63	«Որոտան» նավթ. ընկ.
29	«Կ. Խատիսյան և Սոլոմոն» ընկ.	64	«Տարոն» ընկ. և Ջ. Հակոբյան
30	«Մկրտումով» ընկ.	65	«Կ. Դ. Պողոսյան» ընկ.
31	«Սարումյան և Ճգնավորյանց» ընկ.	66	«Արգումանյանց Խ.» ընկ.
32	«Մելիք-Շահնազարյան» ընկ.	67	«Ավետիսյան, Մարտիրոսյան, Եղիազարյան, Այվազյան» ընկ.
33	«Մելիք-Ազարյանց Ա.» ընկ.	68	«Սոուչաստնիկ» նավթ. և առ. ընկ.
34	«Դիլղարյան Ս. Գ.» ընկ.	69	«Եղբ. Կրասիլնիկյան և Մ. Առաֆելյան» ընկ.

Հայ ձեռնարկատերերը մեծ դերակատարություն են ունեցել նաև նավթահորերի հորատման աշխատանքներում: Նմանաբնույթ 44 ձեռնարկություններ կային, որից հայապատկան էր 18-ը[592]: Այդ ձեռնարկություններն էին. «Արամյանց Դ. Ա.» (աշխ. թիվը՝ 120), «Աթաբեկով, Վարդանով և Կ⁰» (աշխ. թիվը՝ 100), «Երիմյանց Ա. Բ.» (աշխ. թիվը՝ 50), «Գևորգով Ա. Ա.» (աշխ. թիվը՝ 40), «Միրզոյանց Սոֆիա Ար.» (աշխ. թիվը՝ 60), «Տեր-Սահակով Ի. Ջ.» (աշխ. թիվը՝ 35), «Եղբ. Մատուրով» (աշխ. թիվը՝ 65) և այլն[593]:

Հայ նավթարդյունաբերողները, բացվից բացի, նավթարդյունաբերական ձեռնարկություններ ունեին նաև Բաթումում: 1890 թ. Բաթումում նավթի արտահանությամբ զբաղվող 18 ձեռնարկություններից 5-ը պատկանում էր հայերին[594]: 1895 թ. Բաթումում հայտնի էին հայ երեք խոշոր գործարանատերեր, որոնք ունեին մի շարք ձեռնարկություններ: Դրանք էին՝ Ծովիանյանը, Խաչատրյանը և Մանթաշյանցը. «Պ. Ալեքսանդր Մանթաշևանցը՝ Կովկասի մեծագույն վաճառականը, տեր էր երկու խոշոր գործարանի (մեկը իր կառուցածն էր և մյուսը՝ նախկին Մուրթաֆեան-Մելքոնեանցինը, որը նա գնել էր

---

[592] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 196, ց. 1, գ. 23, թ. 30, տե՛ս նաև **Микаелян В., Мирзоян С.**, նշվ. աշխ., էջ 77:

[593] Տե՛ս **Шапшович М.**, նշվ. աշխ. (Бакинская губерния. Промышленныя предприятия г. Баку и его промыслово-заводской районъ), стр. 123-127.

[594] Տե՛ս Տիրեան Կ., Սեւ ծովու ռուսական եզերքը, Վիեննա, 1895, էջ 10:

վերջերս)»[595]: Բաթումում հայ առևտրաարդյունաբերողների ծավալած գործունեության մասին Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է. «Պաթումի գործարաններ շատ կան գլխավորապես նաւթի արդիւնաբերութեան հետ կապուած: Կարծեմ 8.000 բանուոր կաշխատի այդ գործարաններուն մէջ, որոնց կարգին հայեր ալ կան, դոյօրինակ՝ Մանթաշեւ, Մատուրով, Միրզոյեւ նուն, որոնք հայ կառավարիչներ եւ հայ բանուոր կը պահեն մեծ մասով»[596]:

Հայ առևտրաարդյունաբերողներ Միրզոյան, Մանթաշյան, Լիանոսյան, Մատուրյան, Ջալալյան, Բագդասյանց, Մայիլյան[597] և Ավագյան ընտանիքները XIX վերջին և XX դարի սկզբներին, Բաքվից և Բաթումից բացի, նավթարդյունաբերության սկզբնավորման և զարգացման գործում մեծ դերակատարություն ունեցան նաև Գրոզնիում: Այստեղ հիմնված «Лианозов и С-я», «Сунжа» «Маилов и С-я», «Бр. Цатуровы и К°», «Аргун», «Новый Арамазд», «Бакинское нефтяное общество» և «Немрут» ֆիրմաները համարվում էին Բաքվի մասնաճյուղերը[598]: Ուշագրավ է, որ ինչպես Բաքվի, այնպես էլ Գրոզնու առաջին նավթավերամշակման ձեռնարկության հիմնադիրը նավթահանքերի կապալառու Հովհ. Միրզոյանն էր[599]:

Կապիտալիստական հարաբերությունների արագ զարգացումը Կովկասը ներքաշում էր համաշխարհային տնտեսական կապերի մեջ: XIX դարի վերջին Կովկասի և հատկապես Բաքվի նավթի նկատմամբ հետաքրքրություն սկսեցին ցուցաբերել նաև անգլիական դրամատերերը: Լոնդոնում կազմված «Սինդիկատ» ընկերության ներկայացուցիչները (Հ. Գլադստոն, Դ. Քիթսոն, Ջ. Մուր, Ու. Ջոնսոն, Ռ. և Ու. Վերներներ) անգլիական բանկի տնօրեններից մեկի՝ Է. Գուբարդի գլխավորությամբ 1897 թ. սկզբներին Բաքու գալով, 7 մլն ռ. գնեցին «Г. А. Арафелов и К°», «Бр. И. К. и М. Будаговы» և «Бр. А. Я. Адамовы» ֆիրմաները և 1898 թ. ստեղծեցին «Бакинское о-во русской нефти» ընկերությունը[600]:

---

[595] Նույն տեղում, էջ 6:

[596] Տե՛ս Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Ա, Գ հրատ., Թեհրան, 1982, էջ 371:

[597] Մայիլյանները ծնունդով Շամախու գավառի Ռուշանաշեն գյուղից էին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1977, թ. 3):

[598] Տե՛ս **Багдасарян Р.**, Участие армян в развитии грозненской нефтяной промышленности (XIX-нач. XX вв.), ԼՀԳ, Երևան, 1997, № 2, էջ 113-115:

[599] Տե՛ս նույն տեղում, էջ 106:

[600] Տե՛ս Դադայան Խ., Հայերը և Բաքուն, էջ 30:

Ապա 2,3 մլն ռ. ձեռք բերեցին «А. Цатуров и К°» և «Б. М. де Бур» ֆիրմանները և 1899 սեպտեմբերին «Европейская нефтяная К°» մուրթյունը[601]: Թվարկված ընկերություններից բացի՝ անգլիացիները հիմնեցին նաև «Շել» ընկերությունը[602]: «Կովկասյան օրագրությունում» այդ վաճառքի մասին ասվում է. «1897 թ. Թաղիևից և Ծատուրովից անգլիացիները գնեցին նավթահանքերն ու գործարանները: Նաև լուրեր են պտտվում հանքերի վաճառքի մասին Բինկենդորֆի, Առաֆելովի, Մանթաշևի, «Այունիք», «Լուսնյակ», «Մասիս» ընկերությունների մոտ: Բոլոր գործարքներն իրականացվում են անգլիացիների կողմից, որոնք գործարքներն իրականացնում են իրենց ռուսահպատակ ներկայացուցիչների անունից»[603]: Նավթային իր ֆիրման անգլիացիներին ցանկացավ վաճառել նաև «Եղբ. Հովիվյան բնկ.»-ը[604]:

Ազգային արդյունարերողների այդօրինակ քայլը լուրջ անհանգստություն առաջացրեց հայ հասարակական-քաղաքական շրջանակներում[605]: «Տարազ» ամսագիրը, մտահոգված ազգային արդյունաբերության նմանօրինակ կորստով, առաջնորդող հոդվածներում դատապարտեց հայ արդյունաբերողների տնտեսագիտորեն չհաշվարկված քաղաքականությունը: «Բադվի նավթարդյունաբերողներին մոլորեցնողը այն հանգամանքն է,- գրում է «Տարազը»,- որ անգլիացիները ավելի դին էին վճարում նավթահանքին, քան թե սրանք ներկայումս արժեն: Բայց նթէ տեղացի արդյունաբերողները մի փոքր աւելի տնտեսական բնազդում ունենային, կըմբռնեին, որ այդպիսի հարստութիւնները պէտք է գնահատուին ոչ թէ առօրեայ շուկայի գնով, այլ հարկաւոր է, առաջիկայ տասնամեակները ի նկատի ունենալ»[606]:

«Մուրճի» տեսաբան Ծրիդոն Մարգանյանի կարծիքով տեղական արդյունաբերողների մրցակցությանը չդիմանալու հիմնական պատճառը մրցակցային միջավայրի վերաբերյալ օրենքների ոչ լիարժեք իմացությունն էր և իրար հետ չհամագործակցելը. «Բոլորովին հակառակ պատկեր է ներկայացնում մեր վաճառականների

---

[601] Տե՛ս Ибрагимов М., Нефтяная промышленность Азербайджана в период империализма, Баку, 1984, стр. 103.
[602] Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1902, № 5, էջ 181-183:
[603] КК на 1897 г., Тифлис, 1896, стр. 73-74.
[604] Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1898, մարտի 8, № 10, էջ 199:
[605] Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1898, № 2-3, էջ 382:
[606] Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1898, մարտի 8, № 10, էջ 199:

գործունէութեան եղանակը... ընկերութիւններ կազմելուց խուսափում են, որովհետև մէկը միւսին հաւատ չի ընծայում, գործում են բաժան-բաժան եղած և ոչ թէ իրանք անձամբ, այլ կոմիսիոնէրների միջոցով»[607]:

Հարկ է նկատել, որ հայ նավթարդիւնաբերական ֆիրմաների վաճառքը բացասական ազդեցութիւն ունեցավ առաջին հերթին այդտեղ աշխատող հայ բանվոր ծառայողների վրա, քանի որ անդլիացիները վերջիններիս սկսեցին հեռացնել աշխատանքից[608]:

Նավթային իր ընկերութիւնը վաճառելու առաջարկով անդլիացիները դիմեցին նաև կովկասյան թաթարների եղակի մեծահարուստներից Հաջի Զեյնալ-Աբդին Թաղիևին, որը, համաձայնելով, պահանջեց 5 մլն ռ., թեև նավթադաշտերի վրա ծախսել էր ընդամենը 200.000 ռ.: Անդլիացիները, վճարելով այդ գումարը, Թաղիևից գնեցին Բիբի-Հեյբաթում նրան պատկանող նավթադաշտերն ու կերոսինի գործարանը: Սակայն վաճառքից հետո Թաղիևը զղջաց իր քայլի համար, քանի որ նավթահորերից մեկը ժայթքեց և սկսեց օրական 15000 տոննա նավթ արտադրել[609]:

XIX դարի 90-ական թվականների սկզբներից սկսած, երբ հայ նավթարդյունաբերողներն իրենց հանքերը սկսեցին վաճառել, հայերի տնտեսական ազդեցութիւնն աստիճանաբար թուլացավ: Առևտրաարդյունաբերութեան մեջ օտար ձեռնարկատերերի դրամագլխի ներդրումների կտրուկ աճի հետևանքով հայկական դրամագլուխը թեև իր չըջանառու միջոցներով առաջնակարգ դիրք էր գրավում մահմեդականի նկատմամբ, այդուհանդերձ օտարերկրյա կապիտալի ներթափանցման հետևանքով իր դիրքերը որոշ ժամանակով զիջեց անգլիականին և ռուսականին[610]: Նշենք, որ նախքան վաճառքը հայ գործարանատէրերն ունեին 1500 նավթահոր[611]: Սենատոր Ա. Կուզմինսկու կազմած հաշվետվութեան վիճակագրական տվյալների համաձայն Բաքվում 1899 թ. առևտրաարդյունաբերական ձեռնարկութիւններում չըջանառութեան մեջ ներդրված տոկոսաչափը և ստացված եկամուտն ունեին հետևյալ պատկերը[612].

---

[607] Մարդանեան Ֆ., Նաւթարդիւնաբերողների գործի ներկայ վիճակը (ևամակ առաջին), «Մուրճ», Թիֆլիս, 1893, № 10, էջ 1570:

[608] Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1924, Գ տարի, դեկտեմբեր, № 2, էջ 136-137:

[609] Տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 30:

[610] Տե՛ս Վարդանեան Թ., Այսրկովկասում թաթարական ազգայնականութեան դրսեւորման արմատները 20-րդ դարասկզբին, էջ 93:

[611] Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1924, Գ տարի, դեկտեմբեր, № 2, էջ 136:

[612] Տե՛ս Кузьмински, Всеподданнейший отчет..., стр. 92.

Աղյուսակ № 6

Բնակչության կազմը	Շրջանառությունը %-ով	Եկամուտը %-ով
Հայ	25%	27,5%
Մահմեդական	23%	14,5%
Այլք	25%	58%

Փաստերը ցույց են տալիս, որ վերը նշված պատճառներից բացի, հայ նավթարդյունաբերողների տնտեսական դիրքի նվազմանն է նպաստել նաև 1890-ական թթ. վերջերին ցարական կառավարության կողմից Կովկասում հայ բնակչության բոլոր շերտերի (մտավորականություն, հոգևորականություն, գյուղացիություն, բուրժուազիա) նկատմամբ տարվող ազգային խտրականության քաղաքականությունը: Երկրամասի առևտրաարդյունաբերությունը որոշ ժամանակ անց կարող էր դառնալ հայ դրամատիրության մենաշնորհը. այդ հանգամանքը բնական դժգոհություն էր առաջացնում ռուս առևտրաարդյունաբերողների շրջանում[613]*: Կովկասի կառավարչապետի 1890 թ. Ալեքսանդր II-ին ուղղված զեկուցագրում նշված է հետևյալը. «Հայերն Անդրկովկասում գրավել են համարյա ողջ առևտուրը, արդյունաբերությունը, քաղաքներում ունեցվածքի մեծ մասը և հողային սեփականության մի մասը»*[614]*: Ռուս չինովնիկները, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ հայ բուրժուազիան սոցիալական իր դրությամբ և դասակարգային ընդհանուր շահերով ավելի մոտ է կանգնած իշխանություններին, կանխամտածված ձևով սկսեցին հայերին մեղադրել անջատողականության («սեպարատիզմի») մեջ՝ հետապնդական մամուլի միջոցով տարածելով հակահայ ստահոդ լուրեր*[615]*: Հայատյաց այդ քաղաքականությունն արդյունաբերական ֆաքտում այլ ձևով արտահայտվեց: Ցարական կառավարությունը վարչական զանազան ճանապարհներով մեծ դժվարություններ էր ստեղծում հայ արդյունաբերողների համար, որպեսզի նրանք հնարավորություն չունենային ընդարձակելու իրենց նավթային գործերը: Դրա կողքին մեծ արտոնություններ էին սահմանված ազգությամբ ոչ հայ, ծագումով հատկապես ռուս արդյունաբերողների համար. «Վարչական զանազան ճանապարհներով մեծ դժվարություններ էին հանում հայ արդյունաբերողների դեմ, որպես-*

---

[613] Տե՛ս Սիմոնյան Հր., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք Ա, Երևան, 2003, էջ 42-43:

[614] Հովակիմյան Վ., Գյուղացիական շարժումները Արևելյան Հայաստանում (1880-1890-ական թթ.), Երևան, 1984, էջ 23:

[615] Տե՛ս Ակինի Ե., Կովկասեան վէրքեր, ի. Ա, Ժընեվ, 1903, էջ 80-81:

գի նրանք հնարաւորութիւններ չունենան աւելի եւս ընդարձակելու իրենց նաւթային գործերը, դրա հետ միասին ամէն տեսակ առաւելութիւններ ընծայելով ոչ-հայ, մանաւանդ ռուս ծագումով արդիւնաբերողներին... Այդ բոլորը կատարւում էր ոչ թէ լռելեան կամ գաղտնի կերպով, այլ ակնյայտնի, յաճախ դրաւոր յայտարարութեամբ...»[616]*: Դեռևս 1884 թ. հուլիսին Այսրկովկաս ժամանած ռուս աստիճանավոր Ա. Մակարովը, Թիֆլիսի, Բաքվի և Երևանի առևտրական շուկան ու արդյունաբերությունը ուսումնասիրելուց հետո Մոսկվա՝ իր հանձնակատար նշանավոր կապիտալիստ Տ. Մորոզովին հղած զեկուցագրում գրում էր. «Ուշադիր ուսումնասիրելով Անդրկովկասի ներկա իրավիճակը, ընդհանուր եզրակացությունը, որին հանգել եմ իմ խորին համոզմամբ, այն է, որ բնական պայմաններով հարուստ այդ երկրամասը գտնվում է խիստ անշահավետ տնտեսական պայմաններում, որովհետև երկրամասի ամբողջ արտադրողականությունը շահագործվում է հայերի կողմից, որոնք իրենց ձեռքում են վերցրել համարյա ամբողջ առևտուրը և ներկայումս ձգտում են քաղաքական տիրապետության՝ աշխատելով երկրամասում ձեռք բերել վարչական պաշտոններ: Այնինչ, հազիվ թե կարելի է հույս տածել, թե նրանք հարկ եղածի պես կծառայեն ռուսական ազդային շահերին»*[617]*: Բանն այնտեղ էր հասել, որ շատ դեպքերում ռուս և անգլիացի նավթարդյունաբերողներին պատկանող նավթահանքերում բացարձակապես արգելված էր աշխատանքի ընդունել հայ բանվորներին: Հայերի նկատմամբ ոչնչով չարդարացված այդ վերաբերմունքը ցարական պաշտոնյաները փորձում էին պատճառաբանել նրանով, թե իբր հայ բանվորությունն «անհանգիստ եւ դժգոհ տարր է...»*[618]*: Այդ պատճառով հայ աշխատավորության մի ստվար հատված, աշխատանք փնտրելու հույսով, թողնելով Բաքուն՝ հաստատվեց Անդրկասպյան երկրում. «Կասպից ծովի միւս ափում՝ Անդրկասպեան երկրում, ուր հայերի քանակութիւնը համեմատաբար աննշան էր, աստիճանաբար սկսեց դոյանալ եւ կազմակերպուել մի նոր գաղութ, ծծելով մայր երկրից եւ Բագուից նորանոր ուժեր»*[619]*:*

---

[616] Տե՛ս Գիլխանդանեան Ա., Կովկաս երկիրը..., էջ 199:
[617] **Макаров А.**, Закавказье в торговом отношении, Москва, 1884, стр. 32.
[618] Գիլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1924, Գ տարի, դեկտեմբեր, № 2, էջ 136:
[619] Տե՛ս նույն տեղում, էջ 137:

Տեղացի արդյունաբերողներից, որ չընկրկեց օտարերկրյա նավթարդյունաբերական կապիտալի առջև, Ալ. Մանթաշյանցն էր[620], որի հիմնական դրամագլուխն, ի տարբերություն Նորնելի և Ռոտշիլդի ընկերությունների, բանի գնում, մեծ չափերի էր հասնում: XIX դարավերջին, երբ «Նորել եղբ.» ընկերության հիմնական դրամագլուխը կազմում էր 15 մլն ռ., «Կասպից-Սևծովյան ընկերությանը (Ռոտշիլդ)»՝ 6 մլն ռ., ապա հայկական խոշոր և միջին ձեռնարկություններից Ալ. Մանթաշյանցինը՝ 22 մլն ռ., Կասպիական ընկերությանը՝ 2 մլն ռ., Եղբ. Թումայաններինը՝ 2 մլն ռ., Եղբ. Եղիազարյաններինը՝ 2 մլն ռ., Մելիքյանինը՝ 2 մլն ռ., Եղբ. Միրզոյաններինը՝ 3.210.000 ռ.[621]: XIX դարի վերջին տասնամյակում Բաքվում արտադրված նավթի արժեքը կազմում էր 224.639.500 ռ., որի 2/5-ը պատկանում էր հայ արդյունաբերողներին[622]:

XX դարասկզբին տեղի ունեցած սոցիալ-տնտեսական տեղաշարժերի հետևանքով հայ նավթարդյունաբերողները օտարերկրյա կապիտալի հետ մրցակցության պայմաններում մեծ ու փոքր ընկերությունների միավորմամբ կարողացան վերականգնել իրենց առաջատար դիրքը և նախկին ծավալներով շարունակել առևտրաարդյունաբերական գործունեությունը: Ինչպես իրավամբ գրել է հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ Դ. Անանունը (Դավիթ Տեր-Միքայելյան)՝ «Տեխնիկայի ու դրամի այդ արքաների (իմա՛ Նորնել և Ռոտշիլդ ֆիրմանները - Դ. Ս.) հետ կարելի էր մրցել միմիայն հայկական միացրած միջոցներով: Եւ ահա տեղի ունեցավ յետագայ տասնամեակում»[623]: XIX դարի վերջին և XX դարի սկզբներին նավթային արդյունաբերության համակենտրոնացման պայմաններում Ալ. Մանթաշյանցը և Պ. Ղուկասյանը, 1902 թ. համաձայնության գալով «Բրիթիշ փեթրոլեում» ընկերության հետ, Լոնդոնում հիմնե-

---

[620] Ալ. Մանթաշյանցի ֆիրման գրասենյակներ ուներ հետևյալ վայրերում. Ռուսաստանում՝ Ցարիցին, Սարատով և Օդեսա քաղաքներում (գործերի կառավարիչ՝ Քր. Վերմիշյանց), Լեհաստանում (կենտրոնական վարչությունը գտնվում էր Վարշավայում և Կրակովում), Անգլիայում (կենտրոնական վարչությունը գտնվում էր Լոնդոն քաղաքում, ներկայացուցիչ՝ Հովհաննես Միրզոյանց), Հնդկաստանում՝ Կալկաթա, Բոմբեյ, Մադրաս և Կարաչի քաղաքներում, Իրանում, Եգիպտոսում, Սիրիայում, Պաղեստինում, Թուրքիայում և այլն (տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 119-129):

[621] Տե՛ս Անանուն Դ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 80:

[622] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ. հ. VI, Երևան, 1981, էջ 72:

[623] Անանուն Դ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 80:

ցին «Homelight Oil» ընկերությունը[624]*: Երկրի մասշտաբով խոշոր ձեռնարկատերեր էին նաև Լիանոսյան*[625]*, Միրզոյան, Ղուկասյան, Կրասիլնիկյան, Բագլարյան, Մուխթիչյան, Ադամյան, Լալայան*[626]*, Բունիաթյան, Թումայան, Առաքելյան, Փիլիպոսյան, Բուդաղյան, Քալանթարյան, Կաճկաճյան, Մատուրյան, Ունանյան, Փիթոյան և այլ ընտանիքները*[627]*: Եթե 1889 թ. Բաքվում գրանցված 69 նավթարդյունաբերական ընկերություններից հայկական էր 34-ը, ապա 1907 թ. 154-ից 89-ը (58%), 1909 թ. 176-ից 99-ը (56%)*[628]*: 1907 թ. դրությամբ 448 միլիոն փութ նավթի հանույթի 52,4%-ը պատկանում էր հայերին, 36,9%-ը ռուսներին և եվրոպացիներին, իսկ 8,7%-ը կովկասյան այլ ժողովուրդների: Արդեն 1917 թ., 368 միլիոն փութ նավթի հանույթի 53%-ը պատկանում էր հայերին*[629]*:*

Բաքվի նավթարդյունաբերությունում XX դարի առաջին տասնամյակին գործող հայապատկան ընկերությունները («Ա. Ի.

---

[624] Տե՛ս Դադայան Խ., Հայերը և Բաքուն, էջ 32:

[625] 1906 թ. Գևորգ Լիանոսյանի մահից հետո ֆիրմայի գործունեությունը շարունակում էր որդին՝ Ստեփանը: Տիրապետելով նավթարդյունաբերության գործին՝ նա 7 տարվա ընթացքում իր ֆիրմայի հիմնադիր դրամագլուխը հասցնում է 30 մլն ռ.: 1916 թ. «Գ. Մ. Լիանոսյան և որդ.» ընկերությունը ռուսական «Նեվտ» ընկերության հետ Թերեքի մարզում ձեռք բերեց 8 նոր նավթաղաշտեր (տե՛ս **Ибрагимов М.**, նշվ. աշխ., стр. 98):

[626] Շամախի և Բաքու քաղաքների առևտրի, արդյունաբերության և հասարակական կյանքում հայ մելիքական տոհմերից առանձնահատուկ դերակատարություն է ունեցել Լալայան գերդաստանը: Այդ գերդաստանի շառավիղներից Շամախիում և Բաքվում ծավալած իրենց բարերարությամբ հատկապես մեծ ճանաչում էին ձեռք բերել Մարկոս բեկ Լալայանի որդի Պողոս բեկը և նրա 8 որդիները՝ Արաքսը, Հովհաննեսը, Սկրտիչը, Սարգարը, Գևորգը, Հակոբը և Կարապետը, որոնք շարունակել են իրենց հոր գործը: Օրինակ՝ Բաքվում բնակվող Գևորգ բեկը նյութապես մշտապես աջակցել է «Մարդասիրական ընկերությանը» և «Եկեղեցական աղքատախնամ հոգաբարձությանը»: Իր ժամանակի աչքի ընկնող գործիչներից էր նաև Աբաքսի որդի Ալեքսանդրը: Բարեգործական իր ձեռնարկումների համար նա Ռուսաստանի ցար Ալեքսանդր III-ի կողմից արժանացել էր մի շարք պարգևների (Աննայի 3-րդ, Ստանիսլավի 2-րդ աստիճաններ և մեդալներ) (տե՛ս Կենսագրական ակնարկ շամախեցի Լալայեանց ազնիւ տոհմի (ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 309, թ. 1-12): «Հայկական աշխարհի» վկայությամբ. «Մեծապատիւ Պ. Լալայեան եղբայրները հայազգի հարստականների մէջ առաջնակարգ տեղ են բռնում Աստուծոյ շնորհված նիւթական ապահովութեամբ» («Հայկական աշխարհ», Բագու, 1878, № 10-11-12, էջ 302):

[627] Տե՛ս Отчетъ о деятельности правления Бакинского армянского человеколюбивого общества за 1902 г., Баку, 1903, стр. 7-8.

[628] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 448, թ. 2-7, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 196, ց. 1, գ. 23, թ. 30-31, տե՛ս նաև **Микаелян В., Мирзоян С.**, նշվ. աշխ., էջ 77:

[629] Տե՛ս նույն տեղում:

Մանթաշև և կ⁰ ընկ.», «Կասպիյ ընկ.», «Միրզոյան եղբ. և կ⁰ ընկ.», «Արամազդ ընկ.», «Մելիքով Հ. Ս. և ընկ.», «Տեր-Ակոպով և ընկ.», «Ագամյան Հ.», «Եղբ. Թումանյաններ», «Արշալույս II ընկ.», «Եղբ. Թումանյաններ», «Գ. Մ. Լիանոզով և որդ. ընկ.», «Տ. Մ. Քալանթարյան», «Եղբ. Թումայաններ», «Արմուս ընկ.», «Այունիք» նավթային և առևտրական միությունն», «Ավան Յուզբաշյան Դ. Բ.», «Ավագյան Մ.», «Ափիյանց և կ⁰ ընկ.», «Ավակով Մ. Խ.», «Ադամյան Ս. և Գ.», «Հայաստան», «Այվազյան Ա.», «Արալո-կասպյան նավթային և առևտրական միություն»)[630], նավթարտահանման չափերով, եվրոպական կապիտալի հետ մրցակցության պայմաններում պահպանում էին իրենց առաջատար դիրքերը:

Առաջին աշխարհամարտի տարիներին նավթարդյունաբերության համակենտրոնացման գործընթացի հետևանքով 1914-1916 թթ. ընդմիշտ կամ ժամանակավորապես փակվեցին դրամատիրության մրցակցության չդիմացող տասնյակ մանր և միջին ձեռնարկություններ, մյուսները կրճատեցին արտադրության ծավալները: 1914-1917 թթ. ընթացքում Բաքվում գործող նավթարդյունաբերական ֆիրմաների թիվը 182-ից հասավ 162-ի[631]: Եթե նավթի հանույթը 1915 թ. կազմում էր 451 փութ, ապա 1917 թ.՝ 391,7 փութ[632]:

Հայ առևտրաարդյունաբերողները նավթարդյունաբերության ընագավառում իրենց կայուն դիրքը պահպանեցին մինչև դրա պետականացումը[633]:

---

[630] Տե՛ս «Բագուի ձայն», Բագու, 1913, հունվարի 3, № 2, տե՛ս նաև փետրվարի 6, № 30, տե՛ս նաև 1914, հունվարի 3, № 3: Հմմ. **Шапшович М.**, նշվ. աշխ. (Бакинская губерния. Промышленныя предприятия г. Баку и его промыслово-заводской районъ), стр. 87-123.

[631] Տե՛ս **Пажитнов К.**, Очерки и истории Бакинской нефтедобывающей промышленности (XVIII в.-1917г.), М.-Л., 1940, стр. 123. Հմմ. **Алияров С.**, Нефтяные монополии в Азербайджане в период Первой мировой войны, Баку, 1974, стр. 57.

[632] Տե՛ս **Пичикян Г.**, նշվ. աշխ., стр. 95.

[633] Առաջին անգամ դա կատարվեց Բաքվի Ժողկոմխորհի 1918 թ. հունիսի 2-ի՝ «Նավթային ձեռնարկություններն ազգայնացնելու մասին» դեկրետով (տե՛ս **Ստեփան Շահումյան**, ԵԼԺ, հ. 5 (1918 թ. մայիսի 29-սեպտեմբերի 20), Երևան, 1978, էջ 59-64, տե՛ս նաև **Սահակ Տեր-Գաբրիելյան**, Հոդվածներ, ճառեր, փաստաթղթեր, Երևան, 1979, էջ 185-186): Դեկրետի 1-ին և 2-րդ կետերում ասվում էր, որ Բաքվի Ժողկոմխորհը «Արգելք է դնում բոլոր նավթային ձեռնարկությունների ամբողջ շարժական ու անշարժ գույքի վրա, ինչից էլ այն կազմված լինի, ինչպես նաև դրամագլուխների, ընթացիք հաշիվների և արժեթղթերի վրա: Բոլոր նավթային ձեռնարկությունները վարչական, տեխնիկական և ֆինանսական տեսակետից

XIX դարի վերջին հայ խոշոր դրամատերերից շատերն իրենց միջոցները ներդրել և առաջատար դիրք էին գրաղեցնում Բաքվի արդյունաբերական տարբեր ճյուղարկությունների գործարկման մեջ: Նրանց էին պատկանում հանքարդյունաբերական (Օգանեսով եղբայրներ)[634], մետաքսագործական (Բ. Արզումանյան), ծխախոտագործական («Եղբ. Միրզաբեկյաններ և ընկ.»)[635], կաշվեղենի և այլ գործարաններ[636]: Ի դեպ, Գևորգ և Միրզաջան Միրզաբեկյան եղբայրներին պատկանող ծխախոտի գործարանը ռուսական կայսրության կողմից արժանացել է բազմաթիվ պարգևների[637]: Ծխախոտի գործարանատերեր էին նաև Տեր-Գրիգորյանը և Մեժլումյանը[638]:

Հայ ճեռնարկատերերն առաջատար դիրքեր էին գրաղեցնում նաև հրուշակեղենի արտադրության ոլորտում: Սեփական ճեռնարկություններ ունեին Ի. Արրահամյանցը, Բ. Սարգսյանցը և Ստեփանյանց եղբայրները[639]: Այդ բնագավառում լայն ճանաչում էին ճեռք բերել հատկապես Ս. Փանյանցի «Саксонія»[640] և «Եղբ. Փիլիպոսյաններին» հրուշակեղենի ֆաբրիկանները, որոնք արտադրում էին կարամելի զանազան տեսակներ՝ շոկոլադե կոնֆետներ, մարմելադներ և մոնպասիե[641]:

Արդյունաբերական զանազան բնագավառներից բացի՝ հայ դրամատերերը մեծ բաժին ունեին նաև գինեգործության («Եղբ. Արուճյաններ և ընկ.», «Եղբ. Թումանյանցներ և ընկ.», «Եղբ. Աղբյաններ և ընկ.», Ա. Առուստամյան, Մ. Օհանյան, Ա. Սահակյան, Գ. Ագամյանց, Ս. Արզումանյան, Օ. Տեր-Մարտիրոսյանց, Բարխու-

---

ենթարկվում է ժողովրդական տնտեսության Բաքվի խորհրդին» (Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հ. 5, էջ 59):

[634] Կովկասում հանքային արդյունաբերությամբ զբաղվող Բաքվի մեծահարուստ եղբայրների՝ Օգանեսովների առևտրական տան արտասահմանյան գրագրի պաշտոնը 1902 թ. զբաղեցրել է հայ նշանավոր դրամատուրգ, հասարակական-քաղաքական գործիչ Լևոն Շանթը (տե՛ս Ազնավուրյան Գ., Լևոն Շանթի նամակները Հովհաննես Թումանյանին, ՊԲՀ, Երևան, 1982, № 1, էջ 206-207):

[635] Միրզաբեկյանները ծնունդով Շամախու գավառի Նորշեն գյուղից էին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1977, թ. 3):

[636] Տե՛ս **Шапшович М.**, նշվ. աշխ. (Бакинская губерния. Промышленныя предприятия г. Баку и его промыслово-заводской районъ), стр. 135, 208.

[637] Տե՛ս Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 289:

[638] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Торгово-промышленный адресъ-календарь города Баку), стр. 52.

[639] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. IV, стр. 182.

[640] Տե՛ս նույն տեղում:

[641] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Торгово-промышленный Адресъ-календарь города Баку), стр. 64.

դարյան, Բ. Ալիխանյան, Մ. Եղիազարյանց, Երևանցյան և այլք ոլորաններում[641]: Նշված ընկերությունները Բաքվում ունեին գինու, կոնյակի և օղու պահեստներ ու խանութներ[643]:

Հայ ձեռնարկատերերը հիմնել էին նաև մեխանիկական և գործարաններ: Բալախանի տանող մայրուղու վրա գտնվող Կ. Խատիսյանին պատկանող մեխանիկական գործարանը, որը նավթարդյունաբերության համար սարքավորումներ էր պատրաստում, այն ժամանակ համարվում էր խոշոր ձեռնարկություններից մեկը: 1907 թ. դրությամբ այդտեղ աշխատողների թիվը հասնում էր մինչև 600 մարդու: Նրանցից չատերը, որակյալ դարբիններ էին, խառատներ, փականագործներ[644]: Հայապատկան էին նաև «Վուլկան» («Եղբ. Պ. և Դ. Հակոբյան և Կ⁰», «Յուզբաշյան, Խատիսյան և Կ⁰», «Ավանեսյան III», «Ալավերդյանցը», «Հակոբյան Ա.», «Եգանյան Ա.», «Արամյանց Բ. և Կ⁰», «Այվազյան Ն.», «Մարտիկյան Ս.», «Փիթոյան Ի. և Կ⁰», «Հովսեփյան Մ. և Կ⁰», «Ս. և Ա. Պետրոսյան եղբ..», («Ավանեսյան Ա. Ա և Կ⁰»), «Ա. Տեր-Կարապետյան», «Խաչատուրյան Ա.», «Ծատուրյան Ի.» և այլ մեխանիկական գործարանները[645]:

Հայ ձեռնարկատերերը զբաղվում էին նաև քիմիական արդյունաբերությամբ և ունեին գործարաններ, ինչպես, օրինակ՝ Սարաֆյանց եղբայրներին պատկանող «Կրիստալ» գործարանը[646]:

Եկամտի նշանակալի աղբյուր էին նաև մետաղամշակման արհեստանոցները, որտեղ նավթահանքահորերի համար անհրաժեշտ սարքավորումներ էին պատրաստում և վերանորոգում էին դրանք: 1909 թ. տվյալներով քաղաքի կենտրոնական մասում, «Սև», «Սպիտակ» քաղաքամասում և Բալախան-Սաբունչի-Զաբրատում 156 մետաղամշակման արհեստանոցներից հայապատկան էին 53-ը: Դրանք էին՝ «Մովսես Վարդանյան», «Ավանեսյան Ա. Ա. և Կ⁰ ընկ.», «Մկրտչյան Տ. Ա.», «Մուրազ» (Ա. Քալաշյան), «Եղբ. Պետրոսյան-

---

[642] Տե՛ս Шапшович М., նշվ. աշխ. (Бакинская губерния. Промышленныя предприятия г. Баку и его промыслово-заводской районъ), стр. 166.

[643] Бакинский настольный календарь на 1904 г., Справочная книга съ планами гор. Баку и окрестныхъ промысловъ, издание землемера К. Г. Качана, Баку, 1903, ч. II, стр. 65.

[644] Տե՛ս Վերխովցև Վ., Սոկոլովա Ե., Իր ամբողջ կյանքով, Երևան, 1981, էջ 68:

[645] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Торгово-промышленный адресъ-календарь города Баку), стр. 25, տե՛ս նաև Бакинский настольный календарь на 1904 г., стр. 84-85, տե՛ս նաև Шапшович М., նշվ. աշխ. (Бакинская губерния. Промышленныя предприятия г. Баку и его промыслово-заводской районъ), стр. 136-150.

[646] Տե՛ս Шапшович М., նշվ. աշխ. (Бакинская губерния. Промышленныя предприятия г. Баку и его промыслово-заводской районъ), стр. 134.

ներ և Ա. Բոգդանյան», «Կոնստանտին» (Բ. Այտիրդյանց), «Մ. Ալիբեգյան ընկ.», «Ռիշլի» (Ավանեսյան Ա. և կ՚), «Ուրալ» (Մ. Թումանյանց և Ա. Յարմիշյանց), «Աֆանասյան և Դյուլմաիր-յանց հղբայրներ», «Մուրճ ընկ.», «Ռաբոտնիկ» (Լ. Արիստակեսյան), «Տիգրանակերտ» (Ա. Պողոսյան և Նիկ. Իսրայելյան), «Խաչիկ» (Հով-հաննիսյանց), «Բ. Համբարձումյան», «Արաքս ընկ.», «Պրոմեթևս», «Նիկ. Աբրահամյան», «Աբրահամյան և Մելիքսեթյան», «Ա. Ավա-նեսյանց», «Ա. Հակոբյան», «Ա. Հակոբյան և Ա. Ծատուրյան», «Ամիրջան ընկ.», «Ա. Ամիրջանյան», «Դ. Արամյանց», «Արարատ ընկ.», «Ս. Աթաբեկյան», «Դ. Բաղդասարյան», «Բանվոր ընկ.», «Լ. Բեկնազարյան», «Ա. Գրիգորյան», «Դավթյանց և Սարգսյան», «Մ. Ջալալյանց», «Ա. Եղիազարյան», «Երկաթ ընկ.», «Եփրատ» (Աս. Ավագյան, Ալ. Լիանոսյան), «Գր. Խաչանյանց», «Կայծակ» (Ա. Մարգոնյանց, Ալ. Բաղդասարյանց), «Քալաշյանց», «Կայծ ընկ.», «Ա. Գևորգյան», «Կոնոյանց», «Մելիք-Ղարագյոզյան և Բաղ-դասարյան», «Ս. Միրզայանց», «Մշակ», «Ս. Պողոսբեկյան», «Ա. Պո-ղոսյան», «Գր. Սարգսյան», «Ս. Սարգսյանց», «Սրինգ» (Ս. Քալաշ-յանց), «Աս. Տեր-Կարապետյան», «Հակոբյան Ա. և Ծատուրյանց Ա.»,«Հ. Խաչատուրյանց», «Եղբ. Ծատուրյաններ», «Ա. Շահմուրադ-յանց»[647]*:*

Արդյունաբերական ձեռնարկությունները գործարկվում էին համապատասխան ենթակառուցվածքների միջոցով: Այդ բնագավա-ռում մեծ էր հատկապես հանքերին ու գործարաններին էներգիա մատակարարող էլեկտրակայանների դերը: Հայերից էլեկտրակայան-ներ ունեին Ա. Սարգսյանցը, Կրասիլնիկյանները և Արուտչյանը[648]*: 1899 թ. սկսեց գործել նաև Հովհ. Ադամյանի, Բ. Շեյանցի և կ. Դունդերի հիմնադրած «Ապշերոնի էլեկտրական ընկերություն»*[649]*, Սերհ. Հովհաննիսյանի «Свет»: ընկերություն*[650]*: Սեփական կաթ-սայատներ ունեին Ա. Բաբաջանյանը և Պ. Հովհաննիսյանցը: Հայա-պատկան էր նաև «Շիրակ» կաթսայատունը*[651] *Հայերն ունեին նաև*

---

[647] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. IV, стр. 150-159, տե՛ս նաև **Шапшович М.**, նշվ. աշխ. (Бакинская губерния. Промышленныя предприятия г. Баку и его промыслово-заводской районъ), стр. 145.

[648] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. IV, стр. 168.

[649] Տե՛ս Դաղյան Խ., Հայերը և Բաքուն, էջ 47:

[650] Տե՛ս **Шапшович М.**, նշվ. աշխ. (Бакинская губерния. Промышленныя предприятия г. Баку и его промыслово-заводской районъ), стр. 163.

[651] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Торгово-промышленный адресъ-календарь города Баку), стр. 17.

տեխնիկական բնույթի մի շարք գրասենյակներ, որոնցից ամբի ընկնող դեր էին խաղում հատկապես ինժեներ Տ. Բուդագյանի[652] և «Ղուկասյան Պ. Օ. և Կ⁰» ընկերության գրասենյակները:

Հայ առևտրարդյունաբերողներից Ղուկասյան եղբայրները ձեռնարկատիրական լայն գործունեության արդյունքում 1916 թ. կեսերին իրենց ձեռքում կենտրոնացրին էլեկտրատեխնիկական «Դինամո», մարտկոցային «Рекс», «Бета» և «Арматурно –электрическое общество» արտադրությունները[653]: Ղուկասյան եղբայրներից Արշակն ընդգրկված էր Կովկասի պղնձաձուլական լեռնարդյունաբերական «Խուտ» միության վարչության կազմում: Հսկողություն սահմանելով այդ արտադրությունների վրա՝ Ղուկասյան ընտանիքը կարողանում է առաջատար դիրք գրավել ողջ Ռուսաստանում էլեկտրատեխնիկական արդյունաբերության բնագավառում: 1914 թ. դրությամբ Ղուկասյանները «Ռուսկաբել» բաժնետիրական միությունում տիրում էին 17548 բաժնեթղթերի, որը կազմում էր ամբողջի 69%-ը. դրա շնորհիվ վերջիններս հնարավորություն էին ստացել վերահսկել «Ռուսկաբելի» գործունեությունը[654]:

Բաքվի հայ առևտրաարդյունաբերողների առևտրական չրջանառության գլխավոր մասն իրականացվում էր Կասպից ծովով: Բազաքը հնուց ի վեր ուներ իր նավահանգիստը. «Կասպից ծովը Բաքուի առաջ կազմում է ծոց. դա մի հիանալի նաւահանգիստ է, որի նմանը Կասպիականի ափերում չը կայ: Այդ ծոցի երեք կողմով կիսաշրջան է տալիս Բաքուն»[655]: Ուստի հայ առևտրաարդյունաբերողները նավթի վերամշակման և արդյունաբերական այլ գործարաններ ունենալուց զատ, ունեին նաև նավամատույցներ և սեփական չքեղ շոգենավեր[656]: Նկատենք, որ Կասպից ծովում նավագնացության առաջխաղացմանն էր նպաստում դեռևս 1850 թվականից «Տեղի դեկապետերի համար գործող ծովագնացության դպրոցը»[657]: Դպրոցին կից գործում էր նաև ծովագնացների ակումբը[658]: Այսպես՝ «Թուման» և «Մուխսախա», «Գրիգոր Թումայանց» անուններով շոգենավերի տերն էր խոշոր նավթարդյունաբերող Գր. Թումայանը,

---

[652] Տե՛ս «Բագուի ձայն», Բագու, 1913, դեկտեմբերի 14, № 149, տե՛ս նաև Ежегодник Баку и его районъ 1909, отд. IV, стр. 196.
[653] Տե՛ս Ибрагимов М., նշվ. աշխ., стр. 127.
[654] Տե՛ս Монополия в металлургической промышленности Росии 1900-1917 гг. (документы и материалы), М.-Л., 1963, стр. 488.
[655] «Արօր»-ի պատկերազարդ օրացոյց 1894 թ., էջ 26:
[656] Տե՛ս «Նոր-դար», Թիֆլիս, 1890, օգոստոսի 8, № 122:
[657] АКАК, т. XI, док. 817, стр. 795 .
[658] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, ապրիլի 19, № 82:

Պողոս[659] *և Բադդասար Սարգսյան եղբայրների բնտանիքներին էր պատկանում «Գրիգոր Արծրունի» շոգենավը*[660]*, Ալ. Մանթաշյանցին է պատկանել «Հուսիկ» անունը կրող առագաստանավը: Բացի դրանից նա բազմաթիվ սեփական շոգենավեր ուներ Բաթումում և Կ. Պոլսում, իսկ Պարսից ծոցում նաև շոգենավային ընկերություն՝ «Ռուսական շոգենավային ընկերություն» անվամբ*[661]*: Սեփական նավեր ուներին նաև Սարուխանյանները, Լիանոսյանները և Թումանյանները: «Թումանյան եղբ. առևտրական ընկ.»-ը մարդատար շոգենավեր ուներ ինչպես Բաքվում, այնպես էլ Էնզելիում*[662]*: Բացի այդ ընկերությունն ուներ 2 բեռնատար նավ՝ 1.269,5 տոննա տարողությամբ*[663]*: Կասպից ծովի առևտրական նավատորմը հիմնականում զբաղված էր նավթ տեղափոխելով:*

Սեփական շոգենավերի, այդ թվում նաև օվկիանոսային նավերի ու մի շարք հարմար նավահանգիստների տերեր էին Միրզոյանները, Ղուկասյան եղբայրները, «Եղբ. Ադամյան» առևտրական ընկերությունը, իսկ «Եղբ. Բունիաթյան» միությունը Կասպից ծովում ուներ սեփական նավատորմիղ, որը համարվում էր ռուսական ներքին չուկայի խոշոր արտահանողներից մեկը[664]*: Կասպից ծովում բեռնափոխադրումներ են կատարել նաև հայկական այլ ընկերությունների և առանձին անհատների «Մասիս», «Արարատ», «Կիլիկիա», «Անի», «Սևան», «Արմենիա», «Արմենակ», «Արցախ», «Հայաստան», «Շուշանիկ», «Արաքս», «Վան», «Մուշ», «Զանգի», «Արծուի Վասպուրական», «Թամարա», «Արշալույս», «Աննա», «Մենաստան», «Վահան» և հայանուն այլ մարդատար և ապրանքատար շոգենավերն ու առագաստանավերը*[665]*: Կասպից ծովում բեռնափոխադրումներ էին կատարում նաև Ավետյանին պատկանող «Վաս-*

---

[659] Պ. Սարգսյանի կինը՝ Եղիսաբեթ Սարգսյանը, եղել է Բաքվի Մարդասիրական ընկերության մասնաճյուղերից մեկի՝ «Աշխատանքի տան» փոխնախագահը: Ալ. Մանթաշյանցի կենսագիր Առ. Սարուխանը գրում է, որ Ե. Սարգսյանը եղել է ջերմ մշակական, իսկ Գր. Արծրունու հանդեպ տածած նրա հարգանքն ու ակնածանքն այնքան մեծ էր, որ Կասպից ծովի վրա բանող իրենց սեփական շոգենավը անվանակոչել էր «Գրիգոր Արծրունի» (տե՛ս **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., էջ 61):

[660] Տե՛ս Баку и его окрестности, стр. 68.

[661] Տե՛ս **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., էջ 89, 94:

[662] Տե՛ս **Ծոցիկեան Ս.**, Արարատ-Կովկաս, էջ 289:

[663] Տե՛ս **Ստեփանյան Ս.**, նշվ. աշխ., էջ 101:

[664] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 196, ց. 1, գ. 23, թ. 29, տե՛ս նաև **Микаелян В., Мирзоян С.**, նշվ. աշխ., էջ 77:

[665] «Արօր»-ի պատկերազարդ օրացոյց 1894 թ., էջ 35, տե՛ս նաև Ежегодник Баку и его районъ 1909, отд. V, стр. 201-208, տե՛ս նաև **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 362:

պուրական» և «Էվելինա», Կոմանյանց եղբայրների և Բունիաթյանի՝ «Սպասատել», Փարսադանյանի՝ «Գրիգորյան», Թումայան եղբայրների՝ «Անբյուժ», «Արշակ» և «Կոնստանտին» շոգենավերը: 1890 թ. հունիսին հայ նավթարդյունաբերողները հիմնել էին նաև «Հայոց շոգենավային ընկերություն»[666]: Ընկերությունը պատվիրում է մի մեծ շոգենավ, որը պետք է կրեր «Րաֆֆի» անունը[667]: Ընկերությանն էին պատկանում նաև «Աչոտ երկաթ», «Ամասիա» և «Արամայիս» շոգենավերը[668]:

Հայ նավթարդյունաբերողներն ունեին նաև կերոսին տեղափոխող հատուկ նավեր («Հայկական շոգենավային ընկերության», «Արմենյակ», Առաֆելյանի «Ռաֆֆիլ», Թումայանի՝ «Ադմիրալ», «Լազար», «Կոնստանտին»)[669]: Բաքվում գործող եվրոպական նավային ընկերություններից չատերի կառավարիչները ևս հայեր էին: Օրինակ՝ ֆրանսիական «Մնսսաժըրի Մարիտիմ» նավային ընկերության Բաքվի բաժանմունքի կառավարիչն էր պոլսահայ Անտոն Գարայանը (Բաքվում 1896 թ. մշտական բնակություն հաստատած հանաչված դերասանուհի Ագնիվ Հրաչյայի (Ագնիվ Մինասյան) ամուսինը)[670]:

Կասպյան առևտրական նավատորմը, այդ թվում նաև «Հայկական շոգենավային ընկերությունը» և հայազգատկան շոգենավերն առաջին անգամ պետականացվեցին Բաքվի Ժողկոմխորհի 1918 թ. հունիսի 6-ի ընդունած «Կասպիական առևտրական նավատորմի ազգայնացման մասին» դեկրետով[671]:

---

[666] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1890, հունիսի 24, № 18, էջ 14, տե՛ս նաև Տեղեկագիր եւ հաշիւ Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան 1906 թուականի, էջ 29:

[667] Տե՛ս նույն տեղում:

[668] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. V, стр. 201.

[669] Տե՛ս Сборник статистических сведений о русской и американской нефтяной промышленности, Баку, 1890, стр. 48, 50, տե՛ս նաև Դադայան Խ., Բաքուն և հայերը, էջ 44:

[670] Տե՛ս Ագնիւ Հրաչեայ, Իմ յիշողութիւններս, Փարիզ, 1909: Ի դեպ, Ա. Հրաչյայի և Ա. Գարայանի ամուսնությունը կայացել է 1873 թ. հոկտեմբերի 14-ին (տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1893, հունիսի 4, № 63):

[671] Դեկրետի առաջին կետում ասվում էր. «Կասպիական ամբողջ առևտրական նավատորմը, որը պատկանում է բաժնետիրական ընկերություններին, փայատիրական ընկերություններին, առևտրական տներին, բոլոր տիպերի ծովային և գետային նավերի սեփականատերերին՝ ամբողջ շարժական ու անշարժ գույքով, դրամարկղների կանխիկ գումարներով, վարկային հիմնարկներում ունեցած ընթացիկ հաշիվներով, և ընդհանրապես, այդ ձեռնարկությունների ակտիվներով ու պասսիվներով, ինչում էր որ դրանք կայանան, հայտարարվում է Ռուսաստանյան

Բաքվի հայ դրամատերերն իրենց որոշակի դերակատարությունն ունեին Բաքվի ֆինանսա-վարկային և բանկային համակարգերի կազմակերպման գործում: 1875 թ. ստեղծված Բաքվի փոխադարձ վարկային ընկերության նախագահն էր Միք. Բենկենդորֆը, իսկ անօրենը՝ Հ. Ադամյանը: Ընկերության կառավարումը 1886 թ. ստանձնում են հայերը: Հ. Ադամյանից հետո բանկի կառավարիչն էր Սերգեյ Վարշամյանը, իսկ 1903-1918 թթ. Ստեփան Այվազյանը[672]*: Բաքվի փոխադարձ վարկային ընկերության երկրորդ բանկի վարչության անդամ էր Ալեքսանդր Ներսեսյանը*[673]*:*

1900 թ. Բաքվում հիմնված Բաքվի քաղաքային վարկային ընկերության վարչության նախագահը ռուս էր, իսկ անօրեններն էին՝ Ալեքսանդր Այվազյանը և Արամ Խանաղյանը[674]*: Վարչության անդամության թեկնածուներն էին Լազո Վարդազարյանը, Թումաս Մելիքյանը, Հովհաննես Ադամյանը, գլխավոր հաշվապահը՝ Արշակ Դուրինյանը, նրա օգնականը՝ Գրիգոր Սարգսյանը: Ընկերությունն ուներ նաև դիտորդական հանձնախումբ, որի նախագահն էր Համբարձում Մելիքյանը (անդամներ՝ Բաղդասար Հակոբյան, Արշակ Թումայան): Մեկ տարի անց ընկերության վարչության նախագահ է դառնում «Մելիքով և Կ°» բաժնետիրական ընկերության նախագահ Հրիստափոր Սերգեյի Անտոնյանը*[675]*, իսկ 1912 թվականից՝ Ալ. Այվազյանը*[676]*:*

Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության անբաժան սեփականությունը» (Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հ. 5, էջ 71):

[672] Տե՛ս КК на 1877 г., Тифлис, 1876, стр. 39, տե՛ս նաև Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 24, տե՛ս նաև Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 35, տե՛ս նաև Ежегодник Баку и его районъ 1909, отд. IV, стр. 173, տե՛ս նաև **Шапшович М.**, նշվ. աշխ. (Бакинская губерния. Промышленныя предприятия г. Баку и его промыслово-заводской районъ), стр. 174, տե՛ս նաև Դադայան Խ., Հայեր և բանկեր, Երևան, 2005, էջ 3-4:

[673] Տե՛ս Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 35.

[674] Տե՛ս Առաքելյան Գ., Խանաղյաններ (հայ կալվածատերերի պատմությունից), ԼՀԳ, Երևան, 1997, № 2, էջ 74-82: Արամ Խանաղյանը (1859-1928) եղել է տոհմիկ կալվածատեր, Լոռիում և Երևանի նահանգի էջմիածնի գավառում գործունեություն ծավալած Եգոր Խանաղյանի որդին: Ա. Խանաղյանն ավարտել է Պետրովսկու անվան գյուղատնտեսական ակադեմիան: Հեղինակ է գիտական մի շարք ուսումնասիրությունների: Ա. Խանաղյանը եղել է նաև ռուսական գործող բանակի սպա և մասնակցել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին: 1880-1900 թթ. աշխատել է Երևանի նահանգի, այնուհետև Ախալցխայի անտառտնտեսություններում: 1900 թ. բնակություն է հաստատել Բաքվում: Ժամանակակիցների վկայությամբ՝ Ա. Խանաղյանը եղել է կիրք և բանիմաց անձնավորություն:

[675] Տե՛ս КК на 1907 г., стр. 109, տե՛ս նաև «Баку», Баку, 1910, 25 июля, № 167, տե՛ս նաև Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 35, տե՛ս նաև Ежегодник Баку и его районъ 1909, отд. IV, стр. 173.

[676] Տե՛ս **Шапшович М.**, նշվ. աշխ. (Бакинская губерния. Промышленныя предприятия г. Баку и его промыслово-заводской районъ), стр. 174.

Թիֆլիսի առևտրային բանկի Բաքվի մասնաճյուղի կառավարչի պաշտոնը 1886 թ. ստանձնել էր Մաթևոս Մամիկոնյանը, որին 1903 թվականից հաջորդում է Ստեփան Խոջայանը[677]: 1897-1909 թթ. Ս. Պետերբուրգի ռուսական առևտրա-արդյունաբերական կոմերցիոն բանկի կառավարիչն էր Մաթևոս Մամիկոնյանը[678]:

Հայ տնտեսագետներն ու ֆինանսիստները տարբեր պաշտոններ էին զբաղեցնում նաև բանկային համակարգում: Օրինակ՝ Ռուսական ներքին առևտրի բանկի գանձապահն էր Նիկ. Յուզբաշյանը[679]: Թիֆլիսի առևտրային բանկի Բաքվի մասնաճյուղի ապրանքադիտության վարչությունը ղեկավարում էր Վահան Երիցյանը, հաշվապահն էր Նիկ. Թոխաթյանը, գանձապահը՝ Նիկ. Բարամյանը[680]: Ս. Պետերբուրգի ռուսական առևտրաարդյունաբերական կոմերցիոն բանկի հավատարմատարն էր Ստեփան Ֆրանգուլյանը[681]: Բաքվի փոխադարձ վարկային ընկերության երկրորդ բանկի հաշվապահն էր Ս. Ճգնավորյանցը[682]: 1909 թ. դրությամբ Բաքվի պետական բանկի հաշվարկային և փոխառության առևտրատարդյունաբերական վարկային կոմիտեի անդամներ էին Ստեփան Լիանոսյանը և Տիգ. Մելիք-Դադայանը[683]:

Բանկային համակարգից բացի հայերը առաջնակարգ դիրքեր էին զբաղեցնում նաև Բաքվի ֆինանսական բորսայում: 1897 թ. Բաքվի բորսային կոմիտեի նախագահն էր Դավիթ Յուզբաշյանը[684], որին հաջորդել է Ստ. Թաղիանոսյանը[685]: Կոմիտեի կազմում ընդգրկված էին Ար. Ղուկասյանը և Ար. Պարոնյանը[686]: Առևտրական և բորսայական գործարքների միջնորդներն էին Ղուկաս Շխյանցը, Արշակ

---

[677] Տե՛ս Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 36, տե՛ս նաև Ежегодник Баку и его районъ 1909, отд. IV, стр. 174, տե՛ս նաև Դադայան Խ., Հայեր և բանկեր, էջ 5-7:

[678] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 25, տե՛ս նաև Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 36, տե՛ս նաև Ежегодник Баку и его районъ 1909, отд. IV, стр. 174, տե՛ս նաև Դադայան Խ., Հայեր և բանկեր, էջ 3-4:

[679] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. IV, стр. 174:

[680] Տե՛ս Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 36, տե՛ս նաև Ежегодник Баку и его районъ 1909, стр. 174.

[681] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. IV, стр. 174.

[682] Տե՛ս նույն տեղում, отд. IV, стр. 173.

[683] Տե՛ս նույն տեղում, отд. II, стр. 59.

[684] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 26.

[685] Տե՛ս Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 33, տե՛ս նաև Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 83.

[686] Տե՛ս նույն տեղում:

Ալեքսանդրյանը, Աբրահամ Առաքելյանը և Համբարձում Յուդրաշյանը[687]:

1908 թ. հոկտեմբերի սկզբներին Բաքվում «Հայոց կուլտուրական միությունը» հիմնում է «Անդրկովկասյան կոոպերատիվ միությունն» սպառողական ընկերությունը (համանախագահներ՝ Ա. Ճղնավորյանց, Գ. Մարտիրոսյանց)[688]:

Հայ ձեռնարկատերերն ունեին նաև վաճառատներ և առևտրային ֆիրմաներ, զբաղվում էին նաև տեղական և միջազգային առևտրով[689]: *Բազմաթիվ են այն փաստերը, որոնք աներկբայորեն վկայում են, որ Բաքվում պարբերաբար տեղի ունեցող «Նիկոլաևսկայա» տոնավաճառներում, ուր բերվում էին մեծ պահանջարկ ունեցող ապրանքներ Իրանից, Անդրկասպյան երկրից, Միջին Ասիայից և այլ երկրներից, մշտական և հիմնական մասնակիցներն էին հայ վաճառականներն ու ձեռնարկատերերը*[690]: *Միևնույն ժամանակ հայ վաճառականները Բաքվի տարանցիկ ուղով ապրանքներ էին ներմուծում Ռուսաստան և արտահանում Իրան: Օրինակ՝ ռուսահպատակ չուխոյի Հովհաննես Միրզա-Ավագյանը Բաքվի վրայով Ռուսաստան էր ներմուծել 94754 ռ. ապրանք և Իրան էր արտահանել 5125 ռ. ռուսական ապրանք*[691]: *1884 թ. հուլիսին Բաքու ժամանած ռուս պաշտոնյա Ա. Մակարովը Մոսկվա՝ Տ. Մորոզովին հղած զեկուցագրում գրում է, որ տեղի մանուֆակտուրային ապրանքների առևտրով զբաղվող առևտրականներից նշանավոր են Գրիգոր և Հովսեփ Թումանով եղբայրները*[692]:

Բաքվի հայ վաճառականները գործուն մասնակցություն ունեին նաև Լենքորանի գավառի, Իրանին սահմանակից նավահանգստային Աստարա ավանի առևտրական գործառույթներում: Հայ վաճառականներից շատերն այդտեղ հատուկ պահեստներ ունեին ապրանքները պահելու համար: Այդտեղ էր գտնվում «Թու-

---

[687] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. IV, стр. 175.

[688] Տե՛ս «Գործ», Թիֆլիս, 1908, հոկտեմբերի 9, № 24, տե՛ս նաև Տեղեկագիր եւ հաշիւ Բագուայ Հայոց կուլտուրական միութեան 1907 թ. 7 ամսուայ եւ 1908 թ. գործունէութեան, № 2, Բագու, 1908, էջ 65:

[689] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 196, ց. 1, գ. 23, թ. 28, տե՛ս նաև **Микаелян В., Мирзоян С.**, նշվ. աշխ., էջ 77:

[690] Տե՛ս «Նոր-դար», Թիֆլիս, 1890, մայիսի 31, № 69, տե՛ս նաև «Վտակ», Թիֆլիս, 1908, մայիսի 8, № 90:

[691] Տե՛ս Ստեփանյան Ս., նշվ. աշխ., էջ 72:

[692] Տե՛ս **Макаров А.**, նշվ. աշխ., стр. 22.

մանյան եղբ.» առևտրական տան պահեստները[693]*: 1898 թ. օգոստոսի 18-ին ռուսական Աստարա է այցելել Պարսկա-Հընդկաստանի հայոց թեմի առաջնորդ Մաղաքիա եպս. Տերունյանը: Թեմական ուղևորության մանրամասները գրի է առել գալիր Մկրտիչ Երկարակեցյանը, որի վկայությամբ՝ «...Ռուսաց Աստարայում կան Ռուսներ, Մալականներ, Հայեր և Պարսիկներ, բացի մաքսատնից կան վաճառականական մթերանոցներ ընկերությունների, անհատների. գլխաւոր տերը բռնում են Թումանեանք, Մերկիւրի ընկերութիւն: Մեր Դավրէժից-Աստարայ ուղևորութեան ընթացքում, աչքի էին ընկնում (Յ. Թ.) տառերը գրեթէ ամեն կարաւաններում՝ Թումանեանց տան վաճառականական պարզ նշանագրերը՝ տեսնելիս այնքան ուրախ էի զգում զիս՝ որքան չէի ուրախանար եթէ իրօք ինձ լինէին այդ հարստութիւնները՝ բաւական է որ Հայ է սրանցով բաղդաւորուողն աստւմ էի իւրովի...»*[694]*: «Թումանյան եղբ.» առևտրական ընկերությունը հատուկ պահեստներ ուներ նաև նավահանգստային Ենզելի քաղաքում, ուր կարող էր պահվել 100 վագոն չաքար*[695]*:*

1904 թ. տվյալներով Բաքվի առաջին գիլդիայի 99 վաճառականներից հայերը էին 43-ը[696]*: Նույն թվականի տվյալներով երկրորդ գիլդիայի 214 վաճառականներից հայեր էին 81-ը*[697]*: Ընդհանուր*

---

[693] Տե՛ս Երկարակեցեան Մ., Ուղեւորութիւն առաջնորդին Հայոց Պարսկ. եւ Հնդկաստանի Տ. Մաղաքիա Ս. եպիսկոպոսի Տէրունեան, Նոր-Ջուղա, 1899, էջ 42:

[694] Նույն տեղում, էջ 43:

[695] Տե՛ս Ստեփանյան Ս., նշվ. աշխ., էջ 91:

[696] Նրանք էին՝ Հովի. Աբգարյան, Ն. Ավետիսյան, Հ. Ավետիսյան, Ար. Ադամյան, Հ. Ադամյան, Ա. Հակոբյան, Բ. Հակոբյան, Հ. Անտոնյան, Միք. Արամյանց, Գր. Առաֆելյան, Մ. Առաֆելյան, Ս. Առաֆելյան, Նիկ. Առաֆելյան, Ի. Բեգլարյան, Միք. Բեգլարյան, Ի. Բուդաղյան, Ա. Բունիաթյան, Ավ. Ղուկասյան, Պ. Ղուկասյան, Ի. Եղիազարյան, Ե. Քալանթարյան, Մ. Քալանթարյան, Խ. Կարախանյան, Մ. Կրասիլնիկյան, Ե. Կրասիլնիկյան, Գ. Մարգարյան, Ա. Մելիքյան, Հովի. Մելիքյան, Լ. Մելիքյան, Նիկ. Մելիքյան, Թ. Մելիքյան, Մ. Միրզաբեկյանց, Միք. Տեր-Գասպարյան, Ս. Տեր-Օհանյան, Ա. Թումայան, Հ. Թումայան, Գ. Թումայան, Ա. Թումանյանց, Ստ. Թումանյանց, Ան. Ծատուրյանց, Հովի, Ծատուրյանց, Նիկ. Շահգիդանյան, Ա. Յուզբաշյան (տե՛ս Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 77-78).

[697] Նրանք էին՝ Աս. Ավանեսյան, Հ. Ավետյան, Յակ. Ավետյան, Հ. Աղամյան, Մ. Ահարոնյան, Ա. Աղբյան, Կ. Աղամյան, Ս. Աղամյան, Մ. Հայրապետյան, Ա. Հակոբջանյան, Ար. Հակոբջանյան, Ավ. Ամիրջանյան, Ել. Ամիրյան, Անդ. Ապրեսյան, Աբ. Ապրեսյան, Ս. Ապրեսյան, Հ. Ապրեսյան, Ս. Առաքելյան, Աբր. Առաքելյան, Բ. Արամյանց, Հ. Բաբայանց, Հ. Բուդաղյան, Մ. Բուդաղյան, Նիկ. Վարդանյան, Ս. Գոնյանց, Աննա Ղուկասյան, Աննա Հ. Ղուկասյան, Միք. Ղուկասյան, Յակ. Գյուլբաւսարյան, Ի. Դավիդյանց, Ի. Դանիելբեկյան, Ան. Ջավադյան, Գ. Ջալալյան, Ե. Դիլդարյան, Ս. Դիլդարյան, Ա. Իսկանդարյան, Միք. Ղազարյան, Ար. Գասպարյան,

առմամբ. առաջին և երկրորդ գիլդիայի 313 վաճառականներից 124-ը հայեր էին, մնացածը՝ հիմնականում ռուսներ, հատուկենտ էին կովկասյան թաթարները:

Բաքվի տնտեսության մեջ խոշոր դեր ունեցող հայ առևտրական դասն իր ձեռքում էր կենտրոնացրել քաղաքի մի քանի հայտնի փողոցների (Տելեֆոնի, Բոլշոյ-Մորսկոյ, Տորգովի, Մերկուրևսկի, Կրիվոյ, Բարյատինսկի, Վելիկոկնյաժեսկի) առևտրական տների և խանութների բացարձակ մեծամասնությունը, իսկ որոշ մասերում՝ անգամ ամբողջությունը[698]: 1883 թ. տվյալներով Բաքվի վեց առևտրական տներից հայապատկան էր հինգը. Զիլթախյան և Էմինյան, Ֆրիդոնյան և Շահնազարյան, Ծովհաննյան, «Բեկխանյան և ընկ.» և «Ղազումյան և ընկ.»[699]: XX դարասկզբին այդ շարքը լրացնում են նաև «Նասիբյանց», «Տեր-Պետրոսյանց» և «Գ. և Ն. Տեր-Աբրահամյան» առևտրական տները[700]:

Բաքվում հայերին էին պատկանում գրեթե բոլոր չքեղ խանութները և առևտրական տները: 1890 թ. Բաքու այցելած Մակար եպս. Բարխուտարյանցը գրել է. «Բնակիչներն են հայ, ռուս, պարսիկ, թուրք են. և բազմաթիւ պանդուխտներ կովկասաբնակ ազգերից և մինչև անգամ արտասահմաններից...: Պարսիկներն, որք բնակում են ներդումս և քաղաքիս հարաւային կողմում, բոլորովին անկարգ և խառն ի խուռն չինած են իւրեանց բնակարանները և խանութները: Բարեկարգ և կեղեցիկ չինուած են հայոց տները, խանութները և իջևանները»[701]: Հարկ է նկատել, որ հայ վաճառականները, հիանալի իմանալով տեղական շուկայի պահանջմունքները, ձգտում էին դրանք համապատասխանեցնել տեղական բնակ-

---

Նիկ. Կաճկաճյան, Մ. Կաճկաճյան, Քր. Գևորգյան, Կ. Լազարև, Միք. Մաղաքյան, Մարտիրոսյան, Ե. Մելիքյան, Շ. Մելիքյան, Ս. Մելիքյան, Խ. Մելիքյան, Ի. Միրաքյան, Ավ. Մնացականյան, Բ. Մնացականյան, Ա. Նասիբյանց, Ա. Հովհաննիսյան, Ար. Հովհաննիսյան, Ս. Հովսեփյան, Մ. Պատվականյանց, Նիկ. Պետրոսյանց, Ս. Պետրոսյանց, Վ. Պողոսյան, Ի. Փիթոյան, Քր. Սահակյան, Ջ. Սարգսյան, Ե. Սարգսյան, Ա. Սարգսյան, Բ. Սարգսյան, Նիկ. Տեր-Գասպարյան, Ա. Տեր-Հովհաննիսյան, Լ. Տեր-Հովհաննիսյան, Ս. Տեր-Հովհաննիսյան, Ա. Տեր-Սահակյան, Ար. Թումայան, Լ. Թումայան, Մ. Թումայան, Ստ. Ունանյան, Լ. Փիլիպոսյանց, Ա. Խաչատուրյան, Գր. Խաչատուրյան, Գր. Չախմաչյան, Ս. Չախմաչյան, Ղ. Շխյանց, Ա. Յուզբաշյան (տե՛ս նույն տեղում, стр. 78-80.)

[698] Տե՛ս Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները: Անկետային ուսումնասիրութիւն սեպտեմբերեան անցքերի 1918 թ., Թիֆլիս, 1920, էջ 111:

[699] Տե՛ս КК на 1884 г., Тифлис, 1883, стр. 199.

[700] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1908, հունվարի 9, № 5, տե՛ս նաև «Արեւ», Բագու, 1914, օգոստոսի 10, № 104:

[701] Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 151-152:

չուլթյան ճաշակին և գնողունականությանը: 1897 թ. տվյալների համաձայն՝ նպարեղենի 41 խանութներից հայապատկան էր 17-ը: Բաքվում յայն ճանաչում ունեին Պ. Հարությունյանի, Ա. Ավետիսյանի, Պ. Պողոսյանի, Ա. Բազդասարյանի, Գևորգյանի, Ա. Սանամյանցի, Տեր-Միքայելյան եղբայրների, Ե. Պորտնոյանցի, Վ. Պողոսյանի, Ս. Մելիքյանի, Ս. Պետրոսյանի, Ա. Օսիպյանի, Զարրաբյանցի, Պ. Թամիրյանցի, Շահրազյանի, Մ. Միրումյանցի խանութները[702]: Հայերն ունեին ոսկերչական և գոհարի իրերի խանութներ: Մեծ հռչակ էին վայելում հատկապես Հակոբ Մանդասարյանցի (հիմնվել է 1874 թ.)[703] և Ս. Ավանեսյանի «Женевский» անունը կրող գոհարեղենի խանութները, որտեղ ընդունում էին ոսկյա, արծաթյա և ադամանդյա իրերի պատվերներ[704]: Նմանաբնույթ խանութներ ունեին նաև Ն. Վարդապետյանը, Գ. Բոյախչյանցը, Պ. Թարչիմանյանցը, Կ. Ահարոնյանն ու Ար. Հայրապետյանը[705]: Տարաբնույթ խանութների շարքում 1897 թ. հոկտեմբերի 1-ի տվյալներով 73 մանուֆակտուրային խանութներից հայապատկան էր 40-ը: Դրամաշրջանառության ծավալներով ամենանշանավորներից էին Գ. Գուլյանցի, Թումայաններ, Ա. Բաբախանյանցի, Ա. Մուշկանբարյանցի, Մ. Թավաքալյանի, Ս. Ավագյանի, Մ. Ծատուրյանի, Խ. Կարախանյանցի, Կ. Ադամյանի, Մ. Կաճկաճյանի և Յուղրաչյան եղբայրների խանութները[706]: Բաքվում XX դարի սկզբներին գործած հայապատկան խանութների թվի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում 1917 թ. «Կովկասյան օրացույցը»: Այսպես՝ քաղաքի 1371 նպարեղեն խանութից հայապատկան էին 311-ը, 10 պարենային խանութից՝ 8-ը, 12 երշիկեղենի խանութից՝ 6-ը, 39 հրուշակեղենի խանութից՝ 18-ը, 128 մանուֆակտուրային խանութից՝ 34-ը, 8 հանքային ջրերի խանութից՝ 4-ը, 33 կոշիկի խանութից՝ 27-ը, 73 պատրաստի հագուստի խանութից՝ 47-ը, 37 երկաթե ապրանքների խանութից՝ 20-ը, 14 չինանյութերի խանութից՝ 6-ը, ծխախոտի բոլոր 7 խանութները[707]:

---

[702] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Торгово-промышленный адресъ-календарь города Баку), стр. 4-6.

[703] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. IV, стр. 199.

[704] Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև Бакинский справочный календарь на 1898 г. (Торгово-промышленный адресъ-календарь города Баку), стр. 12.

[705] Տե՛ս նույն տեղում:

[706] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Торгово-промышленный адресъ-календарь города Баку), стр. 20-22.

[707] Տե՛ս Դաղլյան Խ., Հայերը և Բաքուն, էջ 50-51:

Առևտրաարդյունաբերական դանագան գործատուփթյուններից դատ հայ դրամատերերը Բաքվում ունեին նաև հյուրանոցներ և ռեստորաններ: Օրինակ՝ Զանգեզուրի Գետաթաղ գյուղից Բաքվում հիմնավորված և առևտրի ոլորտում լայն գործունեություն ծավալած Արամ Փիլիպոսյանին էր պատկանում «Норд»[708] անվամբ հյուրանոցային համալիրը[709]: Մալխասյանցին էր պատկանում «Гранд-Отель» հյուրանոցը[710]: Հայապատկան ռեստորանները կրում էին «Անի», «Մասիս», «Բայազետ», «Բաքու» անվանումները[711]: 1897 թ. հոկտեմբերի 1-ի տվյալներով քաղաքի 12 բաղնիքներից հայապատկան էր 7-ը: Ա. Ադամյանին էր պատկանում քաղաքի ամենաշքեղ «Фантазія», իսկ Ա. Մելիքյանին՝ «Эрмитаж» բաղնիքները[712]:

Նուլնքան բեղմնավոր և բազմաբովանդակ է եղել Բաքվի հայ արվեստագետների գործունեությունը: Այսպես, օրինակ՝ քաղաքի հայտնի լուսանկարիչներից էին Վ. Ռոստոմյանը, Գորիսի Բարսեղյուղից Աղաջան Ալավերդյանը[713], Մ. Զաուշփյանցը, Ա. Ավագյանցը[714], Մուսայելյանցը[715] և շատ ուրիշներ: Քաղաքի կենտրոնական՝ Տորգովայա և Մարինսկայա փողոցների անկյունում էր գտնվում Իսահակ Մելիքյանին պատկանող քաղաքի առաջին «Рембрандтъ» լուսանկարչատունը և այլն[716]: 1897 թ. հոկտեմբերի 1-ի տվյալներով քաղաքի գեղանկարչական 6 արվեստանոցներից հայապատկան էր 5-ը (Մուսայելյանց, Մելքումյանց, Սահարյանց, Տեր-Մկրտչյան, Սերեբրակյանց)[717]: Շրջանակների 5 արհեստանոցխանութներից հայապատկան էր 4-ը (Ալ. Մելիք-Կարախանյան,

---

[708] Նորդը բորա տիպի տեղական հյուսիսային քամի է Ապշերոնյան թերակղզում (տե՛ս Энциклопедический словарь, т. II[A], стр. 771).

[709] Տե՛ս Հովսեփյան Ա., նշվ. աշխ., էջ 52: Ա. Փիլիպոսյանը եղել է տողերիս հեղինակի հայրական պապի հորեղբայրը:

[710] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. III, стр. 177.

[711] Տե՛ս Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 64.

[712] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Торгово-промышленный адресъ-календарь города Баку), стр. 4. Համմ. Ежегодник Баку и его районъ 1909, отд. IV, стр. 173.

[713] Տե՛ս Սիմոնյան Հ, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք Ա, էջ 95:

[714] Տե՛ս Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 97.

[715] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. IV, стр. 179.

[716] Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1924, Բ տարի, մարտ, № 5, էջ 102:

[717] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Торгово-промышленный адресъ-календарь города Баку), стр. 12.

Մնարոպ և Ենոք Մնսրոպյան եղբայրներ, Աս. Սարաջյան, Գ. Սահարյանց)[718]:

Տեղական գործարար շրջաններում մահմեդականները՝ մասնավորապես կովկասյան թաթարները, հակվածք էին միջին ձեռնարկատերերի դիրքից ավելի վեր բարձրանում: Վերը մատնանշված բոլոր փաստերը ցույց են տալիս, որ նրանց մասնակցությունը առևտրաարդյունաբերական ոլորտներում անհամեմատ գիջել է հայերին: Այս երևույթի պատճառը ամենից առաջ կովկասյան թաթարների լայն գործարար ակտիվության բացակայությունն էր: Միջազգային առևտրին նրանց մասնակցությունը հիմնականում կապված էր Ռուսաստանի և Իրանի միջև ընթացող մրգի առևտրի հետ: Բաքվի քաղաքային առևտրի ոլորտում հայերին պատկանող ձեռնարկությունները բաժին էր ընկնում շրջանառու միջոցների 31%-ը, իսկ մահմեդականներին պատկանող ձեռնարկությունները՝ 28 կամ՝ 24%-ը[719]: *Հայկական կոլեկտիվ սեփականությունը 1897-1905 թթ. ընթացքում աճել էր 62,9%-ով, իսկ մահմեդականներինը՝ 34,2%-ով*[720]:

Բաքվում տնտեսական գործառնություններից մեկն էլ տնատիրությունն էր, որի սեփականության ծավալով հայ մեծահարուստները զարձյալ առաջնակարգ դիրք էին գրավում[721]: *Հայ մեծահարուստների տները, որոնք նախագծվել և կառուցվել են բազմամյա փորձ ունեցող հայ բարձրորակ ճարտարապետների (Գ. Տեր-Միքելյան, Վ. Սարգսյան, Ն. Բաև, Միսակ Տեր-Գրիգորյան և ուրիշներ) և քանդակագործ-վարպետների կողմից, աչքի են ընկել իրենց չքնդությամբ, ճոխ միասնականությամբ և կառուցվածքների բարձր որակով: Այսպես՝ Լալայանների տոհմի կենսագրությունը պատմող արխիվային վավերագրում վերջիններիս պատկանող տները նկարագրվում են որպես «պալատանման հոյակապ տներ»*[722]:

Բաքվի հայ մեծահարուստներից շատերը ամառանոցային առանձնատներ ունեին նաև մերձքաղաքային Մարդաքյան գյուղում:

Բաքվի հայ տնատերերի ունեցած նյութական կարողությունների պատկերը ներկայացնենք սենատոր Ա. Կուզմինսկու կազմած հաշվեկշռության վիճակագրական տվյալներով: Ըստ այդմ՝

---

[718] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. IV, стр. 172.
[719] Տե՛ս **Кузьмински,** Всеподданнейший отчет..., стр. 95.
[720] Տե՛ս նույն տեղում, стр. 83-84.
[721] Տե՛ս Կարինյան Ա., նշվ. աշխ., էջ 143:
[722] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 309, թ. 11:

1899-1905 թթ. դրությամբ հայ և մահմեդական (գերակշռում էին կովկասյան թաթարները) տնատերերի անշարժ գույքի արժեքի տոկոսաչափն ուներ հետևյալ պատկերը[723].

Աղյուսակ № 7

Անշարժ գույքի քանակի տոկոսային հարաբերությ. տնատերերի ընդհանուր թվի նկատմամբ		Անշարժ գույքի արժեքի տոկոսային հարաբերությ. բոլոր տնատերերի ունեցվածքի արժեքի նկատմամբ	Անշարժ գույքի քանակի տոկոսային հարաբերությ. տնատերերի ընդհանուր թվի նկատմամբ	Անշարժ գույքի արժեքի տոկոսային հարաբերությ. բոլոր տնատերերի ունեցվածքի արժեքի նկատմամբ
Հայ	1899	1899	1905	1905
	10,3%	37,5%	10,5%	37,3%
Մահմեդական	83,2%	35,2%	82,3%	33,9%

Աղյուսակում ներկայացված թվերից պարզ է դառնում, որ, թեև անշարժ գույքերի քանակի տոկոսաչափի առումով մահմեդականներն առաջին տեղում են եղել, այդուհանդերձ, հայերի անշարժ գույքի դրամագլխի արժեքը գերազանցում էր մահմեդականներինը: Ըստ այսմ, մահմեդականների համեմատությամբ սեփականության կենտրոնացումը հայերի մոտ անհամեմատ բարձր էր:

XX դարասկզբի Բաքվում տնային եկամտի պատկերն ըստ ազգային պատկանելության առավել արտահայտիչ կդառնա, եթե վկայաբերենք նաև Դ. Անանունի վիճակագրական տվյալները[724].

Աղյուսակ № 8

Եկամուտ	Հայ	Ռուս	Կովկասյան թարար
5-1000ռ.	335	149	4539
100-2000ռ.	619	421	3005
2000-5000ռ.	189	65	225
5000-ից բարձր	126	19	117

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, թեև կովկասյան թաթարները ճնշում էին բացարձակ թվերով, սակայն տների վարձագինը վկայում է, որ բարձր եկամտի տերերը գերազանցել հայերն էին: Հայ ունևոր դասի ունեցած սեփականության այդպիսի բարձր տոկոսով էլ որոշվել է Բաքվի հայության սոցիալական դեմքը:

Անհրաժեշտ է նշել, որ Բաքվի հայ դրամատերերը Բաքվից զատ վիճխարի կարողությունների հասնող անշարժ գույք էին ձեռք բերել նաև Թիֆլիսում՝ քաղաքի լավագույն փողոցներում՝ (Միքա-

---

[723] Տե՛ս **Кузьмински,** Всеподданнейший отчет..., стр. 83.

[724] Տե՛ս Անանուն Դ., նշվ. աշխ., հ. Գ., էջ 422:

յկյան, Գոլովինսկի, Սոլոգակի թաղում և այլն) գնելով կամ կառուցելով չքեղ տներ[725]: Այդ նպատակով իրենց կապիտալներն էին Թիֆլիսում ներդնում Ա. Ղուկասյանը, տիկ. Տեր-Հակոբյանը, Գ. Թումայանը, Գր. Առաֆելյանը, Կ. Կրասիլնիկյանը, Ս. Բուդաղյանը, Գևորգ և Ալեքսանդր Լալայանները և ուրիշներ[726]: Բաքվի հայ դրամատերերի այս քայլը յուրովի մրցակցություն էր առաջ բերում Թիֆլիսի տնատերերի շրջանակներում: Ինչպես գրում է «Մուրճը». «Այդ հանգամանքը մեծապես ազդել է Թիֆլիսի տների և հողերի գների վրայ, որովհետև բաքուհիք, փողով առատ և տներից ոչ մեծ նկամուտների ակնկալութիւն ունեցողներ են, գնում են տներ ոչ առաջ այժմ տւած նկամուտների համաձայն, այլ շատ աւելի թանկ, միայն թէ տները լինեն քաղաքի լաւագոյն փողոցներում...»[727]:

Հայ դրամատերերն առաջատար դիրքեր էին զբաղեցնում նաև Բաքվի նահանգի առևտրաարդյունաբերության մեկ այլ կարևոր ոլորտում՝ ձկնարդյունաբերությունում: Կուր գետն իր ջրառատ վտակներով ողողելով Ջավաթի գավառը՝ հրաշալի պայմաններ էր ստեղծել Սալիան ափամերձ արժեքավոր ձկնատեսակների և փոկերի արդյունահանության համար, որը տեղացիների գլխավոր զբաղմունքն էր: Հիրավի ճիշտ է ասված, որ «Ծովեզերեայ տեղերը բնակող մարդկային սեռին ապրուստհմերուն ծովային կեանքը սովորական կըլլայ, և ծովը հարստութեան և զօրութեան աղբիւրը կը սեպվի»[728]: Այս բնագավառում մեծ էր հատկապես տոհմական պատվավոր քաղաքացի Վարդան Արշակունու դերը՝ մերձկասպյան ափամերձում զարգացման սաղմնային վիճակում գտնվող ձկնկիթի արդյունաբերության մեջ: 1847 թվականից նա կապալով շահագործում էր Սալիանի՝ «Божьяго-промысла» անվանված հարուստ ձկնավայրը: Ձկնկիթի արտադրանքը թիթեղյա տուփերով Շամախու գինվորական նահանգապետ գեներալ-մայոր Զիլաևին 1853 թ. ներկայացնելուց հետո իրականացվում է հավանության արժանացած արտադրանքի առաքումը Ռուսաստան[729]: Արդեն 1854 թ. տարեկան 166.480 ռ. վարձավճարով Կուր գետի ծովաբերանի հարուստ ձկնորսարանները կապալով շահագործում էին Վ. Արշակունին, Հովսեփ Միրիմ-

---

[725] Տե՛ս Туманов Г., Заметки о городскомь самоуправлении на Кавказе, Тифлис, 1902, стр. 83.

[726] Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 2-3, էջ 256, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 309, թ. 11:

[727] Բաքւա կապիտալները Թիֆլիսում, «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 2-3, էջ 256:

[728] Պատմութիւն նախնեաց վաճառականութեան եւ ճանապարհ հարստութեան, թարգմանեաց Յովհաննէս Յովակիմեան, Փարիզ, 1860, էջ 98:

[729] Տե՛ս АКАК, т. XI, Тифлис, 1888, док. 675, стр. 638-639, տե՛ս նաև Կարապետյան Ս., Թիֆլիսի քաղաքագլուխները, էջ 50: Ի դեպ, Վ. Արշակունին 1858-1860 թթ. եղել է Թիֆլիսի քաղաքագլուխը (տե՛ս նույն տեղում, էջ 14-15):

յանը և Աստրախանի 1-ին դիլդիայի վաճառական Գաբրիել Տեր-Միքելյանը[730]: 1855 թ. Հովհ. Միրզոյանը, վճարելով ամենաբարձր գինը՝ տարեկան 312.000ռ., մինչև 1863 թ. վարձակալում է Կասպից ծով թափվող Կուրի գետաբերանում գտնվող Սալիանի ձկնորսավայրը, որտեղ աշխատում էր ավելի քան 2500 մարդ[731]: 1862-1867 թթ., Հովհ. Միրզոյանի տարեկան վճարը կազմում էր 162.000 ռ.[732]: Կուր գետի ծովաբերանի հարուստ ձկնորսարանները կապալով չահագործում էին նաև Անանյանները[733], Մարտիրոսյաններըև «Եղբ. Արդումանյաններ և ընկ.»-ը[734]:

Կասպից ծովի կովկասյան ափերից բացի հայ առևտրաարդյունաբերողները ձկնարդյունաբերությամբ զբաղվում էին նաև հարևանային ափի իրանական գետերի գետաբերանում: Օրինակ՝ այդտեղ ձկան որսի մենաշնորհը և ձկնորսանարանները պատկանում էր շահական կառավարությունից 1873 թ. կոնցեսիա ստացած առաջին դիլդիայի վաճառական Ստեփան Լիանոսյանին[735]:

Ներկայացնելով Բաքվում և Այսրկովկասում հայերի առևտրատնտեսական գործունեության պատկերը՝ այն փոքր ի շատե ամբողջական դարձնելու նպատակով, հարկ ենք համարում մեջ բերել նաև ֆրանսիացի հայագետ Պիեռ Մորանի այդ առիթով տված գնահատականը. «Ու այսպէս, Անդրկովկասի մէջ քաղաքակրթութեան յառաջադիմութիւնէն, առեւտուրին ու ճարտարագործութեան ընդլայնումէն՝ Հայերը միայն կամ գրեթէ միայն կօգտուին: Հարստանալու ոչ մէկ առիթ կը փախցնեն: Պաքուի նաւթաբեր հողերը, Թիֆլիսի պանքաները, գրեթէ բոլոր չահաբեր ձեռնարկները, մեծ ու պզտիկ, իրենց ձեռքը կանցնին: Մէկէն ի մէկ խոշոր հարստութիւններ կը կազմուին: Այս գործի մարզերուն յանգգնութիւնը իրենց բարգաւաճմանը հետ կաճի: Այսօր հայկական հոսանքը ամէն բան կուլ տուած է եւ ամբողջ Անդրկովկասի մէջ կը տարածուի»[736]: Հատկանշական է նաև Ս. Պետերբուրգում լույս տեսած «Հանրագիտարանային բառարանի» հեղինակները Ֆ. Բրոքհաուզենի և

---

730 Տե՛ս AKAK, т. XI, стр. 638.

731 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 196, ց. 1, գ. 23, թ. 28, տե՛ս նաև **Микаелян В., Мирзоян С.**, նշվ. աշխ., էջ 77:

732 Տե՛ս **Гулишамбаров С.**, Очерки развития и современное состояние нефтяной промышленности Бакинского района, стр. 333.

733 Տե՛ս **Անանուն Դ.**, նշվ. աշխ., ի. Ա, էջ 229:

734 Տե՛ս «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1882, հուլիսի 16, № 69:

735 Տե՛ս **Ստեփանյան Ս.**, նշվ. աշխ., էջ 110-111:

736 **Բիէր Մորան**, Կովկասի հայերը, «Նոր կեանք», Լոնտոն, 1898, Ա տարի, փետրուարի 1, № 3, էջ 38:

Ի. Եֆրոնի՝ Բաքվի հայ առևտրաարդյունաբերողների ծավալած բազմաբնույթ գործունեության բնութագրումը. «Հայերի ձեռքում են կենտրոնացած առևտրի մեծ մասը և նավթային արդյունագործության բազմաթիվ գործատուփներ»[737]:

Այսպիսով՝ ակներև է, որ ներկայիս Ադրբեջանի առևտրաարդյունաբերության մի շարք բնագավառների, մասնավորապես պլիտավոր ճյուղի՝ նավթարդյունաբերության զարգացման հիմքում առավել ընկած են հայ ձեռնարկատերերի և արդյունաբերողների երկար տարիների աքնաջան աշխատանքի շնորհիվ ձեռք բերված արդյունաբերական միջոցները:

Դարավերջին Բաքվի հայ առևտրաարդյունաբերողներից շատերն իրենց կենցաղով, վարք ու բարքով հետ չէին մնում եվրոպացի առևտրաարդյունաբերողներից. «Առհասարակ ճոխ, իշխանավայել կենցաղվարութիւն մը ունեցած են միշտ Պաքուի մեծագնէ հարուստ գաղաքարգները, չի նայելով որ ոմանք, ներկայ դարուս սկզբէն ի վեր, բաւական փորձանքներ անցուցին, և մանաւանդ մեծ վնասներ կրեցին Հայ-թաթարական կռիւներու միջոցին...»[738]: Իրենց գործունեությամբ միջազգային ճանաչում էին ձեռք բերել առևտրաարդյունաբերողներից՝ Ալ. Մանթաշյանցը, Ս. Լիանոսյանը, Առ. Ծատուրյանցը, Թումայան, Մայիլյան, Ղուկասյան, Թումանյան, Աղրիյան[739], Ագամյան, Բուդաղյան և Կրասիլնիկյան հղբայրները և շատ ուրիշներ: Որպես այս ամենի արդյունք, XIX դ. վերջին և XX դ. սկզբներին Բաքվում արդեն կար ձևավորված և բավականին ազդեցիկ հայ առևտրաարդյունաբերական բուրժուազիա: Ի տարբերություն կովկասյան թաթարների և վրացիների՝ հայ դրամատերերն զգալի դեր ունեցան Այսրկովկասի դրամատիրական հարաբերությունների զարգացման գործում:

Բաքվի հայ բուրժուազիան ուներ իր գործունեության առանձնահատկությունները: XIX դարի կեսերից Բաքվի հայ դրամատեր խավի դրեթե բոլոր ներկայացուցիչներն իրենց անբաւ հարստությունից բաժին էին տրամադրում բարեգործական բազմապիսի նպատակների համար: «...նոքա (Հայ դրամատերերը - Գ. Ս.)

---

[737] Энциклопедический словарь, т. II^, стр. 771.

[738] Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 289:

[739] Աղրիյանները ծագումով Շամախու գավառի Մատրասա գյուղից էին: Եղբայրներից Արտեմը Մատրասայում հիմնել էր «Մադրասայի կոոպերատիվ ընկերությունը», իսկ Հարությունը՝ Մոսկվայում հիմնել էր «Եղբ. Աղրիյանցների առևտրական տունը» (տե՛ս «Արեւ», Բագու, 1917, ապրիլի 26, № 83, տե՛ս նաև «Հորիզոն», Թիֆլիս, 1917, սեպտեմբերի 24, № 204):

չատ աշխատասէր և հոգասէր են և իւրեանց քանի մի բարի գործքերովը նախադաս համարուելու են այլ քաղաքների հայերէն»,- ասված է «Տոմար ընտանեկան» օրացույցում[740]*: Մեկենասությունը հիմնականում ուղղվում էր քաղաքների ու գյուղերի բարեկարգմանը, հիվանդա-նոցների, դպրոցների և եկեղեցիների կառուցմանն ու վերանորոգմանը*[741]*, ազգային թատրոններին և մշակութային այլ օջախներին: Նյութական օգնությունն էր տրամադրվում աղետյալներին ու որբերին, բարեգործական ընկերություններին և այլն: Ս. Մոցիկյանի գնահատմամբ «Բարեգործներ չատ գտնուած են Պաքուի հայ մեծատուններուն մէջ: Անոնք նուիրած են կամ կտակած գումարներ եկեղեցիի, դպրոցի, և ազգային, հասարակական այլ և այլ բարի նպատակներու համար: Տուած են առատաձեռնօրէն*[742]*: Բարեգործության իր մասշտաբներով հատկապես աչքի էր ընկնում Ալ. Մանթաշյանցը, որն իր կուտակած մեծ կարողությունից բավականին գումարներ է ծախսում այդ նպատակներով*[743]*: «Պ. Մանթաշեան իրրեւ անհատ, չատ ընտիր յատկութիւններ ունի: Բարեսիրտ ու ազնիւ է: Բազմաթիւ երիտասարդներ, ամէն տարի իր ծախքովը ուսում կառնեն նախ Ռուսիոյ բարձրագոյն վարժարաններուն, յետոյ Եւրոպայի համալսարաններուն մէջ... Մէկ խօսքով Ազնքսանդր Մանթա-*

---

[740] Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, էջ 122:

[741] Ինչպես օրինակ՝ Բաքվի բնակիչ, երկրորդ գիլդիայի վաճառական Մինաս Արամյանցը Շուշիի գավառի Դամիրչիլար գյուղում կառուցել էր եկեղեցի (տե՛ս «Նոր-դար», Թիֆլիս, 1895, մարտի 28, № 55): «Բաքվի հայոց Սարդասիրական ընկերության» անփոփոխ անդամ Հովսեփ Աղամյանցն իր կտակում 3000ռ. հատկացրել էր Զանգեզուրի գավառի Գորիս-Կորես գյուղի Սբ. Հռիփսիմե եկեղեցու հատակի նորոգման համար (տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1894, հունվարի 19, № 7): Մեկ այլ բարերար Լյուդվիգ Սարգսյանի տրամադրած 1000 ռ. Երևանի թեմի Տաթևի փոխանորդության առաջնորդ և վանքի վանահայր Ներսես վրդ. Մելիք-Թանգյանի օրոք 1902 թ. նորոգվում է Տաթևի վանքի Պողոս-Պետրոս եկեղեցու սյունազարդ սրահի տանիքը: Շինության վերանորոգման մասին «Տաթևի վանքի համառոտ պատմության» մեջ պահպանվել է հետևյալ հիշատակումը. «Նորոգեցաւ տանիք սրահին ծախիւք Բագուեցի մահտեսի Լիւդվիկայ Յարութիւնեան Սարգսեանց ի յիշատակ հանգուցեալ ծնողաց իւրոց 1902 ամի. Տաթեւ» (Արտակ եպս. Մմբատեան, Համառօտ պատմութիւն Տաթեւի վանքի, «Տաթեւ» (Տարեգիրք գրականութեան եւ արուեստի), 2 տարի, Հալէպ-Սուրիա, 1930, էջ 328):

[742] Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 290:

[743] Ալ. Մանթաշյանցի նյութական օժանդակությամբ բարձրագույն կրթություն են ստացել հարյուրավոր հայ երիտասարդներ. Գարեգին Հովսեփյան, Գևորգ Չորեքչյան (հետագայում՝ Ամենայն Հայոց կաթողիկոսներ), Նիկողայոս Ադոնց, Ալեքսանդր և Կոստանդին Խատիսյաններ, Ստեփան Շահումյան, Կոմիտաս, Սիամանթո, Հակոբ Մանանդյան և ուրիշներ: Նրա հոգածության ներքո են եղել Հովհ. Թումանյանը, Մուրացանը, Ալ. Երիցյանը, Արշակ Չոպանյանը, Մինաս Չերազը և շատ ուրիշներ:

չնան եղակի դէմք մըն է իր ասպարէզին եղող հայերուն մէջ»[744]*,- գրում էր Կ. Պոլսի «Բյուրակն» լրագիրը:*

Փաստերը վկայում են, որ հետագայում էլ Բաքվի հայ բարերարները մայր հայրենիքի հետ այնքան սերտորեն էին կապված, որ նրանցից շատերը, օգտագործելով իրենց դիրքն ու հեղինակությունը, գանազան ազիւթներով դրամական նվիրատվություններով գգալի օգնություն էին ցուցաբերում հարազատ ժողովրդին: Բաքվի հայ բարեգործներն իրենց քաղաքացիական ու քրիստոնեական պարտքն են համարել չբավոր խավի սոցիալական վիճակի բարելավումը՝ մեծ տեղ տալով կրթության զարգացմանը, նաև քաղաքների ու գյուղերի բարեկարգման խնդիրներին[745]*: Մեծահարուստ և բարեգործ Դավիթ Ավան-Յուզբաշյանն իր ծախսով (15000 ռ.) Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում կառուցում է նոր գրատուն և 8000 ռ. գնում Թիֆլիսում վաճառված պատմաբան Ալ. Երիցյանցի հարուստ գրադարանն ու նվիրաբերում Սբ. Էջմիածնին*[746]*: Հատկանշական է, որ Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադրման հենց առաջին տարիներին Բաքվի հայ մեծահարուստները գիտական և լուսավորական հաստատություններ բացելու համար մեծագումար նվիրատվություններ արեցին: Այսպես՝ Մայիլյան եղբայրները մի քանի միլիոն ռուբլի տրամադրեցին Հայաստանում գիտագործնական ուսումնասիրություններ կատարելու*[747]*, իսկ Արշակ Ղուկասյանը 5.000.000 ռ. կտակեց հայկական համալսարանի հիմնարկման համար*[748]*: «Պատուիք իրր Հայ՝ չատ գերազաս են միւսներէն, ամէն*

---

[744] Նշանաւոր հայ դէմքեր. Աղեքսանդր Սանթաչեան, «Բիւրակն», Կ.Պոլիս, 1897, ԺԵ տարի, թիւ 1, դեկտեմբերի 18, էջ 29:

[745] Տե՛ս Шагиданова К., Благотворительная деятельность бакинских армян, ԼՀԳ., Երևան, 2007, № 1, էջ 156-163:

[746] Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1903, փետրվարիի 23, № 6, էջ 75, տե՛ս նաև Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 176:

[747] Մեծահարուստ Եղիա, Դանիել և Հովհաննես Մայիլյան եղբայրները մշտապես մասնակցել են ազգօգուտ միջոցառումներին: 1918 թ. մայիսին Հայաստանի անկախության հռչակումից հետո, հայրենի երկրի տնտեսական և հոգևոր վերածնդին սատարելու և պաշտպանությունն ամրապնդելու նպատակով, 1919 թ. սկզբին Մայիլյանները իրենց միջոցներով ստեղծում են ֆինանսավորվող մի կազմակերպություն, որն անվանվեց «Մայիլյան եղբայրների գիտատեսական արշավախումբ»: Այն ուշագրավ ծրագրեր մշակեց Հայաստանի Հանրապետությունը հայերով բնակեցնելու և ներգաղթ կազմակերպելու ուղղությամբ: Արշավախումբը գործեց մինչև 1920 թ. նոյեմբերը:

[748] Տե՛ս Խաչատուրեան Յ., Երեք ամիս ի Կովկաս (Թէոդիկ, Ամէնուն Տարեցոյցը, Կ. Պոլիս, Ժ-ԺԴ տարի, 1916-1920, էջ 200): Արշակ Ղուկասյանը մահացել է 1917 թ. հունվարի 19-ին: Մահվանից առաջ նա 5 մլն կտակել էր հոգուտ

տեսակէտով: Պագուի մտաւորականները չատ մեծ դեր պիտի կատարեն Հայաստանի վերաշինութեան մէջ»: Պագուի հայ հարուստներն ալ կը մշակեն չատ լուրջ հայրենասիրական ծրագիրներ որոնցմէ ոմանք արդեն սկսած են գործադրուիլ»[749]*,- գրում է 1919 թ. կեսերին Հայաստան և Բաքու ժամանած ԱՄՆ-ի պատվիրակության դեկավար դնդ. Ջեյմս Հարբորդի տեղակալ Հ. Խաչատուրյանը:*

Ազգասիրական նկատառումներով հատկապես ուշադրության է արժանի Ալ. Մանթաշյանցի թողած կտակը՝ գրված 1910 թ. հունիսի 10-ին, Թիֆլիսում: Կտակում առանձնացված էին անհրաժեշտ գումարներ Ներսիսյան դպրոցի նոր շենքի կառուցման, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի վեհարանի և Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերաշինության համար, 200.000 ռ. նախատեսված էր Ռուսաստանի տարածքում գործող հայ ազգային-կրթական, եկեղեցու մշակութային հաստատություններին և 1.000.000 ռ.՝ հայկական զանազան բարեգործական ընկերությունների[750]*:*

Մայր Հայրենիքին նյութապես օժանդակելու գործում իր պատշաճ տեղն ունի նաև Ենովք Բուդաղյանը, որը 1.000.000 ռ. կտակել էր հօգուտ հայ բարեգործական ընկերությունների, ազգային մշակույթի, գրականության և արվեստի զարգացման ու պահպանման գործին: Կտակի 6-րդ կետում ասված է. «Գէորգեան ճեմարանին 20,000 ր., որի տոկոսովն մինչև տալ ճեմարանի սաներից նրանց, որոնք կկամենան կատարելագործել աստուածաբանական գիտութիւնների մէջ բարձրագոյն դպրոցներում»[751]*:*

Բաքվեցի մեկ այլ մեծահարուստ վաճառական Արտար Սահակի Ադամյանը (մահացել է 1889 թ. փետրվարի 15-ին) նույնպես իր կտակում Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի վերաշինության համար տրամադրել էր 1000 ռ., Երուսաղեմի վանքին՝ 500 ռ., 10 տարվա տևողությամբ, 2000 ռ.՝ «Բաքվի Հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձությանը», 1000 ռ.՝ «Մարդասիրական ընկերությանը» և

Արևմտյան Հայաստանի, իսկ 2 մլն՝ Արևելյան Հայաստանի համար (տես «Փայլակ», Շուշի, 1917, հունվարի 29, № 7): Նշենք, որ Ղուկասյան եղբայրները պարբերաբար նյութական խոշոր միջոցներ են տրամադրել Շուշիի հայրենակից գյուղացիներին՝ իրենց անհամար կարիքները հոգալու համար:

[749] Խաչատուրեան Յ., նշվ. աշխ., էջ 200:

[750] Տես Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 206-207, տես նաև Բալագյան Լ., նշվ. աշխ., էջ 118:

[751] Բագւեցի վաճառական Ենովք Գալստեան Բուդաղեանի կտակը, «Տարազ», Թիֆլիս, 1900, ապրիլի 30, № 16, էջ 237:

այլն[752]: Իսկ նավթարդյունարիրող Ա. Մատուրյանցը 8000 ռուբլի էր նվիրաբերել արևմտահայ ապետյանների օգնության գործի կազմակերպմանը[753]:

Բաքվում բարեգործական իր ձեռնարկումներով մեծագույն ծառայություններ է մատուցել նաև քաղաքի հայ հասարակության համբնդհանուր հարգանքին և սիրուն արժանացած առևտրաարդյունարերող Գրիգոր Ապանյանը, որին մտերմաբար անվանում էին Գրիգոր ապեր: Արդար ավ. քհն. Հարությունյանը հետևյալ բնութագրումն է տվել նրան. «Բագուայ այս և այն ընկերութիւնների այդ պատկառելի վեհերանը իւր հոգւոյ վեհութեամբը, իւր անդուլ գործունեութեամբը և անդադար հոգացողութեամբը կատարեալ իրաւունք ունի Բագուայ անպաշտպան խեղճերի հայրը կոչուելու»[754]:

Փաստերը վկայում են, որ համահայկական բարեգործական ձեռնարկումներից բացի հայ առևտրաարդյունաբերողներից շատերը նյութապես օգնել են նաև օտար ափերում բնակվող հայրենակիցներին, աջակցել այդտեղ կառուցվող եկեղեցիներին և այլն: Ալ. Մանթաշյանցի տրամադրած 1.540.000 ֆրանկով Փարիզի Ժան Գուժոն փողոցում 1902-1904 թթ. կառուցվում է Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին[755], իսկ Ա. Մատուրյանցը Անգլիայի Հարվարդ քաղաքի եկեղեցու համար պատրաստում է Սբ. Բարդուղիմեոսի և Սբ. Գրիգոր Լուսավորչի գունապակե (վիտրաժ) պատկերները՝ հայտնի «Հայ Մարտիրոսաց պատուհան» անունով[756]:

Հայ առևտրաարդյունաբերողներն իրենց մեծ զորակցությունն են տրամադրել նաև Առաջին աշխարհամարտի անհամար կարիքները հոգալու համար: Այդ նպատակով Բաքվի նավթարդյունաբերողների խորհուրդը (նախագահ՝ Ա. Ղուկասյան) հատկացնում է 1 մլն. ռ.[757]: Միայն առևտրաարդյունաբերող Ալ. Մանթաշյանցը Կովկասի փոխարքայի տրամադրության տակ է դնում 150.000 ռ. և իր միջոցներով պատրաստում սանիտարական մեկ գնացք[758]: 1915 թ. հունիսի 20-ին ստեղծվեց նաև Բաքվի մարզա-

---

[752] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1889, փետրվարի 21, № 21: Ա. Աղամյանը նպատակ է ունեցել Բաքվում կառուցել եկեղեցի, և այդ մասին հայտնել էր իր կտակում:
[753] Տե՛ս Թեոդիկ, Ամէնուն Տարեցոյցը, Կ. Պոլիս, 1915, էջ 13:
[754] Աբգար Աւագ Քահանայ Տէր-Յարութիւնեանց, նշվ. աշխ., էջ 11:
[755] Տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 159:
[756] Տե՛ս Թեոդիկ, Ամէնուն Տարեցոյցը, Կ. Պոլիս, 1915, էջ 13:
[757] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1914, դեկտեմբերի 10, № 276:
[758] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1914, նոյեմբերի 8, № 249:

յին ռազմարդյունաբերական կոմիտեն, որի նախագահ ընտրվեց Ա. Ղուկասյանը, իսկ տեղակալ՝ քաղաքագլուխ Լ. Բիչը: Կոմիտեի կազմում ընտրվեցին նաև առևտրաարդյունաբերող Ա. Բենկենդորֆը, Բորսայի կոմիտեի նախագահ Ստ. Թաղիանոսյանը և «Գ. Մ. Լիանոզով և որդ.» ընկերության ներկայացուցիչ Ալ. Քալանթարյանը[759]:

* * *

Արևելյան Այսրկովկասը Ռուսաստանին միացվելուց հետո, օրենսդրական մի շարք ակտերի համաձայն, կայսրության մեջ գոյություն ունեցող դասային բաժանումները տարածվեցին նաև Բաքվի նահանգի բնակչության վրա: Ինչպես ռուսական կայսրության մեջ, այնպես էլ Բաքվում բնակչությունը նախևառաջ բաժանված էր երկու անհավասար խմբերի՝ արտոնյալների և ոչ արտոնյալների: Վերջիններս կազմում էին, այսպես կոչված, երրորդ դասը և հիմնականում բաժանվում էին քաղքենիների և գյուղացիների դասերի[760]: Հայ բնակչության պրոֆեսիոնալ և սոցիալական կազմի մասին առաջին ամփոփ տեղեկություններն, ըստ ռուսական դասակարգման համակարգի, հաղորդեց 1897 թ. մարդահամարը, ուր հաշվի առնվող հիմնական դասերն էին ազնվականները (ժառանգական և անձնական), պատվավոր քաղաքացիները (ժառանգական և անձնական), վաճառականները և նրանց ընտանիքները, քաղքենիները և գյուղացիները: Համաձայն մարդահամարի տվյալների՝ Բաքու քաղաքում և գավառում հայ հասարակության դասային կազմն ուներ հետևյալ պատկերը[761].

Աղյուսակ № 9

Բնակավայր	Ժառանգական ազնվական		Անձնական ազնվական		Ժառանգական և անձնական պատվավոր քաղաքացի	
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.
Բաքու	281	204	382	319	206	132
Գավառ	71	12	50	14	64	30
Ընդամենը	352	216	432	333	270	162
Ընդամենը	849		765		432	

[759] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 839, թ. 1, տե՛ս նաև Պետրոսյան Հ., Բաքվի բոլշևիկների պայքարը ռազմա-արդյունաբերական կոմիտեների դեմ, «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Երևան, 1963, № 8, էջ 42 :

[760] Տե՛ս Կիրակոսյան Գ., Քաղքենիների և գյուղացիների դասերը Արևելյան Հայաստանում XIX դարի 80-90-ական թթ., ԲՀԱ, Երևան, 1986, № 2, էջ 117:

[761] Աղյուսակը կազմված է ըստ ПВПНРИ-1897, таблица XXIV, стр. 152, 154 տվյալների. հաշվարկը մերն է:

Բնակավայր	Վաճառական		Քաղքենի		Գյուղացի	
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.
Բաքու	753	639	4762	3390	5615	1569
Գավառ	1	2	342	117	2521	170
Ընդամենը	754	641	5104	3507	8136	1739
Ընդամենը	1395		8611		9875	

Աղյուսակում բերված վիճակագրական տվյալների համադրումը ցույց է տալիս, որ XIX դարավերջին Բաքվի և գավառի հայ բնակչության սոցիալ-դասային կազմում ամենաբազմաքանակը գյուղացիությունն էր, որը բաժանվում էր մի քանի խմբերի: Ամենամեծը պետական գյուղացիությունն էր: Տոկոսային հարաբերակցությամբ հաջորդ դասը քաղքենիներն էին, ապա՝ վաճառականները, ժառանգական և անձնական պատվավոր քաղաքացիները, ժառանգական ազնվականները և անձնական ազնվականները:

Շնորհիվ արդյունաբերության բազմաբնույթ ճյուղերի զարգացման՝ XIX դարի երկրորդ կեսից և հատկապես դարի վերջերին Բաքվում տեղի ունեցան տնտեսական և սոցիալական մեծ տեղաշարժեր: Բաքուն Թիֆլիսից հետո դառնում էր արևելահայերի տնտեսական ու մշակութային կյանքի ամենախոշոր կենտրոնը՝ առաջ անցնելով այնպիսի քաղաքներից, ինչպիսիք էին՝ Շամախին, Նուխին, Շուշին և Գանձակը: 1896-1897 թթ., «Հառսը» գրելու շրջանում մի քանի անգամ Բաքու այցելած Ալ. Շիրվանզադեն հետևյալ տպավորությունն էր ստացել քաղաքից. «Բագուն, իհարկէ, առաջուանը չէր. շատ բաներ էին փոխվիլ տասնուհինգ[762] տարուայ ընթացքում: Նաւթային արդիւնաբերութեան բարգաւաճման հետ, քաղաքը կերպարափոխվել էր: Առաջուայ մէյարկանի, կիսախարխուլ տներին փոխարինել էին երկք-չորս յարկանի հոյակապ շինութիւններ, փողոցները սալայատակուել էին և այլևս նաւթով չէր ջրվում, ազգաբնակութիւնը նուազատկուել էր, երեկուայ ասիական չուխան փոխուել էր եւրոպական ֆրակի, փափախը-ցիլինդրի, չմուշկները-քոշերը-փայլուն կօշիկների: Նախկին նպարավաճառներից, դործակատարներից և սայլապաններից շատերը դարձել էին հանքատերեր և գործարանատերեր: Արտաքինի հետ փոխուել էր և մարդկանց ներքինը, հագուստը ազդել էր ճաշակի, մտքի և ամբողջ հոդեբանութեան վրայ: Ուզում եմ ասել գոյացել էր եւրոպական իմաստով բուրժուազիայի առաջին սաղմը: Բայց ոչ եւրոպական կրթութեամբ»[763]:

---

[762] Ալ. Շիրվանզադեն նկատի ունի Բաքվից 1883 թ. օգոստոսին իր դուրս գալու ժամանակը:

[763] ԳԱԹ, Ալ. Շիրվանզադեի ֆոնդ, գ. 9, թ. 291-292: Հմմ. գ. 8, թ. 278:

Առևտրաարդյունաբերական Բաքվում կարելի էր հանդիպել տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների: Հայերը, պարսիկները, լեզգիները, կովկասյան թաթարները, լեհերը, գերմանացիները, ռուսները և այլոք ապրում էին կողք-կողքի և սերտ համագործակցության մեջ էին: Հայ բնակչությունը Բաքվում հիմնականում տեղակայված էր քաղաքի կենտրոնական հատվածում[764]: «Բագւայ բնակիչների մեծ մասը,- գրում էր «Տարազը»,- գաղթականներ են, գլխավորապէս Ղարաբաղից և Շամախուց: Սրանք իրանց հետ բերել են և իրանց երկիրների աւանդութիւնները, սովորութիւններն ու խառնելով Բագւայ այժմեան խառնիճաղանճ, աշխարհիս չորս կողմից եկած, ժողովրդի բարք ու վարքի հետ ու այդ խառնուրդն էլ համեմելով քաղաքակիրթ աշխարհների կարգ ու կանոնով՝ բագուեցիները իրանց համար մի նոր կենցաղ են ստեղծել»[765]: Այդուհանդերձ, այս պայմաններում անգամ, հայերն իրենց գործունեության բնույթով խիստ տարբերվում էին մնացյալ ժողովուրդներից:

Իրենց ստեղծագործ և գիտամշակութային բարձր մակարդակով առաջնակարգ և ուրույն տեղ գրավելով Բաքվի սոցիալ-տնտեսական ու կրթամշակութային կյանքում՝ հայերը XIX դարի երկրորդ կեսից հասարակության սոցիալական կառուցվածքի մեջ զբաղեցնում էին բարձր դիրքեր և ապրում բարեկեցիկ: Դրան նպաստում էր նաև XIX դարի երկրորդ կեսից Բաքվում ծավալված տնտեսական և առևտրաարդյունաբերական լայնածավալ գործունեությունը, որը նպաստավոր պայմաններ էր ստեղծում արևելահայ հասարակական կյանքի տարբեր ոլորտների աշխուժացման համար: Բաքվի հասարակական վերնախավում հատկապես աչքի էր ընկնում ձևավորված հայ բուրժուազիան՝ առևտրաարդյունաբերողները, որոնք յուրահատուկ դեր ունեին Բաքու քաղաքի սոցիալ-տնտեսական և հասարակական հարաբերությունների մեջ: Բաքվում գոյություն ունեին զգալի թվով խոշոր կարողության և միջին ունեցվածքի տեր հայեր:

Բաքվի հայ հասարակության սոցիալական կառուցվածքի կարևոր միավորը արդյունաբերական բանվորությունն էր[766]: Հայ

---

[764] Տե՛ս Баку и его окрестности, стр. 68.

[765] Մի քանի օր Բագւում, «Տարազ», Թիֆլիս, 1891, մարտի 31, № 12, էջ 178:

[766] Այսրկովկասի արդյունաբերական քաղաքներում (Բաքու, Թիֆլիս և այլն) XIX դ. վերջերի և XX դ. սկզբների բանվորների ազգային կազմի վերաբերյալ հարցերի համապատասխան քննությունը տե՛ս Симонян А., Рабочие Закавказья в общерос-

բանվոր պատակարդի ձևավորման սոցիալական հիմնական աղբյուրը քայքայվող դյուղացիական զանգվածն էր, որ աշխատանք որոնելու նպատակով հաստատվում էր Բաքվում: XIX դարի երկրորդ կեսից նավթարդյունաբերության ընդլայնմանը դուգընթաց ավելանում էր այդ ճյուղում դրաղված հայ բանվորների թիվը: 1889 թ. վիճակագրական տվյալներով Բաքվի բոլոր նավթադաշտերում աշխատող բանվորների թիվը 3762 էր, որից 710-ը՝ ռուսներ, 1171-ը՝ հայեր, 1696-ը՝ մահմեդականներ և 185-ը՝ տարբեր ազգություններից էին[767]*: Նավթարդյունաբերողների համագումարի բյուրոյի 1897 թ. վիճակագրական տվյալների համաձայն՝ միայն նավթահորերում աշխատող հայ բանվորների թիվը հասնում էր 4098-ի, որը, կազմելով ամբողջի 29%-ը, գերազանցում էր տարբեր ազգությունների բանվորների թիվն՝ առանձին վերցրած*[768]*: Անդրադառնալով հայերի՝ նավթարդյունաբերության զարգացման մեջ ունեցած դերակատարությանը՝ Ալ. Մանթաշյանցի կենսագիր Առ. Սարուխանը գրում է. «Այս կերպով հայոց թիւն այնքան աճեց, որ նրանք նաւթային արդիւնաբերութեան մէջ այս կամ այն ձևով մասնակցող զանազան ազգութիւնների մէջ համեմատական մեծամասնութիւնն էին կազմում: Եղաւ տարի, երբ քաղաքում, գործարաններում եւ հորերի վրայ հայերի թիւը հասաւ 80.000-ի»*[769]*:*

Հայ բանվորները մեծ մասամբ ընդգրկված էին որակավորում պահանջող աշխատանքներում[770]*: 1901 թ. սկզբներին նավթարդյունաբերության 267 ընկերություններում բանվորների և ծառայողների թիվը 26637 էր: Այդ թվից հայ էին 7157-ը, ռուս՝ 5220-ը, կովկասյան թաթար՝ 2751-ը, իրանցի՝ 5485-ը, որոնց հաջորդել են լեզգիները, վրացիները, հրեաները, լեհերը, օսերը, չեչեննները, ինգուշները, եվրոպական ժողովուրդներից՝ չվեդները, ֆիննները, լատիշները և այլոք*[771]*: Նույն թվականի տվյալներով հայերից վարչական աշ-*

сийском рынке наемного труда в конце XIX-начале XX вв. (историко-статистический анализ), Ереван, 1995, стр. 56-67.

[767] Տե՛ս Баку и его окрестности, стр. 25.

[768] Տե՛ս Գուլանյան Խ., Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ, Երևան, 1961, էջ 25, տե՛ս նաև Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, էջ 130:

[769] Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 41:

[770] Տե՛ս **Симонян А.**, նշվ. աշխ., стр. 58.

[771] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1901, հուլիսի 7, № 147: Ի դեպ, 1906 թ. հունվարի տվյալներով 2000 հայ բանվորների բվում գերակշռել են վանգեզուրցիները՝ 762,

խատանքի մեջ ընդգրկված էին 223, ռուսներից՝ 99, հրեաներից՝ 25 և 18-ական հոգի դերմանացի, լեհ, վրացի ազգերից: Գրասենյակային ծառայողների թվում հայերը զարձյալ առաջին տեղում էին՝ 192 հոգի, ռուսներ՝ 96, հրեաներ՝ 34, լեհեր՝ 27, վրացիներ՝ 21, գերմանացիներ՝ 12 և այլն[772]*: Եթե 1915 թ. Բաքվի նավթարդյունաբերության ոլորտում ընդգրկված հայ բանվոր-ծառայողների թիվը 8620 էր, ապա 1918-1919 թթ. կոտորածների հետևանքով 1920 թ. իջել էր 2458-ի*[773]*:*

Սոցիալ-տնտեսական պայմանները հայ բնակչությանն անհրաժեշտաբար թելադրում էին ձեռք բերել բանվորական այնպիսի մասնագիտություններ, որոնք կբավարարեին ժամանակի պահանջները: Այսպես՝ ըստ արհեստի և զբաղմունքի՝ նրանք ընդգրկված էին հետևյալ մասնագիտություններում. արհեստավորներ, նավթահաններ, հորատողներ, սևագործ բանվորներ և այլն[774]*: Հայ բանվորները նավթարդյունաբերության ոլորտից բացի կենտրոնացած էին նաև սպասարկման ու առևտրական խոշոր ձեռնարկություններում և այլուր*[775]*: Այդ ոլորտում աշխատող հայերը ձեռք էին բերում մի քանի նոր մասնագիտություններ (խանութներում և երկաթուղային կայարաններում՝ բեռնակիրներ, պանապան մանր գործեր կատարող բանվորներ և այլն): 1913 թ. վիճակագրական տվյալները փաստում են, որ հայերն ավելի մեծ թիվ են կազմել վարչագրասենյակային հիմնարկներում. նավթագործ բանվորներից շատերը եղել են վարպետներ կամ համալրել են տեխնիկական միջին աշխատակազմը: Ըստ դավանանքի՝ սևագործ բանվորների թվում գերակշռում էին մահմեդականները*[776]*: Նրանք հիմնականում կովկասյան թաթարներ և պարսիկներ էին*[777]*: «Պարսիկների ահագին մեծամասնությունը,- գրում է Բ. Իշխանյանը,- բագուում, առևտրով և սեւ, չարքաշ աշխատանքով են զբաղուում»*[778]*:*

նոր-բայազետցիները՝ 145, երևանցիները՝ 144 և արևմտահայերը՝ 205 մարդ (տե՛ս Բագւի բանւորների կեանքից, «Յառաջ», 1906, Երեւան, հունվարի 24, № 7):

[772] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1901, հուլիսի 7, № 147:

[773] Տե՛ս **Пичикян Г.**, նշվ. աշխ., стр. 95.

[774] Տե՛ս Անանուն Դ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 269-270:

[775] Տե՛ս «Նոր կեանք», Բագու, 1911, դեկտեմբեր, № 1-2, էջ 68-72:

[776] Տե՛ս Բարսեղյան Խ., Մարքսիզմի տարածումը Հայաստանում (1905-1920), գիրք Բ, Երևան, 1975, էջ 40, տե՛ս նաև **Адонц М.**, Экономическое развитие Восточной Армении в XIX в., Ереван, 1957, стр. 526-527.

[777] Քալանթար Ա., Պանդխտութիւնը մեզանում, «Մուրճ», Թիֆլիս, 1890, № 11, էջ 1538:

[778] Իշխանեան Բ., Կովկասեան ժողովուրդների ազգաբնակչական կազմը, էջ 158-159:

Անդրադառնալով առևտրաարդյունաբերության տարբեր ճյուղերում ընդգրկված հայ բանվորների սոցիալ-տնտեսական դրությանը, նրանց եկամուտների և ծախսերի սոցիալական ուղղվածությանը՝ նշենք, որ Բաքվի նավթարդյունաբերության ոլորտում երկար տարիներ պաշտոնավարած Ալեքսանդր Ստոպանին, ուսումնասիրելով XX դարասկզբին Բաքվի 183 հայ բանվորների բյուջեն, որոնցից 149-ի ընտանիքներն ապրում էին գյուղում, հաշվել է, որ ընտանիքի հետ չապրող բանվորների 32,2%-ի տարեկան եկամուտը կազմում էր 300-350 ռ., 27,9%-ինը՝ 350-400 ռ., իսկ բոլորի միջին եկամուտը կազմում էր 379,8ռ.[779]: Նկատենք, որ 1900-1908 թթ. դործարանում աշխատող յուրաքանչյուր բանվոր վարձատրվել է 50-60ռ.[780]: Ամսով աշխատող բանվորները կամ ծառայողները իրենց մոտ ունեին «КНИЖКА» անունով տետրակ, որով խանութից նրանք ապառիկ կերպով կենսական ապրանքներ էին վերցնում[781]:

Նվազագույն աշխատավարձով բանվորները ընդամենը կարողանում էին քարշ տալ իրենց գոյությունը: Պանդխտության չարիքը, գյուղացու՝ գործարանային մշակ դառնալը և նրանցից չատնչի քաղաքում կործանվելը մտահոգում էր հայ գյուղագիրներին, որոնք հակված էին գյուղացուն հողին կապելու, նրա տնտեսական դրությունը թեթևացնելու մտադրությամբ: 1890 թ. հրատարակվում է Սողոմոն Մելիք-Շահնազարյանցի՝ Բաքվի պանդուխտների կյանքին նվիրված առաջին և ծավալուն գրվածքը՝ «Հայ գյուղացու սև օրը» վիպակը, որն ամբողջապես նվիրված է Զանգեզուրի գավառի Անդեղակոթ գյուղից Բաքու պանդխտության մեկնած երիտասարդների կյանքին: Վիպակում նկարագրված է, թե ինչպես է քաղաքը կլանում պանդուխտներին և խեղդում իր ապականություններում[782]: Բաքվի նավթահանքերում աշխատող բանվոր-մշակների վիճակն իր արտացոլումն է գտել նաև Գր. Տեր-Պողոսյանի «Հովոյի եղոն» իրական պատմվածքում, ուր նկարագրված է գյուղից եկած և օրավարձով աշխատող մշակի կյանքը[783]:

Բաքվի հայերի զբաղմունքի բնորոշ ոլորտներից էր արհեստագործությունը: Սակայն պետք է նշել, որ Բաքուն իր տնտեսական

---

[779] Տե՛ս «Նոր խօսք», Բագու, 1911, № 1-2, էջ 31-36:
[780] Տե՛ս «Անիւ», Բագու, 1908, մարտի 2, № 1, էջ 5:
[781] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1908, մարտի 19, № 62:
[782] Տե՛ս Մելիք-Շահնազարեանց Ս., Հայ գիւղացու սեւ օրը, Թիֆլիս, 1890:
[783] Տէր-Պողոսեան Գր., Հովոյի Եղոն, Պատմվածք Բալախանու կեանքից: Յիշատակարանի փոխարէն, Շուշի, 1911:

դարգացմամբ չի համարվել արհեստավորական խոշոր կենտրոն. նա աչքի էր ընկնում առևտրական և արդյունաբերական ճյուղերով, հատկապես նավթի արդյունաբերությամբ, որը քաղաքի հիմնական նկամտի աղբյուրն էր: Հետևաբար պանդուխտ մշակների զգալի մասն աշխատում էր Բաքվի արդյունագործական ձեռնարկություններում: Այդ էր պատճառներից մեկը, որ արհեստավորական համքարությունները այստեղ չեն կատարել այն դերը, ինչ Այսրկովկասի մյուս քաղաքներում՝ Թիֆլիս, Երևան և այլն[784]: Սակայն տեղեկություններ կան, որ Բաքվում տեղի են ունեցել արհեստավորական և առևտրական ավագների և նրանց օգնականների ընտրություններ: Դա ցույց է տալիս, որ քաղաքում եղել են համքարություններ, քանի որ ավագների ընտրությունը կապվում է համքարության գոյության հետ: Արխիվային փաստաթղթերից մեկում հիշատակված է, որ Բաքվի դինեվաճառները 1870 թ. հունվարին դիմել են քաղաքի վարչությանը, խնդրել կանոնավորել շուկայի անկարգությունը և վաճառքի գործը՝ միաժամանակ պահանջելով իրենց համար ավագ ընտրել կարապետ Հովսեփյանին, իսկ օգնական՝ Սարգիս Յավրումովին[785]:

Արխիվային մեկ այլ փաստաթղթում՝ Բաքվի քաղաքային վարչության հայտարարության մեջ, ասված է, որ հացթուխների ընկերության ներկայացուցիչները 23 հոգու ստորագրությամբ, 1881 թ. սեպտեմբերի 16-ին դիմել են Բաքվի Քաղաքային Դումային՝ խնդրելով հաստատել իրենց կողմից ավագ ընտրված Հույն Պավել Խարլամբիի և օգնական Միքայել Հովակիմյանի (Ավակիմով) թեկնածությունը[786]: Այս փաստը հաստատում է, որ XIX դարի 70-ական թվականների սկզբներին Բաքվում արհեստավորներն ունեցել են իրենց համքարային միությունները: XX դարասկզբներին արդեն գործում էին հյուսների և դերձակների արհեստակցական միությունները և այլն[787]:

Հայ բանվոր-արհեստավորների հիմնական մասը վարձով աշխատել է կարի, մորթու և կոշիկի արհեստանոցներում, ոսկերչական խանութներում, փռերում, հրուշակատներում և այլն[788]: Բաքվում արհեստավորները և առևտրականները քաղաքի կենտրոնում և ծայրամասերում տեղավորված էին տարբեր չարքերով՝ ըստ իրենց ար-

---

[784] Տե՛ս Աբրահամյան Վ., Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դարի սկիզբը), Երևան, 1971, էջ 95:

[785] Տե՛ս նույն տեղում, էջ 97-98:

[786] Տե՛ս նույն տեղում, էջ 97:

[787] Տե՛ս «Զանգակ», Թիֆլիս, 1908, օգոստոսի 16, № 35, տե՛ս նաև օգոստոսի 30, № 46:

[788] Տե՛ս «Պրօլետարիատ», Թիֆլիս, 1902, հոկտեմբեր, № 1, էջ 15:

հետի տեսակի: Արհեստավորներն ապրում էին բերդի ներսում, իսկ ներկարարները, կաշեգործները, դարբիններն ու նալբանդները՝ քաղաքի ծայրամասերում[789]:

* * *

Բաքվի հայության հասարակական-քաղաքական կյանքն առավել աշխույժ էր XIX դ. վերջին տասնամյակներին և XX դ. սկզբին: Բաքվի քաղաքային բնակչության ընկերային կառուցվածքի մեջ առանձնահատուկ դեր ուներ հայ մտավորականությունը: Տեխնիկական մտավորականության հետ մեկտեղ այստեղ հաստատվել էին նաև գրողներ, դերասաններ, երաժիշտներ և նկարիչներ: Սոցիալ-մասնագիտական տեսանկյունից մեծ թիվ էին կազմում բարձրակարգ ինժեներները, իրավաբանները, մանկավարժները, բժիշկները և այլն[790]: *Ի դեպ, բժշկության, իրավաբանության և ինժեներության բնագավառներում գրեթե բացակայում էր կովկասյան թաթարների մասնակցությունը*[791]:

Հայերը մեծ թիվ էին կազմում առողջապահական հիմնարկներում: 1890-ական թվականներին քաղաքային բժշկի պաշտոնը զբաղեցրել է Միսաք Արամեանցը[792]: *Այդ պաշտոնում մինչև 1899 թ. նոյեմբերը նրան հաջորդել է Խաչատուր Խաչատրյանը*[793]: *1899-1916 թթ. Բաքվի սանիտարահիգիենիկ բժշկի պաշտոնը զբաղեցրել է Գաբրիել Տեր-Հովհաննիսյանը (Հաջբերունի)*[794]: *Ճանաչված բժիշկներ էին Վ. Տեր-Կարապետյանը, Միք. Տեր-Հովհաննիսյանցը, «Միքայելյան» հիվանդանոցի ավագ օրդինատոր Հովհ. Տեր-Օհանյանցը*[795], *Ս. Ազամիրզյանը, Միք. Զալյանը, Ա. Սաֆարյանը*[796], *Ի. Մամիկոնյանը,*

---

[789] Տե՛ս Егиазаров С., Городские цехи, Казань, 1891, стр. 361.

[790] Տե՛ս КК на 1895 г., Тифлис, 1894, стр. 130.

[791] Տե՛ս Кузьмински, Всеподданнейший отчет..., стр. 97.

[792] Տե՛ս «Նոր-դար», Թիֆլիս, 1890, մայիսի 12, № 59: Բժիշկ, գրող, հոգևոր-հասարակական գործիչ Սիսաք Արամյանցը գավառական բժշկի պաշտոնով երկար տարիներ աշխատել է Ջավախի գավառի Սալիան ավանում: 1883 թ. հոկտեմբերից եղել է Շամախու հայոց թեմի վերատեսուչը (տե՛ս «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1883, սեպտեմբերի 21, № 93): Եղել է «Հյուսիսափայլ» ամսագրի հիմնադիր Ստ. Նազարյանցի դստեր ամուսինը: Մահացել է 1909 թ. դեկտեմբերին Սալիանում (տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1909, դեկտեմբերի 11, № 274):

[793] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1899, դեկտեմբերի 3, № 226:

[794] Տե՛ս Քաջբերունի (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան), Ճանապարհորդական նկատողություններ, կազմողներ՝ Ա. Քալանթարյան, Գ. Սարգսյան, Հ. Մելքոնյան, Երևան, 2003, էջ 5:

[795] Տե՛ս КК на 1900 г., Тифлис, 1899, стр. 176-177.

[796] Տե՛ս КК на 1895 г., стр. 150.

Գր. Սաղիյանցր, Տեր-Գրիգորյանցը, Տիրտերյանցր, Բ. Ղուկասյանր, Վ. Արծրունին, Օ. Կապրելյանը[797] և շատ ուրիշներ: 1909 թ. տվյալներով քաղաքային բժշկա-սանիտարական բյուրոյի անդամներ էին Գ. Մակարյանցր և Գ. Տեր-Հովհաննիսյանցը[798]: Նույն թվականի տվյալներով՝ բժշկա-սանիտարական 4-5-6-րդ տեղամասերի բժիշկներ էին Տեր-Թոմասյանր, Մնացականյանը, Սարգսյանր և Տեր-Հովհաննիսյանցը[799]: Հատկանշական է, որ 1909 թ. տվյալներով «Բաքվի բժիշկների միության» (հիմնադրվել է 1894 թ. փետրվարի 21-ին)[800] նախագահն էր ճանաչված բժիշկ Ա. Հարությունյանը, իսկ միության գրադարանի վարիչն էր բժիշկ Գ. Տեր-Հովհաննիսյանցը[801]: Բաղաքում լայն ճանաչում ունեին հատկապես նևրոպաթոլոգ Ա. Հակոբյանը, սրտաբան Հ. Մուսայելյանցը, վիրաբույժ Ա. Ղազարբեկյանր, մաշկաբան-վեներոլոգներ Մ. Շահնազարյանն ու Պահլավունի-Մելքումյանցը[802]: Ի դեպ, իր գործունեությամբ և դիտական վաստակով մեծ հեղինակություն էր վայելում ծնունդով Ասկերանի շրջանի Փահլուլ գյուղից, Մոսկվայի համալսարանի շրջանավարտ, մանկաբույժ Հ. Գաբրիելյանը, որը 1922-1925 թթ. դասախոսել է նաև ԱդրԽՍՀ-ի պետական համալսարանում[803]:

Հայ բժիշկները մեծ թիվ էին կազմում նաև քաղաքի կենտրոնական՝ Միքայելյան հիվանդանոցում. Միք. Տեր-Հովհաննիսյանց, Ս. Աղամիրզյան, Վ. Խանդամիրյան, Ստ. Ալիխանյան, Ալ. Հարությունյան, Վ. Արծրունի, Ե. և Ս. Վարդապետյաններ, Հովհ, Գորոյանց, Տ. Իսախանյան, Ս. Իշխանյան, Մ. Քալանթարյան Գ. Լազարյան, Վ. Մելիք-Բաբախանյան, Ա. Օհանջանյան, Քր. Օհանյանց, Վ. Տեր-Գրիգորյան, Գր. Տեր-Գրիգորյան, Միք. Տիրտերյանց, Ստ. Միքայելյան, Ս. Տեր-Միքայելյան, Միք. Տեր-Միքայելյան, Նիկ. Տեր-Թոմասյան, Միք. Տիրտերյանց և ուրիշներ[804]: 1909 թ. դրությամբ

---

[797] Տե՛ս «Баку», Баку, 1910, 15 января, № 11, տե՛ս նաև 10 июля, № 156, տե՛ս նաև 25 июля, № 167.

[798] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 79.

[799] Տե՛ս նույն տեղում, стр. 80.

[800] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 84.

[801] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 84.

[802] Տե՛ս Бюлетени диктатуры Центрокаспия и Президиума Временнаго Исполнит. к-та., Баку, 1918, 3 августа, № 2.

[803] Տե՛ս «Կոմունիստ», Բաքու, 1930, հունվարի 8, № 6:

[804] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 67-70, տե՛ս նաև Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 102-105, տե՛ս նաև Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 26-30.

քաղաքի 6-րդ բժշկական կենտրոնի բժիշկներն էին Կ. Սարգսյանը, իսկ գինեկոլոգը՝ Ս. Տեր-Գրիգորյանը: Քաղաքային ծննդատան տնօրենն էր Տ. Շահնազարյանը, Բալախանիի հիվանդանոցի ավագ բժիշկն էր Հ. Զավրևը, իսկ «Սև» քաղաքինը՝ Մ. Տեր-Միքայելյանը[805]: 1918 թ. օգոստոսի տվյալներով քաղաքի 9 վարչական շրջաններում սանիտարական բժիշկներից հայ էին 7-ը. 1-ին շրջանում՝ Բ. Զուբարյանցը, 2-ում՝ Ա. Տեր-Ստեփանյանը, 5-ում՝ Հ. Թարյանցը, 6-ում՝ Զ. Տեր-Կարապետյանցը, 8-ում՝ Վ. Տեր-Մարկոսյանը, 9-ում՝ Կ. Հովհաննիսյանը: Բացի այդ, առևտրասանիտարական բժիշկն էր Ա. Նալբանդյանցը[806]: Մինչ այդ այդ պաշտոնը զբաղեցնում էր Ի. Բեգլարյանը[807]: Քաղաքի 9 անվճար բուժսպասարկման հիմնարկներից հայերից բաժնի վարիչներ էին 5-ում՝ Գ. Մուսայելյանցը, 6-ում՝ Սարգսյանը, 7-ում՝ Ա. Մալումյանցը[808]: Երկար տարիներ քաղաքի գլխավոր անասնաբույժներն են եղել Քր. Խաչատրյանը[809] և Պ. Սերեբրակյանը[810]: Քաղաքում հայերն ունեին նաև սեփական դեղատներ: Վոլիկոկնյաժևսկայա փողոցի վրա էր գտնվում Պ. Արզումանյանի, Ստանիսլավսկայա փողոցում՝ Ա. Աթանեսյանի, Տելեֆոննայա փողոցում՝ Ս. Վարդապետյանի դեղատները[811]:

Բաքվի հայ հասարակության սոցիալական կառուցվածքի մեջ առանձնահատուկ տեղ էին զբաղեցնում հատկապես ուսուցիչները: Առաջնորդվելով ազգային վսեմ գաղափարներով՝ նրանք պայքարում էին հասարակական կյանքում բուն դրած քաղքենիական վատ սովորույթների ու բարքերի դեմ: Աչխատանքի տեղավորվելով նավթամշակման գործարաններում՝ նրանցից շատերը սերտ կապեր էին հաստատում դյուղից քաղաք եկած կիսագրագետ մշակ-բանվորների հետ, նրանց համար կարդում տարաբնույթ գրականություն, նպաստում վերջիններիս հասարակական-քաղաքական աչխարհայացքի ձևավորմանը: «Եւ այդ ընդհանուր տիրող հոգեբանութեան մէջ,- գրում է Ա. Գյուլխանդանյանը,- յանկարծ երեւում են նոր մարդիկ իրենց ուրոյն ձգտումներով եւ տենչերով: Նրանց համար կարծես դրամի այս անսահման տենչը արժէք չունէր. նա խոսում էր գրքից, գրականութիւնից, լրագրից, պատմութիւնից եւ

---

[805] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 98-100:
[806] Տե՛ս Бюлетени диктатуры Центрокаспия и Президиума Временнаго Исполнит. к-та., Баку, 1918, 3 августа, № 2.
[807] Տե՛ս КК на 1900 г., стр. 176.
[808] Տե՛ս Бюлетени диктатуры Центрокаспия и Президиума Временнаго Исполнит. к-та., Баку, 1918, 3 августа, № 2.
[809] Տե՛ս КК на 1900 г., стр. 176.
[810] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 107.
[811] Տե՛ս նույն տեղում, отд. IV, стр. 171.

այլ այդպիսի նիւթերից: Ահա այդ արհամարհած ուսուցչութիւնն էր, որ ունեցաւ իր խոշոր ազդեցութիւնը բանուոր դասակարգի, մանաւանդ հասարակ խաւերի վրայ»[812]:

Բաքվի հայերն առաջատար դիրք ունէին քաղաքի ոչ միայն հասարակական-տնտեսական հարաբերութիւններում, այլև, շնորհիվ իրենց կրթվածութեան և դրագիտութեան, ընդգրկված էին հասարակական-քաղաքական կեանքի գրեթէ բոլոր ոլորաններում, պատասխանատու պաշտօններ էին վարում քաղաքի կառավարման համակարգում: «Անդրկովկասում գրեթէ չկայ քիչ թէ շատ մեծ քաղաք,- գրում է իշխան Գ. Թումանեանը,- որտեղ վարչական գործերում հայերը աչքի ընկնող դեր չխաղային, լինի դա ձայնաւորի, կամ ուպրավայի անդամի, անգամ քաղաքագլխի կամ աւագի պաշտօն»[813]: *Հայերի վարչական տարբեր մարմիններում պաշտօններ զբաղեցնելը պայմանաւորված էր կովկասյան թաթարների համեմատութեամբ կրթվածութեան անհամեմատ բարձր մակարդակով և ռուսաց լեզուին ազատ տիրապետելու փաստով: «Հայերը պիտանի լեզվի գինը,- գրում էր Մագդա Նեյմանը,- լեզու, որը նրանց առաջ ուղի է բացում դեպի բոլոր բնագաւառները և հնչացնում հաղորդակցումը տիրապետող ռուս տարրի հետ»*[814]: *Դրանից բացի էական դեր էր խաղում նաև բարձրաստիճան պառնալու ազգային հատկանիշը: «Պետական ծառայող և աստիճանաւոր լինելու ձգտումը երկար ժամանակ տիրական էր հայերի մէջ»*[815],- *գրում է Դ. Անանունը:*

Հատկանշական է այն իրողութիւնը, որ Բաքվի բարձրաստիճան հայերից ոմանք եղել են քաղաքագլուխ և տեղապահ: Դեռևս 1840-ական թվականների կեսերին Բաքվի քաղաքապետն էր Արղութեան նշանաւոր իշխանական տոհմի ներկայացուցիչ պորուչիկ Պաւել Փարսադանի Արղութեան-Երկայնաբազուկը (Դոլգորուկի)[816],

---

[812] Գիւլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1924, Բ տարի, հունվար, № 3, էջ 66:

[813] Թումանեան Գ., Ջեմստվօն եւ հայերը: Ժիրենի. գրական ժողովածու հայ գրականագէտների, Թիֆլիս, 1915, էջ 338:

[814] **Магда Нейман**, նշվ. աշխ., стр. 26.

[815] Անանուն Դ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 21:

[816] Տե՛ս КК на 1846 г., Тифлис, 1845, стр. 178 (բնագրում՝ «Бакинский Городничий: Пор. по Армии Князь Павель Парсадановичь Аргутинский-Долгоруковъ»). Զաքարյան իշխանական տոհմից սերված Պավել Փարսադանի Արղության-Երկայնաբազուկը ռուսահայոց հոգևոր առաջնորդ, ազգային-ազատագրական շարժման գործիչ, հետագայում Հայոց կաթողիկոս Հովսեփ Արղության-Երկայնաբազուկի վաղամեռիկ եղբոր որդին էր (տե՛ս Տէր-Աբրահամեան Յ., Յովսէփ Օրբորդ Երկայնաբազուկ Արղութեանց ընդհանրական առաջնորդ ռուսաբնակ Հայոց (1772-1800), իշխան կայսրութեան Ռուսաց եւ կաթողիկոս Ամենայն Հայոց,

որը հետագայում՝ 1849-1850 թթ., Շամախիի գավառային վարչությունում աշխատել է որպես երդվյալատենակալ[817], իսկ XIX դարավերջին՝ Բալախանի-Սաբունչիի տեղամասում՝ որպես քննիչ[818]:

Բաքու քաղաքի հասարակական-քաղաքական կյանքում մեծ դերակատարություն ուներ Քաղաքային Դուման: Ցարական կառավարության 1870 թ. հունիսի 16-ի օրենքով քաղաքներին ևս իրավունք էր տրվում ունենալ ինքնավարություն: Այդ օրենքով սահմանվում էր քաղաքային դումաների ստեղծում՝ ընտրական սկզբունքով: Սակայն դրա հիմքում դրված էր գույքային ցենզը: Ուստի, Դումայի ընտրություններին կարող էին մասնակցել ռուսահպատակ, 25 տարին լրացած այն քաղաքացիները, որոնք ունեին սեփականություն և վճարում էին քաղաքային հարկեր: Բանվորները, արհեստավորները, տնային ծառայողները, մանր չինովնիկները զրկված էին ընտրական իրավունքից: Քաղաքային Դումայի իրավասուների (ձայնավորների) գործունեության ժամկետը չորս տարի էր: Դուման զբաղվում էր քաղաքի բարեկարգման, առևտրի, արդյունաբերության, լուսավորության, առողջապահության հարցերով, սահմանված հարկերի հավաքագրման աշխատանքներով և այլն[819]: Դումայի գործադիր մարմինը կոչվում էր քաղաքային հասարակական վարչություն, որը սկսեց գործել 1878 թ.[820]: Այն կազմված էր քաղաքագլխից և 4 անդամից[821]: Քաղաքագլխը ընտրվում էր Քաղաքային Դումայի կողմից, իսկ վարչությունը կազմվում էր 2 ռուս, 1 հայ և 1 կովկասյան թաթար ներկայացուցիչներից[822]: Քաղաքային Դուման

Ս.-Պետերբուրգ, 1881, էջ 4; Արդուբեան տոհմի ազնվականութիւն ստանալը, «Վէմ», Փարիզ, 6 տարի, 1937, № 1, հունվար-մարտ, էջ 85-92): Ի, դեպ, Արդուբյան-Երկայնաբազուկ իշխանական տոհմի ներկայացուցիչները բարձր պաշտոններ են զբաղեցրել նաև այլ քաղաքներում: Օրինակ՝ 1860 թ. այդ տոհմից է եղել Նուխիի գավառի գավառապետի օգնականը. «Նուխու գաւառապետի օգնական կապիտան կնեազ Արդուբեան Երկայնաբազուկ վասն գերազանց ծառայութեան ստացաւ մայեօրի աստիճան» («Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1860, նոյեմբերի 26, № 48), իսկ Նիկողայոս Բ. Արդուբյան-Երկայնաբազուկը 1891-1893, 1895-1896, 1903-1904 թթ. եղել է Քիֆլիսի քաղաքագլուխը (տե՛ս Կարապետյան Ս., Թիֆլիսի քաղաքագլուխները, էջ 22, 24):

[817] Տե՛ս КК на 1850 г., Тифлис, 1849, стр. 19, տե՛ս նաև КК на 1851 г., Тифлис, 1850, отд. V, стр. 21.

[818] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 28.

[819] Տե՛ս Քալանթար Ա., Բագուի քաղաքային ընտրութիւնները (նամակ Բագուից), «Մշակ», Թիֆլիս, 1905, օգոստոսի 18, № 164:

[820] Տե՛ս **Кузьмински,** Всеподданнейший отчет..., стр. 250.

[821] Տե՛ս նույն տեղում, стр. 250, 309.

[822] Տե՛ս КК на 1895 г., отд. III, стр. 51, տե՛ս նաև **Мильман А.,** նշվ. աշխ., стр. 209-213.

դործնեց մինչև 1918 թ. ապրիլի 20-ը և վերացվեց Հեղափոխության պաշտպանության կոմիտեի որոշմամբ[823]:

Տարբեր տարիներին մեծ թվով բարձրաստիճան հայեր պաշտոններ էին զբաղեցնում Բաքվի Դումայի դործադիր մարմնում: Այսպես՝ քաղաքագլուխ Ստանիսլավ Դեսպոտ-Զենովիչի (1885-1890-1893 թթ.)[824] *կառավարման շրջանում (վերընտրվել է երկու անգամ) քաղաքային վարչության անդամ և քաղաքագլխի տեղապահն էր «Մարդասիրական ընկերության» նախագահ, մաթեմատիկական գիտությունների թեկնածու Ռր. Անտոնյանը*[825]: *Ս. Զենովիչից հետո Ռր. Անտոնյանի և 2-րդ ռանգի կապիտան Կոնստանտին Իրեցկու միջև ընթացած ընտրապայքարում քաղաքագլուխ է ընտրվում Ռր. Անտոնյանը*[826]: *Սակայն քաղաքային Դումայում 1894 թ. հունվարի 3-ին տեղի ունեցած մի միջադեպ Ռր. Անտոնյանին ստիպում է հրաժարական տալ, որից հետո հունվարի 26-ին քաղաքագլուխ է ընտրվում Կ. Իրեցկին*[827]: *Վերջինիս կառավարման օրոք վարչության անդամ էր Արսեն Սաֆարյանը*[828]: *Ի դեպ, Բաքվի Դուման 1894 թ. մայիսի 16-ի նիստում, հաշվի առնելով Ռր. Անտոնյանի՝ քաղաքագլխի տեղապահի տասնվեց տարիների անբասիր աշխատանքը, նրան ցկյանս նշանակել էր տարեկան 1500 ռ. թոշակ: Սակայն վերջինս կարուկ հրաժարվել էր*[829]: *1897 թ. հուլիսին Կ. Իրե-*

---

[823] Տե՛ս Արզումանյան Մ., Ստեփան Շահումյան, Երևան, 1978, էջ 497:

[824] Տե՛ս **Кузьмински,** Всеподданнейший отчет..., стр. 250, տե՛ս նաև «Նոր-դար», Թիֆլիս, 1890, մայիսի 12, № 59, տե՛ս նաև КК на 1894 г., Тифлис, 1893, стр. 130.

[825] Տե՛ս Շիրվանզադե Ալ., Բագու, «Արձագանք», Թիֆլիս, 1885, օգոստոսի 11, № 6, էջ 82, տե՛ս նաև КК на 1888 г., стр. 87, տե՛ս նաև КК на 1894 г., стр. 130.

[826] Տե՛ս Բաքվի քաղաքագլխի խնդիրը եւ քաղաքագլխի ընտրութիւնը, «Մուրճ», Թիֆլիս, 1894, № 1, էջ 159:

[827] Քաղաքային Դումայի 1894 թ. հունվարի 3-ի նիստին իրավասուներ Ա. Ունանյանի և Կ. Իրեցկու միջև վիճաբանությունն ուղեկցվում է փոխադարձ վիրավորանքներով: Կ. Իրեցկին չէր կարողանում համակերպվել քաղաքագլուխ չընտրվելու մտքի հետ և վայր է դնում իրավասուի իր լիազորությունները: Հարցն այն աստիճանի է բարդանում, որ իշխանությունները, օգտվելով առիթից, այդ ընդհարմանը փորձում են տալ ազգային բույր՝ այս «հանցանքի» մեջ մեղադրելով Քր. Անտոնյանին: Վերջինս ստիպված հրաժարական է ներկայացնում: Հատկանշական է, որ հունվարի 26-ին քաղաքագլխի պաշտոնի համար հայտարարված նոր ընտրությունների ժամանակ հաղթած Կ. Իրեցկուն մեծ մասամբ իրենց ձայները էին տվել հատկապես հայ պատգամավորները՝ դրանով իսկ փորձելով խուսափել ռուս չինովնիկների կողմից արհեստականորեն հրահրվող հակահայ տրամադրություններից (տե՛ս Բաքվի քաղաքագլխի խնդիրը եւ քաղաքագլխի ընտրութիւնը «Մուրճ», Թիֆլիս, 1894, № 1, էջ 159):

[828] Տե՛ս КК на 1895 г., стр. 130.

[829] Տե՛ս Ն. Դ.[Ներսես Դավթյան], Նամակ Բագուից, «Մշակ», Թիֆլիս, 1894, մայիսի 24, № 58, տե՛ս նաև «Արձագանք», Թիֆլիս, 1894, հուլիսի 15, № 80:

ցկին թողնում է քաղաքագլխի պաշտոնը: Մինչև նոր ընտրությունները, քաղաքագլխի պաշտոնակատարն է եղել Միք. Բելյավսկին[830]:

Նոր քաղաքագլխի հավանական թեկնածու էր համարվում Բաքվի նահանգական ինժիներ Հովհաննես Մարգարյանը[831], *սակայն քաղաքագլուխ է ընտրվում Բաքվի քաղաքային ինժեներ գնդ. Նիկ. ֆոն-դեր Նոննեն (1898 թ. նոյեմբերի 4 - 1901 թ. փետրվարի 28)*[832]: *Վերջինիս կառավարման շրջանում վարչության անդամ էր Ալ. Այվազյանը*[833]: *Նիկ. ֆոն-դեր Նոննեից հետո չուրջ մեկ տարի քաղաքագլխի պաշտոնակատարն է եղել քաղաքային վարչության անդամ Միք. Բելյավսկին*[834], *ապա ընտրվում է Ալ. Նովիկովը (1902 թ. մայիսի 2 - 1904 թ. հունիսի 14)*[835]: *1904-1905 թթ. այդ պաշտոնում ժամանակավորապես մեկը մյուսին փոխարինում են Միք. Բելյավսկին*[836], *Կ. Իլեցկին (1904 թ. նոյեմբերի 19 - 1905 թ. մայիս)*[837], *քաղաքային վարչության անդամ չոտաբս-կապիտան Ջյամիլ-բեկ Սաֆարալիևը*[838] *և Դաննեցկին: 1906 թ. քաղաքագլխի պաշտոնը թափուր է մնում*[839]: *Քաղաքագլուխ Նիկ. Վ. Ռաևսկուց (1907-1913 թթ.) հետո մի կարճ շրջան այդ պաշտոնը, որպես պաշտոնակատար հաջորդաբար զբաղեցնում են գնդ. Մարտինովը*[840], *այնուհետև՝ Ջումշուդ Հարությունյանը*[841]: *Վերջինս քաղաքագլուխ Լ. Բիչի կառավարման տարիներին (1914-1917 թթ.) վարչության անդամ էր և զբաղեցնում էր քաղաքագլխի տեղապահի պաշտոնը*[842]: *1917 թ. նոյեմբերին Բաքվի քաղաքային ոստիկանապետի ժամանակավոր տեղակալն էր Գ.*

---

[830] Տե՛ս КК на 1899 г., Тифлис, 1898, стр. 177.
[831] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1897, հուլիսի 11, № 78:
[832] Տե՛ս **Кузьмински**, Всеподданнейший отчет..., стр. 309, տե՛ս նաև КК на 1900 г., стр. 176-177.
[833] Տե՛ս КК на 1900 г., стр. 175.
[834] Տե՛ս КК на 1902 г., Тифлис, 1901, стр. 177.
[835] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1902, մայիսի 2, № 92:
[836] Տե՛ս КК на 1905 г., стр. 188.
[837] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1905, փետրվարի 17, № 25, տե՛ս նաև **Кузьмински**, Всеподданнейший отчет..., стр. 309.
[838] Տե՛ս նույն տեղում, стр. 310.
[839] Տե՛ս КК на 1907 г., стр. 175.
[840] Տե՛ս Устав армянскаго человеколюбиваго общества во имя св. Григория Просветителя, Баку, 1913, стр. 1.
[841] Տե՛ս «Արեւ», Բագու, 1914, նոյեմբերի 25, № 191:
[842] Տե՛ս КК на 1915 г., стр. 128, տե՛ս նաև «Արեւ», Բագու, 1917, նոյեմբերի 15, № 235:

Վարշամյանը[843]*: Բաղաքային Դումայի նոյեմբերի 22-ի նիստով քաղաքագլուխ ընտրվեց Բաքվի նահանգապետ Պ. Իլյուշկինը (1917 թ. նոյեմբեր-1918 թ. ապրիլ), որի տեղապահն էր Ջ. Հարությունյանը: Բաղաքային վարչության գործերման և վիճակագրության բաժինը ղեկավարում էր Գ. Դրիգորյանը, իսկ վարչականը՝ Գ. Վարշամյանը*[844]*:*

Տարբեր տարիներին մեծ թվով բարձրաստիճան հայեր (վաճառականներ, առևտրաարդյունաբերողներ, պատվավոր քաղաքացիներ և այլն) մշտապես տեղեր էին զբաղեցնում Բաքվի Բաղաքային Դումայում[845]*: Քանի որ ընտրելու իրավունք ունեին գույքային*

---

[843] Տե՛ս «Արեւ», Բագու, 1917, նոյեմբերի 30, № 245:

[844] Տե՛ս նույն տեղում, նոյեմբերի 26, № 242:

[845] Օրինակ՝ 1890-1895 թթ. 57 իրավասուներից հայեր էին 16-ը, կովկասյան թաթարներ՝ 18-ը, ռուսներ՝ 23-ը: Հայերից իրավասուներ էին՝ Գ. Այվազյանը, Ն. Այվազյանը, Թ. Ամիրյանը, Ավ. Անտոնյանը, Քր. Անտոնյանը, Ս. Բուդաղյանը, Աս. Վաչյանցը, Ս. Դիլդարյանցը, Ն. Կաճկաճյանցը, Լ. Մայիլյանը, Հովհ. Մելիքյանը, Ա. Դիլդարյանը, Բ. և Ն. Շահգեդանյանները, Դ. Յուզբաշ- յանը և Մ. Տեր-Օհանյանը (տե՛ս КК на 1895 г., стр. 130-131): 1898-1901 թթ. 59 իրավասուներից 17-ը հայեր էին: Իրավասուներ էին՝ Նիկ. Այվազյանը, Ալ. Այվազյանը, Ստ. Այվազյանը, Թոմաս Ամիրյանը, Քր. Անտոնյանը, Գր. Ասլանյանը, Ստ. Թաղիաևոսյանը, Միք. Ունանյանը, Նիկ. Շահգեդանյանը, Բագրատ Շխյանցը, Դավիթ Յուզբաշյանը, Աս. Վաչյանցը, Եր. Բուդաղյանը, Պ. Ղուկասյանը, Աղաջան Դիլդարյանը, Նիկ. Կաճկաճյանցը և Հ. Գյանջուգյանը,ը (տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 36-37, տե՛ս նաև КК на 1900 г., стр. 176-177): 1902-1905 թթ. 54 իրավասուներից հայեր էին 15-ը: Իրավասուներ էին՝ Ալ. Ադամյանը, Ալ. Այվազյանը, Նիկ. Այվազյանը, Ստ. Այվազյանը, Քր. Անտոնյանը, Ջ. Հարությունյանը, Աս. Վաչյանցը, Պ. Ղուկասյանը, Մ. Ջախաբրեկյանը, Հ. Գյանջուգյանը, Ա. Սելիքյանը, Ա. Սաֆարյանը, Ստ. Թաղիաևոսյանը, Միք. Ունանյանը, Բ. Շխյանցը (տե՛ս Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 55). 1906-1909 թթ. 76 իրավասուներից 19-ը հայեր էին: Իրավասուներ էին՝ Ն. Ադամյանը, Ալ. Այվազյանը, Նիկ. Այվազյանը, Ստ. Այվազյանը, Քր. Անտոնյանը, Ջ. Հարությունյանը, Աս. Վաչյանցը, Արշ. Ղուկասյանը, Բ. Հակոբյանը, Ստ. Լիաևոսյանը, Ս. Դիլդարյանը, Վ. Երիցյանը, Պ. Զոհրաբյանը, Հովհ. Մելիքյանը, Թ. Մելիքյանը, Ար. Սաֆարյանը, Ստ. Թաղիաևոսյանը, Միք. Ունանյանը, և Բ. Շխյանցը (տե՛ս КК на 1908 г., Тифлис, 1907, стр. 105-106, տե՛ս նաև Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 77): 1910-1913 թթ. տարիներին իրավասուներ էին՝ Տ. Բուդաղյանցը, Ա. Բաբայանցը, Ա. Այվազյանը, Աս. Վաչյանցը, Քր. Վերմիշյանցը, Ա. Ղուկասյանը, Ալ. Քալանթարը, Ա. Սաֆարյանը, Ս. Տեր-Զաքարյանցը, Ստ. Թաղիաևոսյանը, Միք. Ունանյանը, Բագ. Շխյանը, Ա. Բաբայանցը, Հ. Տեր-Միքայելյանը և Ալ. Սերեբրյակյանցը (տե՛ս КК на 1915 г., стр. 132-133, տե՛ս նաև «Արեւ», Բագու, 1914, ապրիլի 19, № 13, տե՛ս նաև «Գործ», Բագու, 1914, փետրվարի 28, № 3): 1917 թ. Դուման բաղկացած էր վճռական ձայն ունեցող 114 հոգուց: Ըստ այդմ՝ հայեր էին 38-ը, ռուսներ՝ 19-ը, կովկասյան թաթարներ՝ 31-ը, վրացիներ՝ 2-ը,

ցենզ ունեցող այն քաղաքացիները, ովքեր սահմանված կարգով վճարում էին քաղաքային հարկերը, ապա Դումայի իրավասուների ընտրությունները որոշակիորեն արտացոլում էին նաև քաղաքի բնակչության սոցիալական պատկերը: Օրինակ՝ 1906-1909 թթ. ընտրություններում 1713 հոգուց ընտրելու իրավունք էին ձեռք բերել 777 կովկասյան թաթարներ, 602՝ հայեր և 334՝ ռուսներ[846]: Այդ տվյալների համադրումը թույլ է տալիս եզրակացնել, որ բնակչության թվաքանակի համեմատությամբ հայ ունևոր դասի տեսակարար կշիռն ավելի մեծ էր: Հետևապես, քաղաքային գանձարանի հարստացման գործում գլխավոր էր հայ առևտրաարդյունաբերողների դերը:

XIX դարի 80-ական թվականներից սկսած՝ հայության նկատմամբ իրագործվող խտրական քաղաքականության պայմաններում, երբ սահմանափակված էր հայերին պետական ծառայության մեջ ընդունելու հնարավորությունը[847], սակավաթիվ հայեր պատասխանատու պաշտոններ էին վարում ինչպես Բաքվի նահանգային, այնպես էլ գավառային և քաղաքային վարչություններում[848]. «Պաքուի Հայք... կը տեսնուին գրագրական, հաշուապահական և գանձապահական ծառայութիւններ ընդներուն քով կառավարական, քաղաքային և հանրային ամեն կարգի ու աստիճանի պաշտօններ վարողներ»[849]: Նրանց մեջ կային իրավաբաններ, փաստաբաններ, նրբվյալ ատենակալներ, գանձապահներ և այլն[850]: 1845-1846 թթ. նահանգի փոստապետն էր Սպիրիդոն Հովհաննեսի Եղիազարյանը[851], 1912-1914 թթ. նահանգային դյուղատնտեսն էր

հրեաներ՝ 12-ը, և լեհեր՝ 12-ը: Հայերից իրավաստուներ էին՝ Պ. Կարա-Մուրզան, Քր. Վերմիշևը, Հովհ. Քաջազնունին, Ա. Գյուլխանդանյանը, Մ. Արարատյանը, Ս. Հակոբյանը, Տ. Բեգզադյանը, Արտ. Չիլինգարյանը (Ռ. Դարբինյան), Տ. Հովհաննիսյանը, Ռ. Աբրահամյանը, Պ. Չուբարյանը, Մ. Հովհաննիսյանը, Ա. Մալխասյանը, Տ. Տեր-Առաքելյանը, Բ. Հակոբջանյանը, Գ. Վարշամյանը, Մ. Գրիգորյանը, Հ. Խաչատրյանը, Ս. Դաստակյանը, Լ. Զատաֆյանը, Ստ. Շահումյանը, Լ. Աբաբեկյանը, Ռ. Բահաթրյանը և ուրիշներ (տե՛ս «Արեւ», Բագու, 1917, նոյեմբերի 4, № 234):

[846] Տե՛ս Քալանթար Ա., Բագուի քաղաքային ընտրութիւնները (Նամակ Բագուից), «Մշակ», Թիֆլիս, 1905, օգոստոսի 18, № 164:

[847] Տե՛ս Սիմոնյան Հր., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք Ա, էջ 294:

[848] Նկատենք, որ Այսրկովկասում պետական բարձր, միջին, նաև ցածր պաշտոնները վարում էին հիմնականում ռուսները: Վրացիները բռնում էին երկրորդ տեղը: Նրանց թիվը զգալի էր նաև վինվորապաս բարձր պաշտոններում: Բարձր պաշտոններ էին զբաղեցնում նաև գերմանացիներն ու լեհերը: Կովկասյան թաթարների թիվը մեծ էր հատկապես ոստիկանական համակարգում (տե՛ս նույն տեղում):

[849] Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 289:

[850] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XX, стр. 102, տե՛ս նաև таблица XXII, стр. 109.

[851] Տե՛ս КК на 1846 г., стр. 228.

Դրիգոր Տեր-Մանուկյանը[852]: Նույն շրջանում շինարարության վարչությունում աշխատում էին Տիգրան Արզումանյանն ու Բագրատ Արագյանը[853]: 1850-ական թթ. նահանգային բժիշկ Պյոտր Լևիցկին օգնականն էր Դավիթ Հարությունի Ռոստամյանը[854], որը 1868-1869 թթ. նշանակվում է նահանգային բժիշկ[855]: 1851-1853 թթ. Բաքվի գավառային ատիկանական վարչության դատախազն էր շուշեցի Լազարյանների գերդաստանի ավագ որդին՝ Բարսեղյան Դավթի Լազարյանը[856], որը հետագայում նշանակվում է Բաքվի գավառապետ[857]: 1845-1854 թթ. անընդմեջ գավառային գանձապետն էր Արտեմ Գասպարի Յագուբյանը[858]: 1857 թ. նահանգական վարչության անդամ էր Աբրահամ Շահնազարյանը[859]: Գավառապետ Մ. Դևմինեևի կառավարման ժամանակ, նրա օգնականն էր Մովսես Զոհրաբի Զոհրաբյանը[860]:

1900-1904 թթ. Բաքվի քաղաքային վարչության ֆինանսական բաժնի վարիչն էր Դ. Հարությունյանը[861]: Ուշագրավ է այն հանգամանքը, որ խիստ պատասխանատու այդ պաշտոնը գրեթե բոլոր ժամանակներում վստահվում էր միայն հայերին: Քաղաքագլուխ Ն. Ռաևսկու կառավարման շրջանում այդ պաշտոնը զբա-

---

[852] Տե՛ս Бакинско-Дагестанский комитет виноградарства и виноделия. Журнал заседания Бакинско-Дагестанского комитета виноградарства и виноделия, 11-го октября 1914 года, Баку, 1914, стр.13, տե՛ս նաև КК на 1914 г., отд. общий, стр. X.

[853] Տե՛ս КК на 1916 г., стр. 136.

[854] КК на 1853 г., Тифлис, 1852, стр. 573.

[855] Տե՛ս Պատմական համառոտ տեսութիւն Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան, էջ 5-6:

[856] Տե՛ս КК на 1852 г., стр. 572, տե՛ս նաև КК на 1854 г., Тифлис, 1853, стр. 606.

[857] Լազարյանների գերդաստանի ավագ որդին՝ Բաբաջանը ծնվել է 1818 թ.: Ավարտելով Թիֆլիսի գիմնազիան, նա ուսուցչություն է անում Շուշի պետական գավառական դպրոցում: Այնուհետև Բաբաջանն անցնում է պետական ծառայության ասպարեզ, որտեղ բավականին առաջադիմում է, հասնելով 7-րդ դասի պաշտոնյայի աստիճանի (надворный советник, 1856 թ. դեկտեմբերի 23) և արժանանալով կառավարական պարգևների: Տիրապետել է արաբերեն և պարսկերեն լեզուների: Բ. Լազարյանը վախճանվել է 1872 թ.: Նրա որդին զոհվել է 1877 թ. նոյեմբերին՝ Կարսը գրոհելու ժամանակ, հորեղբոր՝ գեներալ-լեյտենանտ Հովհաննես Լազարյանի աչքի առաջ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 42, գ. 4, թ. 1-3, տե՛ս նաև **Потто В.**, Նշվ. աշխ., стр. 24, 33, 350-351, տե՛ս նաև Ղազիյան Ա., Լազարյանների գինվորական փառքը, էջ 224):

[858] Տե՛ս КК на 1846 г., стр. 178, տե՛ս նաև КК на 1856 г., стр. 631.

[859] Տե՛ս КК на 1858 г., Тифлис, 1857, стр. 432.

[860] Տե՛ս КК на 1856 г., стр. 631.

[861] Տե՛ս **Кузьмински,** Всеподданнейший отчет..., стр. 314.

ղեկնում էր քաղաքային վարչության անդամ Զ. Հարությունյանը[862], իսկ Լ. Բիչի կառավարման օրոք, այդ բաժինը գլխավորում էր ճանաչված հասարակական գործիչ Ստ. Թաղիանոսյանը[863]: ՀՅ Դաշնակցության կողմից քաղաքային վարչության կազմում ընտրվել էր նաև Գևորգ Վարշամյանը[864]: 1910-1914 թթ. քաղաքային վարչության բարեկարգող հանձնաժողովի նախագահն էր Ալ. Սերեբրյակյանցը[865]: Հարկ է նկատել, որ այդ հանձնաժողովն իր աշխատանքները կատարում էր ազգային պատկանելության սկզբունքով ստեղծված թաղային խորհուրդների միջոցով: 1914 թ. օգոստոսի 21-ին տեղի ունեցավ քաղաքը բարեկարգող հանձնաժողովի հայկական համայնքի թաղային խորհրդի անդրանիկ նիստը, որտեղ նախագահ ընտրվեց Ս. Օհանջանյանը, նրան օգնականներ՝ բժիշկ. Գ. Մարգարյանը, Լ. Մելիք-Շահնազարյանը և քարտուղար՝ Ա. Բերնադակին[866]: Նույն շրջանում ֆինանսական բաժնում աշխատում էր Թևան Գրիգորյանցը, իսկ դատականում՝ Արտաշես Արթարյանցը[867]:

Հասարակական կյանքում հայերի ունեցած առաջատար դիրքի խոսուն վկայությունն է հետևյալ փաստը: 300 գործող անդամ ունեցող Բաքվի հասարակական ժողովը (հիմնադրվել է 1878 թ. նոյեմբերի 9-ին)[868] ղեկավարող Ավագների խորհուրդի 17 անդամներից 13-ը հայեր էին. նախագահն էր նավթարդյունաբերող Գ. Ծովիանյանը[869]: Բաքվում հայերը պաշտոններ են զբաղեցրել նաև այլ ոլորտներում: Օրինակ՝ սպանդանոցի կառավարիչն էր Գուրգեն Վաչյանցը[870]: 1891 թ. 550.000ռ. հիմնադիր կապիտալով ստեղծված[871] «Բաքվի ձիաքաշ-երկաթուղային ճանապարհների բաժնետիրական ընկերության» նախագահն էր Թոմաս Ամիրյանը: Ընկերության ան-

---

862 Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 78.
863 Տե՛ս «Գործ», Բագու, 1914, ապրիլի 30, № 28:
864 Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Յեղափոխական դէմքեր, «Հայրենիք», Պօսթըն, 1936, ԺԴ տարի, ապրիլ, № 6, էջ 107:
865 Տե՛ս «Գործ», Բագու, 1914, փետրվարի 28, № 3:
866 Տե՛ս «Արեւ», Բագու, 1914, օգոստոսի 17, № 17:
867 Տե՛ս КК на 1916 г., стр. 141-142.
868 Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 89.
869 Տե՛ս КК на 1887 г., Тифлис, 1886, стр. 825.
870 Գուրգեն Վաչյանցը դավադրաբար սպանվել է 1916 թ. օգոստոսի 10-ին, հայրենի Սեղրի ավանից Օղուբաղ գնալու ճանապարհին՝ դարանակալ թուրքի գնդակից (տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1916, օգոստոսի 19, № 183):
871 Տե՛ս «Արօր»-ի պատկերազարդ օրացոյց 1894 թ., էջ 37, տե՛ս նաև Դադայան Խ., Հայերը և Բաքուն, էջ 56:

դամներ էին Ստ. Այվազյանը և Սամվել Դիլդարյանը: Ձիաքարշ-բանի կառավարիչն էր Համբարձում Հախումյանը[872]:

Բաքվի հասարակական տարբեր վարչություններին դրագիր-ները առավելաբար հայեր էին: Այս կապակցությամբ Ալ. Շիրվան-զադեն գրում է. «...մտեք մեր դատարանները, մեր մաքսատունը և մեր պաշտոնական այլ հիմնարկությունների մեջ, այնտեղ կտեսնեք բազմաթիվ հայ ծառայողներ, որոնց մեծամասնությունը հասարակ դրագիրներ են»[873]: Բաքվում ճանաչված երդվյալ ատենակալներ և փաստաբաններ են եղել Բոգդան Դոլուխանյանը, Սամսոն Հարու-թյունյանը, Գարեգին Ենգիբարյանցը, Ալեքսանդր Ասրիբեկյանցը[874], Սահակ Տեր-Ստեփանյանց Գուրգենյանը (Աղվանից)[875], Ար. Առաքել-յանը, Ար. Ասրիբեկյանը, Ստ. Այվազյանը, Գ. Ենգիբարյանը, Գ. Մնացականյանցը, Մ.Ք. Պապաջանյանը, Հովհ. Պարոնյանցը, Մ.Ք. Սարգսյանը, Ս. Տեր-Ղազարյանը, Հովհ. Տեր-Գրիգորյանցը, Պ. Տեր-Օսիպյանը, Գր. Տեր-Ստեփանյանը, Ստ. Տիգրանյանցը, Գ. Յուղբաշ-յանը, Նիկ. Հարությունյանը, Մ. Թումանյանը, Ս. Փալանթարյան և շատ ուրիշներ[876]: XIX դարի վերջերին Բաքվի շրջանային դատարա-նի անդամ էր Գր. Տեր-Ստեփանյանը[877]: 1909 թ. Բաքվի պատվավոր հաշտարար դատավորներից էր Ստ. Թաղիանոսյանը[878]: 1897-1909 թթ. քաղաքային հաշտարար դատարանի առաջին տեղամասի դա-տական պրիստավն էր Մինաս Թավաքալյանը[879]: 1909-1919 թթ.

---

872 Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 94.

873 Տե՛ս Շիրվանզադե Ալ., Նամակ Բաքվից, ԵԺ, հ. 9, էջ 343:

874 Տե՛ս Краткий исторический очерк состояния и деятельности Бакинского человеколюбиваго общества во имя св. Григория просветителя Армении съ 1854 по 1896 гг., сост. член совета общества секретарь **А. Калустянцъ**, Баку, 1896 (այսուհետև՝ КИОБЧО-1854-1896 гг.), стр. 28.

875 Ս. Տեր-Ստեփանյանց Գուրգենյանը ծնունդով Շամախի քաղաքից էր: Իր իսկ վկայությամբ՝ «Աղուանցի եմ Շամախի կամ Շիրուան քաղաքէն» (տե՛ս Գուրգէ-նեան Ս., Պանդուխտ կամ կեանք Աղուանցւոյ, Կոստանդնուպօլիս, 1864, էջ 56, տե՛ս նաև Գուրգենեան Ս., Պանդուխտ կամ Բագուայ դատաստանական բեմի փաստաբան Սահակ բէկ Գուրգենեանի կեանքէն մի քանի էպիզոտներ, Բագու, 1882:

876 Տե՛ս Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 16-18, տե՛ս նաև Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 107-109.

877 Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 27.

878 Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 69.

879 Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 28, տե՛ս նաև Ба-кинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 20.

Բաքվում փաստաբանական գործունեություն է ծավալել հայագիտության վարչուն երախտավորներից մեկը՝ Հակոբ Մանանդյանը, նախ՝ իբրև երդվյալ հավատարմատարի օգնական, ավելի ուշ՝ երդվյալ հավատարմատար[880]:

Հայերը բարձրաստիճան պաշտոններ էին վարում նաև Բաքվի հասարակական և առևտրաարդյունաբերական ասպարեզներում կարևոր դերակատարություն ունեցող «Բաքվի նավթարդյունաբերողների միության» մեջ, որի նախագահն էր Արշակ Ղուկասյանը[881]: Հինգ հոգուց բաղկացած խորհրդի անդամներից 3-ը հայ էր, 2-ը՝ ռուս: Հայերից խորհրդի կազմում ընդգրկվել էին Ստ. Թաղիանոսյանը, Ար. Պարոնյանը և Գ. Գյանջուգյանը[882]: Հատկանշական է, որ խորհրդի վարչության բոլոր պաշտոնները զբաղեցնում էին հայերը: Բժշկական մասի վարիչն էր բժիշկ Հակոբ Զավրիևը (Զավրյան), լուսավորության՝ ինժեներ-տեխնիկ Տիգրան Բեգզադյանը, նրա օգնականն էր Ս. Հակոբյանը, տնտեսականինը՝ Լևոն Մելիք-Շահնազարյանը, հաշվապահն էր Եսայի Հարությունյանը: Բալախան-Սաբունչիի շրջանների տեխնիկական մասի վարիչն էր Միք. Բաղդասյանը, իսկ «Սև» և «Սպիտակ» քաղաքամասում՝ Վարդան Սարգսյանը ջրամատակարարման մասի վարիչն էր Երվանդ Թաղիանոսյանը[883]: Խորհուրդը հրատարակում էր «Нефтяное дело» թերթը, որի խմբագիրն էր Ար. Պարոնյանը, տեղակալն էր Պ. Կարա-Մուրզան[884]:

Բաքվի հասարակական-քաղաքական կյանքում հայերի ունեցած դերակատարությունը XX դարասկզբին դրսևորվեց նաև դիվանագիտության բնագավառում: Հատկանշական է, որ եվրոպական մի շարք երկրներ հիմնականում հայ գործիչներին էին Բաքվում նշանակում դիվանագիտական ներկայացուցիչներ: Օրինակ՝ երկար տարիներ Բելգիայի փոխհյուպատոսն էր Նիկոլայ Հարությունի Այվազյանը, իսկ Իտալիայինը՝ ախալցխացի Վահրամ Կարապետի Մուրթաֆյանը[885]:

---

[880] Տե՛ս Սատենադարան, Հակոբ Մանանդյանի արխիվ, թղթ. 227, վավ. 308, էջ 1, տե՛ս նաև թղթ. 227, վավ. 316, էջ 2:

[881] Տե՛ս «Кавказ», Тифлис, 1894, 12 ноября, № 10, տե՛ս նաև Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 33, տե՛ս նաև Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 49:

[882] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 81.

[883] Տե՛ս նույն տեղում:

[884] Տե՛ս նույն տեղում, отд. II, стр. 82.

[885] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1253, թ. 4, տե՛ս նաև «Մշակ», Բագու, 1908, հունվարի 9, № 6, տե՛ս նաև Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь

Պակաս կարևոր չէր Բաքվի հայերի դերն ու մասնակցությունը հասարակական-քաղաքական կյանքին: XIX դարի 90-ական թթ. սկզբներից Բաքվում գործում էին ՀՅ Դաշնակցության[886], ՍԴ Հնչակյան[887], իսկ ավելի ուշ՝ Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության («Սպեցիֆիկներ»)[888] և Հայ ժողովրդական կուսակցության մասնաճյուղերը[889]: Թեկուզև Արմենական կուսակցությունը Բաքվում չունեցավ իր մասնաճյուղը, այդուհանդերձ Իրանում (Սալմաստ-Թավրիզ) գործող Արմենական կառույցների միջոցով «Արմենիա» թերթի համարները նույնպես հասնում էին Բաքվի հայ հասարակությանը[890]:

Հայ քաղաքական ուժերը (Բոդդան և Փառւո (Ռիզել) Կնունյանցներ, Թևան Գրիգորյան, Տրդատ Տրդատյան, Միհրան Խոջամիրյան, Դավիթ Եղիազարյան, Սահակ Տեր-Գաբրիելյան, Ալեքսանդր (Յուրի) Բեկզադյան և ուրիշներ) իրենց մեծ գերակատարությունն են ունեցել նաև մյուս քաղաքական կուսակցությունների՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական (ՌՍԴԲԿ)[891] և

города Баку и Бакинской губернии), стр. 92, տե՛ս նաև Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 37, տե՛ս նաև Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 76.

[886] Տե՛ս Սեւեան Ռ., Բագուի շրջանի առաջին դաշնակցական գործիչները, «Հայրենիք», Պօսթըն, 1938, օգոստոս, № 10, էջ 154, տե՛ս նաև Արամայիս (Տեր-Դանիելյան Միսաք), «Անցած օրեր». հուշեր (տե՛ս ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 38, թ. 25-28), տե՛ս նաև Գիւլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1924, Բ տարի, հունվար, № 3, էջ 60, տե՛ս նաև Խուդինյան Գ., Հ Յ Դաշնակցության քննական պատմություն. ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը, Երևան, 2005, էջ 269:

[887] Տե՛ս Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962), հ. Ա, խմբագրեց Ա. Կիտուր, Պէյրութ, 1962, էջ 214, տե՛ս Սիրվարդ, Փարամազ (Մատթեոս Սարգիսյան), կյանքն ու գործունեությունը. Փրովիտենս, 1954:

[888] Տե՛ս Հակոբյան Ա., Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպություն՝ «Սպեցիֆիկներ» (Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914 թթ.), հոդվածների ժողովածու, Երևան, 2002, էջ 182:

[889] Տե՛ս Ղազարյան Վ., Ռամկավար Ազատական կուսակցություն: Ուղեցույց եւ համառոտ պատմություն, Երևան, 1991, էջ 76:

[890] Տե՛ս «Արեւ», Բագու, 1914, սեպտեմբերի 28, № 143, տե՛ս նաև Կարապետյան Ա., Արմենական կուսակցության կազմավորումը, ԼՀԳ, Երևան, 1993, № 2, էջ 11:

[891] 1901 թ. գարնանը Բաքվի սոցիալ-դեմոկրատական խմբակների (1901 թ. դրությամբ Բաքվի հինգ շրջաններում արդեն գոյություն ունեին 15 խմբակներ, որոնցում ընդգրկված էր 150 հոգի) միավորմամբ ստեղծվում է միասնական ղեկավար կենտրոն, և հիմք է դրվում ՌՍԴԲԿ Բաքվի կազմակերպության կոմիտեին (տե՛ս Մելիք Մելիքյան (Դեղուշկա), Երկեր, Երևան, 1974, էջ 5):

Սոցիալիստ-հեղափոխականների (Էսէռ) Բաքվի մասնաճյուղերի ստեղծման և գործունեության մեջ[892]:

Բաքվի հասարակական-քաղաքական կյանքում հայ ազգային կուսակցություններից հատկապես առաջատար դիրք էր գրավում ՀՅ Դաշնակցությունը, որը, 1890-ական թթ. սկզբներին հաստատվելով Բաքվում, կուսակցական ակտիվ գործունեություն ծավալելու արդյունքում XX դարի սկզբներին արդեն ներկայանում էր որպես կուռ կազմակերպված կառույց[893]: *Այդ են վկայում 1917 թ. հոկտեմբերի 29-ի Բաքվի Քաղաքային Դումայի ընտրությունների արդյունքները, երբ սոցիալիստական բլոկից (սոցիալ-դեմոկրատ մենշևիկ*[894]*, սոցիալիստ-հեղափոխական՝ 17041 ձայն, 25 իրավասու) հետո, ձայների թվով, ՀՅ Դաշնակցությունը կարողացավ առավելագույն քվեներ ստանալ և գրավել երկրորդ տեղը (12530, 18 իրավասու), որին հաջորդիցին բոլշևիկները (11202 ձայն, 16 իրավասու), Մուսավաթը (10211 ձայն, 14 իրավասու), Սահմանադրական միացյալ կազմակերպությունը (8063 ձայն, 11 իրավասու), կադետները (4173 ձայն, 6 իրավասու), Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը (2321 ձայն, 3 իրավասու), Հրեա սոցիալիստական բլոկը (3 իրավասու), «Միություն» կազմակերպությունը (3 իրավասու) և Ռուսական դեմոկրատական միությունը (2 իրավասու)*[895]:

Բաքվի հայ բնակչության XIX դարի երկրորդ կեսի և XX դարասկզբի հայ հասարակական-քաղաքական կյանքում զգալի դերակատարություն ուներ Ազգային բյուրոյի Բաքվի մասնաճյուղը[896] *(նախագահ՝ Հայկ Տեր-Միքայելյան, անդամներ՝ Աս. Վաչյանց,*

---

[892] Տե՛ս Ինճիկյան Հ., Բոգդանճ Կնունյանց, Երևան, 1955, տե՛ս նաև Կ։սրապետյան Հ., Մեծ սյայքարի մարդիկ. Սահակ Տեր-Գաբրիելյան, Երևան, 1963, էջ 230, տե՛ս նաև Ալեքսանդր Բենգադյան: Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, Երևան, 1981, էջ 4, տե՛ս նաև Մելիքյան Ս., Սոցիալիստ-հեղափոխականները Հայաստանում և Անդրկովկասի հայաշատ քաղաքներում 1900-1920 թթ., Երևան, 1997:

[893] 1901 թ. սկզբներից արդեն «Ոսկանապատի» կենտրոնական կոմիտեն Բաքվում ուներ հետևյալ խմբերը. «Ջանգ», «Սերոբ Աղբյուր», «Կայարան», «Պետո», «Ալիշան», «Ալիք», «Կարօ-Ջօրեան», «Շերո-Ջաթօ», «Վագր», «Աստղեր», «Հույս», «Երկունք», «Սյունիք», «Անանուն», «Հրազդան», «Արմատ», «Բորն», «Վազգեն», «Սարո» և այլն (տե՛ս «Դրօշակ», Ժնեւ, 1902, փետրվար, № 2, էջ 32, տե՛ս նաև 1902, ապրիլ, № 4, էջ 64, տե՛ս նաև 1902, հուլիս, № 7, էջ 112):

[894] Սոցիալ-դեմոկրատ մենշևիկ կուսակցությունը գլխավորապես տարածված էր ռուս բանվորության շրջանում (տե՛ս Գիւլխանդանեան Ա., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1941,ԺԹ տարի, հուլիս, № 9, էջ 84):

[895] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1917, նոյեմբերի 4, № 235, տե՛ս նաև նոյեմբերի 7, № 237, տե՛ս նաև «Արեւ», 1917, նոյեմբերի 4, № 234:

[896] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1456, ց. 1, գ. 190, թ. 1, տե՛ս նաև ֆ. 288, ց. 1, գ. 7, թ. 1:

Տ. Բեկզադյան, Նիկ. Ալիքեդյան, Հ. Մանանդյան, Ալ. Քալանթարյան, Եր. Թաղիանոսյան[897], Տ. Հովհաննիսյան, Գր. Վերմիշյան, բժ. Տ. Զաքարյանց, Տ. Բուդաղյանց[898]: Թիֆլիսում, կենտրոնական Ազգային բյուրոյի Բաքվի մասնաճյուղի ներկայացուցիչներն էին Լ. Ղուլյանը[899], այնուհետև՝ Լ. Լալայանը[900]):

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ դադարում է Ազգային բյուրոյի գործունեությունը, Բաքվի մասնաճյուղը վերանվանվում է Բաքվի հայ հասարակական և քաղաքական հոսանքների ժամանակավոր խորհուրդ (գործադիր կոմիտեի նախագահ՝ Հայկ Տեր-Միքայելյան, փոխնախագահ՝ Ա. Գյուլխանդանյան)[901]: 1917 թ. դեկտեմբերի 30-ին ստեղծվում է Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի Բաքվի մասնաճյուղը, որի կազմում միջկուսակցական համաձայնությամբ առաջին տեղեր է զբաղեցնում հասարակության մեջ ամենաազդեցիկ և հեղինակություն վայելող քաղաքական ուժը՝ ՀՅ Դաշնակցություն կուսակցությունը: Խորհուրդը բաղկացած էր 32 հոգուց, նախագահն էր ՀՅԴ անդամ Աբրահամ Գյուլխանդանյանը[902]: 1918 թ. նոյեմբերին կազմվեց նոր խորհուրդ՝ Հակոբ Ղուկասյանի նախագահությամբ[903]: Խորհրդի պատվավոր նախագահն էր՝ նահանգում մեծ հեղինակություն վայելող Բաքվի Հայոց թեմի 1916-1921 թթ. առաջնորդ Բագրատ եպս. Վարդազարյանը-[904]: 1919 թ. հունվարի սկզբին, Հ. Ղուկասյանի բծավոր տիֆից մահանալու պատճառով, խորհրդի նախագահ է ընտրվում Արշակ Պա-

---

[897] Երվանդ Թաղիանոսյանը ծնվել է 1864 թ. Երևանում: Սովորել է Գևորգյան ճեմարանում և Մոսկվայի համալսարանում: ՀՅԴ անդամ էր: 1904 թ. վերջերին հասնում է Բաքվում և ծավալում հասարակական-քաղաքական լայն գործունեություն: Նավթարդյունաբերողների համագումարի քարտուղարն էր, միաժամանակ աշխատում էր «Մարդասիրական ընկերության» գրադարանում: 1921 թ. հուլիսին Հայաստանի կառավարության հրավերով Թաղիանոսյանը Բաքվից տեղափոխվում է Երևան և ստանձնում հանրային գրադարանի բաժնի վարիչի, ապա տնօրենի պաշտոնը: Մահացել է 1948 թ. Երևանում (տե՛ս Մելյան Բ., Գրքի երախտավորները (կենսագրական համառոտ բառարան), Երևան, 2002, էջ 38-39):

[898] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 111, թ. 11:

[899] Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 47:

[900] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 288, ց. 1, գ. 3, թ. 7:

[901] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1917, հունիսի 11, № 122:

[902] Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1941, ԺԹ տարի, հուլիս, № 9, էջ 98-99, տե՛ս նաև Վրացեան Մ., Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 157:

[903] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 4, տե՛ս նաև Մելիք-Եօլչեան Ս., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1925, Գ տարի, սեպտեմբեր, № 11, էջ 75:

[904] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 116:

րանյանը[905]*: Բաքվի Հայության քաղաքական իրավունքների պաշտպանության հիմնական գործառույթն իրականացնում էր Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը, որն զբաղվում էր բազմաբնույթ խնդիրների լուծմամբ: Հայ քաղաքական կուսակցությունները՝ ՀՅ Դաշնակցությունը, ՍԴ Հնչակյան և այլ կուսակցությունները, ինչպես նաև հայկական բարեգործական ընկերությունները ակտիվորեն մասնակցում էին նրա աշխատանքներին: Դրանց շարքում առանցքային դերը, ընդհուպ մինչև Բաքվի հերոսամարտի ավարտը, պատկանում էր ՀՅԴ-ին:*

* * *

XIX դարի 80-ական թվականներից հետո Բաքվում տիրապետող դիրք գրաված դրամատիրական հարաբերությունները չնայած նպաստում էին քաղաքի առաջընթացին, այդուհանդերձ տնտեսական դրության փոփոխությունն իր հետ բերում էր նաև բացասական դրսևորումներ: Հասարակական հարաբերություններում առաջնային դեր սկսեց խաղալ միջոցների մեջ խտրականություն չդնելու ճանապարհով հարստանալու անհագ տենչը: Այլ խոսքով, տնտեսության զարգացմանը զուգընթաց, Բաքուն ապրում էր նաև բարոյական անկում: Արագորեն սկսեցին անհետանալ նահապետական հինավուրց բարքերն ու ավանդությունները: Փողի ամենակարող ուժի բերած հոգևոր-բարոյական ավերածությունները, հասարակության բարքերի, կենցաղի և փոխադարձ կապերի մեջ տեղի ունեցող արմատական փոփոխությունները, հիմնիվեր շրջում էին պատվի, մարդկայնության և դեղեցիկի մասին եղած ավանդական պատկերացումները. «Ով որքա՞ն ուճիկ է ստանում, որքա՞ն դրամ է յետ ձգել, ի՞նչ գործ է ձեռնարկել, ի՞նչ չահ ունի: Որքա՞ն նաւթ է տալիս ինչ նավթահորը, ե՞րբ նոր հորեր պետք է դրուին, որքա՞ն է խորութիւնը, որքան արժէ այս կամ այն ընկերութեան չահաբաժինը: Ահա խոսակցութիւնների գլխաւոր նիւթը փողոցում, սեննակում, երկաթուղու կամ կառքի մէջ: Յուրաքանչիւր խոսակից նախանձով լցւում էր դէպի միւսը, եթէ իր խոսակիցը հնարաւորութիւն ունէր աւելի դրամ վաստակելու: Մարդու դնահատութիւնը կախուած էր միայն դրամից»[906]*:*

---

[905] Տե՛ս Մելիք-Եօլչեան Ս., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1925, Գ տարի, սեպտեմբեր, № 11, էջ 77:

[906] Գիւլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1924, Բ տարի, հունվար, № 3, էջ 65-66:

Ալ. Շիրվանզադեն, որը Բաքվում ապրած տարիների ընթացքում խորապես ուսումնասիրել էր արդյունաբերական քաղաքի մարդկանց սոցիալական ու հոգեբանական հարաբերությունները, «Կյանքի բովից» հուշագրության մեջ գրում է. «Արդեն նավթային աշխարհն ինքնըստինքյան դարձել էր մի ընդարձակ ասպարեզ մարդկային գերագույն ընագդների զարգացման համար... Վերջին չորս տարիները Բաքվում ես ընկել էի մի միջավայր, ուր ընկերոջ վերջին կոպեկը գողանալը և նրա զավակներին մի կտոր հացից զրկելը համարվում էր խելքի և եռանդի ապացույց և ոչ միայն չէր դատապարտվում, այլև գառնում էր նախանձի առարկա: Հարյուրավոր դեպքեր են անցել իմ աչքերի առջև միմյանցից այլանդակ, միմյանցից զազրելի: Նրանցից եմ ես ընտրել Անդրեաս Էլիզբարովին ու Սաղաթելին՝ «Պատվի համար»-ի մեջ»[907]:

Ալ. Շիրվանզադեն «Արձագանքի» էջերում, անդրադառնալով տեղացի արդյունաբերողներից շատերի բարոյական նկարագրին, գառնացած գրում է, որ, շփվելով օտարների հետ, նրանցից երիտասարդները ընդօրինակում են միայն արատավորն ու խոտելին: Եվ այդ ամենի պատճառը, մեծ գրողն իրավացիորեն տեսնում է նրանցից շատերի՝ միանգամից հարստանալու փաստի մեջ: «Բագուի տեղացի վաճառականների և նաւթարդիւնաբերների տնտեսական դրութիւնը,- գրում է Ալ. Շիրվանզադեն,- նաւթային արագ զարգացման շնորհով փոխւել է յանկարծակի, մենք գտնում ենք մի ահագին տարբերութիւն սոցա և ուրիշ քաղաքների վաճառականութեան մէջ, մենք գտնում ենք, որ Բագուի տեղացիները նամանաւանդ սոցանից երիտասարդները վերջին տասնեակ տարիների ընթացքում բացի անբարոյականութիւնից, չռայլութիւնից ոչինչ չեն կարողացել օտարներից ընդունել իրենց կեանքի մէջ: Դորա միակ հիմնական պատճառը, կրկնում ենք, նոցա տնտեսական դրութեան յանկարծակի փոփոխութիւնն է...»[908]: Գյուղից Բաքու գնացած և քաղքենիական բարքերով ապրող հայերի վերաբերյալ դիպուկ բնորոշում է տվել նաև «Տարազը», գրելով. «Փարթամութիւնն այստեղ հասել է իր գագաթնակէտին: Հեշտ և կարճ ժամանակամիջոցում ձեռք բերւած հարստութիւնը շատերին մոռացրել է տւել իրանց անմխիթար անցեալը և երբէք չըյիշելով ու չկամենալով անգամ գէթ երբեմն պատկերացնել իրանց ոչ շատ վաղուց թշւառութիւնը... և մեր Աղսաբէթները, Սօնաները, Սարընգիւլ ու Նանախանըմները, Բաղդասարները, Կիրա-

---

[907] Շիրվանզադե Ալ., Կյանքի բովից, էջ 87-89:

[908] Շիրվանզադե Ալ., Բագու, «Արձագանք», 1885, № 9, էջ 50:

կոնները մի մի պճնուած մոդնի գամաներ եւ կաւալերներ են դարձած... Մառանները տներում լեզգիներ են, որոնք չատ չուտ սովորում են հայերէն և խօսում են այն բարբառով, ինչպէս իրանց տէրերը. օրինակ՝ Ղարաբաղցու տան ծառայողը Ղարաբաղի բարբառով, Շամախեցունը՝ Շամախու և այլն»[909]:

Եվ այնուամենայնիվ, Բաքվում, սոցիալական և բարոյական մեծ հեղաբեկումների ընթացքում, հայ հասարակական կյանքում ձեռնարկվում էին նաև դրական և առաջադիմական մեծ տեղաշարժեր ու օրակարգային փոփոխություններ, որոնք հիմնականում դրսևորվում էին բարեգործական չարժման տեսքով: Տնտեսական աշխուժության պայմաններում ծնունդ առան բարեգործական և հասարակական մի շարք կազմակերպություններ, որոնք նպաստեցին սոցիալապես անապահով հայ բնակիչների և ընդհանրապես Բաքվի հասարակական կյանքի համրնդհանուր զարգացմանը:

«ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՅԱՆՈՒՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ»: *1859 թ. «Հյուսիսափայլ» ամսագրում տպագրվում է լուսավորության մեծ ջատագով Ստ. Նազարյանցի «Հայերի կոչումը մարդկութեան մէջ» վերտառությամբ հոդվածը, որտեղ, խոսելով, հայոց անցյալի և ներկայի մասին, հեղինակն առաջարկում էր կազմել մի ընկերություն, որ «պիտոյ է հոգար ազգային դաստիարակութեան և կրթութեան համար»*[910]: *Մեծ հրապարակախոսի այս կոչի առաջին արձագանքողներից եղավ «Հյուսիսափայլի» թղթակից, Բաքվի նահանգի բժշկապետ Դավիթ Հարությունի Ռոստոմյանցը*[911], *որը ընդառաջելով Ստ. Նազարյանցի առաջարկությանը և գործունեության ծրագրին, հավաքելով 10600 ռ. դրամագլուխ, հիմնում է Կովկասի հայոց կրթական բարեգործական հիմնարկություններից ավագագույնը՝ «Հայոց Մարդասիրական ընկերութիւն յանուն Ս.*

---

[909] Մի քանի օր Բագուում, «Տարազ», Թիֆլիս, 1891, մարտի 24, № 11, էջ 163:

[910] Նազարեանց Ս., Հայերի կոչումը մարդկութեան մէջ, «Հիւսիսափայլ», Մոսկվա, 1859, յունվար, ամսատետրակ 1, էջ 11:

[911] Դավիթ Ռոստոմյանը ծնվել է Թիֆլիսում 1820 թ.: 1842 թ. ավարտել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Սկզբնական շրջանում որպես բժիշկ աշխատել է Նուխիի գավառում, ուր մեկ տարի մնալուց հետո տեղափոխվել է Բաքու: 1849 թ. նշանակվել է նահանգական բժշկի օգնական, իսկ չորս տարի անց՝ գլխավոր բժիշկ: 1850-1852 թթ. վարել է քաղաքային բժշկի, իսկ 10 տարի շարունակ Սբ. Նունեի և քաղաքային չորսդասյան դպրոցների բժշկի պաշտոնը: 1868 թ. նշանակվել է Բաքվի նահանգային բժշկի պաշտոնում, ուր և աշխատել է մինչև իր մահը՝ 1869 թ. հոկտեմբերի 16-ը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 35, թ. 181-182, տե՛ս նաև Պատմական համառոտ տեսութիւն Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունեութեան, էջ 5-6):

Գրիգոր Լուսաւորչի» բարեգործական ընկերութիւնը[912]*: Այն հաշվետու էր Կովկասի փոխարքային և Բաքվի նահանգապետին: Հիմնադիր անդամներն էին 13 անձինք՝ Դավիթ Հարությունի Ռոստոմյանց, Ներսես Նիկիտի Կրասիլնիկյանց (շուշեցի), Ալեքսէյ (Արշակ) Արտեմի (Հարություն) Տեր-Դուկասյանց (Թիֆլիսեցի), Մովսես Զոհրաբի Զոհրաբյանց (շուշեցի), Մուսայել Դանիելի Շահգեդանյանց (շուշեցի), Գրիգոր Հայրապետի Թումայանց (շուշեցի), Սարգիս Կիրիլի Այվազյանց (բաքվեցի), Սարգիս Հովհաննեսի Տեր-Գրիգորյանց (շուշեցի), Գևորգ Պողոսի Լալայան (շամախեցի), Հակոբ Սահակի Ապրեսյանց (շուշեցի), Դավիթ Հովհաննեսի Ադամյանց (շուշեցի), Օհանջան Գրիգորի Հախումյանց (շուշեցի) և Սարգիս Հարությունի Գրիգորյանց (շուշեցի)*[913]*: Ընկերությունն ուներ 5 գլուխներից բաղկացած իր կանոնադրությունը, որը կառավարության կողմից հաստատվեց 1864 թ. մայիսի 21-ին*[914]*:*

«Մարդասիրական ընկերության» հիմնական նպատակը, ինչպես ասված է կանոնադրության առաջին գլխում, եղել է՝ «լուսավորութիւն և բարեգործութիւն տարածել Ռուսաստանի հպատակ գտնուած Հայոց մէջ, առանց դաւանգանելու նոցա կոչումը և դաւանութիւնը»[915]*: Ընկերությունն ուներ իր խորհուրդը, որը բաղկացած էր 3 տարի ժամկետով ընտրված նախագահից և 8 անդամներից: Հիմնադիր անդամներից բացի՝ ընկերությունն ունեցել է նաև պատվավոր, անփոփոխ և տարեկան անդամներ*[916]*: Ընկերության առաջին նախագահն էր Դ. Ռոստոմյանցը (1864-1869)*[917]*:*

---

[912] Տե՛ս КИОБЧО-1854-1896 гг., стр. 3-4.

[913] Տե՛ս Պատմական համառոտ տեսութիւն Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունեութեան, էջ 8:

[914] Տե՛ս Устав человеколюбиваго общества во имя св. Григория просветителя Армении, СПб., 1865, стр. 4-30:

[915] Նույն տեղում, стр. 5, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 55, թ. 46:

[916] Տե՛ս Устав человеколюбиваго общества во имя св. Григория просветителя Армении, стр. 7.

[917] Դ. Ռոստոմյանից հետո ընկերության նախագահներ են եղել Մովսես Զոհրաբյանցը (1870-1873), Պավել Շամիրի Մելիք-Բեգլարյանցը (1873-1876), Ավետ Մամիկոնյանը (1876-1879), Սամվել Բաղիրյանը (1879-1882), Գրիգոր Թումայանը (1882-1885), Քրիստափոր Անտոնյանը (1885-1889), Սարգիս Հարությունյանը (1889-1905), Կոստանդին Խատիսյանը (1905-1910), Միքայել Պապաջանյանը (1911-1913), Հայկ Տեր-Միքայելյանը (1913-1920) (տե՛ս Պատմական համառոտ տեսութիւն Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունեութեան, էջ 9, 11-12, 14, 16, 18, 20, տե՛ս նաև Отчеть о деятельности правления Бакинскаго армянскаго человеколюбивого общество за 1902 г., стр. 2, 9, տե՛ս նաև Հաշիւ 1913 թ. գործունեութեան Բագուի Հայոց Մարդասիրական ընկերու-

Ընկերության նյութական միջոցները հիմնականում գոյացել են անդամավճարներից, դրամական նվիրատվություններից, մասնավոր անձանց կողմից տրվող չարժական և անշարժ գույքերի նվիրատվություններից[918]: Ընկերության գանձարանը հարստացել է նաև հայ մեծահարուստ բարերարների թողած կտակներով[919]: Իր գործունեության ողջ ժամանակաշրջանում «Մարդասիրական ընկերությունն» ունեցել է երեք շինություն[920]:

թեան, էջ 4, տե՛ս նաև Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ. (վաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմողներ՝ Միրզոյան Ս., Ղազիյան Ա., պատ. խմբագիր՝ Վիրաբյան Ա., Երևան, 2003, էջ 435:

[918] Տե՛ս Устав человеколюбиваго общества во имя св. Григория просветителя Армении, стр. 22-23:

[919] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1889, փետրվարի 21, № 21, տե՛ս նաև «Արձագանք», Թիֆլիս, 1885, հուլիսի 21, № 3, էջ 38:

[920] Սկզբնական շրջանում ընկերությունը տեղակայված էր մասնավոր անձանց տներում, որի պատճառով արհեստական դժվարություններ էին ստեղծվում աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ընկերության խորհուրդը որոշում է կառուցել սեփական շինություն, որտեղ կտեղավորվեին գրադարան-ընթերցասրահը, սպարանը, իգական և արական դպրոցները (տե՛ս «Արարատ», 1871, Ա, էջ 336:): Որպես շինության վայր՝ ընկերության խորհուրդն ընտրում է նորակառույց Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արտաքին սրահի դատարկ շրջակայքը: Շինարարական աշխատանքները սկսում են 1871 թ. և ավարտվում 1873 թ.: Շենքը եղել է մեկ ու կես հարկանի, ուներ 13 լուսավոր և հարմարավետ սենյակներ (տե՛ս КИОБЧО-1854-1896 гг., стр. 31, տե՛ս նաև Պատմական համառոտ տեսութիւն Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունեութեան, էջ 29-30): «Մարդասիրական ընկերության» նորակառույց շենքը 1886 թ. դեկտեմբերի 20-ին հրդեհվելու պատճառով երկար չծառայեց: Նոր շինության կառուցման համար ընկերության խորհուրդը 1887 թ. մայիսի 12-ին դիմում է Բաքվի քաղաքային դումային, որի որոշմամբ հատկացվում է 821 քմ տարածք. խորհուրդը միաժամանակ գնեց Ե. Քալանթարյանին պատկանող կից տարածքը: Շինարարական աշխատանքները սկսվում են 1888 թ. հոկտեմբերի սկզբներին և ավարտվում 1890-91 թթ.: Շենքը հիմնականում կառուցվում է Բաքվի հայերի հանգանակած գումարներով: Նորակառույց եռահարկ շենքն ուներ 32 լուսավոր և հարմարավետ սենյակներ: Շենքի առաջին և երկրորդ հարկերում տեղավորվում են Սբ. Մեսրոպյան արական ծխական և Սբ. Հռիփսիմյան օրիորդաց դպրոցները (տե՛ս КИОБЧО-1854-1896 гг., стр. 3). Շինության դահլիճն իր ծախսով կառուցում է ճավքարղյունաբերող Սվետիք Ղուկասյանը (տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1914, մայիս, № 5, էջ 90): XX դարասկզբին ընկերությունը որոշում է Ստանիսլավսկայա փողոցում կառուցել նոր, ավելի հարմարավետ երկհարկ շենք: Շինության գումարը տրամադրում են ճավքարղյունաբերող Գ-երասիմ Թումայանի ժառանգները: Շենքը նախագծում են ճարտարապետներ Մ. Տեր-Գրիգորյանցը և Հ. Տեր-Օհանյանը: Շինարարական ախատանքները սկսվում են 1902 թ. հունիս ամսին և ավարտվում 1903 թ. հունիսին: Շինության ճակատին գրված էր. «Նուէր Գրիգոր Թումայեանի Բ.Հ.Մ.Ը.» (տե՛ս Отчеть о деятельности правления Бакинскаго армянскаго человеколюбивого общество за 1902 г., стр. 18, տե՛ս նաև «Մուրճ», Թիֆլիս, 1904, № 4, էջ 176).

«Մարդասիրական ընկերությունը», որն իրավունք ուներ գործել Ռուսական կայսրության հայաբնակ բոլոր վայրերում, հիմնադրման իսկ պահից լայն արձագանք է գտնում հայ հասարակության լայն խավերի շրջանում: Որպեսզի պատկերացում կազմենք «Մարդասիրական ընկերության» իրականացրած մեծամասշտաբ աշխատանքների մասին, բավական է միայն նշել, որ սկսելով իր գործունեությունը 10600 ռ. մայր գումարով, ընկերությունը 1880-ական թթ. սկզբներին արդեն ուներ ավելի քան 40000 ռ. դրամագլուխ և հնարավորություն ուներ տարեկան կատարել 7-8 հազար ռուբլու ծախս: Իսկ 1885 թ. նրա շարքերում արդեն հաշվվում էր 255 հիմնադիր և անփոփոխ անդամ, որոնց մուծած անդամավճարներից, զանազան նվիրատվություններից և հանգանակություններից կազմվում էին նրա նյութական միջոցները[921]: Այդ տարիներին ընկերությունը նպաստավորել է Բաքվի հայկական դպրոցներին, հոգացել է որդիգիրների ուսման և ապրուստի ծախսերը և այլն: Նյութական օգնություն է ցույց տվել Ղուբայի, Գանձակի, Նուխիի և Շամախիի գավառների հայկական դպրոցներին[922]: Նյութական օգնության շրջանակներից դուրս չեն մնացել նաև ռուբ կարիքի մեջ գտնվող հայաբնակ այլ վայրերի դպրոցները: Այդ նպատակով 1893-1895 թթ. ընթացքում նպաստներ են հատկացվել Ախալքալաքի դպրոցին, իսկ 1895 թ. Երևանի նահանգի դպրոցներին[923]:

1897 թ. ընկերությունը որոշում է ընդունում հայ գրողներին նյութապես աջակցելու մասին: Ընկերության աջակցությունից օգտվել են Հովհ. Թումանյանը, Ալ. Շիրվանզադեն, Վ.թ. Փափազյանը, Պերճ Պռոշյանը և ուրիշներ: Ընկերությունը գործել է ոչ միայն ի նպաստ մշակույթի զարգացման: Նրա գործունեության մեջ ոչ պակաս տեղ է գրավել նաև խնամատարությունը չքավոր ընտանիքների նկատմամբ: Ընկերությունը սատար է կանգնել որբերին և այրիներին, կերակրել է ծերերին ու անօգնականներին, բժշկական անվճար օգնություն է ցույց տվել հիվանդներին, նպաստել գործազուրկ բանվորներին ու քայքայված արհեստավորներին և այլն: Ընկերության ջանքերով, ըստ բնագավառների, գործել են բարեգործական հետևյալ հիմնարկությունները. աշխատանքի տուն, ճաշարան, գրադարան-ընթերցարան, որբանոց, մսուր, լվացքատուն և այլն[924]:

---

[921] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 21, թ. 118:
[922] Տե՛ս նույն տեղում, ֆ. 27, ց. 1, գ. 55, թ. 14:
[923] Տե՛ս КИОБЧО-1854-1896 гг., стр. 24.
[924] Տե՛ս Отчеть о деятельности правления Бакинскаго армянскаго человеколюбивого общество за 1902 г., стр. 15, տե՛ս նաև Отчеть о деятельности правления Бакинскаго армянскаго человеколюбивого общество за 1904 г., Баку,

«Մարդասիրական ընկերության» գործունեության համար անբարենպաստ պայմաններ ստեղծվեցին 1890-ական թվականների կեսերից, երբ Ռուսաստանում ծայր առած ազգային ճնշումները տարածվեցին նաև ծայրամասերում, որի հետևանքով արգելվեցին մայրենի լեզվով հրատարակությունները, հալածվեցին ազգային մշակույթի գործիչները. դրանք զուգակցվում էին նաև հայկական բարեգործական կազմակերպությունների ու եկեղեցական դպրոցների փակմամբ և բռնի ռուսացման քաղաքականությամբ: Պետերբուրգ ներկայացրած իր տեղեկագրերից մեկում Կովկասի կառավարչապետ իշխան Գ. Գոլիցինը սպրիչ գնահատականներ է տվել նաև հայոց բարեգործական կազմակերպությունների ծավալած գործունեությանը. «Հայոց բարեգործական ընկերությունները զբաղված են ավելի քաղաքականությամբ, քան թե բարեգործությամբ...»[925]: 1899 թ. հուլիսի 6-ին Ռուսաստանի նիրքին գործերի նախարար Ի. Գորեմիկինը, ընկերության նոր կանոնադրությունը հաստատելու ժամանակ, գրկում է նրան մշակութային և կրթական գործունեություն վարելու իրավունքից, և թույլ է տրվում զբաղվել բարեգործությամբ միայն Բաքվի նահանգի սահմաններում[926]: Գործունեության շրջանակները սահմանափակվելու հետևանքով փոխվում է նաև ընկերության անվանումը, որը դառնում է «Բաքվի հայոց մարդասիրական ընկերություն»[927]: Այդ իսկ պատճառով ընկերությունն իր հավաքած գումարները նվիրաբերում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանին և Շուշու հայոց հոգևոր դպրոցին: 1913 թ. մայիսի 21-ին ցարական իշխանությունը վերականգնում է ընկերության կրթամշակութային գործունեության իրավունքը: Միաժամանակ փոխվում է ընկերության անվանումը՝ նախկինի պես կոչվելով «Հայոց Մարդասիրական ընկերություն յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի»[928]:

Ընկերության բարեգործական գործունեությունը լայն ծավալ է ընդունում հատկապես Առաջին աշխարհամարտի տարիներին: Բարոյական պարտքի մեծ զգացումով ընկերությունը ձեռնամուխ է

1905, стр. 16, տե՛ս նաև Տեղեկագիր եւ հաշիւ Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան 1906 թւականի, էջ 10:

[925] Ակնարկի Է., նշվ. աշխ., հ. Ա, էջ 80:

[926] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 27:

[927] Տեղեկագիր եւ հաշիւ Բագուի Հայոց մարդասիրական ընկերութեան 1906 թւականի, էջ 4:

[928] Устав армянскаго человеколюбиваго общества во имя св. Григория Просветителя, Баку, 1913, տե՛ս նաև. Հաշիւ 1913 թ. գործունեութեան Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան, էջ 4:

լինում բյուրավոր գաղթականներին և վիրավոր զինվորներին օգնելու գործին: Այս նպատակով՝ Բիբի-Հեյբաթում, Բալախանիում և Բալախանիում ստեղծում է հայ գաղթականների օգտին հագուստեղեն և այլ իրեր հավաքող մասնախումբ[929]: 1915 թ. 100.000 ռ. դրամական օգնություն է կազմակերպում՝ ի նպաստ Երևանի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Նախիջևանի, Կարսի գաղթականներին, ուղարկում է նաև 10 վագոն տաք հագուստ, 5 վագոն ալյուր և այլ աննպամիրք, տարբեր վայրերում բացում է բուժարաններ, գործուղում բժշկական ջոկատներ, Բաքվում բացում որբանոցներ և գաղթականական դպրոցներ: Միայն Բաքվի գաղթականական դպրոցում 1915 թ. սովորում էր 400 երեխա[930]: Հավատարիմ մնալով լուսավորությունն տարածելու իր վսեմ կոչմանը՝ ընկերությունը 1914-1915 թթ. ուս. տարում կարողացավ ավելի քան 150.300ռ. չափով նպաստներ հատկացնել Շամախիի, Մեյսարիի, Քալբանդի, Ղալակայի և Գյուրջևանի դպրոցներին[931]:

«Մարդասիրական ընկերությունն» աջակցեց նաև վիրավոր զինվորներին: Այդ նպատակով՝ ընկերության խորհուրդը ձեռնամուխ է լինում Բաքվի հայ համայնքի միջոցով կազմակերպելու հիվանդանոց: Խնդիրը լուծելու համար 1914 թ. սեպտեմբերի 5-ին ընկերության խորհուրդը հրավիրում է հասարակական ժողով, որին մասնակցում էին ընկերության խորհրդի բոլոր անդամները, հայ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները և հասարակական խնդիրներով հետաքրքրվողները: Քննարկումն ավարտվում է 100 մահճակալով հայկական հիվանդանոց բացելու որոշմամբ[932]: Աշխատանքները կազմակերպելու համար ստեղծվում է 24 հոգուց բաղկացած գործադիր մարմին, որի անդամներ են ընտրվում բժ. Մ. Տեր-Մինքայելյանը, Ա. Ղուկասյանը, Մ. Պապաջանյանը, Ա. Պարոնյանը, Ստ. Թաղիաոսյանը, տիկ. Թաղիանոսյանը, Բ. Շխյանը, Տ. Բուդաղյանը, Տ. Բեկզադյանը և Ս. Ադամյանը: Հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում էր Հ. Տեր-Մինքայելյանը[933]: Նորաբաց հիվանդանոցի մի բաժանմունքի աշխատանքները ղեկավարում էր բժիշկ և

---

[929] Տե՛ս «Արեւ», Բաքու, 1914, դեկտեմբերի 19, № 212:
[930] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 88-89:
[931] Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ 1914 թ. գործունեութեան Հայոց Մարդասիրական Ընկերութեան յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի, Բագու, 1916, էջ 9:
[932] Տե՛ս նույն տեղում, էջ 16:
[933] Տե՛ս նույն տեղում:

հասարակական-քաղաքական դործիչ Արտաշես Բաբայյանը[934]: Հիվանդանոցին իր մեծ աջակցությունն է ցուցաբերում «Մարդասիրական ընկերությանն» կից ստեղծված «Հայ կանանց կոմիտեն», որն իր միջոցներով պետք է հոգար 80 մահճակալի սպիտակեղենը[935]: Հիվանդանոցի բացումը տեղի ունեցավ 1914 թ. հոկտեմբերի 26-ին, իսկ հիվանդների ընդունելությունը՝ նոյեմբերի 4-ից[936]: Հաշվի առնելով հիվանդանոցի մեծ դերակայությունը պատերազմի չրջանում՝ Բաքվի տեղական «Կարմիր խաչի ընկերությունը» այն վերցրեց իր հովանու ներքո: Հիվանդանոցի բացման առիթով, թագուհի Մարիա Ֆեոդորովնան ցարի անունից հատուկ շնորհակալադիր ուղարկեց «Բաքվի Հայոց մարդասիրական ընկերությանը» և ողջունեց վերջինիս ձեռնարկած բարեգործական քայլը[937]:

Հիվանդանոցում իրենց առաջին բուժումը ստացան Սարիղամիշի ռազմաճակատում վիրավորված հարյուրից ավել զինվորները[938]: Հետագայում, երբ Բաքվում չատացավ վիրավոր զինվորների թիվը, «Մարդասիրական ընկերությունը» նախատեսեց Հայկավանում բացել երկրորդ հիվանդանոցը[939]: 1914 թ. դրությամբ հիվանդանոցը ընդունել է 189 հոգի, դուրս են գրվել 121-ը և, մինչև 1915 թ. հունվարի 1-ը, մնացել էր 68 հոգի: Վիրավոր զինվորներից բացի՝ հիվանդանոցը 1915 թ. ընդունում է նաև գաղթական որբերին, որոնք այդտեղ մնացին մոտ 2 ամիս՝ մինչև Հայկավանի հիվանդանոցի բացվելը[940]:

«Մարդասիրական ընկերությունը» մեծապես տուժեց 1918 թ. սեպտեմբերին՝ Բաքուն թուրքական բանակի կողմից գրավելու պատճառով: Ամբողջովին կողոպտվեցին ընկերությանը պատկանող աննդի պահեստները: Այդ մռայլ օրերին անդամ ընկերությունը

---

934 Տե՛ս Գրիգորեան Վ., Արտաշէս Բաբալեանցն ու նրա հուշերի գիրքը, «Դրօշակ», Երեւան, 2001, սեպտեմբեր, № 4, էջ 155-163:

935 Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ 1914 թ. գործունեութեան Հայոց Մարդասիրական Ընկերութեան, էջ 17:

936 Տե՛ս «Արեւ», Բագու, 1914, հոկտեմբերի 26, № 167:

937 Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ 1914 թ. գործունեութեան Հայոց Մարդասիրական Ընկերութեան, էջ 17-18:

938 Տե՛ս «Արեւ», Բագու, 1914, դեկտեմբերի 19, № 212:

939 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1915, սեպտեմբերի 19, № 211:

940 Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ 1915 թ. գործունեութեան Հայոց Մարդասիրական Ընկերութեան, էջ 13:

չդադարեցրեց հայանպաստ գործունեությունը: Բաքվի Հայոց Ազգային խորհրդի հետ համատեղ, հօգուտ սովյալների և որբերի, հավաքեց 735.000 ռ. և մինչև 1920 թ. մայիսը շարունակեց կոտորածներից փրկված հայության բազմարնույթ օգնության գործը[941]:

Այսպիսով՝ անզնահատելի է այն դերը, որ ունեցել է «Մարդասիրական ընկերությունը» Բաքվի նահանգի հայերի և առհասարակ Այսրկովկասի հայության ազգային ինքնության ու ոգու պահպանման գործում: Այստեղ տեղին է հիշել այն արժանի պնդահատականը, որը տրվել է դեռևս 1889 թ. մայիսի 21-ին՝ ընկերության 25-ամյա հոբելյանի առիթով կազմակերպված հանդիսության ժամանակ[942]*, ընկերության որդեգիր Շահազիզ Կամսարականի՝ Մոսկվայից ուղարկված հեռագրում. «Եւ իրաւ, արժէր, չա՛տ արժէր. որովհետև «Մարդասիրական ընկերութիւնը», հաւատարիմ մնալով իւր նշանաբանին՝ մի՛չտ գործել, մի՛չտ աշխատել, մի՛չտ հերկել է հայրենիքի բարոյական անդաստանը՝ առաջադիմութեան, կրթութեան և լուսաւորութեան սուրբ գործի համար»*[943]:

ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ: *Բաքվում «Մարդասիրական ընկերության» ձեռնարկած բարեգործական շարժումն այնքան մեծ ծավալ և ազդեցություն է ձեռք բերում, որ նրան լծորդվեցին նաև բարեգործական այլ կազմակերպություններ: Երբ Շամախիում 1872 թ. հունվարի 16-ին տեղի ունեցած աղետալի երկրաշարժի և սովի հետևանքով Իրանից տեղահան եղած հայությունը հանգրվաններ Բաքվում, տեղի հայ հասարակությունը, մտահոգված իր հայրենակիցների հետագա ճակատագրով, հնարավոր բոլոր միջոցներով փորձեց նվազեցնել նրանց անհամար կարիքները: Այդ օրերին հատկապես աչքի ընկավ Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու ավ. քհն. Թադևոս Բուդաղյանցը, որն իր տան ունեցվածքը տրամադրել էր գաղթական հայերի*[944]*: Գաղթական հայերի օգնության գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու նպատակով Թադևոս ավ. քհն. Բուդաղյանցը, «Մարդասիրական ընկերության» անդամ գնդ. Հովհաննես Լազարյանի խոր-*

---

[941] Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 436:

[942] Տե՛ս Նկարագութիւն հանդիսի Բագուայ հայոց մարդասիրական ընկերութեան քսան եւ հինգ ամեայ յոբելեանի, աշխատասիրեց ատենադպիր ընկերութեան Գալստեանց Ա., Մոսկուա, 1891, էջ 6:

[943] Սոխակ Հայաստանի, Ազգային լիակատար երգարան, հ. Ա, էջ 302:

[944] Տե՛ս Պատմութիւն Բագուայ հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձութեան (1872 թ. ապրիլի 1-ից մինչև 1893 թ. ապրիլի 1-ը), էջ 4:

հրդով, որոշում է ստեղծել աղքատախնամ բարեգործական ընկերություն. «...դրանց համար ես շատ եմ մտածել. այս կերպ փող հաւաքելով դուք չէք կարող դրանց կշտացնել. ես մի հանապարհ ցոյց տամ ձեզ, այնպէս արէք. աշխատեցէք հիմնել մի ընկերութիւն և հոգաբարձուներ ընտրեցէք ձեր միջի լաւ գործող անձներից. թող նրանք կազմեն մի ժապաւէնեալ մատեան և քաղաքիս բնիկ թէ եկեւոր հայերից տուրք ժողովեն ու բաժանեն աղքատներին...»[945]: Աղքատախնամ բարեգործական ընկերություն ստեղծելու գաղափարը պաշտպանում է նաև «Մարդասիրական ընկերության» նախագահ Մովսես Զոհրաբյանցը, որի տանը, 1872 թ. ապրիլի 1-ին[946], Բաքվի հայ ազդեցիկ մարդկանցից հրավիրված խորհրդակցությունում որոշվում է ստեղծել «Բաքվի հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձություն»[947]: Հոգաբարձության կանոնադրությունը բաղկացած էր 5 կետից, որի 1-ին կետում ասվում էր. «Բագու քաղաքում կարգւում է նորահաստատ ընկերութիւն՝ աղքատաց և տնանկաց ապրուստը հոգալու. նրանցից ցաւագարներին ու հիւանդներին բժշկութեան հնարները գործ դնելու և մեռելոց թաղման կարգը կատարելու համար»[948]: Կազմվում է հոգաբարձություն, որի անդամներն էին Թադևոս ավ. քհն. Բուդաղյանցը, Գր. Այվազյանցը, Գր. Դիլդարյանցը, Անդրեաս Մելիքյանցը, Բաղդասար Սարգսյանցը, իսկ գործավար և հաշվապահ՝ Սարգիս Վարշամյանցը[949]: «Աղքատախնամ եկեղեցական հոգաբարձության» նախագահն էր Թադևոս ավ. քհն. Բուդաղյանցը[950]: Հոգաբարձության նյութական միջոցները գոյանում էին դրամական նվիրատվություններից, մասնավոր անձանց կողմից տրվող նվիրատվություններից և հայ մեծահարուստների թողած կտակներով: Իրենց հոգածությունն են մշտապես ցուցաբերել նաև Դ. Ռոստոմյանցը, Գ. Թումայանը, Գր. Ասլանյանը և այլք:

Հոգաբարձության առաջին գործը՝ աշխատունակ գաղթականներին աշխատանքի տեղավորելն էր: Այդ նպատակով հոգաբարձությունը դիմում է «Կովկաս և Մերկուրի» չոգենավային ընկերությանը՝ խնդրելով աշխատանքի վերցնել 70 իրանահայ գաղթա-

---

945 Տե՛ս նույն տեղում:
946 Տե՛ս Տէր-Յարութիւնեանց Ա., նշվ. աշխ., էջ 9:
947 Պատմութիւն Բագուայ հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձութեան (1872 թ. ապրիլի 1-ից մինչև 1893 թ. ապրիլի 1-ը), էջ 5, տե՛ս նաև «Մշակ», Թիֆլիս, 1880, փետրվարի 21, № 27, տե՛ս նաև КИОБЧО-1854-1896 гг., стр. 28.
948 Նույն տեղում:
949 Տե՛ս նույն տեղում:
950 Տե՛ս «Հայկական աշխարհ», Բագու, 1878, № 10-11-12, էջ 298:

կանանց: Ընկերության ներկայացուցիչ Լև Դևրուբինը, հարկնով վերջինիս խնդրանքը, գաղթականներին տեղավորում է աշխատանքի[951]: Բաքվում հանգրվանած իրանահայ և չամախահայ գաղթականների օգնության գործից բացի՝ «Ազգապահնամ եկեղեցական հոգաբարձություն» շարունակից աշխատանք տանել նաև չքավորների շրջանում: Թադևոս ավ. քհն. Բուդաղյանցի մահվանից հետո, 1884 թ. հունվարին, Խորեն ավ. քհն. Միրզարեկյանցին են ընտրում հոգաբարձության նոր նախագահ: Հոգաբարձուներ էին ընտրվել Սամվել Բադիրյանը, Գրիգոր Ալանյանցը, Թովմաս Ամիրյանցը, Սերգեյ Կրասիլնիկյանցը և Թոմաս Ամիրյանցը[952]: «Ազգապահնամ եկեղեցական հոգաբարձությունը» 1887 թ. ապրիլի 7-ին որոշում է իր ծախսով և Բաքվի հայ հասարակության հանգանակած դրամներով անօթևաններին և չքավորներին համար կառուցել նաև «Եկեղեցական աղքատանոցի» շենքը, որի աշխատանքների ավարտը 1888 թ. հոկտեմբերին, Բաքվում պտնվելու ժամանակ[953], հանդիսավոր կերպով օրհնեց Մակար Ա Թեղուտեցի կաթողիկոսը: «Եկեղեցական աղքատանոցի» շենքը կառուցված էր կամարակապ և արբատաշ քարից և ուներ 25 մեծ ու փոքր սենյակներ[954]: «Ազգապահնամ եկեղեցական հոգաբարձության» կանոնադրությունը հաստատվում է 1890 թ. ապրիլի 6-ին՝ Մակար Ա Թեղուտեցի կաթողիկոսի կոնդակով[955]: Սակայն այս կանոնադրությունը ևս երկար չի գործում. ներքին գործոց նախարարի մրջնորդությամբ պահանջվում է այն ենթարկել որոշ փոփոխությունների:

«Եկեղեցական աղքատանոցի» հետագա գործունեությունը կապվում է Շամախու հայոց թեմի առաջնորդ, բազմարդյուն և երախտաշատ հոգևորական Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի անվան հետ: Նրա նախաձեռնությամբ 1893 թ. ապրիլի 24-ին հրավիրված ժողովում 3 տարի ժամկետով ընտրվում է նոր հոգաբարձություն (անդամներ՝ Միք. Զալյանց, Արսեն Կրասիլնիկյանց, Աստվածատուր Կաճկաճյանց և Համբարձում Մելիքյանց): Թեմակալի կողմից հոգաբարձության նոր նախագահ է նշանակվում Եղիշե ավ. քհն. Գեղամ-

---

[951] Տե՛ս Պատմութիւն Բագուայ հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձութեան (1872 թ. ապրիլի 1-ից մինչև 1893 թ. ապրիլի 1-ը), էջ 6-7:
[952] Տե՛ս նույն տեղում, էջ 16:
[953] Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 381-382:
[954] Տե՛ս Պատմութիւն Բագուայ հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձութեան (1872 թ. ապրիլի 1-ից մինչև 1893 թ. ապրիլի 1-ը), էջ 40:
[955] Տե՛ս նույն տեղում, էջ 22:

յանցը[956]: Միտրոպ արքեպ. Սմբատյանցը, հոգաբարձության աշխատանքները կանոնավորելու նպատակով, հոգաբարձուների խորհրդի հետ համատեղ մշակում և 1894 թ. փետրվարի 28-ին էջմիածնի Սինոդին ու ներքին գործոց նախարարի հաստատմանն է ներկայացնում 12 հոդվածից բաղկացած նոր կանոնադրությունը, որում մասնավորապես ասված է. «Բագու քաղաքի աղքատ հայերին խնամելու համար հաստատւում է առ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն Բագուայ եկեղեցական Միաբան Հոգաբարձութիւն աղքատաց»[957]: Նոր կանոնադրության համաձայն՝ «Եկեղեցական աղքատախնամ հոգաբարձությունը» պիտք է դնկավարվեր 8 հոգուց բաղկացած հոգաբարձուների խորհրդի կողմից, որի անդամներից 3-ին նշանակում էր թեմական առաջնորդը, իսկ մյուսներին ընտրում էին ծխականները, որոնց դարձյալ հաստատում էր թեմակալը (հոդված 3): Հոգաբարձուներն իրենց միջից ընտրում էին նախագահ, իսկ ընդհանուր աշխատանքների դեկավարումը տնօրինում էր թեմի առաջնորդը[958]: «Եկեղեցական աղքատանոցն» իր աշխատանքները կազմակերպելու էր Բաքվի հայ բնակիչների, «Մարդասիրական ընկերության», բարեգործական այլ ընկերությունների և կամավոր գանազան նվիրատվությունների հաշվին: «Եկեղեցական աղքատախնամ հոգաբարձության» հաշվետուցյակներում ասվում է, որ հոգաբարձությանը նյութական օժանդակություն են ցուցաբերել ինչպես Բաքվի բնիկ, այնպես էլ Բաքվում հաստատված չամախեցի, չուշեցի, նուխեցի, թիֆլիսեցի, ագուլիսցի, դերբենդցի, լենքորանցի, թավրիզեցի, ղզլարեցի, գանձակեցի, զանգեզուրցի և այլ վայրերի հայերը[959]:

Կարճ ժամանակ անց, «Եկեղեցական աղքատախնամ հոգաբարձությունը» Բաքու քաղաքում բացեց որբանոց և անկալանոց, որի երկհարկանի շենքը կառուցեց նավթարդյունաբերող, «Այունիք» ընկերության վարչության նախագահ Դավիթ Ավան-Յուզբաշյանը: «Եկեղեցական աղքատանոցի» տրամադրած միջոցներով (19632ռ. 87կ.) և նավթարդյունաբերող Լյուդվիգ Սերգեյանի տրամադրած 10000ռ. դրամով կառուցվեց մեկուկես հարկանի շենք, որի քնակա-

---

[956] Տե՛ս նույն տեղում, էջ 25-26:
[957] Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 383:
[958] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, մաս 7, գ. 8616, թ. 2, տե՛ս նաև Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 383-389:
[959] Տե՛ս Պատմութիւն Բագուայ հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձութեան (1872 թ. ապրիլի 1-ից մինչև 1893 թ. ապրիլի 1-ը), էջ 55-65:

բաններում անվճար կամ մատչելի վճարով բնակվելու չքավոր ընտանիքները[960]:

«Եկեղեցական աղքատախնամ հոգաբարձություն» իր գործունեության ընթացքում կազմակերպել է հետևյալ բարեգործությունները. 1872 թ. ապրիլի 1-ից մինչև 1893 թ. ապրիլի 1-ը ընկած ժամանակահատվածում աղքատ հիվանդներին վճարել է հիվանդանոցային բուժումների համար, հոգացել է աղքատ ննջեցյալների թաղումների ծախսերը, գրենական պիտույքներ և հագուստներ է ձեռք բերել չքավոր աշակերտների համար, նյութապես աջակցել է չունևոր աղջիկների պսակադրություններին, հոգացել է Մոսկվայում ուսանող բաքվահայ չքավոր ուսանողների ճանապարհածախսերը, նյութական աջակցություն է ցուցաբերել՝ որը երեխաներին հագուստով ապահովելու գործում և այլն[961]: Ընդհանուր առմամբ, 21 տարվա ընթացքում, 1872 թ. ապրիլի 1-ից մինչև 1893 թ. ապրիլի 1-ը ընկած ժամանակահատվածում, «Եկեղեցական աղքատախնամ հոգաբարձության» գրամարկղ մուտք է արվել 31381 ռ. 91 կ., որից 31705 ռ. 8 կ. ծախսվել է չքավորների բարեգործության կարիքները հոգալու համար[962]:

«Եկեղեցական աղքատախնամ հոգաբարձություն» 1894 թ. վերջերից նախագահում է Շամախիից Բաքու՝ հոգևոր ծառայության եկած Արգար ավ. քհն. Տեր-Հարությունյանցը (օգնականն էր Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երեցփոխան Ս. Ունանյանը[963]): «Եկեղեցական աղքատախնամ հոգաբարձությունն» իր արդյունավետ գործունեությունը շարունակեց նաև XX դարի սկզբներին՝ պարբերաբար նպաստներ տրամադրելով աղքատ խավին, Ն. Առաքելյանի տրամադրած միջոցներով «Մարդասիրական ընկերության» գրադարանի շենքի տեղում կառուցեց եկեղեցական նոր չինություն, իսկ Գուբերնսկայա և Ցերկովնայա փողոցների անկյունում կառուցեց գրադարան-ընթերցարանի նոր շենքը[964]:

ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ: Բաքվի հայ հասարակական կյանքում զգալի դերակատարություն է ունեցել հասարակական-քաղաքական մեծ գործիչ, Կոստանտին Ալեքսյանի ջանքերով

---

[960] Տե՛ս նույն տեղում, էջ 40, տե՛ս նաև КИОБЧО-1854-1896 гг., стр. 28.
[961] Տե՛ս Պատմութիւն Բագուայ հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձութեան (1872 թ. ապրիլի 1-ից մինչև 1893 թ. ապրիլի 1-ը), էջ 42-52:
[962] Տե՛ս նույն տեղում, էջ 53-54, տե՛ս նաև КИОБЧО-1854-1896 гг., стр. 28.
[963] Տե՛ս Տէր-Յարութիւնեանց Ա., նշվ. աշխ., էջ 12:
[964] Տե՛ս նույն տեղում:

1906 թ. սկզբներին հիմնադրված «Բաքվի հայոց կուլտուրական միությունը»[965]: Կ. Խատիսյանը, որ իր հախուռն գործելակերպի պատճառով հեռացել էր ՀՅ Դաշնակցությունից, ամբողջապես նվիրվել էր հասարակական-մշակութային գործունեությանը: Ժամանակակիցների վկայությամբ՝ նա «խոշոր, չնչված անհատականություն և մոլեռանդ հայրենասեր» էր[966]: Բաքվի նահանգապետ գեն. Ցադևևի կողմից 1906 թ. հունիսի 23-ին հաստատված «Կուլտուրական միության» կանոնադրությունում ասված է, որ այն նպատակ է հետապնդում ընդարձակել հանրակրթական և մասնագիտական դպրոցների ցանցը, նպաստել ինքնուրույն և թարգմանական գրականության հրատարակմանը, հայոց լեզվի, բեմական գործի, երաժշտության, կերպարվեստի և ճարտարապետության զարգացմանը, բարենորոգել գյուղական հողային հարցերը, օժանդակել կալվածատերերի և գյուղացիների հողային առևտրին, միջնորդել գյուղացիների համար գյուղատնտեսական գործիքներ և հացահատիկ ձեռք բերելուն, ամայի դաշտերը ոռոգելուն և այլն[967]: «Բագու քաղաքի հայ անհատներից կազմուած մի չրջան, իրեն գլուխ ունենալով պ. Կոստանտին Խատիսեանին, միտք յղացաւ կազմակերպելու Բագուում մի այնպիսի ընկերութիւն, որ բացառապէս խաղաղ և օրինական միջոցներ գործ դնելով կարողանար զարկ տալ Բագու քաղաքի և Բագուայ ամբողջ նահանգի հայ ժողովրդի կուլտուրական յառաջադիմութեան և բարւոքել նրա տնտեսական վիճակը»[968],- ասված է «Միության» 1906 թ. դեկտեմբերի 1-ին կայացած ընդհանուր ժողովում:

«Կուլտուրական միությունը» գործում է ավելի նպատակաուղղված: Կանոնադրության համաձայն՝ միությունը բաժանված էր մասնաճյուղերի. դրանք էին՝ ա) հողային (գործել է 1906 թ. հունիսի 1-ից, նախագահ՝ Կ. Խատիսյան), բ) բժշկական (գործել է 1906 թ. հոկտեմբերի 8-ից, նախագահ՝ բժ. Հ. Մամիկոնյանց), գ) կրթական(գործել է 1906 թ. հոկտեմբերի 15-ից, նախագահ՝ Գ. Կոստանյանց), դ) թատերական (գործել է 1906 թ. հոկտեմբերի 1-ից, նախագահ՝ Ե. Բեկնազար-Յուզբաշյան), ե) հրատարակչական (գործել է 1906 թ. հոկտեմբերի 22-ից, նախագահ՝ Գ. Ենգիբարյան), զ) գեղար-

---

[965] Կանոնադրութիւն Բագուայ հայոց կուլտուրական միութեան, Բագու, 1906, էջ 3:
[966] Միրզոյան Ս., նշվ. աշխ., էջ 105:
[967] Տե՛ս Կանոնադրութիւն Բագուայ հայոց կուլտուրական միութեան, էջ 3-13:
[968] Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ Բագուայ Հայոց կուլտուրական միութեան 1906-1907 տարեշրջանի գործունեութեան, № 1, Բագու, 1907, էջ 18:

վեստական (գործել է 1906 թ. նոյեմբերից, նախագահ՝ Փ. Աղալյանց)[969]: Յուրաքանչյուր մասնաճյուղ ուներ իր դեկավար մարմինը՝ բյուրոն՝ բաղկացած 7 անդամից[970]: «Կուլտուրական միությունն» ուներ իր գլխավոր խորհուրդը, որի նախագահն էր Կ. Խատիսյանը: Խորհրդին կից գործում էր նաև 11 հոգուց բաղկացած գլխավոր տնտեսական հանձնաժողովը (նախագահ՝ Զավեն վարդապետ)[971]: Հիմնադրման առաջին տարում՝ 1906-1907 թթ., «Կուլտուրական միությունն» ուներ 311 անդամ[972]: 1908 թ. հոկտեմբերի 12-ից հրատարակվում է միության «Զանգ» պաշտոնաթերթը (խմբագիր-հրատարակիչ՝ Կ. Խատիսյան)[973]:

Հիմնադրումից ի վեր, «Կուլտուրական միությունն» իր հայանպաստ գործունեությունը ծավալից ոչ միայն Բաքվի նահանգի սահմաններում, այլև դրանից դուրս: Այն իր մասնաճյուղերն ուներ Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում[974]: «Կուլտուրական միությունը» պարբերաբար կազմակերպում էր համերգներ, ներկայացումներ, ստեղծում երգչախմբեր, թատերախմբեր, նպաստում Բաքվում և նրա սահմաններից դուրս հայկական կրթամշակութային գործունեությանը: Հայաստանի տարբեր շրջաններում բացում էր դպրոցներ, դրանց կից՝ արհեստանոցներ, աշակերտներին տրամադրում նպաստներ և այլն: Նպատակ ունենալով բարելավել հայ գյուղացու տնտեսական վիճակը՝ հողային մասնախումբը հայկական գավառներում կազմակերպում է վարկային ընկերություններ, այլուր և հացահատիկ հատկացնում կարիքավոր գյուղերին[975]: Մինչև 1908 թ. սեպտեմբերը մասնախմբի կողմից կազմակերպվում են 40 վարկային ընկերություններ՝ Ղազախի, Գանձակի, Շուշիի, Գյոքչայի, Շամախիի, Ալեքսանդրապոլի, Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Շարուր-Դարալագյազի և Նոր-Բայազետի գավառների գյուղերում[976]: Կ. Խատիսյանի մահից հետո (1913 թ. հոկտեմբերի 26)[977] «Կուլտուրական

---

[969] Տե՛ս նույն տեղում, էջ 67, 77, 78, 91, 104, 108:
[970] Տե՛ս Կանոնադրութիւն Բագուայ հայոց կուլտուրական միութեան, էջ 7:
[971] Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ Բագուայ Հայոց կուլտուրական միութեան 1906-1907 տարեշրջանի գործունեութեան, № 1, էջ 23:
[972] Տե՛ս նույն տեղում, էջ 3-17:
[973] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 115.
[974] Տե՛ս «Վտակ», Թիֆլիս, 1908, ապրիլի 23, № 84, տե՛ս նաև «Կռանւ», Երեւան, 1912, մարտի 18, № 19:
[975] Տե՛ս Համառօտ հաշիւ Բագւի նպաստամատոյց խառն յանձնաժողովի, Բագու, 1908, էջ 27:
[976] Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ Բագուայ Հայոց կուլտուրական միութեան 1907 թ. 7 ամսեայ եւ 1908 թ. գործունէութեան, № 2, էջ 62-63:
[977] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1913, հոկտեմբերի 26, № 241:

միության» նախագահի պաշտոնը ստանձնեց նավթարդյունաբերող և հասարակական գործիչ Նիկողայոս Ալիբեգյանը[978]:

Առաջին աշխարհամարտի տարիներին «Կուլտուրական միությունը» կրկնապատկեց իր գործունեությունը: Փորձելով ուժերի նեբածին չափով նեցուկ լինել պատերազմ մեկնած ընտանիքներին՝ միության գլխավոր նպաստամատույց կոմիտեն այդ նպատակով հրավիրում է բաքվաբնակ արցախցիների, զանգեզուրցիների ընդհանուր ժողով՝ խորհրդակցելու և գավառներում նվիրատվություններ կազմակերպելու ու նպաստներ բաշխելու համար[979]: Պատերազմ մեկնողների ընտանիքներին տեղերում օգնություն կազմակերպելու նպատակով Նիկ. Ալիբեկյանի նախագահությամբ ստեղծվում է նաև «Պատերազմ կոչվածների ընտանիքներին օգնություն հասցնող հանձնաժողովը» (անդամներ՝ Նիկ. Ղարագյոզյան, Անդ. Ծատուրյան, Ա. Տեր-Ստեփանյան և Գր. Տեր-Ստեփանյան, բժիշկներ Թադ. Զաքարյան և Մինք. Մանդինյան)[980]: «Կուլտուրական միությունը» կազմակերպեց նաև հանգանակություններ պատերազմ մեկնած ընտանիքների օգտին նվիրատվություններ կազմակերպելու համար[981]: Հաշվի առնելով, որ օրեցօր մեծ թիվ են կազմում Բաքու բերվող վիրավորները, «Կուլտուրական միությունն» իր նորակառույց շենքը տրամադրեց «Կարմիր խաչի» հիվանդանոցին[982]: Այսպիսով՝ «Կուլտուրական միությունն» իր ծավալած կրթամշակութային և բարեգործական գործունեությամբ նկատելի լրացնելու «Բաքվի հայոց մարդասիրական ընկերությանը»: Այս կազմակերպությունը դրական մեծ տեղաշարժեր առաջ բերեց ինչպես Բաքվի նահանգի, այնպես էլ նրա սահմաններից դուրս ապրող հայության սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքում: Իրավամբ ճիշտ գնահատական է տվել «Կուլտուրական միության» գործունեությանը «Կռան» թերթի խմբագիր Մուշեղ Բագրատունին՝ գրելով. «Միակ մխիթարական երևույթ, մի ընկերություն, որ իրօք կեանքի և հասարակական ամենաէական պահանջի համար ներկայանում է որպէս իսկական արտայայտիչ, միակ գործնական հիմնաքարը: Դա Բագւի Հ. Կուլտուրական Միութիւնն է»[983]: «Կուլտուրական միության» գործունեությունը դադարեցվում է թուրքերի կողմից Բաքվի գրավումից հետո:

ԲԱՔՎԻ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: Հիմնել են հայ ավետարանականներ Հարություն Մելքումյանը, եղբորորդիներ Ալեքսանդր,

---

[978] Տե՛ս «Բագուի ձայն», Բագու, 1913, նոյեմբերի 12, № 141:
[979] Տե՛ս «Արեւ», Բագու, 1914, օգոստոսի 9, № 103:
[980] Նույն տեղում, 1914, օգոստոսի 13, № 106:
[981] Տե՛ս նույն տեղում, 1914, օգոստոսի 9, № 103:
[982] Տե՛ս նույն տեղում, 1914, օգոստոսի 26, № 116:
[983] «Կռան», Երեւան, 1912, մարտի 11, № 11:

Անդրեաս և Պատվական Թառայանցները՝ 1908 թ. մայիսի 19-ին[984]*: Ինչպես ասվում է ընկերության 1914 թ. վերահաստատված կանոնադրության առաջին կետում՝ «Բագուայ որբախնամ ընկերութեան նպատակն է խնամել և կրթութեան տալ երկսեռ որբ և չքաւոր երեխաներին, մինչև 18 տարեկան հասակը՝ առանց ազգի և կրօնի խտրութեան»*[985]*: Ընկերությունն ունեցել է 7 հոգուց բաղկացած վարչություն, նախագահ, գանձապահ և քարտուղար: Առաջին ընդհանուր ժողովը Անդրեաս Թառայանցին ընտրում է նախագահ*[986]*: Ընկերության գործունեության շրջանակներն ընդգրկում էր Բաքվի նահանգն ու ողջ Կովկասը: Ընկերության միջոցները գոյանում էին անդամավճարներից, մասնավոր և հասարակական ընկերությունների կամավոր զանազան նվիրատվությունների միջոցների հաշվին: Որբ և չքավոր երեխաների ծանր դրությունը թեթևացնելու համար ընկերությունը հիմնում է որբանոցներ: Իր սաներին տալիս է ապրուստ, գրենական պիտույքներ և հագուստ: Որբանոցում նրանց սովորեցնում է գրագիտություն, տարրական գիտելիքներ, արհեստներ, տնայագործություն, գյուղատնտեսական գործնական գիտելիքներ և ընդհանրապես հանրօգուտ գործեր: Հոգս է տանում սաների ֆիզիկական և բարոյական կրթության մասին և այլն*[987]*:*

1891 թ. փետրվարի 5-ին Բալախանիում իր մասնաճյուղն է հիմնում նաև «Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը»[988]*: Մասնաճյուղն ունեցել է 168 անդամ. նախագահն էր Մուշեղ Մամիկոնյանը: Սակայն, կարճ ժամանակ անց, Կովկասի կառավարչապետ իշխան Գ. Գոլիցինի կարգադրությամբ, ԿՀԲԸ Բաքվի մասնաճյուղի գործունեությունը դադարեցվում է:*

Բաքվում գործած հայ բարեգործական ընկերությունների պատկերն ամբողջական դարձնելու նպատակով նշենք, որ գործել է նաև «Հայ ուսուցչական միությունը», հայ երեխաների մոտ արտադպրոցական կրթությունը զարգացնելու նպատակով՝ նաև «Ժողովրդական տուն» ընկերությունը (հիմնվել է 1916 թ. դեկտեմբերի

---

[984] Տե՛ս «Բարի լուր», Բագու, 1908, Գ տարի, հունիսի 1, № 11, էջ 170-171, տե՛ս նաև Կանոնադրութիւն Բագուայ որբախնամ ընկերութեան, Բագու, 1914, էջ 1, 8, տե՛ս նաև Ղազարյան Ա., Ռընե Ներսես Լևոնյան, Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Երևան, 1999, էջ 133:

[985] Կանոնադրութիւն Բագուայ որբախնամ ընկերութեան, էջ 1-4:

[986] Տե՛ս նույն տեղում, էջ 5-6:

[987] Տե՛ս նույն տեղում, էջ 2-3:

[988] Տե՛ս Լէօ, Երեսնամեայ Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), Թիֆլիս, 1911, էջ 208:

20-ին)[989]: Բաքվի կրթալուսավորական ընկերությունների չարքը 1910 թ. մարտի 20-ին համալրում է նաև «Բաքվի գեղարվեստական բեմ» ընկերությունը: Ըստ կանոնադրության՝ ընկերությունը պետք է կազմակերպեր գեղարվեստական և ժողովրդական ներկայացումներ, հիմներ դպրասանական դպրոցներ, մրցանակներ չնորհեր թատերական ընտիր գրվածքների համար, հրատարակեր բեմական գրվածքներ, թատրոնին նվիրված թերթեր և այլն[990]:

Բարեգործական և գեղարվեստական ընկերություններից զատ, Բաքվի հայերի նախաձեռնությամբ հիմնվում է նաև պատմահնագիտական հուշարձանների պահպանության ընկերություն: Քաղաքային Դումայի իրավասու և քաղաքը բարեկարգող հանձնաժողովի նախագահ Ալ. Սերկերբյակյանցը 1914 թ. փետրվարի կեսերին այդ նպատակով հիմնում է «Բաքվի հնագիտական ընկերությունը», որը պետք է ուսումնասիրեր և պահպաներ քաղաքի պատմահնագիտական նյութերը[991]: Արևմտահայ մի խումբ երիտասարդների կողմից 1902 թ. գործում է նաև «Գիննհատական ընկերություն», որը երիտասարդության շրջանում քարոզչական աշխատանք է տանում գիննմոլության դեմ: Այդ նպատակով տպագրում է համապատասխան գրքույկներ: Ընկերությունն ուներ չուրջ 300 անդամ[992]: Բաքվում գործում էր նաև «Կովկասահայ բժիշկների միության մասնաճյուղը»[993]:

ԲԱՔՎԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ: Բաքվի հայերի հասարակական կյանքի ամենակենսունակ ոլորտներից էր՝ Առաջին աշխարհամարտի տարիներին գաղթականական գործի կազմակերպումը, որում ներգրավված էին հասարակության բոլոր շրջանակները: Բարեգործական կազմակերպությունները Բաքվի հայերի մեծագույն աջակցությամբ հսկայական ջանքեր գործադրեցին արհավիրքի ենթարկված արևմտահայության գոյությունը պահպանելու ազգանվեր գործում: Բաքվում գործող Թիֆլիսի Ազգային կենտրոնական բյուրոյի Բաքվի մասնաճյուղը 1914 թ. նոյեմբերի նիստերից մեկում որոշում է Բյուրոյին կից ստեղծել «Գաղթականական կոմիտե»: Նրա անդամները պետք է լինեին «Մարդասիրական ընկերությունից», «Հայոց կուլտուրական միությունից», «Հայ ուսուցչական միությու-

---

[989] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1916, դեկտեմբերի 23, № 286:
[990] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1910, մարտի 26, № 67:
[991] Տե՛ս «Գործ», Բագու, 1914, փետրվարի 28, № 3:
[992] Տե՛ս Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 394:
[993] Տե՛ս նույն տեղում:

նից» և նկնեցու կողմից ընտրված մեկական հոգի: Նորաստեղծ կոմիտեի անդամներ ընտրվեցին Հ. Տեր-Մինքայելյանը (նախագահ), Կ. Պարունակյանը (քարտուղար), Ս. Ադամյանը, Եր. Թաղիանոսյանը, բժ. Թ. Զաքարյանը, Ալ. Պարոնյանը, Պ. Մովիանյանը և, ավելի ուշ, Գ. Պապյանը[994]:

Կոմիտեի առաջին շրջանի գործունեությունն ընդգրկում է 1914 թ. դեկտեմբերից մինչև 1915 թ. օգոստոսը: Սկզբնական շրջանում, երբ փախստականների ալիքը դեռևս չէր հասել Բաքու, կոմիտեն իր գործունեությունը կենտրոնացրեց գաղթականների առաջին հանգրվանած վայրերում: Այդ նպատակով, կոմիտեի հանձնարարությամբ, Եր. Թաղիանոսյանը և Գ. Պապյանը շրջագայում են Երևանի, Հին-Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի, Կարսի, Ջուլֆայի, Սարիղամիշի և Ալեքսանդրապոլի շրջաններում, գաղթականական գործի կազմակերպման հարցում աջակցում տեղական կոմիտեներին, ցուցակագրում գաղթականներին, ուսումնասիրում նրանց վիճակը և բաժանում նպաստներ[995]: Բացի 100.000ռ. դրամական օգնությունից՝ կոմիտեն այդ վայրերում սպասատանածներին տվեց նաև նյութական օգնություն՝ ուղարկելով 10 վագոն ալյուր, 1 վագոն շաքար, թեյ, օճառ և 5 վագոն տաք հագուստեղեն: Գաղթականների բժշկասանիտարական օգնության գործը կայուն հիմքերի վրա դնելու նպատակով, «Կուլտուրական միության» բժշկական խմբակի աջակցությամբ, Հին-Նախիջևանի գավառ է ուղարկում բժ. Ավետիսյանին՝ դեղորայքով հանդերձ: 1914 թ. դեկտեմբերի 10-ին կոմիտեի նախագահ Հ. Տեր-Մինքայելյանը Բաքվի քաղաքագլխից ստանում է վկայական, որը նրան արտոնում էր՝ հօգուտ հայ գաղթականների քաղաքում կատարել հանգանակություն՝ դրամով և իրերով[996]:

1915 թ. մարտի 1-ին, երբ Գաղթականական կոմիտեների գործունեությունը համակարգելու նպատակով էջմիածնում հրավիրվում է գաղթականական համագումար, «Բաքվի գաղթականական կոմիտեից» լիազորվում են մասնակցելու Եր. Թաղիանոսյանը և Պ. Մովիանյանը[997]: Համագումարից հետո «Բաքվի գաղթականական կոմիտեի» կողմից էջմիածնի գլխավոր կարգադրիչ հանձնաժողովի տրամադրության տակ է դրվում Գ. Պապյանը: Կարգադրիչ հանձ-

---

[994] Տե՛ս Դրամական հաշիւ Բագուի հայ գաղթականական կոմիտէի 1915 թ. օգոստոսից մինչև 1917 թ. յունուարի 1-ը, Բագու, 1917, էջ 38:
[995] Տե՛ս նույն տեղում, էջ 32-33:
[996] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 33, 91:
[997] Տե՛ս Դրամական հաշիւ Բագուի հայ գաղթականական կոմիտէի 1915 թ. օգոստոսից մինչև 1917 թ. յունուարի 1-ը, էջ 34:

նաժողովի որոշմամբ Գ. Պապյանն ուղարկվում է Մանազկերտի շրջան գաղթականների օգնության գործը կազմակերպելու համար: Գաղթականների բազմապիսի կարիքները հոգալու համար կոմիտեն 1914 թ. դեկտեմբերի 20-22-ը կազմակերպում է հանգանակություն և ստացված արդյունքը (գուլպա, ծխախոտ, ալյուր, շաքար, թեյ, վերմակներ և այլն) 1915 թ. հունվարի 2-ին ուղարկում գաղթականական տարբեր վայրեր՝ Երևան, Ալեքսանդրապոլ, Հին-Նախիջևան և այլուր[998]:

«Բաքվի գաղթականական կոմիտեի» գործունեության երկրորդ շրջանը սկսվում է 1915 թ. օգոստոսի 2-ից, երբ գաղթականների մի նոր մեծ հոսանք սկսվեց Կովկաս: Արևմտահայ գաղթականությունը, Կովկասի հայաշատ շրջաններից բացի, ապաստան գտավ նաև Բաքվում: Գաղթականների օգնության գործին առաջինը ձեռնամուխ եղավ «Բաքվի հայ գաղթականական կոմիտեն»: Գաղթականական գործը կայուն հիմքերի վրա դնելու նպատակով օգոստոսի 2-ին գումարվում է ծխական ժողով: Կոմիտեի կազմը ուժեղացնելու նպատակով ժողովը կոմիտեի անդամների թիվը 18-ից հասցվեց 50-ի: Կոմիտեի կազմն էր՝ Հ. Տեր-Միքայելյան (նախագահ), Տ. Բեկզադյան (փոխնախագահ), Ա. Սերեբրակյան (փոխնախագահ), Խ. Մելիք-Ազամիրյան (գանձապահ), Գ. Պապյան (քարտուղար)[999]: Կոմիտեի կազմից ընտրվեցին տնտեսական և որբախնամ հանձնաժողովներ, բժշկական և ուսուցչական միությունները և աշխատանքի բյուրո: Կոմիտեի առաջին գործը քաղաքում և արվարձաններում (Բալախանի, Բիբի-Հեյբաթ, «Սև» և «Սպիտակ» քաղաքամասեր, Բինաղադ, Հայկավան) թաղական ժողովների կազմակերպումն էր (ամբողջ շրջանը նախապես բաժանվել էր 16 թաղամասերի): Ընտրվեցին թաղական հանգանակիչ մարմիններ: Նրանց հիմնական պարտականությունն էր իրենց հերթակա թաղամասում ամիսը մեկ անգամ հավաքել անդամավճար[1000]: Գաղթականների պարենային գործը կազմակերպում էր բարեկարգիչ մանաժողովը, որն այդ նպատակով Հայկավանում հիմնել էր ճաշարան (կառավարիչ վանեցի Վարդան Մոկացյան)[1001]:

Գաղթականական կոմիտեն առանձնակի ուշադրություն էր դարձնում որբերի օգնության գործի կազմակերպմանը. այդ նպատակով ստեղծել էր որբախնամ մասնաժողով: Որբանոցը տնօրինում

---

[998] Տե՛ս նույն տեղում, էջ 35:
[999] Տե՛ս Ստեփանեան Յ., Հայ փախստականները Բագուում, (II), «Գործ», Բագու, 1917, մարտ, № 3, էջ 145:
[1000] Տե՛ս Դրամական հաշիւ Բագուի հայ գաղթականական կոմիտէի 1915թ. օգոստոսից մինչև 1917թ. յունուարի 1-ը, էջ 39:
[1001] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 92:

էր «Տիկնանց հանձնաժողովը», իսկ ծախսերը հոգում էր գաղթականական կոմիտեն[1002]: Հիվանդ գաղթականների բուժման գործը կազմակերպելու նպատակով 1915 թ. հոկտեմբերի 1-ին կոմիտեն բացեց գաղթականական հիվանդանոց, որի վերահսկիչն էր բժ. Արսեն Խաչատրյանը[1003]: Գաղթականական կոմիտեն աշխատանք որոնող գաղթականներին օգնելու նպատակով ստեղծում է նաև «Աշխատանքի բյուրո», որը մինչև 1915 թ. աշխատանքի տեղավորեց մոտ 500 հոգու[1004]: Այսպիսով՝ անգնահատելի է «Բաքվի հայ գաղթականական կոմիտեի» գործունեությունը Առաջին աշխարհամարտի տարիներին: Կոմիտեն Բաքվի հայերի մեծ աջակցությամբ հսկայական ջանքեր գործադրեց հայ ժողովրդի արհավիրքի ենթարկված մի զանգվածին ընդունելու, ամոքելու և նրա գոյությունը պահպանելու ազգանվեր գործում:

Բաքվում հանգրվանած հայ որբերի օգնության գործը կանոնակարգելու նպատակով, «Հայ ուսուցչական միության» նախաձեռնությամբ, 1915 թ. սեպտեմբերի 13-ին հիմնվում է «Երեխաների աշխարհ» ընկերությունը[1005], որը հրատարակում է «Նվեր որբերին» միօրյա թերթը[1006]:

Բաքվի հասարակական կյանքում առանձնակի դեր ունեցան նաև հայ կանանց և օրիորդների կողմից ստեղծված ընկերությունները: Հասարակական գործերում Բաքվի հայ կանանց գործունեությունը նկատելիորեն ավելի կազմակերպված բնույթ ձեռք բերեց հատկապես XIX դ. 80-ական թվականների կեսերին, երբ, Թիֆլիսի հայուհյաց բարեգործական ընկերության օրինակով, մի խումբ կանայք և օրիորդներ (Եվգենյա Ղուկասյան, Սոֆյա Ադամյան, Թագուհի Թումանյան, Աննման Մադաթյան, Շուշանիկ Լալայան) «Մարդասիրական ընկերության» դահլիճում 1887 թ. մայիսի 16-ին հրավիրված ընդհանուր ժողովում որոշեցին ստեղծել բարեգործական ընկերություն և այդ նպատակով կազմեցին կանոնադրություն[1007]: Սակայն այդ նախաձեռնությունը այլևայլ հանգամանք-

---

[1002] Տե՛ս «Արեւ», Բագու, 1916, հունիսի 21, № 135:
[1003] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 251, թ. 10, տե՛ս նաև ֆ. 223, ց. 1, գ. 30, թ. 7:
[1004] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 215, թ. 93, տե՛ս նաև Ստեփանեան Յ., Հայ փախստականները Բագուում, (II), «Գործ», Բագու, 1917, մարտ, № 3, էջ 144:
[1005] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1915, սեպտեմբերի 19, № 211:
[1006] Տե՛ս նույն տեղում, դեկտեմբերի 20, № 286:
[1007] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1887, հոկտեմբերի 4, № 37, տե՛ս նաև մայիսի 4, № 2, տե՛ս նաև Հարությունյան Ա., Երևելի տիկնանց դարը. Հայ կանանց

նների բնույթով հետաքրքրում է մինչև 1892 թ.: Նույն տարվա սեպտեմբերին, Ա. Մադաթյանի և Ս. Ադամյանի ջանքերով, «Մարդասիրական բնկերության» 14000 ռ. դրամական հովանավորությամբ սկսում է գործել «Բաքվի հայ կանանց բարեգործական բնկերությունը» (վարչության նախագահ՝ Ա. Մադաթյան)[1008]: 1880-ական թվականների կեսերին Բաքվում սկսեց գործել նաև հայ ավետարանական կանանց «Ճշմարտասիրաց բնկերությունը»[1009]:

Բաքվի հայ կանանց կողմից հիմնվում էին նաև հայրենակցական բարեգործական միություններ: Օրինակ՝ Զանգեզուրի գավառի խնձորեսկցի կանայք հայրենի գյուղում օրիորդաց դպրոց բացելու նպատակով 1917 թ. ապրիլի սկզբներին հիմնել էին «Ֆոնդ» անվամբ կրթական միությունը[1010]:

Բաքվի բարեգործ հայուհիները սատար կանգնեցին 1894-1896 թթ. արևմտահայերի կոտորածներից մազապուրծ, Բաքվում հանգրվանած վանեցի գաղթականներին: Այդ նպատակով «Եկեղեցական ազգասահմանամ հոգաբարձության» կողմից ստեղծված հանձնաժողովում ընդգրկվում են Եղիսաբեթ Սարգսյանը, Աննման Մադաթյանը, Եղիսաբեթ Կրասիլնիկյանը, Սոֆյա և Հեղինե Ադամյանցները, Մարիամ Մելիքյանցը, Նիկոտարինե Թումանյանցը, Թամար և Մարգարիտա Կաճկաճյանցները, Սաթենիկ Արտեմյանցը, Շուշանիկ Տեր-Մարգարյանցը և Նատալյա Պատվականյանը[1011]: Արգար ավ. քհն. Տեր-Հարությունյանցը այսպես է բնութագրել վերջիններիս ազգանվեր գործունեությանը. «Մայր էին նրանք այդ մաշուած անբաղդների համար մայր՝ բառիս իսկական նշանակությամբ: Քոյրեր էին-արտակից քրոջ սրտի բոլոր գորովով, խանդով ու եռանդով»[1012]: Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցին (Խրիմյան Հայրիկ), 1898 թ. փետրվարի 5-13-ը Բաքվում եղած ժամանակ, իր առանձնահատուկ չնորհակալությունն է հայտնում Բաքվի հայ բարեգործ կանանց՝ վանեցի գաղթականներին բազմաբնույթ օգնություն ցուցաբերելու համար: Օրհնելով նրանց, իր խոսքում Մկրտիչ Խրիմյանն ասում է. «...ասոնք գթութեան քոյրերու դեր կը կատարեն՝ ապա գարձաւ տի-

---

հասարակական գործունեությունը XIX դարում և XX դարասկզբին, Երևան, 2005, էջ 115:

[1008] Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1892, ապրիլի 19, № 14, էջ 265:

[1009] Տե՛ս Թառայեանց Ս., Հայ-բողոքական համայնքը, «Մուրճ», Թիֆլիս, 1893, № 2, էջ 308:

[1010] Տե՛ս «Արեւ», Բագու, 1917, ապրիլի 20, № 78:

[1011] Տե՛ս Տէր-Յարութիւնեանց Ա., նշվ. աշխ., էջ 15, 20:

[1012] Տե՛ս նույն տեղում, էջ 16-17:

կիններին, օրհնեա յ րլյաք, այն ատեն երբ տխրութիւնը դիս կը հնշէ, ձէր այսպիսի օգնութիւն տեսնելով կը մխիթարուիմ. հա, շատ կը մխիթարուիմ»[1013]: Կանանց գործունեությունը հասարակական կյանքում պաշտպանելու նպատակով, մի խումբ հայուհիների նախաձեռնությամբ, Բաքվում գործում է նաև «Կանանց պաշտպան ընկերություն» (հիմնվել է 1902 թ.)[1014]:

Բաքվի հայուհիներն անմասն չմնացին նաև Առաջին աշխարհամարտի տարիներին հայ զինվորներին աջակցելու գործում: Այդ նպատակով 1914 թ. սեպտեմբերի 6-ին կայացած հասարակական ժողովում նրանք որոշում են՝ «Մարդասիրական ընկերության» կից հիմնել «Հայ կանանց կոմիտե» (նախագահ՝ Եղիսաբեթ Բեկնազարյան-Յուզբաշյան): Կոմիտեի նպատակն էր՝ վիրավոր և հիվանդ զինվորներին և պատերազմի հետևանքով տուժածներին տարաբնույթ օգնություն հասցնելը[1015]: 1914 թ. դրությամբ կոմիտեն ուներ 70 անդամ: Կոմիտեի միջոցները ստեղծվում էին կամավոր նվիրատվություններից, գրական երեկոներից և թատերական ներկայացումներից ստացված արդյունքներով[1016]: Կարճ ժամանակ անց, կոմիտեն հիվանդանոցի համար կարեց 7400 կտոր սպիտակեղեն, ապա սկսեց բանակի համար պատրաստել տաք շորեր: Պատրաստվեց 800 ձեռք շոր[1017]: Ընդհանուր առմամբ՝ կոմիտեն գործող բանակին և կամավորներին ուղարկեց 6479 կտոր տաք հագուստներ[1018]: Կոմիտեն անուշադիր չթողեց նաև հայ կամավորներին: Հօգուտ նրանց կազմակերպվեցին հատուկ բարեգործական երեկոներ: Կոմիտեն նրանց համար զանազան հագուստներ պատրաստեց և ուղարկեց գործող բանակ: Ջրօրհնեքի տոնի առթիվ բանակ ուղարկվեց 3800 կապոց քաղցրավենիք և ծխախոտ: Կոմիտեի հիմնական խնդիրն էր՝ գաղթականության վիճակի բարելավման գործը, որն իրագործելու համար կազմակերպում էր տարաբնույթ օգնություն[1019]:

[1013] Տե՛ս Տէր-Յարութիւնեանց Ա., նշվ. աշխ., էջ 21:
[1014] Տե՛ս Թոփչեան Ե., Լոյս պատկերազարդ օրացոյց հանդէս 1905 թ., էջ 514, տե՛ս նաև Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 284:
[1015] Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ 1914 թ. գործունեութեան Հայոց Մարդասիրական Ընկերութեան, էջ 19:
[1016] Տե՛ս նույն տեղում, էջ 20:
[1017] Տե՛ս նույն տեղում, էջ 19:
[1018] Տե՛ս նույն տեղում, էջ 20:
[1019] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1915, սեպտեմբերի 19, № 211, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 288, ց. 1, գ. 4, թ. 9:

Բաքվի հայ կանանց և օրիորդների հասարակական եռանդը չէր սպառվում սոսկ կանանց կազմակերպություններում: Շատ կանայք ընդգրկված էին նաև այլ կազմակերպություններում: Օրինակ՝ խոշոր նավթարդյունաբերող Պողոս Սարգսյանի կինը՝ Եղիսաբեթ Սարգսյանը, և Աննման Մադաթյանը «Բաքվի Հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձություն»-ից բացի, ընդգրկված էին նաև «Մարդասիրական ընկերության» կազմում և իրենց ծավալած բարեգործությամբ առաջնակարգ դիրք էին գրավում Բաքվի հայ տիկնանց շրջանում[1020]: Շատերն էլ հասարակության մեջ կշիռ էին ձեռք բերում իրենց անհատական ձեռնարկումներով: Օրինակ՝ Եղիսաբեթ Կաճկաճյանցն՝ ի հիշատակ իր ամուսնու՝ Մկրտիչ Կաճկաճյանցի, 1879 թ. սրբատաշ քարերով հիմնավորապես նորոգում է Դերբենդից 27 կմ հարավ, Մոլլա-Խալիլ[1021] գյուղի մոտ, Վատնեան դաշտի արևմտյան ծայրում ժորակի ափին կառուցված Սբ. Գրիգորիս մատուռը[1022]: Իսկ բաքվաբնակ չամախեցի Հովհաննես Քալանթարյանցի կնոջ՝ տիկին Աննայի բարերարությամբ 1879 թ. նորոգվում է Մեյաարի գյուղում հիմնավեր վիճակում գտնվող Սբ. Նշան մատուռը[1023]:

Բաքվի հայ հասարակական կյանքում XIX դարի կեսին իրենց դերակատարությունն ունեին նաև հայրենակցական և երիտասարդական միությունները, որոնք հետապնդում էին մեկ նպատակ՝ նյութական օգնություն ցույց տալ գյուղերում բնակվող իրենց հայրենակիցներին: Նմանօրինակ միություններ էին ստեղծել գյոքչայինները, չամախեցիները, նուխեցիները, արևշցիները, արցախցիները, գանգեղուրցիները[1024], ագուլիսցիները, վասպուրականցինե-

---

[1020] Տե՛ս Սալումեան Ա., նշվ. աշխ., էջ 61:

[1021] Ըստ դերբենդցի ուսուցիչ Հ. Մարաղյանցի՝ Մոլլա-Խալիլը ժամանակին եղել է զուտ հայաբնակ գյուղ: Ավանդության համաձայն՝ այն նախապես հայտնի էր Սրբի գյուղ (Փիրի-քեանդ) անունով (տե՛ս Մարաղեանց Յ., Սուրբ Գրիգորիս Աղուանից կաթողիկոսի մատուռը, «Նոր-դար», Թիֆլիս, 1891, հունվարի 3, № 1, տե՛ս նաև հունվարի 12, № 5):

[1022] Տե՛ս Քարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 106:

[1023] Տե՛ս Քաջբերունի Գ., Բազմամիլիոն ժառանգութիւն, ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 439, թ. 37: Հմմ. Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 50-51:

[1024] Բաքվում հաստատված գանգեղուրցիներից տարբեր տարիներին հայրենակցական միություններ էին ստեղծել գրեթե բոլոր գյուղերի ներկայացուցիչները. սիսիանցիները (նախագահ՝ Հովհ. Աղոնց), լորեցիները, գետաբաղցիները, ոյծեցիները, ախլաթյանցիները, շաղատեցիները, խնձորեսկցիները, Վերին-Խոտանանցիները և այլն (տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1901, հունիսի 22, № 134, տե՛ս նաև

րը, մշեցիներր, սասունցիները և այլք[1025]*: «Վերջին տարիներս,- գրում է «Անի» շաբաթաթերթը,- Բագուում բնակվող պիւղացիական երիտասարդութեան մէջ մի նոր գործունէութեան ասպարէզ է բացւել: Գիւղից դուրս, աշխատաւոր գիւղացիութեան շրջանակից հեռու կազմակերպում են «միութիւններ» և նպատակ դնում օգնել գիւղացիներին՝ բարձրացնելու նրանց նիւթական և մտաւոր-բարոյական մակարդակը»*[1026]*:*

Բարեգործական և հայրենակցական ընկերութիւններից բացի՝ Բաքվի հայերի հասարակական կեանքում ակտիվ դերակատարութիւն ունէին նաև աշակերտական միութիւնները: Աշակերտները ուշադիր հետևում էին հասարակական կեանքի անցուդարձին՝ կազմելով զանազան խմբավորումներ ու ընկերութիւններ: 1903 թ. հունիսին Բաքվում տեղի է ունենում Կովկասի հայ աշակերտական առաջին համագումարը, որը ստեղծում է Կովկասի հայ աշակերտական բյուրո (անդամներ՝ Ստեփան Նազարյան, Արմենուհի Երևանդյան)[1027]*: Միութիւնն ուներ «Հուշ» անվամբ պաշտոնաթերթ (լույս է տեսել 1904 թ. ՀՅԴ գաղտնի տպարանում)*[1028]*: 1903 թ. հունիսից Բաքվում գործում էր «Հավատ» անվամբ աշակերտական միութիւնը*[1029]*: Բաքվի հայ աշակերտութեան դեկավարներից էր պետական ուսումնարանում սովորող, ՀՅԴ գաղափարակից Համբարձում Մելիքյանը (Մելիք)*[1030]*: 1917 թ. գործում է նաև «Կյանք» անվամբ աշակերտական միութիւնը, որը հրատարակում էր համանուն շաբաթաթերթը*[1031]*: Սակայն, 1918 թ. Բաքվի դեմ թուրքական արշավանքի հետևանքով խափանվեցին այդ կարևոր հաստատութիւնների հետագա արդյունավետ գործունեութիւնը:*

* * *

Թեև Բաքու քաղաքը ժողովուրդների մի խառնարան էր, որի հետևանքով մշակութային փոխազդեցութիւններն անխուսափելիորեն խաչաձևվում էին, այդուհանդերձ, չէր խաթարվում հայ մշա-

---

«Մշակ», Թիֆլիս, 1908, ապրիլի 25, № 88, տե՛ս նաև «Արեւ», Բագու, 1917, հուլիսի 7, № 139, տե՛ս նաև «Արեւ», Բագու, 1917, հուլիսի 30, № 157):

[1025] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 106, p. 14, տե՛ս նաև ֆ. 245, ց. 1, գ. 7, p. 3:

[1026] Տե՛ս «Անի», Բաքու, 1908, ապրիլի 6, № 6, էջ 15:

[1027] Տե՛ս Աստուածատրեան Ա., Վահան Մինախորեան, «Հայրենիք», Պօսթըն, 1945, ԻԴ տարի, հունիս-օգոստոս, № 4, էջ 90:

[1028] Տե՛ս նույն տեղում:

[1029] Տե՛ս «Արշալոյս», Բագու, 1905, նոյեմբեր, № 2, էջ 7:

[1030] Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Յեղափոխական դէմքեր, «Հայրենիք», Պօսթըն, 1937, ԺԵ տարի, հունվար, № 3, էջ 145:

[1031] Տե՛ս Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմեց՝ Բաբլոյան Մ., Երևան, 1986, էջ 110:

կուլթի ազգային դիմքը: Հատկապես կարևորվում է ուսումնական հաստատությունների հիմնումը, գրական կյանքի, տպագրական գործի կազմակերպումն ու պարբերական մամուլի հրատարակումը, ինչպես նաև թատերական ու երաժշտական կյանքի կազմակերպումը: Այս առումով իրենց մեծ դերակատարություն ու առաքելություն են ունեցել բարեգործական կազմակերպությունները՝ «Մարդասիրական ընկերությունը» և «Կուլտուրական միությունը», որոնք էլ հիմնականում գլխավորել են մշակութային կյանքը:

XIX դարի երկրորդ կեսին Բաքվի հայության հասարակական կյանքում զարգացման շրջան թևակոխեցին արվեստի տարբեր ճյուղեր. հատկապես դգալի տեղաշարժ կատարվեց թատրոնի բնագավառում, որը, ինչպես Այսրկովկասի հայաշատ մյուս վայրերում, Բաքվում ևս համարվում էր հայ հասարակական կյանքի կենսունակության և ազգային դաստիարակության հիմնական միջոցներից մեկը: Թիֆլիսի օրինակով Բաքվում, տեղի եկեղեցիների դործակալ Գրիգոր սվ. քհն. Գրիգորյանցի և մի խումբ թատերասեր գործիչների նախաձեռնությամբ, հավաքահարկով բազմաթիվ դժվարություններ, ռեալական դպրոցի սանները Գևորգ Ամիրխանյանի դեկավարությամբ հիմնում են թատերական խումբ: «Մարդասիրական ընկերության» խորհրդի անդամներ Հ. Ապրեսյանի, Գր. Թումայանի, Առ. Մատուրյանցի և Ս. Վարշամյանի հովանավորությամբ ու նախաձեռնությամբ, 1870 թ. փետրվարի 28-ին, նավթարդյունաբերող Ներսես Կրասիլնիկյանցի կասպից ծովի ափին գտնվող նորաշեն տանը դերասանական խումբը բեմադրում է թատերախմբի անդրանիկ ներկայացումը[1032]: Հանդիսատեսի դատին են հանձնվում Գաբրիել Սունդուկյանի «Գիշերվան սարը խեր է» և Ն. Փուղինյանի «Դալալ Ղազո» կատակերգությունները. դրանցով սկիզբ է դրվում Բաքվի հայ թատրոնի տարեգրությանը[1033]: Թատրոնի առաջին ռեժիսորն էր Պետրոս Ասլանյանը, որի թատերախմբում ընդգրկված էին դերասաններ՝ սվ. քհն. Գրիգորյանցը, Ալեքսանդր Քալանթարյանը, Գրիգոր Յարուղլյանը, Նիկողայոս Շահնազարյանը, Վասիլ Ավշարյանը, Գրիգոր Մարդուլյանը, Ղևոնդ Տեր-Օհանյանը և Սարգիս Մալաֆյանը[1034]: Բաքվի թատրոնի խաղացանկում իրենց հիմնական տեղն են ունեցել նշանավոր դրամատուրգ Գ. Սունդուկյանի պիեսները: Հա-

---

[1032] Տե՛ս Սոխակ Հայաստանի, Ազգային լիակատար երգարան, հ. Ա, էջ 119:
[1033] Տե՛ս Գրիգոր ավագ քահանա Գրիգորեանց, Թատրոնի սկզբնավորությունը Բաքվում, «Հուշարար», Թիֆլիս, 1908, № 9, էջ 123:
[1034] Տե՛ս նույն տեղում, էջ 124:

սարակական կյանքի տեղաշարժերի արդյունքում, հայկական թատերական բեմադրանկից զատ, միաժամանակ թարգմանվում և բեմականացվում էին ժամանակի եվրոպական և դասական հեղինակների պիեսներն ու դրամաները:

1880-ական թթ. սկզբներից, Բաքվի հայ թատրոնի բեմում իր առաջին քայլերը կատարեց նաև ռեալական դպրոցի Դ դասարանի աշակերտ, հայ բեմի ապագա անխոնջ գործիչ ու փայլուն դերասան Հովհաննես Աբելյանը, երբ դպրոցի մի խումբ թատերասեր աշակերտների (Արշ. Յազուբյան, Արշ. Տեր-Գասպարյան, Անուշավան Քալանթարյան, Հ. Մայիլյան, Յ. Կուբրյան, Հ. Խանդամիրյան, Ա. Այվազյան, Գր. Ավետյան) նախաձեռնությամբ ստեղծվեց թատերական սիրողական խումբ[1035]: Բեմահարթակում հետզհետե սիրական դարձած Հովհ. Աբելյանը աստիճանաբար հասավ ստեղծագործական բարձունքների՝ իր հետևից տանելով տաղանդավոր շատ դերասաններ, որոնք նրա հետ միասին հետագայում դարձան բաքվահայ ազգային թատրոնի լավագույն դարբնոցներն ու նրա բարձրարժեք արվեստի հիմնական կրողները:

Բաքվում դերասանական մշտական խումբ ունենալու նպատակով մի խումբ թատերասերների նախաձեռնությամբ 1881 թ. մարտին ստեղծվում է 12 հոգուց բաղկացած «Մասնաժողով»[1036]: Թատերական կյանքը կանոնավորելու նպատակով 1884 թ. դեկտեմբերի 2-ին «Մարդասիրական ընկերության» դահլիճում հրավիրված ժողովում, Թիֆլիսի օրինակով, Բաքվի թատերասերները հիմնում են հայկական «Թատերական կոմիտեն»[1037]: Տասնչորս հոգուց բաղկացած կոմիտեի կազմում ընդգրկվել էին Բաքվի հայ հասարակական կյանքի նշանավոր գործիչներից Ա. Վարչամյանը, Հ. Տեր-Մարկոսյանը, Ստ. Շատուրյանցը, Գր. Անտոնյանը, Գ. Թումանյանը, Բ. Թավաքալյանը, Ս. Բալիրյանը, Գր. Դիլդարյանը և ուրիշներ[1038]: Բաքվի հայ թատերասերները սկզբնական շրջանում չունեին իրենց մշտական օջախը՝ թատրոնի շենքը, և ներկայացումները հիմնականում կազմակերպում էին հասարակական ընկերությունների կամ վարձած

[1035] «Թատրոն եւ երաժշտութիւն», Բագու, 1910-1912, № 11, էջ 131, տե՛ս նաև Մարդանեան Ֆ., Յովհաննէս Աբելեան (կենսագրական տեղեկութիւններ), Թիֆլիս, 1907, տե՛ս նաև Մելիքսեթյան Ս., Հովհաննես Աբելյան, Երևան, 1954:

[1036] Տե՛ս Ամիրեանց Ս., Նամակ Բագուից, «Պսակ», Երևան, 1881, ապրիլի 30, № 16:

[1037] Տե՛ս Այցելու, Բագու, [Տեր-Մելիքսեդեկյան Սարիբեգ], «Նոր-դար», Թիֆլիս, 1884, դեկտեմբերի 21, № 209:

[1038] Տե՛ս նույն տեղում:

դահլիճներում: Բաքվի հայ թատերախմբերն իրենց ներկայացումներ բեմադրում էին նաև ցորենի նախկին չուխմարանի՝ նավթարդյունաբերող Թաղիևի կողմից վերակառուցված շենքում (Թաղիևի թատրոն): Այդ շենքը Բաքվում կատարում էր այն դերը, ինչ Արտիստականը՝ Թիֆլիսում: Բաքվի հայ թատերախմբերի հանգրվանն էր նաև Նիկիտին նղրայրների ընդարձակ կրկես-թատրոնի շենքը, Վասիլև Վյատսկու կրկես թատրոնը, Բինկենդորֆի ակումբը[1039], քաղաքային հյուրանոցի դահլիճը[1040], որոնք նույնպես վերցնում էին վարձով: Բաքվի հայ թատերասերների մշտական շենք ունենալու խնդրով մտահոգ մեծահարուստ ձկնարդյունաբերող Եղիա Ղազարի Մայիլյանը 1911 թ. իր ծախսով, Տորգովայա փողոցի վրա, հայազգի ճարտարապետ Ն. Բաևի նախագծով կառուցում է «Մայիլյանների թատրոնի»[1041] 2110 հանդիսատեսի համար նախատեսված շենքը[1042]:

Այդ տարիներին հատկապես լայն տարածում էր ստանում թատերական շրջագայությունների կազմակերպումը: Թատերաշրջանն ավարտելուց հետո Բաքվի և Թիֆլիսի թատերախմբերը փոխադարձ հյուրախաղերով ներկայացնում էին իրենց խաղացանկը: 1885 թ. մարտի վերջերին Բաքու այցելեց Գ. Սունդուկյանը, որին Բաքվի հայ թատերասեր հասարակությունը ընդունեց մեծ խանդավառությամբ: Բաքվի թատերախումբը ապրիլի 1-ին, Գ. Սունդուկյանի ներկայությամբ, «Մարդասիրական ընկերության» դահլիճում բեմականացնում է մեծ դրամատուրգի «Պեպո» պիեսը՝ Գ. Զմշկյանի և Մ. Ավալյանի մասնակցությամբ[1043]: Բաքվում 1885 թ. նոյեմբերի 12-30-ին Ա. Գոնչարովի ռուսական թատերախմբի հետ հյուրախաղերով հանդես է գալիս հայ բեմի մեծ վարպետ, հանճարեղ դերասան Պետրոս Ադամյանը[1044]: Բաքվի հասարակությունն այնքան էր խանդավառվում Պ. Ադամյանի այցով, որ նրա պատվին կազմակերպված բենեֆիսի ժամանակ թատրոնի մուտքը զարդարում են դրոշակներով, լուսավորում ջահերով: Թվով 5000 օրինակ, զարդարուն և դույնդուկ, փոքրիկ թերթիկների վրա գրված «Կեցցե՛ Ադամյանը»

[1039] Տե՛ս «Նոր-դար», Թիֆլիս, 1893, դեկտեմբերի 21, № 227, տե՛ս նաև «Մշակ», Թիֆլիս, 1899, ապրիլի 9, № 66, տե՛ս նաև Հախվերդյան Է., Հայ թատրոնի պատմություն (1901-1920), Երևան, 1980, էջ 20:

[1040] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1882, դեկտեմբերի 14, № 232:

[1041] Այժմ՝ Մ. Ախունդովի անվան օպերայի և բալետի թատրոն:

[1042] Տե՛ս Տիգրանյան Է., Հայ ճարտարապետների գործունեությունը Անդրկովկասում (XIX դարի վերջ-XX դարի սկիզբ), Երևան, 2000, էջ 211-212:

[1043] Տե՛ս «Սեղու Հայաստանի», Թիֆլիս, 1884, ապրիլի 11, № 48:

[1044] Տե՛ս «Նոր-դար», Թիֆլիս, 1885, դեկտեմբերի 4, № 206:

անձրևի պես տեղում էր թատերատրահում նատած հանդիսականների վրա[1045]:

1890-ական թվականների վերջերին Բաքվի հայ թատրոնն արդեն գտնվում էր վերնքի շրջանում: Միաժամանակ, հայ հանդիսատեսը ռուսական ներկայացումների մշտական հաճախորդն էր: Թատերական կյանքի աշխուժացմանն էր նպաստում էր նաև այն հանգամանքը, որ թատրոնը գտնվում էր Բաքվի հայ բարերարների մշտական հոգածության ներքո: «Բագուի հայ հասարակութիւնը, ինչպէս երևում է, վճռել է առ միշտ ամօթի և դատապարտութեան ենթարկել Թիֆլիսի հայ հասարակութիւնը: Մի խումբ թատրոնասէրներ ժողովել են անհրաժեշտ դրամագլուխ, որով մտադիր են երեք տարի շարունակ ապահովել հայ բեմի գործը Բագվում»[1046]*,- գրում էր «Տարազը»: Բաքվում հայ թատրոնի ստեղծվող աշխուժությունը ստեղճանաքար հասարակական մեծ արձագանք է գտնում: Թիֆլիսի դրամատիկական ընկերության հետ ունեցած սերտ համագործակցության արդյունքում 1892 թ. թատերաշրջանի ավարտից հետո, Հովհ. Աբելյանի նախաձեռնությամբ, մարտի սկզբներին Բաքու հյուրախաղերի են հրավիրվում Սիրանույշը (Մերոպե Գանթարճյան) և նրա խաղընկեր Գևորգ Պետրոսյանը*[1047]:

Բաքվի հայ թատրոնը մշտական և գործուն դարձնելու մտադրությամբ 1893 թ. նոյեմբերի 3-ին կազմակերպվում է «Հայոց դերասանական ընկերության խումբը», որի կազմում ընդգրկվում են հայ բեմի վարպետներ Հարություն Ալեքսանյանը, Ստեփանոս և Ալմա Սաֆրազյանները, պոլսահայ կատակերգու Արամ Վրույրը (Մաքսուչյան)[1048]*, Միքայել Մանվելյանը, Անդրանիկը, Ա. Հասան-Ջալալյանը, պոլսահայ դերասանուհիներ Վարդիթեր և Մարի-Հրանուշ Ծելեկյան քույրերը, Փառանձեմ Սաղաթելյանը, Գրիգոր Ավետյանը և Գ. Նաջարյանը*[1049]*: Բաքվի հայ թատերասերները, մասհոգ թատերական գործունեության հետագա ճակատագրով, 1897 թ. սկզբներին հրավիրում են խորհրդակցություն, ուր որոշվում է ստեղծել «Բաքվի թատրոնական խմբի վարչություն» և տեղում պահել հայ դերասա-*

[1045] Տե՛ս Պետրոս Ադամյան, Նամակներ, կազմեց և ծանոթագրեց՝ Գ. Խ. Ստեփանյան, Երևան, 1959, էջ 129:

[1046] Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1898, մարտի 8, № 10, էջ 243-244:

[1047] Տե՛ս Մելիքսեթյան Ս., նշվ. աշխ., էջ 51:

[1048] Պետերբուրգի հնախոսական ընկերության անդամ Արամ Վրույրը որպես հնագետ-լուսանկարիչ Նիկողայոս Մառի գլխավորությամբ 1886 թ-ից մասնակցել է Անի քաղաքի պեղումներին (տե՛ս Ա. Վրույր, Անիում, Երևան, 1964, էջ 13):

[1049] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1893, նոյեմբերի 9, № 5:

նական մշտական խումբ, որը պետք է սպասարկեր ոչ միայն քաղաքի կենտրոնական մասերում ապրող հայերին, այլև արվարձաններն ու մոտակա գավառները[1050]: Հանդիսանական նյութական միջոցներով պահվող դերասանական խմբում որպես մշտական անդամներ են հրավիրվում հայ թատրոնի դերասանական լավագույն ուժերը՝ տաղանդաշատ դերասաններ Սիրանույշը, պոլսահայ կատակերգու Դ. Թրյանը, Պ. Արաքսյանը, Արամ Վրույրը, Հովհ. Զարիֆյանը, Աննա Խիթարյանը, Գ. Ավետյանը, Արտաշես Սուքիասյանը, Սաթենիկ Ադամյանը, Գևորգ Պետրոսյանը և ուրիշներ[1051]: Ստեղծագործական կազմում ընդգրկված էին նաև Օլգա Մայսուրյանը, Վոլոդյա Մելիք-Հովսեփյանն ու Իսահակ Ալիխանյանը[1052]: Թատրոնի ռեժիսորներն էին՝ դերասանուհի Ագնիվ Հրաչյան, Հովհ. Աբելյանը, Ս. Ախումյանը և Գ. Պետրոսյանը[1053]: Այդ շրջանում էր, որ Բաքվի հայ թատրոնում ամբողջ ուժով սկսեց փայլատակել Սիրանույշի տաղանդը, որը թեև 1901 թ. տեղափոխվում է Թիֆլիս, սակայն շարունակում է կապ պահպանել այդ քաղաքի հետ և հաճախ ներկայացումներ տալ այնտեղ[1054]: 1902 թ. «Մարդասիրական ընկերությունը» Թիֆլիսից թատրոնի ռեժիսոր է հրավիրում տաղանդաշատ դերասան Արմեն Արմենյանին[1055]: Սակայն, Բաքվում 1905 թ. փետրվարին սկսված հայ-թաթարական ընդհարումների պատճառով, խմբի մի շարք անդամներ՝ Սիրանույշը, Գ. Պետրոսյանը, Գ. Ավետյանն ու Ա. Ստեփանյանը թատերաշրջանի ընթացքում մեկնեցին Թիֆլիս[1056]:

Թատերական շարժման արդյունքում, առևտրաարդյունաբերող Գ. Միրզաբեկյանի նախաձեռնությամբ, 1901 թ. ապրիլից՝ Ծխախոտի գործարանին կից սկսում է գործել նաև ժողովրդական թատրոնը[1057]:

[1050] Տե՛ս Մելիքսեթյան Ս., նշվ. աշխ., էջ 75, 78:
[1051] Տե՛ս նույն տեղում:
[1052] Տե՛ս Հայրապետյան Ա., Իսահակ Ալիխանյան: Մամուլի և հուշագրերի գնահատությամբ, Երևան, 1958, էջ 8-9:
[1053] Տե՛ս Ագնիվ Հրաչյա, նշվ. աշխ., էջ 165, տե՛ս նաև Հովհաննիսյան Հ., Հայ թատրոնի պատմություն, XIX դ., Երևան, 1996, էջ 472, տե՛ս նաև **Ованкмян Б.**, 120 летие Армянского театрального общества, Ереван, 1984, стр. 46.
[1054] Տե՛ս Զարյան Ռ., նշվ. աշխ., էջ 64, 69, 80:
[1055] Տե՛ս Արմենյան Ա., 60 տարի հայ բեմի վրա, Երևան, 1954, էջ 76, տե՛ս նաև Բագուայ հայ դերասանական խումբը, «Թատրոն», № 1, 5-րդ տարի, գիրք Թ, Թիֆլիս, 1903, էջ 127:
[1056] Տե՛ս Մելիքսեթյան Ս., նշվ. աշխ., էջ 104:
[1057] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1901, ապրիլի 13, № 78:

Բաքվի հայ թատրոնի գործունեությունն առավել աշխուժանում է «Հայոց կուլտուրական միության» հիմնումից հետո, որը միությունն իր կազմում ստեղծում է նաև թատրոնական մասնաճյուղը (նախագահ՝ Եղիսաբեթ Բևկնազար-Յուզբաշյան)[1058]: Թատերական գործը կայուն հիմքերի վրա դնելու նպատակով մասնաճյուղը հրավիրում է Բաքվի թատերասերների ընդհանուր ժողով, ուր և ստեղծվում է մի նոր թատերախումբ: Ներկայացումների համար իբրև ռեժիսոր հրավիրվում է մեծահռչակ դերասան Ագնիվ Հրաչյան[1059]: Ներկայացումներն սկսելու մտադրությունն մասնաճյուղն ստանում է Բաքվի Քաղաքային Դումայից և «Սև քաղաքի» «ժողովրդական տուն» կոմիտեից: Նորաստեղծ թատերախումբն իր գործունեությունն սկսեց 1906 թ. նոյեմբերի 10-ին՝ Վրթ. Փափազյանի «Ժայռ» դրամայի ներկայացմամբ: Թատերախմբի կազմում ընդգրկված էին Հովհ. Աբելյանը, Ժաման Դրիգորյանը, Հովհաննես (Օվիկ) Սևումյանը, Միքայել Մանվելյանը, Գևորգ Ջմշկյանը և այլոք: Ճանաչում ձեռք բերած շատ ուրիշ դերասաններ: Թատրոնի խաղացանկը հարստանում է թե՛ այցելու դերասանների բերած պիեսներով և թե՛ տեղացի թատերասերների ընտրությամբ: Տարեշրջանում թատերախումբը տալիս է 27 ներկայացում: Բեմադրանկարում էին հայ և այլազգի դրամատուրգների ստեղծագործությունները[1060]: Հովհ. Աբելյանի թատերախմբի գեղարվեստական շրջանում, 1907 թ. հոկտեմբերից, երկու ամսով թատերախմբի աշխատանքներին մասնակցում է Փարիզից ժամանած երիտասարդ դերասան Վահրամ Փափազյանը[1061]: «Կուլտուրական միության» թատերական մասնաճյուղի անվան տակ կազմված «Աբելյան-Արմենյան» անունով թատերախումբը 1908 թ. սեպտեմբերից, ներկայացումներ տալու նպատակով, մեկնում է Կ. Պոլիս[1062]: Այդ թատերախումբը, վերստին կազմված հայտնի դերասաններով, 1911 թ. հերթական թատերաշրջանն անցկացրեց Բաքվում, Հյուսիսային Կովկասում և Մոսկվայում[1063]: Տարբեր տարիների թատերաշրջաններում Բաքվի թատրոնում իրենց տաղանդի ամբողջ մեծությամբ հանդես են եկել հայ դերասանական լավագույն ուժերից՝ Սաֆրազյան ամուսինները, Ե. Պոպովյանը, Մ. Ա-

---

[1058] Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ Բագուայ Հայոց կուլտուրական միութեան 1906-1907 տարեշրջանի գործունեութեան, № 1, էջ 91:
[1059] Տե՛ս նույն տեղում, էջ 92-93:
[1060] Տե՛ս նույն տեղում, էջ 101:
[1061] Տե՛ս Փափազյան Վ., Հետադարձ հայացք, հ. Ա, Երևան, 1979, էջ 175-191:
[1062] Տե՛ս Արմենյան Ա., նշվ. աշխ., էջ 116:
[1063] Տե՛ս նույն տեղում, էջ 163:

բեչյանը, Շ. Եվանգուլյանը, Գ. Խոջամիրյանը, Գ. Պարոն-Սարգսյանը, Մ. Ներսիսյանը, Կ. Մովսեսյանը (Մովսես, հետագայում հայտնի երգիչ), Գրիգոր Ավետյանը, Արտաշես Վրույրը, Արուս Ոսկանյանը, Օլգա Գուլազյանը, Վահան Փափազյանը և ուրիշներ: Դերասաններն իրենց ինքնատիպությամբ, բեմական հոյակապ կերպարներ կերտելու ունակությամբ ոգեշնչել են հարյուրավոր հայ և օտար հանդիսականների:

Թատերական մասնաճյուղի դերասանական խումբն իր գործունեությունը չարունակեց ընդհուպ մինչև 1918 թ. մարտ ամիսը: Բաքվի հայկական թատրոնի առաջընթացը արգելակվեց քաղաքը թուրքերի կողմից գրավվելու պատճառով. դերասաններից շատերը ցաքուցրիվ եղան տարբեր վայրեր: Սիրանույշը, Մամիկոնյանը և Արմենյան ամուսինները գաղթեցին Իրան, Ժասմենը՝ Մինչին Ասիա: Հովհ. Աբելյանը հուլիսի 31-ին փորձեց մեկնել Աստրախան: Նա այն նավում էր, որով փորձում էր Աստրախան մեկնել նաև Ստ. Շահումյանը՝ կոմիսարների հետ: Սակայն նավը «Յենտրոկասպիի դիկտատուրայի» պահանջով հետ վերադարձավ Բաքու: ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Արուս Աղնավուրյանի վկայությամբ՝ «ինքը, եղբայրը՝ Մամիկոն Աղնավուրյանը (Շառլ Ազնավուրի հայրը) և Աբելյանը 26 կոմիսարների հետ գտնվում էին նույն չոգենավում»[1064]: Մեծ նեղություններ կրելով՝ Հովհ. Աբելյանը մեկնում է Հյուսիսային Կովկաս, ապա այնտեղից վերադառնում Թիֆլիս[1065]:

Ամփոփելով նշենք, որ Բաքվի հայկական թատրոնը սիրողական մակարդակից վերաճելով դարձավ արվեստի մասնագիտացված մի ճյուղ: Կազմակերպվեցին դերասանական մշտական խմբեր, փոխադրությունն ու համագործակցություն ստեղծվեց արևելահայ և արևմտահայ նշանավոր թատերական խմբերի հետ: Բաքվի հայկական թատրոնն իր հարուստ բեմադրանկով, տարբեր տարիներին կազմակերպած թատերաշրջաններով մեծ դեր է խաղացել երկրամասի հայերի ազգային ինքնագիտակցության, մայրենի լեզվի պահպանման և ընդհանուր մշակութային մակարդակի բարձրացման գործում՝ միաժամանակ հանդես բերելով բեմական արվեստի մի շարք մեծություններ:

[1064] **Овакимян Б.**, նշվ. աշխ., стр. 47.
[1065] Տե՛ս Մելիքսեթյան Ս., նշվ. աշխ., էջ 173:

* * *

XIX դարի երկրորդ կեսին, Բաքվի հայ թատերական կյանքին համահունչ, առաջ էր ընթանում նաև երաժշտական-հասարակական կյանքը: Բաքվի հայ երաժշտասերների կյանքում իր ուրույն ու հաստատուն տեղն ուներ հայ երաժշտության ամենանշանավոր գործիչներից մեկը՝ երգահան, խմբավար, երաժշտական բանահավաք ու քառաձայն երգարվեստի մեծ վարպետ Քրիստափոր Կարա-Մուրզան, որը 1885-1893 թթ. անընդմեջ ապրել և գործել է Բաքվում: Կարա-Մուրզային հաջողվում է Բաքվում կազմակերպել 40 հոգուց բաղկացած մի խումբ և հարուստ երգացանկով պարբերաբար համերգներ տալ ոչ միայն տեղի հանդիսատեսի համար, այլև համերգային մի շարք շրջագայություններ կատարել Այսրկովկասի հայաշատ վայրերում՝ Ախալցխայում, Աբասթումանում, Ախալքալաքում, Շուշիում, Շամախիում, Աստրախանում և այլուր[1066]: Կարա-Մուրզայի 1890 թ. հունիսին կայացած հերթական համերգին ներկա էր նաև այդ օրերին Բաքվում գտնվող հայ մեծանուն գրող Ռափայել Պատկանյանը (Գամառ-Քաթիպա)[1067]: Համերգային ծրագրում կատարվում էին նաև վերջինիս խոսքերի վրա գրված «Ի՞նչ աննենք...» և Միք. Նալբանդյանի «Ազատություն» երգերը: Ռ. Պատկանյանը, խորապես հուզված այդ կատարումներից, ասել է. «Խաչատուր, հոգիս ցնցեցիր, ինձ երկինք բարձրացրիր. այդ ինչպէս ընկդմացար իմ հոգուս խորքերը և այնտեղից առոգանուած այդ բառերը այս նոտերով կենդանացրիր»[1068]:

Բաքվի հայ երաժշտական կյանքն անհնար կլիներ պատկերացնել առանց օպերետային երաժշտության: Կարա-Մուրզան հայ վիպասան, գրող և հասարակական գործիչ Ատրպետի (Սարգիս Մուբայաջյան)[1069] հետ ստեղծում է «Շուշան» օպերան: Լիբրետոն գրում է Ատրպետը, իսկ երաժշտությունը՝ Կարա-Մուրզան: Կարա-Մուրզայի այդ տարիների գործերից կարևոր է հիշատակել նաև Գունոյի

[1066] Տե՛ս Կարապետեան Յովհ., Քրիստափոր Կարա-Մուրզա (նրա կեանքն ու գործունէութիւնը), 1854-1902, Թիֆլիս, 1904:

[1067] Ռ. Պատկանյանի երկրորդ որդին՝ Հովհ. Պատկանյանը զոհվել է 1916 թ. դեկտեմբերի 2-ին, Բաքվի երկաթուղային կայարանում տեղի ունեցած վթարից (տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1916, դեկտեմբերի 18, № 232):

[1068] Նույն տեղում, էջ 52:

[1069] Ատրպետը, Կարսում թողնելով ուսուցչությունը, 1889 թ. տեղափոխվում է Բաքու և ծառայում նավթագործարաններից մեկի գրասենյակում: 1893 թ. Բաքվից տեղափոխվում է Թավրիզ (տե՛ս Տէր-Աստուածատրեանց Հ., Բառարան հայ կենսագրութեանց (1441-1904), պր. Ա, Թիֆլիս, 1904, էջ 128-129):

«Ֆաուստ» օպերայի հայերեն բնօրինակությունը, որը տեղի ունեցավ Բաքվում՝ 1890 թ. աշնանը, Թադիևի թատրոնի շենքում[1070]:

Տարբեր ժամանակներում. Բաքվի համերգասրահներում երաժշտական իրենց կատարումներով հանդես են եկել նաև վառ անհատականություններ՝ մի շարք հայ երգիչներ ու արվեստագետներ: Համերգներ է տալու նպատակով «Բաքվի հայոց մարդասիրական ընկերության» հրավերով 1884 թ. սեպտեմբերի 20-ին Ալեքսանդրապոլից իր խմբով Բաքու է ժամանում XIX դարի երկրորդ կեսի և XX դարի առաջին տասնամյակի հայ գուսանա-աշուղական արվեստի ամենանշանավոր ներկայացուցիչ աշուղ Ջիվանին (Սերովբե Բինգոյան - Լևոնյան): «Նոր-դարի» տեղեկատվական բաժնում ասվում էր. «Մարդասիրական ընկերութեան դահլիճում բարեգործական պարահանդես էր: Ներկայ էին ընկերութեան անդամներն իրենց ընտանիքներով: Պարահանդեսին հրաւիրուած էր մեր աշղ Ջիվանին իւր խմբով»[1071]:

Փարիզ, Լոնդոն և Մանչեստր համերգային նկուլթներից հետո Բաքվում 1893-1896 թթ. մենահամերգներով նկուլթ է ունենում XIX դարի վերջին քառորդին համաեվրոպական ճանաչման արժանացած ամենանշանավոր արտիստուհին՝ օպերային տաղանդավոր երգչուհի Նադեժդա Պապայանը[1072]: *Բաքվում օպերային թատրոնի հետագա զարգացումը խթանելու նպատակով ծրագրվում էր Պապայանին մշտական բնակության հրավիրել Բաքու*[1073]: *Սակայն մեծ երգչուհու եղերական մահը ձախողում է այդ ծրագրի իրականացումը*[1074]: *1886-1895 թթ. համերգային իր ծրագրով հանդես է գալիս նաև հանրահայտ տենոր և խմբավար Ներսես Շահլամյանը*[1075]:

[1070] Տե՛ս Թէրլէմէզեան Ռ., Քրիստափոր Կարա-Մուրզան. նրա կեանքը եւ գործունեութիւնը, Վիեննա, 1925, էջ 15, տե՛ս նաև Մուրադյան Մ., Քրիստափոր Կարա-Մուրզա. Կյանքը և երաժշտական-հասարակական գործունեությունը, Երևան, 1950, էջ 41:

[1071] «Նոր-դար», Թիֆլիս, 1884, հոկտեմբերի 31, № 176:

[1072] Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1896, № 6, էջ 97, տե՛ս նաև «Արձագանք», Թիֆլիս, 1896, № 37, էջ 3:

[1073] Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1896, № 42, էջ 666:

[1074] Աստրախանում, հայրական տանը գտնվելու ժամանակ, 1906 թ. փետրվարի 2-ին, ուսանողական երեկոյի հրավերի պատրվակով, երեք կողոպտիչ մարդասպաններ ներխուժում են բնակարան և վիրավորում երգչուհուն, իսկ հորը՝ Համբարձում Պապայանին սպանում: Բժիշկների ջանքերը ապարդյուն էին: Ն. Պապայանը վախճանվեց՝ մահվանից մի քանի րոպե առաջ շշնջալով Վիոլետտայի արիան Վերդիի «Տրավիատա» օպերայից: Ալ. Շիրվանզադեն այդ առիթով

1890 թ. համերգային ծրագրով Բաքվում հանդես եկավ օպերային և կամերային մեկ այլ տապանդաչատ երգիչ՝ Բեգլար Ամիրջանյանը (Ամիրջան)[1076]: Նրա համերգները Բաքվում չարունակվեցին նաև հաջորդ տարում այս անգամ նաև օպերային երգիչ Մահր Մաերյանի մասնակցությամբ[1077]: 1895 թ. ապրիլին մենահամերգով հանդես է գալիս կուլր դաշնակահար, թառահար, արևելյան դասական երաժշտության գիտակ և տապանդաչատ կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանը, որը սիմֆոնիական ստեղծագործություններին զուգընթաց ներկայացնում է նաև արևմտաեվրոպական հեղինակների գործերը[1078]: 1896 թ. այդ քաղաքում իր երգչախմբով հանդես է գալիս հայ երգարվեստի մեկ այլ երախտավոր՝ Մակար Եկմալյանը, որը քաղաքի Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում կատարում է իր քառաձայն «Պատարագը»[1079]: Նշված երաժիշտների համերգները Բաքվի երաժշտասեր հանրության կողմից արժանանում են ջերմ ընդունելության և մամուլի գրվատանքին:

Բաքվի երաժշտական կյանքում ուրույն տեղ է գրավում նաև ականավոր երգահան Անտոն Մայիլյանը, որն իր ստեղծագործությամբ հարստացնում է հայ երաժշտությունը: Նա իր գործունեությունը նախ սկսում է Թիֆլիսում, ապա 1906 թ. մինչև մահ՝ 1942 թվականը, չարունակում է Բաքվում[1080]: Այստեղ նա մանկավարժական լայն գործունեություն է ծավալում դպրոցներում, կազմակերպում բազմաթիվ համերգներ, չարունակում և ավելի բազմաբնույթ դարձնում իր կոմպոզիտորական գործունեությունը[1081]: Բաքվում Ա. Մայիլյանի բնմադրած օպերետներից էր Տ. Զուլաջյանի

գրել է. «Ով գիտի, գուցե ճիշտ է, որ ասում են, թե սոխակը երգելով է մահանում» (Հայ ականավոր երգիչներ (մատենագիտական ցանկ), Երևան, 1974, էջ 9-10):

[1075] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1886, դեկտեմբերի 17, № 142, տե՛ս նաև 1895, մայիսի 22, № 59, տե՛ս նաև 1889, ապրիլի 19, № 42:

[1076] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1890, հոկտեմբերի 11, № 117:

[1077] Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1891, № 19, էջ 290:

[1078] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1895, ապրիլի 20, № 44, տե՛ս նաև Տիգրանյան Ն., Հոդվածներ, հուշեր, նամակներ, կազմող՝ Մազմանյան Մ., Երևան, 1981, էջ 10:

[1079] Տե՛ս Թահմիզյան Ն., Մակար Եկմալյան. Կյանքն ու ստեղծագործությունը, Երևան, 1981, էջ 33:

[1080] Ա. Մայիլյանը մի կարճ շրջան՝ 1917-1920 թթ. բացակայում է Բաքվից: Նախ բնակվում է Թիֆլիսում, որտեղից տեղափոխվում է Իրան՝ Էնզելի: 1920 թ. Ադրբեջանում Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո կրկին վերադառնում է Բաքու (տե՛ս Մանուկյան Մ., Անտոն Մայիլյան (կյանքն ու գործը), Երևան, 1965, էջ 35-37):

[1081] Տե՛ս «Արեւ», Բագու, 1914, ապրիլի 13, № 8:

«Լերլերիչի» բեմադրությունը, որը կայացավ 1912 թ. հունվարի 25-ին և առաջինն էր արևելահայ իրականության մեջ: Ա. Մայիլյանի ջանքերով 1913 թ., «Մայիլյանների թատրոնի» շենքում, առաջին անգամ բեմադրվում է նաև Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան[1082]: Ա. Մայիլյանը Բաքվում հիմք դրեց երաժշտական հրատարակչությանը: Նրա նախաձեռնությամբ 1910-1917 թթ. հրատարակվում է «Թատրոն և երաժշտություն» երաժշտական հանդեսը, որի էջերում բազմաթիվ հոդվածներ էին տպագրվում հայ կոմպոզիտորների, երաժիշտ-կատարողների և երաժշտության ընդհանուր հարցերի մասին: Պարբերականը անշուշտ կարևոր դեր է խաղացել հայ երաժշտական գործիչներին համախմբելու և ազգային երաժշտության զարգացմանը նպաստելու գործում: Այսպիսով՝ Ա. Մայիլյանը Կարա-Մուրզայից հետո դարձավ Բաքվի հայության (և ոչ միայն) XX դարի սկզբների երաժշտական կյանքի կենտրոնական դեմքը[1083]: Համերգներ կազմակերպելու նպատակով «Կուլտուրական միության» գեղարվեստական մասնաճյուղը 1908 թ. մարտի վերջերին Բաքու է հրավիրում Կոմիտաս վարդապետին, որն իր երգչախմբի շնորհալի մեներգիչ Վահան Տեր-Առաքելյանի հետ միասին «Բաքվի հայոց մարդասիրական ընկերության» պահլիճում հրաշալի համերգ է տալիս[1084]: Հարկ է նշել, որ Բաքվում ստեղծված երաժշտական միջավայրը տվել է գեղարվեստի այնպիսի շնորհալի դեմքեր, ինչպիսիք եղան նավթարդյունաբերող Աբգար Ադամյանի[1085] դուստրերը՝ Հեղինեն և Եվգինեն, որոնք Եվրոպայում դառնում են հանրաճանաչ դաշնակահարուհիներ: Նրանց տաղանդն աչքի էր ընկնում մասնա-

---

[1082] Տե՛ս Տիգրանյան Է., Հայ ճարտարապետների գործունեությունը Անդրկովկասում, էջ 38:

[1083] Տե՛ս Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 21:

[1084] Տե՛ս «Արարատ», 1908, Դ, էջ 437, տե՛ս նաև Բաբաջանյան Հ., Վահան Տեր-Առաքելյան, «Գիտություն և տեխնիկա», Երևան, 1985, № 3, էջ 44-46: Համերգին ներկա է եղել Կոմիտասի մտերիմ ընկերներից՝ երաժիշտ Ստեփան Դեմուրյանը, որը Կոմիտասի տրամադրության տակ է դնում իր 40 հոգանոց երգչախումբը Վերդիի «Աիդա» օպերայից հատվածներ կատարելու համար: Կոմիտասն այն համալրում է ևս 40 երգիչ-երգչուհիներով և ապրիլի 1-ին տալիս մի հրաշալի համերգ, որտեղ, բացի երգչախմբից, մեներգում են նաև ինքը, Վահան Տեր-Առաքելյանը և Ղազարյանը: Համերգը, որին տեղացիներից բացի ներկա էին նաև օտարներկրացիներ, կրկնվում է ապրիլի 4-ին, որի ընթացքում կատարվում են «Սիփսանա բաջեր», «Քելեր-ցոլեր», «Հորովել» և «Ծիրանի ծառ» երգերը (տե՛ս Բադիկյան Խ., Կոմիտասը՝ ինչպիսին եղել է, Երևան, 1902, էջ 204):

[1085] Ա. Ադամյանը մեծ հակում է ունեցել նաև երաժշտության նկատմամբ և ջութակ է նվագել:

վորապես նրանով, որ այդ չնորհալի թույրերն ամենաբարդ մոտիվներով միաժամանակ նվագում էին երկու դաշնամուր[1086]:

Հայ երաժիշտասերները մեծ աշխատանք էին տանում նաև «Ռուսական կայսերական երաժշտական ընկերության» Բաքվի բաժանմունքում: 1909 թ. դրությամբ բաժանմունքում հայերից ընդգրկված էին Լևոն Մելիք-Նուբարյանը և Միք. Ունանյանը[1087]:

Բաքվում հայկական մշակույթի զարգացման վկայություններն էին «Բաքվի նկարչական ընկերության» կողմից պարբերաբար կազմակերպվող պատկերահանդեսները, ուր ցուցադրվում և վաճառվում էին հայ նկարիչ-արվեստագետների գործերը[1088]: Նմանօրինակ միջոցառումներից էր՝ հանրահայտ նկարիչ և մշակութային եռանդուն գործիչ, հայ ազգային բնանկարի հիմնադիր Գևորգ Բաշինջաղյանի կողմից 1885 թ. նոյեմբերի 17-ին «Մարդասիրական ընկերության» դահլիճում կազմակերպված ցուցահանդեսը: Հարկ է նշել, որ պատկերահանդեսները նոր երևույթ էին այն տարիներին, հետևապես սկզբնական շրջանում հասարակության կողմից հատուկ ուշադրության չէին արժանանում: Թիֆլիսից Բաքու եկած դեռևս սկսնակ նկարիչ Գ. Բաշինջաղյանի պատկերահանդեսի բացումը համընկավ այն օրերի հետ, երբ հյուրախաղերով Բաքվում էր գտնվում Պ. Ադամյանը[1089]: Վերջինս, չնայած իր զբաղվածությանը, անտարբեր չմնաց Գ. Բաշինջաղյանի պատկերահանդեսի նկատմամբ: Լինելով նաև նկարիչ՝ Պ. Ադամյանը նոյեմբերի 24-ին մեծ հետաքրքրությամբ այցելեց ցուցահանդես, ուր և տեղի ունեցավ երկու արվեստագետների հանդիպումն ու ծանոթությունը: Պ. Ադամյանը բարձր է գնահատել Գ. Բաշինջաղյանի ստեղծագործությունները: «Այդ նկարների առաջ չատ անգամ կանգնեցա զմայլանքով,- գրում է նա,- սաստիկ նեղանալով շրջանակին դեմ, որը կարծես սահմանափակելով, արգելում է տեսնել այդ գեղեցիկ տեսարանաց չարունակությունը»[1090]: Գ. Բաշինջաղյանի երկրորդ պատկերահանդեսի բացումը Բաքվում տեղի ունեցավ 1895 թ. դեկտեմբերի 11-ին[1091]: 1901 թ. Բաքվում կազմակերպվեց մեկ այլ տաղանդաշատ հայ նկարչի՝

[1086] Տե՛ս Հակոբյան Հ., Ադամյան քույրեր, էջ 34:
[1087] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 84.
[1088] Տե՛ս «Արեւ», Բագու, 1914, ապրիլի 13, № 8:
[1089] Տե՛ս Զարյան Ռ., Ադամյան: Կյանքը, Երևան, 1961, էջ 268:
[1090] Տե՛ս «Նոր-դար», Թիֆլիս, 1885, դեկտեմբերի 4, № 206:
[1091] Տե՛ս Գեւորգ Բաշինջաղեանի աշխատանքների ցուցահանդեսը Բաքւում եւ Պետերբուրգում, «Մուրճ», Թիֆլիս, 1895, № 1, էջ 188-189:

Վարդգես Սուրենյանցի ցուցահանդեսը, որի ժամանակ ցուցադրվեց մոտ 40 գեղանկար[1092]:

* * *

Բաքու քաղաքի հայ հասարակական կյանքի կենսունակ ոլորտներից էր դրական կյանքը, որը Բաքվում սկսեց առավել աշխուժանալ XIX դարի 60-ական թվականներին, երբ քաղաքը դարձավ հայ առևտրա-արդյունաբերության և տնտեսական գործառության խոշոր կենտրոնը: «Բաքուն հնքիսթական էր այն ժամանակ իր ծովով ու նավերով, իր վիշկաներով և իր վառ հույսերով: Վաղ երիտասարդական երազներ, ոսկի՝ ապագա, դրական փառք, ստեղծագործության ուրախություն, ահա թե ինչով էր լցված Բաքուն»[1093],- *տասնամյակներ անց այդպես է գրում Դ. Դեմիրճյանը:*

Բաքվում են ձևավորվել և գրական իրենց առաջին քայլերը կատարել տասնյակ հայ գրողներ՝ բանաստեղծներ ու արձակագիրներ: Արդյունաբերական այդ քաղաքում ձևավորվեցին Շամախուց Բաքու տեղափոխված և այդտեղ 1875-1883 թթ. անընդմեջ ապրած Ալ. Շիրվանզադեի դրական նախասիրությունները. նա իր ստեղծագործություններում գեղարվեստական խոսքի մեծ տաղանդով արտացոլում է Բաքվի հայ հասարակական կյանքի սոցիալ-կենցաղային պատկերն՝ իր բնորոշ առանձնահատկություններով: Շիրվանզադեն իր մոտ մեկ տասնյակ պիեսներով նոր աստիճանի բարձրացրեց հայ թատերգությունը[1094]: *Բաքվում թատերգության նկատելի աշխուժացումը բխում էր ոչ միայն ժամանակի ամենամասսայական արվեստի՝ թատրոնի պահանջներից, այլև այն իրողությունից, որ այն դարձել էր հասարակական-դրական կյանքի կենսունակ ժանրերից մեկը*[1095]: *Դրական այդ ճյուղի բնագավառում աչքի ընկավ նաև Ալ. Աբելյանը, որը առևտրաարդյունաբերությունից զատ, առաջադիմելով ինքնակրթությամբ, զբաղվում էր դրական-թատերական աշխատանքով: «Գոյություն ուներ սիրողների լավ կազմակերպված*

[1092] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1901, մայիսի 2, № 93, տե՛ս նաև Հարությունյան Վ., Վարդգես Սուրենյանց, Երևան, 1960, էջ 71:

[1093] Դերենիկ Դեմիրճյան, Եժ, հ. 8 (լրացուցիչ), Երևան, 1963, էջ 187:

[1094] Մեծ դրամատուրգի սոցիալ-քաղաքական հայացքների ձևավորման գործում էական նշանակություն են ունեցել Բաքվում ապրած տարիները, որոնք հարուստ նյութ են տվել նրա գեղարվեստական երկերին՝ «Հրդեհ նավթագործարանում» (առաջին անգամ տպագրվել է 1883 թ. «Մշակում»), ապա՝ «Գործակատարի հիշատակարանից», «Քառաս», «Պատվի հատար» և «Մորգանի խնամին», որոնցում գրողը գեղարվեստական խոսքի մեծ տաղանդով ներկայացրել է Բաքվում հայ խոշոր դրամատիրության և հասարակական հարաբերությունների պատմությունը:

[1095] Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Երևան, 1979, էջ 127:

խումբ,- գրում է նա,- որի մեջ էինք և մենք»[1096]: Գրել է մի շարք պիեսներ, որոնք բեմականացվել են Բաքվի հայ թատրոնի կողմից[1097]:

Բաքվում իր գրական առաջին քայլերն է կատարել նաև Ս. Հնչակյան կուսակցության նշանավոր գործիչ Սմբատ Գարագաշյանը (Գարագաշ), որը ծնունդով Շամախի քաղաքից էր: Բաքվում 1898 թ. լույս տեսած նրա առաջին վիպակը («Քաղցած փեսաները և գէօգարչինի բալան»)[1098] նվիրված է հենց Շամախու կյանքին[1099]: Բաքվում է ստեղծագործել նաև պրոզ, հասարակական գործիչ Ատրպետը, որի վեպերից մեկը նվիրված է կարիքի հալածանքից Բաքու. նետված պանդուխտների կյանքին[1100]:

Քաղաքի գրական կյանքի աշխուժացմանը նպաստել է 1880-ական թվականների վերջերին հիմնված «Հույս» միությունը՝ իր համանուն ճեռագիր հանդեսով: Բաքվում գրական հասարակական գործունեությանը նպաստից 1890-ական թթ. գրող-մանկավարժներ Ս. Հովվյանի, Ա. Նազարեթյանի և Ս. Բալայանի ջանքերով կազմակերպված «Օջախ» գրական-գեղարվեստական ակումբը[1101], որի աշխատանքներին տարբեր տարիներին մասնակցել և քաղաքի հայ կրթամշակութային կյանքում իրենց կարևոր ավանդն են ներդրել գրականագետ, թարգմանիչ Յոլակ Խանզադյանը, ճանաչված գրողները Ղազարոս Աղայանը, Ռափայել Պատկանյանը, Պերճ Պռոշյանը[1102], Վահան Տերյանը[1103], Հովհաննես Թումանյանը և ուրիշներ:

1096 Տե՛ս Թամրազյան Հ., Տաղանդի ծնունդը (Շիրվանզադեի կյանքից), Երևան, 1978, էջ 36:

1097 Տե՛ս «Աղբիւրի ակունքը», XXV, 1883-1908, Թիֆլիս, 1908, պր. 3, էջ 51: Ալ. Աբելյանը 1891 թ. նամակագրական կապ է պահպանել նորվեգացի նշանավոր գրող և թատերագիր Հենրիկ Իբսենի հետ (տե՛ս նույն տեղում, էջ 54):

1098 Ըստ Ս. Գարագաշի՝ գեոգարչինի բալա նշանակում է աղավնու ձագ:

1099 Տե՛ս Գարագաշ Ս., Քաղցած փեսաները եւ գէօգարչինի բալան (մի գիծ Շամախոյ կեանքից), Բագու, 1898:

1100 Տե՛ս Ատրպետ, Սեւ քաղաք (վէպ Բագւի գործարանական կեանքից), «Տարազ», Թիֆլիս, 1898, հունվարի 11, էջ 26-27, հունվարի 18, № 3, էջ 42-44, հունվարի 25, № 4, էջ 59-61, փետրվարի 1, № 5, էջ 74-76, փետրվարի 8, № 6, էջ 91-95, փետրվարի 15, № 7, էջ 110-111, մարտի 1, № 9, էջ 154-158, մարտի 8, № 10, էջ 179-186, հունիսի 7, № 22, էջ 470-471, հունիսի 14, № 23, էջ 494-502, հունիսի 21, № 24, էջ 518-523:

1101 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1914, հունվարի 30, № 22:

1102 Պ. Պռոշյանը 1906 թ. հոկտեմբերի վերջերին մշտական բնակություն է հաստատում Բաքվում, ուր մտերմական հարաբերություններ է հաստատում ճանաչված բժիշկ Գաբրիել Քաջբերունու հետ (տե՛ս Գևորգյան Գ., Պերճ Պռոշյան. Կյանքի և գործունեության տարեգրություն: Մատենագիտություն, Երևան, 1981, էջ 86):

Բաքվում բանաստեղծական իր առաջին քայլերն է կատարել նաև հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանը, որը 1887 թ. Թիֆլիսից տեղափոխվում է Բաքու, աշխատում նախ էրլիխի դեղատանը, այնուհետև, իբրև սեւագործ բանվոր, «Սև Քաղաքի», Սաբունչիի և Բալախանիի նավթահանքերում ու նավթամշակման գործարաններում: Ապա չուրջ հինգ տարի՝ մինչև անգամ 1893 թ. հաշվետուի, գանձապահի և հաշվապահի պաշտոններ է վարում «Վուլկան» ձուլարանում և էյլենչմիդտի մեխանիկական գործարանում, որտեղից և սկսվում է նրա ծանոթությունը բանվորական աշխարհի հետ[1104]:

Եվրոպա մեկնելու համար գրամ վաստակելու նպատակով 1902 թ. վերջերին Բաքու են գալիս Ավետիք Իսահակյանը և Դերենիկ Դեմիրճյանը[1105]: Սակայն աշխատանք գտնելու հույսերը չեն արդարանում: 1903 թ. մարտին նրանք ստիպված ձեռնունայն վերադառնում են Թիֆլիս: Ա. Իսահակյանն ու Դ. Դեմիրճյանը երկրորդ անգամ Բաքու են մեկնում 1903 թ. աշնանը: Իսահակյանի աջակցությամբ՝ Դեմիրճյանը վարիչի պաշտոնով աշխատանքի է անցնում Ալ. Մանթաշյանցի բանվորական ճաշարանում[1106]: Այստեղ նա մնում է մոտ մեկուկես տարի, որից հետո մեկնում է Եվրոպա՝ Շվեյցարիա[1107]:

Այդ տարիներին Բաքուն հայերի համար վերածվում է յուրատեսակ գրական-մշակութային օջախի, որտեղ հավաքվում էին ժամանակի հասարակական և գիտական նշանավոր գործիչները, դերողներն ու հրապարակախոսները: «Կուլտուրական միության» գեղարվեստական հանձնաժողովը կազմակերպում է գրական-մշակութային մի շարք միջոցառումներ: Մասնաժողովի հրավերով 1907 թ. դեկտեմբերի կեսերին Բաքու է ժամանում պրոֆ. Ն. Մառը, որը դեկտեմբերի 21-23-ը դասախոսություններ է կարդում Անի մայրաքաղաքի պատմության, այդտեղ կատարված պեղումների և Հին հայկական գրականության ծագման մասին թեմաներով[1108]: Մասնաժո-

---

[1103] 1907 թ. մայիսին Տերյանը մեկնում է Մոզդոկ, այնտեղից՝ Բաքու՝ աշխատելու նպատակով: Սակայն հուլիսի երկրորդ կեսին նա հիվանդանում է ու բժշկի խորհրդով ստիպված լինում մեկնել Գանձա (տե՛ս Գրիգորյան Կ., Վահան Տերյան, Երևան, 1983, էջ 31-32):

[1104] Տե՛ս Հակոբյան Հ., ԵԺ, հ. 4, Երևան, 1958, էջ 271:

[1105] Տե՛ս Դերենիկ Դեմիրճյան, ԵԺ, հ. 8, էջ 184, տե՛ս նաև Իսահակյան Ավ., Հիշատակարան, գրական ժառանգություն, հ. 10, Երևան, 1977, էջ 288:

[1106] Տե՛ս ԳԱԹ, Դ. Դեմիրճյանի ֆոնդ, գ. 768, թ. 5, տե՛ս նաև գ. 769, թ. 7:

[1107] Տե՛ս Մադոյան Գ., Դերենիկ Դեմիրճյան, Երևան, 1986, էջ 37-38:

[1108] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1916, դեկտեմբերի 27, № 289, տե՛ս նաև Մովսիսյան Ա., Ն. Յ. Մառի կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1946, էջ 10:

պովի հրավերով 1908 թ. ապրիլի 16-ին Բաքու է ժամանում հայտնի ռուս գրականագետ Յու. Վնսելովսկին, որը դասախոսություններ է կարդում 1860-ական թթ. հայ գրականության վերաբերյալ[1109]: Բաքվի գրական շարժմանն աջակցում է 1915 թ. մայիսին գրական մի խումբ գործիչների ջանքերով հիմնադրված «Բաքվի հայ գրասերների ընկերություն» (հիմնադիրներ՝ Տիգրան Հովհաննիսյան[1110], Հովհաննես Հովհաննիսյան, Աս. Վաչյանց, Կատարինե Բահաթուր, Եր. Թադիանոսյան, Սառա-Սաղյան, Մխիթար Տեր-Անդրեասյան)[1111]: Հայ մեծանուն բանաստեղծ, հայ գրողների Կովկասյան ընկերության վարչության նախագահ Հովհ. Թումանյանը, ողջունելով Բաքվի գրասերների ընկերության ստեղծումը, Թիֆլիսից 1915 թ. մայիսի 28-ին Տ. Հովհաննիսյանին հասցեագրած նամակում գրում է. «Ողջունելով Բաքվի հայ գրասերների ընկերության ծնունդը, Կովկասի հայ գրողների ընկերության վարչությունը խնդրում է Ձեզ՝ նրա ուրախալի զգացմունքի ու բարի ցանկությունների արտահայտիչը լինել»[1112]: Ընկերության խորհրդի հրավերով 1916 թ. հունվարի 8-ին Բաքու է ժամանում ռուս մեծ բանաստեղծ Վ. Բրյուսովը[1113], որը Եղբ. Մայիլյանների թատրոնի լեփ-լեցուն դահլիճում դասախոսու-

---

[1109] Տե՛ս «Արարատ», 1908, Դ., էջ 437:

[1110] Թարգմանիչ, գրական գործիչ, իրավաբան Տ. Հովհաննիսյանն ակտիվորեն մասնակցել է Առաջին աշխարհամարտի տարիներին հայ ժողովրդի կրած վնասների հաշվառման ու դրանց փոխհատուցման ուղղությամբ Թիֆլիսում 1918 թ. վերջից 1920 թ. սկիզբը՝ Հովհ. Թումանյանի ղեկավարությամբ գործող «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» աշխատանքներին: Տ. Հովհաննիսյանը միաժամանակ վարում է Ազգային կենտրոնական բյուրոյի Բաքվի մասնաճյուղին կից 1916 թ. գործող «Վշտապատում» անվամբ մասնաժողովի (անդամներ՝ Հ. Աճեմյան, Հ. Գալստյան, Գ. Թուրիկյան, Ա. Հացագործյան, Ս. Մելոյան, Գ. Ներկարարյան, Վ. Սարգսյան, Շիրին) նախագահի պաշտոնը (տե՛ս Վշտապատում. Հայոց Մեծ եղեռնը ականատեսների աչքերով, էջ 3, տե՛ս նաև Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ Ա. Զաքարյան, Երևան, 2005, էջ 99-102, 153):

[1111] Տե՛ս «Արեգ», Բագու, 1915, մայիսի 30, № 56:

[1112] Թումանյան Հ., Նամականի (1905-1922), ԵԼԺ, հ. 10, Երևան, 1999, էջ 225:

[1113] Դասախոսությունից հետո «Հայ գրասերների ընկերությունը» «Մետրոպոլ» հյուրանոցում կազմակերպում է հանդիսավոր ընթրիք: Վ. Բրյուսովը Բաքվում մնում է մինչև հունվարի 11-ը: Բաքվում եղած ժամանակ, հայ հասարակությունը, քաղաքի բազմազգ բնակչության ամենատարբեր խավերը արժանավայել մեծարում են անվանի բանաստեղծին, իսկ «Հայ գրասերների ընկերությունն» իր հունվարի 11-ի նիստում որոշում է «Վալերի Բրյուսովին՝ Հայ գրասերների ընկերությունից» մակագրությամբ նվիրել ոսկե գրիչ (տե՛ս «Արեւ», Բագու, 1916, հունվարի 13, № 10):

թյուն է կարդում «Հայոց բանաստեղծությունը» վերնագրով[1114]: Բաքվի գրասերների ընկերության հրավերով 1916 թ. մարտի 16-ին իր ժամանակի արևմտահայ գրականության մասին ընդարձակ դասախոսություն է կարդում արձակագիր, հրապարակախոս և գրականագետ Զ. Եսայանը (Շահան)[1115]:

Բնական է՝ պաղափարական մարդկանց այս աշխույժ մթնոլորտում արծարծվում էին ազգային կյանքի կենսական խնդիրները, հզանում լուսավորական, հայրենասիրական գործունեության ծրագրեր: Սկիզբ առած գրական աշխուժացումն իր արտահայտությունը գտավ նաև երիտասարդական գրական հանդեսների հրատարակության մեջ: Առաջին և նշանակալից հրատարակությունը «Միլ» (1914-1916 թթ.) գրական-գեղարվեստական ալմանախն էր[1116], որը նպատակ ուներ խրախուսել և զարգացնել գրականության մեջ առաջին քայլերն անող երիտասարդներին[1117]:

Բաքվի հայ հասարակական կյանքում յուրահատուկ դեր ունեին նաև ազգային կյանքը կազմակերպող կրթասիրական և լուսավորական օջախները: Բաքվի հայերին է պատկանում Այսրկովկասում առաջին հասարակական գրադարան հիմնելու պատիվը, որը բացվեց 1870 թ. «Մարդասիրական ընկերության» նախագահ Մովսես Զոհրաբյանի նախաձեռնությամբ և նահանգային վարչության թույլտվությամբ: Գրադարանն ուներ 19 կետից բաղկացած կանոնադրություն, որից 8-ը վերաբերում էին ընթերցողներին: Գրադարանում կային գեղարվեստական գրականության, պատմության, լեզվաբանության, գեղարվեստի, հասարակական, իրավաբանության, աշխարհագրության, փիլիսոփայության, տրամաբանության, հոգեբանության, բնագիտության, մանկավարժության, քարտեզների, տեղեկատվական գրքերի, բժշկագիտության, մանկական ժողովրդական գրականության և պարբերական մամուլի բաժիններ[1118]: Բաքվի հայերը գրադարան-ընթերցարանը համարում էին «քաղաքի միակ գար-

---

[1114] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1916, հունվարի 20, № 13, տե՛ս նաև **Ханзадян В.**, Валерий Брюсов в Баку. Брюсовские чтения, 1962 года, Ереван, 1963, стр. 331, տե՛ս նաև Զաքարյան Ա., Վալերի Բրյուսովը Անդրկովկասում և հայ գրական կյանքը, ՊԲՀ, Երևան, 1983, № 2-3, էջ 74-78:

[1115] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1916, մարտի 31, № 72: Զ. Եսայանը մի կարճ շրջան բնակվել է նաև Բաքվում: 1918 թ. նա այդտեղից մեկնում է Իրան, այնտեղից՝ Փարիզ:

[1116] Տե՛ս Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), էջ 101:

[1117] Տե՛ս «Գործ», Բագու, 1914, մարտի 21, № 21:

[1118] Տե՛ս Գրացուցակ հայերէն գրքերի Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան գրադարանի, Բագու, 1912, էջ 2:

դը»[1119]: 1881 թ. գրադարանին կից գործում էր նաև ընթերցասրահ, որի առաջին վարիչն էր Ա. Շիրվանզադեն[1120]: 1887 թ. գրությամբ այն քաղաքի միակ գործող գրադարանն էր[1121], որն ուներ ավելի քան 9000 կտոր գրականություն[1122]: «Մարդասիրական ընկերության» հաշվետվության ամփոփագրում ասված է, որ գրադարան այցելուների թիվը տարեկան կազմել է 60-65000 հոգի, և միջին հաշվով օրական ունեցել է 170-180 ընթերցող[1123]:

Գրադարան-ընթերցարանին վիճակված չէր կանոնավոր կերպով շարունակելու իր գործունեությունը: Իր հայատյաց քաղաքականությամբ հայանի Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինը, արհեստական դժվարություններ ստեղծելով գրադարանի հետագա գործունեության համար, 1903 թ. մարտի 10-ին հրահանգում է դադարեցնել նրա աշխատանքը՝ պատճառաբանելով, թե իբր 1899 թ. կանոնադրությունում բացակայում է գրադարան-ընթերցարան ունենալու իրավունքը[1124]: «Մարդասիրական ընկերությունը» գրադարանի վերաբացման խնդրանքով դիմեց Գ. Գոլիցինին: Վերջինիս փոխարեն Բաքվի նահանգապետից ստացված գրությունում ասվում էր. կառավարչապետը հնարավոր չի համարում հարգել ընկերության խնդրանքը այն պատճառով, որ 1899 թ. հաստատված «Մարդասիրական ընկերության» կանոնադրության մեջ նախատեսված չէ ունենալ գրադարան-ընթերցարան: Ընկերության վարչությունը 1904 թ. նոյեմբերի 28-ին հրավիրում է արտահերթ նիստ, որում որոշվում է՝ գրադարանը վերաբացելու խնդրանքով դիմել ներքին

[1119] Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1898, հոկտեմբերի 18, № 40, էջ 910: Գրադարան-ընթերցարանի սպասարկման և կարգապահության մասին ուշագրավ հետևյալ տեղեկությունն է հաղորդում «Տարազը»՝ «Ներս էք մտնում ընթերցարան. Ձեզ դիմաւորում է շւէյցարը, վերցնում վերարկուդ. գլխարկը, տալիս №, ստորագրում էք (անուն, ազգանուն և դաւանանք) և մտնում էք մի ընդարձակ դահլիճ, որտեղ սեղանների վրայ կան մօտ 65 պարբերական հրատարակութիւններ: Հրաշալի սպաւորութիւն է թողնում, երբ տեսնում էք ամեն ազգի, ամեն դասակարգի յաճախորդներ» («Տարազ», Թիֆլիս, 1896, հուլիսի 28, № 296 15 495): Կանխամտածված ձևով անտեսելով այն իրողությունը, որ գրադարանից օգտվել են քաղաքում բնակվող տարբեր ժողովուրդների ներկայացուցիչները, Բաքվում 1927 թ. լույս տեսած «Ժողովրդական կրթությունը Ադրբեջանում» տեղեկագրի հեղինակները գրում են, թե իբր «Մարդասիրական ընկերության» գրադարանը հաստու չի եղել բնակչության լայն խավերին (տե՛ս Народное образование в Азербайджане. 1920-1927, Баку, 1928, стр. 80).

[1120] Տե՛ս Շիրվանզադե Ալ., Կյանքի բովից, էջ 74:

[1121] Տե՛ս Обзор Бакинской губернии за 1887 г., Баку, 1889, стр. 90.

[1122] Տե՛ս КИОБЧО-1854-1896 гг., стр. 8.

[1123] Տե՛ս նույն տեղում, стр. 9.

[1124] Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1904, № 6, էջ 168:

գործոց նախարար Պ. Սվյատոպոլկ-Միրսկուն: Թույլտվությունը նախարարից ստացվեց միայն նույն թվականի դեկտեմբերին: Թույլտվությունում ասվում էր. «Ընկերութեանը թոյլ է տրւում բանալ Բագու քաղաքում գրադարան, բայց առանց ընթերցարանի»[1125]: Գրադարանի կանոնավոր գործունեությունը վերսկսվեց 1905 թ. մարտի 30-ից[1126]:

1913 թ. հունվարի 1-ի դրությամբ գրադարանն արդեն ուներ 18227 կտոր գիրք (հայերեն՝ 5021, ռուսերեն՝ 13087 և այլ լեզուներով՝ 119)[1127]: Հայ հեղինակներից ամենից շատ ընթերցվել են՝ Րաֆֆի, Պ. Պռոշյան, Ծերենց, Խ. Աբովյան, Ալ. Շիրվանզադե, Լեո և այլն[1128]: 1870 թ., «Մարդասիրական ընկերության» չանքերով, գրադարան-ընթերցարանին կից հիմնվում է նաև գրատուն-թանգարան, որի նպատակն էր՝ հավաքել ու կորստից փրկել բոլոր ձեռագիր ու տպագիր հայկական գրքերը[1129]: Գրադարանը մեծապես տուժեց 1918 թ. Բաքու թուրքական ներխուժման հետևանքով:

«Մարդասիրական ընկերության» չանքերով 1917 թ. մայիսի 2-ին առանձին գրադարան-ընթերցարան է բացվել նաև Հայկավանում[1130]: Պատկերն ամբողջացնելու համար ավելացնենք, որ Բաքվի հայ բնակչության շրջանում մշակութային օջախի յուրատեսակ դեր էր կատարում նաև քաղաքում հայտնի «Հասարակական ակումբը», որի երկհարկ չքեղ շենքը իրենց ծախսով կառուցել էին Գևորգ

[1125] Տե՛ս Отчеть о деятельности правления Бакинскаго армянскаго человеколюбивого общество за 1904 г., стр. 11.

[1126] Տե՛ս նույն տեղում:

[1127] Տե՛ս Գրացուցակ բարձրագոյնս հաստատեալ Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան գրադարանի, Բագու, 1891; Գրացուցակ բարձրագոյնս հաստատեալ Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան գրադարանի (յաւելուած 1891-1894 թ. հրատարակած ցուցակների), № 2, Բագու, 1891; Գրացուցակ բարձրագոյնս հաստատեալ Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան գրադարանի (յաւելուած 1891-1894-1899 թ. հրատարակած ցուցակների), № 3, Բագու, 1900; Գրացուցակ հայերէն գրքերի Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան գրադարանի, Բագու, 1912; Հաշիւ 1913 թ. գործունէութեան Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան յանուն, էջ 7: Ի դեպ, «Ադրբեջանի կենտրոնական վիճակագրական վարչության» կողմից հրատարակված ժողովածուի մեջ նշված է, որ «1913 թ. Ադրբեջանի գրքային ֆոնդը կազմում էր 18 հազար», չարձանագրելով սակայն, որ այդ ֆոնդը պատկանել է «Մարդասիրական ընկերության» գրադարանին (տե՛ս Достижения Советского Азербайджана за 40 лет в цифрах: статистический сборник, Баку, 1960, стр. 193).

[1128] Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1903, ապրիլ, № 4, էջ 185:

[1129] Տե՛ս КИОБЧО-1854-1896 гг., стр. 9, տե՛ս նաև Ավետիսյան Մ., Բաքվի հայոց Մարդասիրական ընկերության գործունեության պատմությունից, ԲՀԱ, Երևան, 1986, № 2, էջ 130:

[1130] Տե՛ս «Արև», Բագու, 1917, մայիսի 24, № 106:

և Կարապետ Լայայան եղբայրները[1131]: Ակումբի բուֆետը տնօրինում էին Սահակյան եղբայրները[1132]: Այդտեղ հիմնականում իրենց ժամանցն են անցկացրել հայ մեծահարուստները: «Պաքուի Հայք,- գրում էր Ս. Ծոցիկյանը,- ունին գործի եռուզն կենցաղ մը: Բայց անոնք զուրաճանալու համար ալ ժամանակ կը յատկացնեն: Իրիկուննները, բոլոր թատրոններն ու ակումբները լեցնողներ ասկի չատ Հայերն են, քան թէ տարբեր ազգերու պատկանող ժողովուրդները»[1133]:

* * *

XIX դարի 70-ական թվականների սկզբներից Բաքվում սկսում է ձևավորվել ու զարգանալ տպագրական գործը: «Մարդասիրական ընկերության» նախաձեռնությամբ 1870 թ. հիմնվում է քաղաքի առաջին տպարանը (կառավարիչ՝ Նիկողայոս Հարությունի Արտեմով), որի հայկական տառերը բերվում են Թիֆլիսից՝ «Հ. Էնֆիաճյանց և ընկ.» ձուլարանից: Այդտեղ լույս են տեսել «Սոխակ Հայաստանի» երգարանի չորս պրակները (1874 թ.), «Մխիթար Գոշ», «Ողիմպիանոսի և Եզովպոսի առակները», (1878 թ.), Խորեն Աստիսանի «Հայկական աշխարհ» ամսագիրը (1877-1878 թթ.) և արժեքավոր այլ հրատարակություններ[1134]: Տպարանը ծառայում էր նաև ուսանողներին[1135]: XIX դարի վերջին գործում էր «Մալաֆյանց և ընկ.» (1874 թ.), «Ա. Ղասաբյանց» (1876 թ.), «Մարդասիրական ընկերության» տպարանի գրաշարներ Մ. Տեր-Հովհաննիսյանի ու Ա. Ղասաբյանցի տպարանը (1876 թ.)[1136]: 1890-ական թվականներին Ս. Շահրազյանի կողմից հիմնվում է նաև «Արոր» տպարանը, որտեղ տպագրությունը կատարվում էր Պետերբուրգից բերված «արամյան» տառատեսակներով[1137]: XX դարի սկզբին Բաքվում գործում էին չուրջ 18 հայապատկան տպարաններ. Գյուլբուդաղյանցի, Եղր. Ղազարյանների, Ն. Երևանցյանի, Կ. Խատիսյանի, Ս. Տեր-Հովհաննիս-

---

[1131] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 309, թ. 12:
[1132] Տե՛ս «Գործ», Թիֆլիս, 1908, հոկտեմբերի 18, № 32:
[1133] Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 289:
[1134] Տե՛ս Պատմական համառոտ տեսութիւն Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունեութեան, էջ 63, 30-31, տե՛ս նաև Լեոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը (պատմական տեսություն սկզբից մինչև XX դ.), Երևան, 1958, էջ 229:
[1135] Տե՛ս «Արարատ», 1871, Ա, էջ 336:
[1136] Տե՛ս Լեոնյան Գ., նշվ. աշխ., էջ 230, տե՛ս նաև Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն (XIV-XIX դդ. առաջին կեսը), հ. 2, Երևան, 1964, էջ 332:
[1137] Տե՛ս Լեոնյան Գ., նշվ. աշխ., էջ 230:

յանի, «Արծվաբերդ», «Արամազդ», «Բաքվի հայոց կուլտուրական միության», «Թառայանի և Միրզոյանի», «Ս. Տ. Շահրազյանի», «Լ. Դ. Միրզոյանի», «Տրուդ», «Մամուլ» և այլն[1138]*: XIX դարի վերջերից Բաքուն Թիֆլիսից հետո արդեն դառնում է Այսրկովկասի հայկական տպագրության երկրորդ խոշոր կենտրոնը: Մեծ էր Բաքվում գործող տպարանների նշանակությունը: Այդ տպարաններում մինչև 1920 թ. տպագրվել են հարյուրավոր գրքեր ու պարբերականներ:*

Բաքվում գործող մի շարք այլ տպարաններում ևս, բացի ուսուներեն գրքերից ու պարբերականներից, տպագրվել են նաև հայերեն գրքեր ու պարբերականներ: Այդպիսիներից էին՝ Մ. Վոլչկինի տպարանը XIX դարի վերջին և ՌՄԴԲԿ Բաքվի կոմիտեի ընդհատակյա «Նինա» տպարանը (ղեկավար Լ. Կեցխովելի) XX դարի սկզբին:

Գրատպության բազայի վրա Բաքվում հիմնվում էին գրավաճառանոցներ: Հայերից սեփական գրատներ ունեին Ս. Տեր-Հովհաննիսյանը, Ս. Հարությունյանը, Մ. Միրզաբեկյանցը, Գ. Սահարյանցը, Ա. Ղասաբյանցը, «Արոր» տպարանն ուներ համանուն գրատունը, գործում էր նաև «Րաֆֆի» անվամբ գրատունը և այլն[1139]*: Քաղաքում լայն ճանաչում ուներ հատկապես Մարիա Սունդուկյանցին պատկանող «Սոտրուդնիկ» գրատունը և համուն գրքային գործակալությունը*[1140]*: Նշված գրատներում վաճառվել են Բաքվում, Թիֆլիսում, ինչպես նաև Ռուսաստանի և Այսրկովկասի մյուս քաղաքներում լույս տեսած հայատառ և ռուսատառ գիտահանրամատչելի գրականություն:*

Բաքվի հայ մշակույթի մեծագույն նվաճումներից մեկը բազմաբովանդակ մամուլի և հրապարակախոսության առաջացումն էր: Բաքվի հայ մամուլի սկզբնավորումը կապվում է ազգային ինքնագիտակցության և հասարակական մտքի զարգացման հետ: XIX դարի կեսին և XX դարի սկզբներին հրատարակվում են հայկական բազմաթիվ պարբերականներ: Մինչև 1920 թ. Բաքվում հրատարակ-

---

[1138] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 53, տե՛ս նաև Ежегодник Баку и его районъ 1909, отд. IV, стр. 166-167, տե՛ս նաև **Шапшович М.**, նշվ. աշխ. (Бакинская губерния. Промышленныя предприятия г. Баку и его промыслово-заводской районъ), стр. 160-161, տե՛ս նաև Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967): Համահավաք ցանկ, կազմեց՝ Կիրակոսյան Ա., Երևան, 1970, էջ 613,

[1139] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 14-15, տե՛ս նաև Бакинский настольный календарь на 1904 г., стр. 74.

[1140] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1908, մարտի 4, № 49, տե՛ս նաև Бакинский настольный календарь на 1904 г., стр. 74, տե՛ս նաև Ежегодник Баку и его районъ 1909, отд. IV, стр. 181.

վում է ավելի քան 62 անուն հայկական պարբերական: Դրանցից են՝ «Հայկական աշխարհ» (1877-1879 թթ.), «Սոցիալիստ» (1904 թ.), «Արշալույս» (1904 թ.), «Գրոհ» (1906-1907 թթ.), «Բարի լուր» (1906-1917 թթ.), «Մոծակ» (1907 թ.), «Թռուցիկ» (1906 թ.), «Բարի լուր» (1906-1917 թթ.), «Օրեր» (1907 թ.), «Անիւ» (1908 թ.), «Շեփոր» (1908 թ.), «Նոր օրեր» (1908-1909 թթ.), «Պատանեկան գրադարան» (1908), «Առաւօտ» (1909 թ.), «Ուղի» (1909 թ.), «Զնդան» (1909 թ.), «Փարոս» (1910 թ.), «Նոր խօսք» (1911-1912 թթ.), «Մեր ուղին» (1912 թ.), «Բազուի ձայն» (1913-1914), «Գործ» (1914 թ.), «Շաւիղ» (1914 թ.), «Արեւ» (1914-1919 թթ.), «Նաւակ» (1914-1915 թթ.), «Աշխատանքի ձայն» (1918 թ.), «Աշխատանքի դրօշակ» (1917 թ.), «Առողջ կյանք» (1917 թ.), «Կյանք» (1917 թ.), «Յառաջ» (1917 թ.), «Մեր գործը» (1917 թ.), «Գործ» (1917-1918 թթ.), «Բանվոր» (1917-1918 թթ.), «Վերածնունդ» (1917-1918 թթ.), «Երկիր» (1919 թ.), «Եռանդ» (1912 թ.), «Առողջ կեանք» (1917 թ.), «Բանվոր, գինվոր և նավաստի պատգամավորների խորհրդի տեղեկատու» (1918 թ.) և այլն[1141]*:*

Հայերը խմբագիր-հրատարակիչներ են եղել նաև ռուսատառ լրագրերի: Ստ. Ղուլիչամբարյանի (Դուլիշամբարով) խմբագրությամբ 1875 թ. լույս էր տեսնում «Бакинская извѣстія» լրագիրը (հետագայում թերթի խմբագիր-հրատարակիչն էր Գ. Ենգիբարյանը[1142]*: «Нефтяное дело»-ի խմբագիրն էր Ա.ր. Պարոնյանը: Պ. Կապա-Մուրզայի, այնուհետև Գ. Ենգիբարյանի և Քր. Վերմիշյանի խմբագրությամբ լույս է տեսել «Баку» լրագիրը*[1143]*, 1908 թ. հոկտեմբերից՝ Ռուբեն Օհանջանյանի խմբագրությամբ լույս է տեսել «Листокъ объявлений» գովազդային թերթը*[1144]*, 1908 թ. մարտից՝ Ս. Շահբազյանը հրատարակել է «Бакинский вечер» երեկոյան օրաթերթը*[1145]*, Դ. Թումբյանը՝ «Бакинское новости» պարբերականը և այլն: Իրենց ուղղվածությամբ այդ պարբերականները տարաբնույթ*

[1141] Մամուլի վերաբերյալ թվական հաշվարկները կատարված են ըստ՝ Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա, հ. Ա (1794-1900), առաջաբանով և ծանոթագրություններով, կազմեց՝ Հովհ. Պետրոսյան, Երևան, 1956, հ. Բ (1900-1956), Երևան, 1957, Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967) գրքի տեղեկությունների:

[1142] Տե՛ս «Հայկական աշխարհ», Բազու, 1878, № 10-11-12, էջ 301:

[1143] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 110, տե՛ս նաև Դադայան Խ., Հայերը և Բաքուն, էջ 62:

[1144] Տե՛ս «Գործ», Թիֆլիս, 1908, հոկտեմբերի 18, № 32:

[1145] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1908, մարտի 23, № 66:

էին՝ տնտեսական, քաղաքական, բանասիրական, մանկավարժական, պետական և այլն: Եվ չնայած սահմանափակումներին՝ Բաքվի հայ հրապարակախոսությունը սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքին վերաբերող բովանդակալից հոդվածներով հսկայական դեր կատարեց ազգային-մտավոր և հասարակական-քաղաքական մտքի զարգացման գործում:

* * *

Բաքվի և Ապշերոնյան թերակղզու մյուս բնակավայրերի կառուցապատման ուղղությամբ և քաղաքաշինության ոլորտում մեծ դեր ունեցան հատկապես հայ ճարտարապետներն ու շինարարները, որոնց ջանքերով կառուցվեցին արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքեր և եկեղեցիներ: Հատկապես նշանակալի է պետերբուրգյան կամ մոսկովյան նշանավոր դպրոցների ճարտարապետներ Գ. Տեր-Միքելյանի, Վ. Սարգսյանի, Ն. Բաևի, Հ. Տեր-Հովհաննիսյանցի (Քաջաղնունի), Միսակ Տեր-Գրիգորյանի, Ա. Կանդինյան, Հ. Տեր-Օհանյանի և Ց. Ազալյանի ավանդը[1146]: 1911-1918 թթ. քաղաքի գլխավոր ճարտարապետն էր Ն. Բաևը, իսկ ճարտարապետության բաժնում հիմնականում աշխատում էին հայ ճարտարագետները՝ Լևոն Լալազարյանց, Նիկ. Ծատուրյան, Ստեփան Ներսիսյան, Սեդրակ Տեր-Զաքարյան և ուրիշներ[1147]:

Ի դեպ, քաղաքի կառուցապատման և նախագծման աշխատանքներում իսկապես բացակայում էր կովկասյան թաթարների մասնակցությունը: Բանն այն էր, որ վերջիններիս շրջանում, գոյություն չուներ տեխնիկական և ինժեներական մտավորականություն: Իրողություն, որ չի կարողացել կոծկել Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Հեյդար Ալիևը՝ «Սովետական Ադրբեջան» դրբում: «Մինչև հեղափոխությունը (իմա՛ 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումը - Գ. Ս.),- դրում է նա,- Ադրբեջանում կար ադրբեջանցի մեկ ճարտարապետ»[1148]: Թեև Հ. Ալիևն իր կոդմից անուղղակիորեն վկայում է, որ XIX դարում և XX դարի սկզբներին Բաքվի քաղաքաշինության ու կառուցապատման հիմքը դրել և պարզացրել են են հայ և ռուս ճարտարապետները, սակայն ադրբե-

---

[1146] Տե՛ս Տիգրանյան Է., Հայ ճարտարապետների գործունեությունը Անդրկովկասում, էջ 34-45, 210-215, 236-237, տե՛ս նաև նույնի՝ Գաբրիել Տեր-Միքելյան (կյանքն ու գործունեությունը), Երևան, 1981, տե՛ս նաև նույնի՝ Գաբրիել Տեր-Միքելյան, Երևան, 1981, տե՛ս նաև **Арутюнян В.**, Каменная летопись армянского народа, Ереван, 1965, стр. 144-147.

[1147] Տե՛ս КК на 1900 г., стр. 175, տե՛ս նաև КК на 1916 г., стр. 141-142:

[1148] Ալիև Հ., Սովետական Ադրբեջան, Երևան, 1982, էջ 128:

ջանական պատմագրության կեղծարարության գործնական նպատակադրված ձգտում է Արևելյան Այսրկովկասում «հնացված» ներկայացնել «Ադրբեջան» և «ադրբեջանցի» արհեստածին տերմիններ:

Հայ ճարտարապետների նախագծերով՝ ազգային մշակույթի լավագույն ավանդույթներով, դասական և գոթական ոճերով կառուցված բնակելի շենքերը, հասարակական ու մշակութային շինությունները իրենց գեղարվեստական և գեղագիտական բարձր ճաշակով եզակի կառույցներ են Բաքվի ճարտարապետական համայնապատկերում: Դրանք կանգուն են ցարդ և զարդարում են ներկայիս Բաքուն: Այդ շինություններից են. Բաքվի հասարակական հավաքույթի ամառային ակումբը (ճարտ.՝ Գ. Տեր-Միքելյան, դահլիճի ձևավորման աշխատանքներն ավարտին է հասցրել ճարտ. Ն. Բաևը: Այժմ՝ Մ. Մագոմաևի անվան ադրբեջանական պետական ֆիլհարմոնիա), վիրաբուժական հիվանդանոցը (ճարտ.՝ Ն. Բաև), Քաղաքային Դումայի շենքի (ճարտ.՝ Ի. Դոսլավսկի) աշտարակային հատվածը (ճարտ.՝ Գ. Տեր-Միքելյան), Թիֆլիսի առևտրական բանկի Բաքվի բաժանմունքի շենքը (այժմ՝ «Մանկական աշխարհ» հանրախանութ, ճարտ.՝ Գ. Տեր-Միքելյան և Ա. Կալգին), Առևտրի ուսումնարանը (այժմ՝ Ադրբեջանի մանկավարժական ինստիտուտ, ճարտ.՝ Գ. Տեր-Միքելյան), Պետական դրամատուն բնակելի շենքը (ճարտ.՝ Գ. Տեր-Միքելյան), Պետական դրամատուն վարչական շենքը (ճարտ.՝ Գ. Տեր-Միքելյան), Ցիզիոթերապևտիկ ինստիտուտը (Փարիզում արժանացել է «Մեծ մրցանակի» և ոսկե մեդալի, ճարտ.՝ Գ. Տեր-Միքելյան), Մարդաքյանում նավթագործների առողջարանային համալառույցը (ճարտ.՝ Վ. Սարգսյան), «Իսմայիլի» շենքի ճակատային մասը և կենտրոնական սրահները (ճարտ.՝ Վ. Սարգսյան), Արական գիմնազիան (ճարտ.՝ Վ. Սարգսյան), Հյուսիսային դրամատունը (ճարտ.՝ Ն. Բաև), Բաքվի պուրակին կից լողարանը (ճարտ.՝ Ն. Բաև), երկաթգծի Սաբունչի կայարանի շենքը (ճարտ.՝ Ն. Բաև): Վերջինիս նախագծով կառուցվել են մի շարք դպրոցներ, Սալիմովների և Շերեմետևի և այլոց բնակելի տները: Ճ Աղալյանի նախագծով կառուցվել են գիմնազիա, ծննդատուն և այլն[1149]:

Բաքվի հայ բնակիչները սիրում էին իրենց քաղաքը և շատ դեպքերում անհրաժեշտ ու համարձակ քայլերի էին դիմում նրա բարեկեցության, մաքրության և հատկապես առողջապահության ու կենսաապահովման բարում հարցերը լուծելիս: Այսպես՝ հայտնի է,

---

[1149] Տե՛ս Տիգրանյան Է., Հայ ճարտարապետների գործունեությունը Անդրկովկասում, էջ 34-45, 210-215, 236-237, տե՛ս նաև նույնի՝ Գաբրիել Տեր-Միքելյան, էջ 32-64:

որ Բաքուն հնուց ի վեր ունեցել է խմելու ջրի խնդիր. «Ամբողջ քաղաքը ջուրէ ստանում բազմաթիւ ջրհորներից և այդ ջրերի քիմիական վերլուծութիւնը ցոյց է տուել, որ առողջարար ու անվնաս չեն նրանք»[1150]: Խմելու ջրի հարցով, մասնավորապես Կուր գետի քաղցրահամ ջրերը ջրանցքով քաղաք հասցնելու հարցը քանիցս քննարկել էր Քաղաքային Դուման, սակայն նյութական միջոցների անբավարարության պատճառով այդ ծրագիրը չի իրականացվել: Ջրանցքի վոխարեն քաղաքում կառուցվել է ծովի ջուրը քաղցրացնելու գործարան: Ջուրն այդտեղ մաքրվել է հատուկ չոգեկաթսաններում, ապա սառեցվել «Կուլսի աշտարակի» շրջակայքում կառուցված պահեստարաններում, որտեղից մաքուր ջուրը խողովակներով հասցվել է քաղաքի տարբեր վողոցներ[1151], և վաճառվել դույլը 2 կոպեկ[1152]: «Ջրի բնական աղբիւրներէ զուրկ է Պաքու,- գրում էր Ս. Մոցիկյանը,- ժողովրդին մէկ մասը վարժուած է տեղւոյն հորերու քիչ մը աղի և ծանր ջրերը խմել, գործածել: Քաղաքին մէջ, ընդհանրապէս, կը սպառի Կասպից ծովէն առնուած ու չոգիացած ջուրը, որ թէև քիչ մը անախորժ համ ու հոտ ունի, բայց թեթև է, և անվնաս»[1153]:

Բաքվում քաղցրահամ և մաքուր ջուր ունենալու խնդրին վերջնական լուծում է տալիս առաջին կարգի վաճառական Մ. Մ. Սարականյանը, որը Կուր գետի քաղցրահամ ջրերը քաղաք հասցնելու նպատակով իր միջոցներով գետի գետաբերանում կառուցում է խոշոր ջրամբարներ, քաղաքի զանազան մասերում՝ Բիլովից մինչև «Սև» և «Սպիտակ» քաղաք, անցկացնում գետնափոր խողովակներ, վարձում նավահանգիստ և կապալով ձեռք բերած նավերով մաքուր ջուր մատակարարում քաղաքին[1154]:

Փաստերը ցույց են տալիս, որ Բաքվի հայությունը երբեք անմասն չէր մնում համահայկական ձեռնարկումներից, հարկ եղած դեպքում օգնության ձեռք էր մեկնում կարիքի մեջ հայտնված իր ազգակիցներին[1155]: Բաքվի հայերի՝ Մկրտիչ Խրիմյանի՝ Ամենայն

[1150] «Արօր»-ի պատկերազարդ օրացոյց 1894 թ., էջ 36:
[1151] Տե՛ս նույն տեղում:
[1152] Տե՛ս Большая Энциклопедия. Словарь общедоступныхъ сведений по всемъ отраслямъ знания, т. II, стр. 460.
[1153] Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 283:
[1154] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1912, հոկտեմբերի 31, № 242:
[1155] 1878 թ. Բաքվի հայերն իրենց նյութական մեծագույն օժանդակությունն են ցուցաբերում Իգդիրի՝ բշվառության մեջ գտնվող բնակիչներին (տե՛ս «Հայկական աշխարհ», Բագու, 1878, № 1, էջ 94): Բաքվի, Շամախիի, Ղուբայի և Սալիան ավանի հայերը նյութական մեծ աջակցություն են ցուցաբերում նաև 1879 թ. վասպուրա-

Հայոց կաթողիկոս ընտրվելու առիթով հղած շնորհավորագրում ասվում է. «Բազուայ հայ հասարակութիւնը թէև կեանքի ալիքների յորձանքով հեռացած է հայրենիքի կենդրոնից, բայց նա չէ մոռացել Ձեր սիրած Մասիսը և էջմիածինը և պատրաստ է որդիական հնազանդութեամբ լսել Ձեր ձայնին, իւրաքանչիւր անգամ երբ Դուք պահանջես նորանից կատարել իւր որդիական պարտքը դէպի ազգը, Ս. Եկեղեցին և Ձեզ, սիրեցեալ ՀԱՅՐԻԿ»[1156]:

Բաքվի հայերը մշտապես հանգանակութիւններ են կազմակերպել աղետյալների, սովյալների և նյութական վատ պայմանների մեջ հայտնված վանքերի, եկեղեցիների և դպրոցների օգտին: Դրա խոսուն վկայութիւնն է 1880 թ. Երուսաղեմի Սբ. Հակոբ վանքի պարտքերը վճարելու նպատակով Հայոց Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի փետրվարի 16-ի Շամախու հայոց թեմի կոնսիստորիային հղած կոնդակը, որում Վեհափառը, նկարագրելով վանքի անմխիթար վիճակը, հայցում էր թեմի հայութեան օգնութիւնը[1157]: Կոնդակում ասվում էր. «Հրամանագրել վիճակային կոնսիստորիային... ի գործ դնել օգնել ժողովարար Երեմիայ եպիսկոպոսի առ ի արդիւնաւորութեամբ ժողովելոյ զկամաւոր ասուրս յօգուտ վանից սրբոյն Յակովբեանց, որ է պարծանք ազգի մերոց, իսկ Շամախւոյ կոնսիստորիային պատուիրել ի Բաքու, ի Շամախի, ի Դարբանդ, ի Ղուբայ քաղաքս եւ շրջակայ գիւղօրացս, նոյնպես ցուցանել զգործակցութիւն...»[1158]:

Բաքվի հայութիւնը, անմասն չմնալով հայրենանվեր այդ գործից, հանգանակած գումարներով օգնութեան ձեռք մեկնեց նեղութեան մեջ հայտնված վանքին: Բաքվի հայութիւնը հետագայում ևս նյութական միջոցներ տրամադրեց Սբ. Հակոբ վանքին: Իր կատ-

---

կանցի, ալաշկերտցի և բայազետցի հայ սովյալների օգտին կազմակերպված հանգանակությանը (տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1880, մարտի 14, № 42, տե՛ս նաև մարտի 28, № 52, տե՛ս նաև մայիսի 8, № 71, տե՛ս նաև հունիսի 5, 1880, № 93): Բաքվի նահանգի հայերը «Մարդասիրական ընկերության» միջոցով նյութական իրենց աջակցությունն են ցուցաբերում նաև Ջեյրուն գյուղաքաղաքի հայությանը 1884, ապա 1887 թթ. տեղի ունեցած հրդեհների վնասները վերացնելու նպատակով: 10000 ռ. գումար է հանգանակվում 1899 թ. դեկտեմբերի 19-ին Ախալքալաքի գավառում տեղի ունեցած ահեղ երկրաշարժի հետևանքով վնասված 13 հայկական գյուղերի վերականգնման համար (տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 11-12, էջ 1487, 1489) և այլն:

[1156] Տէր Մովսիսեանց Մ., Ուղեւորութիւն Տ.Տ. Մկրտիչ Վեհ. կաթուղիկոսի Ամենայն Հայոց Երուսաղէմից - Էջմիածին, Ս. Էջմիածին, 1894, էջ 269:

[1157] Տե՛ս «Արարատ», 1880, Գ, էջ 112:

[1158] «Արարատ», 1880, Դ, էջ 180:

կով՝ «Յօգուտ պարտուց սրբոյն Յակովբ Վանից Հայոց Երուսաղեմի» 100 ռ. է տրամադրում Բաքվի Սր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ավ. քհն. Թադևոս Բուդաղյանը[1159]: Բաքվի հայ հասարակությունը 1900 թ. հանգանակություն է կազմակերպում նաև հոգուտ Սևանա վանքի: Նվիրատուների շարքում են եղել բարերարներ Մովսես, Եղիա և Ենովք Բուդաղյան եղբայրները, Միք. Արամյանը, Պողոս և Արշակ Ղուկասյան եղբայրները, Թումայան եղբայրները, Համբարձում Մելիքյանը, Կարապետ աղա Լալայանը և ուրիշներ[1160]: Անդրադառնալով Բաքվի հայության բարեգործական ձեռնարկումներին՝ Ալ. Շիրվանզադեն գրել է. «Բագուի հասարակությունը, պէտք է խոստովանել, որ ժլատ չէ, նա առատաձեռն է դէպի ամենայն բարեգործական նպատակ, ինչպէս նա այդ քանիցս անգամ ցոյց է տուել փաստերով: Բաւական է յիշել այն հազարները, որ նա նուիրեց յօգուտ Վասպուրականի սովյալների, այն հազարները, որ նա տուել է իր «Մարդասիրական» ընկերութեան և այլն»[1161]: Բաքվի հայությունը դրամական նվիրատվություններով մշտապես օժանդակել է նաև «Հայ նպաստամատույց ընկերությանը» (նախագահ՝ Դավիթ Ավան-Յուզբաչյան)[1162]:

* * *

Բաքվի հայկական համայնքը հայության այն օջախներից էր, որ բացառիկ սերտ կապերի մեջ էր ողջ կովկասահայության, Արևելյան, Արևմտյան Հայաստանի, ինչպես նաև Թուրքիայի տարբեր վայրերի հայկական շրջանների հետ: Այդ պատճառով հայ ժողովրդին, կամ նրա առանձին հատվածներին հուզող հարցերը, ազգային-ազատագրական շարժումներն անմիջական արձագանք էին գտնում Բաքվի հայության շրջանակներում, մտահոգում նրան: Արևմտյան Հայաստանից հասած գույժերը, ցարական կառավարության հայահալած քաղաքականությունը Բաքվի հայ երիտասարդության նույնպես մղում էին ազատագրական պայքարի ասպարեզ. կազմակերպվում էին զինական ու մարտական խմբեր՝ Արևմտյան Հայաստան անցնելու համար:

Տոգորված ազգային հայրենասիրական վեհ զգացումներով ու գաղափարներով՝ Բաքվում XIX դարի վերջերին սկիզբ է առնում

[1159] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1885, հուլիսի 21, № 3, էջ 38:
[1160] Տե՛ս «Արարատ», 1900, Ե, էջ 276:
[1161] Շիրվանզադե Ալ., Նամակ Բագուից, «Մշակ», Թիֆլիս, 1880, հոկտեմբերի 31, № 192:
[1162] Տե՛ս Տեղեկագիր հայ նպաստամատոյց ընկերութեան 1919 թ., V տարի: Հայաստանի վերաշինութեան յանձնաժողովի (1915-1919 թթ.), Թիֆլիս, 1920, էջ 57:

արևմտահայության ազատագրական պայքարին օժանդակելուն նվիրված շարժում: Դրան էր նպաստում այն հանգամանքը, որ, Այսրկովկասի հայաբնակ այլ վայրերի հետ համեմատած, ոչ մի տեղ այնքան հայդուկներ և ազգային-ազատագրական շարժման գործիչներ չեն ապրել, որքան Բաքվում. Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան (Նիկոլ Դուման)[1163], Մկրտիչ Սահակյան (Արրո), Համբարձում Աղաջանյան (Կարո), Գրիգոր Միրզաբեկյան (Մածուն Խեչո), Վահան Փափազյան (Կոմս), Աբրահամ Դաստակյան, Սարգիս Օհանջանյան (Ջարհատ), Գաբրիել Կաֆյան, Փարամազ (Մատթեոս Սարգիսյան), Տիգրան Արաջյան (Կայծակ Առաքել), կյումուշխանեցի Ավո, Լևոն Թադևոսյան (Պապաշա), Սիմոն Զավարյան, Բրիստափոր Միքայելյան, Գարեգին Փաստրմաճյան (Արմեն Գարո), Հոնան Դավթյան և շատ ուրիշներ:

Սուլթան Աբդուլ Համիդի կողմից 1894-1896 թթ. կազմակերպած հայկական ջարդերը մեծ ընդվզում առաջ բերեցին նաև Բաքվի հայ երիտասարդության շրջանում, որոնցից շատերը պատրաստակամ մեկնեցին Արևմտյան Հայաստան՝ օգնելու հայրենակիցներին:

Բաքվի հայությունն անմոռաց չմնաց Խանասորի 1897 թ. ղինված արշավանքի նախապատրաստական աշխատանքներից, որի ներշնչողն էր 1897 թ. ապրիլին Բաքու եկած Նիկոլ Դումանը: Մարտական ուժերի կազմակերպման գործում իրենց աջակցությունն ու մասնակցությունն են ցուցաբերել Թադևոս Ամիրյանը[1164], Գրիգոր և Համբարձում Աղաջանյանները, Մկրտիչ Սուլթանյանը և Բաղդասար Միրզոյանը (Կրետացի)[1165]: Նրանցից նահատակվեցին Մկրտիչն ու Բաղդասարը[1166]:

Ոգեշնչված Արևմտյան Հայաստանի ազատագրության գաղափարով, սևքարեցի խմբապետ, Խանասորի արշավանքի մասնակից

[1163] Նիկոլ Դումանը 1882 թ. ավարտելով Շուշու թեմական դպրոցը, երեք տարի պաշտոնավորել է Արցախի թեմի կոնսիստորիայում: Այնուհետև ուսուցչություն է արել Ղուբայի հայոց դպրոցում: Դեռևս Ղուբայում եղած ժամանակ Դումանը տարվում է հեղափոխական գրականությամբ, կարդալով Մկրտիչ Փորթուգալյանի հրատարակած «Արմենիա»-յի համարները: Ղուբայից Դումանն անցել է Իրան և աշխատել Թավրիզի և Սալմաստի վարժարաններում, ապա 1894-1896 թթ. մասնակցել Դերիկի կռիվներին: Բաքվում ապրած տարիներին Ն. Դումանն իր կրտսեր եղբոր՝ Պողոսի (Պավլի Բեկ) հետ աշխատել է Գր. Թումայանի նավթահանքում (տե՛ս «Արեւ», Բագու, 1914, սեպտեմբերի 28, № 143, տե՛ս նաև Գիւլխանդանեան Ա., Յեղափոխական դէմքեր, «Հայրենիք», Պօսթըն, 1937, ԺԵ տարի, հունվար, № 3, էջ 146:

[1164] Տե՛ս Աւո, Խանասորի արշաւախումբը, Պեյրութ, 1986, էջ 90:

[1165] Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Յեղափոխական դէմքեր, «Հայրենիք», Բոստոն, 1936, ԺԴ տարի, մարտ, № 5, էջ 117:

[1166] Տե՛ս Տասնապետեան Հ., Հ.Յ.Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. ընդհ. ժողով (1890-1924), էջ 222:

Շաչո Սոսոյանի գլխավորությամբ, 1898 թ. ապրիլին Բաքվից՝ Ատրպատականի վրայով, 15 հոգանոց գինյալ խումբ է անցնում Վան: Սակայն, ճանապարհին երեք օր տևող ունեցած ընդհարումների պատճառով, խմբի երեք գինվորները զոհվում են, իսկ մնացածը հասնում են Վան[1167]: Այդ քայլին հետևեց նաև Պետերբուրգի հանալսարանի ուսանող, ՍԴ Հնչակյան կուսակցության անդամ Մարտիրոս Սարուխանյանը (Մարտիկ), որը 1890-ական թվականների կեսերին Բաքվում ստեղծում է ջոկատ՝ Արաքսի մյուս ափն անցնելու և արևմտահայության ազգային-ազատագրական պայքարին սատար կանգնելու համար: Ջոկատին, որի անդամները հիմնականում արցախահայ հրիտասարդներ էին, անդամագրվել էր նաև գրող և հրապարակախոս Միսակ Տեր-Դանիելյանը (Արամայիս)[1168]: Ջոկատը հերոսաբար մարտնչում է Արաքսի հովտում, Վանում, Արտոսի բարձունքներում, Շատախում, Մոկաց լեռներում և վերադառնում Բաքու[1169]:

Բաքվի բովանդակ հայությունը անմասն չմնաց նաև Սասունի 1904 թ. ինքնապաշտպանությանն աջակցելուց[1170]: Վտանգի տակ գտնվող իրենց հղեայրներին օգնելու ձգտումն այնքան մեծ էր, որ նրանք ոչ մի բանի առաջ կանգ չէին առնում: Սասունին զինական օգնություն հասցնելու նպատակով մեծ աշխատանք ծավալվեց Բաքվում: Մի քանի ճանապարհներով զենք և մարտական խմբեր էին ուղարկվում Սասուն: Առանձին դեպքերում զենքի փոխադրումը Իրան, իսկ այնտեղից՝ Արևմտյան Հայաստան, կատարվում էր Բաքվով:

Սասունին զինական և տարաբնույթ օգնություն ցույց տալու նախաձեռնողն ու գլխավորողը ՀՅԴ Բաքվի «Ռևկանապատ» կենտրոնական կոմիտեն էր, որն հենց սկզբում կարևոր նշանակություն էր տալիս ազատագրական շարժումների, հատկապես զենք-վարների ու մասնակիցների ռազմական նախապատրաստությանը: Կենտրոնական կոմիտեի գլխավոր խնդիրներից էր մարտական ու զինատար խմբերի պատրաստումը, որոնք կուսակցության կոչով պետք է գնային Կարս ու սահմանակից այլ վայրեր՝ խմբեր կազմե-

---

[1167] Տե՛ս նույն տեղում, էջ 58, 233:

[1168] Տե՛ս Արամայիս (Միսակ Տեր-Դանիելյան), Ղարաբաղի տագնապը (Պատմության համար): Օրագրություն, առաջաբանը՝ Հ. Աբրահամյանի և Ռ. Գրիգորյանի, Երևան, 1993, էջ 4:

[1169] Տե՛ս նույն տեղում:

[1170] Մանրամասն տե՛ս Ստեփանյան Գ., Բաքվի հայությունը և Սասունի 1904 թ. հերոսամարտը, ԼՀԳ., Երևան, 2008, № 2, էջ 4-5:

լու և Սասուն մեկնելու համար: Ռազմական գործին մոտիկից ծանոթանալու նպատակով, դաշնակցական խնչոյի գլխավորությամբ, խիստ գաղտնի պայմաններում՝ Բաքվից դուրս «Գայլի դրունք» կոչված վայրում, բայց դաշտում կազմակերպվում էին այդ խմբերի զինավարժությունները[1171]: Բաքվում ստեղծվել էին նաև գենքի ու զինամթերքի պահեստներ ու արհեստանոցներ[1172]: Բաքվի հայերն իրենց աջակցությունը ցուցաբերեցին նաև նյութապես[1173]: Հայրենանվեր այդ գործում անմասն չմնացին Բաքվի հայ կանայք: Նրանցից ստեղծված խմբերը Երկիր գնացող հայդուկների համար պատրաստում էին ձեռագործներ և այլն[1174]: Արևմտյան Հայաստան մեկնող հայդուկային ու զինատար խմբերում ներգրավվել էին Բաքվի հասարակական գրեթե բոլոր շերտերի ներկայացուցիչները: Մ. Վարանդյանը հետևյալ բնութագիրն է տվել Բաքվի հայերի՝ Սասունին օգնություն փութալու չարժմանը. «Նաւթաշխարհի մայրաքաղաքը 1903-1914 թուականներուն թատերարեմ է հետաքրքրական ու պէսպէս աշխատանքներու... Բալախանիի նաւթահանքերը, Սեւ Քաղաքը, բուն իսկ Բագուն ցանցապատած են Դաշնակցութեան բջիջներով: Բազմաթիւ են ծանօթ ու անծանօթ հայդուկները և մանաւանդ հայդուկուհեան երիտասարդ թեկնածուները...Ռազմամթերք և պայթուցիկ նիւթեր կը փոխադրէին ու կամբարէին Բագուի մէջ՝ Թուրքահայաստանի և Կովկասի կարիքներուն համար»[1175]: 1904 թ. մարտին Սասուն մեկնող Թորգոմի և որսորդ Գևորգի 61 հոգուց բաղկացած «Որսկան» հայդուկային երկրորդ չոկատի կազմում ընդգրկվել էր նաև Բաքվի հայ հարուստ ընտանիքներից մեկի՝ Հայրապետ Քալանթարյանի որդին՝ ՀՅԴ անդամ Լևոն Քալանթարյանը[1176]:

Բաքվում, այդ օրերին, Սասունի ինքնապաշտպաններին օգնության հասնելու գործի գլխավոր կազմակերպիչն էր անվհեր հայդուկ Նիկոլ Դումանը, որին և հանձնարարվում է դաշնակցական խնչոյի և փորձված մի քանի զինվորների հետ մեկնել Սասուն: Նի-

---

[1171] Տե՛ս Պատմագրություն Հայ Հեղափոխական Դաշնակցության (քառահատոր շարք), ընդհրված Հ. Յ. Դ. 113 ամյակին, հ. Բ, Երևան, 2003, էջ 111:

[1172] Գիւլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1924, Գ տարի, նոյեմբեր, № 1, էջ 124-125:

[1173] Տե՛ս նույն տեղում, էջ 125-126:

[1174] Տե՛ս Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992, էջ 51:

[1175] Նույն տեղում, էջ 237:

[1176] Գիւլխանդանեան Ա., Բագուի մեր գործիչները, «Հայրենիք», Պօսթըն, 1936, ԺԴ տարի, հունվար, № 3, էջ 144:

կոլ Դումանին Սասուն ուղարկելը բնավ պատահական չէր: Դաշնակցությունը համոզված էր, որ Դումանի հեղինակությունն ու ռազմավարական տաղանդը չատ օգտակար կլինեին Սասունում: Մ. Վարանդյանի վկայությամբ՝ «Կը դրկէին Նիկոլ Դումանը մանաւանդ այն նկատումով՝ որ Սասնոյ բոլոր մեծ դէմքերը, Հրայրէն մինչև Անդրանիկ, ջերմ, անվերապահ յարգանք կը տածէին դէպի Գարահիսարի, Բօզազքեասանի և Խանասորի կռիւներուն հերոսը, դէպի անոր ռազմագիտական ու վարչական տաղանդը, այլ և քաջութիւնն ու վճռականութիւնը»[1177]: Նիկոլ Դումանի խմբին է միանում նաև Թաշչըլյանի բանվորական հիվանդանոցի գլխավոր վարիչ Հակոբ Զավրիևը (Զավրյան)[1178]:

1904 թ. հուլիսի սկզբներին Նիկոլ Դումանի խումբը Բաքվից կարողանում է Սալմաստի գծով անցնել Իրան, որտեղից Վասպուրականով պետք է հասներ Սասուն[1179]: Իրանում խմբին են միանում նաև Գրիգոր Վարդանյանը (Սարգիս Բարսեղյան «Փոքրիկ Սարգիս»), Ռուբեն Տեր-Մինասյանը, հայդուկներ՝ Դարալագյազցի Խեչոն (Սարքազ), Ասատուրը, Առաքելը, Չամախեցի Սերոբը, Թադևոսը, Խոյեցի Խեչոն, Գրիշան, Սուրենը, Ավդոն և Զալփափախը: Խումբը բաղկացած էր 17 հոգուց[1180]: Խումբը կոտուր-Ռազի-Սալախանե կետերով փորձից անցնել պարսկա-թուրքական սահմանը և հասնել Վարագա լեռ: Առաջին ընդհարումները թուրքական կանոնավոր զորքերի և քրդական Մազրիկ և Թակուռ աշիրեթների հետ տեղի ունեցան Ռազիի մոտ: Խմբին, սակայն, չհաջողվեց ճեղքել պաշտպանության շղթան, և երկու զոհ տալուց հետո վերադարձավ Սալմաստ[1181]:

Չնայած սասունցիների համառ դիմադրությանը, այդուհանդերձ, թուրքական մեծաքանակ զորքերին հաջողվում է ճնշել հայ ժողովրդի մի բեկորի գոյամարտը: Ինքնապաշտպանական մարտերի ղեկավարներից Անդրանիկ Օզանյանը, ցրելով իր խումբը, Պարսկաստանով անցնում է Բաքու, որտեղից էլ մտադրվել էր գնալ Թիֆլիս, Վիեննա և ապա Ժնև: Անդրանիկը Բաքու հկավ բժիշկ Հ. Տեր-Ստեփանյանի հետ[1182]: Քաջարի և մեծահամբավ հայդուկը նպատակ էր

[1177] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 242-243:
[1178] Գիւլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1924, Գ տարի, նոյեմբեր, № 1, էջ 123-124:
[1179] Տե՛ս նույն տեղում:
[1180] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., հ. Ա, էջ 279, 281, 287:
[1181] Տե՛ս նույն տեղում, էջ 295:
[1182] Տե՛ս Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Երևան, 1996, էջ 228-229:

դրել մոտիկից ծանոթանալու Բաքվի հայ բնակչության կյանքին, հայ բանվորական միջավայրին և հատկապես ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեի կազմակերպչական աշխատանքներին[1183]: Անդրանիկը Բաքվում հանգրվանել էր Նիկոլ Դումանի տանը, ծպտյալ՝ Մարտիրոս անվան տակ: «1904 թուի վերջերին էր,- գրում է Ա. Գյուլխանդանյանն իր հուշերում,- որ Անդրանիկը իր մի երկու զինակիցներով Պարսկաստանից նկատ. Բագու եւ մեր չրջանում մնաց մօտ մի ամիս դուցէ եւ աւելի: Մի համեստ, զգաստ եւ խոհուն դիմուր էր նա, մեծ ակնածութեամբ վերաբերուում էր դէպի Նիկոլ Դումանը, որի մօտ էլ ապրում էր նա»[1184]:

1905 թ. սկզբներին ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն ձեռնարկեց մի նոր խմբի մեկնումը Արեւմտյան Հայաստան: Այս անգամ նախաձեռնողը բժիշկ Հակոբ Զավրյանն էր, որը Սասուն անցնելու անհաջող փորձից հետո բնավ չէր հրաժարվել իր մտադրությունից: Օգտագործելով Պետերբուրգում ունեցած իր կապերը՝ նա կարողանում է ռուսական կառավարության թույլտվությամբ բժշկական մի խումբ կազմել, որը տարագիրներին օգնելու նպատակով Մուշ քաղաքում պետք է հիվանդանոց բացեր[1185]: Այդ նպատակով Հ. Զավրյանը նաև որոշակի դրամ էր հայթայթել: ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն, Հ. Զավրյանի ծրագիրը քաջալերելով, օգտագործում է այդ առիթը զինվորական որոշ ուժեր անցկացնելու «Երկիր»: Խմբին են միանում նաև Թադեոս Ամիրյանը (Գիժ Թաթոս), Մարգար Ժամհարյանը, Սմբատ Մարգարյանը և ռուսախոս գերմանացի, սոցիալ-հեղափոխական Վոլոդյա Զեյցը[1186]: 1905 թ. սկզբներին խումբը Թիֆլիսից տնդ է հասնում Մուշ, որտեղ, սակայն, թուրքական կառավարությունը, խմբի համար արհեստական խոչընդոտներ ստեղծելով, արգելից նրա գործունեությունը: Անգամ արեւմտահայերին թույլ չէին տալիս բժշկական օգնություն ստանալու համար մոտենալ բժշկին. «Թոյլ չէին տար հայերուն, որ մօտենային բժշկին, նոյնիսկ բժշկուելու համար. ով որ անոր քով երթար,

---

[1183] Տե՛ս նույն տեղում, էջ 229:
[1184] Գիւլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1924, Գ տարի, նոյեմբեր, № 1, էջ 124:
[1185] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., հ. Ա, էջ 355:
[1186] Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1924, նոյեմբեր, Գ տարի, № 1, էջ 128:

պիտի բանտարկուէր»[1187]: Շատ չանցած, թուրքական կառավարութեան պահանջով, խումբը հեռացավ Էրզրում, իսկ այդտեղից մի քանի ամիս անց վերադարձավ Կովկաս:

Այսպիսով՝ անհաջողութեան մատնվեց արևմտահայութեանը աջակից լինելու՝ Բաքվի հայերի մի վերջին փորձը ևս: Հետագա ժամանակաշրջանում սպասվող իրադարձությունները Բաքվի հայ ազգային քաղաքական ուժերին ստիպեցին մեկընդմիշտ կենտրոնանալ տեղի հայութեանը հուզող ազգային-քաղաքական խնդիրների վրա:

* * *

Մատենագրական աղբյուրները վկայում են, որ Բաքու քաղաքը եղել է Շամախու հայոց թեմի գրչօջախներից մեկը: Դրա խոսուն վկաներն են այդտեղ 1779 թ. գրիչ Հովհաննես քահանայի ընդօրինակած 130 թերթ «Ժողովածուն» (բվնդ. Մեսրոպայ Վայոցձորեցւոյ Պատմութիւն Մեծին Ներսիսի: Ներբողեանք ի վերայ Մեծին Ներսիսի (Աս. Բաղիշեցի, Յովհաննէս գրիչ)[1188] և գրիչ Միրզա Միրզաբեկյանցի 1876 թ. ընդօրինակած 58 թերթ «Ժողովածուն» (ստացող՝ Մկրտիչ Խաչատուրեանց: Բվնդ. Ախտարք: Գուշակութիւնք: Դեղագիրք: Համայագիր)[1189]:

Նախքան հայկական դպրոցների բացումը՝ Բաքվի հայ երեխաներն իրենց ուսումը ստանում էին արքունի ուսումնարաններում: Ցարական արքունիքի կողմից 1829 թ. օգոստոսի 2-ին հրապարակված «Անդրկովկասյան ուսումնարանների կանոնադրության» հիման վրա ուսումնարաններ բացվեցին նաև Շամախում, Ղուբայում, Բաքվում և Դերբենդում: Կանոնադրության համաձայն՝ յուրաքանչյուր ուսումնարան կառավարում էին այդ նպատակով ստեղծված տնօրինություննները: Շամախու-Դերբենդի տնօրինությունը, որը գտնվում էր Թիֆլիսում, ընդգրկում էր Շուշի, Նուխի, Շամախի և Բաքու քաղաքները[1190]: 1832 թ. հունվարի 17-ին գավառային ուսումնարան է բացվում Բաքու քաղաքում[1191]: 1837 թ. հոկտեմբերի 26-ի դրությամբ ուսումնարանի 51 աշակերտից հայեր էին

[1187] Տե՛ս Ռոսքէն, նշվ. աշխ., հ. Ա, էջ 356:

[1188] Տե՛ս Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, կազմեցին Եգանյան Օ., Զեյթունյան Ա., Ալեքսյան Փ., խմբ.՝ Խաչիկյան Լ., Մնացականյանի Ա., հ. Ա, Երևան, 1965, էջ 1097:

[1189] Տե՛ս նույն տեղում, հ. Բ, Երևան, 1970, էջ 1083:

[1190] Տե՛ս Սաֆրոնյան Մ., Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 40:

[1191] Տե՛ս նույն տեղում, էջ 47-48, 67:

26-ը, ռուսներ՝ 15-ը, կովկասյան թաթարներ՝ 10-ը[1192]: 1858 թ. դրությամբ ուսումնարանում 61 սովորողներից հայեր էին 46-ը[1193]:

Ազգային դպրոցի, աճող սերնդի կրթության և լուսավորության գործը Բաքվի հայ բնակչության առաջնահերթ և հրատապ խնդիրն էր: Մահմեդական հոծ պանգվածով շրջապատված հայ բնակչության համար ուծացումից խուսափելու և ազգային ինքնագիտակցությունը պահպանելու գործում ավելի էր մնծանում ազգային լեզվով դործող դպրոցների դերը: Եվ այդ էր պատճառը, որ Շամախիի հայոց թեմի առաջնորդներն ու բարեգործական ընկերությունները իրենց ուշադրությունը մշտապես բևեռում էին այդ խնդրի վրա:

Կրթական դործի հաջող կազմակերպման արդյունքում, XIX դարի երկրորդ կեսից մինչև 1918 թ. թուրքական արշավանքը, քաղաքում դործում էին տարբեր բնույթի հետևյալ դպրոցները. «Մարդասիրական ընկերության» հիմնադիր անդամ Ալեքսեյ (Արշակ) Տեր-Ղուկասյանի դպրոց (հիշատակվում է 1860 թ.)[1194], Բաքվի ծխական նախակրթարան (հիմնվել է 1865 թ.)[1195], Սբ. Գրիգոր Լուսավորչի անվան իդական դպրոց (հիմնվել է 1866 թ.)[1196], Սբ. Մեսրոպյան երկդասյան արական ծխական դպրոց (հիմնվել է 1869 թ.)[1197], Սբ. Հռիփսիմյան օրիորդաց միջնակարդ դպրոց (հիմնվել է 1869 թ.)[1198], Հայկական միջնակարդ հոդևոր արական դպրոց (հիմնվել է 1877 թ.)[1199], Հայրապետ Քալանթարյանի երկսեռ ուսումնարան (հիմնվել է 1872 թ.)[1200], բաքվաբնակ չամախեցիների արական միդասյան ուսումնարան (հիմնվել է 1882 թ., 1884 թ. դործում էր)[1201], բաքվաբնակ չամախեցիների օրիորդաց միդասյան ուսումնարան

[1192] Տե՛ս նույն տեղում, էջ 60:
[1193] Տե՛ս նույն տեղում, էջ 62:
[1194] Տե՛ս «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1860, դեկտեմբերի 10, № 50, էջ 395:
[1195] Տե՛ս «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1866, հուլիսի 2, № 25, էջ 177:
[1196] Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև 1876, Գ, էջ 117, տե՛ս նաև Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905), Երևան, 1970, էջ 54:
[1197] Տե՛ս «Արարատ», 1869, Բ, էջ 43, տե՛ս նաև «Արարատ», 1871, Ա, էջ 337:
[1198] Տե՛ս «Արարատ», 1871, Ա, էջ 337:
[1199] Նույն տեղում, էջ 446:
[1200] Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև *-* Նամակ Բագուից, «Աշակ», Թիֆլիս, 1874, դեկտեմբերի 19, № 51:
[1201] Տե՛ս Վիճակագրական տեղեկութիւնք եկեղեցական – ծխական ուսումնարանաց Հայոց, յԸնթացս 1886-87 ուսումնական ամի, Վաղարշապատ, 1888, էջ 70, տե՛ս նաև «Սեղու Հայաստանի», Թիֆլիս, 1884, մայիսի 6, № 34, տե՛ս նաև Երկանյան Վ., նշվ. աշխ., էջ 67:

(հիմնվել է 1884 թ.)[1202], Սբ. Աստվածածին եկեղեցու իգական ծխական դպրոց (հիմնվել է 1894 թ.)[1203], Հայ ավետարանական ուսումնարան (հիմնվել է 1880 թ.)[1204], Հայ լյութերական դպրոց (հիմնվել է 1891 թ.[1205]: 1897 թ. դպրոցի տնօրենն էր Սերոբ Միրզայանցը)[1206], Բաքվի եկեղեցական աղքատանոցի իգական դպրոց (գործել է 1906-1907 թթ. ուս. տարում)[1207], Բաքվի եկեղեցական աղքատանոցի արական դպրոց (գործել է 1906-1907 թթ. ուս. տարում)[1208], Բաքվի Հայոց մարդասիրական ընկերության աղքատանոցի արական դպրոց (գործել է 1906-1907 թթ. ուս. տարում)[1209], Բաքվի Հայոց մարդասիրական ընկերության աղքատանոցի իգական դպրոց (գործել է 1906-1907 թթ. ուս. տարում)[1210], Բաքվի հայ կանանց արհեստագործական դպրոց (հիմնվել է Բաքվի հայոց կուլտուրական միության կրթական հանձնաժողովի որոշումով՝ 1907 թ. հունվարին)[1211], Հայ կանանց և օրիորդների երեկոյան դպրոց (1907 թ. հիմնել է Եղիսաբեթ Յուզբաշյանը)[1212], Բաքվի հայկական ձայնագրության դպրոց (հիմնվել է 1912 թ.)[1213], Հայկավանի հայ գաղթականների երկսեռ դպրոց (հիմնվել է «Հայ ուսուցչական միության» նախաձեռնությամբ 1915 թ. նոյեմբերի 2-ին: Գործել է մինչև 1918 թ. մարտ ամիսը)[1214]:

[1202] Տե՛ս Վիճակագրական տեղեկութիւնք եկեղեցական – ծխական ուսումնարանաց Հայոց, յԸնթացս 1886-87 ուսումնական ամի, էջ 70, տե՛ս նաև «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1884, մայիսի 6, № 34:

[1203] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 324, թ. 57:

[1204] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1882, հունիսի 1, № 95:

[1205] Տե՛ս Խուդոյան Ս., Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ. (ժամանակագրությունը հավելյալ մանրամասներով), Երևան, 1987, էջ 449:

[1206] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 49.

[1207] Տե՛ս Պատմութիւն Բագուայ հայոց աղբատախնամ եկեղեցական հոգաբարձութեան (1872 թ. ապրիլի 1-ից մինչև 1893 թ. ապրիլի 1-ը), էջ 16:

[1208] Տե՛ս նույն տեղում:

[1209] Տե՛ս Խուդոյան Ս., նշվ. աշխ., էջ 447:

[1210] Տե՛ս նույն տեղում:

[1211] Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ Բագուայ Հայոց կուլտուրական միութեան 1907 թ. 7 ամսեայ եւ 1908 թ. գործունէութեան, № 2, էջ 110:

[1212] Տե՛ս «Արեւ», Բագու, 1914, սեպտեմբերի 4, № 124, տե՛ս նաև Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 293:

[1213] Տե՛ս «Արարատ», 1913, Ա, էջ 5:

[1214] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1915, դեկտեմբերի 17, դ 283, տե՛ս նաև Դրամական հաշիւ Բագուի հայ գաղթականական կոմիտէի 1915 թ. օգոստոսից մինչև 1917 թ.յունուարի 1-ը, էջ 46-47, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 44, թ. 39: «Մարդասիրական ընկերության» իրավերով դպրոցում դասավանդել է վանեցի վաստակաշատ

Թվարկված դպրոցներից բացի, տարբեր տարիներին դործել են նաև մասնավոր նախակրթարան-ուսումնարաններ: Օրինակ՝ 1897 թվականից գործել է նաև Աբրահամ Բաբալյանի, Ներսիսյանի (եւամյա), Ս. Յուզբաշյանի, Թադևոսյանի արական երկամյա ուսումնարանը, Արշավիր Տեր-Գասպարյանի հաշվապահական կուրսերը և այլն[1215]: Հաղաքում լայն ճանաչում ուներ հատկապես 1897 թվականից գործող Սոֆյա Պետրոսյանի՝ Դուբրովնակայա փողոցի Կրասիլնիկյանների տանը գործող եռամյա պանսիոն-ուսումնարանն ու մանկապարտեզը[1216]:

Տարբեր տարիներին վերոնշյալ դպրոցներում և նախակրթարաններում դասավանդել են Եղիշե ավ. ք.հն. Գեղամյանցը (կրոն), Նիկողայոս Մելիք-Թանգյանը[1217], Ստեփան Տեր-Մկրտչյանը (հայոց լեզու), Ավետիս Դավթյանը (ռուսաց լեզու, դծագրություն), Դավիթ Ներսիսյանը (թվաբանություն), Ա. Հալաբյանը (թվաբանություն), Մակար Վարդիկյանը (վայելչագրություն և երգեցողություն), Թամարա Ներսիսյանը (ռուսաց լեզու, թվաբանություն, ձեռագործ), Հայրապետ Ղուկասյանը (հայոց լեզու), Աստվածատուր Գալստյանը (հայոց և ռուսաց լեզուները), Ալեքսանդր Պետրոսյանը (բոլոր առարկանները), Սոֆյա Պետրոսյանը (բոլոր առարկանները)[1218], Բագրատ Այվազյանը[1219] և շատ ուրիշներ:

Հատկանշական է, որ շատ դեպքերում պետական դպրոցների տնօրեններ էին նշանակվում նաև հայերը: Օրինակ՝ 1897 թվականից «Սև» քաղաքի երկսեռ դպրոցի տնօրենն էր կարապետ Առաքելյա-

---

մտավորական, հասարակական գործիչ Վարազդատ Տերոյանը (տե՛ս Տերոյան Վ., Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, առաջաբանը և ծանոթագրությունները Ռ. Սահակյանի, հրատարակության պատրաստեց Ն. Դերոյան, Երևան, 2006, էջ 9):

[1215] Տե՛ս նույն տեղում, стр. 54-55, տե՛ս նաև Статистическое бюро Бакинской городской управы, стр. 118, տե՛ս նաև Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 49-50, տե՛ս նաև Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 95.

[1216] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 53, տե՛ս նաև Статистическое бюро Бакинской городской управы, стр. 118.

[1217] 1890-1893 թթ. Շուշիի թեմական դպրոցում աշխատելու տարիներին, Ն. Մելիք-Թանգյանը դպրոցի ուսուցչական խմբի հետ ըմբոստանում է Արցախի թեմական առաջնորդ Կարապետ եպս. Այվազյանի դեմ և 1894 թ. տեղափոխվում Բաքու, ուր մինչև 1896 թ. դասավանդում է տեղի Սբ. Սեսրոպյան երկդասյան արական դպրոցում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 25, թ. 31):

[1218] Տե՛ս Վիճակագրական տեղեկուրիւնք եկեղեցական – ծխական ուսումնարանաց Հայոց, յԸնթացս 1886-87 ուսումնական ամի, էջ 69-70:

[1219] Տե՛ս Տէր-Աստուածատրեանց Հ., Բառարան հայ կենսագրութեանց (1441-1904), պր. Ա, էջ 94:

նը[1220], իսկ ռուս-հայկական 2-րդ դպրոցինը՝ Գաբրիել Պապյանը[1221]: 1897 թ. Մարիանյան իգական գիմնազիայի հոգարարձուների խորհրդի նախագահն էր Քր. Անտոնյանը[1222]:

Բաքվի հայկական դպրոցների ուսումնական գործընթացի կազմակերպման գործում զգալի ավանդ ունի հատկապես XIX դարի երկրորդ կեսի արևելահայ իրականության գրական-հասարակական և հոգևոր-մշակութային կյանքի նշանավոր գործիչ, «Հայկական աշխարհ» ամսագրի խմբագիր և մանկավարժ, 1877 թվականից Շամախիի հայոց թեմի վերատեսուչ Խորեն վրդ. Ստեփաննեն: Բաքվում նրա ծավալած մանկավարժական աշխույժ գործունեության մասին է վկայում Բաքվի հայերի հետևյալ գնահատականը. «Բաքու քաղաք մանելուց հետո մեր ուսումնարանները բարեկարգից: 200 տղաներ և օրիորդներ այսօր խոսում են մաքուր հայերեն լեզվով, աղքատ ծնողներ փառավորվում էին նորա (Խորեն վրդ. Ստեփաննեի - Գ. Ս.) դաստիարակությամբ և փառավորվում են իրենց զավակներով»[1223]: Բաքու քաղաքում գործած հայկական դպրոցները հայ բնակչության համար եղել են ազգապահպանման այն հզոր կառույցները, որոնց ազգանվեր գործունեության շնորհիվ պահպանվել է հայկական ազգային ոգին:

Նկատենք, որ Բաքվի գրեթե բոլոր հայկական դպրոցների կազմակերպման գործը խոչընդոտներով լեցուն ուղի է անցել: Դա պայմանավորված էր ոչ միայն դպրոցները նյութական անհրաժեշտ միջոցներով մշտապես ապահովելու խնդրով, այլև ինքնակալության կողմից XIX դարի երկրորդ կեսից սկսված ուծացման քաղաքականության հարուցած դժվարությունները հաղթահարելով: Կրթական գործի ծաղկման շրջանում, ցարական կառավարության որոշումով 1885 թ. փետրվարի սկզբներից փակվեց Այսրկովկասում գործող հայկական ծխական մոտ 300 դպրոցներ, որից միայն 11-ը՝ Բաքվի նահանգում[1224]: Թեև փակված դպրոցների մի մասը վերաբացվեց 1886 թվականին[1225], սակայն ցարական կառավարության հայահալած քա-

---

[1220] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 49, տե՛ս նաև Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 96.

[1221] Տե՛ս նույն տեղում, отд. II, стр. 97,

[1222] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 44, տե՛ս նաև Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 43.

[1223] Մխիթարյան Մ., Խորեն Ստեփաննեի «Հայկական աշխարհ» ամսագիրը, Երևան, 2002, էջ 17:

[1224] Տե՛ս Երկանյան Վ., նշվ. աշխ., էջ 146:

[1225] Տե՛ս Ակնունի Է., նշվ. աշխ., հ Ա, էջ 91:

դաքականության հետևանքով 1896 թ. հունվարին երկրորդ անգամ փակվեցին 230-ի չափ դպրոցներ[1226]: Այդ թվից դուրս չմնացին նաև Բաքվի նահանգում գործող հայկական ծխական դպրոցները: Հայկական դպրոցական կյանքում որոշակի աշխուժացում նկատվեց, երբ 1905 թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ II-ը ստորագրեց հրամանագիր՝ նկեղեցիներին կից ծխական դպրոցներ բացելու թույլտվության մասին[1227]:

Եկեղեցական-ծխական և թեմական դպրոցներից բացի, մեծ թվով հայ երեխաներ սովորում էին պետական (արքունի) դպրոցներում: 1869 թ. պաշտոնական վիճակագրության համաձայն՝ Բաքվի ռեալական գիմնազիայում (1860 թ. Շամախիից Բաքու տեղափոխված եռամյա ուսումնարանը 1867 թ. վերակազմավորվել է որպես ռեալական գիմնազիա)[1228] սովորող 253 աշակերտներից 118-ը ռուսներ էին, 72-ը՝ հայեր, 42-ը՝ կովկասյան թաթարներ և 31-ը՝ տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներ[1229]: 1896-1904 թթ. տվյալներով՝ գիմնազիայում հայ աշակերտների թիվը 517-ից հասել էր 595 (73%), իսկ մահմեդականներինը՝ 88-ից՝ 133-ի (50%)[1230]: 1888 թ. հոկտեմբերին Մարիանյան (հիմնադրվել է 1874 թ.)[1231] օրիորդաց գիմնազիայում (կառավարչուհի տիկին Լիվսեր) 240 աշակերտուհիներից 80-ը եղել են հայուհիներ, 1-ը՝ կովկասյան թաթար[1232]: 1897 թ. տվյալների համաձայն՝ գիմնազիայի 633 աշակերտուհիներից 334-ը եղել է ռուս, 175-ը՝ հայ, 55-ը՝ հրեա, 57-ը՝ լեհ և գերմանացի, 11-ը՝ վրացի և 1-ը՝ կովկասյան թաթար[1233]: 1893 թ. հոկտեմբերի դրությամբ քաղաքի արհեստավորաց դպրոցի (հիմնադրվել է 1888 թ. հուլիսի 1-ին)[1234] 127 աշակերտներից, ըստ դավանանքի, 24-ը եղել է հայ առաքելական, 81-ը՝ հունադավան (օրթոդոքս) 6-ը՝ բողոքական, 5-

---

[1226] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. VI, էջ 763:
[1227] Տե՛ս նույն տեղում, էջ 764:
[1228] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 43.
[1229] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 132.
[1230] Տե՛ս **Кузьмински,** Всеподданнейший отчет..., стр. 98-99.
[1231] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 45.
[1232] Տե՛ս Ամենայն Հայոց վեհափառ Մակար կաթուղիկոսի ճանապարհորդութիւնը, «Արարատ», 1888, ԺԱ, էջ 712:
[1233] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 45.
[1234] Տե՛ս նույն տեղում, стр. 46.

ը՝ ռուս աղանդավոր և 1-ը՝ մահմեդական[1235]: 1895 թ. տվյալներով, ռեալական դպրոցի 517 աշակերտներից 286-ը ռուսներ էին, 158-ը՝ հայեր, 73-ը՝ կովկասյան թաթարներ[1236]: Նույն թվականի տվյալներով, քաղաքի կիրակնօրյա դպրոցում սովորող 210 աշակերտների 58%-ը եղել են հայեր, 17%-ը՝ ռուսներ, 14%-ը՝ հրեաներ և 9,5%-ը՝ կովկասյան թաթարներ[1237]:

1897 թ. հունվարի 28-ի համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալներով, Բաքվի նահանգում հայ բնակչության դրագիտությունը կազմում էր 24,4%, ռուսներինը՝ 37,6%, կովկասյան թաթարներինը՝ 2,5%, թա թերինը՝ 1,9% և թալիշներինը՝ 1,2%[1238]: Այսպսով՝ ինչպես երևում է վերը բերված օրինակներից, կովկասյան թաթարների հետամնացությունն ակնառու էր նաև կրթության բնագավառում: Այն ավելի ցայտուն է դառնում ամբողջ բնակչության թվի հետ նրանց տվյալների համադրման դեպքում: Հարցի առթիվ հետաքրքրական դիտարկում է անում ականավոր արևելագետ և դրող Ագաֆանգել Կրիմսկին՝ նշելով. «Կովկասում նույնպես թյուրքական ռասան այնքան էլ առաջադեմ չէր...»[1239]: Ա. Կրիմսկու տված այս բնորոշումը միանգամայն ճիշտ է և ընդունելի: Անառարկելի իրողություն է, որ երկրամասի հասարակական զարդացման օրինաչափությունները, կատարվող առաջադեմ փոփոխությունները ու տեղաշարժերը նույն չափով չէին ազդում կովկասյան թաթարների զարդացման վրա: Անդրադառնալով թաթարների հետամնացության պատճառներին, «Մշակն» իր առաջնորդողում գրում է. «Ամբողջ Կովկասի բնակիչների մեջ, ամենաանշարժ և լուսաւորութենից յետ մնացած մասը թուրք ազգաբնակչութիւնն է: Այդ անշարժութեան գլխաւոր պատճառներից մինը և այն է, որ թուրք ամբոխի մեջ առհասարակ ոչ թէ միայն դժուար է, բայց և անհնարին է գրագիտութիւնը տարածել, որովհետև նրանց մեջ իրանց մայրենի լեզուով գրագիտութիւնը տարածելու համար պետք է դործածել արաբական տառերը, որոնք չատ անյարմար են այդ նպատակի համար թէ՛ իրանց գրութեան ձևի, թէ՛ կարդալու եղանա-

---

[1235] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1894, հուլիսի 15, № 80:
[1236] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1893, հոկտեմբերի 15, № 120:
[1237] Տե՛ս Ն. Դ.[Ներսես Դավթյան], Նամակ Բագուից, «Մշակ», Թիֆլիս, 1895, հոկտեմբերի 19, № 120:
[1238] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIV, стр. 57.
[1239] Крымский А., Школа, образованность и литература у российских мусульманъ (культурно-этнографический очерк), Москва, 1905, стр.16.

կի...»[1240]: 1904 թ. դրությամբ Բաքու քաղաքի միջնակարգ ուսումնական հաստատություններում սովորողներից հայեր էին 41,1%-ը, 33,8%-ը՝ ռուսներ, 11,9%՝ հրեաներ, այլ ազգեր՝ 8,7%: Մահմեդականների թիվը կազմում էր 4,5%[1241]:

Պատկերն առավել ամբողջական դարձնելու նպատակով՝ բուհ ազգությունների, ներկայացնենք նաև «Կովկասի ուսումնական օկրուգի» 1905 թ. հաշվետվությունից գիմնազիական կրթություն ստացողների մասին որոշ տվյալներ: Բաքվի՝ կայսեր Ալեքսանդր III-ի անվան արական գիմնազիայում (հիմնադրվել է 1896 թ. սեպտեմբերի 1-ին)[1242] հայ սովորողների թիվը 541 էր, ռուսներինը՝ 273, կովկասյան թաթարներինը՝ 75[1243]: Հարկ է նշել, որ համանման պատկեր ուներ նաև Շամախի քաղաքում 1877 թ. բացված ուսումնարանը: 1895 թ. այդտեղ սովորող 138 աշակերտներից 86-ը՝ հայեր էին (20 գյուղաբնակ, 66 քաղաքաբնակ), 37-ը՝ կովկասյան թաթարներ և 15-ը՝ ռուսներ[1244]:

Բաքու քաղաքի բնակչության 5-60 և բարձր տարիքային խմբի գրաճանաչների թվի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են հաղորդում քաղաքային վարչության իրականացրած 1913 թ. հոկտեմբերի 22-ի մարդահամարի ցուցանիշները: Ըստ այդմ՝ 37106 հայ բնակիչներից գրաճանաչ էր 23574-ը, 67371 ռուսներից՝ 41953-ը, 40123 կովկասյան թաթարներից՝ 8936-ը, 23432 պարսիկներից՝ 2214-ը, 8608 հրեաներից՝ 7123-ը, 3713 վրացիներից՝ 3078-ը[1245]: Այդ տվյալներից հետևում է, որ դրաճանաչությամբ հա-յերը զիջել են մեկ ռուսներին, սակայն անհամեմատ բարձր են եղել կովկասյան թաթարներից և մնացած ժողովուրդներից: Հատկանշական է, որ կրթության ոլորտում կովկասյան թաթարների չրջանում առաջընթաց չարձանագրվեց նաև հետագա ժամանակներում[1246]:

Ուսման նկատմամբ հայերի ցուցաբերած մեծ հետաքրքրության պերճախոս վկայությունն են Կովկասի փոխարքա կոմս Վո-

---

[1240] «Մշակ», Թիֆլիս, 1877, հունվարի 1, № 10:

[1241] **Кузьмински,** Всеподданнейший отчет..., стр. 97-98.

[1242] Տե՛ս Бакинский справочный календарь на 1898 г. (Адресъ-календарь города Баку и Бакинской губернии), стр. 42.

[1243] Տե՛ս Ղուկասյան Ա., Աբրահամյան Ա., Կովկասյան ազգությունների քաղաքակրթությունների մասին, «Մանկավարժական միտք», Երևան, 2005, № 2-3, էջ 123:

[1244] Տե՛ս Описание города Шемаха. Составиль **С. П. Зелинский**, Тифлис, 1896, стр. 25.

[1245] Տե՛ս Перепись Баку 1913 г.: население, таблица 7ª, стр. 11.

[1246] Տե՛ս **Ансеров Н.**, Тюрки Советского Азербайджана (к характеристике их физического типа), Баку, 1930, стр. 12.

բոնցով-Դաշկովի բերած հետևյալ թվերը: 1906-1910 թթ. ընթացքում Այսրկովկասում ընդհանուր միջնակարգ կրթություն էին ստացել ռուսներից 31%, հայերից՝ 30%, վրացիներից՝ 21% և կովկասյան թաթարներից՝ 5%[1247]*: Կովկասի ուսումնական հաստատություններից բացի, Բաքվի հայ երիտասարդներն ուսանում էին նաև Ռուսաստանի և Եվրոպայի առաջատար համալսարաններում: Մոսկվայի համալսարանում հիմնականում ընտրում էին բժշկական, իրավաբանական և ինժեներական մասնագիտությունները*[1248]*: Ինչպես աված է Կարապետ Մելիք-Շահնազարյանցի՝ Ցրանսիայի Մոնպելիե քաղաքից «Նոր-դարին» հղած թղթակցություններում. «Բագուի բեալական դպրոցի հայ աշակերտների մի նշանաւոր մասը, բարձրագոյն ուսում ստանալու համար, արտասահման անցնելու ցանկութիւն ունի...»*[1249]*: Վերադառնալով հայրենիք՝ նրանք ակտիվորեն ընդգրկվում էին տեղի հասարակական կյանքին, տարածելով առաջավոր գաղափարները*[1250]*: Քաղաքային վարչության 1913 թ. հոկտեմբերի 22-ի հաշվառումների համաձայն՝ Բաքվից Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էր 110 հայ, 73 ռուս, 49 հրեա, 14 գերմանացի, 12 վրացի և ընդամենը 5 կովկասյան թաթար*[1251]*:*

Այն հանգամանքը, որ Բաքվի հայ բնակչությունն աչքի էր ընկնում իր կրթասիրական բարձր մակարդակով և հատկապես այս առումով մի քանի անգամ գերազանցում էր մնացյալ ազգերին, վկայում են «Մարդասիրական ընկերությանը» կից 1870 թվականից գործող գրադարան-ընթերցարանի վիճակագրական տվյալները: Գրադարանապետ Լ. Մանվելյանի կազմած վիճակագրության համաձայն՝ 1898 թ., ըստ ազգային պատկանելության, գրադարան հաճախողների թիվը և տոկոսային հարաբերակցությունը հետևյալն է. հայեր՝ 20195 (76½%), ռուսներ՝ 4300 (16½%) և այլազգիներ՝ 1939

[1247] Տե՛ս Всеподданнейший отчет за пятилетие управления Кавказом генералъ-адъютанта графа **Воронцова-Дашкова**, СПб., 1910, стр. 51.

[1248] Տե՛ս Քաջբերունի Գ., Ստեփաննոս Նազարեանցի շուրջը վաթսունական թուականներում (I), «Արարատ», Թ-Ժ, 1916, էջ 714:

[1249] Կ. Կ. Մելիք-Շահն.[ազարեանց], Բագուի հայ ուսանողներին, «Նոր-դար», Թիֆլիս, 1884, հունիսի 21, № 103:

[1250] Տե՛ս Արշարունի Ա., Մոսկվայի համալսարանը և հայ առաջավոր մտավորականությունը, Երևան, 1982, էջ 184:

[1251] Տե՛ս Перепись Баку 1913 г.: ч. III, население, вып. III. Промыслово-Заводский районъ, отд. I, таблица 7[a], стр. 11[a].

(7½%)[1252]*: 1911-1915 թթ. ընկած ժամանակահատվածում, ըստ ազգությունների և դավանանքի, դրադարանի բաժանորդների և նրանց կարդացած դրքերի թվի մասին հետևյալ պատկերացում է տալիս ստորև բերվող աղյուսակը*[1253]*.*

Աղյուսակ № 10

Բնակչության ազգային կազմը	Բաժանորդների թիվը ըստ տարիների				
Հայ	1911	1912	1913	1914	1915
	349	424	239	675	844
Ռուս	236	256	187	298	477
Հրեա	130	138	107	182	312
Մահմեդական	22	18	23	31	43
Լեհ	18	-	-	-	-
Գերմանացի	14	-	-	-	-
Վրացի	10	12	11	45	38
Հույն	1	-	-	-	-
Ֆրանսիացի	2	-	-	-	-
Այլք	-	42	29	42	133

Աղյուսակի տվյալներից հետևում է, որ դրադարան-ընթերցարանի բաժանորդների թվում առաջին տեղում են եղել հայերը, այնուհետև ռուսները, հրեաները, մահմեդականները և այլք:

Աղյուսակ № 11

Հայ	Կարդացած գրքերի քանակը՝ ըստ լեզուների								
	Ռուսերեն					Հայերեն			
	1911	1912	1913	1914	1915	1911	1912	1913	1914
	4744	5342	2825	7630	16824	1587	3595	952	3925
Ռուս	4574	5578	3617	5885	9646	-	-	-	-
Հրեա	2376	2738	1985	4921	7146	-	-	-	-
Վրացի	227	94	103	288	846	-	-	-	-
Մահմեդ.	187	125	205	642	925	-	-	-	-
Լեհ	387	-	-	-	-	-	-	-	-
Գերման.	87	-	-	-	-	-	-	-	-
Հույն	18	-	-	-	-	-	-	-	-
Ֆրանս.	95	-	-	-	-	450	-	-	-
Այլք	-	753	-	1857	2733	-	-	-	-

[1252] Տե՛ս Մանուէլեանց Լ., Բագւայ Մարդասիրական ընկերութեան գրադարան-ընթերցարանի վիճակագրական տեղեկութիւններ վասն 1898 թ. (հաշիւ գրադարանապետի), «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 2-3, էջ 317:

[1253] Աղյուսակը կազմված է ըստ Տեղեկագիր եւ հաշիւ Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան 1911 թ. գործունէութեան, էջ 8; Տեղեկագիր եւ հաշիւ Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան գործունէութեան, 1912 թ., Բագու, 1913, էջ 7; Հաշիւ 1913 թ. գործունէութեան Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան, էջ 9; Տեղեկագիր եւ հաշիւ 1914 թ. գործունէութեան Հայոց Մարդասիրական ընկե-

Այսպիսով՝ Բաքվի հայ բնակչությունն աչքի էր ընկնում ոչ միայն արհեստավորական հմտությամբ, առևտրով ու արդյունաբերության ոլորտում ունեցած գործուն և ծանրակշիռ մասնակցությամբ, այլև կրթվածությամբ և գրագիտությամբ:

* * *

Քննվող ժամանակահատվածում Բաքու քաղաքի հայ բնակչությունը բաժանված էր առաքելական, ավետարանական կամ լյութերական, կաթոլիկ և ուղղափառ կրոնական համայնքների միջև: Բաղաքի հայ բնակչության մեծագույն մասը Հայ առաքելական եկեղեցու հետևորդներ էին: X դ. վերջերին-XI դ. սկզբներին կազմավորված Շամախիի հայոց թեմը[1254] (երկրամասի հնագույն անվանումով այն ավանդաբար կոչվել է նաև Շիրվանի թեմ)[1255] Բաքվի նահանգի հայ բնակչության համար համարվել է ազգային ինքնատիպության պահպանման հզորագույն կառույցը: Այն կարգավորել է նահանգի հայության ներքին կյանքը՝ իր ակտիվ գործունեությամբ մեծ դերակատարություն է ունեցել հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական ու կրթա-մշակութային բնագավառներում:

Թեմի կառավարումը կենտրոնացված էր թեմական առաջնորդի ձեռքում, որը թեմի հոգևոր-վարչական սահմանների շրջանակներում անօրինում էր հասարակական հարաբերությունների կանոնակարգման իրավունքը, լուծում ընտանեկան, ժառանգական, ամուսնության, ապահարզանի, որդեգրման, ժառանգության, կտակի հարցեր և այլն: Միաժամանակ տնօրինում էր եկեղեցու դատական հարցերը, կատարում քահանայական ձեռնադրումներ, ծավալում կրթամշակութային գործունեություն, համայնքը բաժանում ծխերի միջև և այլն: Թեմն ուներ իր հոգևոր խորհուրդը՝ կոնսիստորիան, որի նախագահն ի պաշտոնե թեմի առաջնորդն էր: Շամախու հայոց թեմի հոգևոր-վարչական սահմաններն ընդգրկում էին Գյոքչայի, Շամախիի, Ղուբայի, Բաքվի գավառները և Դաղստանի մարզի Դերբենդ քաղաքն իր շրջապատով, ներառնելով 4 քաղաք (Բաքու, Դերբենդ, Շամախի, Ղուբա), 3 քաղաքատիպ ավան (Գյոքչա, Սալիան,

---

րութեան, էջ 8; Տեղեկագիր եւ հաշիւ 1915 թ. գործունէութեան Հայոց Մարդասիրական ընկերութեան, էջ 6. տվյալների. հաշվարկը մերն է:

[1254] Շամախիի հայոց թեմի կազմավորման հարցերի մանրամասն քննությունը տե՛ս Ստեփանյան Գ., Շամախու Հայոց թեմի սկզբնավորման հարցի շուրջ, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տարեկան գիտաժողով (նյութերի ժողովածու), Երևան, № 3, էջ 870-873:

[1255] Տե՛ս Երիցեանց Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, մասն Բ, Թիֆլիզ, 1895, էջ 257:

Աստարա) և 47 հայկական գյուղ[1256]: Ընդ որում, նկատի ունենալով Բաքու քաղաքի մեծ կարևորությունը, այդտեղ հաստատվել է գործակալություն[1257]:

Սկզբնապես թեմի առաջնորդանիստ կենտրոնն է եղել Սաղիան գյուղի Սբ. Ստեփաննոս Նախավկա վանքը, սակայն, հիմնվելով 1836 թ. մարտի 11-ի «Պոլոժենիե»-ի սահմանած այն կարգի վրա, որով թեմական կենտրոնները պետք է տեղափոխվեին քաղաք, 1838 թ. թեմական առաջնորդանիստը Սաղիանից տեղափոխվում է Շամախի, որով և տեղի Սբ. Աստվածածին եկեղեցին ճանաչվում է Մայր եկեղեցի[1258]: 1918 թ. թուրքական արշավանքի ժամանակ Շամախի քաղաքը թուրքերի կողմից հրդեհվելու և հայ բնակչության Բաքու գաղթի պատճառով, թեմի առաջնորդ Բագրատ եպս. Վարդազարյանը 1918 թ. հոկտեմբերի 14-ին թեմի առաջնորդարանն ու վիճակային ատյանը տեղափոխում է Բաքու, և տեղի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին դարձնում առաջնորդանիստ Մայր եկեղեցի, իսկ թեմը վերանվանում Բաքվի թեմ[1259]: Խորհրդային կարգերի հաստատումից հետո, երբ Միջին Ասիայում տեղի թեմական իշխանության կազմալուծման պատճառով Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը 1920 թ. սեպտեմբերի 3-ի կոնդակով՝ Տաշքենդի, Սամարղանդի, Անդիժանի, Կոկանդի, Աշգաբադի, Ջարկոուի, Ղըզըլ-Արվատի, Նոր-Բուխարայի, Կրասնովոդսկի և Ջաքիչլարի հայկական եկեղեցիները հանձնեց Բաքվի հայոց թեմի տնօրինությանը, թեմը կոչվեց՝ Բաքվի և Թուրքեստանի, իսկ առաջնորդանիստ եկեղեցին Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին էր[1260]:

Աղբյուրների վկայությամբ՝ չնայած քաղաքական անբարենպաստ պայմաններին՝ եկեղեցիների ու մատուռների կառուցման և վերաշինման մեծ աշխատանք է տարվել Ապշերոնյան թերակղզու հայաբնակ բնակավայրերում և հատկապես Բաքու քաղաքում: Տարբեր ժամանակներում Բաքվում գործել են հինգ հայկական եկեղեցիներ: Ստորև համառոտակի կներկայացնենք դրանցից յուրաքանչյուրի պատմությունը:

[1256] Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 133, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 122, թ. 22, տե՛ս նաև «Հայկական աշխարհ», Բագու, 1878, № 1-2, էջ 51:

[1257] Տե՛ս Չիթունի Տ., Յուշիկք Հայաստանի, Ա տարի, Կ.Պոլիս, 1919, էջ 53, տե՛ս նաև Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ.Պոլիս, 1908, էջ 278:

[1258] Տե՛ս Արիստակէս եպս. Սեդրակեան, Հովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութիւնը, Ս. Պետերբուրգ, 1898, էջ 127-128:

[1259] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 3-4:

[1260] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 2, գ. 2055, թ. 1:

ՍՐ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ: Բաքվում կառուցված հայկական առաջին եկեղեցին է: Գտնվում էր քաղաքի հին թաղում, բերդի ստորոտում, «Կույսի աշտարակի» մերձակայքում՝ հայկական քարտավանատան կից: Նախընթացում նշեցինք, որ կառուցվել է 500 թ.՝ Հայոց արևելից կողմանց թագավոր Վաչագան Բարեպաշտի կողմից[1261]: 1890 թ. Բաքու այցելած Մակար եպս. Բարխուտարյանցը եկեղեցու մասին գրել է. «Բագուի հայք ունին երկու քարաշէն եկեղեցի... փոքրն ս. Աստուածածնին անուամբ, որ չինուած է բերդի ստորոտում... եղած է Բագուի հայոց միակ հին եկեղեցին, ինչպէս յայտնի է չինուածեան ներքին և արտաքին ճարտարապետական ձևից»[1262]:

Սր. Աստվածածին եկեղեցին վերակառուցվում է 1789 թ. Շամախիի հայոց թեմի 1785-1796 թթ. առաջնորդ Ոսկան եպիսկոպոսի օրոք, հայ հասարակության հանգանակած գումարներով: Վերակառուցման գործում մեծ դերակատարություն է ունեցել Ղուկաս Ա Կարնեցի կաթողիկոսը, որը 1784 թ. կոնդակով Շամախիի հայոց թեմի գանձապետ Եղիազարին պատվիրում է օգնել ժողովրդին. «Կոնդակ նոյնոյ՝ առ գանձապետ Եղիազարն ի Բագու, որով պատուիրէ օգնել ժողովրդեան ի շինել զեկեղեցին ի Մահլայոջն, և յանուն եկեղեցւոյ ժողովեալ դրամս յանձնել ժողովրդոց...»[1263]: Կաթողիկոսի մեկ այլ կոնդակում, որն ուղղված էր Բաքվի Հովսեփ, Հովհաննես և Բարսեղ քահանաներին ու գանձապետ Եղիազարին փոխարինած Դավթին, նշված է հետևյալը. «Թոյլատրէք Բագուեցւոց չինել (ընդգծումը մերն է - Գ. Ս.) զեկեղեցին ի Մահլայոջն»[1264]: Պետք է նկատել, որ շատ դեպքերում «չինել» տերմինը օգտագործվել է ոչ միայն «հիմնարկել», «կառուցել» իմաստով, այլև «վերակառուցել, նորոգել» նշանակությամբ, ինչպես ժամանակին նշել է Հ. Օրբելին[1265]: Ուստի, պետք է արձանագրել, որ «չինել» տերմինը բովանդակային առումով առնչվել է եկեղեցու վերանորոգման մեծածավալ աշխատանքներին: Ս. Ծոցիկյանը իրավացի էր, երբ գրում էր, որ «...Ս. Աստուածածին եկեղեցին... որ մինչև հիմա ալ կանգուն կը մնայ, շնորհիվ երբեմն կրած նորոգութիւններուն»[1266]: Հինգ տարի անց, 1789 թ., եկեղեցին կրկին նորոգման կարիք ուներ: Եկեղեցին նորոգվել է

[1261] Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 73:
[1262] Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ ղրացիք, էջ 153:
[1263] Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 217:
[1264] Նույն տեղում:
[1265] Տե՛ս **Орбели О.**, Поминальная надпись Бута в Багаране (Избранные труды, Ереван, 1963, стр. 419).
[1266] Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 292:

Նախիջևանցի վաճառականներ Մարկոս, Զոհրապ, Հովհաննես և Կարապետ Թառումյան եղբայրների բարերարությամբ[1267]:

Եկեղեցին եղել է հռանավ, ունեցել է գնդաձև վեղարով ավարտվող ութանիստ թմբուկ: Արևմտյան մուտքի դռանն ունեցել է կրկնահարկ զանգակատուն, որի առաջին հարկը քառասյուն էր, երկրորդ հարկը՝ ութասյուն և ավարտվում էր սրածայր վեղարով: Եկեղեցին կառուցված է եղել անմշակ քարով, կրաշաղախով, իսկ զանգակատունը՝ համակ սրբատաշ քարով:

Եկեղեցին 1799 թ. գտնվում էր քայքայված վիճակում: Շամախիի հայոց թեմի 1876-1887 թթ. առաջնորդ Թադևոս եպս. Զյունակյանի նախաձեռնությամբ 1881-1882 թթ. հիմքից վերակառուցում է վթարային վիճակում գտնվող եկեղեցու շրջապարիսպը: Եկեղեցին ունեցել է արծաթյա ծքեղ ջահ, որը նվիրաբերել էին Խաչատուր, Անna և Մարիամ Վարդանյանները՝ 1822 թ.: Ջահի հիշատակագրում ասված էր. «Յիշատակ է ազնիւ Խաչատուրի և քեռն Աննայի, և մայր սոցա Մարիամի Վարդանովնանք, որ ետուն Բագուա սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն. քաշն է 40 ֆ. (40 ֆունտ) և դինն է 4850 ռուբլի. գնեցի ի թուին 1822 օգոստոսին»[1268]: *Թադևոս եպս. Զյունակյանը նախատեսել էր նաև եկեղեցու մոտակայքում կառուցել մի իջևանատուն, իսկ եկեղեցապատկան չենքերը՝ նորոգել*[1269]: *1865 թ. հունիսի 15-ի գիշերը եկեղեցին կողոպտվում է կովկասյան թաթար խուժանի կողմից, որի հետևանքով գողացվում են մեծ քանակությամբ արծաթեղեն և անոթներ*[1270]:

Սբ. Աստվածածին եկեղեցու ուսումնասիրությամբ առաջինը զբաղվել է Մեսրոպ արքեպ. Սմբատյանցը, որը գրում է, որ շինության վրա բացակայում է կառուցման կամ նորոգության վերաբերյալ որևէ արձանագրություն[1271]: *Մեսրոպ արքեպ. Սմբատյանցը, եկեղեցուն կից, հարավային մասում, կարդացել է հիշատակային արձանագրություններով պահպանված հետևյալ տապանաքարերը. «Այս է տապան Ղանդինով Դաւիթի որդի Հանգուցեալ Յարութիւնին թվ. 1793», «Այս է տապան Խաչենցի Տէր*

[1267] Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 373:
[1268] Տե՛ս նույն տեղում, էջ 374:
[1269] Տե՛ս Կարապետյան Ս., Հայերը Ապշերոնյան թերակղզում, «Առավոտ», Երևան, հուլիսի 15, 1997, № 64:
[1270] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 298, թ. 56:
[1271] Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ., էջ 373-374:

Եսայի որդի Տէր Աբրահամին թվ. 1804»[1272]*: Սրանց կից, մեկ այլ տապանաքարի վրա, չափածո հանդուգնորմամբ փորագրված է եղել.*

«Կեանք է իմ իբրեւ ծաղիկ անցեալ
<Ի վեշտասան ամեայ ննջեցեալ †
<Մխակ ժառանգս ի հող մտեալ.
<Զաղիս ծնողացս դալարեալ.
<Դրիդոր Ստեփանեան աստ եդեալ
<Եւ ի տոհմէ Լազարեան սերեալ:
<1826 թուականին, սեպտեմբերի 21 ին»[1273]*:*

1903 թ. եկեղեցու ծխական քահանան էր Աբգար ավ. քհն. Տեր-Հարությունյանը[1274]*: Եկեղեցին մեծ վնասներ է կրում 1905 թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ*[1275]*: Այն վերականգնվում է 1912 թ.: Շինարարական աշխատանքների համար հատկացվել էր 1800 ռ.*[1276]*:*

Եկեղեցին հիշատակվում է թեմում 1916 թ. գործած եկեղեցիների ցանկում[1277]*: Ադրբեջանում, խորհրդային իշխանության հաստատումից հետո, եկեղեցին վերակառուցվում է իբրև մշակութային հիմնարկություն*[1278]*: Խորհրդային տարիներին, ճիշտ է, եկեղեցին այլևս չէր գործում, բայց քաղաքի հայության համար չարունակում էր մնալ որպես ուխտատեղի*[1279]*:*

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ: *Բաքվում, հայ բնակչության ստվարացման հետ մեկտեղ, հայկական ամենահին՝ Սբ. Աստվածածին եկեղեցուց բացի, անհրաժեշտություն առաջացավ քաղաքի տարբեր հատվածներում նոր եկեղեցիների կառուցումը: Երկրորդ եկեղեցու կառուցման նախաձեռնությունը պատկանում է Շամախիի հայոց թեմի 1863-1868 թթ. առաջնորդ Դանիել վրդ. Շահնազարյանցին: Առանալով շինարարական աշխատանքներ սկսելու՝ Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի թույլտվությունը՝ թեմակալը*

[1272] Նույն տեղում, էջ 374:
[1273] Նույն տեղում:
[1274] Տե՛ս Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 25.
[1275] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 159, թ. 10:
[1276] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 159, թ. 18, 23:
[1277] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 2, գ. 904, թ. 1:
[1278] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2685, թ. 2:
[1279] 1986 թ. վերջերին ձեռնարկվում է եկեղեցու վերաևորոգման աշխատանքները: Սակայն Աղրբեջանում վերսկսած հայահալած քաղաքականության պատճառով շինարարական աշխատանքները դադարեցվում են:

1863 թ. Հունիսին կատարում է եկեղեցու հիմնարկնքը. «Օրհնեցաւ հիմն եկեղեցւոյս ի ձեռն կառավարչի՝ վիճակիս Շամախւոյ...Դանիէլ Արքեպիսկոպոսի յամսեանն յունիսի նոյն ամի»[1280]: Նոր եկեղեցին կառուցվում է Բաքվի կենտրոնում՝ Վելիկոկնյաժեսկի պողոտային հարակից, Կոլյուբակինսկի (Պարապետ) հրապարակում՝ բաքվեցի բարերար, «Մարդասիրական ընկերության» անփոխարինելի անդամ Ջալադ Մելիքյանցի տրամադրած ֆինանսական միջոցներով, Սբ. Աստվածածին եկեղեցու հաստուքններով և թեմի հայության հանգանակած գումարներով[1281]: Եկեղեցու կառուցման աշխատանքները ավարտվում են Շամախիի հայոց թեմի 1869-1874 թթ. առաջնորդ Անդրեաս արքեպ. Անդրեասյանի օրոք, իսկ օծումը տեղի է ունենում 1869 թ. մայիսի 4-ին՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի անվամբ[1282]. «Օծաւ եկեղեցին հրամանաւ Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն հայոց Տ. Տ. Գէորգայ Դ.-ի ի 4 մայիսի 1869 ամի, օրհնութեամբ վիճակաւորի թեմիս Անդրէաս արքեպիսկոպոսի առ կայսերութեամբն նոյն արքայի, փոխարքայութեամբ յիշեալ Մեծ Իշխանին և առ նահանգապետութեամբ նորին գերազանցութեան պարոն Միխայէլ Պետրովչի Կուլիբէկեան»[1283]:

Իբրև ճարտարապետական կառույց՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին հիրավի քաղաքի առավել աչքի ընկնող շինություններից էր: Եկեղեցին հորինվածքով եռանավ է, ունի կենտրոնագմբեթ դահլիճ, ուղանիստ թմբուկ և սրածայր վեղար, արևմտյան կողմից ունի եռահարկ զանգակատուն: Կառուցված է սրբատաշ քարից, հյուսիսային և հարավային մուտքերը երկու կողմից երիզել են բարձրադիր զույգ խաչքարերը[1284]: Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին համարվում էր Բաքվի հայերի ազգային այն կառույցը, որի շուրջ հիմնականում կենտրոնանում էին բարեգործական և կրթամշակութային օջախները[1285]: 1870 թ. նոյեմբերի սկզբներին, երբ «Մարդասիրական ընկերության» խորհուրդը որոշում է կառուցել նոր շենք, որտեղ պետք է կենտրոնանային դրադարան-ընթերցասրահը, տպարանը,

---

[1280] Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 375:
[1281] Տե՛ս նույն տեղում:
[1282] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4348, թ. 3:
[1283] Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 377:
[1284] Տե՛ս Կարապետյան Ս., Հայերն Ապշերոնյան թերակղզում, «Առավոտ», Երևան, հուլիսի 26, 1997, № 69:
[1285] Ավելի հանգամանորեն տե՛ս Ստեփանյան Գ., Համառոտ ակնարկ Բաքու քաղաքի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու պատմության, ԼՀԳ, Երևան, 2009, № 3, էջ 45-53:

իպական դպրոցը և այլն, որպես չինուԹյան վայր, ընկերուԹյան խորհուրդը դարձյալ ընտրում է Սր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արտաքին սրահի դատարկ շրջակայքը[1286]:

Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերանորոգման աշխատանքները մշտապես գտնվել են Շամախիի հայոց Թեմի գրեԹե բոլոր առաջնորդների ուշադրուԹյան կենտրոնում: Անդրեաս արքիպ. Անդրեասյանի նախաձեռնուԹյամբ 1874 Թ. մասնակի վերանորոգման է ենԹարկվում եկեղեցին: Շենքի քայքայված վիճակի և չինարարական աշխատանքների անհրաժեշտուԹյան մասին Թեմակալին է հայտնում եկեղեցու երեցփոխը, որն այդ մասին գրում է հետևյալը. «Ի քանի ամսոյ հետէ ջուրք անձրեւի եւ ձեան Թափանցանին ի ներքոյ կոյս սր. Լուսաւորիչ եկեղեցւոյ տեղւոյս ի պատճառս չորանալոյ եւ հող դառնալոյ միանգամայն չաղախաց սալայատակաց կաթուղիկէի եւ տանեաց այնորիկ եկեղեցւոյ եւ Թանան ի ներքուստ գամենայն ծեփ նորին կաթելով ի վերուստ ի վերայ ժամաւոր ժողովրդեան եւ անչուք եւ անզարդ կացուցանելով առաջի տեսողաց»[1287]: *Եկեղեցու բարեկարգման ուղղուԹյամբ մեծ աշխատանք է կատարում նաև եկեղեցու երեցփոխան Մինաս Մելքոնյանը: Շնորհիվ նրա կատարած աշխատանքների, եկեղեցին մշտապես գտնվում էր բարվոք վիճակում: «Հայկական աշխարհն» այդ առիԹով գրում է. «Աւելորդ չեմ համարում յիշել իրաւ երեսփոխանի ջերմեռանդ եկեղեցասիրուԹեան ապացոյց, որ Բագուի մէջ, որտեղ գրեԹէ ծառի իւրաքանչիւր կանաչած տերեւը նշանակուԹիւն ունի, մեր եկեղեցու բակը, երեցփոխանի առանձին հոգացողուԹեամբ, բաւական ծաղկաղարդ և ծառաղարդ է»*[1288]:

Հայ երաժշտուԹյան ամենանշանավոր գործիչներից մեկի՝ Քրիստափոր Կարա-Մուրզայի՝ Բաքվում 1885-1893 ԹԹ. անընդմեջ ապրելու տարիների մի կարճ շրջան կապված էր Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հետ: Կարա-Մուրզային հաջողվել էր Բաքվում կազմակերպել 40 հոգուց բաղկացած մի խումբ և հարուստ երգացանկով պարբերաբար համերգներ տալ տեղի հանդիսատեսի համար: Կարա-Մուրզան, նպատակ ունենալով իր ամբողջ խմբով երգել քառաձայն պատարագը, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից ստանում է Մակար Թեղուտեցի կաթողիկոսի համապատասխան ԹույլտվուԹյունը. 1887 Թ. Զատկի տոնին Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, մե-

---

[1286] Տե՛ս «Արարատ», 1871, Ա, էջ 336:
[1287] «Արարատ», 1874, Բ, էջ 40:
[1288] «Հայկական աշխարհ», Բագու, 1878, № 10-11-12, էջ 300-301:

ներդիչներ Արտաշես Սուքիասյանի, Մակար Վարդիկյանի և Ներսես Շահլամյանի մասնակցությամբ, առաջին անգամ կատարվում է քառաձայնված պատարագը և արժանանում հավանության: «...Բազուայ հայոց եկեղեցում ամբողջ պատարագը երգում է քառաձայն. թէ առաջնորդը և թէ ժողովուրդը այդ նորութիւնը հաւանում և ընդունում են շնորհակալութեամբ»[1289],- գրում է Կարա-Մուրզայի կենսագիր Հովհ. Կարապետյանը:

Թեմի առաջնորդ Միսրոպ արքեպ. Սմբատյանցի թեմակալության տարիներին վերանորոգվում է նաև արդեն իսկ խարխլված գմբեթը: Դրա մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում Բաքվում այդ տարիներին բնակվող ճարտարապետ, հասարակական-քաղաքական դործիչ Հովհ. Քաջազնունին: 1894 թ. մայիսի 28-ին տիկնոջը հասցեագրած նամակում նա գրել է. «Այստեղի հասարակութիւնը երեկ կանչում էր խորհրդի: Եկեղեցու գմբեթը պիտի քանդեն, նորը չինեն: Ես էլ կանչված էի: Գուցն այդ աշխատանքը ինձ հանձնվի, առանց վոդի, ի հարկէ՝ ազդային դործ է: Մի ամբողջ կոմիսիա է ընտրվել, որի անդամ լինելը ես էլ պատիվ ունեմ»[1290]: 1894 թ. եկեղեցու վանահայրն է եղել Եղիշե ավ. քհն. Գեղամյանցը[1291]: 1897 թ. մայիսին եկեղեցի այցելած բանասեր և հրապարակախոս Սարգիս Ծոցիկյանը հետևյալ նկարագրությունն է թողել. «Համբարձման տօնի օրն էր, մէկ-երկու բարեկամաց այցելելէ ետք, ուղղուեցայ Հայոց մայր եկեղեցին (ս. Լուսաւորիչ): Տաճարը՝ միջակ մեծութեամբ, կաթուղիկէով, քարաշէն, կամարաձև շէնք մի է: Ունի դեղեցիկ կարմիր խաչկալով սեղան մը, վերնատուն մը կանանց համար, համանման Թիֆլիզի մայր եկեղեցւոյն: Զանգակատունը քակուած է, նորը չինելու նիւթերը պատրաստ: Կըսէին որ եկեղեցին ալ մեծացնելու դիտաւորութիւն մը կայ, որուն պէտքը անհրաժեշտ կըդառնայ երթալով...»[1292]:

Եկեղեցուն մշտապես նվիրատվություններ են արել ազգային բարերարները: Շամախու հայոց թեմի 1896-1898 թթ. առաջնորդ Կարապետ եպս. Այվազյանցի վկայության համաձայն՝ «պ. պ. Օրմա-

---

[1289] Կարապետեան Յովհ., Քրիստաֆոր Կարա-Մուրզա, էջ 39, տե՛ս նաև «Մշակ», Թիֆլիս, 1887, մարտի 1, № 35:

[1290] Դոլուխանյան Լ., Հովհաննես Քաջազնունին ճարտարապետ, Երևան, 1997, էջ 10:

[1291] Տե՛ս Հայկունի Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանց, Ուղեգրական ակնարկեր, Երևան, 2010, էջ 6:

[1292] Ծոցիկեան Ս., Բագու, մայիսի 22 (թղթակցութիւն «Արձագանքի»), «Արձագանք», Թիֆլիս, 1897, մայիսի 28, № 59:

նեանց, Յակոբեան չորս չահեր նուիրած են եկեղեցւոյն, յիշատակ իրանց անուան: Առաջինը երկք հատ, խորանին առջև կախուած, բաւական մեծագիր...Վերջինը միայն մէկ հատ, աւելի մեծ դիրքով, տաճարին կեդրոնը: Ասոնցմէ դատ երկու հատ ալ փոքր չահեր, երկու դասերուն մէջ կախուած, նուիրուած տիկնոջմէ մը, որուն անունը Առաջ. Սրբազանն ալ մոռացած էր»[1293]:

Եկեղեցու հիմնովին ավերված զանգակատան նորովի կառուցման աշխատանքները էջմիածնի Սինոդի թույլտվությամբ 1897 կեսերին նախաճեռնեց թեմի առաջնորդ Կարապետ եպս. Այվազյանը[1294]: Ավարտին է հասցվել 1898 թ[1295]: XIX դարավերջին եկեղեցին արդեն բարեկարգ վիճակում էր:

Մխիթար վրդ. Տեր-Մկրտչյանի՝ ռուսահայոց թեմերի վերաբերյալ կազմած «Տեղեկագրի» համաձայն՝ 1900 թ. դրությամբ Սբ. Գրիգոր Լուսավորիչ և Սբ. Աստվածածին եկեղեցիները միասնաբար ունեցել են 1 վարդապետ, 11 քահանա, 2 եկեղեցական սպասավոր և 49445 ռ. 29 կ. դրամագլուխ[1296]: Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում երգեցիկ մշտական խումբ ունենալու խնդրով մտահոգ կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի 1901 թ. սեպտեմբերի 6-ի կոնդակով եկեղեցում կազմավորվում է 36 հոգուց բաղկացած երգչախումբ, որը երգելու էր տոն և կիրակի օրերին: Խմբավարն էր Ս. Պետերբուրգում երաժշտական կրթություն ստացած Հարություն Պապովյանը[1297]:

Բաքվի հայ բարերարներից չատերը, զանազան առիթներով, դրամական նվիրատվություններով մշտապես զգալի օգնություն են ցուցաբերել եկեղեցուն: Նավթարդյունաբերող Երվանդ Բուդաղյանը 1902 թ. հոկտեմբերին «ի յիշատակ իւր հանգուցեալ մօր՝ Մարիամ Յովսէփեան Բուդաղեանի», նվիրաբերում է 1500 ռ[1298]:

Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին լուրջ փորձության ենթարկվեց, երբ 1903 թ. հունիսի 12-ին, Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինի նախաճեռնությամբ, օրենք հրատարակվեց՝ հայ եկեղեցական կալվածքներն ու դույքերը սեփականացնելու վերաբերյալ: Հայ ժողովրդի ազգային, կրոնական զգացմունքներն ու քաղաքական

[1293] Նույն տեղում:
[1294] Տե՛ս Կարապետյան Ս., Հայերն Ապշերոնյան թերակղզում, «Առավոտ», Երևան, 1997, հուլիսի 26, № 69:
[1295] Տե՛ս Տիգրանյան Է., Հայ ճարտարապետների գործունեությունը Անդրկովկասում, էջ 38:
[1296] Տե՛ս «Արարատ», 1902, Բ, էջ 143, տե՛ս նաև Մխիթար վարդապետ, Ճշվ. աշխ., էջ 36:
[1297] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 53, թ. 8, 10:
[1298] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 91, թ. 1:

չահերը ոտնահարող այդ օրենքի դեմ բնդվզեց Խրիմյան Հայրիկը, որը 1903 թ. օգոստոսի 21-ի կոնդակով կարգադրություն հղեց բոլոր թեմերին՝ եկեղեցու ունեցվածքը քաղաքացիական իշխանություններին չհանձնելու վերաբերյալ[1299]: 1903 թ. սեպտեմբերի 2-ին՝ դույքի բռնագրավման օրը, Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու զանգերի ազդանշանով դավթում հավաքվեց հայ բնակչության հոծ բազմություն. «Վաղ առաւօտից հայոց եկեղեցին եւ բակը ամէն կողմից լցուել էին խուռներում բազմութեամբ. Ամբողջ օրը նետրդայնացած ժողովուրդը անհամբերութեամբ սպասում էր պէտական պաշտօնեայի գալուն»[1300]: ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտրոնական կոմիտեն, կանխազգալով դեպքերի զարգացման ընթացքը, Նիկոլ Դումանի, Գրիգոր Միրզաբեկյանի (Մածուն Խնչո), Թադևոս Ամիրյանի (Գիժ Թաթոս) և Երվանդ Բաբերյանի (Զայլադ) մասնակցությամբ հրավիրված խորհրդակցությունում որոշից եկեղեցու բակից հեռացնել անդեն ամբոխին և զինված դաշնակցական խմբերի օգնությամբ թույլ չտալ կառավարական պաշտոնյաներին՝ մտնել եկեղեցի, և դիմադրել այնքան, մինչև որ անզոր կլինի կռիվը մեծ ուժի դեմ: Գործի պատասխանատվությունը հանձնվեց Երվանդ Բաբերյանին և Գրիգոր Միրզաբեկյանին, որոնց պետք է օգնեին հայդուկային մյուս խմբերը[1301]: Մութն ընկնելուն պես, ոստիկանությունը սկսեց օդակել եկեղեցին, և սկսվեց կատաղի փոխհրաձգություն: Կռիվն ավելի թեժացավ, երբ ոստիկաններին օգնության հասան 2 հարյուրյակ կազակներ և Սալիանի հետևակ գնդից կես վաշտ[1302]: Զորքին հաջողվեց եկեղեցին գրավել միայն կեսգիշերին, մի քանի ժամ տևած մարտերից հետո, երբ արդեն սպառվել էին պաշարվածների փամփուշտները: Նրանց մի մասը, պատուհաններից դուրս պրծնելով, ազատվում է[1303]: Արյունահեղ այդ ընդհարման ընթացքում զոհվեցին 11 և վիրավորվեցին 45 հայեր[1304]:

Եկեղեցու պարիսպը 1913 թ. 10000 ռուբլիով ապիտակ քարով վերաշինել է տիկին Ափիյանցը[1305]: Եկեղեցին հիշատակվում է թե-

---

[1299] Տե՛ս Կոստանդյան է., Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, էջ 413:
[1300] Գիւլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1925, հունվար, Գ տարի, № 3, էջ 125:
[1301] Տե՛ս նույն տեղում, էջ 126:
[1302] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1903, սեպտեմբերի 5, № 193:
[1303] Տե՛ս «Դրօշակ», Ժընեւ, 1903, սեպտեմբեր, № 8, էջ 115:
[1304] Տե՛ս նույն տեղում:
[1305] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, ապրիլի 19, № 82:

մում 1916 թ. գործող եկեղեցիների ցանկում[1306]: Եկեղեցին ամբողջապես կողոպտվել է 1918 թ. սեպտեմբերի 15-ին՝ թուրքական զորքի կողմից Բաքուն գրավելուց հետո[1307]: Ընդ որում, եկեղեցու կրած նյութական վնասը կազմում էր 270.220 ռ.[1308]: Եկեղեցու խորանից թալանել էին Սաղիանի Սբ. Ստեփաննոս Նախավկա վանքի արծաթեղենն ու զգեստները[1309]: Եկեղեցին տուժում է նաև մուսուլմանների կառավարման շրջանում[1310]:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո, երբ Միջին Ասիայում, տեղի թեմական իշխանությանն կաղմալուծման պատճառով, Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը 1920 թ. սեպտեմբեր 3-ի կոնդակով՝ Տաշքենդի, Սամարղանդի, Անդիժանի, Կոկանդի, Աշգաբադի, Ջարջոուի, Ղըզըլ-Ալվատի, Նոր-Բուխարայի, Ջաքլչլարի և Կրասնովոդսկի հայկական եկեղեցիները հանձնեց Բաքվի հայոց թեմի տնօրինությանը, թեմը կոչվեց՝ Բաքվի և Թուրքեստանի, և առաջնորդանիստ դարձավ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին[1311]: 1922 թ. եկեղեցու հոգաբարձության նախագահն էր Արամ Առաքելյանցը[1312]:

<u>ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ</u>: Եկեղեցու կառուցումը սկսվել է Շամախիի հայոց թեմի առաջնորդ Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի թեմակալության օրոք: Կառուցման նախաձեռնողը և դրամական միջոցներ տրամադրողը Թիֆլիսեցի բազմաբնակ հայազգի ոմն Մարիամ Գրիգորյան Միքաէլեն էր: Թեմակալին՝ 1891 թ. հուլիսի 23-ին հղած նամակում Մարիամ Միքաէլեն իր մտադրությունը պայմանավորում էր նրանով, որ, ի տարբերություն հայերի, քաղաքի ռուս բնակչությունն ուներ միայն մի եկեղեցի, ուր կատարում էին ննջեցյալների թաղման կարգը, և քանի որ քաղաքի եկեղեցիներում արգելված էր կատարել ննջեցյալների թաղման կարգ, ուստի ցանկալի կլիներ՝ հայերը ևս իրենց գերեզմանատանը ունենային նմանատիպ եկեղեցի, ուր կարող էին նաև պատարագ մատուցել[1313]: Առաջարկը թեմակալի կողմից ընդունվեց, և առանց հապաղման սկսվեցին շինարարական նախապատրաստական աշխատանքները: Ուշագրավ է, որ թեմակալը ճարտարապետին հանձնարարեց եկեղեցին

1306 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 298, թ. 56:
1307 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 280, թ. 1:
1308 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 189, թ. 7:
1309 Տե՛ս Մատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, թղթ. 126, վավ. 230, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 280, թ. 1:
1310 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 104, թ. 25:
1311 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 2, գ. 2055, թ. 1:
1312 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 404, թ. 3:
1313 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8720, թ. 1:

կառուցել Հայոց մայրաքաղաքներից մեկի՝ Անիի եկեղեցիների ճարտարապետական հորինվածքների ոճով[1314]: 1894 թ. Բաքվում Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի կողմից օրհնվում է կառուցվելիք եկեղեցու արձանագիր մարմարյա հիմնաքարը, որի վրա փորագրված էր. «Յամի Տեառն 1894. և հայկական 4386. ղհիմն սուրբ Յարութեան տաճարիս՝ չինելոյ ծախիւք Տփխիսեցի հայազգի Մարիամու Գրիգորեան Միքաէլ, էօծ առաջնորդ Բագուայ նահանգի Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց»[1315]: Եկեղեցին ճարտարապետական իր հորինվածքով կրկնում է V-VII դդ. տարածում գտած խաչաձև գմբեթավոր եկեղեցիներին: Ունեցել է ութանիստ սրածայր վեղարով ավարտվող գմբեթ: Կառուցված էր սրբատաշ քարով: Եկեղեցին գտնվում էր քաղաքի բլուրներից մեկի վրա, հետագայում՝ Ս. Կիրովի անունը կրող զբոսայգում[1316]:

Եկեղեցու տեղի ու դիրքի վերաբերյալ ուշագրավ բնութագրում է տվել Մեսրոպ արքեպ. Սմբատյանցը. «Մի գեղեցիկ տեսարան կը լինի Բագուին նաեւ մեր հայոց գերեզմանատան փոքրիկ մատուռն, որ ամբողջ քաղաքից երեւում է իբրեւ զարդ և թագ գլխի վրայ դրած՝ բարձրութեան մի լաւ երեւացող տեղում, որ այժմ չինւում է...»[1317]: Հատկանշական է նաև Ս. Ծոցիկյանի բնութագրումը. «Բլուրի մը վրայ կանգնուած այդ եկեղեցին, որ քաղաքին վրայ դէտի դեր կատարողի մը դիրքն ու երեւոյթն ունի, յատուկ է յուշարկաւորական արարողութեանց»[1318]: Նորակառույց եկեղեցին օծվեց 1895 թ. հունվարի 26-ին, թեմի 1895-1896 թթ. առաջնորդական ժամանակավոր տեղապահ Մակար եպս. Բարխուտարյանցի կողմից՝ Սբ. Հովհաննես Մկրտչի անվամբ: Էջմիածնի Սինոդին տեղապահի հղած զեկուցագրում այդ մասին ասված է հետևյալը. «...ի 28 յունվարիս կատարեցի զնաւակատիս և ապա օծի զնոյն տաճար ըստ ծիսի Հայաստանեայց Առաքելական և սուրբ եկեղեցւոց ի 29 յունուար ամսոյս ներկայ ամի. կնքեցի զեկեղեցին յանուն սրբոյն Յովհաննու Մկրտչի, իսկ զխորանն՝ Անդրէի առաքելոյն»[1319]: Թեև եկեղեցին նա-

---

[1314] Տե՛ս նույն տեղում:
[1315] Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 380:
[1316] Տե՛ս Арустамян Б., նշվ. աշխ., стр. 56. Ներկայումս քանդված եկեղեցու տեղում կառուցվել է մզկիթ (տե՛ս նույն տեղում):
[1317] Նույն տեղում, էջ 379-380:
[1318] Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 292:
[1319] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8720, թ. 11:

նապես օծվել է Սբ. Հովհաննես Մկրտչի անվամբ, սակայն Շամախիի հայոց թեմի առաջնորդների՝ եկեղեցիների մասին կազմած տեղեկագրերում հիշատակվում է նաև Սբ. Հարություն անվամբ[1320]: Հատկանշական է, որ վավերագրերում եկեղեցին հիշատակվում է նաև որպես մատուռ[1321]:

Եկեղեցին հիշատակվում է Շամախու հայոց թեմի 1916 թ. դրծած եկեղեցիների ցանկում[1322]: 1922 թ. փետրվարին եկեղեցին գտնվում էր կիսավեր վիճակում: Բաքվի և Թուրքեստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Գրիգորիս վրդ. Յարմիչյանի (1921 նոյեմբերի 4-1922 մարտի՝ 12)՝ Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին 1922 թ. փետրվարի 28-ին հղած գրությունում ասվում էր. «Գերեզմանատան եկեղեցին քանդած աւերակ է և ապականութեանց վայր, որ ևս անճամբ դիտեցի...»[1323]:

ՍԲ. ԹԱԴԵՎՈՍ ԵՎ ՍԲ. ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ: *XIX դարի վերջին Բաքվում հայ բնակչության թիվն այնքան էր ստվարացել, որ անհրաժեշտություն էր առաջացել երրորդ եկեղեցի ունենալը, որի կառուցման համար միջոցներ էր կտակել մեծահարուստ Ենովք Բուդաղյանը[1324]: «Բադուի հայ ժողովուրդը չատացել է, եղած երկու եկեղեցին փոքրութիւն է անում, բոլոր ծխականները — մանաւանդ տօն օրերին հնարաւորութիւն չեն ունենում եկեղեցի մտնելու և այլն: Պէտք է նոր եկեղեցի չինել»[1325],- գրում էր այդ օրերին «Մշակը»: Եկեղեցու կառուցման նախագծի համար 1899 թ. հայտարարված մրցանակաբաշխությանը նախագծերով հանդես եկան Մոսկվայի, Ս. Պետերբուրգի և Բաքվի ճարտարապետները: Նախագծային իր աշխատանքով մրցանակաբաշխությանը մասնակցեց նաև Ս. Պետերբուրգի «Քաղաքացիական ինժեներների ինստիտուտի» շրջանավարտ ճարտարապետ Գաբրիել Տեր-Միքելյանը՝ իր ընկերոջ՝ Ալ. Ռոտինյանի հետ[1326]: Մրցույթում առաջին մրցանակը չահում է ակադեմիկոս Գ. Գրիմը, իսկ երկրորդը՝ քաղաքացիական ինժեներ Ա. Դիտրիխը, երրորդը՝ ճարտարապետ Տ. Բերհարդը: Ի դեպ, երեքն էլ Ս. Պետերբուրգից էին: Ուշադրավ է այն հանգամանքը, որ թեև չահել էր Գ. Գրի-*

1320 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 298, թ. 56, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 20:
1321 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 149 ց. 1, գ. 141, թ. 232:
1322 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 298, թ. 56:
1323 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 404, թ. 3:
1324 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 462, ց. 1, գ. 4, թ. 43, տե՛ս նաև ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 29:
1325 «Մշակ», Թիֆլիս, 1897, ապրիլի 26, № 48:
1326 Տե՛ս Տիգրանյան Է., Ճարտարապետ Գաբրիել Տեր-Միքելյան, «Էջմիածին», 1971, Գ, էջ 51:

մի նախագիծը (անկյունում գրված է հղել առաջին մրցանակ), սակայն, Գ. Տեր-Միքելյանի ներկայացրած նախագծի վրա գրված է եղել «գործադիր նախագիծ»[1327]: Այդ նախագիծը հորինվածքային կառուցվածքով հիշեցրել է Անիի Մայր տաճարի հատակագծային մոդելը[1328]: Սակայն այս մրցույթի և ոչ մի նախագիծ ինչ-ինչ պատճառներով չի ընդունվում շինարարության համար, ուստի և հարցի լուծումը հետաձգվում է մինչև 1906 թ.: Նույն տարում հայտարարվում է եկեղեցու նախագծի երկրորդ մրցանակաբաշխություն, որտեղ Գ. Տեր-Միքելյանի ներկայացրած նախագիծը չահում է առաջին մրցանակ: Առաջին մրցանակ է շահում նաև Պետերբուրգից մասնակցած ճարտարապետ Վ. Պոկրովսկին: Բայց քանի որ վերջինիս նախագիծը ոչ մի ընդհանուր բան չուներ հայկական եկեղեցաշինական արվեստի հետ, ուստի թեմի եկեղեցական հանձնաժողովը որոշում է եկեղեցին կառուցել Գ. Տեր-Միքելյանի ներկայացրած նախագծով: Սակայն այս անգամ ևս նախագծերից ոչ մեկը չի իրականացվում: Հարցը ձգձգվում է և ստանում բոլորովին այլ լուծում: Հանգուցյալ մնծահարուստ Բուդաղյանի կտակարարները (Բ. Դոլուխանյան, Ստ. Այվազյան) 1906 թ. որոշում են եկեղեցու նախագծումն ու շինարարությունը հանձնել ճարտարապետ Հովհ. Տեր-Հովհաննիսյանին (Քաջազնունի): Ինքնակենսագրականում Հովհ. Քաջազնունին գրում է, որ իրեն, որպես ճարտարապետի, այդ աշխատանքը մեծ ոգևորություն է պատճառել «մինչնադարյան հայ ճարտարապետական ոճի՝ ժամանակակցի փոխարինելու մոնումենտալ շինարարությունում ի հայտ բերելու հնարավորության վաղուց զբաղեցնող գաղափարով»[1329]:

1906 թ. սեպտեմբերի 26-ին կատարվում է եկեղեցու հիմքի օծումը: Եկեղեցին կառուցվում էր Բոնդարնայա փողոցում (հետագայում՝ Դմիտրով): Սակայն Հովհ. Քաջազնունուն չհաջողվեց ավարտին հասցնել եկեղեցու շինարարությունը: ՀՅ Դաշնակցության կուսակցության դեմ ուղղված լիժինյան հալածանքների պատճառով նա 1910 թ. վերջերին թողնում է Բաքուն և հաստատվում Փարիզում[1330]: Քաջազնունու բացակայության ժամանակ շինարարական գործը վերահսկում է Հայոցդի ճարտարապետ Նիկողա-

---

[1327] Նույն տեղում, էջ 52:
[1328] Տե՛ս նույն տեղում:
[1329] Քաջազնունի Հովհ., Ազգ և հայրենիք, Երևան, 2008, էջ 8:
[1330] Տե՛ս նույն տեղում, էջ 9:

յոս Բաևը[1331]: Դրամի բացակայության պատճառով շինարարական աշխատանքների կարճ ժամանակով դադարեցվում են և վերսկսվում 1913 թ. ապրիլի սկզբներին[1332]: Աշխատանքներն ավարտին են հասցվում 1913 թ. հունիսի սկզբներին[1333]:

Նորակառույց եկեղեցին կառուցված էր սպիտակ սրբատաշ քարից, ուներ 1000 տեղանոց աղոթասրահ և ընդարձակ նախասրահ[1334]: Եկեղեցու հատակագծի հիմքում պահպանվել է կենտրոնագմբեթ, հավասարակողմ խաչի հայեցակարգը, գլխավոր ծավալի չորս անկյունները ձևավորված էին չորս պարագծով կորագիծ խորաններով: Արևմտյան ճակատին կից կառուցված էր եռաթռիչք կամարաշարով, աստիճանաձև նեղացող ուղղաձիգ վեր սլացող աշտարակով զանգակատունը: Ունեցել է սրածայր վեղարով ավարտվող 16 նիստանի թմբուկ, որը հենված էր երկու խաչաձև հզոր կամարների վրա, ինչի շնորհիվ ընդարձակվել է աղոթասրահի տարածքը: Արևմտյան ճակատն ուներ եռակամար լուսամուտների խմբեր: Արտաքուստ արևելյան կողմում ընդգծված կիսաշրջան խորանն էր: Նույնպիսի լուծում ունեին նաև խորանի երկու կողմերում գտնվող ավանդատները: Եկեղեցին իր ընդհանուր գծերով և հորինվածքով աչքի էր ընկնում սլացիկությամբ և համաչափությամբ: Սպիտակ քարի և ոսկու նուրբ չերտով հարդարման զուգակցումը արևի ճառագայթների ներքո անկրկնելի վեհություն են տվել եկեղեցուն[1335]: Ականատեսների վկայությամբ՝ դա Բաքվի ամենագեղեցիկ շենքն էր: «Այսօր Բուդաղեան բարեգործութիւնների մէջ ամենափառահեղը այն հոյակապ չինութիւնն է, որ թագաւորում է քաղաքի կենտրոնում»[1336],- դրել է ժամանակին Ալ. Շիրվանզադեն:

Բաքվի հայ բարերարները պարբերաբար նվիրատվություններ են կատարել եկեղեցուն. բաքվաբնակ Հակոբ Խոջամիրյանը 1914 թ. հոկտեմբերի 16-ին եկեղեցուն է նվիրաբերել հին ձեռագիր մագաղաթյա մի Ավետարան[1337]: Նույն թվականին եկեղեցու բարեբար Ենովք Բուդաղյանի աճյունը տեղափոխվում է եկեղեցի և թաղ-

---

[1331] Տե՛ս Տիգրանյան Է., Հայ ճարտարապետների գործունեությունը Անդրկովկասում, էջ 38:
[1332] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, ապրիլի 19, № 82:
[1333] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, հունիսի 12, № 127:
[1334] Տե՛ս Դոլուխանյան Լ., նշվ. աշխ., էջ 10:
[1335] Տե՛ս Տիգրանյան Է., Հայ ճարտարապետների գործունեությունը Անդրկովկասում, էջ 237:
[1336] Շիրվանզադե, Ամենակարեւորը, «Մշակ», Թիֆլիս, 1914, ապրիլի 3, № 72:
[1337] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 181, թ. 63:

վում նրա գավթում: Եկեղեցին հիշատակվում է 1916 թ. գործած եկեղեցիների ցանկում[1335]: Արխիվային մի վավերագրի տեղեկացմամբ՝ Հովհ. Քաջազնունին, կոտակարար Բ. Դոլուխանյանի հանձնարարականով, եկեղեցու դռներն ու լուսամուտները հայտնի արհեստանոցներում պատրաստելու նպատակով, 1918 թ. դեկտեմբերի 24-ից հունվարի 22-ը, Բաքվից մեկնում է Ս. Պետերբուրգ, Մոսկվա և Օդեսա[1339]:

Եկեղեցին թուրք-թաթարների կողմից ամբողջապես կողոպտվում է 1918 թ. սեպտեմբերի 15-ին՝ թուրքական զորքի կողմից Բաքուն գրավելուց հետո[1340]: Եկեղեցու կրած նյութական վնասը կազմում էր 88740ռ.[1341]: 1922 թ. եկեղեցու հոգաբարձության նախագահն էր Հայկ Տեր-Միքայելյանը[1342]:

ՍԲ. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ: Գտնվում էր քաղաքի արվարձան Հայկավանում՝ «Արմենի արվարձանում», նախկինում եղած աղոթատան տեղում, Армянская-8 հասցեում[1343]: Եկեղեցու կառուցման աշխատանքները սկսվում են 1906 թ. նոյեմբերին[1344]: Այդ նպատակով տուղի հայ բնակչությունը բնարում է լիազոր մարմին: Անդամներն էին՝ Գրիգոր Բաղիրյանը, Ռաֆայել Աբրահամյանը, Մարտիրոս Տեր-Նահապետյանը, Արսեն Իսախանյանը և Բաքվի եկեղեցիների գործակալ Զավեն վարդապետը: Մասնաժողովը կազմում և թեմի առաջնորդին է ներկայացնում եկեղեցու հատակագիծը: Շինության համար նախատեսվում էր 25000 ռուբլի[1345]: Եկեղեցու քարագործ վարպետն էր Համբարձում Գրիգորյանը[1346]: Եկեղեցին օծվել է 1907 թ. հոկտեմբերին՝ ձեռամբ Շամախու հայոց թեմի 1903-1914 թթ. առաջնորդ Անանիա եպս. Համազասպյանի[1347]: Եկեղեցին չի ունեցել կալվածք: 1909 թ. եկեղեցում քահանայագործում էր Սարգիս Տեր-Նահապետյանը[1348]:

1338 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 298, թ. 56:
1339 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 181, թ. 17:
1340 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 280, թ. 1:
1341 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 189, թ. 7:
1342 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 404, թ. 3:
1343 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 29, տե՛ս նաև ֆ. 458, ց. 1, գ. 188, թ. 34:
1344 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 188, թ. 26:
1345 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 188, թ. 12:
1346 Տե՛ս նույն տեղում:
1347 Տե՛ս նույն տեղում, թ. 26:
1348 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1835, թ. 24, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 188, թ. 14:

1911 թ. հոկտեմբերի 15-ի տվյալներով՝ եկեղեցին ուներ 377 ծխական[1349]: Եկեղեցին հիշատակվում է թեմում 1912[1350] և 1916 թթ. գործող եկեղեցիների ցանկում[1351]: 1916 թ. եկեղեցու երեցփոխանն էր Գրիգոր Բաղրյանը, որին հաջորդել է Ռաֆայել Աբրահամյանը: Նույն թվականին եկեղեցին ուներ 1063 ռ. դրամագլուխ, ոսկե և արծաթե անոթներ, զարդեր, զգեստներ և այլն[1352]: Երկար տարիներ. եկեղեցում քահանայագործել է Մարտիրոս Տեր-Նահապետյանցը[1353]: Եկեղեցին թուրք-թաթարների կողմից ամբողջապես կողոպտվում է 1918 թ. սեպտեմբերի 15-ին՝ թուրքական զորքի կողմից Բաքուն գրավելուց հետո[1354]: Եկեղեցու կրած նյութական վնասը կազմում էր 37740 ռ.[1355]:

ՍԲ. ՀՈՒՓՍԻՄԻ: XIX դարի վերջին Բաքու քաղաքի արվարձաններ՝ նավթարդյունագործական «Սև քաղաքում», Բալախանիում և Բիբի Հեյբաթում, հայ բնակչության սուվարացման պատճառով, թեմական խորհուրդը, առաջնորդ Կարապետ եպս. Այվազյանցի օրոք (1896-ղեկտեմբերի 20-1898 մարտ), 1898 թ. որոշում է Բիբի-Հեյբաթի և Բալախանու հատվածներում կառուցել եկեղեցի[1356]: 1901 թ. հունվարի սկզբներին տեղի ունեցած Բաքվի նավթարդյունաբերողների արտակարգ ժողովը, քննության առնելով նավթահանքերում եկեղեցու կառուցման հարցը, արձանագրում է, որ դեռևս չի ստացվել եկեղեցու կառուցման թույլտվությունը[1357]: Եկեղեցու կառուցման աշխատանքները ձգձգվում են անորոշ ժամանակով: Թեմի առաջնորդ Անանիա եպս. Համազասպյանը՝ Բաքվի եկեղեցիների գործակալ Զավեն վարդապետին 1908 թ. փետրվարի 26-ի հղած գրությամբ թույլատրում է՝ նախքան եկեղեցու շինության սկսումը, կառուցել աղոթատուն. «Ըստ յայտարարութեան բարձրապատուութեան Ձերոյ ի 15 ամսոյս նիրկայ ամի թ. 155 թուլլատրում ենք մինչ դշինութիւն եկեղեցւոյ ունենալ զաղօթատունս ի սև քաղաքի, ի Բիբի Էյբաթի և ի Բալախանի յարուարձանս»[1358]:

[1349] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 200, թ. 4-11:
[1350] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 29:
[1351] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 298, թ. 56:
[1352] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 289, թ. 2:
[1353] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 14, գ. 298, թ. 85:
[1354] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 280, թ. 1:
[1355] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 189, թ. 7:
[1356] Տե՛ս Ակնարկ Է., նշվ. աշխ., էջ 91:
[1357] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1901, հունվարի 9, № 3:
[1358] ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 167, թ. 2:

Եկեղեցու կառուցման համաձայնությունը Քաղաքային Դուման տալիս է 1909 թ. սեպտեմբերի 29-ին[1359]: Այդ նպատակով «Բարձրագոյն հաստատութեամբ» հատկացվում է 2200 քառ. սաժեն հողատարածք[1360]: Եկեղեցու կառուցման հովանավորությունը ստանձնում է «Բաքվի նավթարդյունաբերողների խորհրդի» նախագահ Արշակ Ղուկասյանն իր մայր Հռիփսիմեի հետ: Անանիա եպս. Համազասպյանի 1912 թ. նոյեմբերին գրած գրությունում ասվում է. «Ա. Ղուկասեանր և իւր ծերունի Հռիփսիմէ մայրը՝ ցանկութիւն յայտնեցին իրենց ծախքով մի եկեղեցի կառուցանել քաղաքից տրուած նոյն գետնի վրայ»[1361]: Ա. Ղուկասյանն այդ նպատակով նախապես հատկացրել էր 20000ռ.[1362]: Ընդհանուր առմամբ՝ շինության համար ծախսվելու էր շուրջ 70000 ռ.[1363]: Եկեղեցու հիմնարկեքը պետք է տեղի ունենար 1912 թ. ամռանը, սակայն նախագծի հաստատումը ձգձգվելու պատճառով այն տեղի չունեցավ[1364]: Հատակագիծը հաստատվեց ավելի ուշ՝ 1914 թ. փետրվարի 17-ին: «Արարատ» ամսագրում այդ մասին ասված է հետևյալը. «Սինոդը լսելով Տ. փոխարքայի մարտի 9-ի թ. 7239 գրութիւնը, որոշեց ուղարկել եկեղեցու հաստատած հատակագիծը և նախահաշիվը, պատվիրել Շամախու կոնսիստորիային հայտնել Կոմմերցիի սովետնիկ պ. Արշակ Ղուկասյանին, թէ Թագաւոր Կայսրը այս տարվա փետ. 17-ին բարձրագոյնս բարեհաճել է թոյլ տալ կառուցանել եկեղեցին Բագուում»[1365]: Եկեղեցու ճարտարապետն էր Գաբրիել Տեր-Միքելյանը[1366]: Եկեղեցին օծվելու էր Սբ. Հռիփսիմե անվամբ[1367]: Ա. Ղուկասյանը ցանկություն էր հայտնել իր հոր՝ Հովսեփի աճյունը թրքաց թաղում

[1359] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 167, թ. 6:
[1360] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 29:
[1361] ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 167, թ. 9:
[1362] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 29:
[1363] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 167, թ. 9:
[1364] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 29:
[1365] «Արարատ», 1916, Գ-Դ, էջ 203:
[1366] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 149, ց. 1, գ. 237, թ. 3:
[1367] Ի դեպ, Ղուկասյան եղբայրներից Հակոբը, ի հիշատակ Յալթայում վաղաժամ մահացած դստեր՝ Հռիփսիմեի, 1905-1909 թթ. Սբ. Հռիփսիմե տաճարի նման մի երկհարկանի եկեղեցի է կառուցել ստեղի ամենաբարձր բլուրներից մեկի վրա: Եկեղեցին նախագծել է Գ. Տեր-Միքելյանը: Եկեղեցու առաջին հարկը եղել է հանգստարան, որտեղ գտնվում է Հռիփսիմեի շիրիմը: Եկեղեցու այդ մասը հետագայում դարձավ Ղուկասյանների տոհմական դամբարան (տե՛ս Տիգրանյան Է., Գաբրիել Տեր-Միքելյան (կյանքն ու գործունեությունը), Երևան, 1981, էջ 29, տե՛ս նաև Ստեփան սրկ. Կարապետյան, Յալթայի հայոց եկեղեցին, «Էջմիածին», 1984, Դ, էջ 59-60):

գոնվող հայոց նախկին գերեզմանատնից փոխադրել և վերաթաղել նկեղեցու բակում կամ գավթում[1368]*: Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը 1914 թ. մայիսի 14-ին նկեղեցու բարերար Ա. Ղուկասյանին հղած օրհնության կոնդակում թույլատրում էր եկեղեցու զանգակատան տակ թաղել իրենց ննջեցյալներին և չինել տոհմական դամբարան*[1369]*: Կաթողիկոսը 1914 թ. մայիսի 14-ի կոնդակով օրհնեց Ա. Ղուկասյանին եկեղեցու կառուցումը նախաձեռնելու համար, «...օրհնելով Ղուկասեանին և նրա ծախքով Բաքւում նոր կառուցանելի յանուն Ս. Հռիփսիմեայ եկեղեցու գործը»*[1370]*: Սակայն, ցարական կառավարության, մասնավորապես Կովկասի կառավարչապետ, հայատյաց Գ. Գոլիցինի կողմից ստեղծված արհեստական արգելքների պատճառով եկեղեցու կառուցման աշխատանքները ձգձգվեցին: Իսկ «Բաքվի նավթարդյունաբերողների խորհրդին» պատրաստվող հոգալ Բաքվում կառուցվող ռուս ուղղափառ եկեղեցու չինարարական ծախսերը: Ցարական իշխանությունների հայ եկեղեցու նկատմամբ ցուցաբերած խտրական քաղաքականությանը հետևյալ գնահատականն է տվել հասարակական-քաղաքական գործիչ Է. Ակնունին (Խաչատուր Մալումյան), գրելով. «Սունկի նման են բուսնում ուղղափառ եկեղեցիները Կովկասի զանազան ծայրերում: Եկեղեցասէր հոտը չէ, որ կառուցում է, այլ պետական գանձարանը: Սակայն այն նոյն ծրագրի մէջ չէ մտնում օտար դաւանութեան եկեղեցիների բազմանալը, և թէ ինչու հայերին հաճախ թոյլտվութիւն չեն տալիս իրենց սեփական ծախսով իսկ եկեղեցի կառուցել: Մի անգամ մակարդակը, իսկ յաճախ բացարձակ մերժումն, առանց պատճառաբանութեան: Հինգ տարի կը լինի, ինչ Բագուի հայերը ուզում են եկեղեցի կառուցել Բալախանի ուր աւելի քան տասն հազար մշակներ կան, դեռ ևս կապւած կրօնական ծէսերին, սակայն կառավարութիւնը չի թոյլատրում»*[1371]*: Եկեղեցու կառուցման գործը այդպես էլ չձեռնարկվեց: Այն չի հիշատակվում թեմում 1916 թ. գործած եկեղեցիների ցանկում*[1372]*:*

<u>ՍԲ. ԱԱՀԱԿ ԵՎ ՍԲ. ՄԵՍՐՈՊ</u>: *XIX դարի վերջերին Բաքվի արվարձաններից Բալախանիում և Սաբունչիում հայ բնակչությունն այնքան է սուվարանում, որ դրանք դառնում են գրեթե զուտ հայկական թաղամասեր: 1896 թ. Սաբունչիում իր միջոցներով եկեղեցի*

[1368] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 167, թ. 9:
[1369] Տե՛ս նույն տեղում, թ. 16:
[1370] Նույն տեղում, տե՛ս նաև ֆ. 149, ց. 1, գ. 167, թ. 16:
[1371] Ակնունի Է., նշվ. աշխ., էջ 91:
[1372] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 298, թ. 56:

կառուցելու մտադրություն է հայտնում բաքվաբնակ Եղիա Եղիազարյանը, բայց իշխանություններն արգելում են իրականացնել այդ մտահղացումը[1373]: Սակայն տեղի հայությունը չհրաժարվեց եկեղեցի ունենալու մտադրությունից: Շամախու հայոց թեմի առաջնորդ Անանիա եպս. Համազասպյանը՝ հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին 1912 թ. օգոստոսի 16-ին հղած զեկուցագրում գրում է, որ եկեղեցի պետք է կառուցվի նաև «Բալախանու մեծ ճանապարհի վրայ, որ հայաշատ բնակավայր է և համարւում է գուտ հայկական թաղ»[1374]: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ կարիք էր զգացվում այդտեղ կառուցել առանձին եկեղեցի: Բաղաքային Դուման 1903 թ. սեպտեմբերի 29-ին տալիս է Բալախանիում եկեղեցու կառուցման թույլտվությունը, իսկ 1912 թ. դեկտեմբերի 12-ին հատկացնում հողատարածք[1375]:

Եկեղեցու կառուցման շինարարական աշխատանքները սկսվում են 1914 թ.՝ թեմի առաջնորդ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի օրոք: Եկեղեցու կառուցման նպատակով կազմավորված հոգաբարձությունը ղեկավարում էր «Բաքվի հայոց կուլտուրական միության» կրթական մասնաճյուղի նախագահ, ինժեներ Գեղամ Կոստանյանցը[1376]: Նույն թվականի սեպտեմբերի 14-ին տեղի է ունենում Սբ. Սահակ և Սբ. Մեսրոպ անվամբ եկեղեցու հիմնարկնքը: Գ. Կոստանյանցի՝ հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին այդ առիթով հղված հեռագրում ասված է. «Այսօր առաւօտեան, սեպտ.[եմբերի] 14-ին տառերի գիւտի բազմադարեան յիշատակին Բալախանիում դրուեց և օծուեց ս. Սահակ և Մեսրոպ անուան եկեղեցու հիմքը»[1377]: Կաթողիկոսի պատասխան հեռագրում ասված է հետևյալը. «Բագու, կոմիտէտի նախագահ ինժեներ Գեղամ Յովհաննեան Կոստանեանին: Օրհնում եմ Ձեզ, ս. Սահակի և Մեսրոպի անուն եկեղեցու շինութեան հոգաբարձութեան կոմիտէտին և եկեղեցու օծմանը բոլոր ներկայ հաղորդներին»[1378]: Սակայն այս եկեղեցին էլ դարձյալ ինչ-ինչ պատճառներով այդպես էլ չկառուցվեց: Այն չի հիշատակվում թեմում 1916 թ. գործած եկեղեցիների ցանկում[1379]:

<u>ՍԲ. ԵՂԻԱՅԻ ԵՎ ԱՆԴՐԵԱՍԻ ՄԱՏՈՒՅՑ</u>: Բաքվի և շրջակայքի հայ բնակչությունն իր պաշտամունքային ծեսերը կատարել է նաև Բու-

---

[1373] Տե՛ս Կարապետյան Ս., Հայերն Ապշերոնյան թերակղզում, «Առավոտ», Երևան, օգոստոսի 9, 1997, № 79, էջ 9:
[1374] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 29:
[1375] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 149, ց. 1, գ. 167, թ. 1, 5-6:
[1376] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1914, սեպտեմբերի 26, № 141:
[1377] Նույն տեղում:
[1378] Նույն տեղում:
[1379] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 298, թ. 56:

գովնայի Սբ. Եղիայի և Անդրեասի մատուռում[1380]: *Նախընթացում մանրամասն ներկայացրինք մատուռի ավելի վաղ ժամանակաշրջանի պատմությունը: Նշենք, որ մատուռը նշանավոր էր նրանով, որ այդտեղ էր հիմնականում օգոստոսի 12-18-ը նշվում Հայ եկեղեցու հինգ Տաղավար տոներից մեկը՝ Սբ. Աստվածածնի վերափոխման հիշատակի օրը: Հետևապես, Բաքվի հայ ուխտավորների հոսքը այդտեղ երբեք չի դադարել: Ուխտավորները գալիս էին ինչպես մերձակա վայրերից, այնպես էլ շրջակա գավառներից: Հաշվի առնելով այդ հանգամանքը, շամախեցի առևտրաարդյունաբերող Սահակ Ադամյանը 1830 թ. մատուռի արևմտյան կողմում ուխտավորների համար կառուցում է երեք քարաշեն սենյակ*[1381], *իսկ Լևոն Յաղուբյանի բարերարությամբ 1862 թ. սեպտեմբերին հիմնովին վերանորոգվում է մատուռը: Մատուռի մուտքի վերնամասում փորագրված էր. «Կառուցաւ մատուռս սրբոյն Եղիայի և Անդրէի արդեամբ և ծախիւք աստիճանաւոր Լևոն Կասպարեան Եաղուբեանց ի 30-ն սեպտ. 1862 թ.»*[1382]: *1874 թ. «Տոմար ընտանեկան» օրացույցի մի տեղեկության համաձայն՝ «Բազաքիս մօտ 30 վերստ հեռաւորութեամբ Ապշերոնի թերակղզիի վրայ գտնւում են հայոց սրբոցն Անդրէի և Եղիայի գերեզմանները, որոնց վրայ վերջի ժամանակները մատուռ չինուեցաւ»*[1383]: *Բաքվից «Մշակին» 1874 թ. սեպտեմբերին հղած թղթակցությունում Ալ. Քալանթարյանը տեղեկություններ հաղորդելով Բուզովնա գյուղի և մատուռի մասին, գրում է. «Միւս գիւղերից աւելի բազմամարդ, նշանաւոր և գրաւիչ բազուեցու համար Բուզովնան է... Բուզովնայի նշանաւորութիւնը կայացած է նրանում, որ նա կազմում է թէ ամարանոց թէ ուխտատեղին: Ուխտատեղին – մի մատուռ է «Սուրբ Եղիա և Անդրէաս» անունով: Դրանք, ինչպէս ինձ ասացին, բարեպաշտ վարդապետներ են եղել, որ ճգնաւորական կեանք են այստեղ վարում եղել: Այդ մատուռը ընդունել է մի ուրիշ նշանակութիւն բազուեցու համար: Դրա գլխաւոր տօնը կատարվում է Աստուածածնի վերափոխման*

[1380] Տե՛ս Автономовь-Спасский К., Описание Бакинского уезда Шемахинской губернии, КК на 1856 г., отд. III, стр. 502.

[1381] Տե՛ս Տէր-Յովհաննիսեանց Եր., նշվ. աշխ., էջ 484:

[1382] Նույն տեղում, էջ 484:

[1383] Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, էջ 124: Պետք է նկատել, որ «մատուռ չինուեցաւ» արտահայտությունը վերաբերում է շինության վերականգնմանը կամ հիմնովին վերաշինմանը, քանի որ մատուռը հիշատակվում էր դեռևս XV դարի 20-ական թվականների սկզբներից (տե՛ս Տէր-Յովհաննիսեանց Եր., նշվ. աշխ., էջ 483):

օրը և ժողովուրդը քաղաքից ժողովում է մեծ թվով»[1384]*: Մատուռը մեծապես տուժից 1905 թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ*[1385]*:*

Ամփոփելով նշենք, որ Բաքվի հայկական եկեղեցիներն ու Բուգովնայի մատուռը՝ մահմեդական հոծ զանգվածով շրջապատված քաղաքի և շրջակա հայության համար եղան այն հզոր կառույցները, որոնց շնորհիվ երկար ժամանակ պահպանվեցին հայ համայնքի ազգային ծնողը, հավատալիքները, մշակույթը, դավանանքը և ընդհանրապես հայկական ոգին:

Հարկ է նշել, որ XIX-XX դդ. ևս Բաքվի հայությունը մշտապես գտնվել է հայոց կաթողիկոսների հոգածության ներքո: Տարբեր ժամանակներում Բաքու հովվապետական այցելություն են կատարել Մակար Ա Թեղուտեցին, Մկրտիչ Ա Վանեցին և Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցին:

Մակար Թեղուտեցին Բաքու ժամանեց 1888 թ. հոկտեմբերի 22-ին: Վեհափառին ուղեկցում էին Թադևոս արքեպիսկոպոսը, Թիֆլիսի և Արցախի թեմերի առաջնորդներ Արիստակես և Կարապետ եպիսկոպոսները, Հաղարծնի վանքի վանահայր Պողոս վարդապետը, գավազանակիր Սահակ վարդապետը և բարձրապատիվ այլ հոգևորականներ: Կայարանում Վեհափառին դիմավորողների առաջին շարքում էին Շամախու հայոց թեմի առաջնորդ Մեսրոպ արքեպ. Սմբատյանը, քաղաքագլուխ Դ. Զինովիչը, ոստիկանապետը, քաղաքապետի տեղապահ և «Մարդասիրական ընկերության» նախագահ Հր. Անտոնյանը և բարձաստիճան այլ անձինք: Վեհափառին արժանապատիվ ընդունեցին նաև նահանգապետը և մահմեդականների մուֆտին: Քաղաքի հայությունն ապրում էր տոնական տրամադրության մեջ: Փողոցները զարդարվել էին եռագույն դրոշներով, կարպետներով ու ծաղիկներով: «Արձագանքն» այդ օրերին գրում էր. «...փողոցներում տները զարդարված էին եռագոյն դրոշակներով, կարպետներով, և ծաղիկներով, հոգևորական դասը զգեստավորուած սպասում էր հրապարակի վերայ, որի ամբողջ երկարութեամբ ձգած էր կարմիր մահուդ. նեղ անցքի երկու կողմով շարուած էին հայ ուսանողուհիները, բնակական դպրոցի հայ աշակերտները և մեր ծխական երկսեռ դպրոցների սանները»[1386]*: Առաջին այցը, որ կատա-*

[1384] Քալանթարեանց Աղ., Նամակ Բուգովնայից, «Մշակ», Թիֆլիս, 1914, սեպտեմբերի 19, № 37:
[1385] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 217, թ. 1:
[1386] «Արձագանք», Թիֆլիս, 1888, հոկտեմբերի 9, № 39:

ինց Վեհափառը և նրան ուղեկցող չքախումբը, Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին էր, ուր «կարդացուեցին սահմանեալ աղօթքներն»[1387]: Վեհափառն այցելեց նաև Սբ. Աստվածածին եկեղեցի, ուր, օրհնելով իր չուրջը հավաքված ժողովրդին, Դ. Զինովիչի և Ֆր. Անտոնյանցի ուղեկցությամբ կառքով մեկնեց քաղաքի Մարիամյան օրիորդաց գիմնազիան[1388]: Վեհափառի այցելության պատվին նավթարդյունաբերող մեծահարուստ Սամվել Բաղրյանի տանը կազմակերպվել էր ճաշկերույթ[1389]: Հաջորդ օրը Վեհափառն այցելում է նաև հայոց եկեղեցական ծխական երկսեռ ուսումնարաններ[1390], իսկ երեկոյան եղավ նաև Բալախանի նավթահանքերում և հանդիպեց գործարանատերերին՝ հորդորելով նրանց մշակների հետ վարվել սիրով և չզրկել վարձերից[1391]: Բաքվից մեկնելուց առաջ տեղի հայությունը Վեհափառին նվիրաբերեց 12000 ռ.՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի նորոգության համար: Հոկտեմբերի 26-ին Վեհափառը մեկնեց Բաքվից[1392]:

Բաքվի հայերի պատմության մեջ հիշարժան և նշանակալից իրադարձություն էր հատկապես հայոց կաթողիկոս, հայ ժողովրդի մեծ երախտավոր, հասարակական-քաղաքական ու հոգևոր գործիչ Մկրտիչ Խրիմյանի 1898 թ. փետրվարի 5-13-ը Բաքու կատարած պաշտոնական այցելությունը: 1898 թ. հունվարին, երբ Վեհափառը հայկական վանկված դպրոցները վերաբացելու առիթով Թիֆլիսում բանակցություններ էր վարում Այսրկովկասի կառավարչապետ իշխան Գ. Գոլիցինի հետ, Բաքվից փետրվարի 1-ին նրան այցելության են գալիս տեղի եկեղեցիների գործակալ Գրիգոր ավ. քհն. Գրիգորյանցը, Գր. Այվազյանը, Թ. Ամիրյանը, Հ. Ադամյանը, Կ. Խաուխյանը և խնդրում Վեհափառին՝ այցելելու Բաքու[1393]: Խրիմյան Հայրիկը, չմերժելով պատգամավորների խնդրանքը, Վրաստանի և Իմերեթիայի հայոց թեմի առաջնորդ Գևորգ արքեպ. Սուրենյանին, Գևորգ ծ. վրդ. Երիցյանին, Կորյուն վարդապետի և Բաքվից եկած պատգամավորների ուղեկցությամբ փետրվարի 4-ին մեկնում է Բա-

---

[1387] Ամենայն հայոց վեհափառ Մակար կաթուղիկոսի ճանապարհորդութիւնը, «Արարատ», 1888, ԺԱ, էջ 710:
[1388] Տե՛ս նույն տեղում, էջ 712:
[1389] Տե՛ս նույն տեղում, էջ 713:
[1390] Տե՛ս նույն տեղում, էջ 713-414:
[1391] Տե՛ս նույն տեղում, էջ 718:
[1392] Տե՛ս նույն տեղում, էջ 720:
[1393] Տե՛ս Սոխակ Հայաստանի: Ազգային լիակատար երգարան, հրատարակեց Գրիգոր աւագ քահանայ Գրիգորեանց, հ. Ա, Բագու, 1902, էջ 344:

քու[1394]: Տղեկանալով կաթողիկոսի՝ Բաքու ժամանելու մասին, քաղաքի հայ հասարակութիւնն ապրում է բերկրալից պահեր, քանզի իրենց այցելութեան էր գալիս հայոց վշտի, գաղափարի ու ազատութեան չահակիրը: Տեղ հասնելուն պես Վահափառը կայարանից ուղևորվեց Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի»[1395]: Վահափառի եկեղեցի մտնելուն պես միաձայն ղողանջում են զանգերը, վառվում բոլոր չահերը: Ժողովուրդը Վահափառին մոտիկից տեսնելու և նրա աղոթքն ու խոսքը լսելու համար խռնվել էր եկեղեցում. «Եկեղեցու բակը՝ շրջականերով, մանաւանդ մէջը, բոլորովին անբաւական, գետին ասեղ ձգելու տեղ ստուգիւ չըկայ. ժողովրդեան յորձանքներ, որոնք անհանգիստ անընդհատ այս ու այն կը տատանին: Երգեցիկ խումբը թէև լաւ չի կազմակերպուած, կը վարէր ու երբեմն առանձին կերգէր յայտնի երգիչ պ. Շահլամեան»[1396]:

Խրիմյան Հայրիկի՝ մարդկային անհավասար կյանքի և սոցիալական անարդարութիւնների դեմ ունեցած վերաբերմունքը մեկ անգամ ևս արտահայտվեց «Կաոպի ընկերութեան» գրասենյակում նրա պատվին կազմակերպված ճաշկերույթի ժամանակ, երբ ցարի կենացը խմելուց հետո Վահափառն առաջարկեց խմել բանվորների և աշխատավորների կենացը՝ իր խոսքում ասելով. «Դուք կեանքի պայմաններով ապահով մարդիկ էք, պարոններ, կապրիք առաւտութեան մէջ, բայց ո՞վ է գիշեր-ցերեկ ձեզ համար աշխատողը եւ ձեր հարստութիւնը աւելացնողը, եթէ ոչ՝ բանուոր ժողովուրդը, որոնց դուք պարտաւոր էք: Բանուոր ժողովուրդը ձեզ իրենց աշխատութեամբ ճոխ կեանք վարել տալով, ինքը կապրի կարոտ. ո՞վ պէտք է մտածէ անոնց վիճակին բարւոքմանը ու անոնց զաւակաց կրթութեանը մասին, եթէ ոչ՝ դուք, իրենց տէրերը: Ձեր պարտականութիւնն է անոնց վերաբերմամբ խորհիլ: Ես պիտի խնդրեմ ձեզմէ որ անոնց աւուր չէքին վրայ տասը կոպէկ աւելացնելու առատաձեռնութիւնը ունենաք. մեղք են, վատահ եմ որ չէք մերժեր»[1397]: Ճաշկերույթին ներկա բոլոր գործարանատերերը, խիստ ազդված Վահափառի խոսքերից, խոստացան կատարել նրա ցանկությունը, իսկ այդ օրվա ստացած նավթի ամբողջ հասույթը տրամադրել Վահափառին՝ բարենպատակ ձեռնարկների համար[1398]:

[1394] Տե՛ս «Արարատ», 1898, Բ, էջ 84, տե՛ս նաև «Մուրճ», Թիֆլիս, 1898, № 2-3, էջ 373:
[1395] Ծոցիկեան Ս., Վեհափառ Հայրիկը Բագու, Բագու, 1898, էջ 15-16:
[1396] Նույն տեղում, էջ 16:
[1397] Նույն տեղում, էջ 24:
[1398] Տե՛ս «Արարատ», 1898, Բ, էջ 85:

Խրիմյան Հայրիկի այցից չուրջ 11 տարի անց, 1909 թ. հունիսի 13-ին, Թիֆլիս ուղևորվելու ճանապարհին Բաքվի Բալաջարի կայարանում կարճ ժամանակով կանգ է առնում Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը: Վեհափառին ուղեկցում էր Կ. Պոլսի Ազգային ժողովի ատենապետ Մինաս Չերազը: Կայարանում արծաթե սկուտեղի վրա աղ ու հացով դիմավորում են քաղաքագլուխ Նիկ. Վ. Ռաևսկին, Շամախու հայոց թեմի առաջնորդ Անանիա եպս. Համազասպյանը, Կ. Խատիսյանը, Բ. Դոլուխանյանը, Թ. Զաքարյանը և այլ ազդեցիկ հայեր: Այնտեղ խմբված հոծ հայ բնակչության առաջ Կ. Խատիսյանն հանդես եկավ հայրենասիրական ճառով[1399]*:*

* * *

Բաքու քաղաքի հայության մեջ առաքելականներից բացի եղել են նաև բողոքական կամ ավետարանական և կաթոլիկ եկեղեցիների հետևորդներ: Այստեղ հայ ավետարանական համայնքը ձևավորվել է XIX դարի 80-ական թվականներին, երբ Նուխիից, Շուշիից և Շամախիից[1400] *մեծ թվով ավետարանականներ տեղափոխվեցին Բաքու*[1401]*: Ի տարբերություն Շամախիի հայ ավետարանականների, Բաքվի հայ ավետարանական համայնքը չի ապրել ներփակ կյանքով: Հիմնվել են բարեգործական ընկերություններ, կազմակերպվել են գրական երեկոներ, հայ առաքելականների հետ հաճախում կամ հիմնում էին ընթերցարաններ և այլն*[1402]*: 1897 թ. մարդահամարի տվյալների համաձայն՝ Բաքվում հայ բողոքականների թիվը 123 (70 ար., 53 իգ.) էր*[1403]*:*

[1399] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1909, հունիսի 16, № 127:

[1400] Ավետարանական քարոզչությունը Շամախի ներթափանցեց 1828 թ. սկսած՝ Շվեյցարիայի Բազել քաղաքից եկած քարոզիչներ Ֆ. Զարեմբայի, Ա. Դիտրիխի և Մ. Ֆարուխի (Հ. Գալստյան) միջոցով (տե՛ս Քասունի Ե., Լուսաշաւիղ, Պատմութիւն Հայ Աւետարանական շարժման (1846-1866), Պէյրութ-Լիբանան, 1947, էջ 230): Շամախիում ավետարանականների առաջնորդն էր Սարգիս Համբարձումյանը, որի անվան հետ է կապված նրանց հետագա գործունեությունը: Ավետարանական ակտիվ քարոզչության արդյունքում XIX դարի 40-60-ական թթ. Շամախին և Բաքուն դարձան արևելահայ ավետարանականության կենտրոններից (տե՛ս Ղուկասեանց Հ., Բողոքականութիւն Կովկասու Հայոց մէջ (պատմական նիւթեր), Թիֆլիս, 1886: Մանրամասն քննությունը տե՛ս Ղազարյան Ա., Ռ. Ն. Լևոնյան, Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Երևան, 1999:

[1401] Տե՛ս Եղիայեան Բ., Հայ կաթոլիկ եւ աւետարանական յարանուանութեանց բաժանումը ԺԹ. դարուն, Անթիլիաս-Լիբանան, 1971, էջ 343, տե՛ս նաև Թառայեան Ս., Հայ-բողոքական հոսմայնքը, «Մուրճ», Թիֆլիս, 1893, № 5, էջ 792:

[1402] Տե՛ս Ղազարյան Ա., Ռընե Ներսես Լեվոնյան, նշվ. աշխ., էջ 131:

[1403] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIV, стр. 61.

1906-1917 թթ. Բաքվի հայ ավետարանականները հրատարակել են երկշաբաթաթերթ «Բարի լուր» խորագրով (խմբագիր՝ Պ. Թառայան)[1404]: Նրանք չեն ունեցել իրենց եկեղեցին և ծիսակատարությունները կատարել են տեղի լյութերական եկեղեցում[1405]: Տեղի հայ ավետարանական եկեղեցու գործունեությունն աստիճանաբար նվազեց 1918 թ. թուրքական արշավանքի և հայերի կոտորածների պատճառով: Կոտորածներից փրկված ավետարանականմկրտականները (Թառայաններ և այլոք) բնակություն հաստատեցին Թիֆլիսում[1406]: 1920 թ. սկզբներին Բաքվի հայ լյութերական եկեղեցու հովիվն էր Հովսեփ Թորոսյանը[1407]:

Բաքու քաղաքն ունեցել է նաև հայ կաթոլիկ փոքրաթիվ համայնք, որի մասին առաջին անգամ պաշտոնական տվյալներ են հիշատակվում 1897 թ. մարդահամարի տվյալներում: Ըստ այդմ՝ նրանց թիվը հասնում էր 27-ի (14 ար., 13 իգ.)[1408]: Նկատենք, որ Բաքվում հաստատված հայ կաթոլիկները հիմնականում եվրոպական տարբեր երկրներից եկած ինքնագործներ էին: Կաթոլիկությանը հարած հայերը ըստ էության չէին հետացել ազգային-եկեղեցական ծեսից և արարողություններից: Կրկնով հայ կաթոլիկներ անվանում՝ նրանք դրանով իսկ հատկանշում էին իրենց ազգապատականությունը[1409]: Այսրկովկասի, ինչպես նաև Բաքվի հայ կաթոլիկ համայնքները ենթարկվել են Տիրասպոլյան (Սարատովի) կաթոլիկ եպիսկոպոսին[1410]: Բաքվի հայ կաթոլիկները ևս չեն ունեցել իրենց եկեղեցին և իրենց ծիսակատարությունները կատարել են տեղի հայոց եկեղեցիներում: Ս. Ծոցիկյանի վկայությամբ՝ «Կաթոլիկհայ

[1404] Տե՛ս Ежегодник Баку и его районъ 1909, отд. II, стр. 115.

[1405] Տե՛ս Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 292:

[1406] Տե՛ս Ղազարյան Ա., Ռըճե Ներսես Լեվոնյան, նշվ. աշխ., էջ 142-143:

[1407] Տե՛ս Адресъ-календарь Азербайджанской Республики на 1920-й г., стр. 47.

[1408] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XII, стр. 50.

[1409] Տե՛ս Տիւրեան Կ., Կաւկասի կաթողիկեայ հայերը, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1894, Ը տարի, № 4, էջ 103:

[1410] Տե՛ս КК на 1904 г., Тифлис, 1903, стр. 486, տե՛ս նաև Հրաւէր ողջամտութեան (Հակոբեան Պ., Հայ կաթոլիկութիւնը պատմա-քննական լոյսի տակ), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1993, էջ 110: Մի կարճ շրջան հայ կաթոլիկներն ունեցել են սեփական կառավարիչ: Թիֆլիսում, 1844 թ. հիմնվում է Ռուսաստանի և Կովկասի հայ կաթոլիկ եկեղեցու վարչությունը, կամ ինչպես պաշտոնապես այն կոչվում էր՝ «Առաքելական կառավարիչ հայ կաթոլիկների Ռուսաստանի և ամբողջ Կովկասի»: Վարչությունը նշանակել է քահանաներ, դպրոցներում սովորող կաթոլիկ սանների կրոնի ուսուցիչներ, հաստատել համայնական ժողովներում ընտրված աթոռականներ, հոգաբարձուներ և այլն: Վարչու-թյունն անմիջապես ենթարկվել է Հռոմի պապին և ղեկավարվել է վերջինիս հրամաններով և ցուցումներով (տե՛ս ՀԱԱ, ֆ. 316, ց. 1, գ. 91, թ. 152):

Հայք ևկեղեցի չունին քաղաքի մէջ: Անոնք կը յաճախեն տեղւոյն Հայոց ևկեղեցիները»[1411]:

* * *

Բաքու քաղաքի հայութեան թիւի չարժընթացը, հասարակական-քաղաքական, կրթական, հոգևոր-մշակութային կեանքը լուսաբանելուց հետո անդրադառնանք նաև հայ բնակչութեան չրջանում ընթացած ազգային-լեզվական գործընթացների քննութեանը:

Ընդհանրապես Բաքվի նահանգում՝ Շամախի քաղաքում և նրան հարակից դյուղերում, մինչև Ղուբա ընկած հատվածում, հայութիւնը խոսել է Շամախիի բարբառով[1412]: *«Այս բարբառով,- գրում է Հր. Աճառյանը,- կը խօսուի գլխաւորապէս Շամախի քաղաքին մէջ և անոր մօտակայ քանի մը գիւղերը՝ մինչև Ղուբա»*[1413]: *Շամախիի և Գյոքչայի գավառների մնացած գյուղերում խոսել են Արցախի, իրանահայ և Քարքանչի բարբառներով*[1414]. *«Մնացեալ գիւղերէն մեծ մասը,- գրում է Հր. Աճառյանը,- Ղարաբաղէն, ոմանք ալ Խոյէն ու Սալմաստէն գաղթած ըլլալով, իրենց մայրենի բարբառը կը գործածէն...: Բագուի մէջ ևս կայ Շամախեցի գաղութ մը՝ որ իր բարբառը կը գործածէ, բայց այս գաղութն ալ Ղարաբաղցոց խոշոր մեծամասնութեան մէջ հալելու վրայ է: Բագուի մօտ կը գտնուի Էրմէնի քեանդ (Հայոց գիւղ), որ մեծաւ մասամբ Շամախեցիներէ կը բաղկանայ և նոյն բարբառը կը խօսի»*[1415]: Հարկ է նշել, որ արցախահայերի հաստատումից հետո Շամախիի և Գյոքչայի գավառներում աստիճանաբար դերակշռել է Արցախի բարբառը: Իր ուղեգրական նոթերում Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցին, անդրադառնալով չամախահայերի խոսակցական լեզվին, գրում է. *«...բառով գէէիքօրէն իսօսին, որպէս Ղարաբաղցիք...»*[1416]: Ըստ Մակար եպս. Բարխուտարյանցի՝ *«Բնիկ Շամախեցւոց բարբառն թէև տարբեր է Արցախի բարբառից, այսուամենայնիւ հետզհետէ առաջինն տեղի է տալիս երկրորդին»*[1417]: Ար. Ղարիբյանը լեզվաբանական քննութեամբ ցույց է տվել, որ արցախ-ղարաբաղյան բարբառով *«...խոսում են Ղարա-*

[1411] Տե՛ս Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 292:
[1412] Տե՛ս Աճառեան Հր., Էմինեան ազգագրական ժողովածու: Հայ բարբառագիտութիւն. - Ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով), հ. Ը, Շամախիի բարբառ, Մոսկուա-Նոր-Նախիջեւան, 1911, էջ 76:
[1413] Նույն տեղում, էջ 76:
[1414] Տե՛ս Բաղրամյան Ռ., Շամախիի բարբառը, Երևան, 1964, էջ 6-7:
[1415] Աճառեան Հր., Հայ բարբառագիտութիւն, էջ 76:
[1416] Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցի, էջ 293:
[1417] Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 295:

բազի բնակչությունը և բոլոր այն դարաբաղցիները, որոնք գտնվում են Բաքվում, Հյուսիսային Կովկասում, Շամախու շրջանում...»[1418]: *Ինչ վերաբերում է Բաքու քաղաքի հայ բնակչության խոսակցական լեզվին, ապա նշենք, որ նրանց բառապաշարում առկա է եղել այստեղ հաստատված արցախցիների, գանձակեցիների, շամախեցիների և այլ տեղավայրերի հայության լեզվաբարբառային շերտերի ձուլման գործընթացը*[1419]:

1897 թ. մարդահամարի «Բնակչության տեղաբաշխումն ըստ դավանանքի և մայրենի լեզվի» աղյուսակի տվյալների համաձայն Բաքվի նահանգում թուրքերենը 5 (2 ար., 3 իգ.) և թաթարերենը 75 (44 ար., 31 իգ.) որպես մայրենի լեզու մատնանշած մարդ նշված են հայ առաքելական դավանանքի հետևորդները[1420]: *Նրանք գերակշռել են Բաքու քաղաքում 64 մարդ (33 ար., 31 իգ.)*[1421]: *Խիստ հավանական է, որ նրանք լեզվական փոխակերպման ենթարկված հայերն են, որոնք թեև ժամանակի ընթացքում անջրպետվել էին իրենց լեզվակիցներից և աստիճանաբար համալրել քաղաքի թյուրքալեզու բնակչության շարքերը, այնուհանդերձ պահպանել էին իրենց դավանանքը: Միաժամանակ, 1897 թ. մարդահամարի տվյալները փաստում են, որ նահանգում մայրենի լեզուն հայերենը մատնանշած 55 մարդ (34 ար., 21 իգ.) դավանել է մահմեդական կրոնը*[1422]: *Ընդամին, նրանք նույնպես գերակշռել են Բաքու քաղաքում 42 մարդ (24 ար., 18 իգ.)*[1423]: *Այս հանգամանքը փաստում է ուշագրավ այն իրողությունը, որ Բաքվում բնակվող մահմեդականացված հայերը, թեև խզել էին իրենց կապերը քրիստոնեական եկեղեցու հետ, այնուամենայնիվ չէին ենթարկվել լեզվական այլակերպման: Երևույթ, որ կարող է պատճառաբանված լինել Բաքվի էթնոդավանական միջավայրով և դրանով թելադրված բազմաբնույթ գործընթացներով (միջէթնիկ ամուսնություն, դավանափոխություն և այլն):*

Բաքվի նահանգի հայերի լեզվական փոխակերպման վրա ներազդող կարևոր գործոններից էր միջէթնիկ ամուսնությունը:

[1418] Տե՛ս Ղարիբյան Ար., Հայ բարբառագիտություն (հնչյունաբանություն և լեզվաբանություն), Երևան, 1953, էջ 230:

[1419] Տե՛ս Բաքվի հայոց բանահյուսությունը, ժողովածուն կազմել, ներածությունը գրել և ծանոթագրել են Ա. Ղազիյանը և Ս. Վարդանյանը, Երևան, 2004, էջ 16:

[1420] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIV, стр. 54.

[1421] Տե՛ս նույն տեղում, таблица XIV, стр. 60.

[1422] Տե՛ս նույն տեղում, таблица XIV, стр. 57.

[1423] Տե՛ս նույն տեղում, таблица XIV, стр. 61.

Փաստերը ցույց են տալիս, որ Նահանգի քաղաքաբնակ հայերի շրջանում ազգամիջյան ամուսնությունների թիվն ավելին է եղել, քան դյուղաբնակներինը: Այս հանգամանքը պայմանավորված էր դյուղական շրջաններում նահապետական սովորույթների, ինչպես նաև էթնոդենետիկ ինքնապաշտպան մեխանիզմների առկայության ավելի բարձր մակարդակով, կայուն ներէթնիկ համախմբվածությամբ:

Բաքվաբնակ հայերի ազգամիջյան ամուսնությունները մեծապես պայմանավորված էին նրանով, որ Բաքուն, ուր կենտրոնացած էր Նահանգի քաղաքաբնակ հայերի ճնշող մեծամասնությունը, երկրի առավել բազմազգ քաղաքներից մեկն էր, իսկ քաղաքներում էթնիկ գործընթացներն առավել աչխույժ են ընթանում: Բացի դրանից՝ XIX դարի 80-90-ական թվականներին Բաքվի հասարակական կյանքի հեղաբեկումների պայմաններում տիրապետող դիրք գրաված դրամատիրական հարաբերությունները որքան էլ նպաստում էին տնտեսական առաջընթացին և ժողովրդի կենսամակարդակի բարձրացմանը, այնուամենայնիվ, տնտեսական դրության փոփոխությունն իր հետ բերում էր նաև բացասական երևույթներ, որոնք առաջին հերթին արտահայտվում էին հասարակական կյանքում սոցիալ-բարոյական հարաբերությունների փոփոխությամբ և նահապետական կյանքի քայքայմամբ: Փողի ամենակարող ուժի ավերածությունները, հասարակական բարքերի, կենցաղի և փոխհարաբերությունների մեջ տեղի ունեցող արմատական փոփոխությունները հիմնովին շրջում էին դյուղից քաղաք տեղափոխված դյուղացու նահապետական-ավանդական պատկերացումները, կտրում նրան էթնիկ ավանդույթներից: «Եւ այդպէս հնազհնազ հեռանալով ու ժամանակի վատ հոսանքով ապրելով օտարութեան մէջ,- գրում էր «Նոր-դարն» իր առաջնորդողում,- մեռնում է և կամ մոռանում է իւր աչխարհը, հայրենիքը, ծնողները և մինչև անգամ ամուսինն ու զաւակները... Ամուսնացածը օտար տեղ գտնում է իւր ընկերուհին ու բաժնում է նրա հետ իւր պատառը և դուարճանում»[1424]: Ժամանակի մամուլում, հասարակական հնչեղություն ստացած խնդրո առարկա հարցի առնչությամբ, իր մտահոգությունն է արտահայտել նաև Եղիշե ավագ քհն. Գևոդամյանցը՝ գրելով, որ «...Բադուի նման քաղաքում (գուցէ և միւսներում) օտարազգի աղջկերք և այրի կնանիք՝ մեր եկեղեցւոյ դիրկն են գալիս մտնում անդադար: Այդ օրիորդները և այրիները՝ ձևի համար հայանում են, որպէս զի հայերի հետ պսակուին: Եւ մեր նրիտասարդները (թէ ինտելիգենտները և թէ վաճառական ու արհեստաւորները՝ անխտիր) նրանց հետ ոչ

[1424] «Նոր-դար», Թիֆլիս, 1890, հունիսի 6, № 73:

միայն պահպանում են, այլև պարծենում, ազգի վրայ դեռ մուննաթ էլ են անում, որ նրա թիւը՝ մի օտարականով աւելացրին: Իսկ գալով այն բանին, որ օտարազգի մօրից ծնած զաւակը, նրա հոգումն էլ կը մեծանայ... այս ամենը մեր նոր սերնդի համար արժէք, նշանակութիւն չունի»[1425]:

Ուշագրաւ է այն իրողութիւնը, որ հայ մեծահարուստ Ալ. Մանթաշեանցը, մեծ նշանակութիւն տալով ազգային ընտանիքին, կտակում հարստութիւնը բաժանելով ութ զաւակների միջև, ընդգծել էր մի կարևոր նախապայման՝ որդիները զրկվում էին ժառանգութեան իրաւունքից, եթե նրանք չամուսնանան հայադաւան օրիորդների հետ. «Թիֆլիսում ունեցած անշարժ կայքը, որ դնահատուած էր 3,000.000 րուբլի, որդիքն իրաւունք չունէին ծախելու, ոչ էլ գրաւ դնելու. այդ բոլորը անփոփոխ պէտք է անցնէր իր թոռներին, բայց այն թոռներին, որոնք կը ծնուէին իր որդիների հայ-լուսաւորչական կանանցից»[1426]: *Այս առումով ուշագրաւ է նաև Բաքվի հայ նավթարդիւնաբերութեան հիմնադիրներից մեկի՝ Ալեքսիք Ղուկասեանի կտակը: Բարերարն իր կարողութիւնից մոտ կես միլիոն ռուբլի կտակել էր դպրոցը՝ թամարին, հետևյալ պայմանով. եթե վերջինս ամուսնանար օտարազգու հետ, կամ մահանար մինչև չափահաս դառնալը, ապա այդ ամբողջ գումարը պետք է անցներ հայ ժողովրդին, ի դեմս՝ Հայոց կաթողիկոսի և Կ. Պոլսի պատրիարքի՝ Հայաստանում Ղուկասեան անունով բարձրագոյն ճեմարան բացելու համար (կտակարարներն էին Պողոս Ղուկասեանը և Մնացական Խունունցը)*[1427]:

Ալ. Շիրվանզադեի «Բառս» վիպակում կա մի հիշարժան դրվագ, երբ առևտրաարդիւնաբերող Մարկոս աղա Ալիմեանը, որն իր բնավորութեան մեջ պահում էր ազգային հոգեբանութեան որոշ գծեր, չէր հաշտվում այն փաստի հետ, որ ավագ որդին՝ Սմբատը, խախտել էր իր «պապերի աւանդութիւններն ու եկեղեցու սուրբ օրէնքները» և ռուսական եկեղեցու օրէնքներով ամուսնացել ռուս կնոջ հետ: Սմբատն իր բաժին ժառանգութիւնը կարող էր ստանալ միայն ռուս կնոջից բաժանվելու և հայկական եկեղեցու օրէնքներին հավատարիմ մնալու պայմանով[1428]: *Թեև պետք է ասել, որ քիչ չէին նաև դեպքերը, երբ հայերի հետ*

[1425] Գեղամեանց Ե., Հրապարակախօսական մանրուքներ, գիրք Ա, Բագու, 1915, էջ 81-82:
[1426] Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 207:
[1427] Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1914, մայիս, № 5, էջ 90:
[1428] Տե՛ս Շիրվանզադե Ալ., Երկեր, հ. 3, Երևան, 1987, էջ 310:

ամուսնացած ուռւս կանայք վերամկրտվում էին որպես առաքելականներ[1429]*: Այդ քայլին դիմած հայերի մի զգալի մասի ընտանիքներում աստիճանաբար թուլանում էր կապվածությունը հայերենին՝ որպես մայրենի լեզվի: Նկատենք, որ Բաքվում հայերի ազգամիջյան ամուսնությունները կատարվել են հիմնականում քրիստոնեադավան ժողովուրդների միջև, և աննշան է եղել հայերի և մահմեդականների միջև ամուսնությունների թիվը: Ընդ որում հիմնական պատճառը, անշուշտ, եղել է դավանական տարբերությունը, որի գիտակցումը բավական խորն էր:*

Այսպիսով՝ մատնանշված բոլոր փաստերը ցույց են տալիս, որ Բաքու քաղաքի հայ բնակչությունը XIX դարի կեսին և XX դարի սկզբներին ոչ միայն ապրում էր համախմբված, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային աշխույժ կյանքով, այլև նշանակալից դեր էր խաղում քաղաքի համընդհանուր զարգացման գործում: Միաժամանակ, Բաքվի հայերի հասարակական կյանքն ընթանում էր համահայկական հունով՝ ներառելն կապված ազգային ավանդույթներին: Բաքուն աստիճանաբար Թիֆլիսից հետո դառնում էր հայ ժողովրդի մտավոր վերածնության կենտրոններից մեկը:

[1429] Գ. Ե. [Գեղամյանց Եղիշե], Բագուայ հայ հոգեւորականները, «Հովիտ», Թիֆլիզ, 1910, հուլիսի 11, № 13, էջ 195:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԲԱՔՈՒ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ 1900-1917 ԹԹ.

Ա. ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ 1900-1905 ԹԹ.: ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

Դրամատիրական հարաբերությունների հետագա զարգացումը հանգեցրեց նավթարդյունաբերության կենտրոն Բաքու քաղաքի բնակչության արհեստական աճին: Առևտրի և արդյունաբերության հետագա զարգացման տարիներին բանվորական ուժի մեծ կարիք զգացվեց Բաքվում, հատկապես XX դարասկզբին, երբ քաղաքը դեպի իրեն էր գրավել գյուղացիական նոր զանգվածների: Շարունակվող զանգվածային պանդխտության ալիքը դեպի Բաքու էր ձգում Արևելյան Հայաստանի տարբեր շրջանների՝ Երևանի, Նոր Բայազետի, Ալեքսանդրապոլի, Ղազախի, Ջանգեզուրի և Կարսի մարզի ընչազուրկ հայ գյուղացիությանը: Թողնելով իր դարավոր զբաղմունքը՝ նա աստիճանաբար համալրում էր երկրամասի արդյունաբերական կենտրոնի բանվորության շարքերը: Արևելահայ գյուղում արտագնացության պատճառներից մեկը ցարական կառավարության հարկային քաղաքականության սաստկացումն էր: Միայն 1900 թ. հունիսի 12-ի հողային օրենքով գյուղացիների ուղղակի տուրքերն աճեցին՝ Երևանի նահանգում՝ 48,5, իսկ Կարսի մարզում՝ 50%-ով[1430]: Գյուղացիներից շատերը, չկարողանալով վճարել բարձրացված հարկերն ու պարհակները, հարկադրված դիմում էին արտագնացության: Քայքայվող գյուղացիությունն արտագաղթելով Բաքու՝ ստվարացնում էր քաղաքի բազմազգ բանվորության շարքերը: Այն վիճակը, որ հայ գյուղացին հեռանում էր իր հայրենիքից, հաճախ՝ ընդմիշտ, ազգային տեսակետից ցավալի երևույթ էր: Սակայն իր ընտանիքի գոյությունը պահպանելու այլ ելք նա չուներ: «Էս բոպեիս էնպես տուն կա,- գրում էր գյուղագիր Ա. Ադելյանը,- որ ցորեն չունի տանը և չոր մրգերով է կառավարվում: Ոմանք կորեկ են ուտում, չոր չունեն հագնելու, պարտքն էլ խո անպակաս է: Հրաման էր եկել, որ երկու շաբաթում հարկ ժողովեն. հրես երեք շաբաթ լրացել է, էլա ոչինչ չի հավաքվել: Ամենքն էլ աչքները տնկել են դեպի Բաքու, թէ էնտեղից փող գա, հարկ տան»[1431]:

[1430] Տե՛ս Համբարյան Ա., նշվ. աշխ., էջ 24:
[1431] Ադելյան Ա., Եժ, մեկ հատորով, Երևան, 1950, էջ 124:

XX դարասկզբին մեծ չափերով դեպի Բաքու էին արտագաղթում հատկապես Զանգեզուրից ու Արցախից: «Տնտեսական ծանր պայմանների ներքոյ տառապող Զանգեզուրցի ու Ղարաբաղցի աշխատաւոր գիւղացիք,- գրում էր Բաքվում լույս տեսնող «Անիւ» շաբաթաթերթը,- փախչելով իրանց արիւնաներկ վայրերից, քարշ են գալիս Բագւի ու Բալախանու սև փողոցներում, որպէս կմախք դարձած ուրուականներ...: Վարանդայի հայ գիւղացին աչքը յառած է երկու կէտի վրայ, նրա առաջին սպասելիքների վայրը Բագուն է...: Թէկ վարանդացին ունի մի որդի, մի կին և մի աղջիկ, դրանցից որդին Բագւի նաւթահանքերում է տքնում օրական մի քանի «աբասի» աշխատելու և ամսական մի տասը «մանէթ» տուն ուղարկելու համար»[1432]: Անդրադառնալով զանգեզուրցիների՝ դեպի Բաքու արտագաղթի պատճառներին՝ «Գործի» Զանգեզուրի թղթակից Հ. Ադոնցը գրում էր. «Վերջին տարիները դէպի Բագու և համանման մեծ քաղաքները ճգտելը զանգեզուրցիներից չատերի համար մի տեսակ քրոնիկական ախտ է դարձել, որ վարակել է նոյն իսկ 50-60 տարեկան մարդկանց անգամ. մէկն չտապում է այնտեղ անխիղճ վաշխառուի Նոյի ժամանակներից մնացած մուրհակի փողը վճարելու, երկրորդի ծերունի ծնողացն քաղցած, կինն ու զաւակները՝ տկլոր, նրանց պլոկի պահի, իսկ երրորդը լսել է, որ մեծ քաղաքներում, մանաւանդ Բագւում, փող չատ կայ, մարդիկ չուտ են հարստանում, անտեսական դառն վիճակը, որի մեջ գտնուում են Զանգեզուրի գիւղերը, ահա այն պատճառները, որ առիթ են տալիս արտագաղթին»[1433]: Զանգեզուրի գավառի միայն Խնձորեսկ գյուղից, 1902 թվականին, Բաքվում էին գտնվում 1300 հոգի[1434]:

Զանգվածային գաղթը հանդեցրեց նրան, որ Բաքվում XX դարասկզբին քաղաքային բնակչությունն անընդհատ աճում էր: 1900 թ. դրությամբ Բաքու քաղաքի (առանց արդյունագործական-գործարանային շրջանների) բնակչության թիվը 112.253 էր (67148 արս., 45105 իգ.)[1435]: Նույն թվականի դրությամբ, հայ ընտանիքների թիվը քաղաքում 2200 էր[1436]: Քաղաքային վարչության տվյալներով՝ 1902

[1432] «Անիւ», Բագու, 1908, հունիսի 29, № 17, էջ 7, տե՛ս նաև հուլիսի 27, № 21, էջ 6:
[1433] «Գործ», Բագու, 1914, մարտի 22, № 22:
[1434] Տե՛ս Ավետիսյան Վ., Հայ հասարակական մտքի զարգացման Մարքս-Լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976, էջ 41:
[1435] Տե՛ս Сборник статистическихъ сведений по Закавказскому краю, подъ редакцией Е. Кондратенко, ч. I, Тифлис, 1902, стр. 278 (այսուհետ՝ ССПЗК). Հմմ. Вермишев Х., Очерки бакинской нефтяной промышленности «Кавказский вестник», Тифлис, 1900, стр. 49.
[1436] Տե՛ս Պատուրեան Մ., Հայ հանրագիտակ, բիւ 2, էջ 349:

թ. փետրվարի կեսերին Բաքվում (ներառյալ արդյունագործական-դործարանային շրջանները) հայերի թիվը 57000 էր[1437]*:*

Դարասկզբին քաղաքային բնակչության թվի վերաբերյալ տեղեկություն է պահպանված նաև «Искра» լրագրի 1902 թ. սեպտեմբերյան մի թղթակցության մեջ, որտեղ նշված է, թե քաղաքում մահմեդականների թիվը, ոչ լրիվ տվյալներով, 70000 է, հայերինը 50000, ռուսներինը 30-40000, իսկ մնացածը վրացի, գերմանացի, հրեա և այլ ազգությունների ներկայացուցիչներ են[1438]*: 1903 թ. հոկտեմբերի 22-ի միօրյա հաշվառումի տվյալներով, քաղաքի (ներառյալ արդյունագործական-դործարանային շրջանները) բնակչության թիվը կազմում էր 207.913 (128.576 ար., 79337 իգ.)*[1439]*: «Կովկասյան օրացույցի» 1904 թ. տվյալներով Բաքվի ամբողջ բնակչության թիվը արդեն հասնում էր 222.412-ի (140.158 ար., 82254 իգ.), որից հայ 51340-ը*[1440]*: Աղյուսակի տեսքով պատկերը հետևյալն է*[1441]*.*

Աղյուսակ № 12

№	Բնակչության ազգային կազմը	ար.	իգ.	Բնակչ. ընդ. թիվը
1	Թաթար[1442]	41643	25508	67151
2	Ռուս	42.279	20825	61104
3	Հայ	27848	23492	51340
4	Պարսիկ	11472	2696	14168
5	Լեզգի	5060	2035	7095
6	Օս	4605	2407	7012
7	Հրեա	1953	1267	3220
8	Գերմանացի	1746	1452	3198
9	Վրացի	2174	975	3149
10	Լեհ	1117	522	1639
11	Հույն	855	487	1342
12	Կարաիմափիա[1443]	616	146	762

[1437] Տե՛ս **Кузьмински,** Всеподданнейший отчет..., стр. 640.

[1438] Տե՛ս Хроника рабочаго движения и письма с фабрик и заводов, «Искра», 1902, 1 сентября, № 24, стр. 4.

[1439] Տե՛ս Бакинский настольный календарь на 1904 г., ч. II, стр. 101, տե՛ս նաև Энциклопедический словарь, под ред. **К. Арсеньева** и проф. **В. Шевякова,** дополнительный т. I, изд. **Ф. Брокгаузъ, И. Ефронъ,** СПб., 1905, стр. 201.

[1440] Տե՛ս КК на 1907 г., Тифлис, 1906, отд. II, стр. 320.

[1441] Աղյուսակում էթնիկ հանրությունների և խմբերի հաջորդականությունը տրվում է ըստ նրանց թվաքանակի նվազման սկզբունքի:

[1442] Բնագրի աղյուսակում, թաթարներին վերաբերող սյունակում, թաթարական առանձին էթնիկ խմբերը տարբերակված չեն: Նշված թվի մեջ կան ինչպես կովկասյան թաթարներ, այնպես էլ Կազանի և Աստրախանի թաթարներ: Գերակշռել են կովկասյան թաթարները: Պ. Բուտկովի տվյալներով, Կազանի թաթարները Բաքվում հաստատվել են 1723 թվականից, որոնք ընդգրկված են եղել նավաշինարարական և այլ աշխատանքներում (տե՛ս **Бутков П.,** նշվ. աշխ., ч. I, стр. 141).

13	Ասորի	349	222	571
14	Էստոնացի	284	163	447
15	Քուրդ	84	21	105
16	Աբխազ	67	32	99
17	Գնչու	6	4	10
Ընդամենը		140.158	82254	222.412

Ինչպես երևում է աղյուսակից, բնակչության թվաճով առաջին տեղում թաթարներն էին, այնուհետև՝ ռուսները, որոնց հաջորդում էին հայերը և ապա՝ պարսիկները, լեզգիները, օսերը, հրեաները, գերմանացիները, վրացիները, լեհերը, հույները, կարապափափախները, ասորիները, էստոնացիները, աբխազները և գնչուները: Ա-Դո-ի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) բերած վիճակագրական տվյալներով, 1904 թվականի դրությամբ, քաղաքում և նավթահանքերում մշտական ու ժամանակավոր բնակիչների ընդհանուր թիվը կազմում էր 240.000: Ըստ այդմ՝ մահմեդականներ՝ 82000, ռուսներ՝ 61000, հայեր՝ 51000, որոնց հաջորդել են լեզգիները, օսերը, վրացիները, գերմանացիները, հրեաները, հույները, լեհերը, ասորիները, աբխազները և էստոնացիները[1444]: Ա-Դո-ի բերած մեկ այլ վիճակագրական տվյալով՝ 1905 թ. հայերի թիվը քաղաքում (թեև առանց արդյունագործական-գործարանային շրջանների) հասնում էր՝ 50000-ի[1445]:

Ինչ վերաբերում է XX դարասկզբին Բաքվի գավառում (ներառյալ քաղաքը) բնակվող հայ բնակչության թվին, նշենք, որ այդ ժամանակահատվածում հայաբնակ են եղել նաև Բաքու քաղաքի շրջակա գյուղերը՝ Բալախանը, Շաղանը, Մարդաքյանը և Բուզովնան: Միայն Բուզովնա գյուղում 1902 թ. բնակվել է 20 տուն հայ, որոնք ունեցել են նաև սեփական այգիներ[1446]:

Այսրկովկասի վիճակագրական կոմիտեի կազմած տեղեկագրի համաձայն՝ Բաքվի գավառում 1904 թ. հայ բնակչության թիվը, հա-

---

[1443] Կարափափախները Միջին Ասիայից Կովկասում միջնադարից հաստատված թյուրքական ցեղեր էին (տե՛ս **Марр Н.**, Племенной составъ населения Кавказа: Классификация народовъ Кавказа (рабочий проектъ): Труды комиссии по изучению племенного состава населения России, 3, Петроградъ, 1920, стр. 48, տե՛ս նաև Աբեղեան Արտ., Կովկասի ժողովուրդները: Ցեղագրական Կովկասը, «Հայրենիք», Պօսթըն, 1924, Բ տարի, ապրիլ, № 6, էջ 123):

[1444] Տե՛ս Ա-Դօ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906 թթ.): Փաստագրական, վիճակագրական, տեղագրական ուսումնասիրություններով, Երեւան, 1907, էջ 13:

[1445] Տե՛ս նույն տեղում, էջ 12:

[1446] Տե՛ս Տէր-Յովհաննիսեանց Եր., նշվ. աշխ., էջ 482:

մեմատած ընդհանուր բնակչության թվի հետ, տոկոսային հարաբերությամբ ուներ հետևյալ պատկերը[1447]*.*

Աղյուսակ № 13

Բնակավայր	Բնակչ. ընդ. թիվը	Հայ	%
Բաքու	222.412	51340	23,1
Ոստիկանական տեղամասեր			
Սարայ	26529	105	0,4
Բալախան-Սաբունչի	43668	3330	7,6
Մաշթաղա	38334	684	1,8
Ընդամենը	330.943	55459	16,8

Աղյուսակի վիճակագրությունից հետևում է, որ բուն քաղաքից հետո հայ բնակչությունը մեծ թիվ է կազմել Բալախան-Սաբունչիի, այնուհետև Մաշթաղայի, ապա Սարայի ոստիկանական տեղամասերում: Մխիթար վրդ. Տեր-Մկրտչյանը նշում է, որ 1905 թ. հունվարի 1-ի վիճակագրության համաձայն, Բաքվի գավառում հայերի թիվը 41964 էր[1448]*, որը, մեր կարծիքով, չափազանց նվազ է ցույց տրված: XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, Հայաստանի տարբեր շրջաններից տեղի ունեցած զանգվածային արտագաղթի հետևանքով, Բաքուն արդեն համարվում էր ստվար հայ բնակչություն ունեցող քաղաք, ուստի չէր կարող ունենալ թեկուզև 41964 հայ բնակիչ:*

* * *

Բաքու քաղաքի հայության համար ողբերգական և դրամատիկ պահերով լեցուն ժամանակաշրջան սկսվեց 1905 թ. փետրվարին, երբ այնտեղ սկիզբ առան հայ-թաթարական ընդհարումները[1449]*: Ա-Դօն իրավացիորեն նշում է, որ ընդհարումները հրահրվել են ցարական կառավարության կողմից, նպատակ ունենալով ազգամիջյան բախումներով կովկասը հեռու պահել Ռուսաստանում հասունացող հեղափոխությունից*[1450]*: Կիրառելով «բաժանի՛ր, որ տիրես» սկզբուն-*

[1447] Աղյուսակը կազմված է ըստ Ведомость количества населения Кавказского края съ показаниемъ %-ного содержания армянъ отдѣльныхъ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 94, թ. 1), տե՛ս նաև Ведомость количество населения Кавказского края съ показаниемъ %-ного содержания армянъ: карта Кавказского края съ показаниемъ густоты армянского населения, Баку, 1908.

[1448] Տե՛ս Մխիթար վարդապետ, Հայերը Ռուսաստանում, Վաղարշապատ, 1906, էջ 132:

[1449] Հաշվի առնելով այն իրողությունը, որ Բաքվի հայ-թուրքական ընդհարումների պատմությունը հանգամանորեն ուսումնասիրվել է հայ պատմաբանների կողմից, մենք բնության ենք առնում միայն այն հարցերը, որոնք խորապես ազդել են քաղաքի հայ բնակչության ժողովրդագրական հետագա պատկերի վրա:

[1450] Տե՛ս Ա-Դօ, նշվ. աշխ., էջ 5:

բր՝ ցարական կառավարությունը մշտապես թշնամություն էր սերմանում իր տիրապետության տակ գտնվող ժողովուրդների միջև[1451]:

Հայ-թաթարական ընդհարումների սանձազերծման գործում որոշակի դեր խաղաց նաև այդ տարիներին Այսրկովկասում թուրքիայի կողմից տարվող համաթուրքական (պանթուրքական) քարոզչությունը[1452]: Ըստ համաթուրքականության գաղափարախոսների՝ «Մեծ Թուրանի» ստեղծմանը հավասարապես «խոչընդոտ էին համարվում» թե՛ արևմտահայերը և թե՛ արևելահայերը: Թուրքերը ծրագրել էին Օսմանյան կայսրության և Բաքվի միջև գտնվող Հայաստանն ու հայ ժողովրդին վերացնել բնաջնջման միջոցով: Միաժամանակ, փաստերը վկայում են, որ Բաքու և Այսրկովկասի այլ քաղաքներ թափանցած թուրքական գործակալների առջև դրվել էր հնուհետ խնդիրը. քայքայել մահմեդականների գիտակցությունը և հայերի ջարդերը կազմակերպելու նպատակով կովկասյան թաթարներին հրահրել նրանց դեմ, միաժամանակ ազդամիջյան հակասությունները դարձնել «Մեծ Թուրանի» իրականացմանը խոչընդոտող ռուսական կայսրության թուլացման կարևորագույն միջոց[1453]: «Յառաջ» լրագիրը վկայաբերելով որոշ փաստեր Նախիջևանի գավառում համաթուրքականների ծավալած գործունեությունից, գրում է. «Ընդհարումների պատճառներից մէկն էլ պանիսլամիզմն էր, որը գլխաւորապէս արտայայտւեց Նախիջևանի գաւառում: Այնտեղ խաները գաղտնի յարաբերութիւնների մէջ էին զանազան խորհրդաւոր տարրերի հետ, այնտեղ էր, որ սկսեցին երևալ «Ղազաւաթի» սիմբօլները՝ մարգարէի դրօշակը և կանաչ չալմաները. մօլլաները առանց քաշւելու ճառում էին, որ բոլոր քրիստոնեաները պիտի ջնջւեն, որ հասել է ռուս տիրապետութեան վերջը Կովկասում, և մօտ է խալիֆի (թրքաց Սուլթանի) թագաւորութիւնը»[1454]: Բաքուն ու Թիֆլիսը, Երևանն ու Գանձակը, Զանգեզուրն ու Նախիջևանը, Շուշին ու ողջ Արցախը վերածվեցին ռազմաբեմի:

Առաջին հարվածն ուղղվեց Բաքվում ապրող հայերի դեմ[1455]: XX դարասկզբին Բաքվի տնտեսության առաջատար ճյուղը կազմող

[1451] Մանրամասն տե՛ս **Старцев Г.**, Кровавые дни на Кавказе, С.-Петербург, 1907; **Быков Ф.**, Национальный вопрос на Кавказе, Баку, 1906; **Татевосян И.**, Национальный вопрос на Кавказе, Ереван, 2007.

[1452] Տե՛ս **Зареванд**, Турция и пантуранизм, Париж, 1930, стр. 7-45, տե՛ս նաև **Дикий**, Кавказская смута (б. м.), 1906, стр. 6-8.

[1453] Տե՛ս **Чалхушьян Г.**, Армянский вопрос и армянские погромы въ России, Ростов-на-Дону, 1905, стр. 63.

[1454] Հայկական հարցը Ռուսաստանում եւ Կովկասեան խռովութիւնը, «Յառաջ», Երեւան, 1906, փետրվարի 8, № 20:

[1455] Տե՛ս Զարեւանդ, Միացեալ Անկախ Թուրանիա կամ ի՞նչ կը ծրագրեն թուրքերը, Բոստոն, 1926, էջ 28:

նավթարդյունաբերությունը կենտրոնացված չէր կովկասյան թաթարների ձեռքին: Վերջիններիս չրջանում այդ հանգամանքն ուներ էական նշանակություն, քանի որ դրամատիրական հարաբերությունների կրողը, առաջընթացի շարժիչ ուժը ոչ թե իրենք էին, այլ քրիստոնյա ժողովուրդները՝ հայերը, ռուսները և եվրոպացիները: Դ. Անանունն իր «Հայ-թուրքական հակամարտությունը» ուսումնասիրության մեջ գրում է. «Հայ բուրժուազիայի և թուրք բէկութեան հակամարտութիւնն իր մէջ ցեղային բովանդակութիւն չունի: Հասարակական զարգացման և հասարակական անշարժութեան պայքարն է, որ տեսանելի կամ դաղտնի առաջ են տանում հայ բուրժուազիան և թուրք բէկութիւնը: Այդտեղից են արմատ առնում այն բոլոր անախորժութիւնները, որ գալիս են ստեղծելու հայ-թուրքական բախումների հանգոյցը: Հայ ժողովրդական մասսաները ժամանակի թելադրանքի համեմատ նոյնպէս ընթանում են բուրժուազիայի ստեղծած հասարակարգի հունով: Թուրք ժողովրդական մասսաները դեռ թմրած են, դեռ կոյր հպատակ են ամեն մի հեղինակութեան»[1456]:

Փաստ էր, որ Այսրկովկասի տնտեսական կյանքում և կրթամշակութային հարաբերություններում հայերի ունեցած լուրջ դիրքը հիմնականում պայմանավորված էր նրանց զարգացման բարձր մակարդակով: Հայերն ունեին հին մշակույթ, կազմակերպություններ, առաջադրում էին ազգային խնդիրներ և այլն: Ռուս պատմաբան Վ. Ստարոսելսկու դիտարկմամբ՝ «Կոմերցիոն գործունեություն ծավալելու ընդունակությունները և երկրամասին քաջատեղյակ լինելը հայերին մղեցին հասարակական գործունեության լայն ասպարեզ՝ իբրև բարձրորակ վաճառականներ և արհեստավորներ»[1457]: Մինչդեռ կովկասյան թաթարների մեջ դեռևս ձևավորված չէր էթնիկ ինքնադիտակցությունը: Այս իմաստով որքան այժմեական է հնչում Դ. Անանունի արտահայտած հետևյալ միտքը. «Մեզ՝ հայերիս, որպէս արդի իմաստով բարդ կազմ ունեցող մի ազգութեան, վիճակուել է կողք-կողքի ապրիլ մի ազգի հետ, որն առանց ներտաւորումների չէ, բայց և միապաղաղ մի զանգուած է, միապաղաղ այն պատճառով, որ նրա տարբեր խաւերը դեռ չեն ապրում իրենց առանձին հասարակական ձգտումներով: Մեր դժբախտութիւնն է, որ պատմութիւնը իր սայլին լծել է եզանն և թռվռան եղնիկին»[1458]:

[1456] Անանուն Դ., Հայ-թուրքական հակամարտութիւնը, «Բագուի ձայն», Բագու, 1913, մարտի 28, № 67:

[1457] **Старосельский В.**, Кавказская драма, СПб., 1906, стр. 5.

[1458] Անանուն Դ., Հայ-թուրքական հակամարտութիւնը, «Բագուի ձայն», Բագու, 1913, մարտի 28, № 67:

Կովկասյան թաթար գործիչները, ռուսական կառավարությունից բացի, իրենց հետադիմության և տգիտության պատճառ էին համարում հայերին: Թերևս կովկասյան թաթարները քաջատեղյակ էին, որ ռուսական կառավարությունն ամենևին էլ բարեհամբույր չէր հայերի ազգային չարժումների նկատմամբ: Նրանց աչքի առաջ ոչ վաղ անցյալում փակվել էին հայկական դպրոցները, բռնադրավվել հայ եկեղեցու ունեցվածքը և այլն, իսկ Բաքվի առևտրաարդյունաբերության մեջ հայերից բացի իրենց որոշակի դիրքերն ունեին նաև ռուս և եվրոպացի դրամատերերը:

Անդրադառնալով հայ-թաթարական ընդհարումների սոցիալ-տնտեսական դրդապատճառներին՝ Ս. Կասյանն իրավացիորեն նշում է. «Եռանդոտ, կուլտուրայի ընդունակ հայը ենթարկւում է կեանքի էվօլիւցիային, յարմարւում է կապիտալիզմով յեղափոխւած արտադրութեան նոր պահանջներին ու պայմաններին: Իսկ դանդաղկոտ, ֆէօդալական սովորութիւններով չղթայւած, անկուլտուր տրադիցիաների մէջ ընկղմւած թուրքը, կամ ընկնում է կապիտալիզմի անողոք անիւների տակ, կամ թէ հազիւհազ, ուրիշների օգնութեամբ նրա պոչից քարշ գալիս: Երեկւայ նրա հարևանը նոյն դրութեան և վիճակի մէջ եղող հայը, այսօր տնտեսապէս ուժեղ է, կուլտուրապէս բարձր, քաղաքային գործերում էլ, ըստ այնմ, ազդեցութիւն ունեցողը: Այսպէս՝ թուրք տարրը ներկայացնում է Բագւի բնակչութեան տնտեսապէս ըէակցիօնէր մասը: Ի՞նչ անել: Խաների ու բէկերի սերնդի յիշողութիւնից դեռ չէ սպրդել ասիական ոյժի մարմնացումը՝ զէնքը»[1459]*:*

Ալ. Ռուբենին (Ալ. Ծատուրյան) հայերի ու թաթարների միջև ստեղծված տնտեսական և քաղաքական հակամարտության դրդապատճառները կապում է սոցիալ-տնտեսական և քաղաքական երկք գործոնների հետ: Ըստ նրա՝ առաջինը՝ հայ կապիտալի գերազանցությունն էր թաթար կապիտալի թուլության և սնանկացող կալվածատիրության հանդեպ, երկրորդը՝ ինքնակալության տապալման շրջանը, երբ թաթար դրամատերերը զգացել են ինքնակալության հետ միանալու և կռվելու անհրաժեշտությունը՝ ներկա կարգերից դժգոհ տարրերի, այսինքն, այդ պարագայում, հայ ժողովրդի դեմ, և երրորդը՝ երբ նույն հեղափոխությունը, թաթար դրամատերերի մեջ զարգացնելով քաղաքական դիտակցություն, սթափեցրեց նրանց մեջ

[1459] Կասեան Ս., Թուրք-հայկական ընդհարումները եւ հաշտութիւնը, «Կայծ», Թիֆլիս, 1906, ապրիլի 9, № 3:

քաղաքական ամբողջության ու ազգայնական գաղափարը[1460]*: Կովկասյան թաթար գործիչների շրջանում այն մտայնությունն էր իշխում, որ հայ-թաթարական հակամարտությունը նպաստելու է իրենց «էթնիկ հավաքական դիմակցության» բարձրացմանը: Այս տեսակետին էին համաթուրքական գործիչներից շատերը: Օրինակ՝ «Իրշադ» («Ուղորդող») լրագրի խմբագիր Ահմեդ բեկ Ագաևը նշում էր, որ «...Ընդհարումների չնորհիւ է, որ Անդրկովկասի բոլոր թաթարները սկսել են հասկանալ, թէ իրենք պատկանում են մի ցեղի եւ կապւած են միմեանց հետ սերտ կապերով, թէ ոչ մի տարբերութիւն չկայ բոլոր թաթարների միջեւ, լինեն նրանք Նախիջեւանում կամ Բագւում»*[1461]*: Քննարկվող խնդիրն ուսումնասիրողներից Թ. Վարդանյանն իրավամբ գրում է. «...թաթարական ազգայնականութեան իրական պատճառները ընկերային-տնտեսական գործօնները չէին: Հայ-թաթարական հակամարտութեան իրական պատճառները քաղաքական բնոյթ էին կրում...»*[1462]*:*

Բաքվում՝ կովկասյան թաթարների սկսած շարժումը անթաքույց ընդունել էր հակահայկական բնույթ: Իրենց ազգային խնդիրների լուծման ճանապարհին, որպես միակ միջոց, կովկասյան թաթարները համարում էին հայերի ֆիզիկական ոչնչացումն ու նրանց ստեղծած նյութական արժեքներին տիրանալը[1463]*: Թաթար գործիչներն ակնհայտորեն չէին թաքցնում իրենց հակահայկական քաղաքականությունը: Նույն Ագաևը, այս կապակցությամբ հայտարարում էր. «...ազգային դիմակցութիւնը պահելու համար պէտք է զարթեցնել թաթար ժողովրդի մէջ ատելութեան զգացում դէպի հայերը»*[1464]*: Հայասպան գործողություններ ձեռնարկելու նպատակով՝*

[1460] Տե՛ս Ռուբենի Ալ., Հայ-թիւրքական ջարդերի տնտեսական-քաղաքական պատճառները, «Մուրճ», Թիֆլիս, 1905, № 11-12, էջ 188-206:

[1461] Գիւլխանդանեան Ա., Հայ-թաթարական ընդհարումները, ի. Ա (Բագուի առաջին ընդհարումները), Փարիզ, 1933, էջ 176: Ցավոք աշխատության երկրորդ հատորը չի հրատարակվել: 1945 թ., երբ ձերբակալվում է Ա. Գյուլխանդանյանը, խուզարկության ժամանակ այլ ձեռագրերի հետ միասին բռնագրավվել է նաև ձեռագիր վիճակում գտնվող աշխատությունը (տե՛ս Բէնօ, Յուշեր Աբր. Գիւլխանդանեանի մասին, «Հայրենիք», Պօսթըն, 1946, ԻԴ տարի, սեպտեմբեր, № 5, էջ 92):

[1462] Վարդանեան Թ., Այսրկովկասում թաթարական ազգայնականութեան դրսեւորման արմատները 20-րդ դարասկզբին, «Դրօշակ», հոկտեմբեր, Երեւան, 2002, № 4, էջ 92:

[1463] Տե՛ս Վարդանյան Թ., Ազգամիջյան հակամարտությունը որպես էթնիկ ինքնության ձևավորման գործոն (1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների օրինակով), ԼՀԳ, Երևան, 2001, № 1, էջ 72:

[1464] Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Հայ-թաթարական ընդհարումները, ի. Ա, էջ 176:

Բաքվում այդ օրերին կովկասյան թաթար գործիչներից կազմվեց գաղտնի հատուկ մի մարմին, որին անդամակցում էին Ա. Ագաևը, Ալի Մարդան-բեկ Թոփչիբաշևը, Սաֆար-Ալիևը և ուրիշներ[1465]: «Բաղուն է հանդիսանում այն որջը, որտեղից համիսլամական եւ այլ ոճրագործ տարրեր ստանում էին իրենց սնունդը»[1466],- գրել է դեպքերին քաջատեղյակ Ա. Գյուլխանդանյանը: Գաղտնի մարմնի առաջին սև գործը եղավ ազդեցիկ հայերի նկատմամբ ահաբեկումներ կազմակերպելը[1467]:

Կովկասյան թաթարներին հայերի դեմ լարելու նպատակով Բաքվում ռուս բյուրոկրատիայի գործակալները տարածում էին այն ստահոդ լուրերը, թե իբր «Հայերը որոշել են «կոտորել» բոլոր մուսուլմաններին»[1468]: Կովկասի կառավարչապետ իշխան Գ. Գոլիցինը հայերի դեմ ձեռնարկվող գործողություններին նախապատրաստվել էր վաղուց: Նրա թողտվությամբ գրեթե բոլոր կովկասյան թաթարները նախապես զինված էին. «Անդրկովկասի ոստիկանությունը... գործիք դարձրեց իր ձեռքը թաթար ժողովրդի տականքներին, քաջալերեց եւ զինեց որոշ տարրերի եւ դուրս բերեց իր դարաւոր հարեւան հայերի դէմ»[1469]: Որ ընդհարումների ժամանակ ռուսական իշխանությունները սատարում էին կովկասյան թաթար հրոսակախմբերին, վկայում է հայերի սպանության դեպքերի անմիջական ականատես, անգլիական նշանավոր «Daily Mail» թերթի թղթակից Ֆրևդերիք Արթուր Մաքենզին: Լոնդոնում 1905 թ. հրատարակած «Տոկիոյից Թիֆլիս» գրքի՝ «Ընդհարումներ Կովկասում» վերտառությամբ 30-րդ գլխում Մաքենզին, անդրադառնալով այդ իրադարձություններին, գրում է, որ կովկասյան թաթարներից շատերը զինված էին ռուսական բանակի «Մոսին-Ռևեսըն» ատրճանակներով[1470]: «Тифлисский Листок» լրագրում այդ մասին ասվում է.

[1465] Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1934, ԺԲ տարի, հունիս, № 8, էջ 114:

[1466] Նույն տեղում:

[1467] Գաղտնի մարմնի կազմակերպմամբ Փիրոյանի նավթահանքում սպանվեցին Համազասպ Թոփչյանը (հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ Եղիշե Թոփչյանի եղբայրը) և «Կասպիական ընկ.» կառավարիչներից իմժեներ Լևոն Տեր-Սարգսյանը (տե՛ս նույն տեղում):

[1468] Տե՛ս Ամանուն Դ., Ռուսահայոց հասարակական-քաղաքական մտքի զարգացումը (1901-1918), հ. Գ., Վենետիկ, 1926, էջ 81:

[1469] Գիւլխանդանեան Ա., Կովկաս երկիրը, ժողովուրդը, պատմութիւնը, քարտէզ եւ բազմաթիւ վիճակագրական տեւալներ, Ա մաս, Փարիզ, 1943, էջ 210:

[1470] Տե՛ս Fr. A. Mckenzie, From Tokyo to Tiflis, London, 1905, p. 309.

«Բոլոր թուրքերը (իմա՛ Բաքվի – Գ. Ս.) զինված են բերդանկաններով, և նրանք մեծ քանակի փամփուշտ ունեն»[1471]:

Հարկ է նշել, որ կովկասյան թաթարների զինված լինելուն նպաստում էր այն հանգամանքը, որ վերջիններս մեծ թիվ էին կազմում ոստիկանական համակարգում: Պատճառն այն էր, որ ցարական կառավարության աչքում կովկասյան թաթարները չլինելով հեղափոխական տարր, իշխանությունների կողմից առավել մեծ վստահության էին արժանացել, հատկապես հակացարական նկրտումները ճնշելու գործում[1472]:

Կովկասյան թաթարների զինելու գործում մեծ աշխատանք էր տարել հատկապես Թուրքիան՝ Բաթումիի վրայով մեծ քանակությամբ զենք և զինամթերք տեղափոխելով Բաքու: Բոստոնում հրատարակվող «Կոչնակ» լրագրում այդ մասին ասվում է, որ «Daily Mail» թերթի թղթակիցը 1905 թ. հեռագրում էր. «Բաթումից ոչ շատ հեռու յայտնվել է մի շոգենաւ, լի ամեն տեսակ ռազմամթերքով, որ նշանակուած է հասցնել Կովկասում կուռող կողմերից մէկին: Շոգենաւի բոլոր ծառայողները թուրքեր են»[1473]:

Նկատենք, որ ցարական կառավարության՝ կովկասյան թաթարների և հայերի միջև երկպառակություն սերմանելու քաղաքականությունը սկսվել էր դեռևս 1903 թ. վերջերից և 1904 թ. սկզբներից[1474]: Նախքան այդ, ինչպես վկայում է Եղիշե ավ. քհն. Գեղամյանցը, կովկասյան թաթարներն ու հայերը միմյանց նկատմամբ եղել են հանդուրժող և հարգանքով: «Մինչև 1903 թուականի կէսը,- գրում է Ե. Գեղամյանցը,- հայ և թուրք՝ քաղաքացին էլ, գիւղացին էլ, արհեստաւորն ու բանւորն էլ, վաճառականն ու ծառայողն էլ,- ամենքը, անխտիր ամենքը սիրով, եղբայրաբար ապրում էին Կովկասում միմյանց կողքին: Թուրք և հայ հարևանութեան, դրկեցութեան ընտիր և ազնիւ օրինակը՝ նկատելի էր նամանաւանդ Բագու քաղաքում և նրա շրջակայ գիւղերում...»[1475]:

Բաքվում հայերի դեմ առաջին հարձակումները սկսվեցին նախքան լայնամասշտաբ ընդհարումները՝ 1904 թ. սեպտեմբերին, երբ Գ. Միրզաբեկյանի ծխախոտի գործարանի հայ բանվորները ծեծեցին մի քանի թուրք բանվորների՝ նույն գործարանի հայ աղջիկ-

---

[1471] «Тифлисский Листок», Тифлис, 1905, 11 февраля, № 45.
[1472] Տե՛ս Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք Ա, էջ 55:
[1473] «Կոչնակ», Պոստոն, 1905, սեպտեմբերի 23, № 38:
[1474] Տե՛ս Центральные газеты РСДРП о Закавказье 1905 г. (Сборник). Составитель автор предисловия и примечаний **Исаакян Г. А.**, Ереван, 1965, стр. 43.
[1475] Գեղամեանց Ե., Ռուս բիւրօկրատիան և հայերը, Բագու, 1917, էջ 84-85:

ներին անպատվելու համար: Օգտվելով այդ առիթից՝ ոստիկանը հավաքում է կովկասյան թաթար բանվորներին և, նրանց ատրճանակներ ու սրներ բաժանելով, հրահրում հայերի դեմ: Հայ բանվորներն անպատրաստ էին, նրանցից երկուսը սպանվում են, իսկ չորսը՝ ծանր վիրավորվում[1476]: Մնալով անպատիժ՝ կովկասյան թաթարները կատարում են նմանօրինակ մի շարք դեպքեր ևս: Այսպես՝ 1904 թ. դեկտեմբերին, օրը ցերեկով, Հայկավանի մոտակայքում սպանվում է նախկին հայդուկ, նոր-բայազետցի Միսաք Ենգոյանը, որը մեծ հարգանք էր վայելում Բաքվի հայ հասարակության մեջ[1477]:

Հայ-թաթարական ընդհարումների կազմակերպման մեջ իր բացասական դերակատարությունն ուներ հատկապես Բաքվի նահանգապետ Հայատյաց իշխան Միխայել Նակաշիձեն[1478], որի թողտվությամբ ու հրահրմամբ կովկասյան թաթար ոստիկանները հայերի դեմ նյութում էին բազմաթիվ սադրանքներ: ՌՍԴԲԿ-ի օրգան «Вперед» լրագիրը, անդրադառնալով Նակաշիձեի հակահայկական գործողություններին, այդ օրերին գրում էր. «Տուրք տալով թաթարական պրովակացիային և ուժեղացնելով ազգային ճնշման քաղաքականությունը՝ Նակաշիձեն աչք էր փակում թաթարների կողմից իրականացվող ամեն մի հակահայ գործողություն»[1479]:

Բաքվում հակահայկական առաջին գործողությունները սկսվեցին 1905 թ. փետրվարի 6-ին, կիրակի օրը[1480]: Հայերի ջարդերի

[1476] Տե՛ս «Դրօշակ», Ժնև, 1904, սեպտեմբեր, № 9, էջ 141:

[1477] Տե՛ս նույն տեղում, դեկտեմբեր, № 4, էջ 115:

[1478] Նակաշիձեն. նախքան Բաքվի նահանգապետ դառնալը, 18 տարի անընդմեջ եղել է Գանձակի նահանգի նահանգապետը (տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1897, № 6, էջ 891):

[1479] Центральные газеты РСДРП о Закавказье 1905 г., стр. 43.

[1480] Բաքվում հայ-թաթարական ընդհարումների համար շարժառիթ ծառայեց հետևյալ միջադեպը: 1905 թ. փետրվարի սկզբներին կովկասյան թաթար հանցագործ Աշուրբեկին դատարանից բանտ տեղափոխելու ճանապարհին փախչելու փորձ կատարելիս սպանել էր պահակախմբի հայ զինվորը: Դեպքից շատ չանցած, փետրվարի 6-ին, կիրակի օրը Պարապետ հրապարակում, Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մոտ, մեծահարուստ Ալի-Ռզա Բաբաևը, որը մեծ ճանաչում ուներ կովկասյան թաթարների շրջանում, մոտենալով Աշուրբեկին սպանող հայ զինվորին՝ կրակում է նրա վրա և վիրավորում: Զինվորի մոտ եղող հայերը, բռնելով Բաբաևին, հանձնում են ոստիկանին, որը, առանց զինաթափելու ոճրագործին, նստեցնում է կառք և փորձում դուրս բերել հայերի ձեռքից: Սակայն Բաբաևը, կառքից ցատկելով, փորձում է փախչել, բայց մի քանի հայ երիտասարդներ կրակելով սպանում են նրան Կրիվայա փողոցում: Նույն օրն իսկ ոստիկանները Բաբաևի դիակը տալիս են կովկասյան թաթարներին, որոնք այն պտտեցնելով մահմեդական թաղամասերով՝ վրեժի կոչերով թաթարներին հրահրում են հայերի

կազմակերպիչների թվում էին նաև մի շարք ազդեցիկ կովկասյան թաթարներ, ինչպես, օրինակ, Քաղաքային Դումայի անդամ Ատամալիևը, նրա որդի՝ ուսանող Քյազիմը և ուրիշներ[1481]: Կոտորածի առաջին օրն սպանվում է մոտ 30 հայ[1482]: Հայկական ինքնապաշտպանության գործը կազմակերպելու նպատակով Բաքվում առաջինը ոտքի կանգնեց ՀՅԴ «Ոսկանապատ» կենտրոնական կոմիտեն, որը փետրվարի 6-ի երեկոյան նահանգապետ Մ. Նակաշիձեին հղեց հետևյալ բովանդակությամբ նամակը.

«Պ. Նահանգապետ,

Քաղաքում մի քանի ժամ շարունակ տեղի ունեցած արիւնալից դէպքերը մեզ ներշնչեցին մի կարծիք, որը դառնում է համոզմունք մեզ համար այն, որ թափւած ամբողջ արեան պատճառը դուք էք եւ ձեզ ենթարկւած ոստիկանութիւնը: Հարկաւոր չդատելով ապացոյցներ բերել ձեր յանցագործ վարմունքի համար, որը բազմաթիւ անմեղների կորստեան պատճառ եղաւ, Հայ Յեղ.Դաշնակցութեան կենտրոնական Կոմիտէն, նախ քան իր վրայ դրած սրբազան պարտականութեան կատարման ձեռնարկելը՝ պաշտպան հանդիսանալ անմեղ զոհերին, աւելորդ չի համարում յայտարարել Ձեզ, պ. Նահանգապետ, որ եթէ արիւնահեղութիւնը չէք դադարեցնի Ձեր ձեռքում եղած բոլոր միջոցներով, այդ դէպքում Դուք պատասխանատու էք Ձեր արիւնով, այլ եւ Ձեր մեղսակիցների արիւնով: Հ.Յ.Դ. Բագուի Կենտր. Կոմիտէ»[1483]:

Թվում էր, թե այս սպառնացող հայտարարությունից հետո նահանգապետի կողմից կկանխվեին կովկասյան թաթար խուժանի սանձարձակությունները, սակայն ապարդյուն՝ ջարդերը շարունակվեցին նաև հաջորդ օրը, առավոտյան ժամը 10-ից: Կանխազգալով վերահաս վտանգը՝ ՀՅԴ «Ոսկանապատ» կենտրոնական կոմիտեն կարճ ժամանակամիջոցում կազմեց մարտական զինված ջոկատներ՝ ստանձնելով հայերի պաշտպանության պատասխանատու և դժվարին գործը: Գիտակցելով հայությանը սպառնացող վտանգը՝ հայ հասարակական-քաղաքական շրջանները ձեռնամուխ եղած ինքնապաշտպանության գործին: Ինքնապաշտպանական գործի կազմակարպման աշխատանքներին սատար կանգնեցին մեծահարուստ և ազդեցիկ հայերից՝ Բ. Դոլուխանյանը (փաստաբան, նավթարդյունա-

---

դեմ (տե՛ս «Լումայ», Թիֆլիս, 1905, մարտ, № 1, էջ 146-148, տե՛ս նաև Ա-Դօ, նշվ. աշխ., էջ 14):

[1481] Центральные газеты РСДРП о Закавказье 1905 г., стр. 46.

[1482] Տե՛ս «Հայրենիք» (լրագիր), Պօսքով, 1905, ապրիլի 3, № 14:

[1483] Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Հայ-թաթարական ընդհարումները, հ. Ա, էջ 14:

բերող), Սամ. Թաղիանոսյանը (նավթային ընկերության վարիչ, բարեսեր նախագահ, ինժեներ), Կ. Խատիսյանը, Հ. Տեր-Միքայելյանը (նավթային ընկերության վարիչ) և շատ ուրիշներ:

Ինքնապաշտպանության գործի գլխավոր կազմակերպիչն էր անվեհեր հայդուկապետ Նիկոլ Դումանը: «Կարելի է առանց վարանումի ասել,- գրում էր Ա. Գյուլխանդանյանը,- որ եթէ Փետրվարի օրերին Դումանը չներխուժեր Բագվի մէջ, Բագվի ինքնապաշտպանությանն գործը կամ չէր յաջողվի կամ կը տառնար պատահական բնոյթ, եւ, հաւանօրէն Բագվի հայութիւնը սոսկալիօրէն կը տուժէր, առանց կարողանալու հակառակորդին արժանի պատասխանը տալու»[1484]: Ն. Դումանի անմիջական դինակիցներն էին Աբրահամ Գյուլխանդանյանը, Մկրտիչ Աղամալյանը (Սարհատ) և Մարտիրոս Զարուխյանը, Առյուծ Ավագը, Մոկացի Գրիգորը, Ղաչաղ Ասլանն ու Զոփուռ Արսենը, Թադևոս Պետրոսյանը, Թադևոս Ամիրյանը (Գիժ Թաթոս), Համայակ Ջանփոլադյանը, Համբարձում Բալայանը (Համբի), Հովհաննես Քոչարյանը (Շամախեցի Իվան), Ղաչաղ Ասլանը, Գասպար Տեր-Մկրտչյանը, Վահան Մինախորյանը, Գապոն, Փոքրիկ Սերգեյը (Աղասի), Փոքրիկ Ղազարը (Ղազո), Շամիրը և ուրիշներ[1485]: «Մեր այդ մի քանի ընկերները,- գրում էր Ա. Գյուլխանդանյանը,- չչմնցնող քաջութեամբ ջարդեցին թաթարական խմբակին, աստիճանաբար մաքրեցին բոլոր դիմադրական օղակները, լայնացրին մեր կենտրոնի շրջագիծը, եւ այդպիսով հայկական թաղամասերի մեծ մասը կապեցին միմեանց հետ»[1486]: Իրենց խիզախությամբ չընկրկեցին նաև կանայք. օրիորդ Շագեղանյանցը, տիկ. Շեկ-Հովսեփյանը, տիկ. Մարգարիտ Մելիք-Բեգլարյան-Օհանյանը, տիկ. Աննան և ուրիշներ[1487]: Ուշագրավ է այն փաստը, որ հայ-թաթարական ընդհարումների ժամանակ հյուրախաղերով այդտեղ գտնվող դերասանուհի Սիրանույշը, անտեսելով վտանգը, անձնվիրաբար փրկել է տասնյակ հայերի, հոգ տարել տուժածների մասին[1488]:

Կովկասյան թաթարների կողմից ամենուր իրար հաջորդող կողոպուտները, հրկիզումները, բռնություններն ու սպանությունները տևում են երեք օր ու գիշեր: Հայերից 30-ը ողջ-ողջ այրվում են

[1484] Գիւլխանդանեան Ա., Հայ-թաթարական ընդհարումները, հ. Ա, էջ 61-62:
[1485] Տե՛ս նույն տեղում, էջ 59-106, տե՛ս նաև Գևորգյան Հ., Նիկոլ Դումա, Երևան, 2002, էջ 157:
[1486] Գիւլխանդանեան Ա., Հայ-թաթարական ընդհարումները, հ. Ա, էջ 26:
[1487] Տե՛ս նույն տեղում, էջ 100-105:
[1488] Տե՛ս Զարյան Ռ., Սիրանույշ (1857-1932), Երևան, 1957, էջ 99:

հրդեհված տների մեջ[1489]: Սպանված հայերի մեջ կային 7 կին, 20 երեխա (12-14 տարեկան) և 13 ծերեր, որոնք բոլորն էլ մորթոտվել էին դաշույնով[1490]: Սպանվածների մեջ կար նաև 8 ամսական երեխա[1491]: Ըստ Բաքվի հայ հոգևորականության կազմած ցուցակագրության՝ սպանվածներից թաղվել էին ընդամենը 177-ը[1492]: Դիպքերի ականատեսի վկայությամբ՝ «Դիակները փուված էին փողոցներում տասնյակներով. արիւնչաղախ ու գզգզուած... դիակներն այլանդակուած, լերդացած սև արիւնով, ջախջախուած գանգերով ու դուրս ժայթքած ուղեղներով»[1493]: Հայկական թաղամասերից առավել տուժել էր հայահոծ Շամախինկան: Հայերի դեմ սանձազերծված կովկասյան թաթար հրոսակախմբերի վայրենաբարո գործողությունների ժամանակ ավերվեցին և հրո ճարակ դարձան Բաքվի հայ մեծահարուստներից Ասլանյանի, Ադամյանի և այլոց շքեղ տները[1494]: Զոհերի թվում էին մեծահարուստ Բալաբեգ Լալայանը և նրա կինը, որոնց բռնությամբ հանել էին տանից և գազանաբար սպանել: Բ. Լալայանցի զավակներին կոտորածից փրկել էր տան ռուս աղախինը, որը, վտանգելով իր կյանքը, մի ռուս ընտանիքի միջոցով փախցրել ու թաքցրել էր նրանց[1495]:

Ինքնապաշտպանության էր դիմել Ալեքսանդր Ադամյանը: Հայտնի լինելով իբրև անվախ որդոր և անվրեպ հրացանաձիգ՝ նա, իր 13-ամյա որդու հետ դիմելով ինքնապաշտպանության, համառ

1489 Տե՛ս Անանուն Դ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 168-169, նաև Շիրվանզադե Ալ., Նամակ Բաքվից, ԵԺ, հ. 9, Երևան, 1961, էջ 504:

1490 Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Հայ-թաթարական ընդհարումները, հ. Ա, էջ 55:

1491 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1905, մարտի 1, № 34:

1492 Տե՛ս Բագուի կոտորածի հայ զոհերի ցուցակը, «Մշակ», Թիֆլիս, 1905, փետրվարի 19, № 27, տե՛ս նաև փետրվարի 27, № 33, տե՛ս նաև մարտի 1, № 34:

1493 Տե՛ս Մարգար, Հոգեվարքի ծիծաղը. պատմուածք Բագուայ սարսափներից, Բագու, 1906, էջ 3-4:

1494 Տե՛ս Նուպար Տէր-Միքայէլեան, 1905 թ. Բաքուի կոտորածը. Երեւան, 1994, էջ 2 (ՀՅԹԻ, ֆ. 61, Ադրբեջանի տարածքի հայ բնակչության կոտորածները, թղթ. 3):

1495 Տե՛ս «Լումայ», Թիֆլիս, 1905, մարտ, № 1, էջ 151, տե՛ս նաև Շիրվանզադե Ալ., Նամակ Բաքվից, հ. 9, էջ 492-493, տե՛ս նաև Գիւլխանդանեան Ա., Հայ-թաթարական ընդհարումները, հ. Ա, էջ 51, տե՛ս նաև **Старцев Г.**, նշվ. աշխ., стр. 34: Ենթադրում ենք, որ Բալաբեգը եղել է Լալայան եղբայրներից Բաքվում բնակություն հաստատած Գևորգ Լալայանի որդին: Մահացել է 1899 թ. ապրիլի 16-ին, 75 տարեկան հասակում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 309, թ. 9): 1918 թ. նոյեմբերին, երբ Բաքվում հաստատվեցին անգլիացիները, մի դիպվածի պատճառով վերջիններս ձերբակալում են Բալաբեգ Լալայանցի որդուն՝ Ստեփան Լալայանցին և հանձնում ադրբեջանական իշխանություններին, որոնք նրան բանտարկում են Գանձակի բանտում, ապա՝ գնդակահարում (տե՛ս Եղիշէ Պահլաւունի, Յուշամատեան, կազմեց եւ խմբագրեց՝ Նորայր Պահլաւունի, Երեւան, 2006, 34):

մարտ է մղում տուն ներս խուժող թաթար հրոսակախմբի դեմ: Զկարողանալով գրավել տունը՝ թաթարներն այն այրում են, որի հետևանքով այրվում են տան բոլոր 17 անդամները, այդ թվում՝ Ալ. Ադամյանը, կինը՝ Մարիան, նրանց որդին՝ Նիկոլայը և մյուսները[1496]: Դեպքերի ականատես, ֆրանսիացի հայտնի գրող և «Le Matin» թերթի հատուկ թղթակից Գաստոն Լերուն կովկասյան թաթարների բարբարոսությունների մասին վկայում է. «Մեծ թվով հայեր այրվեցին իրենց սեփական տներում: Թաթարները փողոցներում և ճանապարհներին սպանված ու վիրավոր հայերին կապում էին ձիերի պոչերից և քարշ տալիս խարույկների վրա... Կենդանի մնացածների վրա չաղ էին տալիս նավթ, որից կրակը ավելի էր թեժանում»[1497]:

Տարբեր տվյալներ կան Բաքվի հայության զոհերի թվի վերաբերյալ: Ըստ Ա. Գյուլխանդանյանի՝ երեք օրվա ընթացքում սպանվել էր 205 և վիրավորվել 121 հայ[1498]: Նույն թվերն է հաղորդում նաև Բ. Դոլուխանյանը «С. Петербургские ведомости» լրագրում հայ-թաթարական ընդհարումներին նվիրված հոդվածում[1499]: Դ. Անանունի տվյալներով՝ սպանվել էր 234 և վիրավորվել 104 հայ[1500]: «Daily Mail» թերթի թղթակից Ֆրեդերիք Արթուր Մաքենզիի վկայակոչած տվյալներով՝ սպանվել էր 258 հայ[1501]: Սենատոր Ա. Կուզմինսկին իր հաշվետվության մեջ նշում է, որ ոչ լրիվ տվյալներով՝ սպանվել էր 224 և վիրավորվել 95 հայ: Ընդ որում՝ նրանցից 32-ը սպանվել էին Բալախանիում, Սաբունչիում և Ռամանում[1502]: Ս. Վրացյանը՝ Ա. Գյուլխանդանյանի «Հայ-թաթարական

[1496] Տե՛ս «Լումայ», Թիֆլիս, 1905, մարտ, դ 1, էջ 153, տե՛ս նաև Շիրվանզադե, Նամակ Բաքվից, ԵԺ, հ. 9, էջ 491-494, տե՛ս նաև «Հայրենիք» (լրագիր), Պօսքով, 1905, ապրիլի 3, № 14, տե՛ս նաև «Մշակ», Թիֆլիս, 1905, փետրվարի 17, № 25, տե՛ս նաև Henry J., նշվ. աշխ., p. 160-161.

[1497] Гастон Леру, Агония царской Росии, перевела с французского Ирина Ольтециан, «Литературная Армения», Ереван, 1991, № 7, стр. 91.

[1498] Տե՛ս Գյուլխանդանեան Ա., Հայ-թաթարական ընդհարումները, հ. Ա, էջ 55, 168:

[1499] Տե՛ս Անանուն Դ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 168:

[1500] Տե՛ս նույն տեղում:

[1501] Տե՛ս Fr. A. Mckenzie, նշվ. աշխ., p. 312.

[1502] Տե՛ս Всеподданнейшая записка выводы отчета о произведенной въ 1905 года по Высочаймему повелению сенаторомъ Кузьминским. Ревизии города Баку и Бакинской губернии, (б. м. и г.). стр. 1, տե՛ս նաև Всеподданнейший отчет о произведенной в 1905 году по Высочайшему повелению сенатором Кузьминским. Ревизии города Баку и Бакинской губернии, (б. м. и г.), стр. 7, 9 (այսուհետ՝ Кузьмински, Всеподданнейший отчет...). Բաքվում 1905 թ. տեղի ունեցած հայ-թաթարական ընդհարումներից հետո, 1905 թ. մարտի 2-ին

ընդհարումները» աշխատության առիթով գրած գրախոսականում հակված է հիմք ընդունելու սենատոր Ա. Կուզմինսկու բերած տվյալները[1503]: Վերջինիս բերած տվյալները հավաստի է համարում նաև հետազոտողներից Հր. Սիմոնյանը[1504]:

Զոհված հայերը Դյոքչայի, Շամախիի, Շուշիի և Զանգեզուրի գավառներից, ինչպես նաև Այսրկովկասի ու Արևմտյան Հայաստանի ամենատարբեր քաղաքներից ու դյուղերից եկած մշակներ ու գործավորներ էին: Ամենաշատ զոհեր տվել էին զանգեզուրցիները՝ 40 հոգի, և Շուշի քաղաքից եկածները՝ 20 հոգի[1505]: Մեծ էին հայերի նաև նյութական կորուստները: Թալանի մատնված 138 խանութներից և արհեստանոցներից 97-ը պատկանում էին հայերին[1506]:

Փաստերը վկայում են, որ ընդհարումների ողջ ընթացքում հակահայկական կեցվածք էին ընդունել նահանգապետ իշխան Մ. Նակաշիձեն, քաղաքագլուխ Կ. Իրեցկուն փոխարինած Գաննեցկին, որը հրաժարվել էր օգնել նույնիսկ քաղաքային վարչության հայազգի ծառայողներին, ոստիկանապետ Դեմինսկին, նրա օգնական Բորոդինը, Նավթաշրջանի ոստիկանապետ Խամիցկին, նրա օգնական Սապլիվենկոն և պետական ապահովության տնօրեն իշխան Թավքերիձեն, պրիստավ կապիտան Մամեդբեկովը և թաղային վերակացուները, որոնք, տուրք տալով թաթարների՝ հայերի դեմ ուղղված ցանկացած սադրիչ գործողությանը, նրանց հրահրում էին խաղաղ հայ բնակչության դեմ[1507]: Ավելին՝ Գաստոն Լերուն վկայում է, որ պրիստավը Դիլդարյանից 2000ռ. կաշառք պահանջեց՝ նրա տունը չհրետակոծելու համար[1508]: Հայերի սպանությունների

Նիկոլայ II-ը, սենատոր Կուզմինսկուն հանձնարարում է կատարել Բաքու քաղաքի և նահանգի փետրվարյան դեպքերի քննությունը: Կուզմինսկու գլխավորած հանձնաժողովը Բաքու է գալիս 1905 թ. ապրիլի 3-ին: Հանձնաժողովի աշխատանքները տևեցին շուրջ 5 ամիս: Այդ ուսումնասիրությունը, որպես 680 տպագրական էջ ծավալով զեկուցագիր, ներկայացվել է սենատին: Զեկույցում քննության են առնված նահանգի ժողովուրդների տնտեսական փոխադարձ հարաբերությունները, նավթային արդյունաբերության, կրթության, գյուղացիների սոցիալական ու տնտեսական հարցերը և այլն:

[1503] Տե՛ս **Վրացեան Ս.**, Գրախօսական, Ա. Գիւլխանդանեան «Հայ-թաթարական ընդհարումները», հ. Ա, Փարիզ, 1933, «Վէմ», Փարիզ, 1934, Բ տարի, մարտ-ապրիլ, № 2, էջ 139:

[1504] Տե՛ս **Սիմոնյան Հր.**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք Ա, էջ 93:

[1505] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 133, թ. 14:

[1506] Տե՛ս **Գիւլխանդանեան Ա.**, Հայ-թաթարական ընդհարումները, հ. Ա, էջ 55:

[1507] **Араратский (Лункевич) В.**, Подвиги царизма Кровавые февральские дни в Баку, Женев, 1905, стр. 5-6.

[1508] Տե՛ս **Гастон Леру**, նշվ. աշխ., стр. 103.

ժամանակ, երբ ռուս մի դնդապետ դիմել էր Մ. Նակաշիձևին և դրավոր թուլյտվություն խնդրել, որպեսզի հրացանազարկությամբ զսպի կովկասյան թաթար կատաղած ամբոխին, վերջինս կտրականապես մերժել և միայն հրամայել էր. «...մտրակներով, մտրակներով խաղաղացրէք»[1509]:

Կռվող կողմերի միջև հաշտություն կնքվեց փետրվարի 9-ին՝ նահանգապետի մոտ կովկասյան թաթար և հայ ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցած բանակցություններից հետո: Բաքվում սկսված հայ-թաթարական ընդհարումների լուրերը Թիֆլիս հասնելուն պես՝ փետրվարի 9-ին, տեղի է ունենում բազմամարդ ժողով՝ կոտորածի տարածումը կանխելու նպատակով: Ժողովը որոշում է հեռագրել Էջմիածին՝ Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին, և նրան խնդրել անհապաղ մեկնել Բաքու՝ հաշտությունը և արյունահեղությունը դադարեցնելու համար: Էջմիածին գնալու և կաթողիկոսին իրազեկելու համար պատգամավորներ են ընտրվում Հովհ. Թումանյանը և Մ. Մուրադյանը: Փետրվարի 10-ին Էջմիածին հասած պատգամավորները հիվանդ կաթողիկոսին պատմում են Բաքվի դեպքերի մասին: Փետրվարի 12-ին Խրիմյան Հայրիկը Հովհ. Թումանյանի ուղեկցությամբ հասնում է Թիֆլիս, սակայն առողջական վիճակի վատթարացման պատճառով Թիֆլիսից չի կարողանում մեկնել Բաքու: Նրանց փոխարեն Բաքու են մեկնում Հուսիկ եպիսկոպոսը և Մխիթար վրդ. Տեր-Մկրտչյանը[1510]:

Ականջալուր Բաքվում տեղի ունեցած սարսափներին՝ Խրիմյան Հայրիկը փետրվարի 11-ին մխիթարական կոնդակ հղեց Բաքու՝ ջարդերից փրկված հայերին: Վեհափառի կոնդակում խոր վշտով դրված էր. «...ես տառապալս և ցամաքեալս որպէ՞ս մխիթարեցից զքեզ...Աստուած ամենակարող, որ Տէրն է նեղելոց և վշտացելոց և սփոփիչ յուսահատից, մխիթարեսցէ զվշտացեալ սիրտս Ձեր և իմն, որ առաւել կամ վշտահար, կարողացուսցէ զՁեզ ի տկարութեան Ձերում, պարգևելով ամենեցուն զդ սէր, միաբանութիւն, նոր եռանդ և յաջողութիւն հանդերձ առողջութեամբ հոգւոյ և մարմնոյ ննջեցելոց Ձերոց և նահատակաց հանգիստ և երկնային արքայութիւն»[1511]: Բաքվի

[1509] «Հայրենիք» (լրագիր), Պօսքրև, 1905, ապրիլի 3, № 14:

[1510] Տե՛ս Թումանյան Հ., Նամակների (1905-1922), ԵԼԺ, հ. 10, Երևան, 1999, էջ 7-8, տե՛ս նաև Կարապետյան Լ., Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը (դիվագներ), Երևան, 1992, էջ 53-55, տե՛ս նաև Հովհաննիսյան Ս., Դիվագներ Հովհաննես Թումանյանի ազգային-հասարակական գործունեությունից (1905-1906 թթ.), ՊԲՀ, Երևան, 2007, № 2, էջ 100-101, տե՛ս նաև «Արարատ», 1905, Բ, էջ 127:

[1511] «Արարատ», 1905, Դ, էջ 299-301:

հայ ապետայիններին նյութական օգնություն կազմակերպելու խնդրով մտահոգված՝ Սրիմյան Հայրիկը Թիֆլիսում փետրվարի 14-ին կոնդակ է ստորագրում հանգանակիչ հանձնաժողով ստեղծելու մասին՝ կոչ անելով սատարել Բաքվի հայությանը, հիշեցնելով, որ հայության նեղ օրերին նրանք միշտ էլ պատրաստակամ աջակցել են[1512]:

Հայ-թաթարական առաջին ընդհարումներից հետո, երբ հաստատվել էր հարաբերական խաղաղություն, 1905 թ. մարտի կեսերին ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտրոնական կոմիտեն հայտարարեց, որ փետրվարի 6-9-ը Բաքվում տեղի ունեցած կոտորածների հրահրման մեղադրանքով իր կողմից մահվան են դատապարտվել նահանգապետ Նակաշիձեն, ոստիկանապետ Դեմինսկին, պրիստավ Մամեդբեկովը, նրա օգնական Սուլթանովը և ոստիկանության թաղային վերակացուներ Միքելաձեն ու Շահթախտինսկին: ՀՅ Դաշնակցության հայտարարած մահավճիռներից հետո մեկը մյուսի հետևից Բաքվում գետին տապալվեցին կովկասյան թաթարներին զինած և հայերի դեմ սադրիչ գործողությունների դիմած ոճրագործները: Մարտի 16-ին սպանվեց Միքելաձեն, մարտի 22-ին ծանր վիրավորվեց Մամեդբեկովը, նույն օրերին սպանվեցին Շահթախտինսկին և նրա գործակիցները[1513]: Մայիսի 11-ին 21-ամյա Դրաստամատ Կանայանի (Դրո) կողմից ռմբահարվեց հայերի կոտորածների գլխավոր կազմակերպիչ Մ. Նակաշիձեն: Նույն օրը, մայիսի 11-ին, ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտրոնական կոմիտեի տարածած պաշտոնական հաղորդագրությունում ասվում էր. «Հ. Յ. Դաշնակցութեան Կովկասեան Բ. Կ. Կոմիտէի որոշմամբ՝ Բագւի նահանգապետ իշխան Նակաշիձէ, փետրւարեան եղեռնի գլխաւոր հեղինակը, մայիսի 11 (24)-ին ենթարկւեց տէռօրի՝ ռումբի միջոցով: Նահանգապետը սպանւեց տեղնուտեղը: Տէռօրիստը ազատ է»[1514]:

Հայերը դեռևս շարունակում էին վերականգնել փետրվարի 6-9-ը տեղի ունեցած ջարդերի, հրդեհների, ավերածությունների և կողոպուտների հետքերը, երբ օգոստոսի 20-30-ը կրկին բռնկվեցին հայ-թաթարական երկրորդ ընդհարումները: Դրան էին նպաստում համաթուրքականների վերսկսած լայն քարոզչությունն ու ձեռնարկումները: Այդ նպատակով 1905 թ. փետրվարի վերջերին կառավարության թույլտվությամբ Մահմեդ աղա Շահխտախտինսկին Թիֆլի-

---

[1512] Նույն տեղում, էջ 304:
[1513] Տե՛ս Սիմոնյան Հր., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք Ա, էջ 256:
[1514] «Դրօշակ», Ժնեւ, 1905, հունիս, № 6, էջ 81:

սից Բաքու էր տեղափոխել Համաթուրքական գաղափարախոսության մոլի քարոզիչ «Շարքի ռուս» լրագրի հրատարակությունը[1515]: «Թուրք լրագիրը,- գրում է այդ օրերին «Մուրճ» ամսագիրը,- փոխադրվելով իսլամական ավելի բազմամարդ կենտրոնի մը մէջ, թե՛ լրագիրը, և թե՛ ժողովուրդը (իմա՛ կովկասյան թաթարները - Գ. Ս.) մեծապէս պիտի չահին»[1516]: Համաթուրքական գործիչներից Աղաևն ու Շահխտատինակին այդ օրերին հետադիմական մամուլի միջոցով նորից կենդանություն տվին հայատյաց ռուս սևհարյուրակայինների այն դրպարտությանը, թե իբր հայերը ձգտում են Կովկասի սահմանների մեջ ստեղծել «մի թագավորություն, որն իր մեջ է առնելու ոչ միայն ամբողջ Անդրկովկասը, այլև Հյուսիսային Կովկասը և ռուսական այն բոլոր հողերը, որ տարածվում են մինչև Դոնի Ռոստով՝ Նեբառայալ քաղաքը»[1517]:

ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն, հաշվի առնելով առաջին ընդհարումների դասերը, անակնկալի չգալու նպատակով, կարճատև հաշտության հաստատումից հետո ձեռնամուխ էր եղել հայ բնակչության ինքնապաշտպանական աշխատանքների կազմակերպմանը: Այդ նպատակով կենտրոնական կոմիտեին կից, մարտի սկզբներին հատուկ իրավունքներով ստեղծվել էր «Զինվորական մարմին», որի կազմում ընդգրկվել էին Նիկոլ Դումանը, Ա. Գյուլխանդանյանը, Հովհ. Քաջազնունին, Ստեփան Տեր-Մկրտչյանը, Տիգրան Աղամալյանը, Գևորգ Վարշամյանը, Համբարձում Աղաջանյանը (Կարո)[1518]: Ինքնապաշտպանության գործը կառավարելի դարձնելու նպատակով «Զինվորական մարմնի» կողմից Բաքվի հայկական մասն իրենց շրջանապետերով բաժանվեց հինգ շրջանների[1519]: Ինքնապաշտպանության գործը կազմակերպվեց նաև նավթաշրջանում, որը բաժանվեց երկու՝ Բալախանիի և Զաբրատի շրջանների[1520]:

[1515] Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Հայ բաբարական ընդհարումները Բագուի մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1934, ԺԲ տարի, № 10, օգոստոս, էջ 128:

[1516] «Մուրճ», Թիֆլիս, 1905, № 2-3, էջ 161:

[1517] Սիմոնյան Հր., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք Ա, էջ 651:

[1518] Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Հայ բաբարական ընդհարումները Բագուի մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1933, ԺԱ տարի, № 11, սեպտեմբեր, էջ 156-158:

[1519] Տե՛ս նույն տեղում, «Հայրենիք», Պօսթըն, 1933, ԺԱ տարի, № 12, հոկտեմբեր, էջ 161-163:

[1520] Տե՛ս նույն տեղում, «Հայրենիք», Պօսթըն, 1933, ԺԲ տարի, № 1, նոյեմբեր, էջ 149:

Այդ շրջանների միջև կապը պահպանելու նպատակով ստեղծվեցին նաև թուղթի խմբեր:

Բաքվում հայ-թաթարական երկրորդ ընդհարումը բռնկվեց 1905 թ. օգոստոսի 20-ին և տևեց 11 օր, որի ժամանակ սպանվեցին 400 հոգի՝ 270 թաթար և 130 հայ[1521]: Կովկասյան թաթարների կողմից Բալախանիում և Բիբի-Հեյբաթում հրդեհվեցին հայերին պատկանող մեծ քանակությամբ նավթահանքեր՝ իրենց դրասեննյակներով[1522]: 1905 թ. սեպտեմբերին 4-ին կովկասյան թաթարները Բալախանիում ամբողջովին հրդեհում են նաև Վորոնցով-Դաշկովին պատկանող շուրջ 10 դեսյատին տարածք զբաղեցնող նավթահանքերը[1523]: «Բիբի-Հեյբաթի միայն անունն է մնացել: Բանուորական մի եռուն կենդրոն այսօր դժոխքի է նման: Այրուել են, այրվում են նաւթահանքերը, բնակարանները, գործարանները, միլիոններ արժեցող կարողութիւններ անհետ կորչում են, որովհետև այդպէս են կամենում մեր «դրացի» թուրքերը...»,- գրում է այդ օրերին Թիֆլիսի «Արշալույս» լրագիրը[1524]: ՀՅ Դաշնակցության կողմից ստեղծված ջոկատներին հաջողվեց ուժեղ հակահարված տալ կովկասյան թաթարներին՝ պատճառելով զգալի կորուստներ: Ինչպես վկայում են թվերը, ի տարբերություն առաջին ընդհարումների, երկրորդի ժամանակ հայերն ունեցել են քիչ թվով կորուստներ, որը հիմնականում պայմանավորված էր նրանց մղած ինքնապաշտպանական մարտերով: «Ջեմ կարող նկարագրել այն անձնուէր հերոսութիւնը, որ ցոյց տուին մեր պաշտպանները այդ չորս օրուան պաշարման ժամանակ»,- գրում է այդ օրերին «Մշակը»[1525]: Այս կերպ հնարավոր եղավ հակադարձել ոստիկանության և թաթար հրոսակների հակահայ գործողություններին և թշնամու հետ խոսել իր լսկ լեզվով:

Բաքվում տեղի ունեցած հայ-թաթարական երկրորդ ընդհարումն էլ ավելի սրեց հայերի և թաթարների միջև եղած հարաբերությունները, որի հետևանքով անխուսափելի դարձան նոր ընդհարումները, որոնք չուշացան: Հոկտեմբերի 20-ին կովկասյան թաթար հրոսակախմբերը սկսեցին շրջել հայկական թաղամասերով՝ կո-

---

[1521] Տե՛ս Վարանդեան Մ., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երեւան, 1992, էջ 308, տե՛ս նաև Գիւլխանդանեան Ա., Բագուի երկրորդ ընդհարումները, «Հայրենիք», Պօսթըն, 1935, ԺԳ տարի, հունիս, № 8, էջ 132-134, տե՛ս նաև «Մշակ», Թիֆլիս, 1905, օգոստոսի 24, № 169:

[1522] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1905, սեպտեմբերի 4, № 177:

[1523] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1905, սեպտեմբերի 14, № 184:

[1524] Տե՛ս «Արշալոյս», Թիֆլիս, 1905, օգոստոսի 30, № 2:

[1525] «Մշակ», Թիֆլիս, 1905, սեպտեմբերի 14, № 184:

դոպտելով ու հրդեհելով հայերին պատկանող տները: Այդ օրը սպանվեց 60 հայ, որից 35-ը՝ Բաիլովում: Զոհերի թվում էին նաև Հայկավանի քահանան և տիրացուն[1526]*: Տորդովայա փողոցում քարերով հարձակվում էին հայերի վրա, միայնակ պատահականներին ցած նետում պատուհաններից: Ամբողջովին կողոպտվեց Ի. Մելիքյանի լուսանկարչատունը: Հոկտեմբերի 21-ին հրդեհվեց Դ. Միրզաբեկյանի տունը, Առաքելյանի խանութները և հայապատկան 12 տուն. սպանվեց 40 հայ*[1527]*: Ընդհարումներն ավարտվեցին հոկտեմբերի 25-ի երեկոյան: Այդ ամբողջ ընթացքում կողոպտվեցին և ավերվեցին հայերին պատկանող տասնյակ տներ ու խանութներ: «Մշակի» բերած տվյալներով՝ հինգ օրվա ընթացքում սպանվածների և վիրավորվածների թիվը հասնում էր 150-ի, որոնցից 80-85%-ը կազմում էին հայերը: Այրված տներից հայապատկան էր 20-ը*[1528]*: Հայ-թաթարական մասնակի ընդհարումներ տեղի ունեցան նաև դեկտեմբերին, երբ թաթարները հրդեհեցին հայ արդյունաբերողներին պատկանող մի շարք նավթահանքեր*[1529]*:*

Ամփոփելով նշենք, որ չնորհիվ ՀՅ Դաշնակցության կազմակերպած հերոսական դիմադրության, Բաքվում խափանվեց հայ բնակչության զանգվածային կոտորածների ծրագիրը: «Ամբողջ հայկական Բագուն, հայ հասարակութեան բոլոր խաւերը երախտագիտութեան խօսքեր էին ուղղում Դաշնակցութեան եւ Դումանին: Մեր կազմակերպութեան հմայքը բարձրացաւ նոյնիսկ օտար հասարակութիւնների աչքում: Նա ճանաչուեց որպէս հայկական ինքնապաշտպանութեան գօրավիգ: Նա մնաց փետրուարեան աղէտի դաշտում, նա մնաց մնաց եւ բոլոր յետագայ անցքերի միջոցին»[1530]*,- ասված է ՀՅԴ Արևմտյան բյուրոյին ուղղված համառոտ տեղեկագրում:*

Ընդհարումների ավարտից հետո տխուր պատկեր էր ներկայացնում Բաքու քաղաքը, հատկապես արդյունագործական-գործարանային շրջանները: 1905 թ. դրությամբ ավերածության և հրդեհ-

---

[1526] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1905, հոկտեմբերի 29, № 213, տե՛ս նաև Ա-Դօ, նշվ. աշխ., էջ 41:

[1527] Տե՛ս Ս. [Առաքել Սարուխանյան], Նամակ Բագուից, «Մշակ», Թիֆլիս, 1905, նոյեմբերի 2, № 216:

[1528] Տե՛ս նույն տեղում:

[1529] Տե՛ս «Արշալոյս», Թիֆլիս, 1906, հունվարի 7, № 4:

[1530] Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Դ, պատրաստեց եւ խմբագրեց Հ. Տասնապետեան, Պէյրութ, 1982, էջ 81:

ների հետևանքով վնասվել էր 1994 նավթահոր[1531] և 1996 նավթաշտարակ[1532]. վերջիններս կազմում էին բոլոր նավթաշտարակների 58,5%-ը[1533]: Ընդհանուր առմամբ 3500 նավթաշտարակից այրվել էր 1760-ը[1534]:

Հայ-թաթարական ընդհարումները մեծապես ազդեցին հայ առևտրաարդյունաբերող դասի հետագա գործունեության վրա: Նրանցից շատերը ի վիճակի չլինելով վերականգնել կորցրածը, հեռացան քաղաքից՝ հաստատվելով Ռուսաստանի տարբեր քաղաքներում: «...մերոնք թողնում հեռանում են, որոնք առաջին տեղն էին բռնում առատ նուիրաբերութեամբ օտարների մէջ հանգանակութեան ժամանակ յոգուտ բարեգործական հաստատութիւններին...»[1535],- ասվում է Շամախու հայոց թեմի առաջնորդ Անանիա եպս. Համազասպյանի՝ Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին 1912 թ. օգոստոսի 16-ին հղած զեկուցագրում:

Մխիթարական չէր նաև կովկասյան թաթարների դրությունը: Մեծ վնասներ կրեցին հատկապես թաթար տնատերերը: Հայտնի է, որ մինչև ընդհարումները հայերի մի սուվար հատված բնակություն էր հաստատել Ջեմբերիքենդ, Շամախինկա, Թևաղափիր և այլ թաղամասերում և ամսական միայն 47000ռ. վճարում էր որպես բնակարանային վարձ[1536]: Ընդհարումներից հետո այդ թաղամասերում բնակվող հայերը կամ հեռացան քաղաքից, կամ էլ վերաբնակվեցին քաղաքի ավելի ապահով մասերում: Իրավիճակը չտկելու նպատակով թաթարները պարբերաբար հրավիրում էին ժողովներ՝ փորձելով հայերին համոզել կրկին վերադառնալ նախկինում ապրած իրենց թաղամասերը: «Այժմ տագնապը հասել է մինչև վերջին չունչը... Թշուառօրէն բաժակը լցուել է, և թուրքերը ժողովներ են գումարում մի կերպ հայերին հաւատացնելու, որ իրանք զոհ են եղել բիւրօկրատ կառավարութեան ճնշքին և խոստովանում են, որ առանց հայի իրանց տնտեսական գոյութիւնը դրօյի է հաւասար»[1537],- գրում է այդ օրերին «Մշակը»:

[1531] Տե՛ս Обзоры бакинской нефтяной промышленности за 1905, Баку, 1906, стр. I, II.
[1532] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 187, թ. 25, տե՛ս նաև «Մուրճ», Թիֆլիս, 1905, № 11-12, էջ 103:
[1533] Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1905, № 11-12, էջ 103:
[1534] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1905, սեպտեմբերի 14, № 184:
[1535] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 29.
[1536] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1906, հոկտեմբերի 5, № 216:
[1537] Նույն տեղում:

Հայ-թաթարական ընդհարումների հետևանքով զգալիորեն նվազեց քաղաքի բնակչության թիվը: 1905 թ. օգոստոսի սկզբներին բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 138.611[1538]: Ջարդերի հետևանքով զգալիորեն նվազեց նաև հայ բնակչության թիվը: Դաստոն Լերուի տվյալներով միայն Բաքվում զոհված հայերի թիվը կազմում էր 1000 հոգի[1539]: Անկասկած, այդ թիվն արտահայտում է ոչ լրիվ պատկերը: Ա-Դօ-ի կազմած վիճակագրության համաձայն՝ հայերի զոհերի թիվը ոչ լրիվ տվյալներով կազմում էր 1200 հոգի[1540]:

Հայերի թիվը զգալիորեն նվազեց ոչ միայն բուն քաղաքում, այլև հարակից արվարձաններում: Թաթարական Քիշլու գյուղին հարակից՝ Նոր հայկական գյուղում կամ Հայոց-քիշլիում, որտեղ կար ստվար հայություն, սեպտեմբերի սկզբներին մնացել էր ընդամենը 35 տնից բաղկացած հայ բնակչություն. «Թուրք Քիշլու գիւղին կպած կայ մի երեսուն տնից բաղկացած հայկական համայնք: Այդ երեսուն տնից զատ, բավական անջատւած և թուրք գիւղին էլ բոլորովին մոտիկ կայ դարձեալ մի 5 տուն հայ բնակիչ»[1541]: Հայոց-քիշլիում թաթարների ձեռքով զոհվել էր նաև տեղի ծխատեր հովիվ, բնիկ Հայաստանցի Խոռխոռունի քահանան[1542]:

Ընդհարումներից հետո քաղաքից հեռացող հայերը գլխավորապես տեղափոխվեցին Թիֆլիս, մի մասն էլ՝ Հյուսիսային Կովկաս, Աստրախան[1543]: Բաքվից հիմնականում հեռացան Երևանի նահանգից եկածները: Ճանապարհների անապահովության պատճառով քաղաքից մասամբ կարողացան հեռանալ Շուշիի և Ջանգեզուրի գավառներից եկածները[1544]: Դեպքերի ականատես Ա. Գյուլխանդանյանի վկայությամբ՝ միայն փետրվարի 6-9-ին տեղի ունեցած առաջին ընդհարումներից հետո քաղաքից հեռացավ չուրջ 10000 հայ, որոնք գլխավորապես ուղղվում էին Թիֆլիս, որոշ մասն էլ՝ Հյուսիսային Կովկաս[1545]: «Եվ որքան հայ-թաթարական յարաբերութիւնները վատանում էին,- գրում է Ա. Գյուլխանդանյանը,- այնքան դատարկւում էր Բագուն հայ մտաւորական եւ մարտական ուժերից:

[1538] Տե՛ս Քալանթար Ա., Բագուի քաղաքային ընտրութիւնները (Նամակ Բագուից), «Մշակ», Թիֆլիս, 1905, հոկտեմբերի 18, № 164:
[1539] Տե՛ս Гастон Леру, նշվ. աշխ., стр. 93.
[1540] Տե՛ս Ա-Դօ, նշվ. աշխ., էջ 423:
[1541] «Մշակ», Թիֆլիս, 1905, սեպտեմբերի 11, № 183:
[1542] Տե՛ս Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 291:
[1543] Տե՛ս «Արշալոյս», Թիֆլիս, 1905, սեպտեմբերի 21, № 18:
[1544] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1905, օգոստոսի 28, № 173:
[1545] Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Հայ-թաթարական ընդհարումները, հ. Ա, էջ 141-142:

գաւառներից տարիներ առաջ Բագու եկած հայ աշխատաւորութիւնը, ինչպէս եւ մտաւորականները թողնում էին Բագուն եւ վերադառնում իրենց գաւառները՝ իրենց հայրենակիցներին օգնելու համար այդ ծանր օրերին»[1546]: Բաքվից հեռացող հայ բնակչության զբաղչող մասը բանվորությունն էր: «Անցեալ տարւայ օգոստոսին,- գրում է Եղիշե ավ. քհն. Գեղամյանցը,- տեղի ունեցած հրաձիգութիւններից և կոտորածներից յետոյ՝ Բագւայ նաւթային շրջանում գտնւող հայ բանւորների թիւը կիսւեց և այժմ հազիւ 7000-ի է հասնում: Դրանք, գոնէ դրանց $^{9}/_{10}$ մասը, այժմ տեղաւորւած են բացառապէս 4-5 յայտնի նաւթագործ հայերի գործերում»[1547]: Փետրվարի 7-ից 12-ը ընկած ժամանակահատվածում Բաքվից հեռացան նաև այլ ազգությունների՝ մոտավորապես 10000 հոգի[1548]: Միայն սեպտեմբերի 1-15-ը քաղաքից հեռացան 16138 իրանահպատակ բանվորներ[1549]: Բաքվից արտագաղթը ուժեղացավ հատկապես երկրորդ ընդհարումից (օգոստոսի 20-25) հետո ընկած ժամանակահատվածում, երբ նավթահանքերի այրվելու պատճառով բանվորությունը մնացել էր գործազուրկ[1550]:

Ցարական կառավարության կազմակերպած արյունոտ խրախճանքի դեմ հասարակական-քաղաքական շրջանակներում ծավալվեցին թեժ քննարկումներ, որոնք միտված էին ընդհարումների պատճառները պարզելուն և նոր բախումները կանխելուն: Այս առումով նշանակալից իրազարձություն էր Թիֆլիսում՝ փոխարքայի պալատում, 1906 թ. փետրվարի 20-ից մարտի 6-ը հրավիրված Այսրկովկասի հայերի և կովկասյան թաթար ժողովուրդների համագումարը, որին մասնակցում էին երկու կողմերից ընտրված 30 պատգամավորներ[1551]: Համագումարի աշխատանքների ավարտից հետո էլ հայ-թաթարական հարաբերությունները դեռ շարունակում էին մնալ լարված վիճակում, որից հետո կարճ ժամանակ անց հաստատվեց խաղաղություն:

Այսպիսով՝ հայ-թաթարական ընդհարումներն իրենց բացասական ազդեցությունն ունեցան երկու ժողովուրդների հետագա

[1546] Գիւլխանդանեան Ա., Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1934,ԺԲ տարի, հունվար, № 3, էջ 138:
[1547] Գեղամեանց Ե., Հրապարակախօսական մանրուք, էջ 109:
[1548] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1905, փետրվարի 24, № 31:
[1549] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1905, սեպտեմբերի 27, № 195:
[1550] Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մէջ, Պօսթըն, 1934,ԺԲ տարի, հունվար, № 3, էջ 138:
[1551] Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1906, № 2, էջ 135:

բարիդրացիական հարաբերությունների վրա[1552]: Ավելին՝ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի հովանավորությամբ 1906 թ. օգոստոսից Բաքվի և Գանձակ-Ելիզավետպոլի նահանգներում Ա. Աղաևի ղեկավարությամբ սկսեց գործել Դիֆայի («Պաշտպանության») կազմակերպությունը, որն ահաբեկչություններ էր իրականացնում, թուրքիկներ տարածում խաչվող երկու դաշույնների կնիքով[1553]: «Մինչեւ 1905 թուի հայ-թաթարական ընդհարումները,- գրում է ազգային գործիչ Հովակ Ստեփանյանը,- հայ եւ թուրք տարրերը խառն ու խաղաղ ապրում էին կողք-կողքի: Այնուհետեւ քաղաքը բաժանուեց երկու խոշոր մասերի՝ թրքական եւ հայկական»[1554]: Ըստ էության՝ դարասկզբի հայ-թաթարական ընդհարումներով Բաքվի նահանգում հիմք դրվեց հայերի զանգվածային ջարդերի ու հալածանքների քաղաքականությանը:

[1552] Կովկասյան թաթարների շրջանում հայ բնակչության նկատմամբ ատելություն սերմանվում էր վաղ տարիքից: Այսպես՝ ֆրանսագիր, ծագումով կովկասյան թաթար գրող Ում-Էլ-Պանինը, որի մանկությունն անցել է Բաքվում, հայ-թաթարական ընդհարումների անմիջական տպավորությունների տակ «Կովկասյան օրեր» գրքում գրում էր. «Տոնական օրերին մենք խաղում էինք «հայկական ջարդեր», մի խաղ, որ գերադասում էինք մյուս բոլորից: Ցեղապաշտ կրքերով արբած, մենք վոհաբերում էինք Թամարային (մոր կողմից հայ) նախնյաց ատելության խորանի վրա: Նախ, ուզածին պես մեղադրում էինք նրան մահմեդականների սպանության մեջ և բազում անգամներ, իրար ետևից, տեղն ու տեղը գնդակահարում՝ շարունակ նորոգելու համար մեր հաճույքը: Այնուհետև, երբ արդեն լավ գինվցած էինք նրա արյան տեսքից, Թամարային հարություն էինք տալիս՝ ի պետս մեր դատի, որպեսզի այս անգամ նրան սպանենք համաձայն արվեստի բոլոր կանոնների: Նրա ձեռն ու ոտը կապում էինք և շպրտում գետին, հետո կտրում էինք նրա մարմնի մասերը, լեզուն, գլուխը, պոկում սիրտն ու փորոտիքը և նետում շներին, որպեսզի ավելի ընդգծենք մեր արհամարհանքը նրա հայկական մարմնի հանդեպ: Երբ վերջապես բավականաչափ հագեցնում էինք մեր վայրագությունը և այլևս ոչինչ չէր մնում բշվառ աղջկանից, սկսում էինք պարել նրա դիակի շուրջ, ճոճելով մեր փայտե հրացանները՝ գազանային ոռնոցներ արձակելով» (**Banine**, Jours Caucasiens, Gris-Banal, Paris, 1985, p. 66):

[1553] Տե՛ս Դանիելյան Է., Մելքոնյան Ա., Հայոց պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2008, էջ 256:

[1554] Ստեփանեան Յ., Սօսիկ անցեալէն, «Հայրենիք», Պօսթըն, 1964, ԽԲ տարի, մայիս, № 5, էջ 48:

Բ. ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ 1906-1914 ԹԹ.

Հայ-թաթարական ընդհարումներից հետո Բաքու քաղաքը ենթարկվեց վարչակառուցվածքային փոփոխության: Պետերբուրգում 1905 թ. սեպտեմբերի 26-ին կայացած նավթարդյունաբերողների և ձեռնարկատերերի խորհրդակցության ժամանակ, հաշվի առնելով նավթարդյունաբերության խիստ կարևորությունը երկրի տնտեսության համար, որոշվեց հիմնել Բաքվի քաղաքապետությունը, որը պետք է ընդգրկեր հիմնականում Բալախան-Սաբունչիի ոստիկանական տեղամասը. նավթարդյունագործական և գործարանային շրջանները՝ Բալախանը, Սուրախանը, Սաբունչին, Բիբի-Հեյբաթը, Զաբրատը, Ռամանը, Բաքվի գավառի մի մասը և Ապշերոնյան թերակղզու «Նորգեն», «Սվիտոյ» և այլ կղզիներ[1555]: Քաղաքապետությունը ստեղծվեց Նիկոլայ II-ի 1906 թ. հոկտեմբերի 28-ի հրամանագրով: Քաղաքապետության վարչական կառավարումը իրականացնում էր քաղաքապետը, որին Կովկասի փոխարքայի ներկայացմամբ նշանակում էր ցարը[1556]:

Հայ բնակչության թիվը Բաքվում դարձյալ սկսեց աճել հայ-թաթարական ընդհարումներից հետո՝ 1905 թ. վերջերից: Սակայն նավթահանքերից հեռացած բանվորների վերադարձից հետո, երբ նրանցից շատերը մնացել էին առանց աշխատանքի, «Մարդասիրական ընկերության» ձեռնարկած միջոցներով ավելի քան 537 հոգի կրկին վերադարձան հայրենիք[1557]: Գյուղեր վերադարձած գյուղացիներից շատերը թաթարների ոճրագործություններից հետո վարանում էին կրկին մեկնել Բաքու: «Մշակին» 1906 թ. մայիսի 27-ին հղած թղթակցությունում Զանգեզուրի Բռնակոթ գյուղից Գրիգոր Պալյանը գրում է. «Պանդխտելը պարուրած է, ոչ ոք չի վստահում ելնելու և արևան դետերով անցնելու արևան ծովը՝ Բաքուն, մեր ծաղիկ կեանքերի ամայի գերեզմանը: Եթէ կարելի լինէր, կամ յոյս լիներ անցնելու, գիւղում գուցէ ոչ ոք չմնար, սկսած 7 տարեկանից մինչև 70 տարեկանը կգնային հաց ու փոր քաշ գալու այնտեղ, որտեղից քիչ առաջ սարսափով փախել էին»[1558]: Դեպի Բաքու վերադարձը մեծ չափեր ստացավ 1906 թ. կեսերից, երբ հաստատվել էր խա-

---

[1555] Տե՛ս Ամանուն Դ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 174:

[1556] Տե՛ս Ежегодник Баку и его рвйонъ 1909, отд. I, стр. 46-50, սա՛ս նաև **Мильман А.**, նշվ. աշխ., стр. 263-264.

[1557] Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան 1906 թուականի, Բագու, 1907, էջ 13-14:

[1558] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 411, թ. 44:

պաղուβյուն, և աշխատանքի ու ապրելու համար ստեղծվել էին փոքր-ինչ կարգին պայմաններ: Ըստ Սիմոն Զավարյանի հաշվարկների՝ 1906 թ. միայն Զանգեզուրի չրջանի 11 գյուղերի քայքայված գյուղացիների մեծագույն մասը՝ 1917 հոգի, Բաքու և այլ վայրեր արտագնա աշխատանքի էր մեկնել՝ 1903 թ. համեմատությամբ՝ 500 մարդով ավելի[1559]: 1906 թ. Բաքվի բնակչության թիվն արդեն հասնում էր 205.438-ի[1560]:

Հայ բնակչության թիվն աստիճանաբար սկսեց աճել 1906 թ. վերջերից և հատկապես 1907 թ. սկզբներին, երբ Ղարաբաղում և Զանգեզուրում սով բռնկվեց: «Баку» լրագրի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ 1907 թ. փետրվարից Շուշիի, Զանգեզուրի և Ելիզավետպոլի գավառների մի քանի հազար սովահար գյուղացի հայեր, թողնելով իրենց հարազատ վայրերը, աշխատանք որոնելու հույսով տեղափոխվել էին Բաքու[1561]: Բաքվի հայ բնակչության թիվը զգալի կերպով սկսեց աճել հատկապես ի հաշիվ Զանգեզուրի գյուղերից եկած ինքնագործների: Բռնկված սովի պատճառով հարյուրավոր երիտասարդներ արդյունաբերական քաղաքներում աշխատանք գտնելու հույսով գաղթեցին Բաքու և այսրկովկասյան այլ քաղաքներ: «...կրկին սով է սպառնում Զանգեզուրի մի քանի հայաբնակ գիւղերին... Հայի պակասութիւնը մանաւանդ զգալի է Բռնակոթ գիւղում, որ բաղկացած է 450 տնից... Անճարները չը գիտէն ուր գնան և ուր դիմեն, և միակ ելքը գաղթելու մէջ են գտնում: Նրանք գաղթում են թողած տու- տեղ, հրաժեշտ տալով իրէնց արիւնով և չարչարանքով ոռոգած մայր հողին: Շարան-շարան դիմում են Բագու կամ Անդրկովկասեան արդիւնաբերական այլ վայրերը՝ հաց և աշխատանք որոնելու համար»[1562],- գրում է «Արորը»:

Հայ-թաթարական ընդհարումներից հետո աստիճանաբար սկսեցին ստվարանալ նաև Բաքվի չրջակա բնակավայրերը՝ Բալախանը, Սաբունչին, Մաշթաղան, Շաղանը, Մարդաքյանը և Բուզովնան: Ուշագրավ է այն փաստը, որ XX դարասկզբի արխիվային վավերագրերում Բուզովնան չարունակաբար անվանվում է «Հայոց գյուղ»: Այսպես՝ Բաքվի Հայոց եկեղեցիների գործակալի հանձնարարությամբ 1906 թ. օգոստոսի 8-ին քաղաքի Սբ. Աստվածածին եկեղեցու քահանա Հովհաննես Տեր-Հարությունյանը, Սբ. Եղիայի և Անդրեասի մատուռում գույքագրում անցկացնելու նպատակով մեկնելով Բուզովնա, գրում է. «1906 թուի օգոստոսի 8-ին թիւ 431 իւր

[1559] Տե՛ս **Заварян С.**, Экономические условия Карабага и голод 1906-1907 гг., С. Петербург, 1907, стр. 50.
[1560] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 109, թ. 4:
[1561] Տե՛ս «Баку», Баку, 1907, 22 февраля, № 42.
[1562] Կրմենեանց, Բոնակոթ գիւղ, «Արօր», Թիֆլիս, 1907, սեպտեմբերի 11, № 7:

պաշտոնական դրութեամբ առաջարկեց (իմա՛ եկեղեցիների գործակալը - Գ. Ս.) ինձ գնալ Հայոց գլուղը և 1905 թուի հայ-թուրքական արհաւիրքներից ազատուած Բգովնա գլուղի հայոց եկեղեցւոյ զգեստները և անօթները պահանջել նոյն եկեղեցոյ պահապան Համբարձում Խաչատրեանից»[1563]:

1908 թ. Թուրքիայում տեղի ունեցած երիտթուրքական հեղաշրջումից հետո, երբ երկրում հաստատվեց «սահմանադրական» կարգը, 1895-1896 թթ. ջարդերի ժամանակ Արևմտյան Հայաստանի գանազան վայրերից ճողոպրած և Կովկասում ապաստան գտած հայերն սկսեցին վերադառնալ հայրենի օջախները: Արևմտահայերի վերադարձի խնդրով հայրենադարձներին օգնելու և դրամական միջոցներ հանգանակելու նպատակով Թիֆլիսի բորսայի դահլիճում 1908 թ. օգոստոսի 1-ին կայացած ներկայացուցչական ժողովում կազմվեց 11 հոգուց բաղկացած հանձնաժողով, որի կազմում ընդգրկվել էին Ս. Կյուլպենկյանը, Գ. Փաստրմաճյանը (Արմեն Գարո), Ս. Զավարյանը, Ս. Սոլակյանը, Ղ. Աղայանը, Վ. Փափազյանը, Ճերմակյանը, Գ. Տեր-Հովհաննիսյանը, Գ. Կաֆյանը, Հ. Վահանյանը և ուրիշներ[1564]: Ժողովը հանձնաժողովին պատվիրեց չտապ կարդով շրջաբերական ուղարկել բոլոր այն վայրերը, ուր կան արևմտահայ գաղթականներ և առաջարկել նրանց կազմել այդ տեղերում հանձնաժողովներ գաղթականների վերադարձի գործը կանոնավորելու և կենտրոնական հանձնաժողովի հետ կապ պահպանելու համար[1565]: «Զուլումի» տարիներին Բաքվում ապաստան գտած գաղթական մի շարք ընտանիքներ ևս չտապեցին վերադառնալ հայրենի օջախները՝ հարազատ բնակավայրերը չենացնելու համար[1566]: Բաքվից հիմնականում հեռացան այն գաղթականները, ովքեր չունեին սեփական տնտեսություն և չէին կազմել ընտանիք: Մնացին նրանք, ովքեր այդ տասնչորս տարիների ընթացքում արդեն հասցրել էին հիմնավորվել քաղաքում, ստեղծել էին տնտեսություն, ունեին սեփական գործ, արհեստ, ընտանիք և այլն: Մեկնողներին նյութական աջակցություն էր ցույց տալիս «Բաքվի Հայոց մարդասիրական ընկերությունը»[1567]:

Բաքվում բնակչության թվի նվազման միտում նկատվեց 1908 թ. օգոստոսին, երբ քաղաքում եղան խոլերայի դեպքեր: Մահվան դեպքեր, այդ թվում նաև հայերի շրջանում, հատկապես շատ

[1563] ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 217, թ. 1:
[1564] Տե՛ս «Զանգակ», Թիֆլիս, 1908, օգոստոսի 3, № 24:
[1565] Տե՛ս նույն տեղում:
[1566] Տե՛ս Միտսար [Միրզա Տեր-Սարգսյան], Տաճկահայերի վերադարձը, «Գործ», Թիֆլիս, 1908, հոկտեմբերի 23, № 36:
[1567] Տե՛ս նույն տեղում:

դրանցվեցին բանվորական շրջաններում, որտեղ անբավարար էին սանիտարական պայմանները: «Բագուն է եղել գրեթէ միշտ խոլերայի նախադուռը դէպի Կովկաս... քաղաքի կենտրոններում, ուր համեմատաբար մաքուր է, իսկ ինչ կասէք ծայրերին, խորդ ու բորդ փողոցներին, ուր բանւոր, աղքատ մարդիկ են ապրում, նեղ ու խոնաւ նկուղներում, կեղտոտ գարշահոտ բակերով»[1568],- գրում էր «Զանգակը»: Համաճարակը կանխվեց միայն հակախոլերային պատվաստումների արդյունքում: Խոլերայի կանխարգելումից հետո, քաղաքային վարչության 1909 թ. տվյալների համաձայն, Բաքուն ուներ 222.694 (130.233 ար., 92461 իգ.) բնակչություն[1569]: Նույն թվականի դրությամբ քաղաքում հայերն ունեին 6000 տուն՝ 65000 բնակչով (35000 ար., 30000 իգ.)[1570]: Միայն Հայկավան թաղամասում ապրում էին 1000 տուն հայեր, որոնք հիմնականում եկել էին Շամախուց, Նուխիից, Արցախից, Դանձակից և հայաբնակ այլ վայրերից[1571]: Արխիվային մեկ այլ վավերագրի վկայությամբ՝ «Գիւղը (իմա՛ Հայկավանը - Գ. Ս.) մօտաւորապէս կարող է լինել 7-ից մինչև 800 տուն. մեծամասնութիւնը հայեր են: Գիւղի կենտրոնում չինված է լուսաւորչական եկեղեցին (Սբ. Թարգմանչաց - Գ. Ս.)»[1572]:

1910 թ. քաղաքի բնակչության թիվն արդեն հասնում էր 230.419-ի (136.621 ար., 93798 իգ.)[1573], որից միայն բուն քաղաքում հայերի թիվը 50000 էր[1574]: 1910 թ. Բաքվի Հայոց ծխական հոգաբարձության կազմած նոր նախագծի համաձայն՝ արվարձանները բաժանվեցին քաղաքից և կազմեցին չորս առանձին ծխական համայնքներ. 1) Հայկավան (Էրմանի-Քենդ), 2) Բաիլով և Բիբի-Հեյբաթ, 3) Հայոց-քիշլի և Սպիտակ քաղաք, 4) Բալախան[1575]:

Համաձայն ոստիկանական ծառայության 1911 թ. հունվարի 1-ի տվյալների՝ բուն քաղաքում (առանց արդյունագործական-գործարանային շրջանների) հայ առաքելականների թիվը 38704 էր[1576]: Այդ թվի մեջ չեն հաշվառվել Ապշերոնյան կղզիների հիմնական և

[1568] «Զանգակ», Թիֆլիս, 1908, օգոստոսի 17, № 36:
[1569] Տե՛ս КК на 1912 г., Тифлис, 1911, стр. 232.
[1570] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1835, թ. 14:
[1571] Տե՛ս Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, էջ 55:
[1572] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 72, թ. 21:
[1573] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 792, ց. 1, գ. 28, թ. 13:
[1574] Տե՛ս Գեղամեանց Ե., Քահանայից ապահովութեան խնդիրը, «Հովիտ», Թիֆլիզ, 1910, մայիսի 2, № 3, էջ 56:
[1575] Տե՛ս Բագուի ծխական հոգաբարձուբեան նախագիծը, «Հովիտ», Թիֆլիզ, 1910, մայիսի 23, № 6, էջ 93:
[1576] Տե՛ս **Шапшович М.**, Նշվ. աշխ. (Бакинская губерния), стр. 23.

ժամանակավոր բնակիչները, որոնք տակավին գրանցված չեն եղել ո՛չ Բաքվում և ո՛չ էլ մերձակա գյուղերում[1577]:

Հայաստանի բոլոր շրջաններից արտագնացությունը դեպի Բաքու շարունակվեց նաև հետագա տարիներին, որի հետևանքով, 1911 թ. վիճակագրությամբ, հայերի թիվը, ներառյալ նաև արդյունագործական-գործարանային շրջանները, հասել էր 73000-ի[1578]: Գավառային վարչության 1912 թ. հունվարի 1-ի տվյալներով՝ Բաքվում հայ բնակչության թիվը 73341 էր (44588 ար., 28753 իգ.)[1579]՝ կազմելով ընդհանուր բնակչության 20%-ը[1580]: Այդ թվից Բաքվի ոստիկանական տեղամասում (Բաքու քաղաքի հետ միասին) բնակվում էր 61089 (36189 ար., 24900 իգ.), իսկ Բալախան-Սաբունչիի ոստիկանական տեղամասում՝ 12252 (8399 ար., 3853 իգ.) հոգի[1581]: Նույն վիճակագրության համաձայն՝ միայն Բաքվի ոստիկանական տեղամասում) բնիկ հայերի թիվը 8590 էր (5877 ար., 2715 իգ.)[1582]: Շամախիի հայոց թեմի առաջնորդ Անանիա եպս. Համազասպյանցի կողմից 1912 թ. կազմված թեմական վիճակագրական տեղեկագրում նշված է, որ Բաքվում հայերն ունեն 6000 տուն՝ 85898 բնակիչ (46206 ար., 39692 իգ.)[1583]: Նույն թվականին կազմված թեմական տարեկան վիճակագրական տվյալների համաձայն՝ Բաքուն ունեցել է 86474 հայ բնակիչ (46483 ար., 39991 իգ.)[1584]: Այստեղ աչքի է զարնում այն փաստը, որ 1912 թ. տարբեր աղբյուրների տվյալներում Բաքու քաղաքի հայ բնակչության թվի վերաբերյալ առկա են թվական էական տարբերություններ: Հակված ենք կարծելու, որ եկեղեցական վիճակագրական տվյալներն այնքան էլ հավաստի չեն: Դրանում համոզվում ենք, երբ վարչության հիշյալ թիվը համադրում ենք նախորդ՝ 1911 թ. տվյալի (73000) հետ: Ստացվում է, որ մեկ տարվա ընթացքում հայ բնակչության մեխանիկական և բնական աճը տատանվում էր 12898-ի և 13474-ի սահմաններում, ինչն

1577 Տե՛ս նույն տեղում:

1578 Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Հայ թաթարական ընդհարումները Բագուի մէջ, «Հայրենիք»,Պօսթըն, 1933, ԺԱ տարի, հուլիս, № 9, էջ 129:

1579 Տե՛ս КК на 1913 г., Тифлис, 1912, стр. 129.

1580 Տե՛ս Ишханян Б., Народности Кавказа. Состав населения профессиональная групиировка и общественное разслоение кавказских народностей (статистико-экономическое исследование), Петроград, 1916, стр. 34:

1581 Տե՛ս КК на 1913 г., стр. 129

1582 Տե՛ս նույն տեղում, стр. 144.

1583 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 9:

1584 Տե՛ս Մինասեան Մ., Տեղեկագիր 1912 թ., (Գ-), Շամախու թեմ, «Արարատ», 1914, Է, էջ 633:

անհավանական է: Ուստի, քաղաքի հայ բնակչության 1912 թ. իրական թվի վերաբերյալ առավել հավաստի աղբյուր է գավառային վարչության տեղեկագիրը: 1912 թ. վիճակագրական տվյալների համաձայն՝ քաղաքը (ներառյալ արդյունագործական-գործարանային շրջանները) ուներ 378.173 բնակիչ, այդ թվում միայն 249.809-ը բնակվում էին քաղաքում և արվարձաններում, իսկ 128.364-ը՝ նավթաշրջանում և մերձակա գյուղերում[1585]:

XX դարի սկզբներին Բաքու քաղաքում և արվարձաններում բնակվող հայ բնակչության թվի վերաբերյալ հարուստ փաստեր են պարունակում Բաքվի քաղաքային վարչության կողմից քաղաքում և արդյունագործական-գործարանային շրջաններում 1913 թ. հոկտեմբերի 22-ին անցկացված վիճակագրության տեղեկագրերը: 1913 թ. քաղաքը (ներառյալ արդյունագործական-գործարանային շրջանները) բաժանված էր 25 շրջանների, որոնք համապատասխանաբար ընդգրկված էին ոստիկանական 10 տեղամասերում[1586]: Նախ անդրադառնանք բուն քաղաքի վիճակագրությանը: Համաձայն վիճակագրական տվյալների՝ բնակչության թիվը 214.672 (120.803 ար., 93869 իգ.) էր, որից հայ՝ 41680 (24503 ար., 17177 իգ.)[1587], ըստ այդմ՝ ընիկներ՝ 10919 (5437 ար., 5482 իգ.), իսկ եկվոր բնակիչներ՝ 30761 (19066 ար., 11695 իգ.)[1588]: Հայերը կազմում էին ընդհանուր բնակչության 19,4%-ը:

Աղյուսակում սեռատարիքային վիճակագրությունն ուներ հետևյալ պատկերը[1589].

Աղյուսակ № 14

Տարիքային խումբ	Բնիկ		Եկվոր	
	ար.	իգ.	ար.	իգ.
0-4	1789	1828	505	452
5-9	1293	1276	879	807
10-14	1030	964	1619	934
15-19	567	546	2781	1431
20-24	261	322	1923	1589
25-29	188	202	2690	1567
30-34	111	128	2286	1065

[1585] Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1941, հուլիս, ԺԹ տարի, № 9, էջ 93:
[1586] Տե՛ս Перепись Баку 1913 г., ч. III: население, вып. I, гор. Баку, Баку, 1916 (այսուհետ՝ Перепись Баку 1913 г.: население), стр. 4.
[1587] Տե՛ս նույն տեղում, стр. 4-5:
[1588] Տե՛ս նույն տեղում, стр. 4:
[1589] Աղյուսակը կազմված է ըստ Перепись Баку 1913 г.: население, стр. 3-5-ի տվյալների. հաշվարկը մերն է:

35-39	59	56	1863	923
40-44	39	45	1425	664
45-49	32	38	1125	596
50-54	18	26	790	482
55-59	10	11	459	336
60-64	10	15	296	321
65-69	6	8	147	149
70-74	10	8	101	155
75-79	4	2	36	63
80-	7	3	68	125
Անհայտ տարիք	3	4	73	36
Ընդամենը	5437	5482	19066	11695
	10919		30761	
	41680			

Ինչպես ցույց են տալիս աղյուսակում բերված տվյալները, երկսեռ բնակչության շրջանում թվային գերակշռություն ունեին 15-59 տարեկան երիտասարդ և հասուն մարդկանց, այնուհետև՝ մինչև 14 տարեկանների (մանուկներ) և վերջում՝ 60-ից բարձր տարիք ունեցողների (ծերեր և զառամյալներ) խմբերը[1590]: Ժամանակավոր բնակիչների թվում գերակշռել են հատկապես 25-29 և 30-34 տարեկան տղամարդիկ, ինչը, բնականաբար, կապված էր հիմնականում աշխատունակ երիտասարդների արտագնա աշխատանքի հանգամանքի հետ:

Արդյունագործական-գործարանային շրջաններում անցկացված վիճակագրության համաձայն՝ բնակչության թիվը 119.286 էր (82436 ար., 36850 իգ.), որից հայ երկսեռ բնակչության թիվը՝ 16836, ըստ այդմ՝ բնիկները՝ 2056 (1095 ար., 961 իգ.), իսկ եկվոր բնակիչները՝ 14780 (11820 ար., 2960 իգ.) հոգի[1591]: Հայերը կազմում էին ընդհանուր բնակչության 14,1%-ը:

Աղյուսակում տեղատարիքային վիճակագրությունն ուներ հետևյալ պատկերը[1592].

[1590] Բնակչության տարիքային կազմը սովորաբար բաշխվում է հետևյալ խմբերի միջև. մինչև 14 տարեկան (մանուկներ), 15-59 տարեկան երիտասարդ և հասուն մարդիկ (չափահաս բնակչություն) և 60 տարեկանից բարձր (ծերեր և զառամյալներ):

[1591] Տե՛ս Перепись Баку 1913 г., ч. III. Население, вып. III: Промыслово-Заводский район, отд. I, Баку, 1915 (այսուհետ՝ Перепись Баку 1913 г.: промыслово-Заводский район), стр. 4-5.

[1592] Աղյուսակը կազմված է ըստ Перепись Баку 1913 г.: Промыслово-Заводский район, стр. 4-5-ի տվյալների. հաշվարկը մերն է:

Աղյուսակ № 15

Տարիքային խումբ	Ընդհ		Եկվոր	
	ար.	իգ.	ար.	իգ.
0-4	598	484	209	204
5-9	226	252	328	277
10-14	133	106	382	192
15-19	60	42	1764	400
20-24	22	31	1955	557
25-29	26	25	2726	492
30-34	16	8	1738	250
35-39	7	4	1068	160
40-44	3	5	644	101
45-49	3	2	509	77
50-54	-	-	218	85
55-59	-	1	95	44
60-64	-	-	63	37
65-69	-	-	37	26
70-74	1	1	15	25
75-79	-	-	7	10
80-	-	-	2	14
Անհայտ տարիք	-	-	59	9
Ընդամենը	1095	961	11820	2960
	2056		14780	
	16836			

Աղյուսակում բերված թվերից պարզ երևում է, որ բնակչության շրջանում գերակշռել են եկվոր տղամարդիկ, և հիմնականում մեծ թիվ են կազմել 25-29 տարեկան աշխատունակ երիտասարդները: Այս դեպքում ևս թվային գերակշռություն ունեին 15-59 տարեկան երիտասարդ և հասուն մարդկանց, այնուհետև՝ մինչև 14 տարեկանների (մանուկները) և վերջում՝ 60-ից բարձր տարիք ունեցողների (ծերեր և զառամյալներ) խմբերը: Բնակչության սեռային կազմը ցույց է տալիս, որ 70-ից բարձր տարիքային խմբերում կանայք ավելի մեծ թիվ են կազմում, որովհետև մահացողների մեջ տղամարդիկ ավելի շատ են, և կանայք, տղամարդկանց հետ համեմատած, երկարակյաց են: Այսպիսով՝ 1913 թ. հոկտեմբերի 22-ի մարդահամարի տվյալների համաձայն՝ բուն քաղաքում և արդյունագործական-գործարանային շրջաններում բնակչության թիվը 333.958 էր (203.239 ար., 130.719 իգ.)[1593], որից հայեր՝ 58516 (37418 ար., 21098 իգ.)՝ կազմելով ընդհանուր բնակչության 17,5%-ը[1594]: Հայ բնակ-

[1593] Տե՛ս Статистический сборник, ч. IV. Коммунальное хозяйство, стр. 8.

[1594] Ա. Ալտշտադն իր աշխատությունում Բաքվում հայերի թիվը աղճատելու միտումով 1913 թ. մարդահամարի նյութերից դուրս է թողել արդյունագործական-գործարանային շրջաններում բնակվողների թիվը (տե՛ս Audrey L. Altstadt, The

չությունն իր թվով երրորդն էր ռուսներից՝ 114.486 (58099 ար., 56387 իգ.)՝ 34,3%, և կովկասյան թաթարներից՝ 69988 (39607 ար., 30381 իգ.)՝ 21% հետո: Նրանց հաջորդել են պարսիկները՝ 47936 (69988 ար., 7541 իգ)՝ 14,4%, լեզգիները՝ 8565 (7393 ար., 1172 իգ.)՝ 2,6%, և այլք[1595]*:*

Այսպիսով՝ 1913 թ. հոկտեմբերի 22-ի մարդահամարի տվյալները համեմատելով գավառային վարչության 1912 թ. հունվարի 1-ի տվյալների հետ (73341)՝ ստացվում է, որ չուրջ ինը ամսվա ընթացքում Բաքվում հայ բնակչության թիվը կտրուկ նվազել էր 14825-ով: Կարելի է կարծել, որ 1913 թ. մարդահամարի տվյալներում առկա են թերի հաշվառումներ: Բանի որ հայ-թաթարական ընդհարումներից հետո ստեղծված սոցիալ-տնտեսական նպաստավոր պայմանների բերումով Բաքվում հայ բնակչության թիվն աճել է:

1913 թ. հոկտեմբերի 22-ի քաղաքային վիճակագրության մեջ ուշադրավ են բնակչության վերարտադրությունը բնութագրող հաշվառումները: Հայտնի է, որ բնակչության պարզ վերարտադրությունն իր վերջնական արտացոլումն է գտնում ծննդաբերության մակարդակով: Ինչպես ցույց են տալիս վիճակագրական վերլուծությունները, բուն քաղաքում և արդյունագործական-գործարանային շրջաններում հայ բնակչության բնական աճի գործակիցը բռնել է երրորդ տեղը՝ ռուսներից և կովկասյան թաթարներից հետո: Վիճակագրության անցկացման ամսին բուն քաղաքում և արդյունագործական-գործարանային շրջաններում գրանցվել է հայ բնակչության 132 ծնունդ (61 ար., 71 իգ.): Այդ թվից բուն քաղաքում գրանցվել է 98 (46 ար., 52 իգ.), իսկ արդյունագործական-գործարանային շրջաններում՝ 34 (15 ար. 19 իգ.) ծնունդ[1596]*:*

Ընդհանրապես, XIX դարավերջի և XX դարասկզբի հաշվառումները ցույց են տալիս, որ արդյունագործական-գործարանային շրջաններում, ուր հիմնականում կենտրոնացած էին բանվոր-մշակները, ծննդաբերության ընդհանուր մակարդակի նվազման և բնակչության բնական աճի վրա ազդող հիմնական գործոններից էին կյանքի սոցիալ-տնտեսական վատթար պայմանները, թերսնումը,

---

Azzerbaijani Turks: Power and Identity under Russian Rule, Stanford, California, Hoover Institution Press, Stanford University, 1992, p. 32).

[1595] Տե՛ս Перепись Баку 1913 г.: население, стр. 3-5, տե՛ս նաև Перепись Баку 1913 г.: Промыслово-Заводский район, стр. 4-5-ի տվյալների. հաշվարկը մերն է:

[1596] Տե՛ս Перепись Баку 1913 г.: население, стр. 6, տե՛ս նաև Перепись Баку 1913 г.: Промыслово-Заводский район, стр. 6.

նվազագույն ապրուստն ու անբավարար բժշկական սպասարկումը, որոնց հետևանքով մահացությունը, հատկապես մանկահասակ երեխաների շրջանում, մեծ թիվ էր կազմում, իսկ ծնված երեխաների միայն մի մասն էր ապրում մինչև որոշակի տարիք: Անշուշտ, նման պայմաններում նվազում էր ծննդաբերության գործակիցը: Ցածր կենսամակարդակը չէր կարող ապահովել բնակչության պարզ վերարտադրությունը: Հայ մեծանուն գրող Վ. Թոթովենցը, «Բագու» վնասում առանձին դրվագներով ներկայացնելով նավթարդյունաբերության բնագավառում աշխատող բանվոր-մշակների խղճուկ ու մռայլ կյանքը, գրում է. «Նրանց բնակարանը մի թաց խուց էր, որի փոքրիկ լուսամուտներն ամբողջ ձմեռ չէին բացվում: Ներսում կար միայն մի մանղալ, որ տաքացնում էր ամբողջ խուցը: Առաստաղը խոնավությունից բորբոսնած էր, գետինը՝ հող և թաց, որը երբեմն ծածկված էր լինում մի մաշված փալասով կամ բզկտված փսխաթով... Նրանցից ոմանք քնում էին հողե հատակին՝ չատ անգամ միայն իրենց կիսամաշ վերարկուներն ունենալով իբրև վերմակ»[1597]: Բանվորներից չատերը կիսամերկ էին և ոտաբոբիկ, իսկ հագուստները՝ պատառոտված. «Մի-մի շապիկ էր հագներին և մի-մի վարտիք: Սրունքները, թևերը, կուրծքներն ու վզերը մերկ և ոտաբոբիկ... Ամենքն էլ գդակ ունէին գլուխներին, որոնց վրայի մետաքսաթել նկարագիր զարդերը հազիւ էին նշմարւում ապականութեան միջից: Շապիկն ու աւազը, գդակն ու դէմքը, մորթն ու մազերը համարեայ միևնոյն գոյն էին ստացել»[1598]: Ավելին՝ հակամարդկային այս պայմաններին դումարվում էր նաև Բաքվի մերձարևադարձային, երկարատև չոր ու շոգ ամառը, որը, բնականաբար, աղքատացնում էր Ապշերոնի բուսականությունը և բարենպաստ պայմաններ ստեղծում համաճարակային տարբեր հիվանդությունների բռնկման համար, որից մահացածների գերակշռող մեծամասնությունը մանկահասակ երեխաներ էին[1599]: Մանկական հիվանդություններից տարածված էին հատկապես ծաղիկը և դիֆթերիան[1600]:

Այս առումով ուշագրավ տեղեկություններ է հայտնում նաև ռուս մեծ գրող Մաքսիմ Գորկին, որը 1892 և 1897 թթ. եղել է Բաքվում: «Նավթահանքերն իմ հիշողության մեջ,- գրում է նա,- մնա-

---

[1597] Տե՛ս Թոթովենց Վ., Բագու, գիրք Ա, մաս Ա, Երևան, 1930, էջ էջ 7:
[1598] Ատրպետ, Սեւ քաղաք (վէպ Բագւի գործարանական կեանքից), «Տարազ», Թիֆլիս, 1898, հունիսի 14, № 23, էջ 495:
[1599] «Մշակ», Թիֆլիս, 1912, հունիսի 23, № 135:
[1600] Տե՛ս «Արօր»-ի պատկերազարդ օրացոյց 1894 թ., էջ 37:

ցին որպես մռայլ դժոխքի հանճարեղ պատրաստված պատկեր: Նավթամղիչների քաոսի արանքում գետնին էին սեղմված գորշ անտաչ քարերից հապճեպ պատրաստված բանվորական երկար կացարանները, որոնք շատ էին նման նախնադարյան մարդկանց կացարաններին: Ես երբեք չեմ տեսել այդքան շատ կեղտ և աղբ մարդկային կացարանի շուրջ, այդքան շատ ջարդված ապակիներ պատուհաններում, այդքան խղճուկ աղքատություն սենյակներում, որոնք նման էին քարանձավների: Ոչ մի ծաղիկ՝ պատուհանների գոգին, իսկ շուրջը՝ խոտով ծածկված ոչ մի կատր հող, ոչ մի թուփ: Սարսափելի էր նայել կիսամերկ երեխաներին, որոնք ոտքերով հունցում էին ջրափոսերի կանաչավուն յուղոտ լորձը, խմբերով նստում դրա մեջ իրար սեղմված, հարթ տանիքների վրա խաղում երկաթի և փայտի կտորներով: Ինչպես բոլորը շրջապատում, այնպես էլ երեխաները կեղտոտված էին նավթով, նրանց կեղտոտ մռութները հիշեցնում էին մի մռայլ հնքիաթ եղբայր-մարդակերների մոտ գերի ընկած երեխաների մասին»[1601]:

1913 թ. քաղաքային վիճակագրության տվյալներով՝ Բաքվում եկվոր հայերից 9143-ը Շամախիի, 1917-ը՝ Գյոքչայի, 12950-ը՝ Շուշիի, 9454-ը՝ Զանգեզուրի, 1187-ը՝ Նուխիի, 1198-ը՝ Ղազախի գավառներից էին և 6770-ը՝ Երևանի նահանգից[1602]: *Այլ աղբյուրների համաձայն՝ 1913-ին Բաքվի պանդուխտ հայ բնակչությունից 9500-ը գաղթել էր Զանգեզուրի գավառից*[1603]: *Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, Բաքու արտագնա աշխատանքի մեկնած բանվորների մեջ համեմատաբար մեծ թիվ էին կազմում զանգեզուրցիները: «Գաւառ» լրագրի տվյալներով՝ 1910 թ. միայն Խնձորեսկ գյուղից Բաքվում գտնվողների թիվն անցնում էր 5600-ից, որոնք հիմնականում աշխատանքի էին տեղավորվել Բալախանիի նավթահանքերում*[1604]: *1913 թ. քաղաքային վիճակագրության տվյալներով՝ Բաքվի եկվոր բնակչության թիվը, ներառյալ արդյունագործական-գործարանային շրջանները, հասնում էր 225.000-ի: Այդ թվից 41,2%-ը եկել էր Ռուսաստանի եվրոպական, իսկ 37,9%-ը՝ ասիական նահանգներից, 19%-ը՝ Իրանից, 13.9%-ը՝ գան-*

[1601] **Горький М.**, Собрание сочинений, т. XVII, Москва, 1952, стр. 115-116.

[1602] Տե՛ս **Пичикян Г.**, Народное хозяйство и кооперация Армении (исторический очерк), Тифлис, 1927, стр. 96.

[1603] Տե՛ս Հարությունյան Գ., Ռևոլյուցիոն շարժումները և բոլշևիկների գործունեությունը Անդրկովկասում 1910-1912 թթ., Երևան, 1959, էջ 33:

[1604] Տե՛ս «Գաւառ», Գօրիս, 1910, մայիսի 23, № 20:

ձակ-Ելիզավետպոլի նահանգից, 4%-ը՝ Դաղստանի մարզից, 3,1%-ը՝ Թիֆլիսի նահանգից, 3%-ը՝ Քութայիսի նահանգից, 0,2%-ը՝ Բաթումի և նույնքան էլ Կարսի մարզից[1605]:

Հարկ է նշել, որ Բաքու քաղաքում 1913 թ. հոկտեմբերի 22-ին անցկացված քաղաքային վարչության վիճակագրության տվյալները էականորեն տարբերվում են նույն թվականին գավառային վարչության հաշվառած տվյալներից. համաձայն դրա՝ քաղաքի հայ բնակչության թիվը 74066 էր (45266 ար., 28800 իգ.), ըստ այդմ՝ Բաքվի ոստիկանական տեղամասում (Բաքու քաղաքի հետ միասին)՝ 61811 (36864 ար., 24947 իգ.), որից բնիկները՝ 9104 (6339 ար., 2765 իգ.), ժամանակավոր բնակիչները՝ 52707 (30525 ար., 22182 իգ.)[1606], Բալախան-Սաբունչիի ոստիկանական տեղամասում (ժամանակավոր բնակիչներ)՝ 12255 (8402 ար., 3853 իգ.) հոգի[1607]: Նույն թվականի տվյալներով՝ միայն Բաքվի գավառում հայ բնակիչների թիվը 94 էր (78 ար., 16 իգ.)[1608]: Ի տարբերություն թվական այդ տվյալների՝ Բաքվի և Թուրքեստանի հայոց թեմի 1922-1934 թթ. առաջնորդ Մաթևոս արքեպ. Մաթևոսյանը հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին 1922 թ. դեկտեմբերի 31-ի հղած զեկուցագրում նշում է, որ «1914 թուից առաջ» (հավանաբար նկատի է առնված 1913 թ.) քաղաքում հայ բնակչության թիվը 60000 էր, որից միայն 15000-ը Բալախանիում և արդյունաբերական մյուս շրջաններում[1609]: Գավառային, քաղաքային վարչությունների ու թեմական վիճակագրական տվյալների համադրումը ցույց է տալիս, որ երկսեռ հայ բնակչության թվաճը 15550 հոգով պակաս է ցույց տրված քաղաքային և 14066 հոգով՝ թեմական հաշվառման մեջ: Կարծում ենք, որ թվական տվյալների այս հակասությունը կապված է ոչ այնքան բնակչության թվաճի նվազման, որքան ոչ ամբողջական և թերի հաշվառումների հետ: Մասնավորապես՝ քաղաքային վարչության վիճակագրության մեջ նշված չէ ուղղափառ և այլադավան հայերի թիվը, որն առկա է գավառային վիճակագրությունում: Այսպիսով՝ տարբեր աղբյուրների վկայությունների համադրումը թույլ է տալիս եզրա-

---

[1605] Տե՛ս «Кооперация в Закавказье», вып. I, отд. II, Тифлис, 1925, стр. 81-82, տե՛ս նաև Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, (1828-1978), Երևան, 1979, էջ 73:

[1606] Տե՛ս КК на 1914 г., Тифлис, 1913, стр. 111.

[1607] Տե՛ս նույն տեղում:

[1608] Տե՛ս նույն տեղում:

[1609] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 512, թ. 1:

կացնել, որ քաղաքի 1913 թ. հայ բնակչության իրական թիվն առավել հավաստի է գավառային վարչության տեղեկագրում:

Հայաստանի դյուղական շրջաններից հայ բնակչության արտագնացությունը դեպի Բաքու շարունակվեց նաև հետագա տարիներին: Այդ են վկայում վիճակագրական տվյալները: Գավառային վարչության 1914 թ. հունվարի 1-ի տվյալներով՝ Բաքվում բնակչության թիվը 379.886 էր (223.670 ար., 156.216 իգ.)[1610], որից հայ՝ 69834 (41593 ար., 28241 իգ.)[1611]: Այդ թվից Բաքվի ոստիկանական տեղամասում (Բաքու քաղաքի հետ միասին) բնակվում էր 57140 (32970 ար., 24170 իգ.), իսկ Բալախան-Սաբունչիի ոստիկանական տեղամասում՝ 12694 (8623 ար., 4071 իգ.) հոգի[1612]՝ կազմելով ընդհանուրի 23%-ը[1613]: 1915 թ. հունվարի 1-ի դրությամբ Բաքու քաղաքում, ներառյալ Բալախան-Սաբունչիի ոստիկանական տեղամասը, հայ բնակչության թիվն արդեն հասնում էր 86441-ի (51800 ար., 34641 իգ.)[1614], որից Բաքվի ոստիկանական տեղամասում (ներառյալ Բաքու քաղաքը)՝ 71979 (41544 ար., 30435 իգ.)[1615], Բալախան-Սաբունչիի ոստիկանական տեղամասում՝ 14462 (10256 ար., 4206 իգ.) մարդ[1616]: Հայ բնակչության հաստատուն աճը պայմանավորված էր քաղաքական համեմատաբար կայուն իրավիճակով և ենթադրվում է, որ հաշվառումն անցկացվել է մինչև 1914 թ. օգոստոս ամիսը՝ նախքան Առաջին աշխարհամարտի սկսվելը և զորակոչը: Փաստորեն, Առաջին աշխարհամարտի նախօրյակին Բաքու քաղաքի հայ բնակչության թիվը, 1900 թ. համեմատությամբ, աճել էր 36441-ով, թեև նկատենք, որ «Կովկասյան օրացույց»-ում տեղ գտած վիճակագրական տվյալները զերծ չեն նաև մասնակի թերություններից:

Առաջին աշխարհամարտը ռազմատևական փոփոխություններ մտցրեց Բաքվի հայ բնակչության ժողովրդագրական պատկերում, քանի որ հայ երիտասարդությունը զանգվածաբար զորակոչվեց գործող բանակ: Աշխարհամարտի հենց սկզբից քաղաքի հայ երիտա-

---

[1610] Տե՛ս КК на 1915 г., Тифлис, 1914, стр. 225.
[1611] Տե՛ս նույն տեղում, стр. 223:
[1612] Տե՛ս նույն տեղում:
[1613] Տե՛ս Իշխանեան Բ., Վիճակագրական ուսումնասիրութիւն Անդրկովկասեան ժողովուրդների, էջ 183, 188:
[1614] Տե՛ս КК на 1916 г., Тифлис, 1915, стр. 39.
[1615] Այդ թիվը մոտավորապես համապատասխանում է Հ. Լինչի և Ֆ. Օսվալդի հեղինակած քարտեզում Բաքվի բնակչության վերաբերյալ նշված թվին՝ 71826 (Հայաստան եւ հարեւան երկրներ, ըստ Լինչի եւ Օսուալդի, խմբ. եւ հրատ. Ա. Աբեղեան, Թիֆլիս, Ներսիսեան դպրոց (տե՛ս ՀԱԱ, ֆ. 247, ց.1, գ. 62, թ. 1):
[1616] Տե՛ս КК на 1916 г., стр. 39.

սարդութեանը համակել էր ռուսական զորքերի օգնութեամբ Արևմտեան Հայաստանն ազատագրելու գաղափարը: Պատերազմը զինվորական ծառայութեան մէջ ներգրաւվողներից բացի, կամաւոր զինվորագրվելուն մեծ ակտիվութեուն ցուցաբերեցին հասարակական գրեթե բոլոր խաւերի ներկայացուցիչները: Հայրենասիրութեան վեհ գաղափարներով տոգորված պատերազմի դաշտ էին մեկնում հայ ուսուցիչները, ինժեներները, նավթարդիւնաբերողները և ուրիշները[1617]: Կամաւորների հավաքագրման գործին մեծ ակտիվութեուն ցուցաբերեց հատկապես ուսուցչութեունը: 1914 թ. նոյեմբերի 11-ին հրավիրված Բաքվի հայ ուսուցիչների ժողովն արձանագրում էր. «Հայ ուսուցիչն այնպիսի մի նշանակալից րոպէում չի կարող անմասն մնալ հասարակական գործերում և անշուշտ իր սրտին մօտիկ այնպիսի խնդրին, ինչպիսին է հայ ժողովրդի ազատագրութիւնը պէտք է որ մասնակցի»[1618]: Կամաւորներին և նրանց ընտանիքներին օգնելու, վիրաւոր զինվորներին խնամելու, գաղթականներին ապաստան տալու նպատակով ժողովը միաժամանակ ընտրում է 12 հոգուց բաղկացած մի մարմին[1619]: Կամաւոր զինվորագրվողների մէջ էր նաև անվանի նավթարդիւնաբերող և բարեգործ Ալեքսանդր Մանթաշեանցի ավագ որդին՝ Հովհաննեսը (Վանյա)[1620]: Պատերազմի հենց սկզբից ռազմաճակատ մեկնեց «Նորին կայսրութեան մեծութեան թագաժառանգի անվան № 262 Սալյանի գունդը», որը համալրված էր բացառապես հայերով[1621]:

Ռազմի դաշտ մեկնող կամավորական խմբերին ոգևորելու և Թիֆլիսում գործող «Պատերազմից վնասվածներին օգնող կենտրոնական կոմիտեի» համար հանդանակութեան գործի կազմակերպումը կանոնավորելու նպատակով 1914 թ. նոյեմբերի սկզբներին Բաքու է ժամանում հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանեանը[1622], որին Բաքվի հայութեունն ալժանացնում է հանդիսավոր ընդունելութեան[1623]: Հովհ. Թումանեանի ժամանումը Բաքու էլ ավելի է խթանում կամավորական շարժումը, որի ապացոյցն էր նոյեմբերի 5-ին Բաքվից

[1617] Տե՛ս «Արեւ», Բագու, 1914, օգոստոսի 1, № 96:
[1618] «Արեւ», Բագու, 1914, նոյեմբերի 11, № 180:
[1619] Տե՛ս նույն տեղում:
[1620] Տե՛ս «Արեւ», Բագու, 1914, օգոստոսի 17, № 110:
[1621] «Արեւ», Բագու, 1914, օգոստոսի 3, № 98:
[1622] Թումանեանի՝ Բաքվում գտնվելը նշանավորվում է նաև բանաստեղծի «Վերջին տագնապը» բանաստեղծութեան նոյեմբերի 3-ի թվագրութեամբ՝ Բաքվում գրված և հրապարակված վիպատով (տե՛ս «Արեւ», Բագու, 1914, նոյեմբերի 5, № 175): Այս բանաստեղծութեան մեջ Թումանեանն ի հայտ է բերում մեր ժողովրդի դարավոր տառապանքը Թուրքիայի տիրապետութեան տակ:
[1623] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1914, նոյեմբերի 7, № 248:

100-ից ավելի կամավորների «Մեր հայրենիքը» երգելով ուղևորվելը դեպի ռազմի դաշտ[1624]: «Հայրենիքն էր կանչում նրանց,- գրում է «Հորիզոնն» իր առաջնորդողում,- հայութեան դարաւոր թշնամիներին, սուլթաններին անարգ լծի տակ տառապող ու հեծկլտող ժողովրդի սրտամորմոք ճիչն է, որ այնքան խիզախօրէն մղում է նրանց սահմանի այն կողմ, դէպի Երկիր, դէպի հայ ժողովրդի ազատագրման ուղինները»[1625]: Ազգային բյուրոյի Բաքվի մասնաճյուղը 1914 թ. դեկտեմբերի 28-ի նիստում որոշել էր կամավորների թիվը պահեստազինվորների հետ միասին հասցնել 6000-ի[1626]: Կամավորական շարժումից անմասն չմնաց նաև հոգևոր դասը: Որպես զինվորական քահանա ռազմաճակատ մեկնելու ցանկություն հայտնեցին Բաքվի ծխատեր Մարտիրոս քհն. Տեր-Հայրապետյանը, Գյոքչայի դավառի Գիրք գյուղի ծխատեր Ալեքսանդր քհն. Աբրահամյանցը և Շամախու գավառի Զարգարան գյուղի ծխատեր Բարսեղ քհն. Փիրբուդաղյանը[1627]: Պաշտոնական ոչ լրիվ տվյալներով 1914 թ. նոյեմբերից մինչև 1916 թ. դեկտեմբերի 30-ը միայն Բաքվից զորակոչվել է 11797 հայ[1628]: Բաքվում հերթական զորակոչը տեղի պետք է ունենար 1917 թ. հունվարի 10-ին[1629]:

Բաքվի հայ բնակչության նվազմանը նպաստեց նաև այն հանգամանքը, որ սկսված պատերազմի հետևանքով, ի թիվս արտադրության այլ ճյուղերի, լանվոր-ծառայողների մի մասի կրճատվելու պատճառով դադարեց նաև նավթարդյունաբերական մի շարք ձեռնարկությունների գործունեությունը: Բանվորների մի մասն էլ իրենց ընտանիքների պատերազմի հասցրած տնտեսական վնասները հաղթահարելու համար վերադարձավ հայրենի գյուղերը:

Ի մի բերելով վերը հիշատակված տեղեկությունները փորձենք պարզություն մտցնել պատերազմի առաջին տարում Բաքվի հայ բնակչության շրջանում ընթացած տեղաշարժերի հարցում: «Հորիզոնի» Բաքվի թղթակցի «Բաքվեցի» ծածկանունով հանդես եկող Ե. Ֆրանգյանի վկայակոչած մի տեղեկության համաձայն քա-

---

[1624] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1914, նոյեմբերի 14, № 252:
[1625] Նույն տեղում:
[1626] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 288, ց.1, գ. 3, թ. 7:
[1627] Տե՛ս Ստեփան Կերտող, Հայ հոգևորականության մասնակցությունը XX դարի պատերազմներին և հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներին, Երևան, 1999, էջ 15:
[1628] Տե՛ս Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հայրթանակը. 1918 թվականի մայիս, Երևան, 1998, էջ 15:
[1629] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1916, դեկտեմբերի 22, № 825:

ղաքում հայերի թիվը 1915 թ. սեպտեմբերի սկզբներին նվազելով հասել էր 40000-ի[1630]: Նույն այդ թիվն է բերում նաև Շամախիի հայոց թեմի առաջնորդ կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը՝ 1915 թ. հոկտեմբերի 8-ին Գարեգին եպս. Հովսեփյանին հղած նամակում[1631]: Եթե ստույգ համարենք նշված թիվը, ապա ստացվում է, որ ռազմաճակատ և հայրենի գյուղեր մեկնելու պատճառով հայ բնակչությունը նախապատերազմյան 86441 թվից նվազել էր 46441-ով, այսինքն՝ կեսից ավելին պակասել էր քաղաքում: Մեր կարծիքով՝ նշված թիվն այնքան էլ հավաստի չէ, որը հետևանք է կամ սխալ տեղեկատվության, կամ էլ նշված ժամանակահատվածում ազգաբնակչության շարժընթացի վերաբերյալ անցկացված ոչ կանոնավոր վիճակագրության:

Այսպիսով՝ Առաջին աշխարհամարտը խոր հետք թողեց Բաքվի հայ բնակչության վերարտադրության վրա: Պատերազմը սկսելուն պես ռազմաճակատ, ինչպես նաև հայրենի գյուղեր մեկնելու պատճառով քաղաքում հայ բնակչության թիվը սկսեց նվազել: Դրա փոխարեն գրեթե անփոփոխ էր մնացել կովկասյան թաթարների թիվը: Պատճառն այն էր, որ ցարական կառավարությունը, որպես անբարեհույս տարր,՝ վերջիններիս չզորակոչեց գործող բանակ[1632]: Ռ. Իշխանյանը իրավացիորեն նկատել է. «Մուսուլմանության և մանաւանդ անդրկովկասեան Թրքութեան հասարակական գործիչներին լաւ յայտնի է, որ առհասարակ ռուս հասարակութեան աչքում և մանաւորապէս դեմօկրատիկ շրջաններում մուսուլման տարրը առանձին վստահութիւն չէր վայելում ինչ-ինչ տրադիցիաների հիման վրայ, մանաւանդ պատերազմի շրջանում... Մեր ծայր երկրի թուրք-թաթարները ոչ միայն չեն կռուել և չեն կռուի Թուրքիայի դէմ, այլև երկար ժամանակ տարուած պանիսլամիստական հովերով, բացառապէս Թիւրքիայից են սպասել իրանց երազական ձգտումների և տենչանքների իրականացման հնարաւորութիւնը...»[1633]:

[1630] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1915, սեպտեմբերի 4, № 199:

[1631] Տե՛ս Մատենադարան, Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթ. 95, վավ. 494:

[1632] Տե՛ս Сельско-хозяйственные районы Азербайджана. По материалам сельско-хозяйственной переписи 1917 года, стр. 6.

[1633] Իշխանեան Ռ., Հակայեղափոխական շարժումը Անդրկովկասում (Բագւի արիւնահեղ անցքերի առիթով), Բագու, 1918, էջ 79, 121:

Գ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԵՎ ՊԱՐՍԿԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ԲԱՔՎՈՒՄ: ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ 1915-1917 ԹԹ.

Առաջին աշխարհամարտի տարիներին Բաքու քաղաքում հանգրվանեցին որոշ թվով արևմտահայ և պարսկահայ գաղթականներ: Թեև Բաքուն ճանաչված չէր որպես գաղթականական քաղաք[1634], այդուհանդերձ առանձնահատուկ դեր է խաղացել գաղթականների բժշկական և նյութական ապահովության գործում[1635]: Դրանում իրենց մեծ նպաստն են ունեցել Ազգային բյուրոյի (կամ Թիֆլիսի Ազգային կենտրոնական բյուրո) Բաքվի մասնաճյուղը, Բաքվի քաղաքային ինքնավարության կողմից ստեղծված գաղթականական հանձնաժողովը[1636] և գաղթականների օգնության Բաքվի միջազգային կոմիտեն, որի պատվավոր նախագահը Բաքվի քաղաքագլուխ Լ. Բիչն էր[1637]: 1915 թ. աշնանը, երբ սկսվեց արևմտահայ գաղթականների հոսքը Բաքու, «Հայ կանանց կոմիտեն» կարճ դադարից հետո կրկին վերսկսեց իր գործունեությունը՝ շեշտը դլխավորապես դնելով գաղթականների տարաբնույթ հարցերի վրա: Առաջին հերթին գրաղվեց նրանց սննդի և հագուստի խնդիրները լուծելով[1638]:

Կովկասյան ռազմաճակատում 1914 թ. հոկտեմբերի 25-26-ին ծավալված ոչ հաջող ռազմական գործողություններից հետո ռուսական բանակի նահանջը հարկադրեց Էրզրումի վիլայեթի հայ բնակչությանը տեղահանվել[1639]: 1915 թ. հուլիսին ռուսական բանակի հանկարծակի նահանջի հետևանքով տեղահան եղավ նաև Վանի, մասամբ Բիթլիսի վիլայեթի հայ բնակչությունը[1640]: Տեղահանված

[1634] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1916, օգոստոսի 30, № 192:

[1635] Տե՛ս Սիօրեայ վիճակագրութիւն Տաճկաստանից ու Պարսկաստանից եկած գաղթականների և ռուսահպատակ փախստականների (հայ, ասորի, յոյն և այլն), 1914-1915 թթ., Երեւան, 1915, էջ 41:

[1636] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1915, հունվարի 6, № 3:

[1637] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1915, փետրվարի 14, № 33:

[1638] Տե՛ս Տեղեկագիր եւ հաշիւ 1915 թ. գործունեութեան Հայոց Սարդասիրական Ընկերութեան, Բագու, 1917, էջ 11:

[1639] Տե՛ս Քաղալեան Գ., Էրզրումի վիլայէթի որոշ կազաների հայ բնակչութեան թուաբանակի ճշդումն ըստ Արեւելեան Հայաստանում ապաստանած արեւմտահայ գաղթականների 1914-1915-ին կազմուած վիճակագրական ցուցակների, ՀՀՀ, հ. Ի, Պէյրութ, 2000, էջ 107:

[1640] Կովկասում հաստատված գաղթականների թվի և շարժընթացի մանրամասն քննությունը տե՛ս **Арутюнян А.**, Первая мировая война и армянские беженцы (1914-1917 гг.), автореф. дисс. на соиск. уч. степ. канд. ист. наук, Ереван,

Հայութիւնը ապաստան գտավ Երևանի, Թիֆլիսի, Գանձակի նահանդներում, Կարսի մարզի հայաբնակ գավառներում և Բաքու քաղաքում[1641]*: Ոչ մեծ թվով փախստականներ (2300 հոգի, այդ թվում՝ 500 երեխաներ) 1915 թ. օգոստոսի 2-ին Թիֆլիսի վրայով հասան Բաքու. «Տասնեակ և հարիւր հազարաւոր մարդիկ՝ տարբեր հասակի, սեռի, հասարակական և նիւթական դիրքի, որոնք դեռ երէկ ապրում էին իրենց հինաւուրց բնակավայրերում, թնդանօթների թնդիւնների տակ մի քանի օրում ստիպուած եղան այրել սերունդների կառուցած «նաւերը» և չարան-չարան շարժուել, փախչել դէպի այն կողմը, ուր մղեցին նրանց պատերազմական հանգամանքները»*[1642]*:*

Գաղթական հայերը հիմնականում գյուղացիներ էին, կային նաև արհեստավորներ և մտավորականներ[1643]*: Տեղ հասած գաղթած հայերից 200-ը մահացան բժշկական անբավարար օգնության հետևանքով: 1915 թ. հոկտեմբերի 24-ի մեկօրյա վիճակագրության համաձայն՝ Բաքվում արդեն 1570 հայ գաղթական կար (445 ար., 528 իգ. և 597 երեխա): Գաղթականներից վերադարձել և այլ վայրեր էր մեկնել 100, մահացել՝ 170 հոգի*[1644]*: Հայ փախստականներին խնամող Բաքվի կոմիտեի տնտեսական բաժանմունքի կողմից 1915 թ. նոյեմբերին փախստականների չրջանում անցկացված մարդահամարի տվյալներով՝ նրանց ընդհանուր թիվն այդ ժամանակ 1936 (985 ար., 951 իգ.) էր: Սեռերի թվական մոտավոր տվյալների այս հավասարակշռությունը վկայում է այն մասին, որ գաղթականները տեղահան էին եղել ընտանիքներով: Ընդ որում՝ 1936 հոգուց 126-ը եղել են մինչև 4 տարեկան (71 ար., 55 իգ.), 5-14 տարեկան երեխաների թիվը 499 էր (268 ար., 231 իգ.), իսկ 15-19 տարե-*

1989, стр. 15; Գանիելյան Է., Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ. (շարժը, կացությունը, թվակազմը), պատմ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 1997, էջ 11-12; Սարգսյան Հ., Արևմտահայերի գաղթը Արևելյան Հայաստան 1915 թ. հետո, «Հայոց ցեղասպանություն: Պատճառներ և դասեր», № 3, Երևան, 1995, էջ 36-66: Բաղալեան Գ., նշվ. աշխ., էջ 107-224:

[1641] Կ. Պոլսի պատրիարքարանի կազմած վիճակագրության համաձայն՝ Կովկասում հաստատված հայ գաղթականների թիվը հասնում էր 173000-ի (տե՛ս Ազատեան Լ., Հայ որբերը Մեծ եղեռնի, Լոս Անճելըս, 1995, էջ 42):

[1642] Գրիգորեան Գ., Հայ փախստականները Բագուում, (I), «Գործ», Բագու, 1917, մարտ, № 3, էջ 132:

[1643] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 252, թ. 2, տե՛ս նաև Հարությունյան Ա., Արևմտահայ գաղթականությունը Բաքվում Առաջին աշխարհամարտի տարիներին, «Էրեբունի», Երեւան, 1995, № 2, էջ 5:

[1644] Տե՛ս «Արեւ», Բագու, 1915, նոյեմբերի 5, № 191:

կաններինը՝ 153 (67 ար., 86 իգ.): Մնծամասնություն են կազմել 20-59 տարեկանները՝ 1026 հոգի (500 ար., 526 իգ.), որը 60-69 տարեկաններն են 61 հոգի (28 ար., 33 իգ.), 70 և ավելի տարիք ունեցողները՝ 25 (17 ար. 8 իգ.), իսկ անհայտ տարիքի է եղել ընդամենը 46 (34 ար., 12 իգ.) հոգի[1645]*: Բոլոր փախստականներն ազգությամբ հայ էին (միայն մեկն էր ասորի), ըստ դավանանքի՝ հայ առաքելական (միայն մեկը՝ լյութերական): Ըստ հպատակության՝ բոլորը թրքահպատակներ էին (միայն 4-ը՝ պարսկահպատակ և 1-ը՝ ռուսահպատակ)*[1646]*: Ըստ բնակության վայրերի՝ մնծամասնությունը գաղթել էր Վանի նահանգից*[1647]*: 1930 հոգուց 1711-ը Վանից էին, 48-ը՝ Բիթլիսից, 11-ը՝ Էրզրումից, 8-ը՝ Մուշից: Մնացած 152-ի նախկին բնակության վայրերը նշված չեն*[1648]*: 1915 թ. դեկտեմբերին Հայկավանում անցկացված տարեվերջյան մարդահամարի տվյալներով փախստականների թիվը հասնում էր շուրջ 2000-ի՝ առանց հաշվելու որբանոցներում տեղավորված 300 որբերին*[1649]*:*

Առաջին աշխարհամարտի տարիներին Վան-Սալմաստ-Նախիջևան գծով արևմտահայ փախստականների հոսքը Բաքու չարունակվեց նաև հետագայում: 1916 թ. հունվարի դրությամբ նրանց թիվը հասել էր 2412-ի, որոնցից 2360-ը հաստատվել էին Հայկավանում, իսկ 52-ը՝ քաղաքի տարբեր շրջաններում[1650]*: Նույն տարվա մարտին գաղթականների թիվը 2666 էր, որոնցից 300-ը ցրված էին քաղաքի տարբեր մասերում, մնացյալն ապրում էին Հայկավանում*[1651]*: Համաճայն Կ. Պոլսի պատրիարքարանի տվյալների՝ Բաքվի նահանգում հանդրվանել էին ավելի քան 2900 գաղթականներ (900 ար., 1000 իգ. և 1000 երեխա)*[1652]*:*

Բաքվում հաստատված հայ գաղթականությունը նվազել 1916 թ. մարտ-հունիս ամիսներին՝ հասնելով 2232 հոգու[1653]*, իսկ*

[1645] Տե՛ս Գրիգորեան Գ., Հայ փախստականները Բագուում, (I), «Գործ», Բագու, 1917, մարտ, № 3, էջ 133-135:
[1646] Տե՛ս նույն տեղում, էջ 136:
[1647] Տե՛ս Վարդանեան Ե., Վասպուրականի նահանջ բիւրոցը, Պոսթոն, 1920, էջ 129:
[1648] Տե՛ս Գրիգորեան Գ., Հայ փախստականները Բագուում, (I), «Գործ», Բագու, 1917, մարտ, № 3, էջ 133-135:
[1649] Տե՛ս Ստեփանեան Յ., Հայ փախստականները Բագուում, (II), «Գործ», Բագու, 1917, մարտ, № 3, էջ 143:
[1650] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 252, թ. 5:
[1651] Տե՛ս «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916, մարտի 13, № 16:
[1652] Տե՛ս Ազատեան Լ., նշվ. աշխ., էջ 42, տե՛ս նաև «Армяне и война», Одесса, 1916, март, № 1, стр. 15.
[1653] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 270, թ. 17:

1916 թ. հունիսի ավյալներով՝ Հայկավանում մնացել էր ընդամենը 1340 գաղթական[1654], որոնցից 236-ը՝ 1-14, 36-ը՝ 15-18 տարեկան աղջիկներ էին, 373-ը՝ 19-35, 85-ը՝ 36-45 և 93-ը՝ 45-ից բարձր տարիք ունեցող կանայք: Բացի դրանից՝ կային 15-18 տարեկան՝ 60 և 18-ից բարձր տարիք ունեցող 185 տղաներ[1655]:

Բաքվում հանգրվանած հայ գաղթականների մեջ առանձնակի տեղ են զբաղեցրել որբերը: 1915 թ. օգոստոսի սկզբներին էջմիածնից լուր ստացվեց, որ վանքի բակում հավաքվել են չուրջ 3000 որբեր, որոնց շարքերը հյուծվածությունից և տարափոխիկ հիվանդություններից օրեցօր նոսրանում են: Բաքվի գաղթականական կոմիտեի որբախնամ հանձնաժողովի կողմից որբերի մի մասին էջմիածնից Բաքու տեղափոխելու նպատակով այդտեղ մեկնեցին Ալ. Սերեբրյակյանցը և Ռ. Օհանջանյանը: Օգոստոսի 29-ին սանիտարական գնացքով 300 որբեր տեղափոխվեցին Բաքու, որոնցից 5-ը ճանապարհին մահացան, իսկ 20-ին թողնցին Թիֆլիսում[1656]: Մեկ այլ տեղեկության համաձայն՝ Բաքվում հանգրվանած հայ որբերի թիվը հասնում էր 550-ի[1657]: Օգոստոսի 29-ից մինչև հոկտեմբերի 1-ը որբերից մահացան 20-ը (11 տղա, 9 աղջիկ)[1658]: Մինչև 1915 թ. աշունը Հայկավանի 4 որբանոցներում մնացել էր 253 որբ[1659], իսկ 1917 թ. մայիսի 1-ին որբերի թիվը հասավ 281-ի (134 ար., 147 իգ.)[1660]:

Արևմտահայ գաղթականներին թույլատրվեց Բաքվում մնալ մինչև 1916 թ. մայիսի 1-ը, այնուհետև՝ մինչև հունիսի 1-ը[1661]: Կառավարության կարգադրության համաձայն՝ գաղթականների մի մասը հեռացավ Բաքվից: Հաշվի առնելով, որ գաղթականների մեծագույն մասը հաստատվել էր Հայկավանում և չէր կարող էապես ազդել քաղաքի կյանքի վրա, և ճմռանը այլ վայրեր փոխադրվելը կապ-

---

[1654] Տե՛ս «Արեգ», Բագու, 1916, հունիսի 22, № 35, տե՛ս նաև «Армяне и война», Одесса, 1916, октябрь, № 8, стр. 10:

[1655] Տե՛ս Հարությունյան Ա., Արևմտահայ գաղթականությունը Բաքվում Առաջին աշխարհամարտի տարիներին, էջ 7:

[1656] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 30, թ. 70, տե՛ս նաև «Հորիզոն», Թիֆլիս, 1915, սեպտեմբերի 4, № 199, տե՛ս նաև Դրամական հաշիւ Բագուի Հայ գաղթականական կոմիտէի 1915 թ. օգոստոսից մինչև 1917 թ. յունուարի 1-ը, Բագու, 1917, էջ 45:

[1657] Տե՛ս Իշխանեան Բ., Աղէտի եւ տառապանքի աշխարհից (այց թիւրքահայ փախստականներին), Թիֆլիս, 1915, էջ 20:

[1658] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց.1, գ. 30, թ. 70, տե՛ս նաև Դրամական հաշիւ Բագուի Հայ գաղթականական կոմիտէի 1915 թ. օգոստոսից մինչև 1917 թ. յունուարի 1-ը, էջ 45:

[1659] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 93:

[1660] Տե՛ս նույն տեղում, ֆ. 223, ց. 1, գ. 251, թ. 17, տե՛ս նաև գ. 30, թ. 19:

[1661] Տե՛ս նույն տեղում, ֆ. 27, ց. 1, գ. 251, թ. 15:

ված էր նյութական ու ֆիզիկական մեծ դժվարությունների հետ: 1916 թ. հոկտեմբերին Կովկասյան ռազմաճակատում պաղթականների գործերի գլխավոր լիազոր գեներալ-մայոր Վ. Մ. Թամամշյանը (Թամամշև) տեղեկացրեց, որ նրանց թույլատրվում է անորոշ ժամանակով մնալ Բաքվում[1662]: Արևմտահայ գաղթականների վերադարձը հայրենի եզերք հնարավոր դարձավ մասամբ 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ ժամանակավոր կառավարությունը 1917 թ. ապրիլի 26-ի որոշմամբ վերացրեց Արևմտյան Հայաստանում ցարական կառավարության ստեղծած ռազմական կառավարչաձևը, և հաղթահարվեց արհեստական այն արգելքը, որը խոչընդոտում էր արևմտահայերի հայրենիք վերադարձին. կազմվեց վերաբնակեցման ծրագիր[1663]: 1917 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ Բաքվում արևմտահայ գաղթականների թիվը նվազելով հասավ 705-ի[1664]: «Հորիզոն» լրագրում արձանագրված մի տվյալի համաձայն 1918 թ. հունվարին Բաքվում ապրող արևմտահայերի թիվը, ներառյալ նաև գաղթականները, 6000 էր[1665]:

Պարսկաստանից գաղթականների առաջին հոսքը Արևելյան Հայաստան և սահմանամերձ շրջաններ կատարվեց 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, երբ Ատրպատականի ճակատից ռուսական զորամասի նահանջի հետևանքով, փախուստ տալով թուրքական ներխուժման վտանգից, գործող բանակի հետ միասին գաղթեց նաև Պարսկաստանի քրիստոնյա ազգաբնակչության մի մասը՝ թվով 44000 մարդ: Գաղթողներից 24000-ը հայ էին հետևյալ վայրերից՝ Թավրիզից՝ 3000, Խոյից՝ 2000 և Սալմաստից՝ 4000 հոգի: Մնացած 20000-ը՝ ասորիներ էին: Վերոհիշյալ բոլոր գաղթականները նախապես հաստատվել էին Նախիջևանի և Շարուրի գավառներում[1666]: Իրանահայերի հաջորդ շարժը տեղի ունեցավ ռուսական բանակի 1915 թ. հուլիսյան անակնկալ նահանջից հետո, որին հետևեց Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Պարսկահայքի հայերի անկազմակերպ գաղթը:

[1662] Տե՛ս նույն տեղում, ֆ. 70, ց. 1, գ. 436, թ. 15, տե՛ս նաև «Յուսաբեր», Կահիրե, 1916, ԺԲ տարի, յունվարի 22, № 119:

[1663] Տե՛ս Դանիելյան Է., Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ., էջ 13:

[1664] Տե՛ս Հարությունյան Ա., Արևմտահայ գաղթականությունը Բաքվում Առաջին աշխարհամարտի տարիներին, էջ 7:

[1665] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հունվարի 20, № 13:

[1666] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1918, ապրիլի 15, № 77, տե՛ս նաև Հարությունյան Ա., Պարսկահայ գաղթականության վիճակը և օգնության կազմակերպումը Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի գավառներում և Պարսկաստանի հայաշատ շրջաններում առաջին աշխարհամարտի տարիներին, «Իրան-նամէ», Երեւան, 1994, սեպտեմբեր, Բ տարի, № 2, էջ 5):

Պարսկահայքից գաղթածների մեջ գերակշռում էին հատկապես սալմաստցիները: Վերջիններս Երևանի, Կարսի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի և Շարուրի գավառներից բացի, հաստատվեցին Բաքվում, Թիֆլիսում, Ռոստովում և այլ վայրերում[1667]: *Շամախիի հայոց թեմի առաջնորդ Կարապետ եպս. Մկրտչյանի՝ կաթողիկոս Գևորգ Ե-ին 1915 թ. հունվարի 5-ին հղած գեկուցագրում ասվում է. «Մինչև այժմ համեմատաբար քիչ փախստականներ են հասել այստեղ (իմա՛ Բաքու – Գ. Ս.), որոնց և օգնությունն հասցուել է զանազան միջոցներով. Բայց վերջին օրերը Թաւրիզից բաւականաչափ ընտանիքներ այստեղ հասան, որոնց մէջ նոյնպէս կան օգնութեան կարօտներ»*[1668]:

Պարսկահայ գաղթականների համեմատաբար ավելի ուժեղ շարժ առաջացավ, երբ 1916 թ. հունիսի վերջերին թուրքական զորքերը Ալի Իհսան փաշայի հրամանատարությամբ հարձակում կազմակերպեցին Քերմանշահ-Համադանի ուղղությամբ և հուլիսի 1-ին գրավեցին Քերմանշահը, իսկ օգոստոսի 10-ին՝ Համադանը[1669]: *Թուրքական բանակի հարձակումը խուճապ առաջացրեց գրավված շրջանների քրիստոնյա, այդ թվում նաև հայ բնակչության շրջանում, որին հետևեց հայերի գաղթը Թեհրանից, Ղազվինից, Համադանից, Սուլթանաբադից և Ղարադաղից: Գաղթն սկսվեց օգոստոսի 4-ին՝ Ղազվին-Ռաշտ ուղղությամբ: Ռաշտ հասած գաղթականների թիվը հասնում էր 15000-ի, որոնց պարենավորման և բժշկասանիտարական օգնության խնդիրները լուծում էր քաղաքում հիմնված «Գաղթականական կոմիտեն»*[1670]: *Օգոստոսի 19-ին իրանահայերի մի խումբ, գլխավորապես Թեհրանից և Ռաշտից, գաղթեց Բաքու: Գաղթողների մեջ գերակշռում էր հատկապես մեծահարուստ խավը*[1671]: *Իրանահայերի երկրորդ խումբը՝ հիմնականում էնզելիից և քիչ թվով՝ Մազանդարանից, Բաքու գաղթեց օգոստոսի 23-ին: «Այսօր եկան շատ թուով ընտանիքներ,- գրում է «Մշակը»,- որոնք պատկա-*

[1667] Տե՛ս Վշտապատում. Հայոց Մեծ եղեռնը ականատեսների աչքերով (փաստաթղթերի ժողովածու), կազմողներ՝ Ա. Վիրաբյան, Գ. Ավագյան, Երևան, 2005, էջ 376:

[1668] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1253, թ. 4:

[1669] Տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005, էջ 550:

[1670] Տե՛ս **Арутюнян А.,** նշվ. աշխ., стр. 15. Բարվում հանգրվանած արևմտահայ և պարսկահայ գաղթականների մեծ մասի վերադարձի հարցը առ 1919 թ. հունվարը դեռևս չէր կարգավորվել (տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 53, տե՛ս նաև «Վէմ», Փարիզ, 1934, Բ տարի, № 3, էջ 66):

[1671] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1916, օգոստոսի 28, № 191:

նրով համեմատաբար բարեկեցիկ դասակարգին տեղաւորվում են կամ իրանց բարեկամների մօտ, կամ հիւրանոցներում»[1672]: Այդ շրջանում Մազանդարանի Բարֆրուշ քաղաքում կուտակված հարյուրաւոր հայ փախստականներ ցանկանում էին Կրասնովոդսկի վրայով անցնել Բաքու կամ Ռաշտ[1673]: Խ. Աթանասյանն այդ առիթով գրում է. «Անվերջ արտագաղթ է եղել դէպի Ռուսիա, ուր հաստատուած էին բազմաթիւ պարսկահայեր, Բագուից մինչեւ Ռաստով, Մոսկուա»[1674]: 1918 թ. փետրվարի կեսերի դրությամբ պարսկահայերի թիվը Բաքվում հասնում էր մոտ 3000-ի[1675]:

Բաքվում հանգրվանած թավրիզահայերը, թեհրանահայերը, դարադաղահայերը և այլ շրջաններից եկած իրանահայությունն իրենց բազմաբնույթ կարիքները հոգալու և հասարակական կյանքին մասնակից լինելու համար 1918 թ. հունվարի 21-ին «Մարդասիրական ընկերության» շենքում հրավիրված ընդհանուր ժողովում ստեղծում են «Պարսկահայերի միություն» Հակոբ Հակոբյանի նախագահությամբ[1676]: Վարչությունը տեղակայվում է «Եղբ. Թումանյանների» առևտրական տան գրասենյակում[1677]:

Մեզ հետաքրքրող ժամանակահատվածում, արևմտահայ և իրանահայ գաղթականներից բացի, 1915 թ. սկզբներին Բաքվի հայ բնակչությունը համալրեց Ռումինիայից եկած հայ կամավորների մի խումբ, որը Թիֆլիսում երկու ամսից ավելի մնալուց հետո ինչ-ինչ հանգամանքների բերումով չկարողանալով ընդգրկվել հայկական կամավորական ջոկատներում, ապրուստի տարրական միջոցներից զրկված, աշխատանք որոնելու նպատակով հաստատվեց Բաքվում[1678]:

Այսպիսով՝ Առաջին աշխարհամարտի տարիներին Բաքվի հայությունը համալրվեց բազմաթիվ դեգերումներ և փորձություններ հաղթահարած արևմտյահայ և պարսկահայ գաղթականներով, որոնք նույնպես նշանակալի դեր ունեցան քաղաքի հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային և սոցիալ-տնտեսական կյանքում:

[1672] «Մշակ», Թիֆլիս, 1918, օգոստոսի 30, № 192:
[1673] Տե՛ս նույն տեղում:
[1674] Տե՛ս Խաթաճատեան Ե., Հայոց թիւը, Բոստոն, 1965, էջ 26:
[1675] Տե՛ս «Արեւ», Բագու, 1918, փետրվարի 16, № 36:
[1676] Տե՛ս «Արեւ», Բագու, 1918, փետրվարի 3, № 26:
[1677] Տե՛ս «Արեւ», Բագու, 1918, փետրվարի 16, № 36:
[1678] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1915, փետրվարի 4, № 24:

* * *

Բաքու քաղաքի հայ բնակչության՝ XX դարի երկրորդ տասնամյակի կեսերի թվի վերաբերյալ, ըստ դավանանքի, վիճակագրական հարուստ տեղեկություններ է պարունակում 1917 թ. «Կովկասյան օրացույցը», համաձայն որի՝ 1916 թ. հունվարի 1-ի դրությամբ Բաքվի ոստիկանական տեղամասի (ներառյալ Բաքու քաղաքը) 262.422 (143.767 ար., 118.655 իգ.) բնակչությունից հայ առաքելականների թիվը 61418 էր (35206 ար., 26212 իգ.)[1679]: Այդ թվում՝ բնիկներ էին 24605-ը (13717 ար., 10888 իգ.), իսկ ժամանակավոր բնակիչներ՝ 36813-ը (21489 ար., 15324 իգ.)[1680]: Հայ ուղղափառների թիվը 97 (64 ար., 33 իգ.) էր, որոնցից բնիկ էին 81-ը (58 ար., 23 իգ.), իսկ ժամանակավոր բնակիչ՝ 16-ը (6 ար., 10 իգ.)[1681]: «Կովկասյան օրացույցում» հայ բնակչության բաժնում, վիճակագրական տվյալներ կան նաև այլադավան հայերի վերաբերյալ. այստեղ հավանաբար նկատի են առնված հիմնականում լյութերական հայերը, որոնց թիվը 842 էր (478 ար., 364 իգ.), ընդ որում՝ նրանցից 187-ը (102 ար., 86 իգ.) բնիկ էր, 654-ը (376 ար. 278 իգ.)՝ եկվոր[1682]: Ընդհանուր առմամբ, բուն քաղաքում հայ երկսեռ բնակչության թիվը 62357 էր (35748 ար., 26609 իգ.)՝ կազմելով ընդհանուր բնակչության 23,8%-ը[1683]:

Բալախան-Սաբունչիի ոստիկանական տեղամասում, որտեղ հիմնականում բնակվում էին ժամանակավոր բնակիչներ, 143.407 (92125 ար., 51282 իգ.) բնակչությունից հայ առաքելականների թիվը 14104 էր (10401 ար., 3703 իգ.): Հայ ուղղափառներն այստեղ սակավաթիվ էին՝ ընդամենը 5 հոգի (ար.): Մեծ թիվ էին կազմում հոսկապես այլադավան հայերը՝ 700 (503 ար., 197 իգ.) հոգի[1684]: Ընդհանուր առմամբ, Բալախան-Սաբունչիի ոստիկանական տեղամասում հայ երկսեռ բնակչության թիվը 14809 էր (10909 ար., 3900 իգ.)՝ կազմելով ընդհանուրի 10,3%-ը[1685]:

Այսպիսով՝ 1916 թ. հունվարի 1-ի դրությամբ Բաքվում (ներառյալ Բալախան-Սաբունչիի ոստիկանական տեղամասը) 405.829

[1679] Տե՛ս КК на 1917 г., Тифлис, 1916, стр. 183, 185.
[1680] Տե՛ս նույն տեղում, стр. 183:
[1681] Տե՛ս նույն տեղում:
[1682] Տե՛ս նույն տեղում:
[1683] Տե՛ս նույն տեղում:
[1684] Տե՛ս նույն տեղում:
[1685] Տե՛ս նույն տեղում:

բնակչությունից հայերի թիվը 77166 էր (46657 ար., 30509 իգ.)՝ կազմելով ընդհանուրի՝ 19%-ը[1686]:

Աղյուսակի տեսքով պատկերն ըստ դավանանքի հետևյալն է[1687].

Աղյուսակ № 16

№	Բաքու քաղաքի ոստիկանական տեղամաս	Բնիկ		Ժամանակավոր		Բնակչ. ընդ. թիվը
		ար.	իգ.	ար.	իգ.	
1	Առաքելական	13717	10888	21489	15324	61418
2	Ուղղափառ	58	23	6	10	97
3	Այլադավան	102	86	376	278	842
Ընդամենը		13877	10997	21871	15612	62357
№	Բալախան-Սարուճչիի ոստիկանական տեղամաս					
1	Առաքելական	10401	3703	-	-	1404
2	Ուղղափառ	5	-	-	-	5
3	Այլադավան	503	197	-	-	700
Ընդամենը		10909	3900	-	-	14809
Ընդամենը		24786	14897	21871	15612	77166

1916 թ. հունվարի 1-ի և նախապատերազմյան թվականի տվյալի (86441) համադրությունից հետևում է, որ 9275-ով նվազել էր քաղաքի հայ բնակչության թիվը: Ներկայացված աղյուսակի տվյալներից երևում է, որ հայ բնակչության թվի մեջ չեն մտել Բաքվում հանդրվանած գաղթականները: Եթե նշված թվին ավելացնենք միայն 1916 թ. հունվարի դրությամբ եղած արևմտահայ գաղթականների թիվը՝ 2412[1688], ապա Բաքվում հայերի ընդհանուր թիվը կլինի 79578:

Ինչ վերաբերում է Բաքվի գավառի հայ բնակիչների թվաճի պատկերին, ապա նշենք, որ նրանք հիմնականում ժամանակավոր բնակիչներ էին և բավականին սակավաթիվ: 1914 թ. հունվարի 1-ի դրությամբ բնակվել է 150 (122 ար., 28 իգ.) հոգի[1689]: Այդ թիվը հետագայում նվազել է՝ 1916 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմելով ընդամենը 32 (25 ար., 7 իգ.)[1690]:

Այսպիսով՝ 1916 թ. հունվարի 1-ի դրությամբ Բաքվի գավառում հայ բնակչության թիվը 77198 էր (46682 ար., 30516 իգ.)՝ կազմելով ընդհանուր բնակչության 19%-ը:

[1686] Տե՛ս Адресъ-календарь Азербайджанской Республики на 1920-й г., на тюркскомъ и русскомъ языкахъ (1-ой годъ издания), под редакцией **А. И. Ставровскаго**, Баку, 1920, стр. 51.

[1687] Աղյուսակը կազմված է ըստ КК на 1917 г., стр. 183, 185-ի տվյալների. հաշվարկը մերն է:

[1688] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 252, թ. 5:

[1689] Տե՛ս КК на 1915 г., стр. 219.

[1690] Տե՛ս КК на 1917 г., стр. 179.

1916 թ. հունվարի 1-ի տվյալներով՝ ըստ էթնոդավանական պատկանելության՝ Բաքու քաղաքի հայ բնակչությունն իր թվով երրորդն էր ասիական մահմեդական տարբեր ժողովուրդներից՝ 182.828 (108.493 ար., 74335 իգ.)՝ 49.1% (դերակշռել են չիաները՝ 152.898 (88758 ար., 64140 իգ.)՝ 37,7%), և ռուսներից՝ 104.599 (56984 ար., 47615 իգ.)՝ 25,8% հետո, որոնց հաջորդել են հրեաները, եվրոպական ժողովուրդները (գերմանացիներ, ֆրանսիացիներ, չվեդներ, անգլիացիներ) և այլք[1691]*:*

Բաքվի հայ բնակչության թիվը նվազեց, երբ այստեղ հաստատված արևմտահայ և պարսկահայ գաղթականների որոշ մասը հեռացավ քաղաքից: Նվազման միտումը պայմանավորված էր նաև իրենց դավառները վերադարձող արևելահայերի՝ մեծ չափերի հասնող արտահոսքով: Բ. Իշխանյանի հաշվումներով՝ 1917 թ. հոկտեմբերի դրությամբ հայերի թիվը Բաքվում (ներառյալ արդյունաբերական-գործարանային շրջանները) մոտ 70000 էր, որից միայն 15000-ը՝ Բալախանիում[1692]*:*

Քաղաքի հայ բնակչության թվի կտրուկ աճ նկատվեց 1917 թ. հոկտեմբերի վերջերին: Դա հիմնականում պայմանավորված էր Փետրվարյան հեղափոխության և դրան հաջորդած Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում բանակում ծայր առած զանգվածային դասալքության հանգամանքով: Արևմտյան ռազմաճակատում գտնվող հայ զինվորները, թողնելով իրենց դիրքերը, սկսեցին վերադառնալ տուն[1693]*: Քաղաքում կուտակվեցին Վլադիկավկազի երկաթուղով Բաքու, այնտեղից Հայաստան, գլխավորապես Ղարաբաղ և Զանգեզուր անցնելու համար ժամանած 10000-ից ավելի հայ զինվորներ*[1694]*, որոնք, սակայն, Բաքու-Թիֆլիս երկաթգծի՝ կովկասյան թաթարների կողմից փակված լինելու պատճառով այդպես էլ մնացին քաղաքում:*

Բ. Իշխանյանի կողմից հարցաթերթիկների միջոցով կատարված հաշվառումների համաձայն՝ նախքան 1918 թ. թուրքական արշավանքը բուն քաղաքում և արվարձաններում (Բալախան, Բիբի-Հեյբաթ, Հայկավան, Հայոց-քիշլի, «Սև» և «Սպիտակ» քաղաքներ)

[1691] Տե՛ս նույն տեղում, стр. 179-185.

[1692] Տե՛ս Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 18, 19:

[1693] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 24:

[1694] Տե՛ս Քաջազնունի Յ., Հայաստանի Հանրապետութիւն, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Ղազախեցյանի, Երեւան, 1993, էջ 23, տե՛ս նաև Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, 1968, էջ 44:

Հայերն ունեին ավելի քան 22662 ընտանիք՝ 88673 բնակչով՝ կազմելով ընդհանուրի 35,7%-ը[1695]: Քաղաքում հայերով խիտ բնակեցված էին՝ Ստանիսլավսկայա (1393 ընտանիք՝ 4988 բնակչով), Տեփոննայա (1208 ընտանիք՝ 4275 բնակչով) և Բալախանսկայա (1201 ընտանիք՝ 4630 բնակչով) թաղամասերը (տե՛ս հավելված № 4)[1696]:

Աղյուսակի տեսքով՝ հայ ընտանիքների և նրանց անդամների թիվն ու տոկոսային հարաբերակցությունը՝ ըստ թաղամասերի, ուներ տեղաբաշխման հետևյալ պատկերը[1697].

Աղյուսակ № 17

Թաղամաս	Ընտանիքների թիվը	Ընտանիքների անդամների թիվը	Ընտանիքի թիվը %-ով	Ընտանիքի անդամների թիվը՝ %-ով
1	606	2224	2,66	2,50
2	50	152	0,22	0,17
3	86	323	0,38	0,37
4	97	395	0,43	0,44
5	1267	5122	5,59	5,78
6	1890	7219	8,34	8,14
7	4214	16670	18,58	18,80
8	8599	33393	38,00	37,67
9	4789	19112	21,13	21,55
10	519	2019	2,30	2,28
Բալախան	415	1535	1,82	1,73
Խառը փողոցներ	130	509	0,56	0,57
Ընդամենը	22662	88673	100,00	100,00

Աղյուսակից հետևում է, որ յուրաքանչյուր ընտանիքում ապրողների թիվը կազմել է 3,9 կամ 4 հոգի[1698]: Ընտանիքի անդամների միջին թվի ցածր տոկոսը Բ. Իշխանյանը պայմանավորում էր հետևյալ հանգամանքներով. նախ՝ Բաքվում բնակվող գավառներից եկածների (մշակ-բանվորներ, ծառայողներ) շարքում մեծ տոկոս էին կազմում ինքնագործները, որոնք իրենց ընտանիքները պահում էին գյուղերում: Երկրորդ՝ կային բազմաթիվ հայ ընտանիքներ, որոնց անդամների մի մասը՝ հիմնականում կանայք և երեխաներ, նախքան թուրքերի արշավանքը Աստրախանի ուղղությամբ հեռացել էին քաղաքից: Այդ թվի մեջ չեն մտնում նաև Բաքվի դեմ թուրքական արշավանքի ժամանակ 1918 թ. հուլիս-օգոստոսին Բաքու գաղթած

[1695] Տե՛ս Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 18:
[1696] Տե՛ս նույն տեղում, էջ 19-21:
[1697] Տե՛ս նույն տեղում, էջ 17:
[1698] Տե՛ս նույն տեղում, էջ 18:

Դյոքչայի և Շամախիի չուրջ 5000-6000-ի հասնող գաղթական հայ բնակչությունը[1699]*: Ուստի, հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, կարելի է ենթադրել, որ նախքան թուրքերի կողմից Բաքվի գրավումը հայ բնակչության թիվն այստեղ հասել է մոտ 100.000-110.000-ի: «Հիմք ընդունելով մեր ստացած թիւը,- գրում է Բ. Իշխանյանը,- և ի նկատի ունենալով յիշեալ բացերը, կարելի է ենթադրել, որ Բագուի անկման նախօրեակին հայ ազգաբնակչութեան թիւը հաւասար է եղել մօտ 100000-110000 հոգու»*[1700]*:*

Ցարական կառավարության կողմից 1916 թ. անցկացված ամենամյա հաշվառումից հետո Բաքու քաղաքում հերթական հաշվառումն անցկացվել է 1917 թ. նոյեմբերի 4-ին, ըստ որի՝ քաղաքն ուներ 352.753 բնակիչ, որից լուն քաղաքում՝ 248.337, իսկ արդյունագործական-գործարանային շրջաններում՝ 104.416[1701]*: Ընդ որում՝ այդ թվի մեջ չեն հաշվառվել չոգենավերում և խարսխակայաններում գտնվողները, ինչպես նաև նավարկության մեկնածները: Համադրելով 1916-ի (405.829) տվյալի հետ՝ ստացվում է, որ մոտ 53076-ով նվազել էր բնակչությունը: Կարծում ենք, որ նվազման հիմնական պատճառը քաղաքի բնակչության թվի պարբերաբար փոփոխվելն էր, ինչը կապված էր բազմաթիվ ընտանիքների՝ հայրենի վայրեր, Հյուսիսային Կովկաս, Անդրկասպյան քաղաքներ և Իրան մեկնելու հետ:*

1917 թ. նոյեմբերի 4-ի հաշվառումից հետո Բաքու քաղաքում մինչև 1918 թ. թուրքական արշավանքը պաշտոնական մարդահամարներ և հաշվառումներ չեն անցկացվել: XX դարասկզբի հաշվառումները ցույց են տալիս, որ Բաքվի հայ բնակչության թիվը, ընդհանուր առմամբ, շարունակում էր աճել:

Բաղաքի հայ բնակչության թվի չարժընթացը և փոփոխությունները, ըստ 1902-1918 թթ. համեմատական տվյալների, ստորև ներկայացվող աղյուսակում ունեն հետևյալ պատկերը[1702]*.*

[1699] Տե՛ս նույն տեղում:

[1700] Տե՛ս նույն տեղում:

[1701] Տե՛ս Статистический сборник, ч. IV. Коммунальное хозяйство, стр. 8.

[1702] Աղյուսակը կազմված է ըստ «Искра», 1902, 1 сентября, № 24, стр. 4, КК на 1907 г., отд. II, стр. 320, Ա-Դօ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906 թթ.), էջ 13, ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1835, թ. 14, Գիլխանդանեան Ա., Հայ թաթարական ընդհարումները Բագուի մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1933, ԺԱ տարի, հուլիս, № 9, էջ 129, ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 9, Перепись Баку 1913 г., Население, стр. 3-5, Перепись Баку 1913 г.; Промыслово-Заводский район,

Աղյուսակ № 18

Տարեթիվ	Բնակչության թիվը
1902	50000
1904	51340
1905	50000
1909	65000
1911	73000
1912	73341
1913	74066
1914	69834
1916	77176
1918	88673

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե զարգացման ինչ ընթացք է ունեցել Բաքու քաղաքի բնակչության թվաճը 1850-1916 թթ. ժամանակահատվածում: Տարբեր տարիների վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ քաղաքում բնակչությունն աճել է անհամեմատ արագ տեմպերով, քան Այսրկովկասի որևէ այլ քաղաքում՝ 7431 հազարից հասնելով 405.829 հազար մարդու կամ աճել է 54,6 անգամ: Այսպես՝ 1850-ին Բաքուն ունեցել է 7431, 1866-ին՝ 96611, 1897-ին՝ 111.904, 1914-ին՝ 379.886, 1916-ին՝ 405. 829, 1917-ին՝ 352.753 բնակիչ: Նկատենք, որ բնակչության նման թվաճը ոչ այնքան բնական, որքան մեխանիկական աճի արդյունք էր: Դրա հիմնական պատճառը Բաքվում նավթարդյունաբերության արագ զարգացումն էր և այդտեղ ներգաղթողների մի զգալի մասի մշտական բնակություն հաստատելը: Ավելին՝ եթե XIX դարի առաջին կեսին Այսրկովկասի ամենախոշոր քաղաքը Թիֆլիսն էր, ապա 1897-1916 թթ. Բաքուն բնակչության աճի տեմպերով գերազանցեց նրան[1703]:

стр. 4-5, КК на 1915 г., стр. 225, КК на 1917 г., стр. 179, 185, տվյալների. հաշվարկը մերն է:

[1703] Տե՛ս Ավետիսյան Խ., Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանի ներկա տարածքում 1828-1914 թթ., ՊԲՀ, Երևան, 1978, № 3, էջ 60:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԲԱՔՈՒ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918-1920 ԹԹ.

Ա. ԹՈՒՐՔ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1918 Թ. ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ)

Բաքու քաղաքի և նահանգի հայ բնակչության համար ճակատագրական ժամանակահատված էր 1918-1920 թթ. զանգվածային ջարդերի ու բռնի տեղահանությունների շրջանը: 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Թուրքիան, օգտվելով Ռուսաստանում ստեղծված քաղաքական անկայուն իրավիճակից, Այսրկովկասում ուժեղացրից համաթուրքականության քարոզչությունը: Հեղափոխությունից հետո բազմաթիվ թուրք էմիսարներ Կովկասի մահմեդականների շրջանում տանում էին նման քարոզչություն, որպեսզի հնարավոր առիթի դեպքում կովկասյան թաթարներին մղեն քաղաքական ակտիվ պայքարի[1704]: Բաքվի նահանգում համաթուրքականության քարոզչության համար «Իթթիհադ վե թերաքքը» (Միություն և առաջադիմություն) կուսակցությունը դեռևս 1913 թ. Բաքու, Գյոքչա, Ադդաշ, Նուխի և Ջյուրդամիր քաղաքներում ստեղծել էր կուսակցական տեղական կոմիտեներ[1705]: Կովկասյան թաթարների «ազգային չարժման» կենտրոնն էր Գանձակ-Ելիզավետպոլը, ուր գործում էին «Մուսուլմանական հասարակական կազմակերպությունների խորհուրդը» (ղեկավար՝ Ալի Մարդան-բեկ Թոփչիբաշև) և նրա գործադիր կոմիտեն (ղեկավար՝ Մամեդ Հասան Հաջինսկի)[1706]: Երիթթուրքերի հենարանը Այսրկովկասում Մուսավաթ կուսակցու-

---

[1704] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 29, թ. 3, տե՛ս նաև գ. 26, թ. 21, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 4049, ց. 1, գ. 2, թ. 4, տե՛ս նաև Յակոբեան Յովհ., Թիւրքիա Գերմանական ճանկերուն մէջ, Թիֆլիս, 1918, էջ 15:

[1705] Տե՛ս Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1918 թ., Երևան, 1964, էջ 106:

[1706] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 96: Գործադիր կոմիտեի կազմում ընդգրկվել էին Ադիլխան Ջիաթխանովը, Շաֆի բեկ Ռուստամբեգովը, Ասլան բեկ Սաֆիքյուրդսկին, խուդաատ բեկ Ռաֆիբեկովը, Նասիբ բեկ Ուսուբբեկովը, Ալեքպեր բեկ Խասմամեդովը, գնդ. Էֆենդիևը և ոտմիստր Ույուբիևը (տե՛ս Շահումյան Ստ., ԵԼԺ, հ. 4 (1917 հոկտեմբեր-1918 մայիս), Երևան, 1978, էջ 113-114):

թյունն էր[1707]*: Մուսավաթի հակումները դեպի Թուրքիան ավելի ակնառու դարձան Փետրվարյան հեղափոխությունից հետո: Կենտրոնական իշխանության կազմալուծման հետևանքով Մուսավաթը փորձեց պահն օգտագործել թուրքերի օգնությամբ իրականացնելու համաթուրքական ծրագրերը*[1708]*: Ականատեսներից մեկի՝ 1918 թ. հունվա- րի 24-ի հաղորդման մեջ նշված է, որ «թուրքական սպաները մահմեդական ադդային կոմիտեի հետ աշխատում են Արևելյան Կովկասում մահմեդական պետականություն ստեղծելու ուղղությամբ»*[1709]*:*

Առաջնորդվելով համաթուրքական գաղափարախոսությամբ՝ Մուսավաթը երիտթուրքերի թելադրանքով տենդորեն նախապատրաստում էր թուրքերի առաջխաղացումն Այսրկովկաս արագացնելու և ինքնավարության պահանջով՝ թուրքական պետություն ստեղծելու գործը: Ինքնավարության հարցը բարձրացվեց 1917 թ. ապրիլի 15-20-ը Բաքվում տեղի ունեցած Կովկասի մահմեդականների համագումարում[1710]*: Միաժամանակ տուրք տալով համախալամական գաղափարախոսությանը, համագումարում պաշտոնապես հայտարարվեց, թե «այլևս ներհակություն կամ տարբերություն չկայ Սիւննի եւ Շիա կրօնական հաստատածների միջեւ, թէ ամբողջ աշխարհի մահմետականները մի մարմին եւ մի հոգի են...»*[1711]*: Իսկ 1917 թ. հոկտեմբերին տեղի ունեցած մահմեդականների միավորիչ համագու-*

[1707] Տե՛ս Нагорный Карабах в международном праве и мировой политике (документы и коменмтарий), составитель проф. **Ю. Барсегов**, Москва, 2008, т. I, док. 229, стр. 232, տե՛ս նաև **Ավետիսյան Հ.**, Երիտասարդ թուրքերի և Մուսավաթի համաթուրքական գործակցությունը և հակահայկական ոճրագործությունները 1918 թ., ՊԲՀ, Երևան, 1991, № 1, էջ 47:

[1708] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 1920, հունիսի 19, № 127:

[1709] Ավետիսյան Հ., Երիտասարդ թուրքերի և Մուսավաթի համաթուրքական գործակցությունը և հակահայկական ոճրագործությունները 1918 թ., էջ 47:

[1710] Տե՛ս **Байков Б.**, Воспоминания о революции въ Закавказьи (1917-1920 гг.), Архивъ русской революции, издаваемый **И. В. Гессеньмъ**, т. IX, Берлинъ, 1923, стр. 103. Հասարակական-քաղաքական գործիչ, մասնագիտությամբ իրավաբան Բ. Բայկովը Բաքվում բնակվել է 1895-1919 թթ.: Քաղաքում նա հայտնի էր որպես քրեական և քաղաքացիական դատավարությունների հմուտ դատապաշտպան: 1917 թ. նոյեմբերին ընտրվել էր Քաղաքային Դումայի իրավասու: 1917-1919 թթ. եղել է ռուսական ազգային խորհրդի անդամ: Բաքվի՝ 1918-1919 թթ. դեպքերին ականատես-ժամանակակիցների հուշագրություն-ուսումնասիրությունների մեջ փաստավավերագրական կարևոր արժեք ունի Բ. Բայկովի նշված հուշապատումը:

[1711] **Գիւլխանդանեան Ա.**, Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1941, ԺԹ տարի, հուլիս, № 9, էջ 97:

մարում ընդունվեց հետևյալ բանաձևը. «Միավորել և պաշտպանել մահմեդականների ազգային և մարդկային շահերը, նրան վերադարձնել այն փառքը և այն կրոնը, որը նա քարոզում է»[1712]:

Կովկասյան թաթարների հակումները դեպի Թուրքիան բացահայտ բնույթ էին կրում: Վավերագրերից մեկի վկայությամբ՝ «Թաթարները, որոնք ղեկավարվում էին իրենց քաղաքական դլխավոր կուսակցության՝ Մուսավաթի կողմից, խորապես գիտակցում էին, որ լինելով մահմեդականներ՝ իրենք չեն կռվի Թուրքերի դեմ, առավել ևս այն պահին, երբ ռուսական զորքերի հեռանալու պատճառով միանգամայն որոշակի էր նրանց հաղթանակի մոտալուտ լինելը»[1713]:

Առաջին աշխարհամարտի սկզբից Բաքվի նահանգի հայ երիտասարդության՝ զանգվածաբար բանակ զորակոչվելու պատճառով գյուղերում մնացել էին հիմնականում կանայք, ծերեր ու երեխաներ: Կովկասյան թաթար ավազակախմբերը, օգտվելով այդ հանգամանքից, ոգեշնչված Թուրք էմիսարների հակահայ կոչերով, 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո սկսեցին հարձակումներ գործել, սպանել ու կողոպտել Գյոքչայի, Շամախիի և Ղուբայի գավառների անպաշտպան մնացած հայկական գյուղերի անզեն բնակչությանը: Ազգամիջյան թշնամանք հրահրողների թվում հատկապես աչքի էր ընկնում Այսրկովկասի սուննի մահմեդականների մուֆթին՝ «խաղաղասերի» անուն հանած Մուստաֆա էֆենդին[1714]: Շամախիի հայոց թեմի առաջնորդ Բագրատ եպս. Վարդազարյանը Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին հղած զեկուցագրում Մուստաֆա էֆենդիի մասին գրել է. «...նա գլխաւոր կողմնակիցն ու ջերմ աչխատողն էր տաճկական տիրապետութեան արագացմանը, որի համար աչխատում էր գաղտնի ու յայտնի միջոցներով զինել թուրք ժողովրդին ու զինուորներին»[1715]: Հայերի նկատմամբ թշնամանք սերմանելու հարցում իրենց բացասական դերակատարությունն ունեցան կովկասյան թաթարների շրջանում ձևավորված և գործող կուսակցություններն ու կազմակերպությունները («Մուսավաթ», «Ապակենտրոնացման թյուրքական կուսակցություն» (ֆեդերալիստներ), «Իթթիհադ», «Իսլամի միություն», «Մուսուլմանները Ռուսաստանում» և

[1712] Ավետիսյան Հ., Երիտասարդ թուրքերի և Մուսավաթի համաթուրքական գործակցությունը և հակահայկական ոճրագործությունները 1918 թ., էջ 52:
[1713] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 29, թ. 6-7:
[1714] Նույն տեղում, ֆ. 222, ց. 1, գ. 109, թ. 2:
[1715] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 6:

այլն)[1716]: Անթաքույց հակահայկական ուղղվածություն ուներ նաև Շամախիում գործող «Միլլի» («Ազգային») անվամբ կո-միտեն[1717]:

Քանի որ Առաջին աշխարհամարտում կովկասյան թաթարները զինապարտ չէին, հետևապես չունեին զենք և ռազմական կազմակերպություն, ուստի Փետրվարյան հեղափոխությունից հետո մահմեդական կազմակերպությունների «ազգային-հասարակական» գործունեության ամենակարևոր բնագավառներից մեկը մահմեդական զինական գնդեր ստեղծելն էր: Այդ նպատակով դեռևս 1917 թ. նոյեմբերի 5-ին Գանձակում հրավիրված կովկասյան մահմեդական առաջին զինվորական համագումարում միաձայն որոշվեց. «Համախմբել ազգային դրոշակի տակ մուսուլման զինուորությունը, ազգայնացնել մեկ և կէս միլլիոնի հասնող մուսուլման զօրքը: Կազմակերպել առանձին թաթարական գնդեր և դիվիզիաներ»[1718]: Ընդ որում, Սեյմի նիստերում կովկասյան թաթար պատգամավորները (Ասլան բեկ Սաֆիքյուրդսկի և ուրիշներ) հակահայկական ելույթներով բացահայտորեն արգելքներ էին ստեղծում գավառներում ինքնապաշտպանության նպատակով հայերի զինման գործընթացին[1719]:

Զենք ձեռք բերելու, իրենց գնդերը զինելու և թուրքերի առաջխաղացումն արագացնելու նպատակով կովկասյան թաթարները 1918 թ. հունվարի 9-13-ը հարձակվեցին ոտն վերադարձող ռուսական զորամասերի վրա և Գանձակից ոչ հեռու գտնվող Շամխոր կայարանում կոտորեցին ավելի քան 2000 ռուս զինվոր՝ խլելով նրանց զենքն ու զինամթերքը[1720]: Այսրկովկասի թաթարներին զինելու ուղղությամբ մեծ աշխատանք էին կատարում նաև Թուրքիան և Գերմանիան, որոնք զենք գնելու համար մեծ գումարներ ուղարկեցին Այսրկովկաս[1721]: Ըստ գեներալ-մայոր Ա. Կուլեբյակինի[1722]՝ 1918 թ. սկզբին Գանձակի նահանգի գրեթե ողջ մահմեդականու-

---

[1716] Տե՛ս Կնյազյան Դ., Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Երևան, 2008, էջ 8-9:

[1717] Տե՛ս Շամախեցի [Հարություն Քարդամյան], Թրքասիրութի՞ւն, թէ թրքամոլութիւն: Ընդդիմախօսական Եղիշէ ա.-ք. Գեղամեանի «Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը» գրքի առթիւ, Թիֆլիս, 1920, էջ 7:

[1718] Իշխանեան Բ., Հակայեղափոխական շարժումը Անդրկովկասում, էջ 111-112:

[1719] Տե՛ս Закавказский Сейм: Стенографические отчеты, сес. I, зас. VII, Тифлис, 1918, стр. 47.

[1720] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 117, թ. 2:

[1721] Տե՛ս Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը, էջ 43:

[1722] Ա. Կուլեբյակինը եղել է 1918 թ. նոյեմբերին Թիֆլիսում կազմակերպված համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի (նախագահ՝ Հ. Թումանյան) պատմափինվորական մասնաճյուղի վարիչը:

թյունը դինված էր[1723]: Շամխորի արյունալի դեպքերի հետևանքով 1918 թ. հունվարին Բաքվի և Թիֆլիսի միջև երկաթուղային կապը լիովին խզվեց: Այդ պատճառով Բաքվում կուտակվեցին ավստրո-գերմանական ճակատներից տուն վերադարձող 10000-ից ավելի հայ զինվորներ[1724]: Բաքու-Թիֆլիս երկաթգծի չգործելու պատճառով այս զորամիավորումները այդպես էլ չկարողացան ռազմաճակատ մեկնել: Մնալով Բաքվում՝ նրանք մեծ դեր ունեցան քաղաքի 1918 թ. պաշտպանության ժամանակ:

Մուսավաթի վարած հակահայ քաղաքականության հետևանքով Բաքվի նահանգի կովկասյան թաթարների վերաբերմունքը հայ բնակչության նկատմամբ արմատապես փոխվեց: Տագնապալից էր իրավիճակը հատկապես Բաքու-Թիֆլիս երկաթուղու շրջանում. թաթարական ավազակային խմբերը Հյուրդամիր, Հաջի-Կարուլ, Ուջար, Մ'յուսլիլի և Ադստաֆա կայարաններում անարգել սպանում էին հայերին[1725]: Այս առումով հետևյալ փաստն է արձանագրել «Զանգ» լրագիրը. «Ադրբեջանի Հանրապետութեան սահմաններում՝ Ելիզաւետինո գիւղից ոչ հեռու (Ադստաֆա կայարանի մօտ), երևան են հանւած մօտ 20-ի չափ հորեր, որոնք լիքն են մարդկային դիակներով: Պարզւում է, որ գնացքներից հանւած մարդիկ, համարեա թէ բացառապէս հայեր, թալանւելուց յետոյ կենդանի նետւում են այդ հորերը»[1726]: Միայն Ուջար և Մ'յուսլիլի կայարանների միջև ընկած տարածքում գնացքներում սպանվեցին շուրջ 100 հայեր[1727]: Այդ գործողությունները ղեկավարում էր Գանձակում իր գործունեությունը սկսած «Մահմեդական հասարակական կոմիտեն»[1728]: Շարունակելով հայասպան քաղաքականությունը՝ թաթար-

---

[1723] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 26, թ. 13:

[1724] Բաքվում կուտակված վիճվորներից կանոնավոր զորամասեր կազմելու և Կովկասյան ճակատից հեռացող ռուսական զորքերին փոխարինելու գործով էին մտահոգված Թիֆլիսի և Բաքվի Հայոց ազգային խորհուրդները: Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի որոշմամբ՝ այդ գործը հանձնարարվեց գնդ. Ս. Եղիազարյանին, որը կազմավորեց հայկական 2-րդ պահեստային գունդը, իսկ հայկական կամավորական 3-րդ ջոկատի հրամանատար Համազասպ Սրվանձտյանցը ձևավորեց 3000 հոգուց բաղկացած հայկական կամավորական զորամասը (տե՛ս Գիւլխանդանեան Ա., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1941, ԺԹ տարի, օգոստոս, № 10, էջ 104, տե՛ս նաև Армянский корпус против турецких войск (ноябрь 1917 г.-июль 1918 г.), воспоминания генерала Ф. И. Назарбекова, ԲՀԱ, Երևան, 1992, № 3, էջ 150):

[1725] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 58, թ. 2, 4-5:

[1726] «Զանգ», Երեւան, 1918, դեկտեմբերի 5, Բ տարի, № 76:

[1727] Տե՛ս «Արեւ», Բագու, 1918, մարտի 15, № 56:

[1728] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 96:

ական գյուղերի ավտոնոմիաները չուրջկալներ էին կազմակերպում և առանց սոխ ու տարիքի խտրականության պատնում ճանապարհորդ հայերին: Սպանություններն ու կողոպուտը ոչ մի օր չդադարեցին Գյոքչայի, Շամախիի և Բաքվի գավառներում[1729]:

Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը, կանխազգալով դեպքերի հետագա զարգացման ընթացքը, մտահոգ նահանգի հայ բնակչության անվտանգությունը պահպանելու խնդրով, 1918 թ. մարտի 3-ի նիստում քննարկեց և ընդհանուր առմամբ հավանության արժանացրեց Սահփան Զորյանի (Ռոստոմ)[1730] *կողմից ներկայացված ինքնապաշտպանության ծրագիրը: «Իմ խորին համոզումով,- պնդում էր Ռոստոմը,- թուրքերի հետ կռիվը, ուզենք թէ չուզենք, պէտք է ընդունենք, որ վերջապէս, զինուած դիմադրութիւնից դուրս ուրիշ փրկութիւն չկայ մեզ համար»*[1731]: *Ելնելով վերոնշյալից՝ ծրագրում նախատեսվում էր. «1. Ընդհանուր զօրակոչի ենթարկել մինչեւ 45 տարեկան հասակ ունեցողները, 2. Խիստ եւ կտրուկ միջոցներով ապահովել պէտք եղած զրամը, 3. Ձեռնտու ուղարկել մեր զինուած ուժերի մեծագոյն մասը, որովհետեւ ինքնապաշտպանութեան լաւագոյն ձեւը ճակատի պաշտպանութիւնն է, 4. Թիկունքը պահել կարգապանալու համար ամէն կերպ աշխատել դրութեան տէրը դառնալու Բագուում եւ Գանձակում, որոնք թիկունքի դլխաւոր լանջիլներն են եւ թշնամու ամենակարեւոր դիրքերը»*[1732]: *Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը 1918 թ. մարտի 5-ի նիստում խորհրդին կից ստեղծեց նաև Գերագույն զինվորական մարմին (Պաշտպանության հայկական շտաբ), որի պետավարներ նշանակվեցին Խանասորի արշավանքի հրամանատար Սարգիս Մելիքբեկյանը (Վարդան), ռուսական բանակի գնդապետներ Ղազարյանը և Բախտամյանը*[1733]:

Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո 1917 թ. նոյեմբերի 2-ին հրավիրված Բաքվի խորհրդի ընտրյալների[1734] *նիստը, ուր բոլշևիկներն ու ձախ էսեռներն ունեին*

[1729] Տե՛ս «Кавказское слово», Тифлис, 1918, 13 марта, № 57.

[1730] ՀՅԴ հիմնադիրներից Ստեփան Զորյանը 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո անցնելով Բաքու, մեծ դերակատարություն ունեցավ Բաքվի հերոսամարտի կազմակերպմանը:

[1731] Դաւթիենեան Ռ., Կեանքիս գրքէն, երկեր, հ. Ա, Բեյրութ, 1979, էջ 236:

[1732] Նույն տեղում:

[1733] Տե՛ս նույն տեղում, էջ 237:

[1734] Այդ ժամանակ Բաքվի խորհուրդն ուներ մոտ 300 պատգամավոր, որոնցից 60-ը բոլշևիկներ էին, 55-ը՝ դաշնակցականներ, 52-ը՝ մուսավաթականներ, 50-ը՝ ձախ սոցիալիստ-հեղափոխականներ, 45-ը՝ աջ սոցիալիստ-հեղափոխականներ:

մեծամասնություն (488-ից 344 ձայն), 279 ձայնով ընդդեմ 25 և 58 ձեռնպահ ձայների (ընտրության ժամանակ հեռանում են դաշնակցական, սոցիալիստ հեղափոխական և մենշևիկ պատգամավորները), հավանություն տվեց Ստ. Շահումյանի առաջադրած բանաձևին, և խորհուրդն իրեն հայտարարեց Բաքվի ու նրա շրջանների գերագույն իշխանություն: Նույն նիստում խորհուրդը վերանվանվում է Բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդ: Ընտրվում է նաև նոր գործկոմ՝ Ստ. Շահումյանի նախագահությամբ[1735]:

Կարճ ժամանակ անց, Բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդը վարչական բարեփոխման է ենթարկում Բաքու քաղաքի կառավարման համակարգը: Քաղաքային Դումայի 1917 թ. նոյեմբերի 18-ի նիստով վերացվում է քաղաքապետությունը և նավթահանքային շրջանը միացվում է քաղաքին[1736]:

Բաքվում հռչակված խորհրդային իշխանությունը Մուսավաթի կողմից ընդունվեց դժկամությամբ[1737]: Փաստերը ցույց են տալիս, որ կովկասյան թաթարների առաջնորդի դերը ստանձնած Մուսավաթը, քաղաքական ծրագրերում չէր քողարկում «էթնիկ տարածքային միասնության» և անջատողականության ձգտումները: Կովկասյան մահմեդականության քաղաքական կարգավիճակը այդ կուսակցությունը տեսնում էր ինքնորոշման և «անկախ պետականության» ստեղծման մեջ[1738]: Ինչպես իրավամբ գրել է Զավեն Նալբանդյանը (Զարևանդ)՝ «Մուսավաթ կապստամբէր Բագուի մէջ հաստատուած Խորհուրդին դէմ, նպատակ ունենալով խլել իշխանութիւնը եւ յայտարարել Ազրբէյճանի անկախութիւնը»[1739]: Բաքվում այդ

---

30 հոգուց բաղկացած գործադիր կոմիտեում ընտրված էին յուրաքանչյուր կուսակցությունից 5-ական ներկայացուցիչներ: Խորհրդի նախագահն էր բոլշևիկ Ա. Ջափարիձեն, փոխնախագահը՝ ՀՅԴ անդամ Ա. Առաքելյանը (տե՛ս Մելիք-Եօլչեան Ս., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պոսթըն, 1925, Գ տարի, մայիս, № 7, էջ 108):

[1735] Տե՛ս **Ставровский А.**, Закавказье после Октября. Взаимоотношения с Турцей в первой половине 1918 года, Москва, 1925, стр. 8, տե՛ս նաև «Արեւ», Բագու, 1917, նոյեմբերի 4, № 235, տե՛ս նաև Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 433, տե՛ս նաև Մելիքյան Վ., Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում: Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր-1918 թ. փետրվար), Երևան, 2010, էջ 30:

[1736] Տե՛ս «Արեւ», Բագու, 1917, նոյեմբերի 25, № 241:

[1737] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 103:

[1738] Տե՛ս Իշխանեան Բ., Հակայեղափոխական շարժումը Անդրկովկասում, էջ 165:

[1739] Զարեւանդ, նշվ. աշխ., էջ 147:

տարիներին ապրած ռուս հասարակական-քաղաքական ճանաչված գործիչ Բորիս Բայկովը վկայում է. «Ադրբեջանի Հանրապետության ստեղծման գործում (թուրքերի օգնությամբ) ակտիվ դեր է խաղացել Մուսավաթը, որն իրեն անվանել էր թյուրքական Մուսավաթ կուսակցություն: Այդ նրանք էին հռչակում այս կամ այն քաղաքական ակտը»[1740]: Ուստի այդ ծրագրի իրականացման գործում Բաքվում խորհրդային իշխանության հաստատումը և նրա հետագա ամրապնդումը Մուսավաթի համար քաղաքական լուրջ խոչընդոտներ էին ստեղծում: Բ. Իշխանյանի վկայակոչմամբ՝ «Այդ խոչընդոտներից մեկն այն է, որ այսպես կոչուած Սովետական կամ Խորհրդային Իշխանութիւնը հետզհետէ ուժեղանում և կառավարական դեկավար ֆունկցիաներով օժտւում էր հենց այն վայրում, ուր մուսուլմանութիւնը ամենից հարազատօրէն իր տանն է զգում»[1741]: Բացի դրանից՝ կովկասյան թաթար գործիչները տնտեսական բնագավառում ունեցած իրենց հետադիմության համար մեղադրում էին ռուսական կառավարությանը[1742]:

Իրողությունն այն էր, որ կովկասյան թաթարների ֆինանսական կապիտալը չէր վերածվում արդյունաբերական կապիտալի, ինչը վաղուց առկա էր հայ և եվրոպացի առևտրաարդյունաբերողների մոտ: Բ. Իշխանյանն իր «Հակահեղափոխական շարժումը Անդրկովկասում» աշխատության մեջ փաստերի համադրմամբ ցույց է տալիս, որ XX դարի երկրորդ տասնամյակում Այսրկովկասի մահմեդական ության մեջ առևտրական, մանավանդ արդյունաբերական բուրժուազիան դեռևս գտնվում էր զարգացման սաղմնային վիճակում: «Մուսուլմ.[անական] բուրժուազիայի միակ կենտրոնը Բագուն է,- գրում է նա,- ուր թուրքական կապիտալը արդիւնաբերական կեանքում նուազում է՝ զարգանալու փոխարէն, տեղի տալով իր դիրքը աւելի ուժեղ մրցակիցների... նա չի մասնակցում նոյն իսկ բանկային օպերացիաների հարկաւոր չափերով. նա աւելի շուտ վաշխառուական կապիտալի գնչէֆաններ (գործարքներ - Գ. Ս.) է կատարում...: 90-ական թուականների վերջերին նաւթարդիւնաբեր Թաղիեվը այժմ աւելի շուտ կալուածատեր է, քան արդիւնաբերող»[1743]:

[1740] Байков Б., նշվ. աշխ., стр. 143.

[1741] Իշխանեան Բ., Հակայեղափոխական շարժումը Անդրկովկասում, էջ 171:

[1742] Տե՛ս Վարդանյան Թ., Թաթարական ազգայնամոլության դրսևորումներն Անդրկովկասում 20-րդ դարի առաջին տասնամյակում, ԲԵՀ, Երևան, 2000, № 3, էջ 90:

[1743] Իշխանեան Բ., Հակայեղափոխական շարժումը Անդրկովկասում, էջ 177-178:

Բաղաքական և տնտեսական ճգնաժամներից դուրս գալու միակ միջոցը Մուսավաթը տեսնում էր իշխանությունը բաքվում պինված ճանապարհով զավթելու մեջ և այդ ձգտումները նա չէր թաքցնում: Այդ նպատակի իրականացման համար փետրվարի 24-ին Թիֆլիսից Բաքու է տեղափոխվում «վայրի դիվիզիայի» մի զորամաս և ապա նրա շտաբը՝ գեն. Թալիշինսկու գլխավորությամբ[1744], որը, սակայն, Գործադիր կոմիտեի կարգադրությամբ կայարանում ձերբակալվեց[1745]: Մուսավաթը Գործադիր կոմիտեից մեծ քանակությամբ զինքեր ու ռազմամթերք պահանջեց Լենքորանում և Բաքվում կազմակերպվելիք թաթարական զորաջոկատների համար, որոնք իբր թե «պետք է պաշտպաներին թրքութիւնը հայերի կողմից սպասուելիք յարձակումներից»[1746]:

Փաստերը վկայում են, որ Մուսավաթի գործողությունները հրահրվում և զենավարվում էին երիտթուրքերի կողմից: Այսկովկասի մահմեդականների շրջանում համաթուրքական գաղտնի աշխատանք տանելու նպատակով երիտթուրքերի նախաձեռնությամբ ստեղծվել էր «Կովկասյան հատուկ վարչություն»՝ Հասան Ռուշենի գլխավորությամբ: Վերջինս, 1918 թ. մարտի սկզբներին գաղտնի առաքելությամբ գալով Բաքու, ստեղծել էր գործակալական ցանց և կապ հաստատել Թուրքմենստանի, արևելյան և Հյուսիսային Կովկասի թուրքամետ տարրերի հետ[1747]: Բացի դրանից՝ ինչպես վկայում են ավստրիական աղբյուրները, դեռևս 1918 թ. սկզբին Բաքու էին ուղարկվել թուրքական բանակի գլխավոր շտաբի երկու սպաներ՝ ռազմաճակատը լքող ռուս զինվորներից զենքի գնումով մահմեդական բնակչությանը հայերի դեմ զինելու համար[1748]:

Մուսավաթի ձգտումները ակնհայտ կրում էին հակառուսական և հակահայկական բնույթ: Բաքվում այդ օրերին գտնվող գեներալ-մայոր Իվան Սերգեյի Բաղրամովը (Բաղրամյան) Մուսավաթի որդեգրած քաղաքականության վերաբերյալ թողել է հետևյալ վկա-

---

[1744] Տե՛ս «Բանւոր», Բագու, մարտի 29, 1918, № 9, տե՛ս նաև **Раттаузер Я.**, Революция и гражданская война в Баку, ч. I, 1917-1918 гг., Баку, 1927, стр. 145.

[1745] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918, մարտի 21, № 60:

[1746] Մելիք-Եօլչեան Ս., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1925, Գ. տարի, մայիս, № 7, էջ 107:

[1747] Տե՛ս **Swietochowski T.**, Russian Azerbaijan. 1905-1920. The Shaping of National Identity in a Muslim Community. Cambridge, Cambridge University Press, 1985, p. 119-120:

[1748] Տե՛ս Օհանջանյան Ա., 1915 թվական: Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին), Երևան, 1997, էջ 143:

յուԹյունը. «ՄուսավաԹը, ըստ էուԹյան, չէր ուզում ճանաչել ամբողջ իշխանուԹյունն իր ձեռքում կենտրոնացրած խորհրդային իշխանուԹյանը, չնայած ամբողջապես իբր Թե ենԹարկվում էր: Այդ երկու կազմակերպուԹյունների միջև հարաբերուԹյունները Թշնամական էին և ծայրահեղ լարված, ընդհարում նրանց միջև կարելի էր սպասել ցանկացած պահին: ՄուսավաԹը առիԹ էր փնտրում իր ցանկուԹյունը կատարելու համար: Եվ այն իրեն երկար սպասել չտվեց»[1749]: Ն. Ադոնցը քննադատաբար անդրադառնալով Ի. Ստալինի Բաքվում հաստատված խորհրդային իշխանուԹյան հանդեպ կովկասյան Թաթարների դիրքորոշմանը տրված գնահատականին, գրել է. «Խորհրդային „Известия Ц. И. К." պաշտոնաԹերԹի № 97-ում ազգային գծով կոմիսար Ստալինն իր վրա համարձակուԹյուն է վերցնում հայտարարելու, որ մահմեդականները ճանաչում են Խորհրդային իշխանուԹյունը, որը կազմակերպվել էր Բաքվում, և ոչ մի պայքար մահմեդականների և բոլշևիկների միջև տեղի չի ունեցել: Ընկ. Ստալինը անկասկած մոլորուԹյան մեջ է: Այդ չվոխմռունքը հասկանալի և գուցե նաև ներելի կլիներ, ԹեԹ նա ծնված լիներ ոչ Թե Կուբի ափին, այլ Վոլգայի, կամ ավելի հեռու... Նա պետք է ուննենա արիուԹյուն և արդարուԹյամբ հայտարարի, ԹեԹ իրականում դեպի ուր են ուղղված Թաթարնելի հայացքները և ինչպիսին են Թաթարների համակրանքները: Նա պետք է հասկանա, որ Բաքվի մահմեդականների համար ներկայումս անգորական այծերի հաստարակ կաԹը Թանկ է սոցիալիստական բոլոր ուտելիքներից, որոնք մատուցվել են բոլշևիկների կողմից (ընդգծումը մերն է - Գ. Ս.)»[1750]:

Այսպիսով՝ 1918 Թ. մարտի վերջերին Բաքվում ծավալված քաղաքական իրադարձուԹյունները, ըստ էուԹյան, XX դարի սկզբների, մասնավորապես՝ 1905-1906 ԹԹ. հայ-Թաթարական ընդհարումների ընԹացքում լայն ծավալ ստացած կովկասյան Թաթարների «ազգայնական» չարժման տրամաբանական շարունակուԹյունն էին: Կովկասյան Թաթարների «էԹնիկ հավաքական ինքնագիտակցուԹյան» բարձրացման առաջին սաղմերի հետ միասին չարժումն արդեն իսկ ԹևակոխումՀ էր զարգացման նոր փուլ՝ «ազգային ինքնավարուԹյան» պահանջից հետզհետե վերաճելով «անկախ պետականուԹյան» ստեղծման պահանջի, ինչին հետևողականորեն ձգտում էին երիտԹուրքերը: Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պա-

---

[1749] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 103:

[1750] **Оганесян П.**, Малоизвестная статья «Турецкая нота и Турецкая Армения» Николая Адонца, ԼՀԳ, Երևան, 1990, № 4, էջ 79:

լավիչինին փետրվարի 8-ին հայտնում էր. «Էնվեր փաշան երեկ ասաց կայսերական և թագավորական դինվորական կցորդին, որ «թուրքական կողմից սպասվում է ապստամբություն Ռուսաստանի մարգերում»[1751]: Իրանի վրայով Կովկաս անցած թուրքական բանակի գլխավոր շտաբի սպաների՝ Բաքվում ծավալած համաթուրքական գործունեության մասին հայտնի է դառնում Բաքվից Գերմանիա մեկնած ռազմագերի սվազ լեյտենանտ Դեզիդոր Բրանդների՝ 1918 թ. հունվարի 24-ի զեկուցագրում, որտեղ ասվում էր. «Թուրքական սպաները մուսուլմանական ազգային կոմիտեի հետ աշխատում են Արևելյան Կովկասում մահմեդական պետականություն ստեղծելու ուղղությամբ»[1752]: Ակնհայտ է, որ Մուսավաթ կուսակցությունը ձգտում էր Բաքվում զավթել քաղաքական իշխանությունը, ինչը դիտվում էր որպես միակ միջոց՝ իրենց ծրագրերի լուծման ճանապարհին[1753]: Ժամանակի պարբերական մամուլում հարյուրավոր հոդվածներ են գրվել այդ մասին: Բաքվում լույս տեսնող «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության» («Սպեցիֆիկներ») օրգան «Բանւոր» լրագրի «Երեք օրեայ քաղաքացիական կռիւը Բագւում» վերտառությամբ առաջնորդողում ասվում է. «Փաստերը գալիս են լուսաբանելու, որ այդ ամբողջ շարժումը ղեկավարում էր մուսուլմանական «Մուսավաթ», իրեն յեղափոխական, դեմոկրատական և նոյն իսկ սոցիալիստական յորջորջող մի կուսակցութիւն, որը իրօք թուրք բեգական ու խանական շահերի պաշտպան է հանդիսանում, մուսուլման խաւար մասաներին պան-իսլամական ու նեղ ազգայնական խաբուսիկ լօզունգներով իր յետևից տանելով»[1754]:

Բախումը Մուսավաթի և խորհրդային իշխանության միջև անխուսափելի էր դառնում: Առիթը հայտնի նավթարդյունաբերող, միճաճարուստ Զեյնալ-Աբդին Թաղիևի 23-ամյա որդու՝ Մահմեդ Թաղիևի ինքնասպանությունն էր Լենքորանում և նրա դիակը «Էվելինա» շոգենավով 48 հոգուց բաղկացած թաթար զինված պահակախմբի կողմից Բաքու տեղափոխելը[1755]: Պահակախումբը զինա-

---

[1751] Մեջբերումն ըստ՝ Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., Երևան, 1997, էջ 157:

[1752] Նույն տեղում:

[1753] Տե՛ս **Борьян Б.**, Гражданская война в Баку 1918 г., ԲՀԱ, Երևան, 1974, № 1, էջ 20:

[1754] Երեք օրեայ քաղաքացիական կռիւը Բագւում, «Բանւոր», Բագու, մարտի 29, 1918, № 9:

[1755] Տե՛ս ՀՀՊՊԹ, ֆ. փաստաթղթային, ինվ. 1631:

թափվեց խորհրդային իշխանության կողմից՝ նրա ներկայացուցչին չեզոքարկվելու և կրակ բացելու համար[1756]: Զենքերը վերադարձնելու Մուսավաթի պահանջի մերժումը առաջ բերեց վերջինիս դժգոհությունը և առիթ տվեց նրան դիմելու սադրիչ գործողություններին: «...«Իվլինա» նավի միջադեպը,- գրում է Բ. Իշխանյանը,- և նրա առիթով տեղի ունեցած 3-4 օրուայ արիւնահեղ անցքերը Բագուում կատարելապէս մատնեցին «Մուսաֆաթ» կուսակցութեան գաղտնի պատրաստութիւնների ամբողջ ծրագիրը»[1757]:

Երկու կողմերին հաշտեցնելու և միջադեպը հարթելու համար Հայոց Ազգային խորհուրդը առաջարկեց՝ որպես բռնագրավված զենքի փոխհատուցում տալ իր զենքերը, սակայն Մուսավաթը կտրականապես մերժեց[1758]: Կանխազգալով դեպքերի վերահաս զարգացումների հետևանքները՝ Հայոց Ազգային խորհուրդը, Քաղաքային դումայի պատգամավորների հետ միասին միջոցներ ձեռք առավ մեղմելու երկու կողմերի միջև հասունացող լարվածությունը, սակայն ապարդյուն[1759]:

Մուսավաթի և խորհրդային իշխանության միջև մարտի 17-ին (նոր տոմարով՝ 30-ին) ժամը 6-ին, պետք է տևղի ունենային բանակցությունները: «Սակայն, չսպասելով դրան,- վկայում է դեպքերի ականատես գեներալ-մայոր Իվան Բաղրամովը,- իրենք՝ թաթարները, նույն օրը՝ ժամը 5-ին, սկսեցին թշնամական գործողությունները»[1760]: «Վայրի դիվիզիայի» զինվորներից բացի, Բաքվի գեմ գրոհում էին նաև շրջակա գյուղերից հավաքված մեծ թվով կովկասյան թաթար հրոսակներ[1761]: «Մինչեւ պատերազմական գործողութիւնների սկսելը,- գրում էր «Արեւը»,- Մուսաւաթը հարաբերութիւնների մէջ է եղել շրջակա գյուղերի հետ և սպասել է նրանց կողմից պատերազմական ակտիվ գործողութիւնների»[1762]: Մուսավաթականները, օգտագործելով բոլշևիկյան զորքի կազմում հայ զինվորների առկայության փաստը, իշխանությունը գավթելու նպատակով բարձրացրած խռովությանը միտումնավոր կերպով տվեցին ազգային բնույթ: Պրովոկացիոն նպատակով թաթար զանգվածի մեջ մուսավաթ գործակալները թերթերի էջերից և բազմամարդ միտինգներում գրգռում

[1756] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 104:
[1757] Իշխանեան Բ., Հակայեղափոխական շարժումը Անդրկովկասում, էջ 187-188:
[1758] «Արեւ», Բագու, 1918, մարտի 25 (ապրիլի 7), № 61:
[1759] «Արեւ», Բագու, 1918, մարտի 25 (ապրիլի 7), № 61:
[1760] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 104:
[1761] Տե՛ս Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., էջ 165:
[1762] Տե՛ս «Արեւ», Բագու, 1918, մարտի 25 (ապրիլի 7), № 61:

էին ամբոխը հայերի դեմ: Նրանց կողմից տարածվեցին այն ստահոդ լուրերը, թե իբր «բոլշևիզմը միայն դիմակ է և Բաքվի շարժումը կրում է զուտ ազգային հակաթուրքական բնույթ»[1763]: Ստեղծված իրավիճակում, Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը մարտի 17-ի հրեկոյան հրավիրեց արտակարգ նիստ, ուր որոշվեց. «ա) ազդել երկու կողմերուն վրայ ալ, որպէսզի նոր բախումներ տեղի չունենան, բ) յայտնել երկու կողմերուն նաև, որ եթէ անոնք վերսկսին կռիւը, Հայոց Ազգային Խորհուրդը պիտի չօգնէ անոնցմէ որեւէ մէկուն, գ) ձեռք առնել ինքնապաշտպանութեան բոլոր միջոցները, որպէսզի, կռուի վերսկսման պարագային, հայ բնակչութիւնը չտուժէ»[1764]: Միաժամանակ հաշվի առնելով հայերի նկատմամբ Մուսավաթի բացահայտ թշնամական վերաբերմունքը, կանխագգալով, որ նրա հրահրմամբ կիրագործվեին հայերի նոր կոտորածներ, Հայոց Ազգային խորհուրդը Գերագույն զինվորական մարմնի (Պաշտպանութեան Հայկական չտաբ) հետ ձեռք առավ ինքնապաշտպանական միջոցներ[1765]: Շտաբը, որը ղեկավարում էին գեներալներ Իվան Բաղրամովը և Հակոբ Բագրատունին[1766], փոխգնդապետ Հարութիւնեանին նշանակեց Բաքվի պաշտպանութեան պետ, շտաբի պետն էր շտաբկապիտան Սարգիս Մուսայելյանը[1767]: Հայերի պաշտպանութեան ուժերը կազմում էին 2-րդ պահեստային գունդը՝ բաղկացած 4 վաշտից (մոտ 700 հոգի), Համազասպ Սրվանձտյանցի[1768] առանձին գումարտակը (մոտ 800 հոգի), ՀՅ Դաշնակցութեան ջոկատը (մոտ 500 հոգի), 4 թնդանոթ, 5 գնդացիր՝ եղիշե Պահլավունու[1769] և Իսրայել

[1763] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 96:

[1764] Դարբինեան Ռ., նշվ. աշխ., էջ 240:

[1765] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 12-13:

[1766] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 105, թ. 3, տե՛ս նաև ֆ. 278, ց. 1, գ. 2, թ. 43, տե՛ս նաև «Ժողովուրդ», Թիֆլիս, 1918, դեկտեմբերի 18, № 48: Հայազգի գեներալ-մայոր Հակոբ Գերասիմի Բագրատունու կյանքի և գործունեության մասին մանրամասն տե՛ս Аветисян Г., Генерал Акоп Багратуни (1879-1943), ՊԲՀ, Երևան, 1997, № 1, էջ 41-56:

[1767] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 13-14, տե՛ս նաև Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., էջ 166:

[1768] Ազգային ազատագրական շարժման գործիչ Համազասպ Խաչատուրի Սրվանձտյանցը (1873-1921 թթ.) հոգևոր և հասարակական գործիչ, բանահավաք Գարեգին եպս. Սրվանձտյանցի եղբոր որդին էր (տե՛ս Լազեան Գ., Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Գահիրէ, 1949, էջ 71-75):

[1769] Ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ Եղիշե Պահլավունին ծնվել է 1884 թ. օգոստոսի 1-ին Իգդիրում: Զինվորական դպրոցն ավարտելուց հետո ռուսական զինվորական իշխանության կարգադրությամբ ծառայության է

Տեր-Ղազարյանի[1770] *զեկավարու-թյամբ: Բաղաքը բաժանվեց պաշտպանական 6 մասերի: Տեղամասի պետերն էին՝ Եղիշե Պահլավունին, շտաբս-կապիտաններ Արամ Դովլաթյանը, Ամիրջան Նուխեցին, պրուչիկներ Կրիկորյանը, Գրիգորյանցը և Սերգո Մանուչարյանը (Համազասպ Սրվանձտյանցի օգնականը)*[1771]:

Խորհրդային իշխանության և Մուսավաթի միջև եռօրյա մարտերն ավարտվեցին ապրիլի 1-ին՝ վերջիններիս պարտությամբ: Երկու կողմերից զոհվեց 3000-ից ավելի մարդ[1772]: *Զոհերի ու վիրավորների մեջ մեծ թիվ էին կազմում նաև բոլշևիկյան զորքի կազմում գտնվող հայ զինվորները, ինչպես նաև պատահական դնդակներից զոհված հայ քաղաքացիները: Բաքվի Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ա. Գյուլխանդանյանի հանձնարարությամբ Բաքվի հայոց եկեղեցիների ծխատեր քահանաների միջոցով կատարած հաշվառումներից երևում է, որ սպանվածներն ու վիրավորվածները հիմնականում Գանձակի, Շուշիի, Զանգեզուրի, Նուխիի, Գյոքչայի և Շամախու գավառներից էին*[1773]: *Ոչ լրիվ տվյալներով՝ միայն Մկրտիչ քհն. Տեր-Սահակյանը հոդին էր հանձնել 21, Ներսես քհն. Կարապետյանը՝ 20, Մկրտիչ քհն. Մալխասյանցը՝ 6, Ընձակ քհն. Մովսիսյանցը՝ 2, Ներսես քհն. Բյուրքչյանը՝ 5, Արշավիր քհն. Աճեմյանը՝ 11, Մարտիրոս քհն. Տեր-Նահապետյանցը՝ 3 հոգու*[1774]: *Հայերի կողմից զոհվածների մեջ էր նաև Հայոց Ազգային խորհրդի կողմից հաշտության առաքելությամբ մուսավաթականների մոտ*

ուղարկվում Լեհաստան: Առաջին աշխարհամարտի տարիներին կռվում է Անդրանիկի, ապա՝ Հ. Արղությանի կամավորական ջոկատների շարքերում: 1918 թ. վերադառնում է Բաքու և ակտիվորեն մասնակցում քաղաքի ինքնապաշտպանական մարտերին (տե՛ս Եղիշէ Պահլաւունի, նշվ. աշխ., էջ 38-39):

[1770] Ի. Տեր-Ղազարյանը ծնվել է 1889 թ. Ղարաբիլիսա գյուղում (այժմ՝ Սիսիան քաղաք): 1910 թ. ավարտում է Շուշու թեմական դպրոցը և զորակոչվում բանակ: 1917 թ. ավարտում է Կիևի առևտրական ինստիտուտի տնտեսագիտական ֆակուլտետը և նույն թվականի սեպտեմբերին վերադառնում Բաքու: Զոհվել է 1918 թ. հուլիսի 5-ին, Ելիզավետպոլի ճակատում, Մյուսուլի երկաթուղային կայարանի մոտ (տե՛ս «Бакинский рабочий», Баку, 1918, 7 июля, № 131, տե՛ս նաև Խոտավերդյան Բ., Նա զոհվեց հեղափոխության բարիկադների վրա (Իսրայել Ղ. Տեր-Ղազարյան), ԲՀԱ, Երևան, 1980, № 2, էջ 77-86):

[1771] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 13-14, տե՛ս նաև Եղիշէ Պահլաւունի, նշվ. աշխ., 93:

[1772] Տե՛ս Շահումյան Ստ., ԵԼԺ, հ. 4 (1917 հոկտեմբեր-1918 մայիս), Երևան, 1978, էջ 200-201, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 117, թ. 2:

[1773] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 330, թ. 1-19:

[1774] Տե՛ս նույն տեղում, թ. 4, 6-7, 8-9, 11, 13, 15, 19:

գնացած հասարակական-քաղաքական անվանի գործիչ Լևոն Աթաբեկյանը[1775]*:*

Հակառակ Մուսավաթի հրահրած ազգամիջյան բախումներին՝ նոյեմբեր ամսվա ընթացքում Հայոց Ազգային խորհրդի և Հայկական պաշտպանության շտաբի, մասնավորապես Համազասպ Սրվանձտյանցի 200 հոգանոց փորձառու և կարգապահ զինվորների ջանքերով փրկվեց 14000[1776] *կովկասյան թաթարների կյանք*[1777]*, որոնց հայերը պատսպարել էին իրենց տներում ու հասարակական շինություններով՝ տրամադրելով նրանց սնունդ և բժշկասանիտարական անհրաժեշտ օգնություն*[1778]*: Այդ աշխատանքներն իրականացնում էր հատուկ նպատակով ստեղծված խնամատարության հանձնաժողովը՝ Դ. Անանունի գլխավորությամբ*[1779]*: Խաղաղության հաստատումից հետո Հայոց Ազգային խորհուրդն իր խնամակալության ներքո գտնվող բոլոր մահմեդականներին պահապանների ուղեկցությամբ փոխադրից քաղաքի մահմեդական մասը*[1780]*: Այդ*

[1775] Տե՛ս նույն տեղում, թ. 7, տե՛ս նաև Լեւոն Աթաբէկեանի յիշատակին: Մահուան տարեդարձի առթիւ, 1919 թ. մարտ, Շուշի, 1919:

[1776] Արխիվային այլ տվյալներով, հայ բնակչությունն ապաստան էր տվել ավելի քան 20000 կովկասյան թաթարների: Նրանցից 13000-ին տեղավորել էին հայապատկան հասարակական շինություններում, իսկ 7000-ին՝ մասնավոր բնակարաններում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 117, թ. 2, տե՛ս նաև **Байков Б.**, նշվ. աշխ., стр. 122):

[1777] Փրկվածների մեջ էր նաև Մուսավաթի ղեկավար գործիչներից Բեհբուդ Խան-Ջիվանշիրը և նրա կինը, որոնց խնդրանքով իր բնակարանում շուրջ երկու շաբաթ պատսպարել էր Ստ. Շահումյանը (տե՛ս **Дубинский-Мухадзе И.**, Шаумян, Москва, 1968, стр. 235):

[1778] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 99, տե՛ս նաև գ. 26, թ. 23, տե՛ս նաև ֆ. 4033, ց. 4, գ. 355, թ. 31, տե՛ս նաև «Աշակ», 1918, ապրիլի 27, № 66: Կանխամտածված ձևով անտեսելով պատմական այս իրողությունները՝ աղրբեջանցի որոշ պատմաբաններ իրենց վերջին շրջանի հրապարակած «աշխատություններում» 1918 թ. մարտյան իրադարձություններ և հարակից մի քանի այլ հարցեր «նորովի լուսաբանելու» ձախողակ փորձեր են կատարում: Անտեսելով Բաքվում 1918 թ. մարտ-ապրիլ ամիսներին տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունների վերաբերյալ բավական մեծ թիվ կազմող պատմական հավաստի արխիվային փաստերն ու վկայությունները, միտումնավոր կերպով լռության են մատնում մարտյան դեպքերի իրական կազմակերպչի՝ Մուսավաթի հրահրիչ և սադրիչ գործողությունները և փորձում հիմնական պատասխանատու համարել բոլշևիկներին և դաշնակցականներին, զուգահեռաբար, սակայն, փաստորեն պաշտպանության տակ առնում բոլշևիկյան կուսակցության անդամ Ն. Նարիմանովին (տե՛ս **Мустафа-Заде Р.**, Две республики: Азербайджано-российские отношения в 1918-1922 гг., Москва, 2006, стр. 28-29; **Мамедов И., Мусаев Т.**, Армяно-азербайджанский конфликт: История, право, народничество, Тула, 2006, стр. 27).

[1779] Տե՛ս Դաւթիենեան Ռ., նշվ. աշխ., էջ 246:

[1780] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 2-3:

առիթով՝ առևտրաարդյունաբերող, կովկասյան թաթարների շրջանում մեծ հեղինակություն վայելող Հաջի Զեյնալ-Աբդին Թաղիևը մամուլի միջոցով հայերին հայտնեց առանձնահատուկ շնորհակալություն[1781]*: Թաղիևը Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ Ե. Գեդեչկորիին և Այսրկովկասի Ազգային խորհուրդներին հղած հեռագրում նշում էր. «Բագվում հանգստություն է տիրում: Երկրի բարօրության օգտին ես անձամբ իմ քաղաքացիական պարտքն եմ համարում հայտարարելու, որ Բաքվի անցքերը հայ-թաթարական ընդհարման բնույթ չէին կրում: Կռիվների ամբողջ ընթացքում թուրքերը ձեռք չէին տալիս թրքական թաղամասերում և տներում ապրող հայերին: Իսկ հայկական զորամասերը փրկեցին և ապաստան տվին ավելի քան 14000 մահմեդականների, որոնց հետո վերադարձրին պարսից հյուպատոսի միջոցով»*[1782]*:*

Մուսավաթի դեմ տարած հաղթանակից հետո ամրապնդվեց խորհրդային իշխանությունը Բաքվի նահանգում, և ապրիլի 12-ին (25-ին) Բաքվում կազմավորվեց ժողկոմխորհը՝ Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհի կողմից 1917 թ. դեկտեմբերի 29 (16)-ին Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար նշանակված Ստ. Շահումյանի գլխավորությամբ, որով իշխանությունը վերջնականապես անցավ բոլշևիկների ձեռքը: Այդ իշխանությունը հայտնի է նաև «Բաքվի Կոմունա» անունով: Ժողկոմխորհում պատասխանատու պաշտոններ են զբաղեցրել նաև այլ հայ գործիչներ: Ռազմածովային կոմիսարն էր Գ. Ղորղանյանը (Կորգանով), արդարադատության՝ Ա. Կարինյանը, արտակարգ հանձնաժողովի նախագահն էր՝ Ս. Տեր-Գաբրիելյանը[1783]*: Լուսավորության ժողկոմատի դպրոցական բաժնի վարիչն էր՝ հետագայում ականավոր պատմաբան, հասարակական-քաղաքական գործիչ Աշոտ Հովհաննիսյանը*[1784]*:*

Ապրիլի 26-ին Բաքվում տեղի ունեցած Զինվորական հեղափոխական կոմիտեի և Հայոց Ազգային խորհրդի համատեղ նիստի որոշմամբ՝ հայկական զորամասերը վերակազմավորվեցին որպես կարմիր բանակ[1785]*: Այդ համագործակցությանը ճիշտ գնահատական է տվել Ռ. Դարբինյանը (Արտ. Զիլինգարյան)՝ գրելով. «Հայկական զօրքերը, որոնք իրենց ճնշող մեծամասնութեամբ դաշնակցականներ էին, հարկաւ, ոչ մի գաղափարական հակում չունէին դեպի բոլշևիզմը: Բայց նրանք առանց որևէ դժուարութեան ենթարկուեցին բա-*

[1781] Տե՛ս նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 41, տե՛ս նաև «Մշակ», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 26, № 401:

[1782] «Հորիզոն», Թիֆլիս, 1918, մարտի 29, № 66:

[1783] Տե՛ս Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 499:

[1784] Տե՛ս Հովհաննիսյան Ա., Հուշեր և ընութագրումներ, Երևան, 1969, էջ 5:

[1785] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 321, ց. 1, գ. 1, թ. 40, տե՛ս նաև ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 14, 47:

դուխ սովետական նոր իշխանութեան...: Ինչու՞, որովհետև հայ ժողովրդական զանգուածների գիտակցութեան մէջ բոլշևիկեան իշխանութիւնը այն ժամանակ Բագուում կոչուած էր կատարելու այն մեծ գործը, որը կատարում էին թէ՛ Հ. Յ. Դաշնակցութիւնը և թէ Հայոց Ազգային խորհուրդը: Այդ մեծ գործը կռիւն էր թուրքական վտանգի դէմ»[1786]: Բ. Բայկովը ևս վերոնշյալ դրդապատճառներով է հիմնավորում այդ համագործակցությունը: «Որքան ավելի էր դրսևորվում թաթարների անջատողականությունը,- գրում է նա,- հայկական լայն զանգվածներում այնքան ավելի էր գերակշռում ռուսական կողմնորոշումը»[1787]: Այսպիսով՝ հայկական զորամիավորումները, որոնց թիվը հասնում էր 13000-ի[1788], կազմեցին նորաստեղծ կովկասյան կարմիր բանակի միջուկը և իրենց մեծ դերակատարությունն ունեցան Բաքվի 1918 թ. հերոսական պաշտպանության գործում:

Գանձակից հրահրվող թուրք-թաթարական հետագա խռովությունները կանխելու նպատակով Բաքվի Խորհրդային իշխանությունը Հայոց Ազգային խորհրդի առաջարկությամբ նպատակադրվեց զորքերը շարժել Գանձակի ուղղությամբ, ջախջախել այնտեղ հավաքված մահմեդական զորամիավորումներին և թույլ չտալ նրանց միանալ Բաքու արշավող թուրքական զորքերին[1789]: Հայկական կողմի գլխավոր խնդիրն էր. բացել Բաքու-Թիֆլիս ճանապարհը և մեկընդմիշտ ազատել Արեշի, Նուխիի, Գյոքչայի և Շամախու գավառների հայ բնակչությանը թուրք-թաթարական հալածանքներից, որից հետո անցնել Հայաստան և կազմակերպված ձևով օգնության հասնել թուրք գավթիչների դեմ օրհասական կռիվ մղող հայ ժողովրդին[1790]: «Իրադարձությունները Բաքվում» վերտառությամբ վավերագրի հեղինակ փոխգնդապետ Հարությունովը անդրադառնալով այդ օրերին Գանձակի դեմ նախապատրաստվող արշավանքին, գրում էր. «Այդ ժամանակ տվյալները ստացանք, որ Հայաստանում թուրքերը նեղում են մեր զորքերին, որոնք հետ են քաշվում դեպի հյուսիս, հետո լուրեր կան, որ Եվլախից հարավ կան հայկական զորամասեր կամ զինված ազգաբնակչություն և մենք Հայոց

[1786] Դարբինեան Ռ., Բոլշևիզմը և Հայաստանը, Իզմիր, 1922, էջ 163:
[1787] Байков Б., նշվ. աշխ., стр. 116.
[1788] Տե՛ս Мнацаканян А., К истории Кавказской Красной армии (1918 г.), ԼՀԳ, Երևան, 1968, № 1, էջ 10:
[1789] Տե՛ս Փիրումեան Ռ., Հայաստանը Հ.Յ.Դ.-բոլշևիկ յարաբերութիւնների ոլորտում (1917-1921), Երեւան, 1997, էջ 116:
[1790] Տե՛ս Մելիք-Օշականյան Ս., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պոսթըն, 1925, Գ տարի, հունիս, № 8, էջ 112:

Ազգային խորհրդի անդամ Ռոստոմ Զորյանի նախաձեռնությամբ առաջարկեցինք բոլշևիկյան կառավարությանը կազմակերպելու կանոնավոր ջոկատ Ելիզավետպոլի ուղղությամբ գործելու համար: Բոլշևիկները հաճույքով համաձայնեցին, նկատի առնելով, որ մենք պետք է ջախջախենք թուրք հակահեղափոխականներին, որոնց էմիսարներն այդ ժամանակ կազմակերպել էին Ելիզավետպոլի թաթարներին Բաքվի դեմ մեծ ուժերով արշավելու համար»[1791]: Այդ նպատակի իրականացման համար, Բաքվի Հայոց Ազգային խորհրդի և բոլշևիկյան կառավարության կողմից մշակվեց գործողության լայն ծրագիր: Արշավանքի համար կազմավորվեց չուրջ 6-7 հազարանոց մի զորամաս Համազասպ Սրվանձտյանցի և 3000-ոց ջոկատ Ղազարյանի հրամանատարությամբ[1792]: Ըստ դեներալ-մայոր Ի. Բաղրամովի «Ջոկատը գնալի Ելիզավետպոլ պետք է դուրս գար Զատկի երկրորդ օրը: Սակայն այդ ծրագիրը չհաջողվեց: Տեղեկություն ստացվեց զինված չեչենների հարձակում գործելու մասին, որոնք արգելակում էին Հյուսիսային Կովկասից գնացքների ժամանումը: Հայկական ջոկատը ուղարկվեց Պետրովսկ»[1793]: Դրանից բացի, Գանձակի դեմ արշավանքը հիմնականում կանխվեց Վ. Լենինի ցուցումով: Այսպես 1918 թ. մայիսի 24-ին Ս. Տեր-Գաբրիելյանի միջոցով Ստ. Շահումյանին Բաքու ուղարկված նամակում Վ. Լենինը թուրքական զորքերի դեմ կռվելու համար առաջարկում էր դաշնակցել վրացիների հետ և այդ նպատակով Ստ. Շահումյանին խորհուրդ էր տալիս բանակցություններ մեջ մտնել Ն. Ժորդանիայի հետ: Հակառակ դեպքում, եթե վրացիները մերժեին աջակցել Բաքվի խորհրդին, Լենինն առաջարկում էր հետաձգել Գանձակի դեմ ռազմական գործողությունների սկսելը. «...խորհուրդ կտայի փորձել բոլոր ստեղծել Ժորդանիայի հետ: Եթե հնարավոր չէ, պետք է խուսանավել և հետաձգել լուծումը (նկատի ունի Գանձակի դեմ ռազմական գործողությունների հետաձգումը - Գ. Ս.), մինչև որ ռազմական տեսակետից ամրանաք»[1794]: Թեև Ստ. Շահումյանն առաջնորդվեց Վ. Լենինի ցուցումով և բանակցությունների մեջ մտավ Ն. Ժորդանիայի հետ, սակայն մենշևիկների հետ բոլոր բանակցությունները վերջացան

[1791] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 14:
[1792] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 70:
[1793] Մեջբերումն ըստ՝ Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., էջ 171:
[1794] «Արեւ», Բագու, 1918, սեպտեմբերի 10, № 179: Հմմ. Խուրշուդյան Լ., Ստեփան Շահումյան (պետական և պարտիական գործունեությունը 1917-1918 թթ.), Երևան, 1959, էջ 313:

անարդյունք. Վրաստանն արդեն օկուպացվել էր Թուրքիայի դաշնակից Գերմանիայի կողմից[1795]: Ըստ դեպքերի հետագա զարգացման, երբ արդեն հուլիսին Գանձակի ռազմաճակատում թուրքական զորքերի դեմ ընթանում էին թեժ մարտեր, Ստ. Շահումյանը, հունիսի 23-ի նամակով Վ. Լենինին իրազեկելով Կոմունայի զորքի ծանր դրության մասին, ակնարկելով մարտյան իրադարձություններից հետո Գանձակի գրավման անհրաժեշտությունը, գրում էր. «Տեր-Գաբրիելյանի ինձ ըերած փոքրիկ նամակում Դուք գրում եք, որ, նկատի ունենալով մեր դրության դժվարությունները միջազգային տեսակետից, ավելի լավ է սպասել՝ մինչև ամրապնդվենք: Մենք դրան սպասում էինք, իհարկե, և ամրանում էինք, բայց կարծում ենմ, որ ավելի լավ կլիներ, եթե մենք ավելի փոքր ուժերով այնտեղ (իմա՝ Գանձակ - Գ. Ս.) չարժվեինք Բաքվի քաղաքացիական պատերազմից անմիջապես հետո: Այն ժամանակ դրությունը անհամեմատ ավելի պարզ էր և մենք կկանխեինք այն ամենը, ինչ կատարվեց Բաթումում և Բաթումի բանակցություններից հետո»[1796]: Կիսելով Ստ. Շահումյանի տեսակետը՝ նշենք, որ մարտյան իրադարձություններից հետո հնարավոր էր թեկուզև փոքրաթիվ ուժերով չարժվել առաջ, գրավել Գանձակը, ջախջախել այնտեղ կուտակված թուրք-թաթարական ուժերին, ապա բացել երկաթուղային ճանապարհը թուրքերի դեմ կռվող նոր կազմավորված Հայկական կորպուսին օգնության հասնելու համար[1797]: Դրանով իսկ կկանխվեր այն աղետը, որը հետագայում կրեց Գանձակի, Արեշի, Նուխիի, Գյոքչայի, Շամախիի գավառների և ի վերջո Բաքվի հայությունը թուրքական զորքերի արշավանքի ընթացքում:

[1795] Տե՛ս նույն տեղում, էջ 312:
[1796] Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հ. 5, էջ 147:
[1797] Տե՛ս Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., էջ 169:

Բ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԲԱՔՈՒ ԵՎ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ (1918 Թ. ՄԱՅԻՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐ)

Բաքվի և հարակից շրջանների հայության 1918 թ. պաշտպանությունը հայ ժողովրդի պատմության թեև ողբերգական, բայց հիրավի փառապանծ էջերից է: Վերագրավելով Արևմտյան Հայաստանը՝ թուրքական զորքերը արշավեցին Այսրկովկաս: Թուրքական 3-րդ և 4-րդ զորախմբերի՝ 1918 թ. մայիսին Սարդարապատի, Բաշ-Ապարանի մարտերում ունեցած անհաջողություններից և Ղարաքիլիսայի գրավումից հետո 2-րդ զորախումբը Ջաջուռ-Համամլու-Ղարաքիլիսա-Դիլիջան-Ղազախ-Ելիզավետպոլ գծով արշավեց Բաքու:

Կովկաս թուրքերի ներխուժելու հետևանքով փաստորեն խախտվում էին Բրեստ-Լիտովսկի պայմանագրով հաստատված սահմանները[1798]: Թուրքիայի կողմից Կովկասի, մասնավորապես՝ Բաքվի զավթման խնդրում մարտավարական հակասություններ գոյություն ունեին նրա և դաշնակից կայզերական Գերմանիայի հետ: Թեև Բաքվի գրավումը Գերմանիայի կարևոր ռազմավարական նպատակներից մեկն էր, այդուհանդերձ, խուսափելով ռուս-գերմանական հարաբերությունների սրումից և հնարավոր պատերազմական գործողություններից՝ Բեռլինը դեմ էր թուրքերի առաջխաղացմանը: Գերմանիայի պետական քարտուղար Ռիխարդ ֆոն Կյուլմանը Գերմանիայի արտաքին գործոց նախարարության կովկասյան հարցին նվիրված 1918 թ. հունիսի 4-ի իր զեկույցում նշել է. «...մենք հետաքրքրված ենք նրանում, որ խանգարենք Բաքվի դեմ թուրքերի գործողությունների իրականացումը: Բաքվի գրավումը կարող է ձեռնարկվել միայն Մոսկվայի համաձայնությամբ և միայն գերմանական զորքերով»[1799]: 1918 թ. մայիսի 15-ի հեռագրում գերմանական բանակի գլխավոր շտաբի պետ, գեներալ Լ. Լյուդենդորֆը ֆոն Զեկտին առաջարկում էր «չտապ կերպով էնվեր փաշային հետ պահել այն պահանջներից, որոնք դուրս են Բրեստ-Լիտովսկի պայմանագրով սահմանված տարածքների շրջանակներից... ես չեմ հանդուրժի, որ թուրք պատասխանատու անձանց բացահայտ ուխտա-

---

[1798] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), կազմողներ՝ Ջ. Կիրակոսյան, Ռ. Սահակյան, Երևան, 1972, էջ 445:

[1799] Армянский вопрос и геноцид армян в Турции 1913-1919: Материалы политархива МИД кайзеровской Германии (сборник), сост. ответств. ред. В. Микаелян, Ереван, 1995, стр. 521.

դրուժ վարքագծի պատճառով առաջանա Ռուսաստանի դեմ նոր պատերազմի վտանգ»[1800]: Բաքվի դեմ սպասվող արշավանքը կանխելու նպատակով Վ. Լենինը նույնիսկ համաձայնեց գերմանացիներին տրամադրել նավթի մի մասը, այն հաշվով, որ նրանք կանգնեցնեն թուրքերի հարձակումը Բաքվի վրա: Վ. Լենինը 1918 թ. հուլիսի 7-ի դիշերը Ի. Ստալինին՝ Ցարիցին հղված հեռագրում հրահանգում էր տեղյակ պահել Ստ. Շահումյանին՝ Բեռլինում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Ա. Իոֆեին գերմանացիների արած այն առաջարկի մասին, որ «...գերմանացիները կհամաձայնեին կասեցնելու թուրքերի հարձակումը Բաքվի վրա, եթե մենք երաշխավորեինք գերմանացիներին նավթի մի մասը: Իհարկե, մենք կհամաձայնենք»[1801]: Մյուս կողմից՝ Գերմանիան, ռազմավարական նկատառումներից ելնելով, մտահոգված էր պատերազմում իր դաշնակցի՝ Թուրքիայի կողմից Բաքվի նավթին չուտափույթ տիրանալու հեռանկարով, որը գերմանացիները ցանկանում էին օգտագործել իրենց համար՝ դեպի Բաթում և Փոթի նավահանգիստներ ձգվող երկաթուղու միջոցով[1802]: Գեներալ Է. Լյուդենդորֆը Արևմտյան ռազմաճակատում գերմանական բանակների պարտությունը 1918 թ. ամռանը և աշնանը բացատրում էր նրանով, որ թուրքական բանակը չկարողացավ ժամանակին գրավել Բաքուն[1803]: Գերմանացիների երկակի խաղն ակնհայտ է դառնում Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան մարկգրաֆ Յոհան ֆոն Պալավիչինիի՝ 1918 թ. մայիսի 30-ին Վիեննա հեռագրած զեկուցագրից. «...Մեծ վեզիրն (Թալեաթ փաշան - Գ. Ս.) ավելացրեց, որ կոմս Բեռնսդորֆն իր կողմից կտրուկ հայտարարել է, որ համաձայն է անդրկովկասյան կառավարությանը ներկայացրած վերջնագրի հետ, եւ որ գերմանական բանակի գլխավոր հրամանատարությունը հայտարարել է, թե համաձայն է ճշտորեն որոշված «սահմաններին վերանայման» հետ, ըստ որի՝ մարզի մի հատված՝ մինչեւ Ջուլֆա, Թուրքիային է տրվում: Նրանք ասացին որ թուրքական բանակի առաջխաղացումը եւս տեղի է ունեցել (գերմանական) բանակի գլխավոր հրամանատարության համաձայնութ-

---

[1800] Սարգսյան Հ., Բրեստից մինչև Մուդրոս (Հայաստանի միջազգային-իրավական և քաղաքական դրության մի քանի հարցեր), Երևան, 1989, էջ 224:

[1801] Документы внешней политики СССР (այսուհետ՝ ДВП СССР), т. I, Москва, 1959, стр. 381.

[1802] Տե՛ս **Турнэс Р.**, Фош и победа союзников 1918 г. (перевод с французского), Москва, 1938, стр. 179.

[1803] Տե՛ս **Людендорф Э.**, Мои воспоминания о войне 1914-1918 гг., т. II, Москва, 1924, стр. 189.

յամբ եւ նուիրիսկ նրա հրահանգով (ընդգծումը – Գ. Ս.)»[1804]: Այդ պատճառով Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը չխախտելու՝ Թուրքիային ուղղված Գերմանիայի չահախնդիր պահանջները, որքան էլ որ դրանք բխում էին սեփական ռազմավարական նպատակներից, այդպես էլ արդյունք չտվեցին, և Գերմանիան այդպես էլ չկատարեց իր ստանձնած պարտավորությունը՝ կանխել Թուրք հրոսակների արշավանքը Բաքու[1805]:

Միաժամանակ փաստերը վկայում են, որ Գերմանիան ինքն էր ցանկանում տիրանալ Կովկասի բնական հարստություններին և մեծապես չահագրգռված էր Բաքվի նավթային հարստություններով: Գերմանիան դեմ էր Այսրկովկասում Թուրքիայի դիրքերի այդչափ ուժեղացմանը, որը սահմանափակում էր նրա ազդեցությունն այդ տարածաշրջանում: Հետևապես Գերմանիան կգերադասեր, որ Թուրքական բանակը հեռանար այդ տարածաշրջանից և կռվեր անգլիացիների դեմ, որոնք առաջանում էին դեպի Բաղդադ[1806]: Գերմանիայի արտաքին գործոց նախարարությունը հետևյալ կարծիքն էր հայտնել. «Մեր չահերի դեմ կլինի, եթե կենտրոնական Ասիայի եւ Պարսկաստանի մատույցները հայտնվեն բացառապես Թուրքերի ձեռքին, եւ մենք այնտեղ կախված լիննենք օսմանցիների բարի կամքից: Մենք պատերազմի ընթացքում միլիոններ ենք ծախսել մեր հանդեպ բարեկամաբար տրամադրված կովկասյան պետություն ստեղծելու եւ դրանով մեզ համար դեպի կենտրոնական Ասիա կամուրջ կառուցելու համար: Այդ բոլորը իզուր կլինի, եթե Թուրքերը գրավեն Բաթումն ու Այսրկովկասը»[1807]:

Չնայած Միջագետքում Թուրքական բանակի կրած անհաջողություններին՝ Էնվեր փաշան ամենևին էլ հակված չէր վերանայելու Կովկասի նվաճման իր պլանը: Արշավելով Բաքվի դեմ՝ Թուրքիան ձգտում էր տիրանալ Բաքվի նավթին, ապա անցնել Հյուսիսային Կովկաս և, ի վերջո, Միջին Ասիա ու իրականացնել համաթուր-

---

[1804] Օհանջանյան Ա., 1915 թվական: Անհերքելի վկայություններ, էջ 143, տե՛ս նաև նույնի՝ Ավստրո-Հունգարիայի արխիվների փաստաթղթերը Հայկական հարցի և հայոց ցեղասպանության մասին, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», գիտական աշխատություններ, պր. 5, Երևան, 2002, էջ 143:

[1805] Տե՛ս **Миллер А.**, Краткая история Турции, Москва,1948, стр. 163-164.

[1806] Տե՛ս Շիրինյան Լ., Հայ զինական ուժը Առաջին աշխարհամարտի վերջափուլում, Երևան, 2010, էջ 23:

[1807] Օհանջանյան Ա., 1915 թվական. Անհերքելի վկայություններ, էջ 143:

քականութեան ծրագիրը՝ «Մեծ Թուրանի» ստեղծումը: Երևանում 1918 թ. օգոստոսի 31-ին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության անդամների հետ հանդիպման ժամանակ, երիտթուրքական կառավարության արտաքին գործերի նախարար Խալիլ փաշան[1808], չթաքցնելով իրենց համաթուրքական ծրագրերը, ասել է հետևյալը. «Մենք թուրքերս, չենք մտածում որևէ ժողովուրդ ստրկացնելու մասին. սակայն մենք մի իդէայ ունենք և ուզում ենք այդ իդէան իրագործել: Մենք ցանկանում ենք վերականգնել մեր կապը մեր հին հայրենիքի-Թուրանի հետ, և դրա համար ուզում ենք, որ մեր երկու հայրենիքները իրար միացնող ճանապարհը ուրիշի տիրապետութեան տակ չլինի»[1809]: Համաթուրքական ծրագրերի վերաբերյալ ավելի որոշակի է Խալիլ փաշայի ևս մի արտահայտությունը: «Ի՞նչ հետաքրքրություն են ներկայացնում իրենցից արաբները,- ասել է նա,- կթողնենք անգլիացիներին անէծքած և թշվառ անապատները և կգնանք Թուրքեստան, և այնտեղ իմ փոքրիկ Ջինգիզի (Խալիլի ավագ որդին - Գ. Ս.) համար կստեղծեմ կայսրություն»[1810]: Երիտթուրքական կառավարության ռազմավարությունը դրսևորվեց նաև Բաթումի բանակցությունների ընթացքում՝ սահմանային խնդիրների քննարկման ժամանակ, երբ Էնվեր փաշան, չքողարկելով իրենց համաթուրքական ծրագրերը, հայկական կողմին հայտարարել էր. «Դուք կը տեսնէք որ ճակատագիրը կը քաշէ Թուրքիան արեւմուտքէն արեւելք. մենք հետացանք Պալքաններէն, կը հետանանք նաեւ. Ափրիկէէն, բայց մենք պէտք է տարածուինք դէպի արեւելք. հոն է մեր արիւնը, մեր կրօնքը ու լեզուն· Եւ ասիկա տարերային ձգողութիւն ունի. մեր եղբայրները Պաքու, Տաղստան, Թուրքիստան եւ Աւտրպէյճան են (իմա՝ իրանական Ադրբեջանական - Գ. Ս.): Մենք պէտք է ճամբայ ունենանք դէպի հոն: Եւ դուք՝ հայերդ, կանգնած էք մեր այդ ճամբուն վրայ: Պահանջելով Վանը՝ դուք կը փակէք մեր ճամբան դէպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջեւանն ու Զանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզի իջնելու Քուրի հովիտը եւ երթալու Պաքու: Կարսն ու Ախալքալաքը կը փակեն մեր ճամբան դէպի Ղազախ ու Գանձակ: Դուք պէտք է մէկ կողմ քաշուիք եւ մեզի ճամբայ տաք»[1811]: Համաթուրքականության ծրագրերն ակներև

[1808] Համաթուրանականության գաղափարախոսներից Խալիլ փաշան (1877-1939) Էնվեր փաշայի հորեղբայրն էր: Անդամակցել է «Թեշքիլաթ-ը մահուսե»-ին («Հատուկ կազմակերպություն»): Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական 6-րդ բանակի հրամանատարն էր: Մասնակցել է թուրքական զորքերի կողմից Բաքվի գրավմանը:

[1809] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 37, թ. 48:

[1810] Кемаль М., Путь новой Турции, т. I, Москва, 1928, стр. XXXVII.

[1811] Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, 1968, էջ 86:

են դառնում Բաքվի մատույցներում բռնագրավված թուրք սպայի 1918 թ. օգոստոսի 5-ին հորը գրած, բայց չուղարկված նամակի բովանդակությունից, որում ասվում էր. «Բաքուն գրավելուց հետո մենք այստեղ չենք մնալու, այլ պետք է շարժվենք դեպի Սամարղանդ և Տաշքենդ, դեպի մեր եղբայրները»[1812]:

Բաքվի դեմ արշավանքով փորձ էր արվում իրականություն դարձնել նաև համաթուրքականության ծրագրային փուլերից մեկը՝ «Օղուզական պետության» ստեղծումը, որը պետք է ընդգրկեր «Թուրքիան, Ադրբեջանը, Պարսկական Ադրբեջանը և Թուրքմենստանը»[1813]: «Օղուզական պետության» ստեղծման առաջին քայլը Սև ծովից մինչև Կասպից ծով (Բաթումից մինչև Բաքու) ընկած տարածքում Թուրքիայի խնամակալության ներքո «Մեծ Ադրբեջան» «նոր թուրքական պետության» ստեղծումն էր, որը պետք է կամրջեր Թուրքիան Կովկասի ու Միջին Ասիայի թյուրքախոս ժողովուրդների հետ[1814]: Ինչպես ասվում է Վրաստանում Հայաստանի Հանրապե-

---

[1812] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 70:

[1813] **Зареванд**, նշվ. աշխ., стр. 92.

[1814] «Մեծ Ադրբեջանը» «ընդգրկելու» էր Գանձակ-Ելիզավետպոլի և Բաքվի նահանգները, Երևանի նահանգի հարավային մասը, Կարսի և Բաթումի նահանգներն ամբողջությամբ, Վրաստանից՝ Թիֆլիսի նահանգի հարավային մասը և Դաղստանի հարավային մասի որոշ հատվածներ: Այսպիսով՝ Հայաստանից փորձ էր արվում խլել բովանդակ Արցախն ու Զանգեզուրը, Երևանի նահանգի Նախիջևանն ու Շարուրը, Երևանի և Էջմիածնի գավառները և Մասիսի ստորոտներով ամբողջ Սուրմալուն՝ մինչև Կարսի նահանգը: Այլ խոսքով՝ Հայաստանից զավթվելու էր 50520 քառ. կմ տարածք (տե՛ս Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Է, Թեհրան, 1982, էջ 183-184): Էնվեր փաշայի և Դաղստանի լեռնականների ներկայացուցիչ Թ. Չերմոևի կազմած քարտեզի հիման վրա «Մեծ Ադրբեջան» պետության ընդհանուր տարածքը կազմելու էր 140.000 քառ. կմ (տե՛ս Փ. Ժ. Լա Շրնէ, Ատրպէյճանի Հանրապետութիւնը, «Դրօշակ», 1992, ԻԲ տարի, փետրուար 12, № 22, էջ, 41-42): Ավելին՝ Ադրբեջանը Սև ծով ելք ունենալու նպատակով հավակնում էր բռնազավթելու ողջ Կարսի մարզը և Բաթումի մարզի որոշ տարածքներ: «Մեծ Ադրբեջանի» ժամանակին տպագրվել է թուրքական զորքերի կողմից Բաքվի գրավումից հետո՝ 1918 թ. սեպտեմբերի 22-ին, Ստամբուլում լույս տեսնող կառավարական «Ենի գյուն» («Նոր օր») պաշտոնաթերթում: Համաթուրանականության ոգով կազմված այս քարտեզում, փոխելով Այսրկովկասի ժողովրդագրական պատկերը, Հայաստանն իսպառ բացակայում էր, իսկ հայ բնակչության տեղաբաշխումը ներկայացված էր միայն մի քանի կղզյակների տեսքով: - Հակառակ դրան՝ «Ադրբեջանը» պատկերված էր որպես Կովկասի լայնատարած մի պետություն (տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 30, № 222, տե՛ս նաև Խուդինյան Գ., Մի ուշագրավ քարտեզ, «Երևանի համալսարան», Երևան, 1989, № 3, էջ 37-38): «Մեծ Ադրբեջանի» մեկ այլ քարտեզ հրատարակվել է նաև ԱԴՀ-ի Խնամատարարության նախարարության կողմից 1920 թ. հրատարակված «Адресъ-календарь Азербайджанской Республики на 1920-й г., на тюркскомъ и русскомъ языкахъ (1-ой годъ издания), под редакцией **А. И. Ставровскаго**, Баку, 1920»-ում (տարեգրքի վերջում՝ առանձին): Իրանական Ադրբեջան նսհանգը

տուքյան դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը 1918 թ. օգոստոսի 8-ի հղած հաղորդագրությունում «Ադրբեջանի անկախությունը նշանակում է իրավաբանական սանկցիա այն տիրապետությանը, որն ուզում է Տաճկաստանը տարածել Արևելյան Անդրկովկասում»[1815]: Այս և հաջորդ փաստաթղթերից պարզ երևում է, որ երիտթուրքերը համաթուրքական մեծապետական իրենց ծրագրերը պետք է իրագործեին արևելահայության կոտորածներով, բռնի մահմեդականացման ու տեղահանության ճանապարհով: Էնվեր փաշայի իսկ խոսքերով. «...քանի որ հայերը նզած են եւ պէտք է միշտ ըլլան մեր թշնամիները... լաւ է, որ հիմնապէս բնաջնջուին անոնք նաեւ Կովկասի մէջ, ինչպէս նզած են Թուրքիոյ մէջ»[1816]: Երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության մասին է վկայում Ռ. ֆոն Քյուլմանի՝ Թուրքիայում Գերմանիայի դեսպանին 1918 թ. հունիսի 3-ին հղած հեռագիրը, որում ասված է. «Թուրքերը հասնում են իրենց նպատակին-Կովկասում ոչնչացնել հայերին»[1817]:

Հարկ է նշել, որ Արևելյան Այսրկովկասում հայերի կոտորածները նախապես ծրագրված էին երիտթուրքերի և մուսավաթականների կողմից. այն խարսխված էր Թուրքիայի ջարդարարական քաղաքականության վրա: Այս առումով ուշագրավ է հետևյալ փաստը. Բաքվի հայերի սեպտեմբերյան կոտորածների գլխավոր կազմակերպիչներից Ադրբեջանի ներքին գործոց նախարար Բեհբուդ Խան-Ջիվանշիրի ահաբեկիչ հայ վրիժառու Միսաք Թոռլաքյանի՝ Կ. Պոլսում 1921 թ. հոկտեմբերին անգլիական պատերազմական ատյանի (նախագահ՝ հազարապետ Ծրիզպի) կողմից անցկացված դատավարության[1818] ընթացքում, դեպքերի ականատես, զորավար Սեպուհի

ևս «Մեծ Ադրբեջան» պետությանը բռնակցելու նպատակով դեռ 1917 թ. աշնանը Գիլյանում գործող Օսմանյան կայսրության գործակալությունը հրահանգ ուներ անդամսիսատել Իրանը: Մասնավորապես՝ ծրագրված էր Հյուսիսային Իրանը անջատել երկրի մնացած մասերից և հետագայում նրան միացնել նաև «Հյուսիսային» կամ «ռուսական Ադրբեջանը»՝ ստեղծելով նոր թուրքական պետություն: Այս խնդիրը իրագործելու համար թուրքական գործակալությունը սերտորեն համագործակցում էր մուսավաթականների հետ (տե՛ս Իրանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին (ուսումնական առաջադրանքներ և մեթոդական օժանդակ նյութեր), կազմող՝ պրոֆ. Բայբուրդյան Վ. Ա., Երևան, 1984, էջ 45):

[1815] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 15, թ. 2:

[1816] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 88-89:

[1817] Нагорный Карабах в международном праве и мировой политике (документы и коменмтарий), т. I, док. 222, стр. 224.

[1818] Կ. Պոլսում կայացած դատավարության ժամանակ անգլիական պատերազմական ատյանը Մ. Թոռլաքյանին ճանաչել է մեղավոր, սակայն ազատ է արձա-

(Արշակ Ներսիսյան) Թիֆլիսի պահ Գրիգոր Ամիրյանը հրապարակեց կոտորածներից առաջ Բ. Ջիվանշիրի կողմից Նուխիի, Արեշի, Շամախու և Բաքվի քաղաքապետերին տրված գաղտնի հրամանը, որտեղ ասված էր. «Սրբազան պատերազմ մըն է այս, մղուած՝ միացնելու համար բոլոր թուրք ցեղերը: Այս ի կատար ածելու համար անհրաժեշտ է, որ նախ հայ ցեղը բնաջնջուի: Հայերը խոչընդոտ կը հանդիսանան մեր քաղաքական ճամբուն վրայ, որ ուղղած է դէպի Հնդկաստան: Անհրաժեշտ է ոչնչացնել հայերը, անոնց դիակներու վրայէն անցնելով մեր նպատակներուն հասնելու համար: Մի՛ խնայէք ոչ ոքի եւ հավատարմօրէն կատարեցէք ձեզի տրուած հրահանգները»[1819]: Ուշագրավն այս փաստաթղթում այն է, որ հայ բնակչությանը կոտորելու մուսավաթական ղեկավարի հրահանգը հայ և նման է 1915-1916 թթ. արևմտահայերի կոտորածների ժամանակ Թալեաթի, Էնվերի և երիտթուրքական մյուս ղեկավարների հրահանգներին: Եթե Արևմտյան Հայաստանում հայերի բնաջնջումն իրականացնում էր «Թեշքիլաթը մահսուսե»-ն իր հրոսակախմբերով[1820], ապա Բաքվի նահանգի գավառներում այդ նպատակով գործում էր «Ջելադ քոմիթեսի» («Դահիճների կոմիտե») կազմակերպությունը[1821]: Դրանով մեկ անգամ ևս փաստվում էր այն իրողությունը, որ 1918-1920 թթ. կովկասահայերի կոտորածների ժամանակ երիտթուրքերի, հետագայում նաև մուսավաթականների ու քեմալականների միջև գոյություն ուներ գաղափարական և գործնական սերտ համագործակցություն: «Համաթուրանականութեան գաղափարախօսները,- գրում է Ռ. Տեր-Մինասյանը,- չպիտի ծածկեն այն, որ իրենց ծրագրի իրագործման համար, առաջին հերթին, անհրաժեշտ համարուեց ճանապարհի վրայից մի անգամ ընդ միշտ վերցնել հայ ժողովուրդը՝ այս արդէն անառարկելի փաստ է»[1822]:

Թուրքերի մուտքը Բաքու իրախուսվում էր կովկասյան թաթարների «ազգային խորհրդի» և Մուսավաթ կուսակցության կող-

---

կել «մտախանգարման» պատճառով (տե՛ս Թոռլաքեան Մ., Օրերուս հետ, Գ հրատ., Պէյրութ, 2001, էջ 524-525):

[1819] Պէհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ Միսաք Թորլաքեանի դատավարութիւնը անգ. Ջինւորական ատեանին առջեւ, Աթէնք, 1936, էջ 141-142, տե՛ս նաև Յեղափոխական ալպօմ. ազատագրական պայքարի յուշամատեան: Միսաք Թորլաքեան, գրեց՝ Աւօ, հ. 8, թիւ 1-4, Բէյրութ, 1970, էջ 84-85:

[1820] Տե՛ս Տատրեան Վ., Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, Մասաչուսէթս, 1995, էջ 126:

[1821] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 245, ց. 1, գ. 12, թ. 7:

[1822] Ռուբէն, Հայ-թրքական կնճիռը, Գահիրէ, 1924, էջ 134:

մից: Թուրք-մուսավաթական համագործակցությունն ավելի ակնառու դարձավ, երբ մայիսի 20-ին Գանձակ ժամանեց Նազըմ փաշան, որին մահմեդական բնակչությունը դիմավորեց կիսալուսին պատկերվող թուրքական դրոշակներով[1823]: Մայիսի 27-ին Մոսուլից Գանձակ ժամանեց[1824] նաև կովկասյան իսլամական բանակի դիվիզիոր հրամանատար Նուրի փաշան, որը, լինելով Էնվեր փաշայի խորթ եղբայրը, հարյուրապետից կարճ ժամանակում հասել էր գեներալ-լեյտենանտի կոչման[1825]: Հունիսի 4-ին Գանձակ ժամանեց նաև թուրքական մեկ այլ գեներալ՝ Գյուրխան փաշան[1826], իսկ հունիսի 5-ին՝ կովկասյան բանակի շտաբի պետ, գեն. Մյուրսել փաշան[1827]: Բաքվի դեմ ռազմական գործողություններ սկսելու նպատակով Էնվեր փաշայի հրամանով Բաթումից և Իրանից՝ Օրդուբադի վրայով, Գանձակում կենտրոնացվեցին Գելիբոլուի (հրամանատար՝ Ջամիլ Ջահիդ բեյ), Միջագետքի և Ռումինիայի ճակատներից՝ 5-րդ, 9-րդ, 11-րդ և 15-րդ դիվիզիաները[1828]: Նուրի փաշայի հրամանով՝ թուրքական բանակը հավաքագրվել և համալրվել էր նաև Կարսի, Արդահանի, Արդվինի և մանավանդ Բաթումի շրջանների տեղական թուրքերով, մահմեդական վրացիներով, լազերով ու աջարներով[1829]: Իրանից տեղափոխված զորքերի թիվը, որոնց գլխավորում էր Նազըմ փաշան, հասնում էր 7000-ի, նրանք ունեին շուրջ 40 թնդանոթ[1830]:

Նուրի փաշայի բանակը համալրեց նաև Գանձակում կազմավորված մուսուլմանական կորպուսը՝ ցարական բանակի նախկին գեներալ Շիխլինսկու հրամանատարությամբ, որը Նուրի փաշայի Գանձակ գալուց հետո հռչակվել էր փաշա և կրում էր Ալի աղա Շիխլինսկի անունը[1831]: Կորպուսի մեջ մտնում էին նախկին «վայրի դիվիզիայի» 400 հոգանոց գունդը (հրամանատար՝ դնդ. Սուլեյմանով), Գանձակի հրաձգային գունդը (հրամանատար՝ գնդ. Մամի-

---

[1823] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918, մայիսի 30, № 108:
[1824] Տե՛ս **Лудшувейт Е.**, Турция в годы первой мировой войны 1914-1918 гг., Москва, 1966, стр. 206.
[1825] Տե՛ս Ո՞վ է Նուրի փաշա, «Ժողովուրդ», Կ.Պոլիս, 1918, Ա. տարի, նոյեմբերի 13/26, № 24:
[1826] Տե՛ս **Мнацаканян А.**, նշվ. աշխ., էջ 19.
[1827] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հունիսի 5, № 104:
[1828] Տե՛ս **Սարգսյան Ե.**, նշվ. աշխ., էջ 398:
[1829] Տե՛ս **Թուրշյան Հ.**, Հուշեր և խոհեր, ԲՀԱ, Երևան, 1990, № 2, էջ 164, տե՛ս նաև № 3, էջ 202:
[1830] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հուլիսի 1, № 125:
[1831] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հունիսի 5, № 104:

դով), թուրք գնդիններից կազմավորված «Բորչալուի» մեկ վաշտ (հրամանատար՝ Լ. Մադալով), վրացական կամավորական ջոկատ (հրամանատար՝ փոխգնդապետ Կոչիկիձե), թուրքական կամավորական ջոկատները (հրամանատար՝ Մելչակով) և Զաքաթալայում 200 հոգանոց Շաքիի գունդը (հրամանատար՝ գնդ. մայոր Միրզա Ղաջար)[1832]: Մայիսի վերջերին Բաքվի ճակատում գտնվող թուրքական ուժերի ընդհանուր թիվն արդեն անցնում էր 20000-ից[1833], և այդ թիվն օրեցօր ավելանում էր:

Բաքվի պաշտպանությունը, որն առանձնահատուկ տեղ է գրավում Առաջին աշխարհամարտի ռազմական գործողությունների մեջ, ուներ վճռորոշ նշանակություն ինչպես Գանձակ-Ելիզավետպոլի ու Բաքվի նահանդների հայության, այնպես էլ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հետագա ճակատագրի համար: Ինչպես իրավացիորեն գրել է Հ. Բադրատունին՝ «...Բաքվի ինքնապաշտպանությունը ուներ մեծ նշանակություն Ռուսաստանի սահմանները պաշտպանելու գործում, բայց հատկապես բացառիկ է նրա ունեցած նշանակությունը հայության գոյության համար: Ինձ համար այլևս պարզ էր, որ գրավելով Բաքուն (հայի համար իրենց բոլոր հետևանքներով)՝ թուրքերը հետևողականորեն կանդրադառնան բնաջնջումից գերծ մնացած հայկական վերջին շրջաններին՝ Ղարաբաղին և Երևանին, որ կնշանակեր մեր ժողովրդի ֆիզիկական կործանում, լրիվ վերացում...»[1834]: Երիտթուրք հրապարակախոսները մամուլում բացեիբաց հայտարարում էին, թե «Հայաստանի խնդրի վերջնական լուծումը կախված է Բադուից, երբ կը գրաւենք Բադուն, կը լուծենք եւ Հայաստանի հարցը...»[1835]:

Մուսավաթական կառավարությունը կանխազգալով, որ Բաքվի դեմ արշավող թուրքական զորքերի դեմ հիմնական կռվող ուժը լինելու են Հայոց Ազգային խորհրդի տրամադրության տակ գտնվող հայկական զորամիավորումները՝ փորձեց ազդել Ազգային խորհրդի վրա, որպեսզի Բաքուն առանց կռվի հանձնվի իրենց: Այդ

[1832] Տե՛ս **Шаумян Сур.**, Бакинская Коммуна, Баку, 1927, стр. 31, տե՛ս նաև **Мнацаканян А.**, նշվ. աշխ., стр. 19.

[1833] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 57, թ. 44, տե՛ս նաև Սարգսյան Ե., նշվ. աշխ., էջ 398: Այլ աղբյուրներում նշված է, որ Բաքվի դեմ արշավող թուրքական բանակի թիվը հասնում էր 60000-ի (տե՛ս Թուրշյան Հ., Հուշեր և խոհեր, ԲՀԱ, Երևան, 1990, № 2, էջ 163):

[1834] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 49, 53:

[1835] Գիւլխանդանեան Ա., Բագուն Հայաստանի անկախութեան եւ նորա պահպանման տեսակէտից (Մայիս 28. 1918-1938 քսանամեակ), Փարիզ, 1938, էջ 27:

նպատակով Ադրբեջանի կառավարությունը Ջաֆալի խան Խոյսկու անունից Գանձակից նամակ հղեց Բաքվի Հայոց Ազգային խորհրդին, որում ասվում էր. «Եթէ հայերը իրենց հաւանութիւնը տան, յետ քաշեն իրենց ռազմական ուժը եւ կողմնակցութիւն յայտնեն Բագուն ապերիներին յանձնելու, Բանվորական Խորհուրդը ոչինչ անել չպիտի կարողանայ, մանաւանդ որ Ռուսաստանից ռազմական ոչ մի օժանդակութիւն չի ստանում»[1836]: Հայոց Ազգային խորհրդի պատասխանը կախված էր խորհրդում ծանրակշիռ դեր ունեցող ՀՅ Դաշնակցություն կուսակցության դիրքորոշումից, ուստի պատասխան տալուց առաջ սպասում էր ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեի վճռին: Բաքուն Ադրբեջանի կառավարությանը հանձնելու խնդիրը քննարկվեց այդ օրերին տեղում գումարված ՀՅԴ պատգամավորական ժողովում, ուր ելույթ ունեցավ հասարակական-քաղաքական շրջանակներում մեծ հեղինակություն վայելող, Բաքվի հերոսամարտի իրական առաջնորդ Ստեփան Զորյանը (Ռոստոմ): Ժողովը վերջինիս առաջադրած ռազմավարական բանաձևով միահամուռ որոշում է՝ մերժել Ադրբեջանի կառավարության պահանջը և «...պատերազմի մէջ մտնել Ադրբէյջանի թուրքերի և տաճիկների դէմ եւ քշել ու հետապնդել թշնամուն եւ հասնել մինչեւ երկրի սահմաններըː Իսկ եթէ չյաջողինք անել այդ, կամրանանք Բագուում, կը կվտանգենք Ադրբէյջանի ամբոխի եւ տաճիկ բանակի թիկունքը, որով՝ կարգելնենք նրանց խժդժութիւնները հայաշատ միւս գաւառներում»[1837]: Որոշումը հիմնավորվում էր այն հանգամանքով, որ Բաքվում կուտակված հայկական զորքի ցրվելու դեպքում թուրքական բանակը Բաքուն գրավելուն պես կոտորածի կենթարկեր նրանց և խաղաղ բնակչությանը[1838]: Վերոնշյալ հանգամանքներից ելնելով՝ Բաքվի Հայոց Ազգային խորհուրդն ու ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն հրաժարվել էին ճանաչել Բաթումի հաշտության պայմանագրի 11-րդ կետը, որով Բաքու քաղաք-ից անհապաղ դուրս պետք է բերվեին հայկական ազգային զորամասերը՝ Բաքվի Կոմունայի պաշտպանների հիմնական կորիզը[1839]: Ինչպես իրավացիորեն նկատել է Խորհրդային Հայաստանում 1961-1962 թթ. գրված «Մի

[1836] Ռոստոմ, Մահուան վաթսունամեակին առթիւ, Պէյրութ, 1979, էջ 324:
[1837] Նույն տեղում, էջ 326-327, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 14:
[1838] Տե՛ս նույն տեղում, էջ 326:
[1839] Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Զ, Բէյրութ, 1967, էջ 337, տե՛ս նաև Ահարոնեան Գ., Մեծ երապի ճամբուն վրայ... (ակնարկ հայկական հարցի պատմութեան վրայ), Լոս Անճելըս, 1986, էջ 111:

թուղթ»-ի հեղինակը. «...թէև թուրքերը դաշնակցականներին պարտադրեցին զօրքերը դուրս բերել Բագուից և խզել կապերը Բագուի հետ, այնուամենայնիւ այդ կէտը դաշնակցականները փաստօրէն չկատարեցին, քանի որ դաշնակցական զինուած ոյժերը մնացին Բագուում ընդհուպ մինչև թուրքական բանակի Բագու հասնելը, որտեղ այդ դաշնակցականները արիւն թափեցին՝ կուելով թուրքական հորդաննների դէմ կոմունան պաշտպանելու համար»[1840]:

Բաքվի հայ բնակչութեան շահերը օբյեկտիվորէն կապւում էին Ռուսաստանի հետ. նրանց ապառնացող վտանգն ընդհանուր էր: Հայութեան գոյութիւնը պաշտպանելու գերխնդիրը լուծելու համար Բաքվի Հայոց Ազգային խորհուրդն ու ՀՅ Դաշնակցութիւնը ինքնապաշտպանութեան սկզբնական շրջանում համագործակցեցին Ստ. Շահումեանի գլխաւորութեամբ հաստատուած Բաքվի բոլշևիկեան իշխանութեան հետ: Քաղաքական երկու այդ ուժերի զինական համագործակցութեան մասին Մ. Վարանդեանը գրել է. «...Հ. Յ. Դաշնակցութիւնը ազգային պաշտպանութեան գերագոյն մարհոգութեամբ որոշել էր միանալ ռուս բոլշեւիկներուն եւ Ռոստոմ ու Շահումեան, հակառակ գաղափարային խորունկ տարաձայնութեանց, կը գործէին թեւ թեւի»[1841]:

Այդ օրերին Բաքվի հայերի մէջ տիրում էր կատարեալ միասնութիւն: Բաքուն գրաւելու դէպքում սպասւում էր հայ բնակչութեան կոտորած: Այդ իսկ պատճառով էլ Բաքվի պաշտպանութեանը մասնակցում էր քաղաքի գրեթե ողջ հայութիւնը՝ անկախ կուսակցական պատկանելութիւնից և քաղաքական համոզմունքներից: Բաքվի պաշտպանութիւնը հայերի հայրենական պատերազմն էր: Իրավացի էր Բ. Իշխանեանը, երբ գրում էր. «Հայկական տարրը աւելի քան որևէ մի ուրիշը Բագուում, գերազանցապէս չհագեցուած էր քաղաքի պաշտպանութեամբ. դա հայութեան համար կեանքի ու մահուան հարց էր»[1842]: Զորահաւաքն անցկացվել էր հիմնականում 18-40 տարեկանների շրջանում: Հարյուրաւոր մարդիկ, անկախ մասնագիտութիւնից և տարիքից, ներկայանում էին զորամաս և համալրում բանակի շարքերը[1843]: Բաքվի պաշտպանութեան գործին էր զինվորագրվել նաև այդ օրերին Բաքվում գտնվող ականաւոր լեզ-

---

1840 Մի թուղթ, առաջաբանը՝ Ս. Վրացեանի, Թեհրան, 1967, էջ 29:

1841 Վարանդեան Մ., Մուրատ (Սեբաստացի ռազմիկին կեանքն ու գործը), Պօսթըն, 1931, էջ 326:

1842 Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 2:

1843 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 13, N 208:

վարան Հր. Աճառյանը, որը բանակի չտաքում ստանձնել էր Թարգմանչի աշխատանքը[1844]: Բաքվի պաշտպանների չարքերում, ազգային-ազատագրական չարժման նվիրյալներից, ուսանողներից, մտավորականներից բացի, իրենց մասնակցությունն են բերել նաև Բաքվի հայ թատրոնի մի չարք դործիչներ: Այսպես, օրինակ, Ժասմեն Գրիդորյանը, որպես բուժքույր, ծառայում էր Համազասպ Սրվանձտյանցի դլխավորած երրորդ բրիգադում, Շամախի-Բաքու հատվածում[1845]:

Բաքվի պաշտպանության համար Հայոց Ազգային խորհրդին նյութական միջոցներ էին տրամադրել Աստրախանի, Սամարայի, Ցարիցինի, Աշգաբադի, Կիսլովոդսկի և Մոսկվայի հայկական կոմիտեները[1846]: Այսպիսով՝ Բաքվի պաշտպանությունը մի հուսահատ փորձ էր՝ կանգնեցնելու թուրքական հրոսակների առաջխաղացումը:

Թշնամու դեմ դիմադրությունը նախապատրաստող կովկասյան կարմիր բանակը ներկայացնում էր հետևյալ պատկերը. այն կազմված էր 4 բրիգադից և մտնում էր կովկասյան կարմիր բանակի առաջին կորպուսի մեջ (հրամ.՝ գնդ. Ղազարով)[1847]: Առաջին բրիգադի հրամանատարն էր Ն. Ղազարյանը, երկրորդինը՝ դվարդիայի փոխգնդապետ Բեգ-Զուրաբյանը, երրորդինը՝ Համազասպ Սրվանձտյանցը (կոմիսար՝ Անաստաս Միկոյան)[1848], չորրորդինը՝ փոխգնդապետ Հարությունովը: Բանակի հրամանատարն էր ռազմածովային կոմիսար Գրիգոր Ղորղանյանը (Կորգանով), շտաբի պետը՝ գնդ. Զ. Ավետիսյանը (Ավետիսով)[1849], մատակարարման բաժնի պետն էր

[1844] Տե՛ս Ռոստոմ, Մսհուաև վաթսունամեակին առթիւ, էջ 391-392, 398: Թարգմանչի աշխատանքը Հր. Աճառյանը շարունակեց կատարել նաև անգլիացիների՝ Բաքու գալուց հետո: Այս հանգամանքն էլ ստալինյան բռնությունների ժամանակ պատճառ դարձավ, որպեսզի Աճառյանն անհիմն կերպով մեղադրվեր իբրև «անգլիացիների կողմից Ադրբեջանում նշանակված գործակալ» (տե՛ս Աճառյան Հ., Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 338-346, տե՛ս նաև Բաղինկյան Խ., Հրաչյա Աճառյան. մարդը և գիտնականը, Երևան, 2005, էջ 155, 157):

[1845] Հովակիմյան Բ., Ցեղասպանության թեման հայ թատրոնում (1895-1995), Երևան, 1998, էջ 31:

[1846] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 38, թ. 6:

[1847] Տե՛ս Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане (документы и материалы. 1917-1918 гг.), под редакцией **З. Ибрагимова и М. Искендерова**, Баку, 1957, стр. 523, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 14:

[1848] Տե՛ս Միկոյան Ա., Պայքարի ուղիով, գիրք առաջին, Երևան, 1972, էջ 192:

[1849] Գնդ. Զ. Ավետիսյանը սպանվել է 1918 թ. դեկտեմբերի 6-ին Լենքորանի մոտ գտնվող Մուղանի կենտրոն Պրիշիբ ավանում, բոլշևիկացած ռուս զինվորների կողմից: Վերջիններս գնդապետին նախ անխնա ծեծում են, ապա գնդակահարում (տե՛ս Եղիշէ Պահլաւունի, նշվ. աշխ., էջ 152): «Մշակի» հաղորդած տեղեկության

Մ. Տեր-Պողոսյանը: Կորպուսը բաղկացած էր 26 դումարտակից (յուրաքանչյուրում 400-500 մարդ) և շուրջ 20000 զինվորից, իսկ հրամանատարների մեծ մասը հայեր էին: Կորպուսում գերակշռում էին հայ զինվորները, որոնք հիմնականում Արևմտյան ճակատից վերադարձած դանդեզուրցիներ, արցախցիներ, Գանձակի, Երևանի, Գյոքչայի և Շամախիի հայկական գյուղերից հավաքագրված երիտասարդներն էին[1850], մասամբ նաև՝ մշեցիներ ու սասունցիներ, որոնց ընդհանուր թիվը հասնում էր 15000-16000-ի[1851]: Ավելի որոշակի՝ գումարտակները հիմնականում կազմվել էին հայրենակցական սկզբունքով[1852]: Ստեղծվել էին Ալիզավետպոլյան, Երևանյան և դանդեզուրյան անունները կրող հայրենակցական գումարտակները[1853]: Բանակում միայն ՀՅԴ վաշտի մարտիկների թիվը հասնում էր 600-700-ի (հրամ.՝ Գերասիմ Բալայան)[1854]: Զորքի համալրմանն իր մասնակցությունը բերեց նաև ՍԴ Հնչակյան կուսակցությունը: Հնչակյան հին գործիչ Տիգրան Ղազանչյանի (Պերճ Մուշեղյան) հրամանատարությամբ կազմվում է 24-րդ գումարտակը[1855]: Կազմավորվել էր նաև «Լևոն-Խան» պարտիզանական ջոկատը[1856]:

Բաքվի ինքնապաշտպանության անտարբեր չգտնվեցին նաև Ռուսաստանի տասնյակ համալսարաններում սովորող հայ ուսանողները: Սարատովի հայ ուսանողությունը, կազմելով առանձին խումբ, «Բագու գնացող ուսանող կամավորների» անվամբ գնացքով մեկնում է Բաքու և կազմում 200 հոգուց բաղկացած առանձին վաշտ հայ սպա Զիժովի հրամանատարությամբ[1857]: Փոխգնդապետ Հարությունովը հետևյալ բնութագրումն է տվել բանակի կազմին. «...Միայն դրոշն էր բոլշևիկյան, իրականում հայ զինվորները կազմում էին 95% և գրեթե 100% հայ սպաներ, որովհետև մեր նպատակները համընկնում էին բոլշևիկների հետ, այդ պատճառով ծառայության

համաձայն՝ «պատճառը խիստ կարգապահութիւնն էր, որ Ավետիսեանը մտցրած է եղել Մուղանի զօրքերի մէջ» («Մշակ», Թիֆլիս, 1918, դեկտեմբերի 8, № 254):

[1850] Տե՛ս Թուրշյան Հ., Հուշեր և խոհեր, ԲՀԱ, Երևան, 1990, № 2, էջ 164:

[1851] Տե՛ս Մելիք-Եօլչեան Ս., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1925, Գ տարի, հունիս, № 8, էջ 113, տե՛ս նաև **Мнацаканян А.**, նշվ. աշխ., էջ 13-14.

[1852] Տե՛ս Խոյլեան Ռ., 1918 եւ Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1966, ԽԴ տարի, մարտ, № 3, էջ 63:

[1853] Տե՛ս **Мнацаканян А.**, նշվ. աշխ., էջ 13-14.

[1854] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 166-167:

[1855] Տե՛ս Ղազանչյան Տ., Փաստեր պատմության համար (ՀԱԱ, ֆ. 1456, ց. 2, գ. 23, թ. 37-43), տե՛ս նաև **Мнацаканян А.**, նշվ. աշխ., էջ 15:

[1856] Տե՛ս Бюлетени диктатуры Центрокаспия и Президиума Временнаго Исполнит. к-та., Баку, 1918, 18 августа, № 16.

[1857] Տե՛ս Խոյլեան Ռ., 1918 եւ Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1966, ԽԴ տարի, մարտ, № 3, էջ 63:

կինք մտնում նրանց մոտ»[1858]: Փաստորեն, Բաքվի Կոմունան հենվում էր առավելապես հայ զորքի վրա[1859]: Անհրաժեշտ է նշել, որ Բաքվի ինքնապաշտպանական մարտերի բովում իրենց առաջին մկրտությունը ստացած հայ զինվորականներից ոմանք Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.) դարձան ռազմական ականավոր գործիչներ: Ինչպես օրինակ՝ բժշկասանիտարական նշանավոր բժիշկ Նիկոլայ Ավշարյանը[1860], ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյանցը (Սերգեյ Խուդյակով)[1861], Թամանյան 89-րդ հայկական դիվիզիայի առաջին հրամանատար գնդ. Սիմոն Զաքյանը[1862], ինժեներա-տեխնիկական ծառայության գեներալ-լեյտենանտ Ալ. Կարաօղլյանը[1863] և 3-րդ բրիգադի 19-րդ գումարտակի գնդացրորդ, Խորհրդային միության ապագա հերոս, գեներալ-լեյտենանտ Սարգիս Մարտիրոսյանը[1864]:

Թշնամու հարձակումը Բաքվի դեմ կանխելու, ռազմաճակատը հայաշատ գավառներից հեռացնելու մտադրությամբ Բաքվի զորքը հունիսի 5-ին Եվլախ-Գանձակի ուղղությամբ հարձակման անցավ: Հունիսի 5-ից սկսվեց զորքերի առաջխաղացումը դեպի Հաջի-Կաբուլ, որտեղից պետք է շարժվեին Քյուրդամիր կայարան՝ այն գրավելու համար[1865]: Բանակի շտաբի մշակած ռազմական պլանի համաձայն՝ Քյուրդամիրի վրա հարձակումը պետք է կատարվեր երեք զորասյուներով[1866]:

Հունիսի 10-ին սկսվեցին ռազմական գործողությունները: Հունիսի 12-ին՝ համառ մարտերից հետո, Կոմունայի զորքը գրավեց Քյուրդամիր կայարանը[1867]: Քյուրդամիրը գրավելուց հետո Քյուր-

---

[1858] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 14:

[1859] Տե՛ս Ներսիսյան [Աշոտ Հովհաննիսյան], Դեպքերը Բագուում (Հայ Յեղ. Դաշնակցութիւնը եւ Բագւի Խորհրդային իշխանութիւնը), Մոսկուա, 1918, էջ 13:

[1860] Ն. Ավշարյանը ծնունդով Շամախիի գավառի Հնդար գյուղից էր (տե՛ս Եղիազարյան Ա., Զինվորական բժիշկ Ն. Կ. Ավշարով, ԲՀԱ. Երևան, 1974, № 1, էջ 145-150):

[1861] Տե՛ս Մալխասյան Ա., Սովետական բանակի հայ գործիչները, Երևան, 1963, էջ 216, տե՛ս նաև **Арутюнян К.**, Маршал авиации С. А. Худяков-А. А. Ханферянц, Ереван, 2006, стр. 15-16.

[1862] Ս. Զաքյանը ծնունդով Շամախու գավառի Քարքանջ գյուղից էր (տե՛ս **Казарян А.**, Война, люди, судьбы, кн. первая, Ереван, 1975, стр. 293).

[1863] Ալ. Կարաօղլանովը ծնունդով Շամախի քաղաքից էր (տե՛ս **Казарян А.**, Война, люди, судьбы, кн. вторая, Ереван, 1977, стр. 64).

[1864] Ս. Մարտիրոսյանը ծնունդով Շամախիի գավառի Մատրասա գյուղից էր (տե՛ս **Мурадян В.**, Верность долгу, Ереван, 1974, стр. 22).

[1865] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 2:

[1866] Տե՛ս նույն տեղում, թ. 4:

[1867] Տե՛ս «Кавказское слово», Тифлис, 1918, 19 июня, № 124.

դամիր-Կարամարյան-Գյոքչա ուղղությամբ գործող Համապասպի բրիգադին հաջողվեց Կարամարյանի մոտ հունիսի 16-17-ին տեղի ունեցած մարտերում փայլուն հաղթանակ տանել և մինչև հունիսի 26-ը գրավել Կարամարյան-Ռյուրդամիր և Ջուբովկա-Պետրոպավլով գծերը: Այդ պարտությունից հետո թուրքական հրամանատարությունը ստիպված էր ուժերը վերադասավորելու համար ժամանակավորապես դադարեցնել հարձակումը: Կարճ ժամանակամիջոցում նորանոր համալրումներ ստանալով՝ թուրքերը կարողացան վերակազմավորել բանակը և նախապատրաստվել հետագա գործողություններին: Կարամարյանի հաղթական ճակատամարտից հետո Կոմունայի բանակի գերագույն հրամանատարությունը որոշից գրավել ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Գյոքչա գյուղաքաղաքը, որի հաջող ելքից էր կախված ոչ միայն Բաքվի պաշտպանությունը, այլև Կուրի ձախափնյակի հայահոծ շրջանների հայության հետագա ճակատագիրը: Հունիսի 27-ից-30-ը Գյոքչայի մոտ տեղի ունեցած ծանր մարտերից հետո, Բաքվի Կոմունայի պինված ուժերը, բանակի գերագույն հրամանատարության թույլ տված մարտավարական սխալների, թիկունքի անկազմակերպ վիճակի և թուրքական մեծաքանակ զորքի հակահարձակման պատճառով նահանջեցին[1868]: Բաքվի զորքի Գյոքչայի մոտ կրած ռազմական պարտությունը զրկեց Բաքվի նահանգի հայ բնակչությանը թուրք-թաթարական միացյալ ուժերից պաշտպանվելու կայուն երաշխիքից: Նահանջի հետևանքով փաստորեն ձախողվեց Բաքվի պաշտպանությունը: Նահանջը աղետաբեր եղավ Կուրի ձախափնյակի հայահոծ գավառների և հատկապես Բաքվի հայ բնակչության համար: Այն ճանապարհ հարթեց թուրք-թաթար հրոսակների նորանոր բարբարոսություններների համար:

Բաքվի զորքի նահանջի ժամանակ նրա հետ տեղահանվեց և դեպի Բաքու գաղթեց նաև Գյոքչայի գավառի հայությունը, որտեղ, համաձայն «Գյոքչայի գավառի բաքվաբնակ Գյուղացիների հայրենակցական միության» նախագահ Մ. Մայիլյանի՝ Բաքվի Հայոց Ազգային խորհրդին 1919 թ. սեպտեմբերի 19-ին հղած զեկուցագրի, նախքան կոտորածները հայերի թիվը 18000 էր[1869]: Անկանոն գաղթի պատճառով կարողացան գաղթել միայն Դավա-բաթան ձորի արևելյան մասում գտնվող Ազայիշեն (Նորշեն), Շուքուրչի, Գիրք,

---

[1868] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 126, թ. 1, տե՛ս նաև Ստեփանեան Գ., Թուրքական արշավանքը Բաքու 1918 թ. և Գյոքչայի ճակատամարտը, «Դրօշակ» Երևան, 1998, մայիսի 20, № 9, էջ 17-26:

[1869] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 8, թ. 50, տե՛ս նաև ֆ. 223, ց. 1, գ. 92, թ. 37:

Կուզդան, Դայմադաղ, Ավանաչեն, Գանձակ, Աղբուլաղ, Թուբիչեն, Փաթախլու, Քալբանդ և Քիշխուրդ գյուղերը՝ 12000 բնակչությամբ[1870]: «Մշակը», անդրադառնալով գյոքչեցիների գաղթին, գրում է. «Դա տանջալի, ծանր րոպե էր: Ամառ ժամանակ, երբ սրանց խոստանում էր առատ հունձ ու խաղող, նրանք վախուստի դիմեցին Բագու: Սայլերի շարանները և կենդանիները, կանանց և երեխաների խմբեր, ծերուներ և հիւանդներ լցրել էին Բագուի ճանապարհները: Վշտահար, սգալի, տանջանքով, աչքերին արտասուք, անէծքները շրթունքներին անցան նրանք նզովված ճանապարհը»[1871]: Տեղահանված ժողովրդի գաղթը ապահով դարձնելու նպատակով առաջացող թուրքական զորքի դեմ պաշտպանողական մարտեր էր մղում 20-րդ գումարտակը՝ Եղիշե Պահլավունու հրամանատարությամբ[1872]: Դավա-բաթման ձորից արևմուտք ընկած գյուղերից հաջողվեց գաղթել միայն Ղալակա, Նորչեն (Աչղբայրամ) և Ուչտալ գյուղերի բնակչությանը, որոնք, մինչև կոմունայի նահանջող զորքին հասնելը, թուրք-թաթարների հարձակումների պատճառով տվեցին տասնյակ զոհեր[1873]: Հանկարծակիի եկած Բզավանդ, Վանք, Ռուշանաչեն և Փոքր Գանձակ գյուղերի բնակիչները փորձեցին հասնել նահանջող զորքին, սակայն ճանապարհին ենթարկվեցին զինված կովկասյան թաթարների հարձակումներին: Տեղի ունեցած ընդհարումից հետո կարողացան գաղթել՝ Վանքաչենից 1300 հոգուց 36-ը, Ռուշանաչենից և Փոքր Գանձակից 1000-ից՝ 60-ը, մնացած գյուղերից՝ 500 հոգի[1874]:

Ջնայած ծանրագույն պայմաններին և ուժերի անհավասարությանը՝ հայկական մի շարք գյուղեր դիմեցին ինքնապաշտպանության և զննքը ձեռքներին մարտնչեցին իրենց պատվի և ֆիզիկական գոյության համար: Վերը հիշատակված հայկական մնացյալ գյուղերի բնակիչները, որոնք չէին հասցրել գաղթել, հավաքվեցին Վանքաչեն գյուղում և 4 օր շարունակ հերոսաբար դիմադրեցին թուրքերին[1875]: Այդ օրերին թեժ մարտեր ընթացան Գյուրջևան գյուղի մատույցներում: Ինքնապաշտպաններին օգնության հասած կանոնավոր բանակի գումարտակներին գյուղի բարձունքների մոտ հաջողվեց դիմակայել թշնամուն և հուլիսի 9-ին հետ չպրտել[1876]: Ինքնապաշտպանության դիմեցին նաև այլ գյուղերի բնակիչները:

[1870] Տե՛ս նույն տեղում, Ֆ. 278, ց. 1, գ. 8, թ. 45:
[1871] «Մշակ», Թիֆլիս, 1919, մարտի 4, № 48:
[1872] Տե՛ս Եղիշէ Պահլաւունի, նշվ. աշխ., էջ 34-35:
[1873] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 8, թ. 45, տե՛ս նաև «Մշակ», Թիֆլիս, 1918, հուլիսի 30, № 148:
[1874] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 8, թ. 45:
[1875] Տե՛ս նույն տեղում:
[1876] Տե՛ս «Արեւ», Բագու, 1918, հուլիսի 11, № 133:

Այս առումով հիշարժան է Մատրասայի, Սաղիանի, Քարքանջի, Ազայիշենի (Նորշեն), Գիրքի և Ղալակայի դյուղացիների դիմադրությունը: Մատրասայի ինքնապաշտպանական ուժերը շուրջ 80 հոգի, հուլիսի 19-ին համառ մարտերի չնորհիվ կարողացան դյուղից հետ քշել թուրքական զորքերին[1877]: «Զորքի հետ միասին,- դրում է «Արեւ» օրաթերթը,- կռվին մասնակցել են մադրասցիք և քարքանջեցիք: Թնդանօթների և գնդացիրների ձայնից ողջ Մադրասան ոտքի է կանգնում: Կռիւը տեղի էր ունենում գիւղից 1 և կէս վերստի վրայ»[1878]: Նույն ժամանակ ինքնապաշտպանական համառ մարտեր էին մղում նաև քարքանջցիները: «Հերոսաբար էին կռւում հատկապես քարքանջեցիները»,- դրում է «Արեւը»[1879]: Չնայած հայերի հերոսական դիմադրությանը թշնամուն հաջողվում է գրավել դյուղը: Քարքանջը գրավելուց հետո, Համազասպի կարդադրությամբ, ժամը 2-ին դատարկվում է Մատրասան և տեղահանված դյուղացիները շարժվում են դեպի Շամախի[1880]: Օգոստոսի սկզբներին թուրք-թաթարները, չրջապատելով Վանք դյուղը, գրավում են այն և կատարում աննկարագրելի բարբարոսություններ՝ չխնայելով անգամ ծերերին և երեխաներին, իսկ կենդանի մնացածներին ուղարկում հարկադրական տարաբնույթ աշխատանքների[1881]: Թշնամին դիմադրության հանդիպեց նաև Ազայիշեն (Նորշեն) դյուղում ուր դյուղացիները անհավասար ուժերի պայմաններում, մի քանի ժամ մղված համառ մարտերի արդյունքում կարողացան ապահովել դյուղացիների գաղթը: Օրհասական այդ օրերին ինքնապաշտպանության դիմած ղալակցիները, 60 ղոհ տալով, կարողանում են թուրքերին հեռացնել գյուղից[1882]: Ցավոք, հայերի դիմադրական այս կռիվներով հնարավոր չեղավ կասեցնել զանգվածային կոտորածները: Այդ ծանր օրերին Բաքվի զորքին հուլիսի 5-ին Հյուսիսային Իրանից օգնության եկավ ռուս գնդ. Լ. Բիչերախովը՝ շուրջ 1500-ի հասնող կազակային զորախմբով և իր վրա վերցրեց Ադսու-Ջյուրդամիր գծի հրամանատարությունը: Ջյուրդամիրի ուղղությամբ հուլիսի 6-7-ը ընթացած մարտերում Բաքվի զորքին հաջողվում է կասեցնել թշնամու հարձակումը: Նոր համալրումներ ստանալով՝ հուլիսի 8-ին թշնամին վերսկսեց հարձակումը Ջյուրդամիր-Կարամարյանի ուղղությամբ: Բաքվի զորքը, համառ մարտեր մղելով, հուլիսի 10-ին թողնում է

1877 Նույն տեղում, հուլիսի 30, № 148:
1878 Նույն տեղում:
1879 Նույն տեղում:
1880 Տե՛ս նույն տեղում:
1881 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 8, թ. 46:
1882 Տե՛ս նույն տեղում:

Քյուրդամիրը և նահանջում՝ իր հետ տանելով նաև գավառների 50000-ից ավելի տեղահանված հայությանը:

Բաքվի գործի նահանջը ծանր տպավորություն թողեց ռազմական գործողություններին հետևող Արցախի հայության վրա, քանի որ թուրքական հրամանատարությունը Բաքվի արշավանքին զուգահեռ փորձում էր տիրանալ նաև Արցախին: Արցախի «Միջկուսակցական բյուրոն», որի ռազմական գործողությունները ղեկավարում էր Հարություն Թումյանը[1883], իր նիստերից մեկում որոշեց սերտ կապեր հաստատել Բաքվի հետ, համատեղ միջոցներ փնտրել ու գործունեություն ծավալել թուրքական վտանգը կանխելու համար, «զինված օգնություն ցույց տալու ռազմաճակատին թիկունքային դիվերսիոն գործողություններով կամ այլ ձեւով»[1884]: Բաքվի հետ կապ հաստատելու նպատակով Շուշիից Բաքու սուրհանդակ ուղարկվեց ազգությամբ ասորի Սիմոնը, իր հետ տանելով երկու նամակ: Ստ. Շահումյանին հասցեագրված նամակն ուներ հետևյալ բովանդակությունը. «Թանկագին ընկեր Ստեփան Շահումյան, հայկական Ղարաբաղը պատրաստ է օգնելու ձեր կռվող ուժերին թիկունքային չեչոտակի գործողություններով: Թշնամու դեմ կարող ենք հանել մինչեւ քսան հազար լավ սպառազինված եւ ամեն ինչով ապահովված փորձված մարտիկներ[1885]: Մեզ ներկայումս անհրաժեշտ են տվյալներ թշնամու ուժերի քանակի եւ դասավորության մասին: Հարվածի ուղղության եւ ժամանակի մասին տեղեկացրեք: Զին. կոմիսար (ստորագրություն)»[1886]: Երկրորդ նամակը՝ գրեթե նույն բովանդակությամբ, հասցեագրված էր ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեին[1887]: Սակայն Սիմոնն իր անզգուշության պատճառով այդ ա-

---

[1883] Հայտնի ֆիդայի Թուման (Թորգոմ) Թումյանի եղբայրը:

[1884] Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920 թթ. (պատմական ակնարկ),, Երևան, 2008, էջ 91: Հմմ. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջ 204:

[1885] Դևպքերին քաջատեղյակ Հարություն Թումյանը Արցախի ուժերի սպառազինության վերաբերյալ տվել է հետևյալ պարզաբանումը. «Ղարաբաղի զինված ուժերի սպառազինության եւ «ամեն ինչով ապահովված» լինելու վերաբերյալ մասամբ ուռճրած տեղեկությունները մտցվել էին նամակի մեջ նախամտածված: Մեծ անզգուշություն կլիներ, հարկավ, եթե չնախատեսվեր, որ սուրհանդակը կարող էր անհաջողության հանդիպել եւ նույնիսկ բռնվել թշնամու կողմից, ինչպես եւ, դժբախտաբար, տեղի ունեցավ: Ուստի պետք էր այնպես ձեւակերպել նամակը, որ այն թուրքերի ձեռքն ընկնելու դեպքում, ամենից առաջ նրանց մեջ որեւէ կասկած չծագեր, թե Ղարաբաղի ռազմական պոտենցիալը որեւէ բանով թույլ է» (Թումյան Հ., նշվ. աշխ., էջ 93):

[1886] Նույն տեղում, էջ 93:

[1887] Տե՛ս նույն տեղում, էջ 94:

ռաքելությունը չկարողացավ կատարել: Կուր գետի վրայի կամուրջն անցնելու պահին ձերբակալվում է կամուրջը հսկող թուրք զինվորների կողմից և հարցաքննվելուց ու նամակների բացահայտումից հետո Նուբրի փաշայի հրամանով տարվում է Աղդամ և այնտեղ կախաղան հանվում[1888]*: Այդ անհաջողությունից հետո թեև երկրորդ անգամ փորձ արվեց Բաքվի հետ կապ հաստատել Լենքորանի վրայով, սակայն ապարդյուն*[1889]*:*

Տիրելով Գյոքչայի գավառին՝ թուրքական զորքը թաթար հրոսակախմբի հետ միասին կոտորեց այնտեղ պատսպարված հայերին: Միայն Գյոքչա ավանում սպանվեց 700 բնակիչ հայերի մի մասը, իսկ կենդանի մնացածներին, այդ թվում՝ 50-ից ավելի դեղեցիկ կանանց և աղջիկներին, ուղարկեցին թաթարական գյուղեր[1890]*: Ավանում կողոպտվեցին հայապատկան բոլոր տները*[1891]*: Կոտորածները չդադարեցին նաև դեպի Բաքու գաղթող հայերի նկատմամբ: Գաղթական դարձած գյոքչահայերին ու չամախահայերին վիճակված էր ամբողջ ճանապարհին կրել ահավոր զրկանքներ ու տառապանքներ*[1892]*: Այրելով ու ավերելով դատարկված գյուղերը՝ թշնամին կրնկակոխ հետևում էր գաղթականների քարավաններից հետ մնացածներին և կոտորում*[1893]*: «Ճանապարհին հայ ժողովուրդը մեծամեծ զրկանքների ու դազանությունների է ենթարկվում, բազմաթիվ դիակներ թողնում, մի քանի հարյուր հոգի գերի են ընկնում, որոնք անհայտանում էին»*[1894]*,- ասված է Բագրատ եպս. Վարդազարյանի՝ կաթողիկոս Գևորգ Ե-ին հղած զեկուցագրում: Դեպքերի անմիջական ականատես Գ. Սեյրանը խուճապահար գաղթի մասին պատմում է հետևյալը. «Զորքի նահանջի հետ դատարկուեցին Շամախու, Գէօյքչայի եւ Արէշի գաւառների բոլոր հայկական գիւղերը: 40-50 հազար ազգաբնակութիւն բռնել էր Շամախու եւ Բադուի միջեւ եղած ճամբան»*[1895]*: Հարկ է նկատել, որ տեղահան արված գավառների հայ բնակչության անկազմակերպ գաղթին որոշ կազմակերպված բնույթ տալու գործում իր մեծ ներդրումն ունեցավ այդ օրերին Համազասպի չտարում գտնվող Ռոստոմը: Դեպքերի անմիջական ակա-*

[1888] Տե՛ս նույն տեղում, էջ 107:
[1889] Տե՛ս նույն տեղում, էջ 108:
[1890] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 36, թ. 45:
[1891] Տե՛ս նույն տեղում, ֆ. 221, ց. 1, գ. 290, թ. 7:
[1892] Տե՛ս «Наше время», Баку, 22 февраля, 1919, № 32.
[1893] «Արեւ», Բագու, 1918, հուլիսի 11, № 133:
[1894] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 6:
[1895] Ռոստոմ, Սահուան վաքսունամեակին առթիւ, էջ 385:

նատես Ա. Ալչուջյանն այդ առիթով գրում է. «...եթէ Ռոստոմը տեղին վրայ չէիներ, ոչ ոք պիտի մտածէր Շամախու գաւառի հայ գիւղացիութիւնը տեղահան անելու եւ նրա նահանջը պաշտպանելու մասին»[1896]: Գաղթականների ճանապարհն անվտանգ դարձնելու ուղղությամբ մեծ աշխատանք կատարեցին հատկապես 4-րդ, 15-րդ և 20-րդ գումարտակները: Հատկապես աչքի ընկավ Ե. Պահլավունու հրամանատարությամբ գործող 20-րդ գումարտակը, որի գործած մի շարք սխրագործություններ կարողացան փոքր-ինչ ապահով դարձնել ժողովրդի նահանջը[1897]: Ա. Ալչուջյանը, վերհիշելով Ե. Պահլավունու և նրա զորաջոկատի կատարած սխրագործությունները, գրում է. «Պետք է արձանագրել, որ Ե. Պահլավունին իր զօրքով հեռոսաբար պաշտպանից նահանջող ժողովուրդը: Իր քաջարի զինվորները բազմաթիւ սքանչելի դրուագներ արձանագրեցին: Բագուն գրաւելուց յետոյ, տաճիկ սպանները հիւանդանոցներում եւ գերի ընկած զինուորների մէջ որոնել էին 20-րդ բրիգադայի զինուորներին վրէժխնդիր լինելու համար: Չէր սխալուել Ռոստոմը իր ընտրութեան մէջ: Երիտասարդ զինուորական Ե. Պահլաւունին լիուլի արդարացրեց իր վրայ դրուած յոյսերը»[1898]: Նկատենք, որ խուճապահար գաղթին կազմակերպված բնույթ տալու բոլոր ձեռնարկներն անկարող եղան լիովին ապահովել գաղթականների անվտանգ ճանապարհը: Թուրք-թաթարների վայրագությունները այդ օրերին այնքան մեծ ազմուկ էին հանել, որ նույնիսկ անգլիական «Թայմս» լրագիրը 1918 թ. սեպտեմբերի 19-ի համարում, անդրադառնալով Գյոքչայի և Շամախիի գավառների հայ բնակչության գաղթին, գրում էր. «Թուրքերը 8000 հայեր տեղահանած են Ալեքսանդրապոլէն, Գանճակը զինաթափ ըրած են, բայց անոնք չեն կրցած գրաւել Ղարաբաղը, Գէօքչայի եւ Շամախիի հայերը գաղթած են Պաքու»[1899]:

Ինչ վերաբերում է նահանջի ժամանակ հայ բնակչության կրած զոհերի թվին, ապա նշենք, որ միայն Շամախի-Մարազա հատվածում՝ մի խոր ձորում, չոփից, խոլերայից և ծարավից զոհվեցին 1000-ից ավելի գաղթականներ[1900]: Բաքվի Հայոց Ազգային խորհրդի

1896 Նույն տեղում, էջ 329:

1897 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 7:

1898 Ռոստոմ, Մահուան վաթսունամեակին առթիւ, էջ 330:

1899 Անգլիան եւ հայերը (արխիւային նիւթեր եւ վաստաթղթեր), կազմող՝ Տ. Տիգրանեան, Երեւան, 1994, էջ 160:

1900 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 338, թ. 59, տե՛ս նաև «Արեւ», Բագու, 1918, հուլիսի 30, № 148:

նախագահ Ա. Գյուլխանդանյանի՝ Բաքվի գործադիր կոմիտեին 1918 թ. հուլիսի 16-ին հղած հեռագրում նշվում էր, որ Շամախի-Մարազա հատվածում կուտակված գաղթող հայերը, զրկված լինելով բժշկասանիտարական անհրաժեշտ օգնությունից, խոլերայի սաստկացման հետևանքով գտնվում էին անօգնական և ճգնաժամային վիճակում[1901]*: Բազում զրկանքներ կրած գաղթականները միայն երեք չաբաթ անց, գժոխային պայմանների դիմագրավումով, նահանջող զորքի հետ հասան Բաքու՝ ճանապարհին կորցնելով ընդհանուր թվի մեկ քառորդը*[1902]*: Բաքվում հանգրվանած գաղթականներն ապրում էին կիսաքաղց ու կիսամերկ՝ ամեն օր տալով տասնյակ զոհեր: «Նրանք (Գյոքչայի և Շամախիի հայերը – Գ. Ս.) հաւաքւել էին Բագու, և ինչպէս ձուկը տակառում, միմեանց վրայ թափւած էին քաղաքի հրապարակներում ու եկեղեցիների բակերում ու դպրոցական մի քանի դատարկ շինութիւններում... Ուստի և ճանճի նման նրանցից օրական 30-40 հոգի մեռնում էին չարունակ»*[1903]*,- գրում է ականատես եղիչե ավ. քհն. Դեղամյանցը:*

Այդ ծանր օրերին Բաքվի զորքը, թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ ինքնապաշտպանական մարտեր մղելով, հուլիսի 20-ին հանձնեց Շամախին, 22-ին՝ Ալյաթը, իսկ 28-ին՝ Բալաջարը: Կողոպտելով հանդիպած հայկական գյուղերը՝ թուրքական արշավող զորքերն առաջ շարժվեցին մինչև Բաքու և կարողացան պաշարել այն: Թուրքերին դիմակայելու և Բաքվի պաշտպանությունն ապահովելու նպատակով մի վերջին անգամ ձեռք առնվեցին միջոցներ, հայատարվեց հերթական զորակոչը: Այդ առիթով ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեի՝ Բաքվի հայությանն ուղղված հայրենասիրական կոչում ասվում էր. «Դու, հա՛յ ժողովուրդ, դարեր չարունակ կաշվիդ վրա կրել ես այս բարբարոսութիւնները և այս վայրկեանին պատմական վտանգը նորից կանգնել է չենքիդ առաջ, սթափվի՛ր ու շարժվի՛ր հաղթելու կամ պատով մեռնելու: Ընկերներ ու քաղաքացինե՛ր, առանց ազգի խաղութեան զենքի տակ մտեք, չուտափուլթ արձագանք տվեք իշխանութեան զորակոչին: Բաքվի հայ ժողովուրդ, դու նույնիսկ միայնակ քո ուսերի վրա կարող ես այս կռվի ծանրութիւնը վերցնել ու պատվով դուրս գալ անհավասար կռվից»[1904]*:*

[1901] Տե՛ս նույն տեղում, ֆ. 27, ց. 1, գ. 338, թ. 60:
[1902] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1919, մարտի 4, № 48:
[1903] Գեղամեանց Ե., Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը, պր. Բ, Բագու, 1919, էջ 137:
[1904] ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 126, թ. 1:

Սակայն թուրքական զորքերի առաջխաղացման պայմաններում Բաքվի պաշտպանության գործն այդ օրերին դժվարանում էր նաև զինական ուժի, ռազմամթերքի և պարենի պակասության պատճառով: Ռուսաստանից անհրաժեշտ օգնություն ստանալու նպատակով՝ Ստ. Շահումյանը մի շարք հեռագրեր հղեց Վ. Լենինին: Չնայած այն հանգամանքին, որ վերջինս մշտապես հետաքրքրվում էր Բաքվի վիճակով, այդուհանդերձ, գործնականում անհրաժեշտ քայլեր չձեռնարկեց Բաքվին զորքով, զենքով և պարենով օգնելու խնդրում: Ավելին՝ Բաքվին օգնելու գործում դերասեսչական մարմինների կողմից հարուցվում էին մի շարք արգելքներ: Հատկապես բացասական դեր խաղացին ՌՍՖՍՀ ռազմա-ծովային գործերի ժողկոմ Լ. Տրոցկին և 1918 թ. հուլիսից Հյուսիս-կովկասյան զինվորական օկրուգի ժողկոմ Ի. Ստալինը, որոնք արգելքներ էին ստեղծում Բաքու ռազմամթերք և զորք ուղարկելուն[1905]: Լ. Տրոցկին անհետևանք թողեց դեռևս 1918 թ. մայիսի 25-ին Աստրախանից ուղարկված հեռագիրը, որում ծանուցվում էր Բաքվի դրության լրջությունը և խնդրվում էր Կազանի պահեստների սպառազինության հարուստ պաշարներից Աստրախան, այնտեղից շտապ Բաքու ուղարկել մեծ քանակությամբ զենք և զինամթերք[1906]: Բաքվի ժողկոմխորհից՝ Լ. Տրոցկուն 1918 թ. հունիսի 3-ին հասցեագրված հեռագրում ուղղակի ասվում էր. «Հեղափոխության առջև պատասխանատվության մեծ տագնապից պահանջում ենք անհետաձգելի օգնություն՝ զենքով: Տվե՛ք հրացաններ, փամփուշտներ, հրանոթներ: Յուրաքանչյուր ձգձգում հանցագործություն է հեղափոխության հանդեպ: Եթե ժամանակին չտաք օգնություն, դրությունը կլինի անուղղելի»[1907]: Լ. Տրոցկին այս հեռագիրը դարձյալ թողնում է անհետևանք: Դեռ ավելին: Վերջինս հուլիսի 18-ին հրաման է արձակում Բաքու, որպեսզի զորամասեր հատկացվեն և ուղարկվեն Հյուսիս՝ Ուրալ՝ մասնակցելու չեխոսլովակյան կորպուսի բարձրացրած խռովությունը ճնշելուն[1908]: Անշուշտ, այդ հրամանի կատարումն է՛լ ավելի կդժվարացներ Բաքվի պաշտպանության կազմակերպման գործը:

[1905] Տե՛ս **Грант Е.**, Армянский вопрос вчера и сегодня, Москва, 1992, стр. 13-14.

[1906] Տե՛ս **Токаржевский Е.**, Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане, Баку, 1957, стр. 104.

[1907] Նույն տեղում:

[1908] Տե՛ս նույն տեղում, стр. 127:

Արգելքներ էին հարուցվում նաև պարենի առաքման գործում: Ի. Ստալինի հրամանով՝ Բաքվի համար նախապատրաստված պարենն ուղարկվել էր Ցարիցին: Դեպքերին քաջատեղյակ Ստ. Շահումյանի քարտուղար Օ. Շատունովսկայան գրում է. «Հյուսիսային Կովկասի շրջաններում Բաքվի համար նախապատրաստված հացը, Ի. Ստալինի հրամանով, ուղարկվեց Ցարիցին»[1909]: Վերջինիս հրամանով Ցարիցինում կասեցվեց նաև ուկրաինական ռազմաճակատից գնդ. Գ. Պետրովի՝ շուրջ 9000-ի հասնող զորախմբի մեծ մասի ուղարկումը Բաքու, և հուլիսի 20-ին Բաքու հասան ընդամենը 780 հոգի[1910]: Սա թեև մարտունակ ջոկատ էր, սակայն, իրրև օգնություն, չոշափելի չէր: Այս ամենից հետևում է, որ Խորհրդային իշխանությունը, ելնելով Ռուսաստանում և տարածաշրջանում ստեղծված ռազմա-քաղաքական միջազգային նոր զարգացումների վերաբերյալ իր կասկածելի պատկերացումներից, տեղին և պատշաճ աջակցություն ցույց չտվեց Բաքվի Կոմունային:

Հիրավի, այս շրջանի իր մի շարք հեռագրերում Ստ. Շահումյանը Վ. Լենինին և Ի. Ստալինին բազմիցս հայտնում էր զենքի և զինամթերքի ուշացման, Բաքվին օգնություն կազմակերպելու գործում խոչընդոտների մասին: Հուլիսի 20-ի հեռագրում Ստ. Շահումյանը Բաքվի դրության մասին նրանց իրազեկում էր. «Դրությունը դառնում է լուրջ: Բաքվի համար զինվորական ուժերի ուղարկումը պետք է ուժեղացվի և արագացվի: Կարգադրություն արեք, որ տեղական սովիտները ճանապարհին չկանգնեցնեն Բաքու ուղարկվող զորամասերին: Հաղորդեցեք՝ կարող ենք օգնություն ստանալ և ե՞րբ: Կրկնում եմ, անհրաժեշտ է չուտափույթ և լուրջ օգնություն զորքերով»[1911]: Սակայն Բաքվին ռազմական օգնություն կազմակերպելու գործը դարձյալ չէր իրականացվում: Հուլիսի 26-ին Ստ. Շահումյանը, իր անհանդուրժությունը հայտնելով ռազմական օգնության ուշացման համար, Վ. Լենինին և Ի. Ստալինին հեռագրում է. «Թախանձալից խնդրում եմ բոլոր միջոցները ձեռք առնել անմիջապես կանոնավոր զորամասեր ուղարկելու համար: Մեր դեմ կռվում են թուրքական կանոնավոր զորքերը, կան գերմանական հրահանգիչներ»[1912]: Այս հեռագրի կապակցությամբ Վ. Լենինը հուլիսի 29-ին Ստ. Շահումյանին պատասխանեց. «Զորքեր ուղարկելու համար

[1909] **Шатуновская О.**, В те огненные дни..., «Коммунист», Ереван, 20 сентября, 1989, № 218.
[1910] Տե՛ս **Шаумян Сур.**, նշվ. աշխ., стр. 29, տե՛ս նաև **Սարգսյան Ե.**, նշվ. աշխ., էջ 404:
[1911] Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հ. 5, էջ 198:
[1912] Նույն տեղում, էջ 220:

միջոցներ ձեռք կառնենք, բայց հաստատապես խոսք տալ չենք կարող»[1913]*: Խոսքը, ըստ էության, վերաբերում էր Բաքվի կոմունան հաստատապես պաշտպանելու բոլշևիկյան տարակուսանքին: Ավելին՝ նորահայտ արխիվային վավերագրերը վկայում են, որ Վ. Լենինը Բաքվի պաշտպանության ձախողման դեպքում քաղաքի բնակչության նկատմամբ, որում մեծ թիվ էին կազմում հայերը, ծրագրել էր իրագործել ցեղասպան գործողություններ: Այսպես՝ ռուս գրող Վլադիմիր Սոլոուխինն իր՝ «Ցերեկվա լույսով» գրքում օգտագործում է հետազոտող Բ. Պուգաչովի կողմից լենինյան վուակ արխիվում հայտնաբերված Վ. Լենինի հրահանգներով մի նամակ, որում վերջինս «պահանջում էր Բաքվից կարմիրների նահանջի դեպքում հրկիզել քաղաքն իր ողջ բնակչությամբ»*[1914]*: Այս առումով Վ. Լենինի բարոյական դիմանկարը դիպուկ է բնորոշել ռուս նշանավոր փիլիսոփա Նիկոլայ Բերդյաևը՝ գրելով. «...Համակվելով ծայրահեղական հեղափոխական դաղափարով, նա, ի վերջո, կորցրեց բարու և չարի անմիջական տարբերության ըմբռնումը, կորցրեց անմիջական կապը կենդանի մարդկանց հետ, թույլ տալով խաբեություն, կեղծիք, բռնություն, դաժանություն...»*[1915]*:

Մինչդեռ Բաքվի դրությունը վատթարանում էր: Սովը դառնում էր անխուսափելի: Բաքվի շրջակա թաթարական գյուղերի բնակիչները ոչինչ չէին բերում շուկա վաճառելու, իսկ բերված մթերքների գները հասան սոսկալի չափերի: «Հորիզոնի» վկայությամբ՝ «Բաղաքի շրջակայ թուրք գիւղերը նոյնպէս ոչինչ չէին բերում շուկա: Մթերքների գները հասան սոսկալի չափերի, մարդիկ մնում էին քաղցից ու տառապում ծարաւից, որովհետև տաճիկները փչացրել էին Շոլլարի ջրանցքը և ամեն մի բաղեցի օրական ստանում էր կէս դոյլ աղահանած ծովաջուր»[1916]*: Հաց ճարելու համար Բաքվի ժողկոմխորհը Ալ. Բեկզադյանի գլխավորությամբ լիազորներ էր ուղարկել Հյուսիսային Կովկաս:*

Օրհասական այդ օրերին, երբ վճռվում էր Բաքու քաղաքի ճակատագիրը, Ռուսաստանից ռազմական անհրաժեշտ օգնությունը

[1913] Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 50, Երևան, 1983, էջ 149:

[1914] Солоухин В., При свете дня, Москва, 1992, стр. 216, տե՛ս նաև Խուրշուդյան Ռ., Եղեռնը և բոլշևիզմը, «Հայոց ցեղասպանություն. պատճառներ և դասեր», № 2, Երևան, 1995, էջ 30:

[1915] Սեջքերումն ըստ՝ Խուրշուդյան Ռ., նշվ. աշխ., էջ 31:

[1916] «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 25, № 218:

չստանալու և ուժերի անբավարարության պատճառով բարձրացավ Հյուսիսային Իրանից անգլիացիներին Բաքու հրավիրելու հարցը[1917]*: Այդ առնչությամբ հայ հասարակական-քաղաքական ուժերի շրջանում ծավալվեցին թեժ քննարկումներ: Ստեղծված պայմաններում վճռելով Բաքվի պաշտպանության գործում օգտագործել անգլիացիների զինական ուժերը, Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը, ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն, ԱՀ սոցիալիստ-հեղափոխականներն (Էսէռ) ու սոցիալ-դեմոկրատ մենշևիկների խմբակցությունները որոշեցին ապավինել անգլիացիների օգնությանը*[1918]*: Ս. Վրացյանի բնորոշմամբ՝ «Դրությունը դառնում էր յուսահատական: Ի՞նչ անել, ու՞մ դիմել: Ռուսաստանից յոյս չկար... Մնում էր աղօտ հաւանականութիւն օգնութիւն ստանալ «երրորդ ուժից» անգլիացիներից...»*[1919]*: Հակառակ դրան՝ բոլշևիկները, ելնելով արևմուտքի ինտերվենցիային ամենուրեք դիմակայելու դիրքերից, դեմ արտահայտվեցին այդ տեսակետին՝ դառնալով, որ «Բաքվի տերիտորիայում անգլիական զորքերի երևալը նշանակելու է այդ քաղաքի օկուպացիան անգլիական իմպերիալիզմի կողմից և Բաքու քաղաքը կորչելու է Ռուսաստանի համար»*[1920]*: Ստ. Շահումյանը, ելույթ ունենալով Բաքվի խորհրդի հուլիսի 16-ի նիստում, հայտարարեց. «Զրկել Ռուսաստանը Բաքվից՝ նշանակում է ամենածանր հարվածը հասցնել նրան: Եթե մենք խոսում ենք Ռուսաստանի անկախության մասին, ապա նավթահանքերը հոժարակամ կերպով անգլիացիներին հանձնելով՝ թերևս մենք ամենամեծ հանցանքն ենք գործում Ռուսաստանի հեղափոխության դեմ»*[1921]*: Տարված Բաքուն խորհրդային Ռուսաստանի կազմում պահպանելու խնդրով՝ բոլշևիկները մոռանում էին հայ բնակչությանը սպառնացող մահացու վտանգը: Այս ցավալի մտայնությունը, իհարկե, չէր բխում Բաքվի բազմաքանակ հայ բնակչության շահերից: Այս առումով ուշագրավ է «Բաքվի չիրիմները» հոդվածաշարում Դ. Անանունի այն դիտարկումը, թե «Բոլ-*

[1917] 1918 թ. հունվարին անգլիական զորքերը, գեն. Դենստերվիլի գլխավորությամբ Միջագետքից անցնելով Իրան, նպատակ ունեին այն հենակետ դարձնելով թափանցել Բաքու, իսկ այնուհետև անգլիական ազդեցությունը տարածել ողջ Այսրկովկասի վրա: 1918 թ. հունիսի վերջերին անգլիացիները գրավեցին Ռաշտը, իսկ օգոստոսին՝ Էնզելին, որը վերածվեց Կասպից ծովում անգլիական ծովային հենակետի (տե՛ս Իրանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին, էջ 50-51):

[1918] Տե՛ս Ռոստոմ, Մահուան վաքսուցամեակին առթիւ, էջ 360:

[1919] Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 168-169:

[1920] Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հ. 5, էջ 214:

[1921] Նույն տեղում, էջ 194:

չևիկյան իշխանությունը Բաքվում Ռուսաստանի համար էր աշխատում»[1922]:

Բաքվի խորհրդի հուլիսի 25-ի արտակարգ նիստը՝ անգլիացիներին Բաքու հրավիրելու հարցի վերաբերյալ, աջ էսէռների, մենշևիկների ու դաշնակցականների՝ 259 ձայնի մեծամասնությամբ՝ ընդդեմ բոլշևիկների, ձախ էսէռների և մի խումբ ձախ դաշնակցականների 236 ձայնի, բանաձև ընդունեց անգլիացիներին հրավիրելու մասին: Այդ որոշմանը բոլշևիկները, Ստ. Շահումյանի գլխավորությամբ, դեմ արտահայտվեցին և խորհրդի հուլիսի 31-ի նիստում ժողկոմխորհը վերջնականապես վայր դրեց իր լիազորությունները[1923]: *Անգլիական զինուժին ապավինելը մեծ խանդավառություն էր առաջ բերել ժողովրդի բոլոր խավերում: Կառավարության անդամ, մենշևիկ Գ. Այոլյան Թիֆլիսում 1918 թ. հոկտեմբերի 20-ին Բաքվի անկման պատճառների չուրջ կարդացած զեկուցման մեջ այդ առթիվ ասել է. «...թէ որքան ժողովրդականութիւն էր վայելում անգլիացիներին Բագու հրաւիրելու գաղափարը ժողովրդի բոլոր խաւերում և նոյն իսկ բանւորութեան մէջ, երևում է նրանում, որ երբ բոլշևիկները խորհրդի նիստերում պարտելուց յետոյ ուզում էին միտինգներում անց կացնել իրենց հակաանգլիական որոշումները, բանւորները թոյլ չտուեցին այդ իմաստով խօսել...»*[1924]:

Ժողկոմխորհի հրաժարականից հետո ստեղծվեց «Կասպիական նավատորմի կենտրոնական կոմիտեի և բանվորների, զինվորների, նավաստիների խորհրդի դիկտատուրա» (Յենտրոկասպիի դիկտատուրա) կառավարությունը (նախագահ՝ սոցիալիստ-հեղափոխական Մ. Տյուշկով, փոխնախագահ՝ ՀՅԴ անդամ Ալ. Առաքելյան, ռազմածովային կոմիսար՝ գեն. Հ. Բագրատունի): Դիկտատուրայի զորքի ընդհանուր հրամանատար նշանակվեց գեն. Դոկուչաևը, չտաբի պետ՝ գնդ. Զ. Ավետիսյանը, ռազմաճակատի մատակարարման բաժնի պետն էր Տեր-Պողոսյանը[1925]:

Միաժամանակ չարունակվում էր թուրքերի առաջխաղացումը դեպի Բաքու, որն ուղեկցվում էր Շամախու գավառի հայկական գյուղերում և զորքի հետ գաղթող հայերի կոտորածներով և գերե-

---

[1922] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 96, թ. 54:

[1923] Տե՛ս Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հ. 5, էջ 218, 229:

[1924] «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 25, № 218:

[1925] Տե՛ս «Արեւ», Բագու, 1918, օգոստոսի 18, № 162, տե՛ս նաև Бюлетени диктатуры Центрокаспия и Президиума Временнаго Исполнит. к-та., Баку, 1918, 3 августа, № 2.

վարուքյամբ[1926]: Բաքվի զորքի նահանջի պատճառ դարձավ նաև գնդ. Լ. Բիչերախովի դավաճանական քայլը, որն անհիմն կերպով հուլիսի 29-ին անակնկալ թողեց ռազմաճակատի աջ թևը և իր ջոկատով քաշվեց Սումգայիթ, իսկ այնտեղից՝ Պետրովսկ[1927]: Հուլիսի 31-ին թուրքական զորքերն արդեն մոտեցել էին Սումգայիթին, իսկ հյուսիսային խումբը՝ Բիբի-Հեյբաթին[1928]: Բաքվի օրհասական այդ օրերին՝ հուլիսի վերջերին, Հյուսիսային Կովկասից Աստրախանի վրայով Բաքվի պաշտպաններին օգնության են հասնում նշանավոր հայդուկներ Սեբաստացի Մուրադը (Մուրադ Խրիմյան), Սեպուհը (Արշակ Ներսիսյան)[1929], հնչակյան գործիչ Վահագն Նալբանդյանը[1930] և Ստեփան Շազիկյանը[1931]:

Օգոստոսի 1-ին Նուբի փաշան հրաման արձակեց չարունակել հարձակումը Բաքվի ռազմաճակատում: Թաքցնելով քաղաքը գրավելու նպատակը, Նուբի փաշան իր հրամանը հիմնավորում էր անհեթեթ պատճառաբանությամբ. «Ելիզավետպոլի մոտ չատ վատ կլիմայական պայմանների պատճառով անհրաժեշտ է զորքը տեղափոխել դեպի արևելք»[1932]: Թուրքական զորամասերի և հայ դիմադրական ուժերի միջև մարտերը վերսկսվում են օգոստոսի 2-ին: Բաքվի պաշտպանները կռվում էին անօրինակ քաջությամբ: Համախմբելով իրենց ուժերը և գործի դնելով մարտական ողջ կարողությունները՝ նրանք արիաբար պաշտպանվում էին՝ ձախողելով հակառակորդի բոլոր ճեռնարկումները: Կռվում քաջաբար զոհվեց զանգեզուրցիների 17-րդ գումարտակի 4-րդ վաշտի հրամանատար Ասլան Սարդայանը[1933]: Օգոստոսի 3-ին թշնամին Բիբի-Հեյբաթի շրջանում կազմակերպեց նոր գրոհ: Նրա թնդանոթները, գնդացիրները և հրացանները հուժկու կրակ թափեցին Բաքվի պաշտպանների վրա: Ռազմաճակատի աջ թևում անօրինակ քաջությամբ կողք կողքի կռվում էին

[1926] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 8, թ. 27:
[1927] Տե՛ս նույն տեղում, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 8-9:
[1928] Տե՛ս նույն տեղում:
[1929] Տե՛ս Գևորգյան Հ., Սեբաստացի Մուրադ, Երևան, 2003, էջ 356:
[1930] Տե՛ս «Յառաջ», Փարիզ, 21-րդ տարի, 1949, դեկտեմբերի 11, № 1434:
[1931] ՀՅԴ անդամ Ստեփան Շազիկյանը 1922 թ. հուլիսի 21-ին Թիֆլիսում Արտաշես Գևորգյանի և Պողոս Տեր-Պողոսյանի հետ մասնակցել է հայ ժողովրդի դահիճ Ջեմալ փաշայի ահաբեկչությանը:
[1932] Օհանջանյան Ա., 1915 թվական. Անհերքելի վկայություններ, էջ 168-169:
[1933] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 10, տե՛ս նաև «Արեւ», Բագու, 1918, օգոստոսի 2, № 153, տե՛ս նաև Ստեփանյան Գ., Զանգեզուրցի Ասլանը (մի էջ Բաքվի 1918 թ. հերոսամարտից) «Սյունյաց երկիր», Կապան, 2008, ապրիլի 26, № 10-11: Ասլան Սարգսյանը ծնունդով Գորիսի շրջանի Շինուհայր գյուղից էր (տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 30, թ. 1-8):

Սեբաստացի Մուրադի և ՍԴ Հնչակյան կուսակցության անդամ Պողոս Տեր-Դավթյանի ջոկատները[1934]: Օգոստոսի 3-ի կռվում հերոսի մահով ընկավ 16-րդ դումարտակի հրամանատար շտաբս-կապիտան Արամ Դովլաթյանը[1935]: Բիբի-Հեյբաթի շրջանում, թշնամու բարձունքը գրավելու ժամանակ, քաջաբար զոհվեց Սեբաստացի Մուրադը: Սեպուհն իր հուշերում, վերհիշելով այդ դրվագը, գրում է. «...չարագուշակ եւ ազետաբեր գնդակ մը եկաւ դպաւ անոր ճակատին, եւ ան, թաւալգլոր, գնաց բլուրի զառիվարէն դէպի թշնամիին կողմը»[1936]: Բիբի-Հեյբաթի շրջանում փուփոխական հաջողություններով մարտերը շարունակվեցին նաև օգոստոսի 4-ին: Քաղաքի մատույցներում՝ պատամդարում, թեժ մարտեր ծավալվեցին հատկապես օգոստոսի 5-ի լուսաբացին: Բաքվի ուժերին մեծ կորուստների գնով հաջողվեց ոչ միայն կասեցնել Բախլով ներխուժած թշնամու առաջխաղացումը, այլև մահապարտներին հաջողվեց շրջանցել հակառակորդին և թիկունքից հարվածել նրան: Արդյունքում՝ թուրքերը, մարտի դաշտում թողնելով շուրջ 1000-ից ավել սպանված, հետ շպրտվեցին Բաքվից ավելի քան 40 կմ հեռու գտնվող Այլաթ կայարան: «...Թշնամին օգոստոս 5-ին ժամը երեքից սկսեց փախչել խուճապահար՝ կուռ դաշտում թողնելով հազարից աւելի դիակներ, հարիւրաւոր ձիեր, բեռնատար ուղտեր եւ ջորիներ, մեծ քանակութեամբ զէնք եւ ռազմամթերք»[1937],- գրում է Ա. Գյուլխանդանյանը: Թուրք չարդարարների դեմ անհավասար գոտեմարտում անձնվիրաբար ընկան բազմաթիվ հայորդիներ, որոնց թվում էին Համազասպի օգնական, հին հայդուկ Սերգո Մանուչարյանն ու առաջին ձիավոր հարյուրյակի հրամանատար, գանձակեցի Իսահակ Արղումանյանը[1938]:

[1934] Տե՛ս Սողոմոնյան Ջ., Անմահության ճամբաներով (ձեռագիր հուշագրություն), Կասպան, 1975, էջ 4: Ձեռագրի հեղինակը Պողոս Տեր-Դավթյանի եղբոր որդին է: Հուշագրությունը պահվում է մեր անձնական արխիվում:

[1935] Տե՛ս Бюлетени диктатуры Центрокаспия и Президиума Временнаго Исполнит. к-та., Баку, 1918, 3 августа, № 2.

[1936] Սեպուհ, Էջեր իմ յուշերէն, հ. Բ, Պոստոն, 1929, էջ, 176: «Հորիզոնի» հաղորդած մի տեղեկության համաձայն, Մուրադը վիրավորված է եղել յոթ տեղից (տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918, դեկտեմբերի 7, № 15): Մուրադի մահը մեծ վիշտ էր պատճառել Բաքվի հայությանը և զինվորականներին: Թաղման ժամանակ դամբանական է ասել նաև գնդ. Պետրովը. «...բոլշեւիկեան հեծելազօրքի հրամանատարը՝ գնդապետ Փետրով լալով խօսեցաւ իր դամբանականը, հերոսին դագաղին առջեւ» («Յառաջ», Փարիզ, 1949, դեկտեմբերի 13, № 1435):

[1937] Գիւլխանդանեան Ա., Օգոստոս հինգը (մի էջ Բագուի հերոսամարտից), «Վէմ», Փարիզ, 1933, նոյեմբեր-դեկտեմբեր, Ա տարի, № 2, էջ 120:

[1938] Տե՛ս նույն տեղում:

Ընդհանուր առմամբ, Բաքվի պաշտպաններից զոհվեց 14 սպա, զոհված և վիրավոր զինվորների թիվը 415-էր[1939]*: Բարձր գնահատելով օգոստոսի 2-5-ը տևած մարտերի նշանակությունը՝ «Հորիզոնը» գրել է. «Օգոստոսի 2-5-ի հերոսամարտը արժանի է յաւերժացման պատմութեան էջերում: Կարելի է ասել, որ այդ երեք օրւայ ընթացքում բոլոր բագւեցիք անխտիր հերոսներ էին դարձել»*[1940]*:*

Օգոստոսի 4-ին Լենկորանից Բաքվի պաշտպաններին օգնության եկան չոլանդական համազգեստ հագած անգլիական առաջին փոքրաթիվ ջոկատները՝ գնդ. Ստոքսի հրամանատարությամբ: Անգլիական զորքերին Բաքու մտնելու առիթով օգոստոսի 8-ին Լենկորանից անգլիական ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ-մայոր Լ. Դենստերվիլի հղած հայտարարության մեջ ասվում էր. «Բրիտանական կառավարությունը չի հետապնդում որևէ անհատական շահեր և Բաքվում ոչ մի շահ չունի, բացի գերմանական իմպերիալիզմի և դրավումների դեմ եղած դաշնակից պետությունների կռվի հետ կապված շահերից: Բրիտանական զորքերի գալու նպատակն է՝ կռիվ տանճիկների և գերմանացիների դեմ»[1941]*: Օգոստոսի 17-ին Բաքու ժամանեց նաև գեն. Դենստերվիլը*[1942]*: Բաքու ժամանած անգլիական ուժերի ընդհանուր թիվը հասնում էր մոտ 1640-ի, որից կռվող ուժ էր 800-900-ը*[1943]*: Հարկ է նշել, որ Բաքվի պաշտպանությանը անգլիացիների մասնակցությունը պայմանավորված էր Միջագետքում գտնվող անգլիական բանակին Լենկորանի վրայով վառելանյութ հասցնելու անհրաժեշտությամբ և, որպես վերջնական նպատակ՝ Այսրկովկասին, Միջին Ասիային և Կասպից ծովին տիրելու առաջադրանքով: Ինքը՝ Դենստերվիլը, չէր թաքցնում այդ և գրում էր. «Վերահսկողությունը ծովի վրա կարող է պատկանել միայն նրան, ով տիրում է Բաքվին, հենց դրա համար էլ մեզ անհրաժեշտ է օկուպացնել Բաքուն»*[1944]*:*

[1939] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 171-172:
[1940] «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 25, № 218:
[1941] ՀՀՊՊԹ, ֆ. փաստաթղթային, ինվ. 5565:
[1942] **Денстервиль**, Британский империализм в Баку и Персии 1917-1918 гг. (Воспоминания), перевод с англиского **Б. Рузено**, Тифлис, 1925, стр. 184, 189, տե՛ս նաև «Աշակ», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 20, № 190:
[1943] **Бегак Р.**, Суд над англичанами, сдавшими Баку туркам в 1918 г., Баку, 1927, стр. 12, տե՛ս նաև Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, էջ 252:
[1944] **Денстервиль**, նշվ. աշխ., стр. 126.

Բաքվում անգլիացիների հաստատվելը առիթ տվեց Գերմանիային կովկասում ընդարձակել իր գործողությունները: Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Բերնսդորֆի՝ Բեռլին 1918 թ. օգոստոսի 28-ի հղած հեռագրում ասվում էր. «Քանի որ անգլիացիները հաստատվում են Բաքվում, ես համոզված եմ, որ մենք թուրքերի և Ադրբեջանի մահմեդականների հետ պետք է ձեռք բերենք համաձայնություն, որպեսզի համատեղ հարձակվենք Բաքվի դեմ: Հակառակ դեպքում մենք բաց կթողնենք նավթը, իսկ դեպի Պարսկաստան, Թուրքեստան ուղին կշրջափակվի: Դրությունը նպաստավոր կդառնա, եթե մենք Մոսկվայի կառավարությունից կարողանանք ստանալ Բաքուն գրավելու մանդատ»[1945]: Բաքվում անգլիական ուժերի հաստատվելը նոր թափ հաղորդից ռուս-գերմանական դիվանագիտական հարաբերություններին: Բաքուն ձեռքից բաց չթողնելու համար Ռուսաստանի և Գերմանիայի կառավարությունները որոշեցին դիմել վճռական քայլերի: Գերմանիայի արտաքին գործերի գծով պետական քարտուղար Պ. ֆոն Հինցեի և Բեռլինում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Ա. Իոֆեի միջև սկսված բանակցությունների ժամանակ, երբ քննարկվում էր գերմանացիների կողմից Բաքվի գրավման հարցը, Իոֆեն սկզբից համաձայնեց, երբ նրան հավաստիացրին, որ «Բաքուն կգրավեն միայն գերմանական զորամասերը, իսկ թուրքական զորամասերը կկանգնեցվեն Բաքվից դեպի արեւմուտք և արեւելք»[1946], որով հնարավոր կլիներ խուսափել հայ բնակչության դեմ թուրք-թաթարական գազանություններից: Գերմանիայի հետ տարվող բանակցությունների ժամանակ, Բրեստ-Լիտովսկի պայմանագրին կից, 1918 թ. օգոստոսի 27-ին կնքվեց ռուս-գերմանական լրացուցիչ համաձայնագիր, որով խորհրդային կառավարությունն իր համաձայնությունը տվեց՝ «աջակցել Բաքվի մարզում նավթի ու նավթամթերքների հանույթին և Գերմանիային տրամադրել հանույթի քանակի քառորդ մասը»[1947]: Համաձայնագրում հատուկ կետ մտցվեց, ըստ որի՝ Բաքուն և Բաքվի գավառն անվերապահորեն մնում էին Ռուսաստանի կազմում: Գերմանիան պարտավորվում էր ապահովել, որ երրորդ տերության, այսինքն՝ Թուրքիայի ուժերը չանցնեին Կուր գետով մինչև Շամախի գավառի սահմանը, այնուհետև Բաքվի գավառի հյուսիսային սահմանով՝ մինչև Կասպից ծով

[1945] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), стр. 573.
[1946] Օհանջանյան Ա., 1915 թվական: Անհերքելի վկայություններ, էջ 173:
[1947] ДВП СССР, т. I, стр. 444.

ձգվող բաժանարար գիծը[1948]: Պայմանագիրն ուներ նաև մի գաղտնի լրացում, որով «վճռվում էր անդլիացիներին վռնդել Բաքվից»[1949]:

Ռուս-գերմանական լրացուցիչ պայմանագիրը միանշանակ չընդունվեց ԱԴՀ-ի կառավարության և նրա քաղաքական հենարան համարվող Մուսավաթ կուսակցության կողմից: Ց. Խան-Խոյսկու կառավարությունը Բաքուն դիտում էր որպես իր ապագա մայրաքաղաք, քաղաքական հենարան և տնտեսական կենտրոն, որի գրավումը կամրապնդեր ադրբեջանական նորաստեղծ պետականությունը[1950]: Այս առիթով Օսմանյան կառավարության հրավերով Կ. Պոլսում գտնվող Ադրբեջանի դիվանագիտական պատվիրակության դեկավար, թաթարական «ազգային» խորհրդի նախագահ Մեհմեդ Էմին Ռասուլ-Զադեն 1918 թ. սեպտեմբերի 12-ի հայտարարությամբ իր դժգոհությունը հայտնեց գերմանական դեսպանությանը, որը տպագրվեց տեղի «Իկդամ» («Եռանդ») թերթի սեպտեմբերի 23-ի համարում: Հայտարարությունում մասնավորապես ասվում էր. «Ադրբեջանի ժողովուրդը, վստահելով կենտրոնական պետություններին, բարեկամությանը, թօթափել էր ռուսական լուծը, որ նրան ճզմում էր դարերից ի վեր, և յայտարարել իր անկախությունը: Այդ ժողովուրդը շատ վշտացաւ, երբ լսեց, թէ գերմանական կայսերական կառավարությունը վերոյիշեալ լրացուցիչ պայմանագրով Բագուն՝ Ադրբեջանի մայրաքաղաքն ու նրա իմացական, տնտեսական ու քաղաքական կենտրոնը, մնայ Ռուսաստանի տիրապետութեան տակ»[1951]: Այնուհետև Ռասուլ-Զադեն, չարամտորեն լռության մատնելով հայ և հրոսպացի առևտրաարդյունաբերողների ծանրակշիռ դերը Բաքվի տնտեսության տարբեր ոլորանների զարգացման գործում, ինչպես նաև կեղծելով նահանգի ժողովրդագրությունը, հայտարարությունում գրում էր, թե իբր, «Բագւի շրջակայքի ազգաբնակչութիւնը բացառապէս մահմեդական է: Նոյնպէս մահմեդականներն են, որ մեծ մասամբ իրենց ձեռքն են առել քաղաքի տնտեսական հարստութեան աղբիւրները, նաեւթահորերի և այս արդիւնաբերութեան հետ կապ ունեցող հիմնարկութիւնների կարևոր մասը նոյնպէս նրանց ձեռքին է»[1952]:

Բաքուն գերմանական զորքերի կողմից գրավելու նպատակով Վրաստանում Գերմանիայի գերագույն կոմիսար գեն. Կրես ֆոն

[1948] Տե՛ս **Чичерин Г.**, Статьи и речи по вопросам международной политики, Москва, 1961, стр. 63-65, տե՛ս նաև **Swietochowski T.**, Russian and Azerbaijan: 1905-1920, p. 134.

[1949] Օհանջանյան Ա., նշվ. աշխ., էջ 173:

[1950] Տե՛ս Կնյազյան Դ., նշվ. աշխ., էջ 33:

[1951] «Հորիզոն», Թիֆլիս, 1918, նոյեմբերի 10, № 231:

[1952] Նույն տեղում:

Կրեսենչտայնը Լ. Լյուդենդորֆից ստացավ նախապատրաստման հրահանգ[1953]: Վերջինիս հրամանով՝ Կրես ֆոն Կրեսենչտայնի տրամադրության տակ Ուկրաինայից Սև ծովով Կովկաս փոխադրվեցին մեկ հեծելազորային և մեկ հետևակային բրիգադ: Այդ օժանդակ ուժերի մեծ մասը սեպտեմբերի կեսերին ժամանեց Վրաստան[1954]:

Բաքվի գրավման խնդրում այդ օրերին որոշակի հետաքրքրություններ էր ցուցաբերում նաև Ավստրո-Հունգարիան, որը մտադիր էր Ռուսաստանի հետ ինքնուրույն լրացուցիչ պայմանագիր կնքել և ստանալ գերմանացիներին տրվելիք նավթի հանույթի մեկ քառորդը: Ուստի այդ ծրագիրը դյուրին դարձնելու նպատակով Ավստրո-Հունգարիան ևս ցանկանում էր մասնակցել Բաքվի գրավմանը[1955]:

Բրեստ-Լիտովսկի հաշտության ռուս-գերմանական լրացուցիչ համաձայնագիրը անակնկալի բերեց թուրքերին[1956]: Չնայած Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերի հարցում գերմանա-թուրքական առկա հակասությանը՝ այդուհանդերձ, խուսափելով հարաբերություններ հետագա սրումից ու ելնելով Կովկասում Գերմանիայի և Թուրքիայի միջև ազդեցության և տիրապետության ոլորտների սահմանազատման խնդրից՝ Գերմանիան չկատարեց իր ստանձնած պարտավորությունը ու ճնշում չգործադրեց թուրք դաշնակցի վրա: Ինչպես ասված է դեն. Կրես ֆոն Կրեսենչտայնի 1918 թ. սեպտեմբերի 2-ի զեկույցում՝ «Բաքվի նախագծին թուրքական զորքի չմասնակցելը անհնար է իրերի դրության պատճառով»[1957]: Կովկասի հետ կապված հարցերի առիթով Բեռլինում 1918 թ. սեպտեմբերի 8-ին հրավիրված Քառյակ միության երկրների (Գերմանիա, Թուրքիա, Ավստրո-Հունգարիա, Բուլղարիա) բանակցություններում Թալեաթ փաշան, գերմանական գործիչների հետ զրույցի ժամանակ, երկիմաստ հայտարարել էր. «Հայերի հետ մենք ինքներս կկարգավորինք մեր գործերը, եթե դուք չմիջամտեք...»[1958]: Անշուշտ այդ «կարգավորումը» թուրքերը պետք է իրականացնեին կովկասահայերի լիովին ոչնչացման կամ իրենց բնակավայրերից բռնագաղթեցման ճանապարհով: 1918 թ. սեպտեմբերի 9-ին Վիեննայից Հ. Օհան-

---

[1953] Տե՛ս Օհանջանյան Ա., 1915 թվական. Անհերքելի վկայություններ, էջ 173:
[1954] Տե՛ս Սարգսյան Ե., նշվ. աշխ., էջ 385:
[1955] Տե՛ս Օհանջանյան Ա., 1915 թվական. Անհերքելի վկայություններ, էջ 173:
[1956] Ռուս-գերմանական պայմանագրի հավելվածի վավերացման մասին Թալեաթ փաշան իմացավ Բեռլինում, երբ եկել էր մասնակցելու 1918 թ. սեպտեմբերի 8-ին հրավիրված բանակցություններին: Պայմանագիրն այնպես էր վրդովել նրան, որ «մինչև անգամ ուզում էր նույն րոպեին վերադառնալ Կ. Պոլիս» (Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., ԼՀԳ, Երևան, 1994, № 1, էջ 30):
[1957] Տե՛ս Օհանջանյան Ա., 1915 թվական. Անհերքելի վկայություններ, էջ 173:
[1958] Տե՛ս Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., ԼՀԳ, 1994, № 1, էջ 30:

Ջանյանի՝ Կ. Պոլիս՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակության հղված գրությունում ասվում էր. «Թալեաթ փաշան յուր դիրքը դէպի հայերը հիմնովին է փոխել... Նա ասել էր, որ Տաճկաստանը պատրաստ է բավականանալ Բրեստի սահմաններով, միայն թէ Տաճկաստանին ազատություն տրվի գործելու և իւր ազդեցությունը վայելելու Ադրբէյջանում»[1959]: Այսպիսով՝ ակներև է, որ Բաքվի հայության ճակատագիրը վճռվում էր մեծ տերությունների քաղաքական-դիվանագիտական խարդավանքների խոհանոցում:

Շարունակելով ռազմական գործողությունները Բաքվի ճակատում՝ թուրքերը, օգոստոսի 5-ի անհաջողությունից հետո հետ քաշվելով, կենտրոնացան Շարանդաղ լեռան մոտ և, շրջակա թաթարական գյուղերից ստանալով նոր համալրում՝ օգոստոսի 29-ին անգլիացիների պաշտպանած ճակատում անցան վճռական հարձակման: Վերջիններս համառ մարտերից հետո թողնելին իրենց դիրքերը: Թուրքերին հաջողվեց սեպտեմբերի 1-ին գրավել Բալախանի, Ռամանի, Սաբունչի, Սուրախան և Խուրդալան գյուղերը, որի հետևանքով Բաքուն ամբողջությամբ շրջապատվեց ցամաքից՝ արտաքին աշխարհի հետ կապ պահպանելով միայն կասպից ծովով: Օգտվելով դրանից՝ Գանձակում գտնվող Ադրբեջանի կառավարությունը՝ հանձին արտաքին գործոց նախարար Մահմեդ Հասան Հաջինսկու, քաղաքը հանձնելու վերաբերյալ նամակ հղեց Հայոց Ազգային խորհրդին, որում ասվում էր. «Ես խնդրում եմ Ձեզ հաւատալ, որ սպիտակ դրօշակ բարձրացնելը Ձեզ կըտայ անձեռնմխելիութեան և իրաւահաւասարութեան կատարեալ երաշխիք»[1960]: Ադրբեջանի կառավարության պահանջն էր. ա) Բաքուն պետք է ճանաչի Ադրբեջանի իշխանությունը, բ) կռվող բոլոր ուժերը պետք է վինաթափ արվեն, գ) Ադրբեջանին անվնաս պետք է հանձնվեն քաղաքը, նավթահանքերը և պետական բոլոր դույքերը[1961]: Նմանաբնույթ բովանդակությամբ նամակ ուղարկեց նաև «Արևելք» զորախմբի գլխավոր շտաբի պետ, թուրքական ծառայության փոխգնդապետ Էռնստ Պարակեն[1962], որի սպառնալից նամակում ասվում էր. «Բագուի հանդէպ գտնուած գերմանական շտապից, որպէս նրա մեծաւորը, ես գալիս եմ

[1959] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 14, 48:

[1960] Գեղամեանց Ե., Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը, պր. Ա, Բագու, 1919, էջ 32:

[1961] Տե՛ս «Աշխատաւոր», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 8, № 127:

[1962] Բաքուն գրավելուց հետո Խալիլ փաշան իր ղեկավարած շտաբից Պարակենին ազատեց զբաղեցրած պաշտոնից (տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), стр. 587):

բանակցել քաղաքը առանց կռւի յանձնելու հնարաւորութեան մասին... Արդ եթէ որ այդ նաւթային քաղաքը չկամեցաք անվնաս և առանց կռւի յանձնելու մեզ ամէնքիս նրանից օգուտելու համար այն ժամանակ պէտք է կռւենք: Հայերի կեանքը ու գոյքը պիտի փչանայ: Եւ կը փչանայ»[1963]: Պարակևի նամակին հաջորդեց Մյուրսել փաշայի օգոստոսի 22-ի նամակը, որում վերջինս, համոզված լինելով, որ Բաքուն հնարավոր կլինի գրավել առանց հայերի դիմադրության, փորձելով մոռացութեան տալ արևմտահայերի նկատմամբ ոչ վաղ անցյալում իրականացրած զանգվածային ջարդերը, թուրքին յուրահատուկ շողոքորթ լեզվով գրում էր. «Երկար տարիներ հայերի և թուրքերի մէջ եղած որդիական և հայրական հին բարեկամութիւնը նորոգած կը լինիք, եթէ որ առանց արունհեղութեան Բագուն յանձնէք»[1964]: Հայոց Ազգային խորհուրդն իր պատասխան նամակում թուրքական և գերմանական սպառնալիքները դնահատեց որպես պատերազմական օրենքների ոտնահարում. «Ձեր սպառնալիքը Բագւի հայ բնակութիւնը ջնջելու, պատերազմական սովորութիւնների մէջ չլսած մի ակտ է, որի դէմ մենք բացարձակօրէն բողոքում ենք ամբողջ լուսաւոր աշխարհի առաջ»[1965]:

Մոտենում էր քաղաքի պաշտպանության վերջին օրը՝ սեպտեմբերի 14-ը, երբ պետք է վճռվեր ինչպես ինքնապաշտպանության, այնպես էլ քաղաքի ավելի քան 160.000 քրիստոնյա բնակչության հետագա ճակատագիրը[1966]: Քաղաքում հայտարարվել էր ռազմական արտակարգ դրություն[1967]: Բաքվի գրավման նախօրեին Էնվերը փաշան իր բնակարանում տեղադրված գաղտնի հեռագրական սպարատով խալիլ փաշային հրահանգել էր կազմակերպել տեղական ուժերը և անհապաղ գրավել Բաքուն[1968]: Սեպտեմբերի 13-ի առավոտյան 3000-ի հասնող թուրքական հետևակը և նրան միացած տեղի թաթարական ջոկատները Սուրախանիի շրջանում անցան հարձակման և մինչև կիսգիշեր «Գայլի դրունքի» շրջանում աշխատում էին ճնշել Բաքվի պաշտպանների ճակատը[1969]: Այդտեղ խիզախորեն մարտնչեցին 5-րդ մարտկոցի հրետանավորները պորուչիկ Արգու-

---

[1963] Գեղամեանց Ե., Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը, պր. Ա, էջ 34-35:
[1964] Նույն տեղում, էջ 37, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 112, թ. 1-2:
[1965] Նույն տեղում, էջ 41:
[1966] Տե՛ս Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հ. 5, էջ 225:
[1967] Տե՛ս Бюлетени диктатуры Центрокаспия и Президиума Временнаго Исполнит. к-та., Баку, 1918, 14 сентября, № 38.
[1968] Տե՛ս Dadrian V., The History of the Armenian Genocide, Providence, Oxford, 1995, p. 385, տե՛ս նաև Փիրումեան Ռ., նշվ. աշխ., էջ 130:
[1969] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 172:

մանյանի գլխավորությամբ: Այդ մարտկոցը մեկ օրվա ընթացքում արձակեց 3800 արկ[1970]*: Թուրքերի դրոհը շարունակվեց նաև հաջորդ օրը*[1971]*: Դիմադրական ուժերն ամեն կերպ ջանում էին թույլ չտալ թուրքերին առաջանալ, սակայն թվական գերակշռություն ունեցող թշնամու գրոհները կասեցնել չհաջողվեց և համառ մարտեր մղելով՝ քաղաքի պաշտպանները սկսեցին նահանջել*[1972]*:*

Սեպտեմբերի 14-ին, փոփոխական հաջողություններով մղված մարտերի շնորհիվ, Բաքվի պաշտպաններին հաջողվեց կասեցնել քաղաքի գրավումը՝ շահելով այն թանկագին ժամերը, որոնք անհրաժեշտ էին հայ բնակչությանը քաղաքից հեռացնելու համար: Դրությունը բարդացավ նաև նրանով, որ ցերեկվա ժամը 2-ին, կովի թեժ պահին, աջ թևում տեղակայված Գ. Բիչերախովի և Բաքվի ուժերին «օգնության նկած» անգլիացիների ջոկատները (հրամանատար՝ կապիտան Բոլլինգտոն), Բաքվի զորքի չտաբի պետ գնդ. Ստոքսի հրամանով, առանց նախազգուշացնելու, Բաքվից մեկնելու մտադրությամբ թողեցին իրենց դիրքերն ու հեռացան նավահանգիստ՝ թողնելով հայությանը միայնակ ու անօգնական[1973]*. «Անգլիացիք, երբ տեսան, թէ այլևս յոյս չկայ, գաղտագողի պատրաստուեցան փախչելու եւ հազիւ երկու ժամ առաջ իրենց նպատակը իմացուցին հայերուն եւ, առանց ունկնդրելու հայ պաշտօնքները, ձգեցին ու հեռացան»*[1974]*:*

Նրանց էր միացել նաև Կովկասում ֆրանսիական զինվորական առաքելության փորձագետ, փոխգնդապետ Պիեռ-Օգյուստ Շարդինյին, որը տեղավորվել էր «Բուրյաթ» չոգենավում: Այդ անակնկալ և ոչնչով չարդարացված քայլը, ինչ խոսք, բացասաբար անդրադարձավ դիրքերում գտնվող զինվորների մարտական ոգու վրա: Հ. Բագրատունու վկայությամբ՝ դեն. Դենստերվիլը և փոխգնդապետ Շարդինյին դեռևս սեպտեմբերի 1-ին իրենից պահանջում էին նկատի ունենալ Ցենտրոկասպիի դիկտատուրայի վրա՝ հանձնելու քաղաքը, պատճառաբանելով, որ «Անդրկովկասում թուրքերի և անդրկովկասյան մահմեդականների դեմ գործողություններն իրենց

[1970] Տե՛ս Սելիք-Եօլչեան Ս., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1925, Գ տարի, օգոստոս, № 10, էջ 112:

[1971] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 22, տե՛ս նաև «Աշխատաւոր», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 26, № 141:

[1972] Տե՛ս նույն տեղում, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 10, տե՛ս նաև ֆ. 199, ց. 1, գ. 253, թ. 9:

[1973] Տե՛ս նույն տեղում, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 10:

[1974] Խաչատուրեան Յ., Անգլիական քաղաքականութիւնն ի Անդրկովկաս, «Հայրենիք», Պօսթըն, 1945, ԻԳ տարի, մայիս-հունիս, № 3, էջ 33:

ծրագրի մեջ չեն մտնում»[1975]*: Այսպիսով՝ Բաքվի անկումը ոչ այնքան ռազմական դործողությունների, որքան դիվանագիտական խաղերի արդյունք էր: Իրականացան Ստ. Շահումյանի մտավախությունները, որ անգլիացիները չահագրգռված չեն Բաքվի երկարատև պաշտպանությամբ: Այս առիթով նա դեռևս Բաքվի խորհրդի հուլիսի 16-ի նիստի իր ելույթում հայտարարել էր. «Բայց եթե նրանք (անգլիացիները - Գ. Ս.) նույնիսկ իրենց ուժերը փոխադրեն, դուք կարծո՞ւմ եք, թե նրանք առաջավոր դիրքեր կդնան, որպեսզի կազմակերպեն Բաքվի լայն պաշտպանություն: Բնավ երբեք»*[1976]*: Բաքվի խաբված հայերը համոզվեցին «դաշնակիցների» խոստումների կեղծության մեջ: Ինչպես իրավամբ գրել է Հ. Թումյանը՝ «...անմտություն էր Բաքվի վրկության հույսերը կապել օսմանյան թուրքերի հայաջինջ քաղաքականության ավանդական հովանավորողների նենգ խոստումների հետ: 1918 թվի սեպտեմբերյան հայկական կոտորածները Բաքվում, հայության կրած անլուր տառապանքներն ամբողջ 1919 թվի ընթացքում Ղարաբաղում, Նախիջևանում եւ այլուր՝ անգլիացիների վարած հայահալած քաղաքականության արդյունք էին»*[1977]*: Լևոյի դիպուկ բնորոշմամբ՝ անգլիացիները «եկել էին, ըստ իրենց ավանդական սովորության, ուրիշի ձեռքով փուշ քաշելու»*[1978]*:

Անգլիացիների կողմից ռազմաճակատում իրենց դիրքերը լքելու պատճառով փաստորեն փլուզվեց Բաքվի պաշտպանական համակարգը: Երբ Բաքվի պաշտպաններին «օգնության եկած» անգլիական ջոկատներն ու Գ. Բիչերախովը լքեցին դիրքերը և ժամը 5-ին սկսեցին չոգենավ բարձել իրենց իրերը՝ Պարսկաստան ուղևորվելու նպատակով, հայ բնակչության շրջանում տագնապ և խուճապ առաջացավ[1979]*: Ականատեսի վկայությամբ՝ «Հենց որ այս լուրը տարածվեց, սկսվեց մի սոսկալի իրարանցում, փախչում էին ամենքը դեպի նավահանգիստ, ուր տեղի էր ունենում սոսկալի խուճապ: Ճիչ, աղաղակ, կանանց ուշաթափություն, ընտանիքի անդամների իրար կորցնել. այս բոլորը մի անգամայն անսպասելիորեն կատարվեց»*[1980]*: Վերահաս աղետից խուսափելու համար բազմահազար հայերը, թող-*

[1975] Նույն տեղում, թ. 68:
[1976] Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հ. 5, էջ 193:
[1977] Թումյան Հ., նշվ. աշխ., էջ 99-100:
[1978] Լեո, Անցյալից, Երևան, 2009, էջ 372:
[1979] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 120, թ. 6 (ֆրանսերեն):
[1980] «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 13, № 208:

նելով հայրենի օջախը, չտապեցին նավամատույց՝ չոգենավերով հարևան շրջաններ մեկնելու մտադրությամբ: Նրանց մեջ էին ինչպես բաքվահայերը, այնպես էլ Գյոքչայի և Շամախիի գավառների գաղթականները և որոշ թվով վանեցի ընտանիքներ, որոնք 1915-1916 թթ. հանգրվանել էին Բաքվում[1981]: «Այս ամէնը տեսնելով (անգլիացիների հեռանալը - Գ. Ս.) հայկական թաղերում, կարելի է ասել, այլ ևս մարդ չմնաց: Տղամարդ, կնիկարմատ, երեխայ մի մի կապոց շալակած՝ չնչասպառ ծովափն էին վազում: Դրանց նուիքից՝ ազիողորմ արտասուքներով՝ վազ են գալիս Շամախուոյ և Գէօքչայի գավառների այն փախստականները, որոնք կիսամերկ, կիսակնդան գեղում ու վխտում էին ցարդ քաղաքի փողոցների անկիւններում ու հրապարակներում»[1982],- գրում էր դեպքերի ականատես Եղիշե ավ. քհն. Գեղամյանցը: Ստեղծված իրադրության պայմաններում, իրավիճակից ելք գտնելու համար, երեկոյան ժամը 8-ին, Կենտրոնական կասպիի կառավարության գումարած նիստին, որին մասնակցում էր նաև Ռոստոմը, որոշում կայացվեց դադարեցնել դիմադրությունը և քաղաքը հանձնել թշնամուն: «Կենտրոնական տնային կոմիտեի» (Ցենտրոդում) նախագահ Ա. Լեոնտովիչին և «Ցենտրոդումին» կից, «Ռազմաճակատի հասարակական օգնության» գլխավոր լիազոր Պ. Իլյուշկինին հանձնարարվեց՝ ժամը 9-ին Բաքվում պարսկական ու չվեդական դեսպանների հետ հանդիպել թշնամի կոմսին և բանակցել քաղաքը հանձնելու պայմանների մասին: Որոշվեց տեղափոխել ժողովրդին և զինվորներին, այդ նպատակով տրամադրել 60 չոգենավ, որից 20-ը՝ զորքի, 40-ը՝ ժողովրդի համար[1983]: Տարհանման աշխատանքները կազմակերպելու համար դեռ օգոստոսի սկզբներին ստեղծվել էր հատուկ հանձնաժողով՝ կառավարության անդամ Լեմլեյնի նախագահությամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվել էր նաև ՀՅԴ անդամ Գ. Վարշամյանը[1984]: Էվակուացիայի աշխատանքները հաջող կազմակերպելու գործին ձեռնամուխ էր եղել նաև Հայոց Ազգային խորհուրդը՝ Ա. Գյուլխանդանյանի և Ռոստոմի ղեկավարությամբ, որոնք ուժերի գերագույն լարումով ջանում էին հնարավորին չափ անխուճապ իրականացնել այդ: Էվակուացիայի անմի-

---

[1981] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 462, ց. 1, գ. 33, թ. 4:
[1982] Գեղամեանց Ե., Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը, պր. Բ, էջ 48:
[1983] Տե՛ս Մելիք-Եօլչեան Ս., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1925, Գ տարի, օգոստոս, № 10, էջ 112-113, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 22:
[1984] Տե՛ս Մելիք-Եօլչեան Ս., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1925, Գ տարի, օգոստոս, № 10, էջ 110:

ջական կազմակերպման համար ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն ընդհանուր լիազոր էր նշանակել Գ. Բալայանին, որի տրամադրության տակ էին դրվել ծովափում գտնվող փոխադրական բոլոր միջոցները[1985]: Տարհանման 4-5 ժամը լավագույնս օգտագործելու և արդեն քաղաք մտնող թշնամու ոմբակոծությունից խույս տալու համար, կառավարության ցուցումով, չոգենավերը լուսաբացին պետք է հեռանային նախապես որոշված իրենց ուղղություններով՝ Պարսկաստան, Կրասնովոդսկ և Պետրովսկ[1986]: Քաղաքի հայկական բոլոր թաղամասերում շրջում էին հատուկ խմբեր, որոնք ժողովրդին տեղեկացնում էին քաղաքը հանձնելու որոշման մասին, հայտնում տվյալ թաղի բնակչության մեկնելու համար առանձնացված նավահանգստի ու նավերի անունները: Սակայն չուտափույթ գաղթի տագնապի լուրը և դրան հատկացված ժամանակի սղությունն, անշուշտ, կազմալուծում էին գաղթը հնարավորինս նվազագույն կորուստներով ընթացակարգելու ջանքերը: «Քաղաքի բոլոր ծայրերից,- գրում է Բ. Իշխանյանը,- ժողովուրդը, դրեթե բացառապես հայ բնակչությունը, անվերջ քարավաններով հավաքվում և կուտակվում է նավամատույցներում: Տարհանումը, բնականաբար, չատ անկանոն էր կազմակերպված: Եվ ինչ կարելի էր անել մի քանի ժամվա ընթացքում, նավերի անբավարար թվով, երբ, բացի մի քանի տասնյակ հազարավոր փախչող բնակչությունից, նույն նավերով պիտի տեղափոխվեին նաև զորքը, ռազմամթերքը և պետական գույքը»[1987]: Դիշերվա ժ. 10-ից ծովափում խռնված գաղթող ժողովուրդը սկսեց տեղափոխվել չոգենավեր. խառնաչփոթ իրավիճակի պատճառով եղան ողբերգական և դրամատիկ պահեր: Դրությունը բարդանում էր նրանով, որ այդ ժամանակ վերսկսվեց քաղաքի ոմբակոծումը: Թշնամին հրետանային կրակի տակ էր առել նավահանգիստը, որի հետևանքով իրարանցումն ավելի մեծացավ, մինչդեռ քաղաքի ծայրամասերում հայկական փոքրաթիվ ջոկատները շարունակում էին համառ մարտեր մղել թշնամու դեմ[1988]: Էվակուացիան անվտանգ դարձնելու նպատակով «Կարս» և «Արդահան» նավերի վրա տեղադրված հեռահար թնդանոթները կրակի տակ էին առել առաջացող

[1985] Տե՛ս Ռոստոմ, Մահուան վաթսունամեակին առթիւ, էջ 338, 379:

[1986] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 120, թ. 7 (ֆրանսերեն), տե՛ս նաև ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 22:

[1987] Նույն տեղում, ֆ. 223, ց. 1, գ. 120, թ. 67 (ֆրանսերեն):

[1988] Տե՛ս Գեղամեանց Ե., Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը, պր. Բ, էջ 48-49:

թուրքական զորքին: Խոսելով խուճապահար գաղթի մասին՝ ժամանակակիցները նշում են. «...Փախչել ցանկացողների հսկայական բազմութիւնը և նաւերի անբաւարար սակաւութիւնը ստեղծել է աղիողորմ շփոթը, որը կոչւում է... գաղթականական տրագեդիա: Հարազատները կորցնում էին իրար, ծնողները՝ որդիներին, եղբայրը՝ քրոջը, ամուսինը՝ ամուսնուն, մէկը ճանապարհւում էր, միւսը՝ մնում՝ նաւում տեղ չգտնելու պատճառով»[1989]: Գաղթի պատմության վերաբերյալ փաստավավերագրական կարևոր աղբյուր է դեպքերի ականատես ու մասնակից, տպագրության դառնությունը անճամբ ճաշակած ու յաթաղանից մազապուրծ Վարսենիկ Սահակյանի հուշագրությունը: Արհավիրքից վերապրած հուշագրողը, իր պատումում նկարագրելով գաղթն իր բոլոր սրտաճմլիկ տեսարաններով, վկայում է հետևյալը. «...նավամատույցներում տիրող խառնաշփոթի պատճառով հնարավոր չեղավ ժողովրդին կազմակերպված ձևով տեղավորել շոգենավերում: Խուճապն այնքան մեծ էր, որ շատերը շոգենավ նստելու պահին ընկան ծովը, որոնցից մեծ թիվ էին կազմում երեխաները»[1990]:

Խոսելով Բաքվի հայ բնակչության բնկորների՝ Պարսկաստանի ծովափնյա քաղաք Էնզելի հասնելու մասին՝ հեղինակը նշում է, որ գաղթական հայերից շատերը չկարողացան դիմագրավել տեղահանության տառապանքներին[1991]: Բ. Բայկովը, հայերի կոտորածներից ու տեղահանությունից հետո լինելով Բաքվի նավահանգստում, ցավով արձանագրում է. «Ես երբեք չեմ մոռանա այն պատկերը, որ տեսա ամբողջովին դատարկված նավահանգստում: Ափամերձ շրջանում լող էին տալիս միայն զանազան տնային իրեր, ճամպրուկներ և մի քանի հարյուր ջրասույզ դիակներ»[1992]:

[1989] Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 5, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 120, թ. 7 (ֆրանսերեն):

[1990] Սահակյան Վ., Մի կյանքի պատմություն (ձեռագիր հուշագրություն), Սիսիան, 1982, էջ 8: Հուշագրի հեղինակ Վարսենիկ Սահակյան-Առուստամյանը տողերիս հեղինակի տատն է հոր կողմից: Նրա ամուսինը՝ Գևորգ Առուստամյանը և եղբայրը՝ Շամխալ Սահակյանը, լինելով 3-րդ բրիգադի 20-րդ գումարտակի (հրամ.՝ Ե. Պահլավունի) զինվորներ, ակտիվորեն մասնակցել են Բաքվի ինքնապաշտպանությանը: Բաքվի անկումից հետո ընտանիքով գաղթել են Էնզելի, ուր 9 ամիս մնալով՝ վերադարձել են Բաքու, որտեղից անցել են Հյուսիսային Կովկաս՝ Պյատիգորսկ: Շուրջ 8 ամիս այդտեղ մնալուց հետո կրկին վերադարձել են Զանգեզուր և վերաեաստատվել Սիսիանի շրջանի Գետաբաղ գյուղում: Հուշագրությունը պահվում է մեր անձնական արխիվում:

[1991] Տե՛ս նույն տեղում, էջ 9:

[1992] **Байков В.**, նշվ. աշխ., стр. 134.

Քաղաքը դատարկելու գործով պրպղվող հանձնաժողովը առաջին հերթին զբաղվեց որբերին Պարսկաստան՝ էնզելի տեղափոխման աշխատանքներով: Այդ պատասխանատու գործը հանձնարարվեց Հր. Աճառյանին, որը բժիշկ Ռուբեն Գյանջունցի հետ ամենայն պատասխանատվությամբ կատարեց այն: Նրանք որբերին տեղավորում են «Ալավերդի» չոգենավ և, նրանց սնունդով ապահովելու մտահոգությամբ պահեստներից բավական քանակությամբ չաքար, հաց և այլ կարգի ուտելիքներ են տեղափոխում չոգենավ ու սովից փրկում փախստականներին[1993]: Իր հուշերում նկարագրելով որբերին չոգենավերում տեղավորելու տեսարանը՝ Հր. Աճառյանը գրում է. «Մեծավ մասամբ մանրիկ, տխուժ երեխաներ էին որբերը. նրանք դեռ լավ քայլել չէին կարողանում. մի առ մի վերցնելով չոգենավ դրինք. բայց անվերջ էր նրանց շարքը. գալիս էին ու գալիս... ժամեր ամբողջ տևեցին մինչև ծայրը կտրվեց»[1994]: Սեպտեմբերի 15-ի առավոտյան՝ ժամը 6-ին, չուրջ 36 չոգենավ դուրս եկավ բաց ծով[1995]: «Բոլորն էլ լիքն էին փախստականներով,- գրում է Հր. Աճառյանը,- մեծ ու փոքր, կին ու երեխա, զինվոր ու քաղաքացի: Բոլորն էլ փախչում են: Գնում ենք այդպես խմբով, իրար հետ միասին, կարծես, պար բռնած ծովի վրա, մինչ մեր ետևում վառվում է քաղաքը...»[1996]: Թուրքերը, նկատելով չոգենավերի մեկնումը, սկսեցին ուժգին հրետանակոծության ենթարկել ինչպես նավամատույցը, այնպես էլ չոգենավերը: Ռմբակոծության հետևանքով ջրասույզ եղավ փախստականներով լի չոգենավերից մեկը: Ականատեսի վկայությամբ՝ «Հարաւային քամու ժամանակ ալիքները դիակներ էին բերում դէպի ափը. չգիտեմ, ծովը նետած դիակներ էին, թէ չոգենաւով փախած և ջրասոյզ եղած զոհեր: Որքան իմացայ, տաճիկները ռմբակոծել էին փախստական նաւերը, և նրանցից մեկը, կարծեմ ջրասոյզ էին արել»[1997]: Բաքվի 100.000-ի հասնող հայ բնակչությունից հնարավոր եղավ տեղափոխել չուրջ 50000-ին[1998]: Ժողովրդի այն մասը, որ չէր հասցրել գաղթել և ամբողջ գիշեր չրջել էր մի նավամատույցից մյուսը՝ չոգենավերում ազատ տեղ գտնելու հույսով, այդպես էլ մնաց քաղաքում և զոհ գնաց քաղաքը գրավող

[1993] Տե՛ս Աճառյան Հ., Կյանքիս հուշերից, էջ 347:
[1994] Նույն տեղում, էջ 346-347:
[1995] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 120, թ. 7 (ֆրանսերեն):
[1996] Աճառյան Հ., Կյանքիս հուշերից, էջ 349:
[1997] «Աշխատաւոր», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 16, № 157:
[1998] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 120, թ. 7 (ֆրանսերեն):

թուրք զինվորների ու տեղի թաթարների վայրագություններին: Բ. Իշխանյանի հաշվումներով՝ տարհանումից հետո քաղաքում մնացել էր 57380 հայ[1999]:

Հայկական ուժերը մնալով մենակ՝ համառ պայքար մղեցին հակառակորդի գերակշռող ուժերի դեմ, բայց, ի վերջո, ստիպված եղան տեղի տալ: Բաքվի մատույցներում 16 ժամ տևած գրոհից հետո թուրքական առաջապահ զորամասերը շրջակա գյուղերի թաթար և քուրդ ավազակախմբերի հետ սեպտեմբերի 15-ին՝ առավոտյան ժամը 8-ին, ներխուժեցին քաղաք, իսկ ժամը 12-ին հատան կենտրոնական մասերը: Յերեկվա ժամը 2-ին քաղաք մտավ նաև Նուրի փաշան[2000] *և մի կարճ բովանդակությամբ հետագիր հղեց Կ. Պոլիս. «Աստծո կամոք Բաքու քաղաքը գրավված է մեր զորքերի կողմից»*[2001]: *Բաքվի գրավման առնչությամբ Բրեստ-Լիտովսկի համաձայնագիրը խախտած լինելու մեղադրանքից խուսափելու և առերևույթ իր չեզոքությունը ցույց տալու նպատակով Էնվեր փաշան հայտնի ուղարկած պաշտոնական հետագրով հրահանգում էր անհապաղ վերադառնալ Կարս: Սակայն, երկք ժամ անց, մեկ այլ գաղտնի հետագրով, Էնվերը հայտնում էր իր ուրախությունն ու չնորհակալությունը*[2002]:

Թեև Մյուրսել փաշան Նուրի փաշայի անունից կենտրոնական կասպիի կառավարությանը, ինչպես նաև դանիական և պարսկական հյուպատոսներին «խաղաղ բնակչության անձնական և գույքի ապահովության երաշխիքներ» էր տվել, այդուհանդերձ, թուրքական հրամանատարության և մուսավաթական կառավարության համաձայնությամբ թուրք-թաթար հրոսակները կառավարության նախագահ Ց. Լան-Խոյսկու և նրբին գործոց նախարար Բ. Լան-Ջիվանշիրի ղեկավարությամբ, երեք օր չարունակ (15-ից-17-ը) կոտորեցին հազարավոր հայերի՝ կողոպտելով նրանց ունեցվածքը: Թուրք ջարդարարներին էին միացել նաև 2000-ի հասնող քրդական ջոկատները[2003], *որոնք «...երեք օր իրադրության տերերն էին»*[2004]: *«Հորիզոնի» վկայությամբ՝ «Եւ տաճիկները, քիւրդերն ու թուրք*

[1999] Տե՛ս Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 32:

[2000] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 20, № 190:

[2001] ՀՀՊՊԹ, ֆ. փաստաթղթային, ինվ. 5363:

[2002] Տե՛ս Dadrian V., նշվ. աշխ., p. 385, տե՛ս նաև Փիրումեան Ռ., նշվ. աշխ., էջ 130-131:

[2003] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 2, p. 98, տե՛ս նաև «Աշխատաւոր», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 25, № 140:

[2004] ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ, ց, 1, գ. 235, p. 5, տե՛ս նաև «Աշխատաւոր», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 25, № 140:

հրոսակները խուժեցին քաղաք, տաճիկ հրամանատարութիւնից և Ադրբէջանի կառավարութիւնից թոյլտուութիւն ստացած լինելով երիք օր թալանել և կոտորել հայերին»[2005]:

Ինչպես 1915 թ. արևմտահայերի ցեղասպանությունն սկսվեց հայ մտավորականության դիխատոմամբ, այնպես էլ Բաքվում զանգվածային ջարդերին առաջինը զոհ դնացին Բաքվի հայ մտավորականները, այդ թվում՝ բժիշկներ, ինժիներներ, փաստաբաններ, մանկավարժներ, գրողներ, լրագրողներ և մշակույթի գործիչներ[2006]: *Մտավորականներից չուրջ 500 հոգի, կեղծ անբաստանությունների հիման վրա բանտարկվեց*[2007]: *Որ թուրք-թաթարների կողմից նախապես ծրագրավորված էր Բաքվի հայ մտավորականների ջարդը, վկայում է Գանձակից Բ. Խան-Ջիվանշիրի՝ 1918 թ. հուլիսի վերջերին Մուսավաթի Բաքվի կոմիտեին հղած գաղտնի նամակը, որում մասնավորապես ասված էր. «...երբ քաղաքը գրաւենք, պիտի զատենք հայ մտաւորականները եւ պիտի ջարդենք բոլոր հայերը»*[2008]: *Ձերբակալվածների թվում էին քաղաքագլխի երկար տարիների տեղապահ Ջ. Հարությունյանը, Ա. Եղիազարյանը, Ս. Ամիրյանը, Ս. Մելիքյանը, Գ. Մելիքյանը, Ստ. Տիգրանյանը, Կովկասյան բանկի տնօրեն Միք. Աթաբեկյանը, ճարտարագետ Պ. Քալանթարյանը, Կ. Կիսանյանը, փաստաբան Հ. Մանանդյանը, Գր. Օհանջանյանը*[2009], *Բելգիայի փոխհյուպատոս Նիկ. Այվազյանը, Համբարձում Մելիքյանի երկու որդիները, Պ. Զուրաբովը, բժիշկներ Թ. Զաքարյանն ու Կ. Քալանթարյանը, Աս. Վաչյանցը և շատ ուրիշներ: Վերջին երկուսը տեղի ունեցած սարսափների ազդեցության տակ ստանում են հոգեկան խանգարում*[2010]: *Ձերբակալվածներից 50-ը մահապատժի ենթարկվեցին*[2011]: *Նրանց թվում էին Ջ. Հարությունյանն իր ընտանիքով*[2012], *բժիշկներ Թ. Զաքարյանն ու Աղամիրզյանը, ինժեներ Ս. Ամիրյանը*[2013] *և շատ ուրիշներ:*

2005 «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 25, № 218:
2006 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 974, թ. 1, տե՛ս նաև ֆ. 276, ց. 1, գ. 37, թ. 42:
2007 Տե՛ս ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ, ց. 1, գ. 235, թ. 5, տե՛ս նաև «Ժողովուրդ», Թիֆլիս, 1918, նոյեմբերի 3, № 27:
2008 Պէհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ Միսաք Թորլաքեանի դատավարութիւնը, էջ 150:
2009 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 35 (ֆրանսերեն), տե՛ս նաև Պէհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ Միսաք Թորլաքեանի դատավարութիւնը, էջ 36:
2010 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 13, № 208:
2011 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 25, № 193:
2012 Տե՛ս «Աշխատաւոր», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 25, № 140:
2013 Տե՛ս **Байков Б.**, նշվ. աշխ., стр. 144.

Համընդհանուր էր կոտորածը, ավերն ու թալանը: Քաղաքի ոչ մի հայ ընտանիք զերծ չմնաց ահռելի ջարդերից ու կողոպուտից: Բնակչության մի մասը կոտորվեց տեղում՝ հարազատ օջախներում, մյուս մասը՝ փողոցներում և ապաստանած վայրերում: Ականատեսի վկայությամբ. «...կոտորածը եղել է ամենասարսափելի և սարսուռ ձևերով: Նախօրոք կազմված ծրագրի համաձայն...»[2014]: Լիովին ավերվեց հատկապես Հայկավան թաղամասը, ուր անխնա կոտորեցին ծերերին և մինչև անգամ ծծկեր երեխաներին[2015]: Զինայվեցին նույնիսկ հիվանդանոցներում գտնվողները: Միայն Բալախանու հիվանդանոցում սրախողխող արվեց 360 հիվանդ, իսկ Կոմինդանտսկի փողոցի վրա գտնվող որբանոցի 63 երեխաներին փողոց էին նետել չորրորդ հարկից[2016]: Մինաք Թոռլաքյանի դատավարության ընթացքում, հայկական որբանոցի տնօրեն Ա. Խանդյանի տված վկայությունում ասվում է, որ կոտորածին զոհ են դնացել չուրջ 500 որբեր, որոնք հիմնականում Նուխի և Արիչ գավառներում կոտորածի ենթարկված հայերի զավակներն էին[2017]:

Բաքվից Թիֆլիս վերադարձած օտարերկրյա մի պաշտոնյա «Աշխատաւոր» լրագրին հայտնել էր հետևյալը. «Ամենից առաջ քաղաք մտան քիւրդերը, որոնք իսկոյն սկսեցին թալանել ու կոտորել... մի քանի հարիւր դիակ ես իմ աչքով տեսել եմ կենտրոնական բանտում (Կուբինկայում): Ահագին թիւով զոհեր են եղել նաև մի փոքր տարածութեան վրայ, Սարուխանակայա և Տիլեֆոննայա փողոցների արանքի մի քանի սաժէնանոց նրբափողոցում, ուր գտնւում է պետական դանձարանը: Արմէնիբենդում (Հայկաւան) գրեթէ ոչ մի հայ չի մնացել, բոլորին կոտորել են, իսկ միմիայն այդ արւարձանում մի քանի հազար հայ կար: Աւելացրէք դրա վրայ հիւանդանոցները, ուր խմբերով են կոտորել: Կուլտուրական Միութեան ահագին շէնքը, ուր գտնւում էր Հայոց Ազգային խորհուրդը և ուր ջարդարարները յարկէ-յարկ բարձրանալով կոտորում էին ամենքին անխտիր: Դիակների թիւն այնքան շատ էր, որ դեռ հինգ վեց օր անցած դիակներ էին մնացել թափւած փողոցներում և հրապարակներում»[2018]:

[2014] «Մշակ», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 25, № 193:

[2015] Տե՛ս «Արծագանք», Եկատերինոդար, 1918, հոկտեմբերի 7, № 7:

[2016] Տե՛ս «Ժողովուրդ», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 18, № 20, տե՛ս նաև «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 13, № 208:

[2017] Տե՛ս Պէհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ Միսաք Թորլաքեանի դատավարութիւնը, էջ 22:

[2018] «Աշխատաւոր», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 16, № 157:

Համաղասպ Օհանջանյանը Բաքվում հայերի ջարդերի առիթով Բեռլինում Ավստրո-Հունգարիայի դեսպանին հղած գրությամբ թուրք-թաթարների կողմից իրականացված բարբարոսությունների մասին հայտնում է հետևյալը. «Հինց նոր հայրենիքիցս մանրամասն տեղեկություններ ստացա սոսկալի գազանությունների մասին, որոնք Բաքվի գրավման ժամանակ տեղի հայ բնակչության նկատմամբ կատարել են թուրք զինվորականները եւ թաթար բնակիչները: Կոտորվել են հազարավոր խաղաղ հայեր, այդ թվում՝ անվանի մտավորականներ, կանայք, երեխաներ ու ծերունիներ, հայերի բնակարանները կողոպտվել են, բանտերը լցված են հայերով, որոնք այնտեղ հիմա էլ ենթարկվում են սարսափելի տանջանքների»[2019]:

*Կոտորածի առաջին զոհերի մեջ էին Հայկավանում ապաստանած արևմտահայ, նուխեցի, արեշցի, շամախեցի և գյոքչեցի գաղթականները, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում որբերը, հիվանդները և վիրավորները[2020]: Նրանցից ավելի քան 1500-ին կոտորեցին[2021]: Զոհված փախստականների մեջ մեծ թիվ էին կազմում հատկապես շամախեցիները[2022]: Գաղթականներից կարողացան փրկվել ընդամենը 3000 հոգի[2023]: Ականատեսի վկայությամբ՝ «Զուրկ միջոցներից և առողջությունից, նրանք (գաղթականները – Գ. Ս.) ի հարկէ անկարող եղան փախչել քաղաքից, և ամենքը դարձան Մահմէդ Զօուշի և Զիվանշիրի գոհ»[2024]: Բաքվի հայերի կոտորածները փաստել են գերմանացի բարձրաստիճան սպաները: Այսպես՝ դեպքերի ականատես փոխդեսպան Պարակեն հայերի դեմ կատարված ոճրագործությունների մասին գրել է. «Գազանությունները, մեծ մասամբ կատարվում էին տների ներսում: Այդ պատճառով փողոցներում համեմատաբար քիչ դիակներ կային: Դրանք գերազանցապես անկյուններում էին դարսված, այնպես որ հաճախ միայն հոտից կարելի էր իմանալ: Մի տեղում ես իրար վրա դարսած 7 դիակ տեսա, այդ թվում մի քանի երեխա... Գրեթե բոլոր դիակները ծածկված էին կապտուկներով, որոնք առաջացել էին հրացանների խզակոթների հարվածներից և խողխողումներից: Նկուղներից դիահոտ էր**

[2019] Օհանջանյան Ա., նշվ. աշխ., էջ 176:
[2020] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 13, № 208:
[2021] Տե՛ս Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 32, տե՛ս նաև Թոռոսյան Մ., նշվ. աշխ., էջ 519, 524:
[2022] Տե՛ս «Ժողովուրդ», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 3, № 15:
[2023] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1919, մարտի 4, № 48:
[2024] Նույն տեղում:

փչում»[2025]: Այս վկայությունը չի հարուցում ոչ մի կասկած, քանի որ Պարակեն չէր կարող առանց հիմքի և փաստերի սխալ տեղեկություններ հաղորդել իր դևկավարներին, որոնք ռազմաքաղաքական ամենասերտ կապեր ունեին Թուրքական կառավարության հետ:

Բաքվում հայերի կոտորածների մասին կարևոր և ստույգ տեղեկություններ է հաղորդում նաև Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչ բարոն Ֆրանկենշտայնը՝ արտաքին գործոց նախարար կոմս Շտեֆան Բուրիանին 1918 թ. հոկտեմբերի 5-ին հղած հեռագրով. «Հայկական մեծ թաղամասը, որն այցելեցի, ամբողջությամբ կողոպտված էր և լրիվ դատարկ: Բազմաթիվ ապացույցներ ստացա գազանային դաժանությունների՝ հիվանդանոցներում հայ բժիշկների, հիվանդների և երեխաների կոտորածի մասին»[2026]:

Կոտորածները չարունակվեցին Բաքվից ոչ հեռու գտնվող «Նոբել եղբ.» ընկերությանը պատկանող բաժնետիրական ընկերության ամառանոցում, ուր կոտորածի ենթարկվեցին այնտեղ ապաստանած 200-ից ավելի հայեր[2027]: Բաքվի Հայոց Ազգային խորհրդի պատվավոր նախագահ Բագրատ եպս. Վարդազարյանի տվյալներով՝ «25 բեռնատար մեքենաներ 4 օրերի ընթացքում անընդմեջ, դիշեր ու ցերեկ տեղափոխում էին դիակներ, իսկ այն դիակները, որոնք չէին հասցնում տեղափոխել, թաղում էին Սալյանական զորանոցների շրջանում»[2028]: Կոտորածի օրերին թուրք չարագործները առևանգեցին գեղեցիկ հայ կանանց ու աղջիկներին, որոնցից շատերը պատվազրկվեցին՝ բռնի տարվելով մահմեդականների հարեմները: Տասնյակ հայուհիներ բռնությամբ մահմեդականացվեցին՝ դառնալով հարճ կամ սորկուհի, իսկ նրանցից շատերը, չդիմանալով բռնություններին, ինքնասպան եղան: Ուշագրավ է այն փաստը, որ կոտորածի օրերին, կովկասահայի հետ ամուսնացած, ֆրանսահպատակ ոմն տիկին Պրտի Տեր-Պողոսյան, վտանգելով կյանքը, ֆրանսիական կառավարության անունից միջնորդում է Նուրի փաշային՝ չարգելը կանխելու համար, որի չնորհիվ փրկվում են տասնյակ հայեր: «Տիկին Պողոսեան,- գրում է Փարիզում լույս տեսնող «Յառաջը»,- որ 1918-ին բազմաթիւ հայրենակիցներու կեանքը փրկած է չարդէ, Բա-

---

[2025] Մանուչարյան Ա., 1918 թ., Բաքվի հայկական ջարդերը (ԳՖՀ-ի արտաքին գործերի մինիստրության քաղաքական արխիվի փաստաթղթերը), ԼՀԳ, Երևան, 1990, № 6, էջ 84:

[2026] Նույն տեղում, էջ 86:

[2027] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 199, թ. 170-179:

[2028] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 25, թ. 9:

գուի մէջ, միջամտելով Նուբի փաշայի եւ ֆրանսական կառավարութեան կողմէ»[2029]:

Զանգվածային կոտորածների հետքերը ծածկելու նպատակով զանազան թաղամասերից հավաքված հայերի դիակների մեծ մասը թուրքական հրամանատարության կարգադրությամբ թափեցին ծովը կամ էլ հրկիզեցին[2030]: Դիակների մեծ մասը հրկիզվեց Սալյանի զորանոցների շրջակայքում[2031]: Կոտորածի 4-րդ օրը, Բ. Խան-Ջիվանշիրի հրամանով, Մուղանի անապատ՝ տաժանակիր աշխատանքի քշվեց 9000 հայ երիտասարդ, որոնցից հազիվ 400-ը կարողացավ վերադառնալ[2032]: Բաքվի հայերի՝ գերության մեջ կրած զրկանքների ու տառապանքների մասին է վկայում Բաքվի ռուսական թատրոնի դերասան Արշակ Գրիգորյանը, որը թեև փրկվել էր մահից, սակայն ճաշակել էր գերության դառն պտուղները: 1919 թ. աշնանը Հայաստանի Հանրապետության կրթության նախարարին գրած դիմումում նա գրել է. «Բաքվի սեպտեմբերյան իրադարձությունները շատ մարդկանց դժբախտություն, վիշտ, ավերածություն պատճառեցին: Դրանց թվին եմ պատկանում և ես: Իմ բոլոր բնմական ունեցվածքը, գգեստները, իրերը և այլն, բոլորը հափշտակեցին ու թալանեցին սեպտեմբեր ամսին Բաքվում: Ես ինքս էլ գերության մեջ եմ եղել թուրքերի մոտ Բաքվի մոտակայքում, որտեղ երեք ամիս տարել եմ աներևակայելի տանջանքներ, ծեծ, քաղց և շատ ուրիշ բաներ, որոնց մասին չարժե խոսել: Գերությունից հետո հինգ ամիս հիվանդ եմ եղել տիֆով»[2033]

Խաղաղ բնակչությունից զատ, զգալի կորուստներ է տվեց նաև հայ զինվորականությունը: Անխնա կերպով ոչնչացվեցին Ալյաթի հատուկ պատժաճամբարներում պահվող գերի վերցված 550 հայ զինվորներից 465-ը[2034]: Գերմանական կայզերական առաքելության ղեկավարին ուղղված հուշագրով Թիֆլիսի հայկական հասա-

---

[2029] «Յառաջ», Փարիզ, 1949, ապրիլի 28, № 1243: Իր այդ անձնվիրության համար, Պըտի Տեր-Պողոսյանը ֆրանսիական կառավարության կողմից արժանանում է պատվո շքանշանի (տե՛ս «Արամազդ», Աթենք, 1934, հունիսի 16, № 47):

[2030] Տե՛ս «Աշխատաւոր», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 25, № 140:

[2031] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 118, թ. 10, տե՛ս նաև ֆ. 199, ց. 1, գ. 23, թ. 25-26:

[2032] Տե՛ս Պէհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ Սիսաք Թորլաքեանի դատավարութիւնը, էջ 21, տե՛ս նաև Յեղափոխական ալպօմ. ազատագրական պայքարի յուշամատեան: Սիսաք Թորլաքեան, գրեց՝ Աւօ, հ. 8, թիւ 1-4, էջ 80:

[2033] Հովակիմյան Բ., Ցեղասպանության թեման հայ թատրոնում (1895-1995), էջ 66:

[2034] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 36, թ. 60:

բակական կազմակերպությունների ներկայացուցիչները հայտնում էին. «Գերի վերցված զինվորները խմբերով ուղարկվում են Բաքվի նահանգի թաթարական գյուղերը, որտեղ ծաղրուծանակի ենթարկելուց և տանջելուց հետո ոչնչացվում են»[2035]: Վերը բերված փաստերից միանգամայն ակներև է, որ ռազմական գործողությունների քողի տակ Բաքվում հայերի նկատմամբ երիտթուրքերը և մուսավաթականներն իրականացրել են ցեղասպանություն[2036]: Եվ պատահական չէ, որ Ադրբեջանի ներքին գործոց նախարար Բ. Խան-Ջիվանշիրը, հայերի դեմ գործած իր ոճրագործությունների համար ձեռք էր բերել «Ադրբեջանի Թալեաթ» տիտղոսակիր համբավը[2037]: Հայերի կոտորածների փաստն արձանագրվել է հենց Բաքվում 1927 թ. գեն. Դենստերվիլի դեմ հեռակա կարգով կազմակերպված հասարակական դատի ժամանակ[2038]:

Ոճրագործությունների գլխավոր կազմակերպիչներից, Բաքվի գրավումը ղեկավարող և քաղաքի պարետ, գնդ. Նաղըմ բեյը հայերի ջարդերի առիթով խոստովանում է. «Երբ վերջապես մտա քաղաք, այն, ինչ որ ես տեսա հրեշավոր էր»[2039]: Դեպքերին ականատես Բ. Բայկովը գրում է, որ թուրքական հրամանատարությունը որևէ կերպ չվորձեց կանխել հայերի կոտորածները, որոնք սոսկալի էին հատկապես Հայկավանում[2040]:

Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրած իր մենագրության մեջ Բաքվի հայերի ջարդերին անդրադարձել է ցեղասպանագետ պատմաբան պրոֆ. Վ. Տատրյանը: Այս աշխատության մեջ հեղինակը, քննարկելով հայերի ջարդերի պատասխանատուների հարցը, համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ այդ հրեշավոր ծրա-

---

[2035] Նույն տեղում, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 99, 99 աե

[2036] Մանրամասն տես Ղուլյան Յու., Հայերի կոտորածները Բաքվում 1918-1920 թթ.: Համապատկան գիտական ուստաշրջանի նյութեր, Գյումրի, 2005, էջ 47-55, տես նաև Ստեփանյան Գ., Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում 1918-1920 թթ., ՊՊՀ, Երևան, 2008, № 3, էջ 31-48:

[2037] Տես «Ձանգ», Երեւան, 1918, Բ տարի, դեկտեմբերի 8, № 77, տես նաև Յեղափոխական ազգմ. ազատագրական պայքարի յուշամատեան: Սիսաք Թորլաքեան, գրեց՝ Աւօ, հ. 8, № 1-4, էջ 65:

[2038] Տես **Бегак Р.**, նշվ. աշխ., стр. 12.

[2039] **Рафаловичъ С.**, Правда о бакинскихъ событияхъ, «Кавказское слово», Тифлис, 1918, 3 (20) декабря, № 262.

[2040] Տես **Байков Б.**, նշվ. աշխ., стр. 132.

դիրը իթթիհադական պարագլուխների հղացումն էր, որի իրականացմանը աջակցել և գործուն մասնակցություն է ցուցաբերել Ադրբեջանի կառավարությունը[2041]*: Գիտական չրջանառության մեջ դնելով նոր, մինչ այդ գաղտնի մնացած վավերական նյութ, ինչպես նաև քաղվածքներ կատարելով թուրք ականատես-ժամանակակիցների վկայություններից՝ Տատրյանը փաստում է, որ կոտորածի կազմակերպիչներից էր իթթիհատական տեսաբաններից, արևմտահայերի ցեղասպանության գլխավոր հանցագործներից մեկը՝ Բեհաէդդին Շաքիրը*[2042]*, որը Բաքվի գրավումից հետո նշանակվել էր քաղաքի ոստիկանապետ*[2043]*: Անդրադառնալով երիտթուրքերի և մուսավաթականների փոխադարձ դաշինքով Բաքվում տեղի ունեցած հայերի ջարդերին՝ Վ. Տատրյանը դիպուկ կերպով նկատում է՝ «Հարց է ծագում, ի՞նչ էր անում թուրք բժիշկը Ադրբեջանում և մասնագիտական ինչ հմտություն կարող էր օգտագործել բժիշկը գործիչով որպես ոստիկանապետ»*[2044]*:*

Հայերի կոտորածների հանցագործ քաղաքականության մեջ մեղքի իր բաժինն ունի նաև Գերմանիան, որը կարող էր, սակայն վճռական ոչ մի քայլ չձեռնարկեց կանգնեցնելու թուրքերի առաջխաղացումը դեպի Բաքու: Վրաստանում Գերմանիայի գերագույն կոմիսար գեն. Շրիդրիխ Ֆրեյգեր Կրես ֆոն Կրևենիչտայնի առաջարկությամբ՝ թուրք-թաթարական զորամիավորումների հետ մեկտեղ Բաքու էին մտել նաև գերմանական ջոկատները, որոնք իբրև պետք է ապահովեին հայ բնակչության կյանքն ու գույքը[2045]*: Վերջիններս, սակայն, վճռական ոչ մի քայլ չձեռնարկեցին՝ կասեցնելու թուրք-թաթարների գազանությունները:*

Ինչ վերաբերում է Բաքվի 26 կոմիսարների ճակատագրին, ապա Անդրկասպյան էսէռական իշխանությունը և անգլիացիները սեպտեմբերի 20-ին, Կրասնովոդսկից 207 վերստ հեռավորության վրա, Ախչա-Կույմա և Պերեվալ կայարանների միջև, ավազուտ-

---

2041 Տե՛ս **Дадрян В.**, История армянского геноцида (этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа), Ереван, 2007, стр. 454.

2042 Բեհաէդդին Շաքիրը «Թեշքիլաթ-ը մահուսե»-ի նախագահն էր (տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1988, էջ 14): Ահաբեկվել է Բեռլինում, 1922 թ. ապրիլի 17-ին, հայ վրիժառուներ Արշավիր Շիրակյանի և Արամ Երկանյանի կողմից (տե՛ս Շիրակեան Ա., Կտակն էր նահատակներուն, Գ տպ., Երեւան, 1991, էջ 310):

2043 Տե՛ս **Дадрян В.**, նշվ. աշխ., стр. 450.

2044 Նույն տեղում, стр. 454:

2045 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 35 (ֆրանսերեն):

ներում, նրանց գնդակահարեցին: Կոմիսարներից 8-ը հայեր էին՝ Ստեփան Շահումյանը, Գրիգոր Ղորդանյանը (Կորգանով), Արսեն և Թադևոս[2046] Ամիրյան եղբայրները, Սուրեն Հովսեփյանը, Բաղդասար Ավագյանը, Արմենակ Բորյանը և Ավրամ Կոստանդյանը[2047]:

Բաքվի գրավման առիթով Խորհրդային կառավարությունը սեպտեմբերի 20-ին նոտայով իր լոպոքը հայտնեց և չեղյալ համարեց Բրեստ-Լիտովսկի համաձայնագրի՝ Թուրքիային վերաբերող մասը: Խորհրդային կառավարության անունից արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Չիչերինի՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարարին ուղղված նոտայով խստորեն դատապարտվեց Թուրքիայի զավթողական քաղաքականությունը ու պահանջվեց օսմանյան զորքերի հետքաշումը դեպի թուրքական նախկին սահմանները և Կովկասում թուրքական հարձակման ժամանակ պատճառված վնասների լիակատար հատուցումը: Գ. Չիչերինը 1918 թ. հոկտեմբերի 10-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարար Նազիմ բեյի անունով ուղարկած նոտայում կրկին պահանջում էր Խորհրդային իշխանություններին հանձնել Բաքուն և ամբողջ Այսրկովկասը[2048]: Սակայն Թուրքիան չարունակեց մերժել այդ պահանջը:

Այսպիսով՝ Բաքվի հայության ինքնապաշտպանության ընթացքում թեև Բաքվի զորքին չհաջողվեց իրագործել նախապես մշակված ռազմական ծրագիրը, սակայն չորսամսյա հերոսամարտի արդյունքում մեծաթիվ զոհերի գնով թուրքական զորամասերը զամ-

---

[2046] Թադևոս Ամիրյանը (Գիժ Թադոս) կոմիսարների շարքում էր հայտնվել հետևյալ հանգամանքների բերումով: Սեպտեմբերի 15-ին, երբ «Յենտրոկասպիի դիկտատուրայի» որոշմամբ Բաքվի Բաիլովի բանտից ազատվել էին Ստ. Շահումյանն ու իր ընկերները, և արդեն որոշում էր կայացվել քաղաքը հանձնելու մասին, Թ. Ամիրյանն իր ջոկատով ուղեկցում էր «Թուրքմեն» շոգենավով Պետրովսկ մեկնող կոմիսարներին և նավի վրա գտնվող 800 փախստականներին: Սակայն Պետրովսկ մեկնելու փոխարեն նավապետը դավադրաբար ուղղություն է վերցնում Կրասնովոդսկ (տե՛ս Խոյլեան Ռ., 1918 եւ Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1966, ԽԴ տարի, մարտ, № 3, էջ 69, տե՛ս նաև Միկոյան Ա., Բաքվի Կոմունայի օրերի մասին (հատված հուշերից), «Գրական Աղբրեջան», Բաքու, 1968, հուլիս-օգոստոս, № 4, էջ 18):

[2047] Տե՛ս ՀՀՊՊԹ, ֆ. փաստաթղթային, ինվ. 25743; **Чайкин В.**, К истории Российской революции вып. I, Казнь 26 бакинских комиссаров, Москва, 1922, стр. 161-164, Բաքվի 26 կոմիսարների հիշատակին (փաստաթղթեր և նյութեր), Բաքու, 1968, էջ 160-208; **Думова Н., Трухановский В.**, Черчилль и Милюков против Советской России, Москва, 1989, стр. 72; **Смирнов Н.**, Дело об убийстве Бакинских Комиссаров, в кн. Неотвратимое возмездие. По материалам судебных процессов над изменниками родины, фашистскими палачами и агентами империалистических разведок, Москва, 1987, стр. 72-85.

[2048] Տե՛ս ДВП СССР, т. I, стр. 514-516.

ված մնացին Բաքվի շրջանում: Դրանով իսկ Թուրքիան չկարողացավ օղակել նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը և իրագործել արևելահայության իսպառ բնաջնջելու ճանապարհով «Մեծ Ադրբեջան» պետություն ստեղծելու համաթուրքական ծրագրերը[2049]*: Ինչպես իրավացիորեն գրում է Մ. Վարանդյանը. «Այդ վիթխարի ծրագիրը վիժեցաւ գլխաւորապէս չնորհիւ հայերու, որոնք ամիսներ շարունակ պարտիզանական կռիւներ մղեցին թուրք-թաթարներու դէմ, Բագուէն մինչեւ Գեօքչա եւ Շամախի, մինչեւ Պարսից Ատրպատականը...»*[2050]*:*

Բաքուն գրավելուց հետո Թուրքիայի կողմից հովանավորվող Ջ. Խան-Խոյսկու[2051] *գլխավորած այսպես կոչված «Ադրբեջանական*[2052] *Դեմոկրատական Հանրապետության» (ԱԴՀ) մուսավաթա-*

[2049] Ավելի մանրամասն տե՛ս Ստեփանյան Գ., Բաքվի 1918 թ. ինքնապաշտպանական մարտերի դերը Հայաստանի Հանրապետության ստեղծման գործում, Հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2009, էջ 53-64:

[2050] Վարանդեան Մ., Մուրատը (Սեբաստացի ռազմիկին կեանքն ու գործը), էջ 327:

[2051] Ջ. Խան-Խոյսկին հետագայում վարել է Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի պաշտոնը: Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո ապաստան է գտել Վրաստանում: Հայաստաց այդ գործչին Թիֆլիսում 1921 թ. հունիսի 19-ին ահաբեկել է հայ վրիժառու Արամ Երկանյանը (տե՛ս Երկանեան Ա., Այսպէս սպաննեցինք (Արամ Երկանեանի յուշերէն), Լօս Անճէլէս, 1949, էջ 15-16):

[2052] Նախընթացում քննության առանք այն հարցը, 1918 թ. առաջ Արաքսից հյուսիս գոյություն չի ունեցել «Ադրբեջան» անվամբ որևէ աշխարհագրական վայր կամ պետություն: 1918 թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան Սեյմի լուծարումից հետո, երբ կովկասյան բաթարների արիեստածին «ազգային» խորհուրդը երիտթուրքերի աջակցությամբ մայիսի 28-ին Թիֆլիսում հռչակեց նոր «պետության» ստեղծումը, հակառակ Իրանի բողոքների, Իրանի հյուսիսարևմտյան երկրամասի՝ պատմական Ատրպատական-Ադրբեջան անունով այն կոչվեց «Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետություն» (տե՛ս **Swietochowski T.**, Russian Azerbaijan. 1905-1920. p. 129): 1918 թ. հունիսի 15-ին բարոն Լարիշի՝ Բեռլին հղած զեկուցագրում ասվում էր. «Թուրքերը բացահայտորեն ցանկանում են Հյուսիսային Կովկասը, ներառյալ Դաղստանը, միացնել Արևելակովկասյան մուսուլմանական Հանրապետությանը, որն այստեղ կոչում են Ադրբեջան» (տե՛ս Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., էջ 283, 285): «Ադրբեջան» անվամբ «պետությունը» արդեն իսկ սպառնալիք էր ներկայացնում Իրանի ամբողջականության համար: Քարտեզում տեղ փնտրող պետական նորագոյացությանը տրված «Ադրբեջան» անվանումը հետապնդում էր հեռահար նպատակ. նորաստեղծ հանրապետությանը բռնակցել Իրանական Ադրբեջան նահանգը, դրանով իսկ իրականացնել «Մեծ Ադրբեջանի» ստեղծման համաթուրքական ծրագիրը: Ակադեմիկոս Վ. Բարթոլդը, 1924 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Ադրբեջանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում մերձկասպյան մարզերի և Աղվանքի ընդհանուր պատմության մասին կարդացած 5-րդ դասախոսության մեջ այդ առիթով նշել է. «Ադրբեջան տերմինը ընտրվել է այն պատճառով, որ, երբ հաստատվեց Ադրբե-

կան կառավարությունը թուրքական զորքի ուղեկցությամբ Գանձակից տեղափոխվեց Բաքու[2053]:

Կոտորելով հայ խաղաղ բնակչությանը, գործադրելով նրա նկատմամբ աներևակայելի բռնություններ և անասնական տանջարաքություններ՝ թուրքերի հաջորդ քայլը պատասխանատվությունից խուսափելու փորձերն էին: Օսմանյան կայսրության գլխավոր շտաբի աշխատակից մայոր Մայրը 1918 թ. սեպտեմբերի 21-ին Թիֆլիս՝ Կովկասում կայսերական Գերմանիայի պատվիրակության ղեկավար գեն. Կրես ֆոն Կրնենշտայնին ուղարկած զեկուցագրում գրում է, որ թուրք-թաթարները «դգում են, որ ամբողջ աշխարհի առաջ այլանդակ խարան են կրելու: Հակառակն ապացուցելու համար այժմ նրանք փորձում են հավաքել նյութեր»[2054]: *Բաքվի հայերի զանգվածային ջարդերին թուրք սպանների և զինվորների մասնակցությունը կոծկելու, կոտորածի ենթարկված հայերի իրական թիվը կեղծելու նպատակին ուղղված առաջին պաշտոնական վարկածը շրջանառության մեջ դրվեց Բաքվի դեպքերի անմիջական կազմակերպիչներից մեկի՝ Էնվեր փաշայի հորեղբայր Խալիլ փաշայի կողմից: Թիֆլիսում 1918 թ. սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանի հետ հանդիպման ժամանակ, Խալիլ փաշան որոշ վերապահումներով խոս-*

ջանի Հանրապետությունը, ենթադրվում էր, թե պարսկական և այդ Ադրբեջանը կկազմեն մեկ ամբողջություն... այս հիմքի վրա ընդունվեց Ադրբեջան անվանումը...» (**Бартольд В.**, Место прикасписких областей в истории мусульманского мира, Сочинение, т. II, ч. I, стр. 703): «Ադրբեջանի պատմության» համառոտ դասընթացի հեղինակ Ե. Պախոմովի դիտարկմամբ՝ «Ադրբեջան անվանումը երբեք չի տարածվել Արաքսից հյուսիս: Միայն 1918 թ., երբ Անդրկովկասյան Կոմիսարիատը բաժանվեց Վրաստանի, Հայաստանի և Արևելյան Անդրկովկասի միջև, միտք հղացավ՝ ստեղծելու մի պետություն, որը կմիավորեր Ռուսաստանի և Պարսկաստանի, այսպես կոչված «ադրբեջանական բյուրքերին»: Սակայն այդ գաղափարը իրականացնել չհաջողվեց, և նոր Ադրբեջանական Հանրապետության կազմի մեջ մտավ միայն Արևելյան Անդրկովկասը, բայց անվանումը թողեցին՝ ավելի հարմարը չգտնելով, քանի որ Շիրվան, Առան և այլ պատմական անունները հանրապետության միայն առանձին մասերին էին վերաբերում» (**Пахомов Е.**, Краткий курс истории Азербайджана с прилож. экскурса по истории Ширваншахов XI-XIV вв., Баку, 1923, стр. 11). Հարցի մանրամասն քննությունը տե՛ս Ասատրյան Գ., Գևորգյան Ն., Ադրբեջան. յուրացման սկզբունքը և իրանական աշխարհը, Երևան, 1990; Էնաեթոլյան Ռէզա, Ազարբայջան եւ Առան (Կովկասեան Ալբանիա), Երեւան, 1994, էջ 151-152; **Габриелян Р.**, Армения и Атропатена, Ереван, 2002, стр. 8-49.

[2053] Տե՛ս Եափուճեան Ա., Պաքուի հերոսամարտը եւ անոր պարտութեան պատասխանատուները, Գահիրէ, 1973, էջ 118:

[2054] Մանուչարյան Ա., նշվ. աշխ., էջ 79:

տովանել է հետևյալը. «...մինչև կանոնաւոր զորքերի քաղաք մտնելը, տեղական թուրք խուժանը կոտորածներ սարքել է. ես ինքս տեսայ մի քանի տասնեակ դիակներ, սակայն ասացին, որ տներում էլ են կոտորածներ արել, այնպէս որ զոհերի թիւը մի քանի հարիւր պէտք է հաշուել: Սակայն երբ կանոնաւոր զօրքը մտնում է քաղաք, Նուրի փաշան պահակներ է դնում փողոցներում և կարգը վերահաստատում»[2055]: Թեև փաստերի ճնշման տակ Խալիլը հարկադրված ընդունում էր տեղի ունեցած կոտորածները, սակայն կանխամտածված կերպով թաքցնում էր երիտթուրքական ու մուսավաթական կառավարությունների հայերի բնաջնջման նախապես մշակված ծրագրերը, այն դեպքում, երբ Բաքուն գրավելուց հետո թուրք սպաների գլխավարությամբ թուրքական բանակն ու նրանց միացած կովկասյան թաթարները երկու օր անդադար և հաջորդած մի քանի օրերին կոտորել են քաղաքի հայ բնակչությանը[2056]: Մինչդեռ վավերագրերն անհերքելիորեն փաստում են Բաքվի հայերի զանգվածային կոտորածներին թուրք սպաների անմիջական մասնակցության մասին: Այսպես՝ Մ. Թորլաքյանի դատավարության ժամանակ Բաքվի 1918 թ. արհավիրքը վերապրած Ալթունյանը Բ. Խան-Ջիվանշիրի փաստաբան Հայդար Ռիֆաթ բեյին պատասխանել է. «Սպանութիւնները կատարուած են թաթարներու կողմէ: Ամբոխը քաղաքացիներէ եւ զինուորներէ կազմակերպուած խուժան մըն էր: Անոնց գլուխը տեսայ թուրք զինուորներուն, անոնցմէ ոմանք լաւ հագուած էին եւ մէկ քանին ալ դէմքով կը ճանչնայի»[2057]: Թուրքական զորքերի արդարացման և բնաջնջված հայերի թիվն արհեստականորեն նվազեցնելու միտումը ակնհայտորեն ունեին նաև երիտթուրքական այլ

2055 ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 37, թ. 34:

2056 Բաքվում կատարված արյունոտ դեպքերը թուրքական կանոնավոր բանակից հեռացնելու, մասնավորապես Նուրի և Մյուրսել փաշաների հակահայկական գործողությունները սրողելու փորձերը երիտթուրքական գործիչները շարունակել են նաև հետագայում: Այդ է վկայում հետևյալ փաստը. 1919 թ. մայիսի 10-ին Գանձակի քաղաքագլուխ Ալասքեր բեկ Խասմամեդովն իր մոտ է հրավիրել Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչներին, պատմել Կ. Պոլսում բանտարկության մեջ գտնվող Նուրի և Մյուրսել փաշաների վատ վիճակի մասին և պահանջել, որ նրանց կողմից հեռագիր ուղարկվի Կ. Պոլսի իշխանություններին և վկայեն, որ նրանք չեն մասնակցել կոտորածներին ու դրանով ապաստեն նրանց ազատմանը: Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչները կտրականապես մերժել են քաղաքագլխի ցինիզմի հասնող պահանջը (տե՛ս «Наше время», Баку, 1919, 27 мая, № 94).

2057 Պէհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ Սիսաք Թորլաքեանի դատավարութիւնը, էջ 16-17:

գործիչներ: Կ. Պոլսում 1918 թ. սեպտեմբերի վերջերին ընթացող բանակցությունների ժամանակ, երբ հայ պատվիրակներ Ավ. Ահարոնյանն ու Ալ. Խատիսյանը Բաքվի հայերի ջարդերի առիթով իրենց բողոքն են հայտնել «Իթթիհադ վե թերաքքը» կուսակցության կենտրոնական կոմիտեին, կոտորածների անմիջական կազմակերպիչներ, իթթիհադական տնտեսագիտներից Բհաէդդին Շաքիրն ու դոկտոր Նազըմը, կոծկելով իրենց պատասխանատվությունը, մեղքը դցել են տեղական կովկասյան թաթարների վրա: «Պեհաէտտին Շաքիր եւ Նազըմ ամբողջ մեղքը ձգեցին թուրք զօրքի յոգնածութեան վրայ,- գրում է Ալ. Խատիսյանը,- որ չէր կրցած տեղական թաթարներու կողմէ կատարուած կոտորածին առաջքն առնել եւ յայտնեցին, թէ ոչ թէ 30.000 Հայեր կոտորուած են, այլ միայն 300, այն ալ փողոցային կռիւներու ժամանակ»[2058]: Բաքվի հայերի կոտորածների հարցում նույն բացատրությունները տվեց նաև Թալեաթ փաշան: «Ըստ երեւոյթին,- գրում է Ալ. Խատիսյանը,- ընդհանուր նկրքին համաձայնութիւն մը կար թուրքերուն մէջ՝ այդ եղանակով խօսելու մեղի հետ»[2059]:

Թալեաթ փաշան Բաքվի հայերի կոտորածները փորձում էր արդարացնել Թուրքիայում հայկական ապստամբության մասին անհիմն պատրվակներով՝ հայտարարելով, թե «Թուրքիոյ մահացու վտանգ մը կը սպառնար Հայերէն, որոնց սպանութիւնը հաւասարազօր է թշնամիներու սպանութեան՝ պատերազմի մէջ»[2060]: Այս փաստարկները մեկ անգամ ևս վկայում են, որ արևելահայության ցեղասպանության քաղաքականությունը ոճրագործ Թուրքիայի հայասպան ուղեգծի անմիջական շարունակությունն էր: Ի թիվս այլ վավերագրերի, Բաքվում հայերի ցեղասպանության իրողությունն անհերքելիորեն ապացուցում են Միսաք Թորլաքյանի՝ 1921 թ. հոկտեմբերին Կ. Պոլսում անգլիական պատերազմական ատյանի դատաքննության նիստերում հարցաքննված հայ և ռուս վկաների փաստավավերագրական մեծարժեք վկայությունները: Այդ նյութերը փաստում են երիտթուրքական կուսակցության ղեկավար գործիչների և մուսավաթական կառավարության կողմից համատեղ ծրագրված հայերի ցեղասպանության իրողությունը[2061]:

[2058] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 109:
[2059] Նույն տեղում:
[2060] Նույն տեղում, էջ 110:
[2061] Պէհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ Միսաք Թորլաքեանի դատավարութիւնը անգ. Ճիւտրական ատեանին առջեւ, Աթէնք, 1936:

Բաքվում հայերի զանգվածային ջարդերը զայրույթի ու բողոքի ալիք առաջացրին առաջադեմ հասարակայնության մեջ: Առաջին արձագանքողներից էր Անդրանիկ Օզանյանը, որը, Նուրի փաշային մեղադրելով կոտորածների կազմակերպման մեջ, Գորիսից 1918 թ. սեպտեմբերի 30-ին հանդես եկավ ցասումով լի մի հայտարարությամբ, որում մասնավորապես ասվում էր. «Դուք ձեզ համարում եք հերոս, սակայն համաշխարհային պատմությունը վկայում է, որ դուք հերոսություն եք ցուցաբերում միայն անմեղ և անզեն ազգաբնակչության դեմ»[2062]:

Այդ օրերին բազմաթիվ հաղորդումներ, հոդվածներ, բողոքի նամակներ տպագրվեցին նաև ժամանակի պարբերական մամուլում: Բերենք մի քանիսը: Դատապարտելով Բաքվի հայ խաղաղ բնակչության նկատմամբ թուրք-մուսավաթականների իրականացրած ոճրագործությունները՝ Արտաշես Աբեղյանը «Նոր Ադանա» խորագրով հոդվածում «Հորիզոնում» գրում էր. «Երևսուն հազար կոտորած... Միջնադարականի և կասպիականի երկու խոշոր չահաստանների հայության բնաջնջումը տեղի ունեցավ նույն հորդանների և Ջինգիզխանների՝ իրենց արիւնռուշտ նախահայրերին անգամ գերազանցող սերունդների յղացումով»[2063]: «Բաքվի ողբերգությունը» վերտառությամբ հոդվածում «Правда» լրագիրը այդ օրերին գրել է. «... Թուրքական ու մուսավաթական զինվորները հայերի կոտորածը սկսեցին քաղաքի արվարձաններում՝ Հայկավանում և Սև քաղաքում, ուր հայ բնակչությունը լրիվ ոչնչացված է: Այնուհետև ջարդերը տարածվեցին քաղաքի կենտրոնական փողոցներում: Հազարավոր թուրք զինվորներ վխտում էին քաղաքում, ներխուժում տագնապով ու սարսափով համակված տները, սպանում դաշույններով, ատրճանակներով, գնդակահարում տնից ու տեղը փողոցում, վայր նետում բարձրահարկ շենքերի վերին հարկերից»[2064]:

Հայերի պաշտպանությամբ հանդես եկան տարբեր ազգությունների ու քաղաքական համոզմունքների գործիչներ ևս, որոնք հրապարակավ դատապարտեցին երիտթուրքական և մուսավաթական կառավարողների հայատյաց գործողությունները Բաքվում: Իսկ մի շարք գերմանացի սպաներ Բաքվում ապրած սարսափներից հետո

[2062] Անդրանիկ Օզանյան (փաստաթղթեր և նյութեր), կազմողներ՝ Հարությունյան Ա., Հարությունյան Գ., Միրզոյան Ս., Էվոյան Վ., Սաֆյան Պ., Շաքիրյան Հ., ԲՀԱ, Երևան, 1991, № 1-2, էջ 313:

[2063] «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 13, № 208:

[2064] «Правда», 1918, 21 сентября (հղվում է ըստ Ե. Սարգսյանի «Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում» գրքի, էջ 418):

թողնեին իրենց ծառայությունը թուրքական բանակում: Խալիլ փաշայի գերմանացի սպաներից մեկը, որ Բաքվում ականատես էր եղել հայերի դեմ թուրքերի գործած գազանություններին, Թիֆլիսում Ա. Ջամալյանի հետ հանդիպման ժամանակ վրդովմունքով հայտարարել էր իր հրաժարականի մասին: «...Ամբողջ պատասխանատուությունը ընկնում է Նուրի փաշայի և նրա շտաբի վրայ, սրանք եթե կամենային, կարող էին արգելել կոտորածը և թալանը: Պէտք է ասեմ, որ կոտորածն ու թալանը եղել են ոչ միայն գօրքը քաղաք մտնելուց առաջ այլև յետոյ. իմ տպաւորութիւնն է, որ կոտորածը նախամտածուած էր և դրա համար էլ ամեն ինչ արին (ընդգծումը մերն է - Գ. Ս.)... այն բարբարոսութիւնը, որ տեղի ունեցաւ այնտեղ, անկարելի է նկարագրել: Ո՛չ, լինես քրիստոնեայ և եւրոպացի և ստիպուած լինես խժդժութիւններ տեսնել և լսել – դա վեր է իմ ուժերից. և ես այս երեկոյ ևեթ պէտք է իմ հրաժարականը տամ Խալիլ փաշային»[2065],- ասել էր գերմանացի սպան:

Բաքվում հայերի ջարդերը երիտթուրքերի կողմից կանխամտածված և ծրագրավորված լինելու փաստի մասին վկայություն է թողել Էնգելհում Ցրանսիայի ներկայացուցիչը, որը 1918 թ. հոկտեմբերի 5-ին Ցրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյին գրել է, որ Բաքուն գրավելուց հետո թուրքերը հայ բնակչության հետ վարվում էին ինչպես Օսմանյան կայսրության մեջ 1915 թ.[2066]: *Հայերի ջարդերը թուրք պինվորների անմիջական մասնակցությամբ իրականացված լինելու վերաբերյալ բերենք նաև մեկ այլ վկայություն: Գեն. Կրես ֆոն Կրեսենշտայնի Բեռլին 1918 թ. հոկտեմբերի 2-ին ուղարկած խիստ գաղտնի հեռագրում ասված է. «Քաղաք մտնելուց հետո թաթարները սկսեցին կողոպուտը և կոտորածները, որոնց մասնակցում էր նաև թուրքական բանակը»*[2067]: *Հայերի ջարդերը թուրքական բանակի զնկավարության կողմից կազմակերպված լինելու փաստին իրենց աշխատություններում անդրադարձել են նաև գերմանացի պատմաբանները: Պետեր Լաննեն հայ ժողովրդի պատմությանը նվիրված աշխատության մեջ գրում է, որ թուրք գեներալները հնարավորություն տվեցին մահմեդական զինված կազմավորումներին և թուրքական զորամասերին Բաքվում հայերի կոտորածը սկսելուն*[2068]:

[2065] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 37, թ. 34-35:

[2066] Տե՛ս Պողոսյան Ս., Պանթուրքիզմը երեկ և այսօր, Երևան, 1990, էջ 25:

[2067] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), стр. 587.

[2068] Տե՛ս **Манучарян А.**, Геноцид армян в освещении немецких авторов, в кн. Новая история Армении в трудах современных зарубежных авторов (ав-

Բաքվում հայերի զանգվածային ջարդերի և դրանցում Թուրք-մուսավաթականների պատասխանատվության հարցի առիթով ժամանակին մամուլում բազմաթիվ հոդվածներով հանդես է եկել կոտորածների ականատես ռուս բանաստեղծ և դրամատուրգ, պետական պաշտոնյա Սերգեյ Ռաֆալովիչը[2069]: 1918 թ. դեկտեմբերի 3-ին «Кавказское слово» լրագրում նա տպագրել է «Ճշմարտություն Բաքվի իրադարձությունների մասին» խորագրով հոդվածը, որում ապացուցում է, որ Բաքուն թուրքական զորքերի կողմից գրավվելուց հետո հայ բնակչության նկատմամբ իրականացվել է նախապես ծրագրավորված բնաջնջում ու կողոպուտ[2070]: Ս. Ռաֆալովիչը վկայում է, որ կոտորածի օրերին Ադրբեջանի կառավարությունը չէր թաքցնում իր մտադրությունը՝ կոտորել և բռնագաղթի ենթարկել Բաքվում ապրող հայերին, որպեսզի այն դառնա զուտ մահմեդական քաղաք[2071]:

Թուրք-մուսավաթականների հանցավոր նպատակները փաստվում են նաև այլ վկայություններով: Այսպես՝ Մ. Թոռլաքյանի դատավարության ժամանակ մինչ այդ գաղտնի մնացած փաստեր է հրապարակվում Բաքվի հայերի սեպտեմբերյան ջարդերի՝ նախօրոք կազմակերպված լինելու մասին: Դատավարության ընթացքում հրապարակվեց հայերի ջարդերի օրերին Ադրբեջանի Հանրապետության փոստի և հեռահաղորդակցության նախարար Խ. Մելիք-Ասլանովի արած հակահայ հետևյալ հայտարարությունը. «Մինչեւ որ Ատրպէճանի բոլոր հայերը չմաքրենք, մեր զէնքը պիտի չթողունք»[2072]: Իսկ Բաքուն գրավելուց հետո Ֆ. Խան-Խոյսկու և Բ. Խան-Ջիվանշիրի ստորագրությամբ, թուրքերեն և ռուսերեն լեզու-

---

торский коллектив). Ред. коллегия: **Р. Саакян** (отв. редактор), **Кондакчян Р.**, **Оганесян Н.**, Ереван, 1993, стр. 235.

[2069] Ռուս աստիճանավոր Սերգեյ Ռաֆալովիչը նախապես աշխատել է Փարիզում՝ վարելով Ռուսաստանի ֆինանսների նախարարության տեղի գործակալության հատուկ լիազորի պաշտոնը: 1917 թ. դեկտեմբերի սկզբներից մինչև 1918 թ. հոկտեմբերի 20-ը բնակվել է Բաքվում, այնուհետև ժամանակավորապես հաստատվել է Թիֆլիսում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 199, թ. 152):

[2070] Տե՛ս **Рафалович С.**, Правда о бакинских событиях, «Кавказское слово», Тифлис, 1918, 3 (20) декабря, № 262, տե՛ս նաև **Закарян А.**, Русский писатель С. Рафалович о сентябрьских событиях в Баку 1918 г., ԼՀԳ, Երևան, 1988, № 2, էջ 48-51:

[2071] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 199, թ. 153:

[2072] Թոռլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 527:

ներով հրապարակված հայտարարությունում ասվում էր. «Վերջապես թրքական զինուորները վրկեցին Ատրպէճանի մայրաքաղաքը, եւ կը սպասենք որ կարգ ու կանոն հաստատուի երկրին մէջ, ի բաց առեալ հայերու պարագայէն, որոնք... ծանրօրէն պիտի պատժուին»[2073]: Ինչպես տեսանք, հայերի ջարդերի անմիջական ականատեսների ու ժամանակակիցների անհերքելի վկայություններն ու անաչառ գնահատականները, ինչպես նաև վավերագրերը հաստատում են, որ հայ բնակչության ջարդերը կրել են նախօրոք կազմակերպված բնույթ՝ երիտթուրքերի և Ադրբեջանի մուսավաթական կառավարության համաձայնությամբ[2074]: «Հորիզոն» օրաթերթում կարդում ենք. «Եւ տաճիկները, քիւրդերն ու թուրք հրոսակները խուժեցին քաղաք, տաճիկ հրամանատարութիւնից և Ադրբէջանի կառավարութիւնից թոյլատուութիւն ստացած լինելով՝ երեք օր թալանել և կոտորել են հայերին»[2075]: Այս տողերը ինքնին պերճախոս վկայությունն են հայերի զանգվածային ջարդերի կազմակերպման գործում Ճ. Խան-Խոյսկու կառավարության ունեցած մեծ դերակատարության[2076]:

Հայերի կոտորածներից հետո 1918 թ. հոկտեմբերի 10-ին, Բաքվի Հայոց Ազգային խորհրդին կից՝ Բ. Իշխանյանի նախագահությամբ ստեղծվեց «Անկետային հանձնաժողով»[2077], որն ուսումնասիրեց հայերի կրած մարդկային ու նյութական կորուստների չափը: Հարցաթերթիկները կազմված էին 26 հարցից[2078]: Բ. Իշխանյանի հեղինակած աշխատությունը, որը նրա իսկ կողմից որակվել է որպես «Հայկական ողբերգութեան սգամատյան», ցույց է տալիս Բաքվի հայերի կրած ողջ ողբերգությունը: Ա. Արշակունին (Արշակ Հով-

---

2073 Պէհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ Միսաք Թորլաքեանի դատավարութիւնը, էջ 18-19, տե՛ս նաև Յեղափոխական ալպօմ. ազատագրական պայքարի յուշամատեան: Միսաք Թորլաքեան, գրեց՝ Աւօ, հ. 8, քիւ 1-4, էջ 79:

2074 Տե՛ս Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 310:

2075 «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 25, դ 218:

2076 Մանրամասն տե՛ս Ստեփանյան Գ., Բաքվի հայերի 1918 թ. կոտորածները և թուրք-ադրբեջանական իշխանությունների պատասխանատվությունը (Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը ԼՂՀ-ի դեմ (2010 թ. մարտի 21-24-ը Ստեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ), «Կաճառ» գիտական կենտրոնի տարեգիրք, Շուշի, 2010, № 4, էջ 223-237):

2077 ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 118, թ. 1:

2078 Տե՛ս Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 13-14:

Հանձինսյան) Բ. Իշխանյանի վերոհիշյալ աշխատության վերաբերյալ «Սգամատեան» վերատառությամբ գրախոսականում իրավացիորեն արձանագրել է. ««Բագուի մեծ սարսափներ»-ի երևան գալը, մի բացառիկ երևույթ է մեր արիւնոտ կեանքի մէջ»[2079]:

Հաշվի առնելով, որ Բաքվի 1918 թ. սեպտեմբերյան կոտորածների վերաբերյալ «Անկեսային հանճնաժողովի» ուսումնասիրությունները կատարվել են ամենայն մանրամասնությամբ, մենք տալիս ենք միայն վիճակագրության ամփոփ արդյունքներ: Ահա մի քանի տվյալներ՝ կազմված ցուցակներից, որոնք ցույց են տալիս թուրք-թաթարների գործած գազանությունների պատկերը: Գերիների թիվը կազմել է 4246, որոնցից 445-ը ծեծի և տաժանակիր աշխատանքների հետևանքով մահացել են, բանտարկվածներինը՝ 553, բռնաբարվածներինը՝ 572, առևանդված հայուհիներինը՝ 1142, անհայտացածներինը՝ 3586, Բաքվից դուրս եկածներինը՝ 32000[2080]*: Տարբեր, բայց իրար չատ մոտ տվյալներ կան Բաքվի հայության զոհերի թվի վերաբերյալ: Ըստ Բ. Իշխանյանի՝ երեք օրվա ընթացքում սպանվել էր տարբեր սեռի և տարիքի 29060 հոգի, կամ Բաքվի հայության գրեթե 32,45%-ը*[2081]*: Այլ տվյալների համաձայն՝ չուրջ 20-25000*[2082] *կամ 30000*[2083]*: «Приазовский край» լրագիրը 1919 թ. նոհեմբերի 24-ի համարում ապացուցված է համարում 30000-ը*[2084]*: Ե. Տոկարժևսկին, վկայակոչելով «Известия ВЦИК»-ի 1919 թ. ապրիլի 23-ի համարը, կոտորածի ենթարկվածների ընդհանուր թիվը նշում է 30-35 հազար*[2085]*:*

Բաքվում հայերի կոտորածների հարցին անդրադարձել է նաև ֆրանսիացի գեներալ Ռենե Տուռնեսը, որը խիստ նվազեցնելով

[2079] Արշակունի Ա., Սգամատեան, «Յառաջ», Երեւան, 1920, մարտի 31, № 67, նաև ապրիլի 1, № 68, նաև ապրիլի 3, № 70:

[2080] Տե՛ս Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 184-187:

[2081] Տե՛ս նույն տեղում, էջ 185:

[2082] Տե՛ս **Рафаловичъ С.**, Правда о бакинскихъ событияхъ, «Кавказское слово», Тифлись, 1918, 3 (20) декабря, № 262.

[2083] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 96-99, տե՛ս նաև Геноцид армян в Османской империи. Сборник документов под редакцией **М. Г. Нерсисяна**, Ереван, 1982, стр. 524, տե՛ս նաև Մանուչարյան Ա., նշվ. աշխ., էջ 79, տե՛ս նաև **Чалхушьян Г.**, Красная книга, Ростов-на-Дону, 1919, стр. 155.

[2084] Տե՛ս Нагорный Карабах в 1918-1920 гг. (сборник документов), сост. **Акопян В., Баликян О., Вирабян А., Микаелян В., Эвоян В.**, отв. ред. проф. **В. Микаелян**, Ереван, 1992, стр. 354.

[2085] Տե՛ս **Токаржевский Е.**, նշվ. աշխ., стр. 160.

կոտորածի ենթարկվածների թիվը, նշում է 15000[2086]*: Նույն թիվն է նշվում նաև Ֆրանսիայի դևխավոր շտաբի 2-րդ բյուրոյին հղված կապիտան Պուադեբարի զեկուցագրում*[2087]*: Հ. Թումյանը նշում է 30000-ից ավել թիվը*[2088]*: Միսաք Թորլաքյանի՝ Կ. Պոլսում 1921 թ. կայացած դատավարության ժամանակ արձանագրվել է 30000 և 35000 թիվը*[2089]*: Ադրբեջանի 1918-1920 թթ. պատմությանը նվիրված աշխատությունում Մ. Վոլխովսկին ու Վ. Մուխանովը նշում են 30-35 հազար մարդ*[2090]*: Այս հարցում անշուշտ առավել հավաստի են 30000 և ավել նշած աղբյուրները, քանի որ երեք օրվա ընթացքում հայերի նկատմամբ գործադրվել են մեթոդիկ ջարդեր: Գ. Ղարաջյանի (Արկոմեդ) դիտարկմամբ. «Դժվար է սահմանել զոհերի թիվը. անկասկած է, որ երկու տասնեակ հազարի չափ մարդ կոտորվեց ու ոչնչացավ Բագվի անկման առաջին օրերին: Ոմանք հաստնում են միայն կոտորված հայերի թիվը մինչև 25 հազարի, ուրիշները 30 հազարի: Այդ թվերի ստուգիլը անհնարին է: Բայց Բագվի այդ կոտորածի և սարսափների անհատանականութեան հիմք դժվար է ուննալ, քանի որ նման սարսափները մեր երկրի այլ վայրերում տեղի ունեցան տաճկական հրոսակների առաջխաղացման ճանապարհին»*[2091]*:*

Թուրք-թաթարների կողմից կողոպտվել են քաղաքի Սբ. Աստվածածին, Սբ. Թադևոս և Սբ. Բարդուղիմեոս, Սբ. Հովհաննես-Մկրտիչ, Սբ. Թարգմանչաց, Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները: Վերջինիս խորանից թալանել էին Սաղիանի Սբ. Ստեփաննոս Նախավկա վանքի արծաթեղենն ու զգեստները[2092]*: Եկեղեցիների կրած ընդհանուր վնասը դնահատվում էր 637.050ռ.*[2093]*: Կողոպտվեցին հայապատկան խանութները, դպրոցները, մշակութային, բարեգործական հիմնարկությունները և այլն: Զգալի կորուստներ կրեց հատկապես «Մարդասիրական ընկերությունը»: «Այն, ինչ տևդի է ունեցել տների, մասնաւոր բնակարանների հետ, նոյնը կրկնուել է խա-*

[2086] Տե՛ս **Турнэс Р.**, նշվ. աշխ., стр. 179.

[2087] Տե՛ս «Свободная мысль», Москва, 1991, № 16, стр. 48.

[2088] Տե՛ս Թումյան Հ., նշվ. աշխ., էջ 171:

[2089] Տե՛ս Պէհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ Միսաք Թորլաքեանի դատավարությունը, էջ 36:

[2090] Տե՛ս **Волховский М., Муханов В.**, По следам Азербайджанской Демократической Республики, Москва, 2007, стр. 92.

[2091] Ղարաջեան Գ. (U. S. Արկոմեդ), Անդրկովկասի քաղաքական կեանքը 1918 թիւն, Թիֆլիս, 1919, էջ 65:

[2092] Տե՛ս Մատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, թղթ. 126, վավ. 230, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 280, թ. 1:

[2093] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 189, թ. 7, տե՛ս նաև ֆ. 57, ց. 3, գ. 280, թ. 1:

նութինների, առևտրական տների և գրասենյակների, գանազան կուլտուրական հաստատութիւնների, եկեղեցիների, դպրոցների և գանազան կուլտուրական հաստատութիւնների հետ: Ամեն տեղ նոյն աւերն ու կողոպուտը, թալանն ու կործանումը, աւազակութիւնն ու վանդալիզմը»,- գրում է Բ. Իշխանյանը[2094]*: Վնասների դումարը, որ ներկայացվել է «Դաշնակից տերությունների վերստուգիչ հանձնաժողովին», կազմում էր ավելի քան 308.777ռ. 50 կոպ.*[2095]*: Ավերվել, կողոպտվել կամ փակվել էին հայապատկան արդյունաբերական և նավթամշակման ձեռնարկութիւնները ու նավթահանքերը*[2096]*: Ընդհանուր առմամբ, հայ բնակչութեան կրած նյութական վնասների դումարը անցնում էր 1 միլիարդ ռուբլուց*[2097]*: «29,060 հոգի մարդկային զոհեր և 945,724,017 կամ մօտ մի միլիարդ ռուբլու նիւթական վնասներ ու կորուստներ: Ահա թիւրք-թաթարական բարբարոսութեան եւ արիւնռուչտ քաղաքականութեան արդիւնքը Սեպտեմբերիան մեծ սարսափների օրերին»*[2098]*,- եզրակացնում է Բ. Իշխանյանը:*

Ադրբեջանում հայ բնակչութեան դեմ իրականացված ջարդերի ու բռնությունների առիթով վրաստանում Հայաստանի Հանրապետութեան դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանը հոկտեմբերի 16-ին բողոքի նոտա հղեց Վրաստանում Ադրբեջանի Հանրապետութեան դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Ջաֆարովին, ուր մասնավորապես նշված էր. «Հայաստանի Հանրապետական կառավարութեան ստացած միանգամայն վստահելի տեղեկութիւնների համաձայն, Բագուի առման հետ միասին տեղի է ունեցել հայերի՝ առանց սեռի և հասակի խստութեան՝ տմարդի կոտորած, նաև տների կողոպուտ մուսուլման ամբոխի կողմից, ըստ որում մարդկային զոհերի թիւը հասնում է 25-30000-ի: Ջը լսված բարբարոս արարքները չարունակվել են 3 օր...: Հաղորդելով այս ամենի մասին՝ ներքոյ ստորագրեալը պատիւ ունի խնդրելու Ադրբէյջանի դիւանագիտական ներկայացուցչին՝ յայտնել ի գիտութիւն Ադրբէյջանի կառավարութեանը՝ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան ամենակատուկ բողոքն այն բանի դէմ, որ նա ժամանակին միջոցներ

[2094] Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 109:

[2095] Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 435:

[2096] Տե՛ս «Ժողովուրդի արձագանքը», Կ. Պոլիս, 1919, Ա տարի, հունվարի 14, № 14-73:

[2097] Տե՛ս Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 187:

[2098] Նույն տեղում:

ձեռք չի առել դադարեցնելու հայ ազգաբնակչության վերաբերմամբ գործադրվող կոտորածը»[2099]:

Այսպիսով՝ վերը բերված փաստերից միանգամայն ակներև է, որ ռազմական գործողությունների քողի տակ երիտթուրքերն և մուսավաթականները Բաքվում հայերի նկատմամբ իրականացրել են ցեղասպանություն, որն ըստ էության հետապնդում էր հետևյալ նպատակը. դավճած Բաքուն «Ադրբեջան» արհեստածին պետության կազմում ամրագրելու և այն որպես դուռ թուրք-թաթարական քաղաք դարձնելու միտումով հայերնագրկել Ապշերոնյան թերակղզու տեղաբնիկ ժողովուրդներից հայերին, բռնազավթել նրանց Բաքվի հարստության առանցքը կազմող հարստությունը:

Թուրքերի երկամյա ներկայությունը հայահալած քաղաքականության նոր սկիզբ դրեց Բաքվում: Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը, թուրքական բարձրաստիճան հրամանատարության հովանավորությամբ, անարգել շարունակեց ոճրագործ քաղաքականությունը հայերի նկատմամբ: Թուրք-թաթարների կողմից գործադրվող այդ դաժանությունները չէին տարբերվում միջնադարում թուրք-սելջուկների իրականացրած վայրագություններից: Ականատեսի վկայությամբ՝ «...թիւրքերը ուժ հայ մի տեղ հաւաքելով թրերով կտրատել են նրանց լեզուները, և ինչպէս վեր են նետել մի երեխայի ու սուինի ծայրը անցրել նրան»[2100]: *Հայապատկան բնակարաններում կամայական խուզարկությունները, գույքի բռնազավթումները, բանտարկությունները, սարսափելի ծնծղ, խոշտանգումները և քամնելի այլ բռնարարքներ շուրջ երկու ամիս համատարած բնույթ էին կրում*[2101]:

Թուրքական հրամանատարությունը ծրագրել էր կոտորել նաև Շամախի, Գյոքչա և Նուխի քաղաքների ու հայկական գյուղերում մնացած հայերին[2102]: *Այն ինչ կատարվեց Բաքվում, կրկնվեց նաև դավառների բոլոր հայաբնակ բնակավայրերում:*

2099 «Մշակ», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 19, № 213:

2100 Նույն տեղում:

2101 Կարծում ենք՝ աշխատության շրջանակներից դուրս են հայերի նկատմամբ թուրք-թաթարների իրականացրած կոտորածների, անսքող կամայականությունների և բռնարարքների մանրամասն նկարագրությունները, որոնցով լի են ժամանակի մամուլը և Հայաստանի ազգային արխիվում պահվող համապատասխան ֆոնդերի վավերագրերը: Հարցի հանգամանալի փաստագրությունը տես Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., նյութերի ժողովածուն:

2102 ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 14, թ. 60:

«Բագուի պէկլերբէն յետոյ,- գրում է Ա. Միքայելյանը,- սկսեցին (թուրք-մուսավաթականները - Գ. Ս.) «վրէժ» լուծել հայերէն եւ գաւառներու մէջ՝ Շամախի, Նուխի եւ Գանձակ, ուր մահմետական տարրը մեծամասնութիւն է կազմում»[2103]:

Ծանր փորձություններ էր սպասվում Բաքվում ապաստանած և կոտորածներից փրկված Շամախի և Գյոքչա գավառների գաղթականությանը: Նրանցից 6500-ը (այլ աղբյուրներ վկայակոչում են նաև՝ 6000[2104], 7000[2105], 7300[2106]) Շամախու և 3000-ը Գյոքչայի գավառներից էին: Բ. Խան-Ջիվանշիրի հրամանով՝ 1918 թ. սեպտեմբերի վերջերին նրանց բռնությամբ տեղափոխեցին գավառները[2107]: Ի՞նչ էր նշանակում այդ տեղահանությունը: Ադրբեջանի կառավարությունը պաշտոնապես հայտարարում էր, թե դա, իբր, գյուղերում տնտեսությունը վերականգնելու միջոց է, սակայն, իրականում, տեղահանության նպատակը կոտորածներից փրկված հայ բնակչության վերջնական ոչնչացումն էր: Դա վկայում է Շամախու հայոց թեմի առաջնորդ Բագրատ եպս. Վարդապետյանը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ Հովհ. Քաջազնունուն 1918 թ. դեկտեմբերի 4-ին հղած նամակում. «Ադրբեջանի կառավարությունը գլխավորաբար Խան Խոյսկին ու ներքին գործոց նախարար Բեյքութ խան Ջիվանշիրը, հենվելով տաճկական զենքի վրա, ամենայն տեսակ վայրագ միջոցներով իրագործում են հայերին ֆիզիկապես ոչնչացնելու և տնտեսապես կատարյալ կերպով քայքայելու ծրագիր»[2108]: Տեղահանվածները՝ ցնցոտիների մեջ, գրեթե մերկ, ամբողջ ճանապարհն ստիպված էին անցնել ոտքով, ոտաբոբիկ՝ քարքարոտ ճանապարհներով, առանց նորմալ սննդի: Նրանց մեծ մասն այդպես էլ չհասավ վերջնակետին: Ճանապարհին գաղթականները ենթարկվում էին թաթար ավազակախմբերի, այդ թվում՝ տարադիրներին հսկող թուրք-թաթար զինվորների բռնություններին: Ովքեր ի վիճակի չէին լինում շարունակել ճանապարհը, սպանվում էին տեղում: Գաղթականներից 1500-ը ճանապարհին սրի քաշվեցին թուրք-

---

[2103] Միքայէլեան Ա., Ղարաբաղի վերջին դէպքերը, «Հայրենիք», Պօսթըն, 1923, Ա տարի, մայիս, № 7, էջ 158:
[2104] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 75, թ. 58:
[2105] Տե՛ս «Наше время», Баку, 1919, 1 января, № 3.
[2106] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 4, թ. 28:
[2107] Տե՛ս նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 3:
[2108] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 154:

թաթար ասկյարների կողմից[2109]*, իսկ կանայք և աղջիկները հնթարկվեցին խոշտանգումների և նսեմացման*[2110]*: Սպանություններին նախորդում էին կողոպուտը, բռնաբարությունները, կանանց ու երեխաների խոշտանգումը: Տեղահանությունից առաջ կամ դրա ընթացքում տարագրվածներից բռնագրավված ունեցվածքը, ոսկեղենը, զարդերը տեղն ու տեղը բաժանվում էին տեղահանությունն իրականացնող թուրք-թաթար զինվորների միջև: Բագրատ եպս. Վարդազարյանի՝ կաթողիկոս Գևորգ Ե-ին 1919 թ. հունվարի 15-ին հղած զեկուցագրում ասվում է. «6500 հոգու չափ Շամախու և Գյոքչայի գիւղացիներին, մեծամասնութեամբ ծերեր, կանայք, երեխաներ, ասկյարների հսկողութեան տակ հոկտեմբեր ամսին ուղարկում են. ճանապարհին կրկին թալանում, անարգում և մի քանի հայ կանանց ու աղջիկներին փախցնում են թուրքերը, տանջանքներով հասցնում են գիւղերը...»*[2111]*:*

Բաքվի դեմ թուրքական արշավանքի ընթացքում հայ բնակչության ֆիզիկական բնաջնջման և բռնի տեղահանման հանցավոր քաղաքականությունն ընթանում էր երկրամասի ողջ տարածքով մեկ՝ ներառելով նաև Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Նուխի և Արեշ գավառները[2112]*:*

Այսպիսով՝ Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը երիտթուրքերի օրինակով ցեղասպանության և էթնիկ զտման ճանապարհով նպատակաուղղված գործում էր Արևելյան Այսրկովկասը համատարած՝ միատարր թուրք-թաթարաբնակ տարածք դարձնելու ուղղությամբ[2113]*:*

[2109] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1919, մարտի 4, № 48:

[2110] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 4, թ. 28, տե՛ս նաև ֆ. 223, ց. 1, գ. 75, թ. 74, տե՛ս նաև «Наше время», Баку, 1919, 22 февраля, № 32:

[2111] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 3:

[2112] Նուխի և Արեշ գավառներում 1918-1920 թթ. կողոպտվեց և ավերվեց 53 հայկական գյուղ, 50000-ից ավելի հայերից զոհ գնացին շուրջ 40000-ը: Նյութական կորուստները հասնում էին հարյուրավոր միլիոնների (տե՛ս Ստեփանյան Գ., Նուխի և Արեշ գավառների հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանությունը 1918-1920 թթ., պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 1996, տե՛ս նաև նույնի՝ Նուխի և Արեշ գավառների հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանությունը (1917 թ. դեկտեմբեր-1918 թ. ապրիլ), «Էջմիածին», 1996, Ա, էջ 105-124, տե՛ս նաև նույնի՝ Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում 1918-1920 թթ., «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», հ. 5, էջ 23-28):

[2113] Այսրկովկասում թուրքական արշավանքի հետևանքով, միայն գարնան և ամռան ամիսների ընթացքում, Բաքումում, Արդահանում, Կարսի մարզում, Երևանի, Թիֆլիսի, Գանձակ-Ելիզավետպոլի և Բաքվի նահանգներում, ոչ լրիվ

Բաքու ներխուժած թուրքական բանակը բացառապես ապրում էր ժողովրդի հաշվին: Բայց ամենից ահավորը թալանն ու գողությունն էր, որ կատարում էին թուրքերը: Բաքվի հայերի եղեռնագործությունից հետո էլ ավելի ակտիվացած երիտթուրք-մուսավաթական համագործակցությունն առավել ակնհայտու էր հայերի բազմամիլիոն հարստությունը թալանելու և միմյանց միջև բաժանելու գործում: Բազմաթիվ էին այն դեպքերը, երբ թուրք զինվորները գողանում էին առանձին քաղաքացիների գույքը, կահկարասին, հագուստը, ոսկեղենը և այլն: Կովկասում Գերմանական կայզերական պատվիրակության Բաքվի ներկայացուցիչ Ֆոն դեր Գոլցի՝ գեն. Կրես Ֆոն Կրեսենշտայնին, 1918 թ. հոկտեմբերի 4-ին հղած զեկուցագրում այդ մասին ասված է հետևյալը. «Այդ կողոպուտներն այսօր էլ դեռ մեթոդիկ ձևով շարունակվում են: Սպանները մի քանի զինվորների հետ տնից տուն են գնում և առանց ավելորդ ձևականությունների, իրենց հետ բերված բեռնատար մեքենաներն են բարձում այն, ինչ իրենց դուր է գալիս: Թուրքերը պարզապես խեղթանում են կահույքի համար: Բաքվում ապրած բազմաթիվ հարուստ մարդկանց լավ կահավորված տներից նրանք հավաքել են կահավորանքի առարկաների հսկայական պաշարներ...»[2114]: Դեպքերի մեկ այլ ականատես Բ. Իշխանյանի վկայությամբ. «Ասկեարները գլխաւորապէս պահանջում և յափշտակում էին դրամ, ոսկի, արծաթ, թանկարժէք իրեր ու զարդարանքներ: Մինչդեռ թաթարները ինչ պատահում էր, ինչ գտնում էին փակ պահարաններում, կողպած սնդուկներում ու արկղներում - բոլորը անխտիր, մինչ վերջին թելը հանում, կողոպտում էին, կացիններով, մուրճերով և երկաթէ ձողերով ջարդ ու փշուր անելով ամեն մի փակ տեղ, ամեն մի արգելաւոիթ խոչընդոտ»[2115]: Թուրքերը թալանում էին ոչ միայն առանձին անձանց, այլև կազմակերպությունների ունեցվածքը: Հայտնի է, որ բաքվահայ բուրժուազիան, դրամատերերն ու առևտրաարդյունաբերողները, չնորհիվ իրենց տաղանդի ու ձեռներեցության, կարողացել էին Բաքվում տեր դառնալ որոշակի հարստության, ստեղծել դրամական կուտակումներ՝ ի վերջո դրանք ծառայեցնելով հենց այդ երկրի զարգացմանը: Եվ ահա բոլոր հայերի՝ առանց խտրականության

տվյալներով, ավերվեցին 370 հայկական գյուղ և վնասվեց 62696 տնտեսություն: Բնաջնջման են ենթարկվել ավելի քան 500000 արևելահայեր (տե՛ս **Аветисян Г.**, Брест-Литовск: Как были оторгнуты Турцией Карс, Ардаган и Батуми, Ереван, 1994, стр. 126, տե՛ս նաև Դանիելյան Է., Հայ ժողովրդի Մեծ Եղեռնը երիտթուրքական վարչակարգի կողմից (1914-1918 թթ.), «Հայոց ցեղասպանություն: Պատճառներ և դասեր», № 1, Երևան, 1995, էջ 104).

[2114] Մանուչարյան Ա., նշվ. աշխ., էջ 88:

[2115] Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 109:

ոչնչացումն ու կողոպուտը թուրք-թաթար մարդասպաններին հնարավորություն է ընձեռում հափշտակել նրանց նյութական արժեքները: Նման ճակատագրի արժանացան «Եղբ. Թումայան», «Բաղդասար Հակոբյան և ընկ.» և առևտրաարդյունաբերական այլ ընկերություններ: Լիովին կողոպտվեցին Լալայան, Սարգսյան և մեծահարուստ այլ ընտանիքներ: Բռնագրավվեցին Հայոց Ագգային խորհրդի և «Բաքվի նավթարդյունաբերողների միության» (նախագահ՝ Ա. Ղուկասյան) տնտեսական պահեստները և այլն[2116]: «Անհնարագրելի է այն աղքատությունը,- գրում է «Մշակը»,- որին ենթարկվել են Բագուի ամենահարուստ և նշանավոր հայերից շատերը: Շատերը թալանվելուց կամ իրանց հարազատին կորցնելուց յետոյ ինքնասպան են եղել»[2117]: 1918 թ. հոկտեմբեր-նոյեմբերին թուրքերը հափշտակեցին Ղուկասյան եղբայրներին պատկանող «Էլեկտրիչեսկայա սիլա» բաժնետիրական ընկերությանը պատկանող գույքը՝ 155 մլն ռ. ընդհանուր արժողությամբ, ինչպես նաև «Բաղաքների միության» գույքը՝ 33 մլն ռ. արժողությամբ, «Կովկաս և Մերկուրի» շոգենավային միության, «Արևելյան միության ապրանքային պահեստներ», «Կովկասյան բամբակ» և բաժնետիրական այլ ընկերությունների ու բանկերի ամբողջ գույքը[2118]: Հայերին պատճառած նյութական կորուստները հասնում էին հարյուրավոր միլիոններին[2119]: «Երկու ամսուայ «օրինական» րէժիմը նոյնքան աղէտաբեր ու զարհուրելի էր հայկական տարրի համար, որքան երեքօրեայ պօգրօմներն ու վանդալիզմը գազանացած և աւազակաբարոյ ամբոխներու... աստիճանական բնաջնջման եւ տնտեսական կործանման ու խեղճացման մի դրագունական քաղաքականութիւն հայութեան դէմ ուղուած»[2120],- գրում է Բ. Իշխանյանը:

Թուրքական բանակն այնպիսի վայրագություններ էր կատարում, այնպես էր թալանում նյութական արժեքները, որ տնտեսական կյանքի նորմալ ընթացքի մասին խոսք լինել չէր կարող. «Մեծ պահեստները և առանձնապէս թանկարժէք կարասիներն ու իրերը իւրացնում էր թիւրքական հրամանատարութիւնը և հայրենիք տեղափոխում: Մնացածը՝ բազմատեսակ իրերի և բարիքների անբաւ պաշարը անցնում էր տեղական մեծերի և ադրեցիկների ձեռքը, որոնք առաջին շաբաթների ընթացքում կամ պահեցին թագցրած

2116 Գեղամեանց Ե., Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը, պր. Բ, էջ 85-86:
2117 «Մշակ», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 9, № 204:
2118 Տե՛ս **Токаржевский Е.**, նշվ. աշխ., стр. 164.
2119 Տե՛ս Գեղամեանց Ե., Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը, պր. Բ, էջ 85-86:
2120 **Իշխանեան Բ.**, Բագուի մեծ սարսափները, էջ 8:

կամ տեղափոխեցին շրջակայքի ապահով վայրեր և կամ Գանձակ ու այնտեղ հրապարակային տօնավաճառ սարքեցին»[2121]:

Թուրքերը Բաքվից տանում էին այնքան նավթ և նավթամթերք, որ բողոքում էին անգամ մուսավաթական կառավարության անդամները: Այսպես՝ միայն հոկտեմբեր ամսին «Նոբել եղբ.» ընկերությունից բռնագրավել էին 10,8 հազար փութ մազութ՝ 56,8 հազար ռ. արժողությամբ[2122]: *Թուրք դինվորները զավթել էին նաև Բաքվի բնակչության համար մթերված 10 վագոն հացամթերքը, որի հետևանքով բնակչությունը դատապարտվել էր սովի: Օրհասական դրության մեջ էին գտնվում հատկապես մոտ 7000-ի հասնող հայ որբերը, որոնց իշխանությունները Գանձակ չտեղափոխելու պատճառով տեղավորել էին «Մարդասիրական ընկերության» չենքում տեղակայված հայկական դպրոցների (Սբ. Մեսրոպյան արական և Սբ. Հռիփսիմյան օրիորդաց) չենքերի մեջ: Որբերից շատերը, ականատես լինելով իրենց ծնողների և հարազատների հանդեպ գործած թուրք-թաթարների գազանություններին, ստացել էին հոգեկան տարբեր խանգարումներ*[2123]: *Ադրբեջանում հայահալած քաղաքականությունը կասեցնելու և հայերի շահերը պաշտպանելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձգտում էր հնարավորինս շուտ դիվանագիտական ներկայացուցչություն հաստատել Բաքվում: Եվ այդ պաշտոնին 1918 թ. սեպտեմբերի սկզբին նշանակել էր Բաքվում ապրած, հասարակական-քաղաքական շրջանակներում լայն ճանաչում ունեցող Տ. Բեկզադյանին*[2124]: *Սակայն Ադրբեջանի կառավարությունը Բաքվում հայերի կոտորածների փաստը կոծկելու և հայասպան քաղաքականությունը շարունակելու նպատակով արհեստական խոչընդոտներ ստեղծելով՝ ձգձգեց Բեկզադյանի ժամանումը Բաքու*[2125]: *Ադրբեջանի կառավարության հայադավ հաջորդ քայլը եղավ այն, որ հանրապետության ամբողջ տարածքով մեկ արգելեց հայկական լրագրերի տարածումը*[2126]:

Հայաստանի Խորհուրդը (նախագահ՝ Ավ. Սահակյան), հաշվի առնելով կոտորածներից և կողոպուտից հետո Բաքվում մնացած

[2121] Նույն տեղում, էջ 110:

[2122] Տե՛ս **Токаржевский Е.**, նշվ. աշխ., стр. 163.

[2123] «Ձանգ», Երեւան, 1918, Բ տարի, դեկտեմբերի 8, № 77:

[2124] Բեկզադյան ընտանիքը Շուշիից Բաքու է տեղափոխվել 1901 թ.: Բեկզադյանները եղել են յոթ եղբայրներ և անդամագրված են եղել տարբեր կուսակցությունների: Նրանցից Ալեքսանդրը բոլշևիկ էր, Տիգրանը հարում էր ՀՅԴ-ին, Հովսեփը և Պետրոսը սոցիալիստ-հեղափոխականներ էին, Ռուբենը՝ միապետական: Քաղաքական գործունեությամբ չեն զբաղվել Արամն ու Գուրգենը:

[2125] Տե՛ս Ղուլյան Յու., Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից 1918-1920 թվականներ, Երևան, 2009, էջ 84:

[2126] Տե՛ս «Ձանգ», Երեւան, 1918, Բ տարի, դեկտեմբերի 5, № 76:

հայերի համար ստեղծված անելանելի դրությունը, աղետյալների դրությունը փոքր-ինչ մեղմելու նպատակով 1918 թ. հոկտեմբերի 26-ի նիստին որոշեց «Բաքվի աղետյալների համար բաց թողնել կրեդիտ Արտաքին Գործոց Մինիստրության Պետական գանձարանից 500.000 րուբլի»[2127]: Բաքվի հայության օգնության գործին ձեռնամուխ եղավ նաև Թիֆլիսի հայ հասարակությունը: 1918 թ. հոկտեմբերի 15-ին քաղաքի հայկական բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրված համատեղ ժողովում միահամուռ որոշվեց կազմակերպել դրամահավաք՝ հօգուտ Բաքվի հայ աղետյալների[2128]:

Առաջին աշխարհամարտում գերմանական խմբավորման (հուլյակ, ապա քառյակ միություն) երկրների պարտությունից հետո 1918 թ. հոկտեմբերի 30-ին Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում, Անտանտի ներկայացուցիչների և Թուրքիայի միջև կնքված զինադադարով վերջինս ճանաչեց իր պարտությունը: Պայմանագրի 11-րդ հոդվածով նախատեսվում էր թուրքական զորքերի դուրսբերումը Այսրկովկասից, իսկ հոդված 15-ով Դաշնակից տերություններին իրավունք էր վերապահվում դրավել Բաթումը, Բաքուն և Այսրկովկասի մյուս քաղաքները[2129]:

Բաքվից դուրս նկող թուրքական բանակը հասցրեց թալանել ժողովրդի վերջին ունեցվածքը: Թալանված ապրանքն օգտագործվում էր ոչ միայն բանակի կարիքների համար, այլև արտահանվում էր Թուրքիա: Այսրկովկասից հեռանալիս թուրքական բանակն իր հետ տարավ մեքենաներ, սարքավորումներ, այդ թվում նաև՝ չոգեքարշներ: Թուրքերը հասցրեցին իրենց հետ տեղափոխել նաև հայ բնակչությունից կողոպտած բազմաքանակ ավարը, որի մի մասը վաճառվեց Ճանապարհին[2130]:

Դրությունը չփոխվեց նաև Դաշնակից տերությունների և մասնավորապես անգլիացիների Բաքու գալուց հետո: Հարկ է նշել, որ Ադրբեջանական մուսավաթական կառավարությունը դեմ չէր վերջիններիս գալուն: Կառավարության նախագահ Ֆ. Խան-Խոյսկին Հյուսիսային Իրանում բրիտանական զորքերի հրամանատար Ռ. Վ. Թոմսոնին ուղարկած հեռագրում ասում էր. «Ադրբեջանական կառավարությունը չի առարկում սույն նոյեմբերի 17-ին ձերդ դերա-

---

[2127] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 19-20, տե՛ս նաև ֆ. 199, ց. 1, գ. 8, թ. 35:
[2128] Տե՛ս «Աշակ», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 15, № 209:
[2129] Տե՛ս Дипломатический словарь в трех томах, т. 2, Москва, 1961, стр. 57.
[2130] Տե՛ս «Աշակ», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 29, № 247:

զանցության հրամանատարությամբ դաշնակից զորքերի ջոկատը Բաքու քաղաքը մտնելու դեմ: Կառավարությունը լիովին հավատացած է, որ այդ մուտքը չի խախտի Ադրբեջանի անկախությունն ու նրա տերիտորիալ ամբողջականությունը: Կառավարությունը միջոցներ է ձեռնարկում մուտք գործող ջոկատն ընդունելու և տեղավորելու համար»[2131]*: Որպես պատասխան ստացվել է Թոմսոնի հետևյալ հեռագիրը. «Ես չնորհակալություն եմ հայտնում ձեզ՝ ձեր սիրալիր հեռագրի համար և լիովին հավատացած եմ, որ գործակցելով ձեր մատնանշած ուղիով, մեր փոխադարձ հարաբերությունները լիովին բավարար կմնան»*[2132]*:*

1918 թ. հոկտեմբերի 31-ին, Անգլիայի կառավարության հրահանգով, Իրանում տեղակայված անգլիական զորքերը Թոմսոնի գլխավորությամբ նոյեմբերի 17-ին էնզելիից ժամանեցին Բաքու[2133]*: Ադրբեջանի արտաքին գործոց նախարարի փոխանորդ Զիաթխանովը, Թոմսոնին դիմավորելու առիթով արտասանած իր ճառում, մռայլության տալով Բաքվի հայերի դեմ իրենց գործած բարբարոսությունները, ցինիկաբար հայտարարեց, թե Ադրբեջանի կառավարության ցանկությունն է, որ «եւրոպական պետությունների միջոցով մուսուլման ժողովուրդը մասնակից լինի եւրոպական քաղաքակրթության»*[2134]*: Նոյեմբերի 19-ին Բաքու է ժամանում նաև կովկասում ֆրանսիական դիվանագիտական առաքելության ղեկավարի պաշտոնը ստանձնած փոխգնդապետ Պիեռ-Օգյուստ Շարդինյին*[2135]*:*

1918 թ. նոյեմբերի 17-ին Ռուսական Ազգային խորհրդի անդամների հետ հանդիպման ժամանակ Թոմսոնը հայտնում է, որ ինքը Բաքվի և օկուպացիոն դոտու գեներալ-նահանգապետն է և թույլ չի տա ազգային որևէ հակամարտության դրսևորում, և դաշնակիցների նպատակն աջակցելն է ներքին կարգուկանոնի հաստատմանը[2136]*:*

Թոմսոնի հրամանով՝ Բաքվում հայտարարվում է ռազմական դրություն: Արգելվում են ժողովները, գործադուլները և ցույցերը:

[2131] «Азербайджан», Баку, 1918, 18 ноября, № 38.

[2132] Նույն տեղում:

[2133] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 117, թ. 1:

[2134] «Ձանգ», Երեւան, 1918, Բ տարի, դեկտեմբերի 8, № 77:

[2135] Տե՛ս Աֆանասյան Ս., Սարդարապատի հաղթանակը (Հայաստան, մայիս 1918), Երևան, 1991, էջ 89:

[2136] Տե՛ս **Байков В.**, նշվ. աշխ., стр. 148, տե՛ս նաև Աբրահամյան Լ., Ռազմաքաղաքական իրադրությունը Բաքվում և Ղարաբաղում 1918 թ. երկրորդ կեսին, ՊԲՀ, Երևան, 2006, № 1, էջ 224:

Նրանք հսկողության տակ վերցրին երկաթուղինները, ծովային տրանսպորտը, գործարաններն ու ֆաբրիկանները, հանքերը և մնացած բոլոր հարստությունները[2137]: Անգլիական զորքերը քաղաքի բազմաթիվ դպրոցներ դարձրին զորանոցներ[2138]: Տեղական իշխանություններն աստիճանաբար կորցրին իրենց կարծեցյալ ինքնուրույնությունը: Անգլիացիները նրանց բոլորովին հաշվի չէին առնում: Անգլիացի զինվորներն առաջին իսկ օրից իրենց պահում էին տանձարձակ: Բազմաթիվ փաստեր վկայում են անգլիական զինվորների կամայականությունների մասին: Նրանք անկարգություններ էին անում հասարակական վայրերում, բռնություններ գործադրում տեղական բնակչության նկատմամբ: Հարբած զինվորները ահաբեկում ու հայհոյում էին կանանց: Անգլիական զորքի տանձարձակությունը հասնում է այն աստիճանի, որ հրամանատարության պահանջով բաքվում նույնիսկ բացվում են հասարակաց տներ[2139]:

Թոմսոնը Ադրբեջանի կառավարությանը նախապես հայտարարել էր, թե «...համաձայնության պետությունները վճռել են վերացնել ադրբէյջանական հանրապետության անկախությունը և փոխարէնը հաստատել ադրբէյջանական աւտոնոմ շրջան, որը կը ղեկավարէ ադրբէյջանական ազգային խորհուրդը, որոնցից 60-ը լինելու են մահմեդականներ, 40-ը՝ հայեր, 12-ը՝ ռուսներ և 1-ը՝ հրէայ: Ադրբէյջանը պարտաւորվում է ճանաչել պաշտօնապէս ռուսական իշխանութիւնը»[2140]: Սակայն, չահագրգռված Բաքվի նավթով և Այսրկովկասում Ռուսաստանի դեմ պատնեշ հանդիսացող ուժեղ Ադրբեջանի ստեղծմամբ՝ Բաքուն ռուսների ազդեցությունից հեռու պահելու նպատակով անգլիացիները չօկուպացրին քաղաքը:

Մեծ Բրիտանիայի՝ որպես «խաղաղարարի», հեղինակությունն ու ազդեցությունը Ադրբեջանում մեծացնելու նպատակով Թոմսոնը ձեռնամուխ եղավ ստեղծելու ԱԴՀ կառավարման այնպիսի համակարգ, որը կընդգրկեր բնակչության բոլոր ազգային խմբերը: Ռուսական Ազգային խորհուրդն իր մասնակցությանը կոալիցիոն կառավարությանը պայմանավորում էր միասնական Ռուսաստանի

[2137] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 955, թ. 2:

[2138] Տե՛ս Борьба за победу Советской власти в Азербайджане 1918-1920 (документы и материалы), Баку, 1967, стр. 129-130.

[2139] Տե՛ս Բորյան Մ., Անդրկովկասի բոլշևիկյան մամուլը սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղված պայքարում (1917-1921 թթ.), Երևան, 1978, էջ 98:

[2140] «Մշակ», Թիֆլիս, 1918, դեկտեմբերի 7, № 25:

ճանաչումով և ԱԴՀ անկախության հարցի լուծումը համառուսաստանյան Սահմանադիր ժողովի իրավասության հանձնումով: Եվ քանի որ ԱԴՀ չէր ճանաչում իր ապագա կապը Ռուսաստանի հետ, Բաքվի Ռուսական Ազգային խորհուրդը հրաժարվեց մասնակցել ԱԴՀ խորհրդարանի և կառավարության ձևավորմանը՝ գտնելով, որ դրանով նա հավանություն է տալիս Ռուսաստանից Ադրբեջանի անջատմանը[2141]:

Թոմսոնը դաշնակիցների անունից Բաքվի Հայոց Ազգային խորհրդին ևս առաջարկություն արեց մասնակցելու ԱԴՀ խորհրդարանի և կառավարության կազմավորմանը: 1918 թ. դեկտեմբերից իր աշխատանքները վերսկսած Բաքվի Հայոց Ազգային խորհուրդն սկզբից մերժեց առաջարկը, սակայն որոշ ժամանակ անց՝ տևական բանակցություններից հետո, խորհուրդը որոշեց մասնակցել խորհրդարանի աշխատանքներին[2142]՝ հուսալով այդ կերպ լուծել կոտորածներից մաղապուրծ հայերի առջև ծառացած սոցիալ-տնտեսական բազում խնդիրները: Հայերը պառլամենտում ունեցան 9 տեղ: Ըստ այդմ՝ 5-ը՝ Բաքվից, 4-ը՝ Գանձակից, 2-ը՝ Նուխի և Արեշ գավառներից: ՀՅԴ կուսակցությունը ներկայացված էր 4 պատգամավորով (Պ. Զուբարյան, Ս. Մելիք-Յոլչյան, Ա. Մալխասյան, Խ. Համասփյուռ), Հայ ժողովրդական կուսակցությունը՝ 4 (Ստ. Թաղիանոսյան, Ա. Պարոնյան, Եր. Թաղիանոսյան, Ի. Խոջոյան), Սոցիալիստ-հեղափոխականները՝ (Էսէռ)՝ 1 (Տեր-Իսրայելյան)[2143]: Պետք է նշել, որ ԱԴՀ-ի քաղաքական կյանքում՝ պառլամենտի, հետագայում նաև կառավարության մեջ երկու հայ նախարարների (Խ. Համասփյուռ, Ա. Դաստակյան) ներկայությունը կրում էր միայն խորհրդանշական բնույթ:

ԱԴՀ խորհրդարանի բացումը տեղի ունեցավ 1918 թ. դեկտեմբերի 7-ին[2144], ստեղծվեց նոր կառավարություն Ֆ. Խան-Խոյսկու գլխավորությամբ: 1918 թ. դեկտեմբերի 28-ին Թոմսոնը ճանաչեց այդ կառավարությունը[2145]: Թոմսոնը սկզբից ևեթ հովանավորեց Խան-Խոյսկու կառավարությունը և նրա նկատմամբ ցուցաբերեց կողմնակալ դիրքորոշում: Ալ. Խատիսյանը, ճիշտ գնահատելով

[2141] Տե՛ս Байков В., նշվ. աշխ., стр. 151:

[2142] Տե՛ս նույն տեղում, стр. 157:

[2143] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1919, փետրվարի 26, № 44:

[2144] Պառլամենտի նախագահն էր Ալի Մարդան-բեկ Թոփչիբաշևը, իսկ փոխնախագահը՝ Ա. Աղաևը (տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1918, դեկտեմբերի 12, № 257):

[2145] Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. Ա, Առաջին տարին, 1918-1919, Երևան, 2005, էջ 175:

անգլիացիների վարքագիծը Կովկասում, գրում է, որ նրանք Բաքվում հետապնդում էին հետևյալ նպատակը. «...օգտուելով միաժամանակ Բաքուի նաւթին, ստեղծել հիմունքներ աւորպէչեանան մահմէտական հանրապետութեան դարձնելով զայն ուժեղ եւ կենսունակ»[2146]:

Ի՞նչ դիրք բռնեցին Դաշնակից տերությունների զինվորական իշխանությունները Բաքվի հայ բնակչության ապրած ահավոր ողբերգության նկատմամբ: Բաքու մտնելուց հետո հինգ օր անց դևն. Թոմսոնը սահմանափակվից միայն թուրքական արշավանքի հետևանքով Բաքվի բնակչության կրած վնասները հաշվող «Դաշնակից տերությունների վերահսկիչ հանձնաժողովի» («Контрольная комиссия Союзныхъ Державъ») ստեղծմամբ: Հանձնաժողովի իրավասության շրջանակները ընդգրկում էին միայն Բաքու քաղաքը: Թոմսոնը Նուրի փաշային նոյեմբերի 21-ին հղած հեռագրում այդ մասին հայտնում էր. «Գալով Բագու, մենք տեսանք, որ ամբողջ կողոպուտը և աւերմունքները պատճառել են Օտտոմանեան զինուորները: Բագուում այս առթիւ կազմուում է մի կոմիսիա անգլիացիներից, ֆրանսիացիներից և ամերիկացիներից, որոնք նայելու են վնասներն և հատուցելու են ի հաշիւ Օտտոմանեան կառավարութեան: Տղեկացնում եմ ձեզ, որ յայտնէք այդ մասին ձեր գեներալներին և նախազգուշացնէք, նման դէպքեր չստեղծելու համար»[2147]: Ինչպես տեսնում ենք, դաշնակից տերությունների կողմից, ի դեմս անգլիական իշխանությունների, արտաքուստ փորձ էր արվում պարտադրել Թուրքիայի կառավարությանը՝ փոխհատուցել Բաքվում հայերի և այլ ազգությունների կրած նյութական վնասները: Դրան նպաստում էր նաև այդ շրջանում Անգլիայի պրեմիեր մինիստր Դեյվիդ Լլոյդ Ջորջի[2148] թուրքերի հանդեպ ունեցած բացասական վերաբերմունքը: Պրեմիերը հայերի դեմ թուրքերի գործած ոճրագործությունները որակել էր «բարբարոսություն»[2149]:

Հանձնաժողովի առաջարկով՝ Բաքվի բնակիչները ներկայացրին ցուցակ-նախահաշիվներ: Ցուցակների ընդունման վերջին

[2146] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 178:

[2147] «Ձանգ», Երեւան, 1918, Բ տարի, դեկտեմբերի 5, № 76, տե՛ս նաև Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 152:

[2148] 1917-1922 թթ. Լլոյդ Ջորջը հրապարակային ելույթներում և միջազգային կոնֆերանսներում (Փարիզ, Լոնդոն, Սան Ռեմո) հանդես է եկել հօգուտ Հայկական հարցի դրական լուծման: Սակայն հետպատերազմյան խաղաղության հարցերում գործարքի մեջ է մտել Քեմալական Թուրքիայի հետ՝ Հայկական հարցը զոհաբերելով Բրիտանական կայսրության շահերին:

[2149] **Дэвид Ллойд Джордж**, Правда о мирных договорах, т. 2, перевод с английского, под ред. **Ф. Д. Волкова**, Москва, 1957, стр. 200.

ժամկետ էր նշանակված 1919 թ. փետրվարի 15-20-ը: Ցուցակագրությունն իրականացնում էին տնային կոմիտեները (Ցենտրոդոմ): Վերստուգիչ Հանձնաժողովը քննում էր միայն այն հայտարարությունները, որոնց վրա մակագրված էին լինում տնային կոմիտեների կարծիքները հայտարարությունների մեջ ցույց տրված գումարների ճշտության մասին, որից հետո վնասները կրած յուրաքանչյուր ցուցակատիրոջ տրվում էր համապատասխան չեկ: Վերստուգիչ Հանձնաժողովն իր աշխատանքներն ավարտեց 1919 թ. ապրիլին: «Ահա չորրորդ. ամիսն է արդեն, ինչ գործում է հիշյալ հանձնաժողովը անգլիական հրամանատարության ցուցմունքներով: Այժմ աշխատանքները ավարտվելու վրա են արդեն: Բոլոր գումարները, մի ընդարձակ զեկուցագրով հանդերձ, պիտի ուղարկվեն Լոնդոն՝ թերևս կոնֆերենցիային ներկայացնելու և նրա հավանությունը ստանալու համար: Տուժածների ներկայացրած ցուցակները հասնում են մոտ 33000-ի, իսկ ներկայացրած գումարները անցնում են մի միլիարդից»[2150],- *ասված է Բաքվի Հայոց Ազգային խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարությանը 1919 թ. մարտի 25-ի հղած զեկուցագրում:*

Վերստուգիչ Հանձնաժողովի կողմից հայերին օրինական վճարման ենթակա ճանաչվեց 453 մլն 184.126 ռ. (ներկայացված 660 մլն 788.148 ռ. դիմաց), վրացիներին՝ 3 մլն 995.049 ռ. (ներկայացված 6 մլն 052.001 ռ. դիմաց), մահմեդականներին՝ 2 մլն 226.822 ռ. (ներկայացված 6 մլն 140.916 ռ. դիմաց)[2151]*, հիմնարկ-ձեռնարկություններին՝ 83 մլն 871.114 ռ. (ներկայացված 192 մլն 510.536 ռ. դիմաց)*[2152]*, որը սակայն հեռու էր իրականի վերաբերյալ ամբողջական պատկերացում տալուց: Ցուցակների ընդունման սեղմ ժամկետի պատճառով իրենց ցուցակ-նախահաշիվները չկարողացան ներկայացնել դեռևս գաղթավայրերում գտնվող Բաքվի հայերի մի զգալի մասը, մասնավորապես՝ Հյուսիսային Կովկասում և Վոլգայի ափերում հանգրվանածները: «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» նախագահ Հովհ. Թումանյանի՝ Հայաստանի Գերագույն կոմիսար գնդ. Ու. Հասկելլին 1919 թ. սեպտեմբերի 30-ին հղած տեղեկագրում այդ մասին ասվում է հետևյալը. «Պարտ ենք համարում զեկուցանել և այն մասին, որ*

[2150] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 51, թ. 30, տե՛ս նաև Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին, էջ 208:

[2151] Առիթից օգտվելով, կովկասյան թաթար որոշ ընտանիքներ հանձնաժողովին էին ներկայացրել նաև 1918 թ. մարտյան իրադարձությունների ժամանակ կրած վնասների ցուցակները:

[2152] Տե՛ս Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 112-114, 144:

արդեն 10000 բաքվեցիներ կան, որոնք Հյուսիսային Կովկասից և Վոլգայի ափերից վերադարձել են այն ժամանակ, երբ լրացել է Բաքվի կոնտրոլային կոմիտեի խնդիրք ընդունելու համար նշանակված պայմանաժամը»[2153]: Վերստուգիչ հանձնաժողովի գործունեությունն առժամանակ դադարեցված լինելու պատճառով, Հովհ. Թումանյանը Ու. Հասկելին իրազեկում էր, որ վերոնշյալ գաղթականներն իրենց ցուցակ-նախահաշիվները կարող են ներկայացնել իր տնկավարած «Քննիչ հանձնաժողովին»[2154]:

Իրենց ցուցակ-նախահաշիվներն ընդհանրապես չկարողացան ներկայացնել կոտորածներից փրկված և ամբողջովին ունեզրկված գավառների հայ բնակչության փշրանքները: «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» քրեական բաժնի վարիչ Տ. Հովհաննիսյանը հանձնաժողովի նախագահ Հովհ. Թումանյանին իրազեկելով կատարված աշխատանքների մասին, 1919 թ. փետրվարի 8-ի զեկուցագրում հայտնում էր, որ Ադրբեջանի իրավասության տակ գտնվող վայրերում, բացի Բաքվից, անհնար էր որևէ հետազոտություն կատարել մեր քննիչների միջոցով[2155]: Բաքվի Հայոց Ազգային խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարությանը 1919 թ. մարտի 25-ի հգած զեկուցագրում ասված է. «Տարաբախտաբար Ադրբեջյանի գավառներում կատարված վայրագությունների հետևանքներով ամբողջապես քայքայված հայ բնակչության վերջին փշրանքների հսկայական վնասները չեն ցուցակագրվել ոչ պաշտոնական և ոչ մասնավոր եղանակներով: Օբյեկտիվ պայմանները չափազանց անբարենպաստ են եղել այդօրինակ մի աշխատանքի համար»[2156]:

Դաշնակից տերությունները, որոնք հայ ժողովրդին իրենց «փոքրիկ» դաշնակիցն էին համարում, Թուրքիայի և Ադրբեջանի նկատմամբ տարվող քաղաքականության հարցում առաջնորդվում էին միայն իրենց տնտեսական և քաղաքական շահերով: Կեղծ խոստումներով նրանք նպատակ ունեին Բաքվի հայերի կոտորածների փաստն օգտագործել Թուրքիայի և նրա կլոտսեր եղբոր՝ Ադրբեջանի վրա ճնշումներ գործադրելու և նրանցից զիջումներ կորզելու համար: Ուստի չձեռնարկվեցին անհրաժեշտ գործուն քայլեր՝ Բաքվի հայերի կրած նյութական կորուստները փոխհատուցելու ուղղութ-

---

[2153] Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին, էջ 192:
[2154] Տե՛ս նույն տեղում:
[2155] Տե՛ս նույն տեղում, էջ 101:
[2156] Նույն տեղում, էջ 208:

*յամբ: Զատկական տոների առիթով Հայոց Ազգային խորհրդը խնդրել էր անգլիական հրամանատարությանը, որ «ի հաշիւ ապագայ հատուցման բաց թողնէ սովալլուկ ազգաբնակչութեան գոնէ 10-15 միլիոն րուբլի կանխավճար»[2157]. Նույնիսկ այդ դիմումխնդրանքներն այդպես էլ անպատասխան մնացին[2158]: Դաշնակիցները վաստորեն խաբեցին Բաքվի հայությանը: Նրանց հայասիրական կեցվածքը միայն ձևականություն էր: Իզուր ու անհիմն էին այն հույսերը, որը Բաքվի հայությունը և հատկապես Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը կապում էին Արևմուտքի հետ: Ամիսներ առաջ, երբ Բաքվում հայերն ու անգլիացի զինվորները կողք-կողքի կռվում էին թուրք-թաթարական բանակի դեմ, սակայն, այժմ անգլիացիների համար «թաթարները ամենէն սիրելի բարեկամներն են եւ հայերը անբազձալի ժողովուրդ մը»[2159]: ԱՄՆ-ի պատվիրակության ղեկավար գնդ. Ջեյմս Հարբորդի տեղակալ Հ. Խաչատուրյանը գրում է, որ 1919 թ. ապրիլին՝ Բաքվում գտնվելու ժամանակ, իրեն է մոտեցել նախկինում անգլիական բանակի սպա, «Թայմս» լրագրի թղթակից պարոն Բենթը և անկեղծաբար խոստովանել. «Ինդրոյ բոլոր կողմերը ուսումնասիրեցի եւ կը տեսնեմ թէ անգլիական քաղաքականութիւնը շատ անարդար է հայութեան հանդէպ: Այս պարագային ես ամօթ կզգամ իմ անգլիացի ըլլալուս համար: Մասնաւորապէս հայերուն եւ ընդհանրապէս Դաշնակիցներուն համար շատ ցաւալի է, որ Զօր. Շաթըլվօրթի նման մարդ մը հայութեան ճակատագրով կը խաղայ: Ան եւ իրեն նմանները հակահայ են եւ մահմէտականներու կողմէն կը դիտեն ամէն բան»[2160]:

Անգլիայի արտաքին գործերի նախարար լորդ Ռոբերտ Սեսիլը[2161] *1918 թ. հոկտեմբերի 3-ին Ջեյմս Բրայսին հղած նամակում բավարարվեց միայն հայտարարել, թե «Հայոց մատուցած ծառայութիւնները Հանրութեան դատին, անտարակոյս, չեն մոռա-*

[2157] Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 112:

[2158] Նույն տեղում:

[2159] Խաչատուրեան Յ., Անգլիական քաղաքականութիւնն ի Անդրկովկաս, «Հայրենիք», Պոսթըն, 1945, ԻԹ տարի, մայիս-հունիս, № 3, էջ 33:

[2160] Նույն տեղում, էջ 33-34:

[2161] Ռոբերտ Սեսիլը անդրադառնալով Բաքվի անկման պատճառներին և դրանում հատկապես Դենստերվիլի խաղացած բացասական դերակատարությանը, ասել է, հետևյալը. «Բաքվի մոտ մեր անհաջողությունների համար հայերը բացարձակ մեղավոր չեն, և նրանց հասցեին հնչած մեղադրանքները միանգամայն անհիմն են: Հայերը գործել են Դենստերվիլի կարգադրությունների համաձայն: Նույն Դենստերվիլի հրամանով հայերը նահանջեցին Բաքվից» («Кавказское слово», Тифлис, 1918, 14 ноября, № 246).

ցուներ...»[2162]: Հօդս ցնդեցին նաև Ադրբեջանի կառավարության՝ հայերին լազմիցս անգամ տված այն հավաստիացումները, թե իբր Բաքվի դեպքերի առիթով անցկացվելու է քննություն և մեղավորները ենթարկվելու են պատասխանատվության. «այնուամենայնիւ այդ ուղղութեամբ ոչ մի քայլ չէ արւած ցայժմ»[2163]:

Հայոց Ազգային խորհրդի պատվավոր նախագահ Բագրատ եպս. Վարդազարյանը, հուսալով, որ անգլիացիներից պաշտպանության կարժանանան, նոյեմբերի 23-ին զեկուցագիր է ներկայացնում Թոմսոնին, որում հանգամանալից նկարագրում է թուրք-թաթարների կողմից նահանգի ողջ տարածքի հայ բնակչության նկատմամբ իրագործված ոճրագործությունները: «Իմ հոտը,- ասված է զեկուցագրի վերջում,- հավատում է և հաստատապես հույս ունի, որ պաշնակից զորքերի մուտքով քաղաք մզձավանջային ոճրագործությունները, վերջապես, կդադարեցվեն, և ես՝ որպես նրանց հոգևոր ներկայացուցիչ ու կարիքների արտահայտիչ, Ձեզ եմ դիմում ամենահարգալից խնդրանքով ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ...»[2164]: Թոմսոնը, սակայն, անուշադրության է մատնում թեմակալի դիմում-խնդրանքը: Այդ է վկայում Բագրատ եպս. Վարդազարյանի՝ ԽՍՀ ՆԳԺԿ «Եոյակ»-ին 1938 թ. փետրվարի 13-ին տված հարցաքննության[2165] արձանագրությունը. «...գնեռալ Թոմսոնին ներկայացա ընդարձակ դիմումով՝ խնդրելով չտալ միջոցներ ձեռնարկել մուսավաթական իշխանություններից անպաշտպան հայերի պաշտպանության համար: Գնեռալ Թոմսոնը ընդունեց իմ դիմումը. խոստացավ ինչ-որ բան անել, բայց իրականում նա ոչ մի միջոց չձեռնարկեց»[2166]: Թեև հայերի դրությունը ուսումնասիրելու նպատակով, Թոմսոնի կարգադրությամբ, անգլիական մի պատվիրակություն ուղարկվեց Դյոքչայի, Շամախիի, Նուխիի և Արեշի գա-

---

[2162] Գիւլխանդանեան Ա., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1941, ԺԹ տարի, հուլիս, № 9, էջ 89:

[2163] «Ձանգ», Երեւան, 1918, դեկտեմբերի 8, Բ տարի, № 77:

[2164] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (վիաստաթղթերի և նյութերի ժողովածու), Մ. Ներսիսյանի խմբագրությամբ, կազմողներ՝ Մ. Ներսիսյան, Ռ. Սահակյան, Երևան, 1992, էջ 284:

[2165] Ստալինյան զանգվածային բռնություններին բռնադատված հարյուրից ավելի հոգևորականների թվում էր նաև Բագրատ եպս. Վարդազարյանը, որը ԽՍՀ ՆԳԺԿ «Եոյակ»-ի վճռով 1938 թ. փետրվարի 2-ին գնդակահարվել է (տե՛ս Մանուկյան Ա., Հայ Առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930-1938 թթ. (ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի), Երևան, 1997, էջ 58):

[2166] Գիրք ստառապելոց: 1920-1950-ական թվականների բռնությունների զոհ հայ հոգևորականներ, կազմող՝ Ստեփան Կերտող (Ստեփանյանց), Երևա, 2002, էջ 17:

վառներ, սակայն, վերադառնալով գավառներից, պատվիրակության անդամները զեկուցում են, որ «Հայերի դրությունը միանգամայն ապահովված է»[2167]: Եվ դա այն դեպքում, երբ գավառներում դեռևս շարունակվում էին հայահալած գործողությունները: Կովկասյան թաթարները հայերից բռնագրաված թանկարժեք իրերով կարողացել էին կաշառել անգլիական պատվիրակության անդամներին: Ինչպես վկայում է Հ. Խաչատուրյանը. «Ջծնող եւ նենգամիտ թաթարները լաւ կերպով կրցեր էին հիւրասիրել եւ կաշառել Եւլախ գտնուղ այն անգլիական տեղակալը, որ հայ անօթի, անմաքուր, տկլոր գաղթականներու պատճառած ձանձրոյթէն ինձ կըսէր.- Հաջորդ անգամ, որ հայերը ջարդուին, ես ալ անպատճառ պիտի օգնեմ թաթարներուն»[2168]: Թուրք-թաթարների կողմից հարստահարված Բաքվի երբեմնի հայ հարուստներից մեկը Հ. Խաչատուրյանի հետ զրույցում ասել էր հետևյալը. «Ի՞նչպես կրնանք անգլիացները սիրաշահիլ: Մեր տուներն արդէն թալլուած են ու մերկ: Մինչդեռ մեր կարասիները թաթարները նուէրներ կը բաշխեն անգլիացիներուն»[2169]:

Բաքվի նավթի հոտը ստիպեց անգլիացիներին վարել ադրբեջանամետ քաղաքականություն և աչք փակել հայկական գյուղերում թուրք-թաթարների կողմից շարունակ գործադրվող բարբարոսությունների առաջ: Անհետևանք էին մնում նաև գավառներից Դաշնակից տերությունների ներկայացուցիչներին և Ադրբեջանի կառավարությանը հայերի դրության վերաբերյալ հղված զեկույցները ու խնդրագրերը. «Բողոքներ, գանգատներ եղել են այս թշւառների, Գեօկչայի, Արէշի, Նուխու և Շամախու հայութեան մնացորդների դրութիւնը մասամբ գոնէ մեղմացնելու համար. եղել են, և չատ են եղել, էլ Շաթիլվօրթ, էլ Տօմսօն, էլ Ադրբէջանի կառավարութիւն, էլ եւրօպական պետութեանց այս կամ այն ներկայացուցիչ, տեղ չի մնացել, որ ներկայացած չլինի այդ չորս գաւառների թանձրացած հառաչանքի ձայնը, բայց...անարդիւնք աչքներիս առաջն է...»[2170]:

Բաքվում Թոմսոնի հակահայկական գործողություններից էր 1918 թ. դեկտեմբերի 9-ին բրիտանական զորքերի կողմից Մոլոկանսկի և Ստանիսլավսկայա փողոցների հատման վայրում գտնվող

[2167] ՀԱԱ, ֆ. 245, ց. 1, գ. 8, թ. 19:

[2168] Խաչատուրեան Յ., Անգլիական քաղաքականութիւնն ի Անդրկովկաս, «Հայրենիք», Պօսթըն, 1945, ԻԳ տարի, մայիս-հունիս, № 3, էջ 26:

[2169] Նույն տեղում:

[2170] «Յառաջ», Երեւան, 1920, մարտի 30, № 66:

Բուդաղյան դպրոցի շենքի և գույքի բռնագրավումը[2171]*: Այն, որ անգլիացիները անթաքույց վարում էին ոչ հայանպաստ քաղաքականություն, վկայում է Հայաստանի արտգործնախարարության Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանն ուղղված 1919 թ. սեպտեմբերի 16-ի դրությունը, ուր ասվում է. «Փարիզի մեր պատվիրակության գրությունից պարզվում է, որ անգլիացիք Կովկասում իրենց ներկայության ամբողջ ընթացքում եղել են ոչ անկեղծ դեպի մեզ և սիստեմատիկաբար վարել են մուսուլմանական քաղաքականություն»*[2172]*: Ա. Նասիպյանը միանգամայն ճիշտ նշում է, որ անգլիացիների ոչ հայանպաստ քաղաքականությունը պայմանավորված էր Բաքվի նավթով. «Տակաւին, կային Թոմսընին եւ իր Միջագետքեան զօրաւաժնին համակրանքները մահմէտականներուն ի նպաստ. թերեւս նաեւ՝ անհրաժեշտութիւնը ազդակէյճանցիները լաւ տրամադրութեան մէջ պահելու, քանի որ Բրիտանացիները շատ մեծ քանակութեամբ քարիւղ կառնէին Պաքուէն»*[2173]*: Բավական է նշել, որ միայն 1919 թ. հունվարին Բաքվից արտահանվել էր 24109 փութ նավթամթերք*[2174]*: Ընդհանուր առմամբ, 1918 թ. նոյեմբերից մինչև 1919 թ. օգոստոս ընկած ժամանակահատվածում, անգլիացիները Բաքվից արտահանել էին շուրջ 2,5 մլն փութ նավթ՝ 113,5 մլն ռ. արժեքով*[2175]*:*

[2171] Տե՛ս Азербайджанский филиал ИМЭЛ при ЦК ВКП (б), Труды, XII, Баку, 1948, стр. 273.

[2172] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 62, թ. 1:

[2173] Նասիպեան Ա., Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915-1923, Պէյրութ, 1994, էջ 164:

[2174] Տե՛ս Азербайджанский филиал ИМЭЛ при ЦК ВКП(б), Труды, XII, стр. 268.

[2175] Տե՛ս **Шабанов Ф.**, Развитие Советской государственности в Азербайджане, Москва, 1959, стр. 42.

Գ. ԲԱՔՎԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳԱՂԹԸ, ԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԹՎԱԿԱԶՄԸ (1918 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ- 1919 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ)

Բաքվի հայերի տեղահանությունն ու կրած տառապանքները հայոց պատմության ամենաողբերգական էջերից են, ողբերգական թե՛ իրենց ծավալներով և թե՛ հետևանքներով: Կոտորածներից փրկված Բաքվի հայության մի զգալի հատված հանգրվանեց Կրասնովոդսկում, Հյուսիսային Կովկասում, Անդրկասպյան երկրում և Իրանում:

Բաքվից գաղթած հայ բնակչության թվի վերաբերյալ կան հակասական տվյալներ: Ըստ Բ. Իշխանյանի՝ հայ փախստականների ընդհանուր թիվը կազմել է 32000[2176]: Ս. Մելիք-Յոլչյանը տարբեր վայրեր գաղթած հայերի թիվը հասցնում է 50000-ի, որից 10000-ը մեկնել է Լնդելի[2177], Ռաշտ[2178], իսկ 40000-ը՝ Հյուսիսային Կովկասի ուղղությամբ[2179]: «Գիներալ Բագրատունու խոսքը» վերտառությամբ արխիվային մի վավերագրում ասվում է, որ Պետրովսկ տեղափոխվել էր 26000, Լնդելի՝ 9500 (որից 8000-ը՝ գաղթական), Կրասնավոդսկ՝ 4500 (որից 4000-ը՝ գաղթական) մարդ: Ընդհանուր առմամբ տեղափոխվել էր 40000 հոգի, որից 10000-ը՝ զինվորական[2180]: Դեպքերի ականատես, տարագրության դառնությունն անձամբ ճաշակած ու թուրքական յաթաղանից մազապուրծ Հր. Աճառյանը հայ գաղթականության նվիրված աշխատությունում վկայում է, որ ընդհանուր առմամբ Բաքվից գաղթել է 40000 հայ: Նրանց մի ստվար մասը (մոտ 10000 հոգի) ապաստան է գտել Հյուսիսային Իրանում[2181]: Գաղթականների թվի ոչ հաստատուն լինելը պայմանավորված էր նրանց տեղաշարժերով, որի հետևանքով հաշվառումները

[2176] Տե՛ս Իշխանեան Բ.. Բագուի մեծ ապրսպիները, էջ 184:

[2177] Կասպից ծովի ափին գտնվող նավահանգստային քաղաք Էնզելին (Փահլավի) ընկած է Ռաշտից 40 կմ հեռավորության վրա: Տեղի հայ գաղութն ունի մի քանի դարի պատմություն, բայց հավանաբար ավելի ուշ է ստեղծվել, քան Ռաշտի հայ գաղութը (տե՛ս Մարտիրոսյան Հ., Հայերի տեղաբաշխումն Իրանում (ղեմոգրաֆիկ տվյալներ), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, պր. IV: Իրան, Երևան, 1969, էջ 159):

[2178] Ռաշտը՝ Գիլան գավառի կենտրոնի հայ գաղութը, ամենահներից մեկն է Իրանում: Ռաշտի հայ գաղթօջախը միշտ կայուն է եղել ու չի դադարեցրել իր գոյությունը մի քանի դար ի վեր (տե՛ս նույն տեղում):

[2179] Տե՛ս Մելիք-Եօլչեան Ս., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1925, Գ տարի, սեպտեմբեր, № 10, էջ 113-114:

[2180] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 69:

[2181] Տե՛ս Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, էջ 283:

ոչ ամբողջական էին ու թերի: Ցուցակագրությունից դուրս են մնացել թափառական հայերը և ոչ քիչ թվով ամուրի այն գինծառայողները, որոնք մեկնած վայրերից այլևայլ միջոցներով կարողացել են հասնել իրենց հայրենի բնակավայրերը[2182]:

Տարբեր բախտի արժանացան Բաքվից տեղափոխված գաղթականական խմբերը: Կրասնովոդսկ տեղափոխված հայերին տեղի իշխանությունները թույլ չտվեցին ափ իջնել՝ պատճառ բերելով երկրում պարենային սուղ դրությունը և խոլերայի համաճարակի բռնկման վտանգը: Թույլատրեցին ափ իջնել միայն տեղացիներին, իսկ մնացածին կրկին հետ ուղարկեցին Բաքու[2183]: *Հյուսիսային Կովկասը նույնպես կայուն հանգրվան չդարձավ գաղթական հայության համար: Ռազմաքաղաքական անբարենպաստ իրադրության պատճառով, տեղի կառավարության հրահանգով, գաղթականների մի մասը Պետրովսկից տեղափոխվեց Ծովախնյա այլ շրջաններ: Կուբան (Ստարոտերեչնայա)-Ալեքսանդրովսկայա-Ղզլար գծով փոխադրվեց 10000, Գուրև՝ 5000, Աստրախան և Վոլգայի ափեր՝ 5000-6000, Կրասնովոդսկ-Աշգաբաղ գծով՝ 3000 մարդ, իսկ մնացածներին ուղարկեցին Լենքորան*[2184] *և Աստրախան*[2185]: *Դեպքերի անմիջական ականատես, գաղթականների հետ Աստրախան մեկնած Ռ. Խոյլյանն իր հուշերում գրում է, որ տեղի բոլշևիկյան իշխանությունը Գ. Աթաբեկյանի ղեկավարությամբ հրաժարվեց ընդունել գաղթականներին, իսկ վերադառնալու համար հրաժարվեց տրամադրել վառելիք, որի պատճառով նրանք 18 օր մնացին բաց ծովում: Հետևանքը եղավ այն, որ նավի վրա սով բռնկվեց, որը խլեց ոչ քիչ թվով մարդկային կյանքեր: Տասնիններորդ օրը տեղի բոլշևիկյան իշխանությունները, ցուցակագրելով մնացածներին, ընդունեցին քաղաք, իսկ զինվորականներին և ՀՅ Դաշնակցության անդամներին բանտարկեցին*[2185]: *Գրեթե նույն ճակատագրին արժանացան Պետրովսկից Էնզելի փոխադրված 700 հայ կամավորները, որոնց անգլիական հրամանատարությունը, իբրև թե «ռազմական նկատառումներով», արգելեց մոտենալ նավահանգստին, որի պատճառով տարագրվածներն այս անգամ ևս ութ օր չարունակ մնացին բաց ծովում: Հետևանքը*

[2182] Տե՛ս Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 24:
[2183] Տե՛ս «Արեւ», Բագու, 1918, սեպտեմբերի 6, № 176:
[2184] Տե՛ս Մելիք-Եօլչեան Ս., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1925, Գ տարի, սեպտեմբեր, № 11, էջ 72:
[2185] Տե՛ս Խոյլեան Ռ., 1918 եւ Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1966, ԽԴ տարի, մարտ, № 3, էջ 71:
[2186] Տե՛ս նույն տեղում, էջ 72:

եղավ այն, որ բռնկվեցին տարափոխիկ հիվանդություններ, իսկ սննդի պակասության պատճառով եղան մահացության դեպքեր: Այդ գաղթականների մի մասին հարկադրված էին կրկին տեղափոխել Պետրովսկ[2187]: «...Անգլիացիք՝ որ այդ ժամանակ Էնզելիի տերն ու հրամայողն էին, ո՛չ միայն չթողնցին Պետրովսկից եկած վախստականներին դուրս գալ ցամաք, ո՛չ միայն հայր ու որդու անդամ զրկեցին միմյանց տեսնելուց, այլև նրանց չոգենավերին թնդանոթի հարվածներ արձակեցին ու ստիպեցին քաղցած ու ծարավ ետ դառնալ և գնալ ուր որ ուզեն»[2188],- վերհիշում է Հր. Աճառյանը: Նրանցից մի մասը կարողացավ միայն ափ իջնել: Գաղթականներից 1200 հոգի հաստատվեցին Էնզելիից 40 վերստ հեռավորության վրա գտնվող Հասան-Գալա կոչված ծովեզրյա գյուղում[2189]: Բ. Իշխանյանի հաշվումներով՝ Պետրովսկում գաղթական հայերի շրջանում մահացածների թիվը 1500 էր, իսկ Անդրկասպյան երկրում՝ 800[2190]:

Յուրատեսակ ճակատագիր էր սպասվում Բաքվից Էնզելի և Ռաշտ մեկնած հայերին: Էնզելի ուղևորված 4 չոգենավերը սեպտեմբերի 16-ի լուսաբացին արդեն մոտեցել էին Նավահանգստին, սակայն քաղաքում հաստատված անգլիական հրամանատարությունը բարդություններ ստեղծեց, հրանոթներից կրակ բացեց չոգենավերի վրա՝ թույլ չտալով մոտենալ Նավահանգստին: Մնալով բաց ծովում՝ սովից և հիվանդություններից մահացան ևս 150 հոգի[2191]: Անգլիական հրամանատարության վերաբերմունքը փոխելու և քաղաք մտնելու թույլտվություն ստանալու նպատակով Հայոց Ազգային խորհրդի անդամներ Ա. Գյուլխանդանյանը և Ս. Մելիք-Յոլչյանը Նավակով հասան Նավահանգիստ: Գեն. Դենստերվիլի և գնդ. Ստոքսի հետ բանակցելուց հետո հայ զինվորականներին զինաթափելու պայմանով գաղթողներին թույլատրվեց մտնել քաղաք[2192]: Նշենք, որ Էնզելիում կուտակված բաքվահայ գաղթականության թվի վերաբերյալ պատմական գրականության մեջ և արխիվային վավերագրե-

---

[2187] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 8, տե՛ս նաև ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 108:
[2188] Աճառյան Հ., Կյանքիս հուշերից, էջ 352:
[2189] Տե՛ս Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, էջ 283:
[2190] Տե՛ս Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 96:
[2191] Տե՛ս Գեղամեանց Ե., Տաճիկները Կովկասում եւ Բագուի աւկումը, պր. Բ, էջ 139:
[2192] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 30, թ. 6, տե՛ս նաև Ստեփանյան Գ., Բաքվի աւկումը և հայերի գաղթը Պարսկաստան (1918 սեպտեմբեր-1919 մարտ), «Իրան-նամէ», Երեւան, 2000, հ. 35, էջ 59:

րում կան իրարամերժ տվյալներ: Այսպես, Սեպուհն իր հուշագրության մեջ հիշատակում է 6000 հոգի[2193]: Հայկական առանձին դիվիզիայի չտաբ գործուղված կապիտան Կալմանյանցի՝ 1918 թ. նոյեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարին հղած զեկուցագրում նշվում է 5000 հոգի[2194]: Այդ թիվն է վկայակոչում նաև Հր. Աճառյանը[2195]: Փարիզում լույս տեսնող «Վերածնունդ» ամսագիրը, հիմք ընդունելով Փարիզի՝ Հայաստանի տեղեկատու բյուրոյի հաղորդագրությունը, նշում է 7000[2196]: Նույն թիվն է նշում նաև Եղիշե ավ. քհն. Գեղամյանցը[2197]: Մեզ համար առավել հավանական են «Վերածնունդ»-ի և Եղիշե ավ. քհն. Գեղամյանցի հաղորդած տվյալները, որոնք, կարծում ենք, իրականությանն առավել մոտ են:

Շրջանի նահանգապետ, գնդ. Ֆ. Կոկկերելի անմիջական ղեկավարությամբ հայ զինվորականներին զինաթափելուց հետո միայն ժամանածներին թույլատրվեց հանդրվանել Էնզելիի Ղազիան անվանվող քաղաքամասում և ծովափնյա հրապարակներում՝ բաց երկնքի տակ: Գաղթականների մեջ որբերի թիվը հասնում էր 600[2198]: Գաղթահայերի տառապալից վիճակը թեթևացնելու, ինչպես նաև անգլիական հրամանատարության և պարսկական իշխանությունների հետ հարաբերությունները կարգավորելու նպատակով, Բաքվի Հայոց Ազգային խորհրդի՝ Էնզելի մեկնած անդամներից կազմվեց Հայոց Ազգային խորհուրդ՝ Հակոբ Ղուկասյանի նախագահությամբ: Էնզելիում ստեղծվեց նաև գաղթականական կոմիտե, որը սկզբնական շրջանում նախագահում էր Ա. Առաքելյանը, նրան հետո փոխարինեց Լևոն Թադևոսյանը (Պապաշա)[2199]: Կոմիտեին կից Ս. Մելիք-Յոլչյանի նախագահությամբ գործում էր շինարարական հանձնաժողով, որը զբաղվում էր գաղթականների համար բարաքներ կառուցելու աշխատանքներով[2200]: Գաղթականական կոմիտեն ամենից առաջ զբաղվեց գաղթականների և 600-ի հասնող որբերի տեղա-

---

[2193] Տե՛ս Սեպուհ, նշվ. աշխ., 198:
[2194] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 21:
[2195] Տե՛ս Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, էջ 283:
[2196] Տե՛ս «Վերածնունդ», Փարիզ, 1918, հոկտեմբերի 14, № 20, էջ 413:
[2197] Տե՛ս Գեղամեանց Ե., Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը, պր. Բ, էջ 139:
[2198] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 2:
[2199] Տե՛ս Ստեփանյան Գ., Բաքվի անկումը և հայերի գաղթը Պարսկաստան, էջ 60:
[2200] Տե՛ս Մելիք-Եօլչեան Ս., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1925, Գ տարի, սեպտեմբեր, № 11, էջ 73:

վորման ու պարենավորման դործով[2201]: Գաղթականներից 1000 հոգի, որբերի հետ միասին, տեղավորվեց առևտրաարդյունաբերող Լիանոզյաններին պատկանող ձկնորսարանի շենքերում: Գաղթականների տեղավորման խնդիրները լուծելու մեծ աշխատանք կատարեց Ռոստոմը, որի անմիջական նախաձեռնությամբ մաքրվեցին ծովափին գտնվող բարաքները, և այնտեղ տեղավորվեցին 2000 հոգի[2202]: Շինարարական հանձնաժողովի ջանքերով Շահի Այգում և Թուխխանում կառուցվեց ևս 40 բարաք, ուր կացարան տրվեց 2500 մարդու, իսկ 1000 հոգի տեղավորվեցին Ամիր-Ամայունի շենքերում[2203]:

Էնզելիից բացի, գաղթականներից շուրջ 3000 (ըստ Հր. Աճառյանի՝ 2500)[2204] հոգի հաստատվեցին նաև Ռաշտ քաղաքում-[2205], տեղի հայկական դպրոցներում, եկեղեցու և թատրոնի շենքերում: Ինչպես Էնզելիում, այստեղ ևս նրանց գործերը կարգավորելու նպատակով Մելիք-Շահնազարյանի նախագահությամբ ստեղծվեց գաղթականական կոմիտե[2206]:

Այդ ծանր փորձության օրերին գաղթականներին առաջին հերթին աջակցություն ցույց տվեց տեղի հայ բնակչությունը: Նրանց նկատմամբ իրենց բարյացակամ վերաբերմունքն արտահայտեցին նաև պարսկական իշխանությունները[2207]: «Վերածնունդ» ամսագիրը այդ մասին գրում էր. «Այդ տեղերիս (նկատի ունի Էնզելին և Ռաշտը - Գ. Ս.) ազդաբնակչությիւնը և իշխանությիւնները լաւ ընդունելութիւն ըրած են անոնց և միջոցներ ձեռք առած են անոնց թշվառութիւնը մեղմացնելու համար»[2208]: Գաղթահայերի պարենավորման գործը կազմակերպելու նպատակով գեն. Հ. Բագրատունին և Էնզելիի Հայոց Ազգային խորհրդի անդամ Ա. Գյուլխանդանյանը հեռագիր հղեցին Փարիզ՝ Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային, որը խոշոր գործատեր Թումայան եղբայրների ընկերության միջոցով փոխանցեց 1.887.400 ֆրանկ (իրանական այն ժամանակվա արժեթղթերով՝ մոտ 175.000 թուման)[2209]:

[2201] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 2:
[2202] Տե՛ս Սեպուհ, նշվ. աշխ., էջ 201:
[2203] Տե՛ս նույն տեղում:
[2204] Տե՛ս Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, էջ 283:
[2205] Տե՛ս Մելիք-Եօլչեան Ս., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1925, Գ. տարի, սեպտեմբեր, № 11, էջ 73:
[2206] Տե՛ս նույն տեղում:
[2207] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 46, տե՛ս նաև գ. 74, թ. 39:
[2208] «Վերածնունդ», Փարիզ, 1918, հոկտեմբերի 14, № 20, էջ 413:
[2209] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 74, թ. 38:

Գաղթականների կենցաղային նվազագույն պայմաններն ապահովելու նպատակով գաղթականական կոմիտեն երկու ամիսը մեկ անգամ նրանց հատկացնում էր համապատասխան ռոճիկ[2210]: Հնարավորության սահմաններում տրված այդ օգնությունը, անշուշտ, բավարար չէր աղետյալների անհամար կարիքները հոգալու: Սակայն դրամի կուրսի արժեզրկման հետևանքով գաղթականները վատնեցին իրենց վերջին կարողությունը[2211]:

Գաղթականների տեղաշարժերի, կուտակումների և հակահիգիենիկ պայմանների պատճառով Էնզելիի և Ռաշտի գաղթականների շրջանում բռնկվեցին բծավոր տիֆ և տարափոխիկ այլ հիվանդություններ. մահացությունը օրական հասնում էր 10-20 հոգու, ընդ որում՝ նրանց մեծ մասը որբանոցի 1-15 տարեկան երեխաներ էին[2212]: Բժշկասանիտարական անհրաժեշտ օգնություն հասցնելու նպատակով գաղթականական կոմիտեի և բժշկապետ Ն. Տեր-Ներսիսյանի ջանքերով բացվեց 300 մահճակալով հիվանդանոց: Միևնույն ժամանակ չտապ կարգով մաքրվեցին հրապարակները, այգիներն ու փողոցները: Կանխարգելիչ այդ միջոցառումների շնորհիվ մահացությունն օրեցօր սկսեց նվազել: Այնուամենայնիվ, գործող միակ հիվանդանոցն ի վիճակի չէր բուժական օգնություն ապահովել բոլոր գաղթականներին: Ստեղծված իրադրության, սննդի պակասության պատճառով գաղթականության վիճակը գնալով բարդանում է. գաղթականական կոմիտեն մի քանի անգամ դիմումներ հղեց Ադրբեջանի կառավարությանը՝ Բաքվի հայ գաղթականների վերադարձը թուլյատրելու և կազմակերպելու համար[2213]: 1918 թ. հոկտեմբերի 23-ին Բաքվի հայոց թեմի առաջնորդ Բագրատ եպս. Վարդապարյանը զեկուցագիր հղեց կառավարության նախագահ Ֆ. Խան-Խոյսկուն և, նկարագրելով հայ բնակչության ծանր վիճակը Բաքվում և Էնզելիում՝ խնդրեց անհապաղ միջոցներ ձեռնարկել գաղթականների վերադարձը կազմակերպելու համար: «Համաձայն քաղաքացիական իրավահավասարության հայտարարված սկզբունքի, նրանք (հայերը - Գ. Ս.), որպես Ադրբեջանի քաղաքացիներ, թվում էր՝ պետք է օգտվեն կառավարության պաշտպանությունից: Սակայն, դժբախտաբար, կառավարությունը անհրաժեշտ

[2210] Տե՛ս Մելիք-Եօլչեան Ս., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պոսթըն, 1925, Գ. տարի, սեպտեմբեր, № 11, էջ 73:

[2211] Տե՛ս Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, էջ 284:

[2212] Տե՛ս Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 96:

[2213] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 52:

ուշադրություն չի դարձնում նրանց վրա և չի ձեռնարկում որևէ միջոց՝ հայ քաղաքացիների վերադարձը հեշտացնելու համար, չնայած այդ առիթով փախստականների կողմից, հատուկ պատգամավորների միջոցով, մի քանի անգամ եղել են համոզեցուցիչ դիմումներ և խնդրներ»[2214],- *ասված էր դեկուցագրում:*

Բաքվի հայ գաղթականները էնզելիում և Ռաշտում անցկացրին տառապանքի ամիսներ: Էնզելիի հիվանդանոցում փախստականներին խնամող լժիշկ Մելիք-Փարսադանյանի կազմած վիճակագրության համաձայն՝ 1918 թ. հոկտեմբերի 18-ից մինչև 1919 թ. մարտի 10-ը, սովի, տարափոխիկ հիվանդությունների և զրկանքների հետևանքով մահացածների թիվը հասել էր 1382-ի (ամսական՝ 276, օրական՝ 9 հոգի), որոնց մեծ մասը դեռահասներ էին[2215]*: Ռաշտի գաղթականական մարմնի տեղեկագրի համաձայն՝ հոկտեմբերի սկզբներից մինչև դեկտեմբերի վերջը Ռաշտում և Հասան-Կալեում մահացածների թիվը հասել էր 500-ի, որից 350-ը (192 տղամարդ, 142 կին և 16 երեխա)՝ միայն Ռաշտում*[2216]*: Ռաշտում մահացածների մեջ (125 հոգի՝ 36%) մեծ թիվ էին կազմում չամախեցիները, համեմատաբար փոքր թիվ էին կազմում արցախցիներն ու զանգեզուրցիները՝ 86 հոգի՝ 24,60%: Մնացած մահացածները Բաքվի, Գանձակի և Երևանի նահանգներից ու Ղարադաղից էին: Ըստ տարիքի՝ մահացածների մեծամասնությունը մանկահասակներ և դեռահասներ էին: Մահացողներից 138-ը եղել են 1-15 (40%), 62-ը՝ 15-30 (17,70%), 75-ը՝ 30-40 (21,43%), 46-ը՝ 45-60 (13,14%) և 29-ը՝ 60-ից բարձր տարեկաններ (7,73%)*[2217]*: Մահացությունը շատ ավելի մեծ թիվ կկազմեր, եթե չլիներին պարսկահայության աջակցությունը և իրանական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքը: Օգնությունն իրականացնողների գործիմացության, եռանդի և նվիրվածության շնորհիվ հնարավոր եղավ կանխել մարդկային մեծաթիվ կորուստները, պահպանել հազարավոր տարագրվածների կյանքը:*

Էնզելիից և Ռաշտից գաղթականների վերադարձը Բաքու հնարավոր եղավ միայն պատերազմի ավարտից հետո՝ 1918 թ. նոյեմբերի վերջերից, երբ պարտված Թուրքիան իր զորքերը դուրս հանեց Այսրկովկասից[2218]*: Չնայած անգլիական հրամանատարության և*

[2214] Նույն տեղում, թ. 52:

[2215] Տե՛ս Իշխանեան Ք., Բագուի մեծ սարսափները, էջ 95-96:

[2216] Տե՛ս նույն տեղում, էջ 96:

[2217] Տե՛ս նույն տեղում, էջ 96-97:

[2218] Տե՛ս Ռոստոմ, Նամականի (մահուսն ութսունամեակին առթիւ), Պէյրութ, 1999, էջ 649-650:

Ադրբեջանի մուսավաթական կառավարության ստեղծած արհեստական խոչընդոտներին՝ դեկտեմբերի կեսերից գաղթականների առաջին խմբերը սկսեցին Էնզելիից մեկնել Բաքու[2219]: Նրանց վերադարձը և Էնզելիից որբերի տեղափոխման գործը կանոնավորելու նպատակով Էնզելի էր մեկնել Բաքվի Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչ Հ. Տեր-Միքայելյանը[2220]: Առաջին հերթին Բաքու վերադրվելին Էնզելիի հիվանդանոցում ապաքինվող հիվանդներն ու որբերը[2221]: Ներգաղթն Էնզելիից և Ռաշտից, որոշ ընդհատումներով, շարունակվեց մինչև 1919 թ. ապրիլի վերջերը[2222]: Բաքու վերադարձող հայ գաղթականության նկատմամբ կրկին տարբեր վերաբերմունք ցուցաբերեցին անգլիացիները: 1919 թ. ապրիլի սկզբներին Թոմսոնին փոխարինած դեն. Շաթելվորտը թեև հայտարարել էր, թե «մեր ներկայությունը Բաքվում նպաստելու է Ադրբեջանի բնակչության բոլոր շերտերի համակեցության հաստատմանը»[2223], այդուհանդերձ, դարձյալ կիրառվում էր ազգային խտրական քաղաքականություն: Իր իսկ կողմից մշակված հատուկ պայմանների համաձայն՝ գաղթականներին փոխադրող չոգենավերի համար ոչ միայն վճար պահանջվեց, այլև վերջիններս խուզարկվելու էին[2224]:

Տառապալի ապրումներ ունեցան Հյուսիսային Կովկասում հանգրվանած գաղթականները: Բաքվի հայ գաղթականներից բացի, Հյուսիսային Կովկասի տարբեր վայրերում ապաստանել էին արևմտահայ, նաև Արևելյան Հայաստանից գաղթած հայեր, որոնց ընդհանուր թիվը մոտավոր հաշվարկներով 1918 թ. կազմում էր 100-130 հազար[2225]: Բաքվի հայ գաղթականները հիմնականում կենտրոնացել էին Ստարո և Նովոտերեչնայա[2226] Ղզլար գծի վրա: Ընդ որում՝ Ստարոտերեչնայում հավաքվել էր 250, Նովոտերեչնայում՝ 50-60, իսկ Ղզլարում՝ մոտ 300-400-ի հոգի, որոնց մեջ՝ 50 որբ[2227]: Ղզլարում էր հանգրվանել նաև Պետրովսկից տեղափոխված մի քանի ընտանիք[2228]: Ղզլարի գաղթականները հիմնականում տեղավոր-

---

[2219] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 3, տե՛ս նաև ֆ. 200, ց. 1, գ. 414, թ. 208:
[2220] Տե՛ս նույն տեղում, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 3:
[2221] Տե՛ս նույն տեղում, ֆ. 223, ց. 1, գ. 46, թ. 6:
[2222] Տե՛ս նույն տեղում, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 47:
[2223] «Слово», Тифлис, 1919, 26 августа, № 5.
[2224] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 74, թ. 10, տե՛ս նաև «Վէմ», Փարիզ, 1934, № 3, էջ 67:
[2225] Տե՛ս Մինասյան Ս., Հյուսիսային Կովկասի հայ գաղթականության ներգաղթը Հայաստան (1918-1920 թթ.), ԲՀԱ, Երևան, 2007, № 1-2, էջ 185-186:
[2226] Ստարո և Նովոտերեչնայան հայաբնակ ստանիցաներ էին Կրասնոդարի երկրամասում (տե՛ս Դավթյան Ա., Հայկական և հայախառը բնակավայրերը Հյուսիսային Կովկասում, գիրք Բ, Երևան, 2001, էջ 240):
[2227] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 103, թ. 1-5:
[2228] Տե՛ս Мурадян В., նշվ. աշխ., стр. 24:

վել էին մի մեծ կիսակառույց տան ցախաւտանը և քնում էին ծղոտների վրա: Թեև տեղի հայությունը գաղթականներին օգնում էր սննդամթերքով, այդուհանդերձ, զգուշանալով համաճարակային հիվանդություններից, նրանց չէին ընակեցնում իրենց մոտ[2229]: Գաղթականներից շատերը զոհ գնացին սովին և տարափոխիկ հիվանդություններին[2230]: Ղզլարի գաղթականական կոմիտեից Բաքվի գաղթականական կոմիտեին 1919 թ. մարտի 12-ին գրած նամակում ասված էր. «Ղզլարում ներկայումս կան 3000-ից ավելի գաղթականներ՝ մերկ, դժվար կարոտության մեջ, իսկ քաղաքը այնպիսի քայքայման մեջ է, որ ոչ մի կերպ չի կարողանում օգնել գործին, բավական է ասել, որ հաց չկա բառիս իսկական իմաստով, չկա վառելիք և այլ կարևոր նյութեր: Ջքավորությունը, սննդի պակասությունը գաղթականներից շատերին գերեզման է տարել, օրինակ յոթը մարդուց բաղկացած ընտանիքից մնացել է մի հոգի: Կան բազմաթիվ որբեր»[2231]: Տեղի կառավարությունը, անկարող լինելով հոգալ գաղթականների անհամար կարիքները, մտադրվել էր նրանց, կրկին Բաքու տեղափոխելու հարցի ձգձգման պարագայում, տանել Կուբանի նահանգ[2232]: Ստարոտերևչնայա-Ղզլար գծից գաղթականությունը Բաքու տեղափոխելու հարցը կարգավորելու նպատակով 1919 թ. ապրիլի 7-ին Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը դիմեց անգլիական շտաբին՝ նավ ուղարկելու, գաղթականներին Բաքու տեղափոխելու համար[2233]: Սակայն նավեր չլինելու պատճառաբանությամբ տեղափոխման գործը ձգձգվեց, ինչն ավելի աղետալի դարձրեց գաղթականների դրությունը:

Գաղթականական գործն ուսումնասիրելու նպատակով 1919 թ. ապրիլի վերջերին Ղզլար այցելած Մայիլյան եղբայրների գլխավորած գիտա-անտեսական արշավախմբի անդամ, գաղթականական գործի լիազոր Գ. Մեդնիկյանցի՝ Բաքվի Հայոց Ազգային խորհրդին հղած նամակում նշվում էր, թե վերը նշված վայրերում կուտակված գաղթականները քայլ են տալիս իրենց դռյությունը մի կերպ՝ անօթևան և ջրազուրկ պայմաններում: Նրանցից շատերը զոհ են գնա-

---

[2229] Տե՛ս նույն տեղում:

[2230] Ղզլարում տիֆով վարակվել և հիվանդանոցում մեկ ամիս շարունակ բուժվել է Խորհրդային Միության ապագա հերոս Սարգիս Մարտիրոսյանը: Հիվանդանոցից դուրս գրվելուց հետո Ս. Մարտիրոսյանը վերադառնում է գաղթականական կայան, սակայն այնտեղ չի գտնում իր փոքրահասակ երկու քույրերին, որոնց տեղափոխել էին Աստրախանի որբանոց (տե՛ս նույն տեղում, стр. 26).

[2231] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 259:

[2232] Տե՛ս նույն տեղում:

[2233] Տե՛ս նույն տեղում:

ցել սովին, տարափոխիկ հիվանդություններին[2234]: Դրությունը բարդացրեց նաև Ղզլարում աստիճանաբար կուտակվող Հյուսիսային Կովկասի և Սևծովյան ափամերձ շրջանների՝ Օդեսայի, Նովոռոսիյսկի և Դոնի գաղթականությունը[2235]:

Հյուսիսայինի Կովկասից և Վոլգայի ափերից գաղթականություն Բաքու կարողացավ վերադառնալ միայն 1919 թ. սեպտեմբերի կեսերին[2236]: Գաղթականների մի խումբ 1919 թ. հունվարին Ղզլարից Վրաստանի վրայով տեղափոխվեց Հայաստան և ցրվեց տարբեր քաղաքներում և գյուղերում[2237]: 1919 թ. ապրիլի վերջերի դրությամբ դեռ չէր լուծվել Պետրովսկում հանգրվանած հայ գաղթականների՝ Բաքու տեղափոխման հարցը[2238]:

Ծանր պայմանների մեջ էին նաև Աստրախանում հանգրվանած 5000-6000-ի հասնող գաղթականները, որոնք իրենց գոյությունը մի կերպ քարշ էին տալիս քաղաքի հանրակացարաններում[2239]: Հայ գաղթականների տեղափոխման աշխատանքները կազմակերպելու նպատակով 1919 թ. սեպտեմբերի 21-ին Բաքվում հրավիրվեց Աստրախանում գտնվող գաղթականների հարազատների ընդհանուր ժողով, ուր ստեղծվեց գաղթականական հանձնաժողով՝ բաղկացած 9 հոգուց: Հանձնաժողովի անդամներն էին՝ Լ. Նազարյանը, Բ. Զուբարյանը, Ա. Հակոբջանյանը, Ա. Տեր-Ստեփանյանը և այլք: Գաղթականների տեղափոխման գործում իրենց ֆինանսական և գործուն աջակցությունը ցուցաբերեցին հատկապես «Եղբ. Միրզոյանց» և «Եղբ. Ադամյան» առևտրական ընկերությունները: Վերջինս այդ նպատակով տրամադրել էր նաև «Պուշկին» շոգենավը[2240]: Գաղթականությունը Աստրախանից տեղափոխվեց միայն նոյեմբերի 19-ին, երբ առաջին խումբը (1400 հոգի) երեք շոգենավերով վերադարձավ Բաքու[2241]:

Բաքվում սովի ու հիվանդության ճիրաններում իրենց գոյությունը մի կերպ պահող, կոտորածներից մազապուրծ հայերի դրությունն էլ ավելի բարդացավ, երբ գաղթականությունը Էնզելիից,

---

[2234] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 103, թ. 2:
[2235] Տե՛ս նույն տեղում, թ. 1:
[2236] Տե՛ս Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին, էջ 192:
[2237] Տե՛ս Мурадян В., նշվ. աշխ., стр. 25:
[2238] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 47, թ. 32:
[2239] Տե՛ս «Наше время», Баку, 1919, 6 сентября, № 173.
[2240] «Азербайджан», Баку, 1919, 20 сентябр, № 203.
[2241] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 57, թ. 244:

Պետրովսկից, Ղզլարից և այլ վայրերից ներգաղթեց Բաքու: «Որբերի, վերադարձող փախստականների և հայ աշխատավոր ժողովրդի դրությունը սոսկալի է: Բագուն դարձել է հայերի համար ահռելի մի գերեզմանոց: Աղքատություն, քաղցածություն, հիվանդություններ և մեռելների անվերջ շարքեր՝ այս է հայությանս արդի կացության պատկերը»[2242],- ասված է վավերագրում: Բ. Իշխանյանի հաշվումներով՝ Բաքու վերադարձած գաղթականների ընդհանուր թիվը 17004 էր[2243]: Ծանր էր Բաքու վերադարձած հայ գաղթականների վիճակը: Թուրք-թաթարների կողմից նրանց բնակարանները և ունեցվածքը կողոպտվելու պատճառով նրանք զրկվել էին կենցաղային տարրական պայմաններից և հիմնականում բնակվում էին փողոցներում: «Հայկական չքավորությունը Բաքվի չրջանում ողբերգական չափերի է հասել: Մինչև վերջին թեը կողոպտված, քաղցած ու մերկ ժողովուրդը ավելի մեծ դժբախտության դիրկը մատնվեց, երբ Բաքվի փախստականները՝ նույնքան մերկ, քաղցած և տարափոխիկ հիվանդություններով վարակված, վերադարձան Պետրովսկից և Էնզելիից»[2244],- ասված է վավերագրում: Բժշկասանիտարական տարրական պայմանների բացակայության պատճառով Բաքվում հաստատված գաղթականների չրջանում բռնկվեցին տարափոխիկ հիվանդություններ, որոնց զոհ գնաց ավելի քան 4000 հոգի[2245]: Ադրբեջանի իշխանությունները այդպես էլ միջոցներ չձեռնարկեցին նրանց աննկանելի դրությունը մեղմացնելու նպատակով: Բաքու վերադարձած գաղթականության և «Մարդասիրական ընկերության» գլխավոր չենքում հավաքված չուրջ 700 հայ որբերի խնամատարությունն իր ուժերի հնարավորության սահմաններում կազմակերպում էր 1918 թ. հոկտեմբերին հիմնված «Հայոց ինքնօգնության կոմիտեն»՝ Բագրատ եպս. Վալդազարյանի գլխավորությամբ[2246]: Գաղթականների տեղավորման, նրանց նյութական, բժշկական օգնություն տրամադրելու գործում մեծ աշխատանք կատարեցին Բաքվի Հայոց Ազգային խորհուրդն ու Բաքվում գործող Գյոքչայի և Շամախիի գավառների բաքվաբնակ հայ դյուղացիների հայրենակցական միությունները: Միայն Ազգային խորհուրդը որբերի և կարոտ-

---

[2242] Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 117:
[2243] Տե՛ս Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 184:
[2244] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 123, թ. 5:
[2245] Տե՛ս Գեղամեանց Ե., Տաճիկները Կովկասում եւ Բագուի աւկումը, պր. Բ, էջ 139:
[2246] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 76, տե՛ս նաև ֆ. 200, ց. 1, գ. 79, թ. 49, տե՛ս նաև ֆ. 223, ց. 1, գ. 54, թ. 32:

յայների համար օրական ծախսում էր մոտ 50000 ռ.[2247]: Բաքվի ՀՅԴ կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ ստեղծվում է «Գաղթականական կոմիտե» (անդամներ՝ Ա. Օհանջանյան, Պ. Զուբարյան, Ս. Մելիք-Յոլչյան): Կոմիտեի նախաձեռնությամբ Հայկավանում բացվեց ճաշարան: «Մարդասիրական ընկերության» խորհրդի հետ համատեղ, վերջինիս պատկանող շենքերում, կոմիտեն հիմնեց երկու որբանոց, ուր տեղավորվեցին էնզելիից վերադարձած և Բաքվում մյուս վայրերից հավաքված շուրջ 2000 որբեր: Կոմիտեն բացեց նաև երկու հիվանդանոց (յուրաքանչյուրը 300 մահճակալով), դեղատուն և լվացքատուն[2248]: Սակայն, ադրբեջանական իշխանությունների և անգլիական հրամանատարության անտարբերության պայմաններում, այս օգնություններն անբավարար էին սովի և տարափոխիկ հիվանդությունների տառապող գաղթականների անհամար տառապանքները և կարիքները մեղմելու համար:

[2247] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 51, թ. 27:

[2248] Տե՛ս Մելիք-Եօլչեան Ս., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պօսթըն, 1925, Գ տարի, սեպտեմբեր, № 11, էջ 76, տե՛ս նաև Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 436:

Դ. ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՔՎՈՒՄ (1919-1920 ՄԱՐՏ)

Բաքվում մուսավաթական կառավարության կողմից իրականացվող հայահալած քաղաքականությունը շարունակվեց նաև 1919-1920 թթ.: Հայերի ֆիզիկական ընաջնջումը համարելով համաթուրքականության հիմնական խնդիրներից մեկը՝ պատերազմում Թուրքիայի պարտությունից և թուրքական զորքերի Այսրկովկասից հեռանալուց հետո մուսավաթականները շարունակեցին հայահալած քաղաքականությունը՝ որդեգրելով ավագ եղբոր՝ Թուրքիայի գործելակերպը: Եռյակ դաշինքի պետությունների պարտությունից հետո հեռանալով Բաքվից և Ադրբեջանից՝ թուրքական հրամանատարությունն այնտեղ թողեց մեծ թվով սպաներ, զենք ու զինամթերք: Մահմեդական բանակի կոմիսար Ջավադ բեյը հավաստիացնում էր, որ՝ «Թուրքական կառավարությունը չի խնայի ոչ մի միջոց եղբայրական ադրբեջանական ուժեղ բանակ կազմակերպելու համար, ընդ որում, Ադրբեջանում գտնվող թուրքական բոլոր հրամանատարները պետք է համարվեն ադրբեջանական կառավարության ծառայության մեջ, մնան այնքան ժամանակ, որքան նրանց կարիքը զգացվի»[2249]:

Ինչո՞վ էր բացատրվում թուրքերի նման գործելակերպը: Փաստերը վկայում են, որ թուրք կառավարող շրջանները դեռևս 1918 թ. Կովկասում իրենց կատարած նվաճումներն ամրագրելու համար անհրաժեշտ կերպով նպատակադրվել էին ստեղծել «Ադրբեջան» անունով թուրքական նոր պետություն[2250]: Այդ էր վկայում Թուրքիայի ռազմական նախարար Իզզեթ փաշայի՝ Ադրբեջանի կառավարության ղեկավար Ֆ. Խան-Խոյսկուն գրած նամակի բովանդակությունը, ուր հստակ կերպով հրահանգվում էր, որ թուրքերի հեռանալուց հետո ադրբեջանական կառավարությունը «կձևանա ստեղծել մուսուլմանական պետություն»[2251]:

Մուսավաթական իշխանությունների հայահալած քաղաքականությանը նպաստեց Թուրքիայի տարածքային ամբողջականությունը պահպանելու նպատակով նախկին երիտթուրք Մուստաֆա Քեմալ փաշայի (Աթաթուրք) գլխավորությամբ 1919 թ. գարնանից

[2249] Ավետիսյան Հ., Երիտասարդ թուրքերի և Մուսավաթի համաթուրքական գործակցությունը, էջ 62:

[2250] Տե՛ս Դանիելյան Է., Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ., էջ 101:

[2251] Раевский А., Английская интервенция и мусаватское правительство. Из периода интервенции и контрреволюции в Закавказье, Баку, 1927, стр 31, տե՛ս նաև Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., էջ 326:

սկսված «ազգային-ազատագրական» շարժումը («միլլի շարժում»): «Միլլիականութիւնը,- գրում է Զարեւանդը,- ոչ թէ իթթիհադականութեան վերերեւումն էր քաղաքական հրապարակի վրայ թագնուած նոր անունի մը տակ, այլ անոր ամենէն չովինիստ տարրերուն վերակազմութիւնը՝ նոր կարգախօսով և ծրագրով»[2252]: Քեմալականները, որոնք մեծ մասամբ նախկին իթթիհադականներ էին, Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ շարունակեցին երիտթուրքերի համաթուրքական, նվաճողական քաղաքականությունը: «Եթե մյուս խնդիրներում,- ինչպես գրում է Հր. Սիմոնյանը,- քեմալականները որպես աստառը շուռ տված երիտթուրքեր, քողարկում էին իրենց գործողությունները, ապա հայ ժողովրդի նկատմամբ ունեցած վերաբերմունքում նրանք դրա կարիքը չէին զգում»[2253]: Մ. Քեմալի անմիջական նախաձեռնությամբ Մալթայի աքսորավայրից ազատվեցին 1919 թ. զինվորական տրիբունալի դատավճռով աքսորված իթթիհատականներից շատերը, որոնք նրա կողմից էլ ստանձնեցին պատասխանատու մի շարք պաշտոններ[2254]:

Այսրկովկասում միլլի շարժման ակտիվ գործունեության վայրերից մեկը համարվեց մուսավաթական Ադրբեջանը և նրա մայրաքաղաք Բաքուն: Ադրբեջանում նոր թափ ստացած ազգայնական շարժմանն էր նպաստում նաև այն հանգամանքը, որ այդ շրջանում Բաքվում իր ակտիվ գործունեությունն էր ծավալել նաև «Իթթիհադ» («Միություն») կուսակցությունը, որն անթաքույց ուներ համակահայկական ուղղվածություն: Միլլիականության ջերմ պաշտպանն էր նաև Մուսավաթը: «Ադրբէջանի մէջ,- դրում է Ա. Միքայէլյանը,- այդ հոսանքի գլուխ կանգնած էին Իթթիհատ կուսակցութեան պարագլուխները եւ Մուսաւաթ կուսակցութեան ղեկավար անհատները, որոնց մէջ էին Խան Խոյսկին եւ Խոսրով բէկ Սուլթանովը»[2255]:

Մ. Քեմալը, լավ հասկանալով այն դերը, որ կարող են ունենալ մուսավաթականները Այսրկովկասում՝ Հայաստանի և հայերի դեմ սկսված պայքարում, էդրդումի իրենց առաջին (1919 թ. հուլիս 28-օգոստոս 6) և դրան հաջորդած Սվազի երկրորդ (1919 թ.

[2252] Զարեւանդ, նշվ. աշխ., էջ 161:

[2253] Սիմոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 501:

[2254] Տե՛ս Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը), գիրք Բ, Երևան, 1983, էջ 253-258:

[2255] Միքայէլեան Ա., Ղարաբաղի վերջին դէպքերը, «Հայրենիք», Պօսթըն, 1923, Ա տարի, մայիս, № 7, էջ 165:

սեպտեմբեր 4-11) համագումարների աշխատանքներին մասնակից էր դարձրել Ադրբեջանի դինվորականության ներկայացուցիչներին: Համագումարներից անմիջապես քեմալականների կողմից մի պատվիրակություն ուղարկվեց Բաքու, որն առաջադրանք ուներ ոչ միայն քայքայիչ գործողություններ ծավալել և ամենուրեք մահմեդականներին ոտքի հանել հայերի դեմ, այլ նաև համաձայնության գալ մուսավաթականների հետ նրանցից ֆինանսական օժանդակություն ստանալու նպատակով: Այս էր պատճառը, որ 1919 թ. ամռանից Բյագիմ Կարաբեքիրի պատվիրակները մշտական կապ էին պահպանում Բաքվի մուսավաթականների հետ: 1919 թ. վերջերին Բաքու ժամանեցին Խալիլ և Նուրի փաշաները: Վերջինս ղեկավարում էր նաև մուսավաթականների հետ սերտորեն շաղկապված «Թուրքական ժողովրդի պատվիրակություն» կոմիտեն, որի նպատակն էր մահմեդականների շրջանում տանել համաթուրքական քարոզչություն: Բաքու ուղարկվածների մեջ էր նաև երիտթուրքական նախկին գործիչ, էրզրումի համագումարի կազմակերպիչ դոկտ. Ֆուադ Սաբիթ օղլուն, որն ավելի ուշ 1920 թ., իրեն հայտարարեց Բաքվում Թուրքիայի գլխավոր ներկայացուցիչ[2256]: Անատոլիայի և Բաքվի կապն ամրապնդելու նպատակով 1919 թ. հոկտեմբերի 29-ին, Կ. Պոլսում, Ադրբեջանի ներկայացուցիչ Ռերիմովի և Մ. Հեմալի ներկայացուցիչ, Թուրքիայի գլխավոր շտաբի պետ Ջևադ փաշայի միջև կնքվեց ռազմաքաղաքական համագործակցության գաղտնի մի դաշնագիր, որն առաջին հերթին ուղղված էր Հայաստանի և հայ ժողովրդի դեմ[2257]: Հեմալականների և մուսավաթականների սերտ համագործակցության մասին «Իթթիհադ» լրագիրը այդ օրերին գրում էր. «...Տաճիկ ժողովրդի բախտը այսօրվանից կապված է Ադրբեջանի մահմեդականների բախտի հետ»[2258]:

Որ Ադրբեջանում 1919 թ. կեսերից լայնորեն տարածվում էր համթուրքականության քարոզչությունը, վկայում է նաև Կ. Պոլսում լույս տեսնող «Հայրենիք» լրագրի թղթակից Հ. Ամատունու 1919 թ. դեկտեմբերի 10-ի հաղորդումը. «Այս պահին իթթիհադի ամենաուժեղ գործակալները տարածուած են Ադրբէյջանում և կենտրոնական Ասիայում և յոյս ունին, թէ մթութեան մէջ պէտք է մնան, քաղաքական աննկատ և զանազան ազդերի ինքնորոշման պատրուակի տակ պիտի ստեղծեն քաղաքական այնպիսի շարժում-

---

[2256] Տե՛ս Սարգսյան Ե., Քեմալականների 1920-1921 թթ. արշավանքն Անդրկովկաս և 1921 թ. մարտի 16-ի Մոսկովյան պայմանագիրը, ԼՀԳ, Երևան, 1992, № 1, էջ 23:
[2257] Տե՛ս Զարեւանդ, նշվ. աշխ., էջ 169, տե՛ս նաև Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը Անդրկոնֆեդերացիայի ստեղծման հարցում (1919 թ. օգոստոս-1920 թ. ապրիլ), ԲՀԱ, 2006, № 1, էջ 34:
[2258] «Յառաջ», Երեւան, 1920, հունիսի 19, № 127:

ներ, որ պէտք է առաջնորդեն թուրանական ցեղի վերջնական միութեան»[2259]: Ադրբեջանի հողագործության և պետական ունեցվածքի նախարար, հայատյաց Խ. բեկ-Սուլթանովը բացեիբաց հայտարարում էր, որ «Ադրբեջանում կամ չպետք է լինեն հայեր կամ էլ կլինեն այնպես, ինչպես ռասյան Թուրքիայում»[2260]: Այս ազդակները ոգևկոչեցին թուրք-մուսավաթականներին՝ Ադրբեջանում հայ բնակչության նկատմամբ վերսկսելու հալածական քաղաքականությունը: Բաքվում սկսեցին մշակվել հայազավ նոր ծրագրեր:

Այսպիսով՝ թուրքերի կիսատ թողած քաղաքականություն հայերի նկատմամբ, նույն թուրքերի օգնությամբ, ավարտին պետք է հասցնեին մուսավաթականները: Ադրբեջանում ոչ մահմեդական ժողովուրդների և էթնիկական տարբեր խմբերի նկատմամբ որդեգրած ցեղասպանության և ձուլման քաղաքականության մեջ մուսավաթականները հատուկ տեղ էին հատկացնում հայերին, որպես հիմնական խոչընդոտի՝ «Մեծ Ադրբեջան» պետության ստեղծման ճանապարհին: Վ. Բայկովը գրում է, որ նորաթուխ Ադրբեջանի Հանրապետության կառավարությունը բռնությունները դարձրեց նպատակային, պետական մակարդակով «պատերազմ հայտարարեց հայությանը»[2261]: Ադրբեջանի իշխանությունների հայակուլ թողտվությունն այն աստիճանի էր հասել, որ ցանկացած կովկասյան թաթար կարող էր առանց որևէ պատճառի սպանել հայի և մնալ անպատիժ[2262]:

Փաստերը վկայում են, որ կովկասյան թաթար հրոսակների բռնարարքներին զոհ են դարձել նաև գնացքներով երթևեկող հայերը: Կովկասյան թաթարների գինված ավազակախմբերը, չրջելով երկաթուղային կայարաններում, կողոպտում, ծեծում, չար դիպքերում նաև վագոններից դուրս էին նետում անպաշտպան հայերին[2263]: 1919 թ. հունվարի 31-ին գյուրջևանցի և մատրասեցի 30 հայեր Բաքվից Քյուրդամիր մեկնելիս՝ Քյուրդամիր կայարանում, ենթարկվում են թաթար ավազակախմբերի հարձակմանը և, ոստիկանների անմիջական մասնակցությամբ կողոպտվում ու դաժանաբար սպանվում են: Հաջողվել է փրկվել միայն գյուրջևանցի Ոսկան Աղաբեկյանին, որը Բաքվի Հայոց Ազգային խորհրդին հայտնել է տեղի ունեցածը[2264]:

[2259] Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 259:
[2260] Нагорный Карабах в международном праве и мировой политике (документы и коменмтарий), т. I, док. 229, стр. 232.
[2261] **Байков В.**, նշվ. աշխ., стр. 143.
[2262] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 75, թ. 61:
[2263] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 36, թ. 51:
[2264] Տե՛ս նույն տեղում, թ. 18:

Բաքվից բացի, Ադրբեջանի իշխանությունները հայ բնակչության նկատմամբ բռնություններ ու կամայականություններ էին գործադրում նաև Շամախի քաղաքում[2265]: Ադրբեջանի կառավարությունը նպատակադրվել էր այդտեղից դուրս մղել կոտրածներից մազապուրծ սակավաթիվ հայերին և բռնությամբ տիրանալ նրանց տներին ու ունեցվածքին: Այդ նպատակով կառավարությունը որոշել էր՝ քաղաքի ներքին թաղում բնակվող կովկասյան թաթարներին վերաբնակեցնել վերին թաղում՝ ավելի բարեկարգ վիճակում գտնվող հայկական թաղամասում: Գ. Քաջբերունին այդ առիթով ցավով նշում էր, որ եթե հայերի տներն ընկնեն «...անընդունակ, երբեք այդու երես չտեսած, երկյարկանի տներում չապրած, գոմեշների ու ոչխարների հետ կնանք վարած մարդկանց ձեռքեր, այդպիսինները իհարկէ, եղածն էլ քարուքանդ կանեն»[2266]:

Իրավիճակը լարված էր մնում հատկապես Բաքվում, ուր հայությունն ապրում էր սոսկումի և տագնապի պայմաններում: Բանտերը վերածվել էին հայ խաղաղ բնակչության ու ռազմադերիների գերեզմանների: Բաքու քաղաքում թաթարական հրոսակախմբերն իշխանությունների թողտվությամբ բռնի հավաքագրում էին հայ երիտասարդներին և նրանց հարկադրաբար ուղարկում տարաբնույթ ծանր աշխատանքների[2267]: Հայ բանվորներին աշխատանքի չէին վերցնում նավթահանքերում[2268]: Օրհասական պայմանների մեջ էր հայտնվել Բաքվի հայկական որբանոցը, որտեղ սովից ու հիվանդություններից օրական տասնյակ որբեր էին մահանում[2269]: Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանի[2270]՝ Հայաստանի կառավարությանը հղած գեկուցագրում մատնանշվում էր. «Հայերի դեմ սկսած հալածանքը, անհատական սպանությունները, կալանավորումները, բռնությունները և կողոպուտը սովորական են Ադրբեջանի ամբողջ տերիտորիայի վրա: Այդ տեսակետից Բագուն անգամ բացառություն չի կազմում: Հայերը ահաբեկված վիճակում են և երեկո-

---

[2265] Տե՛ս «Наше время», Баку, 1919, 25 апреля, № 75.

[2266] Քաջբերունի Գ., Բազմամիլիոն ժառանգութիւն, ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 439, թ. 1, 69:

[2267] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 103, թ. 148:

[2268] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1919, փետրվարի 26, № 44:

[2269] Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 79:

[2270] Տ. Բեկզադյանը Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ է եղել 1919 թ. փետրվարի 28-ից՝ ներառյալ 1920 թ. փետրվարի 24-ը: Նրան հաջորդել է Սարտիրոս Հարությունյանը:

ները՝ ժամը 7-8-ից հետո, փողոց դուրս գալ շատ քչերն են վտանգում»[2271]: Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը՝ գեներալ Շատիլովին 1919 թ. ապրիլի 25-ին հղած զեկուցագրի մեջ հայտնում էր, որ կովկասյան թաթար ավազակախմբերի հարձակումների հետևանքով միայն ապրիլ ամսին Բաքվում զոհվել էր 25 հայ[2272]:

Առանձնապես ծանր պայմանների մեջ էին հայտնվել հայ սպաներն ու զինվորները: «4000 հայ զինուր չը գիտեն ուր խոնարհել իրանց գլուխը, որտեղ փնտռուլ օթևան իրանց համար: 400 հայ օֆիցեր մատնված է նոյն ծանր վիճակին: Այսպիսով հայ բանուորը, զինուրն ու մտաւորականը չեն կարողանում հաց վաստակել. Ապշերոնեան թերակղզու այն վայրում, որը փարթամացել ու վաճառաշահ է դարձել հէնց հայի չանքերով ու քրտինքով»[2273],- գրում էր այդ օրերին «Մշակը»: Անհուսալի դրության մեջ էին Բաքվում ապաստանած Գյոքչայի և Շամախիի գավառների գաղթականները, որոնց թիվը 1919 թ. մարտին հասնում էր 20000-ի[2274]: Վերջիններս չարունակ դիմումներ էին հղում ազգային հաստատություններին՝ միջոցներ ձեռք առնելու և օր առաջ իրենց նախկին բնակավայրերը տեղափոխելու համար[2275]:

Բռնարարքներից զերծ չմնաց նաև քաղաքի Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցին և առաջնորդարանը, որտեղ զենք և զինամթերք գտնելու պատրվակով, 1919 թ. հունիսի 11-ին, թուրք սպայի գլխավորությամբ, 100-ի հասնող կովկասյան թաթար զինվորներ շրջապատում են եկեղեցին: Առաջնորդարանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության պատկանող հիվանդանոցային սպիտակեղենից ու իրերից բացի ոչինչ չհայտնաբերվեց[2276]: Սակայն, գազազած զինվորները կովկասյան թաթար ամբոխի ներկայությամբ վայրենաբար կրակում են եկեղեցու պատերին և հետանում[2277]:

Իշխանությունների կողմից բռնագրավվեցին նաև հայապատկան շինությունները: Մեծահարուստ հայերի բնակարանների

[2271] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 79, թ. 30:
[2272] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 46, թ. 3-4:
[2273] «Մշակ», Թիֆլիս, 1919, փետրվարի 26, № 44:
[2274] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 79, թ. 118:
[2275] Տե՛ս նույն տեղում:
[2276] Տե՛ս **Hovhannisian R.**, The Republic of Armenia,vol. 2, Berkeley-Los Angeles-London, 1982, p. 186, տե՛ս նաև Ղուլյան Յու., Աղրբեջանի հակահայկական քարոզչությունը 1918-1920 թթ., ԼՀԳ, Երևան, 2008, № 3, էջ 7:
[2277] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 104, թ. 25, տե՛ս նաև Ստեփանյան Գ., Համառոտ ակնարկ Բաքու քաղաքի հայկական եկեղեցիների պատմության, էջ 163:

իրենց գույքով բաժանվեցին նախարարներին և կառավարության բարձրաստիճան պետերին[2278]: Պետականացվեցին Եղբ. Մայիլյանների թատրոնի հայկական շենքը և Քր. Վերմիշյանին պատկանող քաղաքի ամենարարձրակարգ տպագրատունը: Բռնագրավվեցին նաև հայապատկան առևտրական և արդյունաբերական ձեռնարկությունները[2279]: Կոդոպուտի և ալիրումների հետևանքով հայերին պատկանող նավթարդյունաբերական տասնյակ ձեռնարկություններից 1920 թ. հունվարի դրությամբ կիսով չափ գործում էին ընդամենը 7 ընկերություններ, նավթի հանույթի հետևյալ քանակով. («Манташевъ А. И.» (1.212.550), «Лианозов Г. М. С-ья» (695.860), «Тер-Акоповъ И. Н.» (323.600), «Мирзоевы Бр.» (274.550), «Арамазд»-об-во (144.000), «Соучастники» (111.900), «Адамовъ Р. А.» (48.704))[2280]: Իսկ ֆինանսա-վարկային ընկերություններից դեռևս չարունակում էր իր գոյությունը պահպանել «Թումանյան եղբ.» բանկային գրասենյակը[2281]:

Ադրբեջանի իշխանությունների կողմից հայ բնակչության նկատմամբ բռնություններն ու հալածանքները նոր թափով վերսկսվեցին 1920 թ. սկզբներից: Ադրբեջանը ազգային կազմով միատարր դարձնելու մուսավաթականների և քեմալականների ազգայնամոլ ձգտումները դարձան Ադրբեջանի Հանրապետության պետական քաղաքականությունը: Որքան էլ որ Ադրբեջանի պառլամենտը 1919 թ. սեպտեմբերի 6-ին ընդունել էր օրենք՝ Ադրբեջանի քաղաքացիության վերաբերյալ, համաձայն որի՝ «Ազերբայջանի քաղաքացիներ համարվում են՝ առանց ազգի և կրոնի խտրության՝ նախկին ռուսաց կայսրության այն բոլոր հպատակները, որոնք իրանք, կամ նրանց ծնողները ծնվել են Ազերբայջանի Հանրապետության սահմաններում»[2282], հայ բնակչությանը օրենքից դուրս համարելով՝ բաքվում և գավառներում չարունակեցին իրականացնել հայահալած քաղաքականությունը: «Այն թաղամասերում (7-րդ, 8-րդ և 9-րդ) ուր գլխաւորապէս հայեր են ապրում,- գրում է «Աշխատաւորը»,- բառիս բուն մտքով ոչ մի իրաւակարգ գոյութիւն չու-

---

[2278] Տե՛ս Байков В., նշվ. աշխ., стр. 144.

[2279] Տե՛ս Нагорный Карабах в международном праве и мировой политике (документы и коменмтарий), т. I, док. 229, стр. 232.

[2280] Տե՛ս Адресъ-календарь Азербайджанской Республики на 1920-й г., стр. 66.

[2281] Տե՛ս նույն տեղում, стр. 67.

[2282] Ազերբայջանի բաղաքացիութեան (հպատակութեան) օրէնքը, Բագու, 1919, էջ 3:

նի: Անձի ու բնակարանի անձեռնմխելիությունը երազ է, ցնորք. կամայականությունն է միանգամայն թագաւորում այնտեղ: Մեղավոր ես միայն նրանով, որ հայ ես. ինձ կարող են բանտարկել, ծեծել փողոցներում հայհոյել, վիրաւորել, թալանել...և մնալ անպատիժ: Փողոցներում առանց պատճառի և առանց հրահանգի բռնում են մարդկանց և քշում անհայտ ուղղութեամբ իբր թէ աշխատեցնելու համար: Մէկին վիրավորում են թրով, մէկին դաշոյնով...և այսպէս անվերջ և այսպէս շարունակ ու միշտ էլ «ոստիկանութիւնը անզօր է», չարագործները չեն բռնւում, չեն պատժւում»[2283]: Կովկասյան թաթար հրոսակները իշխանությունների հրահրմամբ հայերի նկատմամբ իրականացնում էին քաոսմնելի արարքներ, բնակարաններում կազմակերպում անհարկի խուզարկություններ, կողոպուտներ և սպանություններ[2284]:

Հայահալած քաղաքականությունը դրսևորվեց նաև մշակույթի բնագավառում: Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը Ադրբեջանի կառավարության նախագահ Ն. Բեկ-Ռուսուբեկովի հետ 1920 թ. մարտի 15-ի հանդիպման ժամանակ բարձրացնում է «Մարդասիրական ընկերության» գրադարանը Երևան տեղափոխելու հարցը, սակայն վերջինս կարուկ մերժում է՝ պատճառաբանելով, թե՝ «...ոչ մի կերպ թոյլ չի տրւի Մարդասիրական ընկերութեան գրադարանը փոխադրել Հայաստան, որովհետև այդ գրադարանը քաղաքի միակ հարուստ գրադարանն է, որից օգտւում են առանց խտրութեան բոլորը...»[2285]:

Կողոպուտից զերծ չեն մնում նաև հայապատկան նավթային ընկերությունները: 1920 թ. ապրիլի 11-ին գիշերվա ժամը 10-ին թաթար չարագործները ներս խուժելով «Սալիտակ» քաղաքում գտնվող «Ա. Հ. Մանթաշյանց և ընկ.»-ը պատկանող նավթային գործարանը, Մից. Արամյանցի աշխատասենյակից կողոպտում են թանկարժեք իրեր և 203.000 ռ. դումար[2286]: Բաքվի և Թուրքեստանի հայոց թեմի առաջնորդ Մաթևոս արքեպ. Մաթևոսյանը Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին 1922 թ. դեկտեմբերի 31-ի հղած զեկուցագրում նկարագրելով Բաքվում մնացած հայերի ծանր վիճակը, դառնացած գրում է. «Բագու քաղաքը, որ իւր մէջ պարփակում էր թէ՛ հայ ժո-

---

[2283] «Աշխատաւոր», Թիֆլիս, 1920, ապրիլի 3, № 2 (74):
[2284] Տե՛ս «Наше время», Баку, 1920, 15 апреля, № 24.
[2285] ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 334, թ. 16, տե՛ս նաև «Աշխատաւոր», Թիֆլիս, 1920, մարտի 31, № 72, տե՛ս նաև «Հայրենիք» (լրագիր), Պօսթըն, 1920, 20-րդ տարի, հունիսի 6, № 64:
[2286] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 1920, ապրիլի 11, № 75:

դովրդի հասարակութիւնը, և թէ՛ մտաւորական ոյժերը, այսօր ներկայանում է ամայի վայր. չկան ոչ հին կալուածատեր արդիւնաբերող հարուստ ընտանիքները, ոչ խոշոր վաճառականական տներն ու դրամանեակները և ոչ ինտիլիգենտ հոծ բազմութիւնը: Շնորհիւ հայկական քաղաքականութեան 1918 թուից սկսած հետզհետէ հեռացել կամ հալածուել են և՛ հարուստ հայերը, և՛ մտաւոր աշքի ընկնող ոյժերը»[2287]:

Հայերի դեմ վերսկսված հալածական քաղաքականութեան մեջ իրենց բացասական դերն ունեին Բաքվում հրատարակվող «Ադրբէջան» և «Իթթիհադ» լրագրերը, որոնք լի էին սադրիչ հրապարակումներով. «Նրանք խօսք մէկ արած՝ գործում են որոշ հրահանգներով ու ծրագրով. հէնց որ նշանը տրւում է, մէկ էլ տեսար տպւեց մի ամպագորգոռ հայակեր առաջնորդող...»[2288]:

Համատարած բնոյթ էին կրում հայ մտավորականների, հասարակական և քաղաքական գործիչների ձերբակալութիւնները: Ականատեսի վկայութեամբ՝ «Հայ ազգաբնակութիւնը ենթարկւում է ոճրապատ կամայականութիւնների կառավարական գործակալների կողմից: Լինում են հայերի «անհետացումներ», նոյնիսկ Ադրբէջանի մայրաքաղաքում, իշխանութիւնների աչքի առաջ: Հաստատում են, որ Ադրբէջանի կառավարութիւնը նոյն սիստեմին է դիմել Բագւի հայերի նկատմամբ ինչ գործադրեց տաճիկ կառավարութիւնը 1915-ի կոտորածների նախօրեակին, ձերբակալելով տաճկահայ մտաւորականներին և հասարակական գործիչներին»[2289]: *Բաքվում, 1920 թ. մարտին, մի խումբ հայ քաղաքական գործիչների հետ ձերբակալվում և Բախլովի բանտ է նետվում նաև գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ Միսաք (Արամայիս) Տեր-Դանիելյանը: Վայրենաբար այրվում է նրա բնակարանը, որի հետևանքով ոչնչացվում են պրոլի ողջ գրադարանն ու ձեռագրերը*[2290]:

Հայատպան գործողութիւնները չարունակվեցին նաև գաւառների հայկական գյուղերում[2291]: *Թուրքական արշավանքից և մուսավաթական երկամյա վարչակարգից հետո դեռ երկար ժամանակ գաւառների հայ բնակչութիւնը զգում էր դրա ծանր հետևանքները՝ բոլոր առումներով: «Ադրբէջանի կառավարութեան նպատակն էլ արևի պես պարզ է,- գրում էր «Յառաջը»,- խեղդել,*

[2287] ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 512, թ. 1:
[2288] Նույն տեղում, մարտի 18, № 57:
[2289] «Աշխատաւոր», Թիֆլիս, 1920, ապրիլի 2, № 1 (73):
[2290] Տե՛ս Արամայիս (Միսաք Տեր-Դանիելյան), Ղարաբաղի տագնապը. պատմության համար, օրագրություն (26 ապրիլի-26 հուլիսի 1919 թ.), էջ 5-6:
[2291] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 32, թ. 23:

ճնշել, հալածել հայերին այնքան ժամանակ, որ հայը կամ մեռնէ դանդաղ մահով, կամ ով կարող է թողնէ ու փախչէ, դատարկելով հայրենի օջախն ու դարերով քրտնոտոտ արած դաշտն ու այգիները»[2292]:

1918-1920 թթ. հայերի կոտորածների հետևանքով հայաթափվեցին Բաքվի նահանգի հայահոծ գավառները, իսկ հարյուրամյակների ընթացքում ստեղծված նրանց նյութական և հոգևոր արժեքներին տեր դարձան թուրք-թաթարները: Խորհրդային Ադրբեջանի 1921 թ. օգոստոսի գյուղատնտեսական վիճակագրության տվյալների համաձայն՝ կոտորածներից հետո միայն Շամախիի, Գյոքչայի, Նուխիի և Արեշի գավառներում հայ բնակչության թվաքանակը կազմում էր 12716 մարդ[2293]:

Ջգալի էր հատկապես Բաքու քաղաքի հայության կորուստները 1918-1920 թթ. կոտորածներից հետո: 1921 թ. մարդահամարի տվյալներով Բաքվի (ներառյալ արդյունագործական-գործարանային շրջանները) հայ բնակչության թիվը կազմում էր 38746[2294]*: Այդ թիվը համադրելով հայ բնակչության նախքան կոտորածների թվի (88673)*[2295] *հետ, պարզորոշ երևում են վիրտուոզի կորուստների այն մեծ չափերը, որ պատճառել էին երիտթուրքերն ու մուսավաթականները: Ըստ այդմ՝ կոտորածներին զոհ էր գնացել շուրջ 49927 մարդ: Այլապես, բնականոն աճի պայմաններում, հայ բնակչության թիվը Բաքվում 1922 թ. վերջերին պետք է կազմեր մոտ 100.000*[2296]*: Սա, ըստ էության, 1905 թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ տեղի ունեցած հայերի ջարդերից հետո ամենածանր կորուստն էր, որ կրեց Բաքվի հայությունը ընդամենը երկու տարվա ընթացքում: Հայ բնակչության՝ ցեղասպանության պատճառով այդպիսի մեծ չափերով նվազելն իր ծանր հետևանքներն ունեցավ Բաքվի հայկական հետագա կյանքի վրա:*

Ադրբեջանում 1918-1920 թթ. հայ բնակչության նկատմամբ իրականացված ջարդարար քաղաքականության վերաբերյալ Մոսկ-

---

[2292] «Յառաջ», Երեւան, 1920, մարտի 30, № 66:

[2293] Տե՛ս **Карапетян М.**, Этническая структура населения Нагорного Карабаха в 1921 г. (по сельско-хозяйственной переписи Азербайджана 1921 г.), Ереван, 1991, стр. 4, տե՛ս նաև Большая Советская Энциклопедия, т. 1, Москва, 1929 (այսուհետ՝ БСЭ), стр. 643.

[2294] Տե՛ս Закавказье. Советские республики. Статистико-экономической сборник (б. м.), 1925, стр. 152-153.

[2295] Տե՛ս Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 17:

[2296] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 512, թ. 1-2, տե՛ս նաև **Ստեփանյան Գ.**, Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում 1918-1920 թթ., էջ 31-48:

վայում լույս տեսնող «Жизнь национальностей» ամսագիրը 1921 թ. գրել է. «Ադրբեջանում, այնտեղ, որտեղ նախկինում բնակվել են հայերը, մնացել են բաց տարածություններ կամ բնակեցվել են ադրբեջանցիներով և քրդերով: Հայ բնակչությունը կենտրոնացել է այն տեղերում, որտեղ չէին թափանցել մուսավաթականները»[2297]:

Այսպիսով՝ 1918-1920 թթ. մուսավաթական Ադրբեջանն իր պետության ողջ ընթացքում, Թուրքիայի օրինակով, հայերի ցեղասպանության և էթնիկ զտման ճանապարհով նպատակադրվել էր Արևելյան Այսրկովկասում ստեղծել «սեփական հայրենիք»: Երկրամասի հայապրկմամբ թուրք-մուսավաթականները հնարավորություն էին ստանում տիրանալու հայերի անբավ հարստություններին, տնտեսական կարողություններին, վերացնելու կովկասյան թաթարների պոտենցիալ մրցակցին: Ադրբեջանի Հանրապետության երկու տարվա ջարդարար գործունեությանը ժամանակին ճիշտ բնորոշում է տվել «Մշակը», գրելով՝ «Եւ անկախ Ադրբէջանի գոյութիւնը մօտ երկու տարվայ ժամանակամիջոցում ոչ այլ ինչ էր, ապա թէ ոչ միմիայն քաղաքական դաւեր նիւթող և հայկական կոտորածներ կազմակերպող: Ղեկավար կուսակցութիւնն էր Մուսավաթը, այն առհասարակ, ինչպէս և Ադրբէջանի սակավաթիվ ինտելիգենցիան, ունած էին միմիայն պանթուրքիզմով և պանիսլամիզմով, ուստի և նրանք Ադրբէջանի գոյութեան նպատակը համարեցին Թուրքիայի փրկութեան խնդիրը, հետևապէս և հայակեր քաղաքականութիւնը»[2298]:

Այսպիսով՝ Արևելյան Այսրկովկասում՝ Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքում, հայերի ցեղասպանությունն անժխտելի իրողություն է, որն անողոքաբար իրագործվել է երկրամասի հնարնակ ժողովրդներից մեկի նկատմամբ: Հայ բնակչությունը ցեղասպանության ենթարկվեց իր բնօրրանում, այնպես, ինչպես երիտթուրքերն իրագործեցին արևմտահայերի բնաջնջումը 1915-1916 թթ. Արևմտյան Հայաստանում: Ուստի երիտթուրքերի և մուսավաթականների կիրառած քաղաքականությունը պետք է որակել որպես արևմտահայերի ցեղասպանության շարունակություն, քանզի Հայոց ցեղասպանությունն իր աշխարհագրական ընդգրկմամբ (Բաքվից, Նուխիից, Արեշից, Արցախից մինչև Կիլի-

---

[2297] **П. П.**, Тяжелое наследство, «Жизнь национальностей», Москва, 1921, № 4: Մեջբերումն ըստ՝ **Волкова Н.**, Этнические процессы в Закавказье в XIX-XX вв., «Кавказский этнографический сборник», № 4, отв. редактор **В. Гарданов**, Москва, 1969, стр. 10.

[2298] «Մշակ», Թիֆլիս, 1920, օգոստոսի 20, № 75:

կլիա) համաթուրքականության ամբողջական ծրագրի իրականացման հետևանք էր: Ցեղասպանության միջոցով ավերվեցին և ոչնչացվեցին նաև հազարամյակներով ստեղծված հայկական բազմաթիվ խաչքարեր, մատուռներ ու եկեղեցիներ, այսինքն՝ միանգամայն ակներև է, որ հայ բնակչության նկատմամբ թուրք-մուսուլմանականները իրագործել են նաև մշակութային եղեռն:

Հայ բնակչության դեմ իրականացված ցեղասպանության և հայաթափման հանցավոր քաղաքականության պատասխանատուները հավասարապես Թուրքիան և Ադրբեջանն են՝ անկախ վարչակարգից, որովհետև դրանք կատարվել էին նրանց ռազմաքաղաքական դաշինքի պայմաններում և իրագործվել երիտթուրքական, մուսավաթական և քեմալական իշխանությունների կողմից: Այստեղ տեղին է մեջբերել 1917 թ. «Պայքար» լրագրի առաջնորդողում դնտեղված թուրքերի ազգային հոգեբանության բնութագիրը, որն այսօր էլ չի կորցրել իր այժմեականությունը: «Թուրքը թուրք է,- ասված է լրագրում,- նոյն բարբարոսն, նոյն արիւնռուշտը, կուզես թէ անոր էնթերի հագցուր, նորաձև հադուստով պճնէ... Հոգին է, ցեղին հոգին է, որ փոփոխութեան չի ենթարկուիր և գազանն ապահով դարանակալած յարմար առիթին կսպասէ նրանէն դուրս ելնելու և մահ ու սարսափ սփռելու»[2299]:

Ադրբեջանում հայերից թալանված անշարժ ու շարժական գույքի, մասնավորապես տնտեսության հիմքը կազմող նավթարդյունաբերական ձեռնարկությունների հարստությունների կորուստը և այլ ասպարեզներում հասցված վնասները անցնում էին տասնյակ միլիոններից: Այդ առիթով Գ. Քաջբերունին «Բազմամիլիոն ժառանգութիւն» խորագիրը կրող ճանապարհորդական նոթերում 1920 թ. մարտի 26-ին ցավով նշում էր. «... խնդրում եմ մի ակնարկով յետ նայել և հաշուի առնել թէ ինչ խոշոր ժառանգութիւն է թողել արտաքսուած հայը իր հետնորդներին: Մենք տեսնում ենք, որ նա թողել է ամուր, քարաշէն տներ և այլ շինութիւններ: Մենք տեսնում ենք, որ նա թողել է քարապատ ծորակահոս աղբիւրներ և, որ գլխաւորն է, թողել է բոլորովին պատրաստի հազարաւոր այգիներ... Մի հանգամանք միայն կարծես հաստատ է, այդ այն է, որ եկեղեցիների խաչերը շուտով կիսալուսնի կփոխուին, եկեղեցիները ու վանքերը անմիջապէս մէչիտ կդառնան, մօտերը կցցուին ազանի մինարէթներ»[2300]:

[2299] «Պայքար», Թիֆլիս, 1917, հունիսի 15, № 57:

[2300] Քաջբերունի Գ., Բազմամիլիոն ժառանգութիւն, ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 439, թ. 69:

Այս տեսակետից խիստ ուշագրավ է միայն Բաքու քաղաքում 1918 թ. հայերի սեպտեմբերյան կոտորածների հետևանքով հայ ժողովրդի կրած նյութական կորուստների վերաբերյալ Խ. Դադայանի կատարած ուսումնասիրությունը: Կատարված տնտեսագիտական մանրակրկիտ հաշվարկի համաձայն՝ Ադրբեջանի Հանրապետությունը՝ միայն 1918-2006 թթ. ընկած ժամանակահատվածի համար, որպես ֆինանսական փոխհատուցում, հայերին պետք է վճարի 102 մլն 674.461 անգլիական ֆունտ ստեռլինգ[2301]: Ընդսմին՝ նյութական այդ պատասխանատվության համար որպես իրավական հիմք է ծառայում Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովի կողմից 1991 թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված «Ադրբեջանի Հանրապետության պետական անկախությունը վերականգնելու մասին սահմանադրական ակտը»: Փաստաթղթի «Ընդհանուր դրույթներ» բաժնի երկրորդ հոդվածում պարզորոշ ասված է. «Ադրբեջանի Հանրապետությունը հանդիսանում է 1918 թ. մայիսի 28-ից մինչև 1920 թ. ապրիլի 28-ը գոյություն ունեցած Ադրբեջանի Հանրապետության ժառանգորդը»[2302]: Իրավական նշանակություն ունեցող այդ փաստաթղթով, ըստ էության, հիմնավորվում է 1918-1920 թթ. և ներկայիս Ադրբեջանի Հանրապետության ժառանգական կապը, պետականության իրավահաջորդ լինելու հանգամանքը, որը սկզբունքորեն իր հետ բերում է իրավաքաղաքական պարտավորություն:

Մի կարևոր հանգամանք ևս: Ներկայիս ադրբեջանական պաշտոնական շրջաններն ու նրանց հրահանգները կատարող պատմության կեղծարարները «մոռանում են» այն իրողությունը, որ Ադրբեջանի Հանրապետության կառավարության նախագահ Ուսուբբեկովը, Բաքվի Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ ոչ միայն չի ժխտել, այլև խոստովանել է որոշ փաստեր՝ հայերի 1918-1920 թթ. կոտորածների առնչությամբ: Այսպես՝ Մ. Հարությունյանի՝ Հայաստանի Հանրապետության արտգործնախարարին 1920 թ. ապրիլի 17-ին հղած զեկուցագրում ասվում է. «Ադրբէջանի թէ կառավարական և թէ հասարակական-քաղաքական ղեկավար շրջանների տրամադրութիւնը շատ ընկճուած է Ղարաբաղի, Գանձակի, Բադուի, Նուխու և Գեօքչայի շրջաններում թուրքերի ձեռքով կատարուած բարբարոսութիւնների

[2301] Տե՛ս Դադայան Խ., 1918 թ. Բաքվում հայերի կրած նյութական վնասի փոխհատուցման հարցի շուրջ, «21-րդ ԴԱՐ», Երևան, 2006, հոկտեմբեր, № 3, էջ 162:

[2302] Манасян А., Карабахский конфликт. Ракурсы правового подхода, Ереван, 1998, стр. 97.

պատճառով: Կառավարության գլուխ Ալեքսանդրեպոլի Բագուի Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչներին առանց ծածկելու ասել է, որ այդ դեպքերը (իմա՛ հայերի կոտորածները - Գ. Ս.) Ադրբեջանի պետական վարկին անուղղելի հարուած են հասցրել»[2303]*: Ինչպես տեսնում ենք, Ադրբեջանի կառավարող շրջանները, որքան էլ փորձել են թաքցնել թուրքերի հետ մուսավաթականների կատարած ոճրագործությունները, այդուհանդերձ, անհերքելի ապացույցների ճնշման տակ Ալեքսանդրովը ստիպված էր խոստովանել և բացեիբաց փաստել հայերի կոտորածների իրողությունը: Ալեքի ներկայիս Ադրբեջանի՝ 1918-1920 թթ. պետականության իրավահաջորդ լինելու հանգամանքը հայ ժողովրդի համար իրավաքաղաքական բավարար հիմք է ծառայում Ադրբեջանի Հանրապետությունից պահանջել՝ ադրբեջանահայության ցեղասպանության փաստի ճանաչումը և, հետևաբար, փոխհատուցումը նյութական ու բարոյական այն վնասի, որ նա կրել է:*

[2303] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, մաս 3, թ. 157:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԲԱՔՎԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1920-1990 ԹԹ.)

ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԶՐԿՄԱՆ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանի խորհրդայնացումը (1920 թ. ապրիլի 28) չկասեցրեց նախորդ իշխանությունների կողմից վարվող հայահալած քաղաքականությունը, այն չարունակվեց խորհրդային իշխանության 70-ամյա տևողության տարիներին:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատման հենց առաջին օրից հայերի նկատմամբ իրականացվող քաղաքականության հարցում թե՛ մուսավաթականների և թե՛ նրանց հաջորդած բոլշևիկ պարագլուխների ջանքերն ակնհայտորեն չաղկապված էին, գործնականերպը՝ հարմարեցված ժամանակի թելադրանքին: Թվում էր, թե խորհրդային կարգերի հաստատումով փոքր-ինչ կմեղմանար հայահալած քաղաքականությունն Ադրբեջանում, սակայն իրականում փոխվեց միայն հանրապետության անվանումը[2304]: Մուսավաթական Ադրբեջանի հայատյաց ծրագրերը փոխանցվեցին խորհրդային Ադրբեջանին, որին օժանդակում էր քեմալական Թուրքիան[2305]: Դեռևս մինչև խորհրդայնացումը, Ադրբեջանը 1920 թ. ապրիլի 20-ին գաղտնի պայմանագիր էր կնքել քեմալականների հետ[2306]: Միաժամանակ Բաքուն ստանձնել էր Մերձին Ասիայում և Իրանում կազմակերպվելիք քեմալական շարժման հենարանի դերը: Այդ է վկայում Մյունխենում 1920 թ. ամռանը հրավիրված մահմեդական համագումարի որոշումը, համաձայն որի՝ Բաքվի վրայով Իրան

[2304] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 597, թ. 55, տե՛ս նաև «Նոր աշխատաւոր», Թիֆլիս, 1920, սեպտեմբերի 23, № 136:

[2305] Բոլշևիկների և երիտթուրքերի կապերի, ապա՝ խորհրդա-քեմալական 1920-1922 թթ. հարաբերությունների մանրամասն քննությունը տե՛ս Ղազանջյան Ռ., Բոլշևիկները և երիտթուրքերը: Նոր փաստաթղթեր ռուս-թուրքական հարաբերությունների մասին (1920-1922 թթ.), Երևան, 1998:

[2306] Տե՛ս Տէր-Յակոբեան Յ., Հայաստանի վերջին աղետը (անտիպ փաստաթուղթեր, դիւանագիտական գրեր եւ բազմաթիւ պատկերներ), Կ.Պոլիս, 1921, էջ 6:

պետք է անցներ Ջևմալ փաշան՝ քեմալական չարժումը կազմակերպելու նպատակով[2307]: «Իթթիհատականները չեն հալածում,- գրում է այդ օրերին «Յառաջ» լրագիրը,- որովհետև դրանք սկզբունքով համամիտ են եղել և նույն իսկ գործակցել, որ Սովետական իշխանությունը Բագու մտնի, ու այնուհետև իրենց երազած ապագան կառուցի հէնց այդ զօրքերի ջանքերով՝ ի փառս թրքո իթթարական գաղիք ծաւալումների ամբողջ արևելքում...»[2308]: Քեմալականների և բոլշևիկների միջև Հայաստանի ու հայ ժողովրդի դեմ ստեղծված ռազմաքաղաքական դաշինքի առկայությամբ և Բաքվում թուրք սպանների անմիջական մասնակցությամբ Սիբիրից վերադարձող օսմանյան թուրք գերիներից կազմվեցին առանձին դնդեր[2309]: Այդ համագործակցության պայմաններում Ադրբեջանի հայ բնակչության նկատմամբ բռնություններն ու հալածանքներն ավելի սանձարձակ բնույթ կրեցին:

Բաքվում հայերի նկատմամբ վերստին սաստկացած հալածանքների պայմաններում պետականացվեցին կամ կողոպտվեցին հայապատկան ձեռնարկություններն ու հասարակական շինությունները: Ադրբեջանի Հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի կարգադրությամբ բռնագրավվեցին Բաքվի հայոց թեմի առաջնորդարանն ու կոնսիստորիայի ամբողջ գույքը և հանձնվեցին XI-րդ բանակի քաղաքական բաժնին[2310]: Հեղկոմի 1920 թ. մայիսի 24-ի դեկրետով նաև բռնագրավվեցին և պետականացվեցին ավելի քան 272 նավթարդյունաբերական մասնավոր ձեռնարկություններ, այդ թվում՝ նաև հայապատկան, և դրանց հիմքի վրա կազմավորվեց ադրբեջանական «Ազնեֆտ» պետական միավորումը: Նույն թվականի հունիսի 6-ի դեկրետով ազդայնացվեց Կասպյան առևտրական նավատորմը, այդ թվում՝ նաև հայ առևտրաարդյունաբերողներին պատկանող նավերն ու նավային ընկերությունները[2311]: Մեկ տարի անց՝ 1921 թ., «Ազնեֆտ» միավորմանը հանձնվեց Պողոս և Բաղդասար Սարգսյան եղբայրների ընտանիքներին պատկանող «Գրիգոր Արծրունի» չոգե-

---

2307 Տե՛ս «Ժողովուրդ», Թիֆլիս, 1920, հունիսի 10, № 92:
2308 «Յառաջ», Երեւան, 1920, հուլիսի 9, № 143:
2309 Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Վ. Մելիքյան, Մ. Սիրոյան, Ա. Վիրաբյան, պատ. խմբագիրներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Երևան, 2000, էջ 297:
2310 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 2053, թ. 12:
2311 Տե՛ս История Азербайджана, т. 3, ч. I, Баку, 1963, 241-242.

նավը[2312]: Պետականացվեց Ա. Փիլիպոսյանին պատկանող «Նորդ» անվամբ հյուրանոցային համալիրը[2313]: Կողոպուտի ենթարկվեց «Մարդասիրական ընկերության» գրադարանը, որի հարուստ գրաֆոնդը ցիրուցան արվեց Ադրբեջանի գանազան քաղաքներում և գյուղերում. «Գրաււած է Հայոց Մարդաս.[իրական] ընկերութեան գրադարանը, որ 50 տարւայ գոյութիւն ուներ և որ ամենահարուստն էր ամբողջ Բագու քաղաքում. նա բաժան-բաժան է արւած՝ ցրելու համար Ադրբէջանի գանագան քաղաքներն ու գիւղերը»,- գրում էր այդ օրերին «Յառաջը»[2314]: Խորհրդային կարգերի հաստատումից հետո մնացած մոտ 10000[2315] հայերեն գրաֆոնդի հիման վրա երկու տարի անց՝ 1923 թ. Բաքվում կազմավորվեց Վ. Լենինի անվան քաղաքային կենտրոնական գրադարանը[2316]: Բռնագրավվեցին նաև հայերին պատկանող ազգային բոլոր հիմնարկությունները՝ «Հայոց կուլտուրական միության» նոր շենքը, որը մինչ այդ մուսավաթական կառավարությունը հանձնել էր երկաթուղային վարչությանը, «Մարդասիրական ընկերության» հին շինությունը, ուր տեղավորված էին ազգային երկսեռ դպրոցները, Հայոց Ազգային խորհուրդը (շենքը հատկացվում է զինվորական ներկայացուցչությանը), «Մարդասիրական ընկերության» գրադարանը և հայոց թեմական առաջնորդարանը[2317]:

1920 թ. մայիսին վերջնականապես դադարեցվեց «Բաքվի հայոց մարդասիրական ընկերության» գործունեությունը: Ցաքուցրիվ եղան նաև տարիներ ի վեր ազգօգուտ գործունեություն կազմակերպող հայրենակցական միությունները, բռնագրավվեցին նրանց ամբողջ գույքն ու շինությունները: «Ըստ հաղորդուած աւոյգ տեղեկութեանց,- գրել է Ս. Մոցիկյանը,- Սօվիէթ Ատրպէճանը գրաւած և «ազգայնականացուցած» է Պաքուի հայոց նաւթահանքերը, գործարանները, առևտրական հաստատութիւնները, ճարտարուեստական հիմնարկութիւնները, հասարակական շէնքերը, և հայապատ-

---

[2312] Տե՛ս Обзор Бакинской нефтяной промышленности за два года национализации 1920-1922 (б. м. и г.), стр. 185, տե՛ս նաև Ստեփանյան Գ., Կասպից ծովի հայկական նավատորմի պատմությունից, էջ 11:
[2313] Տե՛ս Հովսեփյան Ա., նշվ. աշխ., էջ 52:
[2314] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 1920, հուլիսի 9, № 143:
[2315] Տե՛ս Народное образование в Азербайджане, стр. 81, 94.
[2316] Տե՛ս Աղաջանյան Գ., Բաց նամակ Բ. Վահաբզադեին և Ազարբայջանի մյուս տիտղոսավոր մյուալիմներին, «Գրական թերթ», Երևան, 1990, փետրվարի 2, № 6:
[2317] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 1920, հուլիսի 9, № 143:

կան բոլոր սեպհականութիւնները»[2318]: Անդրադառնալով Ադրբեջանի խորհրդային իշխանությունների՝ Բաքվի հայերի անհամար սեփականության ունեզրկմանը՝ Արտ. Աբեղյանն իրավամբ եզրակացրել է. «Ատրբէջան սեփականազրկելով իրենց սահմանների հայ բուրժուազիան, տէր են կանգնել հայկական հարստութիւնների եւ ուռճացել ի հաշիւ Հայաստանի հայութեան. բռնել նախկին բուրժուազիայի տեղը»[2319]: Հեղինակը երբեք իրավացի էր: Ընդամին՝ ներկայիս «Ադրբեջան» պետության ստեղծման հիմքում զգալի մաս է կազմում հայերի՝ դարեր ի վեր քրտնաջան աշխատանքով ստեղծված անբավ հարստությունը:

Բռնագրավումներից բացի՝ Ադրբեջանի նոր իշխանությունները Բաքվում սկսեցին ձերբակալել հայ հասարակական գործիչներին, հատկապես ՀՅԴ ներկայացուցիչներին: Ձերբակալվեց հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ, Բաքվի Հայոց Ազգային խորհրդի նախագահ Հ. Տեր-Միքայելյանը[2320]: Բախիովի բանտում ձերբակալվածների շարքում էին Ադրբեջանի պառլամենտի անդամներ Աբգար Պապյանը, Պողոս Զուբարյանը, Խորեն Համամեփյուռը, Արշակ Մալխասյանը, Մովսես Գրիգորյանը, Գրիգոր Պետրոսյանը, «Արտավազդ» նավթային ընկերության նախկին տնօրեն Մարգուլյանը, Հայ ժողովրդական կուսակցության անդամ եր. Թադիանոսյանը և ուրիշներ, որոնք բանտում ենթարկվում էին բռնություններ[2321]: Բանտարկյալների թվում էր նաև Թրակիո թեմի առաջնորդական տեղապահ Երվանդ եպս. Փերտահճյանը, որը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո վերադարձի ճանապարհին ձերբակալվել էր Թիֆլիսում և տարվել Բաքվի բանտ[2322]: «Հիչերն են արձակվում, մեծամասնությունը տնքում է բանտերում անտանելի պայմանների մեջ»[2323],- ասված է Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանի՝ Հայաստանի Հանրապետության արտգործնախարարին 1920 թ. հուլիսի

[2318] Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, էջ 295:

[2319] Աբեղեան Արտ., Հայ-Ատրբէջանեան յարաբերութիւնները (ազգային քաղաքական խնդիրներ), «Հայրենիք», Պօսթըն, 1929, Է տարի, սեպտեմբեր, № 8, էջ 114:

[2320] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 32, թ. 40:

[2321] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 1920, հուլիսի 1, № 137, տե՛ս նաև «Մշակ», Թիֆլիս, 1920, նոյեմբերի 28, № 146:

[2322] Տե՛ս Գիրք տառապելոց: 1920-1950-ական թվականների բռնությունների զոհ հայ հոգևորականներ, էջ 17:

[2323] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 475:

17-ին հյուծ զնկուցագրում: Գնդակահարվեցին Պապյանը, Գրիգորյանը, Պետրոսյանը և Զուբարյանը[2324]: Ապրիլի 30-ին ձերբակալվեց - և Բախլովի բանտ նետվեց նաև Մ. Հարությունյանը՝ ներկայացուցչության բոլոր անդամների հետ միա-սին, իսկ ներկայացուցչությունը ենթարկվեց կողոպուտի, դուրս տարվեցին 1919-20 թթ. դիվանադիտական փաստաթղթերը և գույքը[2325]: Մ. Հարությունյանին բանտից ազատեցին միայն օգոստոսի կեսերին, երբ պետք է սկսվեր Հայաստրբեջանական կոնֆերանսը[2326]:

Ադրբեջանում հայերի նկատմամբ իրականացվող բռնությունների, կամայականությունների և զանգվածային ջարդերի անմիջական պատասխանատուներին դատապարտելու հարցն այդ օրերին քանիցս բարձրացվել է Հայաստանի Հանրապետության կողմից, և այդ առթիվ վճռական բողոք է ուղարկվել Մոսկվա: Այդ է վկայում Հայաստանի Հանրապետության արտգործնախարարի 1920 թ. մայիսի 15-ի՝ Խորհրդային Ադրբեջանի կառավարությանը (պատճենը՝ Մոսկվա՝ Գ. Չիչերինին և Վ. Լենինին) ուղղված հուշագիրը. «Այդ հեղաշրջումը (նկատի է առնված խորհրդային կարգերի հաստատումը - Գ. Ս.) իբր թե փոխել է խանական ու մուսավաթական կառավարությունը հեղափոխական սոցիալիստական կառավարությամբ, բայց էապես ոչ մի փոփոխություն չէ մտցրել Ադրբեջանի պետական քաղաքական կյանքի մեջ... Դուք բոլորովին չեք հիշում նույնպես բոլորին հայտնի մասսայական այն գազանություններ մասին, որ տեղի ունեցան Նուխիի, Արեշի, Գանձակի, Շամախու, Ղարաբաղի, Գողթանի խաղաղ հայ ազգաբնակչության նկատմամբ: Հայ աղջիկներն ու կանայք դեռ այսօր, Ձեր կառավարության օրոք, չարունակում են տանջվել Ադրբեջանի մուսուլմանների հարեմներում, գերության մեջ: Հայ բազմաթիվ աշխատավոր գյուղացիությունը այսօր գտնվում է ստրկի դրության մեջ, գործածվելով որպես գրաստ Ձեր Հանրապետության տերիտորիայի վրա զանազան վայրերում»[2327]: Սակայն այս և համանման բոլոր բողոքները մնացին անհետևանք:

[2324] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 1920, հուլիսի 14, № 147, տե՛ս նաև «Ժողովուրդ», Թիֆլիս, 1920, սեպտեմբերի 25, № 161:
[2325] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 1920, հուլիսի 9, № 143:
[2326] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 446:
[2327] Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ. (փաստաթղթեր և նյութեր), ԲՀԱ, Երևան, 1993, № 1-2, էջ 210-211:

Զորակոչի պատրվակով հավաքագրում էին 18-40 տարեկաններին և ձերբակալում[2328]: Բանակ էին կանչվում անգամ 16 տարեկանները: Անօրեն կերպով բանակ էին զորակոչվում նաև ՀՀ հպատակները[2329]: Բռնություններ էին գործադրվում հայ բանվորների ու զինվորների նկատմամբ, որոնք գերի էին ընկել ռազմական գործողությունների ժամանակ[2330]: Հատկապես ձերբակալվում էին պաշնակցական գործիչները: Բանտարկյալներին բանտերից տեղափոխում էին Ջեկայի բաժանմունքներ և դնդակահարում:

1920 թ. մայիսի 21-ին, երբ Ղազախի կողմից բոլշևիկյան զորքերն առանց դիմադրության մտան Իջևան, ձերբակալվեցին և Բաքու տարվեցին Իջևանի գավառի ինքնավարության նախագահ Ներսես Ջաղեթյանը, ՀՀ ներքին գործոց նախարարի օգնական Սարգիս Մանասյանը, զորքերի հրամանատար Բաղդասարյանը և Իջևանի գավառային կոմիսար Մ. Սարատիկյանը[2331]: Բախլովի բանտից Ջեկա տեղափոխվեցին նաև Ս. Մանասյանը և Մ. Սարատիկյանը: ՀՀ իշխանությունների բողոքները ոչնչի չհանգեցրին. Ս. Մանասյանը, Ն. Ջաղեթյանը և մյուս պաշտոնյաները աքսորվեցին Բաքվի մերձակա Նարգեն կղզի, ուր և դնդակահարվեցին[2332]: 1920 թ. օգոստոսին Բախլովի բանտ բերված արցախահայերից 15 հոգու հանձնեցին «հեղափոխական դատարանին», այնուհետև՝ «ռազմադաշտային դատարանին»[2333]:

Ադրբեջանում հայահալած քաղաքականությանը նպաստեց Բաքվում 1920 թ. սեպտեմբերի սկզբներին Կոմինտերնի նախաձեռնությամբ հրավիրված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը: Համագումարի օրերին Բաքվում էին դտնվում հայերի 1918 թ. սեպտեմբերյան կոտորածների կազմակերպիչներ Խալիլ և Էնվեր փաշաները[2334]: Սեպտեմբերի 4-ին համագումարի 4-րդ նիստում ընթերցվեց Էնվերի հայտարարությունը, որտեղ ասվում էր. «Մենք գտնում

2328 «Աշխատաւոր», Թիֆլիս, 1920, օգոստոսի 20, № 117:
2329 Տե՛ս Ղուլյան Յու., Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից, էջ 199:
2330 Տե՛ս նույն տեղում, էջ 197:
2331 Տե՛ս Վրացեան Մ., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 399:
2332 Տե՛ս Ռոստոմ, Մահուան 60-ամեակի առթիւ, էջ 363, տե՛ս նաև Ղուլյան Յու., Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից, էջ 190:
2333 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 31, թ. 70:
2334 Տե՛ս Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը հայկոռս յարաբերութիւններուն լոյսին տակ, Երեւան, 1991, էջ 240:

ենք, որ Ադրբեջանը պատկանում է ադրբեջանցիներին»[2335]*: Սա, ինքնին, նշանակում էր Արևելյան Այսրկովկասի տեղաբնիկ ժողովուրդների (հայեր, թաթեր, թալիշներ, ուդիներ, լեզգիներ և այլն) ֆիզիկական ոչնչացում, էթնիկական գոտում և ուծացում:*

Ղեկավարվելով վերոնշյալ ննջգամիտ սկզբունքով՝ Ադրբեջանի իշխանությունները չարունակեցին հայահալած քաղաքականությունը: Զանգվածային բնույթ կրեցին հայերի տների խուզարկությունները՝ թանկարժեք իրեր հայտնաբերելու և բռնագրավելու համար: «Արծաթի և թանկարժէք իրերի գոյութեան մասին հայ տարրը Ադրբէջանում վաղուց մոռացել է»[2336]*,- գրում է «Յառաջը»: Սանձարձակ կողոպուտով հայ բնակչությունից խլվում էին վերջին կահկարասին, հագուստը, սնունդը և ապրուստի այլ միջոցները: «Հայերի տներում անվերջ խուզարկութիւններ են կատարում... 1918 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին տաճկա-ադրբէջանեան զօրքի ու ամբոխի կողմից կատարած թալանի մնացածը այժմ լրացնում է «սոցիալիստական սովետական, կարմիր Ադրբէջանը»: Այս սանձարձակ թալանին հայը չգիտէ որին երանի տայ՝ Մուսաւաթին, Իթթիհատին, Կոմունիատին, թէ տաճիկ ասկեարին»*[2337]*,- գրում է «Աշխատաւորը»:*

Ադրբեջանի իշխանությունները միտումնավոր ձգձգում էին Անդրկասպյան երկրից և Հյուսիսային Կովկասից վերադարձած ու գավառներ անցնելու մտադրությամբ Բաքվում կուտակված Գյոքչայի և Շամախիի հայ գաղթականների համար, ձգտելով այդ ընթացքում հնարավորինս մեծ թվով կովկասյան թաթարների վերաբնակեցնել դատարկված հայկական գյուղերում: Դեռևս 1919 թ. մարտի 21-ին Տ. Բեկզադյանի՝ Հայաստանի արտգործնախարարությանն ուղղված նամակում այդ մասին ասվում էր. «Գավառում մնացած ժողովրդի կյանքի և գույքի ապահովության ոչ մի երաշխիք չկա, մինչդեռ քաղաքումս խմբված գաղթականներն էլ չարունակ դիմումներ են անում մեր ազգային հաստատություններին՝ խնդրելով միջոցներ ձեռք առնել օր առաջ իրանց բնակավայրերը տեղափոխելու, որպեսզի հնարավորություն ունենան գարնանային գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվելու և առաջիկա տարվա համար անհրաժեշտ կենսամթերքների նախապատրաստություններ տեսնելու»[2338]*: Ադրբեջանի ղեկավարությունն ամեն կերպ արգելք-*

[2335] Первый съезд народов Востока 1-8 сентября 1920 г. Стенографические отчеты, Петроград, 1920, стр. 109.

[2336] «Յառաջ», Երեւան, 1920, հուլիսի 9, № 143:

[2337] «Աշխատաւոր», Թիֆլիս, 1920, օգոստոսի 20, № 117:

[2338] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 263-264:

ներ էր հարուցում և չարունակաբար արհեստական խոչընդոտներ ստեղծում գավառներից արտագաղթած հայ բնակչության վերադարձի և իրենց նախկին բնակավայրերում բնակություն հաստատելու համար: Ինչպես ասված է Մ. Հարությունյանի՝ Հայաստանի Հանրապետության արտգործնախարարին 1920 թ. սեպտեմբերի 2-ին հղած զեկուցագրում. «1918 թ. աշնանը՝ Բագուն անգլիացիների կողմից գրավվելուց հետո, գաղթականությունը զանազան չրջաններից սկսեց վերադառնալ Բագու՝ հայրենիք անցնելու դիտավորությամբ: Ի թիվս այլոց՝ վերադառնում էին նաև Գյոքչայի ու Շամախիի գավառների վախստական հայերը, բայց հայրենիք անցնելու միտքը «մուսավաթական» կառավարության գործակալների ճնշման հետևանքով լի դերև ելավ: Նոցա մեծամասնությունը հարկադրված էր իր գոյությունը մի կերպ քարշ տալ Բագվում»[2339]:

Ադրբեջանի իշխանություններն արհեստական արգելքներ ստեղծեցին նաև Գյոքչայի և Շամախիի գավառների հայ բնակչության՝ Հայաստանի Հանրապետություն ներգաղթելու գործում: Գավառների հայ բնակչության՝ Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու խնդրի առնչությամբ Մ. Հարությունյանը 1920 թ. օգոստոսի 28-ին հանդիպեց Ադրբեջանի ժողկոմխորհի նախագահ Ն. Նարիմանովի և արտաքին գործերի ժողկոմ Միրզա-Դավութ Հուսեյնովի հետ: Վերջինս կտրականապես մերժեց Ադրբեջանից գյոքչահայերի և չամախահայերի՝ Հայաստանի Հանրապետություն գաղթելու առաջարկը, «ինտերնացիոնալիզմի» կեղծ դիմակով ջանալով հավաստիացնել, թե իբր «դորանով խանգարվում է ազգերի և ժողովուրդների եղբայրացման գաղափարն իրագործելը: Գյուղերում խառն բնակություն հաստատելու նպատակն է հաշտեցնել թուրք և հայ ժողովուրդին բարիդրացիական համագործակցության ու համակենցաղի իրագործման հետ»[2340]: Այն անհեթեթ միտքը, թե իբր Ադրբեջանում հայերի համար ստեղծվելու էին կյանքի բարվոք պայմաններ, բացահայտ կեղծիք էր: Շինծու այս պատճառաբանությամբ Ադրբեջանի նորելուկ իշխանությունը կանխամտածված ծրագրով նպատակ էր հետապնդում հայ բնակչությանը ստրկացված պայմաններում աշխատեցնելու, թալանելու ու ոչնչացնելու: Այդ առիթով Մ. Հարությունյանը գրում էր, որ Գյոքչայի և Շամախիի հայ գյուղացիությունը «...ենթակա էր տիրող իշխանության ու չրջապատող թրքության կողմից հարատեւ բռնությունների ու չահատակության-

---

[2339] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 417, թ. 208:
[2340] Նույն տեղում:

ների»[2341]: Դժվար չէ պատկերացնել նաև, թե ինչ էր նշանակում իշխանությունների հետապնդած «համագործակցություն ու համակենցաղ» ասածը: Դա առաջին հերթին արտահայտվեց հայաբնակ գյուղերում արդեն սովորական դարձած հրկիզումներով, կողոպուտներով, կանանց առևանգումներով և այլն:

Չնայած այն բանին, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բողոքների հիման վրա թուլյատրվել էր գաղթականների տեղափոխումը և այդ նպատակով վերջիններիս «Ռուսաստանի հատուկ բաժնի» և «Արտակարգ հանձնաժողովի» կողմից տրվել էին երթևեկելու անցագրեր, Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունն այս անգամ ևս հնարովի պատրվակներով ձգձգում էր նրանց տեղափոխումը[2342]:

Տարաբախտ այս մարդիկ ադրբեջանական հրոսակների կողմից ենթարկվում էին ամենօրյա կողոպուտի: Բաքվում կուտակված գաղթականների տեղափոխման խնդրով Մ. Հարությունյանը 1920 թ. սեպտեմբերի 18-ին խնդրագիր է հղում Հուսեյնովին: Գրության մեջ Մ. Հարությունյանը նկարագրում է Բաքվում կուտակված հայ գաղթականների սոսկալի դրու-թյունը և խնդրում Հուսեյնովի միջնորդությունը՝ նրանց տեղափոխումը արագ կազմակերպելու համար[2343]: Ջընդառաջելով Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության պահանջներին և խնդրանքներին՝ Ադրբեջանի իշխանությունները գաղթականների տեղափոխումը ձգձգում են անորոշ ժամանակով: Այդ առիթով Մ. Հարությունյանը Հ. Օհանջանյանին 1920 թ. հոկտեմբերի 18-ին հասցեագրված նամակում գրում է. «Բազմաթիվ են այն հարցերը, որոնք թունավորում են մեր դիւտակցությունը, իսկ ամենից ցավոտը գաղթականության հարցն է: Երեք ամիս տանջելուց, ֆիզիքապես և տնտեսապես խեղճերին քայքայելուց հետո, վերջապես իրավունք տվին գնալու: Այսօր թուլյտվության վերջին օրն է և հանկարծ հրաժարվում են վագոն տալ և ժամանակամիջոցը երկարաձգել, պատճառաբանելով, որ Հայաստանի դորքերը անցել են սով. [ետական] Ադրբեջանի սահմանը: Թե որտեղի՞ց, ի՞նչ զորք, ոչինչ չգիտենք, բայց և այնպես վատն այն է, որ հազարավոր գաղթականությունը էլի մնաց փողոցներում,

---

[2341] Նույն տեղում:
[2342] Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 486:
[2343] Տե՛ս նույն տեղում:

երերուն...»[2344]*: Զրկվելով իրենց հարազատ վայրերը վերադառնալու հնարավորությունից՝ նրանցից շատերը կրկին վերադարձան Աստրախան և Հյուսիսային Կովկաս: «Այստեղ (իմա՛ Բաքվում – Գ. Ս.) գալիս են բազմաթիվ հայեր Անդրկասպեան երկրից և Հյուսիսային Կովկասից Հայաստան գնալու համար: Բայց այնպիսի տանջանքներ, հալածանքներ և թալանի են ենթարկւում բազում, որ անիծում են այն ժամանակը, երբ թողել են Աստրախանը և իրենց ոտով եկել այստեղ կատրւելու, իրենց գերեզմանը տեսնելու»*[2345]*,- հայտնում է «Աշխատաւորը»:*

Ադրբեջանի իշխանութիւններն արգելքներ ստեղծեցին նաև Հայաստանի տարբեր շրջաններից աշխատանքի բերումով Բաքվում գտնվող հայ բնակչութեան վերադառնալու խնդրում: Վերջիններս այդ օրերին միայն մի ցանկութիւն ունեին. «...մի կերպ հեռանալ այս դժոխքից»[2346]*: Հատկապես արգելքներ էին ստեղծվում զանգեզուրցի, արցախցի և նախիջևանցի հայերի վերադարձի կապակցութեամբ: Նպատակ ունենալով Խորհրդային Հայաստանից զավթելու Արցախը, Զանգեզուրն ու Շարուր-Նախիջևանը՝ Խորհրդային Ադրբեջանի իշխանութիւնները ցինիկաբար հայտարարում էին, թե իբր «Ղարաբաղը, Զանգեզուրը, Շարուր-Նախիջևանը Ադրբէջան է, հետևապէս ձեր Հայաստանցի լինելը հնարովի է»*[2347]*: Այս հանգամանքը ևս նպաստեց, որ Ա.Դ.Հ-ի անկումից հետո 1920 թ. դեկտեմբերի 1-ին Ազգերի լիգան մերժի նրա՝ լիգա մտնելու դիմումը՝ այն հիմնավորումով, որ ինքնահռչակ Ադրբեջանի Հանրապետութիւնը չունի կայուն կառավարութիւն, վարում է ծավալապաշտական քաղաքականութիւն՝ առանց էթնիկական, պատմական և քաղաքական հիմքերի, մեղադրվում է ծովից ծով՝ Բաքվից մինչև Բաթում, տարածքային պահանջներ ներկայացնելու մեջ*[2348]*: Ազգերի լիգան իր որոշումը հիմնավորեց հետևյալ պատճառներով.*

[2344] Նույն տեղում, էջ 487:

[2345] «Աշխատաւոր», Թիֆլիս, 1920, օգոստոսի 20, № 117:

[2346] «Աշխատաւոր», Թիֆլիս, 1920, օգոստոսի 20, № 117:

[2347] Նույն տեղում:

[2348] Տե՛ս Մանասյան Ա., Ղարաբաղյան հակամարտությունը պատմության, իրավունքի և քաղաքականության տեսանկյունից, «Պայքար», Երևան, 1998, № 1, էջ 52, տե՛ս նաև նույնի՝ Հայ-թուրքական հարաբերությունները ղարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում, Հայոց Սեծ եղեռն 90, հոդվածների ժողովածու, էջ 221, տե՛ս նաև նույնի՝ Карабахский конфликт. Ракурсы правого подхода, Ереван, 1998, стр. 54.

ա) դժվար է հստակ որոշել այն տարածքը, որի վրա ծավալվում էր Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կառավարության ինքնիշխանությունը,

բ) հարևան պետությունների հետ սահմանային վիճերի պատճառով հնարավոր չէ ճշգրիտ որոշել Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության ստկա սահմանները[2349]*:*

Ազգերի լիգայի 1920 թ. դեկտեմբերի 16-ի ընդհանուր ժողովում Ջ. Նանսենի ելույթում ասվում էր. «Ադրբէջանի վերաբերմամբ պոյուքիւն ունին մի քանի վէճեր սահմանների մասին...»[2350]*:*

Բաքվում հայ բնակչության նկատմամբ իրագործվող բազմաբնույթ բռնությունների շրջանում Խորհրդային կառավարության հետ «եղբայրության և բարեկամության» պայմանագիր կնքելու նպատակով Անկարայից Մոսկվա մեկնելու ճանապարհին 1921 թ. հունվարի 29-ին Բաքու ժամանեց Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի պատվիրակությունը՝ Յուսուֆ Քեմալ բեյի նախագահությամբ[2351]*: Բոլշևիկա-քեմալական մերձեցման գործընթացն, անշուշտ, ավելի սանձարձակ էր դարձնում Բաքվի ադրբեջանական իշխանություններին, որոնք օգտվելով իրենց համար նպաստավոր վիճակից, սառնասիրտ ցինիզմով հետզհետե սաստկացնում էին հայերի նկատմամբ հալածանքները:*

Բաքվում, Անդրկասպյան երկրի տարբեր քաղաքներում ու գյուղական վայրերում ցրված սակավաթիվ գաղթականներին երկարատև տառապանքներ պատճառելուց հետո ադրբեջանական իշխանությունները 1923 թ. կեսերին միայն թուլլատրեցին կրկին վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը[2352]*: Գաղթականների մի հատված հեռացավ Վրաստան՝ Թիֆլիս, որտեղից վրացական իշխանությունները նրանց հարկադրեցին հեռանալ Հյուսիսային Կովկաս և Հայաստան*[2353]*:*

[2349] Տե՛ս Hovhannisyan N., The Karabakh Problem. The Thorny Road to Freedom and Independence. National Academy of Sciences of Armenia, Institute of Oriental Studies, Yerevan, 2004, p. 28-29.

[2350] Նոր պետութիւնները եւ Ազգերի Լիգան, «Մշակ», Թիֆլիս, 1921, փետրվարի 3, № 24: Ի դեպ, նույն նիստում Ազգերի լիգայի ընդհանուր ժողովը 14 դեմ և 10 կողմ ձայների հարաբերակցությամբ մերժեց իր կազմում ընդունել նաև Վրաստանին:

[2351] Տե՛ս «Կոմունիստ», Բագու, 1921, փետրվարի 1, № 23:

[2352] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2631, p. 2:

[2353] Տե՛ս Աբեղյան Պ., Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջաններում (1 հունվարի 1914 թ. - 1 հունվարի 1930 թ.), Երևան, 1930, էջ 58:

* * *

1921 թ. մարդահամարի տվյալներով Բաքվի (ներառյալ արդյունագործական-գործարանային շրջանները) բնակչության թիվը կազմում էր 255.556 մարդ, որից հայեր՝ 38746 (2612-ը՝ արդյունագործական-գործարանային շրջաններում)՝ կազմելով ընդհանուր բնակչության 15,2%-ը: Հայ բնակչությունն իր թվով երրորդն էր թյուրքերից՝ 79985 (31,3%) և ռուսներից՝ 72197 (28,3%) հետո: Նրանց հաջորդել են պարսիկները՝ 37557 (14,7%), հրեաները՝ 12814 (5%), գերմանացիները՝ 2425 (1%), վրացիները՝ 1853 (0,7%), լեզգիները՝ 714 (0,3%) և այլոք[2354]*: Բաքվի և Թուրքեստանի հայոց թեմի առաջնորդ Մաթևոս արքեպ. Մաթևոսյանի՝ 1922 թ. դեկտեմբերին կազմած ցուցակագրության համաձայն՝ Բաքվում (առանց Բալախանի և մյուս արվարձանների) հայ բնակչության թիվը կազմում էր 40000*[2355]*: Հարկ է նշել, որ հայ բնակչության թվաքը հիմնականում պայմանավորված էր Անդրկասպյան երկրում, Հյուսիսային Կովկասում և Իրանում ապաստանած Բաքվի հայ գաղթականների վերադարձով:*

1923 թ. փետրվարի առաջին կեսին անցկացված քաղաքային մարդահամարի տվյալների համաձայն՝ Բաքվի (ներառյալ արդյունագործական-գործարանային շրջանները) բնակչության թիվը 336.981 (172.058 ար., 164.923 իգ.) էր, որից հայեր՝ 59332 (30618 ար., 28714 իգ.)՝ կազմելով ընդհանուր բնակչության 17,6%-ը: Հայ բնակչությունն իր թվով երրորդն էր ռուսներից՝ 106.420 (50134 ար., 56286 իգ.)՝ 31,6%, և թյուրքերից՝ 92555 (48573 ար., 43982 իգ.)՝ 27,5% հետո: Նրանց հաջորդել են պարսիկները՝ 37113 (11%), հրեաները՝ 17940 (5,3%), գերմանացիները՝ 4370 (1,3%), վրացիները՝ 2018 (0,6%) լեհերը՝ 1816 (0,5%), լեզգիները՝ 1699 (0,5%) և այլոք[2356]*: Նշենք, որ քաղաքային մարդահամարում հայերի վերաբերյալ նշված թիվը էականորեն տարբերվում է Բաքվի և Թուրքեստանի հայոց թեմի առաջնորդ Մաթևոս արքեպ. Մաթևոսյանի վկայաբերած տվյալից: Թեմակալը նշում է, որ 1923 թ. Բաքվում (ներառյալ արդյունաբերական-գործարանային շրջանները) հայերի թիվը 63000 էր*[2357]*: 1924 թ. ապրիլի 30-ին Ա(բ)Կ Բաքվի XIII կուսկոնֆերանսի 10-րդ նիստում ԱԽՍՀ-ի արհմիությունների խորհրդի*

[2354] Տե՛ս Закавказье. Советские республики. Статистико-экономической сборник, стр. 152-153.

[2355] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 512, թ. 1-2:

[2356] Տե՛ս Население г. Баку и промыслово-заводского района по переписи 1923 г., «Экономический вестник С.С.Р. Армении», Эриван, 1924, июл, № 2 (8), стр. 137-138. Հմմ. ԲՍԷ, т. 4, Москва, 1930, стр. 435.

[2357] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2634, թ. 1:

նախագահ և աշխատանքի ժողկոմ Լևոն Միրզոյանին, իր նյութում անդրադառնալով Բաքվի ժողովրդագրական պատկերին. նշել է. «Եթե վերցնելու լինենք Բագուն, նրա ազգաբնակութիւնը բազմազան է և այդ ազգաբնակութեան 31-32 տոկոսը կազմում են թուրքերը. Բագվի պրոլետարիատի թուրքական մասը կազմում է 10 տոկոս, իսկ մնացած մասը այլ ազգերից»[2358]:

ԱԽՍՀ ստեղծումից հետո, իրականացնելով Արևելյան Այսրկովկասի տեղաբնիկ ժողովուրդների (հայեր, ուդիներ, լեզգիներ, թաթեր, թալիշներ և այլն) ուծացման ճանապարհով «ադրբեջանցի անվամբ մեկ միասնական ազգ» ստեղծելու ուղեգիծ, Ադրբեջանի իշխանությունները՝ պետական մակարդակով որդեգրեցին ճնշման և անլուր հալածանքների քաղաքականություն: Ալ. Մյասնիկյանը, 1923 թ. անդրադառնալով Անդրկովկասի երեք հանրապետություններում ազգային հարցի անարդար լուծման հետևանքով առաջացած խնդիրներին, իրավացիորեն դրել է. «Անդրկովկասի երեք հանրապետությունների կամ Անդրկովկասի երեք խոշոր ժողովուրդների (թուրքեր, վրացիներ և հայեր) միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունները դիտելու ժամանակ՝ աչքի է զարնում ազգային այնպիսի հաշտություն, որը թերակատար է: Թվում էր, թե խորհրդային իշխանության գոյությամբ՝ կայացավ այդ հաշտությունն իր ողջ ծավալով: Սակայն այդպես չէ: Հասկանալի է, խորհրդային իշխանությունը հանդիսանում է իրական առհավատչյա՝ միջազգային հաշտություն հաստատելու համար, սակայն բանից դուրս է գալիս, որ հին ցարական ազգայնական կարգերի մնացորդները դեռ բավական զորեղ են... Վրացական շովինիզմը (Վրաստանում) ուղղված ընդդեմ հայերի, օսերի, աջարացիների և արխազների, Ադրբեջանի շովինիզմը (Ադրբեջանում) ուղղված ընդդեմ հայերի (ընդգծումը մերն է – Գ. Ս.)...»[2359]:

Ադրբեջանում պետական մակարդակով որդեգրած հայահալած քաղաքականությունը սկզբից ևեթ դրսևորվեց կրթության ոլորտում: Բանակումբներում բացակայում էին հայերեն թերթերը: «Ռամանու Սարատովեցի անվան բանակումբում,- գրում է «Կոմունիստ» օրաթերթի թղթակից Զ. Աստվածատրյանը,- հայերեն լրագիր չկա: Ընթերցարանն ամեն օր 30 լրագիր է ստանում՝ ռուսերեն և թուրքերեն, իսկ հայերեն մի օրինակ, այն էլ ընթերցարանում չի երևում»[2360]: *Նավթահանքերում, ուր կային Վ. Լենինի անվան անկյուններ, նույնպես բացակայում էին հայերեն թերթերն ու գրքե-*

[2358] «Կոմունիստ», Բագու, 1924, մայիսի 4, № 94:

[2359] Ալեքսանդր Մյասնիկյան, Երկեր, հ. 5, Երևան, 2007, էջ 433-434:

[2360] Տե՛ս Աստվածատրյան Զ., Կուլտուրական գործերից, «Կոմունիստ», Բագու, 1925, հուլիսի 27, № 156:

րը[2361]*: Այդտեղ, ի տարբերություն ռուսերեն և թուրքերեն պատի թերթերի, լույս չէր տեսնում հայերեն պատի թերթ. «Չնայած, որ հայ բանվորների թիվը բավական չատ է, բայց հայերեն պատի թերթ չունենք»*[2362]*: Հայկական դպրոցներն ավարտած աշակերտներին հիմնականում չէին ընդունում կամ, ծայրահեղ դեպքերում, դժվարությամբ էին տեղ տալիս Ադրբեջանի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հայոց լեզուն, գրականությունը և պատմությունն արգելված էին դպրոցներում, ընդհուպ՝ Ադրբեջանի համալսարանում: Խնդրի առնչությամբ իր վրդովմունքն է հայտնում Բաքվում լույս տեսնող «Կոմունիստ» օրաթերթի թղթակից Արամ Գնունին: «Հայկական կուլտուրան Ադրբէջանում» վերտառությամբ հոդվածում նա գրում է. «Համալսարանի լեզվաբանական մասում անցնում են չատ լեզուներ, պատմական մասում՝ չատ մանր ու մեծ ազգութիւնների պատմութիւններ, բայց այստեղ տեղ չեն գտնում ոչ հայերէն լեզուն ու գրականութիւնը և ոչ էլ հայոց կուլտուրայի պատմութիւնը: Մեր պատմական անցեալն իր կուլտուրայով այնքան էլ փոքր ու աննշան չէ, որ չարժենա նրա հետ ծանօթացնել մեր հայ ուսանողներին յունարէնի կամ սէրբիական ու բուլղարական պատմութեան կողքին: Մինչդեռ մեր կուլտուրան մեզ համար չատ թանկ արժէ, մանաւանդ, որ հայերէն լեզւի, գրականութեան և պատմութեան աւանդումը համալսարանում հնարաւորութիւն կտա համալսարան աւարտող հայ ուսանողներին հայ լինել ոչ միայն անունով, այլ հայ աշխատաւորութեան մէջ գործելու կուլտուրական հնարաւորութեամբ»*[2363]*:*

Շարունակվող հայահալած քաղաքականության պայմաններում, երբ 1923 թ. նոյեմբերին Ադրբեջանի սահմաններում դադարեցվեց ՀՅԴ կուսակցության գործունեությունը[2364]*, Բաքվում կուսակցության անդամների նկատմամբ չարունակվեցին իրականացվել զանգվածային ձերբակալություններ:*

Հայ բնակչության նկատմամբ հալածանքները չչրջանցեցին Բաքվի հայ ազգային-կրոնական կյանքը տնօրինող Բաքվի և Թուրքեստանի հայոց թեմին, որը Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո թևակոխել էր նոր շրջափուլ՝ ապագայի ծանր պայմաններով: Թեմի առաջնորդ Մաթևոս արքեպ. Մաթևոսյանը լարված հարաբերությունների մեջ էր գտնվում Ադրբեջանի իշխա-

---

2361 Տե՛ս Էլբրուս, Քաղվածքներ բանվորական նամակներից, «Կոմունիստ», Բագու, 1925, հուլիսի 27, № 156:

2362 Տե՛ս Թորգոմ [Թորգոմ Ծատուրյան], Կուլտուրական գործերից, «Կոմունիստ», Բագու, 1925, նոյեմբերի 20, № 264:

2363 Տե՛ս Գնունի Ա. [Ռուբեն Տեր-Գասպարյան], Հայկական կուլտուրան Ադրբէջանում, «Կոմունիստ», Բագու, 1921, հոկտեմբերի 2, № 243:

2364 Տե՛ս ՀՅ Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատ. խմբագիր և կազմող՝ պրոֆ. Ղազախեցյան Վ., Երևան, 1999, էջ 120-121:

նուիրյուններին հետ: Վերջիններս տարբեր պատրվակներով արհեստական խոչընդոտներ էին ստեղծում թեմակալ առաջնորդի համար: Ադրբեջանի բարձրագույն իշխանությունների թողտվությամբ Բաքվի քաղաքային միլիցիան 1924 թ. փետրվարի 14-ին թեմակալին բռնի հեռացնում է Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն հարակից առաջնորդարանի շենքից՝ փողոց չպրտելով դրասենյակի իրերն ու արխիվը: Դեպքի առնչությամբ 1924 թ. մարտի 17-ին Հայոց կաթողիկոս Գևորգ Սուրենյանցը Ադրբեջանի ԽՍՀ ժողկոմխորհին ուղղված դիմումով բողոքում է Մաթևոս արքեպ. Մաթևոսյանի նկատմամբ կատարված բռնության և առաջնորդարանի գրավման դեմ. «Այժմ ես՝ որպես ընտրյալ Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց և պետ Հայաստանյայց եկեղեցու, դիմելով Ադրբ. [ջանական] Սոց.[իալիստական] Հանր.[ապետության] Սովնարկոմին, հավատացած եմ, որ Սովնարկոմը, որը հարգում է խղճի կատարյալ ազատությունը և բնականաբար, հավասար է վերաբերվում պետի բոլոր կրոնների ներկայացուցիչներն ու առաջնորդները, չի թույլ տա բռնությամբ խախտել հայ ժողովրդական եկեղեցու կանոնը և անպատված ու անուշադիր թողնել հայոց թեմակալ առաջնորդին, այլ կկարգադրի, որ իմ ներկայացուցիչ առաջնորդ Մատթեոս եպիսկոպոսը բնակություն ունենա, որպես մինչ այժմ, Ս. Լուսավորիչ եկեղեցու առաջնորդարանում...»[2365]: Սակայն Բաքխորհրդը, առաջնորդարանը թեմին վերադարձնելու փոխարեն, այն զարձնում է տպարան[2366]: 1925 թ. փակվեց նաև Շամախի քաղաքի Սբ. Աստվածածին եկեղեցին. «...տեղի քահանա Վարդգես Գրիգորյանին, գավառից վտարելու սպառնալիքի ներքո, արգելվեց ծիսակատարություններ անցկացումը»[2367]:

* * *

Ադրբեջանում մուսավաթական կառավարության ժամանակաշրջանում և դրան հաջորդած խորհրդային իշխանության հաստատումից հետո զանգվածային բռնագրավումների հետևանքով Բաքվի լիովին ունեզրկված հայությունը ԱԽՍՀ-ում իրականացվող ազգային խտրականության պայմաններում հայկական կյանքը վերականգնելու և կենսունակ դարձնելու համար ստիպված էր մեծ ջանքեր գործադրել:

[2365] Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), կազմեց՝ Քեհրուդյան Ս., Երևան, 1994, էջ 52:

[2366] Տե՛ս Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938-1955 թթ.), գիրք Զ, Գէորգ Զ Չորէքչեան Կաթողիկոս Ամենայն Հայոց, կազմեց՝ Քեհրուդյան Ս., Երևան, 1999, էջ 369:

[2367] Ստեփանյանց Ս., Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնատիրության օրոք, Երևան, 1994, էջ 42:

Աստիճանաբար վերակազմավորվում էր հայ մշակութային կյանքը: Այսպես՝ չուշեցի դերասան Հ. Զարաֆյանի ջանքերով 1920 թ. հունիսից սկսում է գործել Բաքվի հայկական թատրոնը (ռեժիսորներ՝ Ժաման Գրիգորյան, Լևոն Քալանթարյան), որտեղ բեմադրվել են հայ դասական ու ժամանակակից, ինչպես նաև ռուսական, համաշխարհային դրամատուրգիայի լավագույն գործերը[2368]: Բեմադրություններում հանդես են եկել Ժաման՝նը, Հ. Աբելյանը, Վ. Փափազյանը, Ա. Արմենյանը, Լ. Քալանթարյանը, Մ. Սաղյանը, Լ. և Ա. Երամյանները, Ի. Հարությունյանը և ուրիշներ:

Հայ մտավորականները քայլեր ձեռնարկեցին նաև Բաքվի հայ կրթական կյանքը վերականգնելու ուղղությամբ: Հայկական դպրոցների գործունեության վերականգնման գործում մեծ աշխատանքներ է կատարում Բախլ-Բիբի-Հնյրաթի շրջանի հայկական դպրոցում 1920-ական թվականներին դասավանդող արցախցի ճանաչված մանկավարժ Արշավիր Տեր-Իսրայելյանը[2369]:

Բաքվի հայ կրթամշակութային կյանքը վերականգնելու նպատակով «Կոմունիստ» օրաթերթի թղթակից Արամ Գնունին «Հայկական կուլտուրան Ադրբէջանում» վերտառությամբ հոդվածում բարձրացնում էր քաղաքում հայկական ակումբ ունենալու անհրաժեշտության հարցը. «Անհրաժեշտ է ունենալ հայկական ակումբ կամ բարձր կուլտուրական հիմնարկութիւն, որը հնարաւորութիւններ կստեղծի մեր կուլտուրան մշակելու համար»[2370]: Այդ նպատակով մի խումբ հայ մտավորականների նախաձեռնությամբ 1925 թ. մարտի վերջերին հիմնադրվում է «Հայարտուն» (Հայ արվեստի տուն) գրական-մշակութային կազմակերպությունը՝ գրական, նկարչական, երաժշտական և թատերական մասնաճյուղերով: «Հայարտունն» ուներ 20 կետից բաղկացած կանոնադրություն[2371]: Աշխատանքները գլխավորել է վարչությունից կազմված խորհուրդը[2372]: Սեփական շենք չունենալու պատճառով «Հայարտունն» իր աշխատանքները կազմակերպում էր «Կոմունիստ» օրաթերթի խմբագրությունում[2373]: Իր գործունեությամբ «Հայարտունը» հաչվետու էր Ադրբեջանի Լուսժողկոմատին: Նկատենք, որ «Հայարտունը»

[2368] Տե՛ս Հարությունյան Ս., Հայ նորագույն թատրոնն Ադրբեջանում (1920-1970), Երևան, 1972, էջ 13, 21, 48:

[2369] Տե՛ս «Կոմունիստ», Բաքու, 1928, փետրվարի 16, № 39:

[2370] Տե՛ս Գնունի Ա. [Ռուբեն Տեր-Գասպարյան], Հայկական կուլտուրան Ադրբէջանում, «Կոմունիստ», Բագու, 1921, հոկտեմբերի 2, № 243:

[2371] Տե՛ս Սուրեն Ե., Հայարտուն, «Կոմունիստ», Բագու, 1925, փետրվարի 27, № 46, տե՛ս նաև մարտի 26, № 66:

[2372] Տե՛ս Դիտող [Կարո Առաքելյան], Հայարտուն, «Կոմունիստ», Բագու, 1925, նոյեմբերի 18, № 262:

[2373] Տե՛ս նույն տեղում:

Բաքվի և ընդհանրապես Հանրապետության կրթամշակութային կյանքի աշխուժացման գործում ունեցել է գլխավոր նշանակություն: Կարճ ժամանակում այն կարողացել է իր շուրջ համախմբել հայ մտավորականությանը՝ գրականության և մշակութային գործիչներին: «Հայարտան» գրական կյանքում են աճել բանաստեղծներ Թ. Հուրյանը (Խաչատրյան)[2374] Ա. Գրաչին (Գրիգորյան), Հ. Սահյանը, Ս. Այվազյանը, Ս. Գրիգորյանը, Ա. Սենալը, Վ. Աբրահամյանը, արձակագիրներ Գ. Բհսը (Սարինյան), Գ. Սևունցը (Գրիգորյան), Մ. Դավթյանը, դրամատուրգներ Ա. Դարբնին (Մնացականյան), Ա. Բարանդյանը, Լ. Աղյանը և ուրիշներ[2375]: Նրանց ստեղծագործությունները լույս էին տեսնում «Գրական Ադրբեջան» գրական-գեղարվեստական երկամյա հանդեսում, որն իր գոյության ընթացքում (1957-1989 թթ.), չնայած Ադրբեջանի կուսակցական վերադաս մարմինների աչալուրջ հսկողությանը և գրաքննությանը, կարողացել է հայ գրողների գրական երկերը հասցնել ընթերցողներին[2376]: «Հայարտան» գրական կյանքին մեծապես նպաստել է «Կոմունիստ» օրաթերթի խմբագրությունում աշխատելու նպատակով 1927 թ. աշնանը մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի Բաքու գալը և կարճ ժամանակով այդտեղ բնակվելը[2377]: «Գրական Ադրբեջանն» այդ առիթով գրում է. «Մեծ բանաստեղծը (իմա՛ Ե. Չարենցը – Գ. Ս.) Բաքվում ապրող երիտասարդ ստեղծագործողների երկերը կարդում, մշակում և խորհուրդներ էր տալիս, երբեմն նվիրում նրանց իր լուսանկարները՝ մակագրություններով: Այդպիսի մի լուսանկար նա նվիրել է Թաթուլ Հուրյանին, որին, ի դեպ, նա բոլորից շատ էր սիրում: Շուտ-շուտ հավաքելով Բաքվի հայ գրողներին, նա նրանց հետ զրույցներ էր անցկացնում»[2378]:

Բաքվի այդ տարիների երաժշտական կյանքի առաջամարտիկն էր կոմպոզիտոր Ա. Մայիլյանը, որն Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Թիֆլիսից 1920 թ. ապրիլի վերջերին տեղափոխվել էր Բաքու: ԱԽՍՀ-ում երաժշտական կյանքը կանոնավոր հիմքերի վրա դնելու նպատակով, Բաքվի Լուսժողկոմատի

[2374] Տե՛ս Նաճումյան Թ., Թաթուլ Հուրյան, «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Երևան, 1951, № 1, էջ 47-57:

[2375] Տե՛ս Գրական տեղեկատու: Հայաստանի սովետական գրողների մի ութ յան անդամներ. 1934-1974, կազմեց Հ. Խաչատրյանը, Երևան, 1975, էջ 123, 126, 148, 173, 628, տե՛ս նաև Խաչատրյան Հ., Գրական տեղեկատու (1934-1986), Երևան, 1986, էջ 21, 23, 102, 128, 141, 500-501, 507-508:

[2376] Տե՛ս Գրիգորյան Ա., Էջեր Ադրբեջանի սովետահայ գրականության պատմությունից: 30-ական թվականներ, «Գրական Ադրբեջան», Բաքու, 1968, նոյեմբեր-դեկտեմբեր, № 6, էջ 89-98:

[2377] Տե՛ս «Գրական Ադրբեջան», Բաքու, 1957, հուլիս-օգոստոս, № 4, էջ 119:

[2378] Տե՛ս «Գրական Ադրբեջան», Բաքու, 1967, հուլիս-օգոստոս, № 4, էջ 9:

առաջարկությամբ Ա. Մայիլյանը ստեղծում և ղեկավարում է առաջին արևելյան թատերա-երաժշտական ստուդիան, որը հետագայում վերածվում է ուսումնարանի: Զուգահեռաբար նա ստանձնում է նաև Բաքվի «Արևելյան կոնսերվատորիայի» վարիչի պաշտոնը: Այստեղ նա կազմակերպում է Ադրբեջանի կանանց առաջին երգչախումբն ու ժողովրդական գործիքների առաջին նվագախումբը: Ա. Մայիլյանը սկիզբ է դրել նաև Ադրբեջանի երաժշտական հրատարակությանը: Նրա ձայնագրմամբ ու դաշնամուրային նվագակցությամբ 1923 թ. լույս է տեսել ադրբեջանական նոտային առաջին հրատարակությունը՝ «Սանդըք» ժողովրդական երգը: 1927 թ. լույս է տեսնում նախադպրոցականների համար գրված երգերի ժողովածուն, որը համարվում է ադրբեջանական իրականության մեջ մանկական երգերի առաջին ժողովածուն: Ա. Մայիլյանի ստեղծագործական գործունեությունը լայն թափով ծավալվել է «Հայարտուն» երաժշտական բաժնի ղեկավարի աշխատանքները ստանձնելուց հետո: Որպես խմբավար, լինելով Ք. Կարա-Մուրզայի գործի արժանավայել շարունակողը, նա երգչախմբից բացի կազմակերպում է նաև երաժշտական ստուդիա-դպրոց, որը կրում է Ա. Սպենդիարյանի անունը[2379]: Ստուդիան ուներ դաշնամուրի, ջութակի, վոկալի և սոլֆեջիոյի դասարաններ[2380]: Ստանձնելով ռադիոյի հայկական բաժանմունքի երաժշտական խմբագրության պատասխանատու խմբագրի պաշտոնը՝ Ա. Մայիլյանը կազմակերպում է երգչախումբ, որի միջոցով Բաքվի հայ բնակչությանը լսելի է դարձնում հայ երգարվեստը: Այսպիսով՝ Ա. Մայիլյանը մինչև կյանքի վերջին օրերը (մահացել է 1942 թ. ապրիլի 22-ին) երաժշտական գործունեությամբ շարունակում է Բաքվի հայ հասարակության՝ XIX դարի կեսերի և XX դարի սկզբների երաժշտական մշակութային լավագույն ավանդույթները:

Բաքվի երաժշտական կյանքի առաջընթացի գործում զգալի ներդրում ունի հայտնի երգահան, երաժշտագետ Անուշավան Տեր-Ղևոնդյանը, որը 1934-1938 թթ. եղել է Ադրբեջանի կոնսերվատորիայի տնօրենը[2381]: Օպերայի և բալետի թատրոնի նշանավոր մենասրգչուհիներ էին Քնար Գրիգորյանը (Բաքվի ռադիոյի մենասրգիչ, վոկալի ուսուցիչ) և Տաթևիկ Սազանդարյանը (մեցցո-սոպրանո,

---

[2379] Տե՛ս Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 37-44:

[2380] Տե՛ս Դիտող [Կարո Առաքելյան], Հայարտուն, «Կոմունիստ», Բագու, 1925, նոյեմբերի 18, № 262:

[2381] Տե՛ս Азербайджанская государственная консерватория. 1921-1971, Баку, 1972, стр. 61.

1956 թ. ԽՍՀՄ ժողովրդական արտիստ)[2382]: 1940-1950-ական թվականներից ընդհուպ մինչև 1976 թվականը օպերետային երաժշտության բնագավառում բեղմնավոր գործունեություն է ծավալել նաև Ալեքսանդր Սարգսյան-Ալեգրովը[2383], որն իրավամբ համարվում է Բաքվի օպերետային թատրոնի հիմնադիրներից[2384]: Ադրբեջանի ժողովրդական գործիքների համույթի հիմնադիրն ու երկարամյա դեկավարն է եղել բժիշկ և կոմպոզիտոր Հ. Հովհաննիսյանը[2385]:

«Հայաստան» նկարչության բաժնում էին գործում ճանաչված նկարիչ-մանկավարժներ Հովհաննես Հովհաննիսյանը, Վարդան Տեր-Պողոսյանը, Էաչի Պուճյանը (Պերճ Պուճյանի որդին), Բաքվի ռուսական թատրոնի նկարիչ ու ռեժիսոր Մուշեղ Սաղյանը, Արսեն Հովհաննիսյանը, Ա. Մովսիսյանը, Ի. Խաչատրյանը և այլոք: Թատերական նկարիչ էր Արսեն Հովհաննիսյանը, որը ստեղծագործական աշխատանքին զուգընթաց չուրջ կես դար նկարչություն է դասավանդել Բաքվի գեղարվեստական ուսումնարանում[2386]: Բավական է նշել, որ Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության 1937 թ. մարտին հաստատված դինանշանի հեղինակը նկարիչ-գրաֆիկ Ռուբեն Շխյանն է[2387]: Բաքվում 1958 թ. տեղադրվում է հայազգի քանդակագործ Սերգեյ Մերկուրովի «26 կոմիսարների գնդակահարությունը» 12 մ երկարությամբ և 4 մ բարձրությամբ բարձրաքանդակը:

Հատկանշական է, որ ադրբեջանական կինեմատոգրաֆի կազմավորման ակունքներում կանգնած են հայ կինոբեմադրիչները: Դրանում մեծ դերակատարություն է ունեցել Համո Բեկնազարյանը, որը Բաքվի կինոստուդիայում, որպես կինոռեժիսոր, նկարահանել է «Տունը հրաբխի վրա» (1928 թ., «Հայկինո»-ի հետ), «Սևիլ»(1929 թ.) համր և «Սաբուհի» (1941 թ.) հնչյունային կինոնկարները[2388]:

[2382] Տե՛ս **Арустамян Б.**, նշվ. աշխ., стр. 55: Տաթևիկ Սազանդարյանը դուստրն է ծնունդով Զանգեզուրի գավառի Խնձորեսկ գյուղից, կրթամշակութային, հասարակական-քաղաքական գործիչ Տիգրան Սազանդարյանի: 1920 թ. Տ. Սազանդարյանի ընտանիքը հաստատվել է Բաքվում (տե՛ս **Սիմոնյան Կ., Հարությունյան Վ.**, Տաթևիկ Սազանդարյան, Երևան, 1959):

[2383] Էստրադային հանրահայտ երգչուհի, Ռուսաստանի վաստակավոր արտիստուհի Իրինա Ալեգրովայի հայրը:

[2384] Տե՛ս **Арустамян Б.**, նշվ. աշխ., стр. 55.

[2385] Տե՛ս **Շահինյան Ա.**, Ուրվագծեր անդրկովկասյան ժողովուրդների կուլտուրական համագործակցության պատմության, Երևան, 1963, էջ 230:

[2386] Տե՛ս «Գրական Ադրբեջան», Բաքու, 1957, հունվար-փետրվար, № 1, էջ 127:

[2387] Տե՛ս **Поцелуев В.**, Гербы Союза ССР, Москва, 1987, стр. 110.

[2388] Տե՛ս **Համո Բեկ-Նազարյան**, Հուշեր դերասանի և կինոռեժիսորի, Երևան, 1968, էջ 318-319:

Բաքվի հայ մշակութային կյանքին սատար կանգնելու նպատակով Խորհրդային Հայաստանի դերասաններն ու երաժիշտները այցելություններ էին կազմակերպում Բաքու: Օրինակ՝ 1930 թ. մայիսի 15-ին Բաքվում հայ հանդիսատեսի առջև ներկայացումներով («Պեպո», «Խաթաբալա», «Դատավճիռ», «Հրե կամուրջ») հանդես է եկել Երևանի պետական թատրոնը[2389], 1963 թ. մայիսին՝ ՀԽՍՀ պետական ֆիլհարմոնիայի տնօրեն Գ. Ասատրյանի ղեկավարությամբ համերգներով հանդես են եկել ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարյանը, ՀԽՍՀ ժողովրդական արտիստներ Նար Հովհաննիսյանը, Արթուր Այդինյանը, Ավագ Պետրոսյանը, Լուսիկ Քոչյանը, էստրադային նվագախումբը՝ Կ. Օրբելյանի ղեկավարությամբ և հայկական երգի ու պարի անսամբլը[2390]: 1964 թ. նոյեմբերին Ստ. Շահումյանի անվան մշակութային տանը հանդես է եկել Լենինականի (այժմ՝ Գյումրի) Օ. Սևումյանի անվան երկաթուղայինների մշակույթի տան երգի ու պարի ինքնագործ խումբը և այլն[2391]:

Բաքվում գործող հայկական թատրոնի հետագա ստեղծագործական ընթացքին դրական լիցքեր են հաղորդել ՀԽՍՀ-ում գործող թատերական կոլեկտիվների այցերը Բաքու: 1954 թ. հուլիսին ներկայացումներ տալու նպատակով Բաքու է ժամանել Երևանի Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնը, 1963 թ. մայիսի կեսերին՝ Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) Հովհ. Աբելյանի անվան կոլեկտիվը և այլն[2392]:

Խորհրդային իշխանության հաստատման առաջին տարիներին ԱԽՍՀ-ում թյուրք-թաթար համապատասխան մասնագետների պակասի հետևանքով, չնայած իրականացվող խորական քաղաքականության, իշխանություններն այդուհանդերձ ստիպված էին պատասխանատու պաշտոնների վերցնել ի թիվս այլոց նաև հայ մասնագետների: Օրինակ՝ 1926 թ. ֆինանսների ժողկոմի «վալյուտային բաժնի» վարիչն էր Յունուս Միրզաբեկյանը[2393]: Զգալի էր հատկապես հայ մասնագետների դերը արդյունաբերության գլխավոր ճյուղի՝ նավթարդյունաբերության վերականգման ու զարգացման գոր-

---

[2389] Տե՛ս «Նոր ուղի», Երևան, 1930, № 4-5, էջ 186:
[2390] Տե՛ս «Գրական Ադրբեջան», Բաքու, 1963, մայիս-հունիս, № 3, էջ 92:
[2391] Տե՛ս «Գրական Ադրբեջան», Բաքու, 1964, նոյեմբեր-դեկտեմբեր, № 6, էջ 96:
[2392] Տե՛ս «Գրական Ադրբեջան», Բաքու, 1963, մայիս-հունիս, № 3, էջ 92:
[2393] Տե՛ս Адресный справочник по Закавказью, под редакцией **С. И. Кр-ва.**, Тифлис, 1926, стр. 207.

ծում: 1920-ական թվականների սկզբներին «Ազնեֆտ»-ի առևտրի բաժնի նախագահն էր Արտաշես Արթարյանը[2394], իսկ «Ազնեֆտ»-ի մեջ մտնող «Պերսազնեֆտ» բաժնետիրական ընկերության տնօրենն էր Ստ. Թաղիանոսյանը[2395]: 1926 թ. Ադրբեջանի պետական բաժնետիրական ընկերության (վարկային բյուրո) կառավարիչն էր Ի. Եղիազարյանը, որի տեղակալն էր Վ. Գյուրջյանը[2396]: «Наука» տնտեսագործնական աշխատանքային արտելի նախագահն էր Խաջյանցը[2397]: Սակայն այդ իրավիճակը խաթարվեց, երբ հայ բնակչության նկատմամբ Ադրբեջանի իշխանություններն անսքող կերպով խորացրեցին ազգային խտրական քաղաքականությունը:

* * *

Բաքվի հայերի 1920-ական թվականների կեսերի ազգային-լեզվական գործընթացների վերաբերյալ մեծ հետաքրքրություն են ներկայացնում 1926 թ. դեկտեմբերի 17-ի համամիութենական մարդահամարի նյութերը: Համաձայն դրանց՝ 453.333 (233.873 ար., 219.460 իգ.) բնակչությունից բուն քաղաքում և արդյունագործնական-գործարանային շրջաններում հայերն իրենց թվով երրորդն էին ռուսներից և թյուրքերից հետո: Ռուսները կազմում էին 159.491 (76171 ար., 83320 իգ.)՝ 35%, թյուրքերը՝ 118.737 (63563 ար., 55174 իգ.)՝ 26,1%, հայերը՝ 76656 (39904 ար., 36752 իգ.)՝ 17%[2398]: Նկատենք, որ մարդահամարից առաջ քաղաքի հայ համայնքը համալրվել էր Լենինականում 1926 թ. հոկտեմբերի 22-ին տեղի ունեցած երկրաշարժի պատճառով Բաքվում հաստատված որոշ թվով հայերով[2399]:

Բաքու քաղաքում (առանց արդյունագործնական-գործարանային շրջանների) բնակչության թիվը կազմում էր 347.390 (169.721 ար., 177.669 իգ.) մարդ., որից հայերը՝ 69544 (33671 ար., 35873 իգ.), այսինքն՝ ամբողջ բնակչության 20%-ը: Քաղաքում հայ բնակչությունը տեղաբաշխված էր 10 շրջաններում, որոնցից առավել հոծ

2394 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 404, թ. 3:

2395 Տե՛ս Адресный справочник по Закавказью, стр. 214.

2396 Տե՛ս նույն տեղում, стр. 224.

2397 Տե՛ս նույն տեղում, стр. 227.

2398 Տե՛ս Итоги всесоюзной переписи населения 1926 года по г. Баку и Промысло-Заводскому району, т. I, ч. II, таблица IV, стр. 50.

2399 Տե՛ս Կորկոտյան Զ., Ճերմակ ջարդից դեպի կարմիր շինարարություն, Երևան, 1929, էջ 49:

բնակեցված էին 7-րդը՝ 13199 (6650 ար., 6549 իգ.), 8-րդը՝ 24584 (12436 ար., 12148 իգ.) և 9-րդը՝ 13247 (6966 ար., 6281 իգ.) մարդ[2400]*: Վարչական տեսակետից 10-րդ շրջանի ավաններից էր Հայոց-քիշլին, որն ուներ 538 (310 ար., 228 իգ.) հայ բնակիչ*[2401]*: Արդյունագործական-գործարանային շրջաններում հայ բնակչությունը կազմում էր 7112 մարդ*[2402]*: 1926 թ. մարդահամարում արտացոլված է նաև Բաքու քաղաքում բնակվող օտարահպատակ հայ բնակչության թիվը, որը կազմում էր 2107 մարդ*[2403]*:*

1926 թ. մարդահամարի նյութերը որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև Բաքվում և արդյունագործական-գործարանային շրջաններում հայ բնակչության մեջ ընթացած ազգային-լեզվական դործընթացների տեսանկյունից: Մարդահամարի նյութերի մոտավոր հաշվումներով՝ Բաքվի հայերի 30-40%-ը մայրենի լեզվին զուգահեռ տիրապետում էր նաև ռուսերենին, ինչն առաջին հերթին կապված էր ադրբեջանական իշխանությունների կողմից Բաքվում հայոց լեզվի օգտագործման ոլորտների որոշակի կրճատման հետ[2404]*: Դրանով է պայմանավորված այն հանդամանքը, որ մարդահամարի ժամանակ լեզվական փոխակերպման ենթարկված հայերը գրեթե ամբողջությամբ, որպես մայրենի լեզու, նշել են ռուսերենը՝ 3806 (2029 ար., 1777 իգ.)՝ 5%*[2405]*: Աննշան է եղել թյուրքերենը մայրենի լեզու համարող հայերի թիվը՝ 37 մարդ (7 ար., 30 իգ.)՝ 0,008%*[2406]*: Գրագետ էր Բաքվի հայության 40408-ը (24445 ար., 15963 իգ.)՝ 52,7%*[2407]*: Այսինքն՝ Բաքվում հայերը կազմում էին քաղաքի մտավորականության և բարձրորակ բանվորների որոշակի մասը:*

[2400] Տե՛ս Итоги всесоюзной переписи населения 1926 года по г. Баку и Промысло-Заводскому району, т. I, ч. II, таблица IV, стр. 51-54.
[2401] Տե՛ս նույն տեղում, таблица IV, стр. 54.
[2402] Տե՛ս նույն տեղում, таблица IV, стр. 54, 58.
[2403] Տե՛ս Ալեքսանյան Հ., Հայ ազգաբնակչության տեղաբաշխումն Ադրբեջանական և Վրացական ԽՍՀ-ներում (1920-30-ական թվականներ), ՊԲՀ, Երևան, 2006, № 2, էջ 98:
[2404] Մանրամասն տե՛ս Գալստյան Հ., Էթնոժողովրդագրական և էթնոլեզվական պրոցեսները Ադրբեջանի հայության մեջ ըստ ՍՍՀՄ մարդահամարի նյութերի (հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ), էջ 183-194, տե՛ս նաև նույնի՝ Հայերի տեղաբաշխումն Անդրկովկասում ըստ ՍՍՀՄ 1926 թ. մարդահամարի նյութերի, ԲՀԱ, Երևան, 1986, № 2, էջ 86-94:
[2405] Տե՛ս Итоги всесоюзной переписи населения 1926 года по г. Баку и Промысло-Заводскому району, т. I, ч. II, стр. 50.
[2406] Տե՛ս նույն տեղում:
[2407] Տե՛ս նույն տեղում, стр. 51.

Քանի որ պետաիրավական առումով Խորհրդային Ադրբեջանը հիմնված էր որպես ոչ ազգային, այլ ինտերնացիոնալ հանրապետություն, այդ պատճառով մինչև 1933 թ. դեկտեմբերը Ա Կ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարները հիմնականում ռուսներ (Սերգեյ Կիրով, Նիկոլայ Գիկալո, Վլադիմիր Պոլոնսկի) և հայեր էին, թեև միևնույն ժամանակ իրագործվում էր կովկասյան թաթարներից պետական ու կուսակցական կադրեր պատրաստելու քաղաքականություն[2408]*:*

Հայ կուսակցական գործիչներից Ա Կ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնը 1925 թ. վերջերից մինչև 1929 թ. հոկտեմբերը զբաղեցրեց Լևոն Միրզոյանը, որը մինչ այդ՝ 1920-1925 թթ. եղել է ԱԽՍՀ-ի արհմիությունների խորհրդի նախագահը և աշխատանքի ժողկոմը[2409]*: Հարկ է ընդգծել այն, որ ԱԽՍՀ-ում իր կուսակցական գործունեության ընթացքում Լ. Միրզոյանը, կուրորեն հավատալով լենինյան ազգային քաղաքականությանը, չի ընդդիմացել Բաքվի կուսակցական և պետական իշխանության լծակներն իրենց ձեռքում կենտրոնացրած թուրք-թաթարների հակահայկական գործողություններին, որը քողարկվում էր ԽՄԿԿ Կենտկոմում մշակվող ժողովուրդների «բարեկամության և պրոլետարիական ինտերնացիոնալիզմի» մասին կեղծ լոզունգներով:*

ԱԽՍՀ-ում աստիճանաբար սաստկացող ազգային խտրական քաղաքականության պայմաններում, Բաքվում մեծ թափ ստացավ հայ և մյուս տեղաբնիկ ժողովուրդների (ուդիներ, թաթեր, թալիշներ, լեզգիներ, ավարներ և այլք) նկատմամբ իրականացվող ուծացման և հալածանքի քաղաքականությունը[2410]*: Ուծացման քաղաքականութ-*

[2408] Տե՛ս Մանասյան Ա., Ադրբեջանական Հանրապետության սահմանների լեգիտիմության խնդիրը, «Վէմ», Երևան, 2010, հոկտեմբեր-դեկտեմբեր, № 10, էջ 167-168:

[2409] Լ. Միրզոյանը 1929 թ. ընտրվել է Պերմի օկրուգային կոմիտեի, ապա՝ Ուրալի մարզկոմի քարտուղար, 1933 թ.՝ Ղազախական Երկրկոմի, իսկ 1937-1939 թթ.՝ Ղազախական ԽՍՀ Կոմկուսի ԿԿ առաջին քարտուղար: Զոհ է գնացել ստալինյան բռնություններին: Գնդակահարվել է 1939 թ. փետրվարի 26-ին: Լ. Միրզոյանի ճակատագիրը կիսեց նաև կինը՝ Ղազախստանի Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի 1933-1938 թթ. տնօրեն Յուլյա Թևոսյանը (ԽՍՀՄ Ծանր արդյունաբերության Ժողկոմ, հետագայում ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի նախագահի տեղակալ և Ճապոնիայում ԽՍՀՄ առաջին դեսպան Իվան Թևոսյանի քույրը): Արդարացվել են 1956 թ. (տե՛ս Настольный справочник все Закавказье на 1923 год, Тифлис, 1923, стр. 161, տե՛ս նաև **Ляхов В.**, Левон Исаевич Мирзоян, «Вопросы истории КПСС», Москва, 1965, № 1, стр. 101-104, տե՛ս նաև БСЭ, изд. 3, т. 16, Москва, 1974, стр. 313).

[2410] Տե՛ս Ոսկանյան Վ., Արևելյան Այսրկովկասի բնիկ ժողովուրդների դեմ ուղղված Ադրբեջանի ուծացման քաղաքականությունը: Պատմություն և մշակույթ. ընդդեմ

յունը հատկապես սաստկորեն իրականացվեց մահմեդականության դավանող տեղաբնիկ ժողովուրդներից թաթերի նկատմամբ: Այդ գործընթացը այնքան ակնհայտ էր դրսևորվում, որ Խորհրդային մեծ հանրագիտարանի հեղինակները 1929 թ. արձանագրում էին. «Ադրբեջանում բնակվող իրանցիների (թաթեր) մի զգալի մասն այնքան է թյուրքացվել, որ թյուրքերի տոկոսը փաստորեն կարելի է համարել 60%-ից ավելի»[2411]:

ԱԽՄՀ-ում իրականացվող ազգային խտրական քաղաքականությունը, չշրջանցեց նաև հայերին: Սկսեցին մշակվել հակահայկական նոր դավեր: Բաքվում հայկական մշակութային հետքը վերացնելու նպատակով դեռևս խորհրդային իշխանության հաստատման առաջին տարիներին բարբարոսաբար պղծվել և ավերվել էր հայկական հին գերեզմանատունը (փակվել էր 1870-ական թվականներին): Գերեզմանատան տեղում գցվել էր այգի[2412]: Հատկանշական է, որ իշխանությունների կողմից ավերվում էին այն հուշարձանները, որոնք իրենց գոյությամբ առավել ցայտուն էին մատնանշում հայերի հնաբնակությունը Բաքվում: Շարունակելով մշակութային եղեռնի քաղաքականությունը Բաքխորհուրդը Զեմբերիքենդ-Բաիլով ճանապարհի և Ս. Կիրովի անվան զբոսայգու հիմնման պատրվակով 1928 թ. հունիսին նպատակադրվեց ավերել նաև Верхне - Кладбищенская փողոցի վերջում գտնվող, մատուռի վերածված կիսավեր Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին և նրա շրջակայքում տարածվող հայկական երկրորդ գերեզմանատունը, որն ուներ ավելի քան 800 գերեզման[2413]: Այդտեղ էին թաղված նաև Բաքվում 1905 և 1918 թթ. հայկական կոտորածների զոհերը[2414]: Բաքվի հնաբնակ հայերից Բ. Առուստամյանը հայ տարեց բաքվեցիների վկայություննե-

---

կեղծիքի և ոտնձգության: Հանրապետական գիտաժողովի հիմնադրույթներ (4-6 մայիսի), էջ 49-50:

[2411] БСЭ, т. 1, Москва, 1929, стр. 641. Ի դեպ, 1926 թ. դեկտեմբերի 17-ի համամիութենական մարդահամարի նյութերում թաթերի թիվը Բաքվում և արդյունաբերական-գործարանային շրջաններում ցույց է տրված ընդամենը 2980 (1506 ար., 1474 իգ.) մարդ (տե՛ս Итоги всесоюзной переписи населения 1926 года по г. Баку и Промысло-Заводскому району, т. I, ч. II, стр. 50). Միևչդեռ արևելագետ Բ. Միլլերը, 1928 թ. շրջագայելով Ապշերոնյան թերակղզու թաթաբնակ Բալախան, Մաշթաղա, Սուրախան, Զիրա, Խոուսան, Ղալա և Թուրքյան բնակավայրերում, արձանագրում է, որ թաթերի իրական թիվը թերակղզում կազմում էր 30000 (տե՛ս **Миллер Б.**, նշվ. աշխ., стр. 5).

[2412] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 149, ց. 1, գ. 141, թ. 229, 232-233:

[2413] Տե՛ս նույն տեղում, թ. 229-230, 234:

[2414] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 330, թ. 4, տե՛ս նաև **Арустамян Б.**, նշվ. աշխ., стр. 56.

րի հիման վրա գրում է, որ հայերի կոտորածների տարելիցի օրը, քաղաքի ողջ հայ բնակչությունն այցելում էր գերեզմանատուն[2415]:

Գերեզմանատունն ու նկեղեցին չքանդելու խնդրով Բաքվի և Թուրքեստանի թեմական խորհրդի փոխնախագահ Եղիշե քհն. Թարխանյանի կողմից 1928 թ. հունիսի 13-ին հրավիրված թեմական ժողովում որոշվում է դիմում հղել Բաքխորհրդին, որպեսզի «առժամանակ յետաձգուի գերեզմանոցի և մատուռի քանդելը»[2416]: Սակայն «Կոմմունարխոզի» կողմից 1928 թ. հուլիսի 8-ին Բաքվի թեմական խորհրդին հղված գրությունում պահանջվում էր՝ մեկ շաբաթվա ընթացքում եկեղեցուց դուրս բերել գույքը՝ քանդվող մատուռի տեղում կանաչապատ տարածք ստեղծելու նպատակով[2417]: Եղիշե քհն. Թարխանյանը 1928 թ. հուլիսի 29-ին Բաքխորհրդին հղված դիմումում հայտնում էր, որ թեմական խորհուրդը ճիշտ չի համարում հայկական գերեզմանատան և հուշարձանների ոչնչացումը[2418]: Բաքխորհրդի նմանօրինակ որոշումը տեղիք տվեց քաղաքի հայության արդարացի զայրույթին: Եղիշե քհն. Թարխանյանի էջմիածնում գտնվող թեմի առաջնորդ Մաթևոս արքեպ. Մաթևոսյանին 1928 թ. օգոստոսի 7-ին հղած գրությունում ասվում էր. «Յուլիսի 15-ից մինչև այժմ ցուցակագրուել են 800 հանգիստներ: Ժողովուրդը՝ կին թէ տղամարդ՝ մեզ հանգիստ չեն տալիս, խնդրում, աղաչում են միջնորդութիւն յարուցանել հին հանգստարանը չքանդելու մասին»[2419]: Թևև Բաքվի և Թուրքեստանի հայոց թեմական խորհուրդը առաջնորդ Մաթևոս արքեպ. Մաթևոսյանի միջոցով Բաքխորհրդին 1928 թ. հոկտեմբերի 16-ին հղած դրությամբ խնդրեց հետաձգել հայկական հին գերեզմանատան քանդման ժամկետը[2420], այդուհանդերձ, 1930-ական թվականների սկզբներին իշխանությունները բարբարոսաբար ոչնչեցին և ավերեցին գերեզմանատունն ու այդեղ եղած հուշարձանները[2421]:

Հայկական գերեզմանատունն ավերելուց բացի, Բաքվի իշխանությունների հայատյաց հերթական քայլն ուղղվեց ազգային կյանքը տնօրինող Բաքվի և Թուրքեստանի հայոց թեմի դեմ: Թեև հակակրոնական այդ քաղաքականությունը կիրառվում էր Խորհրդային Միության մեջ, սակայն Ադրբեջանում այն ստանում էր նաև հակահայկական նրանգ: Հայ եկեղեցու նկատմամբ

[2415] Տե՛ս **Арустамян Б.**, նշվ. աշխ., стр. 56.
[2416] ՀԱԱ, ֆ. 149, ց. 1, գ. 141, թ. 229:
[2417] Տե՛ս նույն տեղում, թ. 232:
[2418] Տե՛ս նույն տեղում, թ. 233:
[2419] Տե՛ս նույն տեղում, թ. 234:
[2420] Տե՛ս նույն տեղում, թ. 240:
[2421] Տե՛ս **Арустамян Б.**, նշվ. աշխ., стр. 56.

սաստկացած հալածանքի քաղաքականության պայմաններում Բաքխորհուրդը որպես առաջին թիրախ ընտրեց Հայկավանի Սբ. Թարգմանչաց եկեղեցին: 1924 թ., «Կոմունիստ» օրաթերթի մի տվյալի համաձայն, եկեղեցին դեռևս կանգուն էր[2422]: 1929 թ. դեկտեմբերին «Բանվորական ակումբը» պահանջում է փակել եկեղեցին և հանձնել բանալիները[2423]: 1930 թ. հունվարի 3-ին «Կոմմունարխոզի» վարիչ Պիշկինը իր մոտ է հրավիրում թեմի առաջնորդ Մաթևոս արքեպ. Մաթևոսյանին և պահանջում իրեն հանձնել եկեղեցու բանալիները՝ խոստանալով չուտով վերադարձնել[2424]: Սակայն բանալիները ստանալուց հետո՝ հունվարի 5-ի գիշերը, ազրբեջանական խուժանը ներխուժում է եկեղեցի և կողոպտում այն[2425]: Դրանից հետո շենքը վերածվում է մշակութային հիմնարկի[2426]:

Իշխանությունների թողտվության պայմաններում «Անաստվածների միության» անդամների կողմից կողոպտվում և հալածվում էին հայ հոդևորականները, բռնագրավվում էր եկեղեցապատկան ունեցվածքը և այլն[2427]: Լկտիությունը հասավ այն աստիճանի, որ ծաղրուծանակի էին ենթարկվում նկեղեցում կատարվող պատարագները: Մամուլի միջոցով կոչ էր արվում չմասնակցել Հիսուս Քրիստոսի մկրտությունը խորհրդանշող Ջրօրհնեքի ծիսակատարությանը և այլն[2428]: Եկեղեցու դեմ իշխանությունների վերսկսած հալածանքի քաղաքականության պայմաններում 1920-ական թվականներից գործող եկեղեցիներ մնացին Սբ. Գրիգոր Լուսավորիչը և Սբ. Թադեոս ու Սբ. Բարդուղիմեոսը, թեև դրանք ազրբեջանական խուժանի կողմից պարբերաբար ենթարկվում էին կողոպտման[2429]:

Հայկական եկեղեցիների ճակատագրին արժանացան նաև ռուսական եկեղեցիները: Օրինակ՝ 1930 թ. հունվարի 22-ին փակվեց և կարճ ժամանակ անց ավերվեց Բաիլովում գտնվող Սբ. Ալեքսեյ Մետրոպոլիտ (կառուցված՝ 1871 թ.) եկեղեցին[2430]: Նրա տեղում կառուցվեց թիվ 22-րդ դպրոցը: Երբ այդ նույն ժամանակ ոչ միայն

[2422] Տե՛ս «Կոմունիստ», Բագու, 1924, մայիսի 25, № 111:
[2423] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 149, ց. 1, գ. 214, թ.1:
[2424] Տե՛ս նույն տեղում:
[2425] Տե՛ս նույն տեղում:
[2426] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2685, թ. 2:
[2427] Տե՛ս «Կոմունիստ», Բագու, 1930, հունվարի 26, № 20:
[2428] Տե՛ս «Կոմունիստ», Բագու, 1930, հունվարի 1, № 1:
[2429] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 149, ց. 1, գ. 141, թ. 199, 245:
[2430] Տե՛ս «Կոմունիստ», Բագու, 1930, հունվարի 26, № 20:

հին ավերվում, այլև քաղաքի տարբեր վայրերում վերաշինվում հին մզկիթները:

Կարճատև հղում նաև Սբ. Թադեոս և Սբ. Բարդուղիմեոս նկեղեցու կյանքը: Բաքվի կենտրոնի վերակառուցման պատրվակով ադրբեջանական իշխանությունները 1931-1939 թթ. վերափոխում են վնհաշուք նկեղեցին. հաջողությամբ օգտագործելով նրա ակուստիկ և այլ առանձնահատկությունները՝ ադրբեջանցի «ճարտարապետներ» Ս. Դադաշևի և Մ. Հուսեյինովի նախագծով այն վերակառուցվում է որպես կոնսերվատորիայի շենք[2431]: Ինչ վերաբերում է Սբ. Հովհաննես Մկրտիչ նկեղեցուն, ապա այն մինչև 1978 թ. կիսավեր վիճակում օգտագործվել է որպես փողոցային լուսամփոփների պահեստ[2432]: Այսպիսով՝ Բաքվում գործող հինգ նկեղեցիներից կանգուն մնացին Սբ. Գրիգոր Լուսավորիչը և քայքայված վիճակում՝ Սբ. Աստվածածինը:

Լևոն Միրզոյանից բացի Ա(բ)կ կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնը զբաղեցրեց նաև Ռուբեն Մկրտչյանը (Ռուբեն Ռուբենով, 1933 թ. փետրվար 7 - 1933 թ. դեկտեմբերի 10), որը Բաքվից հետ կանչվեց Համ(բ)կ կենտկոմի որոշումով[2433]: Նրան այդ պաշտոնում փոխարինեց հայատյաց գործիչ Միր Ջաֆար Բաղիրովը (1933 դեկտեմբեր-1953 ապրիլ)[2434], որը 1921 թ. «Ադրբեջան» հորջորջումով պետությանը բռնակցված Հայոց հինավուրց Նախիջևանում և Արցախում հայության նկատմամբ վարում էր ցեղասպան քաղաքականություն[2435]:

[2431] Տե՛ս Տիգրանյան Է., Ճարտարապետ Գաբրիել Տեր-Միքելյան, «Էջմիածին, 1971, Գ., էջ 53, տե՛ս նաև Մոսեեվա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջայոները (պաշտոնական փաստաթղթեր, ակնանատեսների վկայություններ և այլ նյութեր 1990 թ. հունվարի 13-19-ի ողբերգական իրադարձությունների վերաբերյալ՝ անհրաժեշտ մեկնաբանություններով), Երևան, 1992, էջ 55:

[2432] Տե՛ս **Арустамян Б.**, նշվ. աշխ., стр. 56.

[2433] Ռ. Մկրտչյանը զոհ է գնացել ստալինյան բռնություններին: Գնդակահարվել է 1937 թ. նոյեմբերի 27-ին Մոսկվայում: Արդարացվել է 1954 թ. նոյեմբերի 17-ին:

[2434] Տե՛ս http://ru.wikipedia.org/wiki/Список_премьер-министров_Азербайджана

[2435] Մ. Բաղիրովը մինչև այդ ժամանակ տարված էր «Մեծ Ադրբեջանի» ստեղծման հավակնություններով: Ստ. Զորյանն իր «Դեպքեր և դեմքեր» վերտառությամբ հուշերում գրում է. 1948 թ., երբ Հայաստանի գրողների միության ուր հոգուց բաղկացած պատվիրակությունը (Ստ. Զորյան, Գ. Սարյան, Հ. Սիրաս և այլք) Բաքվում մասնակցում էր «ադրբեջանականացված» XII-XIII դդ. պարսիկ բանաստեղծ Նիզամիի 800-ամյակին նվիրված հոբելյանին, միջոցառումից հետո Բաղիրովի կողմից կազմակերպված ճաշկերույթում վերջինս ցինիկաբար հայտարարել է. «Այս անգամ չհաջողվեց այդ երկրամասը (իմա՛ Իրանական Ադրբեջանը - Գ. Ս.) միացնել Ազերբայջանին, բայց երկար չի տևի՝ կմիացնենք, և Ազերբայջանը

Ադրբեջանի իշխանությունների կողմից պետական մակարդակով տարիներ շարունակ Արցախի տեղաբնիկ հայության նկատմամբ իրականացված սոցիալ-տնտեսական, քաղաքական և բարոյահոգեբանական ճնշումները հետապնդել են մեկ նպատակ՝ հայաթափման ճանապարհով վերջնականապես բռնազավթել Արցախը[2436]: Հայահալած քաղաքականության պայմաններում, մեծ թվով արցախահայերի հարկադրաբար դուրս էին մղում հայրենի բնօրրանից դեպի արդյունաբերական Բաքու ու նրան կից Սումգայիթ քաղաքներ: Այս առիթով Ն. Սարումյանն արձանագրել է. «Հայ բնակչության ժողովրդագրական պատկերի վրա էականորեն ազդեց նաև Ադրբեջանի կառավարության կողմից դեռևս 1930-ական թվականների սկզբներին մշակած ԼՂԻՄ-ի հայ երիտասարդության հայրենի օջախից արտաքսելու խորամանկ ու դիվային քաղաքականությունը: Եվ, ընդհանրապես, հայ բնակչության արտաքսումը հայրենի օջախից Ադրբեջանում նպատակադրված և մշտատև պետական քաղաքականության բնույթ է կրել, պարզապես դրա մեթոդները ժամանակ առ ժամանակ, կենտրոնական իշխանությունների քաղաքականությունից կախված, կերպարանափոխվում էին: Իրականում դրանք գյուղական երիտասարդության զանգվածային բռնի հավաքներ էին՝ Ադրբեջանի նավթահանքերում սևագործ բանվորական աշխատանքի և Բաքվի արվարձաններում ստեղծված, այսպես կոչված, ֆաբրիկա-գործարանային ուսուցման ճամբարներում աշխատանքի անցնելու համար»[2437]: «Սովետական Ղարաբաղ» թերթի հաղորդմամբ՝ 1933 թ. ԼՂԻՄ-ից 1300 բանվոր պետք է մեկներ աշխատելու «Ազնեֆտ»-ում, իսկ 100 երիտասարդներ էլ պետք է ուղարկվեին Բաքվի ֆաբգործուսումնարաններ[2438]: Բռնի հավաքագրումները չարունակվեցին մինչև 1960-ական թվականների սկիզբը: Այդ հավաքագրումների հետևանքով Բաքվի Հայկական թաղամասում ավելացավ հայերի թիվը: Միաժամանակ Բաքվի շուրջ առաջացան հայաբնակ հոծ բնակավայրեր, ինչպես՝ Խուտոր, Կիրով, Ռադին, Վորոնովկի և այլ տեղամասեր: Հոծ հայաբնակ էր դարձել հատկապես Սուրախանին, որը կոչվում էր նաև Երկրորդ Հայկավան[2439]:

1930-ական թվականների վերջերին անցկացված համամիութենական մարդահամարի տվյալները ցույց են տալիս, որ Բաքվի

կդառնա 7-8 միլիոն բնակչություն ունեցող երկիր»» (Զորյան Ստ., «Բաղիրովի ճաշը», «Գրական թերթ», Երևան, 1992, հոկտեմբերի 16, № 31):

[2436] Տե՛ս Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, Երևան, 1991, էջ 69:

[2437] Սարումյան Ն., Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը 1960-1988 թվականներին, Երևան, 2008, էջ 26:

[2438] «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1933, օգոստոսի 12, № 180:

[2439] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 111, թ. 179:

Հայ բնակչության թիվը գյուղական շրջաններից, հայության արտահոսքի պայմաններում, չարունակ աճել է: Հարկ է նշել, որ Բաքվի հայ բնակչությունը 1930-50-ական թվականներին հիմնականում համալրվել է արցախահայերով: 1939 թ. հունվարի 17-ի մարդահամարի տվյալների համաձայն՝ 795.236 բնակչությունից հայերն իրենց թվով երրորդն էին ռուսներից և ադրբեջանցիներից հետո: Ռուսները կազմում էին 343.558 (43,2%), ադրբեջանցիները՝ 235.762 (29,6%), հայերը՝ 118.703 (14,9%)[2440] մարդ: 1926 թ. մարդահամարի տվյալների համեմատ Բաքվի հայերի թիվն աճել էր 42047 մարդով:

Բաքվում հայ բնակչության թիվն ընդհանուր առմամբ նվազեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ ռազմաճակատ մեկնեցին հազարավոր հայեր: Նրանց զգալի մասը զոհվեց, իսկ շատերն էլ վերադարձան հերոսացած, մարտական շքանշաններով ու մեդալներով պարգևատրված: Բավական է նշել, որ ծնունդով Բաքվից Խորհրդային Միության 18 հերոսներից 7-ը հայեր էին[2441], 6-ը՝ ռուսներ, 4-ը՝ ադրբեջանցիներ և 1-ը՝ գերմանացի[2442]:

Պատերազմից հետո, երբ Հայոց կաթողիկոս Գևորգ Զ Զորեքչյան կաթողիկոսը ձեռնամուխ եղավ հայ եկեղեցու թեմերի վե-

---

[2440] Տե՛ս Всесоюзная перепись населения, 1939 г., стр. 71-72.

[2441] Այդ հերոսներն են գվարդիայի գնդապետ Գրիգոր Շահումի Գալստյանը (Կալուստով) (ծնվել է 1908 թ. Բաքվում, հայրը Բաքու էր տեղափոխվել Գորիսի շրջանի Քարահունջ գյուղից), լեյտենանտ Հրանտ Արսենի Ավագյանը (ծնվել է 1924 թ. Բաքվում, հայրը Շուշիի Քարինտակ գյուղից էր), ավագ լեյտենանտ Վլադիմիր Հակոբի Յավրումովը (ծնվել է 1922 թ. Բաքվում), գվարդիայի լեյտենանտ Վլադիմիր Աբրահամի Խոնիայանը (Հովհաննիսյան) (ծնվել է 1905 թ. Բաքվում), գվարդիայի ավագ Արսեն Տեր-Օհանյանը (Տեր-Օգանով) (ծնվել է 1923 թ. Բաքվում), Ռաֆայել Իվանի (Հովնան) Կապրելյանը (ծնվել է 1909 թ. Բաքվում շուշեցի հայտնի բժիշկ Հովնան Կապրելյանի ընտանիքում), ԽՍՀՄ վաստակավոր փորձարկող օդաչու Էդուարդ Վահանի Յոլյանը (ծնվել է Բաքվում 1926 թ., հայրը Գորիսից էր), որը թեև չէր մասնակցել հայրենական պատերազմին, սակայն աշխարհում առաջին գերձայնային մարդատար «Տու-144» ինքնաթիռի փորձարկման ժամանակ ցուցաբերած խիզախության համար 1971 թ. արժանացել է հերոսի կոչման (տե՛ս Գիրք հերոսների մասին, Երևան, 1964, էջ 53, 67, 94, 144, 209, 266, 274, 289, 353, 390, 434, տե՛ս նաև Հարությունյան Կ., Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին (1939-1945 թթ.), Երևան, 2001, տե՛ս նաև նույնի՝ Участие армянского народа в Великой Отечественной войне (1941-1945), Ереван, 2005.

[2442] Տե՛ս Герои Советского Союза — сыны Азербайджана, Баку, 1965. Ի դեպ, ազգությամբ գերմանացի հերոսը Բաքվի Սաբունչի արվարձանում 1895 թ. ծնված Խորհրդային Միության ականավոր հետախույզ Ռիխարդ Զորգեն էր, որի հայրը՝ Ադոլֆ Զորգեն, Սաբունչիում ուներ նավթարդյունաբերական ձեռնարկություն (տե՛ս **Колесникова М., Колесников М.**, Рихард Зорге, Москва, 1971, стр. 12).

բակազմավորման և վերաբացման աշխատանքներին, 1945 թ. վերաբացվեց Ադրբեջանի Հայոց թեմը[2443]*: Նույն թվականից բացվում է նաև թեմի առաջնորդանիստ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին*[2444]*: Եկեղեցու վերաբացման օրվանից, նախ որպես տնտեսվար և երգչախմբի անդամ, իսկ հետագայում՝ որպես մոմավաճառ, այնտեղ ծառայության է անցնում Հայկանուշ Գրիգորյանը, որը եկեղեցանվեր այդ ծառայություններ կատարում է շուրջ քառասուն տարի: Ժամանակակիցների մեջ դեռևս վառ է այն հիշողությունը, երբ Ս. Ծննդյան տոներին Հայկանուշ Գրիգորյանը, դպիրի շապիկը հագին, իր գեղեցիկ և զրնգուն ձայնով կարդում էր Դանիելի մարգարեությունը*[2445]*:*

Թեմի վերաբացումից հետո Ադրբեջանի իշխանությունները առաջնորդանիստ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գործունեության համար միտումնավոր կերպով ստեղծեցին արհեստական դժվարություններ: Եկեղեցուց բռնագրաված գույքն ու եկեղեցապատկան շինությունը չվերադարձնելու պատճառով, քնակարանի բացակայության պայմաններում թեմի առաջնորդը բնակվում էր «Ինտուրիստ» հյուրանոցում՝ վճարելով մեծ գումարներ: Թեև թեմական խորհրդը բազմիցս դիմել էր Բաքխորհրդին՝ անհյականներ տրամադրելու համար, սակայն վերջինս մեծ մասամբ խուսանավելով, ձգձգում էր հարցի լուծումը: Ադրբեջանի իշխանությունների՝ եկեղեցու նկատմամբ արվող ոտնձգությունները կանխելու, բռնագրաված եկեղեցապատկան շինությունը վերադարձնելու նպատակով Գերագույն հոգևոր խորհրդի անդամ եղիշե վրդ. Հարությունյանը Հայոց կաթողիկոս Գևորգ Զորեքչյանի հանձնարարությամբ 1947 թ. մարտին հետևյալ գրությունն է հղում ԱԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Թ. Կուլիևին. «Միութենական մարմինների որոշման համաձայն Բաքու քաղաքը Հայոց Ադրբեջան-Թուրքեստանյան թեմի և թեմական խորհրդի նստավայրն է: Բաքու քաղաքում

[2443] Տե՛ս Ստեփանյան Գ., Շամախու թեմ, Քրիստոնյա Հայաստան. Հանրագիտարան, Երևան, 2002, էջ 819:

[2444] Տե՛ս «Էջմիածին», 1985, Զ, էջ 36:

[2445] Հայկանուշ Գրիգորյանը ծնվել է 1905 թ. Ջանգեզուրում: Փոքր հասակից ծնողների հետ տեղափոխվել է Բաքու: Հայրը՝ Արշակ Գրիգորյանը, ծառայության է անցել Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում՝ որպես դպիր և մոմավաճառ: Դեռևս տասը տարին չբոլորած՝ փոքրիկ Հայկանուշն ամեն օր հոր հետ հաճախում է եկեղեցի և երգում տեղի երգչախմբում: Մինչև 1945 թ. Հ. Գրիգորյանը երգել է նաև ականավոր երգահան Անտոն Սայիլյանի երգչախմբում (տե՛ս Թղթակից, Հավատավոր-եկեղեցասեր կինը և նվիրյալ աշխատավորուհին, «Էջմիածին», 1985, Զ, էջ 36-37):

թեմի առաջնորդի նշանակումը դժուարանում է աւագ քահանայի օթևանի և թեմական ու եկեղեցական խորհուրդների գրասենեակների չգոյութեան պատճառով: Նշանակված թեմի առաջնորդը բնակարան չլինելու պատճառով այժմ այլ պաշտօնի է փոխադրված (իմա՛ Եզնիկ վրդ. Ազնավուրյանը - Գ. Ս.), 10 ամսուայ ընթացքում բնակուել է «Ինտուրիստ» հիւրանոցում, և միայն նրա սենեակի համար վճարուել է տասը հազար ռուբլուց աւելի, որ չափազանց շատ է Բաքուի Հայկական եկեղեցու համար, որի վրայ են գլխաւորապէս թեմի առաջնորդի և թեմական խորհրդի ծախսերը»[2446]:

ԱԽՍՀ-ում հայ բնակչութեան նկատմամբ տարիներ ի վեր իրականացուած հալածական քաղաքականութեան նոր սկիզբ դրուեց 1949 թ. մայիսից, երբ ԽՍՀՄ կառավարութեան որոշումով հանրապետութեւններում իրականացուեցին զանգուածային բռնութիւններ և տեղահանութիւններ: Ադրբեջանում հմտորէն օգտագործուեցին այդ իրադարձութիւնները: Սկիզբ առած Ստալին-Բաղիրովյան դաժանութիւնների և հալածանքների շրջանում անհարկի մեղադրանքներ ներկայացուեցին նաև հայազգի մի շարք ընտանիքների: Պետական անվտանգութեան մարմինների նախօրոք պատրաստած աքսորի ենթակա ընտանիքների ցուցակներով «անբարեհուսա տարրերը» աքսորուեցին հեռաւոր Ալթայի երկրամաս: Աքսորուածներին ներկայացուած հիմնական մեղադրանքներն էին տարբեր տարիներին ՀՅԴ անդամ լինելը: Բաքուից 1949 թ. հունիսի 14-ի գիշերը տասնեակ հայ ընտանիքների հետ միասին Ալթայի երկրամաս աքսորուեցին նաև գրող, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ Միսաք (Արամայիս) Տեր-Դանիելյանը, նրա որդին, հարսը և երկու թոռները[2447]:

1959 թ. հունվարի 15-ի մարդահամարի տվյալներով՝ Բաքվում և քաղաքային բնակավայրերում, ինչպես նաև Բաքվի քաղխորհրդին ենթակա գյուղական վայրերում, 987.228 բնակչութիւնից հայերի թիվը 170.086 էր (80511 ար., 89575 իգ.) և կազմում էր ամբողջ բնակչութեան 17,2 %-ը: Բաքու քաղաքում 642.507 բնակչութիւնից հայերն իրենց թվով երրորդն էին ռուսներից և ադրբեջանցիներից հետո: Ռուսները կազմում էին 233.242 (88980 ար., 134.262

[2446] Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938-1955 թթ.), գիրք Ձ, էջ 368-369:
[2447] Միսաք Տեր-Դանիելյանն աքսորի տարիներին, ծանր տանելով նվաստացումներն ու նեղությունները, իր մահկանացուն կնքեց 1954 թ. հունիսի 5-ին, Ալթայի երկրամասի Պարֆինովսկի շրջանի Տուպչիխա ավանում, 80 տարեկան հասակում (տե՛ս Արամայիս Տեր-Դանիելյան, Վարաբաղի տագնապը, էջ 6):

իգ.)՝ 34,7%, ադրբեջանցիները՝ 211.372 (113.070 ար., 98302 իգ.)՝ 32,9%, հայերը՝ 137.111 (64563 ար., 72548 իգ.)՝ 21,3%[2448]*: Մարդահամարի տվյալներով՝ որպես մայրենի լեզու՝ հայերենն են մատնանշել 89985-ը, ռուսերենը՝ 46854-ը և ադրբեջաներենը՝ 225-ը*[2449]*:*

Բաքվում հայ և մյուս տեղաբնիկ ժողովուրդների (թաթեր, թալիշներ, լեզգիներ, ավարներ և այլք) նկատմամբ իրականացվող ուծացման և խտրական քաղաքականությունը 1950-ական թվականներին այնքան ակնհայտ էր դրսևորվում, որ 1959 թ. հուլիսի 1-ին դառնում է ԽՄԿԿ կենտկոմի հատուկ քննարկման առարկա: Ադրբեջանում այդ նպատակով քննություն անցկացրած գեներալ-գնդապետ Ի. Շիկինը իր եզրակացության մեջ ներկայացրել է ադրբեջանական իշխանությունների ծայրահեղ ազգայնամոլ քաղաքականությունը, որն ամփոփվում է Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահ Մ. Իբրահիմովի խոսքով. «Ամեն 20-ական թվականները չեն: Այժմ մենք ունենք կադրեր՝ բոլոր ոչ ադրբեջանցիներին փոխարինելու համար»[2450]*: Ջևկույցի քննարկման ժամանակ եզրակացություն է ունենում նաև ԽՄԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Նիկիտա Խրուշչևը, որը մասնավորապես ասել է. «Դա, ընկերներ, Բաքվում, որտեղ 66 տոկոսը ոչ ադրբեջանցիներ են... Օրինակ՝ Ամերիկայում ևս կան լեհերով և ուկրաինացիներով բնակեցված մեծ շրջաններ: Ամերիկացիները դրա հետ հաշվի են նստում: Նույնիսկ բուրժուական գործիչները այնպես չեն վարվում, ինչպես դուք: Դա հիտլերական մոտեցում է, կենդանական մոտեցում է, եթե կոպիտ ասենք, իսկ բուրժուական դեմոկրատիան այդպես չի վարվում: Նա ազգերի համար սահմանում է ինչ-որ ինքնավարություն, անգամ եթե նրանք մեծաթիվ չեն, բայց ներկայացնում են խումբ, որին հարկավոր է հաշվի առնել, իսկ դուք բոլորովին չահարկում եք, և դուք կոմունիստներ չեք, այլ՝ նացիստներ, հիտլերականներ... Ջափազանցվում է այնպիսի գործիչների դերը, ինչպիսին է Նարիման Նարիմանովը, որին իբր անծանոթ էին տատանումները, սխալներն ու վրիպումները: Եթե Կոմունիստական կուսակցության վերաբերյալ գրքերում նշվում են այնպիսի գործիչների սխալներն ու թերությունները, ինչպիսիք են Օրջոնոկիձեն, Ստեփան Շահումյանը, Ջափարիձեն, ապա Նարիման Նարիմանովի*

[2448] Տե՛ս Итоги всесоюзной переписи населения 1959 года. Азербайджанская ССР, Москва, 1963, таблица 54, стр. 140.

[2449] Տե՛ս նույն տեղում:

[2450] Ադրբեջանի հայատյաց քաղաքականության, կազմող՝ Ալվրցյան Հ., Երևան, 2007, էջ 11:

թերությունների մասին ոչ մի խոսք չկա, թեև հայտնի է, որ նա ուներ խոշոր թերություններ, հատկապես՝ ազգային քաղաքականության մարգում»[2451]:

1959 թ. մարդահամարից չուրջ 11 տարի անց՝ 1970 թ. հունվարի 15-ին անցկացված համամիութենական մարդահամարի տվյալներով՝ Բաքվում՝ քաղաքային և Բաքվի քաղխորհրդին ենթակա բնակավայրերում 1.265.515 բնակչությունից հայերն իրենց թվով երրորդն էին ադրբեջանցիներից և ռուսներից հետո: Ադրբեջանցիները կազմում էին 586.052՝ 46,3%, ռուսները՝ 351.090՝ 27,7%, հայերը 207.464՝ 16,4%[2452]: *Մարդահամարի տվյալներով՝ որպես մայրենի լեզու՝ հայերենն են նշել 141.131-ը, ռուսերենը՝ 65966-ը, ադրբեջաներենը՝ 334-ը*[2453]: *1959 թ. համեմատ, հայ բնակչության թիվը Բաքվում, քաղաքային և Բաքվի քաղխորհրդին ենթակա բնակավայրերում ավելացել էր 37378 մարդով՝ պայմանավորված բնական և մեխանիկական աճով:*

1970 թ. մարդահամարի տվյալներն արձանագրում են նաև, որ եթե նախորդ մարդահամարների ժամանակ բնակչության թվով առջևում էին ռուսները, ապա այս և հաջորդ մարդահամարներում առաջին տեղում են հայտնվել ադրբեջանցիները: Դա պայմանավորված էր Ադրբեջանի ղեկավարության կողմից տեղաբնիկ ժողովուրդների նկատմամբ մեծ թափով իրականացված խտրական քաղաքականության և ճնշման գործընթացներով: ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության լռելյայն թույլտվությամբ և համաձայնությամբ Ադրբեջանում հայերի, թաթերի, թալիշների, լեզգիների և այլոց նկատմամբ չարունակվող իրավազրկման և հալածանքի քաղաքականության պայմաններում վերջիններս պետք է փոխեին իրենց ազգային պատկանելությունը և նույնացվեին ադրբեջանցիների հետ: Ուստի նրանք կա՛մ անձնագրավորվում էին «ադրբեջանցիներ», կա՛մ էլ դուրս էին մղվում իրենց պապենական օջախներից[2454]: *Ի դեպ, Ադրբ-*

[2451] Նույն տեղում, էջ 11-12:

[2452] Տե՛ս Итоги всесоюзной переписи населения 1970 года, т. IV. Национальный состав населения СССР, союзных и автономных республик, краев, областей и национальных округов, Москва, 1973, таблица 18, стр. 269.

[2453] Տե՛ս նույն տեղում:

[2454] Ադրբեջանում հայ և այլազգի բնակչության նկատմամբ իրականացված հալածական և ճնշման քաղաքականության հանգամանալի քննությունը տե՛ս **Волкова Н.**, Этнические процессы в Закавказье в XIX-XX вв., стр. 47-50; Современные этнические процессы в СССР, отв. ред. **Ю. Бромлей**, Москва, 1975, стр. 75-76, 486; **Григорян В.**, Насильственная ассимиляция мусульманских наци-

բնջանի առանձին դեկավարներ չեն էլ թաքցրել իրենց մտադրությունները: «Дружба народов» հանդեսի թղթակից Բ. Խոլոպովն այդ կապակցությամբ նշել է. «Ես առիթ եմ ունեցել Ադրբեջանի որոշ նախկին դեկավարներից լսելու Ադրբեջանում «միասնական ազգ» ստեղծելու անհրաժեշտության մասին»[2455]: «Ադրբեջանցի» ընդհանուր հասկացության և «ադրբեջանցու ինքնության» ձևավորումը հնարավոր դարձնելու նպատակով Խորհրդային բարձրագույն դեկավարությունը դեռևս 1960-ական թվականների սկզբներից պաշտոնական դրականության մեջ առաջ էր քաշել այն անհեթեթ դրույթը, թե իբր «ադրբեջանցիներին սխալմամբ են անվանել թյուրքեր, կամ թաթարներ»[2456], ինչն արդյունք էր նորաթուխ «ադրբեջանցի» ժողովրդին հնամենի դարձնելու ցանկության:

Բռնի ադրբեջանականացման գործընթացում, տեղաբնիկ ժողովուրդներից հայերը՝ որպես դժվար տարրալուծվող ազգի, ԱԽՍՀ-ում դարձել էին թուրքացման քաղաքականության հիմնական խոչընդոտը, հետևապես և հիմնական թիրախը[2457]: Այլ խոսքով՝ Բաքվի հայությունը Ադրբեջանի իշխանությունների կողմից համարվում էր «ներքին թշնամի»: Հակահայկական քաղաքականությունը եթե մինչև այդ դրսևորվում էր թաքուն, ապա այդ տարիներին ավելի բացահայտ և մասշտաբային դարձավ: 1950-1970-ական թվականներին Բաքվում մեկը մյուսի հետևից փակվեցին հայկական դպրոցները (1930-ական թվականներից սկսած գործել են 87 հայկական դպրոցներ, վերջին դպրոցը փակվել է 1983 թ.)[2458], որոնք կրում էին հայ մեծերի՝ Ստ. Շահումյանի, Հովհ. Թումանյանի, Ալ. Մյաս-

---

ональных меньшинств в Азербайджане, Ереван, 1992; **Ростам Б.**, Судьба курдов в Советском Союзе и после его распада, «Курдистан рапорт», Москва, 1993, сентябрь, № 2, стр. 22-27; **Чобанян С.**, Государственная и национальная политика Азербайджана, Ереван, 1993; **Алексеев М., Казенин К., Сулейманов М.**, Дагестанские народы Азербайджана, Москва, 2006, Ընդդեմ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության, կազմող՝ Ալվրցյան Հ., Երևան, 2007, **Միրզոյեան Բ.**, Էրնիկ ժողովուրդների զտման քաղաքականությունը Ադրբեջանում, «Դրօշակ», 2008, № 2-3, էջ 24-33:

[2455] **Табайди Ч., Холопов Б.**, Этнический ренессанс... Правомерен ли термин?, «Дружба народов», Москва, 1989, № 2, стр. 184.

[2456] Советская Историческая Энциклопедия, т. I, Москва, 1961, стр. 266, տե՛ս նաև **Брук С.**, Население мира. Этнодемографический справочник, Москва, 1981, стр. 236.

[2457] Տե՛ս **Մանասյան Ա.**, Ադրբեջանական Հանրապետության սահմանների լեգիտիմության խնդիրը, էջ 171:

[2458] Տե՛ս **Мосесова И.**, նշվ. աշխ., стр. 38, տե՛ս նաև **Ղազիյան Ա., Մելիք-Շահնազարյան Լ.**, Ադրբեջան: Հայ սփյուռք. Հանրագիտարան, Երևան, 2003, էջ 24:

Նիկյանի և այլոց անունները, 1969 թ. լուծարվեց Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի հայկական բաժանմունքը[2459]: Դեռևս 1949 թ. մարտի 11-ին փակվել էր Բաքվի հայկական պետական դրամատիկական թատրոնը, որը 1939 թվականից կրում էր հանրահայտ դերասան Լևոն Երեմյանի անունը[2460]: Արգելվեց հայկական դպրոցներին Հայաստանից մայրենի լեզվով ուսումնական ձեռնարկներ ուղարկելը, փակվեց Վ. Լենինի անվան քաղաքային կենտրոնական դրադարանի հայկական բաժինը (1933-1956 թթ. բաժնի վարիչն էր բանաստեղծ Ա. Գրաչին)[2461], փակվեցին հայկական դրադարանները, իսկ քաղաքի մյուս գրադարաններում գրեթե բացակայում էր հայերեն գրականությունը, փակվեց Գրողների միու- թյան հայկական մասնաճյուղը, վերացվեցին ազգային մշակութային կենտրոնները, արգելվում էր միջոցառումներ անցկացնել հայերեն, նշել հայոց մեծերին նվիրված հոբելյաններ և այլն[2462]: Կասեցվեց նաև ազգային կյանքը կազմակերպող «Հայարտուն» դրական-մշակութային կազմակերպության գործունեությունը: Բաքվի հայ բնակչությունը զրկվեց իր ազգային հիմքերից:

Գրաքննությունն ակնառու էր հատկապես Ադրբեջանի ԿԿ կենտրոնական Կոմիտեի, Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն խորհրդի և մինիստրների խորհրդի օրգան «Կոմունիստ» (1920-1989 թթ.) հայատառ օրաթերթի ու «Գրական Ադրբեջան» երկամսյա ամսագրի նկատմամբ: Եթե առաջին տարիներին «Կոմունիստ»-ը ներկայացնում էր հանրապետության առօրյան, տպագրում էր հայ գրողների գործերը, ապա 1960-ական թվականներից սկսած՝ Ադրբեջանի վերադաս կուսակցական մարմինների ճնշման տակ անկարող էր անդրա-

---

[2459] Հակառակ դրան, 1929 թվականից Երևանում գործում էր բուրը բնակչության համար բացված մանկավարժական տեխնիկումը (տե՛ս Շամիլով Ա., Խորհրդային Հայաստանի ազգային փոքրամասնությունների մեջ տարվող կուլտ-կրթական աշխատանքի տասնամյակը «Նոր ուղի», Երևան, 1930, № 11-12, էջ 132), հետագայում նաև Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի «աղրբեջաներեն լեզվի և գրականության» ֆակուլտետը:

[2460] Տե՛ս Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 182, տե՛ս նաև **Овакимян Б.**, նշվ. աշխ., стр. 47-48.

[2461] Տե՛ս Գրական տեղեկատու: Հայաստանի սովետական գրողների միության անդամներ. 1934-1974, էջ 148:

[2462] Տե՛ս Աղաջանյան Գ., Բաց նամակ Բ. Վահաբզադեին և Ազարբայջանի մյուս տիտղոսավոր մյուալլիմներին, «Գրական թերթ», Երևան, 1990, փետրվարի 2, № 6: Գ. Աղաջանյանը 1976-1979 թթ. աշխատել է Աղրբեջանի հեռուստատեսության հայերեն հաղորդումների խմբագրությունում, որպես կրտսեր խմբագիր, 1979 թվականից՝ «Գրական Աղրբեջան» հանդեսի տեխնիկական խմբագիր:

դառնալ Բաքվում, հատկապես Ադրբեջանին բռնակցված բուն հայկական Արցախի և Նախիջևանի շրջաններում, ինչպես նաև Հանրապետության հայաբնակ այլ վայրերում հայ բնակչության նկատմամբ իրականացվող հալածանքներին ու անօրինականություններին:

Ադրբեջանի վերադաս իշխանությունները խոչընդոտներ էին ստեղծում նաև հայ մտավորական և մշակութային գործիչների առջև, հանրապետությունից հեռացնելու նպատակով սահմանափակում էին ապատ ստեղծագործելու նրանց իրավունքները և այլն[2463]: Ի թիվս բազում այլ փաստերի, հայ բնակչության իրավունքների ոտնահարման վառ արտահայտությունն է, երբ 1970 թ. Ադրբեջանի կոմկուսի կուսումով արգելվեց նշել «Բաքվի հայոց մարդասիրական ընկերության» գրադարանի ֆոնդի հիման վրա ստեղծված Վ. Լենինի անվան քաղաքային կենտրոնական գրադարանի 100-ամյակը[2464]: Հայ ազգային կյանքին նվիրված միջոցառումների պետական մակարդակով արգելման քաղաքականությունը հետագայում էլ ավելի խորացվեց, և ստեղծվեցին բոլոր խոչընդոտները հայկական կենսունակ կյանքի պահպանման համար: Այդ պայմաններում հասկանալի է, թե որքան դժվար է եղել հայի համար իր ազգային նկարագիրը մաքուր և անաղարտ պահելն Ադրբեջանի բարձրագույն իշխանությունների կողմից ժողովուրդների բանտի վերածված Բաքվում: Բաքվի հայերի ազգային միակ օջախն ըստ էության մնացել էր քաղաքի Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցին:

Ադրբեջանում տեղի հայահալած քաղաքականության պայմաններում Բաքվի հայության հոգևոր-կրոնական կյանքի պահպանման գործում մեծ դեր խաղաց Բաքվի և Թուրքեստանի հայոց թեմի 1956-1958 թթ. առաջնորդ Տիրայր եպս. Մարտիկյանի օրոք, Հայոց եկեղեցու լուսավոր դեմքերից մեկի՝ երջանկահիշատակ Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի 1957 սեպտեմբերին հովվապետական այցելությունը Բաքու: Սբ. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում Վեհափառ Հայրապետը սեպտեմբերի 21-ին նախագահել է կիրակնամուտի ժամերգությունը և կարդացել քա-

---

[2463] Տե՛ս Հովսեփյան Յու., Հայերի ցեղասպանությունը Ադրբեջանում (1918-1920 թթ.), «Հայոց ցեղասպանություն. պատճառներ և դասեր», № 2, Երևան, 1995, էջ 22:

[2464] Տե՛ս Աղաջանյան Գ., Բաց նամակ Բ. Վահաբզադեին և Ազարբայջանի մյուս տիտղոսավոր մյուալլիմներին, «Գրական թերթ», Երևան, 1990, փետրվարի 2, № 6:

լող[2465]*: Վեհափառը հովվապետական այցելություններ է կատարել Բաքու. նաև թեմի հաջորդ առաջնորդ Հուսիկ եպս. Սանթուրյանի (1961-1981 թթ.) օրոք՝ 1962, ապա՝ 1969 թթ. և Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում հանդիսավորությամբ մատուցել հայրապետական ս. պատարագ*[2466]*:*

ԱԽՍՀ-ում հայ բնակչության թիվն աստիճանաբար սկսեց նվազել 1970-ական թվականների կեսերից, ինչը պայմանավորված էր պետական մակարդակով հայերի և ընդհանրապես տեղաբնիկ մյուս ժողովուրդների նկատմամբ ազգային արժանապատվությունը ոտնահարող և էթնիկական զտման քաղաքականության սաստկացմամբ[2467]*: Հայահալած քաղաքականությունն ընդգծված ձևով արտահայտից հատկապես Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, մեկ այլ հայատյաց գործիչ Հեյդար Ալիևի կառավարման տարիներին (1970 թ. ապրիլի 10-1981 թ. հունվարի 22):*

Ադրբեջանի իշխանություններին հանգիստ չէր տալիս քաղաքի գրեթե կենտրոնում գտնվող ստվար հայություն ունեցող Հայկավան թաղամասի գոյությունը: Հայ բնակչությանը տրոհելու նպատակով կազմակերպվեց զանգվածային չինարարություն, ինչի հետևանքով Հայկավանում սերնդեսերունդ ապրած հայ բնտանիքները ցիրուցան եղան տարբեր միկրոշրջաններում: Զավակզալնի թաղամասում, որտեղ դարձյալ կար հոծ հայ բնակչություն, կառուցվեց մզկիթաձև մի մեծ չուկա՝ «Շարգ» (արևելյան) անվամբ, որի բացմանը «հայարտության զգացումով» ներկա էր «ինտերնացիոնալիզմի» կարգախոսով պարբերաբար հանդես եկող Հ. Ալիևը[2468]*: Վերջինիս կառավարման օրոք Ադրբեջանում հայահալած քաղաքականությունն ուղեկցվել է պետական մակարդակով հայկական պատմական հուշարձանների ոչնչացմամբ*[2469]*:*

Ըստ Հ. Գալստյանի մոտավոր հաշվումների՝ 1926-1979 թթ. Ադրբեջանի Հանրապետությունից միութենական այլ հանրապե-

---

[2465] Տե՛ս «Էջմիածին», 1957, ժ, էջ 16:

[2466] Տե՛ս «Էջմիածին», 1962, Է, էջ 9-14, տե՛ս նաև «Էջմիածին», 1969, Ե, էջ 11-14:

[2467] Տե՛ս Խոջաբեկյան Վ., ՀԽՍՀ բնակչության աճը վերջին տասնամյակներում, ՊԲՀ, Երևան, 1989, № 4, էջ 16:

[2468] Տե՛ս Աղաջանյան Գ., Բաց նամակ Ը. Վահաբզադեին և Ազարբայջանի մյուս սիտղոսավոր մյուսլիմներին, «Գրական թերթ», Երևան, 1990, փետրվարի 2, № 6:

[2469] Տե՛ս Կարապետյան Ս., Հայկական հուշարձանների եղեռնը Ադրբեջանում, «Հայոց ցեղասպանություն: Պատճառներ և դասեր», № 2, Երևան, 1995, էջ 31:

տուժյուններ են մեկնել 120-150 հազար հայեր[2470]: 1967-1979 թթ. ընկած ժամանակահատվածում Ադրբեջանական ԽՍՀ-ում միգրացիոն գործընթացների վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ադրբեջանից հայ բնակչության արտահոսքը տարեկան միջինը կազմել է մոտավորապես 5,2 հազար մարդ, որի 30%-ը՝ գյուղական բնակավայրերից: Ընդհանուր առմամբ, նշված ժամանակահատվածում Խորհրդային Հայաստան է ներգաղթել մոտ 50000 մարդ[2471]: 1926-1979 թթ. միութենական բոլոր հանրապետություններից Խորհրդային Հայաստան եկած միգրացիոն դրական հաշվեկշռում 22,0%-ը պատկանում էր Ադրբեջանից եկածներին[2472]: Վիճակագրական հետագա տվյալները ցույց են տալիս, որ հայերն Ադրբեջանում իրենց դոյությունը պահպանելու, հայ մնալու ոչ մի հեռանկար չունեին: Ինչպես իրավամբ նկատել է Գր. Ավագյանը. «...հայերը պետք է կամ դուրս մղվեին, կամ էլ ձուլվեին ադրբեջանցիներին»[2473]: Ցավեցուցիչ է, որ ԽՍԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Բրեժնևը, Հ. Ալիևի վարած «ժողովուրդների անխախտ բարեկամության» վերոնշյալ «ազդային» քաղաքականության համար էր, թերևս, որ 1975 թ. մարտին Ադրբեջանին փոխանցեց ՍՄԿԿ, ՍՍՀՄ Միությունների Սովետի և ՀամԼԿԵՄ կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշը[2474]:

1979 թ. հունվարի 17-ի մարդահամարի տվյալները ցույց են տալիս, որ Բաքխորհրդի 1.533.235 բնակչությունից հայերի թիվը կազմում էր 215.807[2475]: 1970 թ. և 1979 թ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում հայ բնակչությունն աճել էր աննշան չափով՝ ընդամենը 8343-ով: Բնական աճի նվազման միտումը առավելապես պայմանավորված էր սոցիալ-տնտեսական գործոններով և

[2470] Տե՛ս Գալստյան Հ., Էթնոժողովրդագրական և էթնոլեզվական պրոցեսները Ադրբեջանի հայության մեջ ըստ ՍՍՀՄ մարդահամարի նյութերի (Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ, էջ 191):

[2471] Տե՛ս Վարտիկյան Ա., ՀՀ միգրացիոն շարժերի պատմական արմատները, ԲՀԱ, Երևան, 2004, № 1, էջ 190, 194:

[2472] Տե՛ս Գալստյան Հ., Էթնոժողովրդագրական և էթնոլեզվական պրոցեսները Ադրբեջանի հայության մեջ ըստ ՍՍՀՄ մարդահամարի նյութերի (Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ, էջ 192):

[2473] Ավագյան Գ., Հայերն Ադրբեջանում ապրելու հեռանկար չունեին, «Գարուն», Երևան, 2001, № 4, էջ 35:

[2474] Տե՛ս «Կոմունիստ», Բաքու, 1975, մարտի 13, № 60:

[2475] Տե՛ս Население СССР. По данным Всесоюзной переписи 1979 года, Москва, 1980, стр. 11, տե՛ս նաև Итоги Всесоюзной переписи населения 1979 года по Азербайджанской ССР, т. II, Баку, 1981, таблица 17, стр. 130.

հայ բնակչության չահերը ոտնահարող ազգային խտրական քաղաքականության: Նկատենք, որ թեև Բաքվում արձանագրվում էր հայ բնակչության մասնակի աճ, սակայն մյուս կողմից արտահոսքի հետևանքով այդ թիվը գնալով նվազում էր: 1959-1971 թթ. ցուցանիշներն արձանագրում են, որ բնական աճի գործակիցը բարձր էր ադրբեջանցիների մոտ[2476]: Ընտանիքի միջին չափերի վերաբերյալ տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ բազմանդամ ընտանիք ունեին միայն ադրբեջանցիները (միջին հաշվով՝ մեկ ընտանիքում՝ 5-6 անդամ), հայկական ընտանիքի անդամների միջին թիվը կազմում էր 4-4, ռուսականը՝ 3-4 մարդ[2477]:

1970-1979 թթ. տվյալների համեմատական քննությունը փաստում է նաև, որ ադրբեջանական իշխանությունների էթնիկ, կրոնական և լեզվական իրավունքների ոտնհարման քաղաքականության հետևանքով Բաքվի հայերի շրջանում տեղի էր ունենում մայրենի լեզվի դիրքերի աստիճանական կորուստ, ինչն արտահայտվում էր հայոց լեզվի օգտագործման ոլորտների չարունակաբար կրճատմամբ: 1979 թ. մարդահամարի տվյալներով՝ որպես մայրենի լեզու, ռուսերենն էր նշել 85636 հոգի (39,7%), ադրբեջաներենը մայրենի լեզու նշած անձանց թիվը հասնում էր 245-ի (0,1%)[2478]: Երկրորդ և երրորդ լեզուների իմացության առումով Բաքվի հայության շրջանում հայ-ռուսերեն երկլեզվությամբ խոսող բնակիչների թիվը կազմում էր 104.676 (48,5%)[2479]: Մայրենի լեզվի դիրքերի աստիճանական կորստի հետ մեկտեղ հայ երեխաները կրթություն էին ստանում ռուսական դպրոցներում, որի հետևանքով կրճատվում էին հայկական դպրոցները[2480], իսկ հայկական ազգանունները չատ դեպքերում գրանցվում էին ռուսական ов-ев վերջածանցներով: Դիտարկելով Բաքվի հայերի՝ հոգուտ ռուսերենի լեզվական վիճակերպման դրդապատճառները՝ Ա. Մանասյանն իրավացիորեն եզրակացրել է. «...թուրքացումից խուսափող բնիկ ժողովուրդները նախընտրում էին իրենց երեխաներին տալ ռուսական կրթություն: Նույն կերպ էին վարվում քաղաքաբնակ հայերը: Բաքուն դառնում

[2476] Տե՛ս **Мамедов К.**, Население Азербайджанской ССР за 60 лет, Баку, 1982, стр. 28.

[2477] Ավագյան Գ., Հայկական ՍՍՀ բնակչությունը (տնտեսա-աշխարհագրական ուսումնասիրություն), էջ 44:

[2478] Տե՛ս Итоги Всесоюзной переписи населения 1979 года по Азербайджанской ССР, т. II, таблица 17, стр. 130.

[2479] Տե՛ս նույն տեղում:

[2480] Տե՛ս **Арустамян Б.**, նշվ. աշխ., стр. 55.

էր ռուսիֆիկացման այն պլխավոր ճուլարանը, որտեղ ապագայինմիջավայրում ձևավորվում էր մի նոր ռուսախոս հանրություն՝ բաք-վեցու «ինքնությամբ»»[2481]: Ազգագրագետ Ն. Վոլկովան անդրա-դառնալով Բաքու, Թիֆլիս և Ռոստովյես քաղաքներում ռուսաց լեզ-վի և ռուսական մշակույթի տերակշիռ ազդեցությանը, գրում էր, որայն «գլխավորապես ընդդրկում էր տեղի բնակչության սոցիալա-կան վերնախավը»[2482]:

Հ. Ալիևն Ադրբեջանում Խորհրդային իշխանության հաս-տատման 60-ամյակին նվիրված գրքույկում, քողարկելով Հանրապե-տությունում տարիներ ի վեր տեղաբնիկ ժողովուրդների նկատմամբ անբարենպաստ միջավայր ստեղծելը և սահմանադրական իրա-վունքների ոտնահարումը, փարիսեցիաբար հայտարարում էր. «Ադրբեջանը բազմազգ հանրապետություն է... Միասնական եղբայ-րական ընտանիքում սերտորեն միավորված մոտ 100 ազգեր և ազ-գություններ ներկայացնող մարդիկ համատեղ գրում են իրենց արևաշող հանրապետության աշխատանքային տարեգրությունը, բազմապատկում են նրա փառքը և հարստությունը... Հանրապե-տությունում ամբողջ բարոյահոգեբանական մթնոլորտը նպրծված է ինտերնացիոնալիզմի ոգով և դաղափարներով՝ հաստատված է մեր մարդկանց սպրելակերպի, վարքագծի մեջ»[2483]: Սակայն իրողու-թյունն այն է, որ կեղծ և մեծադղորդ «ինտերնացիոնալիզմի» կար-գախոսի տակ համատարած կերպով ուծացվում կամ դուրս էին մղվում Բաքվի առաջընթացն ապահովող ժողովուրդները: Բավական է նշել, որ 1970 թ. և 1979 թ. մարդահամարների միջև ընկած ժամա-նակահատվածում ուս բնակչության թիվը Բաքվում 351.090-ից իջել էր 337.959-ի[2484]: Կոծկելով նվաղման իրական պատճառները՝ ադրբեջանցի ժողովրդագիրները փորձում էին այդ իրողությունը «պարզաբանել» ուս բնակչության բնական աճի ցածր տեմպե-րով[2485]: Իսկ Ադրբեջանի Հանրապետության և նրա մայրաքաղաք Բաքվի տարեգրությունը կերտվել և քաղաքը հարստացել է ոչ թե Արևելյան Այսրկովկասում ավելի ուշ շրջանում հայտնված և միայն

[2481] Տե՛ս Մանասյան Ա., Ադրբեջանական Հանրապետության սահմանների լեզի-տիմության խնդիրը, էջ 170:

[2482] **Волкова Н.**, Этнические процессы в Закавказье в XIX-XX вв., стр. 51.

[2483] Ալիև Հ., նշվ. աշխ., էջ 56-57:

[2484] Տե՛ս Итоги всесоюзной переписи населения 1970 года, т. IV, таблица 18, стр. 269, տե՛ս նաև Итоги Всесоюзной переписи населения 1979 года по Азербайджанской ССР, т. II, таблица 17, стр. 130.

[2485] Տե՛ս **Мамедов К.**, նշվ. աշխ., стр. 56-57.

XX դարի 30-ական թվականների վերջերին «ադրբեջանցի» հորջորջված հետամնաց ու վաչկատուն թյուրք-թաթարների, այլ մշակութային ավանդույթներ ունեցող հայ, պարսիկ, հրեա, ռուս և մյուս ժողովուրդների երկար տարիների անխոնջ աշխատանքի շնորհիվ: Իրողություն է, որ Բաքվի կրթական ոլորտի զարգացման գործում մեծ դերակատարություն են ունեցել քաղաքի տարբեր դպրոցներում ու բուհերում դասավանդող հայ մանկավարժները: Ճանաչված պետնականներ էին իրավագետներ Բ. Դանիել-Բեկը, Ա. Սարգսյանը (Սարկիսով), Ն. Մանասյանը, Ադրբեջանի պետական համալսարանի պրոռեկտոր, տնտեսագետ (1966 թ. ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս) Ա. Արզումանյանը և շատ ուրիշներ[2486]: ԱԽՍՀ-ում կրթամշակութային ոլորտներից բացի՝ հայ մտավորականությունն առաջատար դիրքեր էր զբաղեցնում մեկ այլ կարևոր ոլորտում՝ բուժսպասարկման համակարգում: Այդ ոլորտում իրենց ուրույն տեղն ունեին հայր և որդի Ամիրջանյանները (Ամիրջանով)[2487]: Իսկ նավթագործարաններն ու արդյունաբերական այլ ձեռնարկությունները հիմնականում գործարկվում էին հայ բարձրակարգ ինժեներների շնորհիվ: Հայերի՝ նշված բնագավառներում առաջատար դիրքեր զբաղեցնելը ավանդաբար գալիս էր դեռևս XIX դարի կեսերից:

Շարունակվող հայահալած քաղաքականության պայմաններում Բաքվից հայ բնակչության արտագաղթը մեծ մասշտաբներ ընդունեց հատկապես 1980-ական թվականներին Հ. Ալիևի անթաքույց հայատյաց քաղաքականությունը շարունակող Քյամրան Բաղիրովի՝ 1981-1988 թթ. Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարի աշխատած տարիներին[2488]: 1980-1989 թթ. Բաքվում բացարձակ հալածանք սկսվեց հայ մտավորականության նկատմամբ: Ազգային անվտանգության մարմինների կողմից հետապնդվում, ազգայնականության կեղծ մեղադրանքներով հալածվում և աշխատանքից հեռացվում էին Արցախի և Նախիջևանի պատմությամբ հետաքրքրվողները: Այդ հողի վրա Ադրբեջանի իշխանությունների բռնություններին ենթարկվեց տեղի մտավորականներից Բենիամին Առուստամյանը, որը «հակախորհրդային գործունեության» պատրվակի տակ 1983 թ. հեռացվում է աշխատանքից[2489]: Հայոց լե-

---

[2486] Տե՛ս **Арустамян Б.**, նշվ. աշխ., стр. 55.
[2487] Տե՛ս նույն տեղում:
[2488] Տե՛ս Խոջաբեկյան Վ., ՀԽՍՀ բնակչության ածը վերջին տասնամյակներում, էջ 16:
[2489] Տե՛ս **Арустамян Б.**, նշվ. աշխ., стр. 56.

դուն և խոսքը վերացնելու նպատակով ռադիոյի հաղորդումների տևողությունը հասցվում է չաբաթական 1 ժամ 40 րոպեի՝ 3-4 ժամի փոխարեն, ընդ որում արգելվում էր հայկական երաժշտության, երգահամերգների հաղորդումը: Աչխատանքից ազատվում է Ստ. Շահումյանի անվան հայկական մշակույթի տան տնօրեն Ի. Մնացականյանը, որին փոխարինում է ոմն ադրբեջանցի: Աչխատանքից ազատվում էին նաև ադրբեջանական դպրոցներում ռուսաց լեզու և այլ առարկաներ դասավանդող երկար տարիների փորձ ու վաստակ ունեցող հայ ուսուցիչները[2490]: 1988 թ. աչնանը փակվեց Հեռուստատեսային և ռադիոյի հայկական հաղորդումների բաժինը:

«Ավարտած» համարելով Ադրբեջանում ժողովուրդների ուծացման գործընթացը՝ ադրբեջանցի ազդագրագետ Ա. Մուսաբեկովն իր «Ադրբեջանի ժամանակակից ժողովրդագրական իրավիճակի մի քանի տեսանկյուններ» աչխատությունը վերջացրել է հետևյալ կերպ. «Ամփոփելով չարադրանքը՝ կարելի է միանշանակ եզրակացություն անել այն մասին (վերանալով դարաբաղյան հայկական անջատողականությունից), որ Ադրբեջանական Հանրապետության սահմաններից ներս բազմաթիվ ազգային փոքրամասնությունների ուռկայությունը նրա ամբողջականության ու անկախության համար որևէ էական վտանգ չի ներկայացնում: Ադրբեջանցիների տեսակարար կչիռը, մնծանալով ամբողջ անցած դարի ընթացքում, 1926 թվի 62,1% տոկոսից 1999 թվին հասել է 90 տոկոսի»[2491]:

Մինչև Արցախյան ազգային-ազատագրական չարժումը՝ ադրբեջանական իչխանությունների չրջանակներում տիրապետող էր այն կարծիքը, թե «Ադրբեջան» անվամբ պետությունում ավարտվել է այլ ազգությունների ու էթնիկական խմբերի ձուլումը: Սակայն սկսված բռնկումներն ու հուզումներն ապացուցեցին, որ անբարենպաստ միջավայր ստեղծելը, սահմանադրական իրավունքների ոտնահարումը, վիճակագրությունը խեղաթյուրելը, բավարար չեն ազգային ինքնագիտակցությունն ու հիչողությունն սպանելու համար:

Ադրբեջանում հայ բնակչությանն իրավազրկելու, ճնշելու և հալածելու քաղաքականությունը 1988 թ. փետրվարի 27-29-ին

[2490] Տե՛ս Աղաջանյան Գ., Բաց նամակ Ք. Վահաբզադեին և Ազարբայջանի մյուս տիտղոսավոր մյուալլիմներին, «Գրական թերթ», Երևան, 1990, փետրվարի 2, № 6:

[2491] Ընդդեմ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության, կազմող՝ Ալվրցյան Հ., էջ 26:

դրսևորվեց 1988 թ. փետրվարի 27-29-ին Բաքվից 25 կմ հեռավորության վրա գտնվող արդյունաբերական Սումգայիթ քաղաքում:

Պետական մակարդակով խորհրդային Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների և կուսակցության Սումգայիթի քաղկոմի առաջին քարտուղար Մուսլիմ-զադեի անմիջական մասնակցությամբ քաղաքի հայ բնակչության նկատմամբ կազմակերպվեցին և գործադրվեցին ցեղասպանության բոլոր մեթոդներն ու ձևերը: Նախապես անջատվել էին հայերի բնակարանների հեռախոսները, կազմվել հայերի տների ցուցակներ և այլն[2492]: 1988 թ. գարնանը Հայկոմկուսի կենտկոմում ստացված մի փաստաթղթում նշվում է, որ Սումգայիթում կոտորածի են ենթարկվել ավելի քան 400 հայ, որոնց մեծ մասը, խոշտանգումներից ու կոտանքներից հետո ողջակիզված, խեղվել ու տուժել են մոտ 1000 հոգի, այդ թվում՝ կանայք, ծերուններ և երեխաներ[2493]: Այլ տեղեկություններով զոհված հայերի թիվը կազմում էր 500-1000 մարդ[2494]: Ջարդերն ուղեկցվում էին հայերի բնակարանների ավերումով ու կողոպուտով: Միայն փետրվարի 29-ի դիշերը երեք օր հանցավոր ուշացումով (թեև հետագայում ԽՄԿԿ կենտկոմի դլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1988 թ. հուլիսի 18-ի նստաշրջանում համառորեն պնդում էր, թե իբր երեք ժամ է եղել) միութենական իշխանությունները զորք մտցրին Սումգայիթ[2495]:

ԽՍՀՄ կենտրոնական իշխանության թողտվությամբ (հայերի ջարդերի օրերին Բաքվում էին գտնվում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի առաջին տեղակալ Պ. Դեմիչևը և ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Գ. Ռազումովսկին, որոնք ոչինչ չձեռնարկեցին ջարդերը կանխելու համար)[2496] Ադրբեջանի իշխանությունները Սումգայիթի հայերի ցեղասպանությամբ փորձեցին ահաբեկել ազգային-ազատագրական պայքարի ելած արցախահայությանը: Սումգայիթյան եղեռնը, սակայն, չընկճեց հայ ժողովրդին:

Սումգայիթում պետական մակարդակով իրագործված հայերի ցեղասպանությունը ԽՍՀՄ կենտրոնական իշխանության կողմից

[2492] Մանրամասն տե՛ս **Шахмурадян С.**, Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев, Ереван, 1989; Сумгаит...Геноцид...Гласность?. Составили **Улубабян Г., Золян С., Аршахян А.**, Ереван, 1990.

[2493] Տե՛ս Արշակյան Ա., Արցախյան գոյապայքար (1985-1992), Երևան, 2004, էջ 25:

[2494] Տե՛ս **Оганесян Э.**, Век борбы, т. II, Мюнхен-Москва, 1991, стр. 567-568, տե՛ս նաև Մինասյան Է., Սումգայիթի և Բաքվի ջարդերի ադրբեջանական կեղծարարությունը: Պատմություն և մշակույթ. ընդդեմ կեղծիքի և ոտնձգության: Հանրապետական գիտաժողովի հիմնադրույթներ (4-6 մայիսի), էջ 25:

[2495] Տե՛ս Сумгаит...Геноцид...Гласность?, стр. 17-18, տե՛ս նաև Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն (համառոտ ակնարկ), Երևան, 1992, էջ 24:

[2496] Տե՛ս Сумгаит...Геноцид...Гласность?, стр. 58.

քաղաքական դնահատականի չարժանացավ: Վերջինիս ադրբեջանամետ պահվածքն առավել լրահնուսեց չարդարարներին: Ավելին՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1988 թ. հուլիսի 18-ի նստաշրջանում Մ. Գորբաչովը պայրապին առարկեց Սումգայիթի դեպքերը ցեղասպանություն որակելու դեմ՝ հայտարարելով, որ «ցեղասպանությունը կազմակերպված հանցագործություն է, իսկ Սումգայիթում գործում էին միայն «հասարակության թափթփուկները»»[2497]:

ԽՍՀՄ Գլխավոր դատախազության (գլխավոր դատախազ Ա. Սուխարև) վարույթում ընթացող սումգայիթյան ոճրագործության դատավարությունը վերածվեց խեղկատակության. քրեական գործը մասնատվեց բազմաթիվ առանձնացված մասերի, դատավարությունները տեղի ունեցան միմյանցից բաժան-բաժան՝ ԽՍՀՄ տարբեր դատարաններում՝ Սումգայիթում, Վոլգոգրադում, Վորոնեժում, Կույբիշևում, ԽՍՀՄ գերագույն դատարանում, դատավարություններն ընթացան դատական ընթացակարգի և տուժածների իրավունքների կոպիտ խախտումներով, իսկ կատարվածն էլ չորակվեց ցեղասպանություն[2498]:

Սումգայիթում հայերի ցեղասպանությունից հետո հայահալած քաղաքականությունը շարունակվեց Ադրբեջանի հայաբնակ բոլոր վայրերում, ուր գործի դրվեցին բոլոր մեթոդները՝ զինված հարձակումներ, անզեն բնակչության, այդ թվում՝ կանանց, երեխաների ու ծերերի նկատմամբ կիրառվող հալածանքներ, ծեծ, բնակարանների հրկիզումներ ու ջարդեր: Սումգայիթյան ոճրագործությանը հետևեց Ադրբեջանից հայ բնակչության զանգվածային առաջին բռնագաղթը: 1988 թ. մարտի 2-ին Հայաստան տեղափոխվեցին առաջին տուժածները[2499]: Ադրբեջանում հայ բնակչության ցեղասպանությունն ու զանգվածային բռնագաղթերը հաջորդաբար իրականացվեցին չորս փուլերով: Յուրաքանչյուր փուլ սկսվում էր զանգվածային ջարդերով: 1988 թ. նոյեմբերի 21-22-ին Ադրբեջանում սկսվեց հայ բնակչության ցեղասպանության երկրորդ փուլը, ինչը հանգեցրեց հայաշատ բնակավայրերից նրանց զանգվածային արտաքսմանը:

Սումգայիթից հետո իրավիճակը լարված էր հատկապես Բաքվում: 1988 թ. նոյեմբերի 21-ին Բաքու է ժամանում Տուլայի օպա-դևանտային դիվիզիան գնդապետ Ալնքսանդր Լեբեդի հրամանատարությամբ: «Ծավ վասն տերության» փաստավավերագրական հուշագրություններում Ա. Լեբեդը տեղեկություններ է հայտնում Բաքվում 1988 թ. վերջերին և 1990 թ. հունվարին տեղի ունեցած իրադարձությունների մասին: Բաքու քաղաքի հատուկ շրջանի առաջին պա-

---

[2497] Տե՛ս Сумгаит...Геноцид...Гласность?., стр. 17.

[2498] Տե՛ս նույն տեղում, стр. 30, 52-53, տե՛ս նաև Шахмурадян С., նշվ. աշխ., стр. XV, տե՛ս նաև Սինասյան Է., նշվ. աշխ., էջ 25:

[2499] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1176, ց. 1, գ. 57, թ. 11:

լեռ, գեներալ-դնդապետ Տյագունովի հրամանով՝ Ա. Լեբեդը նշանակվում է քաղաքի 240.000 բնակչություն ունեցող Նասիմիի շրջանի պարետ: Այդտեղ հայերի համատեղ բնակության երկու շրջան կար՝ Հայկավանը և Հայկական խուտորը (Հայոց քիշլի): Ա. Լեբեդի հրամանով՝ այդ վայրերում տեղակայվում են պարաշյուտա-դեսանտային մեկական դումարտակներ[2500]: Բնութագրելով Ադրբեջանի իշխանությունների հայահալած քաղաքականությունը, Ա. Լեբեդը գրում է. «...բազմաթիվ հայկական ընտանիքներ փորձում էին վաճառել տները կամ բնակարանները փոխանակել, երկար ժամանակով վարձով տալ: Ոչ ոք նրանց չէր աջակցում ու չէր նպաստում, ամենուրեք պատասխանի էին արժանանում, որ թարգմանարար մոտավորապես հետևյալն է նշանակում. «Ամեն ինչ թողեք, ճամպրուկներդ հավաքեք ու ռադ եղեք, սրիկաներ, քանի դեռ ողջ եք...»[2501]: Հայ ընտանիքների՝ Դերբենդ մեկնողների գործընթացը կարգավորելու նպատակով Ա. Լեբեդի կողմից ստեղծվել էր տարհանման հանձնաժողով: Մեկնողների անվտանգությունն ապահովելու նպատակով, նրանց ուղեկցում էին զինված պահակազորները. «Փորձեցինք հաշվել մեքենաները, հասանք հազարի և հաշիվը կորցրինք... Հիմա էլ չգիտեմ, թե քանի մեքենա ենք ուղեկցել: Հիշում եմ միայն, որ ամենամեծ շարասյունը 500 միավորից էր կազմված»[2502]:

Հայ բնակչության տեղահանման ժամանակ ադրբեջանական իշխանությունների կողմից գործադրվում էին հարկադրանքի բոլոր միջոցները: Ոգևորված հանրապետության ղեկավարների հակահայկական քաղաքականությունից, ադրբեջանական հրոսակախմբերը մտնում էին հայաբնակ թաղամասերը և կոտորածի ահի տակ պարտադրում գաղթել՝ տալով սուղ ժամանակ: Այդ բռնարարքները շատ դեպքերում ուղեկցվում էին նաև տանտերերի սպանություններով: «Ծայր առավ հայկական բնակարանների և տների ինքնագլուխ բռնագրավումը: Եթե ընտանիքը տեղում էր ապրում, ամենատեղմ ժամկետներով վերջնագրեր էին ներկայացնում. «Թողնել հեռանալ մեկ, երկու ժամ, լավագույն դեպքում՝ քսանչորս ժամ հետո»,- վերհիշում է Ա. Լեբեդը[2503]: Ադրբեջանական հրոսակախմբերի՝ հայ ընտանիքների նկատմամբ գործադրվող ոճրագործությունները չարունակվեցին նաև Բաքվի կայարանում:

Ադրբեջանական իշխանությունների կողմից բռնարարքների գործադրման հետևանքով 1988 թ. նոյեմբերի կեսերից հայ բնակչությունը զանգվածաբար արտաքսվեց իր բուն հայրենի տարածքներից՝ Դանձակից, Շամխորից, Քարհատից (Դաշկեսան), Նախիջևա-

---

[2500] Տե՛ս Լեբեդ Ա., Յավ վասն տերության, Երևան, 1997, էջ 191, 197:
[2501] Նույն տեղում, էջ 199:
[2502] Նույն տեղում:
[2503] Նույն տեղում, էջ 201:

նում հայկական մնացած միակ գյուղից՝ Ջնաբերդից և այլ շրջաններից[2504]: Հայերի զանգվածային բռնագաղթը շարունակվեց նաև Բաքվից, Շամախիից, Շաքիից և Կուբի ձախափնյակի հայաբնակ այլ վայրերից: Հայ բնակչության տեղահանման ժամանակ աղբրբեջանական իշխանությունների կողմից գործադրվում էին հարկադրանքի բոլոր միջոցները: Բռնագաղթի երկրորդ փուլը նույնպես ուղեկցվում էր բռնություններով, ջարդերով ու կողոպուտներով[2505]: Ոգևորված հանրապետության ղեկավարների հակահայկական քաղաքականությունից՝ ադրբեջանական հրոսակախմբերը մտնում էին հայաբնակ բնակավայրերը և կոտորածի ահի տակ պարտադրում գաղթել՝ տալով ընդամենը մեկ կամ երկու ժամ ժամանակ: Բնական է, որ այդ ընթացքում գյուղերի բնակչությունը չէր հասցնում իր հետ ամբողջովին վերցնել տարիների ընթացքում ստեղծած գույքը: 1988 թ. նոյեմբերի 22-ից մինչև 1989 թ. հուլիսի վերջը Հայաստանի Հանրապետություն ժամանեցին ավելի քան 198.898 հայ փախստականներ, որոնք հանգրվանեցին Երևանում, նաև Մասիսի, Արարատի, Տաշիրի, Վարդենիսի, Հրազդանի, Աբովյանի և Հանրապետության այլ շրջաններում[2506]: Բռնագաղթածների կողմից Հանրապետության մի քանի շրջաններում էլ հիմնվեցին համանուն նոր բնակավայրեր[2507]:

Հայ բնակչության հանդեպ բռնարարքների գործադրման նոր սկիզբ դրվեց 1989 թ. հուլիս-օգոստոսից, որով սկիզբ առավ երրորդ մեծ բռնագաղթը[2508]: Դրությունը տագնապալից էր հատկապես Բաքվում, որի 1.794.900[2509] բնակիչներից հայեր էին 200.000-ը[2510]: Բաքու քաղաքի հատուկ շրջանի պարետ գեներալ-լեյտենանտ Մ.

[2504] Մանրամասն տե՛ս Մելիք-Շահնազարյան Լ., Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1998:

[2505] Տե՛ս Արշակյան Ա., նշվ. աշխ., էջ 170:

[2506] Տե՛ս Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991, էջ 108-109:

[2507] Աշտարակի շրջանի Շամիրամի գյուղական խորհրդի վարչատարածքում հաստատվել են Շամախու շրջանի Մատրասա գյուղից բռնագաղթածները՝ հիմնելով Դպրեվան կամ Նոր Մադրասա բնակավայրը, որը 1992 թ. մարտի 2-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով ընդգրկվել է Հայաստանի Հանրապետության բնակավայրերի ցանկի մեջ և կազմել գյուղական առանձին խորհուրդ (տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հ. 5, մարտի 15, 1992 թ.):

[2508] Տե՛ս Խոջաբեկյան Վ., Ցեղասպանությունը և հայաբափությունը Ադրբեջանում (1918-1990-ական թթ.), ՊԲՀ, Երևան, 2005, № 1, էջ 29:

[2509] Տե՛ս www. azstat.or

[2510] Տե՛ս Մոսեսովա Ի., Հովնանյան Ա., նշվ. աշխ., էջ 271, տե՛ս նաև Հովսեփյան Յու., նշվ. աշխ., էջ 28: Խորհրդային համամիութենական վերջին մարդահամարի՝ 1989 թ. հունվարի 12-ի տվյալների համաձայն՝ Բաքվում հայ բնակչության թիվը կազմում էր 179.900 (տե՛ս Юнусов А., Этнический состав Азербайджана (по переписи 1998 года) http://demoscope.ru/weekly/2004/0183/analit05.php. Սակայն 1989 թ. մարդահամարի տվյալները հետու են հավաստի լինելուց:

Կոլեսնիկովի 1989 թ. ապրիլի 16-ի տարածած հաղորդագրությունում մանավորապես ասվում է. «...վերջին ժամանակներս քաղաքի որոշ շրջաններում նրևան են եկել առանձին սադրիչներ, որոնք փորձում են բորբոքել կրքերը, երկպառակություններ սերմանել մարդկանց միջև և միտինգների ու ցույցերի կոչ են անում»[2511]: Նման պայմաններում քաղաքում սովորական դարձան հայ բնակիչներին հալածելու, ծեծելու և խոշտանգելու դեպքերը: Փողոց դուրս գալը դառնում էր անհնար: Այդ օրերին Բաքվում՝ հենց իր տան բակում, դազանաբար ծեծի է ենթարկվում Ավանեսովը, որը գլխուղեղի ծանր վնասվածքից մահանում է Հայաստան տեղափոխվելիս՝ Արտաշատի կայարանում[2512]:

Հայահալած քաղաքականությունը Բաքվում լայն ծավալ ստացավ, երբ 1989 թ. նոյեմբերին քաղաքում հանվեց պարետային ժամը, ինչի հետևանքով ադրբեջանական խուժանը դեկտեմբերի 25-ին վայրագորեն հարձակվեց Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վրա[2513]: Զկարողանալով ջարդել դուռը՝ հրոսակախումբը եկեղեցի մտավ դանգակատնից, ավտոկռունկների և ռազմական այլ տեխնիկայի օգնությամբ, քաղաքի իրավապահների ներկայությամբ: Գաղազած ամբոխը հրկիզեց եկեղեցին, որի հետևանքով այրվեցին մեծ քանակով եկեղեցական արժեքավոր գրքեր, սրբապատկերներ և կրոնական ամբողջ գույքը[2514]: Ականատեսը վկայում է. «Սարսափելի, անմոռանալի պատկեր: Հաղթական մռնչոց էր բարձրացել՝ վերևից թռչում էր այն ամենը, ինչ հնարավոր էր նետել՝ եկեղեցական գրքերը և նկարները, խաչերը, սրբապատկերները, ներսից կայծկլտում էին խարույկի բոցերը՝ փորձում էին հրդեհել եկեղեցին»[2515]: Տեղի ունեցած բարբարոսության առիթով Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանը դիմեց ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Յու. Խրիստորադնովին, որում ասվում էր. «Իմ պարտքն եմ համարում Ձեզ հայտնել, որ վերջին

[2511] «Կոմունիստ», Բաքու, 1989, ապրիլի 16, № 91:

[2512] Տե՛ս Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, էջ 123:

[2513] Ադրբեջանի հայոց թեմի վերջին առաջնորդն էր Անանիա եպս. Արաբաջյանը (1983-1989 դեկտեմբեր): 1980-ական թվականներին Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գործադիր մարմինը նախագահել է Ամալիա Բեգլարյանը: Նշված ժամանակահատվածում եկեղեցում հոգևոր հովիվներ են եղել Վարդան աբդ. Դիլանյանը և Աշոտ սրկ.Պողոսյանը (տե՛ս «Էջմիածին», 1985, Զ, էջ 36):

[2514] Տե՛ս Ջանիկյան Գ., Եղեռնապատում, «Վերածնված Հայաստան», Երևան, 1990, մարտ, № 3, էջ 3, տե՛ս նաև Աղաջանյան Գ., Բաց նամակ Բ. Վահաբզադեին և Ազարբայջանի մյուս տիտղոսավոր մյուալլիմներին, «Գրական թերթ», Երևան, 1990, փետրվարի 2, № 6:

[2515] Տե՛ս Մոսեսովա Ի., Հովնանյան Ա., նշվ. աշխ., էջ 21:

ժամանակներս հաճախակի են դարձել հայկական պատմական հուշարձանների ավերումներն ու պղծումներն Ադրբեջանական ԽՍՀ-ում: Սրտի ցավով հայտնում եմ, որ անցյալ տարվա դեկտեմբերի 25-ին ադրբեջանական ագրեսիայի ծայրահեղականները հրկիզել են Բաքու քաղաքի հայկական եկեղեցին, ինչի հետևանքով ոչնչացվել են եկեղեցական արժեքավոր գրքերը, սրբապատկերները, ամբողջ կրոնական դույքը: Հայ եկեղեցու և հավատացյալների անունից բողոքում ենք այդ սրբապղծության դեմ և խնդրում համապատասխան մարմիններից պահանջել ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որպեսզի մեղավորները պատասխանատվության ենթարկվեն»[2516]:

Այդ վայրագությանը հաջորդեցին Բաքվի հայերի դեմ 1990 թ. հունվարի 13-19-ը կազմակերպված ջարդերը, որոնք իրենց մեթոդներով հիշեցնում էին 1905 և 1918 թթ. կոտորածները: Սումգայիթում, հայերի պետականորին կազմակերպված սպանդը որպես ցեղասպանություն չդատապարտելու հետևանքով, ադրբեջանական իշխանություններն իրենց անպատժելիությանը վստահ, 1990 թ. հունվարին իրականացրին նաև Բաքվի հայերի ցեղասպանությունը:

Պետական մակարդակով կազմակերպված հայկական կոտորածները սկսվեցին 1990 թ. հունվարի 13-ին Բաքվում յոթանասուն հազարանոց միտինգում Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Աբդուլրախման Վեզիրովի հակահայ ելույթից հետո, երբ վերջինս հանդիսանց ժողովրդական ճակատի ներկայացուցիչներին և հայտնեց իր համերաշխությունը հայերի ջարդերի և բռնագաղթի ծրագրերի իրականացման գործում[2517]: *Միտինգից անմիջապես հետո զազազած ամբոխը, զինված ամենաարդիական զենքերով ու ավանդական յաթաղաններով, խմբերի բաժանվեց և բարբարոսության և վայրագության գծով իրենց նախահայր թուրքերի օրինակով սկսեց գրոհել հայերի բնակարանները: Այդ ընթացքում ամբոխը գտավ երեք հայի, այդ թվում մի հղի կնոջ, և վայրենաբար ողջ-ողջ այրեց նրանց*[2518]: *Ինչպես 1918 թ. սեպտեմբերյան կոտորածների ժամանակ, այնպես էլ 1990 թ. կոտորածներից առաջ, ըստ թաղամասերի ճշտվել էին հայերի բնակության հասցեները: Անգլիացի լրագրող Թոմաս դե Վաալիի հետ հարցազրույցում ժողովրդական*

[2516] Նույն տեղում, էջ 22:

[2517] Տե՛ս Ջանիկյան Գ., Եղեռնապատում, «Վերածնված Հայաստան», Երևան, 1990, մարտ, № 3, էջ 3, տե՛ս նաև **Чобанян С.**, նշվ. աշխ., стр. 19, տե՛ս նաև Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, էջ 276:

[2518] Տե՛ս Խոջաբեկյան Վ., Արցախը վտրծության ժամին, էջ 137:

ճակատից հեռացած Ալիլպադեն վկայել է. «...ջարդերից մի քանի օր առաջ Ռաշիդ Բեհբութովի փողոցում գտնվող ժողովրդական ճակատի կենտրոնական չենքի մոտ կախված էին հայերի ցուցակները՝ հասցեներով»[2519]:

Որ հայերի կոտորածները նախապատրաստված էին, վկայվում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երրորդ նստաշրջանում՝ 1990 թ. փետրվարի 19-ին երկու պալատների համատեղ նիստում ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Վ. Բակատինի ելույթում, որտեղ նշվում է, որ «Դրանք (հայերի ջարդերը - Գ. Ս.) հանկարծակի բռնկվեցին և շատ լավ էին կազմակերպված: Դա եղավ միտինգից հետո: Ըստ նախապես բաժանված հասցեների՝ մինչև 5 հազար մարդուց բաղկացած ամբոխը գնաց թալանելու և սպանելու հայ բնակչությանը»[2520]: Ադրբեջանական իշխանությունները ոչ միայն անտարբեր չէին, այլև հրահրում և ընթացք էին տալիս հայերի կոտորածներին: Ջարդերի ժամանակ միլիցիան համագործակցում էր ժողովրդական ճակատի հետ[2521]: Այսպիսով՝ փաստերը հավաստում են, որ Բաքվում հայերի ջարդերը կազմակերպվել են պետական բարձր մակարդակով: Հայերի ցեղասպանության քաղաքականությունն Ադրբեջանի իշխանությունները որդեգրել էին Թուրքիայից և մուսավաթական Ադրբեջանից:

Ադրբեջանական հրոսակախմբերը, հայերի կոտորածների գլխավոր համակարգողների, ժողովրդական ճակատի գործիչ Նեյմաթ Փանահովի ղեկավարությամբ, «Յուրաքանչյուր ադրբեջանցի պատասխանատվություն կկրի ողջ մնացած ամեն մի հայի համար», «Կեցցե՛ Բաքուն առանց հայերի», «Մա՛հ հայերին, հայերն այստեղ չեն ապրի» հակահայկական կարգախոսներով, 7 օր շարունակ անցնելով թաղից թաղ, հրկիզեցին հայերին պատկանող տները՝ առանց տարիքային խտրության գազանաբար սպանելով երեխաներին, կանանց ու տղամարդկանց, կողոպտելով նրանց ամբողջ ունեցվածքը (բնակարաններ, օժանդակ կառույցներ, տնային գույք, անձնական ավտոմեքենաներ, խնայբանկերում ունեցած ավանդներ, պետական և անձնական ապահովագրական գումարներ և այլն)[2522]:

[2519] Թոմաս դե Վաալ, Սև Այգի: Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջով, Երևան, 2007, էջ 139:

[2520] «Ավանգարդ», Երևան, 1990, մարտի 7, № 26, տե՛ս նաև **Чобанян С.**, նշվ. աշխ., стр. 169-170.

[2521] Տե՛ս Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, էջ 131:

[2522] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1176, ց. 1, գ. 57, թ. 11: Բաքվում հայ բնակչության դեմ իրականացված կոտորածների մասին հանգամանալի տե՛ս Մոսեսովա Ի., Հովնանյան

Այդ օրերին քաղաքի ամբողջ տարածքը վերածվել էր հայ բնակչության դանդվածային անարգել ջարդերի վայրի: Այդ առումով դեպքերի ականատեսների հուշագրություններն ունեն պատմական հավաստի վավերագրի արժեք, մանավանդ, եթե նկատի առնենք, որ դրանցից շատերը գրվել են իրադարձություններից անմիջապես հետո, թարմ տպավորությունների տակ: Բաքվի հայերի 1990 թ. հունվարի 13-19-ը իրագործված հայերի ջարդերի հուշապատումների շարքում որոշակի տեղ ունեն Բաքվում ծառայության մեջ գտնվող ռուս սպաների վկայությունները: Դեպքերի ականատես, Բաքվի Կասպյան նավատորմի ռուս սպա Ե. Սաֆարովը հունվարի 13-ի հայերի ջարդերի մասին վկայում է. «Ադրբեջանական զինված խմբերը, որոնց թիվը հասնում էր 20-30 հոգու, ներխուժում էին հայերի բնակարանները, տանտերերին սպանելուց հետո դիակները շպրտում էին պատուհաններից: «Շաֆագ» կինոթատրոնի մոտ խարույկի վրա կենդանի-կենդանի այրում էին երեխաներին»[2523]:

Հունվարի 13-ի երեկոյան Սեմաշկոյի անվան հիվանդանոց հասցրին առաջին զոհերին: Միայն երկու օրում զոհվել էր 44 հոգի, թալանվել, բռնազավթվել, հրկիզվել հայերին պատկանող ավելի քան 1000 բնակարան[2524]: Հունվարի 14-ին ֆրանսահայ հանրահայտ երգիչ Շառլ Ազնավուրը հեռագիր հղեց Մ. Գորբաչովին՝ խնդրելով

Ա., Բաքվի ջարդերը; **Мосесова И.**, Армяне Баку: бытие и исход (документы. Свидетельства очевидцев. Газетные и журнальные публикации. Факты и комментарии к ним), Ереван, 1998; Թովմասյան Վ., Աթաջանյան Վ., Ներսիսյան Յ., Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991; **Макси Н.**, Баку-90, или как сьели Жанну Бабаян (роман), Ереван, 2008.

[2523] Տե՛ս Продолжение геноцида армян. Азербайджан: конец XX века. Из воспоминений советских русских офицеров, Ереван, 2006, стр. 29 (բնագրում՝ «Групы молодых вооруженных азербайджанцев численностью человек по двадцать-тридцать врывались в квартиры армян, зверски убивали хозяев, не считаясь с возрастом и полом, после чего приступали к грабежу. К ним с энтузиазмом присоединялись соседи жертв, тут же захватывая освободившуюся квартиру, дрались между собой, не поделив что-нибудь из награбленного. Трупы выбрасывали из окна, и на улице над ними продолжали глумиться. Женщин и мальчиков, прежде чем убить, по очереди насиловали на глазах у всех. Дети не отставили от взрослых, тащили все, что могли унести, под одобрительные крики родителей. На площади Украины примерно сорок этих зверей насиловали пятнадцатилетнюю армянку, сменяя друг друга под восторженное улюлю канье их же женщин и детей. На улице Камо на балконной решетке распяли девочку лет десяти, она висела там до самого ввода войск. Около кинотеатра «Шафаг» на костре живьем жгли детей»).

[2524] Տե՛ս Ջանիկյան Գ., Եղեռնապատում, «Վերածնված Հայաստան», Երևան, 1990, մարտ, № 3, էջ 4:

վճռական միջամտություն՝ հայերի կոտորածն Ադրբեջանում կանխելու համար, սակայն վերջինս գործնականում ոչինչ չձեռնարկեց: Պատահական չէր, որ 1990 թ. հունվարի 14-ին Մոսկվայում Հայկական Հանրապետության մշտական ներկայացուցչությունում խորհրդային և արտասահմանյան լրագրողների համար տեղի ունեցած մամուլի ասուլիսից հետո փախստականներն ու բռնագաղթածները ցույցի դուրս եկան «Գորբաչով, քո խղճին է ծանրացած Բաքվի հայերի արյունը» պաստառով[2525]: Այդ օրերին, երբ Բաքվում հեղվում էր հայերի արյունը, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի հունվարի 15-ի որոշմամբ՝ արտակարգ դրություն հայտարարվեց ոչ թե Բաքվում, որով կկանխվեին հայերի կոտորածները, այլ՝ Արցախում[2526]: «Известия» լրագրի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ ոչ լրիվ տվյալներով հունվարի 16-ին զոհերի թիվը կազմում էր 33 հոգի[2527]: Նույն աղբյուրի համաձայն՝ հունվարի 17-ի դրությամբ զոհված հայերի թիվն արդեն 45 էր[2528]:

Հայերի ջարդերի ժամանակ պասսիվ դիրք էր գրավել ադրբեջանական միլիցիան: Ականատեսը վկայում է. «Երբ հունվարի 13-ին հակահայկական միտինգից հետո վայրագ ամբոխը հարձակվեց միլիցիայի 8-րդ բաժանմունքի դիմացի շենքի վրա, զինվորները (մոտ 120 հոգի) ոչ մի միջոց չձեռնարկեցին»[2529]: Մեկ այլ ականատես վկայում է. «Սպանդ, կոտորածներ և ջարդեր... Պատչգամբներից նետվող կենդանի մարդիկ և մոխրացած դիակներ կամուրջների: Ամբոխ, որը բռնաբարում է երկու կանանց՝ մոր ու աղջկա, կենտրոնական երկու փողոցների խաչմերուկում, պատուհաններից և ծառերից կախված ականատեսների ծաղր ու ծանակի ներքո, որն իր զոհերին ոտքերով, երկաթե ձողերով, փայտերով ծեծելով՝ դարձնում է արյունոտ մի զանգված, խառնաճաղակ: Եվ շատ այլ դեպքեր, որ անհասկանալի է մարդկային մտքին»[2530]: Գազանություններն ու վայրագությունները շարունակվեցին հիվանդանոց տեղափոխված վիրավոր հայերի նկատմամբ, որոնց ուղղակի դուրս էին նետում պատուհաններից[2531]: Կարելի է բերել նման բազմաթիվ այլ վկայու-

---

[2525] Տե՛ս նույն տեղում:
[2526] Տե՛ս Արշակյան Ա., նշվ. աշխ., էջ 113:
[2527] Տե՛ս «Известия», Москва, 1990, 16 января, № 16.
[2528] Տե՛ս «Известия», Москва, 1990, 19 января, № 19.
[2529] Սումգայիթը շարունակվում է (պատմում է հունվարի 15-ի դեպքերի ականատեսը), «Ավանգարդ», Երևան, 1990, հունվարի 19, № 8:
[2530] Մոսեսովա Ի., Հովնանյան Ա., նշվ. աշխ., էջ 35:
[2531] Տե՛ս նույն տեղում, էջ 118:

թյուններ, որոնց դգալի մասը հրապարակվել է ժամանակի մամուլում, Ի. Մոսեսովայի և Ա. Հովնանյանի՝ «Բաքվի ջարդերը» փաստաթղթերի և վկայությունների հարուստ և խիստ արժեքավոր ժողովածուում:

Պատմությունը կրկնվում էր: Նման վայրագությունների էին դիմել նաև թուրք-թաթարները 1918 թ. սեպտեմբերին: Այդ թվականի ջարդերը վերապրած Սոֆյա Խաչատուրովան, որին Երևանի օդանավակայանից ուղիղ տեղափոխել էին հիվանդանոց, պատմել է հետևյալը. «Վերջին օրերին առավոտից գիշեր դռանս խփում էին, չէի բացում: Ի վերջո ջարդեցին, տնտան պառկած եմ մահճակալին: Խնդրեցի՝ թե եկել ես ինձ սպանելու, շուտ արեք, դուբ մի տանջեք... Փողոց չպրտեցին...Նման բան ես մեկ էլ տեսել եմ 1918 թվականին, երբ փոքր աղջիկ էի: Այն ժամանակ սպանեցին հորս, եղբորս ու քրոջս: Մի՞թե այսքան ապրեցի, որ նույն բաներին ականատես լինեմ»[2532]: Ջարդերից փրկված Հակոբ Բեզիրջանյանի վկայությամբ՝ «...գազազած ամբոխն անում է այն, ինչ երկու տարի առաջ տեղի ունեցավ Սումգայիթում: Այդ գազանաբարո մարդիկ տնետուն բնկած որսում են հայերի, ոտանջամահ անում: Իսկ նթե նրանց չեն գտնում, իրենց վրեժը հանում են հայերի լքված բնակարաններից, այն բնակարաններից, որ մեր հայրենակիցները թողել են և փախել...»[2533]: Այս և նման դեպքերն ամենայն որոշակիությամբ ցույց տվեցին, թե ադրբեջանցիների համար որքան հեշտ ու բնական է ողջ մարդկանց խոշտանգելն ու այրելը, ինչպիսի վայրենի հաճույք են ստանում նրեխաներին բարձրահարկ շենքերի լուսամուտներից փողոց շպրտելուց և այլն: Ադրբեջանցիների վայրագ գործելակերպին իրավացիորեն հետևյալ բնութագրումն է տվել հոդվածագիր Ա. Նալչաջյանը. «Մենք գործ ունենք վայրենության աստիճանի վրա գտնվող սադո-մազոխիստական բարդույթ ունեցող անհատների հսկայական զանգվածների հետ...»[2534]: Բաքվում կոտորածի ենթարկված հայերի թիվը ոչ լրիվ տվյալներով անցնում է 400-ից[2535]:

[2532] Տե՛ս Ջանիկյան Գ., Եղեռնապատում, «Վերածնված Հայաստան», Երևան, 1990, մարտ, № 3, էջ 5:

[2533] «Ավանգարդ», Երևան, 1990, հունվարի 17, № 7:

[2534] Նալչաջյան Ա., Ազգային հոգեբանություն (այսպես կոչված «ադրբեջանական գործոնի» մասին և ովքեր են մազոխիստները), Երևան, 1993, էջ 22:

[2535] Տե՛ս Արշակյան Ա., նշվ. աշխ., էջ 114, տե՛ս նաև Մարուքեան Յ., Ցեղասպանութիւնների շարքեր: Պատմական յիշողութիւնը եւ ինքնութիւնը տարեթուերում ու տեղանուններում (ըստ Ղարաբաղեան շարժման նիւթերի), «ՀՀՀ», հ. ԻԷ, Պէյրութ,

Բաքվում 1990 թ. հունվարին տեղի ունեցած հայերի ցեղասպանությամբ սկիզբ դրվեց Ադրբեջանից հայերի բռնագաղթի չորրորդ փուլին: 1990 թ. հունվարյան կոտորածներից մազապուրծ տասնյակ հազարավոր հայեր տեղափոխվեցին Հայաստանի Հանրապետություն, հազարավոր ընտանիքներ էլ, ճակատագրի հեգնանքով, Բաքվի նավահանգստից լաստանավերով դարձյալ հասցվեցին կասպից ծովի հանդիպակաց ափը՝ Թուրքմենիա՝ Կրասնովոդսկ քաղաք: Բռնագաղթածներից շատերն ադրբեջանցի հրոսակների պատճառած խոշտանգումների հետևանքով մահացան ճանապարհին: Ականատես վկայում է. «Երբ «Խորհրդային Կալմիկիա» նավը Թուրքմենիայի Կրասնովոդսկ քաղաքը հասավ, պարզվեց, որ մի տղամարդ ու կին՝ երկար տարիների ամուսիններ, չդիմանալով խոշտանգումներին, հոգևկան տառապանքներին, ճանապարհին հանկարծամահ են եղել»[2536]: Այդտեղից գաղթականներից շատերը մեկնեցին Երևան, Ստավրոպոլ, Կրասնոդար և այլ քաղաքներ[2537]:

Բաքվում հայերի օրեր տևող զանգվածային ջարդը հունվարի 19-ից դարձադրվեց նաև ռուս ընտանիքների նկատմամբ[2538]: Այս անգամ հրոսակների կարգախոսն էր՝ «Ռուսներ, քանի չուտ է, կորնեք, թե չէ կընկնենք հայերի օրը»[2539]: Խորհրդային զորքերը Բաքու մտան այն ժամանակ, երբ արդեն վտանգվում էր ռուս բնակչության ֆիզիկական գոյությունը և մանավանդ վտանգ էր սպառնում խորհրդային կարգերին Ադրբեջանում: Եթե Մ. Գորբաչովի հայտարարության համաձայն՝ բանակը Սումգայիթ մտավ «երեք ժամ ուշացումով», ապա տվյալ դեպքում այն Բաքու մտավ հայերի կոտորածներից մեկ շաբաթ անց[2540]:

1990 թ. հունվարի 20-ի դրությամբ Բաքվից Երևան բռնագաղթած հայերի թիվը հասավ 5000-ի, որոնցից 200-ը բուժվում էին հիվանդանոցներում: Մոտ 6000 հոգի կուտակվել էր Կրասնովոդսկի

2007, էջ 312, տե՛ս նաև նույնի՝ Հայ ինքնության պատկերագրությունը: Ցեղասպանության հիշողությունը և դարաբաղյան շարժումը, հ. Ա, Երևան, 2009, էջ 163:

[2536] Զանիկյան Գ., Եղեռնապատում, «Վերածնված Հայաստան», Երևան, 1990, մարտ, № 3, էջ 6:

[2537] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», Երևան, 1990, հունվարի 25, № 21:

[2538] Տե՛ս Гарибян И., Как русских гнали из Баку, «Գարդմանի կանչ», Երևան, 2011, № 1:

[2539] Զանիկյան Գ., Եղեռնապատում, «Վերածնված Հայաստան», Երևան, 1990, մարտ, № 3, էջ 6:

[2540] Տե՛ս Հովսեփյան Յու., նշվ. աշխ., էջ 27:

նավահանգստում[2541]: Հունվարի 21-ի դրությամբ Բաքվից Մոսկվա բռնագաղթած հայերի ու ռուս զինվորականների ընտանիքների անդամների թիվը հասնում էր մոտ 50000-ի[2542]: 1990 թ. հունվարին, ընդամենը 10-15 օրում, Հայաստանի Հանրապետություն բռնագաղթեց ավելի քան 10000 փախստական, որոնց վկայությամբ Բաքվում կատարված վայրագությունները գերազանցել են նույնիսկ սումգայիթյան ողբերգության հրեշավոր պատկերները[2543]: Բռնագաղթածների գերակշռող մասը բարձրագույն կրթությամբ անձինք էին, մտավորականներ, մշակույթի գործիչներ, այլ խոսքով՝ այդ տարիների Բաքվի հասարակության սերուցքը:

Բաքվում և հարակից շրջաններում վանդալիզմի և եղեռնագործության երևույթները խոտագույնս դատապարտեց Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհուրդը: 1990 թ. փետրվարի 19-ի որոշման մեջ ասված է. «Պահանջել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդից ճանաչել և դատապարտել 1990 թվականի հունվարին Բաքվում և Ադրբեջանական ԽՍՀ մի շարք այլ բնակավայրերում հայերի ցեղասպանությունը»[2544]: Հիշատակության է արժանի այն հանգամանքը, որ Բաքվի հայերի ցեղասպանության և ադրբեջանցիների վանդալիզմի մասին իրենց վրդովմունքը հայտնեցին նաև օտարերկրյա քաղաքական գործիչները: ԱՄՆ-ի արտաքին հանձնաժողովի նախագահ, սենատոր Կրեյբորն Պելը Մոսկվայում ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Է. Շևարդնաձեի հետ ունեցած հանդիպումից հետո թղթակիցներին ասել է. «Ես խորապես ցնցված ու ճնշված եմ ԽՍՀՄ-ում ադրբեջանցիների իրագործած հայկական ջարդերի դաժանությամբ: Խորհրդային կառավարությունը պետք է ամեն ինչ անի հայ ազգաբնակչության պաշտպանելու համար»[2545]:

Ցեղասպանության և բռնագաղթի հետևանքով Բաքվի հայությունը զրկվեց իր բնօրրանը համարվող քաղաքից և ունեցվածքից, թողնելով այնտեղ ավելի քան 92000 տուն և բնակարան (նկատի ունենանք, որ հայերը հիմնականում բնակվել են Բաքվի կենտ-

---

[2541] Տե՛ս Ջանիկյան Գ., Եղեռնապատում, «Վերածնված Հայաստան», Երևան, 1990, մարտ, № 3, էջ 7:
[2542] Տե՛ս նույն տեղում, էջ 11:
[2543] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1176, ց. 1, գ. 57, թ. 27:
[2544] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», Երևան, 1990, փետրվարի 16, № 39:
[2545] Ջանիկյան Գ., Եղեռնապատում, «Վերածնված Հայաստան», Երևան, 1990, մարտ, № 3, էջ 10:

բռնական վտղոցներում)[2546]*: Ողջ մնացած հայերը դատապարտված էին սվսվել աշխարհով մեկ: Ադրբեջանցիները, հավատարիմ իրենց նախնյաց՝ թյուրք-թաթարների՝ սվարառու, ուրիշի հաշվին ապրելու յուրատիպ դործելակերպին, 1905, ապա՝ 1918-1920 թթ. օրինակով անկասելի մոլուցքով կրկին յուրացրին կոտորածի ենթարկված և բռնագաղթած հայերի տարիներ ի վեր քրտնաջան աշխատանքով ստեղծած տասնյակ միլիոնների հասնող չարժական և անշարժ դույքը: Այսպիսով՝ պատմությունը ցույց տվեց, որ Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները մուսավաթականների ոճրագործ, արյան ծարավի արժանի ժառանգորդն են և, նույնիսկ, գերազանցեցին նրանց հայերի նկատմամբ դործած նախճիրների ասպարեզում:*

Բաքվի հայերի ցեղասպանությանը հաջորդեց Ադրբեջանից ավելի քան 361.000 հայերի վերջին հատվածի բռնագաղթը[2547]*: Ընդհանուր առմամբ, Հայաստանում ապաստանեց 260.000 փախստական (67000 ընտանիք), իսկ ավելի քան 90000-ը՝ Ռուսաստանում, Ուկրաինայում և այլ պետություններում*[2548]*, որով և ավարտվեց Արևելյան Այսրկովկասում՝ կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքում, հայերի XX դարի հերոսապատումներով և մաքառումներով լի պատմությունը... Բաքուն Ապշերոնյան թերակղզուց բռնագաղթի ենթարկված հայության հիշողության մեջ մնաց որպես երեք ջարդերի (1905, 1918, 1990 թթ.) քաղաք:*

Այսպիսով՝ Բաքվում հայ բնակչության դեմ 1988-1990 թթ. կատարվածը ցեղասպանություն էր, որի մանրամասները բազմաթիվ

[2546] Տե՛ս Մելիք-Շահնազարյան Լ., նշվ. աշխ., էջ 30: Ի դեպ, Ադրբեջանում բողած իրենց բնակարանների փոխհատուցման ուղղությամբ աշխատանքներն արդեն 4 տարի մեկնարկել են: Ստրասբուրգի մարդու իրավունքների դատարանում ներկայացվում են անհատական հայցեր՝ այս կամ այն ընտանիքն ընդդեմ Ադրբեջանի կառավարության՝ բողնված ունեցվածքի փոխհատուցման հարցով: Ներկայացված հայցերի թիվը հասնում է 1100-ի: Թեև դրանք ընդունվել են քննության, սակայն վերջնական որոշում դեռևս չի կայացվել: (տե՛ս Մուրադյան Թ., Բաքու՝ երեք ջարդերի քաղաք, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2011, հունվարի 15, № 5):

[2547] Տե՛ս Խոջաբեկյան Վ., Ցեղասպանությունը և հայաթափությունը Ադրբեջանում, էջ 40: 1988-1990 pp. բռնագաղթի հետևանքով Բաքվում մնացին միայն ռուսական անձնագրերով այն սակավաթիվ հայուհիները, որոնց ամուսինները ադրբեջանցիներ էին (տե՛ս **Гусейнова С.**, Бакинские армяне: этническая идентичность в контексте повсдневности, Южный Кавказ: территории, истории, люди. Сборник статей, (Henrich Boll. Stiftung), Тбилиси, 2006, стр. 106-131, տե՛ս նաև **Галичян Р.**, Мифологизация истории. Азербайджан, Армения, вымыслы и факты, Ереван, 2010, стр. 153*)*.

[2548] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1176, ց. 1, գ. 57, թ. 27:

զուգահեռներով աղերսվում էին 1905 թ., ապա՝ 1918-1920 թթ. կոտորածների հետ: Առկա փաստերից հետևում է, որ Ադրբեջանում և նրա մայրաքաղաք Բաքվում, անկախ այդտեղ հաստատված քաղաքական վարչաձևերից (մուսավաթական, խորհրդային) հայ բնակչության նկատմամբ հետևողականորեն կիրառվել է հալածանքի, ազգային խտրականության և էթնիկ զտման քաղաքականություն: Հաստատված է նաև, որ հայ բնակչությունն այդ քաղաքականությանն է ենթարկվել իր ազգային պատկանելության և հայրենի բնօրրանից դուրս մղվելու համար, ինչը և ցեղասպանությունը բնորոշող հանցագործություն է: Բացի քրեական հանցանքից, ցեղասպանությունը մարդու իրավունքների ոտնահարում է, ինչն ադրբեջանական իշխանությունների կողմից տարիներ ի վեր հետևողականորեն տարվել է Բաքվի հայ բնակչության նկատմամբ: Փաստ, որն Ադրբեջանի կառավարությունը չի կարող սքողել:

Չնայած այն հանգամանքին, որ 1991 թ. հոկտեմբերի 18-ի Ադրբեջանի Հանրապետության պետական անկախությունը վերականգնելու մասին սահմանադրական ակտի ընդհանուր դրույթների բաժնի երկրորդ հոդվածով Ադրբեջանի Հանրապետությունը հռչակվել է 1918 թ. մայիսի 28-ից մինչև 1920 թ. ապրիլի 28-ը գոյություն ունեցած Ադրբեջանի Հանրապետության իրավահաջորդը, ինչով փորձ է արվում կոծկել և խուսափել Խորհրդային Ադրբեջանի կողմից Սումգայիթում, Բաքվում, Գանձակում և հայաբնակ այլ վայրերում հայերի ցեղասպանության նոր դրսևորումների իրողությունից և պատասխանատվությունից, այդուհանդերձ, ըստ միջազգային իրավունքի՝ Ադրբեջանը չի կարող և խուսափել նաև այդ հանցագործությունների իրավաքաղաքական պատասխանատվությունից:

Ելնելով վերը նշվածից արձանագրենք. ցեղասպանության կանխարգելման և նրա համար պատժի մասին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի դրույթները (ուժի մեջ է մտել 1951 թ. հունվարի 12-ից) լիովին համընկնում են այն ամենին, ինչը կատարվել է Բաքվի տեղաբնիկ հայ բնակչության հետ 1918-1920, ապա՝ 1988-1990 թթ.: Քանի որ կոնվենցիայի 2-րդ հոդվածը ցեղասպանությունը բնութագրում է իբրև կանխամտածված գործողությունների իրագործում[2549], հարկ է նշել, որ փաստերն անհերքելիորեն ապացուցում են, որ Ադրբեջանում իրականացված հայերի ցեղասպանության նպատակը եղել է ոչ միայն

[2549] Международное гуманитарное право в документах, Москва, 1996, стр. 123-127.

նրանց տեղահանությունը, այլև ֆիզիկական բնաջնջումն ու գոյության միջոցներից նպատակաուղղված զրկելը: Ավելացնենք նաև, որ ցեղասպանությունը դասվում է միջազգային այն հանցագործությունների շարքը, որոնք չունեն վաղեմության ժամկետ:

Հետևաբար, հայ ժողովրդի մի մեծ հատվածի նկատմամբ իրականացված հանցագործության համար Ադրբեջանի Հանրապետությունը պետք է պատասխանատվություն կրի, պաշտոնապես ընդունի ցեղասպանության փաստը և հատուցի հասցված նյութական և բարոյական վնասները: Դա են պահանջում միջազգային իրավունքը, մարդկային խիղճն ու առողջ բանականությունը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ճատենագրական, վիմագիր և վավերագիր աղբյուրների վկայությամբ՝ Արևելյան Այսրկովկասում՝ Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի և Բաքու քաղաք ընկած տարածքում, հայերը բնակվել են վաղ ժամանակներից: Լինելով Բաքվի տեղաբնիկ և մշակութակերտ ժողովուրդներից մեկը՝ հայերն ակտիվորեն մասնակցել են քաղաքի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային կյանքին և ստեղծել հարուստ պատմություն:

Եթե նախապես հայահոծ խոշոր կենտրոն էր Շամախի քաղաքն իր հարակից հայկական գյուղերով, ապա XIX դարի 60-ական թվականներից այդպիսին էր նաև Բաքուն՝ կապված նավթարդյունաբերության բուռն զարգացման հետ: Բաքու քաղաքի հայ բնակչության հետագա ստվարացումը հիմնականում պայմանավորված էր գյուղում դրամատիրական հարաբերությունների հաստատման հետևանքով ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմաններով, երբ լեռնային և նախալեռնային շրջանների սակավահող ու հողազուրկ գյուղացիները պանդվածային կերպով մեկնում էին քաղաք: Արդեն XIX դարավերջին հայ բնակչությունը համարվում էր քաղաքի ստվար էթնիկ հանրությունների մեկը:

Մեծ էր Բաքվի հայության դերը մինչև XIX դարի վերջերը խիստ հետամնաց այդ բնակավայրի սոցիալ-տնտեսական և կրթամշակութային կյանքի վերելքն ապահովելու գործում: Հայ բնակչությունն առաջնակարգ դիրքեր էր գրավում տնտեսության և առաջին հերթին՝ նավթարդյունաբերության ու առևտրի տարբեր ոլորտներում՝ պառնալով Բաքվի քաղաքակրթության պարպացման առաջամարտիկներից մեկը:

Տեղի հայերը գործուն մասնակցություն ունեին քաղաքի տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում: Հայ առևտրականների ու արդյունաբերողների հիմնած հայանուն ընկերությունները մեծ դեր խաղացին Ապշերոնյան թերակղզու նավթի արդյունահանման և վաճառքի, առևտրաարդյունաբերության մի շարք ճյուղերի, փիննանսավարկային և բանկային համակարգերի կազմակերպման գործում: Որպես այս ամենի արդյունք՝ XIX դ. վերջին և XX դ. սկզբներին Բաքվում արդեն կար ձևավորված և բավականին ազդեցիկ հայ առևտրաարդյունաբերական բուրժուազիա: Տնտեսական աշխուժացման պայմաններում Բաքվում կարճ ժամանակամիջոցում կազմավորվեցին հայկական բարեգործական մի շարք միություններ, որոնց

կազմակերպած հայապահպան բազմաթիվ ձեռնարկումների շնորհիվ զգալիորեն առաջ ընթացավ ազգային սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքը:

Բաղաքի հայ բնակչությունն ապրում էր հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և կրթամշակութային կյանքի վերելք, երբ կովկասյան թաթարները, տուրք տալով համաթուրքականության քարոզչությանը, ցարական կառավարության ակնհայտ օժանդակությամբ Բաքվում 1905 թ. կազմակերպեցին հայերի ջարդեր, որոնց հետևանքով նվազեց ոչ միայն հայ բնակչության թիվը, այլև ապրելու համար ստեղծվեցին արհեստական խոչընդոտներ:

Բաքու քաղաքի և Համանուն նահանգի հայությունը ծանր հարված ստացավ հատկապես 1918 թ., երբ թուրքական զորքերն արշավեցին Այսրկովկաս և հասան մինչև Բաքու: Այդ արշավանքով փորձ էր արվում իրականացնել նաև համաթուրքականության ծրագրով նախատեսված Օղուզական պետության ստեղծումը, որով Սև ծովից մինչև Կասպից ծով (Բաթումից մինչև Բաքու) ընկած տարածքում Թուրքիայի խնամակալության ներքո նախատեսվում էր ստեղծել Մեծ Ադրբեջան նոր պետությունը՝ կամրջելով Թուրքիան Կովկասի և Միջին Ասիայի թրքախոս ժողովուրդների հետ: Այդ ծրագիրը պետք է իրականացվեր նաև արևելահայության կոտորածների, բռնի մահմեդականացման ու տեղահանության ճանապարհով:

Բաքվի դեմ արշավանքի ընթացքում կոտորածի ու տեղահանության ենթարկվեց Գանձակ-Ելիզավետպոլի (Նուխի և Արեշ գավառներ) և Բաքվի նահանգների հայկական գյուղերի բնակչության զգալի մասը: Բաքվի հայերի չորսամսյա հերոսական ինքնապաշտպանական մարտերից հետո մնձաթիվ թուրքական զորամասերը սեպտեմբերի 15-ին դրավեցին Բաքուն: Թուրքերը կովկասյան թաթարների հրոսակախմբերի հետ միասին 3 օր շարունակ (սեպտեմբերի 15-17-ը) գազանաբար կոտորեցին ավելի քան 30000 հայերի: Ավերվեցին և ոչնչացվեցին մատուռներն ու եկեղեցիները, այսինքն՝ հայ բնակչության նկատմամբ իրականացվեց նաև մշակութային ցեղասպանություն: Ֆիզիկական բնաջնջման և բռնի տեղահանման հանցավոր քաղաքականությունը շարունակվեց մուսավաթական Ադրբեջանի գոյության շրջանում (1918-1920 թթ.): Բաքվում և Նահանգում հայ բնակչությունը ցեղասպանության ենթարկվեց իր բնօրրանում այնպես, ինչպես երիտթուրքերն իրագործեցին արևմտահայերի բնաջնջումը 1915-1916 թթ. Արևմտյան Հայաստանում:

Ադրբեջանի խորհրդայնացումը չկասեցրեց նախորդ իշխանությունների կողմից վարվող հայահալած քաղաքականությունը. այն շարունակվեց խորհրդային իշխանության 70-ամյա տևողության տարիներին: Բաքվում հայ բնակչությանն իրավազրկելու, ճնշելու և հալածելու քաղաքականությանը հաջորդեցին Բաքվի հայերի դեմ 1990 թ. հունվարին կազմակերպված ջարդերը: Հայերի ցեղասպանությանը հաջորդեց Բաքվից հայերի վերջին հատվածի բռնագաղթը:

* * *

Ի եզրափակումն սույն աշխատության, հարկ ենք համարում խոսել նաև հայերի ցեղասպանությունից և բռնագաղթից հետո Բաքվում պետական մակարդակով հայկական հուշարձանների ոչնչացման և հակահայկական քաղաքականության որոշ դրսևորումների մասին[2550]:

Ջարդարարության առաջին թիրախը հայկական դերեզմանատունն էր: Բնիկ բաքվեցի, Խորհրդային միության գեներալ-մայոր Արտեմ Խանդանյանը իր ծնողների շիրիմները Հայաստան տեղափոխելու նպատակով 1990 թ. գարնանը Խարկովից մեկնելով Բաքու, վկայում է, որ հայկական դերեզմանատունը տեսել է սոսկալի վիճակում: Հուշարձանները տապալված և ջարդված էին, տապանաքարերը՝ ներկված, իսկ գրանիտե տապանաքարերը տեղահանվում և վաճառվում էին ադրբեջանցիների կողմից[2551]:

Բարբարոսական հաջորդ ակտն իրագործվեց Սբ. Աստվածածին եկեղեցու նկատմամբ, որը դեռևս առանց խաչերի կանգուն վիճակում էր: Անգլիացի լրագրող Թոմաս դե Վաալը վկայում է հետևյալը. «...Հին քաղաքում՝ Կույս Մարիամ մատուռի տեղում, այսօր դատարկ ու ամայի տարածք է: 1992 թվականին՝ Ղարաբաղյան պատերազմի ամենաթեժ ժամանակաշրջանում, Բաքվում աշխատած դիվա-

---

[2550] Ադրբեջանի հակահայկական քաղաքականության հանգամանալի քննությունը տե՛ս Этническая принадлежность в политическом и общественном дискурсе современного Азербайджана (на примере антиармянских материалов), подготовил **Демоян Г.**, Ереван, 2004; նույնի՝ Հակահայկականութիւնը Ադրբեջանի ու Վրաստանի քաղաքական-հասարակական կեանքում, «Դրօշակ», Երեւան, յունուար-մարտ, 2005, № 1, էջ 43-55, Գաբրճեան Ա., Պայքար ընդդէմ Ատրպէյճանի հակահայ քաղաքականութեան եւ անոնց ապատեղեկատուութեան (Հայ Դատ), Հալէպ, 2009, Նահապետյան Հ., Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործակցությունը, Երևան, 2010 :

[2551] Տե՛ս **Ханданян А.**, Боль оставленных могил, «Армянский вестник», Москва, 1999, № 1-2, стр. 58.

նագետներից մեկի խոսքերով, ինքն ականատես է եղել, թե ինչպես էր գետնին հավասարեցվում մատուռը»[2552]: Քանդված եկեղեցու տեղում կառուցվել է թեյարան[2553]:

Ադրբեջանում տիրող հակահայկական սանձարձակ տրամադրությունների հետևանք էր 2004 թ. փետրվարի 19-ին Բուդապեշտում ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում անգլիերենի դասընթացների մասնակից հայ սպա Գուրգեն Մարգարյանի գաղանաբար սպանությունն ադրբեջանցի «սպա» Ռամիլ Սաֆարովի ձեռքով: Պաշտոնական Բաքուն մարդասպանի այդ քայլն անուղղակիորեն ոչ միայն արդարացրեց, այլև փորձեց նրան հերոսացնել: Դեռ ավելին, Ադրբեջանի մարդու իրավունքների պաշտպան Լ. Սուլեյմանովան այդ մարդասպանությունը դիտեց որպես «Ադրբեջանի երիտասարդության համար ընդօրինակման արժանի արարք»[2554]:

Պատմական Ջուղայի հայկական հուշարձանների վերացման քաղաքականության շարունակությունն պետք է համարել նաև Բաքվի Մոնտինի շրջանում գտնվող «Նարիմանովյան» քրիստոնեական գերեզմանոցի 2007 թ. սեպտեմբերին վերջնական ավերման փաստը (այդտեղ էին ամփոփված Բաքվի հայ մի շարք երևելիների գերեզմանները՝ Ա. Մայիլյան և ուրիշներ): Նախքան ավերումը գերեզմանոցը վերածվել էր աղբանոցի: 2009 թ. հունվարին բարբարոսաբար ավերվեց նաև Բաքվի 26 կոմիսարների դամբարանը[2555]:

Բաքվի հայության ցեղասպանությունից և բռնագաղթից հետո որպես միակ անխոս վկա՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցին էր: Ադրբեջանական հրոսակների կողմից 1989 թ. դեկտեմբերի 25-ին եկեղեցին հրկիզելուց և պղծելուց հետո իշխանությունները չենք օգտագործում են այլ նպատակներով: Նախապես այն տրամադրվում է գիտաարտադրական վարչության չինարարական կազ-

---

[2552] Թոմաս դե Վաալ, նշվ. աշխ., էջ 155:

[2553] Տե՛ս Ստեփանյան Գ., Համառոտ ակնարկ Բաքու քաղաքի հայկական եկեղեցիների պատմության, էջ 153:

[2554] Ընդդեմ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության, կազմող՝ Ալվրցյան Հ., էջ 41:

[2555] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2007, սեպտեմբերի 19, № 169, տե՛ս նաև Могилы предков, «Анив», Минск, 2009, № 1, стр. 65, տե՛ս նաև Հայկական հուշարձանների վիճակը Ադրբեջանում, «Վարձք». Երևան. 2010 դեկտեմբերի -2011 ապրիլ, № 3, էջ 58-59:

մակերպութեյանը[2556], իսկ զանգակատունն օգտագործվում էր որպես բիլիարդի սրահ[2557]: Այնուհետև չննքն օգտագործվում է որպես դրքերի պահեստ: 2009 թ. հուլիսի 3-ին, երբ մի խումբ հայ (ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Սմբատյան, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հերմինե Նազդալյան, Ս. Փարաջանովի թանգարանի տնօրեն Զ. Սարգսյան, «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյան, Արցախից բժշկուհի Լյուդմիլա Գրիգորյան) և ադրբեջանցի մտավորականներ ու քաղաքական գործիչներ, ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի խորհրդական, միջազգային մշակութային համագործակցության գծով հատուկ ներկայացուցիչ Միխայիլ Շվիդկովի, ՌԴ-ում Հայաստանի և Ադրբեջանի դեսպանների ու երկու երկրների նախագահների աջակցությամբ, Ստեփանակերտ-Երևան-Բաքու երթուղով այցելում են Բաքու[2558], եկեղեցին տեսնում են անչուք վիճակում. գմբեթից և զանգակատնից բացակայում են խաչերը, փայտյա զարդաքանդակ գոները փոխարինվել էին երկաթյա կոնստրուկցիաներով, երկու պատուհանները չարված էին պատով, քերված էին հյուսիսային և հարավային մուտքերը երկու կողմից երիզող զույգ խաչքարերը: Հակառակ Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի՝ Լոնդոնի Chatam House-ում արած ստահոդ այն հայտարարության, թե իբր եկեղեցին վերականգնված է՝ Զ. Սարգսյանը նկարագրում է հետևյալը. «Հայկական եկեղեցին նորոգված չէր: Հայկական արձանագրությունները ջնջված են, խաչը հանված է, իսկ ներսում ոչ թե դրադարան է, այլ դրքերի պահեստի նման մի բան: Կային, օրինակ, Լենինի հատորները»[2559]: Ադրբեջանցիների կողմից բարբարոսաբար քերված էին նաև հայկական արձանագրությունները և խաչերը, որոնք սովորաբար լինում են հայկական եկեղեցիների վրա: Զ. Սարգսյանը, որ չրջել է եկեղեցու չուրջը, չի հայտնաբերել դրանք:

Բացակայել են նաև եկեղեցու բակում կողք-կողքի թաղված հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, հայդուկային շարժման առաջին կազմակերպիչներից, ՀՅԴ կուսակցության նվիրյալ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Բագրատ (Գևորգ, Զաքի)

[2556] Տե՛ս Ռ. Թ., Հայկական եկեղեցի Բաքվի կենտրոնում, «Իրավունք», Երևան, 1998, նոյեմբերի 10-16, № 58:
[2557] Տե՛ս Թոմաս դե Վաալ, նշվ. աշխ., էջ 155:
[2558] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2009, հուլիսի 3, № 127:
[2559] «Ազգ», Երևան, 2009, հուլիսի 15, № 131:

վրդ. Թավաքալյանի (1850-1902)[2560] և հայ եկեղեցու երախտավորներից մեկի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, նշանավոր հայագետ ու աստվածաբան, Շամախիի հայոց թեմի 1914-1915 թթ. առաջնորդ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի տապանաքարերը[2561]:

Անշուշտ, նման քայլը բնորոշ է այդ երկրի ներկա տարածքներում հայկական մշակութային հուշարձանների, հայերի ունեցած ավանդի և ընդհանրապես որևէ հետքի բնաջնջման քաղաքականության տրամաբանությանը: Լ. Շիրինյանի դիպուկ բնորոշմամբ. «Ադրբեջանի հասարակական ու ազգային կյանքը բխում է ավարառության ցեղային բնազդներից և ծայրահեղորեն վարակված է հայատյացությամբ ու համաթուրանականության ախտով»[2562]: Այս և համանման գործելակերպը մեկ անգամ ևս փաստարկում է այն իրողությունը, որ «ադրբեջանցի» հորջորջված թյուրք-թաթարները XX դարավերջին անգամ երբևէ չբաժանվեցին ավերելու, կողոպտելու և յուրացնելու թյուրք-օղուզական ցեղային բնազդներից, հետևապես և գործելակերպից: Այդ գործոնն անկարող եղան հաղթահարել նույնիսկ ադրբեջանցի «ամենաառաջադեմ» գործիչներն ու «մտածողները»: Նրանցից մեկը՝ Ադրբեջանի գրողների միության նախագահ Անարը, հրապարակավ հայտարարել է. «Ադրբեջանցի թյուրքերը չպետք է կտրվեն իրենց թյուրքականությունից»[2563]: Այս արտահայտությամբ եզրափակվում է մեր խոսքը, որովհետև ադրբեջանցի գրողն իր ժողովրդի ծագումնաբանությանը և նրան հարիր գործելակերպին տվել է խոստովանող բնութագիր՝ թյուրքականություն, որն արտահայտվեց Բաքվի տեղաբնիկ հայ բնակչության նկատմամբ ցեղասպանության գործադրությամբ:

[2560] Տե՛ս «Հովիտ», Թիֆլիզ, 1910, ապրիլի 4, № 12, էջ 186:

[2561] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 1000, բ. 3, տե՛ս նաև Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ. Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեան, փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, Երեւան, 2006, էջ 456:

[2562] Чиркин Л., Նոր աշխարհակարգը և Հայաստանը (երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ), Երևան, 2006, էջ 192:

[2563] Гусейнова С., նշվ. աշխ., стр.113.

ИСТОРИЯ АРМЯН ГОРОДА БАКУ
(ИСТОРИКО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

ГЕВОРГ С. СТЕПАНЯН

РЕЗЮМЕ

По свидетельству клинописных и документальных источников, в Восточном Закавказье, на территории, расположенной между Курой и Апшеронским полуостровом и городом Баку, армяне жили с древних времен. Будучи одним из коренных и культурно-созидательных народов Баку, армяне активно участвовали в общественно-политической, социально-экономической, культурно-образовательной жизни города и создали богатую историю.

